V 4
253

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԻՀՐԱՆ ԴԱՒԻԹԵԱՆԻ
1529 Pierce Ave.
Niagara Falls, N. Y.

Թիւ 4-91

Այս գիրքը կ'արժէ $ 2.50
եւ ձրի փոխ տրուած է ձեզի:

ՀԱՃԵՑԷՔ
Մաքուր պահել զայն,
ուրիշի փոխ չտալ եւ
ժամանակին վերադարձնել:

2.50

1.999

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԻՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ

HISTOIRE LITTÉRAIRE DE L'ARMÉNIE ANCIENNE
(Siècles IV-XIII)

Գ
253

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՀԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

(Դ—ԺԳ ԴԱՐ)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՑԱՒԵԼՈՒԱԾՈՎՔ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՄԲՔ

BIBLIOTHECA ARMENA
GARO H. KAZAZIAN
Chicago, Ill., U.S.A.

ՎԵՆԵՏԻԿ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1932

2ֆ-304
25-3-79

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ՀԵՏ
[illegible]
ԿՈՄԻՏԵ

ԱՌ ԸՆՆԱՍԷՐՍ

Դ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԱՌԹԻՒ

Վաղուց սպառած էր նախորդ Գ.[1] տպագրութիւնը, որով՝ մէկ կողմէն գրքիս անհրաժեշտ կարեւորութիւնը, միւս կողմէն՝ նոյն հատորին շարունակ խնդրանքները, խրախոյս եղան մեզ, ներկայ դրամական միջազգային ճգնաժամին ամէն զոհողութեանց դիմագրաւել՝ և վերըստին ի լոյս ընծայել այս ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ։ *Համոզուած ենք թէ այսու կենսօգուտ ծառայութիւն մը կը մատուցանենք յաւէտ ցանկալի Ազգիս, հայթայթելով իրեն մտքի այնպիսի սնունդ՝ առանց որուն իր ջանքերը հայրենի գիտութեանց և տոհմային մշակոյթի ընդարձակ հողին վրայ, եթէ ոչ բոլորովին անկարելի և ապարդիւն՝ գէթ յոյժ դժնդակ պիտի ըլլային։*

Բանիրուն հմտութեամբ, ազգային ոգւով, աւանդական սրբանուէր շնչով և զգացմամբ կազմուած էր մատենագրութեան դասագիրքս· և մենք չհամարձակեցանք զայն կապտել իր այդ գեղեցիկ օծումէն։ Միայն լեզուն տեղ տեղ քիչ մը փոփոխեցինք, ջանալով նախադասութեան իմաստը աւելի որոշ և պարզ ոճով բացատրել ընթերցողին դիւրութեան համար։

Հիմնական կէտերուն մէջ՝ նոյն ոճը, նոյն լեզուն, և Գ. տպագրութեան նոյն կարծիքները, և նոյն տեսութիւնները պիտի գտնեն հոս Ազգիս գիտնականք։ Ուր հարկ եղաւ՝ հակիրճ ծանօթութեամբ մը նշանակեցինք նոր հրատարակութիւնները[1] կամ գիտելիքներ[2]։

---

[1] Գ. տպ. 1897. Վենետիկ.

Յաւակնեցաւ օրուանս բանասիրութիւնը իր հնոցին լափլիզող բովէն անցնել քանի մը հեղինակներ, զՄ. Խորենացին, գլխաւորաբար, և զԵղիշէն. առաջինը՝ մինչև իններորդ, և միւսը մինչև Եօթներորդ դար հասցնելով, երբեմն ալ, դժբախտաբար, գիտութեան սահմաններէն քիչ մ'անդին անցնելու կրքոտ լեզուագարութեամբ...։

---

[1] Մոռցուած էր իր յատուկ տեղը նշանակուիլ նաև ԿՈՐԻՒՆ-ՎԱՐՔ ՄԱՇԹՈՑԻ, տպ. Երուսաղէմ, 1930։ Բանասիրական ամէն յատկութիւն ունի, և հրատարակչին, Պր. Գառնիկ Ֆնտգլեանի, արդարև պատիւ կը բերէ։ Մեծադիր է, միասիւն։ 2 էջ Յառաջաբանէ մը վերջ՝ ունի 40 էջով հմտալից՝ բայց աւելի մեկնողական հանգամանք կրող Ներածութիւն մը, յորում (տ. էջ Ե) հրատարակիչը կը համարի Կորիւն սկզբնական ուղիղ ձևը տալ ընթերցողաց։ Ապա կ'անցնի գրքին հրատարակութեան (էջ 1-77) գեղեցկատառ և որոշ։ Իւրաքանչիւր էջին տակը ունի 3 կարգ դիտողութիւններ «ԲԱՌԱՔՆՆՈՒԹԻՒՆ», «ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ» և «ՄԵԿՆՈՂԱԿԱՆ»։ Կարելի չէ սակայն իր բոլոր տեսութեանց և վարկածներուն համաձայն ըլլալ։ Էջ 78-80 կը գտնենք գեղեցիկ կարգաւ դրուած «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ» մը (394-436)։ Իսկ էջ 83-93՝ ընդարձակ և գիտական «ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ»։ Հուսկ, 94-101 «Ուղղելիք, Յաւելլիք», «Ցանկ յատուկ անուանց» և «Բովանդակութիւն»,

[2] Նոյնպէս Ս. Ներսէս Լամբրոնացւոյն «Տեսութիւն Առակաց Սողոմոնի», զոր հայագէտ և հայասէր գերմանացի վարդապետ՝ Մաքս՝ Սաքսոնիոյ իշխանը, բազմածախս և բազմավրէպ և շատ անխնամ տպագրութեամբ, Ս. Ղազարու մատենադարանին ընտրելագոյն ձեռագրի մը վրայէն ի լոյս ընծայեց երեք մասերով։ Մեծադիր է, երկսիւն՝ հայ և գերման թարգմանութեամբ։ Նախ գերմաներէն հմտալից 12 էջնոց յառաջաբանէ մը վերջ՝ կը սկսի Ա. մասը, տպ. 1919, էջ 1-160. Իւրաքանչիւր էջին տակը կան բաղդատուած օրինակները և համառօտ դիտողութիւններ։

Երկրորդ մասը, էջ 161-320, տպ. 1921։

Երրորդ մասը, տպ. 1926, էջ 320-516։ Ամբողջ գործը գերմաներէն լեզուով՝ կը կրէ վերնագիրս. «Nerses von Lampron Erklärung Der Sprüchwörter Salomo's; herausgeben und übersetzt von **Prinz Max, Herzog zu Sachsen,** D. Theol. et Dr. Utriusque Juris. I, II, III Teil (mit drei tafeln). Leipzig: Otto Harrassowitz, 1919 - 1921 - 1926.

Սակայն, լաւ գիտելով որ ժամանակիս բանասիրաց կարծիքները՝ մարտ ամսոյն օդերուն պէս՝ օրէ օր և ժամէ ժամ փոփոխութեան ենթակայ են, նկատելով միանգամայն՝ թէ մէկուն ըսածը, միւսը՝ միևնոյն թերթին մէջ, և անշուշտ աւելի իրաւամբ կը փութայ հերքել, խոհեմութիւն համարեցինք վարկածներն իրենց տեղը հանգիստ թողուլ, և աւանդական կարծիքն անշարժ պահել և անփոփոխ. որուն միակ ճիշտ, իմաստուն, պատմական և իրական ըլլալուն՝ իրենք իսկ՝ զիրար ջնջող (և շատ անգամ պարզապէս երևակայութեան վրայ հիմնուած) ենթադրութիւնք՝ իբրև հզօր ապացոյց կը կանգնին։ փորձը կեցեր է։

Մինչ օրուանս քննադատ կոչուածներէն մէկը «օտարազգիներէ[1]» լուսաւորուած հայ մատենագրութեան վրայ, բաւական յանդուգն բերանով կը նախատէ զՄ. Խորենացի «ընդունայնամիտ[2]», «անբարեխիղճ», «խարդախ[3]», «բանաքաղ», «աղքատիմաց նկարագիր», «մուրացիկ բարքով[4]», «դիմակաւորուած[5]» և անոր «հեղինակութիւնը (մարգարտի յարգը չգիտցողի մը կրճղակներով) առաթուր կոխոտել[6]» կու, տայ ահա միևնոյն ամսաթերթին մէջ[7] ուրիշ գրիչ մը, աւելի պատկառոտ խղճով և ողջամիտ շեշտով, կը հռչակէ այն բացատրութիւնները «ԱՆԱՐԴԱՐ», «խիստ» և «կծու դատափետանքներ՝» այնպիսի «ազնիւ» «և լուրջ մարդուն» «և մեծ հայրենասիրին... յարգանքի և երախտագիտութեան դէմ[8]»։ Նոյնպէս, մինչ տոհմային լեզուիս և դպրութեան խամ համրակ մը իր խակ մտքով, հապճեպով (à la hâte, hâtivement, rapide[1]) հարեւանցիկ ակնարկ մը տալէն վերջ, Հայ Պատմահայրը կ'անուանէր «Տգէտ», «Ցնդաբան», «Ողորմելի», «Անմիտ», «Խաբեբայ», «Ստախօս» և «Հերետիկոս[2]», և ազգային բանասիրական թերթերէ[3] մը կը ծափահարուէր՝ ուրիշ աւելի կարող, նիւթին մէջ աւելի պատրաստուած և քաջահմուտ բանասէր մը, յարգեց զԽորենացին իբրեւ սուրբ, և իբրեւ գիտնական՝ հրապարակաւ գրեց՝ թէ «Քերթողահօր» գարշապարացն (անգամ) չէ արժանի երեւս[4]:

---

[1] «Ազդարար» լրագիր 1930. Յուլիս 26, էջ 2, ս. 4։

[2] Անահիտ, 1929, թ. 4, էջ 70, ս. 2, հմմտ. Հանդ. Ամս. 1929-1930։

[3] Անդ, էջ 71, ս. 2։

[4] Անդ, 70, ս. 2։

[5] Անդ, 76, ս. 1։

[6] Անդ, 71, ս. 2։

[7] Անահիտ, 1931, թ. 3-4, էջ 2, ս. 2։

[8] Անդ, էջ 3, ս. 1։

Այս «Թերուս Թերահմուտ Հայագէտ[5]» գաղղիացւոյն և իրեն հլու հպատակ աշակերտներուն համար՝ Խորենացին Թ[6] դարուն հեղինակ է, Ղեւոնդ պատմչին (Ը դ.) հետ նոյն է[7]: Պատճա՞ռ. Որովհետեւ փոքր Սոկրատի պատմութեան և փ. Սեղբեստրոսի[8] վարուց հայ թարգմանութեան (Է դր.) հետ նմանութիւններ կը գտնեն, Մամիկոնեանց հակակրութիւն[9] մը, Բագրատունեաց մեծ համակրութիւն, Ասորւոյ մը (770) Թէլ–Մահրէի[10] բնութեան արհաւրաց նկարագրութեան հետքեր կը նշմարեն Մ. Խոր. պատմութեան մէջ:

Ուրիշներ, Գարիէրի և իւր հետեւող Հանդ. Ամսօր-

---

[1] Ազդարար, 1930, Օգոստ. 2, էջ 2, ս. 5, ծնթ. 5, հմմտ. «Մշակ» 1898, թթ. 192, 193, 195, 203, 216, 217 և 1899, թթ. 16, 17.

[2] Ազդարար, 1930 Յուլիս 26, էջ 2, հմմտ. «Մշակ», անդ:

[3] Հանդէս Ամսօրեայ 1892, էջ 374 մինչեւ 1897–8 եւն եւն, և մինչեւ ցայսօր. Արարատ, 1897, էջ 422–23.

[4] Ազդարար, 26 Յուլ. էջ 2, ս. 6.

[5] Անդ, 12 Օգոստ. էջ 2, ս. 4.

[6] Անահիտ 1929, թ. 4, էջ 76, ս. 2, հմմտ. Հնդ. Ամս. 1930, թ. 7–8 էջ 382–404.

[7] Հմմտ. Հնդ. Ամս. 1930, թ. 7–8, էջ 382-404.

[8] Ազդարար, Օգոստ. 3, էջ 2, ս 1–6.

[9] Անահիտ, 1929, թ. 4, էջ 72, ս. 2.

[10] Անդ, էջ 73, ս. 2.

եայի կարծիքը թողլով՝ վճռեցին զԽորենացին Է դարուն[1], քանի որ Մովսէս Եղիվարդեցիէն՝ Խորխոռունեաց եպիսկոպոս ձեռնադրուած է[2] նա, (որով Խորենացի = Խորխոռունի), Ողբը Մով. կթղ. Եղիվարդեցւոյն վրայ գրած է[3], Սահակ և Մաշտոց ըսելով՝ կ'իմանայ զՄովսէս կաթուղիկոս[4] և զՄաշտոց Խորխոռունեաց՝ որուն յաջորդեց ինքն Մովսէս Խորենացի: Քաղկեդոնական խնդրոց և վէճերու ակնարկներ կ'անդրադառնան և[5] Մօրիկ կայսեր հալածանքներու արձագանգներ: Ըստ այս տեսութեան Մ. Խորենացին ծնած[6] կ'ըլլայ 515–17, եպիսկոպոս ձեռնադրուած 565ին, մեռած՝ 638ին[7], յետ 120 տարի կեանքի մը: Հուսկ, ուրիշներ լեզուական նրբութեանց չափէն աւելի զգայնութեամբ՝ դատեցին զՄ. Խոր. Զ–Է դարու[8] հեղինակ:

Չենք ուրանար որ գիրքը ազգային պատմութիւն մ'ըլլալով՝ հետագայ դարուց յաւելուածներ մը կրած է, որոնք հեղինակին ժամանակը կասկածելի ընելու օրինաւոր պատճառ չեն: Սակայն Խորենացին Ե դարուն է, ինչպէս ցոյց տուաւ Նորայր Բիւզանդացի «Մշակ» 1898 և «Ազդարար» 1930, Օգոստոս 2–17:

Մամիկոնեան հակակրութեան խնդիրը գոյութիւն չունի (տ. Մ. Խոր. Պատմ. Գ, գլ. ԻԵ, և ԼԶ) ուր մեծամեծ քաջութիւններ անոնց ձեռքով կը պատմուին: Բագրատունեաց համակրութիւնը բնական էր, քանի որ իր մեկենասը եղած են, և ամէն ոք նոյնպէս պիտի վարուէր։ Բնութեան արհաւրաց խնդիրը, իբր փաստ, ծիծաղական[1] է, քանի որ նման երեւոյթներ ամէն օր կրնան պատահիլ և Ե դարուն ալ կրնային պատահած ըլլալ[2]։ Փոքր Սոկրատի, Փ. Սեղբեստրոսի վարուց հետ նմանութեան նկատմամբ՝ արդէն Նորայր Բ. հաստատեց[3] թէ եօթներորդ դարու թարգմանիչներն օգտուած են Մ. Խոր. լեզուէն և ոչ թէ ինքն անոնցմէ։

---

[1] Անահիտ, 1931. թ. 3–4, էջ 117–136.

[2] Անդ, 126, ս. 2.

[3] Անդ, 128, ս. 2.

[4] Անդ, էջ 123–4, ս. 1.

[5] Անդ, էջ 127, ս. 1–2.

[6] Անդ, էջ 118, ս. 2.

[7] Անդ, էջ 136, ս. 2.

[8] Անդ, էջ 5, ս. 2.

Եօթներորդ դարուն համարողին կարծիքն ալ շատ ենթակայական է, ըստ մեզ, քաշքշուած և համոզիչ ըլլալէ զուրկ[4]։

Զ–Է դար կարծողներն ալ՝ շատ ձրի և քմահաճոյ կերպով կ'ենթադրեն, քանի որ այդ դարերուն՝ հաւասար գրիչ մը չենք գտներ, և հեղինակը հելլենագէտ հելլենասէր էր, ինչ զարմանք որ այդ՝ իր ոճին վրայ ևս ազդած ըլլայ։ Ե դարէն Թ դար տանելու համար զՄ. Խորենացին՝ մեծ մեծ բաներ կ'ըսեն, և պէտք է գիտնալ որ Ե–Թ դար, 400 տարուան միջոց մը կայ. այսչափ ընդարձակ շրջանէն՝ ո՛չ մէկ նշանաւոր դէպքի, ոչ մէկ անուան ամենափոքր ակնարկ մ'անգամ չունի, այլ մի միայն Ե դարու անձինքն ու գործեր ծանօթ են իրեն ամէն մանրամասնութեամբ. համարենք զՄովսէս նոյն իսկ Զ-Է-Ը-Թ դարուն՝ իր ժամանակակիցք թմրա՞ծ էին. ինչո՞ւ հակառակ բան մը չգրեցին։ Տարբեր մեկնութիւն կարելի չէ տալ ասոր, բայց եթէ լրջօրէն ընդունիլ որ Մովսէս Խորենացին միայն Ե դարուն ապրած է։ Եւ զայս կը հաստատեն նախ ինքը Մովսէս, 2. Ղազար Փարպեցին, 3. Յովսիա (Զ դր.)[5] 4. Գրիգոր Սարկաւագապետ[1] (Է դ.), 5. Սեբէոս (Է դ.) և ասոնցմէ վերջ եկողները բոլոր։

Իսկ արդի գիտնականներէն՝ Ալիշան, Զարբանալեան, Նորայր, և ընդհանրապէս բոլոր անոնք՝ որ անձամբ ազգային մատենագրութիւնը կարդացեր են ու քններ, առանց եւրոպացի փրոֆէսօրներու մուրացածոյ և թերի գիտութենէն (գէթ այս մասին մէջ) ո՛ր և իցէ ազդեցութիւն մը կրած ըլլալու։

Եղիշէի մասին ալ նոյն ոգւով և ոճով վարուեցան ոմանք՝ զինքը Է դարուն[2] վճռելով. ուրիշներ՝ դարձեալ լեզուն ոչ ոսկեդարեան նկատելով՝ Զ դարուն[3] հեղինակ շինեցին, որոնց պատասխանը լաւ կերպով տրուեցաւ[4], թէ Եղիշէի լեզուին և բովանդակ պատմութեան մէջ միայն Պարսիկ ազդեցութիւն կը գտնենք. մինչ Է դարուն արաբ զօրութիւնը որ արդէն պարսիկը նուաճեր էր, Հայուն քով զգալի պիտի ըլլար. այդ հեղինակն ուրեմն որուն քով պարսիկ բառեր և պարսիկ ազդեցութիւն կը գտնենք՝ միայն Ե դարուն ապրած մէկը պէտք է ճանչնանք, այսինքն այն դարուն՝ ուր պարսից իշխանութիւնը դեռ կանգուն էր։

Այս պատճառներով Մատենագրութիւնս աւանդական կարծիքը պահեց, ըստ որում Մովսէս և Եղիշէ Ս. Թարգմանչաց փոքր կոչուած դասէն են, հետեւաբար Ե դարուն։ Համառօտ տեղեկութիւնս տեղւոյս համար, յուսանք բաւական ըլլայ ընթերցողները ծանօթացնելու Ազգային մատենագրութեան նկատմամբ օրուանս հարցին, աւելին՝ կարելի է կարդալ վերեւ նշանակած թերթերուն մէջ։

---

1. Անդ, էջ 132, ս. 1։
2. Սակայն Ողբի այն խօսքերը նիւթական պէտք չէ հասկնալ, այլ բանաստեղծական, ողբական (Եղիպտոսի հարուածները յիշեցնելով) են։
3. Ազգարար, Օգոստ. 8–9։
4. Անահիտ 1931, թ. 3–4, էջ 7, ս. 1։
5. Հայապատում, Պատմիչք Հայոց, էջ 116, 122։

---

1. Բազմավէպ, 1904, էջ 164–165 և 1905, էջ 28–30։
2. Հանդէս Ամսօրեայ 1931 թիւ 1–2 ևն։
3. Անահիտ, 1931, թ. 3–4, էջ 5, ս. 1։
4. «Ժամանակ» լրագիր, 1931, Ապրիլ 27, թիւ՝ 7969. և Բազմավէպ՝ 1931, էջ 195։

Մեր սրտին ամենէն աւելի եռանդուն մաղթանք և վառ իղձն այն է՝ որ Հայ պատանին սորվի և ճանչնայ իր նախնեաց փառաւոր անցեալը, և բոլոր հոգւով ջանայ միշտ անոնց մեծութեան նախանձաւոր հանդիսանալ և ըլլալ արժանաւոր յաջորդ և ժառանգ։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ

Մարտ 1932

* * *

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ 1897

Համառօտ երկասիրութեանս տպագրութեամբ հասարակաց ընծայուելէն՝ տասնեակ մի ամաց սահեցան անցան։ Նոր տպագրութեան մը բանադատուած ատեննիս, ժամանակը և անոր հետեւանք և արդիւնք նորանոր տեղեկութիւնք՝ անհրաժեշտ ըրած էին գրուածքիս աւելի ճոխ և նորագոյն կերպարանք մը տալ. զոր և ջանացինք ընել, ոչ լոկ տպագրութեան ձեւոյն և տառերով, ինչպէս կը տեսնեն ընթերցողք, այլ նաեւ – որչափ հնարաւոր և կարելի էր, – պարունակութեամբն։

Այս դիտմամբ և վախճանաւ եղած են այլեւայլ փոփոխութիւնք, սրբագրութիւնք և յաւելուածք, ջանալով ընդարձակագոյն տեղեկութիւնս ընծայել ուսումնասիրաց և բարձրագոյն դպրոցաց աշակերտելոց՝ մեր հին մատենագրաց վարուց և երկասիրութեանց վրայ, ու անով աւելի սիրելի և մեծարոյ ընել՝ հեռաւոր և մերթ ոչ այնչափ երախտապարտ նոր սերնդեան՝ մեր ընտիր և հռչականուն նախնեաց գործածած լեզուն, և հմտացնել իրենց արդիւնաւոր կեանքին։ Այսով հանդերձ՝ կ՚ուզենք իմացընել միանգամայն թէ գրուածքիս նպատակը՝ իր կրած քիչ շատ փոփոխութիւններովն ալ՝ առաջին տպագրութեամբն իրեն համար արդէն գծուած ամփոփ սահմանին մէջ կը մնայ, որ էր, – ինչպէս ակնարկուած է յառաջաբանին մէջ, – «ընդհանուր պատմական տեղեկութիւն մը աւանդել մեր մատենագրաց և անոնց գրուածոց վրայ, առանց ուզելու քննադատական տեսութեամբք ծանրացընել այնպիսի գրուածք մը որ վարժարանաց համար սահմանուած է»։ Ասկէ անդին բարձրանալ խիզախելը՝ մեր կամքէն ու գիտութենէն, ու նաև նպատակէն դուրս էր։ Խոստովանութիւն մը՝ զոր մատենիս չափն ալ մեզի հետ անխօս կը հռչակէ։

⁂

Մեր պատմութեանց տարեգիրքն աչքէ անցուցած ատեննիս՝ սրտի իրաւացի գոհութեամբ և սփոփանօք կը հանդիպինք բազմապատիկ քաղաքական ու եկեղեցական պարծանաց. ու Խորենացւոյն հետ կրնանք երկրորդել և վկայել որ «թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ... սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի»։ Սակայն անոնց ամենուն վրայէն աւերիչ ձեռք և զէնք ժամանակաց անցնելով՝ չեն թողած այլ ինչ՝ բայց հին ու պատուական լեզու մը և մատենագրութիւն, միակ մնացորդք և աւանդապահ վկայք մեր հետախաղաղ ծածկուած անցեալ փառաց։ Այդ լեզու և մատենագրութիւն՝ դարուց և ժամանակաց ամէն կերպարանափոխութեանց և աղխտից ենթակայ, չեն կրցած իրենց իսկաշնորհ դրիւք և փափաքելի ամբողջութեամբ հասնիլ մինչև առ մեզ. այլ մին՝ զանազան դրոշմ և աղաւաղութիւն ընդունելով և տգիտութեան ծանր բեռը վրան կրելով, և միւսն բազմաթիւ ու աշխարելի կորստեամբք և հարուածովք։

Սակայն և այնպէս ոչ դոյզն քաջալերութիւն և սփոփանք են մեզ լսել՝ թէ արևելեան ազգաց մատենագրութեան մէջ նշանաւոր տեղ մը գրաւած է հայ լեզուն և դպրութիւն. իր մինչև առ մեզ պահած արդի կերպարանքովն ալ՝ թէ մեզ և թէ եւրոպական գիտութեանց և բանասիրութեան համար՝ հարուստ ու անսպառելի բովք մը, որ որչափ աւելի ուսումնասիրուի, և հետախոյզ քննուի, փորձը կը ցուցընէ թէ ինչպէս օր ըստ օրէ նորանոր ճոխութիւնք արտադրելու յարմարութիւնն ունի։

Որչափ փափաքելի էր և օգտակար այսպիսի անխոնջ հետազօտութիւն՝ մեր պատմական և մատենագրական ուսմանց յառաջադիմութեանն համար։ Եւ ներուի ըսել, որ յայսմ մասին օրինակ կրնան ըլլալ մեզ Եւրոպացի գիտունք և բանասէրք. և մինչ արևմուտք մեզմէ այնչափ փութով կը փնտռէ մեր հին պատմութիւնն ու նախնեաց մտաւոր հարստութիւնն, և իրեն տրուածը անյագաբար կ'ընդունի, դարուս արժանաւոր լուսամիտ և ուսումնասէր ոգին՝ հարկ է որ յորդորամիտ ընէ զմեզ՝ տգիտութեան հետևանք ամէն նախապաշարումն և աւելորդ նախանձայուզութիւն մէկդի դնելով՝ աւելի մեծանձն և առատատուր երևնալ, բաւական սեպելով անոնց երկար դարեր խաւարի և թաքնութեան մէջ մնալը։

⁂

Արևմտեան բանասիրութիւնն՝ – առանց ուզելու յիշատակել աւելի հեռաւոր ժամանակներ, – միայն վերջին քսան և աւելի տարիներու մէջ՝ մեծ եռանդ և հետամըտութիւն ցըցուց՝ մեր ազգային դպրութեանց, մանաւանդ պատմական երկասիրութեանց նկատմամբ։ Հայագէտ Տիւլորիէ 1855 տարիէն ի վեր՝ մեծ և օգտակար խորհուրդ մը ունեցած էր, հայ պատմչաց Մատենադարանի մը հրատարակութեան՝ հանդերձ գաղղիական թարգմանութեամբ։ Իբրու երախայրիք այս հետաքննական Մատենադարանին, տպագրութեամբ հրատարակեց Մաթէի Ուռհայեցւոյ պատմական գրուածին թարգմանութիւնն, և հայկական ժամանակագրութեան վրայ բազմահմուտ հատոր մը։ Իր մտածութիւնն և ի հանգամանաց ժամանակին առկախ մնացած գործը՝ ուզեց գլխաւորել և յարգելու ածել Վիկտոր Լանկլուա՝ միւս այլ հայագէտ գաղղիացի. ու ազգայնոց և օտար հայագիտաց օժանդակելովը՝ և Նուպար փաշայի վեհանձն և առատամիտ նպաստիւք, ձեռք զարկաւ և հրատարակեց երկու մեծ հատոր, չորրորդ ու հինգերորդ դարու պատմական երկասիրութեանց գաղղիական թարգմանութիւնն հմուտ ծանօթութեամբք, կանխաբանութեամբք և անոնց հեղինակաց վրայ կենսագրական տեղեկութեամբք։ Եռանդուն և հայասէր ձեռնարկուին տարաժամ մահը՝ և վրայ հասած գաղղիական կառավարութեան յեղափոխութիւնն և պատերազմի և պարտութեան արկածք՝ խափան եղան այդ հաւաքման շարունակութեանն, որ ամենուն իրաւացի փափաքն էր, և առ որ ոչ ոք կը համարձակէր, ճանչնալով գործոյն մեծութիւնն ու դժուարութիւնը։ Մասամբ եւեթ ուզեց դարմանել այդ պակասը Պրոսէ գաղղիացին, անդամ կայսերական ճեմարանին Ռուսաց ի Փեթերբուրկ, ընծայելով ի լոյս նոյն քաղքին արքունի տպարանէն ուրիշ երկու հատոր թարգմանութեանց մեր ազգային պատմագրաց։ Տիւլորիէ իր բազմարդիւն կենաց վերջի տարիները նուիրեց ի թարգմանութիւն Ասողկան, և որուն առաջին մասը իր մահուընէն ետքը հրատարակուեցաւ. ասկէ զատ նաև խաչակրաց պատմագրաց հաւաքման մէջ մեծ հատոր մը՝ ի մեր պատմչաց, հայկական բնագրաւն և գաղղիական թարգմանութեամբ։ Բրիւտոմ՝ նոյն լեզուով Զենոբայ Գլակ և Լաստիվերտցւոյն պատմութիւնը ծանօթացոյց. Լաւէր գերմանացի փոխեց յիւր լեզու զԲիւզանդ և զԽորենացի, աւելցնելով ասոնց հետ նաև հայ լեզուի քերականութիւն մը՝ գերմաներէն բացատրութեամբ, զոր Գարրիէր՝ արդի ուսուցիչ հայկական բարբառոյ ի դպրոցի արեւելեան կենդանի լեզուաց ի Փարիզ, թարգմանեց ի գաղղիականն։ Հիւպշման՝ Սեբէոսի արաբական արշաւանաց պատմական մասին թարգմանութիւնն ըրաւ ի գերման բարբառ. Կուտշմիդ և Գէլցա՝ քննադատական տեսութիւնք

ընծայեցին Խորենացւոյ և Ագաթանգեղոսի երկասիրութեանց վրայ։ Կը թողունք ուրիշներն, և եւրոպական ուսումնական հանդէսներու միջոցաւ հրատարակուած զանազան հետաքննութեան արժանաւոր հատուածներ. բայց այս յիշատակուածներն ալ արդէն բաւականէն աւելի են ի հաւատարմացընել թէ որչափ մեծ կարեւորութիւն տուած են և կու տան եւրոպական գիտունք մեր տոհմային մատենագրութեան։ Իրենց ջանքով ու ձեռքով եղած հայ հեղինակաց թարգմանութիւնք, ու անոնց վրայ տեսութիւնք և քննութիւնք՝ ոչ միայն ծանօթ ու սիրելի ընելու կը ծառայեն արեւմտեայց մեր անցեալը, այլ մերթ անոր մութ ու անստոյգ մասերն ալ լուսաւորելու և ուղղելու նպատակն ունին, որով և ազգիս կրկնակի երախտապարտ մեծարանացն արժանաւորք։

Մեր ազգայնոց քով ալ՝ վերջի տարիներու մէջ երեւցած գրաբար լեզուի և ուսման, հայկական դպրութեանց փոյթ և ջանք՝ նշանաւոր և սփոփիչ կրնան համարուիլ։ Նախնեաց լեզուին և մատենագրութեան արհամարհոտ անտարբերութիւնն, և անոնց վրայ զուրցուած լքուցիչ դամբանականք, դպրոցներէ անոնց ուսումը վտարելու ջանք, և միայն եկեղեցական դասու հնաւանդ ժառանգութիւն մը համարելու կարծիք՝ իրենց նորութիւնն կորսնցուցած և լռած դադրած են. և հոն մանաւանդ ուր մեր գրաբար լեզուին մահուան վճիռն արձակուելով՝ համարձակաձայն քարոզուեցաւ թէ մեռելոց յարութիւն տալու դարը իննեւտասներորդը չէ, իննեւտասներորդը ասոր մէջ ալ ցցուց թէ յառաջադիմութեան և անհնարին ենթադրուածներն ալ հնարաւոր ընելու ուսմանց և գիտութեան դար է։ Թիֆլիզ, Մոսկուա և Փեթրպուրկ՝ երեք գլխաւոր կեդրոնք մեր ռուսահպատակ ազգայնոց լուսաւորութեան և գիտութեան, կարծես մասնաւոր ճգամբ զիրար գերազանցել ուզեցին ի ատել զայդ վճիռ։ Պատկանեան, Մսերեան, Էմին և այլք, մեծարոյ հանճարներ և պատկառելի հեղինակութիւնք, իրենց ուսումնական և բազմարդիւն կենաց մեծ մասը նուիրեցին ի հետազօտութիւն և ի հրատարակութիւն մեր նախնեաց երկոց. և հաճութեամբ կը նկատեն իրենց արժանաւոր աշակերտաց վրայ՝ հաւասար եռանդն և գործունէութիւն։ Ի Թիֆլիզ՝ օգտակար գրոց հրատարակութեան համար կազմուած ընկերութիւն մը՝ բաց ի նոր գրուածոց՝ ընծայեց նաև այլևայլ դասական գրքեր։ Շահնազարեան վարդապետ ի Փարիզ, Էջմիածնի և Երուսաղեմի տպարանք՝ գովելի ուսումնասիրութեամբ իրենց բազմահարուստ մատենադարաններէն նախնեաց զանազան գրուածոց հրատարակութիւններ ըրին։ Կը թողունք յիշել ի մեր մամլոց ընծայուածքն։ Կոստանդնուպոլսոյ բազմահայ գաղթականութիւնն և Զմիւռնիա, նոր լեզուի կանոնաւորութեան և զարգացման սիրովք և հետևովք, չուզեցին անտարբեր մնալ հնութիւնն ալ պահպանող այս յառաջադիմական ասպարիզին մէջ. ոչ միայն նոր լեզուն գրաբարի աւելի մերձաւոր դրութեան մը մէջ դրին, այլ ինչուան հին լեզուով ուսումնական հանդիսի մը հրատարակութեան ձեռք զարնելու արիութիւնն ունեցան։ Զենք գիտեր թէ որչափ տևական կրնայ ըլլալ այսպիսի ձեռնարկ մը. բայց անով՝ մեր ժամանակաց բանասիրական յառաջադիմութեան և ջանից՝ յայտարար նշան մը և ապացոյց ըլլալէն չի դադրիր։

⁂

Ազգային մատենագրութեան և բարգաւաճմանց մեծ և կենսական գործոյն օժանդակելու և սատարելու վախճանն ու փափաք ծնունդ տուած է մեր այս գուզնաքեայ երկասիրութեանն։ Առաջին կրկին տպագրութեանց ներողամիտ ընդունելութիւնն յազգէն և յօտարազգի բանասիրաց, որ մեր լեզուին և դպրութեանց ուսմամբ կը պարապին, երրորդիս ալ գրաւական մը ըլլալուն յոյսը կու տայ մեզ։ Քննադատք և ուսումնատենչք՝ կրնան աւելի

քան զոր գրուած տեսնեն մեզմէ՝ պահանջել և յուսալ։ Համամիտք իրենց հետ՝ թէ ազգային լեզուն, մատենագրութիւն և բանասիրութիւն դեռ շատ դժուարալոյծ խնդիրներ ունին, մթին տեղուանք՝ կարօտք լուսոյ, կը փափաքինք որ մեր այս համառօտ գրուածքը՝ նոր գրգիռ մը ըլլայ հմտագունից, այսպիսի բազմաշահ և արդիւնալիր ասպարիզի մէջ խրախուսելու ի ջանս, յուսումն և ի վաստակ։ Արդէն ոչ սակաւաթիւ են ազգասէր և գիտուն շահատակքն և մրցողք, որ մեր խրախուսանաց և գովութեան կարօտ չեն։ Մենք ըսինք թէ նպատակնիս այս չէր։

⁂

Մեր գրուածքը ամբողջացնելու համար՝ կը մնար **Հին թարգմանութեանց** արդէն պատրաստ մասը, և որ առանձին հատորով ընծայեցինք ի լոյս։

⁂

Քանի մը խօսք ալ՝ այս նոր տպագրութեան առթիւ։

Տասը տարի յառաջ այս տողերը կը գրէինք ու կը տպագրէինք, ջանալով ուրիշ զօրաւոր ձայներու հետ խառնել մեր տկար ձայնն ալ, ու քաջալերելով ազգային և օտար հայագէտ բանասիրութիւնը մեր մատենագրութեամբ աւելի զբաղիլ ու զբաղեցնել, ու քիչ ծանօթ կամ բոլորովին անծանօթ մնացած կէտերը լուսաւորել։

Ազգին սպասածն այն էր անոնց ջանքէն և երկասիրութիւններէն. նախընթաց շրջանն զնոյն կը խոստանար։

Միջին և Նոր կոչուած Մատենագրութեամբ կարծես թէ աւելի պարապեցան, ու հարկ է ըսել թէ զանազան օգտակար գրուածք և քննադատական տեսութիւնք ալ երևցան, պատիւ ընողք թէ իրենց անուանը և թէ ազգին։ Բայց մեր վախճանն էր որ ինչպէս քաղաքական պատմութիւննիս ունի իր մթին և առասպելախառն մասը, մատենագրութիւննիս ալ ունի կամ կրնայ ունենալ սրբագրելիք կտորները, սակայն միշտ ազգային ոգին նախամեծար ընելով։

Գէթ այսպիսի էր մեր համոզմունք և առաջարկութեան վախճանը։

Բայց քննադատութեան դարու մէջ կ'ապրինք, և մենք յաւակնութիւն չունէինք ուրիշին ճամբայ ցուցնելու կամ սորվեցնելու։ Գրուածքս իրեն չափովը յայտարար մ'է հաւաքողին հմտութեանը։

⁂

Թէ ազգային և թէ օտար գրիչք և բանասէրք, առանց մեր խօսքէն չարժելու, — և պէտք ալ չունէին, – ցանկացան դարուս ոգւոյն և պահանջածին համեմատ վարուիլ թէ մեր պատմութեան և թէ մանաւանդ մատենագրութեան նկատմամբ, ինչ որ ցուցած չէին հնոյն Ելլադայ և Լատինի յայտնի առասպելաց համար։ Ասով Լուսաւորիչ, Զենոբ Գլակ, Ագաթանգեղոս, Բիւզանդ, Կորիւն, Եզնիկ, Եղիշէ, Խորենացի, չորրորդ կամ հինգերորդ դարու մատենագիրք, կամ ինչուան մեր օրերը այնպէս համարուած, ինկան իրենց յարգէն կամ ենթադրուած ժամանակէն։ Այսպիսի սկզբնաւորութիւն մը թէպէտ 1850 է ի վեր սկսուած էր, բայց միշտ զգուշաւոր երկիւղածութեամբ, քիչ մը աւելի համարձակ լեզուով՝ Քննական Պատմութեան հեղինակէն։ Ուրիշներ գտնուեցան թէ յազգայնոց և թէ յօտարաց՝ որ չուզեցին մնալ այդ չափուն մէջ, և աւելի յառաջ անցան։ Ու երբ մէկ կողմանէ քաղաքականապէս կը մտածուէր անհետ ընել Հայերը իրենց հայրենեաց և բոլոր աշխարհիս երեսէն, մատենագրութիւնն ալ քիչ հալածանք չի կրեց։

Այսպիսի դիրքի մը մէջ թերեւս աւելորդ սեպուէր նոր

տպագրութիւն մ'ընել՝ ընդհանրապէս պահպանողական զուգնաքեայ երկասիրութեանս, ուստի ուզեր էինք հրաժարել, նկատելով մանաւանդ մեր առողջութեան վիճակը։

Բայց ուրիշներուն տեղի տուինք՝ գիտնալով որ վերջին խօսքը ըսուած չէ, և բանասէրք իրենց յայտնած կարծեաց մէջ յամենայնի իրարու համաձայն չեն, ու թերեւս երկար ատեն չըլլան. կամ այժմեան կարծիքնին ուզենան փոխել, ինչպէս շատ անգամ պատահած է։

⁂

Դնենք հոս նոր հրատարակուածներուն մատենագրական ցուցակը։

Հայ այբուբենի վրայ, բաց ի Սարգիսեան Հ. Բարսեղ վարդապետի և Հայոց գիրը Ի Տ. Յարութիւնեան հրատարակութիւններէն, տպագրեց մասնաւոր գրքոյկ մը Ա. Տաղաւարեան։ Ասոնց վրայ պէտք է աւելցնել Պարոնեան վարդապետի քննադատութիւնն՝ հրատարակեալ ի Հանդէս Ամսօրեայ (1890)։

Գողթան երգերու վրայ, բաց ի Էմինի, Ալիշան ու Գաթրճեան վարդապետաց, Տիւլորիէ ու Պալասանեան բանասիրաց գրուածներէն, որոց յիշատակութիւնը եղած է մատենիկանս մէջ, առանձինն խօսեցան նոյն նիւթին վրայ գերմանացին Ֆէթթէր, որ հայերէն ալ թարգմանուեցաւ և տպուեցաւ ի Վիէննա, ի Մխիթարեանց, և Եգ. Լալայեանց ի Փարիզ, գաղղիական թերթի մը մէջ, ու նոյն լեզուով։

Ձեռագրաց նկատմամբ կը յիշեցնեմք Սփրիգովսկիի գրութիւնն ի գերման լեզու, և անոր հայերէն թարգմանութիւնն։ Երկուքն ալ տպագրեալ ի Վիէննա, ի Մխիթարեան տպարանի։ Ասկէ զատ, թէ Մխիթարեանց Վիէննայի, թէ կայսերական, թէ Վատիկանի, Պերլինի, Մոնաքոյի, Պաւարիոյ, Մոսկուայի Լազարեանց ու Կեսարիոյ թեմին մատենադարանաց ձեռագրաց ցուցակները։

Յաճախապատում գիրքը, ինչպէս գիտեն ընթերցողք, թարգմանեցաւ ի գերման ու հրատարակեցաւ ի Ռէկէնսպուրկ։ Իրենց գիտուն տեսութիւններն ըրին Ֆէթթէր և Հիրշ, և այս յետինս Եկեղեցւոյ Պատմութեան մէջ վաւերական կամ ոչ այնպէս ըլլալուն այս գրուածքիս։ Մասամբ ծանօթ են ազգիս իրենց երկասիրութիւնք հայ թարգմանութեամբ։ — Հիրշ՝ Մեսրոպայ Վարդապետի կ՚ընծայէ զայն։

Զենոբայ Գլակայ վանից առաջնորդի գրուածքն ալ չարունակեց նիւթ ըլլալ քննադատութեան։ Արդէն մեր երկասիրութեան առաջին տպագրաց մէջ նշանակուած էր այս։

Ագաթանգեղոսի պատմական գրոց վաւերականութեան և որ լեզուով շարադրած ըլլալուն վրայ եղած տարակոյսներ թէպէտ արդէն հին են, բայց դարուս վերջին կիսուն աւելի սաստկացան թէ ազգային և թէ օտար բանասիրաց մէջ։ Առաջին պատերազմողաց մէջ, յետ Ստիլտինկայ և Բոլլանդեանց, երևցաւ Գուտշմիտ գերմանացին։ Առջի բերան ազգային բանասէրք հակառակեցան իրեն կարծեաց և ինչուան ալ դէմ գրեցին։ Ինքը չյուսահատեցաւ. և հետեւող գտնելով օտար հայագէտները, ինչպէս Հիւպշման և այլք, ցըցուց գոհ ըլլալ։ Ատեն անցնելէ ետքը մեր ազգայիններէ ոմանք ալ իրեն համամիտ երևցան ըստ գլխոց։ Գլխաւոր երկասիրութիւնն է Հ. Բարսեղ Վ. Սարգիսեանի Ագաթանգեղոս և իր բազմադարեան գաղտնիքը կոչուածը, և Տաշեան Հ. Յակովբոս Վ.ի գրութիւնը Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսի, ու գրեթէ միևնոյն տարին (1892) հրատարակուած, մէկն ի Վենետիկ և միւսն ի Վիեննա։

Բիւզանդ Փաւստոսի վրայ տեսութիւն մը հրատարակեց իւր Քննական թերթից մէջ՝ Նորայր Ն. Բիւզանդացի։ Ուրիշ գրութիւն մ՚ալ՝ Եղիշէ Մատաթեան Շուշեցի բանասէրը, և տպագրեց ի Վիեննա։ Հարկաւ յամենայնի չէին զուգընթանար երկու բանասիրաց կարծիք։ Ասոնց վրայ աւելցաւ նաև Ստ. Մալխասեանցի քննադատութիւնը, որ տպագրած ալ է Ամսօրեայ Հանդիսի մէջ, թէպէտև առանց խմբագրութեան վրայ ըլլալու բովանդակ պատասխանատուութիւնը։ — Գերմանացին Գէլցէր որ իր ուսումնասիրութեան նիւթ ըրաւ եկեղեցական մասը և մասնաւոր գրուածք մը հրատարակեց Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը, որոյ հայ թարգմանութիւնը տպագրեցաւ Բազմավէպ ամսաթերթի (1896) մէջ։

Եզնիկ այս նորութեան փափաքէն զուրկ չի մնաց։ Ինչուան ետքի տարիներս՝ թէ ազգայինք և թէ օտարք գովութեամբ խօսեր էին վրան արժանաւոր պատուով այս թարգմանչաց գլխաւոր անձերէ միոյն վրայ. մինչ իմացուեցաւ և գրուեցաւ որ գրեթէ կէս դար յառաջագոյն արդէն բանաքաղ մ՚ըլլալը կը գիտցուէր և իմաստասիրութիւնն իրենը չէր, այլ յոյն վարդապետի մը, Մեթոտիոսի։ Թերևս աւելի խոհական սեպուէր հիմկու հիմայ ըսելը՝ թէ ինչպէս Եպիփանու ասանկ ալ Մեթոտիոսի նմանութիւնք և իբր ուղղութիւնք կան Եզնիկայ իմաստասիրական գրութեանց մէջ։

Նոյնպիսի գրուածներ, և անոնց ընդդիմախօսութիւնք երևցան նաև Կորեան, Եղիշէի և այլոց վրայ։

⁂

Բայց մեծ խնդիրը Խորենացւոյ անձին և անունովը մեզի հասած մատենագրութեանց, կամ աւելի պատմական երեք գրքին վրայ եղաւ։

Գրեթէ երկու հարիւր տարիէն աւելի է Եւրոպիոյ և անոնց իմաստնոց ծանօթանալը Խորենացւոյն պատմութեան և աշխարհագրութեան, և ամէն օտար հայագէտք՝ տեսնելով ալ որ յամենայնի զուգընթաց չէ յոյն և հռովմայեցի կամ լատին պատմագրաց, այնու հանդերձ, ըսեր ենք արդէն, չէին պակսեր իրենց մեծարանքէն. և թէպէտ Ֆրէրէ, Լաքրոզ ու ժամանակ անցնելէն ետքը մասամբ նաև Սէն

Մարդէն գտնուեցան տարակուսողք և իրենց տարակոյսը յայտնողք, բայց ընդհանրապէս գիտութիւնը ճանչնալով ալ Խորենացւոյն թերի կողմերը՝ ուսկից ազատ չէ որ և իցէ հին պատմիչ մը, յայտնի կուսակից էին իրեն։

Խորենացւոյն դէմ ելողներուն մէջ ի մեր դարու առաջին կրնայ սեպուիլ Գուդշմիդ, որ Ագաթանգեղոսի հարազատութիւնը ժխտելէն զատ, ուզեց նոյն փորձը ընել նաև Խորենացւոյ վրայ։ Էմին Պարոնեան և Սարգիսեան ջանացին գրուածնելով իրեն կարծեաց դէմ մաքառել. բայց ինքը ոչ միայն ետ չկեցաւ, այլ նաև օտար հայագիտաց և ազգային բանասիրաց մէջ իրեն հետեւողքն ունեցաւ։ Ասոնց մէջ նշանաւոր եղաւ արդի ուսուցչապետն Հայերէն լեզուի ի Փարիզ, ի դպրոցի արեւելեան կենդանի լեզուաց, Ա. Կարրիէր, մասնաւոր գրուածներով, որ հայերէն ալ թարգմանուեցան և ազգային Մատենադարանի հատորներուն մէջ ալ գրուեցան։

Ա. Կարրիէրի այս երկասիրութիւնք հետեւեալ խորագիրը կը կրեն, որոնց մէջ կը ջանայ ցուցնել որ Խորենացին առ առաւելն ութերորդ դարու բանաքաղ մը կրնայ համարուիլ և ոչ այլ ինչ։ A. Carrière nouvelles sources de Moïse de Khoren.

Ասոնց վրայ աւելցուց Ա. Կարրիէր նաև հետեւեալը. La Légende d'Abgar dans l'histoire d'Arménie de Moïse de Khoren, 1895.

Միաբանը կամ Գ. Տէր Մկրտիչեանց որ զանազան ուսումնասիրութիւններ հրատարակած է Խորենացւոյ և իր պատմական գրոցը վրայ Էջմիածին։

Գր. Խալաթեան՝ Մոսկուայի Լազարեան ճեմարանին հայերէն լեզուի ուսուցչապետը՝ գրեթէ Կարրիէրի կարծիքն ու ենթադրութիւնն ընդունած է վերջին հրատարակութեամբն ի ռուս լեզու, և մագիստրոսութեան աստիճանն ընդունած ի պետութենէ։

Յովհաննու Մանդակունւոյ և իրեն ընծայուած գրուածոց վրայ ալ քննադատութիւն մը երեւցաւ 1895ին մեր տպարանէն, Հ. Բարսեղ Վ. Սարգիսեանի, որուն տեսութիւնք տեղ տեղ կը տարբերին մեր գրածներէն։

Ինչպէս յառաջ ըսինք, ամենքն ընտիր աշխատութիւններ են, բայց ունին կամ կրնան ունենալ իրենց պաշտպանները, կամ հակառակ կարծիք ունեցողները։ Վերջին կարծիքը դեռ ըսուած չէ. անոր համար կարեւոր սեպուեցաւ պաշտպանողական սեպուած երկասիրութեանս նոր տպագրութիւնը։

Հ. ԳԱՐԵԳԻՆ ԶԱՐԲ.

213-28

* * *

ՊԱՏԿԵՐ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ԸՍՏ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԴԱՐՈՒՑ

ԱՆԳԻՐ ԺԱՄԱՆԱԿ

Հայերէն լեզու. 94
Գողթան երգեր. 135
Բերնով՝ կամ գրաւոր ժամանակի մատենագրաց ձեռքով մինչեւ առ մեզ հասած հին աւանդներ. 152

ԳՐԱԻՈՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յառաջ քան զգիւտ կամ կիրառութիւն հայ տառից։

Մարիբաս Կատինա (առ Խորենացւոյ). 157
Արտաւազդ Ա Թագաւոր, որ յոյն լեզուով ողբերգութիւններ շարագրեց. 171
  Պատմութիւնք. 172
  Յունական ողբերգութիւնք. 172
  Խօսք յունականք. 172
Աբգար, որ Եդեսիոյ դիւանը կառոյց և զարդարեց. 172
  Թուղթք նորա առ Յիսուս Քրիստոս և պատասխանին. 172
  Առ Տիբեր կայսր։ Առ Ներսեհ։ Առ Արտաշէս. 173-4
  Հրովարտակ առ Հայս, և նամակ ընդունելութեան առ Թադէոս. 173

Երուանդ Բ. որ Եդեսիոյ դիւանը ա՛լ աւելի ճոխացոյց. 172
Արտաշէս Բ. 174
Վրոյր, բանաստեղծ. 174
Մաժան, վերակացու մեհենից. 174

Մինչ ի Լուսաւորիչ երեւցած մատենագիրք, որոց անունները միայն հասան առ մեզ:

Ողիւպ կամ Ոլոմպիոս քուրմ. 175
Բարդածան Եդեսացի. 176
Խոռոհբուտ. 180
Արտիթէոս. 181
Ղերուբնա. 182

ԴԱՐ Դ

Չորրորդ դարուս մէջ նշանաւորք ի վանորայս Հայաստանի. Գլակայ վանք ի Տարօն գաւառի, այսպէս կոչուած յանուանէ Զենոբայ զոր սուրբն Լուսաւորիչ առաջին առաջնորդ կարգեց մենաստանին՝ զոր կառոյց: Կոչի նաեւ սուրբ Կարապետ յանուն սրբոյն շինուած սուրբ եկեղեցւոյն, ուր նոյն սուրբ Լուսաւորիչ ամփոփեց գնչխարս սուրբ կերացն: Իննակնեան վանք ալ ըսուած է՝ նոյնչափ թուով հօն բղխած բարեհամ աղբերաց համար: Պատմութիւն ազգիս կ'աւանդէ՝ թէ հեթանոսութեան ժամանակ հոն բարձրացած էին կրկին բագինք և արձանք Գիսանէ և Դեմետր երկու եղբարց, որք Վաղարշակայ թագաւորութեան ժամանակ յաշխարհէն Հնդկաց փախստեայք ի Հայաստան, որդւոց որդի ժառանգութեամբ ի պարգեւի մասին ընդունեցան յարքայէ զերկիրն Տարօնոյ. և մահուընէն ետքը դասեցան ընդ աստուածս, զոհս՝ պաշտամունս և բագինս ընդունելով: Երկիցս երկրաշարժէ վնասեցաւ Գլակայ վանք. մետասաներորդ դարուն ալ՝ իսլամաց օրէնդիր Մահմետի քեռորդւոյն Ապտուրրահմանի ժամանակ՝ զօրք Պարսից այրեցին քանդեցին ու հրոյ ճարակ տուին Մագիստրոսի ձեռքով եղած շինութիւնքը ի նոյն վանս:

Ղազարու վանք, զոր նոյն սուրբ Լուսաւորիչ կառոյց, հոն ամփոփելով գնչխարս սրբոց առաքելոցն Պետրոսի և Անդրէի. և յանուանէ նախկին առաջնորդի տեղւոյն կոչեցաւ Եղիազարու վանք, և ապա խանգարմամբ Ղազարու: Ատեն անցնելէն ետքը Սուրբ Առաքելոց անունը կրեց, և ուրիշ ի համանուն վանօրէից որոշուելու համար՝ ընդհանրապէս կը կոչի Տարօնոյ կամ Մշոյ սուրբ Առաքելոց: Մեծաշէն ու պարսպապատ մենաստան, երկու ժամու հեռի ի Մուշ քաղաքէ, և ունի կրկին եկեղեցիս: Լուսաւորչի կ'ընծայուի դարձեալ՝ Էջմիածին, ու անոր մօտաւոր ի պատիւ սրբուհեացն Հռիփսիմեայ և Գայիանեայ կառուցուած մենաստանք, Աղջոց, Հոգեաց և Ձորոյ վանաց շինութիւնն կամ պայծառութիւն և բարեկարգութիւն: Անուանի էին դարձեալ Մատրավանք կամ Մարգարէանոց սրբոյն Յովհաննու ըստ Բիւզանդայ, Տիրաշինի ուխտ, Թանահատք, Տիրանաշէն կամ սրբոյն Ներսեսի վանք, և այլն[1]:

Գրիգոր Լուսաւորիչ. 195
    Յաճախապատում. 196
    Մանր երկասիրութիւնք. 199
    Պատարագամատոյց. 201

    Տեսիլ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի յորժամ ել ի վիրապէն.
    Պատմութիւն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, զոր եհարց ընդ հրեշտակին Աստուծոյ մինչ էր ի յայրին Մանեայ.
    Հարցմունք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և պատասխանի հրեշտակին վասն որդւոյ (ոգւոց) մարդկան.

---

[1] Հեղինակաց վրայ խօսելու ատեննիս՝ իրենց ընծայուածներն նշանակեր ենք առանց հարազատութեան կամ անհարազատութեան նայելու

  - Հարցմունք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և պատմելոյ հրեշտակին.
  - Աղօթք. «Աւրհնեալ է մարդասիրութիւն». 201
  - » «Աղաչեմ զքեզ, փրկիչ աշխարհի». 201
  - Աղօթք ի Պատարագամատոյցին. «Տէր աստուած արարիչ մեր»:
  - Աղօթք ի Պատարագամատոյցին. «Արժան և յիրաւի ըստ»:
  - Գիրք բնութեան Հոգւոյն սրբոյ. «Եւթանասուն և ութ անուանք նախահարցն»: (Մատենադարան Էջմիածնի)։
  - Բան վասն հաւատոյ. (Մատ. Էջմ.)։
  - Արձակման աղօթք. «Ողորմեսցի քեզ». (Սմա ընծայի ի ՅՃԽՊ. Ա)։
  - Ճառ արբեցողաց և կանանց անպարկեշտից. «Զի գինի յիմարեցուցանէ»։
  - Ի խորհուրդ Աւագ Ուրբաթի և ի Չարչարանքն Տեառն. «Ապա յորժամ հրեշտակն»։
  - Վասն յետին գալստեան Քրիստոսի և դատաստանին։
- Ագաթանգեղոս. 202
  - Պատմութիւն սրբոյն Գրիգորի. 212
  - Արձանագրութիւն առ Սերէոսի. 218
  - Դաշանց թուղթ. 225
  - Վասն վանորէից որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. 229
  - Բան զկայենէ (հատուած)։
  - Մեծին Ագաթանգեղոսի վասն անզեղջ մեռելոց։
- Զենոբ ասորի Գլակ. 234
  - Պատմութիւն Տարօնոյ. 235
- Ներսէս Մեծն Պարթեւ. 238
  - Պատմութիւնը կ'ընծայէ իրեն հազարի չափ վանաց հիմնարկութիւն. աւանդութիւնն ալ քանի մը աղօթք և հանգստեան շարականներ. 240

- Բիւզանդ Փաւստոս. 242
  - Պատմութիւն Հայոց. 252
- Պրոյերեսիոս կամ Պարոյր Հայկազն. 256

ԴԱՐ Ե

Յետ գիւտի հայկական նշանագրաց։

Դարուս մէջ նշանաւոր դպրոցքն էին սրբոյն Սահակայ և Մեսրովպայ ձեռքով բացուածներն թէ բուն Հայաստանի և թէ Յունաց բաժնին մէջ եղածներն։ Ի վանորայս՝ Նորավանք. Այրի և Ոչխարաց վանք։

- Սահակ Պարթեւ, Մեծն. 268
  - Կանոնական թուղթ մը. 272
  - Թուղթք առ Ատտիկոս և Պրոկղ հայրապետս Կոստանդնուպոլսի. 273
  - Թուղթ առ փոքրն Թէոդոս. 273
  - Հատուած բանի. «Այլ մեք հաւատամք ի մի աստուած հայր ամենակալ». (Ճառընտ. ԻԹ)։
  - Տեսիլ. 273, 405
  - Շարականներ. 273, 274
- Մեսրովբ կամ Մաշտոց. 274
  - Ծխարանին մէկ մասը. 279
  - Շարականներ. 280
  - Քանի մը համառօտ աղօթք. 280
  - Խրատական թուղթք. 280
- Թարգմանիչք. 280
- Առաջին աշակերտք.
  - Յովսէփ ի Վայոց ձորոյ. 289
  - Յովհան. 289
  - Ղեւոնդ երէց ի Վանանդայ. 290
  - Եզնիկ Կողբացի. 291

Կորիւն. 291
Մուշէ Տարոնացի. 291
Տիրայր Խորձենացի. 291
Յովսէփ Պաղնացի. 291
Յովհան Եկեղեցացի. 291
Ենովք. 293
Դանան. 293
Երեմիա, սարկաւագապետ Ս. Սահակայ. 293
Թադիկ. 293
Գնիթ, եպիսկոպոս Դերջանայ. 294
Արձան Արծրունի. 294
Աղան Արծրունի. 294
Ստեփանոս Տարոնացի. 294
Ղազարիկ կամ Ղազրիկ. 294

Երկրորդ աշակերտք.

Մովսէս Խորենացի. 295
Մամբրէ վերծանող. 295
Դաւիթ Անյաղթ. 295
Գիւտ կաթողիկոս. 295
Յովհան Մանդակունի. 295
Եղիշէ. 295
Ղազար Փարպեցի. 295
Եզրաս Անգեղացի. 295
Ճարտասանութիւն. (Յիշէ Աբել Վարդապետ Մխիթարեան յԷջմիածին ի Թղթին գրելոյ ի 1842 «Առ իս գտանին, ասէ, այժմ ընդօրինակելիք․․ բան սքանչելի առնն Կորեան, Շիրակայ? և ճարտասանութիւն Եզրասայ Անգեղացւոյ. արդարեւ մի միայն գրողի ճարտասանութիւն յազգի մերում»։
Խոսրով կամ Խոսրովիկ. 295
Պատմ. Ս. Սահակայ. 295
Թարգմանութիւն Զրօրհնեաց (Ս. Բարսղի). 295
Յովհաննէս. 295

Աբրահամ կամ Աբէլ. Պատմութիւն արեւելեան վըկայից. «Երանելւոյն Աբրահամու խոստովանողի ի Վկայն արեւելից». Այսպէս մակագրի ի Հրաշափառ կոչեցեալ՝ Տօնականն Էջմիածնի, որ գրեալ է յամին 1456 ըստ ՅՀ. Սահրատացւոյ, որ նովին վերնագրաւ ասէ գտանիլ և յայլ ճառընտիրս. 295
Անանիա. 296
Յովնաթան. 296
Խաչիկ կամ Խաչատուր. 296
Անդրէաս. 297
Թաթուլ. 296, 298
Վարոս. 298
Եզնիկ Կողբացի. 300
Եղծ աղանդոց. 301
Եզնըկայ խրատք. 305
Հարցումն Արձանայ և պատասխանիք Եզնըկայ Կողբացւոյ. 305
Հարցումն Աշոտոյ որդւոյ Սմբատայ և պատասխանիք Եզնըկայ Կողբացւոյ. 305
Վասն պատրաստութեան հաղորդողաց. 306
Վասն արարչութեան. 306
Սահմանադրութիւն կարգաց... Թարգմանեցաւ ընդ ձեռն Եզնակայ հրամանաւ երանելւոյն Սահակայ. 306
Յաղագս որոշման զանազան հերձուածողաց. 306
Պատմական գրուածք մը (առ Ստեփ. լեհացւոյ). 307
Թուղթ առ Մաշտոց վարդապետ. 307
Ճառք (անհարազատք). 307
Կորիւն. (տ. վերը՝ էջ Զ, ծնթ. 1). 310
Պատմ. վարուց սրբոյն Մեսրովպայ. 311
Դաւիթ Անյաղթ. (վերջին տպ. Վեննա. 1932). 314
Դաւթի Անյաղթ փիլիսոփայի և փիլիկեայ Հոռոմոց վարդապետի, և Հոմերիայ արուեստաւորի և Մով-

սխի Քերթողահօր, յաղագս վարժողական ուսմանց, իմաստութիւն երգողական տառից ըստ այրուբենից.

Յիշատակագրութիւնք այսր աղագաւ. «Եւ սոքա ի յունական տանէն ի ճարտասան իմաստիցն ի Հռոմ քաղաքէն բերեալ ընծայեցին մեզ գգիրս: Բան Ա. Այր է սկիզբն առաջին լուսոյ արարչութեանն և նուազում խաւարի»:

Արտաքնոցն մեկնութիւն կամ Արտաքնոց բնաւքն, թարգմանեալ և մեկնեալ. (Մատ. Էջմիածնի):

Հարցուածք իմաստասիրականք և իմաստասիրելի. «Զինչ է մարդ»:

Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի.

Լուծումն նոյն գրոց.

Մեկնութիւն Պերիարմինեայ.

Վեց սկզբանց և Պերիարմինեայ.

Վերլուծութիւն Արիստոտելի կամ ԺԴ. գլխոյ.

Լուծումն սոյն գրոց.

Վերլուծութիւն Պիտոյից և Էակաց.

Այս եակք գրոց համար կը կարդանք յիշատակարանի մը մէջ. «Ես Գուրգէն քարտուղարս Հայոց մեծաց և սուրբ Թագաւորացն Պատոյապաթար, ստացող եղէ գրոցս այսմ. բայց զարմանալի է ի նախկին յիշատակի գրոցս այսմիկ թէ գրեցաւ գիրքս այս Էակաց թարգմանեալ ի յունաց ի հայ, հրամանաւ տեառն Յովաննիսի Հայոց կաթողիկոսի Գաբեղենացւոյ ի Իէ թուականութեանս Հայոց»:

Գիրք Էակաց. «Ի քանիս բաժանի էակն»:

Վասն մարդեղութեան Քրիստոսի, և ընդդէմ հերձուածողաց. կամ բան հաւատոյ ի մարմնաւորութիւն Քրիստոսի. (Լազարեան լս. թիւ 32: Կիրակոս յիշէ զճառն ի Ծնունդ Քրիստոսի):

Ի Վարդավառն. «Այսօր զուարճալի և գերափայլ»:

Թուղթ առ Գիւտ կաթողիկոս.

Վասն արուեստաւոր իմաստասիրացն. «Յառաջնում մերձաւորութեանն». (հակիրճ բանք իմաստասիրաց):

Յաղագս Սաղմոսաց:

Դաւթի Անյաղթ վարդապետի գովեստ ի սուրբ կաթուղիկէն. «Վասն մեր ի մաղթանս հայցեալ»:

Անուանք սուրբ մարգարէից և հարց թէ յոյր ժամանակս էին Դաւթայ գրեալ. «Ովսէէն»:

Աղաւթագիրք. այս է գիր իմաստութեան զոր հաւաքեալ է մեծ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն՝ գիտողաց:

Ներբող խաչի. 318

Սահմանաց գիրք, կամ Սահմանք իմաստասիրութեան. 320

Գովեստ ներբողական ի սուրբ Եկեղեցի – յԵրուսաղէմ. (անհարազատ). 324

Գիւտ. 324

Թուղթ առ Դաւիթ Անյաղթ. 326

Թուղթ առ Վաչէ արքայ Աղուանից. 326

Աղօթք ի ժամագիրս. 327

Յովհան Մանդակունի. 327

Ճառք. 330, 331

Ճառ խօսեցեալ յեկեղեցւոջ Դըւնայ. 333

Աղօթք ի մաշտոցի և ի ժամագիրս. 333

Պատմ. փոխման կուսին. 333

Կարգ Մկրտութեան, և Ձեռնադրութիւն Եպիսկոպոսի.

Օրհնութիւն Եկեղեցւոյ.

Պատարագամատոյց Աթանասի.

Ճառ արարչութեան.

Քարոզ վասն պատուիրանի սիրոյ. «Լուարուք ինձ, որդեակք»:

Կանոն ապաշխարող առնելոյ.

խրատ վասն սիրոյ, յոտնլուայն. «Աստուած սէր է». Ի Մաշթոցի միում նշանակի այսպէս. «Երանելոյն Մանդակունւոյ որ Պլուզ ասի, որ վասն սիրոյ»:

- Եղիշէ. 334
  - Պատմութիւն Վարդանանց. 336
  - Ճառ Միանձանց. 346
  - Մեկն. Յեսուայ և Դատաւորաց. 347
  - Մեկնութիւն տէրունական աղօթից. 347
  - Արարածոց մեկնութիւն. 348
  - Այլ և այլ ճառք. 347
  - Վասն Հաղորդութեան. «Զոր յաներեւոյթն ունին»:
  - Ի սուրբ Առաքելս. «Եւ որպէս Պետրոս».
  - Վասն դատաստանին. «Ահեղ և զարմանալի»:
  - Ի Թաղումն. «Դարձեալ յետ այսր ամենայնի»:
  - Ի Խաչելութիւն. «Ի նմին ժամանակի»:
  - Ի Մատնութիւնն. «Արդ ահա հասայ»:
  - Ի Մկրտութիւն. «Հրաշափառ և պայծառ»:
  - Ի Յարութիւն. «Արդ յոյժ սիրեմ զտեղին»:
  - Յետ Յարութեան. «Արդ Պետրոսի զայս»:
  - Առ Տիբերեայ ծովուն. «Դարձեալ միւսանգամ յայտնեաց»:
  - Վարդապետութեան գիրք ըստ Յովհաննու սիրելւոյ ի չարչարանս Տեառն:
  - Բան շահաւէտ և օգտակար հոգւոյ համայնից. «Ո՛վ հաւատացեալ հարք իմ»:
  - Խաչելութեան գիրքն (Նիկոմիդիա):
  - Թագաւորաց մեկնութիւն. «Արդ իբրեւ ետես»:
  - Կանոնք. «Բազում են ախտք մարդկան:
  - Եղիշէի՝ վասն անպատշաճ աւուր ամուսնութեան:
  - Վասն հոգւոց մարդկան:
  - Աղօթք քահանայաթաղի. «Ահեղ և զարմանալի»: — «Փողն երկնաւոր»:

  - Հատուածք բանից Եղիշէի. (Ի ժողով. Մովսիսի Ջուղ.)
  - «Չի թէ մեծութիւնն մեղք է»: — «Արդարախօս լինելն»: — «Չիք բարի զոր չիցէ»: — «Որպէս օգուտ են դեղքն»: — «Որ զինքն մահու արենի»: — «Անորակ և անորպիսութիւն»:
  - Ի Յարութիւն Ղազարու. «Ամենայն նշանք աստուածայինք». տպեալն յանուն Մամբրէի՝ ի ճառընտիրս ինչ Եղիշէի ընծայի:
- Մովսէս Խորենացի. 350
  - Պատմութիւն Հայոց. 353
  - Աշխարհագրութիւն. 375
  - Պիտոյից գիրք. 379
  - Պատմութիւն սրբուհւոյ Աստուածածնի և պատկերի նորա. 383
  - Ներբող ի սուրբն Հռիփսիմէ. 385
  - Պատմութիւն ճանապարհորդութեան Հռիփսիմեանց. 385
  - (Պատմութիւն Հռիփսիմեանց).
  - Ճառ ի Վարդավառն. 385
  - Մեկնութիւն կարգաց եկեղեցւոյ. (անհարազատ). 386
  - Քերականական երկասիրութիւնք (անհարազատ). 387
  - Նշանագիրք Խորենացւոյ.
  - Երանելոյն Մովսիսի Քերթողահօրն մեծի Խորենացի եպիսկոպոսի. «Յաղագս ի յոլովից կատարեալ կենդանի ընդէ՞ր մի բնութիւն»:
  - Ի մեծի աւուր Տապանակին: «Տօնախմբութիւն տօնակիս»:
  - Պատճառք վասն սուրբ մարգարէից. «Սիրով մեծաւ փափաքեցին»:
  - Մեղեդի սուրբ Լուսաւորչին, Մովսիսի քերթողի ոգեալ. «Ո՛վ արքայակերպ»: (Այլուր աւանդի ասացեալ ի պատիւ Գիւտայ կաթուղիկոսի):

Տրդատայ Թագաւորին և նմանեաց իւրոց ի Մովսիսէ քերթողէ:
Ճառ վասն մարմնաւորութեան Բանին Աստուծոյ: (Յիշէ Խոսրովիկ և հատուած ի մէջ ածէ):
Մովսիսի Քերթողահօրն Հայոց վարդապետի և իմաստասիրի յաղագս Եկեղեցւոյ՝ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ. (Ի հին օրինակի գրոց Արշարունւոյն. Թուի Խորենացւոյ):
Մովսիսի աղօթք. «Աղաչեմք զքեզ, տէր»:
Թէոդորոսի զօրավարի ծնունդ և մնունդ. «Ի ժամանակին յորժամ Մակեդոնացին Աղեքսանդր»: Թուի Խորենացւոյն, զի յօրինակի միում Մատ. Էջմիածնի առի. «Ի Մովսիսի պատմութենէն»:
Կանոնական բանք:
Մամբրէ. 388
Ճառ ի յարութիւնն Ղազարու. 388
Ի գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ. «Նախախնամութիւնն»: 389
Այլ ի նոյն նիւթ բանի. «Զբազումս թողով Էմմանուէլի»:
Պատմութիւն, (անյայտ). 389
Ճառ ի ծնունդ փրկչին. 390
Մամբրէի հարցմունք վասն հաւատոց. (Մատեն. Էջմիածնի»:
Քերականական գրուածք (անհարազատք): 390
Ղազար Փարպեցի. 391
Թուղթ առ Վահան Մամիկոնեան. 397
Պատմութիւն Հայոց. 397

ԴԱՐ Զ

Այս դարուս մէջ հռչակաւոր էր ուսմամբ Սիւնեաց վարդապետարանը:

Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեանց. 408
Առ Վաչագան արքայ վասն ննջեցելոց. 408
Պատմութիւն ժողովոյն Եփեսոսի. 408
Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց. 409
Ներբողեան ի սուրբ Աստուածածին. 410
Ի ծնունդն Քրիստոսի. 410
Առ Վաչագան արքայ՝ յաղագս մարդեղութեան Քրիստոսի. 410
Պատմութիւն (անյայտ). 411
Ներբող ի Բաբիկ Սիւնի. (անյայտ). 411
Մովսէս կաթուղիկոս Եղիվարդեցի. 414
Կիւրիոն Վրաց կաթուղիկոս: 416
Աբրահամ Ա. Հայոց կաթուղիկոս, 416
Թուղթք նորա երեք առ Կիւրիոն և պատասխանիք. 417
Ձեռնարկ զոր ետուն Աբրահամու ի միաւորութիւն աշխարհիս Հայոց. «Յեւթնեւտասներորդ ամի Ապրուէզի Խոսրովու արքայից արքայի»:
Թուղթ առ Մովսէս եպիսկոպոս Ցուրտաւայ. «Սրբասիրի... Տեսի զգիր»:
Թուղթ շրջագայական. «Նազելի և ի վեր քան զբանի բերմանս». 419
Աբրահամու Հայոց կաթուղիկոսի ասացեալ վասն երից ժողովոցն և դաւանութեան սուրբ Հաւատոյ. «Եւ քանզի այսպէս հաւատամք» (Թուի ի Թղթոցն):

ԴԱՐ Է

Եօթներորդ դարուս նշանաւոր ուսումնավայրքն էին ի Հայս՝ Վարդիկ հայր կոչուած վարդապետարանը յԱրշարունիս, Մայրոյ վանք, Դպրեվանք՝ ի Շիրակ, և Խաչկայ վանք՝ ի Կարին:

- Կոմիտաս կաթողիկոս. 423
  - «Անձինք» (շարական) Հռիփսիմեանց. 423
  - Ճառք (անհարազատք). 425
  - Սկիզբն հաւատոյ. «Քանզի այսպէս ընկալաք»:
  - (Այլ). Վասն հաւատոյ. (Թուղթ դաւանութեան առ եպիսկոպոսունս Ասորւոց). 425
  - Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի և Պիւռոսի կոստանդնուպոլսի պատրիարքի: (Այսպէս յիշի ի ցանկի 22. ի Նոր Ջուղա գրեալ ի ՋԽԱ. ի Կիւլիկիա): Ի Տօն. Երզնկացւոյն. «Օրինակ իջուցանելոյ (Քրիստոսի) ի խաչէն, ասէ Կոմիտաս կաթողիկոս ի վիճելն ընդ Պիւռոսի պատրիարքի, եթէ գրեաց Նեքտառիոս հռովմայեցի թէ չեղեւ հնար Յովսեփայ իջուցանել». 426
- Եզնիկ երէց. 426
- Եզր կաթողիկոս. 426
- Մաթուսաղա. 427
  - Մաթուսաղայի Սիւնեաց եպիսկոպոսի թուղթ առ Հերակլ (Ռուպ). 429
  - Սորագրութիւն աշխարհագրական հայաստանեայց վասն անցից կաթուղիկոսաց. Նոյն.
  - (Յաջորդութիւնք զկնի Մաթուսաղայի քերթողի. «Յետ երանելի առնն Մաթուսաղայի». Մատեն. Էջմիածնի):
- Յաջորդութիւնք թագաւորաց. «Յետ Տրդատայ թագաւորի»:
  - Եկեղեցւոյ կարգաց քննութիւնք:
- Գրիգորատուր վարդապետ. 429
- Յովհան Մայրագոմեցի. 429
  - Ի հաւատոյ արմատոյն գրուագս. «Հաւատամք ի մի Աստուած». 430
  - Ի կանոնս ժողովոյն Եփեսոսի (կանոն ժող. Յուն. 139) յիշի. «Զարապաշտ հաւատարմատն զոր ի Թէոդորէ Մոպսուեստացւոյ եղեալ էր և ի Խարիսիոս քահանայէ Փիլադելփացւոյ ընդդէմ սուրբ ժողովոյն Եփեսոսի»:
- Բարգէն կաթողիկոս.
  - Թուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս. «Սրբասէր և ճշմարտասէր... տէր Գանիէլ Քարմայ եպիսկոպոս... ի Բարգենայ»:
- Այլ թուղթ. «Եղբարց մերոց սիրելեաց ուղղափառաց... Բարգէն Հայոց եպիսկոպոսապետ... ի Վարդայ Մամիկոնէից եպիսկոպոսէ»:
- Յովհան Մամիկոնեան. 431
  - Պատմութիւն Տարօնոյ. 431
- Սեբէոս եպիսկոպոս. 435
  - Պատմութիւն ի Հերակլ. 435
- Մովսէս Կաղանկատուացի. 442
  - Պատմութիւն. 443
- Դաւիթ Բագրեւանդացի կամ փիլիսոփայ. 454
  - Առ Աշոտ պատրիկ, յաղագս բնութեան Քրիստոսի. 454
  - Դաւթի փիլիսոփայի գրուատ գովեստի ի Նախավըկայն Քրիստոսի սուրբ Ստեփանոս. «Մեծ է օր յիշատակի»:
  - Վասն որպիսութեան կենաց իւրոց.
- Անանիա Շիրակացի. 456
  - Աստեղագիտութիւն. 458
  - Տումարական բանք.
  - Պատճէն տումարի մեծ Հայոց.
  - Ժամանակագրութիւնք (երկրայականք). 463
  - Յաղագս չափուց և կշռոց. 463
  - Վեցհազարեակ կամ Եօթնագրեանք. (անհարազատ). 464
  - Թուաբանական բանք. խրախճանականք.
  - Ականց բացատրութիւն
  - Վասն յայտնութեան աշխարհի. 464

Վասն զատկի. «Ջառն սրբոյ պասեքին»: 464
Գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծեացն վասն նորա. «Որպէս զի ծանիցի իմոց բանիցն ճշմարտութիւն՝ որոց կամիցին ներհուն լինել լաւագոյն մտածութեամբ բովանդակ իմանալ զհաւատոյս բանից իմոց»: 464
Թիւ գրոց հին և նոր կտակարանաց:
Անծանօթ գրուածներ. 464
Վրթանէս քերթող. 465
Ճառ ընդդէմ պատկերամարտից. 466
Թուղթք. 467
Գրիգոր քերթող. 468
Թուղթ առ Աբրահամ կաթողիկոս. 468
Մովսէս Ցուրտաւայ եպիսկոպոս.
Թուղթ առ Վրթանէս քերթող.
Թուղթ շրջագայական. «Ի ժամագրութիւն երկնից վիճակեալք»:
Պատճառք չորրորդ ժողովոյն Երկաբնակացն. «Արդ յետ փոխելոյ»:
Պատասխանի թղթոյն Վրթանիսի. «Տեսաք զթուղթ ուղղափառ»:
Այլ թուղթք երկու առ նոյն Վրթանէս:
Թուղթ առ սրբասէր տէր Աբրահամ կաթուղիկոս. «Լուայ, հայր պատուական»:
Թուղթ առ Սմբատ Վրկան մարզպան.
Թէոդորոս Քռթենաւոր. 469
Ընդդէմ Մայրագոմեցւոյն. 470
Ներբող ի սուրբ խաչն աստուածընկալ. 471
Գովեստ ի Սուրբ Աստուածածինն. 471
Կցորդ սուրբ վկայից. «Թագաւոր փառաց Քրիստոս: Որք վասն քոյ». (Տնագլուխք ըստ անուան՝ Թէոդորոս):
Մովսէս Սիւնեցի. 472

Մովսէս պատմագիր (յ'Է դարու. այլ ի Խորենացւոյն և ի Կաղանկատուացւոյն).
Մովսիսի պատմագրի վասն գիւտի սուրբ Խաչին յԵրուսաղէմ, ի ձեռն աստուածասէր Հեղինէ տիկնոջ. (Մատեն. Էջմ.)
Նորին Մովսիսի պատմագրի ասացեալ, յաղագս սուրբ Նշանի ի Վարագ:
Մովսիսի քերթողահօրն ժամանակացոյցք:
Գրիգոր Արշարունի. 473
Մեկն. ընթերցուածոց. 473
Փիլոն Տիրակացի. 474
Սահակ կաթողիկոս. 475
Թուղթ առ Մոհմատ. 476
Ճառ ի տօնի Արմաւենեաց. 476
Շարականք. 476

ԴԱՐ Ը

Դարուս նշանակութեան արժանի դպրոցներն էին Մաքենաց կամ Մաքենոցաց մենաստանն՝ ի Գեղարքունիս, Ջրեսկ կոչուած սուրբ ուխտն՝ ի Շիրակ, Միհրներսեհի վանքը կամ Ջրվշտիկ, Թանահատք՝ ի Սիւնիս, Հերմոնավանք, Արտենից վանք, Գնդայի վանք՝ ի Վայոց ձոր, Հոռոմայր կամ Հոռոմոսի վանք՝ ի Լոռի:

Յովհան Իմաստասէր. 477
Յառաջին կենցաղս կամ Ատենախօսութիւն, 480
Ընդդէմ Երեւութականաց 481
Ընդդէմ Պաւլիկեանց. 484
Յաղագս կարգաց եկեղեցւոյ. «Զաստուածային և զկենդանազօրս». 485
Նորին. «Իսկ ի տուընջեան որոշեալ սահմանք»:
Ի Միաշաբաթուն. «Իսկ զփառաւորագունիւ». 485

Նորին. «Արդ ասասցուք զխորհուրդ»։

Մեկն. ժամակարգութեան (հատուածք)։

Յիշատակարան կանոնագրոց։

Եկեղեցւոյ հիմնարկէք. «ժողովէ աստուածային քահանայապետն». 487

Նորաշէն եկեղեցւոյ օրհնութիւն. «Մտանեն երեկոյեան»։

Եկեղեցւոյ ճառ. «Բարեբանեցէք». (Ի Ճառընտրի Մխիթ. Վիեն. մակագրի այսպիսի ինչ. «Նաւակատիք սուրբ կաթողիկէ Եկեղեցւոյ, Տեառն Յովհաննու, ի Տարօն որ ի յերգս երգոյն օրինակեալ ի սուրբ եկեղեցի»։ Գուցէ ուրիշ ինչ։

Յաղագս երեկորին պաշտամանց։

Կանոնք. 486

Ծաղկաքաղ համարագիրք երգոց Դաւթի ի խնդրոյ Թէոփիլոսի աշակերտի։

Շարականք. 486

Անհարազատ կամ երկբայական գրուածներ. 488

Յովհաննու կաթուղիկոսի ընդդէմ այնոցիկ որ ապականեն զսուրբ խորհուրդն ի ձեռն խմորոյ և ջրոյ. «Ահա յառաջագոյն ծանուցեալ առաքելոցն»։ (Մանազկերտցւոյն թուի)։

Յովհաննու երանելւոյն Հայոց եպիսկոպոսապետի ապացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն կամ մի բնութիւն. «Եւ քանզի առաքելականն և մարգարէից կտակն ոչ ուրեք յիշատակին»։ (Թղթոց գիրք)։ Ի սորին լս. օրինակին նշանակի և իմաստ. այլ որպէս և ի կարգէ Թղթոցն երեւի՝ սա երէց է քան զիմաստասէրն. և զի նախադասեալ է քան զԹուղթն Բարգենի՝ գուցէ Մանդակունւոյն իցէ. զի կայ զկնի նամակն Յովհաննու Բ առ Սիւնիս. և այլ բանք յանուն իմաստասիրին. 488

Յովհաննու վարդապետի բանք, վասն պատրաստութեան Միաշաբաթու (թուի իմաստասիրին։ Մատեն. էջմ.)։

Յովհաննէս Բ կաթուղիկոս, և այլ եպիսկոպոսունք, առ Սիւնեաց եպիսկոպոսն և առ Տէրն. «Քրիստոսիւ պայծառացելոյ սիրելի եղբօր»։

Թուղթ առ Աղուանից եպիսկոպոսունս. «Լուաց և ճշմարտից... Արասու»։

Յովհաննու Հայոց կաթուղիկոսի ի Յայտնութիւնն Քրիստոսի. «Զգարնանային ժամանակի աւուրս»։ (Թուի Յովհ. Բ. կաթուղիկոսի)։

Ստեփանոս Սիւնեցի. 489

Թուղթ առ պատրիարքն Անտիոքայ. 494

Առ վարդապետս Աղուանից. 494

Շարականք. 494

Մեկն. Արարածոց, Յոբայ, Դանիէլի, Եզեկիելի. 495

Անհարազատ երկասիրութիւնք. 495, 496

Ղեւոնդ Երէց. 497

Պատմութիւն Մահմետի և յաջորդաց նորա. 497

ԴԱՐ Թ

Իններորդ դարուս գլխաւոր վանորայքն և ուսումնատեղիքն էին Աղթամար, Խոտակերից վանք, Սեւան, Տաթեւ։ Հռչակաւորագոյն էին վերջին երկուքը, յորոց Սեւանայ համար կը վկայէ Ասողիկ. «Ի ծովուն Գեղամայ զկղզին Սեւանայ բնակութիւն իւր արարեալ (Մաշտոցի) շինէ զեկեղեցին ի նմա որ Առաքելոց անուանեալ. յոր միացեալ ժողովեցան եղբարց բազմութիւն կանոնագրութեամբ սահմանաւ սրբոյն Բարսղի, միակրօնք ի տան Աստուծոյ եղեալք. ստանալով զբազմութիւն գրոց սրբոց»։ Իսկ Տաթեւու կամ Ստաթէի վանից համար որ ի Սիւնիս՝ կը գրուցէ Ուռպելեան թէ Հայոց ՅԽԴ (896) թուականին ի ժամանակս Յովհաննու եպիսկոպոսի Սիւնեաց լեցուն էր այն մենաստանը «ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց. ճոխ էր և վարժարան դպրոցացն վարդապետական կրթութեամբն. Նաեւ արուեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»: Կը յիշուին դարձեալ փշոց վանք յԱղբակ, կարմրակայ վանք ի Վան, Ահավանք ի Վասպուրական, Խաչի վանք յԱղթամար և յԱղբակ, և այլն:

Խոսրովիկ

Աստուածաբանական բանք.
Յաղագս քառասնորդական պահոց. «Մեծ զէն և զարդ».
Առ հարցմունս հայրապետին Անտիոքայ.
Հաւատոյ թուղթ.
Զաքարիա կաթողիկոս. 500
Թուղթ առ Փոտ. 502
Թուղթ Փոտայ առ Աշոտ. 501
Պատասխանի Աշոտոյ առ Փոտ. 502
Ճառք զանազանք. 502
Շապուհ Բագրատունի. 503
Պատմութիւն. 504
Մաշթոց կաթողիկոս. 506
Թուղթ առ Գառնեցիս. 509
Պատմութիւն (անյայտ). 510
Յովհան կաթողիկոս. 511
Պատմութիւն Հայոց. 513
Թովմա Արծրունի. 518
Պատմութիւն Արծրունեաց. 522
Յովհաննէս Բժիշկ. 530
Դաւիթ վանահայր՝ ի Սուրբ Ստեփանոս Բագրեւանդայ. 530
Ստեփանոս աշակերտ Մաշթոց կաթողիկոսի. 531
Գուրգէն Արծրունի. 531
Գէորգ Բ կաթողիկոս. 531

Գէորգայ Հայոց վերադիտողի և հոգեշնորհ փիլիսոփայի պատասխանի թղթոյն Ասորւոց պատրիարքի. «Զ'առ ի յաստուածուստ պարգեւեալ». 531

ԴԱՐ Ժ

Տասներորդ դարուս մէջ ծաղկեցան ուսմամբ յԱրշարունիս՝ Կամրջաձորոյ վանքը, Հնձուց կամ Կարմիր վանք ի Շիրակ, այսպէս կոչուած Ռոմանոս կայսերէն հալածուած միանձանց հոն ապաւինելուն համար. Նարեկայ վանք՝ ի Ռշտունիս, Մոկաց գաւառին մէջ Ապարանից եպիսկոպոսանիստ ուխտը, Ցախաց քար մենաստանը, զոր Ասողիկ «բարձրահռչակ և սուրբ առաքինաստան» կը կոչէ, Մարմաշէն կամ Մարմարաշէն սուրբ ուխտը և Հառիճոյ վանք՝ ի Շիրակ:

Անանիա Նարեկացի. 532
Թոնդրակեցւոց դէմ. 533
Մեկն. առաքելական թղթոց. 534
Ճառք. 534
Խոսրով Անձեւացի. 535
Ժամագրոց մեկնութիւն. 535
Մեկնութիւն խորհրդոյ սրբոյ պատարագին. 536
Մեկնութիւն Աղօթից. (Մատենադ. Էջմիածնի):
Կրօնագիտութիւն Խոսրովու Անձեւացեաց [1].
Բանք երանելւոյն Խոսրովայ. 537
Գրիգոր Նարեկացի. 538
Ապարանից խաչին պատմութիւն. 539
Ներբողեան ի սուրբ Կոյսն. 541
Ճառ ի գովեստ Առաքելոց. 542

---

[1] Մեր առաջին տպագրութեանց Պ—ջէր կամ ցանկը կատարելագոյն ընծայելու դիտմամբ՝ Հ. Ալիշան Վարդապետի և այլոց երկասիրութեամբք օգտուեր ենք.

Գովեստ ի Ս. Յակոբ Մծբնայ. 542

Երգ երգոցի մեկնութիւն. 543

Աղօթք կամ Նարեկ. 544

Կարգ և կանոն աղօթից, զոր խնդրեալ է հոգեկիր արանց. «Առաքեալն Պաւղոս»:

Հրահանգ հաւատոյ. 548

Վասն ուղիղ հաւատոյ.

Հաւաքածք աստուածաբանական բանից:

Մեկն. Ո՞վ է գայի. 547

Մանր երկասիրութիւնք. 547

Գանձ Եկեղեցւոյ. 547

Գանձ խաչի. 547

Գանձ հոգեգալստեան. 547

Տաղք. «Անուն անեղին»: — «Աչքն ծով ի ծով»: — «Աւետիս մեծ խորհրդոյ»: — «Գոհար վարդն»: — «Գունդք սուրբ վկայից»: — «Ես ձայն զառիւծուն ասեմ»: — «Երգ զարմանալի»: — «Երկինք ի յերկինս»: — «Էն էին յանէին»: — «Էն ի միշտ էին»: — «Ի նոյն ի նորոյ»: — «Հաւուն հաւուն»: — «Ձայն կենդանատուն»: — «Յանկարծահնչեաց»: — «Յառաջ քան շարժիցն»: — «Սայլն այն իջանէր»: — «Սեաւ եմ գեղեցիկ»: — «Սէր յառաւօտէ»: — «Սկզբնազօր գոյին»:

Բան քահանայաթաղի. «Աւրհնեալ է Աստուած և հայր տեառն մերոյ»:

Թուղթ ի հոյակապ և յականաւոր ուխտն Կճաւոյ վասն կարծեացն անիծելոց Թոնդրակեանց Յանէսի և Յամրէսի, որ եկն զգեստիւ ոչխարաց և ի ներքոյ գայլ յափշտակող, որ և ի պտղոյ ծանուցաւ ամենից. զոր լուեալ սուրբ վարդապետին՝ գրեաց սակս ազատութեան ի չար կարծեացն, «Տէր հայր, զոր»:

Ի բան. «Հայեաց յանձն քո. զուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քո»:

Անհարազատ գրուածներ. 547

Գէորգ Անեցի.

Գանձք երեքտասան. որոց ամենքն իր անունը կը յօդեն:

Խաչիկ կաթողիկոս. 549

Բան խոստովանութեան: Պատասխանի Յունաց գրոյն զոր արձակեալ էր առ մետրապոլիտն Մելիտինոյ: (Տես Սամուէլ Կամրջաձորեցի. զի սա գրեաց ըզթուղթն). 549

Դաւիթ վանահայր. 550

Պետրոս մեկնիչ սուրբ գրոց. 550

Մովսէս Տարօնացի. 550

Սարգիս. 550

Ստեփանոս. 550

Դաւիթ Մաշկոտն. 550

Դաւիթ եպիսկոպոս Մոկաց. 550

Տիմոթէոս. 550

Ստեփանոս Ասողիկ. 551

Պատմութիւն տիեզերական. 552

Մեկնութիւն Երեմիայ. 554

Ուխտանէս եպիսկոպոս. 555

Պատմութիւն. 556

Մեսրովպ Երէց. 561

Պատմութիւն սրբոյն Ներսեսի. 564

Մուշեղ Բագրատունի. 568

Արտաւազդ Մաղազունեաց տէր. 568

Սամուէլ Կամրջաձորեցի. 569

Տաճատ վարդապետ. 569

Ատոմ՝ Անձեւացեաց եպիսկոպոս. 568

Ճառ ի սուրբ Կարապետն. 568

Ատովմ Երէց.

Տաղ ի սուրբ Լուսաւորիչն. «Պարգեւատուն ամենեցուն աստուածորդին»:

Ի սուրբն Ոսկեբերան. «Ի հանդէս տօնի քոյ».
Թուղթ առ Աշոտ Անձևացեաց իշխան՝ սակս պէսպէս հարցմանց. «Աստուածապաշտ և աստուածասէր իշխանիդ իմոյ»։ (Մատենադ. Էջմիածնի, թիւ 127։ Յիշէ և Ստեփանոս Լեհացի)։

ԴԱՐ ԺԱ

Նշանաւորութեան արժանի ուսումնավայրքն էին ի Ձորոյգետ՝ Սանահին և Հաղբատ, զորս Աշոտ Ողորմած թագաւորին կենակիցն Խոսրովանոյշ կանգնեց, ու Բագրատունի Աղուանից Կորիկէ թագաւորը նորոգելով, եպիսկոպոսանիստ ըրաւ զՀաղբատ, որուն մատենադարանը՝ ամենափարթամ գանձարան կը կոչէ յիշատակագիր մը։ Անուանի էին դարձեալ Խնատի վանքը, Տրապիզոնի մօտ Ամենափրկիչ մենաստանը, և Արգինա՝ ի Շիրակ գաւառի Այրարատու։

Յովհաննէս վարդապետ Կոզեռն՝ Տարօնացի. 570
Հաւատոց գիրք. 571
Մեկնութիւն Տոմարի. 571
Պատմութիւն (անյայտ). 571
Գրիգոր Մագիստրոս. 572
Թուղթք 87-88 առ այլևայլ անձինս. 576
Ի խաչանման գաւազան ընծայեալ Պետրոսի կաթուղիկոսի Գետադարձ. 584
Քերականականք. 582
Քերթողականք։ — Թուղթք. 583
Ներբող ի սուրբ խաչն աստուածընկալ. 584
Հազարտողեանն առ Մանուչէ. 584
Տաղ ի սուրբ Կարապետ.
(Թուի գիրս իմն յօրինեալ պատմութեան սրբոց աբանց կամ ճգնաւորաց, ըստ Կ Նամակին)։
Պետրոս Գետադարձ. 587

Անանիա Սանահնեցի. 588
Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց. 589
Դիմադրութեան առ Յոյնս. (երեքտասան գլուխք)։
(Նոյն թուի Մեծափառ ճառատոյ կոչեցեալ գիրք)։
Մեկնութիւն Պաւղոսի խմբագիր. 588
Մեկն. Մատթէի (Մատ. Էջմիածնի)։
Սարգիս Սեւանեցի. 590
Սամուէլ վարդապետ առաջնորդ Խնատի. 591
Գէորգ վարդապետ. 591
Տիգրան Պահլաւունի. 591
Արիստակէս Լաստիվերտցի. 592
Պատմութիւն Հայոց. 592
Ընթերցուածոց մեկնութեան ճառք. 595
Գրիգոր Վկայասէր. 596
Գործոց մեկնութիւն. 599
Թուղթ վասն Զատկաց. «Զաստուածասիրութեան ըզգիրս ձեր»։
Ժամատետր սրբոյն Յակովբայ Տեառնեղբօր։
Թարգմանութիւնք. 601
Կիրակոս վարդապետ } օգնականք Վկայասիրի.
Մատթէոս վարդապետ } 602, 603
Գէորգ Մեղրիկ. 604
Երգք օրհնութեանց հոգւոց սրբոց և մաղթանք մաքուր մտաց առ Աստուած.
Խոստովանութիւն սուրբ վարդապետին Մեղրըկայ.
Աղօթք. «Դու տէր սրտագէտ»։
Բան յաղագս աղօթից զղջման.
Գէորգ վարդապետի Մեղրիկ կոչեցելոյ Զափարերականք և Խոստովանութիւնք. շարադրեալ ի Թուին Հայոց ՇԴԲ. (Ի Լազարեան դպրոցի ի Մոսկուա)։
Թէոդորոս վարդապետ Ալախոսիկ. 604
Գագիկ Արծրունի.
Թուղթ առ Ռոմանոս և առ կայսրն Հռոմ. «Հովուապետի»։

Սիսիանոս վարդապետ. 605
Պօղոս Տարօնացի. 605

ԴԱՐ ԺԲ

Գլխաւոր ուսմանց տեղիք՝ Կարմիր վանք ի փոքր Հայս՝ Մարաշու մօտ, Սեաւ լեառն ի Մարաշ, Գետկայ վանք յարեւելեան Հայս, Դրազարկի, Սկեւռայ վանք ի սահմանս Կիլիկիոյ, Գռներոյ ուխտ, Գանձակ կամ Գանձասար յԱրցախ։ Թող նախընթաց դարուն մէջ յիշատակուած վանորայք։

Յովհաննէս վարդապետ Սարկաւագ. 606
  Պատմութիւն Հայոց (անյայտ). Հատուածք առ Սամուելի Անեցւոյ. 609
  Յաղագս քահանայութեան. 612
  Ներբողեան. 612
  Աղօթամատոյց։ Առաքելոց տպագրելոցն ի Սոփերս. «Ո՛վ անզգայութեան»։ — «Որ ի չափ խոնարհութեան»։ — Սարկաւագայ թուի բանն յաղագս Հաւատոյ, Յուսոյ, Սիրոյ. «Գլուխք և արմատք յԱստուծոյ առ մարդիկ». 612
  Ի մեկնութենէն Ղուկայ յԱնառակ որդին։ (Մեկն. Ղուկայ Սարգսի Կունդ). 613
  Մեկնութիւն յԵւագրէն, ի բանից վարդապետին Սարկաւագ կոչեցելոյ։
  Յաղագս չորից առաքինութեանց. 615
  Հարցումն վարդապետաց առ Սարկաւագ. 615
  Յաղագս մասանց պատուոյ և պատկերաց. 613
  Տաղ Յարութեան. «Ծագումն փառաց Էլին»։
  Վասն չարժման երկրի. «Իսկ վասն չարժման երկրի». 613
  Տումարի մեկնութիւն. «Արդ վասն զի յարանց ամսոց» (յԱրաց ամսոյ?). 613
  Յաղագս անկիւնաւոր թուոց, աղիւսակօք. 613
  Յովհաննու իմաստասիրի՝ մականուն Սարկաւագ, ասացեալ յառաջ քան զգրութիւն իւրոյ տումարի, «Յառաջնում ամի թագաւորութեան փիլիպպոսի». 613
  Յովհաննու քահանայի և իմաստասիրի ասացեալ՝ յաղագս ամսոց Հայոց և տօնից, և յաղագս չորեքտասանորդաց լուսնին զատկաց. «Ախմարաց և ոչ քաջահմուտ արանց կարգուած էր և էն». 613
  Յաղագս Յարակայից. «Կարծեօք և առանց պատճառի».
  Յովհաննու քահանայի. «Ոչ է մեզ գիտել»։
  » » «Եթէ կամիցիս յելանելոյն Ադամայ»։
  Յաղագս եղանակաց և տօնից և քանիօնութեան ամաց. «Զնախնեաց կարծիս»։
  Աստուածաբանական բանք։
  Ընդդէմ Երկաբնակաց. 615
  Վիճաբանական կամ պատմական բան. «Ի յարութենէն Քրիստոսի մինչեւ ցԲեկտոր»։
  Դատաստանաց գիրք. (յիշատակի ի կանոնագիրս)։
  Ի Սարեակն. 613
Երեմիա Անձրեւիկ. 615
Սամուէլ Երէց. 615
Անանիա. 615
Խաչատուր. 615
Գրիգոր Անեցի. 615
Յովհաննէս Անեցի. 615
Սարգիս Կունդ. 615
Ստեփանոս Մանուկ. 616
Գրիգոր Պահլաւունի. 618
Ներսէս Շնորհալի. 621
  Ընդհանրական. 625
  Պատճառ խնդրոյ միաբանութեան։ Թուղթք. 626

  - Թուղթք առ այլեւայլ անձինս. 627, 628, 630, 631
  - Հրեշտակաց ներբող. 631
  - Մեկնութիւն Բարձրացուցեաց. 632
  - Մեկնութիւն Մատթէի. 632
  - Մեկնութիւն կաթուղիկեայց. 633
  - Մանր երկասիրութիւնք. 634
  - Խրատ ժամերգութեան. 635
  - Ողբ Եդեսիոյ. 637
  - Յիսուս որդի. 639
  - Բան հաւատոյ. 639
  - Յաղագս երկնից և զարդուց նոցա. 639
  - Վիպասանութիւն. 640
  - Մանր քերթուածք. Հանելուկք. 640, 641
- Իգնատիոս վարդապետ. 642
  - Մեկնութիւն յաւետարանն Ղուկասու. 642
- Իգնատիոս վարդապետ (ուրիշ).
  - Մեկնութիւն Ղուկայ և Յովհաննու: (Տես Յիշատակր. 283 – 293): Թուի հին քան զծանօթն Իգնատիոս վարդապետ. և հին յոյժ, եթէ արդարեւ ի ՃՂՋ թուի գրեալ իցէ ճառընտիրն. (ուրն չյիշի). զոր ցանկեալ է Պետրոսեան Պօղոս վարդապետ, զառաջին հատորն. և որոյ ճառ ՃԻԴ է «Սրբոյն Իգնատիոսի Հայոց վարդապետի ի մեկնութենէ աւետարանին որ ըստ Ղուկասու». «Բազմադիմի առակօք». վեց թուղթ բան է, յերրորդ կիւրակէ քառասնորդաց: Յայսմ ճառընտրի յետնագոյն գրուած է Գրիգորի Արծրունւոյ Թուղթ ի Հայս. և Թէոդորի գիտնականի ներբողեան ի սուրբ կոյսն, որոյ սկիզբն. «Զբանաւոր». և Թէոդորոս եկաց յեօթներորդ դարու:
- Սարգիս Շնորհալի. 643
  - Մեկնութիւն կաթուղիկեայց. 643
  - Մեկնութիւն Եսայեայ. 647
- Ներսէս Լամբրոնեցի. 648

  - Ատենաբանութիւն. 652
  - Մեկնութիւն Պատարագի. 653
  - Մեկն. Արարածոց. 657
  - Մեկն. Առակաց. 656
  - Մեկն. Ժողովողի. 656
  - Մեկն. Իմաստութեան. 656
  - Մեկն. Երգոց երգոյն. 656
  - Մեկն. երկոտասան փոքր մարգարէից. 656
  - Մեկն. Սաղմոսաց. 656
  - Մեկն. Դանիելի. 656
  - Մեկն. Տէրունական առակաց. 657
  - Էր ընդ եղբարսն. 657
  - Ճառք. 659
  - Քերթողական գրուածք. 659
  - Վարք Գր. Նարեկացւոյ. 659
  - Մեկնութիւն ութ խորհրդոց. 659
  - Անուանք Քաղաքաց-շինողաց. 659
- Գրիգոր Գանձակեցի. 660
- Դաւիթ Գանձակեցի. 661
- Խաչատուր արեղայ.
  - Պատճառք և լծ. Նիւսացւոյն գրոց:
- Գրիգոր իմաստասէր Յեսուանց. 661
  - «Բան գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան և սննդեան, քաղաքավարութեան և վերափոխման Աստուածածնի, արարեալ ի Գրիգորէ մեծաւորէ, ըստ խնդրոյ Յակովբայ քահանայի և Վարդանայ դիւանագրի»:
- Խաչատուր քահանայ աշակերտ Լամբրոնացւոյն. 661
- Դաւիթ քահանայ. 661
- Մատթէոս Ուռհայեցի. 662
  - Պատմութիւն. 663
- Գրիգոր Երէց, շարայարող պատմութեան նորա. 669
- Սամուէլ Երէց. 671

ժամանակագրութիւն. 672
Մխիթար Հերացի. 674
Ջերմանց մխիթարութիւն. 676
Գրիգոր Տղայ. 680
Թուղթք. 682, 683, 684
Ողբք Երուսաղեմի. 684
Երկու թուղթք առ Սալահէտտին սուլդան. (Ցիշին առ Միշոյի ի Պատմ. Խաչակրաց). Բ Հտր. 382–385
Մխիթար Գոշ. 685
Դատաստանագիրք. 689
Շարք հայրապետացն Աղուանից. 693
Առակք. 694
Մեկն. Երեմիայ, Ողբոց և Բարուքայ. 695
Մեկն. Եսայեայ. (Մատեն. Էջմիածնի):
Յաղագս միաւորութեան Բանին:
Երկոտասան մարգարէից մեկն.
Արարածոց մեկնութիւն:
Բան խրատու վասն զգուշութեամբ սպասաւորել մարմնոյ և արեան Տեառն. «Գլուխ ամենայն բարեացդ առ մեզ եղեալ»:
Մաղթանս վասն ճշմարիտ և հաճոյ սպասաւորել մարմնոյ և արեան տեառն, ի խնդրոյ ի Համբակ ուսմեն ի քահանայէ. «Եւ քանզի անթուելիք»:
Աղօթք. 695
Խաչատուր Տարոնացի. 697
Տաղք. 698
Վարդան Հայկազն 699
Դաւիթ Քոբայրեցի. 701
Դաւթայ շարադրեալ զաւանդ իմաստնոց. պայծառ նաւակատեաց Եկեղեցւոյ որ զկնի Պենտակոստէին ի քսանն տրեայ ամսոյ, զոր Հայաստանեայց տօնեն եկեղեցիք. «Ի բազմաց զանազանից կարծեաց»:
Լուծումն ճառից Աստուածաբանի. (սորա թուի պատճառ կամ լուծումն եօթն գրոց փիլոնի):

Ի բանն, Զի որպէս փայլակն. «Մարգարէք և առաքեալք»:
Մեկն. Յովբայ. (Վանական վարդապետ առնու ի սմանէ յետ ԻԴ գլխոյ, ասելով այսպէս. «Կատարեցաւ Նեսիւքն, և այժմ Դաւիթ Վարդապետին որ Քոբայրեցի կոչիւր»). 701
(Սորա թուի. Դաւիթ վարդապետի ասացեալ Պատճառք ճառից Ժողովողի Նիւսացւոյն):
Նորին պատճառ վերջին ճառին. (մեկն. Հայր մերի). «Եկն և ի մեզ հոգեւոր խրախճանութիւն»:
Նորին պատճառ Պահոց ի գրոց Բարսղի:
Դաւթայ վարդապետի ի խնդրոյ աշակերտաց իւրոց, պատճառք Աւագ երկուշաբաթի. «Յաւուրս Նշանաւորս փոյ հարկանել օրինադրի»:
Պատճառ Նախախնամութեան գրոցն փիլոնի. «Անզեղջ է Աստուած ի ձիրս».
Գրիգոր Ապիրատ.
Աղօթք ի խորհուրդ մարմնոյ և արեան. «Կացցէ ընդէմ փրկական»:
(Գրիգորիս փոքր Վկայասէրն).
Գրիգոր Կլայեցի Գ. կաթուղիկոս.
Շարական սրբոյն Գրիգորի ի Գրիգորէ Մեծէ Կլայեցւոյ. «Գահապետ իմն աճաւոր»:
Յաղագս ծննդեան Աստուածածին Մարիամու. «Զամենաշնորհ և զճշմարիտ»:
Գէորգ Երզնկացի (քննելի ժամանակն).
Ի բանն. «Ո՞ արար զհրեշտակս իւր»:
Խրատ Մկրտութեան և Դրոշմի:
Խրատ Պսակի և մեկնութեան զարդուց հարսանեաց:
Համառօտ մեկնութիւն Աշ ոտսին:
Բանք ընդդէմ Երկաբնակաց:
Սամուէլ ծերունի. 701
Դաւիթ վարդապետ. 701

Համառօտ մեկնութիւն Եսայեայ, ի հոգեկիր մեկնողաց բանից... ի խնդրոյ ուսումնասէր մանկանց եկեղեցւոյ.
Արիստակէս վարդապետ. 701
Շարայարութիւն մեկնութեան Մատթէի ի Շնորհալւոյն. 702
Վասն ութօրեայ նաւակատեաց Աստուածայայտնութեան. «Որք ստուէր»: (Գուցէ Լաստիվերտցւոյն և մասն մեկնութեան ընթերցուածոց). 702
Ի մեծի հինգշաբաթի ոտնլուային խորհուրդ. «Աստուածապարգև շնորհիւ լցեալ որդիք». 702
Ի նոր կիւրակէն. «Նոր է տօնս և չքնաղ որ ի նմա են խորհուրդք»:
Եփրեմ, աշակերտ Նորա. 701
Ստեփանոս Տիրացու. 702
Յովհաննէս կրօնաւոր. 702
Բարսեղ վարդապետ. 704
Գրիգոր դպիր. 706
Կոստանդին Բ կաթուղիկոս. 708
Յովհաննէս Արքայեղբայր. 709
(Սորա թուին շարականք գտեալք առ Լեհացիս և ի տպագրեալ ձայնքաղս).
Կանոն սրբոյն Սարգսի, որոյ գլխատառք Յոհաննիսի առ սուրբ Յոհաննես. «Յերկնաւոր զօրացն օրհնեալ, — Աստուածը հարցն գովեալ»:
Կանոն սուրբ Երրորդութեան. գլխատառքն Յոհաննես որ էր արքայ, նա զսա խնդրեաց. «Յերկս անձինքս բաժանեալ — Եւ մի բնութիւն ոչ զատեալ»:
Տաղ սուրբ Աստուածածնին, որոյ նախագիծ տանցն ըստ անուանն է երգողին. մեծին Յովհաննիսի վարդապետի ասացեալ, եղբօր թագաւորին Հայոց. «Յոր էնն հօրէն կատարեալ». 710
Նորին Յովհաննու յարքայն Հեթում մինչ ի Տաթարն էր, որոյ նախագիծ տանցն. «Երրորդութիւն սուրբ» 710

Նորին Յովհաննու մեղեդի ապաշխարութեան. «Յորժամ ածեմ ըզմտաւ զօրն ահագին». 710
Գրուատ գովեստի նաւակատեաց սուրբ տնօրինականաց տեղեացն Քրիստոսի. «Շրջեցարուք զՍիոնիւ»:
Թորոս վարդապետ. 712
Ստեփանոս վարդապետ. 712
Յովհաննէս Ճլուղ. 712
Թորոս փիլիսոփայ կամ Երաժիշտ. 713

ԴԱՐ ԺԳ

Այս դարուս մէջ ծաղկած ուսումնարաններն՝ բաց ի նախայիշատակելոց, էին Սեպուհ լեառն կամ Մանեայ այրք, Դարանաղիք, զոր ծաղկեցոյց Երզնկացին. Խորանաշատ՝ յԱրցախ կամ յԱղուանս, զոր պայծառացոյց Վանական: Սուրբն Գադի՝ յԱրցախ, Ծախծոր՝ Վասպուրական աշխարհին մէջ. սուրբ Անդրէաս՝ ի Գուգարս, մեծին Վարդանայ ուսումնարանը, Ղազարու կամ Առաքելոց վանք՝ ի Տարոն:

Գրիգոր Սկեւռացի. 714
Ներբող ի Ս. Լամբրոնեցի. 715
Ճառք. 716
Շարականք. 716
Գէորգ Սկեւռացի. 717
Մեկնութիւն Եսայեայ. 718
Արուեստ գրչութեան. 718
Խմբագիր մեկն. Գործոց. 721, 619
Մխիթար Անեցի, 722
Պատմութիւն. 722
Կոստանդին Ա. կաթուղիկոս. 728

  - Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, զոր խնդրեաց Իննովկենտիոս քահանայապետ. «Բանիւք դուզնաքեայ». 729
  - Սահման մասանց պէսպէս շարժմանց և կրից.
- Վանական վարդապետ. 729
  - Յոբայ մեկնութիւն. 732
  - Պատմութիւն (անյայտ). 734
  - Մանր գրուածք. 733
- Վարդան վարդապետ. 735
  - Պատմութիւն. 737
  - Դանիելի մեկնութիւն. 740
  - Սաղմոսի մեկնութիւն. 740
  - Մեկնութիւն Հնգամատենին. 740
  - Մեկնութիւն Երգոց Երգոյն. 741
  - Ներբող ի սուրբ Լուսաւորիչն. 741
  - Քերականի մեկնութիւն. 742
  - Առակք. 742
  - Աշխարհագրութիւն. 743
  - Մանր գրուածներ. 743
- Բենիկ վարդապետ.
  - Աղօթամատոյց գիրք.
- Կիրակոս Գանձակեցի. 745
  - Պատմութիւն. 746
- Մխիթար Սկեւռացի. 749
  - Պատասխանի առ Լիկաթ Պապին. 749–50
  - Յաղագս համեմատութեան երկոտասան առաքելոց... ի հրամանէ թագաւորին Հայոց Հեթմոյ, ի յորդորմանէ եպիսկոպոսին Կոստանդնոյ Յակոբայ. «Անհասանելի և անծանօթ»։
- Պաղտին իշխան. 750
  - Թուղթն. 750
- Վարհամ կամ Վարդան վարդապետ. 751
- Կիրակոս Արեւելցի. 751

  - Հաւաքումն Յայսմաւուրաց. 751
- Կիրակոս Երզնկացի.
  - Ի Տեառնընդառաջն. «Ել ահա այր մի էր... ծնողաց և նախնեաց».
  - Թուղթ առ ամենայն Հայս.
  - Աղօթք առ սուրբ Աստուածածինն. «Աստուածածին տաճար բանին».
  - Մեկն. Հարիւրաւորաց Եւագրի.
  - Տեսութիւն ութ խորհրդոց Եւագրի.
- Կիրակոս (Թուի. հնագոյն ժամանակաւ).
  - « Տիեզերալոյս և սուրբ վարդապետի ասացեալ՝ աղօթք. Տէր աստուած մեր և հզօր անճառելի». (երկար, ընտիր).
  - Խրատ խոստովանութեան. «Պարտ է քրիստոնէին՝ յորժամ կամիցի».
  - Խրատ վասն կրթութեան և օգտութեան կենաց. «Իմաստութիւն Աստուծոյ և շնորհք».
- Յովհաննէս Երզնկացի. 752
  - Մեկնութիւն Քերականի. (Թրակացւոյն). 757
  - Բանք յաղագս երկնային շարժմանց. 759
  - Ներբող ի սուրբ Լուսաւորիչն. 761
  - Մեկնութիւն Մատթէի. (լրումն Շնորհալւոյն). 763
  - Խրատականք. 763
  - Հաւաքումն մեկնութեան քերականի (ընդարձակ).
  - Խրատք հասարակաց քրիստոնէից. (տասն գլուխք).
  - Գովեստ ի Ս. Լուսաւորիչն.
  - Յորդիս և ի Թոռունս սուրբ Լուսաւորչին.
  - Յաղագս երկնից և զարդուց նորա.
  - Խրատ առ Յակոբ մանկտաւագ երզնկացի.
  - Այբուբենական.
  - Իմաստութիւն գլխոյն. Յիմաստութիւն կենաց վերին.
  - Գանձ վարդավառի. «Յանճառ լուսոյն».
  - Գանձ Ջրօրհնեաց. «Յամենայն ժամ». 764

Տաղք այլեւայլ. 764
Խրատք կանոնականք յառաջելոց.
Պատմութիւն պիտանացու բանից ի յօգուտ ուսումնասիրաց.
Քարոզգիրք.
Տրամաբանութիւն.
Յովհ. Երզնկացւոյ առակք. (Մատ. Էջմիածնի. 2238)։
Աղօթագիրք. 763
Մեկն. ի վերայ ութ խորհրդոց Եւագրի.
Ի Յարութիւն Քրիստոսի. «Այսօր յարեաւ Քրիստոս ի մեռելոց».
Ի Տէր ո՞ հաւատաց. «Աստուածային խորհրդոյս հազարապետն».
Մեկնութիւն լուսաւոր գրոց Եւագրի.
Թարգմանութիւն թղթոյ Վահանայ (Յովհաննու) եպիսկոպոսի Նիկիոյ, հրամանաւ առաջնոյ Լեւոնի թագաւորի ի Սիս.
Վասն հոգեւորական և սուրբ սիրոյ.
Վասն ապաշխարութեան. «Արդ պարտ է ամենեցուն».
(Սորա թուի և ներբող ի սուրբն Ներսէս Շնորհալի).
(Մատ. Էջմիածնի).
Յովհաննու Երզնկացւոյ Տաղք.
Ի Մեծացուսցէն. «Հրաշափառական իմն զարմացմամբ».
Յաղագս մանկանց եկեղեցւոյ. «Օրհնեալ աստուծոյ անունն».
Յաղագս պատուելոյ կամ անպատուելոյ զբանն. «Ամենեցուն ժամանակ է».
Ի խորհուրդ ծննդեան և մկրտութեան ասացեալ ի թագաւորական քաղաքն Սիս. «Ոմանք ըստ բազում պատճառաց».
Ի բանն. «Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ». յաւուրն յորում օրհնեցան ձիաւորք արքայորդին մեր Հեթում և Թորոս, և այլ մանգունք իշխանաց և որք յարքունական սպասաւորացն. «Յարաժամ բաղձանօք նորալուրն և նորատեսն և նորագործն».

Ի սուրբ Պատարագին. Մատիք առ Տէր. «Զուարճանան բարգաւաճեալքն յանձնաւորական հըրճմունս»։
Ի բանն. Աքանչելի եղեւ գիտութիւն քոյ. խօսեցեալ առ տէր Գրիգոր վարդապետ և եպիսկոպոս յԱնաւարզա. «Զիմաստութիւն տեսականին և գործնականին»։
Ի խորհուրդ խաչելութեան. «Զբանին Աստուծոյ զխորհուրդ»։
Յորդորակ ասացուածի եկեղեցւոյ, ի խնդրոյ Ստեփան վարդապետի Կիւլիկոսցւոյ. «Բայց զի՞նչ քեզ ընծայս արժանաւոր»։
Քաղուած յԱնանիայի գրոցն որ ընդդէմ Թոնդրակեցւոցն. «Երկու են մեզ տեսակք եկեղեցւոյ»։
Գովասանութիւն կաթուղիկոսաց և եպիսկոպոսաց.
Կանոնք և սահմանք միաբանութեան եղբարց, որք աստուածային սիրով միաբանեցան յեղբայրութիւն միմեանց յԵզնկա ի ՁԻԹ. ուր հանդիպեալ է և Գրիգոր վարդապետ ծերունի Սանահնեցի. «Բանն Աստուած բանիւ գոյացոյց զամենայն արարածս»։
Յաղագս սրբոց Հռիփսիմեանց. (քաղեալ ի Մ. Խորենացւոյ). «Էր սուրբն Հռիփսիմէ».
Յաղագս սրբոց հայրապետաց. և ի բանն. Ես եմ հովիւն քաջ. «Սիոնի մօրն և համայնից մօրն»։
Վասն ննջեցելոց. Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութիւն. «Ամենայնի ժամ է և ժամանակ ի ներքոյ երկնից»։
Ի միամտութիւն աղաւնոյ. «Որ ինչ յաղագս խորագիտութեան օձի»։
Ի սուրբ Առաքեալսն. «Եկեղեցւոյ երկնի կենդանակերպք ճշմարիտք»։

վան Դաւթի մարգարէին. Եւ զղջացաւ Տէր. «Աստուածային բնութիւն պարզ է».

Ի բանն. Պատուական է մահ. «Յերիս որոշեալ բաժանին»:

Պատմութիւն Լուսաւորչի համառօտ. «Ի յԱդամայ քսան և մի Նահապետ»:

Ի յարութիւն Ղազարու. «Արուեստք ամենայն յերիս որոշմունս»:

Ի խորհուրդ մեծի հինգշաբաթի, նորին ի մի ածեալ յարմարութիւն գրանս Վարդան վարդապետի և Վահրամայ կիլիկեցւոյ. «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի... Աստուածայինքն իւրք են միայն»:

Ի բանն. Հոգի Տեառն ի վերայ իմ. «Նոքա որ իմա... գրոց զանձն»:

Յովհաննու վարդապետի ծործորեցւոյն արարեալ ի բանէն Եսայեայ որ ասէ. Հոգի... (Ի վերջաբանին հեղինակն ցուցանէ իւր զանձն աշակերտեալ Եսայի վարդապետի Նչեցւոյ, կամ ի խնդրոյ նորա արարեալ):

Մեկնութիւն Սաղմոսի համառօտեալ ի Լամբրոնացւոյն. (ցԾՁ սաղմոսն):

Աշխարհացոյց (յ34 թիւ ցանկի գրչագրաց Էնֆիէճեանց ի Թիֆլիզ):

Ի ՃԽԸ սաղմոս. Տէր կարդացի առ քեզ. «Անզուգական և անբաղդատելի սիրոյն Աստուծոյ առ ազգս մարդկան, վկայ են երկինք»:

Ի ՁԸ սաղմոս. Քո են երկինք. «Արար Աստուած զեկեղեցի երկինք»:

Ի ԾԹ սաղմոս. Աստուած մերժեցեր. «Գիտել արժան է զի ոչ է յաշխարհի»:

Ի ԺԷ սաղմոս. Սիրեցից զքեզ, Տէր. «Երանական և անսահման բնութիւնն Աստուծոյ»:

Ի ԼԴ սաղմոս. Դատեա, Տէր. «Աստուածային երջանիկ և բարի բնութիւն»:

Ի ԾԲ սաղմոս. Ասաց անզգամն. «Որք մակացութեան բժշկութեան արուեստին են հմուտք»:

Ի Հ սաղմոս. Աստուած ողորմեա մեզ. «Կերպարան և պատկեր»:

Ի ՁԸ սաղմոսն. Զողորմութիւնս քո, Տէր. «Անքննելի խորոցն Աստուծոյ տեսողն»:

Ի ՃԼԵ սաղմոսն. Խոստովան եղերուք. «Սկիզբն և պատճառ ամենայն բարեաց»:

Ի ՃԺԸ սաղմոսն. Իշխանք հալածեցին. «Սաղմոսս այս բազում դէմս իմաստութեան»:

Ի ԽԶ սաղմոսն. Օրհնեա անձն իմ, զՏէր. «Ամենայն արուեստք և մակացութիւնք բանաւորաց»:

» » » Յաղօթս կացցեն ամենայն սուրբք. «Անմարմին և անհասանելի բնութիւն»:

Ի ՃԼԱ սաղմոսն. Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. «Յիսկական և ի բուն բարւոյն բնաւորեալ»:

Յերգս Մովսիսի. Օրհնեսցուք զՏէր. «Աստուածային հրաշիցն պատմութիւնք և լուրք».

Յաղօթս Աննայի. Հաստատեցաւ. «Որք յանդնդական խորս լայնատարած ծովու»:

Ներսէս Տարոնացի. 765

Յովհաննէս Արճիշեցի	աշակերտք
Եսայի Նչեցի	Ներսիսի
Մխիթար Սասունցի	Տարոնացւոյ. 765

Թէ զինչ է պատճառ մարդեղութեան Բանին Աստուծոյ:

Սմբատ (Պատմիչ) Գունդստապլ. 766

Տարեգիրք. 769

Գիրք Օրինաց. 771

Գրիգոր Անաւարզեցի կաթուղիկոս. 774

Յայսմաւուրք լատինացւոց և յունաց տօնիւք. 774

Յամենայն սուրբս Ներբող զոր խնդրեաց Հեթում ի հինգերորդ ամի իշխանութեան իւրոյ. «Կաթուղիկէ և առաքելական եկեղեցի». 775

Շարականք. Նախատօնակ ծննդեան Քրիստոսի. «Պատրաստ լեր դու, Բեթղեհէմ»:

Առաջին աւուր ծննդեան. «փառք ի բարձունս այսօր Աստուծոյ»:

Ամենայն սրբոց. «Անճառ խորոց քո գիտութեամբ»:

Թլփատութեան Տեառն. «Որ խոստացար տէր ի քեզ»: (Տնագլուխքն. Կոստանդիանոս արքայ խնդրեաց):

Գրիգորի Աստուածաբանի. «Հոգւոյն հնչման քնար և երգարան», (տնագլուխքն. Հեթում արքայ խընդրեաց):

Թէոդորոսի ստրատելատի. «Գովեալ անուն զօրաւոր». (Տնագլուքն. Գրիգորիոսի ի Թէոդորոս վկայ).

Գէորգայ զօրավարի. «Գովեալ գնդի զինուորաց». (Տնագլուխքն. Գրիգորիոսի առ Գէորգէոս վկայ):

Թէոդորոսի զօրավարի. «Գովեալ անճառ խնդութեամբ հայր գթութեան». (Տնագլուխքն. ի Թեւոդոր վկայ):

Ղուկասու աւետարանչի. «Հայր փառաց Աստուած». (Տնագլուխքն. Հեթում արքայ խնդրեաց. Գրիգոր):

Մատթէոսի աւետարանչի. «Խորհրդապէս հօր միածին»: (Տնագլուխքն. Խնդրեաց արքայն Հեթում Գրիգորի է):

Անդրէի առաքելոյն. «Գթածիդ բարւոյ Հօր». (Տնագլուխքն. Գրիգորիոսի առ Անդրէաս առաքեալ):

Նիկողայոսի հայրապետին. «Խնամոց քոց միշտ Ներգործութեամբ». (Տնագլուխքն. Խնդրեաց արքայն Հայոց Հեթում):

Մերկերիոսի զինւորին. «Խաղաղարար Նոր Թագաւոր». (Տն. Խնդրեաց արքայն Կոստանդին):

Շարական Հայրապետաց (13 տուն). «Հիման յառաքելս Հօր յայտնութեամբ արկեալ շինողք ի վերայ հաստատուն»: (Գլխատառք. Հեթմոյ ի Գրիգորէ):

Յղութեան Սուրբ Աստուածածնի. «Կարողաբար զօրութեամբ»:

Ընծայման. «Գովեմք զհայրըդ գթութեան»:

Ոտանաւորք.

Թուղթ առ Հեթում Բ. Թագաւոր. 775

Կոստանդինոս Սրիկ. (ըստ ոմանց Սորեկ).

Գովեստ սուրբ Աստուածածնի. ըստ անուան ոգողին անդրադարձութեամբ, «Գերահրաշ ծաղիկ»:

Տաղ գալստեան տեառն իշով յԵրուսաղէմ. «Նորահրաշ նոր երկինք եղեւ այսօր հինն Երուսաղէմ»:

Յարութեան. «Կանանցն կանխեալ եկին ի գերեզման»:

Յովհաննու Մկրտչի. «Կարապետին և Մկրտչին տօնեմք այսօր»:

Փոխման Աստուածածնի. «Կոյս անապական սուրբ Աստուածածին»:

Ծննդեան Քրիստոսի. «Կոյսն ծնանէր յայրին, կայր և զարմանայր»:

«Կոյսն անապական և անախտ ծնողութիւն»:

«Հրճուիմք այսօր մեք հոգեպէս»:

Եկեղեցւոյ. «Նոր Նորոգեալ կենաց մերոց»:

Մարտիրոսաց և կուսանաց. «Այսօր Նորահրաշ տօնիւ ցընծան»:

Գէորգայ զօրավարին. «Ի հանդիսական տօնի երգելով ըզերգս».

Ներսիսի մեծի. «Հընչմամբ ձայնի բերկրանաց»:

«Ի դասս հրեղինացն յօդեալ»:

Մկրտութեան. «Քրիստոս բանդ հօր անժամանակ»:

Գանձ ի ծնունդ Քրիստոսի. «Կենդանահօս աղբիւր լուսածին»:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՓՈՔՐ ՄԱՍՏԵՆԱԳԻՐՔ

Աբրահամ վարդապետ. 773
Գագիկ Բ Թագաւոր. 773
Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոս. 775
Գրիգոր որդի Աբասայ. 776
Գրիգոր Սարկաւագապետ. 776
Գրիգոր վարդապետ. 777
Դանիէլ վարդապետ. 777
Դաւիթ վարդապետ. 777
Դաւիթ փիլիսոփայ. 777
Դաւիթ քահանայ. 778
Եզնակ կաթուղիկոս. 778
Եղիշէ վարդապետ. 778
Եղիշէ քահանայ. 778
Եսայի վարդապետ. 778
Թէոդորոս Թարգմանիչ. 778
Թորոս, պարոն Կիլիկիոյ. 779
Ի խաչն Սուրբ. 783
Խոսրով Հռետոր. 780
Կապուտիկ վարդապետ. 780
Կարապետ Սասունցի. 780
Համամ վարդապետ. 780
Միսայէլ եպիսկոպոս. 781
Մովսէս վարդապետ. 781
Յակոբ գիտնական. 781
Յակոբ Քարափնեցի կամ Սանահնեցի. 781
Յակոբիկ Շնորհալից. 782

Յովհաննէս Մայրավանեցի. 782
Յովհաննէս վարդապետ. 783
Յովհաննէս Տարոնացի. 784
Յովհաննէս քորեպիսկոպոս. 784
Պաղտին իշխան. 784
Պատմութիւն ազգին Մամիկոնէից. 784
Պատմութիւն... Ռուբինեանց. 785
Սահակադուխտ. 785
Սամուէլ կամրջաձորեցի. 785
Սիմէոն. 785
Սիմէոն վարդապետ. 785
Ստեփանոս Երէց. 786
Վահան Մամիկոնեան. 786
Վահրամ պատմիչ. 786
Վահրամ րաբուն. 786
Վարդ Պատրիկ 788
Տիմոթէոս վարդապետ. 789
Տիրան վարդապետ. 789
Տիրատուր վարդապետ. 794
Տիրատուր վարդապետ. 790

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ՈՐՈՑ ԳՐՈՒԱԾՔ ՉԵՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԻՐ

Աթանաս. 791
Անաստաս. 791
Գագիկ, Թագաւոր կարուց. 791
Գէորգ վարդապետ. 791
Գրիգոր Մոնոնիկ. 792

Գրիգոր Շիրակացի. 792
Գրիգոր որդի Վասակայ. 792
Գրիգոր Տուտէորդի. 793
Դաւիթ վարդապետ. 793
Եղիա Հաւուցթառեցի. 793
Եփրեմ վարդապետ. 793
Թէոդորոս. 793
Թորոս աշակերտ Մխ. Գոշի. 794
Թորոս վարդապետ. 794
Խաչիկ վարդապետ. 794
Հմայեակ (սուրբ). 794
Մարտիրոս առաջնորդ Գետկայ. 795
Յակոբ վարդապետ. 795
Յեսու եպիսկոպոս. 795
Յովհաննէս Գառնեցի. 795
Յովհաննէս Տաւուշեցի. 796
Յովսէփ եպիսկոպոս. 796
Ներսէս իշխան. 796
Սամուէլ. 797
Սողոմոն կաթուղիկոս. 797
Սոսթենէս. 797
Ստեփանոս դրան երէց. 798
Տուրքիկ վարդապետ. 798

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Հայկական Դպրութիւնն համեմատուած ուրիշ հին ազգաց գրականութեան հետ։ — Անոր աղքատութեան պատճառները։ — Մեր մատենագրութեան բաժանումն ըստ դարուց։

ԱԶԳԱՅԻՆ Դպրութեանց կամ Գրականութեան պատմութիւնը՝ նոյն ազգին սիրտն ու հոգին կրող ամէն անձին մտադրութեանն և ուսման արժանաւոր է. վասն զի ինչպէս իրեն քաղաքական պատմութիւնը՝ ընտանի կենացը ճշգրիտ և հաւատարիմ պատկերն է, ասանկ ալ մատենագրականը՝ գրաւորականին. և թէ որ առաջինը զինուց և նիւթական ուժոյն զօրութիւնն ու չափը կը ցուցնէ, երկրորդը՝ ազգի մը անցելոյն մէջ ունեցած մտաւորական ուժին նկարագիրն է, որ ապագային համար մեծ ազդեցութիւն ունի։

Դպրութիւնն կամ մատենագրութիւնն երկու կերպով կրնայ մտածուիլ. նախ՝ իբրև գրաւոր երկասիրութիւնք՝ զանոնք առանձին քննելով՝ նկատմամբ իրենց ոճոյն կամ գրութեան կերպին. Երկրորդ՝ նոյն երկասիրութեանց առթից կամ հեղինակներուն վրայ՝ պատմական ու կենսագրական ծանօթութիւններ աւանդելով:

Այս երկու նկատմամբ ալ՝ մեր մատենագրական պատմութիւնը եթէ ոչ բոլորովին աղքատ, սակայն և ոչ այնչափ ճոխ կրնայ ենթադրուիլ: Քաղաքական ու եկեղեցական պատմութիւննիս ճոխ է, իրաւամբք հետաքրքրական և ընդարձակ դէպքերով. բայց ոչ նոյնպէս, ինչպէս փափաքելի էր, նաեւ ազգին մտաւորական պատմութիւնն կամ անոր թողած գրաւոր արտադրութիւնք:

Հայերէն դպրութեանց այս չքաւորութիւնն աւելի ըզգալի կ'ըլլայ՝ թէ որ բոլոր ուսումնական աշխարհի իրաւացի զարմանքն յաճախող յոյն և լատինական մատենագրութեանց հետ ուզենանք բաղդատել. վասն զի անոնց մէջ տեսնուած փայլուն հանճարը, հմտութիւնն, կիրթ ախորժակն ու բուն մատենագրական ոճը՝ ընդունայն է փնտռել, կամ յուսալ գտնել մեր մէջը. այլ ընդհակառակն մեր դպրութեանց պատմութիւնն և ուղիղ քննադատութիւնը պիտի ցուցնեն՝ թէ մերոնց մէջ անոնք որ բաւական չհամարելով ազգային նեղ և ամփոփ շրջանակ մը, իրենցմէ աւելի բարգաւաճ ժողովրդոց մտաւորական ուժոյն և արտադրութեանց մէջ ջանացեր են փնտռել առատագոյն ճաշակ և սնունդ մը, և անոնց հետեւողութեամբն ըրած են իրենց ուսումը՝ անոնք աւելի ընտիր երկասիրութիւններ թողած են: Թարգմանչաց դարը՝ որ ազգային պատմութեան դարագլուխ կազմած է՝ բանասիրական նկատմամբ ապականեալ ու եղծեալ Յունաստանին մէջ իրեն ուսումն առած, մտաւոր դաստիարակութիւնն ընդունած և բարգաւաճ եղած է հմտութեամբ: Ո՜րչափ աւելի հարուստ և նախանձելի կրնար ըլլալ մեր ոսկեղէն հինգերորդ դարու մատենագրութիւնը՝ եթէ պերիկլեան հռչակապանծ ժամանակաց պէս աննման հանճարներէ և ի վեհագոյն վարժապետաց կըրթուէր Հայաստանի ուսումնատենչ և ուշիմ երիտասարդութիւնը:

Ուրիշ մեզի դրացի ժողովուրդներ ալ ունեցած ենք, որոնց հետ քիչ կամ շատ յարաբերութեան մէջ գտնուեր է ազգերնիս: Եթէ անոնց հետ ալ ուզենանք համեմատել մեր գրականութիւնն, այլ և այլ մատենագրական ճիւղեր կրնանք նկատել՝ յորս մերոնք թերեւս առաւել յառաջադէմ և զարգացած համարուին. անանկ ճիւղեր ալ՝ յորս անոնք զմեզ կը գերազանցեն: Օրինակ իմն, պատմագրական մասով՝ գուցէ կարենանք վեր նկատուիլ ասիական ուրիշ շատ ազգերէն աւելի, ուր բանաստեղծականին մէջ՝ արաբացին, պարսիկն, և այլն, բուն բանաստեղծական անուան արժանաւոր նիւթեր արտադրած են, որոնց նմանը կամ ամենեւին և կամ խիստ քիչ կրնայ տեսնուիլ մեր քովը:

⁂

Ի՞նչ է արդեօք մեր մտաւոր և գրաւորական զարգացման այսպիսի նուաղութեան մը պատճառը: Ամենք այս աղքատութիւնն առթող այլ և այլ դէպքեր մէջ կը բերեն. Նինոս մը կը յիշատակեն, որ իրմէ առաջ երեւցած բոլոր քաջերուն պատմութիւնը ջնջել կու տայ, որպէս զի ինքը միայն անմահանայ. և իրեն այս փառասիրութեանը զոհ եղած կը համարին նաեւ մեր հին դպրութիւնը. — Մերուժան մը՝ որ բոլոր Հայաստանի մէջ գտնուած գըրքերն այրել կը հրամայէ. — Բարբարոսներ որ պատերազմօք մատենադարաններ կը քանդեն, կ'այրեն ու կը փճացնեն. և անոնցմէ ամենէն աւելի ահաւորագոյն թըշնամի մը, տգիտութիւնը՝ որ դարերով կը ծանրանայ Հայաստանի վրայ իրեն հետեւանք և արգասիք ամէն աղէտիւք:

Ասոնք, տարակոյս չկայ որ մեծամեծ պատճառներ կրնան ենթադրուիլ և ընդունելի համարուիլ. բայց մատենագրական աղքատութիւննիս բոլորովին և միայն այդպիսի արտաքին դիպաց և աղիտից արդասիք չէ: Նոյնպիսի և թերևս աւելի դժնդակ հալածանք կրած են յոյն և լատինական դպրութիւնք. և սակայն այսօր բոլոր աշխարհքը իրենց աքանչելի գրուածներովը լեցուցած են. միայն Փոտայ Մատենադարանն գիրքն այնչափ երկասիրութեանց կորուստ կը դնէ մեր առջևը, որ արժանաւոր ցաւոց հետ մեծագոյն զարմանք մը կ'ազդէ:

⁂

Ուսմանց և գիտութեանց՝ Հայաստանի մէջ պէտք եղած բարգաւաճանքը չունենալուն պատճառը, ոչ այնքան անոնց անյաջողութիւնն՝ որքան անսիրելութիւն մը եղած է. և այս անսիրելութիւնը՝ անոնց յառաջադիմութիւնը արգիլած: Պէտք է խոստովանիլ որ չունինք մեր պատմութեանց մէջ այնպիսի թագաւորներ՝ որ ուսմանց, գիտութեան և կրթութեան հալածիչք եղած ըլլան. սակայն քիչ ունինք այնպիսի իշխաններ ալ՝ որ անոնց յառաջադիմութեանը պէտք եղած փոյթն ու մտադրութիւնը երևցուցած ըլլան:

Գանձք են ուսումն և գիտութիւնք. բայց անոնցմով հարստանալու համար պէտք է զանոնք մեզի մօտեցնել, իրենք իրենցմէ մեզի չեն մօտենար: Վռամշապուհ՝ որ մեր պատմութեանց մէջ Պերիկլէս ու Մեկենաս մ'է, այս հնարքս գտաւ՝ իւր հայրենիքը բարգաւաճանաց և յառաջադիմութեան ճամբուն մէջ մտցնելու: Առաջ դպրոցներ բանալ տուաւ Հայաստանի մէջ, ու սպասած արդիւնքը չտեսաւ անոնցմէ. անոր համար հարկ համարեց ճանապարհորդութիւններ ընել տալ, և ուր աւելի կը տեսնուէր մտաւորական զարգացումն՝ հոն աւելի կեցնել և աշխատցնել տուաւ Թարգմանչաց դասը: Պատմութիւնն և արդիւնք իրաց՝ բարձրաձայն կը հռչակեն թէ որչափ օգտակար եղած է մեծ և ուսումնասէր թագաւորին այս մտածութիւնը: Հայոց ազգասիրական ոգին՝ զոր միշտ ունեցեր են, զիրենք քիչ մը կարճատես ըրած է (թէ քաղաքական և թէ ուսումնասիրական բարգաւաճանաց մէջ), ըսած է անուանի արևելագէտն Մոհլ. մենք կրնանք նաև յաւելուլ՝ թէ չափազանց խորշումն յամենայնէ որ իրենցը չէ՝ երբեմն զիրենք յետադէմ ալ ըրած է: Հինգերորդ և երկոտասաներորդ դարերը բացառութիւն մը կրնան համարուիլ. բայց այն նշանաւոր և բազմերախտ անձանց գրուածք և վարք կեցած են հաւատարմացնելու՝ թէ այն բացառութիւնը ընդհանուր ազգին համար չէր:

Այս գլխաւոր պատճառներէն զատ՝ մեր աշխարհին նիւթական դիրքն ալ ուսմանց յառաջադիմութեանը նպաստաւոր եղած չէ: Չորս կողմէն թշնամի ազգաց յարձակմանը նշաւակ ազգ մը՝ ի հարկէ ինքզինքը պաշտպանելէն քիչ ատեն կ'ունենար նաև միտքը զարգացնելու. և չըզարգանալու սովորած միտք մը՝ միշտ յետախաղաց ընթացք կ'ունենայ: Այդ ընթացքն՝ կամաց կամաց տգիտութիւնը կ'ընդելացնէ, և ուսմանց օգուտն ու յարգը մոռցնել տալով՝ մինչև զանոնք անօգուտ կամ վնասակար երևցնելու վտանգին կը տանի:

Ո՛ր և իցէ յառաջադիմութիւն՝ քաջալերութիւն կը սիրէ. բարոյական ու նիւթական խրախոյսը՝ հանճարոյ գլխաւոր սնունդ տուող անհրաժեշտ տարրն է. անոր համար Եւրոպա և Հռովմ սովորած էին իրենց իմաստունքը ժողովրդոց առջև հանելու, և անոնց խրախուսանօքը՝ ձեռք զարկած ասպարիզին մէջ ա՛լ աւելի յառաջադէմ ընելու: Կը տեսնենք բոլոր Յունաստան ժողվուած՝ Հերոդոտեայ պատմութեան գիրքը մտիկ ընելու, զինքը գովելու և քաջալերելու. և այն գովութեանց ու քաջալերութեանց արդիւնք կ'ըլլայ Թուկիդիդէս: Եւքիլեայ ողբերգութեանց յաջող ձեռնարկութիւնները՝ Սոփոկլէս ու Եւրիպիդէս մը կ'երևցնեն:

Նիւթական խրախոյսն ալ յիշեցինք, և որ այնչափ դժուարագիւտ եղած է մեր նախնեաց քով։ Հերոդոտ՝ զոր հիմակ ալ յիշատակեցինք, զինքը մտիկ ընող և իր հանճարոյն վրայ զարմացող ժողովրդեան հաճութեամբն ու վճռով՝ տասն տաղանդ (54,000 ֆր․) վարձք կ'ընդունէր։ Գրեթէ իրեն ժամանակակից քերթող մը, Կերիլոս, որ Յունաց՝ Քսերքսեսի զօրաց վրայ տարած յաղթութիւնը հռչակեր էր, քերթուածին ամէն մէկ տողին համար մէկ մէկ ոսկի ընդունեցաւ ի փոխարէն։ Մեծն Աղեքսանդր՝ որ Հոմերոս մը ունենալու համար՝ Բաբելոնէ աւարած բոլոր գանձն ու ճոխութիւնը կը խոստանար, դիմացը եկած խեղճ քերթողը խրախուսելու համար՝ յօրինած ամէն ընտիր տողին համար ոսկի մը կու տար։ Երբ Վիրգիլ՝ Հոկտաւիայի ի լուր կ'ընթեռնուր այն սրտաշարժ տողերը՝ որ կը յիշեցնէին զհէգն Մարկելլոս, սրտին ցաւէն ու այլայլութենէն թալկացաւ ինկաւ․ ու երեսուն տողերէ բաղկացած այն գեղեցիկ դրուագին ամէն տողին համար զատ զատ տասն մեծ սեստերս (2,000 ֆր․) պարգևեց քերթողին (300 սեստ․ = 60,000 ֆր․)։ Սեպտիմիոս Սեւերոս և Կարակալլա կայսերք՝ հաւասար առատաձեռնութեամբ վարձատրեցին Ոպպիանոս բանաստեղծը՝ յօրինած Որսոց և Ձկնորսութեան երկու քերթուածոց համար․ իւրաքանչիւր տողին փոխարէն պարգևելով ոսկի սատեր մը, և էին ըստ Սուիդասայ 20,000 տող։ Կը թողունք յիշատակել ուրիշ բազմաթիւ օրինակներ թէ հին ազգաց և թէ մանաւանդ նորոց մէջ, որք գիտցան և յաջողեցան փոխել ի գետ ոսկւոյ՝ իրենց գրչէն բղխած մելանը։ Ունեցե՞ր են արդեօք մերք ալ այսպիսի խրախոյս և քաջալեր։— Պատմութիւնը ասոր հակառակը կ'արձանագրէ յաճախ տխուր գոյներով և լքուցիչ բանիւք։

Ուրիշ պատճառ մ'ալ կը գտնենք ուսմանց մեր մէջը ետ մնալուն։ Հին ազգաց շատին մէջ՝ ուսումը մենաշնորհի մը պէս էր կրօնից պաշտօնեաներուն․ և ինչպէս

հաւատոց վարդապետութիւնք՝ այսպէս ալ ուսումը անոնցմէ կը ծաւալէր ժողովրդեան մէջ։ Վախ մը՝ չէր համարձակեցներ զիրենք առատ ըլլալ այդ մատակարարութեանը մէջ, որպէս զի չըլլայ թէ կիսկատար ուսումը՝ կրօնից անտարբեր կամ թոյլ ընէ ժողովուրդը։ Այս դրութեան հետևող կ'երեւնայ նաեւ մեր ազգը․ և անոր արդասիք կը համարինք մեր մատենագրաց շատին՝ եկեղեցական դասուն վերաբերիլը։ Այնպէս որ եթէ կարելի ըլլար՝ հեթանոսական ժամանակներէ մնացած մատենագրութեան փափաքելի երկասիրութեանց գիւտին հանդիպիլ, հաւանական պիտի ենթադրէինք՝ որ հեղինակաց մեծագոյն մասը քրմաց դասակարգին պիտի վերաբերէին։

⁂

Բայց իր աղքատութեամբն ալ՝ պատուական է, և պէտք է ըլլայ, մեզի համար մեր ազգային մատենագրութիւնը։ Լեզունիս իրեն նախնական վայելչութեան մէջ՝ անոնց պարտական ենք․ և իմաստունն Եւրոպա մեզի հետ երախտագէտ է՝ անոնց հմուտ գրչին արդիւնք ընտիր պատմական երկասիրութեանց, և մանաւանդ ընտրելագոյն թարգմանութեանց համար։

Անոնցմէ մին, — մեր արդ իսկ յիշատակած անուանին Մոհլ, — Գաղղիոյ իմաստնոց ասիական կաճառին մէջ կը վկայէր՝ թէ «Հայոց մատենագրութեանը պատմիչներու կողմանէ ինչ աստիճանի հարուստ ըլլալը՝ քաջայայտ է ամենուն։ Քրիստոսի թուականին չորրորդ դարէն ի վեր՝ անընդհատ շարք մը ունի պատմագրաց․ անկէ ի զատ՝ Հայոց երկրին դիրքը պատճառաւ՝ իրենց մատենագրութիւնն ալ մասնաւոր յատկութիւն մ'ունի։ Հայք օտար ազգաց վրայ ոչ երբեք մեծ ազդեցութիւն մ'ունեցած են․ բայց դժբախտաբար միշտ վերաբերութիւն մը եղած է անոնց մէջ ու իրենց դրացի աշխարհակալ ժողովըրդոց։ Ատենով Պարսից հպատակ եղան. Հռովմայեցւոց և Յունաց ձեռքն անցան, Արաբացւոցմէ նուաճուեցան, իրենց երկրին մէկ մասը խաչակրաց իշխանութեան կամ ազդեցութեան տակ ձգեցին, Մոնղոլներէն ու Թուրքերէն հարստահարեցան։ Իրենց տարեգրութեանց հին մասին մէջ պահուած են՝ Սասանեաց ժամանակը գրուած ու կորսուած գրքերու կտորներ։ Եւ որովհետեւ Պարսից հըպատակ էին, իրենց կառավարութենէն ու Պարսից հետ ունեցած կռիւներէն՝ Պարսկաստանի վրայ այնպիսի թանկագին տեղեկութիւններ կ'առնունք որ ուրիշ տեղ չեն գտնուիր[1] »։

⁂

Մատենագրական պատմութիւննիս երկու գլխաւոր մասի բաժնած ենք. Հին և Նոր մատենագրութիւն։

Հինը՝ նախ, Անգիր ժամանակաց մատենագրութիւն, քանի որ ազգն իրեն մասնաւոր գիր, կամ հիմակուան գործածուած գիրը չունէր. երկրորդ՝ Գրաւոր։ Գրաւոր մատենագրութիւննիս ալ երկուքի կրնանք բաժնել. Առաջինը՝ սրբոյն Մեսրոպայ ձեռքով ազգային գրոց գիւտը չեղած, երկրորդը՝ անկէ ետքը։ Առջինին կը վերաբերին չորրորդ դարուն մէջ երեւցած մատենագիրք, և երկրորդին՝ սրբոյն Մեսրոպայ գիւտէն՝ մինչեւ ի Յովհաննէս Երզնկացի։

Երզնկացիէն ետքը լեզունիս ամենամեծ կերպարանափոխութիւն մը կը կրէ. այնպէս որ, եթէ նոր մատենագրութիւնը իւր ամէն փայլն ու ջանքը գործածած չըլլար՝ հայերէնը իւր նախկին վիճակին մէջ մնցնելու, բոլորովին պիտի աղաւաղէր, և թերեւս անհետանար՝ ուրիշ լեզուաց մէջ ընկղմելով։ Անոր համար եթէ Նոր մատենագրութիւնը հնոյն պարտական է իւր գոյութիւնը, հնոյն ալ պահպանութիւնը՝ նորոյն ջանիցը արդիւնքն է։

Բայց հին գրաւոր մատենագրութիւննիս ալ՝ ամէն ժամանակ նոյն կերպարանքն ունեցած չէ. երբեմն ծաղկած՝ ու երբեմն ալ անշքութեան դարեր ունի։ Մեր գրուածքն աւելի պատմական ըլլալով, ընթերցողաց և սորվողներու դիւրութեան համար զատ զատ դարերու բաժնեցինք, և ամէն մէկ մատենագիր՝ ինչ դարու որ կը վերաբերի, հոն դրինք իրեն գրաւոր վաստակոց յիշատակութեան հետ նաև վրան ամփոփուած կամ մեզի ծանօթ բանասիրական կամ կենսագրական տեղեկութիւններն։

I. Mohl, secrétaire de la Société Asiatique de Paris. Rapport sur les travaux du Conseil de la Société, pendant l'année 1755-56.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳԻՐՔ

Նշանագիրք ընդհանրապէս և անոնց կարեւորութիւնը: — Հայ ազգին նախնական տառերը: — Բեւեռաքանդակ արձանագրութիւնք: — Անոնց գոյութիւնն ի Հայաստան և հաւանական հետեւանք: — Շամիրամ և իր արձանագրութիւնք ի մերում աշխարհի և այլուր: — Զենդ, ասորի և յոյն տառք, և անոնց գործածութիւնն առ մեզ: Համառօտագիր նշանակք: — Յատուկ ազգային տառից զգալի պէտք: — Վռամշապուհ, Սահակ և Մեսրովպ: — Մեսրովպայ ջանքն ի գիւտ հայկական տառից: — Կորիւն, Խորենացի և Փարպեցի և անոնց խօսքերը: — Պատմութիւն գիւտի տառից: — Այլեւայլ խնդիրք, կարծիք և դրութիւնք անոր նկատմամբ: — Դանիէլ ասորի և իր տառերը:

Խօսքը՝ որով մարդուս խորհուրդները ուրիշի մը կը հաղորդուին, հեռաւոր անձանց չեն կրնար հասնիլ. խօսուած վայրկենին կը սահին կ'երթան, ու խօսողին ետեւէն եկողներուն կամ չլսողներուն համար ամենեւին անօգուտ կամ անպիտան կը մնան: Այս երկուքին ալ դարմանը գիրը միայն կրնայ ընել:

Գաղափարաց բացատրութիւնք՝ նախնական մարդկային ընկերութեան մէջ միշտ անկատար կերպով՝ ու յաճախ խորհրդաւոր նշանակներով կ'ըլլային. որով՝ նմանելով մանկութեան, յառաջ քան գրել՝ սկսած պիտի ըլլան նկարել, կամ ինչպէս սովոր ենք ըսել, աչքի հետ խօսիլ: Ասանկ՝ իրարու խառնուած երկու ձեռք կը տեսնենք որ առ հնագոյն ազինս կը նշանակէին զխաղաղութիւն կամ զմիաբանութիւն. նետք՝ զպատերազմ, աչք մը՝ զաստուածութիւն կամ զնախախնամ տեսչութիւն. գաւազան՝ զթագաւոր կամ անոր իշխանութիւնը, և այլն: Այս ձեւերն իրարու հետ միացնող այլեւայլ նշանք՝ բաւական կրնային ըլլալ պարզ իմաստ մը բացատրելու համար:

Սակայն սոյնք իմաստից բաւական արտայայտիչք չէին. գրութեան այս կերպով՝ խօսքն որոշ և ճիշդ չէր կրնար թարգմանուիլ. ուստի և ոչ յոյժ գոհացուցիչ, և զայն ընդհանուր ընելու ոչ պատկանաւոր: Մարդիկ, քանի որ ընկերութիւնը կ'ընդարձակուէր, որով և իրարու հետ ունեցած հաղորդակցութեանց կարեւորութիւնք, հեռաւորաց հետ ալ խօսելու անհրաժեշտ հարկն իմացան և տեսան. և թէ պէտք էր յիշել, և ուրիշներուն մտաց մէջ ալ տպաւորել՝ ինչ որ հարկ և օգտակար էր չմոռնալ:

Այս անհրաժեշտ հարկին, ինչպէս ըսինք, արգասիք և հետեւանք է գիրը, որ մասնաւոր նշանակներով կը ձեւանայ, և որուն ամբողջութիւնը այբուբենք կոչուած են, և յունական բառով ալփաբետք:

⁂

Ո՞րն է Հայոց ազգին նախնական գիրը. կամ թէ մեզի արդէն ծանօթ տառերէն զատ կամ յառաջ՝ ունեցա՞ծ է ուրիշ տառեր կամ այբուբենից գործածութիւն: — Մեր հետաքննութեանն ու տեղեկութեան արժանաւոր խնդիր մը. տոհմային մատենագրութեան սնունդն և յառաջադիմութեան գլխաւոր տարրը, անոր պատմութեան մէջ հարկ է որ իր արժանաւոր տեղը գրաւէ: Այս դիտմամբ կը համառօտենք մեր այբուբենին և անոր գիւտին վրայ մինչեւ առ մեզ հասած տեղեկութիւններն:

Հայոց ծանօթ պատմութիւնը կ'աւանդէ թէ ազգերնիս՝ ազգ ձեւանալէն ու կարգաւորեալ լեզու մը ստանալէն շատ *եալը հնարած ըլլայ իր գիրը։ Բայց որովհետեւ անկարելի է անգիր քաղաքականութիւն մը ենթադրել՝ մեր պատմութեանը այն ընդարձակ միջոցին մէջ որ յառաջ քան զգիւտ գրոյն, հաւանականաբար մերոնք ալ իրենց յատուկ գրերը ունենալէն յառաջ գրացի ազգաց տառերը գործածելու սովորութիւնն ունեցած պէտք է ըլլան։ Մեր այս կարծեաց երաշխաւորութիւնը՝ կրնանք կերպով մը հին պատմութեանց և արձանագրութեանց մէջ փնտռել։*

Ասիոյ պատմութիւնը, և մեր ժամանակաց հմուտ հետազօտութիւնք կը սորվեցնեն թէ նոյն ընդարձակ գաւառները գրաւող յաղթական ազգեր՝ իրենց յատուկ գրութեան կերպ մ'ունէին. որով սովոր էին քանդակել արձանագիրս, և որուն մեր ժամանակաց գիտնականք սեպաձեւ կամ բեւեռագիր անունը կու տան։ Այսպիսի արձանագրութիւնք՝ փորագրեալք ի վերայ ժայռից, քարանց, վիմաց և թրծուն աղիւսներու՝ գտնուեցան ու կը գտնուին Եփրատայ ու Տիգրիսի ափանց վրայ՝ ուր էին երբեմն Բաբելոն և Նինուէ՝ հռչակաւոր քաղաքք. յաշխարհին Պարսից՝ ի Ստահր և ի մերձակայն հնոյն Պերսեպոլեայ և ի Շօշ, ի Համատան՝ կամ նախնոյն Եկբատանայ մօտ, Էլվէնտ լերանց վրայ և յՈրոնդէս. ի Կրմանշահ՝ Բիսիթունի կամ Բիհիսթունի ժայռից վրայ, ի հիւսիսակողմն Կովկասու՝ մերձ ի Դարբանդ, և այլն։

Արդէն այդ խորհրդաւոր և դժուարընթեռնլի տառից և գրուածոց գոյութիւնը նաեւ ի Հայաստան տեսեր ու ծանուցեր էին անուանի հնագէտք մեր դարուն՝ Շուլց, Ոփթթէր, Կրոթֆէնտ, Լայար, Քանիքոֆ, Պրոսէ, Քիւնիք, Քոսսաքոֆ, և այլք. և ի մերազգի հմտից և բանասիրաց՝ Սարգսեան և Սմբատեան վարդապետք, Պատկանեան... ոչ լոկ ի Վան և ի Շամիրամակերտ, այլ նաեւ ի հովիտս Եփրատայ, ի Մելիտինէ և այլուր, ի Բալու, յԱրմաւիր, ի Ցոլակերտ և ի Վաղարշապատ։ Այս բազմաթիւ արձանագրութիւնք՝ ցան և ցիր սփռեալ ընդ ամենայն Հայաստան, իրաւամբք ենթադրել կու տան՝ թէ մեր ազգն ալ, որ իրեն գրացի մերձաւոր ազգաց նման քաղաքականութիւն և կրթութիւն ունէր, ու յաճախ նաեւ վերաբերութիւն, անշուշտ նոյն բեւեռաձեւ գրոց բոլորովին անծանօթ մնացած չէր, ու երբեմն նաեւ անոնց գործածութեան։

Մեր հին պատմութիւնն այս ենթադրութեան հաւատարմութեանը ապացոյց մը կ'ընծայէ։

Խորենացի՝ մեր ամենէն աւելի հնախօս և հմուտ պատմագրաց մէկը, Մարիբասէ առնլով կ'աւանդէ՝ թէ երբ Շամիրամ Արայի յաղթեց ու Հայաստան մտաւ, Վանայ բերդին վրայ՝ մեզի անիմանալի լեզուով մը արձանագրութիւններ քանդակեց. նոյնպէս ուրիշ շատ տեղուանք՝ նման տառերով արձաններ հաստատեց։ Այս գրուածներն՝ Շամիրամայ պատերազմաց ու յաղթանակաց պատմութիւններն էին., ինչպէս որ Խորենացւոյն հետեւեալ խօսքերն կը հաւատարմացնեն. «Զամենայն երեսս քարին իբրեւ գրչաւ զմոմ հարթեալ, բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն՝ զամենայն ոք ի զարմանս ածէ։ Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»։

Կը համաձայնին նաեւ ոմանք յօտար պատմագրաց՝ նոյն Շամիրամայ համար աւանդելով թէ նման արձաններ և յիշատակարաններ հաստատած ըլլայ նաեւ ուրիշ տեղուանք՝ հանդիսավայրք և տեսարանք իրեն մարտից և յաղթանակաց[1]*։*

Հայաստանի մէջ ալ, ինչպէս ուրիշ տեղուանք, Շա-

---

[1] Semiramis, quum et lapis deficeret et majus aliquid concupisceret, quam quod ære posset assequi, apud montem Mediæ, qui Bagistanum dicitur, in petra stadiorum septem et

միրամ արձանագիրներ քանդակել տուած ատեն, ունէր անտարակոյս իրեն իրաւացի փառասիրութեան նպատակ մը. յիշեցնել տեսողաց, ու ապագայից՝ ինչուան հեռաւոր դարերու գիտութեանն ու զարգացման յանձնել իր անունն, համբաւն ու քաջագործութիւնքը։ Այդ նպատակին հասնիլն անկարելի պիտի ըլլար Շամիրամայ՝ եթէ այդչափ խնամքով քանդակուած գրուածոց առջեւ անտարբեր մնար՝ նոյն գաւառներուն և աշխարհաց մէջ բնակող ժողովուրդը, չկարենալով ընթեռնուլ զանոնք, և ի նոսա պարունակուած իմաստից խելամուտ ըլլալ։ Կը հետեւի ուրեմն ենթադրել՝ թէ կար, կամ պէտք էր ըլլալ, նաեւ հայկական բեւեռակերպ գրութիւն մը՝ երկրին բնակչացը ոչ անծանօթ. և այս կարծեաց՝ ի ստուգութենէ ոչ այնչափ զուրկ ըլլալուն՝ նպաստաւոր և օժանդակ կը հասնին՝ նոր ժամանակաց այդ ամենահին տառից վրայ եղած խուզարկութիւնք, որ սեպաձեւ գրութիւնները այլեայլ ցեղ բաժնելով՝ անոնցմէ մէկուն ալ, ճիշտ Հայաստանի մէջ գտնուածներուն, հայկական կամ արարատական անունը տուած են։ Այդ անունը ոչ այնչափ նոյնպէս կոչուող աշխարհին մէջ գտնուելնուն համար է, զի գտնուեր են և դեռ կրնան գտնուիլ անկէ դուրս տեղուանք ալ, այլ հոն բնակող ժողովրդեան խօսած լեզուին պատկանելնուն ենթադրութեամբ։

---

decem suam inculpsit effigiem, quam viri certum divis venerentur. (Կելլիոս, իթ. իգ.).

Ուրիշ հին պատմիչ մ'ալ կը վկայէ նոյնպէս զՇամիրամայ. Petras terra domuit; viasve feris quidem ambulatas stravit.

Դարձեալ այլ ոմն աշխարհագիր. Semiramis mons, ubi Pylæ Zagri, a Semiramide, qui illum abscissum pervium reddidit.

⁂

Հայկական կոչուած բեւեռակերպ արձանագրութեանց ընթերցումը, զայն հետազօտող գիտնոց զանազան ջանքերովն ալ դեռ ինչուան հիմա արժանապէս գոհացուցիչ արդիւնք մը տուած չէ ուսումնական աշխարհի. ու միւս երկու ցեղ գրուածներէն ալ — ասորականէն ու աքեմենականէն — աւելի դժուարընթեռնլի մնացած։ Ասոր ալ գլխաւոր պատճառն՝ որ լեզուի պատկանելնուն անստուգութիւնը՝ որով անհամաձայնութիւնը. ոմանք ի հնախոյզ գիտնոց՝ սեմական լեզուի մը վերաբերիլ կարծեցին. այլք՝ հնդիկ-եւրոպական, և միւսներն ալ ի տուրական և ի հայկական տարերաց բաղկացեալ լեզուի մը։ Յետին երկու կարծիք կամ գրութիւնք՝ իրարու կը մօտենան, հայկական ծագումն և ազգնաւորութիւն չժխտելով անոնց։ Հռչականուն անգղիացի հնագէտ Հինքս՝ որ հնդիկ-եւրոպական լեզու մը կը նկատէ անոնց մէջ, Վանայ բերդին արձանագրութեանց վրայ անխոնջ ու երկար հետազօտութիւններէ ետքը կը հետեւցնէ թէ հայերէն լեզուով գրուած պէտք է ըլլան անոնք։ Իր այս կարծեաց պատճառը՝ անոնց մէջ ձայնաւոր տառեր գտնելն եղած է. որով յաբեթական ըսուած լեզուներուն մէկուն պատկանելնուն վրայ տարակոյս չի մնար, կ'ըսէ, վասն զի այն հին լեզուաց մէջ միայն կը գտնուէր ձայնաւոր տառից գործածութիւնն։ Երրորդ դրութեան ջատագովն էր Մորթման գերմանացի, որ այլ և այլ գրուածներով, ինչպէս ծանօթ է, ոչ լոկ հայկական պատմութեան՝ այլ նաեւ լեզուին վերաբերիլն ուզեց ցուցնել. և իր կարծիք և դրութիւն՝ բաւական հռչակ և ընդունելութիւն գտաւ, գէթ առջի բերան։

Աքեմենեան և ասորացեղ բեւեռաքանդակ տառից ընթերցման բաւական դիւրանալն ու պարզուիլը ջանիւք գիտնոց, հայկական կոչուածներուն ալ ընթերցումն յու-

տալ և փափաքելի կ'ընէ։ Օրբերդ՝ որ մասնաւոր ջանքով ետեւէ եղած է անոնց ընթերցման, իր գրուածոց մէջ շատ տեղ հնդիկ-եւրոպական լեզուի մը պատկանելուն ամենեւին չի տարակուսիր։ Ըստ նորագոյն լեզուաբանական հետազօտութեանց եւրոպացի արդի գիտնոց, և ոմանց ևս մերազնեայց, հայկական հին լեզուն՝ հնդիկ-եւրոպական արմատներէ ձեւացած կը համարուի, ու սեմական քանի մը տարերաց, Հայկայ ցեղին կամ սերունդին խառնուելովը արամէական ժողովրդոց հետ՝ որ Հայաստանի հողոյն վրայ յառաջագոյն հաստատուած էին բնակութեամբ, գրութեանց մէջ բեւեռակերպ տառերն ալ գործածած պիտի ըլլան։

Բեւեռաձեւ տառերով ձեռագիր մը գտնուած չէ․ ուստի կը հետեւցնեն հմուտք, նոյն իսկ տառից բնութենէն՝ որով ձեւացած են, թէ պարզ քանդակաց և արձանագրութեանց մէջ գործածուելու վախճանաւ հնարուած էին։ Անոնց կիրառութեամբն վարուող աշխարհաց ժողովուրդք հարկ էր ունենային, ինչպէս անշուշտ կը համարի Գազըլմեր, ուրիշ ազգ մ'ալ գրութեան, աւելի ընթացիկ, սովորաբար և հեշտեաւ գործածելի։ Այս վերջնոյս՝ որ թերեւս առջինին հետեւողութեամբ յօրինուած էր, և որուն սակաւագիւտ օրինակք կամ փորձք կրնան համարուիլ ի Բաբելոն գտնուած քանի մը մանր և աղիւսի վրայ քանդակուած յիշատակարանք, նմանութեամբ յօրինուած կ'ենթադրուին հեբրայական նոր կամ քառակուսի կոչուած տառք, զորս Հրեայք գերութենէ դարձած ատեննին հետերնին բերին։

⁂

Սակայն բեւեռակերպ տառից գործածութիւնը երկար ատեն չդիմացաւ․ և ինչպէս ուրիշ ազգեր՝ անանկ ալ Հայերը ձգեցին զայն․ Ասիոյ հարաւային բնակիչք՝ սկսան փիւնիկեցւոց տառերը գործածել․ ուսկից կամաց կամաց Սամարացւոց, Քաղդէացւոց, Հրէից, Ասորւոց, և Յունաց և Արաբացւոց գրերը ձեւացան։ Իսկ Ասիոյ հիւսիսային բնակիչք, որոնց հետ մեր ազգն ալ, Զենտի գրերով սկսան վարուիլ։ Այս կարծիք անհակառակելի կրնայ համարուիլ, որովհետեւ Խորենացւոյ և իրեն ժամանակակից կամ ետքը եկող ուրիշ պատմագրաց վկայութեան վրայ հաստատուած է․ և Խորենացւոյ և հայկական գրոց գիւտին մէջ եղած ժամանակի մերձաւորութիւնը՝ ստուգութեանը մեծագոյն երաշխաւորութիւն մըն է։

Նոյն գրոց կիրառութիւնը մինչեւ Ս․ Գրիգոր Լուսաւորչի ժամանակ դիմացաւ, ու անկէց ալ մինչեւ սրբոյն Մեսրովպայ օրը։ Այս տարբերութեամբ որ եկեղեցական բաներու մէջ յունարէնն ու ասորերէնը կը գործածէին, քաղաքական իրաց կիրառութեան համար պահելով Զենտի գիրը՝ և կամ պարսկական տառերը։

⁂

Քրիստոսական կրօնից ի Հայաստան մուտ գտնելէն ետքն ալ՝ արքունական դրչաց ու անոնց գործածած նշանագիրներուն կը հանդիպինք ազգային մատենագրութեան պատմութեան մէջ․ և որոց ձեւն, ինչպէս նաեւ կիրառութիւն ի Հռովմայեցւոց մեզի անցած կ'երեւի։ Անշուշտ տեսակ մ'էր այն համառօտագրութեան (sténographie), *յորում աջողակ և յոյժ վարժ էին Լատինք․ կը վկայէ նաեւ իրենց երգիծաբան քերթողն Մարտիալէս․ « Բառք սրաթռիչք են, կ'ըսէ, այլ ձեռք արագաշարժք քան ըզնոսա․ լեզուն իր գործը չլմընցուցած՝ ձեռքն արդէն կատարած է գիրն[1] »։*

Այս կերպ գրութեան առ նախնիս մեր, և մեզի ծանօթ ու թերեւս միակ յիշատակութիւնն կը գտնենք առ

---

[1] Currant verba licet; manus est velocior illis;
Nondum lingua suum, dextra peragit opus.

Ագաթանգեղոսի։ Սրբոյն Գրիգորի և Հռիփսիմեանց վըկայութեան հանդիսին ատենական հարցաքննութեանց ժամանակ՝ իրենց խօսքերն առ Թագաւորն Տրդատ հասցնելու վախճանաւ կային հոն, կ'ըսէ, արքունի նշանագիրք։ Ասանկ (յէջ 89 տպ. Վենետկոյ). «Եւ մինչդեռ կայրն կախեալ այսպէս, խօսեցաւ (Գրիգոր) զայս ամենայն. և գրեցին ատենակալ դպիրք նշանագրացն»։ Դարձեալ (140). «Դիպեցան անդ նշանագիրք՝ որք գրեցին զամենայն բանս, և ընթերցան առաջի Թագաւորին»։

Հեթանոս Հռովմայ այս սովորութիւնը՝ կը նկատենք նաև հին քրիստոնէութեան առաջին ժամանակաց և հալածանաց դարերուն մէջ։ Եկեղեցական հնագիտութիւն և սրբագիրք կ'աւանդեն թէ ընդհանրապէս ամէն եկեղեցեաց, և ի մասնաւորի կայսերական քաղաքին մէջ նստող Հայրապետաց փոյթն էր՝ վկայական մահուամբ իրենց հաւատոց պահպանութեան համար արիւննին թափող մարտիրոսաց՝ ատենական հարցափորձին ժամանակ գտնուելն իբրև հանդիսատեսք և լռող ծածուկ հաւատակիցք, և համառօտագրեն իրենց կրած տանջանքն և յատենի դատաւորաց գրուցած խօսքերը. և զորս յետոյ գետնադամբաններու մէջ կ'ընթեռնուին ի լուր և ի խրախոյս հաւատացելոց։ Առ Ագաթանգեղեայ յիշուած նշանագրաց համար՝ հմուտ բանասէրն Մ. Էմին կարծիք մը յայտնած է թէ բեւեռագիրք կամ հին եգիպտական սրբագրոշմ տառից նման ըլլան։ Բայց հաւանականագոյն կը թուի Լանկլուա հայագէտ գաղղիացւոյն ենթադրութիւնը, որ մեր արդ իսկ յիշատակած և առ Հռովմայեցիս տիւրաննեան կոչուած տառից նմանակերպ գրութիւն մը կը համարի։

⁂

Սակայն յատուկ և ազգային գրոց պէտքը՝ աւելի կերպով մը սկսեր էր զգալի ըլլալ Հայաստանի մէջ։ Հայրենեաց այս մեծ ծառայութիւնը իւր վրայ առաւ սուրբն Մեսրովպ։ Յարմար ու բարեպատեհ էր ժամանակն այնպիսի վերանորոգութեան մը ձեռք զարնելու, որ թէ՛ ազգին լրութեանը փափաքն էր, և թէ ժամանակին համար անհրաժեշտ պահանջք մը։ Սուրբն Գրիգոր քրիստոնական հաւատոց ճշմարտութիւնը քարոզեր ու ծաւալեր էր յազգին. բայց մինչև չորրորդ դար՝ դեռ ևս կային ի նմա այնպիսի ժողովուրդ՝ որոց ժամանակակից պատմութիւնը կը զլանայ թէ զկրթութիւն և թէ զքրիստոնէութիւն։ Առանց սեպհական և յատուկ նշանագրաց՝ անկարելի եղած էր սուրբ գիրքն և իր վարդապետական նուիրական ուսումն ընդունելի և տեւական ընել իրենց մէջ։ Ասկէ զատ, քաղաքական մեծ պատճառ և հարկ մ'ալ կար այս բանիս ետեւէն ըլլալու։ Հայաստանի իշխանական զօրութիւնը՝ մէկ կողմանէ արդէն սկսած էր զգալի տկարութեան մը տխուր նշանակներ տալ. միւս կողմանէ Պարսիկք՝ իրենց ոյժն ու ազդեցութիւնը տարածելով՝ յարատեւ սպառնալիք մ'էին անոր քաղաքական ինքնօրինութեան և կրօնից։ Մերձաւոր ապագայ մը արդարացուց դժբաղդաբար նոյն ատենի հայրենեաց ու սրբութեան կրօնից սիրով տոչորող սրտից արդարացի երկիւղը, որ չըլլայ թէ քրիստոնէութիւնն ու իր բարոյականը հաստատուն կերպով մը, ինչպէս փափաքելի էր, արմատացած չըլլալուն՝ պարսկական բռնութեան տեղիք տալ բռնադատուած ատեններն՝ նաև սուրբ հաւատք ունենան իրենց անդարմանելի կորուստը։ Այսպիսի վերահաս վտանգէ մը զհայրենիս ապահովել սրտի ու հոգւոյ անհրաժեշտ պարտաւորութիւն մ'էր, ու միանգամայն երկնաւոր ու երկրաւոր սիրելագոյն չահուց եռանդուն փափաքանաց արդիւնք։ Այս կերպով, – ինչպէս կ'ակնարկէ Սէն-Մարդէն հայագէտ գաղղիացին, – Հայք յաջողեցան իրենց հաւատոց հետ փրկել նաեւ ազգութիւնը՝ մերժելով կամ կիրառութիւնը խափանելով այն ամէն օտար տառերուն՝ որոնք արդէն տարածուած էին իրենց երկրին մէջ՝ և որոց բանադատ գործածութիւնը կամաց կամաց կրնար զիրենք ընդելացնել զրադաշտական կրօնից վարդապետութեան մերձաւորութեան, և կամ անզգալի կերպով յունականին հետ վերաբերութեան մէջ դնելով կամ խառնելով, ազգային ինքնուրոյն գոյութիւնը վտանգել։ Հաւատք և ազգութիւն, լեզու և մատենագրութիւն՝ գտան իրենց փրկութիւնն ու ապահովութիւնը այս կարեւոր գիւտին և անոր համար եղած ջանից մէջ։ Առանց ասոր՝ Հայաստան այսօրուան օրս թերեւս այն վիճակն ունենար, ինչ որ Ասիոյ այլեւայլ հին ժողովուրդք. միայն պատմական կամ անուանական ազգ մը մնալով։

Այս էր երկու նախանձընդդէմ ազգաց, Յունաց և Պարսից՝ այլեւայլ տեսակէտով բայց մի և նոյն նպատակաւ, փափաքն ու ձեռաւոր յոյսը. և անոր հասնելու համար՝ ամէն ջանք, խոստմունք, օգնականութիւն և մերթ նաեւ բռնադատութիւն և բռնութիւն ի գործ կը դնէին։ Մերուժանայ գործն ու Պարսից քաղաքականութեան սատարելու եռանդն ու հնարագիտութիւնը՝ դեռ կենդանի էր շատերուն մտքին մէջ։ Հայաստանի ժողովուրդը մոգակրօն ու սասանական ազգին հպատակ ըլլալու ամենէն դիւրին ու յարմարագոյն միջոց գտեր էր՝ յունական գրերն այրել ու փճացնել, և այնպէս յոյն ազդեցութեան վախը յարմարոց քանցել։ Անոր հակառակ՝ կայսրն Թէոդոս, և Կոստանդնուպոլսոյ հայրապետ սուրբն Ատտիկոս՝ կերպով մը իրենց կառավարութեան քաղաքագիտութեանն և զգացմանց թարգման կ'ըլլան, երբ առ սուրբն Սահակ հայրապետ գրած թղթերնուն մէջ մտերմական գանգատ մ'ալ կը յայտնեն հայկական գրոց գիւտին համար եղած հետապնդութեանց և խուզարկմանց նկատմամբ. առաջինն՝ թէ «Առաւել ես մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարօքս որ ի մերում քաղաքիս, յԱսորեաց ոմանց խնդրէիր զիմաստից գիւտս»։ Եւ Ատտիկոս. «Ազատ ի մեղադրանաց ոչ թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցեր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի երանելեաց քոց հարց։ Եւ առաւել ընդ այս զարմանամք, թէ զիարդ թողեր զաղբիւրն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի. ուստի և Ոսկիբերան կոչեցին զնա։ Եւ ձեր զանց զնովաւ արարեալ, կամեցաք ի սահմանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել»։

Ժամանակաւ կրտսերագոյն գրութեանց մէջ ալ զնոյն ակնարկուած կը գտնենք. «Սուրբ հայրն մեր Մեսրոպ յետ առնլոյ երկնաւոր շնորհացն և ստեղծանելոյ զնշանագիրն Հայոց, զՎրաց և զԱղուանից, գնաց ի Կոստանդնուպոլիս հրամանաւ սուրբ հայրապետին Սահակայ մեծի Պարթեւի. և յոյժ պատուով ընկալան զնա թագաւորն Թէոդոս և հայրապետն Ատտիկոս. և սակաւ ինչ մեղադրեցին սիրով, թէ ի շարժելն ձեր ի խնդիր գրոյն՝ ընդէ՞ր իջեր ի շաղփաղփանս Ասորեացն, և ոչ եկիր առ աղբիւրն իմաստութեան յաստուածազգեաց հայրապետն Յովհան Ոսկեբերանն. և ի նմանէ այլ դիւրեաւ գտանէիր զմխիթարութիւն սրտի քո[1]»։

---

[1] Ի Վատիկանեան մատենադարանի որ ի Հռոմ՝ հոյակապ սրահի մը մէջ ուր ամենայն ազգաց այբուբենից ծանօթ հնարողաց դէմքերն պատկերագրուած են, մեր այբուբենքն իրենց հին երկաթագիր ձեւերովը տրուած են ի ձեռս սրբոյն Ոսկեբերանի, զինքը համարելով և կոչելով անոնց հեղինակ։ Գրուածքիս մէջ ուրիշ տեղ պիտի անդրադառնանք՝ թէ ինչպէս ոմանք յեւրոպացի բանասիրաց եւս այդ բազմահռչակ հայրապետին ընծայած են ժամանակաւ նաեւ զթարգմանութիւն աստուածաշունչ գրոց, կամ անոր մէկ մասին, ի հայ բարբառ,

⁂

Լսենք նոյն իսկ ժամանակակցաց բերնէն այս ցանկալի գիւտին հետաքննական պատմութիւնը։ Ասոնք երեք են գլխաւորաբար, և մէկ դարու և դպրոցի կը վերաբերին. Խորենացի, Կորիւն և Փարպեցի. երեքն ալ ամենայն մեծարանաց և հաւատարմութեան արժանաւոր անձինք, և որոնք մէկմէկու գրուածքն ալ տեսած ըլլան կամ ոչ, ազգային մատենագրութեան այս նշանաւոր կէտին վրայ ունեցած համաձայնութեամբը կը հաւատարմացնեն կարծիք մը զոր այլք արդէն մեզմէ յառաջ ալ ունեցած են, թէ ազգին մէջ մինչեւ իրենց ատեն գտնուած արքունի վաւերական դիւաններէ քաղած կամ համառօտած պէտք է ըլլան զայն։ Իրենց բուն խօսքերը մէջ բերելով և իրարու դիմաց դնելով՝ այս ենթադրութիւնը թերեւս աւելի ոյժ առնու քննադատ բանասիրութեան առջեւ։

Դնենք նախ հին ճառընտրի մը մէջ գտնուած Կորեան հատուածը այս նիւթիս վրայ, որ հետեւեալ էջերուն մէջ գրուածէն բաւական կը տարբերի։

«Բայց զի ոչ էր գիր հայերէն լեզուիս՝ բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն առ աշակերտեալսն. իսկ հրանելի վարդապետն տարակուսեալ ի խորհուրդս իւր՝ առ Աստուած աղաւթէր, որ կարողն է յամենայնի, ցուցանել զգիր հայ լեզուիս. որով նուազութիւնն յառաւելութիւն դայցէ գրով։ Եւ յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբն Սահակ հայրապետն Հայոց՝ յաղագս գրոյ նշանագրաց. եգիտ զնա առաւել եւս փափաքող այնմ։ Եւ յետ բազում ջանից և աշխատութեանց և ոչ ինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինելով՝ յԱստուծոյ խնդրէին որում ցանկային։ Եւ մեկնեալ ի միմեանց, և յանձն առեալ զխստամբերութիւն՝ ճգնէին առաւել քան զառաւել։

«Եւ յետ այսորիկ ծանուցեալ լինէր ի թագաւորէն Վռամշապհոյ, որ և նա այսմ նախանձայոյզ եղեալ, առաքէն զՄեսրովբ աշակերտօքն հանդերձ ի Միջագետս Ասորւոց։ Եւ երթեալ նորա խուզէր ուր ուրեք իմաստասիրաց համբաւէր գիտութիւն։ Եւ հանդիպեալ Դանիէլի ումեմն եպիսկոպոսի Ասորւոց առաքինւոյ, որ ասաց նմա ցուցանել զնշանագիրս՝ որում ցանկայրն։ Եւ յետ բազում աշխատութեանց և քննութեանց և ուսմանց՝ անշահ մնացեալ. զի ոչ բերէր զբառս և զբանս ալփաբետացն ըստ հայերէն լեզուիս։

«Յայնժամ հաւատով առ Աստուած ապաւինի, և աղօթս արտասուալից առ Աստուած մատուցանէր, և հայցէր յամենեցունց տեառնէն զտիւ և զգիշեր՝ ցուցանել զփափաքելին նշանագրաց։ Եւ տեսանէր ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի՝ երեւեցեալ հոգւոյն աչաց՝ թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք գծին ունէր քարն. և ոչ միայն երեւեցաւ, այլ և հանգամանք ամենայնիցն՝ որպէս յամանի ի միտս նորա հաւաքեցաւ։ Եւ յարուցեալ յաղօթիցն՝ հատեալ զնշանագիրս մեր հանդերձ Ռուփինոսիւ աշակերտիւ Եպիփանու, որ ի Սամոս էր միայնակեաց. կերպաձեւեալ զգիրն ըստ հրամանի Մեսրովբայ վարդապետին և երանելւոյ, փոխադրելով ըստ հայերէն ըստ անայլթաքութեան սիղոբայից հելլենացւոց»։

* *

ԿՈՐԻՒՆ

« Եւ անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպէս արդեօք ելս իրացն գտանիցէ, և իբրև աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ և միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ, և զայն առնէին աւուրս բազումս: Ապա եղանէր նոցա պարգևական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհաշող խորհուրդն երանելի միաբանելոցն, և գիւտ նշանագրոյ հայաստան ազգին հասանել. բազում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ:

« Ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւ-

ՓԱՐՊԵՑԻ

« Եւ այսպէս բազմաժամանակեայ մտածութիւնն երանելոյ առն Մաշթոցի՝ ընկալեալ յամենախնամ մարդասիրէն Աստուծոյ, զօրացոյց զնա հոգւով ողորմութեան իւրոյ. քանզի հոգացեալ յարաժամ տրտմէր երանելի այրն Մաշթոց, տեսանելով զմեծաջան ծախս մանկանցն հայաստան աշխարհիս: Որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան. քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի՝ յանլրութենէ լեզուին ասորոյ:

ԽՈՐԵՆԱՑԻ

« Ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ ի ժողովրդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եդ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. և արկեալ զանձն ի ջանս պէս պէս փորձիւք տաժանէր:

« Յետ այսր վախճանեալ եպիսկոպոսապետին Ասպուրակէս, ի տեղի նորա յաջորդէ Խոսրով զՍահակ որդի մեծին Ներսեսի... Առ նա եկեալ Մեսրոպ յաղագս խնդրոյ նշանագրաց Հայոց, եգիտ զնա առաւել փափագող այնմ. և յետ բազում ջանից և ոչ ինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինեալ, յԱստուծոյ խնդրելով: Եւ մեկնեալ ի միմեանց, գնաց Մեսրոպ ի դադարս իւր:

« Վռամ հրամայեաց Վռամշապհոյ մեր թագաւորին

(Փարպեցի)

« Զայս ի բազում ժամանակս զմտաւ ածեալ երանելի առն Մաշթոցի, և փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ գոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով չահել զոգիս արանց և կանանց առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն. զօրացեալ ի սուրբ Հոգւոյն յորդորմամբ, և եկեալ առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Սահակ, զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածութեան զխնդիրն. և ընկալեալ ի նմանէ քաջալերութեան աւետիս, թէ զօրացեալ պինդ կաց՝ առեալ ընդ քեզ և այլ արս օգնականս ի քահանայից, զոր ես պատուիրեմ. և ուր տկարանայք ի կարգել զհեգենայսն, բերեալ առ իս ուղղեմ զայն.

(Կ-րէ-Ն)

րեանց Թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ։ Յայնժամ պատմէր Նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուական Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն Նշանագիրս ալփաբետաց Հայերէն լեզուին։ Եւ իբրեւ պատմեցաւ Նոցա յարքայէ վասն գըտելոցն ի Դանիելէ, յօժարեցին զարքայ, փոյթ առնել վասն պիտոյից իրացն այնոցիկ։

« Եւ Նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անունն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորոյ եպիսկոպոսի։ Իսկ Հաբէլին զայն լուեալ՝ փութանակի հասանէր առ Դանիէլն. և Նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ Նշանագրոցն. և ապա առեալ ի Նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց ի հինգերորդի ամի Թագաւորութեան Նորա ի Նա հասուցանէր։ Իսկ արքային հանդերձ միաբան սրբովն Սահա-

(Փ-րԴէջէ)

քանզի յոյժ դիւրին է գիւտ իրացդ՝ զոր հայցես։ Բայց Նախ արժանի է մեզ զգացուցանել Թագաւորին զպէտս այսպիսի մեծ և կարեւոր խնդրոյ. վասն որոյ և քան զաւուրս ինչ յառաջ ոչ բազումս, առեալ բանք յեկեղեցւոջ յաղագս կարօտութեան այդպիսի պիտոյից, ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի Նշանագիրս առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ միում. և Թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի և ինձ Նա պատմեաց։ Եւ մտեալ սրբոյ կաթուղիկոսին Հայոց Սահակայ հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ առ Թագաւորն Վռամշապուհ, և իմացուցեալ Նմա զպէտս իրացն, յիշեաց և ինքն Թագաւորն զխօսեցեալսն վանականին վասն Նորին իրացն ընդ Նմա, զոր և Նորա պատմեալ ուրախացոյց։

(Խ-րէՆ-ջէ)

իջանել ի Միջագետս, զի խաղաղացուցեալ կարգեսցէ ըզնոսա, և համար երկաքանչիւրոցն հատցէ զգործակալացն։ Եւ իջեալ Նորա և կարգեալ զայս ամենայն, ոչ փոքր ինչ կրէ աշխատութիւն յաղագս քարտուղարի. զի մինչեւ գնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ճարտարաց գտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականաւն վարէին գրով։

« Վասն որոյ մատուցեալ առ արքայն քահանայի ուրումն՝ Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել Նշանագիր, յարմարեալ ի Դանիելէ եպիսկոպոսէ յիւրմէ մերձաւորէ։ Զորով անփոյթ արարեալ արքային, և ելեալ ի Հայս, գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս՝ հոգալ զգիւտ (զգիր) դպրութեան Հայոց, զոր զգացուցին արքային. և Նա պատմեաց զասացեալսն վանականին։ Զոր իբրեւ լուան՝ Թախանձէին զՆա՝ փոյթ զայնպիսեացն առնել պիտոյից։

(Փ-րԴէջէ)

« Եւ Նոցա լուեալ զայս ի Թագաւորէն, փութացուցանէին զՆա առնել, թէ ճեպեա յաղագս մեծ և օգտաբեր աշխարհիս Հայոց գիւտիս այսորիկ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայն բերէ քեզ շահ յիշատակ անմոռաց, և օգուտ երկնաւոր վայելից՝ քան զիշխանութիւն Թագաւորութեանդ քո. և կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքն քո էին յազգէն Արշակունեաց։

« Եւ Թագաւորին լուեալ զայս և խնդալից եղեալ ետ փառս Աստուծոյ, որ ի ժամանակս Թագաւորութեան Նորա, զայսպիսի հոգեւոր կենաց փափաք ժառանգեաց յաշխարհիս Հայոց։

« Վաղվաղակի ստիպով առաքեալ դեսպան զՎահրիճ

(Կ-րէ-ն)

կաւ և Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն՝ ուրախ լինէին: Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն՝ խնդրէին հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն մարթեսցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել, որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր. և իբրեւ ամս երկուս կարգեալ զվարդապետութիւնն իւր և նովին նշանագրովք տանէր. իսկ իբրեւ ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղոբայս և զկապս հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ՝ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք գիպեցան: Յետ այսորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ:

«Վասն որոյ առեալ երանելւոյն Մաշթոցի դաս մի

(Փ-րդէյէ)

ումն անուն կոչեցեալ ի ծնողաց իւրոց՝ հանդերձ հրովարտակաւ, առ այր մի երէց Հաբէլ անուն, որոյ առացեալ էր յառաջագոյն ցարքայ, որ և մերձաւոր էր առն բարեպաշտի Դանիէլի եպիսկոպոսի, առ որում նշանագիրքն հայերէն կային. և երանելւոյն Հաբէլի ընկալեալ զհրովարտակն ի Վահրիճէ և լուեալ զիրսն, փութանակի հասանէր առ սքանչելի եպիսկոպոսն Դանիէլ. և նախ անդէն ի նմին Դանիէլէ ինքն տեղեկանայր զկարգ նշանագրացն, և առեալ ի նմանէ առ թագաւորն և առ սուրբ հայրապետն Հայոց Սահակ և առ երանելին Մաշթոց հասանէր:

«Իսկ արքային Հայոց սուրբ կաթուղիկոսաւն Սահակաւ և երանելեաւն Մաշթոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի

(Խ-րէՆ-ոյէ)

«Վասն որոյ յաշխարհէս մերոյ առաքեաց հրեշտակութեամբ զայր մի պատուական և հաւատարիմ իւր, խադունի ազգաւ՝ Վահրիճ անուն, յոյժ փափագող նորին գործոյ առ Հաբէլն այն: Զոր առեալ և երթեալ նովաւ հանդերձ, քաջ հմտացեալ ի Դանիէլէ, կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից, եկեալ ետուն ցմեծն Սահակ և Մեսրոպ: Որոց ուսեալ, և թեւածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց հագներգաբար՝ մուրացածոյիւն այնուիկ գծագրութեամբ:

«Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպ եկեալ ի Միջագետս՝ հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն, անցանէ և յԵդեսիայ առ Պղատոն ումն ճարտասան հեթանոս՝ իշխան դիւանին: Եւ նորա

(Փ-րդէյէ)

Հաբելէ, ուրախ լինէին: Բայց տեղեկացեալ գիտացին, ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել ըզհեգենայ բառից հայկականաց հագներգաբար, մուրացածիւն այնուիկ գծագրութեամբ:

«Զկնի այսորիկ ինքնին Մեսրովբ իջանէ ի Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն, անցանէ յԵդեսիա առ Պղատոս ումն ճարտասան հեթանոս, իշխան դիւանին. և նորա խընդութեամբ ընկալեալ, և զոր ինչ մի անգամ ի միտ առնոյր բան հայերէն՝ յինքն առեալ, և շատ ջանացեալ և ոչ օգտեալ՝ զպարտութիւն խոստովանեաց հռետորն. և զայլ ումն ասելով յոյժ հասու՝ վարդապետ իւր լեալ յառաջա-

(Կ-րի-ն)

մանկտոյ հրամանաւ արքայի, և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն, խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց, որոց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդն Ամիթ անուն. ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսն այն՝ որոց առաջնոյն Բաբիլաս անուն, և երկրորդին Ակակիոս հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ. և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ ըստ Քրիստոսի անուանելոյն կարգի։ Իսկ աշակերտասէր վարդապետին՝ զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ՝ զոմանս յասորի դպրութեանն կարգէր, և զոմանս յունական դպրութեանն։ Անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր, և նորա խռովքն հաւասարօք . . . որում պարգևէ . . . նշանագիրս հայերէն

(Փ-րպեցի)

գոյն, և ապա առեալ զճարտարացն գրեան ի նոյն դիւանէն Եդեսեայ, և գնացեալ քրիստոնէութեան հաւատոց, որոյ անունն Եպիփանոս, զոր խնդրեալ՝ գտցես, լցուցացանել զփափաքդ քո։ Յայնժամ Մեսրովբայ օգնականութիւն ի Բաբելոնէ գտեալ. և անցեալ ընդ Փիւնիկէ ի Սամոս դիմէ. քանզի Եպիփանու վճարելով զկենցաղս, թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռուփանոս, հրաշալի արուեստիւ հելլեն գրչութեան, որ ի Սամոս էր միայնացեալ։ Առ սա երթեալ Մեսրովբայ, և յայժմ եւս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ. այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն թաթ ձեռին աջոյ՝

(Խ-րեն-ցի)

խնդութեամբ ընկալեալ, և զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ, և շատ ջանացեալ, զտգիտութիւն խոստովանեաց հռետորն։ Եւ զայլ ոմն ասելով յոյժ հասու, վարդապետ իւր եղեալ յառաջագոյն, և ապա առեալ զճարտարացն գրեան ի նոյն դիւանէն Եդեսեայ, և գնացեալ քրիստոնէութեան հաւատոց. որոյ անուն Եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափաքդ քո։

« Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բաբելոնէ եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ ի Սամոս դիմէ. քանզի Եպիփանոս վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեամբ. որ ի Սամոս էր միայնացեալ. առ սա երթեալ Մեսրոպայ, և յայժմ եւս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ. այլ ի սրտին գործարանի

(Փ-րպեցի)

գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք գծին կուտակեալ ունէր քարն. և ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենիցն որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ. և յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Հռուփանոսիւ, կերպաձեւեալ զգիրն առձեռն պատրաստ Մեսրովբայ, փոխատրելով զհայերէն աթութայն ըստ անսայթաքութեան սիղոբայիցն ի հելլենացւոյն »։

(Կորիւն)

լեզուին. և անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ յօրինէր սիղոբայիւք և կապօք. և ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց՝ հանդերձ օգնականօքն իւրովք՝ իջանէր ի քաղաքն Սամոստացւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր. և անդէն ի նմին քաղաքի՝ գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոցն՝ զնրբագոյնսն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւոր միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկու աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին յԵկեղեաց գաւառէն. և երկրորդին Յովսէփ անուն ի պաղանական տանէն»:

(Խորենացի)

երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի (Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ւ). զի որպէս ի ձեան վերջք գծին կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթիցն, ստեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Հռոփանոսիւ կերպաձեւեալ զգիրն Մեսրոպայ առձեռն պատրաստ. փոխարկելով զհայերէն աթուեթային ըստ անսայթաքութեան սիւղոբայից հելլենացւոց»:

⁂

Այսչափ է երեք՝ գրեթէ ժամանակակից պատմչաց, մեզի աւանդածը՝ հայկական նշանագրաց Մեսրոպայ ձեռքով եղած նորութենէն յառաջ ունեցած վիճակին, և անոնց գիւտին պատմութեան վրայ: Աւելորդ է յիշեցնել՝ թէ իրենց խօսքերը՝ տեղ տեղ լուսաբանութեան կարօտ, ու մերթ ալ բոլորովին անիմանալի կը մնան. շատ տեղ իրարու համաձայնութեամբ ալ՝ նաև երբեմն անհամաձայնք:

Մենք ջանանք իրենց խօսքերուն հետեւողութեամբ ընթերցողաց առջեւը դնել համառօտելով, պարզել՝ որչափ կարելի է, հայկական նշանագրաց գիւտին պատմութիւնը:

Հայերէն տառից գիւտին եռանդուն փափաքող և անխոնջ հետամուտ կը ներկայանայ մեզ սուրբն Մեսրովպ, և իրեն աջակից և օգնական Մեծն Սահակ: Թագաւորական գահը կը նստէր՝ Վռամշապուհ. արքունի ամէն օգնութիւն և նպաստ պատրաստ էր այն բարձր իշխանութիւնն և աթոռը գրաւող անձին կողմանէ, որ դժբաղդաբար սակաւատեւ եղաւ, և որ լաւագոյն ժամանակաց արժանաւոր իշխան մ՚էր:

Այսպիսի հզօր ձեռնտուութենէ մը չուզեց Մեսրոպ զրկել իր ազգը. ուստի և հայերէն գիր ստեղծելու հնարից վրայ՝ սրբոյն Սահակայ հետ և. քովը երկար ատեն կենալէն ու խորհրդակցելէն ետքը, յորդորեց զինքն որ մասնաւոր ժողով մը գումարէ, որպէս զի կարենայ այլ և այլ իմաստուն անձանց խորհրդակցութեամբ փափաքին հասնիլ: Սուրբն Սահակ իրեն սրտին, գիտութեանն ու նուիրական պաշտամանն արժանաւոր խօսքերով յորդորեց ու քաջալերեց զինքը, իր կողմանէ ամենայն կարելի ջանք ու ձեռնտուութիւն խոստանալով. «Եւ ուր տկարանայք, կ՚ըսէր. կարգել զհեգենայսն, բերեալ առ իս ուղղեմ զայն.

քանզի յոյժ դիւրին է գիտ իրացդ զոր հայցես »։ Մէկէն յարքունական քաղաքի ի Վաղարշապատ՝ մասնաւոր ժողովք մը գումարեց. հոն այլ և այլ խօսակցութիւններէ ետքը փափաքեցան որ Վռամշապուհ Թագաւորն ալ այս ժողովոյն ներկայ գտնուի։ Թագաւորն ալ ժողովականաց փափաքը կատարեց, և իմանալով թէ ինչ վախճանաւ ցանկացեր էին իր ներկայութեանը՝ պատմեց անոնց Հաբէլ անունով քահանայէ մը լսածը, թէ Դանիէլ կոչուած ասորի եպիսկոպոսի մը քով կը գտնուէին հայերէն լեզուի նշանագիրք։ Ժողովքը խնդրեց Թագաւորէն որ մէկը ղրկէ առ Դանիէլ, որպէս զի այն նշանագրաց վրայ կարենար տեղեկութիւն առնալ։ Այս վախճանաւ Վահրիճ անունով իմաստուն և փութաջան իշխան մը ղրկեցին Թագաւորական տունէ. որ և Թագաւորէն ու եպիսկոպոսներէն յանձնարարական թղթեր առնելով՝ Միջագետք անցաւ ու հոն տեսաւ զՀաբէլ քահանայն. և անոր հետ մէկտեղ գնաց առ Դանիէլ։ Աս իր քովը եղած նշանագրերը ցոյց տուաւ անոնց. ու սորվեցուց թէ ինչ կերպով հեգելու է այն տառերը։ Լաւ մը տեղեկանալէն ետքը՝ Հաբէլ և Վահրիճ դարձան ի Հայաստան, ու Թագաւորին և սրբոյն Սահակայ և Մեսրովպայ առջեւ դրին թէ Դանիէլեան նշանագիրք և թէ անոնց հնչմունքը։

Վռամշապուհ՝ Սահակայ ու Մեսրովպայ յանձնեց այն տառերը, որպէս զի զանոնք ընդհանուր ազգին օգտակար ընելու եղանակին վրայ մտածեն։ Անոնք ալ շատ աշխատեցան որ այն տառերը մեր լեզուին հնչմանը ծառայեցընեն, ու տղաքներ ժողվեցին զանոնք կրթելու և անոնց սորվեցնելու համար այն տառերը։ Երկու տարի անընդհատ այս վախճանիս հասնելու համար աշխատեցան. և այն դժուարին վաստակն ու երկայն փորձն իմացուց իրենց թէ ընդունայն էր աշխատանքը. վասն զի այն տառից հեգը մեր լեզուին չէր յարմարեր. ուստի դարձեալ նոր աշխատանքի և հին մտածութեանց մէջ ինկան, ու Թագաւորին

հետ միաբան խորհեցան որ ինքը սուրբն Մեսրովպ անձամբ երթայ առ Դանիէլ՝ որով թերեւս կարենայ աւելի բան մ՚իմանալ։ Ուստի Մեսրովպ իր մտավարժ աշակերտներէն մէկ քանի հոգի հետն առած՝ Միջագետք գնաց Դանիէլ եպիսկոպոսին քով. և բաւական ատեն հոն կենալէն ետքը՝ նոր բան մը չկրցաւ սորվիլ. և ասոր համար կարգէ դուրս տրտմութիւն և մտատանջ հոգ ունեցաւ։ Բայց որպէս զի բոլորովին անպտուղ չըլլայ իր աշխատութիւնը, երկու դաս բաժնեց հետը բերած աշակերտներն ու դպրոց մը դրաւ զիրենք, որպէս զի անոնցմէ ոմանք ասորի՝ միւսներն ալ յունական դպրութիւն սորվին։ Իսկ ինքը հետն առնելով ընտրելագոյն աշակերտքը և օգնականքը՝ զՅովհան Եկեղեցացի և զՅովսէփ Պաղնացի, ճամբայ ելաւ Հայաստան դառնալու։

Երբոր Մեսրովպ այս մտքին վրայ էր, լսեց թէ Եդեսիա քաղաքին մէջ Պղատոն անունով հանճարեղ ու ճարտարամիտ մարդ մը կայ, որ միանգամայն նոյն քաղաքին դիւանին վերակացուն է. և շատերը կ՚ապահովցնէին թէ անիկայ իր հանճարովը կրնայ Մեսրովպայ առաջնորդութիւն մ՚ընել։ Մեսրովպ այս բանիս վրայ ուրախանալով, շուտով մ՚անոր գնաց, ու իր մտացը խորհուրդը ծանոյց։ Պղատոն քննեց հարցուց և իմացաւ իրմէ Հայոց լեզուին հանգամանքը, և շատ աշխատեցաւ որ զերանելին գոհ ընէ. բայց իր վախճանին չկարենալով հասնիլ՝ խոստովանեցաւ թէ այդ փափաքելի խնդրոյն կատարումն իրմէ վեր է. բայց միանգամայն իմացուց թէ Եպիփանիոս իր վարդապետը կայ. Անիկա, ըսաւ, թերեւս կարենայ քու փափաքանացդ լրումը շնորհել։ Այս վախճանաւ յանձնարարական թղթեր առաւ Մեսրովպ թէ իրմէ, և թէ տեղւոյն Ռաբուլա կամ Բաբիլաս եպիսկոպոսէն, ու Փիւնիկստան իջաւ. հոն լսեց որ քիչ առաջ վախճաներ է Եպիփանիոս, շատ տրտմեցաւ. բայց որովհետեւ մեծ համբաւ ստացեր էր Եպիփանիոսի աշակերտը Հռոփանոս, իբրեւ իր վարդապետին հանճարոյն և ճարտարմտութեանը ժառանգ, և Սամոսացւոց (Սամոսատ) քաղաքին մէջ առանձնացեր նստեր էր, չուտով մ'անոր գնաց[1]: Սակայն հոս ալ ընդունայն եղաւ իր աշխատութիւնը:

Ու անկէ ետքը մարդկային հնարագիտութենէ իր ամէն յոյսը կտրեց Մեսրովպ, ու միայն աստուածային օգնականութեան վրայ դրաւ ակնկալութիւնը: Եւ յիրաւի, այս անգամ տարապարտ չյոգնեցաւ: Ժամանակակից և ստուգապատում պատմագիրք կ'աւանդեն թէ օր մը յանկարծ տեսիլքով յափշտակուեցաւ. աչքին առջեւը քար մը տեսաւ, ու աներեւոյթ թաթ մը՝ որ այլեւայլ տառեր կը գրէր այն վիմին վրայ, և անոնց ձեւը միեւնոյն ժամանակ կը դրոշմուէր նաեւ Մեսրովպայ սրտին վրայ: Իսկոյն աղօթքէն ելլելով՝ իմացաւ Մեսրովպ թէ աստուածային էր այն տեսիլքը. իրեն երեւութացած գրերուն ձեւն ու նմանութիւնը՝ դեռ իր մտաց մէջ տպաւորուած էին, ուստի մէկէն գնաց առ Հռոփանոս, և պատմեց իրեն տեսիլքը՝ ու կերպը բացատրեց. որ իր ճարտար գրչովը՝ վայելուչ ու գեղեցիկ ձեւեր տուաւ նոյն տառերուն: Սուրբն Սահակ հաւատարիմ մնաց իր խոստմանն և աջակցութեան «յերիւրելով... և դիւրահնար ճանապարհ ցուցանելով (երանելոյն Մաշթոցի), կարգաւորութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան, տալով նմա օգնականս... որք էին սակաւ մի և նոքա՝ որպէս երանելին Մեսրոպ՝ մերձաւորեալք ի յունարէն հեգենայսն»:

Այսպէս Մեսրովպ և Սահակ, ամոլք սիրալիրք, արժանապէս կոչուած կրկին մտաւոր «լուսաւորիչք տանս Թորգոմայ», ունեցան իրենց մեծ և բազմաշահ գործակցութիւնն և արդիւնք գիւտի գրոց կարեւոր գործոյն մէջ. մին հնարող, ճարտարող և ձեւերը տուող, միւսն՝ անոնց ձայնն ու հեգ. որով երկուքն ալ ամբողջ ազգի մը ապագային առջեւ շնորհընկալ երախտագիտութեան արժանաւորք:

⁂

Հայկական այբուբենից գիւտին պատմական և արդէն ծանօթ մասը համառօտիւ յիշատակելնէս ետքը, քանի մը խնդրոց կը հանդիպինք, որոնցմով արդէն զբաղած է ու կը զբաղի բանասիրութիւնը, և զորս արժան է մէջ բերել ի գիտութիւն և ի խելամտութիւն:

Այս խնդրոց մէջ գլխաւորն է թէ արդեօք սրբոյն Մեսրովպայ գիւտը, ամբողջ մեր այբուբենին, երեսուն և վեց տառի՞ց ալ կը վերաբերի, թէ անոր մէկ մասին. կամ թէ յառաջ քան զգիւտ նորա՝ յատուկ հայկական նշանագիրք ունեցա՞ծ ենք:

Ջխը (1299) թուականին գրչագիր մատենի մը մէջ՝ հետագայ հատուածին կը հանդիպինք, և որ մասն է դաւանական երկար գրութեան մը՝ զոր, ըստ ձեռագրին, յօրինած է «սուրբ վարդապետն Սահակ՝ Հայոց կաթուղիկոս և մեծ թարգմանիչ»: Ահաւասիկ այդ հատուածը. «Նախ քան զծագումն (փրկչին) պերճաբանութիւն հռետորական արհեստին՝ ըստ պղատոնական վարժիցն՝ ոչ երբեք ստորագրեալ ոտնահետս ի կողմ հայկազանց. և ոչ յոլով մակացութեամբ գեղերեալ հինքն մերազնեայք՝ ի հրահանգս հելլենական ճարտասանութեան ըստ իմաստնոցն Յունաց՝ առ ունակութիւն եղելոց գիտութեանց, որ է առաջին մասն իմաստութեան... այլ և ոչ առանձնական վայելչաձև գծագրական տառիցն վաղագոյն հարստացեալ էաք, առանց որոյ ոչ է հնար զանցեալսն իմանալ, և ոչ զներկայս ապագայիցն թողուլ առ ի յիշատակ»: Զնոյն իմաստ՝ գրեթէ նոյն բառերով կրկնուած կը գտնենք դարձեալ վերը յիշուած գրչագրին մէջ՝ ի թղթին որ կ'ընծայուի Ստեփանոսի

---

[1] Յիշատակի Հռուփինոս անունով եպիսկոպոս մը ի Սամոսատ (440), յաջորդ Անդրէի եպիսկոպոսի քաղաքին: Ժամանակակից ըլլալով կրնայ կարծուիլ թէ առ սա դիմեր է Մեսրովպ:

Սիւնեցւոյ առ Գերմանոս պատրիարք Կոստանդնուպոլսի. «Զրկեալք, կ'ըսէ, յառանձնական տառիցն դժագրութենէ, որով զանցեալսն մարթէաք գիտել, և զներկայս ապագայիցն թողուլ առ ի յիշատակ, անճաճանչ աղջամղջաւ, և անլոյս ստուերաւ պարփակեալ նստէաք ի խաւարի դիւցազանցն տնից »:

Եթէ իբրեւ վաւերականք ընդունուին այս հատուածք, — և զանոնք մէջ բերող գրչագրին հնութիւնը և ընտրութիւնը ոչ դուզնաքեայ երաշխաւորութիւնք կրնային սեպուիլ, — երկու հռչականուն անձինք, պատուականք և մեծարոյք իրենց հնութեամբ, ուսմամբ և եկեղեցական բարձր դիրքով, կարծես թէ մեր յիշած խնդրոյն նկատմամբ ամէն տարակոյս փարատելու բաւական պիտի ըլլային իրենց այս բացայայտ խօսքերով:

Սակայն թէ օտարաց և թէ մեր հնոց մէկ քանի խօսքերը՝ երկմտութեանց և ենթադրութեանց պատճառ եղած են:

⁂

Յօտար պատմչաց վկայութիւն մը հասած է մինչեւ առ մեզ, որ հաւաստարմացնել կը թուի հայկական այբուբենից գոյութիւնը յառաջ քան զդարը Մեսրոպ և անոր գիւտը: Փիլոստրատոս՝ որ Կարակալլա կայսեր ժամանակ ծաղկած մատենագիր մ'է, կ'աւանդէ թէ ժամանակաւ ինձ մը բռներ էին, պարանոցը ոսկեղէն մանեակով. որուն վրայ հայկական նշանագրօք այս խօսքերս գրուած էին եղեր. «Արշակ թագաւոր՝ աստուածոյն Նիւսեայ »: Այս դէպքը մէջ բերող պատմիչը կը յաւելու. «Յայնժամ թագաւոր էր Հայոց Արշակ. և կարծեմ թէ տեսեալ նորա զինձն՝ նուիրեաց Դիոնիսեայ վասն մեծութեան գազանին »:

Այս դէպք և գրոյց եթէ արժանահաւատ համարուի, կրնայ բոլորովին կերպարանափոխութիւն մը կրել տալ

շատերու ընդունելի եղած գաղափարաց, նկատմամբ այն փոխառութեան տառից՝ զոր Հայք, ինչպէս քիչ յառաջ տեսանք, հետզհետէ բռնադատուեր են ընել ի Պարսից, յԱսորւոց և ի Յունաց, անոնց յատուկ այբուբենից տառերը իրենց լեզուին կիրառութեանը մէջ մտցնելով: Վասն զի այն ատեն կրնայ կարծուիլ թէ Հայաստանի մէկ քանի գաւառաց մէջ՝ բուն ազգային տառից կամ այբուբենից կիրառութիւնը կար կամ կրնար ըլլալ, մինչդեռ յայլ գաւառս նոյն երկրին, մանաւանդ Պարսից և Ասորւոց սահմանակից և յունական ազդեցութեան կամ իշխանութեան տակ եղող տեղուանք՝ իրենց դրացի և մերձաւոր երկիրներու մէջ խօսուած լեզուներու այբուբենից տառերը կը գործածուէին: Առաջին դէպքին ենթադրութեամբ, այն հայկական այբուբենք՝ որոց գիւտը կ'ընծայուի սրբոյն Մեսրովպայ, արդէն ի գործածութեան եղած պիտի ըլլան երկար ատեն Հայաստանի այլեւայլ կողմանք, ու Մեսրովպ ուրիշ բան ըրած պիտի չըլլայ՝ բայց եթէ բարեփոխել, ու քանի մը նորագիւտ տառից յաւելուածով կատարելագործել զանոնք, և ի մասնաւորի ձայնաւորաց ներմուծմամբ: Ոչ անծանօթ է բանասիրաց և հմտից՝ թէ ասորատառք՝ ինչպէս ուրիշ որ և իցէ սեմական լեզուք՝ ձայնաւոր տառից կիրառութիւնը չունէին ի սկզբան, և միայն Քրիստոսէ ութ դար ետքը առնուած են ի յունականէն: Ծանօթ է դարձեալ որ հայ այբուբենից ձայնաւորք ալ՝ ի յունէ թեթեւ փոփոխութեամբք առնուած և յարմարցուած են. և Մեսրոպ՝ որուն ոմանք ի հայ պատմագրաց, և ի մասնաւորի Խորենացի, անոնց գիւտը կամ համաձայնութիւնն կը յատկացնեն, և որ ազգային յատուկ այբուբէն մը հնարելու համար՝ մասնաւոր ճամբորդութիւն և հետազօտութիւնք ըրաւ յաշխարհին Յունաց, հաւանէ եղած է անոնց ձայնաւոր նշանակաց հնչումն ու ձայնը մտցնել հայ այբուբենին մէջ:

⁂

Այս կարծեաց կրնան զուգընթաց համարուիլ մեր հինգերորդ դարու, և մանաւանդ ժամանակաւ կրտսերագունից խօսքերն ու աւանդութիւնք։

Առջիններուն՝ — որքոյն Մեսրովպայ ժամանակակից երեք գլխաւոր մատենագրաց, զորոնք շատ անգամ յիշեցինք, — քանի մը մթին և ոչ այնչափ բացայայտ խօսքերէն կրնայ գուշակուիլ, թէ առաջուց ալ գիր կար մեր ազգին մէջ, բայց անկատար ըլլալուն պատճառաւ՝ կիրառութիւնը դժուարին, ուստի և երեսի վրայ ձգուած էր. «Զի ոչ էին, կ'ըսէ Կորիւն, բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղոբայս և զկապս հայերէն լեզուին»։ Խորենացին ալ կ'ըսէ. «Զոր առեալ, (Վահրիճ և Հաբէլ) և երթեալ նովաւ հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիելէ, կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից, եկեալ ետուն ցՄեծն Սահակ և Մեսրոպ։ Որոց ուսեալ, և թեւածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանանագրօք ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց հագներգաբար՝ մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ»։ Փարպեցին ալ կ'աւանդէ թէ սուրբն Մեսրովպ՝ դեռ առ Սահակ կաթուղիկոս և առ Վռամշապուհ թագաւորն չգացած, և դանիէլեան նշանագրոց գոյութիւնը չիմացած, շատ ետեւէ կ'ըլլար հայերէն գիր հնարելու. «Մանաւանդ թէ գոն, կ'ըսէ, նշանագիրք հայերէն լեզուոյս»։ Ետքն ալ կը յաւելու թէ, «Զարթոյց աստուածային շնորհ ի ցանկութիւնս յայս (զՄեսրովպ), կարգել զվաղնջուցն գտեալ շարագիրս տառիցն՝ զորս ոչ ուրուք էր հոգացեալ՝ արկանել ի կիր»։ Այս խօսքին կը համաձայնի և Խորենացին՝ յաւելն. «Կարգեալ ըստ ձեւոյ օրինակի յունականին զվաղնջուց գտեալ նշանագիր տառից»։ Դարձեալ Կորիւն դանիէլեան նշանագրաց վրայ խօսելու ատենը սանկ կը գրուցէ. «Մանաւանդ զի և նշանագիրք իսկ յայլոց դըպրութեանց սթողեալք, և յարուցեալ դիպեցան». որով անշուշտ կ'ուզէ իմացնել թէ այն դանիէլեան կոչուած նշանագիրք նոր հնարուած չէին, այլ հին՝ բայց անկատար. ուստի և առաջիններէն երեսի վրայ թողուած, ու ետքը Դանիելի ասորւոյն քով գտնուեցան. ու թէ որ առաջինները, կ'ըսէ, զանոնք երեսէ ձգեցին, որովհետեւ պէտք եղած դիւրութիւնը չունէին վանկերը հեգելու, ինչո՞ւ համար մենք դարձեալ պիտի աշխատինք ու յոգնինք՝ նոյն անկատար նշանագիրներով։

⁂

Երկրորդ խնդիր մ'ալ։

Հայկական այբուբենից գիւտին պատմութեան մէջ՝ ինչպէս տեսանք, ասորւոյ մը՝ Դանիելի անունը կը յիշատակուի, և որուն կարեւոր դեր մ'ընծայուելով ի պատմչաց, հետեւաբար հետաքննութեան նիւթ մը կը դառնայ բանասիրաց և քննադատից թէ ուստի՞ իր քով կը գտնուէին այդ տառք, և առ որ հարկ կը համարեն դիմել Հայոց քաղաքական և հոգեւոր իշխանութեանց ներկայացուցիչք յատուկ պատգամաւորութեամբ և աղերսական թախանձանօք. և թէ արդեօք՝ մեր պատմութեանց մէջ իր անունը կրող այդ նշանագիրք՝ Դանիելի ստեղծուածք էին թէ հին ժամանակաց յօրինուածք։ Իրաւամբք Դանիելի անուան քով դրուած և իր ազգութիւնը ցուցնող մակդիրը՝ ոչ միայն կասկածելի կ'ընէ որ այդ նշանագրերը Դանիելի գիւտն եղած ըլլան, այլ բոլորովին իսկ աններելի, — ինչպէս կ'անդրադարձնէ նոր բանասէր մը, — զայնս նմա վերագրել. և արդարացի տեսութեամբ կը հետեւցնէ թէ «Ինչ շահ կամ հարկ կամ բաւականութիւն իսկ կարէր ունել միջագետարնակ ասորի մը՝ այսպիսի գործով մը զբաղելու.

մինչեւ նոյնը Մեսրոպայ իսկ պէսպէս փորձիւք ուսմանն տուաւ, ինչպէս վկայեն իր կենսագիրք »[1]:

Այսպիսի ենթադրութեան կամ տարակուսի մը պատասխանը՝ լիուլի տուած է կարծենք մեր տոհմային պատմութիւնը, որ թէպէտ Դանիէլի և իրեն անունը կրող նշանագրաց խօսքն ըրած է յաճախ, բայց ոչ երբեք յայտնի և որոշ կերպով անոնց հնարիչ և ստեղծող զինքն համարելով: Ժամանակակից պատմչաց խօսքերն արդէն յիշատակեցինք. հետագայք ալ զնոյն կրկնած են, ընդհանրապէս միայն աւանդապահ մը զինքն համարելով՝ ի վաղնջուց գտնուած և ի կիրառութենէ դուրս ինկած տառերու՝ որոնք կամ բուն հայկականք էին և կամ հայերէն լեզուի յարմար կրնային կարծուիլ: Միայն կայսերաց կոչուած ժամանակագրական ու բաւական հնութիւն ունեցող երկասիրութեան մը մէջ, և որ ի յունէ փոխաբերութիւն է ի հայ, Դանիէլի գիւտն ըլլալու նշմար մը կը տեսնենք. «Ի սոցա տասներորդ ամի կ'ըսէ, (Արկադեայ և Ոնորիոսի) սկիզբն հայերէն քսան և հինգ գրոյ... Ի սորա յաւուրսն էր սուրբն Սահակ հայրապետն, յորոյ աւուրս գտաւ քսան և ինն գիրն հայերէն լեզուի ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորւոյ, զոր եւ բերել Վռամշապուհ թագաւորն. իսկ զեւթն գրոյն պակասութիւնն Մեսրոպ երանելի տարաւնեցի ի Հացեկաց գեղջէ յազատ տանէ, ամսօրեայ պահովք և աղօթիւք հանդերձ աշակերտովքն հայցէր յԱստուծոյ. որ և ցուցաւ նմա ի տեսլեան. այս լինէր յասորւոց աշխարհին՝ յորժամ վասն նորին խնդրոյ ճանապարհորդեաց նա»:

Մեր պատմչաց վկայութիւնք չեն համաձայնիր ընդ նմա յայս կարծիս: Բաց ի ծանօթագունից և ի հնոց՝ որոց խօսքերն արդէն յայտնի են ընթերցողաց՝ Ասողիկ կ'ըսէ. «Գտաք հանդիպեալ յերկրորդ ամին Արտաշրի արքայի Պարսից՝ զհինգերորդ ամն Վռամշապհոյ արքայի Հայոց: Յորում Մաշթոցն երանելին՝ որ էր ի գաւառէն Տարօնոյ ի գեղջէ Հացեկաց, ի ձեռն Վռամշապհոյ և մեծի հայրապետին Սահակայ՝ դանիէլեան նշանագրօք դպրութիւն ըստ հայումս յօրինէր՝ ընկերօք ոմամբք աւելովք նմա ի Սահակայ: Յետ որոյ դարձեալ եւս ի վեցերորդումն նորին Վռամշապհոյ՝ որ է առաջին Վռամայ Կրման արքայի, վերստին աստուածային շնորհաց տուեալ նշանագրօք՝ զնոյնս յեղանակեալ յօրինէր: Որովք և դպրութիւնք և գիրք աստուածաշունչք ուղղեալ թարգմանին, որպէս պատմէ Կորիւն և Ղազար»: Նոյնն դարձեալ, «Մեսրոպ որ և Մաշտոց, այր սքանչելի քահանայ, նախագտող և վարդապետ ըստ հայումս նշանագրութեան, զայսու ժամանակաւ յաւէտ եւս երեւեալ պայծառանայր»:

⁂

Խորենացւոյ պատմութեան մէկ քանի գրչագրացը մէջ հայերէն գրոց գիւտին պատմութիւնը յաւելուածով՝ կամ թէ ըսենք՝ տարբերութեամբ մը կը պատմուի: Սրբոյն Մեսրովպայ ջանքն ու փոյթը պատմելէն և օգուտ մը չըտեսնելէն ետքը՝ կը յաւելու. «Աղօթքի կ'ապաւինի, ու կը տեսնէ չէ թէ քունի մէջ երազ, և ոչ թէ յարթնութեան տեսիլ, այլ սրտին գործարանին մէջ երեւութանալով հոգւոյն աջ ձեռին թաթ մը որ կը գրէր, Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ւ»: Այս խօսքերով՝ զանազանութիւն կամ մասնաւորութիւն մը կը տրուի սրբոյն Մեսրովպայ հնարած գրերուն: Այս կարծեաց՝ կերպով մը ձայնակից կ'ըլլան յետին դարուց պատմագիրներէն Ասողիկ և Վարդան: Ասողիկ կ'ըսէ. «Հայոց Սահակ հայրապետին օրը՝ հայկական դպրութիւնն եղաւ. քսանեօթը գիր՝ ասորւոց Դանիէլ փիլիսոփայն ստեղծեց. իսկ եօթը գրոց (կամ ձայնաւորաց) պակասութիւնը՝ Մեսրովպ տարօնացի խնդրուա-

---

[1] Երկրագունդ, հանդէս ամսեայ. Կ. Պոլիս, Արամեան տպարան, 1884-85.

ծով կ'առնու յԱստուծոյ»: Վարդան ալ կը գրէ. «Սուրբն Մեսրովպ հայերէն դպրութիւնը կը յօրինէ. քսաներկու գիր՝ Դանիէլի ասորւոյն քով գտնելով հին ժամանակներէ, որոնք մեր լեզուին ընդարձակութիւնը պարզել չկարենալնուն համար՝ նախնիք անհոգութեամբ երեսի վրայ ձգեր էին, ու յոյն, ասորի և պարսիկ գրերը կը գործածէին. և որովհետև սուրբն Մեսրովպ չէր կրնար անոնցմով աստուածաշունչ գրոց թարգմանութեան ձեռք զարնել, անոր համար սրբոյն Սահակայ գործակցութեամբը աղօթքի դիմեց, և տասնչորս գիր տուաւ Աստուած իր ձեռքովը դրոշմուած»: Նոյն Վարդան պատմիչը իր կարծեաց բացատրութեանն համար դէպք մըն ալ մէջ կը բերէ. «Լեւոն թագաւորին օրերը, կ'ըսէ, վկայուեցաւ թէ Հայք հին ատենէն գիր ունէին. վասն զի Կիլիկիայի մէջ դրամ գտնուեցաւ մեր հին կռապաշտ թագաւորաց օրէն մնացած՝ հայերէն տառերով, բայց նոյն գրոց պակասը՝ մեր նոր Եզրասը (կամ Մեսրովպ) լեցուց[1]»:

Սամուէլ անեցի. «Սկիզբն դպրութեան Հայոց. Մաշտոց և Մեսրոպ երանելին և մեծն Սահակ՝ զԴանիէլի նշանագիրսն յօրինէին ընկերօքն հանդերձ. և յետ միոյ ամի՝ դարձեալ աստուածատուր նշանագրօք զնոյն յեղանակեալ. որով և դպրութիւնք և գիրք աստուածայինք ուղղեալ թարգմանէին»:

Ի Յայսմաւուրս. «Սուրբ վարդապետն Մեսրոպ աշակերտ էր մեծին Ներսիսի Հայրապետին և դպիր Նորին. և յետ կատարման Նորին եղեւ ի դրան արքային. և յետ փոքր մի ժամանակաց զկնի առեալ զկրօնաւորական ձեւ՝ սիրեաց զմիայնութիւն, բնակեցաւ ի Գողթն գաւառ, և լուսաւորեաց զնոսա քրիստոնէական հաւատով. և զի էր ինքն միայն, աշխատէր ի թարգմանելն զգիրս սուրբս ժողովրդեանն հելլենացի լեզւոյն ի հայ: Սկսաւ ապա ընդ միտ ածել թէ լինէր հնար գրոյ Հայոց՝ զի մի անմխիթար մնասցեն յընթեռնուլն այլ լեզու զաստուածաշունչ գիրս. և յարուցեալ եկն առ մեծն Սահակ հայրապետն, և եգիտ զնա ի նոյն հոգոց վարանումն: Իսկ թագաւորն Հայոց ծանոյց նոցա վասն քահանայի միոյ ասորւոյ Դանիէլ անուն թէ խոստանայր ունել նշանագիր Հայոց. զոր առաքեալ՝ բերին. և վարժեալ նովաւ մանկունս՝ տեսանէին զի ոչ բերէր ուղղակի զհեգս Հայոց բարբառոյն. քանզի յոյն գիրն միայն յարմարեալ էր»:

Գանձարանի գրոց մէջ... «Աստ հոգին շարժեալ – Առ նոսա ազդեալ – Հայ գիր ուրինեալ. – Վռամշապուհ աւգնեալ, – Վահրիճ գործակցեալ, – Դանիէլ շնորհեալ, – քսան և ինն գըտեալ, – Նախնեացն արարեալ. – Ամս երկուս չհերքեալ – Բազումս աշխատեալ – Եւ ոչինչ օգտեալ: – Ձեռն յԱստուած ձգեալ. – Ի Բալու ալքնեալ – Մեսրոպ ապաւինեալ. – Աստուած գըթացեալ. – Հրեշտակ տեսան իջեալ – Մատամբ փորագրեալ – Ի վիմին դրոշմեալ: – Աջ ձեռն երեւեալ – Իբր ի ձեռն գըրեալ – Եւթ գիր յօրինեալ. – Այն հոգի ջահեալ – Զայն գիրսն յարուցեալ, – Սիզորայք հերքեալ»:

---

[1] Հմուտ հնախոյզ Լանկլուա, հայագէտ և դրամագէտ՝ իրաւամբ անստոյգ կը համարի Վարդանայ մէջ բերած այս դէպքը. վասն զի, կ'ըսէ թէ, Արշակունի թագաւորաց անունով գտնուած դրամք՝ ոչ երբէք հայկական, այլ միշտ յունական վերտառութիւն կը կրեն. և հաւանական կը համարի որ Վարդանայ գրոց մէջ յիշատակուած դրամը՝ աքեմենեան թագաւորաց հպատակութեան տակ գտնուող նախարարաց մէկուն ըլլայ, փիւնիկեան տառերով. Այսպիսի դրամք կը գտնուին, կ'ըսէ, մինչև հիմա ի Կիլիկիա, ուր ինքն անձամբ ճանապարհորդած է, և տեղեկագրութիւնն հրատարակած, և այլևայլ հնութիւնք փոխադրած ի հայրենիս իւր ի Գաղղիա, ի Լուվր փարիզու. — Ի հաւաքման հին դրամոց Այնզլէ անգղիացւոյն, ի մի կողմն ունելով դրոշմեալ ատրուշան ի մէջ երկուց մոգաց, իսկ ի միւս կողմն դէմք թագաւորի ըստ արեւելեան օրինակի սաղաւարտեալ, զորս տեսած է և կը կարծէ ունել շուրջանակի հայկական տառս որոշ ճանաչելոս հ, տ, պ, կ, ճ, ևն. այսպիսի դրամք կը գտնուին յայլևայլ հանդիսարանս դրամոց զորս կոչեն դրամս Պարթևաց արշակունեաց. Տես Ինճիճեան ի Հնախօսութեան (Հատոր Գ.).

Դարձեալ ի նոյն գրոց. « Ի մերոյ սուրբ Լուսաւորչէն – Գրիգորիոս արթուն անուանէն – Աւրհնագրեալ դարձաք ի չարէն – Ի կառց զոհէն ի բանտարկուէն: – Այլ նա վարժեալ գրով յունարէն – Զի չունէաք գիր հայի բառէն – Մինչ ի Սահակ մեծն ի պարթեւէն. – Մեծըն Մեսրոպ ցանկալին բազմաց – Արժան եղեւ սուրբ Հոգւոյն շնորհաց... Զոր ի նմանէ սուրբ Սահակ խնդրեաց – Գիր յաւրինել մեզ Հայոց մեծաց: – Յոյժ տեղիս վասն այնոր գնաց – Ոչ գըտանէ հնար յայնմ իրաց: – Քսանեւինն գիր էր գըտաց – Այլ անուղուտ էր ընթերցողաց, – Զի և ոչ կայէր հեզ բառից անուանց, – Այլ անհոգի մարմնոյ նըմանած: – Մինչեւ բազում տարիք աղօթեաց – Հառաչանաւք սըրտիւ արտասուաց. – Աջն Աստուծոյ անեղին փառաց – Ըզեւթն գիրն ի քարին գըրեաց, – Որպէս երբեմն հին ուրինաց – Քարեայ տախտակըն Մովսեսի գըրեաց. – Աւրհնեալ փրկիչն որ զՀայք մեծարեաց – Քան զամենայն ազգս գերակաց: – Երեւեցաւ Մեսրոպայ ցանկալին – Համանըման մեծին Մովսեսին. – Տըպաւորեալ ի սիրտ նորին – Այն որ գրեցաւ աջով երկնային. – Ա, Ե և Է կարգեալ ընդ Ըին – Իւ Ո և Ի ի կարգին. – Զոր և առեալ մեծի Մեսրոպին – Խառնեալ ի յայլ գրերն առաջին. – Սուրբ Հոգի ջահեցաւ նոցին – Վեցեակ վեցից համարով գըրին »:

Չենք ուզեր յերկարել յայլ վկայութիւնս, յորս յամենեսին քաջայայտ կ'երեւնայ տարւոյն ընծայուած մասնակցութեան որպիսութիւնն և չափ՝ նշանագրաց գիւտի խնդրոյն մէջ, և որոնք յայտնապէս վաղնջուց գտեալ նշանագիրք կը կոչեն Դանիելի քով գտնուածներն:

⁂

Որպիսի հանգիպմամբ Հայաստանի անծանօթ մնացած նշանագիրք՝ կը գտնուէին առ ասորի քահանային: — Հայք ասորի տառեր գործածելու բուն հարկին մէջ գըտնուած ատեննին՝ այդ երկու ժողովրդոց մէջ յարաբերութիւնք կային անտարակոյս. և զարմանք չէր՝ որ Հայոց ոչ եթէ բոլորովին անծանօթ, այլ իրենց պիտոյքը լեցնելու անբաւականութեանն համար երեսէ ձգուած կամ թողուած նշանագիրք՝ իբր ուսումնասիրելի կամ հետաքննութեան արժանաւոր նիւթք մնացած էին առ Դանիելի:

Մեր քիչ յառաջ յիշատակած բանասիրական հանդիսին յօդուածագիրն՝ երկրորդ, ու հաւասարապէս հետաքննելի հարցումն կ'առաջարկէ. « Եթէ առ Դանիելի յայտնեալքն, կ'ըսէ, հին հայկական նշանագիրք էին, ինչ կերպարանաց վրայ գտաւ զնոսա՝ Դանիէլ. իբր ցանկ կամ ցուցակ ինչ այբուբենի, թէ իբրեւ մատենաձեւ գրութիւն՝ որ այդ վաղեմի տառիւքն ձեռագրեալ էր »: Ըստ մեր կարծեաց՝ կրնար թէ մէկն և թէ միւսն ըլլալ. և փափաքելի անշուշտ ամբողջ գրութիւն մը կամ գրուածք, և որ մեր ազգային հին դպրութեան գոյութեան նկատմամբ յառաջ քան զգիւտ գրոյն՝ յուզուած խնդրոյ լուծման համար մեծ կարեւորութիւն կ'ունենար, և որք ցայսօր մթին և անորոշ մնացած են. բայց արդեւք մ'ալ չենք տեսներ կամ անտեղութիւն որ իբրեւ պարզ նշանագրաց կամ այբուբենի ցուցակ մը գտնուէին ասորի եպիսկոպոսին քով, ունենալով անշուշտ այդ նշանագրաց հեգը, ոյժը, զօրութիւնը հասկընելու բաւական ու պարտուպատշաճ բացատրութիւններ, Հայ կամ ասորի և յոյն լեզուով. և ինչո՞ւ ասորի մը այդպիսի հետազօտութեամբ և քննութեամբ պիտի չկարենար պարապիլ՝ երբ Հայք այդչափ յարաբերութեան մէջ գտնուելու բռնադատուած էին՝ անոնց տառից կիրա-

ութեամբ։ Մէջ բերուած ժամանակակից պատմչաց վկայութիւնք՝ Խորենացւոյ և Փարպեցւոյն, առաջնոյն՝ «կարգեալ ըստ ձեւոյ յունականին զվաղնջուց գտեալ նշանագիրս տառից», և երկրորդին՝ «Հանդիպեցուցանէր զհայերէն աթութային ըստ կարգման սիլոլբայիցն Յունաց», որչափ ալ ստուգիւ կը նշանակեն թէ Մեսրոպ «դասաւորեց այդ վաղնջական տառերը ըստ կարգի յունական այբուբենին՝ համապատասխան տառից հանդիպեցուցանելով զնոսա». բայց անկէ աւելի բան մը չեն նշանակեր՝ ըստ մեզ. և որ դիւրին էր՝ արդէն իրենց ձեռքն եղած նշանագրաց ցանկի մը վրայէն ուրիշ ցանկ մը կարգել և պատրաստել, օժանդակուելով նաև իրենց անձնական և արդէն հաշուած յոյն, ասորի և մանաւանդ հայկական լեզուաց հմտութեամբն և գիտութեամբ։

⁂

Երրորդ ու վերջին հարցում մ'ալ առաջարկուած է ի նոյն հմուտ ու հետազօտող սիրարանէ թէ «արդեօք Մեսրոպ այդ վաղնջական նշանագրաց թերութիւններն լեցնելու ժամանակ՝ անթերի եղողներուն ձեւերը թողո՞ւց հաւատարմութեամբ, թէ ինքնակամ և մտացածին նոր ձեւեր ընտրեց կամ հնարեց»։ Իրեն հետ համամիտ այս հարցման պատասխանին նկատմամբ՝ ոչ հարկաւոր և ոչ պատշաճական կը գտնենք՝ արդէն հնարուած և ազգային լեզուի հնչմունքն արժանապէս և անսայթաք կերպով բացատրող նշանագրաց ձեւերուն մէջ անկարեւոր փոփոխութիւններով՝ թէ իր և թէ այլոց աշխատանքը դժուարացնել և կնճռել։ «Ի՞նչ հարկ այդ փոփոխման, — իր ստուգահաւատ խօսքերը մէջ բերելով, — երբ զառաջինն գոհ եղան և սփռեցին ընդ աշխարհն. նա մանաւանդ այդ պարագային, որ պատմական է, քանի՛ հակառակ հարկ է փոխելէ զգուշանալու, որ հազարաւոր տղայք սկսել էին արդէն ընտանենալ այդ հին նշանագրաց ձեւոյն։ — Իսկ աւելցնել հա՞րկ է նաև ուրիշ փոքր ինչ հեռաւոր խորհրդածութիւն մը, որ այդ հին ձեւոց իբրեւ ազգային աւանդի մը հաւատարիմ մնալն՝ դիւրութիւն կը մատուցանէր Մեսրոպեանց քարոյական դժուարութեան մը յաղթելու՝ որ թերեւս կրնար յառնել, թերեւս յարուցեալ իսկ էր՝ ի չարակամ (կամ ի նախանձոտ) ընդդիմացողաց այդ ձեռնարկութեանն իբր նորելուկ բան։ Հնութեան հեղինակութիւնն մեծ է յոյժ. և այնքան մեծ, որ նորա լեզուաւ խօսողն՝ շատ անգամ նաև դժուարինն և զոգեղ և զանհանդուրժելին, սիրելի և յարգելի և տանելի կ'ընծայէ։ Ինչո՞ւ այդպիսի պիտանի օժանդակէ մը ինքզինք զրկէր Մեսրոպ ինքնակամ և քմահաճոյ նորութեան մը սիրով»։ Ի հաւաստիս այս կարծեաց՝ ամենաբացայայտ վկայութիւն համարուած է նաև Փարպեցւոյն խօսքը՝ թէ «Զարթոյց աստուածայինն շնորհ (զՄաշթոց) ի ցանկութիւնս յայս, կարգել զվաղնջուց գտեալ նշանագիրս տառից, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր»[1]. և չէր կարելի համարձակել ըսել արկանել ի կիր (այսինքն ի գործ ածել) եթէ զձեւսն փոխեց. զի այդպիսի փոփոխութիւն՝ մահ է այբուբենի մը անձնաւորութեան։

⁂

Դանիէլ ասորւոյն քով գտնուած հայկական հին նշանագրաց հմտանալէն՝ և ազգին մինչեւ այն ատեն ունեցած կարեւորութեան պէտք եղածը՝ գէթ քիչ մը ատենի համար, կարգադրելէն ետքը, Մեսրոպ կ'անցնի ի Միջագետս։ Այս ուղեւորութեանն ալ նպատակը ուրիշ բան չէր կրնար ըլլալ՝ բայց ինչ որ մինչև այն ատեն գրաղեցուցած էր Մեսրովպայ բազմաշխատ միտքը և ազգանուէր սիրտը։ Որչափ ալ մասամբ գոհ եղեր էր՝ գտած և ազգին բաւական ընտանի ըրած նոր գիւտովը և անոր արդեամբք, բայց կային ուղղելիք և յաւելլիք՝ անոր փափաքելի կատարելութիւն մը տալու համար. և առ այն՝ չէր կրցած օժանդակել ասորի եպիսկոպոսն. հարկ էր ժամանակին գտնուող ու հռչակուած իմաստնոց և հմտագունից դիմել։ Իր ամէն կենսագիրք, թէ ժամանակակիցք և թէ կրտսերագոյնք, ամէնքն ալ զայս նպատակ կու տան Մեսրովպայ մինչև հեռաւոր տեղիս յօժարափոյթ ուղեւորութեանց՝ մեծ մարդկանց, ինչպէս ինքն էր արդեամբք, յատուկ հաստատամտութեամբ։ Եթէ ոմանց անպատճառ կամ անկարևոր կրցած են համարուիլ՝ աշխարհէ յաշխարհ, քաղաքէ ի քաղաք թափառիլ միայն այդ վախճանաւ, և կամ ինչպէս ըսուած է և գրուած, իբրու մուրացիկ դռնէ դուռ քալել, անշուշտ այդպիսիք ոչ այնչափ լրջաբար ուզած են խորհրդածել թէ որչափ դժուարին է ազգի մը արդէն ունեցած լեզուին՝ անոր հոգւոյն համեմատ և համաձայն տառեր ստեղծել։ Քառասուն և աւելի տեսակք այբուբենից կան առ զանազան ազգս, բայց անոնք ամէնքն ալ՝ մեր ենթադրածին համեմատ հեշտաւ հնարուած չըլլալուն՝ վկայ ու երաշխաւոր կեցած է պատմութիւնը։

---

[1] *Փարպեցւոյն այդ յայտնի խօսքերը՝ ապացոյց մը չե՞ն համարուիր թէ առ Դանիէլի եղած նշանագիրք՝ լոկ գրերու ցուցակ մ'էին, և ոչ կարգաւորեալ գրուածք մը։*

Միայն այդ վախճանաւ՝ ըսինք. վասն զի Մեսրովպայ ուրիշ դիտմունք ալ ունենալուն այդ ճանապարհորդութեանց մէջ՝ վկայութիւն կու տան մեր շատ անգամ յիշատակած պատմիչք։ Նախ կը յիշեցնեն Պղատոս կամ Պղատոն կոչուած անձ մը՝ առ որ կը փութայ երթալ Մեսրովպ՝ իմաստուն ու ճարտասան հռետոր մը՝ որ կը բնակէր յԵդեսիա, և զոր միաբան ու միևնոյն բառերով հաւասար կը դըրուատեն՝ Խորենացի և Փարպեցի, և միաձայն ի վկայել՝ որ իր գիտութեամբն և ունեցած տեղեկութեամբք չկարելով օգտակար ըլլալ Մեսրովպայ՝ խոստովանեցաւ իր անբաւական ըլլալն առ այն գործ։ Իրենցմէ ետքը եկող ի պատմչաց ոմանք՝ բազմաւորաբար կը ներկայացնեն այս դէպքը. «Մեսրովպ, կ՚ըսեն, հանդերձ աշակերտովքն իւրօք էջ ի Միջագետս. և խնդրելով զլուծումն փափաքանացն յիմաստասիրաց որ անդ էին՝ ամենեքեան զտգիտութիւն խոստովանեցան»։ Պղատոնէն ետքը առ Եպիփանիոս, Հռոփանոս և առ այլս կ՚երթայ Մեսրովպ՝ ունելով միշտ իր գլխաւոր դիտմունքն ու վախճանը։

Բուն ազգային մատենագրութեան մը հաստատուն հիմունքը ձգելու համար, – և այս էր Մեսրովպայ ջանք, – առաջին և գլխաւոր, բայց ոչ միակ միջոց էին նշանագիրք։ Անոնց գիւտէն ետքը՝ անհրաժեշտ հարկ համարեց սուրբ վարդապետը՝ թէ անձամբ և թէ իր ընտրելագոյն աշակերտաց և օգնականներուն հետ այլևայլ համբաւեալ գիտնոց և մատենադարաններու յոյց ելլել։ Թէ ինչ օգուտ քաղեց ազգային դպրութիւնն այդ ճանապարհորդութիւններէն ու ժամանակին հռչականուն իմաստնոց հետ տեսութենէն և օժանդակութենէն, հնգերորդ դարու մէջ կատարուած ոսկեղէն թարգմանութեանց մնացորդք բարձրաբարբառ կը վկայեն։ Հարկ էր դարձեալ այդ ուղևորութեանց աշխատութիւնը՝ օտար մատենադարանաց մէջ ցրուած այլևայլ յոյն և ասորի տառերով գրուած և գտնուած հայ գրքերն ալ տեսնել, քննել և պէտք եղած տեղեկութիւններն առնել, հայրենեաց զանոնք ծանօթացնելու և հաղորդելու նպատակաւ։

Այս ամէն տեղեկութեամբք և տեսութեամբ, և որ համառօտութիւն մը կրնան համարուիլ՝ ազգային և օտար բանասիրութեան կողմանէ այս նիւթոյս վրայ մինչև հիմա գրուածներուն, դեռ մութ և անթափանցելի կը մնայ հայկական նշանագրաց գիւտին ճիշդ պատմութիւնը. և իրաւամբ փափաքելի կ՚ընէ՝ արդէն խոստացուած և սպասուած լուսաբանութեանց հրատարակութեան՝ որոնցմով «խնդրոյն ամենայն կնճռունքն և խրթնութիւնք, – կ'ըսուի քակեցան, պարզեցան. և այդ ճգանց հետեւանք եղաւ յաղթութիւն»։

Տասնուհինգ երկար դարերու մէջ՝ անլոյծ մնացած խնդիր մը. սակայն յարատեւ ճգանց, հետապնդութեանց և գիտնական ուսումնասիրութեան դիմացը՝ տարակոյս չկայ որ ամէն դժուարութիւնք կրնան հարթուիլ։

⁂

Դանիէլեան նշանագիրք Միջագետաց մէջ կարգի դրուեցան՝ կամ Դանիէլի և կամ Հաբելի և այլոց ձեռքով, ըստ ձեւոյ օրինակի յունականին, կ'աւանդէ Փարպեցի։ Կորիւն՝ այս կարգադրութիւնը Հռուփանոսի կու տայ՝ երբոր կը գրուցէ. «Ընտրութիւնս նշանագրոցն՝ զնրբագոյնսն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ»։ Իրեն համաձայն է և Խորենացին, միայն աւելի կերպով մը սրբոյն Սահակայ կ'ուզէ ընծայել այս պարծանքը՝ երբոր Հռուփանոսի համար նախ այսպէս կը գրուցէ. «Ստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Հռուփանոսիւ, կերպաձեւեալ զգիրն առձեռն պատրաստ Մեսրոպայ. փոխադրելով զհայերէն աթութային ըստ անսայթաքութեան սիւղոբայից ի հելլենացւոյն». ու ետքը անմիջապէս կը յաւելու. «Ձեռն ի գործ առնէր երանելին Մաշտոց, յերիւրելով զնոսա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրենոյս և հեգենային ուղղաձայնութեան»։ Ետքը դարձեալ. «Հանդիպեցուցանէր Մեսրոպ զհայերէն աթութային ըստ կարգման սոլովրայից Յունաց, ստէպ հարցմամբ և ուսանելով ի սրբոյն Սահակայ զաթութայից գաղափար ըստ անսայթաքութեան յունին. վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահակայ, որ յոյժ

առլցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յունաց»։

Մեր հին ու նոր պատմագրաց այսչափ և այսպիսի ու երբեմն նաեւ երկդիմի խօսքերուն հետեւանք եղած են զանազան կարծիք ու բանավէճս, զորս ոչ այնչափ հեշտ է իրարու հետ միաբանել։ Բայց ուզելով համառօտել մեր մինչեւ հիմայ ըսածներն, այս ամէն կարծիքներն գլխաւորաբար երեքի կրնանք վերածել։

Ոմանք Կորեան, Խորենացւոյն ու Փարպեցւոյն խօսքերէն կը հետեւցնեն՝ թէ սրբոյն Մեսրոպայ օգնութիւն մ'ըրած չըլլան ոչ Դանիէլեան և ոչ ուրիշ որ և իցէ նշանագիրք որ կը գտնուէին կամ կրնային գտնուիլ ազգին մէջ, ուստի և բոլորովին նորէն հնարած է Մեսրոպ հայկական գրերը։ Ասիկայ եղած է ընդհանրապէս շատ բանասիրաց կարծիքը. որոց կը զուգընթանայ և Շնորհալի՝ որ իր վիպասանութեանը մէջ՝ ամբողջ երեսուն և վեց հայկական տառից գիւտը Մեսրոպայ կ'ընծայէ.

> «Ըստ Մովսէսի արժանացեալ
> Զաստուածագիծ տասն ընկալեալ,
> Երկուք տասամբք վեցիւք յանգեալ
> Արեգական ելիւք չափեալ»։

Բայց ինչպէս վերը ցուցինք՝ նոյն իսկ ամենէն աւելի հին ու մերձաւոր ժամանակաւ՝ որով և արժանահաւատ պատմիչներնուս մէջ՝ անանկ խօսքեր ալ կան, որովք կրնանք գուշակել թէ մեր լեզուին մէջ կային յառաջ մասնաւոր նշանագիրք, բայց անոնք՝ լեզուին պէտք եղած դիւրութիւնը չմատուցանելնուն համար՝ հարկ եղաւ որ Մեսրոպայ ջանքովը կատարելագործուին։

Ասկից ելած է երկրորդ կարծիքը, զոր նախ ոչ այնչափ որոշ կերպով հինք և մերձաւորք ժամանակաւ, և ապա յայտնապէս բացատրած են իրենց գրուածոցը մէջ Վարդան և Ասողիկ, և ուրիշ անոնց հետեւողք, որոնց խօսքը վերը դրինք։ Ասոնք կ՚ըսեն թէ Մեսրովպ Դանիելի տառւոյն քով քանաւերկու գիր գտաւ, որոնք բաւական չէին առ ի պարզել զընդարձակութիւն լեզուին. ու այն պատճառաւ յոյն, ասորի ու պարսիկ գրերը կը գործածէին. ուստի և Մեսրովպ աղօթքի ապաւինելով, Աստուած տասնըչորս գիր տուաւ իրեն, երկնային թաթով մը գրուած։ Այս կարծիքը իր պաշտպանները գտած է նաև մեր ժամանակի բանասիրաց մէջ. և յորոց շատերը կ՚ըսեն թէ Մեսրովպայ ջանքը գլխաւորաբար մեր այբուբենին կըրկնակ գրերը հնարելուն համար եղած է. այն գրերը՝ որոնք ուրիշ լեզուաց մէջ չեն գտնուիր, և մեր լեզուին հնչմանց ճոխութիւնը կը կազմեն։

Երրորդ կարծիք մ՚ալ կայ թէ Մեսրովպ միայն ձայնաւոր տառերը հնարած ըլլայ։ Ասոնց կարծեաց հիմն ու ամենամեծ վկայութիւնն ալ՝ Խորենացւոյն գրչագրաց մէկէն առնուած է, և որուն այլք ոմանք ի յետնոց հետեւող և համամիտք են, ինչպէս մենք ալ յիշատակեցինք[1]։

Մեսրովպեան նշանագիրք այլ և այլ ժամանակ մեծամեծ կերպարանափոխութիւններ կրած են իրենց ձեւոյն մէջ։ Բայց այս փոփոխութիւնքն ալ ընդհանրապէս երեքի կը վերածուին, և են Երկաթագիր, Բոլորգիր և Նօտրգիր կոչուած տառերն։ Յայտնի է որ սրբոյն Մեսրովպայ հնարած գրերը Երկաթագիր ըսուածներն էին, որոնց գործածութիւնը հինգ կամ վեց դար տևեց (406 էն մինչև Ժ դար), առանց երևելի փոփոխութեան կերպարանք մ՚առնելու։ Այս գիրերուն երկաթագիր ըսուելուն պատճառը՝ հաւանական կ՚երևնայ թէ նախ երկաթէ գրչով գրուելնուն համար ըլլայ, և երկրորդ՝ այն ատենուան գործածուած թանաքին պատճառաւ, զոր երկաթի ոքսիտով կամ ժանգով կը պատրաստէին։

---

1. Ճառընտրի մը մէջ. «Ի սորա չորրորդ ամին եղեւ գիւտ եւթն գրոյն ի ձեռն Մեսրոպայ երանելւոյ, և տասն և ութ ամի սրբոյն Սահակայ»։

Բայց իններորդ դարուն մէջ՝ ինչպէս հաւանական կը կարծուի, գրչութիւնը դիւրացնելու համար սկսան գրերուն վերին ու ստորին կողմերը չիտակ գրել, որոնք զատ ձեւ մը ունեցան. և բուն երկաթագիրը սկսան գլխագրի տեղ բանեցնել։ Ասիկա է Միջին երկաթագիր ըսուածը, որ մինչև ԺԲ դար և անկէ անդին ալ տևեց քիչ փոփոխութեամբ։ Այս գրերը թէպէտ աւելի համեմատ ձեւ ունին, բայց ընթերցումը դժուարին ըլլալուն՝ այս կերպն ալ փոխեցին, ու սկսան Բոլորգիր տառերը գործածել, որ կամաց կամաց կատարելագործուելով ու կանոնաւորուելով հիմակուան տպագրութեանց մէջ գործածուող սովորական գիր եղան։

Բոլորգրոյն աւելի դիւրացուցած կերպն է Նօտարացի կամ Նօտր գիրը, որ մինչև հիմա հասարակ գրութեանց մէջ կը գործածուի։

Այս գրոց փոփոխմանը մէջ դիտելու արժանի է՝ որ Միջին Երկաթագիրը հնարուելէն ու հասարակ ըլլալէն ետքը՝ բուն Երկաթագրին գործածութիւնը գրեթէ բոլորովին դադրեցաւ. նոյնպէս բոլորգրոյն գտնուելէն ետքը՝ Միջին Երկաթագիրը խափանուեցաւ։ Բայց Նօտր գիրը հնարուելէն ետքն ալ՝ բոլորգիրը չվերցաւ, այլ ընտիր ձեռագրաց մէջ կը գործածուէր։

Ուսումնասէր ընթերցողաց հետաքննութիւնը գոհացընող ցուցակի մը մէջ, զոր ի հանդիպոյ կը ներկայացնենք, կը տեսնուին հայկական նշանագրաց կրած այլ և այլ կերպարանափոխութիւնք ըստ այլ և այլ դարուց և ժամանակաց, ճիշդ արտահանութիւնք նոյն ատեններն գրուած ձեռագրաց[1]։

---

1. Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց տպագրեալ ցուցակին մէջ (թիւ 1435) նշանակուած կը գտնենք գիրք մը այս մակագրով. «Մեկնութիւն նախնի նշանագրաց Հայոց». և ի նմին գրչագրի. «Վարք հօրն Նւագրեայ նոյն նշանագրօք»։ Բանասիրաց հետաքննութեան արժանաւոր տեղեկութիւն մը։ Ծանօթ են հմտից՝ ձեռագրաց մէջ տեղ տեղ Ագամայ

* * *

Այս բոլոր կարծիքները մէջ բերած ունի Ի. Յարութիւնեան, զորս բանասիրաց համար կը համառօտենք։

« Հին ժամանակ, կ՚ըսէ, Հայերը գործածում էին մի տեսակ պայմանական իերոգլիֆական (քրմագրական) նշաններ՝ որոնց քանի մի կտորները հասած են մինչեւ մեզ։ Յետոյ սկսեցին գործածվել պարսկական (զէնդական), յետոյ յունական և վերջապէս ասորական տառեր։ Ասորական տառերը մանաւանդ երկար ժամանակ գործածեցին Հայերը։ Այս օտար գործիքով Հայերը չէին կարող իսկութեամբ արտայայտել իսկական լեզուի բոլոր հնչիւնները, ուստի հնարեցին իրենց այբուբենը, որ յայտնի է Դանիէլեան անունով, և կազմուած է քսանուերկու տառերից, Վարդան պատմագրի (ԺԲ դար) խօսքերու համեմատ։ Վերջապէս 400 թուին Ս. Մեսրովպ հնարեց տասնուերկու տառեր, ու կատարելագործելով Դանիէլեան կոչուած այբուբենը, ընծայեց իր հայրենակիցներին լիակատար այբուբեն որ արտայայտում է հայկական լեզուի բոլոր ձայները, և գործ է ածվում մինչեւ այսօր մեր մէջ Մեսրովպեան անունով »։

Յետոյ մէջ կը բերէ այս խնդրոյս նկատմամբ եղած այլ և այլ կարծիքներ։

« Որովհետեւ հայ պատմիչք կ՚աւանդեն թէ Մեսրովպ նախ Հայոց այբուբենի գիւտն ըրաւ և ապա Վրաց, Հաւանական կ՚երեւնայ որ Մեսրովպ ոչ Հայոց և ոչ Վրաց նշանները գտաւ. այլ այդ նշաններն, ինչպէս բուէն կոչուած գրերն՝ իբրեւ ժամանակի և հմայութեան նշաններ՝ այդ ժողովրդոց ժառանգական սեփականութիւնն էին։ Եւ այն աստուածային յայտնութիւնն, որոյ վրայ կը խօսի Խորենացի, կայացած էր յայնմ, որ Մեսրովպ մտածեց այդ նշաններն ի գործ դնել. իսկ Վրացիք հետեւելով իրեն խորհրդոյն՝ իրենց սեփական նշաններն նոյնպէս տառի փոխադրեցին։ Այսպէս կը բացատրուի թէ ինչպէս երկու բոլորովին իրարմէ տարբեր այբուբենք, — հայ ու վրացի, — մի և նոյն սկզբնապատճառը կրնային ունենալ։ — Մեսրովպ կը վախէր որ արտասանութիւնն Յունաց նշաններու միջնորդութեամբ կ՚աղաւաղի կամ կ՚անհետանայ, ուստի և Յունաց այբուբենէն գերադաս համարեցաւ բոլորովին տարբեր գիր մը։ Եւ երբ պատմագիրք կ՚ըսեն թէ Մեսրովպ Հայոց նշաններն ըստ յունական օրինակի ձեւակերպեց, պէտք է հասկնալ թէ նա Յունաց գրի ուղղութիւնը, — ձախէն յաջ, — ինչպէս նաև բառից բաժանումն և յունական այբուբենի ամբողջ արտաքին ձեւն ընդունեցաւ։

Հայոց լեզուն երկար ժամանակ համարուած էր սեմական ընտանեաց ճիւղի մէկ մասը, մինչեւ որ ականաւոր լեզուաբան գիտնականաց, — որոց մեծ մասը գերմանացիք էին, - ինչպէս Պետերման, Վինդիշման, Տըլակարտ, Միւլլէր, Հիւպշման և այլք, - իրենց գրուածներովն ապացուցին, որ Հայոց լեզուն սեմականին չի պատկանիր, այլ հնդ-գերմանական (կամ հնդ-եւրոպական) ընտանիքին։

Գերմանական գիտնականներէն համբաւաւոր լեզուաբան Պետերմանն էր, որ դարուս առաջին կիսում, իւր հիմնական աշխատութեան մէջ, « Հայոց լեզուի քերականութիւն » լատիներէն գրուած, ապացուցուց որ Հայոց լեզուն կը պատկանի հնդկագերմանական մեծ ընտանեաց,

կամ այլոց անունով նշանագիրք կամ փակագիրք, և անոնցմով համառօտ քանի մը տող գրուածք, որ աւելի ծածկագրութիւնք կրնան համարուիլ, և չունին գնեաս կամ գլարգ հնութեան։ Կը գտնուին նաև ֆ—ա—ղ—ն—ֆէր, ն—ւ—ն—ֆէր և ծ—ծ—լ—ֆէր կոչուած համառօտագրութիւնք։ Առաջին երկուքն ունին ինն հիմնական նշաններ, յորոց մի կամ երկու կամ երեք կէտերով կը կազմուին մեր երեսուն և վեց տառերը։ իսկ կէտագիրք կը կազմուին մէկ, երկու, երեք կամ չորս գծերէ, որոնք ունին իրենց մօտ կէտեր, և ինն հատով կը կազմուին Հայոց լեզուի երեսուն և վեց նշանագիրք։

և մերժեց մինչև այն ժամանակ հանդիսացող կարծիքներն, որովք մեր լեզուն կը համարուէր՝ բոլորովին առանձին, լեզուաց հետ ամենևին կապ չունեցող, կամ թէ երրայականին ազգակից լեզու մը։ Պետերմանի կարծիքն հաստատեցին Վինդիշման, Գոշէ և Շպիգէլ, այնպէս որ աշխարհահռչակ լեզուաբանն Բոփփ իւր համեմատական քերականութեան մէջ Հայոց լեզուն հաստատապէս ընդունեց իբրև հնդկագերմանական, և մեր լեզուի ձևերն ևս համեմատութեամբ ազգակից լեզուաց ձևերուն հետ յառաջ բերաւ։

Այսպէս թէպէտև պարզուեցաւ, որ Հայոց լեզուն կը պատկանի հնդկագերմանական ընտանեաց, սակայն դեռ ևս որոշ կերպով չվճռուեցաւ թէ հնդկագերմանական որ ճիւղին պէտք է վերագրել։ Գոշէ՝ և իրմէ առաջ Վինդիշման մասամբ՝ դիցաբանական և այլ նմանութեամբ ապացուցին, որ հայ լեզուն կը պատկանի հընդկագերմանական արիական ճիւղին, և պարսկական քրդական և առաջաւոր Ասիոյ քանի մը լեզուաց հետ կը կազմէ առանձին խումբ մը։ Յառաջ բերենք Վինդիշմանի խօսքերը. «Հայ լեզուի դիրքը հնդկագերմանական լեզուաց շարքին մէջ՝ ալ տարակուսի տեղ չունի։ Իւր սկզբնական մասերով նա կը պատկանի երկրիս ամենէն աւելի ազնիւ բարբառներու, որ իրենց զանազանութեամբ տարածուած են արևելք և արևմուտք, և որոց մնացորդների վրայ կը շարունակուին այսօր գերման-ռոման-սլաւ և կելտ լեզուներն, և որոնք դեռ ևս նոր իրենց փառայեղութեամբ ուսումնասիրութեան առարկայ դարձած են։ Սակայն Հայոց լեզուն անմիջապէս չի պատկանիր այդ բարբառներու զարգացման առաջին դասակարգին, այլ կ՚ենթադրուի աւելի հնագոյն բարբառ մը, որ զենդի և բևեռագրաց հին պարսկականին հետ մեծ նմանութիւն պէտք է որ ունեցած ըլլայ։ Այդ բարբառոյն հետ միացած են և այլ տարրեր, ոչ միայն սեմական լեզուէ, այլ և արմատներ որ կը պատահին քուրդ և կովկասեան լեզուաց մէջ»։

Տիւլորիէ եպ. հայագէտը Հայոց հին այբուբենը կը համարի արամայականէ առաջ եկած։

Սէն-Մարդէն՝ դանիէլեան տառից վրայ խօսելով, կ՚ըսէ թէ Յունաց գրերուն ձևն ունէին անոնք։ Իսկ Մեսրովպայ հնարածներուն նկատմամբ կը համարի թէ Պարսից հին տառերէն շատերն առած և Հայոց այբուբենին կարգն անցուցած ըլլայ. նոյն իսկ, կ՚ըսէ, առաջին ակնարկ մը մէկէն նկատել կու տայ թէ այն տառից շատերն մեծ նմանութիւն ունին զենդի և պահլաւականներուն հետ, նոյնպէս սասանեան ժամանակի պարսկական և ասորի արձանագրութեանց տառից հետ։

Լանկլուա պարզ գաղափար մը չէ կրցած կազմել Հայոց այբուբենի մասին. մերթ կը համարի թէ հինգերորդ դարէն յառաջ սեպհական տառեր ունեցած չեն Հայք. և մերթ՝ թէ Դանիէլի քով գտնուածն՝ Հայոց հին այբուբենն էր, որ ասորականէ առնուած էր։ Ուրիշ տեղ ալ կարծիք կը յայտնէ Հայոց հին այբուբենի նկատմամբ թէ գործածական ըլլայ թերևս Հայաստանի քանի մի նահանգաց մէջ։

Նոյն այբուբենի խնդրոյն պարապելով Ֆ. Միւլլէր, հետևողութեամբ Խորենացւոյ և Կորեան՝ թէպէտև սըրբոյն Մեսրովպայ կ՚ընծայէ, սակայն այն եզրակացութեան կու գայ թէ այդ տառք կը ծագին ոչ թէ Յունաց, այլ սեմական այբուբենէն։ Ըստ Խորենացւոյ և Կորեան պատմելով Հայոց գրոց գիւտի պատմութիւնը և համեմատելով Վրաց այբուբենի հետ, կը յաւելու. «Հայոց և Վրաց այբուբենք կը ներկայացնեն սեմական և յունական տառից շարայարութեանց խառնուրդ»։

Հ. Մ. Ջամչեան հետևելով մեր պատմագրաց՝ ընդունում է թէ սուրբն Մեսրովպ բոլորովին նոր այբուբեն կազմակերպեց։

Հ. Գ. Ինճիճեանն է, — եթէ չենք սխալում, — առաջին անգամ պատմական փաստերով հաստատում, որ՝ դանիէ-

լեան կոչուած այբուբենն՝ ոչ թէ Դանիէլի գտածն էր, այլ Հայոց հին գործածական գիրն որ նրա մօտ գտնուեցաւ. «Զորս ոչ Դանիէլի էր, կ՚ըսէ, յօրինեալ, այլ առ նմին Դանիելի պահեալք հին նշանագիրք»։

Մ. Էմին աւելի ընդարձակ պատմական փաստերով հաստատելով Խնճիճեանի տեսութիւնը դանիելեան այբուբենի մասին բոլորովին կը մերժէ այն կարծիքն, որ իբր թէ հայերէն տառերը ծագած ըլլան զենդի կամ յունաց տառերէն, հիմնուելով հետեւեալ երեք փաստերու վրայ. ա.) Հայոց տառերուն ձեւերը բոլորովին չեն համապատասխաներ զենդի և յունաց տառերուն. բ). Հայոց տառերուն թիւը չի համապատասխաներ զենդի և յունաց տառերուն. և գ) զենդի և յունաց այբուբեններին մէջ կան բազմաթիւ ձայնաւորներ, այն ինչ Հայոց հին այբուբենը ձայնաւոր չունէր։ Սակայն թէ ինչ ծագումն ունէր Հայոց հին այբուբենը կամ թէ ինչպէս էր յառաջացեր, այդ Էմինեան, ինչպէս նաեւ Զամչեան և Խնճիճեան, ոչ մի խօսք չեն ըրած։

Ք. Պատկանեան հաստատելով Էմինեանի կարծիքը, որ յառաջ քան զուրբն Մեսրովպ մեր նախնիք ունեցած ըլլան իրենց սեպհական այբուբենը, կը յաւելու որ այդ այբուբենն անկասկած արամայական ծագմանէ յառաջ եկած էր, և զանազան պատճառներով գործածութիւնը խափանուեր, թէպէտ և փաստ մը մէջ չի բերեր ապացուցանելու իւր այս կարծիքը հին այբուբենի ծագման մասին։ Նոյն յօդուածի շարունակութեան մէջ կը յաւելու թէ ընդունելով որ Հայոց հին այբուբենն ընդօրինակուած է Իրանական այբուբենից մէկէն, դիւրին է ըմբռնել թէ ինչու այդ այբուբենը չէր կարող արտայայտել Հայոց լեզուի բոլոր հնչիւնները։

Ասոնք նաեւ յազգայնոց, որոնք իրաւամբ մեծարուած գիտնական անձնաւորութիւնք են։

Իսկ յօտարաց Ֆ. Կոպպ՝ իւր «Նախնական ժամանակաց պատկերներ և գրեր» նշանաւոր երկասիրութեան

մէջ թէպէտեւ հայերէնի այբուբենի ծագման նկատմամբ որոշ տեսութիւն մը յայտնած չէ, բայց «Գիտնականները միաբան կ՚ընդունին, կ՚ըսէ, հայերէն այբուբենի նոր ըլլալը իրենց կարծեացը հիմն ունենալով մասամբ պատմութեան և մասամբ յունաց այբուբենի հետ ունեցած դասակարգութեան նմանութիւնը։ Բայց թէ՛ որչափ անհիմն է այդ վերջին կարծիքը, ցոյց կու տան նոյն իսկ սեմիտական այբուբենք, մէկդի թողլով այն հանգամանքն՝ որ հայերէն այբուբենը թէ՛ դասակարգութեամբ, թէ հընչմամբ և թէ տառից թուով կը տարբերի յունականներէն։ ... Բոլորովին մերժելի է այն կարծիքն՝ որ իբրեւ թէ այդ այբուբենը կազմուած ըլլայ Յունականի և Լատինականի հիմանց վերայ. աւելի ընդունելի կարելի է համարել անոր հին պարսկականից ծագուած ըլլալուն ենթադրութիւնը։ Եւ առանց որոշ վճիռ մը արձակելու, Կոպպ՝ յառաջ կը բերէ հայերէն քանի մը տառից համեմատութիւնը խպտական, եթովպական և պարսից տառերու հետ։

Ս. Վալ (S. Vahl) պատմելով Հայոց այբուբենի գիւտը ըստ Խորենացւոյ, կը յաւելու. «Արդէն Մեսրոպէն առաջ Աբէլ անունով մէկը գտեր էր հայոց գիրն՝ որ կազմուած էր յունական այբուբենէն. սակայն այնպէս անկատար, որ Մեսրովպ իր դիտաւորութենէն ետ չկեցաւ...։ Տառերուն ձեւը մասամբ ինքնուրոյն են. թէ և Մեսրովպն օտար տառեր առած է, բայց այնպէս կազմակերպելով որ գրեթէ հին տառերն անյայտացած են։ Զախէն յաջ գրելու եղանակը Աբէլ առած է ի Յունաց, իսկ Մեսրոպ հաւանականաբար յԱբելէ»։ Վալ՝ Աբելի անունն անշուշտ կը շփոթէ ընդ Դանիէլի. յունական տառից ձեւերն՝ Հայոց այբուբենի մէջ, բաց ի ե, ր, փ և օ տառից, կարելի չէ ճանչնալ. և նոյն իսկ այս տառից ծագումն, բաց ի օ գրէն, դեռ շատ կասկածելի են։ Սակայն անհաւանական չէ, որ Հայոց այբուբենի մէջ Ասորւոց և Պարսից տառերու ձեւեր գտնուին. որոց գիրը ի գործածութեան էր Հայոց մէջ յառաջ քան զՄեսրովպ. և յեղափոխութիւն մը ընողը՝ խոհեմութեամբ կարելի եղածին չափ կը պահէ հինէն։

Նոյնման՝ Խորենացւոյն հետեւողութեամբ կ'ընդունի թէ Հայք յառաջ քան զՄեսրոպ իրենց յատուկ գիր չունէին։

Գատերեր (Ch. Gatterer) և Շրէօդէր (Schröder) Հայոց այբուբենը յունականէ ծագած կը համարին։

Ֆրիտ. Վինդիշման՝ Հայոց գրոյն վրայ խօսելով՝ կ'ըսէ. « Յայտնի է Հայոց այբուբենին գիւտը հինգերորդ դարուն մէջ եղած է Մեսրոպայ ձեռքով։ Որչափ ալ պարտական են Հայք իրեն երախտագէտ ըլլալ, սակայն կասկած մը կը ծագի մեր մտաց մէջ թէ արդեօք այն միջոց ժամանակի կատարեալ այբուբենի մը կազմութիւն հնարաւո՞ր էր արդեօք։ Լեզուաց պատմութեան մէջ շրջան մը կայ ժամանակի ուր ամենայն ինչ կեանք, առեղծող ոյժ և թարմութիւն է, և ուր անմիջական գիտակցութիւն մը կը տիրէ անոր ներքին էութեան մէջ. անոր մէջ հնչումներն դեռ ևս բաժնուած են, և իրենց կատարեալ անհատականութիւնը կը պահպանեն։ Այն նշաններն որ այս ժամանակի շրջանին մէջ կը տրուին այս հնչմանց, կատարելապէս կը յարմարին իրենց բնաւորութեան։ Սակայն սկզբնականը շուտով կը մոռցուի. նմանութեամբ կազմակերպութիւններն և հընչմանց փոփոխութիւնք՝ հետզհետէ աւելի տեղի կ'ունենան. լեզուի ներքին բնազդումը, տառից առ միմեանս ունեցած յարաբերութեանց կենդանի զգացումը հետզհետէ կը բըթանայ։ Այնպիսի ժամանակի մը մէջ կ'ապրէր Մեսրովպ, յորում լեզուն քայքայման դրութեան մը մէջ էր. և այդ պատճառաւ չենք կրնար իր հնարած այբուբենէն հնչմանց մեծ տարբերութեան սպասել, մանաւանդ եթէ աչքի առջեւ ունենանք այն հանգամանքն, որ անոր հիմը օտար տարրեր էին, այսինքն յունական և ասորական գիրը »։

Ֆլորիալ իւր Խորենացւոյ Ֆրանսերէն թարգմանութեան մէջ Հայոց այբուբենի գիւտը կ'ընծայէ սուրբ Մեսրովպայ։

Բիւտնէր (Ch. W. Büttner) իւր համեմատական ցանկին մէջ ի միջի այլոց կ'ըսէ հետեւեալն. « Երասխի միւս կողմը կը բնակին Հայք և Վրացիք. այս երկու ժողովրդոց իւրաքանչիւրն ունի իւր առանձին և այլոց հետ ազգակցութիւն չունեցող լեզուն և գիրը »։ Ու Խորենացւոյ խօսքերը մէջ բերելով և յիշելով թէ Հայք կը գործածէին յունաց, ասորւոց և պարսից գրերը՝ կը յաւելու. « Թէոդոս երկրորդ կայսեր ժամանակ՝ Մեսրովպ անունով միայնակեաց մը, որ արքունի քարտուղար էր, Հայոց համար այբուբեն մը գտաւ որոյ տառից մեծ մասին հիմնագծի մէջ կարելի է ճանչնալ հին Պարսկական ծագումը։ Տառից դասաւորութիւնը թէ Վրաց և թէ Հայոց այբուբենի մէջ՝ յունական է. մէջտեղերը տեղաւորուած են իրենց առանձնայատուկ տառերը »։

Ամմէլ՝ խօսելով աստուածաշնչի հայ թարգմանութեան վրայ՝ կ'ըսէ. « Որովհետեւ մինչ այն ժամանակ Հայերը օտար գիր կը գործածէին, այս առթով – Աստուածաշնչի թարգմանութեան, – գտնուեցաւ կամ կազմուեցաւ Հայոց այբուբենն ըստ յունական օրինակի։

Այբուբենից համեմատական ցանկի մը մէջ, որ երկու Բենեդիկտեան կրօնաւորաց երկասիրութեամբն հրատարակուած է, Հայոց այբուբենը դասաւորուած է Յունաց այբուբենին ծագած գրերու շարքին մէջ։ (Nouveau traité Dirbomatique par deux religieux Bénédictins de la Congrégation de St. Maur.

Եւ Պորէ խօսելով Հայոց այբուբենի մասին՝ կ'ըսէ. « Մենք չենք կարծեր որ Հայոց այբուբենի տառերն վերցուած ըլլան մի միայն ի յունականաց. մինչ զենդի և ասորական այբուբենից համեմատութիւնն Հայոց այբուբենի հետ մեծ նմանութիւն ունի թէ տառից հնչմամբ և թէ նշանակութեամբ, ուստի և կը կարծենք որ Մեսրովպ այդ այբուբենը կազմակերպեց վերոյիշեալ երկու ազգաց այբուբենը ուսումնասիրելէն ետքը։

Հանրական կենսագիր (Biographie universelle) *հրատարակութեան մէջ՝ ի յօդուածն «Մեսրոպ» խօսելով Հայոց այբուբենի վրայ՝ կ'ըսէ. «Այս այբուբենն՝ որ կը բաղկանայ երեսուն և վեց տառերէ, երկրին մէջ արդէն ծանօթ և սովորական հին գրեթէ և յատուկ նոր տառերէ կազմուած է»։*

Լընորման՝ անուանի արեւելագէտ և հնախոյզ, Հայոց գիրը զենդէ առաջ եկած կը համարի. (Essai sur la propagation de l'alphabet phénicien)։

Ֆաուլման (K. Faulmann) *Հայոց այբուբենի գիւտը ըստ մեր մատենագրութեան՝ Վրաց այբուբենի մէջ կը գտնէ։ Այդ իրողութիւն կատարուած է ճշգօրէն. այն ինչ Հայոց այբուբենի մէջ այդ չարայարութիւն խանգարուել է վերջը աւելցուցած տառերով. ուստի կարելի է հետեւցնել որ այս երկու այբուբենից կազմակերպութեան ժամանակ տեղի է ունեցել ոչ միայն յունականի, այլ և սեմական այբուբենի ազդեցութիւնը։ Վերջի ազդեցութիւնն աւելի աչքի կ'ընկնայ, երբ Հայոց ու Վրաց այբուբենի իւրաքանչիւր տառն ուսումնասիրելու համար՝ համեմատելու ըլլանք յունական և սեմական տառերն՝ արամայական տառից հետ։ Համեմատութեան համար առնըլու է Հայոց երկաթագիրն և Վրաց խուցուրի կոչուած տառերը։ Եւ այս համեմատութիւնն ընելով, կը յաւելու. «Այս ամենէն կ'երեւնայ որ Հայոց և Վրաց այբուբենից իսկական աղբիւրն պէտք է փնտռել սեմական ու յատկապէս արամայական այբուբենի մը մէջ, զոր Թերեւս Պարսիկք կը գործածէին, և յորմէ ծագումն առած է սասանական պահլաւական գիրը։ Մեսրոպեայ աշխատանք և արդիւնք հոն է, որ կրցաւ արամայական միայն բաղաձայններէ կազմուած գրեթէ այբուբեն մը կազմակերպել ըստ յունական օրինակի, յորում թէ բաղաձայն և թէ ձայնաւոր հաւասարապէս նշանագրուեցան։*

Բրոսէ՝ կը կարծէ թէ Հայոց հին այբուբենը բաղկացած էր քսաներկու տառերէ, որոց վերայ Մեսրոպ աւելցուց տասնըչորս տառ. և թէ այդպէս կազմեցաւ այբուբենն ըստ յունական չարադասութեան։

Հիւպշման կ'ըսէ. «Հայոց այբուբենն՝ ըստ վկայութեան հայ մատենագրաց, գտեր է սուրբն Մեսրոպ ի սկիզբն հինգերորդ դարու. սակայն նոյն մատենագիրք յայտնապէս կ'ակնարկեն թէ այդ գիւտը միայն Մեսրոպեայ գործը չէր. այլ թէ գտած ըլլայ հին այբուբեն մը Դանիէլ անուամբ ասորւոյ մը քով. և զայն երկար ժամանակ անփոփոխ ի գործ դնելէն ետքը, տեսնելով անոր պակասութիւնները և ժամանակին զանազան գիտնոց հետ խորհրդակցելով, վերջապէս կրցաւ Հռուփանոսի հետ կազմակերպել Հայոց նոր այբուբենն։ Այսով Մեսրոպի մատուցած ծառայութիւնն յայնմ եղաւ որ կատարելագործեց Դանիէլեան նշանագիրքն և ազգային գիրն տարածեց ի Հայաստան, անհետ ընելով մինչեւ այն ժամանակ գործածական Պարսից, Յունաց և Ասորւոց գրերը։ Հայագէտները, և մասնաւորապէս Մ. Էմին և Լանգլուա փորձեր են նաեւ որոշել թէ որո՞նք էին Դանիէլեան այբուբենի տառերը և որոնք մեսրոպեան։ Ասոր համար նշանակութիւն ունեցաւ Վարդան պատմագրի վկայութիւնն, որով հին այբուբենն բաղկացած էր քսաներկու տառերէ, որոնց վրայ Մեսրոպ տասնըչորս տառ աւելցուց։ Ապա համեմատելով Հայոց ու Յունաց այբուբենից չարադասութիւնը, կ'եզրակացնէ թէ Դանիէլեան այբուբեն կազմուած է յունականէն, և կը շարունակէ. «Պարսից (պահլաւ) այբուբենը՝ Դանիէլեան այբուբենից հիմը չէ, որովհետեւ այդ այբուբեն քսաներկու տառ գիր չունէր։ Արամայական այբուբեններէն ասորականը քսաներկու տառ ունի, և որ անով աւելի մեծ նշանակութիւն կը ստանայ, որովհետեւ այդ Դանիէլ՝ ասորի կը կոչուի։ Սակայն համեմատելով Հայոց և Յունաց այբուբենն ասորականի հետ . . . հակառակ Միլլերի այն եզրակացութեան յուսանք թէ Հայոց այբուբենն կազմուած *է ըստ յունականին. նոյն իսկ ձայնաւորներն առնուած են ի Յունաց բաց ի ը ձայնաւորէն»:*

Գարդհաուզէն «Հայոց գրոյն յունական ծագման վըրայ», յօդուածին մէջ ուզած է ապացուցանել, որ մեր այբուբենն ծագած է անմիջապէս յունականէն: «Խորենացին կ'աւանդէ, կ'ըսէ, որ սուրբն Մեսրովպ այլեւայլ դժուարութիւններէ ետքը՝ Քրիստոսի 400 (?) *թուականին իր հայրենակցաց համար այբուբենի մը գիւտն ըրաւ. և վերջը Աստուծոյ հրամանաւ Հայոց տառերը ձեւակերպեց ըստ օրինակի յունականաց». զոր և սորվեցուց ապա Վրաց և Աղուանից: Արտաքին հանգամանք այս գիւտին մեծ հաւանականութիւն կ'ընծայեն՝ Հայոց այբուբենին ի յունականէ ծագելուն: Հայաստան՝ որ ի վաղուց կռուի նիւթ մ'էր իր արեւելեան և արեւմտեան դրացի ազգաց, քրիստոնէութիւնն ընդունելէն ետքը բացառապէս յենած էր յունական – հռովմէական կրթութեան վրայ, և չորրորդ դարուն վերջը փորձեց հռովմայ դաշնակից մնալու: Ուրեմն երբ այս ժամանակ քրիստոնեայ արեղայ մի կ'ուզէր իր ժողովրդեան այբուբեն մը տալ, պէտք էր որ ամէն բանէ առաջ իր եկեղեցւոյ գիրն աչքի առջեւն ունենար, և այդ գիրն յունականն էր: Սակայն այսօր հակառակ կարծիքն աւելի զօրաւոր հանդիսացած է»: Յետոյ Գարդհաուզէն յառաջ կը բերէ Հայոց այբուբենի այն քսաներկու տառից համեմատութիւնն Յունաց տառից հետ, որոնք Հիւբշման դանիէլեան տառից յատկացուցեր էր:*

Ընդհանուր գերմանական արքունի համայնագիտական բառագրոց մէջ (Allgemeine deutsche Real Encyklopädie... Conversations-Lexikon) *Հայոց գրոյն նկատմամբ կը գտնենք հետեւեալն. «Ընդհանրապէս Հայոց գրոյն գիւտը կ'ընծայուի Մեսրովպայ, որ մեծին Սահակայ հետ Հայոց գրականութեան հիմնադիրն համարուած է: Սակայն ճշդագոյն հետազօտութիւնք կ'ապացուցանեն որ Հայք ի վաղ ժամանակաց այբուբեն մ'ունէին, սեմականէն առնուած և ի քսան և երկու տառից բաղադրուած. սակայն կարող չըլլալով Հայոց լեզուին պահանջը լեցնել, կամաց կամաց մոռացութեան ինկած էր: Մեսրովպ այս այբուբենը գտաւ Դանիէլ ասորի եպիսկոպոսի մը քով, կատարելագործեց զայն համաձայն հայ լեզուին պահանջմանց. գուցէ և ընտրելագոյն ձեւի վրայ առաւ՝ Հռոփանոս գեղագրին օժանդակութեամբ, և շարադասեց ըստ յունականին: Իրեն գործակից էր և սուրբն Սահակ, և երկուքը մէկտեղ տարածեցին այդ նոր այբուբենն՝ երկրին այլեւայլ կողմերը ուսումնարաններ հաստատելով: Հայոց գրոյն այս գիւտը՝ կամ լաւ եւս՝ կատարելագործութիւնը հանդիպեցաւ՝ չէ թէ* 406*ին, ինչպէս սովորաբար կը կարծուի, այլ* 406–410 *թ...:*

Կոխ իր «ճանապարհորդութեան» մէջ՝ խօսելով «Հացիկ» գիւղի վրայ կ'ըսէ. Այս գիւղին մէջ ծնաւ Հայոց ու Վրաց այբուբենի գիւտն ընող Մեսրովպ. առաջնոյն գիւտը սխալ է որ 406 *թ. եղած ըլլայ: Մինչ այն ժամանակ՝ Հայք Ասորւոց և Յունաց տառերը կը գործածէին, բայց որովհետեւ այդ երկուքն ալ բաւական չէին հայկական տառից ճիշդ հնչմանն, և Պարսից տիրապետութեան ժամանակ արգիլուած էր Հայոց՝ յարաբերութիւն ունենալ ընդ Յոյնս, Մեսրովպ Հայոց լեզուին համար գտաւ երեսուն և վեց տառեր, որոց վրայ՝ խաչակրաց արշաւանքին ժամանակ աւելցան երկու տառք ալ* (փ, Օ). *որով այժմեան այբուբենը ձեւացած է երեսուն և ութ տառերէ: Սակայն աւելի հաւանական է ըստ Պետերմանի որ Հայք իրենց սեպհական գիրն ունէին և Մեսրովպ ընդարձակեց միայն այդ գիրը:*

Պետերման խօսելով Հայոց գրականութեան մասին՝ կը շարունակէ. «Թէպէտ Հայոց տառից գիւտն կ'ընծայեն Մեսրովպայ, սակայն նորագոյն հետազօտութիւնք կ'ապացուցանեն որ նա չէ թէ ամբողջ այբուբենն է գտեր կամ կազմեր, այլ արդէն գտնուած այբուբեն մը վերականգներ, *կատարելագործեր և ամբողջ երկրի մէջ տարածեր »: Ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ նոյն հայագէտը. « Մեսրովպեան այբուբեն բաղկացած է երեսուն և վեց տառերէ, և լիովին կը յարմարի Հայոց լեզուին. շարադասեալ է ըստ յունական կարգի այբուբենից, և Հայոց լեզուի յատուկ հնչմունք տեղաւորուած են նոցա մէջտեղերն, գրելու ուղղութիւնն ալ այլ է քան միւս արեւելեան այբուբենից. — ձախէն յաջ իւրաքանչիւր տառից ձեւն և անուն՝ առնուած է յունական օրինակէ. այբ՝ ալֆա. բեն՝ բիթա, գիմ՝ գամմա » և այլն:*

Տըլակարդ՝ ընդունելով որ Հայոց այբուբենի հիմն յունական է, կը յաւելու. « Հայոց այբուբենի գտնողներն՝ (!) *ուսել են յԱղեքսանդրիա* (!!)*. ուստի այդ այբուբենի չորս տառից ձեւերն առնուած են խպտեաց այբուբենէն. հ. ձ. ճ. վ. կարելի է նոյնպէս որ նոյն լեզուէ առնուած են խ և չ տառերը:*

Գիտնական Հ. Բարսեղ Սարգսեանի կարծեօք սուրբն Մեսրովպ « առեալ ի միասին զպարսկերէն, զյոյն և զասորի այբուբենս, նորակերտել է մի այլ այբուբեն »:

⁂

Այս ամէն կարծեաց բովանդակութիւնն յառաջ բերինք, և որ կարելի է հնգի վերածել,

Ա. Զամչեան, Նայման, Վինդիշման, Ֆլորիալ, Բիւդնէր կը մերժեն այն կարծիք՝ թէ Հայք յառաջ քան զՄեսրովպ իրենց յատուկ գիր ունեցած ըլլան:

Բ. Ինճիճեան, Մ. Էմին, Վալ, չեն ըսեր եթէ ուստի ծագած է Հայոց գիրը:

Գ. Պատկանեան, Դիւլորիէ, Ֆ. Միւլլէր կը համարին թէ արամէականէն ծագած ըլլան:

Դ. Կոպպ, Բիւդնէր, Բօբէ, Լընորման, Սէն-Մարգէն զենդէն առաջ եկած կը համարին:

Ե. Գատերէր, Շրէօդէր, Ռոմմէլ, Հիւպշման, Գարդհաուզէն և այլք՝ յունաց այբուբենէն:

Յարութիւնեանի կարծիքն է թէ մեր այբուբենի տառերը ծագին անմիջապէս սեմական տառերէ և ոչ ի յունաց, և թէ սեմական տառից ձեւերու մէջ Հայոց տառք կը նմանին աւելի փիւնիկեան տառից ձեւերուն:

Իրմէ ետքը այս նիւթին վրայ գրեց ու Վիեննա Մըխիթարեանց քով տպագրեց Տաղաւարեան բժիշկը: Երկուքին ալ գրուածք՝ Իզմիրեան Գրիգորի ղզլարեցւոյ մըրցանակին արժանաւոր համարուած են: — Վերջինոյս տետրակին մէջ նշանակուած են թէ ազգային և թէ օտար բանասէրներն և թէ անոնց գրուածք՝ որ այս նիւթին վրայ խօսեր են:

ՀԱՅ ԳՐՉԱԳԻՐՔ

Հայկական գրչագրաց վրայ ընդհանրապէս. — Ծանօթ հնագոյն գրչագիրք ի Մոսկուա ի Լազարեան ճեմարանի, ի Մխիթարեան Մատենադարանի ի Ս. Ղազար: — Գրչութիւն և գրիչք առ Կիլիկեցիս: — Մագաղաթ, թուղթ և անոնց կիրառութիւն: — Գրութեան պատկանեալ ուրիշ գործիներ: — Թանաք: — Նկարք, Պատկերք և անոնց արուեստը:

Մեսրովպեան տառից կրած այլեւայլ փոփոխութիւնք՝ հարկաւ կը հրաւիրեն մեր ուշադրութիւնն ու քննութիւնը նաեւ ձեռագրաց վրայ:

Հին գրչագիրք՝ ինչպէս ամէն ուսումնական և բարգաւաճ ազգաց մէջ, ասանկ նաեւ առ մեզ՝ մանաւանդ ներկայ դարուս գիտութեան և պահանջից առջև՝ արժանապէս մեծարուած են. ցանկալի և պատուական աւանդք հնութեան, ի նախնեաց առ մեզ հասած փափաքելի և հետազօտելի նշխարք։ Անոնց միջոցով պահպանուած և մինչև առ մեզ հասած են՝ մեր նախնեաց գրաւոր երկասիրութիւնք. յիշատակարանք՝ որ անցեալ դարերու մէջ զմեզ կը փոխադրեն. անոնց համբուրելի մատանց գրերը կը ներկայացնեն, մեր աչքերուն հետ՝ իրենց լեզուովն ու գրեթէ ձայնով կը խօսին, և յաճախ՝ մտաց տխուր բայց սիրելի զմայլման մը մէջ՝ մոռցնել տալով վայրկեան մը ինչ որ ենք, անցելոյն սրտայոյզ և սրտագրաւ յիշատակութեամբ մտքերնիս կը բերեն ինչ որ էինք։

Այս իրենց մատուցած գնահատելի ծառայութեամբք իրաւունք կը ստանան՝ հայկական մատենագրութեան պատմութեան մէջ գէթ քանի մը համառօտ էջեր գրաւել՝ ուսումնասիրաց ճարակ և ճաշակ մը ներկայացնելով։

Ա․ Ո՞յք են և ո՞ր դարու կը պատկանին՝ մեզի ծանօթ ամենէն հնագոյն հայ գրչագիրք։

Բ․ Անոնց հանգամանքն, արուեստ և ճարտարութիւն։

Գ․ Յարգն ու պատուականութիւն ըստ զանազան գըլխոց։

⁂

Հնութիւնն և ժամանակ՝ ամենայն մարդկային և մինչև անմահական համարուած գործոց խանգարիչք և աւերիչք, ինչպէս մեր հայրենեաց՝ ասանկ նաև անոր յիշատակարանաց հետ անողոք խստութեամբ և անգթութեամբ վարուած, և հողոյ հաւասարեցուցած են։ Անոնց անգթութեան՝ կերպով մը ակամայ և բռնադատ սատարք երեւցած են նաև մեր հայրենակիցք։

Այս յիշատակարանաց մէջ՝ ամենէն աւելի կրողներու դասակարգէն պիտի ըլլային և գրչագիրք, ոչ միայն իրենց բնական ու դիւրաւ ապականելի գիրքովն ու նիւթով, հապա

նաև զանոնք բնաբարձ ընելու աշխատողաց տգիտութեան ու մոլեռանդն հակառակութեան զոհ մը ըլլալով։ Անոնց վրայ ամենայն խնամքով հսկողքն ու սիրողք, անոնց պահպանութեան միջոցներէն յուսահատք, ընտրելագոյն կը համարէին՝ բոլորովին մէջտեղէն վերցնելն ու անհետացընել. որպէս զի ուր որ իրենց ձեռքին ու արժանաւոր պատւոյն մէջ մնալու հնարաւորութենէն կը զրկուէին, գէթ անարգողաց և անպատիւ արհամարհողաց ձեռք չիյնան. և այս զգուշութիւնը առաւելագոյն արթնութեամբ ի գործ կը դնէին նուիրական ու վարդապետական գրուածոց նըկատմամբ։ Ոչ միայն իրաց արդիւնք, այլ և ստուգախօս պատմութիւն՝ յայտնապէս կը հռչակեն զայս և կը վաւերացնեն իրենց տխուր էջերովը։ Աստուածաշունչ գրոց, եկեղեցական մատենից և նմանեաց, որ քան զայլ գիրս յաճախագոյն կիրառութեան մը ենթարկուած էին, և որոց թարգմանութիւնն հինգերորդ դարէն ի վեր եղած և ծաւալած էր ընդ ամենայն Հայաստան, խիստ քիչ թուով՝ հնագոյն գրչագիրք հասած են մինչև առ մեզ։ Օրինակ իմն, մեր ձեռագրաց Մատենադարանին մէջ ի Ս. Ղազար, որ թուոյ առաւելութեամբ ոչ յաննշանից կրնայ համարուիլ, հնագոյն գրչագիրք Աստուածաշունչ սուրբ գրոց միայն ՉԿԸ (1332) ՉՂ (1341) թուականներն կը կրեն։

Ո՞ւր պէտք էր փնտռել այսպիսի անդարման կորուստ մը։ — Սրտաճմլիկ է պատմութեան՝ այս հարցման և իրաւացի հետաքննութեան տուած պատասխանը, և աղխտագոյն ևս ներկայացուցած պատճառներն։ Ի սրոյ և ի հրոյ, և ի վերահաս վտանգաց պաշարեալ և աճարեկ մեր սիրելի հայրենիք, չորս կողմերնին տարածուած սփռուած թշուառութեանց մէջ՝ իրենց ապագային վրայ անստոյգք և անվստահք, ապահովագոյն միջոց մը մտածեր և գտեր էին այդ նուիրական մատենից փրկութեան. իրենց դողդոջուն ձեռքերով և աչաց անմխիթար արտասուօք թաղել, եկեղեցեաց և խորաններուն հիմանց տակ։ Այսանկով կը մեռնէին անոնք ապագային համար. մեզի համար՝ որ նոյն իսկ այդ սրբավայրից աւերակներուն տեսութեանն ալ պիտի չժամանէինք՝ երկար և յուզեալ դարեր ունելով անջրպետ ընդ մեզ և ընդ նոսա:

Եթէ յայդպիսի ձեռաց և յանողոք տարերաց կրուած դժնդակ հալածանաց վրայ աւելցնենք նաեւ ժամանակին երկաթի ու ծանր ձեռքը, մաշող ու սպառող ոյժը, բռնադատ զաղթականութեանց աշխարհէ աշխարհ ու հեռաւոր նժդեհութեամբ զանոնք ցրուել տանիլը, և վնասակարագոյն թշնամւոյ մը՝ ագիտութեան և անոր հետեւանք նախապաշարմանց անոնց դէմ տուած պատերազմը՝ իբրեւ անօգուտ և անպիտան ջնջելով փճացնելով, իրաւամբք պիտի զարմանանք որ դեռ ևս այդչափ բազմութիւն գրչագիր մատենից կը գտնուին ի Հայաստան և անկէ դուրս:

Մեզի ծանօթ հայկական հնագոյն գրչագիրք՝ ութերորդ դարէն անդին չեն անցնիր. ու թէպէտ տեղ տեղ աւելի հին ժամանակաց պատկանող ձեռագրաց գոյութեան հանդիպեր ենք ի լրոյ, բայց ըստ հմտագունից՝ ոչ այնչափ ստոյգ հաստատութեամբ. այլ կամ թուականաց չփոթութենէ յառաջ եկած, և կամ այդ գրչագրաց աւելի յարգ ու կարեւորութիւն տալու մտքով: Այսպէս է, օրինակի համար, առ Մխիթարեանս ի Կոստանդնուպոլիս տպագրուած Ուղեւորութիւն ի Պարսկաստան կոչուած գրքին մէջ յիշուած Աւետարան մը, որուն գրեթէ հինգերորդ դարու հնութիւն ուզուած է տալ:

Իրենց հնութեան ստուգութեանն անտարակուսելի նշանակքը վրանին կրող քանի մը պատուականագոյն և սակաւագիւտ գրչագիրք յիշատակենք:

Էջմիածնի մատենադարանին մէջ գտնուած հին ու արծաթապատ աւետարանը, որ Ռուսաց կայսեր ընծայուեցաւ վերջերս, և Ստրզովսկիի գերմաներէն գրուածքը և անոր հայերէն թարգմանութիւնը ծանօթ է բանասիրաց: — Գլխաւորներէն մէկն համարուած է իրաւամբ

ի Մոսկուա Ռուսաստանի՝ Լազարեանց ճեմարանի մատենադարանին մէջ գտնուած և խնամով պահպանուած Աւետարան մը, Հայոց ՅԼԶ (887) թուականին գրուած ու այսպիսի յիշատակարանով մը. «Գրեցաւ սուրբ և կենարար աւետարանս այս ՅԼԶ թուականութեան Հայոց, ի հայրապետութեան Գէորգայ Հայոց կաթողիկոսի, և յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի, ի տէրութեան Սմբատայ Բագրատունւոյ. ես Սահակ Վանանդացի՝ որդի Վարդա Վանանդացւոյ որում կրկին Մլեհ կոչէին»:

Անզարդ անպաճոյճ, — որ և ան միւս հաւաստիք մ'է հնութեան, — բայց ամենընտիր գրչութեամբ և ընթերցուածովք ցանկալի մատեան մը: Չափը ըստ երկայնութեանն երկու թիզ, իսկ ըստ լայնութեան մէկ թիզ և չորս մատնաչափ: Բովանդակ գրուածն Մեսրովպեան խոշոր երկաթագիր տառիւք, երկուհարիւր քսանեւեօթն մագաղաթեայ թերթերու վրայ, ծայր ի ծայր միաձեւ և համեմատ գրչութեամբ դրոշմեալ, աջողաձեռն և հմուտ գրչի գործ: Բանասիրական տեսութեամբ հետազննութեան արժանաւոր կրնան համարուիլ ի սմա՝ բաց ի բազմապատիկ տարբերութեանց ընթերցուածոց՝ նաեւ ըստ ուղղագրութեան, և յաճախ մի և նոյն կերպով կրկնուած՝ տարբեր կամ զարդիս մեզի անսովոր գրութեան կերպեր. թէպէտ և ուրիշ հին ձեռագրաց մէջ ալ ոչ ի սպառ անծանօթք: Ասանկ կը գրէ Ովմն փոխանակ Ոմն գրելու. ովմանք (ոմանք), զովք (ոք), ուվմուք (ումեք), նոքովք, զնոքովք (նոքաւք, զնոքաւք), բարւովք (բարւոք), ուղիւղ (ուղիղ), բովական (բաւական). եին (էին), և այլն:

Այս աւետարանին հաւասար կամ քիչ պակաս հնութիւն, յարգ ու պատուականութիւն ունեցող ուրիշ օրինակ մ'ալ կայ նոյն սուրբ գրոց ի մեր մատենադարանի՝ հետեւեալ յիշատակարանաւ. «Ես Մլքէ աղախին Քրիստոսի և Հայոց թագուհի ի ՅԺԷ (868) ... թվականիս ետու զաւետարանս ի Վարագի սուրբ Աստուածածինս զոր իմ ձեռամբս և ծախաւք իմ չինեալ. յաւգնականութիւն ինձ և արքային իմոյ Գագկայ և զաւակաց իւրոց. ով ոք կարդա յաղաւթս յիշէք առաջի Աստուածամաւրտ. և Աստուած հասարակաց ողորմեսցի»:

ԶԱնդրիաս և զԳէորգ քահանայք ստացաւղ սուրբ աւետարանիս յիշեսջիք ի Քրիստոս աղաչեմք»: Գրութեան թուականն է ի ՅԾԵ:

Ուրիշ յիշատակարան մ՚ալ, Անդրէաս քահանայի ստացողի սուրբ աւետարանիս, կ՚ըսէ. «Ի ՈԾԷ (1208) թուականիս Հայոց ես Անդրիաս քահանայ թափեցի զսուրբ աւետարանս ի յանաւրինաց և վերստին ետու զսա յընծայս սրբոյ Նշանիս Վարագայ, յիշատակ ինձ և հարազատ եղբաւր իմոյ Գէորգեայ քահանայի: Արդ որ լուսաւորիք ի լուսաճաճանչ տերունեան հրամանացս՝ յիշեսջիք զիս զԱնդրիաս և զեղբարսն իմ զԳէորգ և զՀայրապետ և զՍարգիս և զծնողսն մեր. և Աստուած հասարակաց ողորմեսցի. ամէն»:

Յիշատակագրին ակնարկած գերութեան և յանչնորհ ձեռաց կրած տառապանաց հետքը՝ տեղ տեղ կը տեսնուի, ի սրբագրոշմ մատենիս, որ նախընթացին նման Մեսրոպեան խոշոր երկաթագրով գրոշմեալ է ծայր ի ծայր չորս հարիւր վաթսուն մագաղաթեայ ընտիր թերթերու վրայ. պարզ, առանց զարդագրոց և լուսանցից վրայ գեղանկար գրուագներու, ինչպէս ընդհանրապէս սովոր են ընել՝ ժամանակաւ աւելի կրտսեր գաղափարողք և նկարակերտող գրիչք: Միայն ի սկզբան՝ վեց թերթ մագաղաթի վրայ՝ իրեն դարուն և ժամանակին յատուկ ճարտարութեամբն և արուեստիւ կը տեսնուին՝ խորանք կամ համաձայնութիւնք չորից աւետարանաց, իրենց նկարուց նիւթ առնլով, ինչպէս կ՚երեւնայ, Վարագայ վանքին՝ որուն ընծայուած է, մասնաւոր տեսարաններն, Վանայ ծովակին, շրջակայից, ձկանց, թռչնոց և երէոց, և այլն: Ասոնցմէ զատ՝ չորս աւետարանչաց պատկերներն: Այս

ամէն նկարք և արուեստ՝ թերեւս Մելքէ թագուհւոյն հրամանաւ և ժամանակ եղած ըլլան, և որ անշուշտ՝ իր արքայական մեծութեան և դիրքին արժանաւոր կերպով՝ գրքին արտաքին երեսն ալ՝ ոսկւոյ և արծաթոյ առատ ճոխութեամբ զարդարած է, և որ առիթ տուած է յափշտակութեանն և գերութեան: Միւս աւելի նորագիր յիշատակարան մը. գրքին մէջ զետեղուած ի վերջ աւետարանին Ղուկայ՝ կ՚ակնարկէ այդ խանգարման տիկնոջ մը կողմանէ եղած դարմանը. «Ես Աւագ տիկինս... միաբանեցայ ի հռչակաւոր և ի մեծ սուրբ ուխտն Վարագ, և ետու վերստին նորոգել զսուրբ աւետարանս ի յարդար արդեանց իմոց, կազմութեամբ կողափակ նկարակերպ արծաթապատ զարդիւք զարդարեալ, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց պարոն Մանիլայ՝ և զաւակցի իւրոյ»: Աւելորդ է ըսել թէ այս վերջին ճոխութենէն ալ կապտուած հասեր է մեր ձեռքը: Գրքին երկայնութիւնն է մէկ թիզ և հինգ մատնաչափ. լայնութիւնն՝ թիզ մը և երկու մատնաչափ. ստուար և գեղեցիկ հատոր մը:

Խօսքերնիս չյերկարելու համար՝ բաւական համարինք ուրիշ Աւետարան մ՚ալ, թերեւս հնագոյն քան զառաջինն, – որովհետեւ թուական չունի, – ներկայացնել մեր ընթերցողաց:

Ասիկա ալ նկարչի հրաշալի արուեստիւ և ճարտար ձեռաց գրչութիւն՝ սուրբ Աւետարան մըն է, ի մեր Մատենադարանի, երկու թիզէն աւելի բարձրութիւն և գրեթէ երկու թիզ լայնութիւն ունեցող գիրք մը, վերը յիշուածներուն նման ընտիր և մաքուր մագաղաթեայ թերթերու վրայ և երկաթագիր տառերով. դժբախտաբար յետին երկու թերթից պակասութեամբը՝ ոչ յիշատակարան և ոչ ալ գրչութեան թուական ունի: Սակայն հնագէտք՝ գըրչագրին հանգամանացը մանր քննութեամբ՝ հազար տարիէն աւելի հաւանական կեանք կու տան անոր. և մէկ կամ երկու դարով աւելի հնագոյն կը դատեն ճարտարագործ *նկարներն կամ պատկերք՝ որոնք անշուշտ յունական գրչագրէ մը հանուած և աստ մէջ դրուած են․ վասն զի բաց ի յոյն արուեստէ, որ զգալի կերպով կը զանազանի ի մերայնոց, վերտառութիւնք կամ պատկերաց ցուցակութիւնք՝ նոյն լեզուով են․ և տառից ձեւն և գրութիւն՝ վկայութիւնք կը համարուին առ տեղեակս իրենց ժամանակին։*

Այս պատկերաց մէջ՝ յոմանս առաւել կը փայլի արհեստ և վրձինի փափկութիւն, և իրաւամբք ճարտարաց ուշադրութիւնը կը գրաւէ․ ինչպէս ի նկարուն՝ յորում կը տեսնուի վարդապետն Յիսուս ի միջի, յաջակողմն Աստուածամայրն սուրբ, և ի ձախմէ՝ յունական կերպարանք և պատմուճան կրող հայրապետ մը․ այսպէս Աւետման, Յիսուսի ընծայման ի տաճարն, Մկրտութեան և Այլակերպութեան պատկերներն։ Միւսներն են երկու սուրբ աւետարանիչք՝ Մարկոս և Ղուկաս․ (Մատթէի և Յովհաննու պատկերներն կը պակսին)․ չորս աւետարանիչք՝ մէկ պատկերի մէջ, Յիսուսի ծնունդն․ Յիսուս փրկիչ՝ յոյն միաբաններու կերպարանքով և արհեստով։ Ասոնցմէ զատ, երեք խորանք համաձայնութեան չորից աւետարանաց, և միւս չորրորդ մ'ալ՝ Եւսեբեայ թղթոյն առ Կարպիանոս։ Յիշենք անցողաբար միւս Աւետարան մ'ալ երկաթագիր և մագաղաթեայ, նոյնպէս ի մերում Մատենադարանի, նման արուեստով և գեղեցկութեամբ՝ ի ՆԾԶ (1007) թուականի գրեալ յՈնգանապոլիս (Ադրիանուպոլիս) Մակեդոնիոյ, թողլով ուրիշ շատերն, ժամանակաւ կրտսերագոյն, ԺԱ, ԺԲ, ԺԳ դարուց գրչութիւնք։

Այս վերջին և մեզի աւելի մերձաւոր դարուց մէջ գրուած ձեռագիրք, կիլիկեան ժամանակաց ժառանգութիւնք և աւանդք՝ աւելի բազմաթիւ հասած են առ մեզ․ որոց համառօտ նկարագիրը՝ հայրենական գիտութեանց հետամուտ և բազմահաշակ գրչի մը խօսքերովը ներկայացնենք ընթերցողաց, իր մէկ նոր և անուանի հեղինակութենէն քաղելով։

«Միւս եւս արուեստ... Քարտուղարութիւն կամ Գրչութիւն յոյժ ի պատուի էր և քաջ յաջողեալ ի Սիսուան, ի դրան արքունի և ի վանորայս․ որոյ և կենդանի իմն վկայք միան ձեռագիր մատեանքն։ Յանուանէ կարգէ ժամանակագիրս զոմանս ի նոցանէ․ որք յելս կոյս ԺԳ և յառաջին կէս ԺԴ դարու կացեալ էին․ Գրիգոր դպիր․ Վասիլ դպիր․ Հերուամ Երէցն․ Կոստանդին Շարահիշանեց․ Սարգիս երէց քեռորդի Ստեփանոսի Վահկացւոյ, որոյ աւէ աւարտեալ զգրութիւն հրաշազան և նկարակերտ գրոցն Արարածոց, զսկզբնաւորեալն յաւուրս Բ Լեւոնի և յանկ ելեալ յաւուրս Գ․ին․ Թուի Սարգիս այս նոյն ինքն ճարտար Պիծակն, և որդի խուլ Գրիգորի քահանայի․ զորոյ և զմականուան ծագումն յայտնէ․ որպէս թէ երբեմն «յ'առնելն ծաղկի և ի նկարելն, պիծակ մի նստաւ հանդէպ նմա ի լուսամուտն, որ և շուտ նկարեաց զնա․ զոր տեսեալ մերձակայիցն՝ կարծեցին թէ պիծակն եկեալ նստաւ․ զոր ընդ ձեռօքն վարելն նոցա զնա, ծիծաղեալ Տէր Գրիգորն․ ապա գիտացին զիրն, և զարմացեալ կոչեցին Պիծակ»։ Թերեւս վերոյիշեալ Շարահիշանց Կոստանդինն է քահանայն՝ զոր աշակերտ նորա Լեւոն երէց, յամի 1306, կոչէ «անհաս և անհամեմատ գրիչ»․ նոյնպէս և զիւր հարազատ եղբայրն «զՍիոն քահանայ, որ և մանկագոյն խակակատար եղեւ»։ – Եթէ ոչ անթիւ, մարթ է յոյժ բազմաթիւ ասել զճարտար գրիչս Սիսուանայ...

«Բազում անգամ անանջատ են յարուեստաւորս ձեռագրաց՝ երկոքին ճարտարութիւնքն, Գրչութիւն և Նկարչութիւն, որ բազում այն է զի Ծաղկողք և Ոսկողք կոչին․ և յայսմ արուեստի գերազանցեալ երեւին Սիսուանեայք քան զոր ի Մեծ Հայս․ յիշատակին և յոլովք ի նոցանէ, որպէս ժամանակակից Կոստանդեայ՝ և աննման յայնմ արուեստի վկայեալ Գրիգոր զարդարիչ Պապառօնեան աւետարանին «գեր ի վերոյ և անհաս ի սեռս մեր»։ Ժամանակակից Պիծակին յիշի Յակոբ Ճկարիչ ի Գայլու վանս․

որոց մերձաժամանակ և այլք ոչ սակաւք։ Հնագոյնքն՝ առաւել հետեւողք են Բիւզանդացւոց, յետինք՝ ազատագոյնք. այլ ոչ հաւասարեն գաղափարաց իւրեանց ի պատկերս կերպարանաց, մանաւանդ ձեռաց և ոտից, ճարտարագոյնք գոլով ի կերպարանել զհաւս և զհարսնահաւս և զչորքոտանիս, և եւս առաւել զպէսպէս զարդս և ձեւս արաբիկս և ինքնահնարս...

Այլ առաւել եւս փայլէ ուսումնասիրութեան և գրասիրութեան շնորհ՝ ի զարմս անդ Հեթմեանց յաջորդաց Ռուբինեանց. յորոց գրեթէ յամենայն պայազատաց՝ ժամանեալ մնան ցարդ ոմանց խնկական երկք, և յոլովից՝ վասն ինքեանց կամ վասն օտարաց գրել և յօրինել տուեալ մատեանք... որպէս վարք Ոսկեբերանի գրեալ վասն Օշնի հօր որդոյ Լամբրունեցւոյն. իսկ սա... պարագլուխ ամենայն բանասիրաց տանս Կիլիկիոյ՝ իւրով ձեռօք գրեալ է յոլով մատեանս, յոլովագոյնս եւս տուեալ գրել։ – Ոչ անարժան նմին և եղբայրն Հեթում – Հեղի, ետ գրել ըզգեղապաճոյճ աւետարանն նուիրեալ վանաց Սկեւռայ։ – Նմանեալ նմին յետ դարու միոյ և դուստր Թոռին իւրոյ համանուան՝ Ալիծ՝ կին սեննեսկալին Կիպրոսի, տայր գնել աւետարանս և կտակարանս ձեռամբ ճարտարին Ստեփաննոսի Գոյն–Երիցանց, որք ցարդ պահին առ գաղթականս Հայոց յարեւմուտս։

« Մեծագոյն եւս տեսանի գրասիրութիւն և գրավարժութիւն յարքունական շառաւիղի Հեթմեանց բնոյն, որոց նոր նահապետ Կոստանդին Պայլ՝ նորոգեաց կամ յառաջացոյց զամենայն երախտիս Լեւոնի, ընդ քաղաքականին և զբանասիրականն, յորս որդիք նորա պանծալիք մի քան զմի գերազանցեցին. առաջինն՝ քաջն Սմբատ Գունդստապլ՝ արժանաւորն մատենագրաց դասակցութեան, եթող զիւրն և զիւրոց մատանց գիծս, և մատեանս գրեալս իւրովք ծախուք։ Նոյնպէս և երկրորդն, որ է Բարսեղ արքեպիսկոպոս, որ և հեղինակ է Քերականն գրոց։ Ծանօթ եւս են

կրտսերոյն Յովհաննու եպիսկոպոսի՝ առաւել քան զմտաւոր վաստակս, բազում մատեանքն ընդօրինակեալք, եւս և իւրովք խրախուսանօք յօրինեալք, որպէս Գործոց Առաքելոց մեկնութիւնն Սկեւռացւոյն։ Զորրորդ և սակաւածանօթ եղբօր սոցա՝ Վասակայ կամ Վասլի տեառն Ճանճոյ, քաջի և բարեպաշտի՝ յիշին ընդ այլոց սրբազան սպասուց և աւետարանք գրեալք և Սաղմոս մի առենի։ Իսկ վեհագունի հարազատացն Հեթում արքայի, վկայեալ է զոյգ ընդ քաղաքական և պատերազմական հրահանգաց՝ և սէր մտաւորականին. « ետ գրել բազում մատեանս, յորոց բազումք կան մինչեւ ցայսօր (ասէ ժամանակագիրն, զոր կարեմք և մեք կրկնել), և ետ թարգմանել այլ եւս բազումս»։...

« Զուգակից երկարժամանակեայ իշխանութեան թագաւորին և կաթողիկոսն Կոստանդին՝ նոյն զտանէր և ջանիցն, խնամարկելով ի բանասէրս, զի « գրասէր եղեալ (ըստ ժամանակակից յիշողի)՝ ետ գրել յոլով աւետարանս և գրեանս », ընծայելով արքայազարմիցն (յորոց ոմանք իւր իսկ սանք էին), և եկեղեցեաց վանորէից. յորոց ծանօթ են ինձ եօթն աւետարանք՝ պահեալք յայլեւայլ ձեռս, և մին ի մերումս։ – Առաւել քան զարքունի փառս՝ զիմաստասիրութեանն ոգի ժառանգեաց պայազատն Հեթմոյ Լեւոն Բ., թերեւս գերազանցեալ զհանուրբք՝ յայսմ մասին, վասն որոյ և կոչեցաւ Գրասէր, զի « ետ գրել բազում պատուական գրեանս, յորոց բազումք կան մինչեւ ցայսօր, (ասէ ժամանակագիրն), և զայլ բազումս ժողովեաց, և ետ վերստին նորոգել՝ ի ձեռն ճարտարաց և վարդապետաց, զոր ի վատթար գրչաց այլայլած էր. և դարձեալ զբազումս ետ թարգմանել » : . . . – Ոչ միայն ի բնիկ երկրի իշխանութեան իւրում, այլ և առաքէր ի մատենիցն ի Մեծ Հայս, և ի գաղթականսն յարեւմուտս, յորոց ճաշոց մի՝ յիշատակաւ իւրով առաքեալ ի Պերուճիա քաղաք Իտալիոյ՝ փոխադրեցաւ յետոյ ի Հոգետունն Հայոց Հռովմայ։ Գտանին մատեանք գրեալք և ի խնդրոյ *կնոջ նորին Կեռան թագուհւոյ, որ և կրօնաւորեալ առի և կոչեցեալ Թեփանի: Ոչ պակաս քան զհայրն գտաւ և անդրանիկ սորա Հեթում Բ, մեկենաս Գր. Անաւարզեցւոյ և Գէորգայ Սկեւռացւոյ, որում եւ յօրինել զՄեկնութիւն Եսայեայ. գտանին և շատք վասն իւր և վասն այլոց գրեալ մատեանք իւրովք ծախուք. իսկ իւրոց գրաւոր վարժից յաջողութեան վկայ մնայ Յիշատակարանն վասն աւուր տօնի զատկին, վայելուչ տաղաչափութեամբ: Ի բազմաթիւ եղբարց սորին Հեթմոյ՝ ծանօթ է ինձ, Նա և ի ձեռին, Յայսմաւուրք մի (ըստ կարգադրութեան Անաւարզեցւոյն) գրեալ վասն Օշին թագաւորի, յորում նշանակեալ են աւուրք մահուան արքայազանց: Օշնի որդի Լեւոն Դ. ցուցաւ երախտագործ՝ հաստատութեամբ վարժարանին ի Ջերմաղբեր վանս. նորին հրամանաւ կան մնան գրեալ Ասիզքն Անտիոքայ և Օրինագիրք Սմբատայ, որ նոր յայտնեցաւ:*

« Ի զարմից եղբարց Ա. Հեթմոյ և հօրեղբարց Լեւոնի Բ, ծանօթք ինձ մնացորդք ստացեալ գրոց՝ են, Գիրք Սողոմոնի և այլ ինչ ի Ս. Գրոց:... Վասն եղբօրորդւոյ սորա երկրորդ Սմբատ Գունդստապլի՝ ծանօթ է գրեալ Աստուածաշունչ մի չքեղ: — Զատ ի չորից և ի հնգից եղբարց՝ որդւոց Նահապետին Կոստանդեայ Պայլին՝ էին և այլ որդիք, յորոց մի Լիկոս. յանուն սորա չէ ինձ ծանօթ գրեալ մատեան. այլ վասն որդւոյ իւրոյ պատանեկի Պարոն Սիր Լեւոն կոչեցելոյ՝ կայ առ մեզ Աւետարանիկ մի գրեալ յամի 1256, որոյ գրիչն Յովհաննէս մաղթէ յիշել « զբարի շառաւեղն, զողայ Պարոն՝ զՍիր Լեւոն, որ եռափափագ սիրով ստացաւ զսուրբ աւետարանս »:... Ութերորդ որդւոյ արքայահօրն Կոստանդեայ, որ է Պաղտին մարաջախտ ստացող և նորոգող ճաշոցի գրելոյ ծախուք մեծի Գունդստապլին, յորում գրեալ է և ինքն յիշատակս ինչ ընտանեկանս, որպէս յետոյ և որդի նորա Կոստանդին Բ. իսկ Կոստանդին Գ. Թագաւոր՝ չափական բանիւ գրեալ է ողբս զմահուանէ եղբօրն: Գտանի առ մեզ և աղօթագիրք մօր նորա Մարիւն տիկնոջ՝ դստեր Լեւոնի Գունդստապլի »[1]:

⁂

Մեր ձեռքը հասած հնագոյն հայկական գրչագիրք՝ մագաղաթի վրայ գրուած են ըսինք: Գրոց գիւտին և կազմակերպութեան ժամանակ ալ, և յառաջ քան զսուրբն Սահակ և զՄեսրոպ, երբ դեռ եւս ասորի և յոյն տառերով կը վարուէին մերք՝ հաւանական կ'երեւնայ նաեւ մեր մատենագրաց խօսքերէն թէ ծանօթ և ընտանի էր նաեւ իրենց, ինչպէս ուրիշ մերձաւոր ազգաց, մագաղաթի գոյութիւնն ու գործածութիւն:

Մագաղաթէն առաջ, ինչպէս յայտնի է ի պատմութեանց, սովոր էին հինք քարանց, թրծուն աղիւսի, փղոսկրի և փայտերու վրայ ալ գրոշմել իրենց արձանագրութիւններն: Առաջինին գործածութիւնը տեսանք և ի Հայաստան անդստին ի վաղ ժամանակաց՝ բեւեռաձեւ գրոց կիրառութեան առեններէն. և հայկական տառերով ալ դեռ մինչեւ հիմայ կը գտնուին բազմաթիւ յիշատակարանք ընդ ամենայն Հայաստան. իսկ միւսներուն ոչ յիշատակութիւնը կը գտնենք, և ոչ ալ անոնցմէ մնացորդք հասած են առ մեզ. այսպէս և ոչ պղնձի տախտակաց վրայ աւանդուած գրութեանց, որոնց յաճախ կը հանդիպինք առ հինսն և մանաւանդ առ Հռովմայեցիս:

Մագաղաթի վրայ գրելը շատ հին սովորութիւն է: Երեք այլեւայլ գունով էին մագաղաթք՝ ըստ տեսակին և ազնուութեան նիւթոյն. սպիտակ, դեղնագոյն և ծիրանի, և այս վերջինս կը գործածուէր մանաւանդ քրիստոնեայ ազգաց մէջ՝ սրբազան գրքերու ընդօրինակութեան համար. ինչպէս աստուածաշունչ գրոց, սաղմոսաց, պատա-

---

1. ԱԼԻՇԱՆ (Հ. Ղ. Վ.). Սիսուան. յէջ 517–520.

բազմատուցի, չարակնոցաց և ժամագրոց, և այլն· և տառերն ալ՝ մանաւանդ տողից գլուխք, շատ անգամ ոսկով և արծաթով պաճուճած։ Մեր գրչագրաց մէջ յաճախ կը տեսնուին այս վերջի հանգամանք և զարդք· բայց մագաղաթի կիրառութեան մէջ գոյներու այնչափ և զգալի տարբերութեանց չենք հանդիպիր· ուր մագաղաթք ընդհանրապէս մաքուր, յղկեալ և բաւական արուեստով պատրաստուած են։ Գրչութիւնք ճարտար և բազմածախ, չխնայելով յոսկի, յարծաթ և ի գեղս։

Մետասան, երկոտասան և երեքտասան դարերուն մէջ՝ յորս մագաղաթի արուեստ և կիրառութիւն դէպ ի անկումն կը յառաջէր, և թուղթի գործածութիւնն դեռ ոչ ընդհանուր և սովորական, հին ձեռագիրները քերելն, և անոնց վրայ նոր գրութիւններ ընելով՝ մագաղաթ և դրամ շահելու վնասակար սովորութիւնն յաճախելով, ի հնոց աւանդուած շատ երկասիրութիւնք չհասան առ մեզ։ Այս կերպով քերուած և նորէն գրուած ձեռագիրք՝ Կրկնագիրք (Palimpsestes) կը կոչուին· և որք նախնական գրուածոց հետքը կամ նշանակքը ընդհանրապէս վրանին կրելով մեր ժամանակաց անուանի հնագիրք և հնախոյզք կը յաջողին երբեմն զանոնք կրկին ի լոյս հանել։ Մեր գրչագրաց մէջ՝ թէպէտ ոչ ի սպառ անծանօթ, բայց այնչափ ալ յաճախած չենք տեսներ այսպիսի ապաւաղութիւնք և կրկնագիրք։

Մագաղաթի խափանմանէ կամ անկմանէ ետքը՝ բամբակեայ թղթոյ գործածութիւնն սկսած է յԵւրոպա, որով և առ մերսն։ Հնոց տերեւներու, ծառոց կեղեւներու և մանաւանդ կտաւի վրայ գրելու սովորութեան հետեւանք և արգասիք եղած է Եգիպտական կոչուած թղթոյ (պապիրոսի) գիւտը· որուն ժամանակաւ և հետզհետէ ստացած կատարելութեան արդիւնք են բամբակեայ և ուրիշ թղթեր։ Մեր մէջ մետասան, երկոտասան դարերէ սկսած է բամբակի թուղթը, և շարունակուած. թէպէտ և բոլորովին չզատուելով ի մագաղաթէ, մանաւանդ ի սկզբան, եկեղեցւոյ պաշտամանց յատուկ գրքերու մէջ։

⁂

Մագաղաթէ ու թուղթէ զատ՝ հնոց մէջ գրութեան սովորական գործեաց վրայ ալ կ'արժէ քանի մը խօսք ընել, և որոնք ժամանակին և հաճոյից համեմատ փոփոխութիւններ կրած են։ Հաւանական է թէ Եգիպտացիք, Յոյնք և Հռովմայեցիք կտաւի վրայ եղած գրութեանց համար՝ վրձին կը գործածէին· և որ ցայսօր ի կիրառութեան է առ Ճենս։ Մոմի կամ կապարի վրայ գրելու ատեն՝ փղոսկրէ կամ ի մետաղէ պզտիկ գործի մը կ'ունենային՝ զոր գրիչ (style) կը կոչէին· որուն մէկ կողմովը կը գրէին, և միւսովը սխալները կը ջնջէին։ Այս եղած է անշուշտ մեր հնոց քով գործածուածը, և այն պատճառաւ՝ մեր այբուբենից նախնական ձեւք երկաթագիրք կոչուած, ինչպէս յիշեցինք։ Բայց յերկաթոյ՝ ուրիշ մետաղներէ ալ կը շինուէր այս գրիչը· և կ'աւանդէ Մոնֆոքոն՝ թէ Յունաց պատրիարքունք արծաթէ եղէգով մը կը գրէին իրենց ստորագրութիւնը։ Թերեւս և առ մերսն ալ անծանօթ եղած չըլլայ ասոր գործածութիւնը։ Ասոնցմէ ետքն են եղեգէ և փետուրէ գրիչք, և որոց կիրառութիւնը կը տեսնուի նաեւ մեր ձեռագրաց պատկերներուն մէջ։

Մատենագրի կամ ընդօրինակողի մը համար անհրաժեշտ կարեւոր ուրիշ ամէն գործիք՝ քանոն, կարկին, կաղամար, զմելին, քերիչ, աւազաման, բոլորն ալ ծանօթք էին նախնեաց, և ձեւերու շատ քիչ տարբերութեամբ իրարու անցած։ Քանոնով և կարկնաւ՝ սովոր էին ուղղահայեաց գծերն գծել և գրուածքին ամփոփող լուսանցքը նշանել· յետոյ հորիզոնական գծերով տողից համաչափ հեռաւորութիւն կու տային։ Մերթ մի և նոյն տողը երկու գծերու մէջ կ'ամփոփէին, մանաւանդ երկաթագիր գրութեանց համար· և որք միշտ կը փայլին իրենց կանոնաւորութեամբ։ Երեսները գծելու համար ընդհանրա-

պէս սուր երկաթի ծայր մը կը գործածէին· կապարեայ գրչի գիծը՝ մետասաներորդ դարուն է· բայց կիրառութիւնը միայն երեքտասաներորդին մէջ սովորական եղած է։ Աւելի վերջին դարուց մէջ կ'երեւնայ կարմիր գծերով տողերուն ուղղութիւն մը տալու սովորութիւնը, և որ կը տեսնուի նաեւ եւրոպական հին տպագրութեանց մէջ· բայց այս կարմիր գծերու կիրառութեան մեր ձեռագրաց մէջ չենք հանդիպած։

Առ հինսն գործածուած թանաքն ընդհանրապէս սեւ փայլուն գոյն մ'ունի· և կ'երեւնայ թէ նոյն տեսակ նիւթով կը շինէին նաեւ մինչեւ միջին դարէն ետքն ալ։ Բայց չորեքտասաներորդ դարուն մէջ՝ թանաքի շինութեան համար գործածուած նիւթք փոփոխութիւն կրած կը թուին· վասն զի գրութեանց երեւոյթը կ'այլափոխի, և կամաց կամաց կը սկսի աժգոյն կերպարանք մ'առնուլ։ Ահաւասիկ դիւրին միջոց մը՝ որով հնագէտք ձեռագրի մը հնութիւնն ու ժամանակը կը ճանչնան, թէպէտ և գրութեան թուական չունենան։ Նոյնը կրնանք ըսել և և հաստատել ընդհանրապէս նաեւ մեր ձեռագրաց համար, ի բաց առեալ այն պատահական պատճառներ՝ որ անոնց արտաքին երեւոյթը կրնային այլայլել։ Ընդհանրապէս սեւագոյն էր թանաքնին· բայց զարդագրոց մէջ կարմիր և ուրիշ գոյն ունեցողներն ալ ի կիրառութեան էին· և թագաւորք, ինչպէս ուրիշ ազգաց մէջ, ասանկ ալ ի մեզ, իրենց ստորագրութիւնը դնելու համար կարմրագոյն թանաք կը գործածէին, և կը հաւատարմացնեն մեր խօսքը՝ Լեւոնի մեծին և Հեթմոյ մեր թագաւորաց մինչեւ առ մեզ հասած ստորագրութիւնք՝ դաշնագրութեանց մէջ։ Այս էր նաեւ Կոստանդնուպոլսոյ կամ Բիւզանդական արքունեաց և Նիկոսիոյ պատրիարքաց սովորութիւնը, յորոց անշուշտ անցած է առ մեզ և յեւրոպական արքունիս, վասն զի Կարոլոս Ճաղատ թագաւորին ստորագրութիւնք կը գտնուին կարմրադեղով։ Այսպէս սովոր էին մերքն՝ գրչագրաց գլխատառքն և կամ առաջին երկու երեք տողերը կարմրով, կապոյտ և ծիրանեգոյն դրոշմել և զարդագրել· նոյնպէս սկզբնատառից այլեւայլ հաճոյական և արուեստաւոր ձեւեր տալ, թռչնոց, կենդանեաց, ծաղկանց նմանութեամբք և յարմարութեամբ՝ յորս յաճախ գրողին ընտիր ճաշակն ու գիտաւոր հանճարը կը փայլի։ Այսպիսի գրութիւնք շատ են նաեւ եւրոպական, մանաւանդ միջին դարուց պատկանող ձեռագրաց մէջ։ Մետաղային և գունաւոր թանաքներ՝ որոնք, ինչպէս ըսինք, ձեռագրաց զարդագրութեանը կը ծառայէին, Ըէն մինչեւ Ժ դարուց գիւտք են և կիրառութիւն, և հետեւորդ դարերուն մէջ առաւելագոյն յաճախութիւն գտած, ինչպէս նաեւ մեր մէջ։ Իսկ ԺԳ դարու մէջ և անկէ ետք՝ ոսկեայ թերթեր կը գործածուէին՝ արուեստով կպցնելով գրերու վրայ։

Ինչպէս ուրիշ ազգաց՝ ասանկ ալ մեր մէջ, գրչագրողն ու զարդարող և նկարիչ՝ միշտ մի և նոյն անձը չէր, այլ մերթ զատ անձինք, և որք՝ ինչպէս դեռ քիչ առաջ յիշատակն ըրինք Ոսկողք կամ Ծաղկողք կը կոչուէին։ Այս պատճառաւ է որ կը տեսնուին գրչագիրք՝ այս նկատմամբ անաւարտ և անկատար հասած մինչեւ առ մեզ· երբեմն նաեւ գլխաւոր տնագլուխ տառք՝ կամ բոլորովին չնշանակուած, և կամ միայն սեւադեղով զոր նկարողին արուեստը պիտի լրացնէր։

Ձեռագիր երփնագրելու արուեստը՝ ծանօթ է հնոց, բայց ոչ կիրառութիւնն ի յաճախութեան· որով հնագոյնք՝ կամ բոլորովին զուրկ են ի զարդուց, կամ խիստ հազուագիւտ, մանաւանդ Ը դարէն առաջ գրուածները։ Ի սկզբան զարդք՝ նկարակերտութեանց անձուկ սահմանէն դուրս չէին ելլեր· Ը և Թ դարուց ձեռագրաց մէջ կ'երեւնան բոյսք, տերեւք, թռչունք, և այլն· ապա արուեստական զարդք՝ որ տեւեցին՝ առանց կորսնցնելու իրենց նորութիւնն, և չդադրեցան սիրելի և հաճոյական *ըլլալէն մինչեւ ցԺԳ դար։ Առ Եւրոպացիս՝ գրչագրաց զարդարանաց համար՝ ճոխագոյն դար համարուած է ԺԵ. նոյնը կրնանք ըսել նաեւ մերիններուն համար, թերեւս դար մը կանխելով քան զնոսա. տերեւք, ծաղիկք, պտուղք, կենդանիք և միջատք՝ շատ փափկութեամբ և ճարտար արուեստով նկարակերտուած են, և յաճախ նաեւ աւելի նմանութեամբ քան իրենցմէ հնագունից մէջ։ Սակայն առ բնութիւնն դարձիւ ալ՝ տեսարանք շատ անգամ հեռանկար արուեստի գեղեցկութենէն անմասն են, և մանաւանդ մարդկային կերպարանաց վրայ բրտութիւն կամ խստութիւն մը կ'երեւնայ։*

⁂

Ձեռագրաց յարգն ու պատուականութիւնը՝ կամ իրենց հնութեան և արուեստին, և կամ իրենց մէջ ամփոփուած նիւթին համեմատ է։ Ոմանք այս ամենայն յատկութիւններն միանգամայն կրնան բովանդակել, որով երկպատիկ կ'ըլլայ յարգերնին. ոմանք ալ՝ մէկ կամ երկու մասամբ, և անոր համեմատ պատուականութիւննին։ Մեր հայկական ձեռագրաց մէջ ալ՝ թէ մին և թէ միւսը սակաւագիւտ չեն կրնար համարուիլ՝ մինչ համեմատաբար ազգային մատենագրութեան ունեցած դիրքը՝ ուրիշ ազգաց մտաւորական հանճարոյ արտադրութեանցը հետ։

Մատենագրութիւննիս կամ յատուկ հայկական է, և կամ յայլոց առ մեզ փոխադրուած։ Առաջիններն կը պատկանին ազգային հանճարոյ և մտաց երկունք, մինչ երկրորդին՝ թարգմանութիւնք են յայլեւայլ հին և երբեմն ի նոր լեզուաց։ Թէ ազգային մատենագրութիւնն, և թէ յօտարաց՝ հայկական կերպարանքով մեր ժառանգածը, ունին իրենց մեծ կարեւորութիւնը հայ լեզուին, պատմութեան, ու յաճախ նաեւ ոչ ազգային մատենագրութեան նկատմամբ։ Առ այս միակ և գլխաւոր օժանդակք երեւցած են ձեռագիրք. առանց իրենց մատուցած մեծ ծառայութեան՝ գերեզմանի լռութեան և միայնութեան պիտի դատապարտուէր նոր սերունդը. և որչափ սիրելի է կեանք, այնչափ անցեալ և բարգաւաճ կեանք մը մեզի ներկայացնող գրեանք ժամանակին անխնայ ձեռքերէն յափշտակուած։ Եթէ գրիչք, օրինակ իմն, անփոյթ ըլլային հետզհետէ ընդօրինակութեամբ, իրենց ձեռքն հասածը մեզի աւանդելէն, ընդհանուր գիտութեան համար մեծ պարապ մը պիտի բացուէր. պատմական ուսմանց շղթային օղակք՝ կտրտած և ջախջախ դրից մէջ պիտի ներկայանային։ Նոյնը կրնանք ըսել նաեւ յօտար լեզուաց ի հայ եղած թարգմանութեանց համար։ Անոնց սկզբնագիրք՝ մերթ մասնական և մերթ ալ ամբողջ կորստեան մը ենթարկուած են. տեղ տեղ յանհմտութենէ և կամ յանհաւատարմութենէ գաղափարողաց՝ աղաւաղ և անհարազատ կերպարանօք ապագայից աւանդուած. որով յաճախ թարգմանութեանց դիմել հարկ կ'ըլլայ՝ լուսաբանելու և ի ձեռնձգութեանց սրբելու համար։ Միւս այլ բազմաշահ ծառայութիւն՝ զոր ըստ վկայութեան նոյնին իսկ եւրոպացի երախտապարտ իմաստնոց՝ հայկական ձեռագիրք մատուցած են հնութեան և գիտութեանց։

Գալով ի մասնաւորի մեր ազգին, մենք չունինք ըզպատմութիւն արուեստից, և անոնց բարգաւաճանացը կամ անկման։ Այսպիսի էական պակաս մը՝ եթէ ոչ լիուլի, սակայն մասամբ կը լեցնեն գրչագիրք։ Թէ ինչ վիճակի մէջ էր Թ դարէն ի վեր հայ ազգին մէջ նկարչութիւն, զարդագրութիւն կամ նկարակերտ միւսինք, ճարտարապետական ձեւ և ճաշակ, և սոնց ամենուն վրայ որպիսի և որչափ ազդեցութիւն ունեցած էին յոյն և արաբական արուեստք. երբ կամ ինչ կերպով անոնց տեղ սկսաւ մուտ գործել եւրոպական ծանօթութեան հետ նաեւ արուեստ և ճարտարութիւն, այս ամենուն նկատ-

մամբ՝ պատմութիւնը լուռ և համր կրնայ համարուիլ մեզի համար. և անոր լռութեան դարմանը՝ գոհացուցիչ կերպով կը մատուցանեն մեզ գրչագրողք՝ դարէ դար շարունակեալ պատմութիւն մը՝ սխրալի օրինակներով, դնելով մեր առջեւը իրենց բազմաթիւ և գեղեցիկ նկարներով։

Խիստ քիչ է ունեցած տեղեկութիւննիս մեր նախնեաց առնին և քաղաքային սովորութեանց և կիրառութեանց. ոչ անոնց զինուորական զարդուց և կազմածոց, գործածած զինուց, զգեստուց, կահից և կարասեաց։ Ձունինք իբրեւ զՅոյնս և զՀռովմայեցիս հրաշակերտ արձաններ և քանդակներ՝ հնախուզից և ուսումնականաց գիտութեանն և քննութեան ի ճարակ և ի սնունդ։ Սակայն մեր գրչագիրքն քննած ատեննիս՝ բազմաթիւ նկարուց վրայ բաւական ճշդութեամբ այդ ամէնը կը ներկայանայ մեզ. ոչ լոկ քաղաքային և զինուորական սովորութեանց հանդերձանք, կազմածք և զգեստք, այլ նոյն իսկ ազատաց ու թագաւորաց յատուկ կամ սովորական պատմուճանք, ծիրանիք, և այլն։

Ձունինք դարձեալ մեզի համար մասնաւոր և մանրամասն բուն ազգային աշխարհագրութիւն կամ տեղագրական նկարագրութիւն. և ոչ կարգաւորեալ ստորագրութիւն մեր ընդարձակ հայրենեաց հողուն վրայ սփռուած քաղաքաց, գիւղից և մանաւանդ անթիւ վանորէից և անոնց գործունէութեան, և հայրենեաց մատուցած ծառայութեանց թէ կրօնից և թէ ուսմանց պահպանութեան և բարգաւաճանաց նկատմամբ։ Այս կողմանէ ալ շատ օգտակար կերպով ուսումնասիրելու ընդարձակ ասպարէզ մը կը բանան ձեռագիրք՝ իրենց յիշատակարաններով՝ հետաքննական տեղեկութիւններ տալով մեզ այդ ամէն նիւթերուն վրայ։

Ունինք ազգային պատմչաց ոչ աննշան թիւ մը. բայց յաճախ ընդհատութեանց հանդիպելով՝ կը բռնադատուինք ոստում մ'ընել. և այդ բռնադատ անցքը՝ շատ անգամ կամ բոլորովին մեր պատմութեանց փափաքելի շարունակութեանց թելը կը կտրէ, և կամ մթին և անորոշ դէպքերու մէջ կը ստիպէ թափառիլ։ Հոս ալ գրչագիրք մեզի օգնութեան կը հասնին՝ մեր արդ իսկ յիշատակած բազմաթիւ և բազմալէզ պատուական յիշատակարաններով։ Ձենք գիտեր թէ արդեօք եւրոպական գրչագրողք ալ ունեցե՞ր են այդ սովորութիւնը՝ զոր մերք, գրեթէ ամէնքը՝ սակաւաւոր բացառութեամբ, շատ գովութեամբ ու պիտանի կերպով բանեցուցած են, իրենց ժամանակակից դէպքերը՝ սփոփիչք կամ տխրականք, ընդօրինակած գրքերուն վերջը աւելցնելով. և որոց ժամանակագրական կարգի վրայ առնուած ամբողջութիւնը՝ պատմական տեղեկութեանց բովք մը կրնան կազմել։ Քանի՜ քաղցր էր և մխիթարական, — մանաւանդ ժամանակաց և դարուց տխրութենէն լքելոց և տրտմեցելոց, — արտասուալից աչքերով թափառիլ անոնց մէջ, ու նախնեաց փառաւոր ժամանակաց, առաքինութեան՝ գիտութեան և քաջութեան դարուց սխրալի այլեւայլ յիշատակաց հանդիպիլ։ Օրինակ իմն, մեր բարեպաշտ ու աստուածասէր թագաւորաց համար գրուած վերը յիշուած Ցայսմաւուրաց մէջ կարդալ հետագայ տողերը՝ և իրաւամբ սքանչանալ այն նշանաւոր անձանց վրայ որ գիտէին արութեամբ նահատակիլ ի պատերազմունս իրենց հայրենեաց պաշտպանութեանն և ապահովութեան համար, ու երկրաւոր փառաց մէջ չմոռնալով զերկինս, զէնքն առ ժամանակ մի մէկդի դրած ատեննին՝ կը զմայլէին երկնաքաղաքացի առաքինեաց վարուց ընթերցմամբ. «Տէր Աստուած վայելել տացէ զգիրքս թագաւորին մերոյ Աւշնի, և որդւոյ նորա Լեւոնի»։ — «Կեցո, Քրիստոս, զթագաւորս Աւշին և զորդի նորա Լեւոն զօրութեամբ քով»։ — «Տէր տայ յաղթութիւն բարեպաշտ թագաւորին մերոյ Օշնի». — Տէր Յիսուս Քրիստոս զօրացուցանէ զբարեպաշտ և զաստուածասէր թագաւորն մեր Օշին և զգեղաբոյս մանուկն իւր Լեւոն առաւել քան զառաւել, և քան զամենայն զօրս իւր զօրացուսցէ Քրիստոս ի վերայ թշնամեաց իւրոց»: Երբ առ սուրբ կոյսն դառնալով կը մաղթէ. «Մայր սուրբ, բարեխօսեա առ Քրիստոս վասն բարեպաշտ և տօնասէր թագաւորին մերոյ Օշնի, յաղթող լինել ընդդէմ հակառակորդ թշնամեաց խաչին Քրիստոսի»: – Սուրբ և տօնելի ծննդեամբ Մօր քո Քրիստոս զօրացո՛ զնորոգ օծեալ բարեպաշտ թագաւորս մեր Աւշին, և զդեռաբոյս մանուկն իւր զԼեւոն»: Յիշելով և յիշատակելով զսուրբն Գրիգոր Լուսաւորիչ. «Տէր Յիսուս Քրիստոս քահանայապետ յաւիտենից, քահանայապետիւ քո և վկայիւ բարեխօսութեամբ և ամենայն սրբոց զոր յիշատակեցաք յայսմ ամսի, զօրացուսցանէ զբարեպաշտ և զաստուածասէր թագաւորն մեր Աւշին, և զդեռաբոյս մանուկն իւր զԼեւոն առաւել քան զառաւել. և զամենայն զօրս իւր զօրացուսցէ Քրիստոս ի վերայ թշնամեաց իւրոց»: – Զսուրբ վկայուհին Հռիփսիմէ. «Հարսն Քրիստոսի, որ վերափոխեցար այսօր վկայական մահուամբ գլխոյ զարդարեալ նստար ընդ աջմէ երկնաւոր թագաւորին, զծնեալքս ի կուսական երկանցդ՝ զեկեղեցին Հայաստանեայց, որք վերապատուեմք զքեզ տօնախմբութեամբ, ընկալ ի պարս քո յերկնաւոր առագաստիդ. և յիշեա առ Աստուած զբարեպաշտ թագաւորն մեր Աւշին և զորդին իւր Լեւոն՝ զօրացուցանել զնա ըստ կամաց իւրոց»: – Զսուրբ թագաւորն Տրդատ. «Բարեխօսութեամբ սուրբ թագաւորիս, երկնաւոր թագաւոր մեր Քրիստոս, զօրացո՛ զբարեպաշտ ծառայն քո զԱւշին թագաւոր Հայկազեանց», և այլն:

Այսանկ պատմական յիշատակարանք ուրիշ գրչագրի մը մէջ. Յուն. ԻԲ. «Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս Զապել թագուհի առաջինն»: – Յուն. ԻԳ. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս պր. Թորոս՝ Լեւոն թագաւորի եղբայրն որ սպանաւ յանօրինաց»: փետր. Ա. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս պարոն Ըռովբէն յազգէն

Բագրատունեաց որ էառ զԿիլիկիայ և կայ ի Կաստաղաւնն»: – Մարտ Զ. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս Սմբատ թագաւորն որդի երկրորդ Լեւոն թագաւորին և կայ ի Ներքըրունթն»: – փետր. Զ. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս Լեւոն թագաւոր երկրորդն, որոյ ողորմեսցի նմա Տէր»: – Մարտ. Ը. «Յայսմ աւուր փոխեցաւ ի Քրիստոս պարոն Կոստանդին որդի Լեւոն թագաւորի, և կայ ի Կոստանդինապաւլիս»: – Ապրիլ Է. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս տղայն Ստէփանէ որդի երկրորդ Լեւոն թագաւորին և կայ ի Դրազարկն»: – Մայիս Բ. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս առաջին թագաւորն Հայոց Լեւոն»: – Մայիս Ե. «Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս թագաւորն Հայոց Գա՛գիկ որ սպանաւ յորդւոցն Մաթալէի»: – Մայիս Զ. «Յայսմ...քաջ և յաղթող պարոն Ըռովբէնն ազգական թագաւորին Գագկայ»: Կը թողունք ուրիշ ասոնց նման յիշատակարանները, որոնք կարծես թէ մեր արքայազանց լռիկ ու խաղաղաւէտ հանգըստարանները կը փոխադրեն զմեզ:

Շատ անգամ ալ՝ քաղաքական իշխանութեամբ ձոխացեալ ու եկեղեցական նուիրապետութեան դասակարգին մէջ իրենց արդեամբք և սրբութեամբ փայլեալ նշանաւոր ու փարելի անձանց ինկադրոշմ գրութեանց կը հանդիպինք, որով բազմապատիկ կ՚առաւելու զանոնք ամփոփող գրչագրաց յարգը: Ռուբինեան արքունեաց ժամանակներէն մինչեւ առ մեզ հասած քանի մը հրովարտակաց տակ՝ Լեւոնի առաջնոյ, Հեթմոյ, Լեւոն երկրորդի ինքնագիր ստորագրութիւնքը տեսած ու կարդացած ատեննիս, անմարթ է որ մտքով չյափշտակուինք այն արքունեաց մէջ՝ անցեալ փառաց և մեծութեան յուշարարք, ուր այդպիսի բարձրագոյն վաւերացուցմանց գործեր կը կատարուէին: Այսպէս չեն կրնար անզգայ մնալ սիրտք և աչք երբ հռչականունն Սմբատայ գունդստապլի, Պաղտինի՝ Հեթմոյ արքայազարմ իշխանաց՝ բուն իրենց ձեռքով, կամ իրենց համար գրուած մատենից հանդիպլին, և որ իրենց իշխանական ձեռքերէ անցեր են։

Կարելի չէ դարձեալ հետևեալ տողերն ընթեռնուլ՝ առանց սրտից իրաւացի յուզման՝ երբ կը յիշենք թէ զանոնք խորհողն ու մելանաւ արտադրողն եղած է՝ անմահականն և սիրելին Ներսէս Լամբրոնացի, իր սուրբ և օրհնաբաշխ ձեռքովն։

«Փառք և գոհութիւն Նմա որ սկիզբն է և կատարած ի նուաստ վաստակաւորէ Ներսիսէ։ Տառապեալ Ներսէս, վրիպեալ յառանձինն խոկմանէ. վերակացութեամբ Տարսոնի քաղաքին և որ ի Նմա մեծի եկեղեցւոյն պաշտամամբ. զբաւեալս իմոյ զբաղմանցն առացայ զվաստակ գրչութեան ի մատեանս աստուածային, լեզուաւ բազում անգամ զքաղաքականն ընլով հոգս, և հիւսմամբ ձեռին և մտաց ատ զեգերելով՝ զընականն և զկրթականն խոկմամբ յաստուածայինս կերակրելով զոգի. ո՜հ ո՜հ, թերևս ըստ մեծ Քրիստոսի գթութեանն պատահեսցայց ի զերկնից արքայութիւնն բանաբարողաց. ի թու″ ՈԽԴ» (1195)։

Միւս յիշատակագիր մ'ալ նոյն սուրբ և համբուրելի ձեռաց. «Փառք ամենասուրբ Երրորդութեանն, ամէն։ — Ի թու″ ՈԻԴ (1175) աւարտեցաւ հիմն հաւատոյ գիրս Պարապմանց՝ զոր իմ Ներսիսի տրուպ և անարժան բանաւորի՝ ի վարժումն իմաստից գոլով ընթերցա ընդ բազում բանս սրբոց և զսրբոյն Կիւրղի քննութիւնս ուղղափառ հաւատոյ՝ և ի դիպող ժամանակի եկեալ ի հայրենի աշխարհս՝ սկիզբն եառ առնել ամին ի ձեռն պաշտաւնակցի եղբաւր մեր Յովսէփայ՝ և ձեռամբ իմով աւարտեցաւ ի գձուձ և ի մրձոտեալ աւրինակէ։ Ընդ որ յոյժ գտանես և զաւգտաբանս աւրէնս եկեղեցւոյ»։

Երրորդ մ'ալ ի Փարիզեան մեծ մատենադարանի՝ Նոր կտակարանաց յունարէն օրինակի մը մէջ, և դիմացը ի հայ գրուած ի նոյն սրբոյ Լամբրոնացւոյն՝ հետևեալ համառօտ յիշատակարանաւ. «Ներսէս նուաստ եպիսկոպոս Տարսոնի, սիրով վաստակաւոր ի սուրբ մատեանս, զոր ծերացեալ գտի ըստ Հելլենացւոյդ, և նորոգեցի ըստ հոգւոյդ շնորհի աղաւթից ի վայելողացդ լինիմ արժանի»։

Ուրիշ՝ թէ արքունական տոհմիը, և թէ նուիրական բարձր աստիճանաւ հռչակաւոր և մեծանուն անձի մը՝ Յովհաննու Արքայեղբօր ձեռագիր գրչութեանց մէջէն հետևեալ քանի մը տողեր։

Աւետարանի մը յիշատակարան. «Շնորհիւ տեառն և ողորմութեամբ կատարեցաւ սուրբ աւետարանս ի յընդիր աւրինակէ, ի վայելումն աստուածասէր իշխանին պարոն Սմբատայ որդւոյ հանգուցեալ և բարեպաշտ իշխանին պարոն Կոստայ, և հանգուցեալ մաւրն իւրոյ տիկին Շահանդխտին, և հանգուցեալ եղբարցն պարոն Բակուրան և պարոն Կոստանդ։ Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ սուրբ և ընտրեալ աստուածահաճոյ արքեպիսկոպոսին սուրբ Ուխտին Գռներոյն տէր Յոհաննէսի, որդի աստուածասէր և բարեպաշտ իշխանաց իշխանին հանգուցեալ ի քրիստոս պարոն Կոստանդնայ Թագաւորահօրն։

«Գրեցաւ սա ի հայրապետութեան տեառն Յակոբայ, և ի թագաւորութիւնն Հայոց աստուածասէր և բարեպաշտ իշխանին Լեւոնի։ Գրեցաւ ի մեծ թուակ. Հայոց ՉԻԷ» (1278)։

Յաւարտ նախադրութեանն Մատթէի. «Երջանկացդ պարու հայցեմ, յիշել զեղկելի ոգիս ի բարին Քրիստոս. զՅոհ″ եպիսկոպոս, և զծնողսն իմ, և Աստուած զձեզ յիշեսցէ»։

Ի վերջ աւետարանին Մատթէի. «Բազմամեղ և դատապարտ ոգւոյ գրողիս Յոհ″ եպիսկոպոսի թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ տեառք Նորա»։

Ի վերջ աւետարանին Մարկոսի, «Զեղկելի ոգիս զՅոհ. եպ″ զարքաեղբայր Հայոց, զգրող սորա և զստացող՝ որք ժառանգէք զսա կամ գաղափարէք, յիշեցէք զծնողսն մեր, և զընաւ զարմն միաւք հանդերձ. զի յոյժ տանջիմ յուղղոյն գիտ. և զձեզ տէր յիշեսցէ. ամէն»։

Այս ինկագիր յիշատակարանաց մէկ քանին՝ ճիշդ

Նմանահանութեամբ կը տեսնեն ընթերցողք ի հանդիպոյ գրուած պատկերին մէջ։

⁂

Հայերէն գրչագրաց գլխաւոր և պատկառելի թուով աւանդապահք են ազգային երկու պատմական վանաց Մատենադարանք Էջմիածին և Երուսաղէմ. անոնցմէ ետքը Մխիթարեան ուխտին Մատենադարանն ի Ս. Ղազար, և ի Վիեննա. (կար նաև) Անտոնեանց՝ ի Միջագիւղ Կոստանդնուպոլսոյ. փարիզու ազգային Մատենադարանն, այլ և այլ վանորայք ի Հայաստան, Բրիտանական Մուզէոնն ի Լոնտրա, Վատիկանեան գրատունն ի Հռոմ, կայսերականն ի Վիեննա, արքունականն ի Մոնաքոյ, և այլն։

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Հայերէն լեզու։ — Իր ծագումն և սկզբնաւորութիւն ըստ ազգային պատմութեան։ — Արդի բանասիրութեան կարծիք նոյն խնդրոյն վրայ։ — Հայկական լեզու յառաջ քան զԵ դար։ — Թարգմանչաց դարը։ — Այլ և այլ կերպարանափոխութիւնք լեզուին։ — Հելլենաբանութիւն։ — Հայ լեզուն մինչ ի սկիզբն ԺԳ. դարու։

Ինչպէս ամէն ազգ, այնպէս ալ արդի լեզուք ունին իրենց ծագման պատմութիւնը։ Բայց ինչպէս ազգաց, այնպէս ալ լեզուաց պատմութիւնք՝ իրենց մթին, անորոշ ու երբեմն անթափանցելի կէտերը կ'ունենան։

Նոյնը կրնանք ըսել՝ ինչպէս մեր տոհմային հին պատմութեան, այնպէս նաև անոր լեզուին նկատմամբ. մանաւանդ թէ Հայերէն լեզուին պատմութիւնը, — անոր սկզբնաւորութիւնն, յառաջադիմութիւնն, այլևայլ փոփոխութեանց ենթակայ ըլլալն՝ իրօք կամ կարծեօք, — նոյն լեզուն խօսող ազգին պատմութենէն շատ աւելի մթին կը գտնենք։ Այս մթութիւն՝ պատճառ կու տայ այլևայլ կարծեաց, որոնք իրարմէ քիչ կամ շատ ընդունելութիւն գտած են առաջի հմտից և բանասիրաց։

Մենք՝ քանի որ բանասիրութիւնն իր վերջին և վճռական խօսքը չէ կրցած ըսել այս խնդրոյն համար, երկու տեսակէտով խօսինք անոր վրայ՝ համառօտիւ։

Ա. Հայ լեզուին ծագումն և սկզբնաւորութիւն՝ ըստ ազգային պատմութեան և աւանդից։

Բ. Արդի եւրոպական՝ և մասամբ նաև ազգային բանասիրութեան կարծիք նոյն խնդրոյն վրայ։

⁂

Նախ ըստ ազգային պատմութեան։ — Հնոց մէջ՝ բաց ի Խորենացւոյն ուրիշ մը չենք գտներ մեր ազգին ծագման և սկզբնաւորութեան խնդրով զբաղող. մանաւանդ թէ այն նշանաւոր պատմագրէն ետքը եկողք՝ գրեթէ ամենքն իրենց պարտք մը համարած են իրեն հետևիլ, նոյն կարծիք ունենալ և աւանդել։

Այս հետևողութեամբ վարուած էր նաև ազգային նոր բանասիրութիւնն ու պատմութիւնն մինչև դարուս կէսը։ Իսկ օտարք՝ որ մինչև դարուս սկիզբը կամ բոլորովին զուրկ, և կամ ամենաքիչ տեղեկութիւն ունէին ազգերնուս, որով և լեզուին ծագմանը վրայ, բանադա-

տուեր են իրենց ծանօթ, բայց յաճախ անստոյգ և կեղակարծ աղբերաց մէջ մերթ ընդ մերթ փնտռել զայն· և հմտագոյնք՝ նախապատիւ համարած են, առանց յամենայնի իրեն համաձայն ալ երեւնալու, խորենացւոյն հեղինակութիւնը, որուն գրուածքը երկու դարէ ի վեր լատինական թարգմանութեամբ ծանօթացած և մեծարուած էր յարեւմտեայց։

⁂

Լեզու մը չի կրնար ձեւանալ՝ մինչեւ որ իրմէ առաջ ձեւացած չըլլայ նոյն լեզուն գործածող ժողովուրդը· ուստի և հայ լեզուին սկզբնաւորելուն պատմութիւնը՝ զանիկայ խօսող ժողովրդեան մէջ փնտռելու ենք ։ Քաղաքական պատմութիւննիս ըստ մարիբասեան պատմական համարուած աւանդութեանց, մեզի այնպէս հնութիւն մը կու տայ՝ որ քիչ ազգ, մանաւանդ թէ աւելի որոշ խօսելով՝ թերեւս ուրիշ մը ունեցած չէ, բաց յԵբրայեցւոց։ Հնութիւն մը՝ որուն սկիզբն առասպելներով մթացած չէ· քաղաքականութիւն մը՝ որուն սկզբնաւորելը ծառոց և անտառաց մէջ չի փնտռուիր, ու կրօնք մը՝ զոր սուտ աստուածոց մոլորութիւնը չի պղտորեր։ Մեզի համար ստոյգ ու անտարակուսելի կերպով կ՚աւանդուի մեր սկզբնաւորութիւնն՝ այն համաշխարհական աւերմանէն ետքը զոր սուրբ գիրք կը ներկայացնեն ջրհեղեղի պատուհասիւ և անոր հետեւանք դէպքերով, և ասկից վերջը Աստուած կրկին լինելութիւն կու տայ բոլոր աշխարհի։

Աստուածաշունչ գիրք կը պատմէն թէ տապանը Հայաստանի մէջ Արարատ լերան վրայ նստաւ։ Հոն Նոյ՝ աշխարհի երկրորդ ստեղծման նախահայրը՝ բնակեցաւ· հոն որդիք ունեցաւ ու որդւոցը որդիք· հոն սկսաւ բազմանալ ժողովուրդը, և անկէց սփռուեցան մարդիկ իրարմէ բաժնուիլ, որոշ ազգութիւններ ձեւացնելով։

Չուզելով ալ հետեւող կամ պաշտպան երեւնալ այն կարծեաց որ մինչեւ ջրհեղեղ ազգաց ու լեզուաց միութիւն կ՚ենթադրէ, կամ ընդդէմ մեր համոզման ալ՝ յարգելով անոնց կարծիքը որ կը հակառակին, կը խծբծեն և կամ ըստ քմին՝ սուրբ գրոց յայտնի պատմութիւնն ու խօսքը կը կամակորեն, պէտք է ընդունինք թէ Նոյ լեզու մ՚ունէր զոր կը խօսէր, ի նախնեաց իւրոց աւանդուած։ Այս լեզուն բնականաբար ու յաջորդաբար պիտի անցնէր և տեւական մնար իր սերնդեան մէջ։ Ինքը կրնար ուրիշ տեղւոյ մը ծնունդ ըլլալ և ոչ այն երկրին՝ որուն այսօր Հայաստան անունը կու տանք· բայց սուրբ գրոց անհակառակելի պատմութեամբ՝ Աստուծոյ կամքը իրեն երկրորդ հայրենիք կու տար զԱրարատ· հոն կը հանգչէր զինքը համայնաջինջ ջրոց ողողմանէ փրկող տապանն, հոն կը մատուցանէր իր շնորհակալութեան զոհը, ու իրեն կրկնակի սիրելի այդ հողոյն վրայ տարածուած երկնակամարին վրայ՝ կը նկատէր աստուածային հաշտութեան նշանակ լուսափիւռ բազմագունեան աղեղը։

Ոչ հարկ և ոչ ալ հնարաւորութիւն կրնար ըլլալ որ Նոյ թողու հեռանայ այն տեղերէն· մանաւանդ որ հոն եղած արգաւանդ դաշտերն, օդոյ մաքրութիւնը, ականակիտ ջուրք՝ յորդորամիտ պիտի ընէին զինք իր բնակութիւնն հաստատելու։ Եւ այնպէս ալ ըրած է ըստ ազգային նախնի և մինչեւ մօտ ժամանակներս մեծարուած աւանդութեանց։

Նոյի և իր սերնդոց՝ մինչեւ աշտարակաշինութեան դէպքը, մէկ լեզու ունենալնուն կը վկայէ Մովսէս՝ Ծննդոց գրքին մէջ, որոշ և բացայայտ խօսքով· և կը յաւելու թէ լեզուաց միութիւնը՝ չարեաց պատճառ մը ըլլալուն, Աստուած Սենաարայ դաշտին մէջ ամենուն լեզուն խառնակեց· և այն նորակերպ պատժով՝ ամէն ազգաց սկզբնաւորութիւնն ըրաւ։

Հոս պէտք է զանազանենք նախ, թէ ի՞նչ պատճառաւ մարդիկ սկսան Հայաստանէն ցրուիլ։ — Այս ցրման պատ-

ճառը՝ եթէ մեր հին պատմութեանց մէջ փնտռենք, կը գտնենք որ ոչ ընտանի պատերազմաց և ոչ ուրիշ մասնաւոր առթով մը եղած է, այլ ժողովրդեան բազմանալուն ու տեղւոյն անձկութեանը համար։ Ըսել է թէ Հայաստանի մէջ մնացին այնչափ ժողովուրդք՝ որ իրենց բաւական համարեցին երկրին ընդարձակութիւնը։ Հետեւաբար ասոնց լեզուն անփոփոխ մնաց Սենաարայ դաշտին խառնակութեան մէջ. այն պատիժը՝ յանցանաց պատիժ էր, ու յանցանքին մէջ մաս չունեցողները ի հարկէ պատժէն ալ ազատ կ՚ըլլային։

Մեր Հայկ նահապետը՝ Սենաար գացողներուն հետ էր, ու անոնց կրած պատուհասին կցորդ. բայց երբ աշտարակը կործանեցաւ, Հայկ անմիջապէս դարձաւ ի Հայաստան. և անտարակոյս հոն փոխանակ ինքը ուրիշներուն իր լեզուն սորվեցնելու, ինքը անոնց լեզուն կրկին սորվեցաւ։

Այս դէպքէն վերջը պատմութիւննիս այլ և այլ պարագաներ մեր առջեւը կը դնէ, որոնք լեզուներնուս հնութեանը մեծամեծ և անտարակուսելի հաւաստիք կրնան համարուիլ։ Լեռնադաշտակի մը վրայ տեղ մը կը շինէ Հայկ իր բնակութեանը համար, ու անունը Հարք կը կոչուի. գիւղ մը կը շինէ՝ ու Հայկաշէն կը մնայ այն տեղւոյն անունը. Բելայ հետ կը պատերազմի ի Ձորն Հայոց, ու իր առաջին յաղթութեան յիշատակը մշտնջենաւորելու համար՝ քաղաք մը կը շինէ ու Հայք կը կոչէ. Բելայ ինկած տեղւոյն ալ՝ Գերեզմանք անունը կու տայ։

Նոյն հին և հաւատարիմ պատմութիւննիս՝ որ Խորենացւոյն կամ Մարիբասայ ձեռքով մեզի հասած է, Հայկայ յաջորդաց նկատմամբ ալ այսպէս նման օրինակներ մեզի կ՚ընծայէ. Արագած (լեռը) Հայկայ Արմենակ որդւոյն անունէն ելած. Արմաւիր՝ Հայկազանց հին ու նուիրական քաղաքը՝ Արամայիսէն. Մասիք լերան անունը՝ Ամասիա նահապետէն, Սիւնեաց կամ Սիսական նահանգին անունը Սիսակէն, Շիրակ գաւառին անունը Շարայէն. Գառնի՝

Գառնիկ նահապետէն, Գեղամէն՝ Գեղ լեռը ու Գեղարքունի գաւառն ու ծովը, նմանապէս Փառախոտ ու Ցոլակերտ աւաններուն անուանքը՝ Փառոխ ու Ցոլակ նահապետաց անուններէն. Այրարատ անունն ալ Արա Գեղեցիկ նահապետին անունէն առնուեցաւ, ուզելով նշանակել անշուշտ թէ այն գեղեցիկ ծաղկաւէտ դաշտերը՝ Արայի անպարտ արեամբը արատաւորեցան։

Ասոնց կարգէն են նաեւ մեր ուրիշ նահապետաց անուանքը, որոնց անուանը հետ է նաեւ իրենց նշանակութիւնը. ինչպէս Հաւանակ, Վաշտակ, Առնակ, Նորայր, Զարմայր, Պերճ, Բազուկ, Սկայորդի, Հրաչեայ, Պաճոյճ, Տիգրան, Վահան, Վահէ, և այլն։ Եւ ասոնց անուանը նշանակութիւնը իրենց վրայ ըլլալուն վկայ է Գր. Մագիստրոս. «Ո՞ւր Գեղամայն գեղեցկութիւն . . . ո՞ւր Փառնակ փառացի, ո՞ւր Հաւանակ դիւրահաւան . . . ո՞ւր Նորայր՝ վասն զի նոր արիութիւն ցուցանէր . . . ո՞ւր Հրանտ հրատեսակ. ո՞ւր Յուսակ՝ յուսացեալ զօրութեամբ»։

Այս ամէն օրինակները՝ եթէ չուզենանք մեր հին պատմութեան հետ գեղեցիկ ու փառաւոր անցեալ մը ուրանալ, առանց կարող ըլլալու՝ վերցուածին կամ մերժուածին տեղ՝ մտքերը համոզող բան մը դնել, բաւական պիտի համարուին ի ցուցանել թէ Հայկազանց օրերը, մեր նախնեացը ժամանակ, հայերէն լեզուին գործածութիւնը կար։ Այս խօսքին երաշխաւորութիւնը՝ անոնց խօսած լեզուին՝ մեզի իմանալի լեզու ըլլալն է. կամ թէ ըսենք՝ նոյն նշանակութեամբ հասկնալնին այն բառերը՝ ինչպէս որ մենք հիմայ կը հասկնանք։

Ուստի և այս կարծեաց հետեւողաց և ընդունելի ենթադրուած դրութեանց առջեւ՝ ինքնիրեն կ՚իյնան նոր բանասիրութեան յայտնած այլ և այլ կարծիք՝ որ կ՚ուզեն մեր լեզուն ուրիշ երկրորդական լեզուներէ առաջ եկած համարել, ու անոնց լեզուին մէջ փնտռել մեր լեզուին ծագումը։

Այսով չեն ուզեր մերժել՝ թէ կրնայ կամ ունի մեր լեզուն այլ և այլ նմանութիւն ուրիշ լեզուաց հետ. բայց նմանութիւնք շատ անգամ ուրիշ երկրորդական ու անհրաժեշտ պարագաներէն առաջ եկած կը համարին: Ինչպէս մերձաւոր ազգի մը տիրապետութիւն՝ կրնայ նոյն ազգին հետքը ձգել ընկճած ժողովրդեան լեզուին մէջ. ուսումնական գրաւում մը՝ անկարելի է որ առանց իր նշմարանքը թողու՝ բոլորովին ելլէ այն երկրէն. վաճառականութիւնը՝ որ շատ անգամ այլ և այլ յարաբերութեամբք երկու կամ զանազան ազգեր իրարու հետ կը միացնէ, կրնայ իր ազդեցութիւնն ունենալ նաև լեզուին վրայ: Ինչպէս պարսիկն, յոյնն, արաբացին և անոնցմէ վերջն մեր ազգին հետ վերաբերութեան մէջ գտնուող ազգեր՝ ունեցեր են իրենց ազդեցութիւնը մեր լեզուին վրայ, նաև ընտրելագոյն մատենագրաց երկասիրութեանց մէջ, անտարակոյս նախընթաց ազգք և ժողովուրդք ալ՝ իրենց այլ և այլ յարաբերութեամբք զոր յաջողեր են ունենալ, թողեր են ի մեզ իրենց հին քաղաքականութեան և սովորութեանց հետ՝ նաև լեզուի հետք, և որ փոխանակի կերպով ալ կրնան ենթադրուիլ: Թէ ազգային և օտար բանասէրք՝ ամենահին համարուած լեզուաց վրայ իրենց ըրած համեմատական և բաղդատական քննութեանց մէջ չեն տարակուսիր այս բանիս վրայ. և առանց կարող ըլլալու ճշդել և ստուգել թէ հայերէն լեզուին բուն ծագումն և սկզբնաւորութիւնն ուստի է, Քոսսաքոֆ գտեր և հրատարակեր է բազմաթիւ բառեր բևեռական արձանագրութեանց մէջ, զարմանալիք իրենց նմանութեամբ հայկական լեզուի հետ և զորս հրատարակած է ի փեթրպուրկ իր մէկ ընտիր գրուածոյ վերջը: Պատկանեան՝ հայկական և հին լեզուաց վրայ ըրած հմտական երկասիրութեամբքն պատկառելի հեղինակութիւն, ինքն ալ մասնաւոր գրուածքով մը՝ որ նոյնպէս հրատարակուած է ի մայրաքաղաքին Ռուսաց, ցուցեր է թէ որչափ շատ են հայկական լեզուի մէջ

բառեր՝ որոնց ձայնն ու նշանակութիւն նման է սանսկրիտ, զենտ, պարսիկ, յոյն ու երբեմն նաև լատին բառերու հետ: Այս նմանութիւնք՝ ունեցած են իրենց պատճառները նաև մեր լեզուին նկատմամբ, ինչպէս քիչ ետքը պիտի տեսնենք:

⁂

Անցնինք եւրոպական բանասիրութեան այս խնդրոյս համար յայտնած կարծեացը:

Թէպէտ և ազգային պատմութիւն և հնութիւնք՝ ցարդ չեն ունեցած եւրոպացի գիտնոց խուզարկութեանց մէջ գլխաւոր ու նախնական կարևորութիւն և դիրք մը, սակայն ասիական մեզի դրացի ու մեզմէ շատ աւելի հնագոյն յիշատակներ թողուցող ազգաց և ժողովրդոց, ու անոնց բնակութիւնն ծածկող աւերակաց ու չինուածոց մնացորդներուն վրայ իրենց քննութիւններն ըրած ատեն, հանդիպեր են նաև արդէն հին Յունաց և Հռովմայեցւոց շատ լաւ ծանօթ մեր ազգին անուանն ու երկրին. և այդ անունն ու երկիր՝ արթնցուցեր է հետաքրքրութիւն մը՝ անոնց հին աշխարհի պատմութեան մէջ բռնած տեղւոյն և դասակարգութեան:

Իրենց համար՝ ազգային աւանդից մեզի և մեր լեզուին համար տուած ծագումը՝ ի պատմական հաւաստեաց զուրկ, մանաւանդ թէ երբեմն անոնց ընդդիմամարտ ենթադրութիւնք են, և պարզապէս իղձք՝ որ իմաստասիրաբար արժէք մը չունին: Սակայն ասով հանդերձ՝ նկատելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, չեն տարակուսիր ամենահին ժամանակներէ ի վեր՝ մարդկային ազգի բնակութեան որրան համարիլ այդ երկիրը: Իրենց մեր ազգին և լեզուին սկզբնաւորութեան և ծագման նկատմամբ ունեցած այլ և այլ կարծիք՝ այսպէս համառօտուած կը գտնենք ազգային բանասիրի մը նորագոյն երկասիրութեան մը մէջ. « Որովհետև, կ'ըսէ, հայերէնն՝ հնդեւրոպական կամ արիական կոչուած լեզուաց կարգէն է, որպէս վկայեն մեր լեզուն քննող գիտունք, կարեմք հետեւցընել նաեւ թէ Հայք են մարդկային ազգին հնդեւրոպական կամ արիական կոչուած ցեղէն, յորմէ են և բազումք ի հին և ի նոր երեւելի ազգաց զոր օրինակ Հնդիկք, Արիք, Յոյնք, Լատինք, գերմանական և սլաւեան ցեղեր. այսինքն այժմու գրեթէ եւրոպական ազգաց բոլորը:

« Ոմանք յարդի հնարանից՝ զՀայս համարին ծագմամբ փիւնիկեցի »: « Ուրարդայ (Արարատայ) լեզուն՝ ասէ Բոլխաըն, չունէր ամենեւին խնամութիւն ընդ այժմու հայերէնին: Այս լեզուին խօսող ցեղն՝ թուի գաղթեալ ի Փռիւգիոյ, և առ սակաւ սակաւ գրաւեալ զերկրին արեւելեան մասին Արմենիոյ, վանելով կամ ընդ իւր միացընելով զհին Ուրարդիս, և փոխանակ նոցա դնելով զանուն, զլեզու, զկրօնս և զաւանդութիւնս իւր »:

«Լընորման, ուրիշ հնարան մը, երկու տարբեր գաղթականութիւններ կը դնէ յԱրմենիա՝ այլ և այլ ժամանակ: Զառաջին գաղթականութիւնն նոյնացնելով ընդ Հայկայ Խորենացւոյն, կը համարի Տիգրիսի և Եփրատայ հովիտը (Բաբելոն) բնակող հին Քուշաններէն ցեղ մը, ի Հերոդոտոսէ Ալարոտ կոչուած, զոր Ասորեստանցւոց Ուրարդին և Եբրայեցւոց Արարատը կը համարի: Այս Քուշանեան ցեղէն մնացած կարծէ Լընորման Արմենիական կոչուած սեպագիր արձանագրութիւններն որ ի Վան: Զերկրորդ գաղթականութիւնն կոչէ Լընորման՝ Արմենեան, յանուանէ Արմենակայ, զոր համարի ոչ իբրեւ պատմական անձն, այլ իբր անուն ազգին՝ անձնաւորեալ: Քան զառաջին գաղթականութիւնն, ասէ, նշանաւոր է երկրորդս այս արմենական գաղթականութիւն, զոր ազգային աւանդութիւնն անձնաւորեալ է յԱրմենակ՝ իբրու ազգական Հայկայ:

«Լուի Տըրոպէր կ'ենթադրէ քան զառաջին գաղթականութիւնն Լընորմանի աւելի հին Քուշանեան գաղթականութիւններ յԱրմենիա. իսկ զհայկեան գաղթականութիւնն համարի սեմական, որ հալածելով զՔուշանեանս անդր քան զկուր գետ դէպ ի հիւսիս, ինքն կալաւ զհարաւային մասն, զհովիտն Երասխայ յարեւմտից Մասեաց մինչեւ ի լերինս Կորդուաց: Այս սեմական գաղթականութենէ մնացած կը համարի Տըրոպէր արմենական կոչուած սեպագիր արձանագրութիւնս Վանայ: Յետ հայկեան կամ սեմական գաղթականութեան, իբր ի միջոցի Զ դարու նախ քան զՔըրիստոս, կը դնէ վերջին հնդեւրոպական արմենական գաղթականութիւն մի ի Փռիւգիոյ. և այս վերջին գաղթականութենէն եկած կը համարի զՀայս և զհայերէն լեզու:

« Այս ենթադրութիւնք՝ կը ցուցնեն խորին պատմական հնութիւն, և չեն ամենեւին առանց պատմական հիման: Տարակոյս չկայ թէ հին նախապատմական ժամանակ, յառաջագոյն իսկ քան զվերջին հաստութիւնն Ասորեստանի կամ Նինուէի, միջին և արեւմտեան Ասիոյ ինչպէս ուրիշ կողմերուն, նոյնպէս Հայոց, մանաւանդ հարաւային (Վանայ) կողման բնակիչք, էին մարդկային ազգին այն հին քաղաքականացեալ ցեղէն զոր գիտունք Քամեան և Քուշանեան կ'անուանեն: Թուի ստոյգ, ասէ Լընորման, թէ ի սկզբան Քամեանք ունէին զմեծագոյն մասն արեւմտեան Ասիոյ յառաջ քան զՍեմականս որ վանեցին զնոսա անտի: Հին քաղաքակիրթ ազգաց մէջ, ասէ Րընան, Քուշանեանք և Քամեանք այնպիսի որոշ յատկութիւն մը կը ցուցնեն, և այնչափ դարերով յառաջ են քան զՍեմականս և զԱրիականս, որ կը ստիպուինք ընդունել թէ սոքա եղեն առաջին քաղաքակիրթ ցեղ յարեւմտեան Ասիա և յարեւելս հիւսիսոյ Ափրիկէի՝ յառաջ քան զերեւել Սեմականաց և Արիականաց:...

«Քուշանեանց ի Հայաստան բնակութեան ապացոյց Վանայ մօտ Շամիրամայ գործ համարուած քարափոր չէնքն է. ինչպէս նաեւ արմենական կոչուած սեպագիր արձանագրութիւնք այն կողմանց: Հաւանական է թէ նաեւ Սեմականք բնակած են ի Հայս յետ Քուշանեանց, նախապատմական ժամանակ․ բայց նաեւ հնդեւրոպական ցեղք հին, նախապատմական ժամանակ եկած էին Հայաստան, յառաջ իսկ քան զվերջին հարստութիւնն Ասորեստանի։

« Այլ թէ այս հնդեւրոպական ցեղք փռիւգացի գաղթականութիւնք էին որ եկան ի Հայս ի Զ դարուն նախ քան զՔրիստոս. և թէ Արմէնք, այսինքն Հայք, այս փռիւգացի գաղթականութեան սերունդ են, այս կարծիքն, ըստ մեզ, պատմական հիմ չունի։ Ոչ առ Հերոդոտոսի և Քսենոփոնի որ ժամանակաւ շատ հեռի չէին այս գաղթականութեան ենթադրեալ ժամանակէն, և ոչ այլուր կը գտնենք այսպիսի գաղթականութեան յիշատակութիւն։ Հրէից մատեանք (Աստուածաշունչ սուրբ գիրք), Բաբելոնի առման ժամանակ, առ Կիաքսարու որդւով Աժդահակայ և առ Կիւրոսիւ, այն է 538ին նախ քան զՔրիստոս, յիշեն Արարատեան թագաւորութիւն մը, ընդ որում՝ ըստ Քսենոփոնի, վաղուց դաշնակից էին Մարք։ Վարդան, Տիգրան, Շաւարշ, յատուկ անուանք, որ արիական բառեր են և ոչ Քուշանեան կամ Քամեան կամ Սեմական, Զ դարուն և աւելի առաջ իբրեւ անուանք արքայից և արքայորդւոց Արարատայ թագաւորութեան, կը յիշուին հին յոյն պատմիչներէ (Քսենոփոն, Դիոդոր Սիկիլիացի)։

« Արդարեւ Հայերէն լեզուն հնդեւրոպական լեզուաց արեւմտեան ճիւղին կը վերաբերի մանաւանդ քան արեւելեան արիականին, թէպէտ ի վերջնոյ առատ առած է յետոյ դրացութեամբ զմեծ մասն հարստութեան իւրոյ։ Մեր հնագոյն բառերը և քերականական ձեւք շատ մօտ ազգականութիւն կը ցուցնեն յունարէնի, լատիներէնի և գերմանական ճիւղին հետ․ բայց այս բաւական չէ հաստատելու Ռոլինսոնի և Տըրոպէրի ենթադրութիւնը․ և այս երեւելի հնաբանք ոչ այնչափ լեզուաբանական պատճառներէ որչափ հին յոյն պատմչաց ոմանց խօսքէն առաջնորդուած կը թուին փռիւգացի ծագումն տալ Հայոց։ Հերոդոտոս զփռիւգացիս և զԱրմէնս համարի եղբարս, այսինքն համացեղս․ և Դիոնեսիոս ալիկառնացի կոչէ զԱրմէնս համալեզուս ընդ փռիւգացւոց․ և ի յիշեալ զպատերազմն Քսերքսի ընդդէմ Յունաց, ըստ օրինակին փռիւգացւոց վառեալս և զգեցեալս պատմէ զԱրմէնս ի բանակին Արքայ։ Նաեւ Եւդոքսոս՝ ուրիշ յոյն հեղինակ, հաւանականապէս առ Պտղոմեամբք, նմանաձայն յայտ առնէ լինել զՀայերէնն փռիւգերէնի։ Գիտել պարտ է սակայն զի հին պատմիչք փռիւգացի անուամբ իմանային փոքուն Ասիոյ հնդեւրոպական կամ արիական ցեղերը․ և շատ հաւանական է թէ Արմենիոյ արեւմտեան մասին ժողովուրդք իբրեւ սահմանակիցք փոքուն Ասիոյ, համացեղ և համալեզու էին այն երկրին հնդեւրոպական ցեղին։ Յոյն պատմիչք, հնագոյնքն անգամ ի նոցանէ, ինչպէս Հերոդոտոս և Քսենոփոն, որ յետոյ են քան զԴարեհ Վշտասպեայ, առ որով ոչ միայն Արմենիոյ արեւելեան մասն, Մեծ Հայք, այլ և արեւմտեանն, այն է փոքր Հայք, սահմանակից փոքուն Ասիոյ, կոչեցան Արմինիք կամ Արմենիա, ընդհանուր անուամբ կը կոչեն Արմէն՝ Մեծին և փոքուն Արմենիոյ բոլոր ժողովուրդները։ Ուստի Յոյն պատմչաց խօսքը թէ Արմէնք համացեղ և համալեզու էին փռիւգացւոց, պէտք չէ բոլոր Արմենիոյ ժողովրդոց վրայ առնուլ և հետեւցնել թէ Հայք փռիւգացի գաղթականներ էին, և թէ Հայերէն լեզուն որ Մեծ Հայոց և բուն Արարատեան ցեղին լեզուն էր՝ փռիւգական է »[1]։

⁂

Ի՞նչ է եւրոպական բանասիրութեան կարծիքը մեր լեզուին ծագման վրայ։

Եթէ ընդհանրապէս ուրիշ հին լեզուաց համար ծանր ու դժուարին աշխատանք է գիտութեան՝ անոնց սկզբնաւորելուն և յառաջադիմութեան խնդիրը, ծանրագոյն եւս հայկական լեզուիս նկատմամբ։

---

[1] ԳԱՐԱԳԱՇ (Ա․ Մ․)․ Քննական պատմութիւն Հայոց, Հատ․ Ա․ 7-10․

Հին և մեզի դրացի կամ մերձաւոր ազգաց և ժողովրդոց լեզուին հնութիւնը և ծագումը փորձելու, քննելու և ուսումնասիրելու համար՝ պատմական ստոյգ կամ կեղակարծ համարուած աւանդներէ աւելի բան մը կայ. վաղեմի և պատկառելի մատենագրութեանց հատուածք, և մերթ նաև նախանձելի ամբողջութիւնք. և ուր ասոնք կը պակսին, հին դարերէ մինչև առ մեզ հասած, և մինչև հիմա զգուշաւոր խնամօք պահպանուած քարագրոշմ արձանագրութիւնք, որոց վրայէն դարեր և ժամանակք անցեր են, և որք իրենց լռութեամբն, ու մինչև երբեմն նաև անթարգմանելի կերպարանքովն, դեռ լոյս մը կրնան ծագել՝ ինչպէս պատմութեան, այսպէս ալ նաև լեզուաց և անոնց կրած յեղափոխութեանց վրայ. ուր ընդհակառակն մեր հայրենիք, երկար, անգութ ու յարատև յարձակմանց և աւերմանց տխուր արգասիքն և արդիւնք՝ մինչև իրենց անշունչ, կիսակործան ու հետախաղաղ ծածկուած քարանց վրայ նկատել տալու տխուր դժբաղդութեանն ենթարկած են զմեզ։

Այսպիսի անստուգութեան մը մէջ՝ զարմանք չէ որ անստոյգ, բազմապատիկ և իրարմէ տարաձայն ըլլան նաև մեր լեզուին վրայ կարծիք, թուիք և ենթադրութիւնք նաև առաջի գիտութեան։

«Հնագոյնք յեւրոպացի քննչաց, կ՚ըսէ Րիդդէր, և յանուանէ Շրէօտէր և Ատէլունկ, առ տգիտութեան, չկրցան ծանօթ լեզուաց մէջ տեղ մը տալ հայերէնին. ուստի Պալլի՝ կովկասեան ինքնագլուխ լեզու մը համարեցաւ հայերէնը։ Աւելի հնագոյնք, Ագոլութ և Դրոմլէր, ազգակից համարեցան հայերէնը խալտերէնի, մինչ ինքեանք՝ այս երկու լեզուաց եւս անգէտք էին։ Վաղ ուրեմն Ստեփանոս Բիւզանդացի՝ փռիւգերէնի նման կը համարէր այս լեզուն. հաւանականապէս, ասէ Բէդէրման, վասն զի Արարատ ի գիրս Սիբիլլայից սխալմամբ գրուած է ի Փռիւգիա։ Բայց որովհետև փռիւգերէնն այնպէս անծանօթ էր ինչպէս նմին համացեղ կարծուած հին Թրակերէնն՝ ընդ որում այլք ազգակից համարեցան հայերէնը, հայ լեզուին փռիւգերէնի հետ նմանութիւնը այնչափ անստոյգ է, որչափ կարծիք Ստրաբոնի, որ զՀայս և զԱրիս իսկ ոչ միայն բարուք, սովորութեամբ, մարմնոյ կազմութեամբ, այլ և լեզուաւ կը համարի նմանս ընդ Սեմականաց, Արաբացւոց և Ասորւոց, այս պատճառաւ միայն՝ զի գտանէր զնոսա խառն բնակեալս ի Միջագետս։ Պալլաս հայեցեալ յարդի հայերէնն միայն, դրաւ Հայոց լեզուն ի կարգս Դուրանեան լեզուաց, իբր միջին իմն ի մէջ Թաթար և Թուրք բարբառոց և կովկասեան լեզուաց։ Լաքրոզ համարելով զհայերէնն նոյն ընդ հին լեզուին Մարաց, աւելի մօտեցաւ ճշմարտին. մանաւանդ զի ըստ Նայմանի՝ մեծագոյն մասն բառից Մարաց որ գտանին առ Հերոդոտեայ կը մեկնուին հայերէնով։ Զարմանք չէ այսչափ հակառակ կարծիս տեսնել զհայերէնէ որ հարևանցի միայն ճանչցըւած էր, մանաւանդ այնպիսի ժամանակ, մինչ Քլաբրոդ անգամ ձայներու արտաքին նմանութենէն միայն կը գատէր լեզուաց ազգականութիւնը, զոր գիտել՝ լեզուին բովանդակ քերականական կազմութենէն միայն հնար է։ Բէդէրման եղև առաջին որ եցոյց հաւաստեաւ զազգականութիւն հայերէնին ընդ հնդեւրոպական լեզուաց։ Հըմուտ լեզուարանն Բոդդ կ՚ընդունի զայս, և Նայման կը համարի իբրև արդէն ապացուցեալ»։

«Բայց ի՞նչպէս ճանչցան գիտունք թէ հայերէնն տոհմակից է լեզուաց հնդեւրոպական ցեղին։ Սեմական լեզու մը ճանչնալ, որպէս ասէ Րընան, դիւրին է քան հնդեւրոպական մը. բայց և այնպէս հնդեւրոպական լեզուք եւս ունին որոշ նշաններ որ չեն կրնար վրիպիլ գիտնական մտադիր դիտողութենէ. Հայերէնի ցեղակցութիւնն ուրիշ հնդեւրոպական լեզուաց, հնագոյնից և հեռաւորագունից հետ անգամ, որպիսի են սանսկրիտ, յոյնն և լատին, այնպէս յայտնի և ներքին է, զի նմանութիւնն որ կայ ի մէջ սոցա և հայերէնին՝ չկարէ լինել արդիւնք ոչ պատահման և ոչ փոխառութեան։

«Հայերէնի այս նմանութիւնը կը տեսնուի հնդեւրոպական լեզուաց երկու գլխաւոր տարրերէն․ այսինքն բառերէն և քերականական ձեւերէն միանգամայն։... Թէպէտ այսպէս բնութեամբ հնդեւրոպական, և սակայն հայերէնն այնպէս ուրոյն է և անկախ, իբրև զսանսկրիտն, զյոյն և զլատին ի համացեղից իւրոց, մինչև յիրաւի է կոչել զնա յատուկ անուամբ իբրև արմենական ճիւղ ի մէջ հնդեւրոպական ցեղին։ Չունենալով հնագոյն դարերէ գրաւոր մնացորդներ, ենք և պիտի մնանք ի հարկէ անգէտ, թէ ինչ փոփոխութիւններէ անցաւ և ինչ ազդեցութիւններ կրեց հայերէնն յընթացս, չէ յայտ, որչափ դարուց․ մինչև հասաւ յայն աստիճան յորում կը գտնենք զնա յանգին մնացորդս առաջին Հայ մատենագրութեան անուանեալ ոսկեղէն դարուն, որ է առաջին կէս Ե դարուն, իսկ և իսկ յետ գիւտի հայերէն դպրութեան։ Նայելով սակայն գիտնական անաչառութեամբ մատենագրական յատկութեան վերոյիշեալ մնացորդաց լեզուին, անհնար է չսքանչանալ։ Հարստութիւն, մաքրութիւն և ընտրութիւն, բանաստեղծական զարդ, ճաշակ և փիլիսոփայութիւն որ կը տեսնուին այն չքնաղ մնացորդաց լեզուին մէջ՝ կ'ենթադրեն ազգային քաղաքական և մտաւոր բարձր վիճակ մը, որչափ կրնայ մտածուիլ յայնպիսում հնութեան ժամանակի»[1]։

Ուրիշ ազգային բանասէր մ'ալ․ «Մինչև ցայժմ եղած խուզարկութեանց եզրակացութիւնները հետեւեալ կերպով կրնանք ամփոփել․ Հայկական լեզուն՝ իրանեան և սլաւո–լիթուանեան խմբերուն մէջտեղը բռնելով՝ հնդեւրոպական լեզուներու անյայտացած (գուցէ փոքր–ասիական) խմբին անկախ ներկայացուցիչն է։

---

1. Քննական պատմութիւն Հայոց, Հատ. Ա. 279–281.

«Դեռ ժամանակը եկած չէ վճռական պատասխան մը տալու այն հարցման թէ հնդեւրոպական լեզուներու ո՛ր խմբին մէջ պէտք է դասել հայկական լեզուն։ Վինտիշմանի ժամանակներէն սկսեալ հայերէն լեզուի համեմատական ուսումը մեծ յառաջդիմութիւններ ըրաւ համեմատութեան միջոցներու ճշդութեան, քննուած բառերու քանակութեան և ուրիշ մանրամասնութեանց կողմանէ։ Իսկ ինչ որ կը վերաբերի զմեզ ամենքնիս զբաղեցնող խնդրոյն լուծմանը, պէտք է ըսել որ հազիւ վերջին երեսունուիրեք տարիներու մէջ շատ առաջ գնաց։ Գիտնականաց վերջին ժամանակներուս հանած եզրակացութիւններէն կ'երեւնայ թէ ոմանք հայերէն լեզուն հաստատապէս իրանեան խմբին կը վերաբերեն, ուրիշները՝ եւրոպական խմբին․ այսինքն՝ խակապէս ըսելով ոչ մէկին և ոչ միւսին․ որովհետեւ ոչ բառերու կազմութեամբ, ոչ ձայնական առանձնութիւններով և ոչ ալ քերականական ձեւերով՝ անոնցմէ մէկուն հետ կատարեալ նմանութիւն չունի․ այլ մէկ դէպքի մէջ՝ եւրոպական խմբի, իսկ յայլ՝ իրանեան խմբի յատկանիշն ունի։

«Տըլակարտ՝ հայ լեզուի կազմութեան մէջ քանի մը ժամանակ որոշած է։ Հայերէն լեզուն՝ երեք խառն մասերէ բաղկացած է, կ'ըսէ․ և են հայկականն, արշակունին (փէհլէվի), և սասանականն։ Հայ լեզուի արշակունի և սասանական տարրերը՝ յայտնի ցոյց կու տան հարկաւ իրենց իրանեան բնաւորութիւնը․ բայց և բուն հայկական լեզուն այն գերդաստանին կը պատկանի՝ որուն ամենահին ներկայացուցիչը Զենտի լեզուն է։

«Հիւպշման՝ իր հետազօտութիւններէն հետեւեալ եզրակացութիւնը կը հանէ․ հայկական լեզուն՝ սլաւո–լիթուանեան լեզուներու շրջանին մէջ՝ իրանեան և սլաւո–լիթուանեան լեզուներուն մէջ կանգնած է։

«Բայց հայկական լեզուին որ խմբին մէջ դասելու խնդրոյն վերջնական վճիռ մը տալ կարող ըլլալու համար՝ հարկ է լաւ կերպով ուսումնասիրել այս լեզուի բոլոր բարբառները. այլապէս հետազօտութեան վրայ ի գործ դրուած բոլոր աշխատանք՝ միակողմանի կ'ըլլան։... Առանց այսպիսի նախապատրաստական աշխատութեան՝ շատ երեւոյթներ, նոյն իսկ գրական (գրաբար) լեզուի բաղադրութեան և կազմութեան մէջ անբացատրելի կը մնան»[1]։

Թէպէտ արդի հայ գաւառական բարբառներու վրայ՝ վերջի տարիներս այլեւայլ գիտական հետազօտութիւնք և հրատարակութիւնք եղած են թէ յազգայնոց և թէ յօտարաց, և մեր նոր մատենագրութեան կարեւոր մէկ պակասը լեցուցած, սակայն շատ աւելի ցանկալի էր որ այսօր ունենայինք այն բազմադիմի բարբառներն, զոր Հայաստան երբեմն խօսեր էր, զոր ինքն իսկ Երզնկացին իր դարուն մէջ ամենակարեւոր կը համարէր գրաբար լեզուի հմտութեան և ստուգաբանութեան համար։ Վասն զի ինչպէս յունական լեզուն ունէր իր զանազան բարբառները (dialecte), այսպէս իբր ամենայն ազգի բնական տուրք, ունէր նաեւ Հայաստան. ասոր նոյն բազմահմուտ մեկնիչ քերականին կը վկայէ. «Եւ դարձեալ զքոյ լեզուիդ գիտելն բաւանդակ զբառս եզերական, որպէս զԿորճայն և զՏայեցին, զԽութայինն և զՉորրորդ հայեցին, և Սպերացին և զՍիւնին, և զԱրցախայինն, այլ մի միայն զմիջերկրեայն և զոստանիկն. վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեանն, այլ և օգտակարք ի պատմութիւնսն, զի մի վրիպեսցի՝ անընդել գոլով լեզուացն»։

Մեր այս համառօտ բովանդակութիւնը կը ցուցնէ՝ որ եթէ առաջնոց կարծիք պարզապէս ենթադրութեանց վրայ հիմնուած համարուին, եւրոպական բանասիրութիւնն ալ դեռ հաստատուն կերպով մը խնդիրը լուծելու պատասխանը տուած չէ։

⁂

Հայկական լեզուն այլ և այլ վիճակներ ունեցած է։ Երբեմն պարզապէս խօսուած լեզու մը եղած, առանց գրաւոր մատենագրութեան, երբեմն ալ գրաւոր մատենագրութիւն ունեցող։

Առաջին վիճակը յանստոյգ ժամանակաց մինչեւ ի Վաղարշակ եղած է. վասն զի անոր օրը երեւցաւ Մարիբաս, ու հայկական մատենագրութեան շրջանը իրմով սկսաւ։ Ըսել է թէ ամբողջ Հայկազանց, Նահապետական ու թագաւորական իշխանութեան ժամանակ՝ բուն գրաւոր մատենագրութիւնը պակսած է մեր մէջը։ Սակայն կարելի՞ է այնպիսի երկարատեւ թագաւորութիւն մը անգիր քաղաքականութեամբ ենթադրել։ Արդեօք պարզ մտքի յիշողութեան աւանդուած օրէնքը՝ կրնա՞ր այնպիսի երկայն իշխանութեան մը տեւողութիւն տալ։ Ասիկայ ալ մութ խնդիր՝ և իրաւամբ տարակոյս վերցնող հարցում մ'է։ Բայց Պատմութիւնը՝ կարծես թէ կերպով մը երաշխաւորութիւն կու տայ այս կարծեաց։ Վասն զի Վաղարշակայ համար կը պատմէ՝ թէ Հայաստան եկած ատեն ամէն բան տակնուվրայ գտաւ. և ոչ իսկ կրցաւ այն հին ու մեծ ազգին պատմութեան հետքը գտնել որուն վրայ իշխելու սահմանուած էր, ու ստիպուեցաւ ուրիշ մատենադարաններու յիշատակաց մէջ փնտռել։

Վաղարշակայ հետ գրութիւնք ալ կը սկսին երեւնալ։ Անոր ջանից և հետազօտութեանց արգասիք է մեր ամենէն հին ու պատուական՝ և իրաւամբ թագաւորական կոչուած պատմիչը Մարիբաս։ Անոր պատմութեան հատուածներն են՝ զորս Խորենացին իր գրոց մէջ կը յիշատակէ, և որոնց վրայ կրկին խօսելու առիթ պիտի ունենանք. ինչպէս

---

[1] ՊԱՏԿԱՆԵԱՆ (Ք.) Փորձ, ազգային և գրականական միամեայ հանդէս. Դ տարի, Թիւ 3,77.

նաեւ այն երգոց վրայ՝ զոր պատմութիւնը մեր Գողթան գաւառին երգողաց ու քնարին կ՚ընծայէ, և որոնք հայկական Մուսային առաջին և գեղեցիկ արտադրութիւնքն են։

Ասոնցմէ ետքը կու գան Լուսաւորիչ և Ագաթանգեղոս, և իրենք կը բանան հայ գրաւոր մատենագրութեան ասպարէզը։

Ագաթանգեղոսի ինչ լեզուով գրած ըլլալը թէպէտ և անստոյգ համարուած է, բայց մենք որովհետեւ պիտի ջանանք ցուցնել թէ հայերէն լեզուաւ յօրինեց իր Պատմութիւնը, անոր համար անոր լեզուն ալ կրնանք հայկական լեզուի պատմութեանը մէջ դասաւորել. մանաւանդ թէ անով սկսիլ մեր խօսքը, ինչպէս որ իրաւմբք ինքն եղած է հայ՝ կամ գէթ նոյն ազգին առաջին մեզի ծանօթ պատմագիր։

Ընտիր՝ բայց թերեւս ոչ միշտ զերծ ի մթութենէ լեզու մը կը գործածէ Ագաթանգեղոս. իր գրոցը մէջ հայերէն լեզուն՝ դեռ իր պատանեկութեան հասակին մէջ կ՚երեւնայ. եռանդուն և աշխոյժ պատանեակ մը որ իրեն գեղեցիկ ապագայ մը կը խոստանայ. մթութիւն մը կ՚երեւնայ, որ միանգամայն կ՚իմացնէ թէ ժամանակաւ իր պայծառութիւնը պիտի ունենայ։ Զրուցածնիս՝ բուն իսկ Ագաթանգեղայ խօսքերովը հաւատարմացնենք։ Կարդանք անոր յառաջաբանին հետեւեալ կտորները։

«Ի մէջ ըմբռնելոցն խորոցն անդնդոցն լցեալ խառնչացեալ խոխոջելովն ահափետ կրեալ զօրհասն դաշակեն. Թէպէտեւ զինքեանս չարժանս տեսանիցեն ի վերայ յաղթ ջուրցն բազմութեան ասանելոցն սարսափելոցն, սակայն զկարողելն առաջի ածեալ ընդ միտ, ջանան զիմագրուեալք ընդ խռովութիւն ահագին ծովուն, զի թերեւս դարձեալ օգտութեամբ զգիտս իւրեանց խնդութեամբ ցուցանեն առ իւրաքանչիւր ընտանիս, և զպարծանս վաստակոցն իւրեանց դրացեացն. զի ուր հարկ է զաղքատութեան անուն յանձանց թափեալ, և զտառապեալ ընտանիսն թափել ի գրաւահարկ իշխանացն բռնութենէ, և յիւրեանց շահիցն բերելոցն հանել զպարտս վտանգին՝ ի լծոյ ծառայութեան թագաւորացն ազատացեալ դատարկացին»։

Նոյն ոճը կը տեսնուի նաեւ Մծբնացւոյն Զգօն գրոցը մէջ, Փաւստոսի Բիւզանդացւոյն պատմութեանը, և աւելի յայտնի և ստորին ոճով՝ Զենոբայ Ասորւոյն երկասիրութեանը։ Բանասէրք՝ այս երեքն ալ յասորի լեզուէ ի հայ թարգմանուած կը կարծեն. և Նորագոյն հետազօտութիւնք և գիւտք՝ զառաջինն՝ այսինքն Մծբնացւոյն ընծայուածը ասորւոյ մը հեղինակութիւն, Փրաատայ կամ Ափրաատայ։

Բայց ինչպէս կրթուած երիտասարդութիւնը՝ անմիջապէս իր մտաւոր բարգաւաճանքը կ՚առնու, և իր ախորժակը կը կրթէ, այսպէս ալ կը տեսնենք նաեւ մեր մատենագրութեանը մէջ։ Դ — Ե դարը՝ հսկայաքայլ անցք մըն է, որ մեծապէս կը զարմացնէ. սակայն ժամանակին կրթութեանը արդասիքն էր այն անցքը, և այնչափ յառաջադիմութեամբ օժտեալ՝ որ ոմանք չտարակուսեցան ըսել թէ «Ե դարուն առաջին կիսուն հայերէն մատենագրական լեզուն, զոր՝ բառին անձկագոյն նշանակութեամբ, Թարգմանիչք մեր ոչ եթէ հնարեցին՝ այլ ուսան, և որոյ օրինակն ունինք յեւս հնագոյն հատակոտորս ինչ երգոց վիպասանաց մերոց որ գէթ իբր երեք դար յառաջ էին քան զԹարգմանիչս մեր, է սակայն եթէ ոչ հրաշք, գէթ հրաշակերտ, և մի միայն նշան զոր թողած է հայ ազգն իւր վաղեմի մեծութեան։ Անհնար էր լեզուին հասանել յայն չափ կատարելութեան՝ առանց մատենագրական մեծ շարժման»։ Հայկական գիտութիւնը իրմով միայն չբաւականանալով՝ իր սահմանը կ՚ուզէր ընդարձակել. և այն վախճանաւ ուսումնական գաղթականութիւններ ղրկեց յԱթէնս, ի Բիւզանդիոն, ի Հռոմ և յԵդեսիա։ Այս գաղթականութիւնքը՝ մանաւանդ ի Բիւզանդիոն և յԱ-

թէնս ճանապարհորդութիւնները՝ առանց իրենց ազդեցութեան չէին կրնար մնալ. յունական ուսումն ու կիրթ ախորժակը իր տպաւորութիւնն ըրեր էր հայկական մտքերու վրայ։ Նոյն տպաւորութիւնք ազգին ընդհանուր օգտակար ըլլալու համար՝ անոնց ընտիր օրինագիրքը հայերէն թարգմանելու ետեւէ եղան։ Կրթուած հանճարն ու միտքը՝ կիրթ ու ծաղկեալ լեզու մը երեւցուց ազգին մէջ։

Այս ընտիր և գեղեցիկ լեզուն յայտնապէս կը տեսնենք նոյն ժամանակին թէ՛ ինքնագիր և թէ՛ թարգմանեալ երկասիրութեանց վրայ։ Նոյն լեզուն աւելի գեղեցկութիւն մը տուած է մեր հոգեւէր հայրապետաց սրտէն բղխած ու գրչովը մեզի աւանդուած եկեղեցական ու մաղթողական գրոց մէջ, Աստուածաշնչին, Եւսեբեայ Քրոնիկոնին կամ ժամանակագրութեան ու Եկեղեցական պատմութեան մէջ, Կիւրղի Երուսաղեմացւոյ Ընծայութեան կոչման գրոցը, Յովհաննու Ոսկեբերանի, Բարսղի հայրապետին զանազան գրուածոց թարգմանութեանցը, և այլն. և ինքնագիր երկասիրութեանց մէջ Ագաթանգեղոս, Եզնիկ Կողբացի, Կորիւն, Եղիշէ, և մանաւանդ անոնց վարդապետք Սահակ և Մեսրովպ։

Թէ՛ ի թարգմանութեանց և թէ՛ յինքնագիր գրուածոց քանի մ՚ընտիր օրինակներ՝ մեր խօսքին հաւատարմութիւն ըլլան։

Ի թարգմանութեանց. «Աբրահամ ծերացեալ էր և անցեալ զաւուրբք, և տէր օրհնեաց զԱբրահամ ամենայնիւ։ Եւ ասէ Աբրահամ ցծառայն իւր ցերէց տան իւրոյ՝ ցիշխան ամենայն ընչից նորա. Երդմնեցուցից զքեզ ի Տէր՝ յԱստուած երկնից և յԱստուած երկրի, զի մի առցես կին որդւոյ իմոյ Իսահակայ ի դստերաց Քանանացւոց յորոց միջի ես բնակել. այլ յերկիրն իմ՝ ուստի ելեալ եմ՝ երթիցես, և ի տուն իմ, և առցես դու անտի կին որդւոյ իմոյ Իսահակայ։ Ասէ ցնա ծառայն. գուցէ կիննն ոչ կամիցի գալ ընդ իս յերկիրս յայս, դարձուցանելո՞վ դարձուցից զորդի քոյ յերկիրն ուստի ելեր։ Եւ ասէ Աբրահամ. Զգոյշ լեր, մի դարձուցանիցես զորդի իմ անդր։ Տէր Աստուած երկնից և Աստուած երկրի՝ որ առ զիս ի տանէ հօր իմոյ, և յերկրէն ուստի ծնեալ էի, որ խօսեցաւ ընդ իս, և երդուաւ ինձ և ասէ. Զաւակի քում տաց զերկիրդ զայդ, նա առաքեսցէ զհրեշտակ իւր առաջի քոյ, և առցես անտի կին որդւոյ իմում Իսահակայ։ Ապա թէ ոչ կամիցի կիննն գալ ընդ քեզ յերկիրս յայս, քաւեալ լիջիր դու յերդմանէդ յայդմանէ. բայց դու միայն զորդեակդ իմ մի դարձուցաներ անդր։...Եւ յարեաւ գնաց ի Միջագետս ի քաղաքն Նաքովրայ, և նստոյց զուղտսն արտաքոյ քաղաքին առ ջրհորովն ջրոյն ընդ երեկս՝ յորժամ ջրուորն ելանէր, և ասէ. Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու, յաջողեա ինձ այսօր, և արա ողորմութիւն ընդ տեառն իմում Աբրահամու»։

«Բայց Իսրայէլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն որդիսն իւր. քանզի որդի ծերութեան էր նորա։ Եւ արար նմա պատմուճան ծաղկեայ։ Իբրեւ տեսին եղբարքն նորա, թէ սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս իւր, ատեցին զնա. և ոչ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ։ Եւ ետես երազ Յովսէփ, և պատմեաց եղբարց իւրոց. և յաւելին եւս ատել զնա վասն երազոյն նորա և վասն բանիցն»։ ԾՆՆԴՈՑ ԳԻՐՔ։

«Եթէ ուղղագործացն կարեւոր են նեղութիւնք, ո՞րչափ եւս առաւել մեղուցելոցն։ Տես՝ յորչափ երկայնմտութիւնս վայելեաց փարաւոն, և յետոյ զանհնարին ընդ ամենեցունց ետ վրէժս։ Ո՞րչափ ինչ յանցեաւ և Նաբուգոդոնոսոր, և մօտ ի վախճանն ընդ բնաւին տանջեցաւ։ Եւ մեծատունն քանզի ոչ ինչ կրեաց աստէն կարիս, վասն այնորիկ առաւել թշուառացաւ. զի փափկանայր ի կեանս աշխարհիս, հոքաւ անդր ընդ ամենայնի տալ տոկոսիս. ուր և մխիթարութիւն ինչ չգոյր գտանել։ Սակայն են ոմանք այնպէս ցուրտք և անմիտք, մինչեւ աստէն միայն միշտ խնդրել՝ թէ առ այժմ աստէն վայելեսցուք, և ապա տեսցուք զանյայտիցն. չնորհեսցուք որովայնի, ծառայեսցուք ցանկութեանց, համարձակ կացցուք աստէն յաշխարհի. տուր ինձ զայս օր, և առ քեզ զվաղիւ։ Եւ զի՞նչ ի քօշից և ի խոզից ընդհատ իցեն որ զայսպիսի բանս խօսիցին»։ ՈՍԿԵԲԵՐԱՆ։

«Այնչափ ինչ չար ի գազանացն բնութեամբ ոչ գոյր, մինչեւ առեալ զնորարարսն առ նորաստեղծն՝ նմա նոցա անուանս հրամայէր դնել. և եթէ մօտ ոչ գային, զիա՞րդ միոյ միոյ ըստ իւրաքանչիւր ազգաց անուանս յօրինէր. ապա եթէ մօտ գային, և ընտելութիւն ընդ մարդոյն ունէին, յայտ է թէ ոչ չարք էին, և ոչ մարդոյն վնասակարք. այլ յետ յանցանելոյ մարդոյն զԱստուծոյ պատուիրանաւն՝ տուան նմա զարհուրեցուցիչք, առ ի չհպարտանալոյ հողեղինին՝ որ հողոյ եղեւ և ի հող դառնալոց էր։ Եւ առաջնոյ չվնասակարութեան գազանացն մարդոյ՝ այժմու համբոյրս և ընտրելութիւնս վկայեն։ Զի ոմն ըղգայլոց կորիւն սնուցանէ, և իբր զշան կորիւնս՝ առ ընդելութեան ընդ անձն անկանին։ Եւ միւսն զառիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ ի համբոյր և ի քծինս, մինչեւ պատել զսնուցելեաւն. և եթէ այլ ոք ի նա հուպ գայցէ, չմոռացեալ զբարս գազանութեանն՝ ի վերայ յարձակի»։ ԵԶՆԻԿ։

Սակայն սրբոյն Սահակայ ու Մեսրովպայ աշակերտաց Բիւզանդիոն, Աթէնք և Աղեքսանդրիա երթալը թէպէտ և մեծ օգուտ ըրաւ անոնց ախորժակը կրթելու համար, բայց անոնց լեզուին մէջ քիչ շատ փոփոխութիւն մտուց։ Խորենացին՝ որ դուրս ղրկուած աշակերտաց մէջ գլխաւորներէն մէկն էր, իր վարդապետացը վրայ խօսելու ատեն՝ այսպէս կը գրուցէ. «Որովհետեւ, կ՚ըսէ, անոնք մեր արուեստին տեղեկութիւն չունէին, անոր համար գործերնին ալ շատ կերպով թերի էր. ուստի մեծն Սահակ ու Մեսրովպ ղրկեցին զմեզ յԱղեքսանդրիա, «ի լեզու պանծալի ի ստոյգ յօդանալ ճեմարանին»։ Ողբոցը մէջն ալ կ՚ըսէ. Երբոր անոնք մեր դառնալուն կը սպասէին ու իմ ամենիմաստ արուեստով և առաւելագոյն յարմարութեամբ պատուասիրել, բոլորովին թէ մեր և թէ անոնց չկարծած դէպքը հանդիպեցաւ։

⁂

«Յունական լեզուի ազդեցութիւնը ճնշող չէ, և ոչ իսկ սպանիչ հայ լեզուի ոգւոյն, այլ սնուցիչ եղած է միայն առաջի շրջանի մէջ, երբ նկատենք այն աճագին ոյժը, որ յետոյ իր բուռն ազդեցութեան տակ կը խեղդէ յաջորդ շրջանի գրիչները։ Թարգմանութեանց՝ յունական բնագրերու հետ համեմատութիւնը՝ զօրաւոր ապացոյցներ բերած է գերագոյն արուեստի մը որուն վարդապետներն եղած են առաջին գրիչները։ Ս. Գրոց կանոնական մասերու մէջ վախկոտ կամ երկիւղած թարգմանիչները՝ պատմական երկասիրութեանց մէջ հեղինակի ուժով ի հանդէս կու գան։ Բարսղի վեցօրեայն իբրեւ ներկայացուցիչ Բիւզանդի, Ագաթանգեղեայ, Մակաբայեցւոց, Յուղբայ, Սքանչելեաց կարգն է պէսպիսութեամբ, լեզուի ճոխութեամբ և յանդգնութեամբ ձեւերու։ Բարսղի յառաջաբանին մէջ իբրեւ ծանօթութիւն նշանակուած է որ չէ թէ օրինակագրին ետեւէն կ՚երթայ թարգմանիչը, այլ արծուօրէն կը թռչի շատ տեղ, և, իբրեւ թէ անոր օձիքէն բռնած, կը քաշէ ետեւէն։...Հմտութիւն, արուեստ և այնպիսի յստակութիւն ի թարգմանիչս մեր, որուն ներքեւ իր մթութեամբն ինկած անճրկած է Ոսկեբերան։

«Սահակ Պարթեւի յաջորդ ամէն գրիչք ինկած են աստիճանաբար. զարգացման պակաս, պատմական փոխուած կեանք, ընկերական այլ շրջաններ՝ իրենց հզօրագոյն *կնիքը դրոշմելով լեզուին վրայ՝ անցած են յաղթական. և ինչ որ ի սկզբան եղած է զուտ ոսկեղէն, դարձած է լեզուին բանասիրական ճիւղին մէջ իբրև բրածոյ նիւթեր, ուր խառն են ոսկւոյ փշրանքներու հետ՝ երկաթի, ժանգի, անագի, թիթեղի և կապարի կտորուանք. բառարան, քերականութիւն, շարադասութիւն այլանդակուած են, իսկ մատենագրութիւն բոլորովին ինկած. կարևորութիւնը կը մնայ միայն բանասիրական պատմութեան իբրև շարունակութիւն, ուր կարելի է տեսնել քայլ առ քայլ անոր առած երևոյթները լուսնի կամ արևու աստիճանական խաւարման պէս»[1]:*

Տեսնենք լեզուին փոփոխութիւնը՝ զոր կրեց այն ուսմամբը և ճանապարհորդութեամբ:

Այն ուսմանց, հետազօտութեանց և ճանապարհորդութեանց գլխաւոր արդիւնքը եղաւ, եթէ կարելի է այս բացատրութիւն բանեցնել, լեզուին աւելի փիլիսոփայութիւն մը և իմաստասիրական ճշդութիւն տալ, բայց միանգամայն հայերէն լեզուին ալ ուրիշ կերպարանափոխութիւն: Հելլենաբանութիւնը որ մեր Ե դարուն մանաւանդ երկրորդ կիսուն մէջ երևցող շատ մատենագրաց գրուածոց մէջ այնչափ յաճախած է, այս ժամանակէս սկսաւ: Հելլենաբանութիւնը՝ կամ յոյն լեզուին նմանութիւնը երեք կերպով կը տեսնուի մեր նոյն ժամանակին մատենագրաց գրուածոց մէջ: Ուրիշ հելլենաբանութիւն ունի Խորենացին, ուրիշ Գիւտ և ուրիշ Դաւիթ Անյաղթ: Տեսակ մը հելլենաբանութիւն, այնպէս նոյն լեզուով զանգուած՝ որ հայու համար անհասկանալի կ'ըլլայ: Ուրիշ տեսակ հելլենաբանութիւն մըն ալ՝ որ թէպէտ և յունաբան է, բայց հայերէն լեզուի կատարեալ տեղեկութիւն ունեցողը կրնայ աշխատանքով հասկնալ: Իսկ երրորդ տեսակը աւելի մօտ է ազգային ոճին, և դիւրաւ հասկնալի, թէպէտ և մեծապէս հեռու բուն ազգային մատենագրաց ոճոյն յատկութենէն:

---

[1] Մասիս 1892.

Արդեօք ազգին լեզուէն բոլորովին օտար և անոր հոգւոյն հակառակամարտ գրութիւն մ'էր անոնց ըրածը և գործ ածածը:

Պատասխանը կու տայ արդի հմուտ և քաջանուն բանասէր մը, զոր կ'ախորժինք իր խօսքերովը մէջ բերել. «Սրբոյն Մեսրոպայ երիցագոյն աշակերտաց յաջորդող կրտսերագոյն աշակերտք, որոց մատենագրական գործունէութիւնն սկսած է իրենց անմահանուն վարդապետաց (Սահակայ և Մեսրոպայ) մահուընէն ետև, իրենց գրուածոց մէջ բաւական յաճախութեամբ այնպիսի արմատական և ածանցեալ բառեր կը գործածեն, որ թէ և օտար բառեր չեն... և ոչ մերձաւոր ազգաց, Յունաց, Պարսից և Ասորւոց, այլ բուն հայկական են, սակայն երբեք ի կիր արկած չեն ոչ իրենց ուսուցիչքն և առաջնորդք, և ոչ երիցագոյն աշակերտակիցք, որ առ կենդանութեամբ վարդապետացն գրած են: Այնու աւելի զարմանալի կ'երևնայ և աչքի կը զարնէ այս զանազանութիւնն՝ որ նոյն բառերէն գէթ ոմանք շատ յաճախ կրնային գործածուիլ: Օրինակ ըլլայ արմատական բառից՝ արփի, սաղարթ, փարթամ, տոփանք, տրոհել, հրճուիլ... և ածանցեալ բառերու՝ աղօրել, ողջունել, ուրախանալ, ուրախացուցանել, պատասխանել, գեղջուկ, վաղեմի:

«Նոյն կրտսերագոյն աշակերտաց դասէն ոմանք լեզուին մէջ չափազանց հելլենաբանութիւն մուծանելով, բաց յայլոց նորութեանց՝ շատ ածանցներ հնարած են սկզբնական մասնիկներով: Արդ այս մասնկանց ոմանք յայտնապէս առնուած են բուն հին հայերէն բառերէ. բայց կան նաև այնպիսի մասնիկք, որոց հետքն անգամ չի գտնուիր հնոց մէջ. կամ թէ կարելի չ'երևնար այս կամ այն հայերէն բառերէն հանել: Այսպէս կը մակաբերենք՝ թէ արտաբերել, հակասութիւն, ներգործութիւն, պարբերութիւն, ստորագրել ածանցները ձևացնող մասնիկներն առնուած են արտաքոյ, հակառակ, ներքոյ, պարեալ (շուրջ), ստորին...

բառերէն։ Բայց ուստի՞ հնար է հանել բաղդատել, մակերեւոյթ, տրամաբան, փաղանուն և ածանցներուն սկիզբը կըցած[1] մասնիկներն, որոնց նման բառ չկայ հին լեզուին մէջ։

Կրտսերագոյն թարգմանչաց գործածած ու հիմայ յիշուած իրեք դաս հելլենաբանութեանց ալ օրինակներ մէջ բերենք։

«Եղոյր հարկաւոր, Քրիսաւորիէ, և յ՚առս Արիստոտելի ստորոգութեանցն վարդապետութիւն, գիտել՝ զինչ սեռ և զինչ տարբերութիւն և զինչ տեսակ. զինչ յատուկ, և զինչ պատահումն ի սահմանացն բացատրութիւն, և բոլորովին՝ յաղագս բաժանման և ապացուցի պիտանացուի եղոյ սոցայցն տեսութիւն, համառօտ քեզ ընձեռութիւն առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւուց իբր ներածութեան յեղանակի զառ ծերունեացն անցեալ բանիւ, ի խորագունիցն ի բաց կալ ի խնդրոց, և պարզագունիցն՝ չափաւորապէս հանդիպելով»։...

«Տեսակ ասի և ի վերայ իւրաքանչիւրոյ կերպի՝ ըստ որում ասի, նախ տեսակ արժանի գոռոզութեան։ Եւ ասի տեսակ և այս՝ որ ընդ բացատուեալ սեռիւս է ; ըստ որում սովորեցաք ասել զմարդ տեսակ կենդանւոյ՝ սեռոյր, եղոյր, կենդանոյր. և սպիտակն գունւոյ տեսակ, և եռանկիւնին ձեւոյ տեսակ։ Եւ եթէ զսեռն բացատուելով՝ զտեսակն յիշեցաք, ասելով զյոլովին և զտարբերեցելոց տեսակաւ ի ներում զինչէն ստորոգեալ, և զտեսակն ասեմք զայն որ ընդ բացատուեալ սեռիւն է։ Գիտել պարտ է, վասն զի սեռն՝ որումն է սեռ տեսակին՝ որումն է տեսակ, երկաքանչիւր՝ երկաքանչիւրոյր, հարկ է և երկոցունց՝ բանս վարիլ երկոքումբք[2]»։

---

[1] ՅՈՎՀԱՆՆԵՍԱՆ (Հ. Գ. Վ.)։ Հանդէս ամսօրեայ, Յունուար 1888.

[2] Դաւիթ Անյաղթ իւր թարգմանութեանց մէջ.

Ասանկ անիմանալի հելլենաբանութիւն մը գործածող Դաւիթ Անյաղթը՝ Սահմանաց գրքին մէջ շատ աւելի պարզ և իմանալի լեզու մը կը գործածէ, թէպէտ և ոչ անխառն ի հելլենաբանութենէ։

«Կատարեալն փիլիսոփոս՝ երեքումբք այսոքիւք կերպարանի. բարեաւն, ասեմ, և գիտնականաւն և կարելեաւն։ Եւ բարեաւն՝ թէ որպէս Աստուած խնամ տանի ամենեցունց, նոյնպէս և իմաստասէրն խնամ տանի անկատար ոգւոց ի կատարեալ գիտութիւն ածելով զնոսա։ Իսկ գիտնականաւն՝ թէ որպէս Աստուած զամենայն ինչ գիտէ, նոյն և կատարեալ իմաստասէրն զամենայն ինչ խոստանայ գիտել, և գիտէ զօգտակարն։ Իսկ կարելեաւն՝ թէ որպէս Աստուած զամենայն ինչ կարէ զպատշաճագոյնս և կամի, նոյնպէս և կատարեալ իմաստասէրն՝ որչափ ինչ կարող գոյ ըստ կարելոյն և կամի, և ոչ երբեք կամի զոր ոչն կարէ»։

Նոյնպէս ալ փիլոն.

«Սա (հանճար գիտութեան) է որ զթանձրահողն արգաւանդ և զառաքինի երկրի զլեռնային և զդաշտային սերմանեաց և տնկեաց, և զկենցաղոյս զօգտակարագոյն մշակութիւնն կարաց գտանել։ Սա է որ նաւ կազմեաց, և զցամաքին բնութիւնն ընդ միտ ածելով, հնարս գտեալ՝ որ քան զամենայն բան ի վեր է, զուղակ գործեաց զմարդ. և ճանապարհս ի ծովու բազմահերձս և բազմահետս մինչեւ ի նաւահանգիստն, որք ըստ քաղաքաց քաղաքաց, և ընթացից աշխարհապողոտայս եհատ ճանապարհ. և ծանոյց ցամաքայնոցս զկղզայինս (որք) ոչ երբեք ի մի վայր եկեալ լինէին, եթէ ոչ մակոյկ նաւակ առեալ էր։ Սա է որ ձեռագիտացն և պայծառագոյն արուեստիցն ասացելոց գտակ։ Սա գիրս և երաժշտութիւն, և զներշրջանական ամենայն խրատ հանճարոյ հնարեալ իմացաւ, և աճեցոյց և էած ի *կատարած ։ Սա և զմեծ բարի՝ զիմաստասիրութիւնն ծնաւ, և ի ձեռն իւրաքանչիւրոցն մասանց՝ օգուտ արար մարդկային կենացս »։*

Օրինակ մ'ալ Նոննոսի Առասպելաց մեկնութենէն մէջ բերենք։

« Անաքսագորաս իմաստասէր էր. սա ըմբռնեալ յԱրքեղայոս իմաստասիրէ, և արկեալ ի սանդ հարեալ լինէր նգով փայտեղինաւ, և ի սանդահարելն՝ մանրել և փոճոկել ի նմանութիւն հնդոյ ինչ, այլ սանդահարելով սորա աղաղակէր և ասէր. Սանդահարեա, սանդահարեա զպարկս Անաքսարքեայ. քանզի ոչ կարես զԱնաքսարքոս սանդահարել։ Զայս ասէր, նշանակեալ թէ իմաստասէր գոլով, մարմնոյն և ոչ մի ինչ փոյթ առնէ »։

Երրորդ տեսակ հելլենաբանութեանն ալ օրինակ մը մէջ բերենք։

« Արդ զիս դեռ եւս տղայոցն (Բեթղեհեմի) հնչեցուցանէ գոչումն. և տեսեալ զնոսա՝ կարծեմ ճչել անգուշակս զարհուրելով, և ի նշոյլս սրոյն կափուցեալս, և երկիւղիւ խոնարհեալք ի գիրկս մարց իւրեանց իբրև յապաւէնս, այլ և ի ծոցս խուսափեալս։ Ապա և զմարսն կարծեմ տեսանել. այլ զոմն առ այլուրս փախուցեալս ի քաղաքէն՝ այնու ողորմելի և քաղցր բեռամբք, և խնդրողս տեղի ապաստանի. և զոմն ի նոցանէ՝ ոչ ծածկոյթ բարեշուք զիւրեաւ առեալ ի դառնութենէն. իսկ ոմն և զոր ունէր՝ ի բաց ընկեցեալ ի չփոթական փախստենէն։ Եւ զայլ ոմն զմանկամբն անկեալ՝ յայնպիսի ծածկութիւն զտղայն վըտանգէր, գողանալ յուսալով. և զմիւս եւս այլ՝ հասեալ ի հալածչացն ուժգնակի, և ապա պակասեալ ի գնացիցն, և պարաւանդեալ յերկիւղէն, և արտասուալից աչօք ի փայլումն սրոյն և զհայեցուածսն յերկուս բաժանեալս, և

զանձն առաջի եդեալ փութապէս իջմամբ սրոյն։ Եւ դարձեալ միւս այլ ոմն ոչ կարացեալ շարժել ուրեք, կապեալ ոտիցն ի զարհուրմանցն՝ այլ յառաջ կորուսեալ ի սպանմանէ իւրոյ զաւակին, և սպանողին՝ սուղ ինչ անսացեալ հառաչմանն, և ուրեք ձեռօքն լուծեալք և յոյժ սաստնելովք անգիտացեալք, և զմանուկն ի գիրկսն սատակեալ. և կանխեալ զմահուանն դիակոյտ՝ նախ քան զսրոյն կորորուստ։ Ո՛վ Հերովդի մոլեգնութեան։ ԳՐԻԳ. ՆԻՒՍԱՑԻ։

Աս օրինակներուն մէջ կը տեսնուին յայտնապէս իրեք դաս յունաբանութեանց ոճը և յատկութիւնները, որ մեր մատենագրաց՝ կամ անոնց ձեռքով եղած թարգմանութեանց մէջ կ'երեւնան։ Անոնցմէ՝ ոմանք այն աստիճանի սիրող երեւցան այս տեսակ ոճոյն՝ որ մինչեւ ուզեցին հայկական լեզուին կարգն ալ փոխել, և մեր լեզուին կանոն տալ Դիոնեսիոսի Թրակացւոյն քերականութիւնը։ Անոր համար կը տեսնենք որ նոյն գրքին մէջ նոր ու այլակերպ բարդութիւնք կան՝ բոլորովին օտար ու հակառակ մեր լեզուին կանոններուն ու խոնարհմանցը, որուն օրինակ կրնայ ըլլալ կոփեմ բայը, զոր հետեւեալ կերպով կը լծորդեն երկրորդ թարգմանիչք։ Կոփեմ, կոփես, կոփէ. կոփոյեմք, կոփոյերք, կոփոյեն. էկոփոցիր, էկոփոցիւ, էկոփոցեր . – էկոփոցիւք, էկոփոցիւրք, էկոփոցին, և այլն։ Բաց ի նորամուտ հոլովներէ և ժամանակներէ բայից, զոր շատ քերականք հասուցած են մեզի՝ ոմանք համառօտելով այլք ընդարձակելով, ուզած են նաեւ նիւթական կազմութեամբ ալ նմանցնել զհայերէնն յունարէնի. ինչպէս, է տառն աւելցնել բայերուն քանի մը ժամանակաց վրայ, որ արդէն կը տեսնուի նոյն կոփեմ բային մէջ։ Օրինակ իմն, կը կարդանք Դաւթի գրոց մէջ. « Քանզի կենդանոյն տարբերութիւն առակեալ բանականին՝ ա՛յլ էարար. տեսակ մարդոյ կենդանւոյ էարար . . . իսկ ապա մին՝ ա՛յլ, իսկ միւսն՝ այլայլակ միայն էարար ». ուր էարարն *մէկտեղ գրուելով պիտի կարդացուի, և ըսել է՝ արար։ Այսպէս նաև իրենց գիւտն եղաւ նորօրինակ սեռական հոլով մ'ալ լեզուին մէջ մտցնել, որ չէր յունական. այլ թերևս հին հայկական տառ մը ըլլար, ր գիրն. որ ցարդ կը տեսնուի դերանուանց մէջ, և զայն ր տառն անցնել ուզեցին նաև ուրիշ բառերու վրայ ալ. ինչպէս կ'ըսէր նոյն Դաւիթն Անյաղթ «Բացատուեցելոյր սեռոյրն և տեսակոյրն՝ զինչ երկաքանչիւրն, սեռոյր եղոյր ելոյր, և տեսակացն յոլովից». որուն իմաստն է՝ բացատրելով զսեռ և զտեսակ, թէ զինչ է երկաքանչիւրն. և սեռն եղ (այսինքն մի) գոլով և տեսակք յոլովք։ Այսպէս կը հոլովեն զսեռականն ձիոյր (ձիոյ), իւրաքանչիւրոյր (իւրաքանչիւրոյ), «Մանկան ելոյր և այրացելոյր և ներգործելոյր ինչ կամ դադարելոյր». այսինքն մանուկ գոլով և յարբունս հասեալ և գործելով ինչ կամ դադարելով. — այլոյր (այլոյ), մարդոյր (մարդոյ), միոյ միայնոյր (միոյ միայնոյ)»[1], և այլն։ Այսպէս ալ դերանուանց իգական սեռը զատեցին ու ըսին. Նա, նորա արական. Նի, նիրա իգական։*

Թարգմանչաց այս նորաձևութիւնը հաճոյ անցաւ ժամանակակցաց աչքերը։ — Խնդիր մըն է՝ որուն վրայ քանի մը անդրադարձութիւն պիտի ընենք՝ Թարգմանչաց դարուն վրայ խօսած ատեննիս. ազգային գրականութեան պատմութեան քանի մը խօսքերէն գուշակելով։ Սակայն ազգին մէջ ընդհանուր չըլլալէն՝ հաւանական կ'երևնայ գրուցելը թէ իբրև անսովոր բան մը մերժուեցաւ. ուստի և կերպով մը Խորենացին կը գանգատի թէ մեր արուեստին վրայ կը ծիծաղին՝ ու անօգուտ և անպիտան կը համարեն մեր գիտութիւնը։ Խորենացւոյն և ընկերացն կրած հալածանքներ այս խօսքին երաշխաւորութիւն կրնան համարուիլ։ Իրենցմէ վերջը եկող մատենագիրք ալ ընդհանրապէս

---

[1] Բազմավէպ, 1875. Հելլէնաբանութիւն և հելլէնական թարգմանիչք հայկական լեզուի, և 118. 1877, յէջ 108.

չհետևեցան նոյն ոճոյն. և սակայն ալ հաւաստիք մ'է՝ թէ ընդունելի չեղաւ այն գրութեան կերպը՝ որուն յառաջադիմութեանն համար այսչափ աշխատեցան։

Այս ժամանակ մտած են մեր ազգին մէջ շատ յունական բառեր, կամ յունարէն բառերու հայկական թարգմանութիւնք՝ որոնցմէ ոմանք մեր լեզուին պարզութեանը վնասակար եղած են, և ոմանք ալ իբրև ընտիր զարդեր արժանապէս գործածուած։

Թարգմանչաց դարէն վերջը՝ անակնկալ կերպով մը կ'իյնայ ազգային դպրութեան հետ նաև լեզուն։ Հարիւր տարուան երկայն շրջան մը՝ քանի մը աննշան մատենագիրներ կ'ընծայէ մեզի, որոնք իրենց գրուածոցը վրայ ժամանակին իմաստից և լեզուի աղքատութեան նշանագրոշմը կը կրեն։

Ասոր նման՝ կամ քիչ տարբերութեամբ է Է դարը։ Միայն Շիրակացւոյն ջանքով՝ հայկական բարբառը ուսումնական բառերով և բացատրութեամբք կը ճոխանայ։

Ութերորդ դարուն մէջ Հայաստանի քաղաքական դիրքը նոր կերպարանք մը կ'առնու։ Նոր տիրապետութիւն մը՝ իր իշխող և զօրաւոր ձեռքերը կը տարածէ մեր հայրենեացը վրայ. զէնքերուն հետ՝ լեզուին կնիքն ու բացատրութեան կերպերը կը մտնեն մեր բարբառոյն մէջ։ Արաբացին կը սկսի մերթ յաղթական անգութ զօրաց բանակներ, ու մերթ ալ ոստիկաններ ղրկել Հայաստանի վրայ, երբեմն զարնելու և աւրելու, երբեմն ալ նոյն աւերակաց վրայ իր իշխանութեան աթոռը դնելու։ Ասիական մատենագրութեանց մէջ նոր՝ ու գրեթէ իրեն յատուկ ոճ մ'ունի արաբականը։ Զրուցուածքի մէջ այլաբանական ու նկարագրական լեզու, բացատրութեանց մէջ երկայնաբանութիւն։ Այս ոճը յայտնապէս կը սկսի երևնալ մեր նոյն ժամանակի մատենագրաց մէջ. Յովհաննու Օձնեցւոյն կամ Իմաստասիրին գրուածոցը մէջ աւելի ընտիր կերպով, իսկ Յովհաննու Պատմաբանի ու Թովմայ Արծրունւոյ եր-

կասիրութեանց մէջ՝ աւելի ստորին ոճով։ Այն ազդեցութեամբն է որ ժամանակին մատենագիրքը կը սկսին իմաստից յորդութեան կամ առատութեան հետ՝ նաեւ բառից յորդութիւնք և առատութիւնք գործածել իրենց գրուածոց մէջ. և անով կը սկսի լեզուն աղաւաղիլ։ Այս աղաւաղութիւնը աւելի զգալի կ'ըլլայ Գրիգորի Մագիստրոսի երկասիրութեանց և դարուն մէջ։

Սակայն այս ազդը՝ որչափ ալ մեր լեզուին վրայ ունեցաւ իր ոչ այնչափ օգտակար ազդեցութիւնը, բայց ոչ նոյնպէս և ի գիտութեան՝ որ աւելի փափաքելի էր։ Պատճառն ալ պարզ է։ Հայ կրթութիւնն ու մատենագրութիւնը եկեղեցականաց ձեռքն ըլլալով, բնական էր որ իրենց բոլոր ճիգը թափէին ժողովուրդը հեռու պահելու արաբական գրքերէն. իրենք ալ պիտի զգուշանային բան մը սեպհականելու այն գրականութենէն, որ տարբեր կրօնական գաղափարներ կը քարոզէր, վախնալով որ չըլլայ թէ Հայաստանի քրիստոնէութիւնը վտանգի. մանաւանդ որ հրապոյրք պակաս չէին արաբացի իշխանաւորաց կողմէն Հայոց մեծամեծներուն՝ իրենց կրօնական հաւատալեաց կողմը հակելու։ Այս երկիւղն անշուշտ չէր կարող ազդել արաբական գեղարուեստը. ուստի և կը տեսնենք որ Հայք չեն դանդաղիր սեփհականել Արաբացւոց ճարտարապետական ճաշակը, նոցա միւսիններն (mosaïque) և նուրբ քանդակները, և բիւզանդական ճարտարապետութեան հետ խառնելով՝ իրենց առանձին ոճ մը ստեղծեր են. որուն այսօր հայկական ոճ անունը կը տրուի, և որ դեռ եւս կ'երեւնայ Անւոյ աւերակաց վրայ։ Իսկ գրականութեան և գիտութեան ազդեցութիւնը, – թէպէտ և թոյլ կերպով, – կը նշմարուի միայն այն ժամանակ՝ երբ Հայք կ'ազատին Արաբացւոց ազդեցութենէ. երբ քրիստոնէութեան այլ եւս չէր կարող վտանգ մը սպառնալ։ Այսպէս Գրիգոր Մագիստրոս ԺԱ. դարու երկրորդ կիսուն, սեպհականեց Արաբացւոց վանկական և յանգաւոր տաղաչափութիւնը. որ ի յաջորդ դարուն՝ Ն. Շնորհալւոյ գրչին տակ կատարելագործուելով՝ հին հայկական տաղաչափութեան տեղ բռնեց։ Իրեն ժամանակակից Մխ. Հերացի մեծ մասամբ արաբական բժշկարաններէ քաղեց իւր Ջերմանց՝ գիրքը, և բժշկութեան հիմը դրաւ Հայոց մէջ։ Եթէ հայ մատենագիրք աւելի առատութեամբ քաղած ըլլային այս հարուստ աղբիւրէ, անշուշտ թէ մեր մատենագրութիւնը կը ճոխանային, և թէ մանաւանդ գիտութեան զարգացման կը նպաստէին մեր մէջ։

⁂

Իսկ ԺԲ դարը՝ Ներսիսի Կլայեցւոյ, Սարգսի և Իգնատիոսի ու իրենց ոճոյն հետեւող ընտիր մատենագրաց ձեռքովը՝ արծաթի դար մ'է մեր մատենագրութեան։ Անոնց գործածած վայելուչ լեզուն չկրցաւ երկար ատեն դիմանալ, ու կամաց կամաց անշքանալով՝ բոլորովին նոր կերպարանք մը սկսաւ առնուլ։ Այնպիսի կերպարանք մը՝ որ հայերէն գրականութիւնն ու լեզուն երկուքի բաժնեց. խորոց մը դրաւ ընդ հին և ընդ նոր մատենագրութիւն։

Այս նորութեան և իր ոճոյն վրայ՝ մենք ալ ազգային նոր Մատենագրութեան պատմութեանը մէջ ընթերցողաց մտադրութիւնը պիտի դարձնենք։

Բայց նախ մէջ բերենք նորագոյն համարուած կարծիքը՝ լեզուաց նկատմամբ։

«Լեզուներն իւրեանց ծագման կամ ազգականութեան կողմանէ կրնան բաժնուիլ այլ և այլ խումբեր որոց գլխաւորներն ու ծանօթներն են Հնդեւրոպական, Սեմական և Դուրանեան։

1. Հնդեւրոպական կամ Հնդիկ-եւրոպական կը կոչուին լեզուք այն ազգաց որ Հնդկաստանէ, ընդ մէջ Կովկասու և Կորդուաց, արեւմտեան ուղղութեամբ կը տարածուէին ի հիւսիսոյ փոքուն Ասիոյ մինչեւ Եւրոպայի ծայրը։

Ծանօթ լեզուք որ ընդհանրապէս այս խմբէն են՝ են. 1. Հնդկաց հին լեզուն որ կը կոչուի Սանսկրիտ, և որով գրուած են Հնդկաց կրօնական գրեանք որ կը կոչուին Վէտա։ 2. Զենտ կամ Զանդիկ լեզուն, այս ինքն այն լեզուն որ կը խօսէին հին Մարք և Պարսք և ուրիշ արիական ազգեր, և որով գրուած են զրադաշտական կրօնից մատեանք որ կը կոչուին զենդ-աւեստա, այսինքն՝ կենդանի բան։ Զենդի բարբառներէն մին է Պահլաւերէնն, նոյնպէս Նուիրական լեզու Պարսից զկնի Զենտին։ 3. Հելլէն կամ Յունարէն և Լատին լեզուն։ Գերմանական և Սլաւական լեզուք ևս, որ շատ ճիւղեր ունին՝ կը համարուին ի բնէ Հնդիկ-եւրոպական։

Հնդեւրոպական լեզուաց կը տրուի ևս Արիական անունը յանուանէ Արեաց որ էր ազգային անուն Զանդիկ ցեղերուն, գլխաւորապէս Մարաց և Պարսից որ այս լեզուն ունէին։ Բայց արիական կամ իրանական անունը կը պատշաճի մանաւանդ զանդիկ ճիւղին։

2. Սեմական կը կոչուին լեզուք այն ազգաց որ կը տարածուէին Տիգրիսէ մինչև Միջերկրականն, հանդերձ Արաբիաւ։

Ծանօթ լեզուներ որ կը վերաբերին այս խմբին՝ են. Եբրայեցերէն, այն է հին հնդիկ լեզուն որ կը համարի նոյն ընդ լեզուին փիւնիկեցւոց։ – Հին Քաղդէարէնն, հին Ասորերէն կամ Արամերէն լեզուն։ – Մեզ ծանօթ Արաբերէնը։ Հին Քաղդեացերենէ և հին Ասորերենէ մնացորդ չունինք, հին Արամերէնէ շինուած լեզուն է Ասորերէն (Syriaque) կոչուած ասորերէնը, յոր թարգմանուած են Հին և Նոր կտակարանք իբր երեք դար յառաջ քան զհայերէն թարգմանութիւն։ Ասորերէն լեզուն կ'ուսանէին ժամանակաւ մեր նախնիք, իբր եկեղեցական լեզու յառաջ քան զգիւտ Մեսրոպեան նշանագրոց, երբ Սասանեանք արգիլեցին յունարէնի ուսումն քաղաքական պատճառաւ իրենց մէջ։

Արդի գիտունք տուած են լեզուաց այս խմբին Դուրան անունն, ըստ հայ մատենագրաց Տաներան, ուրիշ բառով՝

Անարի, և կը տրուէր ի Պարսից այն ազգերուն որ չէին արիական ցեղէն։ . . . Դուրանեան ազգերուն բնակութիւնն էր գլխաւորապէս ի հիւսիսոյ Կովկասու դէպ յարեւելս մինչեւ Թուրքաստանի և Սիպերիոյ անապատները, նաեւ ի հիւսիսոյ Հայոց առ Կուր գետով յայնկոյս Կովկասու։

Դուրանեան էին, այսինքն ունէին Հնդիկ-եւրոպական, և սեմական լեզուներէն տարբեր լեզու, Գուգարք կամ Վիրք, և Գարգարացիք, այս ինքն Աղուանք՝ առ Կուր գետով, որ առ Արշակունեօք սահման էր ի մէջ Հայոց և Նոցա։ Դուրանեան էին հաւանականապէս նաեւ Մազքուք և Հոնք կամ Քուշանք, որ և Հեփթաղ կը կոչուին մեր պատմութեան մէջ, և որոց դէմ ստէպ պատերազմներ ունեցան Սասանեանք։ Բուզանդ՝ Մազքթաց թագաւորին զօրաց մէջ կը յիշէ Ալանաց, Հոնաց, Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գթաց, Գզուարաց, Շղբաց, Ճղբաց, Բաղաճաց, Եգերսուանաց և այլ «խառնաղանճ» ցեղերու գունդեր։ Եղիշէ Ճղբաց, Գզուարաց, Հեճմատակաց, Փոխաց, Թաւասպարաց հետ՝ կը յիշէ նաեւ ուրիշ հիւսիսային ցեղեր, ինչպէս Լփնիս, Խայլանդուրս, և այլն. զԼփնիս կը յիշէ նաեւ Խորենացի։

Դուրանեան խմբէն մեզ ծանօթ լեզու է Թուրքերէնը, որ բաւական նպաստ կը մատուցանէ հայերէնի լեզուաբանական քննութեան, ինչպէս կը մատուցանէ նաեւ վրացերէնի գիտութիւնը։...

Գիտենք որ բոլորովին հակառակ է ոմանց ախորժակին՝ նշմարս անգամ տեսանել դուրանականութեան ի ծագման արարատեան ոչ լեզուին միայն, այլ և ցեղին։ Ըստ սոցա՝ Հայն է և պարտի լինել, և ցեղիւ և լեզուաւ, մին ի դստերաց այն երջանիկ մօր որմէ ծնած են Հնդեւրոպական համարուած ազգք և լեզուք համօրէն։ Սակայն ներելի է կարծենք գիտութեան, բերել ի լոյս որ և իցէ խնդրոյ ընդդիմակաց երեսն ևս։ Ո՛ր յիշատակարան, ո՛ր պատմութիւն կամ աւանդութիւն կը ստուգէ մեզ թէ

Արարատեան ցեղը, ըստ սկզբանն թաղուած հնութեան աղջամուղջին մէջ, չէր ի բնէ իւր հիւսիսային դրացիներուն՝ Վրաց և Աղուանից ազգակից. և ապա յընթացս իւր գրագիտական կենաց՝ իւր արեւելեան և արեւմտեան ազնըւաբարոյ և կրթագոյն դրացիներէն, ի Պարսից և ի Յունաց, առաւ իւր լեզուին նախնի կմախքին վրայ հնդեւրոպական միս և մորթ, ինչպէս ըրած է Թուրքերէնը. ասա ուրեմն յԱրաբացւոյն և ի Պարսկէն միթէ այս լեզուն ի ծնէ սեմակա՞ն կամ արիական էր. վասն զի ունի այնչափ խառնուրդ այս վերջիններէն: Ուստի չէ ամենեւին անտեղի ըստ մեզ գէթ հաւանական ինչ նմանութիւն նկատել հայերէնի՝ դուրանական լեզուաց խմբին հետ որոյ ծանօթ ճիւղն է մեզ Թուրքերէնն, մանաւանդ բայերու կազմութեան կողմանէ որ լեզուի էական և միայուն տարրն է:...

Լեզուաց այլ և այլ խումբերու բաժանման, և այն լեզուները խօսող ազգաց բնակութեան վրայ պատմական տեղեկութիւններէ հայերենի համար կը հետեւի, թէ Հայ ցեղն, հին անուամբ Արարատեան, ապա Արուենի կամ Արմէն, անյիշատակ ժամանակներէ բնակող Երասխայ հովիտը, ունէր իրեն դրացի երեք գլխաւոր լեզուները խօսող ազգեր. յարեւելից և յարեւմտից հնդիկ եւրոպականներ (Պարսք և Յոյնք). ի հարաւոյ Սեմականներ (Ասորիք), ի հիւսիսոյ Դուրանեան ցեղեր: Այսպէս լեզուաբանական տարբեր տարբեր տարրներ ունենալով իրենց դրացի, Հայք անշուշտ մեծ ազդեցութիւն կրած են իրենց քաղաքակրթութեան, ինչպէս ուրիշ մասերուն, նոյնպէս մանաւանդ լեզուի կողմանէ, ըստ աւելի կամ նուազ յառաջադիմութեան այն ազգաց. և որովհետեւ աւելի յառաջադէմներն էին Ասորիք և Յոյնք, անշուշտ այս երկու ազգաց լեզուները մանաւանդ կրնային գործել մեծ ազդեցութիւն հայերենի վրայ. և է իսկ այնպէս, որպէս ցուցանէ մտադիր քննութիւնն:

Եւրոպայի լեզուագէտք քննելով մեր հին լեզուն կամ գրաբարը, և գտնելով ի նմա մեծ նմանութիւն հնդեւրոպական լեզուաց հետ, վճռեցին թէ հայերէնն եւս է արիական լեզուաց դասէն, այսինքն ի բնէ դուստր այն մայր լեզուին որոյ ծնունդ են Զանդիկն, Յոյնն և Լատին:

Հայերէնն ունի այնչափ նմանութիւն, առաւելապէս ձայնի կամ բառերու կողմանէ հնդեւրոպական լեզուաց, մանաւանդ գլխաւորներուն, Զենդի կամ հին պարսկերենի, յունարէնի և լատիններենի, որ եթէ չէր եւս ի բնէ հընդեւրոպական, ըստ վերջին ձեւոյն իւրոյ կ'երեւի հնդեւրոպական, և առաւել քան որչափ կարծած են, այս լեզուն՝ լեզուաբանական օրինօք քննող համազգի և օտար գիտունք: Սակայն լեզուի նմանութենէն չի հետեւիր ծագման կամ ցեղական միութիւնն, ուստի նայելով հայերէնի նմանութեան հնդեւրոպական լեզուաց հետ, չենք կրնար համաձայնիլ ըսել թէ այս լեզուն էր ի բնէ հնդեւրոպական կամ Արիական: Եթէ, ինչպէս արդի հնագէտներէն ոմանք կը կարծեն, Հայ ազգին ծագումն է տուրանական, կամ ուրիշ բառերով ըսենք, եթէ Հայ, կամ հին անուամբ Արարատեան ցեղն էր ի բնէ հիւսիսային ժողովուրդ, չէ անհաւանական թէ լեզուն եւս էր նախապէս հիւսիսային Դուրանեան անհարթ բարբառ, որ յետ ժամանակաց՝ ազդեցութեամբ լեզուաց դրացի հնդեւրոպական աւելի քաղաքակիրթ ազգին՝ առաւ տակաւ հնդեւրոպական ձեւ:

⁂

Մեր հայերէնն եւս հնդեւրոպական լեզուաց դասուն պատկանելով լեզուագիտաց առանձին քննութեան նիւթ եղաւ: Գերմանացիք ինչպէս որ համեմատական լեզուագիտութեան սկզբնաւորութիւնն ըրին ու հիմը դրին, այսպէս ալ հայերէնի համեմատական լեզուագիտութեան սկզբնաւորութիւնը պարտական ենք գերմանական ազգին: Թէ Գերմանացւոց և թէ ուրիշ ազգաց մէջ գտնուեցան *շատ գիտնականք, որոնք հայերէն լեզուի ուսման պարապեցան և մեր մատենագրութեան մէջէն մէկ քանին թարգմանեցին. բայց ի մասնաւորի հայերէնի լեզուագիտութեան պարապողներն են Շրէօտէր, Բետերման, Փրեդերիկոս Միւլլէր, Բօլ տը Լակարդ, Լաւեր, Հիւպշման, Պրուկման, Տիւլորիէ, Գարիէր մեր ազգայնոց մէջ ալ Մ. Էմին, Ք. Պատկանեան և Հ. Ա. Տէրվիշեան, և այլք:*

Արդի Գերմանացի լեզուագէտք երկու դասի բաժնուած են. ոմանք՝ Հին–Քերականագէտք (Alt-Grammatiker) *ոմանք Նոր–Քերականագէտք* (Iun-Grammatiker) *կը կոչուին: Հին–Քերականագէտք՝ Լակարտ և Միւլլէր կը հաստատեն թէ հայերէն լեզուն հնդեւրոպական իրանեան լեզուին մէկ գաւառականն է. իսկ Նոր–Քերականագէտք՝ Հիւպշման և Պրուկման ասոնց կարծեաց հակառակը կը հաստատեն թէ հայերէն լեզուն հնդեւրոպական լեզուաց դասուն առանձին մէկ ճիւղն է: Առաջնոց կարծեաց գլխաւոր շարժառիթն ու հիմն այն է՝ որ մեր լեզուին մէջ շատ բազմաթիւ պարսկական եկամուտ բառեր կան, որոնց լեզուագիտական փոփոխումներն իրանեան լեզուի կանոնաց յար և նման են: Իսկ յետնոց ապացուցեալ կարծիքն է, որ մեր լեզուին իրանեան եկամուտ բառերն բնիկ հայկական բառերէն զատելով՝ կը գտնեն այս բնիկ հայկական բառից, անոնց փոփոխմանց, հոլովմանց, խոնարհմանց ու տառադարձութեան մէջ՝ այն ամէն յատուկ նշաններն, որոնք կ՚ապացուցանեն թէ հայկական լեզուն է հնդեւրոպական լեզու. և դարձեալ՝ հնդեւրոպական լեզուաց դասուն մէջ առանձին անկախ ճիւղ մը:*

«Ժամանակ մը այն կարծիքն, թէ հնդկերէնն կամ սանսկրիտ լեզուն ամենահին հնդեւրոպական լեզուն ըլլալով՝ է նաեւ մայր ամէն հնդեւրոպական լեզուաց, կամ գոնէ նախադաս ամէն հնդեւրոպական լեզուներէն, ըստ բաւականի մուտք գտած էր, և դեռ ոմանց մտաց մէջ ցայսօր կը գտնուի. բայց արդի լեզուագիտութեան ըմբռնումը բոլորովին տարբեր է: Այո՛, հնդկերէն լեզուն մեզի ամենահին ժամանակներէ ծանօթացած ըլլալուն ունի շատ հին և ամենահին ձեւեր, հանդերձ այսու՝ միւս հնդեւրոպական լեզուաց մէջ ալ երեւան կու գան շատ անգամ այնպիսի հին ձեւեր և փոփոխմանց օրէնքներ, որոնք ոչ նուազ յարգելի են իրենց հնութեամբ:

«Արդի լեզուագէտք հնդեւրոպական լեզուաց դասը՝ իրարմէ անկախ հետեւեալ ճիւղերու կը բաժնեն.

Ա. Արիական ճիւղ, որ կը բաղկանայ Հնդկերենէ և Իրանեան լեզուներէ:

Բ. Հայկական ճիւղ, որուն պատկանող լեզուն մի միայն մեր հայերէնն է, որ ծանօթ է մեզի Ե դարէն սկսեալ: Այս մեզի ծանօթ հայերէնը՝ գրաւոր կամ մատենագրական լեզուն է: Բնականաբար՝ ինչպէս ուրիշ հնդեւրոպական լեզուք, այնպէս մեր գրաւոր հին հայերէնն իւր գաւառաբարբառներն ունէր, սակայն գաւառաբարբառներով շարադրած մատենագրութիւն մը մեզի չէ հասած. միայն թէ ինչ ինչ հեղինակաց գրութեանց մէջ բառեր, ձեւեր ու ասութիւններ կը նշմարուին: Իսկ արդի գաւառաբարբառներն դասական՝ հին հայերենէն լայնատարած անջրպետով մը անջատած են:

Գ. Յունական ճիւղ:
Դ. Ալբանական ճիւղ:
Ե. Իտալական ճիւղ:
Զ. Կելտական ճիւղ:
Է. Գերմանական ճիւղ:
Ը. Բալտիկ–Սլաւական ճիւղ:

«Այո՛, մեր հայերէնն է համադաս լեզու մը միւս հնդեւրոպական լեզուաց ճիւղերուն, և եթէ համեմատական մանրամասնութեանց իջնենք, կը գտնենք նաեւ այնպիսի հետաքննական օրէնքներ համեմատական լեզուագիտութեան համար, որոնք միւս ճիւղերուն մէջ չեն նշմարուիր: Ըստ այսմ մեծաւ իրաւամբ կրցան հաստատել

Նոր–Քերականագէտք, թէ հայերէնն՝ իրանեան լեզուներէ անկախ ճիւղ մըն է։ Օրինակի աղագաւ, քննենք Հայր արմ. սեռ. հաւր բառին համեմատութիւնը միւս Հնդեւրոպական լեզուաց հետ. հին հնդկ. pitàr. յուն. πατήρ. լտ. pater. հին իրլատ. ather. գոթ. fadar, գերմ. vater։ Ընդհանուր կանոն է հայերէնի համար, որ Հնդեւրոպական Թ գիրը բառին սկիզբը ձայնաւորէ յառաջ սովորաբար հ է. այսպէս նաեւ հին բառին մէջ... իսկ Հնդեւրոպական... գիրը հայերէնի մէջ երկու ձայնաւորաց մէջտեղը կ՚իյնայ։...

«Այսպէս գրեթէ ամէն գրի համար հայերէնն իւր ուրիշ օրէնքներն ունի։ Բայց կան նաեւ այնպիսի դէպքեր և փոփոխութիւններ, որոնց լուծումն արդի լեզուագիտութիւնը դեռ գտած չէ. սակայն նորանոր հետազօտութիւնք և քննութիւնք զանոնք ալ հետզհետէ լուծելու կը ջանան։ Համբաւաւոր Հիւպշման ուսուցչին խօսքն է, թէ հայերէնը պարսկերէնի համար ալ մեծ կարեւորութիւն ունի»[1]։

---

1. (Պատկեր, 1892 փետր)։

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ

Բանաստեղծութիւն՝ առաջին լեզու մարդկային ազգի։ — Անոր հետքն ի հինն Հայաստան։ — Գողթան երգիչք։ — Վէպք, վիպասանութիւն։ — Թուելեաց երգք։ — Մինչեւ առ մեզ հասած Գողթան երգոց հատուածք։ — Անոնց արուեստը։

Մարդկային ամենայն գիտութիւնք, ըսած է մատենագիր մը, մթերեալք են՝ ի գանձարանս Մուսայից, յորոց ազգ իւրաքանչիւր հանած առած է իր նախնական դրական կրթութիւնն, և անով իրեն համար սկզբնաւորած նորածին քաղաքակրթութեան դարագլուխ մը։ Ազգաց մատենագրութեան մէջ՝ քան զարձակ բան՝ բանաստեղծութեան նախընթաց ըլլալուն պատճառը այս է։ Որփէոսէ ութ հարիւր տարի վերջը, և չորս դար յետ Հոմերի՝ առաջին անգամ արձակ գրութիւն կ՚երեւնայ ի Յունաստան՝ փիւգացի գերւոյ մը՝ Եզովբոսի ընծայուած առակներով։ Նոյն ազգին հանճարեղ առասպելք՝ յորս անկենդան և անբան արարածք՝ հեշտալուր և դիւրանուաց կը հռչակուին՝ իրենց նախնի քերթողաց քնարի ձայնին, ժողովրդոց ի բարբարոսութենէ ի կրթութիւն անցքը կ՚ակնարկեն։ Այս պատճառաւ բանաստեղծութիւն՝ բնութեան ձայնն ու խօսք, մարդկային ազգի առաջին լեզուն, անոր սրտին և մտաց բացատրութիւնն համարուած է։ Այդ սրտի լեզուով, բնութեան ազդեցութեամբք խօսելու համար՝ ամէն անգամ մտաց կրթութիւն և ուսումն հարկաւոր կամ անհրաժեշտ չ՚ենթադրուիր, ուր բնութիւնն և իր զարմանալիքն են *դաստիարակ, չնչող և ուսուցիչ։ Զեփիւռն ունի իրեն համար ձայն մը. գարնան բազմագունեան ու բուրազուարթ ծաղիկներուն վրայէն անցնելով, անոնց ի հրապուրիչ գեղոյն և ի բուրմանց փոխ առնուած խօսք մը. — երկնից կապոյտը՝ որ անկէ անդին, հեռաւորն ու անծանօթ, բայց իրենց սրտին ու մտաց սիրելի ու հաճոյական գաւառ մըն է, ուր կ՚ախորժին թափառիլ. զբօսավայր և սփոփարան՝ իրենց հակառակամարտ կրից, յուսոյ՝ ուրախութեան և ցաւոց։ Այդ տարփելի և ակնապարար պարզութեան վրայ՝ յանկնկալս իրարու վրայ խիտ առ խիտ դիզուած ամպեր, անոնցմէ ձայթող և որոտացող գոռմունք, անոնց վրայէն արագաթռիչ սահող անցնող փայլատակունք, սեաւ ու մըթին գաւառներու մէջ տարածուած ձգուած լուսոյ ճամբաներ, երկնակամարին վրայ վառ ի վառ փայլող աստեղք, երբեմն դշխոյ մը՝ մէջերնին երեւցող լուսնի խաղաղափիւռ և հանդարտասիւք պայծառութիւն, զանոնք ամէնքը՝ խաւարին հետ յերկրէ հալածող վանող ու տիեզերաց վրայ միակ իշխող արեգակն՝ նախընթաց կարապետ ղրկելով զվարդամատն արշալոյս, բնութեան այս ամէն երեւոյթներ՝ ունեցեր են իրենց ազդեցութիւնը՝ քերթողի սիրտ ու հոգի կրող հանճարներու վրայ, և որ բարեբաղդաբար՝ ամէն դարուց, ազգաց և ժամանակաց կը վերաբերին, և անըսպառելի բովք են երեւակայութեան և զգացմանց։*

Յերկնաւոր յանծայր սահմանաց՝ յերկիր որ դառնան աչք, հո՛ն ալ ամենագեղ բնութեան զարմանազուարթ ու հրաշապատում գիրքը բացուած կը գտնեն. անոր ամէն արարչագործ ու արարչապատում առատ ձեռքով ցանած ցրուած գեղեցկութենէն ձայն մը կը լսեն, խօսք մը ազդեցութիւն մը կ՚ընդունին սիրտք և զմայլմամբ կը յափըշտակին։ Ծով իր անպարագիր ընդարձակութեամբն ու հանդարտութեամբ կը գրաւէ զմիտս. փոթորկալից յուզմամբն և լեռնակուտակ ու փրփրադէզ կոհակօք կը զարմացնէ ու կը սասանեցնէ. վտակք՝ գարնան հեշտալիր համբուրիւ արթնցած ու զուարթացած ու բազմազուարճ բազմաբոյր և բազմատեսակ ծաղկանց ու խոտոց մէջէն բացուած ճամբաներէն խոխոջելով կ՚անցնին՝ անոյշ յիշատակներ արթնցնելով, յաղթ և առատաջուր գետք՝ զիրար բռնաբար մղելով կը հոսին կը թափին զիրենք կլլող ծովուց ընդարձակութեան մէջ, ծաղկունք իրենց գեղո՛վն ու բուրմամբ, ծառք երկնաբերձ ու սաղարթախիտ ոստերով. թռչունք զմայլական ու հեշտալուր գեղգեղանօք և ճռուողելով, գազանք վայրենի և ահագնասաստ մռընչմամբ, և այլն. և ասոնց ամենուն վրայ իշխող մարդն՝ իր բազմարկածեան կենօք, մխիթարութիւն և յոյս սփռող որրանովը, առոյգ ու գեղապատշաճ հասակաւն, յափըշտակող ու յափշտակիչ սիրով, մեծութեան փառաց ու զինուց տենչանօքն, իր չուրջը պատած՝ մահուան ու մոռացութեան աշխարհի մը մէջ՝ անմահանուն յիշատակաց փափաքանօք, ու բովանդակ տիեզերօք գոհ չեղող սրտին՝ անպատուհան ու անդուռն վերջին ու մարախլապատ բնակութեամբ, ուր վերջապէս կը լռեն ու կը դադրին ամէն իղձք և կիրք։

⁂

Ունէին մերքն՝ ինչպէս ունինք և մեք՝ անկապուտ և ամենանորոգ ժառանգութիւն մը, բնութեան ամենագեղ տեսարաններով զարդարուած հայրենիք. երկնահերձ և ձիւնազգած լերինք, զուարթագեղ բլրակք, հովիտք և ծմակք. բուրեան և գունագոյն ծաղկունք, առատաջուր գիրք ծիծաղախիտ և հանդարտաքայլ վտակք, ամենազգի բոյլք և սոյլք թռչնոց. և բնութեան Տիրոջ այդպիսի առատ ձրիւք զարդարուած հողոյն վրայ՝ դիւցազանց դարերուն արժանաւոր պատմութեան մը դրուագք։ Անկարելի է ենթադրել՝ թէ այդ բնութիւն և պատմութիւն՝ անզգայ ու ցուրտ անտարբերութեան մը մէջ ձգած ըլլան զմերոն։ Կրնային Հայք, խիզախք ի զէն և ի զարդ, քաջայան-

զուգն և արի ի պատերազմունս, որսասէրք և զբօսասէրք, մոռնալ վայրկեան մի զքնար, կամ անոր թելից հոգեշարժ ձայնին՝ չտալ զայն կարեւորութիւն և յարգ՝ ինչ որ ուրիշ հին կամ նոր ազգաց քով կը գտնենք, անախրոզք երեւնալով, ինչպէս տեղ մը կ'ակնարկէ Խորենացին «երգարանաց բանաւորաց»․ բայց անկարելի կ'երեւնայ կարծել՝ նկատելով իրենց քաղաքական ու բարգաւաճ գիրքը, որ ընդհանուր սովորութենէ դուրս և հակառակ՝ երբեմն հանգիստ, զբօսանք և սփոփանք չփնտռէին․ կամ երկար արութեամբք խոնջք և պարտասեալ՝ թշնամեաց բազմախուռն բանակաց մէջ փախուստ, սարսափ ու մահ՝ տարածել սփռելէն ետքը՝ զիրենք պաշտպանող վահանին վրայ կռթնած ինկած տեղնին, հայրենեաց գոհութիւնն ու գովութիւն՝ իրենց փափաքելի չըլլար․ կամ կողերնէն կախուած՝ արիւններկ ու մահուամբ անյագ սրոյն, զինուց ու զարդուց քաջութեանն ու գովեստից անտարբեր զըտնըւէին։

Պատմութիւնք և հատակոտորք ազգային և մինչեւ առ մեզ հասած Գողթան երգոց կը հաւատարմացնեն զայս, սոսկ կարծեաց և ենթադրութեանց անձուկ սահմանէն դուրս հանելով։ Խորենացին շատ անգամ կը յիշէ զանոնք․ ու կարծես թէ կերպով մը իր առաջին խօսքը, զոր մէջ բերինք, ետ առնել ուզելով «Առաւել յաճախագոյն, կ'ըսէ, հինքն Արամազնեացն ի նուագս բամբռան և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք»։ Կը հաւատարմացնէ և Ագաթանգեղոս․ Տրդատ՝ մեր թագաւորաց մէջ՝ ի Հռովմ և ի հայրենիսն հռչականուն և զարմանալի արութեան հանդիսիւք, ժամանակակից քերթողաց նիւթ տուած է՝ երգօք և առակօք գրուատելու իր քաջութիւնը․ «Թագաւորն Տրդատ․ – կ'ըսէ պատմիչը, – զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեան աւերէր քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն․ զաշխարհն ասորեստանի աւերէր և հարկանէր ի հարուածս անհնարինս։ Վասն

այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց թէ իբրեւ զսէգն Տրդատ՝ որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց»։ Դարձեալ նա ինքն Ագաթանգեղոս նկարագրելով Տրդատայ ձիգն ու ջանքը ի խափանել հրաշագեղն Հռիփսիմեայ երկնախրախոյս և աստուածահրաշ արիութիւնը, երբ թագաւորն մտաւ ի սենեակն՝ ուր հրաման տուեր էր արգելուլ զՀռիփսիմէ, և արդէն վստահ էր իր յաղթանակին վրայ, կը յաւելու․ «Առ հասարակ մարդիկն՝ ոմանք արտաքոյ ապարանիցն, կէսք ի փողոցս ի ներքսագոյնս, առ հասարակ երգս առեալ բարբառեցան կայթիւք վազելով ցուց բարձեալ մարդկանն, կէսք ի բերդամիջին և կէսք զքաղաքամէջն լցին խնջոյիւք առ հասարակ․ համարէին հարսանեացն զպարսն պարել և զկաքաւսն յօրդորել»։ Բիւզանդ՝ ոչ լոկ հեթանոս Հայաստանի, այլ քրիստոնէութեան դարերուն՝ Լուսաւորչայ և իր որդւոցը ժամանակակցաց համար կը վկայէ թէ «Դեգերեալ մաչէին... ի հնութիւն հեթանոսաց սովորութեանց... և զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, նմին հաւատացեալք և ի նոյն հանապազորդեալք»։ Վասակայ Սիւնւոյ համար ալ կ'աւանդէ Եղիշէ թէ «Քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժըշտութեան և զերգս հեթանոսականս»։

Այս երգերէն՝ որոց գոյութիւնը պատմական է, դըժբաղդաբար հայկական անգիր մատենագրութիւնը՝ մեզի ուրիշ նշանակութեան արժանի աւանդ մը հասուցած չէ, բայց եթէ քանի մը Գողթան երգոց հատուածք[1]։

---

[1] Այս հին երգերուն վրայ՝ գրեթէ մի և նոյն ժամանակի մէջ, և առանց իրարու գրուածները տեսնելու, երկու մտադրութեան արժանի և գիտնական երկասիրութիւնք հրատարակուեցան․ Մէկն է Մկրտիչ Էմին, Մոսկուայի Լազարեանց ճեմարանին ուսուցչի Վէպք հնոյն Հայաստանեայ գրուածքը, տպագրեալ ի Մոսկուա (1850)․ միւսն Վիեննայի Մխիթարեանց Ուխտին միաբան՝ Գաթըրճեան Հ. Յովսեփայ՝ Հայոց մատենագրու-

⁂

Ինչպէս Յունաց մէջ Հագներգուք, այսպէս ալ Հայաստան ունեցեր է ուրեմն իր երգիչները, և մանաւանդ Գողթան բարերեր ու գինաւէտ գաւառին մէջ, որք իրենց բանաստեղծական աշխուժովը հին ատենէն ի վեր համբաւ ստացան։ Այս գաւառը, ինչպէս իրաւամբ կ'անդրադարձնէ մեզի ժամանակակից հմուտ բանասէր մը, անտարակոյս Հայոց Ատտիկէաստանն էր, լեզուի գեղեցկութեան կողմանէ։ Իր բնակչաց քերթողական հանճարոյն արգասիքն են այն երգերուն հատակոտորները որ Խորենացւոյն ատենէն մինչև առ մեզ իրենց երկրին անուամբը կը յիշուին. յաւիտենական և մեր բանասիրութեան համար սիրելի յիշատակարաններ, իբրև մնացորդք հայ Աթենէոսի մը մեծագործ շինուածքին, որուն աւերը միշտ ողբալի պիտի ըլլայ[1]։ Ասոնք այլ և այլ ժամանակաց դէպքեր ու անցքեր մեզի յիշատակելնուն համար, այլ և այլ ժամանակ ունեցած են իրենց յօրինմանը։ Զանազան ժամանակ յօրինուած երգեր, տարակոյս չկայ որ զանազան երգիչներ ու հեղինակներ ունեցած են։ Բայց որովհետև ասոնց անուանքը՝ պատմութիւնը մինչև մեզի հասուցած չէ, ուստի և ընդունայն աշխատանք է անոնց բուն հեղինակը փնտռելու համար յոգնիլ։

թեան պատմութեանը (Վիեննա, 1851), Նոյն տարւոյն մէջ այս երգերուն վրայ հմտական հատուած մ'ալ հրատարակուեցաւ Բազմավէպ Օրագրին մէջ. (1850 դեկտեմբեր, և 1851 յունուար)։ Այս երեք հեղինակաց հետևողութեամբ յօրինած ենք մեր յօդուածը, շատ տեղ ոչ միայն իրենց կարծիքը՝ այլ նաև խօսքերնին փոխ առնելով։ 1855ին ուրիշ ազգային բանասէր մ'ալ, Ստ. Պալասանեան հետաքննական տեսութիւն մը հրատարակեց Գողթան երգոց վրայ՝ ի Պատմութեան Հայոց գրականութեան (Հատոր Ա. Ռամկական գրականութիւն), տպագրեալ ի Թիֆլիզ։

[1] ԱՅՏԸՆԵԱՆ (Հ. Ա. Վ.). Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի։

Սակայն այս երգերուն նիւթը յայտնի կը ցուցնէ որ ոչ քուրմերէ, և ոչ անոնց ազդեցութեան տակ անձինքներէ՝ կրօնական հանդէսներու մէջ կամ բագիններու առջև երգեցուելու համար շինուած են, այլ այնպիսի անձինքներէ յօրինուած՝ որոնց առջև արքունիք անգամ գոց չեն. և թերևս ազատաց ցեղէն վարձուած քերթողներ են, որոնց պարտք համարուած էր նոյն ցեղին մէջ հռչակուած քաջութեանց և առաքինութեանց գովաբան ըլլալ։

Որչափ ալ ազգերնուս հեթանոսութեանը ժամանակ յօրինուած են այս երգերը, բայց անոնց գործածութիւնը՝ դեռ մինչև քրիստոնէութեան Ե դարը կը տևէր։ Այս կարծեաց ստուգութեան երաշխաւորութիւնը՝ Խորենացւոյն խօսքերուն մէջ ունինք, որ նոյն երգերը մէջ բերելուն ժամանակ միանգամայն կը գրուցէ թէ անոնց գործածութիւնը դեռ ևս կը լսուի Հայոց Գողթան գաւառին բնակչացը քով։ Բիւզանդ ալ՝ Դ դարուն քրիստոնեայ՝ բայց իրեն աստուածաւանդ կրօնիցը հաւատարիմ Հայաստանին համար կը գրուցէ մեղադրանաց խօսքեր զորս յիշեցինք արդէն։ Մինչև Մագիստրոսի ժամանակ՝ դեռ այս երգոց գործածութիւնը կար. և ինքը մէկ հատուածը մէջ կը բերէ զոր իր ժամանակին գիւղականացն բերնէն լսած էր։

⁂

Բանաստեղծական քնարը թէպէտ և այլ և այլ ձայներ ունի, սակայն մեր ազգին մէջ երևցած կամ մինչև առ մեզ աւանդուած երգոց հատակոտորք՝ պարզապէս պատմական երգեր են. և մեր նախնեաց լեզուովը վէպք, վիպասանութիւն, վիպագործութիւն և թուելեաց երգեր կը կոչուին։

Համառօտիւ մը քննենք այս բառերուն նշանակութիւնը։

Էմինեանը՝ և Բազմավէպին մէջ հրատարակեալ յօդուածին հեղինակն կը համարին թէ Խորենացւոյն Երգ վիպասանաց կոչածը՝ ամբողջ բանաստեղծութեան գիրք մըն էր Պարսից Շահ-Նամէ վիպասանական գրքին նման, և յորում մեր հին ազգային քերթողք՝ Հայոց Թագաւորաց պատմութիւնն աւանդած էին։ Մինչև Քրիստոսի Զ դարը՝ այս երգերը պահուած էին, և ժամանակին մարդկանց մէջ ի կիր առնուած։ Կը վկայէ Խորենացին. «Զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւպ . . . որում և Պարսից մատեանքն վկայեն և Երգն վիպասանաց»։ Ուրիշ տեղ մ'ալ. «Արտաշիսի վերջնոյ գործք բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան»։ Երրորդ տեղ մըն ալ. «Այս ամենայն յայտնի են քեզ յերգս վիպասանաց»։ Այս խօսքերը ամենևին տարակոյս չեն ձգեր, թէ կային այնպիսի երգեր, և անոնց կիրառութիւնը յաճախած մինչև յաւուրս Խորենացւոյն։

Բայց իրեն պատմութեանը մէջ յիշուածները միայն մէկ քանի մը կտոր բան ըլլալով, կրնանք տարակուսիլ. ուստի աւելի հաստատութեան համար հարկ է որ մէջ բերենք Խորենացւոյն գրոց մէկ հատուածը՝ որով թերևս ամէն տարակոյս վերցուի։ Վասն զի Խորենացին՝ Մարաց աշխարհքէն բերուած գերեացը նկարագրութիւնն ընելէն ետքը կ'աւելցնէ. «Յայտնեն զայս ճշմարտապէս և թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողման գինաւէտ գաւառին Գողթան, յորս պատմին բանք զԱրտաշիսէ և զորդւոց նորա, յիշելով այլաբանաբար և զզարմիցն Աժդահակայ, վիշապազունս զնոսա կոչելով։ Այլ և ճաշ, ասեն, գործել Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանակ լեալ նմա ի տաճարին վիշապաց։ Այլ և Արտաւազդայ ոչ գտեալ, ասեն, քաջի որդւոյն Արտաշրոյ՝ տեղի ապարանից՝ ի հիմնանալն Արտաշատու նա անց, ասէ, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի դաշտին՝ որ անուանեալ կոչի Շարուրայ։ Այլ և տենչայ, ասեն, Սաթենիկ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ»։

Խորենացւոյն այս հատուածին մէջ՝ այլ և այլ գործողութեանց յիշատակութիւնք կան, որոնք այլ և այլ անձանց և ժամանակներու կը վերաբերին։ Հոն Աժդահակայ Անոյշ կնիկը և անոնց սերունդքը կը յիշատակուին, որոնք ինչպէս յայտնի է՝ Քրիստոսի թուականէն գրեթէ վեց դար առաջ կ'իյնան. կը յիշատակուի Արգաւան Մեդացի՝ որ Արտաշիսի պատւոյն համար ճաշ մը տուաւ, և միտք ունէր այն ճաշուն ժամանակ՝ դաւաճանութեամբ դարանիլ անոր կենացը։ Առաջին դէպքին և ասոր մէջ՝ գրեթէ եօթն հարիւր տարւոյ տարբերութիւն կայ։ Կը յիշուի Արտաշիսի Արտաւազդ որդին, ու նոյն թագաւորին Սաթենիկ կնկան վրայ գրոյցք կ'ըլլան։

Այսչափ իրարմէ հեռու ժամանակաց և անձանց պատմութիւնները ամփոփող երգերը՝ տարակոյս չկայ որ չէին կրնար համառօտ բաներ ըլլալ։ Ասիկայ որչափ ալ ենթադրուած ճշմարտութիւն մը համարուի, սակայն ճշմարտանման ըլլալովը՝ իրաւամբ քննութեան առիթ եղած, ու գրեթէ ստոյգ համարուած է։

Գողթան երգչաց պատառիկ մ'է առ Խորենացւոյն յիշատակուած Ուլունքն Շամիրամայ ի ծով։ Այս համառօտ խօսքին պատմութիւնը կը թուի մինչև հիմայ Արտամէդ քաղաքի բնակչաց քով պահուած հետևեալ աւանդութիւնը։ Շամիրամ՝ ասորեստանեայց հզօր և մեղկաղէտ թագուհին Արայի հետ ունեցած սիրային անյաջող կռուէն ետքը, Արտամէդի բուրաստան հովանոցաց մէջ կը ջանար դարմանել իր սրտին վէրքերը։ Այն յուլունքով զոր իբրև մանեակ սովոր էր կրել պարանոցին վրայ իբրու կախարդական զօրութեամբ՝ հետամուտ էր հրապուրել ու մոլորեցնել հայ երիտասարդութիւնը։ Հայոց ծերունի նահապետներէն մէկը՝ մտածեց զինաթափ ընել *երիտասարդները դիւթելու հնարքներէն։ Թագուհին օր մը կը լոգնար իր բուրաստանին մարմարեայ աւազանին մէջ։ Իր հագուստը, զարդարանք, կախարդական յուլունք դրուած էին աւազանին մօտ վարդենեաց հովանւոյն տակ, կանաչ խոտերու վրայ. Շամիրամ՝ իր գիսակաց երկար հիւսերը արձակած կը սանտրուէր։ Այն միջոցին գաղտագողի մտեցաւ ծերունի նահապետը, և իմանալով թէ թագուհւոյն հրապուրանաց բոլոր գաղտնիքը յուլունից մէջ է, յափշտակեց խլեց մանեակը, և սկսաւ փախչիլ դէպ ի ծով։ Զայրացած թագուհին՝ այնպէս հերարձակ վազեց ծերունւոյն ետեւէն։ Երբ չկարողացաւ հասնիլ, իր անհնարին կատաղութեան մէջ՝ խլեց աչագին քարաժայռ մը, և գլխի երկար մազերուն պարսատիկի ձեւ տալով, ժայռը դրաւ անոր մէջ, և նետեց ծերունւոյն ետեւէն։ Ժայռը չդպաւ, և անցնելով ընդարձակ տարածութիւն, ընկաւ Արտամէտի մօտ, փոսի մը մէջ։ Ծերունին հասաւ մինչեւ Դատվանի ծովեզերքը, ձգեց ծովուն մէջ կախարդական յուլունքը, և երկիրն ազատեց հեշտասէր թագուհւոյն խարդաւանքէն։ Արտամէտի երգիչները երգ յօրինեցին, և այն երգի խօսքերէն են՝ Խորենացւոյ յիշած երեք բառերը*[1]*։*

⁂

Երկու տեսակ ազգային պատմական երգեր կային. ոմանք Վիպասանաց երգք կը կոչուէին, ոմանք ալ Երգք թուելեաց։ Ասոնք այլեւայլ տեսակ նիւթեր բովանդակելով, ոչ միայն մեր երկրին՝ այլ նաեւ Մարաց ու Պարսից և Ասորեստանեայց աշխարհին յատուկ աւանդութիւններ կը բովանդակէին։

Անոնց մէջ առաջին կը համարուէին այն երգերը՝ որոնց մէջ մեր քաջ թագաւորաց ու զօրավարաց արութեան ու նշանաւոր գործոց յիշատակութիւնը կ'ըլլայ. երկրորդ այն երգերը՝ յորս Մարաց և Պարսից վրայ խօսք կ'ըլլայ. և երրորդ անոնք՝ որոց մէջ Ասորեստանեայց աւանդութիւնները կը տեսնուին։

Առաջիններուն կարգէն կրնանք համարել՝ նաեւ հըմտագոյն քննադատից կարծեօք՝ մեր հին նախնեաց վրայ պատմողաբար մեզի աւանդուած դէպքերը, թէպէտ և առանց յիշատակութեան Գողթան երգչաց, Խորենացւոյն առաջին գրոց մէջ, Երուանդեան Տիգրանայ վրայ երգուածները, որ Հայկազն թագաւորաց մէջ ամենէն աւելի սիրելագոյնն էր, ու ոչ միայն արտաքին ու ներքին բարեմասնութեամբք՝ այլ և իր քաջութիւններովը իր ժամանակին ազգային քերթողացը երգերուն և աշխուժին առիթ տուած։ Խորենացին՝ որ նոյն թագաւորին վրայ սքանչացողներէն մէկն է, կը պատմէ անոր ձեռքով Հայաստանի մէջ եղած տեսակ տեսակ բարեկարգութիւնները, Յունաց ազգը հարկատու ընելը, Աժդահակայ հետ խնամենալը, ու ետքը անոր դէմ պատերազմիլը. զինքն ըսպաննելը, ու բոլոր թագաւորական ընտանիքը գերելով՝ Երասխ գետին քով բնակեցնելը զանոնք, մասնաւոր քաղաքներ ու տեղեր տալով անոնց։ Այս տեսակ տեսակ դիպուածոց վրայ իրենց քնարը նուիրած են Գողթան երգիչները. որոց բանաստեղծութեան համառօտութիւնն է զոր Խորենացին մէջ կը բերէ. «Զայս՝ և որ այլ այսպիսիք բազումք՝ երեր մերոյ աշխարհիս խարտեաշս այս և աղերեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան. երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրս և յըմպելիս և ի խրախճանութիւնս օրինաւոր. զորմէ ասէին ի հինսն մեր որք բամբռամբ երգէին, լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյ չափաւոր. մեծիմաստն և պերճաբան, յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի … Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի,

---

[1] Ռաֆֆի, Կայծեր Բ. 408։

զամենայն ուրուք կենցաղ մտացն լծակաւ կչռէր։ Ոչ ընդ լաւագոյնն խանդայր, և ոչ զնուաստն արհամարհէր. այլ ամենեցուն հաւասարակաց հնարէր՝ զխնամոցն իւրոց ի վերայ տարածել զգեստ»։

Պատմութիւնը կ'աւանդէ թէ Երուանդեան Տիգրանը երեք որդիք ունեցաւ, Բաբ, Տիգրան և Վահագն. և թէ ատոնց մէջ ամենէն հռչակաւորն իր քաջութեամբ եղաւ Վահագն. և իր արութեանցը վրայ զարմացող Հայաստան աշխարհը և անոր դրացի Վրաստան՝ աստուածոց կարգը դասեցին զինքը։ Գողթան երգողաց ալ իր յիշատակին ընծայած գովաբանութիւններէն՝ հետեւեալ տողերը պահած է Խորենացին.

« Երկնէր երկին և երկիր,
Երկնէր և ծիրանի ծով.
Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն.
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր.
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր.
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր.
Նա հուր հեր ունէր.
Ապա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք »։

Այս երգը՝ իր ամբողջով լսած է նոյն ինքն Խորենացին, ինչպէս պատմութեանը մէջ կ'աւանդէ։ Իրմէ ժամանակաւ կրտսերագոյն և հաւատարմութեան արժանի մատենագիր մ'ալ, Յովհան պատմիչ Դրասխանակերտցի, կը վկայէ վասն Վահագնի թէ «ի կռնտոցահար աղէրախս ընդ վիշապաց համբաւէին կռուել նմա»։

Վահագնէն ետքը՝ Գողթան երգողաց քնարին ու քերթողական ոգւոյն առիթ տուած է Արտաշէս Բ։ Այս քաջ ու սիրելի թագաւորին կենաց այլ և այլ պարագաները՝ առատ նիւթ կրնային մատակարարել, ինչպէս արդեամբք ալ մատակարարած են նոյն ազգային քերթողաց։ Հետեւեալ տողերը՝ պատառիկ կրնան համարուիլ այն քերթուածոց, և որոնք մասունք են անշուշտ ընդարձակ ոճով գրուած գեղեցիկ երկասիրութեան մը։

« Հեծաւ արի արքայն Արտաշէս
Ի սեաւըն գեղեցիկ
Եւ հանեալ զոսկէօղ
Շիկափոկ պարանն,
Եւ անցեալ՝ որպէս զարծուի
Սըրաթեւ՝ ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ
Շիկափոկ պարանն,
Ընկէց ի մէջք
Օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց
Զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցեալ
Ի բանակըն իւր »։

Այս գեղեցիկ ու ընտիր երգը՝ բանաստեղծական այլաբանութիւն մ'է այն դէպքին՝ զոր Խորենացին իր Պատմութեան գրոցը մէջ կ'աւանդէ։ Արտաշէս հասաւ իր փափաքին. Ալանաց աչագեղ դուստրը՝ Սաթենիկ, որ իր երեսաց վայելչութեամբը՝ արիւնռուշտ պատերազմաց մէջ գրաւեր էր քաջին Արտաշիսի սիրտը, Հայաստանի թագուհի եղաւ. և արքայն՝ իր սիրոյն ու մեծութեանը և հարստութեան արժանի հարսանիք մ'ընել տուաւ անոր պատւոյն։ Այս մեր խօսքին հաւատարիմ վկայութիւն են Գողթան երգոց հետեւեալ տողերն.

« Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն »։

Սակայն այսչափ փառքով, ու մարգրտի և ոսկւոյ վերայ կոխելով Արտաշիսի արքունիքը մտնող Սաթենիկը՝ նոյն արքունեաց մէջ միշտ բարեբաստութիւն չկրցաւ գըտ-

նել, և ինչպէս պատմութենէն կ'երեւնայ, իր հասակը, գեղեցկութիւնն ու բարքը այլ և այլ հակառակամարտ կրից խաղալիկ եղան։ Իր քաջութեամբ մերձակայ ու դըրացի ազգաց սրտին մէջ վախ ձգող Արտաշէսը՝ չկրցաւ իր արքունեացը մէջ եղած խռովութեանց դէմն առնուլ։ Նոյն ինքն Սաթենիկ՝ աւելի իր ներքին բերմանցը քան պարտուցը հնազանդելով, իր փեսային տանը մէջ՝ Արտաշիսէն դուրս անձի ի խնդիր ելլելով, քաջին Արգամայ, թէ զԱրտաշէս թագաւոր և թէ անոր որդիքը նախանձորդ ու թշնամի կը յարուցանէր ոչ միայն իր անձին՝ հապա նաեւ Արգամայ. ու մէկ կրքի մը պատճառաւ՝ բոլոր արքունեաց և աշխարհին խաղաղութիւնը տակնուվրայ կ'ըլլար։ Անշուշտ այս կիրքն ու սէրը կ'ակնարկէին վիպասանաց երգերէն մնացած այս տողերը.

« Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս
Զարտախոյր խաւարտ եւ զտից հաւարծի
Ի բարձիցն Արգաւանայ »։

Այս երգին մէջ յիշուած Արգաւանը՝ էր նա ինքն Արգամ, որ իր իմաստութեանն ու քաջութեանցը համար՝ Հայոց թագաւորներուն երկրորդը համարուած էր, և անոնցմէ այլ և այլ պատիւներով և արտօնութեամբք փառաւորուած։ Այսիկայ օր մը զթագաւորն Արտաշէս իր կոչնոցը հրաւիրեց. և այն ուրախութիւնը՝ թշնամութեան առիթ կարծուելով՝ սպաննուեցաւ, ու թագաւորական հրամանով տունը տեղը այրեցաւ, և ընտանիքն ալ ջնջուեցան։

Արտաշէս՝ Մարաց ազգին զօրութիւնը խորտակելէն ետքը, Հռովմայեցւոց հարկ տալը դադրեցուց. Դոմետիանոս կայսրն ալ զօրք ժողվելով՝ եկաւ Հայաստան. Բասեն գաւառին հովտացը մէջ երկու բանակներն իրարու զարնուեցան. և յաղթութեան պարծանքը Հայերը ժառանգեցին։ Այն պատերազմին մէջ քաջութեամբ անուանի հանդիսացաւ Սմբատ, որուն համար կը գրուցէ Խորենացին, թէ ծերութեանը հասակին մէջ՝ պատերազմական արուեստին մասուցած երկար փորձառութեամբը «երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զճակատն».

Այսպէս քաջ պատերազմող մը իր արութեանցն ու սրտին արժանի գրուատանքը գտած էր ազգային երգոց մէջ, որոնք զարմանքով կը յիշատակէին իր տուած պատերազմունքը, ու հնացեալ հասակին մէջ՝ նոր զէնքերով Հայաստանի փրկութեան առիթ ըլլալը։

Մահը՝ որ աշխարհի տեսարանաց մէջ ամենուն վարագոյրը կը գոցէ, Արտաշիսի բազմափորձ կենաց տեսարանն ալ պիտի գոցէր։ Վերջին անգամ աչքերը փակելուն ժամանակ՝ դեռ եւս կարօտ կը քաշէր իւր հայրենեացը. կը փափաքէր կրկին տեսնել իր հայրենեաց վայելչութիւնը, ու այս սրտառուչ տողերը կ'արտասանէր, զոր Մագիստրոս իր ժամանակակցացը բերնէն լսած է, և որ հնութեան ամէն հետքը կը կրէ իր վրան.

« Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն նաւասարդի.
Զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց.
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք »։

Այսպէս մեռաւ Արտաշէս։ Սակայն իր քաջութեանցն ու հայրենասիրական ջանից երախտապարտ երեւցաւ Հայաստան։ Աննման թագաւորին մահը ողբ արտասուօք լալէն ետքը, շատերը ժամանակին հեթանոսական սովորութեանը համեմատ չուզեցին իրմէն բաժնուիլ նաեւ ի մահուանն. և ողջ ողջ ինքզինքնին կը թաղէին։ Արտաշիսին Արտաւազդ որդին՝ որ հօրը յուղարկաւորութեան ներկայ էր, ու ետքը անոր թագաւորական աթոռը պիտի ժառանգէր, հօրը եղած այսչափ փառաց ու պատուոյն վրայ նախանձեցաւ, անոր դիակնացեալ մարմնոյն ընծայուած պատիւն իրեն իշխանութեանը պղտիկութիւն մը ենթադրեց, ու դժկամակելով մ'ըսաւ հօրը․

« Մինչ դու գնացեր, եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար
Ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ »։

Այս նախանձու արդասիք խօսքերուն վրայ նեղանալով Արտաշէս՝ անիծեց զինքն ու ըսաւ.

« Դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ ի վեր ի Մասիս.
Անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես »։

Աս անէծքին հետեւանք կը համարուին Արտաւազդայ մահուան պարագաները, զոր աւանդած է մեզի պատմութիւնը։

Արտաւազդայ ոչ միայն մահը՝ այլ նաեւ ծնունդն ալ առասպելօք լի կը ներկայացնեն մեզի Գողթան երգիչք։ Անոր անհանդարտ ու խռովայոյզ բարքը տեսնելով, որ անարժան էր արքունեաց, և մանաւանդ Արտաշիսի արքունեացը, այլաբանելով կը զրուցէին թէ «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, և դեւ փոխանակ եդին»։

Կարծես թէ Արտաւազդայ կենաց այլ և այլ հանգամանքը՝ կ'արդարացնեն վիպասանից այս քերթողական ենթադրութիւնը։ Իր անձնահաճ ու նախանձոտ բարքովը բոլոր թագաւորական տունը տակնուվրայ ըրաւ. հօրը սիրտը ցրտացուց յԱրգամայ. և անոր պատիւը ինքը յափշտակեց, թագաւորութեան երկրորդական աթոռը։ Նախանձեցաւ նաեւ Սմբատ սպարապետին վրայ, ու անոր տրուած արժանաւոր պատույն չկարենալով համբերել, ետեւէ եղաւ զինքն սպաննելու. բայց իրեն վախճանին չկրցաւ հասնիլ։ Վասն զի Սմբատ իմանալով անոր միտքը, թողուց Հայոց սպարապետութիւնը, և Ասորեստանեայց կողմերը գնաց իր բնակութիւնը հաստատելու։

Այսպիսի բարուց տէր Արտաւազդը՝ չկրցաւ երկար ատեն վայելել իր թագաւորական իշխանութիւնը։ Երկու տարիէն ետքը Մասիս լերան վրայ, որսալու ժամանակ՝ մեծ ու խոր վհի մը մէջ ինկաւ։ Առասպելն ու երեւակայութիւնը՝ իրենց ատելի թագաւորին անակնկալ կորուստը ուրիշ կերպով մեկնաբանելով, զրուցեցին թէ Արտաշիսի անէծքը՝ որդւոյն վրայ իրենց արդիւնքն ունեցան. վասն զի ազատ Մասեաց քաջերը հասան, բռնեցին, ու երկաթի շղթաներով կապկպելով, այրի մը մէջ փակեցին զինքը. միայն իր երկու հաւատարիմ շները չկրցան բաժնուիլ իրմէ, այլ միշտ շղթաները կը կրծեն, զանիկայ բանտէն ազատելու համար։

Գողթան երգողաց հատուածներէն է նաեւ հետեւեալ երգը Վարդգեսի վրայ երգուած, որ առաջին Տիգրանայ քեռայրն էր, Արտիմէդ քաղաքին շինուածքին համար։

«Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն ըզՔասաղ
գետով,
Եկեալ նըստեալ զՇրէշ բըլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, ըզՔասաղ
գետով,
Կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի»։

⁂

Ասոնք են ահաւասիկ այն սակաւիկ՝ բայց մտադրութեան արժանի Գողթան երգողաց հատուածներն. զորս Խորենացին աւանդած է մեզի իր ընտիր պատմական երկասիրութեամբը։

Բանասիրաց հետաքննութեան համար հետագայ հատուածները մէջ կը բերենք, որոնք Ստեփանոսի Ռոշքեան բառարանէն քաղուած են, և հին մատենագրաց, կամ իրեն ձեռքն հասած պատմագրաց մնացորդք կ'երեւին։

ՀԱՅԿ ԵՒ ԲԷԼ. «Անցոյց ուժովն զԲէլ՝ Հայկն. Պ. ՀԱՅ
խուռն և խռովարար հոսէին զօրք նորա ընդդէմ Հայկայ
Իսկ քաջն Հայկ մեծարապէս պատուի. Յոհ. Պտ. Ա.
Առ քաջն Հայկ յուսադրաբար գայ ասելով. »
Հեծելոյն սրաթեւութեամբ առ Բէլն հասին. »
Ջանայր Բէլ տեղաշարժել զՀայկ. »
Սպանեալ Հայկայ զԲէլ՝ զայլսն տարամերժեաց. »
Ներբողմ հիւսածոյ թագիւ պսակեալ և ոչ կռածոյ. »
ՄԵՀԵՆԱԿԱՆ [illegible]. Ասաց զգուշանային զրեանս առ ինքն ածել. Պտմ.
Բագամ ի քրմարանն մնացեալք հանէին զքուրմն զայն արտաքս.
(Խոր. Պտմ. Ա)։
Կացուցանէ սպասիկս և պահաւորս և հազարապետս զոհարանաց։
(Յհ. պտմ. Ա.)
Նախնիքն մեր հմայութեամբ յոյժ ախորժէին. Պտմ. Հ.
Հրաման եւ քրմական պաշտօնէից »
ՇԱՄԻՐԱՄ. Յամառնական եղանակս յԱմարաստան իջանէր Շամիրամ ի զբօսանս։ Պտմ. Հ.
Սամիրամ զամենաբեր բուրաստան տնկել տայ.
Սամիրամ պատեաց զԲաբելոն ամենամեծար պատուարօք.
Սամիրամ զի պագշոտեցաւ ընդ հոլովս խեղդամահ յորդւոցն եղեւ։
Վարուրն Շամիրամ շինէ զաւանն,
ՍՄԲԱՏ. Էր ազատ իշխանորդին և խնդրէր զօրէորդ Սմբատայ։ Պտմ. Հ.
Արշակայ ազդեալ Սմբատ զգալն Հռովմայեցւոց.
Սմբատայ ակնարկեալ առ սպարապետն Հայոց, թէ ո՞վ իցէ նա.
Դարձաւ Շմբատ յետս մեծաւ ամաչմամբ յարքայէն.
Անվեհերաբար Սմբատ զինքն առաքել դեսպան ասաց.
Սմբատ հրամայէ արկղապանին չտալ զոսկի նուագս։
Սմբատ երաշխաւորս վասն դարձուցանելոյ զգերիսն առնոյր ինոցանէ։
Սմբատ զմեծագին զերեքանկեայն տայ զմատանին։
Յոյժ ծախական եղեն հարսանիք Սմբատայ։
Մեծարոտին Սմբատայ տեսեալ զքաղմութիւն լեզէոնաց՝ ոչ ինչ կասեաց։
Սմբատ էր ճշմարտասէր,
Սմբատ յորդաբար տայր պարգեւս նախարարացն։
Ամենեցուն պատուելի եղեւ Սմբատ։
Սմբատ առանց վիրաւորութեան եկ ի մարտէն։
ՎԱՂԱՐՇԱԿ. Նախարարաց անուանադիրն Վաղարշակ։
Մերս Վաղարշակ զհրահասուն ի կարգս թագաւորաց.
Խոզովակւորս առնէ զնոսա Վաղարշակ.

Վաղարշակ մեծն քաղաքավարապէս ընդ ամենեսին եկաց։
Վաղարշակ պատեաց զՎարդգէս աւան և պարսպեալ Վաղարշապատ կոչեաց,
ԱՐԱ. Եւ ի խմբման պատերազմին քաջն Արա չահատակէր արիաբար։
Այգա զեղեցիկն Արա պատգամաւորէ զզօրավարն իւր առ Սամիրամ.
ԶԱրան զեղզեղ աւեն լեալ։
Իսկ Արամազդայ Ակարչի տաճարն լեալ ընթերցաք։
ԱՐՇԱԿ. Արշակայ ազդեալ Սմբատ զգալն Հռովմայեցւոց։
Արշակ թուլասրտաբար զթագաւորութիւն իւր վարէր։
Հրովարտակ զեկուցական հանէ Արշակ։
Արշակ քղամդազգեայ յահեղ նստեալ առենի։
Տայ հրաման Արշակ հաշուարարին իւրում տալ զօրավարացն հ. դահ.
Արշակ մեկուսումն առնէ հիւսիսական զօրացն։
Արշակ նախադուշեաց և կից նմին այլք հնչեցին։
Արշակ նշանաւորեաց մարգարտօք զխոպոպս թագաւորին իւրոյ։
Արշակ շուտափութութեամբ զզօրսն նքթեցոյց։
Զմարգարտօք շարեալ և ակամբք ընդելուզեալ թագ ի գլխին կապեալ՝ եկ առ նախարարսն Արշակ։
Բազում ինչս չեղջակուտեաց Արշակ։
Էր յամենայն իրագործութիւնս պարագէտ քաջն Արշակ։
Միայն պարագխոումն արքայիս կարէր արգելուլ զթշնամիս։
ԶԱրշակ մեծաւ հանդիսիւ պսակեն։
Ընդ Տօբարաւ հանդչէր արքայն Հայոց։
Ի վերայ Արշակայ մահուանն աղաղակոտ կոծմամբ լնուին զքաղաքն։
ԱՐՇԱԿ Գ. Արշակ առնու զկողմն Յունաց վասն հաւատակցութեանն,
ԱՐՏԱՇԱՏ. Յաղթանակաւոր խրախութեամբ ի քաղաքին Արտաշատ մտանէր արքայն։ Ս[illegible]. պտմ.
Որք յԱրտաշատ էին քաղաք յոյժ յղփաւորք էին և հրճուէին,
Գայ ի չորեքդռնեայ քաղաքն Արտաշատ։
ԱՐՏԱՇԷՍ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ. Արտաշէս զաննուաճելի ազգն նշկահեաց զԱլանաց,
Արտաշէս շինէ զԱրտաշատ և չորեքանկիւնի քարամբք նշանէ զկոպարն։
Արքայն ոսկիանական պատուով մեծարէ զԱրտաշէս։ Յոհ. Պտմ. Գ.
Այսպէս զօրէորդն Ալանաց շղկապեցին արքային։
Չափաւորապէս Արտաշէս զաշխարհն իւր յօրինէր կազմէր։
Սաթենիկ եհաս տիկնական պատուոյն։ Մխ. պտմ.
ԳՆԵԼ. Արշակ իբր անկամակից սպանման Գնելոյ՝ կոծ առնէ։
Հազիւ յերեսս Գնելոյ բուսեալ էին վարսք՝ յորժամ թագաւորն․․
ԳՐ. ԼՈՒՍ. Սուրբն Գրիգոր Հայոց լուսաւորիչ և նախավարդապետ,
ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ. Ցանկուցանէր զԵրուանդ ղաղտամտաբար։

Բարկացեալ թագաւորն, զբանն խրթնածածկեաց Երուանդայ.
Երուանդ փոխաքերեաց զբանակն յանկոյս գետոյն,
Երթայ զօրն քայլ առ քայլ՝ մինչեւ հասս Երուանդ,
Պարսպացն խաթարմամբն առաւ Երուանդակերտ,
Տէր—Ն. «Զազնուաբարոյան Տիրան արքայ ի պատիւ հանէր, Պ—մ. Հ.
Զթագն ականալից եդ ի գլուխ Տիրանայ.
Տիրան ամենափարթամ արքայն մեր շինեաց.
Տիրան Հայոց արքայն բազմակարող յամենայ.
Ի Տիրանայ պսակման ոսկիս հապաղէին.
Տիրան զաշխարհս Հայոց փարթամացոյց.
Տէգր—Ն Ա. Տիգրան մեծն զաշխարհս մեր խաղաղաբար վարէր,
Աժդահակ զգիշերն ողջոյն մտախոհեցաւ զՏիգրանայ.
Իբրեւ զհասեալ ծառս վայր անկանէին Մարք.
Տիգրան զանհնարեալ եգիտ ճար,
Տէգր—Ն Բ. ԶԱրտաշիսի յաջորդութիւնն առնու Տիգրան.
Արքայն Տիգրան զնախարարսն յԱրտաշատ համակոչեաց,
Տրդ—Տ. Ագոնավարն Տրդատ վեհագոյն այլոց զատաւ,
Խօսէին երկիւղաբար ընդ Տրդատայ.
Ցարաձգեալ փառք արքայիս Տրդատայ ցյաւիտեանս,
Սաստիկ էր ամենեցուն Տրդատ.
Տիկինն Աշխէն զամենեսեան մայրենական սիրով ընդունէր,

⁂

Քննենք ասոնց արուեստը։

Տարակոյս չկայ որ ասոնք արձակ գրութիւններ չեն. բայց միանգամայն և ոչ այն չափը ունին՝ որ ընդհանրապէս մեր շատ քերթող հեղինակաց յատուկ էր ու գործածական։ Ոչ յունական կամ լատինական արուեստին հետեւած են մեր երգիչք, որուն թերեւս ծանօթութիւն ալ չունէին, և ոչ պարսիկ կամ արաբացի նմանաձայն չափուն՝ որ դեռ երեւցած չէր. այլ հին ազգաց մէջ գործածական համեմատութեամբ ու թուականութեամբ վարուած, իրենց այս երգերուն մէջ։ Այսպէս են ընդհանրապէս Եբրայեցւոց բանաստեղծական սքանչելի հատուածները՝ որ սուրբ գրոց մէջ կը տեսնուին։ Եւ թէ որ այս երկու ազգաց մէջ մինչեւ

հիմայ մնացած բանաստեղծական հատուածները քննութեան առնունք. խիստ մեծ նմանութիւն մը կը տեսնենք արուեստի. այն արուեստին՝ զոր բնութիւնը սորվեցուցած է այս ազգերուն։ Անոնց քերթուածոցը մէջ գործածուած Չափականութիւնն ու Համեմատութիւնը կը տեսնուի նաեւ մեր քերթողաց երգերուն մէջ։ Մեր այս խօսքին ապացոյցը յայտնապէս պիտի նկատենք եթէ ուզենանք այս երկու ազգերէ մնացած բանաստեղծական հատուածները իրարու հետ համեմատել։ Պիտի լսենք մեր Գողթան երգերը որ կը գրուցեն.

« Երկնէր երկին եւ երկիր,
Երկնէր եւ ծիրանի ծով...
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր »

ու զԻսրայելացիս՝ որ կարմիր ծովուն վտանգէն ազատած, թմբուկներով ու պարերով կ'երգեն.

« Աջ քո, տէր, փառաւորեալ է զօրութեամբ իւրով.
Աջ քո տէր խորտակեաց զթշնամին...
Պաղեցան որպէս պարիսպք՝ ջուրք,
Պաղեցան ալիք ի մէջ ծովուն »,

Դարձեալ Դեբովրայ օրհնութեան մէջ.

« Տէր, յելանել քո ի Սէիրայ,
Եւ ի չուել քում յանդաստանացն Եդովմայ,
Երկիր շարժեցաւ, եւ երկինք խռովեցան.
Լերինք շարժեցան յերեսաց Տեառն Եղովայ Սինայի,
Յերեսաց Տեառն Աստուծոյ Իսրայէլի », —
« Կապուտ երանգոյն Սիսարայ,
Կապո՛յտ երանգոյն գոյնագոյն նկարուց,
Նարօտ պէսպէս նկարուց,
Այն էր պարանոցին նորա կապուտ »,

Այս երգոց չափուն մէջ թէպէտ և կատարեալ ազատութիւն մը կը տեսնուի, բայց տարակոյս չկայ որ այն ազատութիւնն ալ իւր քերթողական չափուն մէջ մնալու համար սահման մը ունեցաւ, որ մեզի համար դեռ բացայայտ չէ։

⁂

Թէ Գողթան երգիչք՝ ունեցան իրենց յաջորդքը, ոչ լոկ ենթադրութիւն, այլ և պատմութիւն կը հաւատարմացնէ, այլ և այլ հատուածք հասուցանելով առ մեզ, և որ աւելի կարեւորութիւն կ՚առնու նոր մատենագրութեան յաճախ բերանացի աւանդիւք մինչեւ առ մեզ եկած ժողովրդային բանաստեղծութեամբ: Ասոնց վրայ խօսիլը՝ աւելի նոր մատենագրութեան կը վերաբերի: Ի հնոց յիշենք հատուած մը զոր կը գտնենք առ Յովհաննէս Մամիկոնեան պատմչի, հետաքննական յինքեան բայց առանց ունենալու Գողթան երգոց իմաստից և ոճոյ բարձրութիւնն և լեզուի գեղեցկութիւն.

« Կերան գազանք զմարմինս դիականցն Վարազայ, և գիրացան.
Կուզ կերեալ, ուռաւ որպէս զարջ.
Աղուէս՝ հպարտ եղեւ քան զառիւծ.
Գայլ՝ քանզի շատակեր էր պայթեաց.
Եւ արջ՝ քանզի զոր ուտէն չմնայ առ ինքն, ի սովու մեռաւ.
Անգեղք՝ քանզի ագահք էին՝ նստան այլ ոչ կարացին վերանալ.
Մկունք քանզի շատ կրեցին ի ծակսն՝ ոտքն մաշեցան ».

ԳՐԱԻՈՐ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԲԱՍ ԿԱՏԻՆԱ[1]

(149 Քրիստոսէ առաջ).

Քաղդեացիք: — Նախատեսական մատենագրութիւն: — Վաղարշակ ի Հայաստան: — Մարիբաս Կատինա: — Արքունի հրամանաւ և յանձնարարութեամբ երթն ի Նինուէ: — Նինուէի մատենադարանաց մէջ ըրած գիւտը: — Իր պատմական գրուածքը՝ ըստ Խորենացւոյն: — Անոր սկզբնաւորութիւնն և քանի մը հատուածք: — Քննասիրաց հակառակամարտ կարծիք նկատմամբ Մարիբասեան գրոց և իր անձին: — Գաղղիական թարգմանութիւն իր գրոցը:

Հին աշխարհի պատմութեան մէջ՝ Բաբելոն մտաւորական զարգացման յառաջադէմ կեդրոն մը համարուած էր: Արիական տոհմէ սկզբնաւորութիւն ունեցող ժողովուրդ մը, բաժնուելով յիրանեանց, և Եւքսինեան Պոնտոսի միջերկրեայ ափանց վրայ եղող խաղտեաց լեռներէն ելլելով· գաղթական գնացեր էր ի կողմանս Եփրատայ և Տիգրիսի, և այնպիսի դիպաց և արկածից չարայարութեամբ՝ որ պատմութեան մէջ անծանօթ մնացած են, յաջողեր էր տիրապետել Բաբելոնի՝ ութերորդ դարուն սկիզբները, յառաջ քան զհասարակաց կամ զքրիստոսական թուաբերութիւն: Այս ժողովուրդը՝ որուն հեբրայեցիք կամ աստուածաշունչ գիրք և յունական մատեանք Քաղդէացւոց անունը կու տան, ըստ հեբրայեցւոց զինուորական ժողովուրդ մ'էին, իսկ ըստ Յունաց կամ Հերոդոտեայ՝ քրմական ցեղ մը և յետոյ նաև իմաստնոյ անուն ժառանգող ազգ մը: Այս յետին կարծեաց ստուգութեան հաւաստարիմ երաշխաւորութիւն մ'է նաև Դանիելի մարգարէութեան գիրքը:

---

[1] Թէ՛ առաջին և թէ մնացեալ գրուածքիս երկրորդ մասին մէջ աւելի ուղեր ենք պահպանողական երեւնալ, առանց ուզելու մտադրութիւն ընել նոր երեւցած երկասիրութեանց. Պատճառը յառաջաբանին մէջ ուղեր կամ կարծեր ենք գրուցել. նշանակելով նաեւ այն գրուածոց անուանք և հեղինականները.

Ե՞րբ սկսան ծաղկիլ ուսմունք և գիտութիւն Քաղդէացւոց մէջ: — Իրենց պատմութեան հնութիւնը՝ անլուծանելի ըրած է մեզի համար այս հարցման պատասխանն: Այս միայն կրնայ հաւանական ենթադրուիլ թէ Քրիստոսէ շատ առաջ Քաղդէաստանի մէջ, բայց ի Հրէից յօրինուած գրքերէ, և Քրիստոսէ ետքը՝ ի Քրիստոնէից շարագրուած սուրբ մատեաններէ, արամէական՝ հեթանոսական և արտաքին ընդարձակատարր մատենագրութիւն մ'ալ կար, որ բոլորովին կորսուած է:

Արդի հնախօսական գիտութեան մեծ ջանքն և պարապմունք եղած է, այս անհետացեալ դպրութեան հետքը փնտռել. և բանասիրութիւնն յաջողած է՝ կարևոր հատուածներ ի լոյս հանել՝ իրենցմէ ետքը և համեմատութեամբ նորագոյն համարուած մատենագրութեանց մէջ. և ի մասնաւորի Սաբէացւոց, Արաբաց, Ասորւոց և Հայոց մատենագրութեանց մէջ:

Այս դպրութիւն՝ որուն Յոյնք քաղդէական անունը տուած են, և սկզբնաւորութիւն ի Բաբելոն, և երկար դարեր յառաջադիմութիւնն եղած է յարևմտեանն Ասիա,

համանման էր անշուշտ այն մտաւոր մշակութեան՝ զոր՝ Արաբացիք Նաբատեանց կ'ընծայէին, նոյն համարելով զանոնք Քաղդէացւոց և Բաբելացւոց հետ: Եւ յիրաւի Նաբատեանք, եթէ Արաբացւոց մեզի տուած նկարագրին հետևինք, հռչակաւոր ժողովուրդ մը եղած են յերկրագործութեան, ի բժշկութեան և ի մոգութեան. և ասոնք բնակիչք են Քաղդէաստանի:

⁂

Այս Նաբատեան կամ Քաղդէական կոչուած մատենագրութենէն քիչ բան հասած է առ մեզ: Բայց Արաբաց, Յունաց և Լատինացւոց՝ քաղդէական մատենագրութեան վրայ մեզի տուած տեղեկութիւններէն զատ, ուրիշ ժողովրդոց քով կը գտնենք ամենայայտնի յիշատակութիւնք քաղդէական գրոց, և զորս չեն տարակուսիր հմուտք Նաբատեան հանճարոյ և գիտութեան վերագրել: Բերոսոս, Բարդածան և Մովսէս Խորենացի, արևելեան երեք զանազան ազգութեանց վերաբերող անձինք, իրենց գրուածոցը մէջ կը յիշեն յաճախ քաղդէական մատենագրութեան վերաբերեալ գրուածներ. որոնք թէպէտ երբեմն խարդախեալ կամ անհարազատք, սակայն անտարակոյս կոտորակք են այն ուսումնական մտաւոր մշակութեան որ հին դարերէն մինչև քրիստոնէութեան մերձաւոր ժամանակներն արևմտեան Ասիոյ մէջ մեծ պայծառութիւն, և կարգէ դուրս ազդեցութիւն ունեցաւ յոյն հռովմէական աշխարհին ուսումնական զարգացման վրայ:

Քաղդէական կամ Նաբատեան մատենագրութիւնն յերկարակեաց եղաւ քան զմեծ իշխանութիւնն՝ որոյ մէջ ծնած և զարգացած էր: Ի Բաբելոնէ տարածեցաւ մինչև ի Միջագետս, ուստի ծաւալեցաւ յարևմուտս: Քրիստոնէութիւնն՝ որ իմաստասիրական և կրօնական հին մոլար վարդապետութեանց ընդդիմամարտ մաքառելու գործն ու *պաշտօն ունէր, առանց ուզելու բոլորովին փճացնել քաղդէական մատենագրութեան ազդեցութիւնն, գլխաւոր պատճառ մը եղաւ անոր կերպարանփոխութեանն ի Միջագետս՝ արամէական ժողովրդոց մէջ, նոր մատենագրութեան մը՝ ասորականին երեւնալուն: «Զարմանալի է մեզ համար, կ'ըսէ Րընան, որ յանկարծ նախընթաց չունեցող մատենագրութիւն մը երեւան ելլէ. մինչդեռ անկէ հնագոյն ազգային գրութեան մը աւանդութիւնը չկայ. բայց այս յանկարծական երեւման պատճառած զարմանքն ուրիշ բանի արդիւնք չէ՝ բայց եթէ մեր տգիտութեանն հին արամէական գիտութեանց վրայ»: Բաց աստի՝ լեզուաքննական հետազօտութիւնք ասորական լեզուն՝ նաբատեան բարբառոյն քրիստոնէական շարունակութիւնը կը համարին. և Բարդածանի վրայ ունեցած տեղեկութիւննիս և անոր գրուածներէն մինչեւ առ մեզ հասած քանի մը հատուածք՝ յայտնապէս կը հաւատարմացնեն թէ այս գնոստիկեանը՝ քաղդէական դպրոցի աշակերտ էր. և որուն հակառակամարտ ախոյեան երեւցաւ սուրբն Եփրեմ՝ Եդեսիոյ քրիստոնէական դպրոցին փառաւոր ներկայացուցիչը:*

Այս նախարան տեղեկութիւնք հարկաւոր էին լաւ հասկընելու համար այն կապը զոր քաղդէական մատենագրութիւնը՝ ասորա—քրիստոնէականին հետ ունի, և ընթերցողին մտադրութիւնը դարձնելու այն ազդեցութեան վրայ՝ զոր ասորի մատենագրութիւնն պիտի բանեցնէր՝ իրեն դրացի Հայոց վրայ, որք ժամանակ մը Օսրոենաց իշխանութեան տակ ի մի ձուլուած էին: Եդեսիա՝ որ այն կէս ասորի և կէս հայ իշխանութեան մայրաքաղաքն եղաւ, և որուն արքունական դահոյից վրայ փոփոխակի նստան ասորի իշխանաց հետ՝ Արշակունի տոհմի իշխանք, մտաւորական շարժման և յառաջդիմութեան նշանաւոր կեդրոն մը եղաւ, և անուանի դպրոցի մը աթոռ՝ որ մեծ ազդեցութիւն ունեցաւ քրիստոնեայ Հայաստանի մատենագրական կազմակերպութեան և յառաջադէմ բարգաւաճանաց վրայ:

⁂

Հայք՝ դեռ քրիստոնէական կրօնից իրենց մէջ մուտ չգտած, ամփոփ մատենագրական շարժում մը ունեցած կ'երեւին: Հնութեան այս նկատմամբ մեզի աւանդած տեղեկութիւնք խիստ անկատար են. այնպէս որ յանգիր ժամանակաց և ի դարուց մինչեւ առ մեզ հասած նշանաւոր և բուն ազգային՝ քանի մը Գողթան երգոց հատուածք են՝ ինչպէս տեսանք: Եւ ի հակառակէն՝ աւելի մեզի աննպաստ յիշատակութեանց կրնանք հանդիպիլ՝ նոյն իսկ Խորենացւոյն գրոցը մէջ, անդրադարձնելով անոնց բանաւոր երգարանաց անսիրելութիւնն, և ազգային պատմութեան և աւանդից հետամտութեան անհոգութիւն. և դատաստանական և ընտանի յարաբերութեանց ուղղութեան «անբաւ գրուցաց մատեանքը» յիշատակելէն ետքը՝ իրաւացի զարմանք մը կը յայտնէ թէ ինչպէս քաջութեամբ և հնութեամբ այսչափ անուանի ազգ մը՝ իր տարեգիրքն ու պատմութիւնը չունենայ:

Այս զարմանքն ունեցաւ Հայոց արքունական աթոռոյն վրայ բազմող մեծ թագաւոր մը, և որուն արդիւնք և հետեւանքն եղաւ մեր պատմութեան հետաքննութիւնն ու գիւտ:

Հայոց պատմութիւննիս կը յիշեցնէ Վահէ մը՝ որ մեծին Աղեքսանդրի դէմ խիզախելով ի պատերազմ, անոր բովանդակ աշխարհի վրայ դրած ծանր լծէն՝ զինքն ու իր երկիրը ազատել ուզած ատեն, կորոյս կեանքն ու թագաւորութիւնը: Ինք եղաւ Հայկազանց հարստութեան վերջին իշխողը: Իրմէ ետքը՝ մինչեւ Արշակունեաց իշխանութեան սկզբնաւորելը, Քրիստոսէ դարուկէս առաջ, Հայաստան՝ արեւմտեան Ասիոյ մեծ տէրութեանց՝ մերթ մէկուն և մերթ միւսին հպատակելով, պարզապէս առաջին կարգի նախարարութիւն մը կը ձեւացնէր. Նախ Ասորւոց իշխանութեան տակ, յետոյ Բաբելացւոց, Մարաց և Պարսից: Իսկ երբ Արշակ Ե Մեծն, որ Միհրդատ Ա ալ կը կոչուի, իր իշխանութեան հպատակեցուց միջին ու արեւմըտեան Ասիոյ ժողովրդոց մեծ մասը, Հայաստանի ժառանգական կառավարութիւնը իր Վաղարշակ եղբօրն յանձնեց, ապսպարելով որ կարգաւորէ զաշխարհն, ու Պարթեւաց ինքնակալութեան օրինաց ու կարգաց համեմատ տեսչութիւն ու կառավարութիւն հաստատէ: Վաղարշակ իր եղբօրը պատուիրած քաղաքական բարեկարգութիւնն ի Հայաստան մտցնելու համար ամէն ջանքն ըրաւ:

Իրմէ առաջ, կ'ըսէ պատմագիրն, չկար հաստատուն օրէնք մը նոյն երկրին մէջ՝ ուր իշխելու և կարգաւորելու կը հրաւիրուէր, այլ ամենայն ինչ քմահաճոյ՝ և տիրող օրէնքն բռնութիւն էր. Նախարարք և նահանգապետք՝ երկրին մէկ մասին տիրելով՝ իշխանութիւնն մէկմէկու ձեռքէն յափշտակել կ'ուզէին, կալուածոց, ստացուածոց, սեպհականութեանց օրէնք չկար. այլ ամենայն ինչ խառնիխուռն և անկերպարան:

Վաղարշակ այսպիսի անկարգ դրութեան մը վախճան տալու համար՝ միտքը դրաւ նախարարաց իշխանութիւնն կարգաւորել, անոնց երկիրներուն սահմաններն որոշել զատել, և մէկուն մէկալին սահման անցնիլը արգիլած ատեն ամենուն ապահովութիւն տալ. անով աշխարհն հանդարտեցնել, քաղաքակրթութիւնն՝ արուեստ ու մշակութիւն բարգաւաճ ընել: Այս նպատակին հասնելու համար՝ հրամայեց որ փնտռուի հին ազգային պատմութիւն մը նոյն իսկ Հայաստանի մէջ: Սակայն իր ջանքն ընդունայն եղաւ. այն աշխարհին մեծ և երկայն յեղափոխութեանց համար՝ հարկ էր որ օտար ազգաց դիւաններուն մէջ փնտռել տայ իր ուզածը. ու այս վախճանաւ գտաւ Մարիբաս կամ Մար Աբաս Կատինա անունով իմաստուն[1] և

---

[1] Ասիկայ է ըստ Ասսեմաննեայ ասորի լեզուին մէջ Կ—տին— բառին և անուան նշանակութիւնը։

սրամիտ ասորի մը քաղդէական և յոյն լեզուաց հմուտ, և ղրկեց ի Նինուէ ընծայութեան նամակաւ մը՝ իր Արշակ եղբօրը, աղաչելով որ հրաման տայ բանալու անոր հետախոյզ աչացն առջեւ Նինուէի մատենադարանը, որպէս զի կարենայ իր փափաքելին գտնել:

Կարդաց Արշակ իր եղբօրը գրած թուղթը, և գովեց անոր խնդիրքը: Հրամայեց բանալ Մարիբասայ համար Նինուէի արքունական մատենադարանը, ուր գտաւ Մարիբաս գիրք մը յունարէն գրով ու այսպիսի վերնագրով. «Այս մատեան՝ հրամանաւ Աղեքսանդրի ի Քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ի յոյնն, որ ունի զբուն հնոցն և զնախնեացն բանս»:

Այն գրքին մէջ գտաւ Մարիբաս՝ Վաղարշակայ փափաքանօք խնդրած պատմութիւնը, Հայկայ օրերէն գրեթէ մինչեւ Աղեքսանդրի ժամանակ. և գրելով յոյն և ասորի լեզուով՝ բերաւ ի Մծբին, Վաղարշակայ յանձնեց: Թագաւորն ալ ուրախութեամբ հրամայեց որ իր գանձարանին մէջ պահուի ամենայն զգուշութեամբ, և անոր մէկ մասն ալ՝ արձանի վրայ գրուի:

⁂

Մարիբասայ գիրքը ձեռքերնիս հասած չէ: Սակայն բարեբաղդաբար՝ մեր Ե դարու մատենագիրն Մովսէս Խորենացի իր Հայոց պատմութիւնը շարադրելու ատենը կարդաց զայն, և ոչ միայն անոր հետեւեցաւ, հապա նաեւ քանի մը երեւելի հատուածներ թարգմանելով մեզի հասուց: Այս հատուածներն ընտիր ու հնագոյն գանձեր համարելով ազգային գրականութեան՝ կ'արժէ որ ամբողջ օրինակենք:

Խորենացին Մարիբասայ ջանիցը անօգուտ չըլլալը ու գտած արքունի գրոց միջէն քաղածը՝ Վաղարշակայ յանձնելուն պատմութիւնն ընելէն ետքը, կ'աւելցնէ նաեւ գրքին սկզբնաւորութիւնը, որ էր այսպէս.

«Ահեղք և երևելիք առաջինքն ի գիցն, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան։ Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեդեդք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք. որք յղացեալ ամբարտաւանութեամբ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, և ի նոյն լինէին ի գործ անկեալք. յոր հողմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ ի գիցն ցասմանէ, ցրէ զամբարտակն, և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ արկանէին։ Յորոց մի էր և յապետոսթեանն Հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովաձիգ և հաստաղեղն»։

Գրքին սկզբնաւորութիւնը գնելէն ետքը, Խորենացին խօսքը կը դադրեցնէ. որովհետեւ, կ՚ըսէ, մեր կամքը ամբողջ պատմութիւն մը շարադրել չէ, հապա միայն ցուցնել մեր բուն նախնեաց ծագումը, զոր նոյն գիրքն կը ցուցնէ այսպէս ։ Յապետոսթէ, Մերոդ, Սիրաթ, Թակլադ, որ՛ է՝ Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ։ Ետքը, նոյն ժամանակագիրը խօսքն առաջ տանելով՝ կը դրուցէ. Հայկ, Արմենակ. և անոնցմէ ետքը եկողները, վերջէն Հայկայ գեղեցիկ պատմութիւնը բուն իսկ Մարիբասայ խօսքերով մէջ կը բերէ։

«Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ. սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որ ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց։ Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլից և ուժաւորաց։ Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով, ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր։ Որում ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Բելայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ ի Բաբելոնի, չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թուով իբրեւ երեքհարիւր, և այլովք ընդոծնօք, և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ։ Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին, զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն բնակութեան կալուածոց, և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արմենեկայ»։

Խորենացին այս հատուածը մէջ բերելէն ետքը՝ կը յաւելու. «Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս»։ Որով անշուշտ կ՚ակնարկէ կամ Ողոմպիոդոր փիլիսոփային պատմած աւանդութեանց, (զորս ինքն նախ կը յիշատակէ), և կամ ուրիշ հին աւանդութիւններու, որ բերնէ բերան անցնելով մինչեւ Խորենացւոյն ժամանակ հասած էին։ Ետքը դարձեալ Մարիբասայ գրածը կը թարգմանէ.

»Եւ ինքն խաղայ այլով աղխիւն ընդ արեւմուտս հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք, այս ինքն աստէն բնակեալքս, ազգի տանն Թորգոմայ։ Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն։

»Ի հաստատել տիտանեան Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան, առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ՝ արամբք հաւատարմօք գալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ։ Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան։ Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բելայ խրոխտութեամբ պատասխանեաց։ Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելոն։

»Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա տիտանեանն Բէլ ամբոխիւ հետեւակ զօրաց, գայ հասանէ ի հիւսիսի յերկիրն Արարադայ մերձ ի տունն Կադմեայ։ Փախըստական լինի Կադմոս առ Հայկ, քաջ ընթացիկս առաջի իւր առաքէ· Գիտեա, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք և երկայնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք· և իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ, փախեայ, և գամ աւասիկ տագնապաւ։ Արդ աճապարեա խորհել որ ինչ գործելոց ես։

»Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի զօրութեամբ ամբոխին՝ որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառիվայր հեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեան Հայկին, ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց։ Աստ ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլ ևս որ ընդ իւրով ձեռամբ հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով ձկունս յինքեան։ Եւ կոչեցեալ զզօրս իւր ասէ ցնոսա· Յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ, դիպեալ ջանասցուք տեղւոյն՝ ուր անցեալ կայ ի մէջ խուռն քաջացն Բէլ։ Զի կամ մեռցուք, և աղխ մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք։

»Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանեն ի միջոց ինչ դաշտաձեւ լերանց բարձրագունից· և յաջմէ ջուրցն հոսանաց ի բարձրաւանդակումն կուռ կալով ի տեղւոջ· ի վեր զերեսս ամբարձեալ, երեւեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխյն Բելայ ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով· Իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբոխիւ մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ստոյ միոյ իբրեւ ի դիտանոցի։ Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ամամբք· և երկար միջոց ճանապարհին ընդ նա և ընդ ամբոխն· և ինքն գլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց· գօտեւորեալ զմէջսն, և յահեկէ զատինն՝ երկսայրի· և նիզակն արի ի ձեռին իւրում աջոյ, և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ի ձախմէ։ Եւ տեսեալ Հայկին զտիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտիր ընդ նմա, աջինս և ահեկինս, կարգէ զԱրմենակ երկու եղբարբք ընդ աջմէ, և զԿադմոս և զայս երկուս յորդւոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր· և ինքն առաջի, և զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց· երեքանկիւնի իմն կարգեաց ձեւով, հանդարտ յառաջ մատուցանելով։

»Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս, ահագին դղրդիւն ի վերայ երկրի առնէին շահատակելովն, և ահս պակուցանողս տարազուք յարձակմանցն զմիմեամբք արկանէին։ Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց սկայիցն արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք, տապալ յերկիր կործանէին· և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի։ Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն Տիտանեան՝ զարհուրեցաւ, և ի նոյն բլուր՝ ուստի էջն՝ վերջոտնեալ ելանէ. քանզի խորհէր ի միջոցի ամրանալ ամբոխին, մինչեւ հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ։ Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ, յառաջ վարէ զինքն, *մօտ հասանէ յարքայն, և քարշէ պինդ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթեւեանն կրծից տախտակին. և չեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ. և փչէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց: Եւ վասն այսորիկ այսչափ բովանդակ լիցի ասել:*

»Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր: Իսկ զբլուրն, ուր քաջամարտիկքն անկաւ Բէլ անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանք: Բայց զդիակն Բելայ պաճուճեալ իմն դեղովք, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց»:

Հայկայ պատերազմէն ետքը՝ ուրիշ զանազան բաներ ալ կը պատմուին, կ'ըսէ Խորենացին, այն գրքին մէջ. բայց մենք մեր հաւաքմանը հարկաւոր եղածները մէջ բերենք· ու կը սկսի իրեն համառօտ ոճովը քաղել Մարիբասայ գրոցը մէջէն կարեւոր և մատենագրութեան արժանի համարածները:

⁂

Խորենացւոյն պատմութիւնը այլ և այլ արեւմտեան լեզուներով եւրոպական գիտնոց ծանօթանալէն ետքը, անոնց երկար և քննադատ հետազօտութեանց նիւթ եղաւ: Մարիբասայ առաքումն ի Նինուէ, Պարթեւաց թագաւորին քով գտած ընդունելութիւնը, արքունի դիւանաց մէջ խուզարկութիւնք, Վաղարշակայ փնտռած Հայոց պատմութեան դիւտը, շատ բանասիրաց համար խնդրոյ և երկմտութեան նիւթ մը դառնալով, անկէ քաղուած և ի Խորենացւոյ մեզի աւանդուած դիպուածոց և անցից ստուգութիւնն ալ կեղակարծ, և անստոյգ, առանց պատմական հաւաստեաց՝ ուստի քմահաճոյ յերիւրեալ հիւսուածք մը համարեր են: Ասոնց մէջ գլխաւորք եղած են Ֆրերէ, Գաթրըմեր, Կուտըշմիթ և այլք՝ մինչեւ մեր օրերը, և ունեցեր են իրենց համամիտքն ու հետեւողք՝ նոյն իսկ մեր ազգին մէջ, և որք ազգային պատմութիւն մ'ալ բոլորովին օտար ի Մարիբասեան աւանդից և ի Խորենացւոյ, ուզեցին ընծայել, «ազգին լուսաւորեալ մասին, որ գիտէ ԺԹ դարուս քննադատական ոգին, և որ կամէր վաղուց տեսանել այն ոգին մուծեալ և յազգային պատմութիւն մեր»: Թէպէտ և մերազգի բանասէրք, և յառաջ քան զնոսա հմուտ հայագէտն Տիւլորիէ, ասոնց կարծեացը դէմ մաքառեցան, բայց իրենց տարակոյսները բոլորովին ցրելու բաւական չհամարուեցան բերուած պատճառներն[1]:

Մենք հակառակորդաց քանի մը պատճառներն միայն յիշատակենք, որոնցմով կ'ուզեն Մարիբասայ գոյութիւնը ժխտել կամ տարակուսի տակ ձգել: Նախ կ'ըսեն թէ հինն Նինուէ արդէն կործանած էր, և հաւատալի չ'երեւնար որ Պարթեւաց և Սելեւկեանց պատերազմին ատեն Ասորեստանեայց նոր տէրութեան մը մայրաքաղաք ձեւացած ըլլայ: Դարձեալ կ'ըսեն թէ Աղեքսանդր ոչ ժամանակ և ոչ ալ կամք ունեցած ըլլայ՝ քաղդէականէն ի յոյն թարգմանելու պատմական գիրք մը. Մար Իբաս Կատինային անունն ալ՝ Արշակայ ժամանակին չի վերաբերիր, կ'ըսեն, այլ բառերուն կազմութենէն կ'երեւնայ Ասորւոց քրիստոնէական ժամանակի անուն: Այս պատճառներով՝ զՄովսէս Խորենացի եթէ ոչ խաբեբայ՝ գէթ խաբուած կը համարին այս եւրոպացիք, և թէ կարծեցեալ Մարիբասեան գիրքը՝ Բերոսոսի գրուածքին մէկ օրինակը պիտի ըլլայ անշուշտ:

---

[1] *Փափագողք կրնան տեսնել Բազմավէպ ու Արեւելեան Մամուլ կոչուած հանդէսներու մէջ* (1882-1885) *եղած առարկութիւնքն և անոնք ցրելու վախճանաւ տրուած պատասխանները:*

Գաթրըմերի հետեւողք ալ կը յաւելուն թէ եդեսական դպրոցին վերաբերող Ասորւոյ մը գրուածք է Մարիբասայ պատմութիւնն, որ Խորենացւոյն ձեռքն անցած, և իբրեւ հաւատարիմ պատմիչ մը կարծուեր է։

Ազգային բանասիրութեան մաս մ՚ալ, և Տիւլօրիէ, կը ջանան ցուցնել թէ Մարիբասայ գրուածքը՝ յիրաւի ըստ աւանդութեան Խորենացւոյն Վաղարշակայ ատեն շարադրուած է, և թէ անկարելի չէ՝ որ Նինուէի դիւաններն Սելեւկիացւոց ձեռքէն Պարթեւաց թագաւորներուն ձեռքն անցած ըլլան, և հոն իմաստուն ասորին հանդիպած ըլլայ այդ գրքին։ Եւ ցուցնելու համար թէ Մարիբասայ անունը կրնար Քրիստոսէ առաջ ալ գործածուած ըլլալ, Աբգարու և Քրիստոսի ժամանակակից Մար Իհար անուն մը կը յիշատակեն. վասն զի Մար՝ Տէր ըսել է, որ ամէն պատուաւոր անձանց ալ կը տրուի։

⁂

Մարիբասայ՝ կամ ի Խորենացւոյ իրեն ընծայուած մատեանն՝ հայերէնագէտ գաղղիացին Վիկտոր Լանկլուա յիւրում Հաւաքման հին և նոր պատմչաց Հայաստանի (collections des historiens anciens et modernes de l'Arménie), առաջին անգամ իբրեւ առանձին գիրք հրատարակեց գաղղիական թարգմանութեամբ՝ ընդարձակ և հմուտ կանխաբանութեամբ և ծանօթութեամբք, յորոց օգտուեցանք մեր այս գրուածքին մէջ։ Խորագիրն է. Mar Apas Catina, Histoire ancienne de l'Arménie, extraite de l'histoire des premiers ancêtres, traduite de chaldéen en grec par ordre d'Alexandre-le-Grand, et conservée en partie par Moïse de Khorène. Traduction nouvelle en français, avec des notes historiques, critiques et philologiques, par Victor Langlois. Paris, Librairie de Firmin-Didot fréres, fils et Cie. MDCCCLXVII.

Մեր վերը յիշած մարիբասեան հատուածներէն զատ՝ Հայոց սկզբնաւորութեան և Հայկայ պատերազմին վրայ, թարգմանիչն ի մի կը գումարէ առ Խորենացւոյն գտնուած ու Մարիբասայ ընծայուած հետեւեալ գլուխները։ Առաջին գրքէն՝ գլուխք ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ, ԻԲ, ԻԳ, ԻԴ, ԻԵ, ԻԶ, ԻԷ, ԻԸ, ԻԹ, Լ, ԼԱ, ԼԲ։ Երկրորդ գրքէն. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ. ուր հետեւեալ խօսքերը կը յաւելու Խորենացի. «Աստանօր սպառին բանք ծերունւոյն Մար Աբաս Կատինայ»։

ՄԱՐԻԲԱՍԷՆ ՄԻՆՉԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Արտաւազդ Ա։ — Աբգար։ — Եդեսիոյ դիւան։ — Արտաշէս Բ։

Վաղարշակ՝ որ Հայաստանի թէ քաղաքական թէ ուսումնական բարգաւաճմանցը փոյթ ունենալով՝ Հայոց առաջին և ընտիր պատմիչը երեւցուց, յամենայնի իրեն արժանի յաջորդ չունեցաւ։ Արշակ, Արտաշէս, Տիգրան, իրենց փառքն ու մեծութիւնը՝ աւելի հարստութեան և երկրակալութեան վրայ դրած ըլլալով, անոնց համար յոգնեցան. և իրենց զէնքերուն ուժովը համբաւնին բոլոր աշխարհք, ու վախերնին մերձակայ ազգաց վրայ տարածեցին։

Տիգրանայ յաջորդն Արտաւազդ Ա, եթէ իր նախնեացը պատերազմասէր աշխոյժն ալ ունէր՝ բայց ոչ յաջող բաղդը։ Հայոց պատմութեան մէջ գրեթէ անօրինակ դէպքով մը՝ ոսկի շղթաներով կապկըպած Հռովմայեցւոց ձեռքը գերի կ'իյնայ. և թագազուրկ գլուխը՝ իւր օտարութեան ու *ամօթոյն ցաւերը մեղմացնելու միակ հնարք՝ բանասիրութիւնը կը գտնէր, անոր անոյշ զբաղմանցը մէջ իր ձախող բաղդին վիշտերը թաղելով։ Պլուտարքոս կ՚աւանդէ թէ իր գերութեանը մէջ այլ և այլ թատերական քերթուածներ, ճառեր, ու պատմական գրուածներ շարադրած է Արտաւազդ, որոնք ժամանակակցացը առջեւ մեծապէս յարգի եղած են[1]։*

Արգար՝ Արտաւազդայ յաջորդ Արշամին որդին՝ արքունական աթոռը ելած օրէն Աւագ այր կոչուեցաւ, ու իր խելքովն ու իմաստութեամբ այնչափ հաճոյացաւ Օգոստոս կայսեր, որ չէր ուզեր զանիկայ հեռացնել քովէն։

Արգարու Հռովմ եղած ատենը՝ այն համբաւաւոր քաղաքը ոչ միայն քաղաքական, այլ նաեւ ուսումնական փառաց լրման մէջ էր։ Հռովմէական մատենագրութեան ոսկեդարն էր այն ժամանակը. և Արգարու սուր ու թափանցող միտքը տեսաւ ու նախանձեցաւ վրանին, ու զՀայաստան ջանաց հետեւող ընել անոնց։ Անոր համար իր թագաւորական աթոռը դառնալէն ետքը՝ Եդեսիա քաղքին մէջ տիեզերահռչակ դիւան մը բանալ տուաւ. հոն փոխադրել հրամայեց Մծբին քաղաքին ամէն դիւանական մատեանները. նոյնպէս ալ Պոնտացւոց Սինապ քաղաքին մեհենական պատմութեանց գրքերը։

Այս դիւանը՝ Երուանդայ Երկրորդի օրովն ալ աւելի ճոխացաւ, երբոր Հայք՝ Հռովմայեցւոց հարկատու եղան, ու անոնց կողմանէ դրուած կուսակալները ջանացին զարգարել զայն. որովհետեւ յԵդեսիա՝ իբրեւ ի միջավայրի հաստատած էին ի Հայոց, ի Միջագետաց և յԱսորւոց ժողովելիք հարկերը. ուստի հոն ժողվել տուին ուրիշ գլխաւոր քաղաքաց հարկերուն դիւաններն ալ։ Եդեսիոյ դիւանը՝ մինչեւ Քրիստոսի Ե դարը սրբավայր մը համարուած էր ամենայն ազգաց իմաստնոց. գիտութեանց մէջ ծերանալու փափաքող մարդեր՝ կ՚ախորժէին հոն անցնել իրենց օրերը։ Հոն Յուլիոս Ափրիկանոս մեծանուն ժամանակագիրն կ՚երթար «գաղափարել որ ինչ ի քարտէզս այնր դիւանին յաղագս թագաւորացն առաջին ժամանակաց և գործոց նոցա»։ Հոն Սեբերիանոս Եմեսացի և Պրոտոգենէս քահանայն վարժուող և վարժիչ կ՚ըլլային։ Հոն կ՚երթար նաեւ Եւսեբի Կեսարացի, որ և կը վկայէ Եկեղեցական պատմութեանը մէջ թէ ինչ որ Արգարու վրայ գրած է, բոլորն ալ Եդեսիոյ դիւանէն քաղած է։ Հոն սուրբն Մեսրոպ ալ՝ հայ գրոց գիւտէն ետքը՝ իւր աշակերտացը մէջ երկու գլխաւորներն կը ղրկէր, զԵզնիկ և զՅովսէփ Պաղնացի, որ օտար գրով գրոշմուած գրքերը հայերէնի դարձնեն։

Հոս միայն չի սահմանուիր Արգարու ուսումնասիրական եռանդը։ Քրիստոնէական լուսոյն ճշմարտութիւնն ընդունելէն ետքն ալ՝ նոյն սուրբ կրօնքը հաստատուն գործելու համար՝ ուրիշ հնարքներէն զատ՝ սուրբ գրոց ասորի թարգմանութիւն մ՚ալ ընել տուաւ, զոր ազգային և օտար յետագայ պատմիչք, և մասնաւոր կերպով Վարդան, կը յիշատակեն[1]։

Սակայն Արգարու մահուընէն ետքը՝ կրօնական ու քաղաքական յեղափոխութիւնք տակնուվրայ ըրին զՀայաս-

---

[1] *«Արտաւազդ ինքնին և ողբերգութիւնս եւս քերթեալ ունի, և ճառս և արձանագրեալ պատմութիւնս, յորոց կէսք կան և մինչեւ ցայսօր»։* Պլուտ. Զուգակշռ., Հատ. Դ. 138։

[1] *Վարդան կը գրէ առ Հեթում թագաւոր. «Թարգմանեցին յասորի գիր և ի լեզու ... և հայերէն գիր չկայր, վասն այն ասորի գրով թարգմանեցին։ Այս է ձեր նախնոյն յիշատակ»։ Նոյնը Թադէական թարգմանութենէն օրինակ մ՚ալ մէջ կը բերէ՝ Ծննդոց գրքին սկզբնաւորութիւնը. «Ի սկզբանէ արար Աստուած զէութիւն երկնի և զէութիւն երկրի. և այս գեղեցիկ է, զի ցուցանէ թէ յոչէից արար. և ըստ եօթանասնիցն բազում երկինս ցուցանէ ... խիստ անոյշ է». կը վկայէ և Միքայէլ Ասորի «Ըստ Աբգարոյն՝ որով ասորիք վարին». և Աղուլփարաճ ասորի կամ հայ. և յառաջ քան զսոսա՝ Զուաս կամ Եւստաթ՝ եպիսկոպոս Հազզենայ կամ Հազրենայ ասորւոց։*

տան։ Անանէ ու Սանատրուկ՝ իրենց հօրն ու մօրեղբօրը հաւատքը արհամարհելէն ետքը՝ զէնքերնին ալ իրարու դէմ կը դարձնեն. Սանատրուկ իր հակառակորդէն զօրաւոր և երկարակեաց ըլլալով, բոլորովին քաղաքական շինութեանց ու Մծբին արքունի քաղաքը զարդարելու զբաղեցաւ։ — Իր որդւոյն Բ. Արտաշիսի ատեն՝ բոլոր Հայաստան կերպարանափոխ ըլլալու վիճակի մը մէջ կը մտնէ. այդ մեծ և սիրելի թագաւորը՝ Հայաստանը Ելլադա՝ Լատիոն մը դարձնելու փափաքով վառուած անձ մ'է. « Թէպէտ և կարգք և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան ի Վաղարշակայ և յայլոց առաջնոց թագաւորացն, այլ ի մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին, կ'ըսէ Խորենացին, զշաբաթուց աւուր և զամսոց և զտարեաց բոլորմանց։ Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի »։ Իրեն խաղաղասէր իշխանութեան ժամանակ՝ ազգային ոգին մեր մատենագրութեան մէջ առաջին տեղը բռնեց. բանաստեղծութիւնն՝ միւսանգամ իւր աշխոյժն ու թռիչքը թագաւորական գահէն կ'առնուր։ Թագաւորին որդւոց մէկը, արքունի հազարապետն Վրոյր, նշանաւոր բանաստեղծ մ'էր. և թերևս հայկական վիպասանութեան շարագրողաց մէկն, որ երգեց Արտաշիսի երջանիկ օրերն, և անոր հռչակաւոր Սմբատ սպարապետին քաջութիւնները։ Այսպէս ալ Արտաշիսի միւս որդւոց մէկը՝ Մաժան, որ մեհենաց վրայ վրակեցու դրուած էր, և Անի քաղաքին մէջ եղած Արամազդայ մեհենին քրմապետը՝ հաւանականաբար շարագրող է նաև մեհենական պատմութեանց։

Արտաշիսի յաջորդաց ատենէն մինչև Տրդատայ ժամանակը, հեթանոսութիւնն՝ քրիստոնական կրօնից դէմ վերջին ուժով պատերազմել կ'երևնայ։ Հայաստան՝ անոր երկնաւոր լուսոյն առջև արդէն սասանեալ՝ իր հին կրօնքը հաստատուն պահելու համար երկար և ունայն աշխատանքներէ վերջը կը յաղթուի, ու այն երջանիկ յաղթուելուն պարտական է իւր ստոյգ փառքն ու մեծութիւնը։

ՔԱՆԻ ՄԸ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

Ողիւպ։ — Բարդածան։ — Խոռոհբուտ։ — Արտիթէոս։

Արգարէն մինչև Լուսաւորիչ, երեք դարու միջոց, միայն քանի մը մատենագիրք երևցան Հայոց մէջ. կամ թէ աւելի ճիշդ խօսելով, հաւանաբար այնպիսի բարեկարգ թագաւորութեան մը մէջ ծաղկող մատենագրաց՝ միայն ոմանց անուանք հասան մինչև առ մեզ։ Մեր այս յիշատակած անձանց ազգայնութիւնն ալ՝ կամ բուն մեր ազգին պատկանիլը տարակուսական կրնայ համարուիլ, ինչպէս նաև իրենց գործածած լեզուն։

Ասոնց մէջ գլխաւոր է

ՈՂԻՒՊ կամ Ոլիմպիոս քուրմ. Պարսից Դարեհ Վոլոգէսի ու մեր Արտաշիսի թագաւորութեան ատեն ծաղկած Քրիստոսի երկրորդ դարուն երկրորդ կիսուն։ Հանի կամ Անի ամրոցին ուր քրմապետական պաշտամամբ մեծարուած էր, մեհենական պատմութիւնը շարագրեց Ողիւպ, յորում աւանդուած էին Դարեհի և Արտաշիսի թագաւորութեան ժամանակաց դէպքերը. և կ'երևնայ թէ անոր գրուածներէն քաղած է Խորենացին՝ ինչ որ Արտաշիսի վրայ կը պատմէ, վասն զի անոր պատմութիւնն ըրած ժամանակ՝ կը յաւելու. « Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւպ քուրմ Հանւոյ, գրող մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգն վիպասանաց »։ Հաւանական կ'երևնայ թէ

Բարդածան և Եւսեբիոս ալ Եդեսիոյ դիւանին մէջ հանդիպեր են առոր գրուածքին, և առնցմէ օգտուած:

⁂

ԲԱՐԴԱԾԱՆ. Անտոնինոս Կարակալլա և Լուկիոս Վերոս կայսերաց ատենն էր Բարդածան՝ յաջողակ ի բան և ի գիր, և հայկական ուսմանց ոչ անտեղեակ: Ծնած է յասորեստան, և հաւանականաբար յԵդեսիա: Յայլ և այլ մատենագրաց հնոց՝ որ իր յիշատակութիւնն կ՚ընեն, երբեմն Ասորի և Պարթեւ կոչուած է, մերթ միջագետացի, մերթ բաբելացի, և յայլոց նաեւ հայկազն: Կրնայ ենթադրուիլ թէ իրապէս ուրիշ՝ բայց համանուն անձինք ըլլան, որոց գրուածք և գնացք, վրիպակաւ կամ շփոթմամբ իրարու ընծայուած: Այս պատճառաւ է անշուշտ որ երբ յոմանց արդի քննադատից՝ համաձայն ընդ հնոց, Կարակալլայի ժամանակակից կը համարուի, յայլոց՝ մանաւանդ ի գերմանացի գիտնոց, ասորի կայսերաց ատեն ծաղկած կ՚ենթադրուի, և իրեն ընծայուած Բաշխից կամ Գուշակութեանց վրայ յօրինուած գրուածքին մէջ տեղ մը Հելիոգաբալ կայսեր ակնարկութիւն մ՚ալ կը կարծեն տեսնել:

Ընտիր դաստիարակութիւն մը առած էր կ՚ըսեն Բարդածան Եդեսիոյ իշխանաց արքունեաց մէջ. և բարեկամ Աբգարու ութերորդ Մանովայ որդւոյն, որ Օսրոենաց աթոռը գրաւեց 152–153էն մինչեւ ի 187–188. սիրող և հետամուտ գիտութեանց և արուեստից, ու իր դարուն և ժամանակին մատենագրաց մէջ նշանաւոր անձ մը: Ետեւէ եղաւ նաեւ գիտութեան գաղտնեաց կամ քաղդէութեան, աստեղաց շրջաններուն կամ շարժմանց՝ մարդկային բաղդի և ապագային վրայ ունեցած և ըրած ազդեցութեանց. և անգղիացի բանասէրն Գիւրըթըն՝ իր անունը կրող այսպիսի գրութեան մը հատուածներուն հանդիպած է Նիտրիոյ վանքի մը մատենադարանին ձեռագրաց մէջ և հրատարակած յիւրում Ասորական Հաւաքման:

Որչափ ալ հետամուտ արեւելեան տիեզերագրական և իմաստասիրական դրութեանց, սակայն մեծ փոյթ և ջանք ալ ցոյց Բարդածան նաեւ արեւմտեան գիտութեանց՝ որք անհրաժեշտ լրումն կը համարուէին Ասիական դպրոցաց ուսման, և ի մասնաւորի Եդեսիոյ, որ Աղեքսանդրիոյ և Աթենքի վարժոցներէն ետքը՝ ամենէն հռչակեալն էր: Կատարելապէս հմուտ ասորի լեզուի, տեղեակ էր նաեւ հելլեն դպրութեանց. և կը վկայէ Եպիփան՝ վարդապետ եկեղեցւոյ, որ նոյն լեզուով այլ և այլ գրուածքներ ալ շարագրած ըլլայ: Սակայն իր լիուլի հմտութիւնը ասորականին մէջ էր, որով յօրինած է ընդհանրապէս իր ամէն երկասիրութիւնքը, և զոր կը խօսէր ընտիր ոճով և հրաւառ ճարտարախօսութեամբ: Ինք եղաւ հեղինակ նոր քերթողական չափու մը յասորի մատենագրութեան. և այն չափաւ շարագրեց եկեղեցւոյ պաշտամանց վերաբերեալ հարիւր և յիսուն երգեր, և որք գրեթէ երկու դար ի կիրառութեան էին Ասորւոց մէջ՝ իր Հարմոնիոս որդւոյն շարագրածներուն հետ: Իրեն կ՚ընծայուի դարձեալ և եղանակաց ներմուծումը յարեւելեան եկեղեցիս:

Առաջ հաւատարիմ եկեղեցւոյ վարդապետութեանցը, իր զօրաւոր լեզուն և ճարտասանութիւնը անոր պաշտպանութեան գործածած էր, և այն գրչով ու սրտով՝ որուն վրայ կը զարմանային սուրբն Հերոնիմոս, Աւգոստինոս և Նիկեփոր, կորակոր և ամօթապարտ լռեցուցած էր Ասորւոց աշխարհին մէջ իւր ժամանակին բազմաթիւ հերետիկոսները. բայց կենացը վերջի տարիներն՝ ինքն ալ մոլորական վարդապետութեանց մէջ ինկաւ, նախ՝ նա և ըստ Խորենացւոյ, Վաղենտինեանց աշակերտելով, «զոր յանդիմանեալ անարգեաց, կ՚ըսէ, ոչ գալով ի ճշմարտութիւն, այլ միայն ի նմանէ զատուցեալ՝ այլ հերձուած յարդարեաց յինքենէ»:

Երբ Կարակալլա կայսրն ի դարձին յարշաւանաց Եգիպտոսի՝ անցաւ ի Միջագետս, ու գահընկէց ընելով յիշխանական աթոռոյն զԱբգար ժ որդի Մանովայ ժ, ու ձմերելով յԵդեսիա՝ Ոսրոենոյ վայրապետութիւնը հռովմէական գաւառի մը վերածեց, բռնադատուեցաւ Բարդածան հեռանալ ի հայրենեացն։ Անշուշտ այն միջոցին է՝ որ Հայաստան ալ եկաւ, յոյս ունենալով զոմանս աշակերտել իրեն. բայց տեսնելով թէ ընդունայն է աշխատանքն, Հանի ամրոցը գնաց, ու հոն մեր ազգին մեհենական պատմութիւններն ու առաջին թագաւորաց գործերը կարդալով, յասորի լեզու թարգմանեց զանոնք. ու այլ և այլ թագաւորական դիւաններէ զանազան տեղեկութիւններ ժողվելով, պատմական գրուածք մը շարադրեց, զոր յետոյ իր աշակերտեալք փոխեցին ի յոյն՝ և Եդեսիոյ դիւանին մէջ պահուեցաւ։

Թէ Եւսեբիոս և թէ մեր Խորենացի՝ իրեն գրուածքներէն կը քաղեն այլ և այլ ժամանակակից դիպուածոց յիշատակութիւններ. «Էր, կ'ըսէ Խորենացի, այր կորովի բանիւք. որ և առ Անտոնինոս համարձակեցաւ գրել թուղթ. և բազում ասացուած արար ընդդէմ աղանդոյն Մարկիոնացւոց և բաշխից և կռոց պաշտաման, զոր ի մերում աշխարհիս... Պատմէ ի մեհենիցն պաշտամանց, վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաժանայ քրմապետի ի բագնացն աւանի, որ ի Բագրեւանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ՝ զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիւք... Յայսմ պատմութենէ առեալ մեր երկրորդեցաք քեզ ի թագաւորութենէն Արտաւազդայ մինչև յարձանն Խոսրովու»։

Ոչ անծանօթ է Բարդածան նաև մեր ուրիշ պատմչաց։ Զենոբ Գլակ, չորրորդ դարու մատենագիր, կ'ըսէ. «Եթէ ստուգիւ կամիս գիտել զայսոսիկ, ով ելանելիդ Բեկտոր, ընթերցիր զթագաւորութիւն Հեփթաղենեկայ հելլենացի գրով, և կամ զթագաւորութենէն ճենաց, զոր գտանես յՈւռհա քաղաքի առ Բարդայ պատմագրի»։ Ուխտանէս պատմիչ. «Եթէ ստուգիւ կամիք տեղեկանալ, ասէ, ընթերցջիք զվերջին դրուագն Բարդեծանայ Ուռհայեցւոյ, զոր կարի գեղեցիկ ասէ և զբանն՝ զոր խօսեցան ընդ միմեանս Տրդատ և Հրաչեայ արքայ. և կամ թէ յետոյ զինչ արարին զՀրաչէ՝ ոչ գիտեմ ասէ պատմագիրն»։

Եւսեբիոս ի Պատմութեան Եկեղեցւոյ (Դպր. Դ. 30) հետեւեալ տեղեկութիւնները կ'աւանդէ Բարդածանի վրայ. «Ի նմին իսկ արքայութեանն Անտոնինոսի Վերոսեայ, բազում էին աղանդք հերձուածոց ի Միջագետս յՈւռհայ. Բարդեծան այր երեւելի, որ ասորի լեզուով իմաստուն կորովի էր յոյժ, և ընդդէմ Մարկիոնացւոցն և այլոցն որ վերակացու էին որոշեալ աղանդոյն, եկաց բանիւ իւրով. և գրեաց նա զխօսսն յիւր լեզու հանդերձ այլովք խօսիւք բազմօք. և էին նորա ընկերք և ծանօթք բազումք և զօրագոյն էին բանիւք. և նոքա հանին զխօսս նորա ի լեզուէ ասորոց ի յոյն. և ի նոյն խօսսն իւր է մաքառումն մի զոր ասացեալ է նորա մեծապէս վասն բաշխից զոր գրեաց Անտոնինոսի։ Եւ այլ բազումս ասեն զնմանէ թէ գրեաց ի պատճառս հալածանացն որ եղեն յայնմ ժամանակի։ Բայց էր սա յառաջագոյն յուսման անդ Վաղենտինանոսի. իսկ իբրեւ անարգեցաւ յաչս իւր սա, և կշտամբեալ յանդիմանեաց զբազում պատմութիւնս նորա. և խորհեցաւ թէ որպէս ինքն յանձնէ իւրմէ փոխեցի ի խորհուրդս առաւելս. այլ ոչ լի կատարեալ ջընջեաց նա յիւրմէ զաղտ առաջին հերձուածոյն»

Ինչպէս Մարիբասայ, այնպէս ալ Բարդածանայ նկատմամբ հայ պատմութեան գրուածոց հաւաքում և թարգմանութիւն մ'ընծայեց Լանկլուա, մեր արդէն յիշատակած հաւաքման մէջ՝ այսպիսի խորագրով. Bardesane. Œuvres historiques et philosophiques, publiées d'après les sources Arméniennes, Grecques et Siriaques, avec des notes historiques, critiques et philologiques, par Victor Langlois. *Այս գրուածքին մէջ՝ Հատուածք Հայկական պատմութեան* (Fragments d'une histoire de l'Arménie, par Bardesane) *վերնագրով կը խմբագրէ առ Խորենացւոյն իրեն ընծայուած գլուխներն· և են երկրորդ գրքէն գլուխք,* ԿԱ, ԿԲ, ԿԳ, ԿԴ, ԿԵ, ԿԶ։ *Կը յաւելու ապա իրեն անուամբ գտնուած ուրիշ քանի մը երկասիրութեանց մնացորդք։*

⁂

ԽՈՌՈՀԲՈՒՏ· *Նոյնպէս ի Խորենացւոյ յիշատակուած, ու միայն անուամբը մեզի ծանօթ մատենագրաց կարգէն է նաև Խոռոհբուտ, Պարսից Շապուհ թագաւորին դպիրը, որ Քրիստոսի* 362 *թուականին Յուլիանոս Ուրացողին ձեռքը գերի ինկաւ, և անոր ուրիշ արքունի պաշտօնակալացը հետ Յունաստան անցնելով՝ Քրիստոնէութիւնն ընդունեցաւ, ու Եղիազար կոչուեցաւ։ Հոն Բարսումայ անունով Ասորւոյ մը, որ Պարսիկք Ռաստսոհուն կը կոչէին, մէկ գիրքն ի յոյն թարգմանեց։*

Պատմական գրուածք մ'ալ շարադրած է Խոռոհբուտ, որուն համար կը վկայէ Խորենացին թէ Շապհոյ, Յուլիանոսի և Խոսրովու գործերն աւանդող ուրիշ պատմագիրներէն աւելի ստուգապատում է, թէպէտ և գտնուին իւր գրոցը մէջն ալ այլ և այլ առասպելներ թէ Պարսից և թէ Հայոց վրայ։ Այս առասպելներէն մէկ քանին կը յիշէ Խորենացին իւր պատմութեան մէջ· «Անտեղի է մեզ, կ'ըսէ, այժմ երկրորդել զառասպելսն յաղագս Երազոյն Փափագոյ, և արտալատութեան հրոյն մանուածոյ՝ որ ի Սասանայ, և պատումն զհօտիւն, և լուսնակն, և ախտարմողացն յառաջասացումն, որ են քաւդեայք, և որ ինչ զկնի այսորիկ· և պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութեամբք, և անմիտ հանճարաբանութիւն մոգին դատեր վասն Նոխազին, և որ ինչ այլն ամենայն։ Նաև այծին դիեցումն մանկանն ընդ հովանեաւ արծւոյն, և գուշակումն ագռաւուն, և գերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արբանեկութեամբ գայլոյն, և միայնամարտութեանն առաքինութիւն, և որ ինչ այլաբանութեանն բերէ կարգ »

⁂

ԱՐՏԻԹԷՈՍ· *Հայ քրմի մը որդի էր· բայց սրբոյն Գրիգորի ձեռքովն ու ջանիւք՝ ճշմարտութեան քարոզ եղաւ, և ուսումնական ընթացքը կատարելով՝ իր արժանաւորութեամբը մինչև եպիսկոպոսական աստիճանի բարձրացաւ։*

Արտիթէոս՝ Մարկոս անունով միայնակեցի մը խնդրանքը, որ Ագոռճան ըսուած կղզին առանձնացած էր, Լուսաւորչայ վարուց պատմութիւնը շարագրեց նամակի ձևով· և իրմէն առած է Խորենացին՝ ինչ որ նոյն սրբոյն մանկութեան և երիտասարդութեան վրայ կ'աւանդէ, մինչև անոր Տրդատայ քով ծառայութեան մտնելը։

ՂԵՐՈՒԲՆԱ

Իրեն ընծայուած գրքի մը գիւտը։ — Ասորի բնագիրը։ — Գրուածքին նիւթը։ — Հարազատութիւնը։ — Այլ և այլ տպագրութիւնք և թարգմանութիւնք։

Աբգարու ժամանակակից պատմիչ մը կը յիշատակէ Խորենացին՝ Ղերուբնա անունով, Ափշադարայ քրմի որդի, մեհենական պատմութեանց հմուտ, որ Աբգարու և անոր որդւոյն Սանատրկոյ պատմութիւնը շարադրած է. «Ղերուբնա, կ'ըսէ, որդի Ափշադարայ դպրի՝ գրեաց զամենայն գործս՝ որ ինչ յաւուրս Աբգարու և Սանատրկոյ, և եդ ի դիւանին՝ յԵդեսիայ»։

Այս գրուածը կորսուած կը համարուէր ընդհանրապէս. որովհետև միայն Խորենացին կը յիշէր այն երկասիրութիւնը, առանց յայտնապէս ըսելու թէ արդեօք ինքը տեսա՞ծ էր այն գրուածը. իսկ իրմէ ետքը եկող պատմագիրներէն ոչ ոք՝ – բաց ի Մխիթարայ այրի վանեցւոյ՝ ԺԴ դարու, դնելով ի կարգի պատմչաց իր անունը յետոյ քան զՏատիանոս և յառաջ քան զՄարիբաս, – ոչ զինքը կը յիշէ, և ոչ ալ անոր իրաւամբ հետաքրքրական երկասիրութեան վրայ տեղեկութիւն մը կու տայ։

Բայց վերջին տարիներս (1853) Փարիզու ազգային մատենադարանին հայկական ձեռագրաց մէջ՝ Հայաստանի հին քրիստոնէութեան վրայ համառօտ բայց ընտիր գրուածք մը գտնուեցաւ՝ այսպիսի մակագրութեամբ. «Թուղթ Աբգարու Թագաւորի Եդեսիայ քաղաքի որ է յասորի լեզու Ուռհայ, որդւոյ Մանովայ»։ Այս թէ մեր լեզուին և թէ եկեղեցական պատմութեան համար ծանրակշիռ գրուածին հեղինակ՝ նոյն ինքն Ղերուբնա կարծուեցաւ ոմանց հմտից, և կամ աւելի հաւանականաբար՝ անոր երկասիրութեան մէկ մասը. որովհետև նոյն գրուածքին վերջերը հեղինակին անունն ալ կը յիշատակուի հետևեալ խօսքերով. «Զամենայն ինչ զոր հրամայեն Թագաւորք, և զամենայն որ ինչ միանգամ լինի առաջի նոցա, գրի և դնի ի տունս յիշատակաց. սոյնպէս և յՈւռհա քաղաքի՝ Ղըրուբնեա որդի Անակայ, որդւոյ Աբդաշարագայ, դպրի Թագաւորին, գրեաց զամենայն ինչ որ միանգամ իրք եղեն Ադէի առաքելոյ, ի սկզբանէ մինչև ցկատարած. միաբանութեամբ ձեռն արկանելով և Աննա (Անան) հաւատարիմ Թագաւորին. և եդին ի տանն յիշատակաց քարտիսից, ուր դնին մատեանք և օրէնք արքունականք. և որք գնեն և վաճառեն և գրին ի միջի նոցա մուրհակք հաստատութեան, անդ պահին հաստատութեամբ առանց արհամարհանաց»։

⁂

Հայկական ձեռագրին այս նշանաւոր գիւտէն տասնըմէկ տարի յառաջ, երբ դեռ հրատարակած չէին տպագրութեամբ ոչ հայերէնն և ոչ եւրոպական լեզուներով թարգմանութիւնք նոյն գրուածքին, անգլիացի անուանի ասորագէտ վարդապետն Գիւրըթոն՝ ուսումնական աշխարհի իրաւամբ մեծ ցաւ պատճառող իր մահուանէն քիչ առաջ՝ ուզեց գիտնալ թէ հայկական մատենագրութեան մէջ կա՞ր արդեօք Աբգարու պատմութեան վերաբերեալ հին գրուածք մը, զոր ինք յաջողեր էր գտնել այն ասորի գրչագրաց մէջ՝ զոր հայրենակիցք բերեր էին յԱնգղիա՝ Եգիպտոսի Նիտրիոյ վանքերէն։ Այս գրուածքն էր նոյն՝ Փարիզու գրատան մէջ գտնուած հայկական օրինակին հետ, ինչպէս *յայտնի տեսնուեցաւ երբ Գիւրըթոնի մահուընէն ետքը և նոյն տարին (1864)՝ իր բարեկամն և ուսումնակից Վրայթ հրատարակեց՝ ասորի բնագրին վրայ աւելցնելով նաեւ անգղիական թարգմանութիւն մ'ալ հետեւեալ խորագրով.* Ancient Syriac Documents relative to the earliest establishment of Christianity in Edessa. *Հրատարակողը՝ կը ծանուցանէ թէ* 1848 *տարիէն Աբգարու այս Թուղթին հանդիպած էր Գիւրըթոն երկու հին ասորական ձեռագրաց մէջ. յորոց միոյն համար կը կարծէ որ սկըզբնագիր եղած ըլլայ հայ թարգմանութեան, գրուած ըլլալով՝ ինչպէս կ'ենթադրէր ի սկզբան Ե դարու. իսկ միւսն ի Զին՝ բայց դժբաղդաբար երկուքն ալ խիստ անկատար, գրուածքին գրեթէ կէսը պակսելով ասորւոյն մէջ, ուր հայերէն թարգմանութիւնն ամբողջ է և անթերի:*

Ասորի բնագրաց և այս հայկական թարգմանութեան մէջ եղած տարբերութիւնը խիստ քիչ է: Միայն նշանակութեան արժանի այն է՝ որ այս երկու գրուածք մինչեւ վերջը չեն շարունակեր ի համաձայնութեան ընդ միմեանս. այլ ի վերջ կոյս պատմութեանն իրարմէ կ'անջատին. և մինչ ասորին մահուանը պատճառաւ անհետ կ'ընէ զառաքեալն Թադէոս, հայկականն ճանապարհորդել կու տայ անոր յԵդեսիոյ յաշխարհս արեւելից:

Հայերէն օրինակն հրատարակուեցաւ յամի 1868 *ի Ս. Ղազար Վենետկոյ ի Մխիթարեան Հարց այսպիսի խորագրով. «Լաբուբնեայ դիւանագիր դպրի Եդեսիոյ, Թուղթ Աբգարու, յեղեալ յասորւոյն, լուսաբանեալ»: Նոյն տարին գաղղիական թարգմանութիւն մ'ալ այն գրուածքին ի նոյն Հարց.* Lettre d'Abgar, ou Histoire de la conversiom des Edesséens, par Laboubnia, écrivain contemporain des Apôtres, traduite sur la version arménienne du V.me siècle.

Նախընթաց 1867 *տարւոյն թուագրով ուրիշ գաղղիական թարգմանութիւն մ'ալ հրատարակուեցաւ ի* 1868

ի Փարիզ, Լանկլուայի Հայ պատմագրաց Հաւաքման մէջ. Léroubna d'Edesse. Histoire d'Abgar et de la prédication de Thaddée, traduite pour la première fois sur le manuscrit unique et inèdit de la Bibliothèque impériale de Paris, par Jean Raphaël Emine. Paris, Librairie de Firmin-Didot frères, fils et C.ie: *Հայկական թարգմանութեան ուրիշ տպագրութիւն մ'ալ դարձեալ ի* 1868 *յԵրուսաղէմ, ի տպարանի սրբոց Յակովբեանց. «Ղերուբնա Եդեսացի, Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց, և քարոզութիւնք սրբոյն Թադէի առաքելոյն: Մակագիրն ըստ ձեռագրաց. Թուղթ Աբգարու թագաւորի Եդեսիայ քաղաքի, որ է յասորի լեզու Ուռհայ, որդւոյ Մանովայ»:*

⁂

Գրուածքիս հաւատարմութեան գլխաւոր նշանը՝ յամենայն ընդ Խորենացւոյն զուգընթացութիւնն է. և այլուստ գիտենք թէ Խորենացին՝ Ղերուբնայէն քաղած է Աբգարու պատմութիւնը: Եւ գրուածքիս մէջ այնպէս դիպած յիշատակութիւնք կան և մանր պարագաներ՝ որոնք երկասիրութեանս սկզբնագիր ըլլալուն ապացոյցներ են: Քանի մը օրինակներով հաւատարմացնենք խօսքերնիս:

Խորենացին պատճառ մը չի տար թէ ինչու Աբգար չկրցաւ անձամբ Պաղեստին երթալ, ու Քրիստոսէ բժշկութիւն խնդրել. կամ գէթ կ'իմացնէ թէ հիւանդութիւնն էր պատճառ որ զինքը այն ճամբորդութենէն ետ կը կեցնէր: Իսկ գրուածքիս հեղինակը քաղաքական նուրբ տեսութիւն մը մէջ կը բերէ. «Կամեցաւ, կ'ըսէ, ինքնին երթալ ի Պաղեստին, զի աչօք իւրով տեսցէ զՔրիստոս և զամենայն սքանչելիս զոր առնէր, և վասն զի չէր իւր իշխանութիւն աշխարհն Հռովմոց՝ ընդ որ ինքն երթալոց էր, զտեղի կալաւ, զի մի պատճառք ինչ լինիցին թշնամութեան»:

Մանր զանազանութիւններ ալ կ'ընէ որ աւելի ժամանակակից անձի և գրչի յատուկ են։ Այսպէս են թուահամարոց մանր իջնելներն, որ Խորենացւոյն գրոցը մէջ չեն երեւնար· ինչպէս Մարիհար, Շամշագրամ և Անան իշխանաց առ Սաբինոս Եւստորքեայ ղրկուելնուն ժամանակը որոշելը՝ Աբգարու թագաւորութեան երեսունուերկուերորդ տարին, Տրէ ամսոյն տասուերկուքին։ Դարձեալ Անանայ հաւատարմին ձեռքով առ Քրիստոս թղթելը, և անոր՝ արեգ ամսոյն չորեքտասաներորդ օրը Ուռհայէն ելլելը, ու ահեկի ամսոյն երկոտասաներորդ՝ չորեքշաբթի օրը Երուսաղէմ մտնելը, ու զՔրիստոս՝ Հրէից Գամաղիէլ քահանայապետի տան մէջ տեսնելը։ Նոյնպէս Թադէոսի Ուռհա քաղաքէն ելլելը հինգշաբթի օրը մարերի ամսոյն տասնուչորսին։

Աբգարու առ Քրիստոս թղթոյն օրինակը՝ նման է ըստ ամենայնի Խորենացւոյն մէջ գտնուածին, բաց ի քանի մը մանրմունր տարբերութիւններէ· միայն թէ Խորենացւոյն մէջ Յիսուսի փրկիչ անունը կը տրուի յԱբգարէ· իսկ հոս՝ բժիշկ մեծ կ'անուանի, որ թերեւս աւելի վայելուչ է տակաւին հեթանոս թագաւորի մը բերանը՝ որ միայն անոր բժշկութիւններէն գուշակած է անոր մեծ ու երկնաւոր անձ ըլլալը։

Արքունի գերդաստանին նկատմամբ ալ ծանօթութիւններ կու տայ՝ որ ուրիշ պատմչաց մէջ չեն երեւնար, և ըստ մեզ ապացոյց են անոր հնութեան· վասն զի կը յիշէ զԱւգոստինէ՝ Աբգարու մայրը, ու անոր կինը Շղամաթէ՝ զոր Միհրդատայ դուստր կը կոչէ։ Դարձեալ իրեն պաշտօնեայքը յանուանէ կը յիշատակուին փոկրէ, Աբեթշէմէ, Շամշագրամ, Արդիու, Ագի և Բարքազարա, Ղարբու, Խափէս, Խօսրով և Ղրուբնիա, Շաւիթա, Պերող, Դանիկով, և այլ ուրիշ նախարարք։

Խորենացին կը գրուցէ թէ երբ Քրիստոս Աբգարու կողմանէ գրուած նամակն ընդունեցաւ, Թովմայի առաքելոյն

պատուիրեց որ այն թղթոյն պատասխանը տայ։ Այսպէս նաեւ Եւսեբիոս յեկեղեցական պատմութեան, Պրոկոպիոս և այլք։ Իսկ գրուածիս հեղինակը կ'աւանդէ, — և որ հաւանականագոյն թուի, — թէ Տէրն մեր Աբգարու թըղթոյն պատասխանը ոչ գրով՝ այլ բերնով եւեթ տուած ըլլայ, վասն զի կ'ըսէ· «Ընկալեալ Յիսուսի զթուղթն ի տան քահանայապետին Հրէից, ասէ ցԱնան հաւատարիմ արքային· Երթ և ասա տեառն քում որ առաքեացն զքեզ առ իս· Երանի է քեզ զի հաւատացեր յիս մինչեւ տեսեալ քոյ զիս· զի այսպէս գրեալ է վասն իմ։ Եւ զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ· վասն որոյ առաքեցայ ես յաշխարհ, կատարեալ է ամենայն»· և այլն։

Խորենացին կը յաւելու· «Զայս թուղթ եբեր Անան սուրհանդակ Աբգարու· ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին»· ու չի նշանակեր թէ ինչպէս նկարեցաւ այն պատկերը· ուստի և ոմանք վերջը յարմարցուցած կ'աւանդեն, թէ Քրիստոս տեսնելով որ Աբգարու կողմանէ ղրկուած նկարիչը չկրցաւ իր աստուածային դէմքը պաստառի վրայ առնուլ, ձեռքն առաւ պաստառը, երեսացը վրայ դրաւ, և աստուածային դիմացը նկարագիրը տպաւորեցաւ այն պաստառին վրայ։ Այս պարագայն չի յիշատակեր բնաւ գրուածքիս հեղինակը, այլ կ'ըսէ յայտնապէս թէ «(Անան) առեալ նկարեաց զպատկերն Յիսուսի ընտիր դեղովք· քանզի արուեստաւոր թագաւորին էր· և բերեալ մատոյց Աբգարու թագաւորի տեառն իւրում»[1]։

---

[1] Ի Գենուա (Ճենովա) Իտալիոյ յեկեղեցւոջ սրբոյն Բարթուղիմեայ Հայոց (S. Bartolomeo degli Armeni) մեծարուած և պատմական հնութիւն ունեցող Քրիստոսի դաստառակ մը, որուն համար աւանդութիւնը առ Աբգար ղրկուածն է կ'ըսէ, արուեստիւ դեղոց նկարուած է ըստ հմտից և քննողաց։

⁂

Աբգարու թղթոյն գլխաւոր նիւթը Թադէոս առաքելոյն քարոզութիւնն է, զոր ինքն Ադէ կ'անուանէ, հանդերձ այն հրաշքներով՝ զորս արդէն ազգային եկեղեցական պատմութիւննիս մեզի կ'աւանդէ: « Եւ ոչ միայն Հայք, կ'ըսէ պատմիչը, այլ բազումք յարեւելից ի նմանութիւն վաճառականաց յիշխանութենէ հռովմոց գային տեսանել զնշանսն զոր առնէր Ադէ առաքեալ. և աշակերտեալքն ի նմանէ ընդունէին զձեռնադրութիւն քահանայութեան. և յաշխարհին իւրեանց յԱսորեստանի զգաւառականս իւրեանց աշակերտէին. և տունս աղօթանոցս շինէին ի ծածուկ վասն երկիւղի այնոցիկ՝ որ երկիր պագանէին կրակի և պատուէին զջուրս »:

Խորենացւոյն պատմութեան մէջ թուղթ մը կը կարդանք գրուած յԱբգարէ առ Ասորեստանեայց մանուկ թագաւորն Ներսեհ: Գրուածքիս հեղինակը այն նամակը մէջ չի բերեր, այլ պարզապէս նոյն պատմութիւնը կ'աւանդէ. «Ներսեհ թագաւոր Ասորեստանեայց, կ'ըսէ, յորժամ լուաւ զգործսն զոր առնէր Ադէ առաքեալ, յղեաց նա առ Աբգար թագաւոր և ասէ. կամ տուր ածել ինձ զայրդ որ զնշանսդ առնէ առ քեզ, զի տեսից զդա և լուայց զբանս դորա, և կամ տուր գիտել ինձ զամենայն ինչ որ միանգամ արարեալ է դորա ի քաղաքիդ քում[1]*: Ապա գրեալ Աբգարու Ներսեհի թագաւորի Ասորեստանեայց և իմացուցեալ նմա զամենայն պատմութիւն իրացն՝ զոր արար Ադէ առաքեալ ի սկզբանէ մինչեւ ցկատարած. և ոչ եթող ինչ զոր ոչ իմացոյց նմա գրով: Եւ իբրեւ լուաւ Ներսեհ զգրեալսն առ նա՝ հիացեալ զարմանայր. և մեծապէս ցանկութեամբ կամէր տեսանել զնա »:*

Աբգարու մահը և անոր Սանատրուկ որդւոյն թագաւորելը և կրկին ի պաշտօն կռոց դառնալը՝ համառօտիւ կը յիշատակուի Խորենացւոյն մէջ. և պատճառը մէջ կը բերէ. « Զայս, կ'ըսէ, ծայրաքաղ արարեալ համառօտ յիշատակեցաք, որպէս զառ ի յայլոց պատմեալ նախկին», որով անտարակոյս զՂերուբնա՝ կամ իրեն ենթադրուած գրուածքիս հեղինակը՝ այսպէս մանրապատում կ'ընէ նոյն ժամանակաց դէպքերը.

« Յետ ամաց ինչ մեռաւ Աբգար թագաւոր, և եկաց ի թագաւորութեան մի յորդւոց իւրոց, այր չար և ապըստամբող. լի ամենայն անօրէնութեամբ, որ ատէր զխաղաղութիւն և ոչ ընդունէր զվարդապետութիւն քարոզութեան աւետարանին. յղեաց առ Ադէ եպիսկոպոս մինչդեռ նստէր յեկեղեցւոջ, և խօսէր զպատգամս գրոց սրբոց յականջս ժողովրդեան, և ասէ. « Արա ինձ խոյրս ոսկեղէնս զոր օրինակ առնէիր յառաջ հօրն իմոյ»: Եւ ոչ առ յանձն Ադէ. առաքեաց անդրէն և ասէ. « Ոչ թողում ես զպաշտօնս Քրիստոսի որ աւանդեցաւ ինձ յԱդէէ առաքելոյ, և առնեմ խոյր անիրաւութեան »: Եւ իբրեւ ետես նա եթէ ոչ հաւանի նա կատարել զկամս նորա, յղեաց և խորտակեաց զսրունս նորա՝ մինչդեռ նստէր յեկեղեցւոջ և թարգմանէր ի մէջ ժողովրդեանն: Եւ ի մեռանելն իւրում երդմնեցոյց զփղոտ և զԱբշղամայ՝ եթէ աստէն իսկ ի տանս յայսմիկ ուր մեռանիմս վասն ճշմարտութեան սորա՝ դիք զիս, և աստէն թաղեցէք: Եւ որպէս երդմնեցոյց զփղոտ և զԱբշղամայ՝ նոյնպէս արարին. թաղեցին զնա անդէն ի ներքոյ քան զմիջին դուռն եկեղեցւոյն, ի միջի՝ ընդ արս և ընդ կանայս: Եւ եղեւ սուգ մեծ և դառն յեկեղեցւոջն և յամենայն քաղաքն վասն իրացն եղելոցն. որպէս եղեւ սուգ և տըրտ-

---

[1] *« Այլ վասն այնր զի գրեցեր առ իս թէ տուր ածել զայրդ բժիշկ՝ որ զնշանսդ առնէ և քարոզէ այլ Աստուած ի վեր քան զհուր և զջուր, զի տեսից և լուայց դմա, նա ոչ էր բժիշկ ըստ արուեստի մարդկան, այլ աշակերտ էր Որդւոյն Աստուծոյ՝ արարչի հրոյ և ջրոյ. » և այլն. Աբգար առ Խորենացւոյ.*

մութիւն՝ յորժամ վախճանեցաւ բարիոք վկայութեամբ Ադէ առաքեալ վարդապետն նորա ի ձեռաց ամպարշտաց՝ ի կողմանս արեւելից »։

Հաւանական կարծեօք հմտագունից՝ ըստ մեծի մասին Ղերուբնայ և կամ Լաբուբնեայ դիւանագրի Եդեսիոյ, ժամանակակցի առաքելոց և աշակերտաց կը վերաբերի այս գրուածքը. սակայն երկու հարիւր տարուան միջոցի մէջ շատ փոփոխութիւններ կրած՝ ու երբեմն նաեւ յաւելուածներ յիրահամարձակ ձեռաց և գրչաց. և վերջին ու գլխաւոր խմբագրութիւնն՝ Գ. դարուն առաջին կիսուն մէջ եղած կ'երեւնայ։ Սակայն եթէ մէկ կողմանէ հայկական թարգմանութեան ընտիր և յստակ ոճը, ասորի բնագրին հետ համաձայնութիւնը, հնութիւն ձեռագրաց յորս պահուած և առ մեզ հասած է, տարակոյս չեն ձգեր թէ արդէն ի Ե դարու կար գրեթէ մի և նոյն կերպարանքին մէջ՝ յորում այսօր, և մեր հին տօնացոյց գրոց մէջ՝ որոց կարգադրութիւնը սորոյն Սահակայ Պարթեւի կ'ընծայուի, ի 23 դեկտեմբերի պատուիրելով կատարել զտօն Ադդէի հայրապետին Եդեսիայ քաղաքի, աշակերտին Թադէոսի, և կը յաւելու. « ընթեռնուլ զթուղթն Աբգարու և զգիրս նորին ». միւս կողմանէ ալ չենք կըրնար կարծել թէ աստուածաբանական քանի մը կանխահաս կամ անընդունելի մանրամասնութիւնք վրիպած ըլլան ի լուսաւոր աչաց Մովսիսի Խորենացւոյ մը կամ մեծին Սահակայ Պարթեւի։ Ուստի կը բռնադատուինք յետագայ դարուց ընդօրինակողներու ընծայել այս յաւելուածներն, և հաստատել թէ ըստ մեծի մասին նոյն գրուածքն է՝ ինչ որ էր ի ժամանակս և առաջի աչաց մեր հիմա իսկ յիշատակաց անձանց,, և Եւսեբեայ. որով և մեծարելի և հետաքննական յիշատակարան մը հին քրիստոնէութեան։

Ասիկայ է գաղղիարէն թարգմանչին կարծիքն ի յառաջաբանին։

Այլեւայլ թարգմանութիւնք և լուսաբանութիւնք եղած են այս գրուածքին։ Բաց ի արդէն վերը յիշուածներէն աւելցնենք նաեւ

The doctrine of Addai, the apostle, now first edited in a complet form in the original syriac, with in english translation and notes, by Georges Philipps London, 1876.

* * *

ԴԱՐ Դ

Քրիստոնէական կրօնից կրկին հաստատուիլն ի Հայաստան։ — Անոր ազդեցութիւնն և արդիւնք մեր մատենագրութեան վրայ։

Չորրորդ դարուն մէջ նշանաւոր կերպարանափոխութիւն մը կրեց Հայաստան։ Սուրբ աւետարանին քարոզութիւնը՝ որ դեռ գրուած չգրուած՝ Հայաստանի մէջ ալ պատմուելով, երկար տեւողութիւն մը չունեցաւ հոն, Դ դարուն մէջ կրկին հաստատութիւն առաւ այն նշանաւոր անձին ձեռքով՝ որ արժանապէս Լուսաւորիչ կոչուած է տասնուհինգ դարերէ վեր։ Տրդատ թագաւորը՝ որ նոյն սուրբ կրօնից քարոզիչը մեռցնելու համար իր ամէն ոյժը բանեցուց, անոր երկնահրաշ զօրութենէն յաղթուեցաւ. այն երկնաւոր լուսոյն դէմ երկար ատեն մաքառելէն վերջ՝ ինքը նոյն լուսով լուսաւորուեցաւ. ու հրաման հանեց որ Հայաստանի հին կրօնից մեհեանները կործանին, ու անոնց վրայ՝ միոյն և ճշմարտին Աստուծոյ անուանը փառաւորութեան տաճարներ կանգնուին։

Այսպէս կրօնական մեծ կերպարանափոխութիւն մը՝ ինչպէս քաղաքականին վրայ իր զօրաւոր ազդեցութիւնն ունեցաւ, այսպէս ալ ուսումնականին վրայ։ Հաւատքը քարոզելը բաւական չէր. այն հաւատքը ընդունելի և տեւական ընել տալու համար՝ հարկ էր նաեւ մտքերն ընդելացնել և կրթել. ու այս կրթութիւնը անհրաժեշտ

կը պահանջէր զուսումն։ Տարակոյս չկայ որ նոյն ուսումը առաջ տանելու համար ամենազօրաւոր միջոց մը կը պակսէր, կամ դեռ բոլորովին կազմակերպուած չէր, գիրը. հետագայ ոսկեղէն դարու ջանից արդիւնք, որով կարելի չէր թէ կրթութիւնը և թէ ուսումն ընդհանուր ընել այնպիսի ընդարձակածաւալ աշխարհի մը մէջ. և սակայն ոչ գրոյն պակասը և ոչ աշխարհին ընդարձակութիւնը յուսահատեցուցին զԳրիգոր և զՏրդատ։ Ագաթանգեղոս կ'աւանդէ թէ Տրդատ երկու ազգ դպրոցաց կանգնեց. յորոց մէկը թագաւորական կը կոչուէր, արքունի և իշխանական տոհմէ եղողներուն կրթութեան համար, և որոց գլուխ կ'ըլլար ինքն Տրդատ. «Առնոյր այնուհետեւ սուրբն Գրիգոր զԱրշակունեաց տոհմի որեարն, ի վարժս վարդապետութեան պարապեցուցանէր. որոց առաջնոյն Տրդատ անուն, որ և թագաւոր իսկ էր, ամենայն տամբ իւրով»։ Աշխարհին այլ և այլ կողմերը կը հաստատէր նաեւ հասարակաց կրթութեան պատշաճեալ ուսումնարաններ, ինչպէս կը վկայէ նոյն ինքն Ագաթանգեղոս. «Ի տեղեաց տեղեաց սահմանացն Հայոց տայր հրաման թագաւորն Տրդատ իւրոյ իշխանութեանն՝ յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մանկըտւոյ ածել յարուեստ դպրութեան, և կարգել ի վերայ հաւատարիմ դպրապետս. առաւել զազգս պղծագործ քրմացն, զմանկունս նոցա ի նոյն ժողովել գումարել յարժանաւոր տեղիս դասս դասս, և դարման ռոճկաց կարգել։ Եւ զնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւն կարգեալ և զոմանս ի հելլեն. և անդէն յական թօթափել՝ վայրենամիտքն և դատարկասունքն և անասնաբարոյ աշխարհքն՝ մարգարէագէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին, և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւիք անտեղեակք»։

Չորրորդ դարուն Հայերը սովորութիւն ունէին Աթէնք, Կեսարիա, Բիւզանդիոն, Եդեսիա և Աղեքսանդրիա երթալ, *և հոն ոչ միայն կրօնական, այլ և արտաքին ուսմանց ետեւէ ըլլալ: Անկէց է որ նոյն դարուն մէջ ուսման պարապողներն հաւասարապէս կը ճանչնային թէ իրենց հայրենական լեզուն, թէ յոյն և ասորի լեզուները. ուր հասարակ ժողովուրդը այն լեզուաց կատարեալ տեղեկութիւնը չունենալով, որով եկեղեցական պաշտամունքը կը կատարուէին, պէտք կ'ունենար երբեմն նաեւ թարգմանի: Ծանօթ էր շատերուն նաեւ պարսկերէն լեզուն, ի պատճառս քաղաքական այլ և այլ յարաբերութեանց:*

Այսպիսի ուսումնական դրից մէջ էր Հայաստան ի Դ. դարու: Քիչ մատենագրաց անուանք կը յիշատակուին՝ որ այն ժամանակին ծաղկած ըլլան. կամ հնութիւնը՝ անոնց անուանքը մինչեւ մեզի չհասոյց, և կամ ընդհանուր և ըստ արժանւոյն չծաղկած ուսումնականութիւն մը չկրցաւ անկէ աւելին երեւցնել:

Տեսնենք հիմայ նոյն ժամանակին ծաղկող մատենագրաց ուսումնական արդիւնքը:

* * *

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Իր ջանքն և արդիւնք նաեւ ուսմանց յառաջադիմութեան համար: — Հաստատած դպրոցները: — Յաճախապատում գիրքը: — Անոր նիւթն ու բովանդակութիւնը: — Որ լեզուով գրուած ըլլալը: — Լուսաւորչի անուամբ ուրիշ երկասիրութիւնք:

Ինչպէս հաւատոց՝ այնպէս ալ դպրութեանց նորոգման հայր և հեղինակ է սուրբն Գրիգոր Լուսաւորիչ: Ազգային եկեղեցական պատմութեան կ'իյնայ այս անզուգական անձին արդիւնքը հռչակել՝ զոր ունեցաւ սուրբ հաւատոց ի մեզ հաստատութեան նկատմամբ: Մենք պարզապէս իբրեւ մատենագիր պիտի նկատենք զինքը հոս:

Լաւ գիտնալով սուրբ Լուսաւորիչն թէ ուղիղ գիտութիւնը ոչ միայն չի հակառակիր հաւատոց, այլ նաեւ մեծապէս նպաստամատոյց է անոր յառաջադիմութեանն և բարգաւաճմանց, առաջին ջանքը եղաւ հաւատքով ազգը լուսաւորելէն ետքը, այն հաւատոց մշտնջենաւորութիւնը ապահովցնել՝ գիտութեամբք. անոր համար դպրոցներ հաստատելու ետեւէ եղաւ: Ինչպէս հաւատոց քարոզութիւնը՝ այնպէս ալ ուսումնական կրթութիւնը իշխաններէն սկսաւ: Ամենէն առաջ բացած վարժարանը՝ թագաւորական դպրոց մը եղաւ, և հոն կրթեց իշխաններ, ու նաեւ զնոյն ինքն Տրդատ թագաւորը, ինչպէս քիչ մ'առաջ ալ յիշեցինք: Անկէ զատ համոզեց զՏրդատ թագաւոր՝ որ այլ և այլ տեղուանք հասարակաց դպրոցներ հաստատէ. «Հաւանեցուցանէր, կ'ըսէ պատմիչը, զթա-

գաւորն զի ի գաւառաց գաւառաց, և կողմանց կողմանց ի տեղիս տեղիս ժողովեցին բազմութիւն մանկտւոյ առ ի նիւթ վարդապետութեան». և այլն: Ագաթանգեղոսի խօսքերէն առնելով կ'աւանդէ և Վարդան. «Դպրոցս յօրինէր, մանկունս հաւաքէր, վարդապետս յոյն և ասորի գրոյ և լեզուի գիտակս կացուցանէր, ռոճիկս կարգէր յարքունուստ»: Այս արդիւնքը՝ Տրդատայ կու տայ Բիւզանդ. «կարգէր, կ'ըսէ, և ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն՝ յամենայն գաւառս Հայոց»:

⁂

Այս դպրոցաց հիմնարկութենէն զատ՝ մասնաւոր գրուած մ'ալ հասած է ձեռքերնիս՝ սրբոյն Գրիգորի աշխատասիրութեանը արդիւնք, Յաճախապատում կոչուած: Այս գրքին հարազատութեանը կը վկայեն ոչ միայն յետին ժամանակի մատենագրաց մէջ Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսն, իր որդին Նարեկացին Գրիգոր, Մագիստրոս Գրիգոր, Սարկաւագապետ, հապա նոյն իսկ իրեն ժամանակակից պատմիչն Ագաթանգեղոս հետեւեալ խօսքերով. «Ապա յետ այսպիսի գործոց՝ առաւել բարձրագոյն վարդապետութիւն սկսեալ երանելւոյն Գրիգորի ի ձեռն յաճախագոյնս, դժուարապատումս, առակս խորիմացս, դիւրալուրս, բազմադիմիս, շնորհագիրս, յարդարեալս ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց, լի ամենայն ճաշակօք կարգեալս և յօրինեալս՝ աւետարանական հաւատոցն ճշմարտութեան, յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորաց անտի՝ առաւել վասն յարութեան յուսոյն ի հանդերձեալսն՝ յորդորեալ. զի հեշտընկալ և դիւրահաս՝ տխմարագունից և մարմնաւոր իրօք զբաղելոց լինիցին առ ի սթափել, զուարթացուցանել, զօրացուցանել և հաստատահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել»: Յովհան իմաստասէր հայրապետն ալ Ագաթանգեղեայ այս խօսքերուն հետեւողութեամբ կ'ըսէ եկեղեցւոյ վրայ յօրինած ճառին մէջ. «Ըստ նմին օրինակի և իմ պսակաւորն է հայրապետն սուրբ Գրիգոր՝ ըստ տերունական առակին՝ զյարութիւն մեռելոց բուսոց և տնկոց օրինակէր ի գարուն բուսաբեր, և ի դալարանալ մարդկան ի գերեզմանէ»:

Քսանուերեք ճառէ կը բաղկանայ սրբոյն Գրիգորի այս երկասիրութիւնը. որոց մէջ նախ սուրբ Երրորդութեան խորհրդոյն և աստուածածանօթութեան վրայ խօսելով, անկէց արարչին՝ իր արարածոց վրայ ունեցած մարդասէր խնամոց վրայ կը ճառէ: Ապա իւր խնամոցը ու գրեթէ իւր արեանը գին սիրելի հօտին՝ ամենուն վիճակին յարմար յորդորական, ամոք և ողոքիչ խրատներ կ'աւանդէ, որդեսէր հօր մը սրտովը ու լեզուով: Վերջը միակեցական կենաց ետեւէ եղողներուն յարմար պատուիրաններ ու խրատներ մէջ կը բերէ:

Հետագայ ցուցակը ընթերցողին աչքին դիմաց պիտի դնէ՝ իր անուամբը մինչեւ առ մեզ հասած ճառից գլխակարգութիւնը:

Ա. *Յաղագս ամենասուրբ Երրորդութեան,*
Բ. *Վասն առանձնաւորութեան Երրորդութեան,*
Գ. *Վասն մտաց հաւատոյ,*
Դ. *Վասն յանդիմանութեան մոլար մտաց և ընծայութիւն աստուածպաշտութեան,*
Ե. *Վասն հաստատութեան ճշմարտութեան և առաջնորդութեան կենաց խրատու,*
Զ. *Վասն յանդիմանութեան ծածկութից իրաց, որ զաներեւոյթն յերեւելիս ածէ,*
Է. *Վասն յօրինուածոց արարածոց,*
Ը. *Վասն յանդիմանութեան դժնդակ վարուց և ընծայութիւն առաքինութեան հանդիսից,*
Թ. *Վասն ամենարուեստ կատարեալ պահոց,*
Ժ. *Վասն երախտաւորութեան անզեղջ բարերար կամացն, և յորդորումն ի լալն և յառաւելն ըստ ճշմարիտ առաքինութեան,*

ԺԱ. Վասն վարուց առաքինութեան որ հանդիսիւք լաւութեան պսակեալ երանին։

ԺԲ. Վասն խնամոց արարչին և կշտամբութիւն անհնազանդ ստահակութեան և առաջնորդութիւն բարութեան բարուցն լաւութեան։

ԺԳ. Վասն լաւութեան յիշատակաց ի պէտս օգտից, զաներեւոյթս յերեւելիս ցուցանելով ի գործ առաքինութեան փոխել ի յոյս կենացն։

ԺԴ. Վասն մարդկութեան որ յԱստուծոյ խնամք տեսչութեան կան։

ԺԵ. Վասն հոգւոց մարդկան բացայայտութիւն,

ԺԶ. Վասն մարտիրոսաց վարդապետութիւն ուսմանց։

ԺԷ. Զգուշութիւն զգաստութեան ընդ մտերիմս և ընդ դժընդակս պատիւ և պատիժս։

ԺԸ. Վասն գովութեան Աստուծոյ հրեշտակացն հանդիսիւք մարտիրոսաց քաջայայտ։

ԺԹ. Վասն յորդորման ապաշխարութեան։

Ի. Վասն խորագիտութեան և մարտից,

ԻԱ. Վասն տրոց իմաստութեան որ ի Հոգւոյն սրբոյ պարգեւեցաւ։

ԻԲ. Վասն անփոփոխ ինքնութեան Էութեանն Աստուծոյ,

ԻԳ. Վասն խրատու ճգնաւորաց յառաքինութիւնս յորդորումն ի Քրիստոս Յիսուս։ Նորին աղօթք։

Այս ճառերուն մէջ աստուածանուէր սրտով ու սիրով լեցուն հոգին է զատ, յունական հարց նմանողութիւն և անոնց խօսքի ոճը կը բանեցնէ Գրիգոր։ Իր նուիրական վարուց պատմութիւնը մեզի կը ցուցնէ՝ թէ ինչպէս հօրը հետ մէկտեղ, պատժապարտին Անակայ, նաեւ բովանդակ ընտանեաց բնաբարձ ջնջման հրամանէն՝ բարերար ձեռք զինքը փրկեցին, փոխադրելով ի Կեսարիա, ուր հաւատոց սրբութեան մէջ սնաւ և զարգացաւ։ Հոն ժամանակ անցընելէն ետքը՝ զրկուեցաւ եպիսկոպոսական սուրբ աստիճանն ընդունելու։ Այս ամէն պարագայք ընդելացուցին և կրթեցին զնա ի յունական ուսմունս, յոճ և ի լեզու։ Հոն սորված վարդապետութիւնը՝ զոր դիցապաշտ Հայաստանին կ'ուզէր ծանօթացնել, անոնց լեզուովը կ'աւանդէ, ցուցնելով կրթուած միտք ու հանճար։ Մեր ազգին

մէջ քիչ հայրապետք կրցած են աստուածութեան վրայ խօսած ատեննին այն վարժ գրիչը և լեզուն գործածել, որուն առաջին վարդապետն ու հեղինակ է ինքն սուրբն Գրիգոր։

Խնդիր է թէ ինչ լեզուով շարագրած է այս գիրքս Լուսաւորիչ։ Ոմանք կը համարին թէ Հայերէն շարագրած ըլլայ, այլք յունարէն․ և պատճառ կը բերեն, թէ այն ժամանակ հայերէն գիր չըլլալուն, հարկ էր որ յունարէն գրէր։

Աւելի հաւանական երեւցածն է որ Հայոց համար եղած աշխատութիւն մը բնականաբար պէտք էր որ այն լեզուով գրուէր՝ որ ազգին մեծագոյն մասին հասկնալի ըլլար․ ապա թէ ոչ՝ ընդունայն աշխատութիւն և անպատճառ յոգնիլ կ'ըլլար։ Հայերէն գիր չըլլալուն, անշուշտ ինքն ալ՝ ինչպէս իր ժամանակակիցք՝ յոյն տառերը գործածած են, հայկական բառեր արտադրելու համար։ Բայց պատմական ստուգութիւն մը չունենալով այս կարծեաց, բանասէրք չեն ուզեր պնդել որ բուն ինքն սուրբ Գրիգոր հայերէն գրած ըլլայ այս ճառերը, մինչ ազգաւն ու լեզուով՝ օտար ու անծանօթ անոնց, որոց սրտին և հոգւով հայր էր գորովագութ, կրնար իր յունարէն շարագրածը հայերէնի վերածել տալ ուրիշի[1]։

⁂

Բայց ի Յաճախապատում գրոց, և Ագաթանգեղայ պատմութեան կարեւոր մէկ մասը կազմող վարդապետական քարոզութենէն, Լուսաւորչայ կ'ընծայուին նաեւ քանի մը ուրիշ մանր երկասիրութիւնք։ Ասոնց մէջ գլխաւոր է

---

[1] Յաճախապատում գրոց օրինակաց միոյն մէջ հետեւեալ հետաքրքրական յիշատակարանը կը կարդանք «Կատարեցաւ․․ գիրքս որ կոչի Յաճախապատում... էր օրինակ սորին ԳՃԸ տարի էր առաջի թըւականն Հայոց ի Լուսաւորչէն. և առեալ օրինակ ի մայրաքաղաքն Կիլիկիա, որ

երեսուն թուով կանոններ, որոնք Կանոնագրոց մէջ Լուսաւորչի անունը կը կրեն, և թերևս յաւելուած են Նիկիոյ ժողովոյն մէջ սահմանուած կանոններուն, որոնք բերաւ ի Հայաստան սուրբն Արիստակէս, և զորս ընդունեց իր և Հայաստանեայց սուրբ հայրն՝ Լուսաւորիչ, անոնց ընդունած հանգամանքին վրայ աւելցնելով «Իսկ մեք փառաւորեսցուք» աղօթքը։ Կը վկայէ և Խորենացին. «Ընդ որ ուրախացեալ, կ'ըսէ, սուրբն Գրիգորի, սուղ ինչ կանոնս յինքենէ ի կանոնս ժողովոյն (Նիկիոյ) յաւելու, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»։

Այս երեսուն կանոններէն դուրս՝ ձեռագրաց մէջ կը հանդիպինք նաև ուրիշ մետասան կանոնաց կամ հարցմանց, որոնք սուրբն Գրիգորի անունը կը կրեն, այսպիսի խորագրով. «Կանոնք սուրբն Գրիգորի Պարթևի. դարձեալ՝ հարցումն և պատասխանիք նոցա»։ Հրատարակողն Աբէլ արքեպիսկոպոս յԱրարատ ամսագրի Էջմիածնի (1873 յէջ 409) յաւելու. «Բաց յերկուց աստի կանոնացս եղելոց ի կանոնագիրս մեր՝ որպէս ասացաք, անուամբ սրբոյն Գրիգորի երկրորդ Լուսաւորչին մերոյ, գտաք դարձեալ ի Նմին և զերկուս ճառօրէն կանոնս Նորին Գրիգորի. առաջին մասն կարգի ուխտի և որոշումն վանաց, և երկրորդն յաղագս Նուիրանաց քահանայից և վանորէից՝ կոչեցեալն Ագապ, թարգմանեալ յաւուրս սրբոյն և մեծին Սահակայ ընդ ձեռն Եզնակայ, որպէս է տեսանել ի վերնագրին

է ի ժամանակին Հայոց թագաւորաց, և քաջաց իմաստնոց»։ Դարձեալ ի վախճան գրոցն. «Եղբարք իմ, զայս յաճախապատումս օրինակն Սըսայ գրքատանն առաք՝ ի մեր թուականն Գ․ՃԸ թիւն էր. այժմուս մեք գտաք՝ մեր օրինակաց ժամանակին թիւն էր ՌՃԻԲ»։

Լուսաւորչայ Յաճախապատում գիրքը երկու անգամ տպագրութեամբ հրատարակուած է, անգամ մը 1737ին ի Կոստանդնուպոլիս՝ Պաղտասար դպրին ջանիւքը. անգամ մ'ալ 1838ին ի Վենետիկ Մխիթարեանց վանքը, ձեռագրաց բաղդատութեամբ և հաւատարիմ ընթերցուածով։

յորոց երեւի առեալ սրբոյն Սահակայ, և ընդարձակեալ զկանոնս արարեալս նորա յամին 426»։

Լուսաւորչին է նաև ժամագրոց մէջի մաղթանքը «Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ». որուն համար աւանդութիւնը կը գրուցէ թէ երգած ըլլայ Հռիփսիմեանց ու Գայիանեանց մարմինները ամփոփելու ժամանակ։ Ասկէ զատ ուրիշ երկու աղօթք ալ իր անուամբն. «Օրհնեալ է մարդասիրութիւն քոյ տէր իմ». և միւսը՝ «Աղաչեմ զքեզ»։

Վերջին տարիներս գտնուեցաւ Լուսաւորչայ անուամբ նաև Պատարագամատոյց գիրք մը, որուն վրայ մեր այս երկասիրութեան Թարգմանութեանց մասին մէջ, նոյն նուիրական գրոց վրայ խօսելու առեննիս ընթերցողաց մտադրութիւնն դարձուցեր ենք։

* * *

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Ո՞վ էր Ագաթանգեղոս։ — Հնոց կարծիքը իր վրայ։ — Յառաջաբանն ըստ յունական օրինակին։ — Ագաթանգեղեայ պատմութեան նիւթն։ — Իր գրոց հարազատութեան վրան տարակոյսներ։ — Ո՞ր լեզուով գրուած ըլլալուն խնդիրը։ — Հայկական և յունական օրինակք։ — Առ Սեբէոսի հատուած մը իր անունով։ — Դաշանց թուղթ ու անոր հարազատութեան վրայ կարծիք և գրութիւնք։ — Իր անունովը յիշուած ուրիշ երկասիրութիւն մը։ — Ագաթանգեղեայ գրոց տպագրութիւնք և թարգմանութիւնք։

Լուսաւորչի ձեռքով Հայաստանի մէջ գործուած զարմանալի դէպքերը ու աստուածային նախախնամութեան սքանչելիքն՝ արժան էր որ յետագայից մտքին մէջ հաստատուն մնալու համար գրով մշտնջենաւորուէին։ Այս փափաքն ունեցաւ նաեւ Տրդատ Թագաւորը, ու յանձնեց Ագաթանգեղոսի որ ազգաւ Հռովմայեցի էր, ու Տրդատայ հետ մէկտեղ՝ իբրեւ արքունի քարտուղար՝ Հռովմէն Հայաստան եկած։ Ասկէ աւելի տեղեկութիւն մը չեն աւանդեր մեզի ոչ ինքը և ոչ պատմութիւնն՝ իր կենացը առաջին կամ վերջին հանգամանացը վրայ։ Միայն ինքն իր անձին համար այս վկայութիւնը կու տայ, զոր Թողած Պատմութեան գիրքն ալ կ'երաշխաւորէ, թէ հռոմերէն և յունարէն դպրութիւն սորված էր։

Որչափ ալ ժամանակակից, կամ գրեթէ ժամանակակից դիպաց պատմող պիտի ըլլար Ագաթանգեղոս, սակայն

զանազան հին դիպաց յիշատակութիւնք ալ մէջ մտնելով, պէտք էր որ իրմէ առաջ եղող պատմագրաց գրուածներէն քաղէր զանոնք։ Այս վախճանաւ մինչեւ իր օրերը գտնուած՝ ու ցրիւ աւանդուած պատմութիւնները մէկտեղ բերաւ, անոնցմով կազմելու իր պատմութեան գրքին առաջին մասը. «Հասեալ առ իս, կ'ըսէ, հրաման ի մեծ արքայէն Տրդատայ, կարգել ինձ ի ձեռնարկութենէ նշանագիտ ժամանակագրաց՝ զհայրենականացն գործս քաջութեան»։

Տարակոյս չկայ որ պատմութիւնը անկենդան դիակ մ'է, ու զանիկայ ախորժելի ընծայելու համար՝ բաւական չէ գոյնզգոյն ու գեղեցիկ պատմուճան մը ձգել անոր վրայ. այլ պէտք է կենդանութեան շունչ ազդել այն դիակին, որպէս զի պատմութիւնն ըլլայ խօսողը՝ չէ թէ պատմողը։ Այս յատկութիւնը կարգէ դուրս կերպով մը ունի Ագաթանգեղոս։ Իրաւ է որ պատմութիւնը ինքնիրմէն գեղեցիկ է ու զարմանահրաշ, բայց գրողին ճարտարութիւնն ալ մեծապէս օժանդակած է այն գեղեցկութեանը։ Այնպիսի կարգաւորութիւն մ'ունի գրուածը, որ յայտնապէս կ'երեւցնէ թէ Հռովմայ մէջ ծնած ու դաստիարակուած հանճար մ'է. այն քաղաքին՝ որ հաւասարապէս գիտցաւ գործածել զզէնս և զգրիչ։

⁂

Իր այս ամէն յատկութեանցը համար՝ մեծապէս յարգի էր թէ ինքը և թէ իր գրուածը, ոչ միայն իրմէն ետքը եկող՝ հապա նաեւ իրեն ժամանակակից մատենագրաց առջեւ։ Զենոբ Գլակ երկիցս կը յիշատակէ Ագաթանգեղոսի անունը և գրուածքը. և տեղ մը՝ իրմէ առաջ գրելն ալ կը ծանուցանէ։ «Դուք մի ինչ ազարտէք, կ'ըսէ, զակաւ պատմութիւնս կամ եթէ Ագաթանգեղոս զայդ ոչ յիշէ. զի ես յառաջագոյն գրեցի քան զնա»։ Խորե-

նացին՝ որ իր գրուածոյը մէջ ընդհանրապէս համառօտախօս ոճ մը կը բանեցնէ, երբոր կ'ուզէ որ ընթերցողք աւելի կատարեալ տեղեկութիւն մը ստանան՝ Ագաթանգեղոսի կը ղրկէ, և աջող քարտուղար Տրդատայ կը կոչէ զինքը։ Փարպեցին ալ իր պատմութեան գրքին սկիզբը այսպէս կը խօսի անոր վրայ. «Ընդ բազում ճառս մատենից առաջնոց պատմագրացն Հայոց անցի. յորոց ըստ երկար ընթերցողութեան գտի ի նոցանէ զժամանակաց և զգարուց աշխարհիս Հայոց բազմադիմի յեղափոխութիւնս, յ'առոյգ և յանխախտ կարգաւորութենէ առաջին գրոցն, զոր յարմարապէս պատմեալ ծանոյց մեզ երանելին Ագաթանգեղոս. այր բանիբուն գիտութեամբ և լի ամենայն հրահանգիւ, ստուգաբան ի կարգադրութիւն ճառից, և յարմարագիր ի պատմութիւնս ասացուածի իւրոյ։ Սա զնուազումն թագաւորութեան արշակունւոյն Արտաւանայ և զզօրանալն Ստահրացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ՝ ստուգապէս յօրինուածով կարգեալ դրոշմեաց, զքինախընդրութիւնն Խոսրովու... Զայս ամենայն, եւս առաւել քան զայն գիտութիւն յիւրում հաստատուն և անխախտ կարգաւորութիւնսն պատմեաց մեզ երանելի այրն Աստուծոյ Ագաթանգեղոս»։ Ժամանակաւ կրտսեր պատմիչք ալ՝ նոյնպիսի գովութեամբք զԱգաթանգեղոս կը մեծարեն. որոնցմէ Աղուանից և Սիւնեաց պատմիչքն նոր դէպք մը կ'աւանդեն. Շապուհ Պարսից թագաւորն ուզելով Հայոց նախարարներուն ազնուականութեան կարգը ստուգել, հարցուց անոնց թէ ունի՞ն այնպիսի գիրք մը յորում անտարակուսելի հաւաստեօք ապացուցուած ըլլայ այս բանս։ Այն ատեն Հայոց նախարարներն մէջերնին խորհուրդ ընելով, թագաւորին առջեւը դրին «զցանկալին ամենայն տառից՝ զհրաշաբանականն տպաւորումն, զգրաւորական զգիրս ցանկալւոյն սրբոյն Գրիգորի՝ որ Ագաթանգեղն կոչի»։ Թագաւորը հրամայեց որ իր լեզուովը թարգմանեն այն գիրքը. և իմանալով թէ իր նախնւոյն Արտաշիրի

օրերէն կը սկսի, Պարսից աշխարհաժողով գնդին առջեւ կարգէ դուրս ուրախութիւն ցցուց։ Ետքը ձեռքն առնելով այն գիրքը, կը համբուրէր ու Պարսից լեզուով այլ և այլ գովութիւններ կու տար։ Անկէց տեղեկանալով Հայոց առաջին կարգի ազնուական ցեղերը, սկսաւ նոյն կերպով նախապատիւ ու գահերէց բազմեցնել զանոնք արքունական տաճարին մէջ։

Մեր ամէն պատմագիրք միաձայն են ի գրուատել զԱգաթանգեղոս և իր նշանաւոր երկասիրութիւնն։

Փարպեցին կ'ըսէ. «Սկիզբն առաջին գրոց պատմութիւնն Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս...։ — Խորենացին՝ «Յաղագս սորա (Խոսրովու արքայի առաջնոյ) և համառօտմիցն կարճ ի կարճոյ իմն անցանելով աջող քարտուղարն Տըրդատայ Ագաթանգեղոս, փոքր ի շատէ պատմէ զմահն Արտաւանայ Պարսից թագաւորին... Արդ թէպէտեւ Ագաթանգեղոս այսպէս համառօտ էանց ընդ այն, բայց ես հաւանեալ եմ յաւէտ ձիգն երկայն առնել զպատմութիւն ժամանակիս։» — Յովհաննէս կաթողիկոս. «Որպէս լիապէս իսկ մեզ ուսուցանէ աջողակ պատմագիրն Ագաթանգեղոս»։ — Կիրակոս պատմիչ. «Սքանչելի և կորովամիտն Ագաթանգեղոս, որ թարգմանի բարի հրեշտակ, զոր եցոյց հրամանաւ մեծազօր և քաջ արքային Տրդատայ զհանգամանս իրաց եղելոց առ Հայս, ի ձեռն սրբոյն Գրիգորի Պարթեւի, և խոստովանողին Քրիստոսի զգործած նշանաց և արուեստից և սքանչելագործութեան, և զպատճառ լուսաւորութեան ազգիս Հայոց, գեղեցիկ և պայծառ պատմութեամբ աւարտէ»։ — Գրիգոր Մագիստրոս ի թղթին առ Պետրոս Գետադարձ կաթողիկոս. «Բարի յիշատակի յիւրն աստուածեղէն տառս արժանի եղեալ գրէ Ագաթանգեղոս»։ — Սամուէլ երէց. «Իսկ մերայինս, ազգի ասել առաջին պատմագիր զԱգաթանգեղոս, որ գրեաց զպատճառ լուսաւորելոյ զՀայս սուրբն Գրիգորի Նորասքանչ համբերութեամբ»։

Անանուն գրուածքի մը մէջ ալ՝ որ յետ յիշելոյ զայլեւայլ յունական պատմական երկասիրութիւնս՝ կը յաւելու. «Իսկ ըստ հայումս՝ նախ առաջին քաջն Ագաթանգեղոս, որ նորասքանչ հրաշիցն և աստուածածանօթութեան մերոյ է պատմիչ»։

⁂

Ագաթանգեղեայ պատմութեան հայկական օրինակները՝ Պարսից Թագաւորութեան նուազելէն կը սկսին. բայց որովհետեւ նոյն գրոց յունական օրինակ մ'ալ կայ, ինչպէս ետքը պիտի տեսնենք, անոր մէջ քանի մը էջ աւելի կը գտնենք, որ հետաքրքրական ըլլալուն՝ հարկ համարեցինք թարգմանել զայն ի յունէ, և դնել հոս։

Ա. Ըղձիւք ըղձացեալքն յօժարութեամբ ընդ ծով նաւարկութեան, ինքնակամ մղին ի ջուրցն վտանգ. զըւարթամիտք ձեռն մխեն ի շինուած նաւուց, և ախորժեն ծովային անցուցանել կեանս, կայմս կանգնեն, և թեւօք ուղղեկաց զալեացն խորտակեն զրանութիւն. և ընդ որ կոյս կամք իցեն՝ զնաւն ուղղեն. զհաստափոր՝ զծոցաւոր զտախտակն իբրեւ զկրմուղ ըստ կամի սանձավարեալ։ Որոց ոչ ինչ ահ արկանէ, ոչ կոհակացն ուժգնութիւն, և ոչ քարաժայռիցն ընդ առաջ ելք կասեցուցանեն. վասն զի ի վտանգս յաճախեալ զկենցաղական ընթացս՝ ի հըպաւորան մահու դեգերել ցանկան, զի կարող լինիցին զկարեւորն անձանց մատակարարել։ Են որ ի սակս քաղաքացն այլրանոց ճարակի՝ ուղի հատանեն, և են որ ի պէտս զարդու պճնութեան արանց և կանանց, մինչեւ ցՀնդկայինն նաւարկեալ ծով, և զազնուագիծ ականց խնդութիւնս՝ բաղձացելոցն բերեալ մատուցանեն։ Յայսպիսիս գոգցես անդունդս խորոց և իմ միջամուխ լեալ, ի տուրեւառս Հայաստան աշխարհի, բուռն հարից ի

գիր արձանացուցանել զեղեալսն, զգործեցեալս յաշխարհին Պարսից և ի Հայոց, և զմարտս պատերազմաց զոր եղեւն ընդ միմեանս։

Բ. Պարթեւք՝ իբրեւ դէպք ի բարի յաջողէին նոցա, զթագաւորութիւն Պարսից, զՀայոց և զՀնդկաց՝ որ սահմանակիցք են արեւելեայ Պարսից, նա և զխստալուծ զազգն Մասքթաց յինքեանս կորզեալ ժառանգէին, այսպիսի իմն կարգաւ. երիցագոյնն ի Պարթեւաց տոհմէ, որ ապա զարշակունի ընկալան անուն, հասակաւ բարգաւաճ և արութեամբ շքեղ, գեր ի վերոյ քան զայլս երեւեալ, նա կալաւ զիշխանութիւն արքայութեանն Պարսից։ Եւ որ երկրորդն էր զկնի նորա, զՀայաստանեայց առնոյր յինքն զթագաւորութիւն. իսկ որ երրորդն էր՝ զՀնդկացն կալաւ զտէրութիւն, զհպաւորն սահմանաց Պարսից։ Իսկ չորրորդն ի նոցանէ՝ զՄասքթացն ընկալաւ զիշխանութիւն թագաւորութեան։ Այս կարգ էր տոհմին Պարթեւաց, և սովիմբ զբաղում ժամանակս յերկարեցան յաջողութեամբ։

Գ. Անտի սկիզբն արարից՝ ուստի զիւրոյ զլորման ծագեցոյց Պարթեւն։ Արտաւան որդի Վաղարշայ ի Պարթեւական ծննդոց, քաղդէիցն գոլով գիտութեամբ ներհուն, և զընթացս և զհոլովմունս աստեղացն համարեալ, և իրացն հանդերձելոց կանխագէտ, իբրեւ յառագաստի էր ընդ կնոջն, ամբառնայր զաչսն յաստեղս ի վեր, և խորհրդոց լեալ հասու, ասէ առ թագուհին. Տեսի զընթացս աստեղ. և այս թուի ինձ նշանակ, զի եթէ ոք վտարանջեալ ի տեառնէ իւրմէ, ելցէ ընդդէմ նորա մարտիւ պատերազմաւ, յաջողեսցի նմա տանել ի գլուխ զյաղթութիւնն և նկուն առնել զտէր իւր։ Զայս ասացեալ ի քուն լինէր։ Եւ որպէս զկարգ օրէնք են, մի ի նաժշտաց թագուհւոյն ի նմին սենեկի առագաստին ունէր իւր դադար անկողնոյ առ ի պէտս կարեւոր հարկի սպասարկութեան առ ի նմանէ հրամայելոցն։ Դուստր էր սա ուրումն յաւագ ծառայից, և ընտանի մերձաւոր ումեմն ի գլխաւոր իշխա-

նաց, որոյ անուն Արտաշիր. ի գաւառէն Ասորեստանեայց, յորոյ ի ցանկութիւն տարփանաց ըմբռնեալ իսկ էր։ Վասն որոյ ի լսել անդ զբանս Թագաւորին, և ի սենեկէ անտի զանխուլ յարքայէն և ի տիկնոջէն, ընթացաւ առ Արտաշիր որդի Սասանայ, յորմէ Սասանականքն՝ որ ի Նմանէ՝ և ի Թագաւորացն Պարսից ընկալան զծագումն։

Դ. Մտեալ սորա ի խորանն՝ քանզի և ոչ ոք ի սպասաւորաց կարէր արգելուլ զնա, գիտելով զառ միմեանս սիրելութիւնն, այսպէս խօսէր ընդ նմա. Սիրեցեալդ իմ Արտաշիր, ի բաց արա զքուն յարտեւանանց քոց, և բուռն հարցես զխորհրդոցն զոր խորհեցար երբեմն. զօրացիր և քաջ լեր ի վերայ հասեալ զուշակութեան արքային. քանզի ժամ է արդ գեղեցիկ զինուորութեան, արդ ընդ իմաստունս խորհրդակցութեան, արդ դէպ ժամանակ ի ճակատ գումարելոյ զբազմութիւն գնդիցն. վասն զի քննեաց Թագաւորն զընթացս աստեղաց և ասէ. Եթէ ոք ի ծառայից ընդդէմ դարձցի տեառն իւրում, յաղթեսցէ. և արդ երթ ի խորհուրդ ժողովեա, և կարկառեսցես առ իս զաջ քոյ, և հաստատեսցես երդմամբ զբանս իմ. և եթէ յաջողեսցի քեզ բերել ի ձեռս զարքայութիւն Պարսից, և զիս մի՛ որոշեսցես յանկողնոյդ. զի զդոյն հանապազ ասէիր, յորմէ հետէ եղեւ ի սրտի քում խորհուրդ այդ և ինձ պատմեցաւ։ Զայսոսիկ Արտադուխտ։

Իսկ Արտաշիր շնորհս կալաւ զնմանէ. և աջովն ի վեր յերկինս բարձրացուցեալ զձեռս կնոջն, ասէ. Ահաւադիկ տեսցեն յանդիման դիցն զօրութիւնք, արեւ և հուր, օդ և հող, զի յայսմ և ի սոյն աւուր խորհուրդ արարեալ ընդ աւագաց Պարսից, և նշկահեալ զարքայն, վաղվաղակի ի պատիւ տիկնութեան ամբարձից զքեզ։

Ե. Եւ զայս լուեալ Արտադուխտայ ասէ. Արդ ես ճեպիմ փութամ ի խորան Թագաւորին, զի պարտ է ինձ այսօր զանցելոց աւուրց տանել ի գլուխ զսպասաւորութիւն. զի թէ և յաջողեսցի մեզ հնարագէտ ճարտարութեամբ բերել ի ձեռս զազատութիւն, բայց հարկ ի վերայ կայ սպաս տանել ի պէտս արքունի։ Եւ զայս ասացեալ՝ երթայր ի խորան արքային, և զաղտ ի մահիճսն ընկողմանէր։ Իսկ Արտաշիր յարուցեալ ժողովեաց զմեծամեծս ի Պարսից և յԱսորեստանեայց, ընդ որս և զառաջինն ի խորհուրդ մտեալ էր. եկաց ի մէջ նոցա և ասէ. Ո՜ քաջքդ Պարսիկք և Ասորեստանեայք, զդառնութիւն Պարթեւաց, ի վաղ ժամանակաց գիտեմք, և թէ զիա՛րդ զայլոցն վաստակս յափշտակեն՝ ճանաչեմք, պարծին յանիրաւել իւրեանց, ոչ դադարեն տարապարտ սպանանել. զարշին ի Պարսից և յԱսորեստանեայց՝ Պարթեւքդ եկամուտք ի մեր աշխարհ յերկրէ բարբարոսաց։ Եւ արդ զի՞նչ ունիք ասել. եթէ արդարեւ սուտ իցեն բանք իմ, կացցէ մնասցէ նա որ Թագաւորէն անիրաւութեամբ. ապա եթէ խօսեցայ ճշմարտութեամբ, զինու զարդու վառեցուք. զի լաւ է մեզ մեռանել, քան եթէ ծառայել Թագաւորի անիրաւի։ Զայսոսիկ Արտաշիր։

Զ. Իսկ իշխանքն Պարսից զասացեալսն խնդամիտ ընդունէին, քանզի ցանկային թօթափել զլուծ տէրութեանն Պարթեւաց, և յիւրեանց ի բնիկ ազգատոհմէն Պարսից ունել զոք Թագաւոր, որոյ վասն ասեն առ Արտաշիր. Դու լիջիր առաջնորդ ասացուածոց և արդեանց գործոց ընտրեալ առ ի մէնջ. որոց զիմաստուն խորհրդոց քոց առեալ է զփորձ, և գիտեմք զհրամանատարութիւն քոյ առաքինի ուղղութեամբ ի վեր երեւել. և արդ զոր կամիդ արա. և առաջնորդ զքեզ ընծայեցո՛. աւադիկ մեք պատրաստ եմք հետեւել զկնի բանից քոց, առնել որ ինչ միանգամ յօգուտ երկաքանչիւր կողմանց իցէ։ Ապա ի ծագել առաւօտուն ի մարտ պատրաստեալ Պարսից, հանդերձ Արտաշիրաւ առաջնորդաւ իւրեանց, դեսպանս արձակեցին նախ առ արքայ Արտաւան զՋիկ և զԿարէն, զտանուտերս զլխաւոր նահապետութեանց և զզօրավարս զօրաց։ Երթեալ սոցա յանդիման եղեն մեծի արքային, և այսպէս խօսել սկսան ընդ նմա և ասեն· « Հրեշտակութեան եկեալ հասեալ եմք յաշխարհէն Պարսից· եթէ հանդարտեսցեն միտք քո ի լուր պատգամացն Պարսից, խօսեսցուք և մեք զբանս հրեշտակութեան մերոյ աներկիւղ և անվտանգ· քանզի և այս հրամանք օրինաց են՝ կարգեալ յառաջնոց տերանց, որ ազատ կացուցին զդեսպանս յամենայն վնասու և արդ եթէ տացես հրաման, արքայ, խօսեսցուք։

Եւ թագաւորն Արտաւան հրամայեաց նոցա ասել զոր կամէին։

Է· Յայնժամ խօսել սկսան և ասեն· փոյթ պնդութեան է արքայ առ մեզ Պարսիկս՝ ծառայից հպատակ կալ արքային, իբրու գոլով նորուն ամենայնի տէր· և թագաւորին՝ հաւասարութեամբ և արդարութեամբ լինել իւրացն խնամատար, և հեռի ի խժդժագոյն բարուց կառավարել· ահարկու առ թշնամիսն երևել և մարդասէր առ հպատակս։ Քանզի զիա՛րդ իցէ նմա զանիրաւս պատուհասել, եթէ ինքն ինքեամբ յանիրաւութիւնս հասեալ իցէ· ո՞րպէս զեղեռնագործս ընդ տանջանօք արկանել, եթէ ինքն ի չարիս վնասակարս իցէ յօժարեալ։ Արդ մեր ի վերայ հասեալ ծանր վնասուց քոյոց յանցանաց, ի բաց որոշեցաք զմեզ ի քումմէ իշխանութենէդ· ոչ ի հպատակութենէն տաղտկացեալք, այլ յապիրատ թագաւորէն խուսափեալք· ոչ զբռնաւորութենէ բուռն հարեալք, այլ անագորոյն մտաց բանաւորի տանել չկարացեալք»։

Զայս խօսեցան Պարսիկք ընդ արքային։

Իսկ թագաւորն Արտաւան զաչս ի խոնարհ ունելով՝ զմեծ ժամս զյատակս տանն նշմարէր, իրագէտ, կանխագէտ կործանման թագաւորութեան իւրոյ։ Հայեցեալ ապա առ պատգամաւորսն ասէ· Ես ինքն եմ պատճառք չարեացս, զի զոմանս ի ձէնջ իշխանութեամբ և աւագութեամբ մեծարեցի, զայլս ընչիւք ճոխացուցի, և զյոլովս արքունի պարգևօք ագարակաց և կալուածոց տեարս կացուցի։

Հա՛պա դուք փութայջիք ի կատարումն խորհրդոց ձերոց, և զիս ինքն տեսանիջիք ի ձերդ խորհուրդ պատշաճեալ, տաց ձեզ գիտել չլինել ընդդիմակաց թագաւորի· իսկ դուք որ առաքեալքդ էք ի բաց գնացէք· և մի ևս յաւելուցուք այսպիսեաց բանից լինել սպասաւորք, գուցէ արդեօք ի ձէնջ սկսայց զվրէժ չարեաց յիս անիրաւելոց։

Ը· Զայսոսիկ իբրև լուան Զիկ և Կարէն՝ չոգան յատեան խորհրդոյ Պարսից, և պատմեցին զամենայն Արտաշրի և աւագանւոյն Պարսից, և յաւելին ի կարգի բանիցն՝ զյանդուգն սրտմտութիւն յիմարութեան թագաւորին, որ ոչ ևս այնուհետև սպասեալ մնայր պատգամաց, այլ զխորհուրդս իւր զինեալ էր ընդդէմ իշխանացն։ Իսկ Արտաշիր յղեալ առ Արտագուխտ՝ ի բաց կորզեաց զնա· և արգել փակեաց զնա ազխիւքն հանդերձ յամուր դղեկի· և ինքն միաբանութեամբ ընդ Պարսից և ընդ Ասորեստանեայց վառեալ կազմէր ընդդէմ Արտաւանայ արքայի մեծի։ Եւ ի վերայ հասեալ Արտաւանայ իւրացն, եթէ պատրաստին ի մարտ ընդդէմ իւր, պատրաստէր և ինքն միաբանութեամբ Պարթևաց, ունելով և ի Պարսից ոչ սակաւս՝ համակամս և հաւանս։ Եւ յառաջնում յարձակման անդ՝ յորում հարան ընդ միմեանս, բազումք յերկաքանչիւր կողմանց թաւալգլոր անկանէին ի Պարսից և ի Պարթևաց· այլ զօրանայր կողմն Արտաշրի՝ ի լքանել թողուլ և այլոց ևս բազմաց զԱրտաւան, և գալ յենուլ յինքն յԱրտաշիր։ Ապա իբրև յերկրորդում նուագի անդ հարան ընդ միմեանս, բազումք անկանէին ի Պարթևաց, և ինքն Արտաւան աճապարէր ի փախուստ· բայց ապա դարձաւ միւսանգամ ի տեղի մարտին։ Արդ իբրև զամիսս երկոտասան ճակատեալ կային ընդդէմ միմեանց, երբեմն ի մարտ մատուցեալք և երբեմն դադարեալք, ապա միւսանգամ բուռն հարեալ զմարտէ, իբրև այն ինչ առ միմեանս մերձեցեալ կամէին յիրեարս խառնել, ձայնեաց առ արքայ Արտաւան, և ասէ...

Թ. Թագաւորեաց ի վերայ մնացելոցն Պարթեւաց և Պարսից և Ասորեստանեայց. զամենայն ինչ բարեկարգութեամբ ուղղեալ, սիրող երեւեալ արդարութեան և հաւասարագատ իշխանութեան. քանզի գուն գործէր արժանի երեւել գովութեան, որ կորզեաց յանձն զարքայութիւնն Պարսից։

Այս ամենայն անցք որ գործեցան լու եղեն յականջս Խոսրովու արշակունւոյ. Թագաւորին Հայոց մեծաց, եթէ որդին Սասանայ Արտաշիր զօրացեալ բռնացաւ ի վերայ թագաւորութեան Պարսից, և կորոյս զեղբայր նորա զԱրտաւան։ Յաւելին գուժկանքն և ասեն թէ և Պարթեւք հաճեալ հաւանեալ են յոյժ ընդ թագաւորութիւն Արտաշրի, քան ընդ համազգւոյն նորա և արեան հարազատին. և զի վաղվաղակի լքին խոտեցին...

Այս հատուածը եկամուտ կամ անհարազատ պէտք չէ համարել, ու մեր ձեռքը եղած Ագաթանգեղոսի պատմութեան գրչագրացը մէջ չգտնուելուն համար՝ մերժել. այլ անտարակոյս կորսուած, ու միայն յունական թարգմանութեան մէջ մնացած. Վասն զի Խորենացին ալ՝ մեր մեծն Խոսրով թագաւորին վրայ խօսելու ատեն՝ այսպէս կը գրուցէ. «Յաղագս սորա և համառօտմբքն յԱգաթանգեղեայ պատմեալ փոքր ի շատէ զմահն Արտաւանայ Արքայից արքայի և զբառնալ տէրութեան Պարթեւաց յԱրտաշրէ որդւոյ Սասանայ»։ Ուստի և հաւանական կ'երեւնայ թէ Մովսէսի Խորենացւոյն ձեռքն եղած օրինակին մէջ այս հատուածը կը գտնուէր, որովհետեւ հիմայ հայերէնին մէջ Արտաւանայ մահը չյիշուիր։

⁂

Այս վերը յիշուած հատուածէն ետքը՝ կը սկսի Ագաթանգեղոս իր սիրելի պատմութիւնը։ Պատմութիւն մը՝ որուն առջի երեսէն կ'երեւնայ թէ ինչպէս Աստուծոյ միայնոյ հնարաւոր է՝ մահկանացու աչաց աղէտք ու չարիք կարծուածներէն՝ բարութիւն առաջ բերել։ Հայաստանի երջանկութեան և հաւատոյ լուսաւորութեան դարը

հասեր էր. Աստուծոյ՝ մէկ բարերար նայուածքովը՝ Թագէի ու Բարթուղիմեայ առաքելութեանց պտուղը կ'երեւնար, ու անոնց արեան արգասաւորութիւնը։

Այն ժամանակները՝ արեւելից իշխանութիւնը կարգէ դուրս ցնցում մը կ'իմանար. Պարթեւք չկարենալով Սասանեանց դէմ դնել, կը խոնարհէին անոնց առջեւ, ու մեր Խոսրով Թագաւորը իր շինանիստ քաղաքներն ու ամարաստան տեղուանքը թողլով՝ մինչեւ այն օրերը իմաստութեամբ գործածած խաղաղարար վարչութեան գաւազանը կը թողու, ու անոր տեղ զէնք առնելով՝ Պարսից վրայ պատերազմի կ'ելլէ, ու յաղթական փառքով իր հայրենիքը կը դառնար։ Բայց որովհետեւ իր կեանքը յարատեւ տագնապ էր Սասանեանց, ու անոր զէնքին վախովը միշտ ահուդողի մէջ էին, բնական էր որ ետեւէ ըլլային կեանքը վերցնելու հնարք մը փնտռել։ Այս սեաւ խորհրդոյն գործադրութիւնը իր վրայ առաւ Անակ, ու բարեկամութիւն կեղծելով Խոսրովու հետ ընտանեցաւ. և այն մտերմութեան տուած համարձակութեամբը՝ որսի մէջ զինքն սպաննեց։ Թագաւորը դեռ բոլորովին մահուամբ չծանրացած աչուըները զինքն սպաննող Անակայ վրայ դարձնելով, կիսահագագ ձայնովը հրամայեց որ այն անօրէնին տունը տեղն ու ցեղը ջնջուի։ Այն ընդհանուր մահուան մէջէն միայն սուրբն Գրիգոր և իր Սուրէն եղբայրը կ'ազատին։ Գրիգոր Կեսարիոյ օտարութեանը մէջ սրտի ու մտաց կրթութիւն մը ընդունելով, իր հօրը Անակայ յանցանքը քաւելու համար՝ յանձն կ'առնու Խոսրովու որդւոյն Տրդատայ ծառայութեան մէջ մտնել։ Այն հաւատարիմ սպասաւորութեան ժամանակ կ'իմանայ Տրդատ Գրիգորի հաւատարմութիւնը նաեւ առ Աստուածն քրիստոնէից, ու չարաչար տանջանքներով անոր հաւատոց հաստատութիւնը փորձելէն ետքը, երբոր կ'իմանայ ալ թէ իր հօրը սպանչին որդին է, արեւու անարժան համարելով այնպիսի կեանք մը, կը դատապարտէ որ Արտաշատու խոր վիրապին մէջ՝ դժնդակ մահուամբ իր հօրը յանցանքը քաւէ։

Երբոր Աստուծոյ կամօք՝ Գրիգոր վիրապին մթութեան մէջ տասն և հինգ տարի անյուսալի կենդանութեամբ կ'ապրէր, ուրիշ սրտաշարժ տեսարանի մ'ալ ականատես կ'ըլլար Հայաստան։ Հռովմայ Դիոկղետիանոս կռապաշտ կայսեր ձեռքէն կը փախչէին Գայիանէ և իրեն հետեւող կուսանաց խումբ մը. որոնց մէջ ամենէն աւելի կը փայլէր Հռիփսիմէ, որ իր գեղեցկութիւնը երկնքի ընծայած, Դիոկղետիանոսի հարսնութենէն փախած ժամանակ, Տրդատայ աչքն ու սէրը իր վրայ կը դարձնէր։ Սակայն Տրդատ իր ամէն ուժովը չի կրնար տկար կուսի մը դէմ դնել. անոր հետ պատերազմած ժամանակ կը յաղթուի իրմէն. ու դեռ անոր գեղեցկութեամբը կուրացած չկրնար ուրիշ կերպով մը յաղթել, բայց եթէ զինքն ալ իր ընկերներն ալ ըսպաննել տալով։

Դեռ անոնց մարմինը անթաղ՝ բայց անապական մնացած ատեն, աստուածային բարկութեան գաւազանը թէ զՏրդատ թագաւոր և թէ զըովանդակ նախարարները կը զարնէր։ Նաբուգոդոնոսորայ պատիժը կը կրկնուէր Տըրդատայ վրայ։ Այս անակնկալ ու սաստիկ պատուհասը այնպիսի շփոթութիւն մը կը ձգէր նախարարաց մէջ, որ հնարք կը փնտռէին այն պատուհասէն ազատելու։ Նոյն հնարքը՝ աստուածային տեսլեամբ կը յայտնուէր Խոսրովիդխտոյ, որ կը հրամայէր զԳրիգորիս հանել վիրապէն, ու իրմէն փնտռել այն բժշկութիւնը։ Հնազանդեցան տեսիլքին, ու անկէց՝ զոր աշխարհի վնասակար ու կենաց անգամ արժանի չէին համարեր, կը խնդրէին իրենց ցաւոց դարմանը։ Սուրբն Գրիգոր ալ, չէ թէ միայն անոնց մարմնոյն՝ հապա նաեւ հոգւոյն բժշկութիւնը կը պարգեւէր՝ աստուածուսոյց խրատներով ու բանիւք։ Այս քարոզութիւնը՝ Ագաթանգեղեայ գրոցը մեծ մասն է։

Անկէ ետքը կը պատմէ Ագաթանգեղոս՝ Գրիգորի և

Տրդատայ ձեռքով եղած բարեկարգութիւնները ի Հայաստան. անոնց ի Հռովմ ճանապարհորդելը, նորէն դառնալը, Նիկիոյ ժողովոյն հրաւէրը առ Լուսաւորիչն Հայաստանի, ու ասոր՝ իր որդին փոխանակ ղրկելը ու առանձնութիւնը։ Հոս կը լմըննայ Ագաթանգեղոսի պատմութիւնը։

⁂

Այլ և այլ խնդիրք յուզուած են առ բանասէրս՝ Ագաթանգեղեայ գրոց հարազատութեան վրայ։ Թէ Ագաթանգեղոս՝ ժամանակակից և ականատես անձն, Տրդատայ և սրբոյն Գրիգորի պատմութիւնը շարադրած է, իր դարուն մէջ Ջենոբ Գլակ, և անմիջապէս հետեւեալ դարու պատմիչք մեծարոյք և պատուական իրենց հնութեամբն և հաւատարմութեամբ, անտարակուսելի վկայութիւնը կու տան։ Խնդիրը կը մնայ թէ անոնց յիշատակած ու մեր ձեռքը գտնուած ու Ագաթանգեղոսի անունը կրող գիրքը՝ արդեօք մի և նոյն երկասիրութիւնն է, թէ վերջինս փոփոխութիւններ և այլայլութիւն կրած է։

Այս ենթադրութեան կամ կարծեաց պատճառը՝ վիճելի նիւթ եղող գրքին պատմական հանգամանքն է. յորում ողջամիտ քննադատութեան թերութիւններ ենթադրելով նկատել, չեն յօժարիր ոմանք ընծայել զայն Ագաթանգեղեայ. որ իբրեւ քարտուղար՝ ընդունելով ի Տրդատայ հրաման՝ գրելու անոր թագաւորութեանը անցից պատմութիւնը՝ ոչ յանձնողին արքայական մեծութեան և ոչ ալ գրողին կրնար պատշաճիլ, կ'ըսեն, այդպիսի ոճով և բացատրութեամբ աւանդել յետագայ սերնդոց՝ թագաւորին կիրքը, ամօթն ու շառագունանք, երկնասաստ պատուհասի մը հետեւանք դէպքերն, և այլն։

Այսպիսի կարծիք և զգուշաւոր շրջահայեցութեան պարտք մը՝ կրնայ պատշաճական համարուիլ այնպիսի անձի մը համար՝ որ պատմութիւնը շարադրել տուած ատեն՝

իր փառքն, համբաւն ու պատիւը կը փնտռէ. բայց ոչ անշուշտ այն մեծ թագաւորին՝ որուն համար այդպիսի երկնահրաշ պարտութիւն մը ի վեր էր քան զամենայն փառս. զորմէ վկայէ Խորենացի թէ «Յետ հաւատոյն որ ի Քրիստոս ամենայն առաքինութեամբք բացափայլեալ... ընկեցեալ զերկրաւոր պսակս՝ զհետ ընթանայր երկնաւորին»։ Աշխարհահռչակ պատմութիւն մը խարդախել, և կամ օտար ի ճշմարտութենէ գոյն և կերպարանք տալ անոր՝ ոչ Տրդատայ և ոչ իր պատմչին կրնանք վերագրել։

Միւս առարկութիւն մ'ալ, բովանդակ պատմութեանն հրաշապատում ըլլալովը, եթէ ոչ բոլորովին առասպել՝ գէթ առասպելախառն կարծուիլը։

Ասոր ալ պատասխանը հետեւեալ իրաւացի անդրադարձութեանց մէջ կը համարինք լիուլի ամփոփուած տեսնել, որ ոչ մեր՝ այլ հմուտ ու բանիբուն քննաբանի մը խօսքերն են. «Ագաթանգեղեայ պատմութիւնն, կ'ըսէ, իր ամէն մանրամասնութիւններովը անտարակուսելի ենթադրել՝ անհանճար գործ մը կրնայ համարուիլ. վասն զի այսպիսի յատկութիւն՝ մարդկային ո՛ր և իցէ գրուածքի մը չի կրնար տրուիլ. մանաւանդ ուր տեղեաւ և ժամանակաւ հեռաւոր անցից և դիպուածոց վրայ է պատմութիւնը։ Բայց եթէ մատենագիրք կը սխալին, կը սխալին նաեւ անոնց քննադատք. և այնչափ աւելի՝ որչափ ջանան սուր միտք և հանճար ունեցող երեւնալու փափաքով դիմացինին պարզմտութիւնն արհամարհել։ Չեմ հասկնար թէ ինչո՛ւ քրիստոնէութեան հաստատութիւնն ի Հայաստան՝ պէտք է որ առանց հրաշից կատարուած ըլլայ, մինչդեռ առողջ քննադատութիւնն՝ ուրիշ երկիրներու մէջ եղածներն տարակուսի տակ չի ձգեր։ Թող զի յԱգաթանգեղեայ պատմուածներուն մէջ՝ եթէ լաւ մտադրութիւն ըլլուի անոնց, նշանակութեան արժանի այն է որ շատ բան կրնայ պատշաճապէս մեկնուիլ նաեւ ըստ մարդկային հաւանական

կարծեաց. ինչպէս թագաւորին անբանական մոլեգնութիւնն, և իրեն հետ նաեւ նախարարացն՝ կամ առ տագնապ խղճի, կամ նմանութեամբ, և կամ արքային հաճոյական երեւնալու համար. — բարեպաշտ այրւոյ մը ձեռքով՝ այնչափ տարի սրբոյն Գրիգորի ապրիլը ի գբին՝ ուստի նաեւ Աստուծոյ թոյլտուութեամբ և խնամօք՝ նաեւ բնական պատճառներով կրնային տեղի տալ հեռանալ օձք. — սրբոյն և սրբուհեաց՝ երկար տանջանաց դիմանալը, մինչ գիտենք՝ թէ հոգեկան ոյժը կ'իշխէ զգացման ցաւոց, և կամ թերեւս նոյն իսկ տանջողք՝ առ հիացման և գթոյ՝ կրնային տանջանաց սաստկութիւնը մերթ ընդ մերթ մեղմացնել . . . Մեծագոյն հրաշք, կրնանք սրբոյն Աւգոստինեայ հետ կրկնել, այնչափ բազմութեան փոփոխութիւնն է։

«Եթէ աւելի մանրամասնութեանց իջնենք՝ քննադատից առարկութիւններն իմաստակութիւնք կ'երեւին մեզ, օրինակ իմն երբ Ագաթանգեղոս կ'ըսէ թէ ամէն պատմածներուն ականատես եղած է, քննադատը ապացուցանելով թէ այդպէս չէ, կը հետեւցնէ թէ ոչ ինչ է ճշմարիտ ի պատմելեացն։ Ով որ կը պատմէ այնպիսի դէպքեր՝ որոնց մասամբ ականատես է, և մասամբ յայլոց հաւատարիմ տեսողաց լսած, կամ կը տեսնէ արդէն պատմուածներուն մերձաւոր արգասիքը, և կամ գործողաց շատին հետ կենակից եղած է և ապրած, առանց ստելու՝ Ագաթանգեղոսի իր ստուգախօսութեան համար գրուածը կրնայ երկրորդել։...

«Անհաւատալի կը թուի որ Տրդատ բարձր լերան մը ծայրէն՝ ուսոցը վրայ շալկելով՝ փոխադրէ այն քարինքը՝ որոնցմով պիտի բարձրանար իրմէ ի մահ մատնուած սրբոց մահուան հանգստարանը, մինչ զանոնք տեղափոխելու ուրիշ շատ միջոցք կային։... Եթէ Տրդատ արքայական մեծութեանը վրայ՝ իր քննադատէն տարբեր կարծիք ունէր՝ ինչ կրնանք ըսել։... Այլ ինձ հաճոյ է այն ոչ անարգ նուաստութեանը մէջ՝ արքայական մեծ վայելչութիւն մը նկատել· և առաւել կը մեծարեմ զՏրդատ իր այդ խոնարհութեանը մէջ՝ քան զՄաքսիմիանոս յաղթող և յաղթական »[1] ։

⁂

Սեբէոս եպիսկոպոս Մամիկոնենից, եօթներորդ դարու մատենագիր, իր պատմական երկասիրութեանը մէջ՝ Հայոց հին պատմութեան վերաբերեալ հետաքննական և բաւական ընդարձակ հատուած մը մէջ կը բերէ՝ Ագաթանգեղեայ ընծայուած։ « Հայելով, կ'ըսէ, ի մատեանն Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ, զոր եգիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծբին քաղաքի՝ յապարանսն Սանատրուկ արքայի հանդէպ դրան արքունական կայենիցն։

Քանզի զսխնս տաճարին խնդրեալ ի դուռն արքային Պարսից, և բացեալ զաւերածն վասն սեանցն ըստ գիպան արձանագրին դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց՝ յունարէն դըպրութեամբ, զոր իմ գտեալ ի Միջագետս՝ ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ զրուցակարգել· քանզի այսու ունէր վերնագիրն այսպէս· « Ես Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ, առեալ ի դիւանէ արքունի »։

Այս պատմական քաղուածը՝ կ'ամփոփէ մարիբասեան ոճով Հայոց պատմութիւն մը՝ ի սկզբնաւորելոյ ազգին մինչև յթագաւորութիւն Պապայ, Տրդատայ մահուանէն վաթսունուերեք տարի ետքը։ Ասով յայտնապէս կ'իմացուի որ եթէ գրուածքին հեղինակը ինքն Ագաթանգեղոս

---

[1] ԴՈՄՄԱԶԷ՛ՈՑ, ի յառաջաբանի իտալական թարգմանութեան Ագաթանգեղեայ.

ալ ըլլայ՝ չարունակութիւնն ուրիշի է։ Մեր ազգին պատմութեան վրայ բոլորովին նոր մանրամասնութեանց կը հանդիպինք՝ ի սմա, և որ ի Խորենացւոյն աւանդուած չեն, և որ իրեն բոլորովին անծանօթ երկասիրութիւն մը պիտի ըլլայ, ինչպէս կ'ակնարկէ Սեբէոսի պատմութեան նոր հրատարակողն (Պատկանեան)։ Վասն զի Ագաթանգեղեայ ընծայուած այս հատուածին մէջ՝ Բագարատ և իրեն տոհմը՝ սերեալք ասին յԱրամենակայ և ոչ ի Հրէից՝ ինչպէս կ'աւանդէ Խորենացին, և կը յաւելու. « Ասեն ոմանց անհաւաստի մարդոց, ըստ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան, ի Հայկայ զթագադիր ազգ լինել Բագրատունեաց։ Վասն որոյ ասեմ, մի այդպիսեաց յիմար բանից հաւանիր... զի ի բաց բանից և անոճ իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակազէ »։ Սակայն ինչ ալ ըսուի՝ հնագոյն և պատուական նշխար մ'է ազգային պատմութեան, մեր ձեռքը չհասած պատմական վաղեմի աղբիւրներէ քաղուած։

Լանկլուա իւր Հաւաքման մէջ (Հատ. Ա. 195) հրատարակելով այս գրուածքը՝ խորագիր կը դնէ. Le pseudo -Agathange, Histoire ancienne de l'Arménie.

⁂

Խնդիր է դարձեալ թէ ինչ լեզուով շարադրեր է Ագաթանգեղոս իր Պատմութիւնը։ Վասն զի ոմանք տեսնելով թէ անիկայ հռովմայեցի էր, օտարազգւոյ համար անկարելի համարեցին այդպէս ճշգրիտ ու ընտիր հայկաբանելը· ուստի և ըսին թէ ինքը յունարէն շարագրած է այս գիրքը, ու ետքը ի թարգմանչաց ի հայ լեզու փոխուած։ Իրենց այս կարծեացը հաւաստիք մէջ կը բերեն թէ Ագաթանգեղոսի յունարէն օրինակը կը գտնուի առ Սիմէոնի Մետափրաստեայ, որ ուրիշ սրբոց վարուցը և վկայաբանութեանց հետ՝ սրբոյն Գրիգորի վարքն ալ կ'աւանդէ Ագաթանգեղեայ խօսքերն մէջ բերելով, բաց ի երկար *վարդապետութենէն, և որ ի մատենադարանին Փլորենտիոյ պահուած միակ յոյն օրինակին հետեւողութիւն է։*

Այս կարծեաց հերքումը, ըստ մեզ, իր մէջն է։ Ագաթանգեղոս հռովմայեցի էր, իսկ գրուածքը՝ յունարէն. պէտք էր որ լատին կամ հռովմայեցի լեզուով շարադրած ըլլար երկասիրութիւնը՝ որպէս զի այս տարակոյսը իր վրան չըլլար։ Իսկ եթէ յունարէն գիտութեանը համար ինքն Ագաթանգեղոս կը վկայէ, ի՞նչ զարմանք թէ հայերէն ալ սորված ըլլայ, որ այնչափ ատեն Հայոց արքունիքը կեցաւ, և Նախարարաց ու պաշտօնէից հետ խօսակից և կենակից։

Երկրորդ՝ Ագաթանգեղոս կ'աւանդէ թէ Տրդատայ հրամանաւ ձեռք զարկաւ այս երկասիրութեան, ու Տրդատայ կամքն էր որ մեր Թագաւորաց և արքունի դիւաններուն մէջ մնայ. որպէս զի ըլլայ «յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց». «զի և որդիք, կ'ըսէ, որ ծնանին՝ յարիցեն և պատմեսցեն որդւոց իւրեանց. զի դիցեն առ Աստուած զյոյս իւրեանց, և մի մոռասցին զգործս Աստուծոյ. խնդրելով խնդրեսցեն՝ զի մի եղիցին իբրեւ զհարս իւրեանց»։ Ուրեմն Հայոց համար գրուած երկասիրութիւն մը՝ հարկ էր որ անոնց լեզուովը գրուէր. և որչափ ալ ենթադրենք թէ յունական լեզուին ուսումը հասարակ էր մեր մէջը, սակայն տարակոյս չկայ որ ամենուն հասկնալի լեզու չէր։ Փարպեցւոյն խօսքը՝ իր ժամանակի Հայոց համար, երաշխաւորութիւն է մեր այս կարծեացը. «Ոչ ինչ էին, կ'ըսէ, կարող՝ լսել և օգտել ժողովուրդքն այնպիսի մեծ աշխարհի»։ Ագաթանգեղոսին սկզբնագրին յունական համարուելուն գլխաւոր պատճառ, ինչպէս ըսինք, նոյն լեզուով իր երկասիրութեան գտնուիլն է։ Բայց այս պատճառը եթէ զօրելու ըլլար՝ հաւասարապէս պիտի գրուցուէր նաեւ հայկականին համար։ Ուստի այս խնդրոյն վրայ ստուգութեամբ դատաստան ընելու համար՝ հարկ է երկուքն ալ իրարու հետ բաղդատել, և այդպիսով խնդրոյն

լուծումը դիւրացնել։ Մենք ալ այս հնարքին ձեռք զարնենք։

Ա․ «Զի գետն Երասխ (Ε'ρασαχ) *յորուցեալ գայր զարիւ և զարիւ»։*

Թէ որ սկզբնագիրը յունարէն ըլլար, Երասխ գետին անունը Երասխ չէր գրեր, հապա ըստ յունին Արա՛քսէս Α'ραξις

Բ․ «Երթեալ հասանէր յամուր տեղին Անի, ի Թագաւորանիստ կայանս հանգստանոցացն գերեզմանաց Թագաւորաց Հայոց. և անդ կործանեցին զբագինս դիցն Արամազդայ՝ հօրն անուանեալ դիցն ամենայնի»․ (τοῦ Κρονοῦ του πατρὸς Διὸς παντοδαίμονος)։

Ահաւասիկ յայտնի նշան մ'ալ թէ յոյնը հայերէնէ թարգմանուած է. վասն զի հայերէնին մէջ Կրօնոս *բառը չկայ, ու զԱրամազդ հայր կը համարէ ուրիշ ամէն աստուածոց. իսկ յոյն թարգմանիչը այսպէս կարդացեր է, «զբագինս դիցն՝ Արամազդայ հօրն՝* (Կրօնոսի), *անուանեալ* դիցն ամենայնի»*. ու այս վերջին երկու բառերը՝ Դիոսի ածական ըրեր է* παντοδαίμονος *բառով։*

Գ․ «Գայր հասանէր ի Միհրական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ (εν τοῦ ἱερῳ Ηφοιστοῦ) *ի գիւղն զոր Բագայառիճ կոչեն ի պարթեւարէն լեզուէն»։*

Միհր աստուածը՝ ըստ արեւելեան աւանդութեանց՝ արեւն է, չէ թէ կրակը կամ Հեփեստոս։ Հոս ալ թարգմանիչին՝ արեւելեան դիցաբանութեան անհմտութիւնը կ'երեւնայ։

Դ․ «Ի կողմանս Կապադովկացւոց ի քաղաքն Կեսարացւոց՝ (εἲς πολην Καισαροίον) *զոր ըստ հայերէն լեզուի Մաժաք* (Μασακ) *կոչեն, զի տարեալ զԳրիգոր՝ քահանայապետ կացուսցեն իւրեանց աշխարհին»։*

Յունականին՝ հայերէն ասածը գնելը ի քաղաքն Կեսարացւոց, *փոխանակ ըսելու իրենց յատուկ ոճովը* εἲς Καισαρειαν *կամ* εἲς πολην Καισαρειαν, *յայտնի քննադատական նշան է թէ հայերէնէն թարգմանուած է յունականը։*

Ե. «Եւ հրամայեաց կատարել անդ ամ յամէ ի նմին տեղւոջ ժողովել ամենեցուն ի յիշատակ սրբոյն, որ օր եօթն էր սահմի ամսոյ. (τοῦ μηνὸς σαομὴ κατά χωραν λεγομενοῦ, κατα δε ῥωμαίους οκτοβριοῦ):

Սահմի ամսոյն մեկնութեան այս յաւելուածը, կամ յունին «ըստ հռովմայեցւոց հոկտեմբերի» ըսելը, հաւանական փաստ մ'է մեր կարծեաց առուզութեանը։

Զ. «Եւ զյիշատակ վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հաչակեալ յառաջագոյն կարծեցեալ սնոտեացն պաշտաման, ի ժամանակի դիցն ամանորաբեր նոր պտղոց տօնին՝ Հիւրընկալ դիցն Վանատրի. զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յոր ուրախութեան նաւասարդ աւուր»:

Այս հատուածին մէջ Հիւրընկալ դիցն Վանատրի կոչուած տօնը յատուկ էր Արամազդայ. որովհետեւ այս աստուածը միայն թէ յունաց և թէ լատին առասպելաբանութեանց մէջ Վանատուր կոչուած է. Արդ մէկ աստուածոյն տեղ՝ յունին բազմաւորական ξενοδέκτον Θεῶν Վանատուր աստուածոց ըսելը՝ զօրաւոր ապացոյց մ'ալ է անոր սկզբնագիր ըլլալուն. վասն զի մեր լեզուին դէջ ձայնը՝ բազմութեան վրայ առած է՝ փոխանակ միոյն Արամազդայ։

Է. «Ապա եկեալ գտանէին ի Դարանաղեաց գաւառին, ի լերինն որ կոչի Մանեայ այրք»:

Ցոյնը հոս ալ փոխանակ դնելու σπήλαιον Μανῆς, հայերէն ձայնով կը դնէ Μανααρχ.

Ը. «ԶՇահապն Շահապիվանի և զիշխանն ապակապետութեան» (πασκαπετέων):

Անհասկնալի ուրիշ փաստ մ'ալ. Ապակապետութիւն բառին նշանակութիւնը ծանօթ է մեզի. իսկ նոյն ձայնով յունական բառը՝ թէ մեզի և թէ Ցունաց անծանօթ։

Թ. «Առնոյր (Գրիգոր զԱրշակունեաց տոհմի որերն »: Ցոյնը՝ Սարակինոսաց կը դնէ:

Այս քանի մը օրինակք՝ բաւական կրնան համարուիլ ի հաւատարիմ առնել ենթադրութիւն մը՝ որում համամիտ և զուգաձայն են նաեւ բազմագոյնք յազգային և յօտար բանասիրաց, թէ Ագաթանգեղեայ գրոց միակ գրչագիր յունական օրինակն որ ի լաւրենտեան մատենադարանի փլորենտիոյ է թարգմանութիւն ի հայկականէ: Աւելի և նորագոյն հաւաստեաց փափաքողք և սիրողք՝ կրնան գտնել ուրիշ հմուտ երկասիրութեանց մէջ, ինչպէս և ի Հանդէս ամսօրեայ, (Դ. տարի յէջս 129–134):

Ցունականն՝ բաց ի քաղուածոյ հրատարակութենէն առ Մետափրաստեսի, ինչպէս յիշեցինք, առաջին անգամ հրատարակուեցաւ ի Ստիլտինգայ՝ լատին թարգմանութեամբ և ընտիր ծանօթութիւններով. երկրորդ տպագրութիւն մ'ալ ըրած է Լանկլուա ի Հաւաքման հայ պատմագրաց: Վարդապետական մասն, որ Ագաթանգեղոսի գրոց երկրորդ մասն է, կը պակասի նաեւ ի յոյն ձեռագրին[1]: Վերջին և ընտրելագոյն հրատարակութիւնն է Պ. Լաքարտի ջանքով եղածը (1887):

Որչափ ալ միաբանին բանասէրք յայսմ ենթադրութեան, սակայն ոչ սակաւք ի նոցանէ, ինչպէս ըսինք, կը զլանան տալ Ագաթանգեղեայ թէ յոյն և թէ հայ լեզուով մեր ձեռքն հասած գրուածքին այն հարազատութիւնը, զոր մեզ փափաքելի է չկապտել ի նմանէ, հնգետասան դարուց աւանդական կարծեաց և համոզման դէմ տարակոյս վերցընելով: Այս է կարծիք եւրոպական նոր քննադատ բանասխրութեան, որուն կը ձայնակցին և ոմանք ի մերազգի հմտից։ Կը համարին թէ հեղինակին ժամանակէն մինչեւ ի Ե դար, յորում իր պատմական երկասիրութիւնը թարգմանուած կը կարծեն ի հայ, մեծ կերպարանափոխութիւն և այլայլութիւն կրած ըլլայ սկզբնագիրը. և հայ ազգին երախտագէտ մեծարանքն առ սուրբն Գրիգոր, օրինաւոր համարել տուած է այլ և այլ յաւելուածներ։ Հետեւաբար Ագաթանգեղոսի բնագիրը, — ո՛ր լեզուով ալ գրուած համարինք, — հիմայ կորսուած կը համարին. և «արդի երկլեզու Ագաթանգեղոսն յետին ժամանակի մը գործ կ'երեւնայ, կ'ըսեն, որ հին Ագաթանգեղոսի գործը իրեն հիմն դրեր է, բայց պատմութիւնը բոլորովին այլափոխեր, և դիւանական ու ատենական գրուածքն՝ վկայաբանութեան փոխեր»։ Սակայն այսպիսի կարծեաց ընդունելութեան դժուարութեանն ալ անծանօթ չեն. «Զարմանք է, կ'ըսեն, որ մեր հնաւանդ տարեգիրք՝ արդի Ագաթանգեղոսը կը ճանչնան, և հայ օրինակին լեզուին յստակութիւնն, ճոխութիւնն և հմտութիւնն ալ թարգմանչաց դարու արժանաւոր է, և մանաւանդ թէ ուրիշ յետնագոյն դարու մը ընծայելը՝ ազգային մատենագրական պատմութեան ընդդէմ է»։

---

[1] Դէ՛ԶԱ, Իտալացի հմուտ հայագէտ և քննադատ, վերջի տարիներս ընտիր տեսութիւն մը հրատարակեց՝ Ագաթանգեղեայ գրոց յոյն օրինակին վրայ՝ իրենց ուսումնական օրագրի մը մէջ, բաղդատելով ձեռագիրն ընդ տպագրաց, և իրարմէ ունեցած բազմաթիւ ընթերցուածոց տարբերութիւնները նշանակելով։

Երեք մասի կը բաժնուի Ագաթանգեղոսի գրուածքն. առաջինն՝ Լուսաւորչայ, Հռիփսիմեանց և Գայիանեանց վկայաբանութիւնն կ'ամփոփէ։ Երկրորդ մասը ի հեղինակէն մակագրուած է. Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի առն Աստուծոյ. իսկ երրորդին խորագիրն է. Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստանի ընդ ձեռն սրբոյ նահատակի։ Իր գրոցը քննադատք կը կարծեն թէ «Որչափ ալ երեք մասին ալ մատենագրական ոճը նոյն երեւնայ, սակայն անիրաւ չէ երկրորդ մասն եկամուտ համարել, և երրորդն յաւելուած. վերջնոյս ալ մեծ հաւաստիք են Կորիւնի հետ ունեցած անթիւ նմանութիւնք բանից և բառից»։

Մենք կը կրկնենք թէ Ագաթանգեղեայ և թարգմանչաց

մէջ եղած ոչ այնչափ երկար միջոց ժամանակի, և մանաւանդ այս վերջնոց վրայ ազգային անընդհատ և իրաւացի մեծարանքը՝ դժուարին կ'երեւցնէ այդպիսի գրականական անհաւատարմութիւն մը՝ այնպիսի անձանց և գիտուածոց նկատմամբ՝ որ աշխարհածանօթք և աշխարհալուրք էին։

⁂

Ագաթանգեղայ գրոց մասն կը համարին ոմանք նաեւ Դաշանց կոչուած թուղթը։

Պատմութիւննիս կ'աւանդէ թէ երբոր Տրդատ թագաւոր և Գրիգոր Լուսաւորիչ լսեցին Կոստանդիանոսի հաւատալն ի Քրիստոս, այն հրաշալի փոփոխմանը խնդակից ըլլալու համար՝ անձամբ ելան ի Հռովմ գնացին, և այն առթով՝ իրարու հետ բարեկամական դաշինք դրին։

Այս դէպքին ստուգութիւնը՝ Ագաթանգեղոսի խօսքերուն մէջ յայտնի կը տեսնուի. «(Կոստանդիանոս), կ'ըսէ, և արքային Տրդատայ եղբօր սիրելւոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուածածանօթութեանն նորա՝ առաւել դաշինս կռէր ընդ նմա. միջնորդ կալեալ զհաւատսն որ ի տէր Քրիստոսն էր. զի անշուշտ մինչ ի բուն զհաւատարիմ սէրն ի մէջ թագաւորութեանցն պահեսցեն»։

Իրմէ ետքը եկող պատմագիրներն աւելի բացայայտ կերպով կը խօսին այս բանիս վրայ։ Բիւզանդ կ'աւանդէ թէ երբոր Հայաստան աշխարհքը կը նեղուէր ի թշնամեաց, Վաղէս կայսեր կ'իյնար՝ իրմէն օգնութիւն խնդրելով, անիկայ ալ յանձն կ'առնոյր, «զուխտն յիշեալ, կ'ըսէ, զդաշանցն կռելոց՝ զերդմանցն հաստատութեան միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր»։ Նոյն դաշանց հաստատութեան ստուգութեանը վկայութիւն կու տայ և Զենոբ. «Ի ժամանակսն յայնոսիկ, կ'ըսէ, լուր եհաս ի դուռն արքային եթէ Կոստանդիանոս կայսրն հաւատաց ի Քրիստոս Աստուած, դադարեցոյց զհալածումն եկեղեցեաց, քաջութեամբ կալեալ զթագաւորութիւնն, ապա խորհուրդ ի մէջ առեալ գնալ ի դուռն կայսեր վասն գնելոյ դաշինս խաղաղութեան ի մէջ իւրեանց»։ Այս խօսքէն այնպէս կը հասկցուի թէ Տրդատայ Հռոմ երթալուն գլխաւոր պատճառը՝ այդ դաշանց հաստատութեան համար էր։

Տրդատայ մահուընէն ետքը՝ երբոր Հայաստանի ընտանի երկպառակութիւնքը իրենց առիթ առնելով՝ Թըշնամիք վրան կը վազէին անոր ստացուածքներուն ու կողոպուտով ճոխանալու, ինքզինքը պաշտպանելու անկարող Հայաստան՝ այն դաշանց թղթոյն զօրութեամբ կայսերաց օգնութիւնը կը խնդրէր։ Նոյն դաշինքը և ուխտերը կը յիշեցնէր սուրբն Վրթանէս՝ Կոստանդ կայսեր գրած թըղթին մէջ, երբոր Տրդատայ Խոսրով որդին՝ անոր իշխանական աթոռոյն վրայ կ'ուզէր նստեցնել։ Զնոյն և սուրբն Յովսէփ կաթուղիկոս Թէոդոս կայսեր կ'երկրորդէ, երբոր Պարսիկք մոգութեան կրօնքը կ'ուզէին Հայաստան մըտցնել. «Նոքա, կ'ըսէ Եղիշէ, ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանս նախնեացն. բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»։

Այսչափ ստուգապատում վկայութեանց առջեւ տարակոյս չի մնար թէ Տրդատայ ու Կոստանդիանոսի, Սեղբեստրոսի ու Գրիգորի մէջ դաշինք գրուեցան. և հաւանական ալ է թէ այն ատեն գրուած դաշանց թղթոյն յօրինողն Ագաթանգեղոս եղած ըլլայ։ Ասիկայ ոչ միայն իր ատենադպրութեան պաշտամանը յատուկ ծառայութիւն մըն էր, այլ նաեւ Խորենացւոյն մէկ խօսքէն կրնայ գուշակուիլ։ Որովհետեւ Վրաց աշխարհին առաքելուհի սըրբուհւոյն Նունեայ վրայ խօսելու ատեն, Ագաթանգեղոս քեզի կը սորվեցնէ, կ'ըսէ, թէ ինչպէս քարոզեց, «Ի Կղարջից սկսեալ, առ դրամբք Ալանաց և Կասրից մինչեւ ի սահմանս Մազքթաց»։ Բայց Ագաթանգեղոսի պատմագրութեան մէջ Նունեայ և ոչ անունը կը տեսնուի, այլ միայն ի Դաշանց թղթին. որով կամ պիտի ըսենք թէ Ագաթանգեղոսի երկասիրութիւնն ամբողջ մեր ձեռքը հասած չէ, և կամ թէ անորն է նաեւ Դաշանց թղթոյն յօրինուածը։

Բայց թէ որ Ագաթանգեղոսի պատմութեան ոճը՝ Դաշանց թղթոյն հետ բաղդատենք, թէ՛ գրութիւնը և թէ լեզուն յայտնի կ'աղաղակեն թէ կամ բոլորովին անհարազատ է այս գրուածքը, և կամ այնչափ ձեռնամուխ եղած՝ որ անհարազատութեան վիճակի մէջ ընկեր է։

Նախ լեզուին անտեղութիւններէն սկսինք։

Ոչ միայն Ագաթանգեղոսի յատուկ վայելուչ ու հայկաբան ոճը չերեւնար այս թղթոյս մէջ, այլ զանգուած մ'է զանազան նոր ազգաց լեզուացը բառերուն։ Ուստի և տաճկական ուլեճ և սանճախ բառերը կը գործածէ. արաբական վէքիլի բառը, գաղղիացի ֆրեր (frère) ու շամբռ (chambre) ձայները. դուխճայ կամ դուքսիքայ կը կոչէ զխոսրովիդուխտ, որ է տուքես (duchesse) կամ տուքեսսա (duchessa). նոյնպէս լատինական օֆրանդ (offrand) նուէր բառը։ Կը թողունք ուրիշ ասոնց նման անհարազատ բառերը, որոնցմով յայտնի կ'երեւնայ թէ Կիլիկեցւոց կամ Խաչակրաց ժամանակակից էր այս թղթոյն յօրինողը՝ կամ անոր սկզբնագրին խանգարիչը։ Նման՝ ու նոյն ոճով և իմաստներով թղթերու կը հանդիպինք նաեւ արեւմտեան մատենագրութեանց մէջ, և որք ընդհանուր անուամբ Մուրհակք պարգեւատրութեանց Կոստանդիանոսի (Donations de Constantin) կը կոչուին, միջին անուանեալ դարուց շարագրութիւնք և յօրինուածք։

Լեզուին խամութեան հաւասար աչքի կը զարնեն նաև այնպիսի դիպուածոց յիշատակութիւնք՝ զորոնք անկարելի էր որ Ագաթանգեղոսի պէս կիրթ ու հմուտ միտք մը մտածէր և գրի վրայ առնուր։ Ասոնց կարգէն է այն վիշապին պատմութիւնը որ կ'ահաբեկէր բոլոր Հռովմայեցւոց քաղաքը, ու Տրդատ սպաննեց զանիկայ. և ինչպէս յետին ու տխմար գրիչ մը կը յաւելու՝ այն յաղթամարմին վիշապին գլուխը մինչեւ ի դուռն քաղաքին բերաւ, զոր յետոյ յիսունուերկու եզինք հազիւ կրցան ձգել։

Սրբոյն Սեղբեստրոսի այնչափ ինքզինքը մեծցնելն ալ՝ ոչ իրեն սրբութեանը և ոչ վիճակին բարձրութեանը կրնանք պատշաճեցնել։ Իրեն աթոռը նստող հայրապետներէն ոչ ոք այն լեզուն գործած է։ Եւ անիկայ որ ինքզինքն այնչափ կը մեծցնէ՝ գրեթէ հաւասարապատիւ իշխանութիւն կու տայ նաեւ սրբոյն Գրիգորի. բոլոր արեւմըտից և արեւելից եպիսկոպոսաց, եպիսկոպոսապետաց և պատրիարքաց կ'արգելու որ չըլլայ թէ համարձակին Գրիգորի վրայ ձեռք դնել. այլ Հայոց կաթուղիկոսը միայն իրեն եպիսկոպոսներէն կարենայ ձեռնադրութիւն առնուլ, և թէ սրբոյն Գրիգորի և յաջորդաց հաւանութեամբ պիտի դրուին Երուսաղեմի, Անտիոքայ և Աղեքսանդրիոյ մետրապոլիտք. և թէ յարեւելս՝ առաքելական գահուն փոխանորդ համարուին Հայոց քահանայապետք։

Դարձեալ ռամկական առասպելներ ալ կը տեսնուին Թղթոյս մէջ։ Ասոնց կարգէն են՝ թէ Նոյ Փռիւգիոյ մէջ շիներ է իր տապանը. թէ Կոստանդիանոս՝ Բեթղեհէմ քաղաքը ընծայեր է Տրդատայ, և թէ Տրդատ՝ իր հետ եղող կորիճներէն երեքհարիւր հոգի Կոստանդիանոսի արքունեաց մէջ ձգեր է անոր խնդրանօքը, որ ետքը կայսեր անձնապահապետներն եղեր են ի պատերազմունս, և այլն։

Ասոնցմէ զատ ժամանակագրական այլ և այլ սխալներ ալ կան։ Ինչպէս, կ'ըսէ թէ Կոստանդիանոս իր մօրը Հեղինէի ձեռքով գտնուած կենաց փայտին մէկ մասը շնորհեր է Տրդատայ, ուր ճշմարիտ պատմութիւնը կ'աւանդէ, թէ Կոստանդիանոսի դարձէն շատ տարի ետքը եղաւ խաչին գիւտը Հեղինէի ձեռքով։ Կը թողունք ուրիշ

ստուգութեան կարօտ խօսքերը. ինչպէս Կոստանդիանոսին՝ իրեն մօրաքեռորդի կոչել զՀռիփսիմէ, ու զՏրդատէս փեսայ։

Այս ամէն հաւաստիք յայտնի կը ցուցնեն թէ հիմակուան մեր ձեռքն եղած Դաշանց Թուղթը անհարազատ գործ մ'է յետին ժամանակաց, կամ ինչպէս վերն ըսինք, Ագաթանգեղեայ ձեռքով յօրինուածին՝ չէ թէ մասնաւոր՝ հապա ամբողջական խանգարումն։[1]

⁂

Ագաթանգեղոսի անուամբ ձեռագրաց մէջ ուրիշ մանր երկասիրութիւն մ'ալ կայ այսպիսի խորագրով։ Վասն վանորէից որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղեմ։ յԱգաթանգեղեայ պատմագրենն, որ էր դպրապետ սուրբ Լուսաւորչին, և համառօտ ստորագրութիւն կամ անուանակոչութիւն մ'է յԵրուսաղէմ և ի մերձակայս սրբոյ քաղաքին գտնուած վանորէից, զորս ըստ ձեռագրին, հիմներ ու հաստատեր են Տրդատայ թագաւորութեան և սրբոյն Գրիգորի հայրապետութեան ժամանակ « գլխաւոր և անուանի իշխանք Հայաստանեայց »։ Հաւանականաբար անհարազատ է այս գրուածքը, բայց ունենալով նաեւ պատկառելի հնութիւն մը՝ ի վերջ Է կամ ի սկիզբն Ը դարու. վասն զի գրուածքին մէջ կը յիշատակուի թէ Անաստաս անունով հայ վարդապետ մը շարադրած է զայն ի խնդրոյ Համազասպայ կամսարական իշխանի Պահլաւունւոյ՝ որ էր ի վերջ Է դարու, և որ ազատեց ի ձեռաց պատրիարքին Երուսաղեմի Հայոց այս վանքերը, ուր յոյնք կ'ուզէին Ցորնաղի վարդապետութիւնը մուծանել. և թէ այս պատճառաւ նոյն վանաց միաբան հայ կրօնաւորք ժողով մը գումարելով, բողոքեցին առ կաթուղիկոսն Յովհաննէս՝ որ էր յերկրորդ կէս Զ դարու (557–574)։ Կը հաւատարմացընէ զայս ձեռագրի մը յիշատակարանը, յորում կ'ըսուի թէ « գտաք յերկրին Գաղատացւոց, յԱնկիւրիա քաղաքի, սրբոյ Լուսաւորչի ընծայուած եկեղեցւոյ մէջ գիրք մը՝ և յորում այս հատուածը, և թէ Անաստաս կոչուած Հայոց վարդապետ մը երթալով յԵրուսաղէմ, աչքովը տեսեր է Հայոց ազգին պատկանող այս վանքերը, եօթանասուն թուով, ամենքն ալ աղէկ վիճակի մէջ. և գրի վրայ առնելով՝ բերեր հետը Ծոփաց գաւառը, որ հիմայ Չմշկածագ կը կոչուի. ուր հանդիպելով իր գրուածքին, գաղափարեցինք հաւատարմութեամբ »։ Չի գիտցուիր թէ ով է այս ծանօթութեան հեղինակը, բայց ժէ դարէն յառաջ ըլլալը անտարակուսելի կ'երեւնայ։

---

[1] Օրինակի մը մէջ որ կը գտնուի ի Վատիկան Հռովմայ, ի վերջն այսպիսի ծանօթութիւն մը կը տեսնենք գրուած. « Ես Գրիգոր սարկաւագ Հայոց ի Հալապ, առնեմ վկայութիւն, որպէս զայս գիրս գրեցի ի յօրինակէ և ի հին գրոց, ի կաթողիկոսարանէն Սսոյ. և ի նման օրինակին և ողորդաբան և ի վկայութիւն այսմ բանիս՝ գրեցի ձեռօք իմովք »։ Ի ցուցակս մատենից Էջմիածնի կը գտնուի բաւական հնագիր օրինակ մը, զոր քիչ ետքը պիտի յիշենք, յորում և Թուղթն Դաշանց, որուն հրատարակութիւնը փափաքելի է, նորագոյն գրչաց իրաւամբ կամ ենթադրեալ խանգարմունքն պիտի յայտնէ։

Ագաթանգեղոսի կամ Անաստասայ ընծայուած այս գրուածքը՝ քանի մը տարի առաջ (1883) գաղղիական թարգմանութեամբ հրատարակուեցաւ ի Փարիզ (Archives de l'Orient latin II) այս մակագրով. Anastase d'Arménie, VIIme siècle). Les LXX Couvents Arméniens de Jérusalem.

⁂

Էջմիածնի Մատենադարանին մէջ գտնուած Ագաթանգեղեայ հնագոյն գրչագիրք հետեւեալքն են՝ ըստ տպագրեալ կարենեան ցուցակին.

1. Մեծագիր՝ բոլորագիր գրեալ ի թղթի ի Յովհաննավանս որ ի կարբի ի թուին Հայոց ՉԽԲ (1293). յորում նաեւ թուղթն դաշանց, և Յաճախապատում գիրք սրբոյ Լուսաւորչին։ Աւելի հնագոյն օրինակ մ'ալ, բայց միայն Դաշանց թղթոյն (թիւ գրչ. 1630) գրուած « ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ ի թուին Հայոց ՇՂԵ »

2. Մեծագիր բոլոր հին ընտիր գրչութեամբ յանապատն Ակներ։ — Ներբող Լուսաւորչի յՈսկեբերանէ։

3. Մեծագիր բոլորագիր ի Բաղէշ ի մենաստանն Խընդրակատար, ի թուին Հայոց ՌԺԹ։

Մեր Մատենադարանին վեց և աւելի գրչագրաց մէջ՝ ընտրելագոյնն է հնութեամբ և ստուգագոյն ընթերցուածովք գաղափարեալն յօրինակէն որ յազգային Մատենադարանին Փարիզու. և որոյ վրայ եղած են կրկին տպագրութիւնք ի Ս. Ղազար։ « Գրեալ, ինչպէս յիշատակարանն կը ծանուցանէ, ի Վարդանայ քահանայէ ի թուականիս Հայոց ՉԳ, ի քաղաքն Ռիմ, ընդ հովանեաւ սուրբ տաճարին որ յանուն սուրբ աւետարանչացն Յովհաննու և Մատթէոսի, ուր էր նա հոգեւոր Հայոց »։

Ասոնցմէ ամենէն աւելի հին է՝ Ագաթանգեղոսի երկաթագիր կրկնագիր օրինակ մը ի մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա։

« Այս կրկնագիր ձեռագրին բուն երկայնութիւնը մէկ ոտնաչափ ու լայնութիւնն ութը մատնաչափ է։ Վրայի գրուածն է ամենէն հին բոլորագրով Անդրէի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց՝ մեկնութիւնն Յայտնութեան Յովհաննու առաքելոյ, Ս. Ներսէս Լամբրոնացիէն թարգմանուած, որուն գիրքը առջինին չորս մասին մէկ մասն է. որովհետեւ ասիկայ գրողը՝ Ագաթանգեղոսին ամէն մէկ թերթը չորս ծալլած է։ Տակի գիրը միջին երկաթագիր է, ուսկից յայտնի կ'երեւայ որ Ը կամ Թ դարերուն մէջ գրուած պիտի ըլլայ։...

« Օրինակին ընտրութեանը վրայ խօսք ընելն աւելորդ *կը համարինք․ արդէն կրկնագիր ըսելն ու հնութիւնը՝ անոր ընտրութիւնն ալ կը ցուցնեն․ այս միայն կ'աւելցընենք որ մինչեւ հիմա գտնուած ամէն օրինակներէն շատ աւելի աղէկ և ընտիր է․ այնպէս որ Փարիզի Թագաւորական գրատան օրինակն ալ, որ մինչեւ հիմայ գըտնուած օրինակներուն մէջ ամենէն ընտիրն է, շատ տեղեր ասով կը սրբագրուի, մէջի սխալ կամ մթին բառերն ու իմաստները կ'ուղղուին, միանգամայն անկից աւելի կտորներ ալ մէջը կը գտնուին։ Օրինակի համար, հոս քանի մը կտորներ դնենք։ Փարիզի օրինակին յառաջաբանութեան մէջ (Տպագր․ Վենետկոյ 1835) երես 4 այսպէս գրուած է․ «․․․ Յանքոյթ նաւահանգիստն հասանել կարասցեն, արդարեւ իսկ շատ այնք իսկ են, որ ոչ վասն ագահութեան զանձինս ի մահ դնեն, այլ առ չգոյութեան աղքատութեան»։ Նոյնպէս նոյն երեսին մէջ տող 24 Փարիզի օրինակը կ'ըսէ․ «Երկպատիկ օգտութեան աւելի եղագս գտանել կարասցեն․ միանգամայն զպարտաւորսն հաճել»․ իսկ կրկնագիրը՝ «Երկպատիկ աւգտութեան եկի աղագս գտանել կարասցեն․ միանգամայն զպարտատուսն հաճել»։ Երես 7 տող 3 Փարիզեան օրինակը․ «Ըստ վարիչ ոգւոյն»․ կրկնագիր․ «Ըստ վարգիչ աւգոյն»։ Երես 8 տող 2 Փարիզեան օր․ «Յանդգնութեամբ բարբառովք»․ կրկնագիր․ «Յանդգնութեամբ տղայաբար բարուք»։ Երես 10 տող 4 Փարիզեան օր․ «Երկայն ճանապարհացն»․ կըրկնագիր․ «Երկայնուղայ ճանապարհաց»։ Երես 17 տող 16 Փարիզեան օր․ «Առնութեան»․ կրկնագիր․ «Բռնութեան»։ Երես 20 տող 22 Փարիզեան օր․ «Ո՛ ոք ուստեք, որ զայսպիսի շնորհով աստուածեղէն երեւցաւ»․ կրկնագիր․ «Ո՛ ոք ուստեք որ զայս նորոգատուր զառաքելական շնորհս յանձին ցուցանելով, այնպիսի աստուածեղէն շնորհաւ երեւցաւ»։ Նոյնպէս նոյն երեսին մէջ տող 12․ «Ձալեօք ժամանակագրական ծովուս․ որք հարցեալ զհայրական մատեանս պատմեցի նոցա»․ իսկ կրկնագիրը կ'աւելցնէ․*

«Ձալեաւք ժամանակագրական ծովուս, պատմել յազգս յայդ զժողովրդին (զժողովրդենէն) առացելոյ․ որք աւրհնեսցեն զտէր, որք յետ այսր անցեալ ժամանակաց գալոցն իցեն․ որք հարցեալ զհայրական մատեանսն, պատմեսցի նոցա», և այլն։ — Բոլոր գրքին մէջ այսպէս տարբերութիւններ ու գեղեցիկ յաւելուածներ կը գտնուին։ Բայց ափսոս որ կատարեալ ամբողջ չէ․ ինչու որ վրան նորէն օրինակողը՝ շատ անգամ հին մագաղաթին սիւներուն կէսէն կտրած է, որով տողերուն կէսը դուրս մնացած է[1]։»

Այլ և այլ անգամ տպագրուած է Ագաթանգեղոսի գիրքը․ անոնց մէջ առաջին է Կոստանդնուպոլիս եղածը 1759ին Էջմիածնի նուիրակ Աստուածատուր վարդապետի մը ձեռքով․ Վերջի երեք տպագրութիւնքն եղած են ի Վենետիկ, Մխիթարեանց վանքը, ի 1835, 1862, *և* 1928 *ընտիր և հարազատ ընթերցուածով․ որոց խնամքով թարգմանուած է նաեւ իտալերէն և տպագրած հոն, ի* 1843․ *Տպագրութիւն մ'ալ հայ բնագրին ի Թիֆլիզ, ի* 1882․

Ագաթանգեղեայ գրոց եւրոպական թարգմանութիւնքն են, բաց յիտալականէն զոր յիշեցինք, լատինն մասնական Agathangel: Acta S. Gregorii Illum. (Bolland. Acta Sanctorum; Sept. Vlll, 321: *Գաղղիականն.* Agathange, Histoire du règne de Tiridate et la prédication de S. Grégoire l'Illuminateur, avec suppressions des passages purement religieux, sur le texte Arménien, accompagnée de la version grecque, par V. Langlois; Paris, 1868. *Մասնագիտական քննադատութիւնք.* Agathangelos et la doctrine de l'Eglise arménienne au V. siécle... par Garabed Toumajan; Lausanne. — Agathangelus, von Alfred von Gutchmid, *ու մեր վերը ակնարկած Գէլզա իտալացւոյն գրուածը․*

---

[1] *Ե–ր––պ–, շաբաթական լուրեր,* 1848, *թիւ* 9․

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ

Ո՞վ էր Զենոբ։ — Զենոբայ պատմական երկասիրութիւնը և նիւթը։ — Իր գրուածքին գլխաւոր աղբերը. — Ի՛նչ լեզուով գրեց։ — Տպագրութիւնք բնագրին և թարգմանութիւնք։

Ասորի էր Զենոբ, ու սրբոյն Գրիգորի հետ Կեսարիայէն ի Հայաստան եկած, կրօնաւորական կենաց կարգերը՝ որուն նուիրած էր ինքզինքը, նորահաւատ աշխարհին մէջ ծաւալելու։ Այս վախճանաւ Լուսաւորչի Տարօնոյ մօտ Իննակնեան՝ կամ սրբոյն Կարապետի վանքը հաստատելով, հոն առաջնորդ և վանահայր կարգեց զԶենոբ։

Այսչափ է Զենոբայ վրայ ունեցած տեղեկութիւննիս։ Քանի մը խօսք ալ իւր երկասիրութեան վրայ գրուցենք, յորում պիտի տեսնուի թէ ինչ պատճառաւ և երբ գրեց իւր պատմութեան գիրքը։ Իւր և Ագաթանգեղոսի գրոց մէջ երեւցած տարբերութեանց վրայ պէտք չէ զարմանալ, որովհետեւ ինչպէս ինքն ալ կ'ըսէ, Ագաթանգեղոսէն առաջ շարագրած է իւր գիրքը։

⁂

Զենոբ իւր պատմութեան գիրքը քանի մը նամակներով կը սկսի։ Ասոնցմէ առջինը՝ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ կը գրէ առ Ղեւոնդիոս հայրապետ Կեսարու. յորում նախ շնորհակալ կ'ըլլայ սրբոյն Յովհաննու Մկրտչի նշխարքը իրեն ղրկելուն համար, և անոր ձեռքով Հայաստանի մէջ կատարուած հրաշալի դէպքերը կը պատմէ Գիսանեան կռոց պատկերին կործանմամբը։ Շնորհակալ կ'ըլլայ դարձեալ Անտոն և Կրօնիդէս ճգնաւորաց համար, զորս նոյն սուրբ հայրապետը ղրկած էր ի Հայաստան, և կը խնդրէ որ անոնց նման ուրիշներ ալ յուղարկէ, մանաւանդ զՏիմոթէոս և զԵղիազար՝ սրբութեամբ նշանաւոր անձինքը։

Ղեւոնդիոս այս թղթոյն փոխարէնը կը դարձնէ առ Լուսաւորիչն։ Ուրախակից կ'ըլլայ այն աստուածահրաշ փոփոխութեանց համար՝ որոց հանդիսարան եղած էր Հայաստան. ու այլ և այլ զգուշութիւններ կը պատուիրէ սրբոյն Գրիգորի։ Իսկ այն կրօնաւորաց համար՝ զորս կը խնդրէր իրմէ, կը ծանուցանէ որ ուրիշ տեղ են։ Սուրբն Գրիգոր այս թուղթն առնելով շատ ցաւեցաւ, ու թագաւորին և իշխանաց հետ մէկտեղ թուղթ մը գրեց առ Եղիազար և առ Տիմոթէոս։ Ասոնց գործակից ու վաստակակիցք Բեկտոր, Անաստաս, Աքիւղաս և Մարկեղիոս նոյն ժամանակները Բիւզանդիոն քաղաքը եկեր էին. հոն հանդիպեցան իրենց քանի մը անձինք որ Տարօնոյ Աշտիշատ քաղաքէն եկած էին. ու պատմեցին թէ ինչ զարմանալի գործեր կատարեց Աստուած սրբոյն Գրիգորի ձեռքով. և փափաքելով այս դիպաց մանրամասն տեղեկութիւնն ունենալ, մասնաւոր թղթով մը աղաչեցին սուրբն Գրիգոր որ իրեն պաշտօնէիցմէ մէկուն պատուիրէ՝ որպէս զի այդ ամէն հանդիպած դէպքերը գրով մ'իրենց ծանօթացնէ։ Սուրբն Գրիգոր երբոր այս թուղթն առաւ, Զենոբայ Ասորւոյ հրամայեց որ առաջին ու երկրորդ պատերազմաց պատմութիւնը նամակով մը անոնց իմացնէ։ Զենոբ ուզեց որ Խոսրովու մահուընէն սկսի պատմութիւնը. բայց սուրբն Գրիգոր յանձն չառաւ, հապա միայն անոնց խնդրածը գրել պատուիրեց։

Այս առթով շարագրեց Զենոբ իր Պատմութիւնը։ Համառօտիւ կ'աւանդէ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին պատմութիւնը, խոսրովու մահը Անակայ ձեռքով, անոր ազգատոհմին բոլորովին ջնջուիլը, ու միայն երկու հոգւոյ ազատիլը, ու անոնցմէ մէկուն՝ ժամանակ անցնելէն ետքը Տրդատայ քով ծառայութեան մտնելը, և կռոց պաշտօն չմատուցանելուն համար այլ և այլ տանջանաց մատնուիլը, վիրապը իջնելը, անկէց դուրս ելլելով՝ զամէնքն աշակերտելը քրիստոսական հաւատոց, եպիսկոպոս ձեռնադրուիլն ի Ղեւոնդեայ։ Դարձեալ կը պատմէ թէ ինչպէս սուրբն Գրիգոր Կեսարիայէն դառնալու ատեն ամէն ջանք բանեցուց կռատուններն ու մեհեանները կործանելու, և այն պատճառաւ կռապաշտ Արձան ու Դեմետր իշխաններն և իրենց համախոհքն՝ Գրիգորի ու Տրդատայ հետ միաբան եղող հաւատարիմ ու քրիստոնեայ բանակին հետ պատերազմեցան։ Ասով կը լմննայ Զենոբայ գրոց առջի պատճէնը։

Երկրորդ պատճէնին խորագիրն է «Վասն պատերազմին որ յԱրձանն եղեւ»․ յորում նոյնպէս Տրդատայ ըրած պատերազմներուն և քաջութեանց պատմութիւնն ընելով կը լմնցնէ երկրորդ թուղթը, որ միանգամայն իր գրոցն ալ լրումն է։

⁂

Այլ և այլ աղբիւրներ ունեցած է Զենոբ այս գիրքը շարագրելու համար․ և այնպիսի պատմագիրներ կը յիշատակէ որ կամ միայն անուամբ յայտնի և կամ բոլորովին անծանօթ են մեզ։ Ասոնց կարգէն են Բարդա կամ Բարդեծան և Պլխիդոն Թարգմանիչ։ Ուր որ ինքը ստիպուած է համառօտ ոճով անցնիլ, հոն երբեմն այս պատմագրաց կը ղրկէ իր ընթերցողքը․ «Ընթերցիր, կ'ըսէ տեղ մը, զԹագաւորութիւն Հեփթաղինեկայ հելլենացի գրով, և կամ զԹագաւորութիւնն Ճենաց զոր գտանես յՈւրհայ քաղաքի առ Բարդա պատմագրի»։ Ուրիշ տեղ մ'ալ․ «Զոր եթէ ստուգիւ կամիք իմանալ, զՊլխիդոն Թարգմանիչ ասորի՝ հարցէք»։

⁂

Ինչպէս որ և իցէ հին երկասիրութիւնք, այսպէս ալ Զենոբայ գրուածքը շատ աղաւաղութիւն կրած է անհմուտ և ձեռնամուխ գրիչներէ, որով թէ լեզուին և թէ պատմութեան մէջ այլ և այլ կերպարանափոխութիւնք մտած։ Ասկէ առաջ եկած է լեզուին խառնութիւնը, բառից և դարձուածոց սխալ կամ անհարազատ իմաստներով ու եղանակաւ գործածուիլը, երբեմն ալ ամբողջ խօսքերուն մութ և անիմանալի մնալը։

Զենոբայ ինչ լեզուով գրելուն վրայ տարակոյս կայ․ հաւանականաբար հայերէն լեզուով գրած չէ, որովհետեւ թուղթը ասորւոց համար ըլլալով՝ հարկ էր որ անոնց լեզուովը շարագրէր։ Ոմանք կը համարին թէ նախ ասորերէն գրած ըլլայ, ու ետքը թարգմանած ի հայ․ որովհետեւ ի գրչագրաց ոմանք այս խորագիրը կը գտնեն նոյն գրքին․ Պատմութիւն Տարօնոյ՝ զոր թարգմանեաց Զենոբ ասորի։ Բայց եթէ մէկը՝ թարգմանեց բառը շարագրելու տեղ գործածուած հասկնայ՝ խօսքին իմաստն այլայլած չըլլար։ Կարելի է որ հայերէն թարգմանութիւնը ժամանակաւ ետքը եղած ըլլայ․ և որովհետեւ Զենոբայ և անոր պատմութիւնը շարայարողին՝ Յովհաննու Մամիկոնենի գրոցը մէջ նմանութիւն կը տեսնեն ոմանք, հաւանական կը համարին որ նոյն իսկ Մամիկոնեանն եղած ըլլայ թարգմանիչը։

Զենոբայ գրոցը առաջին տպագրութիւնն եղած է ի Կոստանդնուպոլիս 1719ին, ջանիւք և սրբագրութեամբ Պաղտասար դպրի․ իսկ երկրորդ և ընտրելագոյն տպագրութիւնն ի Վենետիկ Մխիթարեանց վանքը 1836ին․ այլ և այլ ձեռագրաց բաղդատութեամբ․ յետ որոց աւելի հին և ընտիր օրինակ ալ գտնուած է։ Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց ցուցակին մէջ երկու օրինակ կը գտնենք Զենոբայ պատմութեան գրոց, մին բոլորագիր և միւսը նոր՝ անթուականք (թիւ 1641, 1642)։

Կրկին թարգմանութիւնք եղած են իր գրոց ի գաղղիական բարբառ. առաջինն, Histoire de Daron par Zénob de Klag, évêque syrien, traduite pour la première fois de l'arménien, et accompagnée de notes, par Ev. Prud'homme. Paris 1864. Իսկ երկրորդն, Zénob de Glag, évêque syrien; Histoire de Daron, traduction nouvelle par V. Langlois. (Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, publiée en français.) Paris, Librairie de Firmin-Didot frères, fils C. Tome I, 1867.

ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ

Սրբոյն Ներսեսի վարուց համառօտութիւնը։ — Իր արդիւնքը նկատմամբ մեր քաղաքական պատմութեան։ — Բանասիրականին վրայ ունեցած ազդեցութիւնը։ — Իրեն ընծայուած երկասիրութիւնք։

Այս նուիրական անուան առջեւը՝ մեր քաղաքական պատմութիւնը նոր կերպարանք մը կ'առնու. Հայաստանի արքունական սասանեալ գահը՝ մէկ երկու անգամ իրեն պարտական է իւր հաստատութիւնը. Թագաւորաց սաստիչ, Նախարարաց ու ժողովրդեան խրատող ու քարոզ, ամենուն հաւասար հայր եղած, և ազգին անմահական երախտագիտութեանն արժանի։ Սակայն ոչ ժամանակն իրեն, և ոչ ինքը ժամանակին արժանաւոր կ'երեւնայ. իւր ամէն ջանքովը՝ զՀայաստան վերանորոգելու, գրեթէ աչքովը կը տեսնէ անոր անկումը, և հոգեխառն զմայլմանցը մէջ՝ արցունքով կը նկատէ անոր գլուխը գալիք փորձանքները. այնպէս թշուառութիւններ՝ երկնից կամքով սահմանուած, որոնց առջեւն առնելու համար՝ բաւական չըլլար իւր մեծ հոգին և անխոնջ եռանդը։ Մանաւանդ թէ պատմութեանց

մէջ քիչ անգամ իրեն նմաններն ունեցող դէպքով մը՝ անօրէնութիւնը դժնդակ յաղթանակ մը կը կանգնէ, և այն լեզուն և սիրտը՝ որուն խրատուց չկրնար հանդուրժել, և որուն առաքինութեանց նմանիլը վատութիւն կը համարէ, բոլորովին կը համրացնէ, թոյն խմցնելով անոր՝ որ իւր հայրենեաց անմահութեան բաժակը մատուակելէն չէր յոգնած։ Այս է Մեծին Ներսէսի վարուց համառօտ ուրուագիծը։ Տխուր դէպք մը, որուն ամօթը՝ դարուց հեռաւորութիւնը չէ կրցած փարատել։

⁂

Ինչպէս ազգային քաղաքական կենացը, այնպէս ալ բանասիրականին վրայ մեծ ազդեցութիւն ունեցած է Ներսէս. թէպէտ և պատմութիւննիս՝ այս նկատմամբ խիստ քիչ տեղեկութիւն կ'աւանդէ։

Տղայութեան հասակին Կեսարիա գացած է Ներսէս, և հոն իմաստասիրական ուսմանց մէջ ունեցած յառաջադիմութեամբը՝ աշակերտակցացը սիրելի, վարդապետաց ալ զարմանալի երեւցած, ինչպէս կը վկայէ Բիւզանդ։ Անկէց Կոստանդնուպոլիս անցնելով, հոն Յունաց երեւելի իշխաններէն մէկուն դուստրն իրեն ամուսնացուց, և այն զուգութեան միակ պտուղն եղաւ սուրբն Սահակ Պարթեւ։

Հայաստան դառնալէն ետքը՝ Փառներսեհի յաջորդ եղաւ ի կաթուղիկոսութեան։ Այն պաշտամանը մէջ մօտանց տեսնելով հայրենեաց խեղճութիւնը, անոր միակ դարման համարեց ժառանգաւորաց կրթութիւնը. անոր համար բոլոր Հայաստանի մէջ վանքերը շատցուց, որոնց թիւը ոմանք մինչեւ երկու հազարի կը հանեն, և անոնց բարեկարգութեան համար կարգեր ու կանոններ սահմանեց, ինչպէս որ տեսած և սորված էր առ Յոյնս։

« Ջօրաւորն ի բան և ի գործ, կատարեալ աշխարհականն հոգւոց՝ » չէ թողուցած մեզի մասնաւոր երկասիրութիւն մը իւր մտաց և գրչի արդիւնք· սակայն կարելի՞ է մտածել որ հայրապետ մը ունեցած չըլլայ վերաբերութիւններ ընդ Թագաւորս դրացիս, ընդ իւր ստորակարգ եպիսկոպոսունս և ընդ բոլոր ազգին՝ զանազան առիթներով։ Բայց այս տեսութիւններէս բան մ'ալ աւելի կ'ենթադրենք, որ սուրբ հօրս արդիւնք եղած է մեր Մաշտոցը, չըսեմ նաեւ Պատարագամատոյցն ու Ժամագիրքը, այնպիսի մատեանք որ միակ կարեւորք էին յամենայն ժամանակի, կը յիշէ Բուզանդ, որ սուրբն Ներսէս ի սպանութեան գնելոյ առաւօտեան ժամերգութիւնը կը կատարէր, և Մեսրոպ երէց կը յիշէ Թափոր խաչիւ և աւետարանաւ· կրնանք համարել միանգամայն որ սուրբն Ներսէս իբրեւ զսուրբն Բարսեղ յարդարած ըլլայ զեկեղեցական մատեանս ըստ մասնէ։ Վկայէ ինքն Մեսրոպ որ մեր Մաշտոցին քահանայաթաղն՝ աղօթքն և հրաժարականքն՝ այն խօսքերն են զոր արտաբերեցին երջանիկ շրթունքն հոգեվարեալ մարմնոյն Ներսէսի ի ժամ արբման բաժակին։ Երկարատեւ ազդեցութիւն մ'ունեցաւ Թոյնն ի նմա, և ըրաւ առ նախարարս սրտառուչ հրաժեշտն՝ զոր կ'ընթեռնունք յիւր աշակերտին գրուածս· կը դարձնէ սիրտն առաւել քան զաչսն՝ առ շրջակայս և կ'ըսէ· « Ողջոյն ձեզ դասք քահանայից, ողջոյն ձեզ կարգ սարկաւագաց, ողջոյն ձեզ մանկունք սուրբ եկեղեցւոյ, ողջոյն ձեզ հաւատացեալ եղբարք· ես ճանապարհորդեցի առ արարիչն իմ· Թողի զամենայն զկեանս իմ, և թողի զժառանգութիւնս իմ· ըստ հրամանի քում դարձայ ի հող յորմէ առեղծայ։ Ահա հրաժարիմ ի քէն սուրբ եկեղեցի։ Ահա մեկնիմ ի ձէնջ սիրելի եղբարք, ի կոչումն Քրիստոսի Աստուծոյ մերոյ »··· Այս ողջոյնքն են զորս կ'արտաբերէ ցարդ հանգուցեալն ի Քրիստոս՝ բերանով քահանային, որով Մաշտոցին գեղեցիկ գրուած մը իր մասերովն անկէ առնուած է։

« Բայց մարդկային միտք շատ անգամ եղածովն գոհ

չըլլալով, կը սիրէ և կ'ախորժի նաեւ յաւելուլ և բարդել· այսպիսի գրուածներ ստեղծած է մեր պատմութիւնը վասն սրբոյն Ներսէսի։ Ինչպէս Մեթոդիոս Պատարացի, և Ագաթրոն մը ի մեզ, և Հիպպողիտոս մը գրած ըլլալնին կ'աւանդուի, Նեռին և վերջին գալստեան համար և կատարածի աշխարհիս, ոչ ինչ նուազ գրութիւն մ'ալ մերքն կու տան Ներսէսի, որպէս թէ ի կատարած կենացն խօսած ըլլայ Հայոց ազգին և կատարածին վրայ և Նեռին· և այս պատմողն և մանրամասն գրողն է ինքն Մեսրովպ երէց վայելչաբան ոճով պատմիչն, որ և ··· կը յաւելու եւս որ սրբոյն Ներսէսի մահուան առաջիկայ գտան երկուք ոմանք՝ Մեսրոպ և Եպիփան՝ աշակերտք սրբոյն, որ և զհայ գիրն գտան[1] ։

* * *

---

[1] Բազմավէպ, 1877, յէջ 337·

ԲԻՒԶԱՆԴ

Բիւզանդ և իր անձին և ազգին վրայ եղած այլեւայլ ենթադրութիւնք։ — Փարպեցի և իր խօսքերը Բիւզանդայ վրայ։ — Բիւզանդայ պատմական գիրքը՝ համեմատուած ուրիշ ազգային պատմչաց հետ։ — Անոնցմէ օտարանալն շատ դիպուածոց յիշատակութեան մէջ՝ օտարութիւն կ'ենթադրէ նաեւ ազգաւ։ — Սահառունի կոչուիլը, ու այդպիսի անուանակոչութեան հաւանական համարուած պատճառ մը։ — Ո՞ր լեզուով գրուած է իր երկասիրութիւնը։ — Արդեօք ամբողջ հասա՞ծ է ձեռքերնիս Բիւզանդայ յօրինած պատմութիւնը։ — Բուզանդարանի նիւթը։ — Տպագրութիւնք և թարգմանութիւնք։

Չորրորդ դարուն գլխաւոր մատենագրաց մէկն է Բիւզանդ փաւստոս, նշանաւոր իր ընտիր և գեղեցիկ երկասիրութեամբը, և դարձեալ իր վրայ եղած զանազան կարծիքներովը։ Մենք երեքի կրնանք վերածել այս կարծիքները. նախ թէ ո՛վ է Բիւզանդ և ինչ ազգէ. երկրորդ թէ ինչ լեզուով պատմագրեց, և երրորդ թէ արդեօք իր գրուածքը ամբողջ հասա՞ծ է մեր ձեռքը։

Բիւզանդայ համար ոմանք կը գրուցեն թէ Յոյն էր ազգաւ, և այլք թէ Հայ։ Երկու կարծեաց հետեւողներուն ալ պէտք եղած հաստատուն պատճառները կը պակսին իրենց գրութիւնը հաստատելու կամ այլոց կարծիքը հերքելու համար։ Այն վախճանաւ հարկ է որ այս խնդրոյս լուծումը հիներուն գրոցը՝ կամ աւելի լաւ՝ Բիւզանդայ

գրոցը մէջ փնտռենք։ Բանանք անոր վեցերորդ դպրութեան ցանկը, և հոն կը տեսնենք մասնաւոր գլխոյ մը նշանագրութիւն հետեւեալ խօսքերով. «Ստորոտ ամենայն պատմութեանց՝ յաղագս իմ տեղեկութեան, որ միանգամ զմատեանս ընթեռնոյք, տուեք տասն՝ համարական թուօք»։ Սակայն գրուածքին մէջ այս նշանաւոր և հետաքրքրական գլուխը պակաս կը գտնենք։ Միայն նոյն գրոց հինգերորդ և վեցերորդ գլուխներուն մէջ փաւստոս անունով եպիսկոպոս մը կը յիշատակուի, որոյն Ներսիսի եպիսկոպոսապետին ժամանակ, և անոր տանը թելակալ կամ հոգաբարձու, և իր Առոստոմ եղբայրը, որոնց համար յայտնապէս կ'ըսէ պատմագիրն թէ «էին սոքա լեալ ազգաւ հոռոմ»։ Թէ որ հոս յիշուած փաւստոսը՝ նոյն է պատմութեան գրոց հեղինակին հետ, ամէն տարակոյս կը վերցուի, և իր ազգութիւնը կը յայտնուի։ Ուրիշ վկայութիւն մ'ալ այս կարծեաց կրնանք համարել փաւստոսի պատմութեան երրորդ դպրութեան վերջին գլխոյն այս խօսքերը. «Կատարեցաւ երրորդ դարք, քսան և մի պատմութեանց դպրութիւնք, (այսինքն նոյնչափ գլուխք) ժամանակագիր կանոնք փաւստեայ Բիւզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց»։

Սակայն ոմանք այս վկայութիւնները բաւական չհամարելով, և տեսնելով որ Բիւզանդ հայերէն յօրիներ է իր պատմութեան գիրքը, կարծեցին թէ մեր ազգէն ըլլայ, և միայն Բիւզանդիոնի մէջ իր ուսմունքը կատարած ըլլալուն համար Բիւզանդ կամ Բիւզանդացի կոչուած. ինչպէս նաեւ ոմանք մեր թարգմանիչներէն Աթենքի մէջ իրենց ուսման ընթացքն ըրած ըլլալնուն համար Աթենացի կոչուած են։ Բայց մեզի այս կարծիքը անընդունելի կ'երեւնայ. ի հաւաստիս՝ մէջ կը բերենք նախ վերի յիշուած երկու վկայութիւնները. երկրորդ՝ ուրիշ թէ ժամանակակից և թէ իրմէ ետքը եկող պատմագրաց խօսքերը, և երրորդ՝ առնցմէ ամենէն աւելի իր պատմութեան գիրքը։

Այս երկրորդ ու երրորդ հատուածաց վրայ քիչ մ'ընդարձակ խօսինք։

⁂

Բիւզանդայ վրայ խօսող պատմագրաց մէջ գլխաւոր է Ղազար Փարպեցի՝ որ ժամանակաւ իրմէն քիչ ետքը կ'իյնայ։ Ասիկայ Ագաթանգեղեայ վրայ գովութեամբ խօսելէն ետքը կը յաւելու. « Երկրորդ գրոցն անուանեն զոմն պատմագիր կոչեցեալ՝ Փաւստոս Բիւզանդացի. և վասն զի կարգեցելոցն առ ի Նմանէ ի տեղիս ուրեք, կարծեցին ոմանք բանք ինչ ոչ յարմարք և դիպողք, յերկուացեալ հարկաւորին՝ չասել զայնպիսի անպատշաճ կարգումն Բիւզանդացւոց ուսելոյ »։ Ետքը Բիւզանդիոն քաղաքին վրայ մեծ համարմամբ խօսելէն վերջը, կը գրուցէ. « Յայնպիսումն քաղաքի, և ի մէջ այնչափ բազմութեան ուսելոյ վարժեալ այրն Փաւստոս, այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաց կարգէ՞ր ի պատմութեան իւրում. քա՛ւ և մի լիցի. ուստի և անհաւատալի իմում տկարամտութեանս կարծեցեալ գործն, ասեմ թէ այլք ոք յանդուգն և անհրահանգ բանիւ լրբաբար ձեռն արկեալ յիւրսն գրեաց զինչ պէտս ըստ կամի... և անուամբ Փաւստոսին՝ զիւրոյ յանդգնութեան սխալանս համարեցաւ ծածկել. և այն յայտնի երեւի ամենայն հայցողաց. քանզի են ոմանք ի Յոյնս, այլ մանաւանդ յԱսորիս »։

Փարպեցւոյն այս խօսքերը թէ որ մտադիր ու անաչառ քննութեան տակ ձգուին, մեզի կ'երեւնայ թէ մեր կարծեացը զօրաւոր և անհակառակելի վկայութիւնք են։ Իրաւ է որ ոչ հայ և ոչ յոյն ըլլալուն որոշ խօսք մը կայ այս հատուածիս մէջ, բայց յոյն՝ մանաւանդ թէ, ինչպէս ոմանք կ'ենթադրեն, ասորի ըլլալուն աւելի կրնան վերաբերիլ։ Փարպեցւոյն պէս հմուտ անձի մը տգիտութիւնը այս խնդրոյ վրայ աւելի մեծ տգիտութիւն մը

կ'ենթադրէ ազգին մէջ. և թէպէտ իր պատմութեան գիրքը յունարէն կամ ասորի լեզուով գրուած ըլլայ, և իրմէ կամ ուրիշէ մը հայերէն թարգմանուած, բայց կ'երեւնայ թէ ժողովրդեան մէջ Բիւզանդայ անունը կար, իսկ իր անձին վրայ ստոյգ տեղեկութիւն մը պակաս էր։ Փարպեցին ալ չափազանց խղճմտութեամբ՝ որ իրեն պատիւ է, ազգին մէջ նոյն հեղինակին համարումը չկոտրելու համար, քաղաքէն՝ քաղաքացին կը սկսի գովել, ուստի և անոր գրոցը մէջ եղած անտեղութիւնքը ուրիշ տգէտի մը կ'ուզէ ընծայել, որ յանդգնութեամբ, կ'ըսէ, ձեռք զարկաւ, և անանկ իմաստուն մարդու մը գրուածքը խանգարեց. և թէ այս դէպքը զարմանալի կամ անօրինակ բան մը չէ, վասն զի կայ այդ սովորութիւնը Յունաց մէջ, բայց մանաւանդ Ասորւոց։

⁂

Սակայն Փարպեցւոյն անորոշ խօսքերէն աւելի՝ Բիւզանդայ գիրքը անոր ազգութիւնը կը յայտնէ։ Կարգէ դուրս աննմանութիւն մը կը տեսնուի անոր գրոցը մէջ հայկական պատմութեանց վերաբերեալ դիպուածոց նըկատմամբ՝ տարբեր յայլոց պատմչաց բանից, որ համազգւոյ մը համար անկարելի էր. և ալ աւելի՝ չափազանց ատելութեան ոգի մը ընդդէմ Հայոց։ Փարպեցւոյն մեղադրանքն ու զարմանք ալ այս կէտին համար է, և զպատմիչն արդարացնելու ջանից նպատակն։ Մէկ քանի օրինակ մէջ բերենք։

Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետը՝ որ գրեթէ Բիւզանդայ ժամանակակից կը համարուի, և զոր մեր ամէն՝ թէ հին և թէ յետին ժամանակաց պատմիչները՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին հօրաքեռորդին կը համարեն՝ ազգաբանութիւնն ալ մէջ բերելով, ի Բիւզանդայ երկբայութեամբ մը կը յիշուի. « Որ փոխանակ ազգաւն պարսիկ կոչէր » կ'ըսէ։

Նոյն սուրբ հայրապետին համար Խորենացին և իրմէ ետքը եկող ուրիշ պատմիչներ կ'աւանդեն, թէ Ռշտունեաց Մանաճիհր իշխանը՝ Ասորւոց կողմի Բակուր բդեշխին վրայ պատերազմի ելլելով՝ զանիկայ կը մեռցնէր. ու թէ ի զինուորաց և թէ ռամիկ մարդիկներէն շատերը գերելով, սրբոյն Յակոբայ ուխտը սարկաւագունքն ալ ծովը նետել կը հրամայէ։ Բիւզանդ այն ութ անձինքը ութհարիւրի կը հանէ. «Եւ առ վայրենի բարուցն զոր ունէր, կ'ըսէ, յանձին իւրում, իբրեւ նմա հեճուկս առնելոյ, ութ հարիւր այր որ կային ի կապանս առանց յանցման, ետ ածել առաջի նորա, հրամայեաց ի դահճէ միջէ ի ծով անդր հոսել, և զայնչափ հոգի առանց յանցման կորուսանել»։ Այս անգթութեան նախընթաց պատճառ եղող Բակուրայ պատերազմը և ոչ իսկ կը յիշէ, այլ Մանաճիհրի համար չար ու անզգամ մարդ մ'ըլլալը կը գրուցէ, և թէ սուրբն Յակոբ գնաց առ նա, որպէս զի խրատելով ուղիղ ճամբու բերէ զինքը։ Այս խրատին հետեւանք կ'ենթադրէ յիշուած անգթութեան գործը։

Դարձեալ թէ ի Խորենացւոյն և թէ ուրիշ պատմիչներէ գիտենք սրբոյն Յուսկան նահատակութեան պատճառը։ Յայտնի է մեզի թէ Տիրան թագաւորը ուզեց Յուլիանոսի պատկերը եկեղեցեաց մէջ դնել. և երբոր սուրբ հայրապետը այդ անօրէն գործը խափանելու ետեւէ եղաւ, իր աստուածային նախանձուն մէջ գտաւ չարաչար մահը։ Բիւզանդ բոլորովին տարբեր կերպով կ'աւանդէ այս դէպքը. «Օր մի, կ'ըսէ, յաւուրց տարեկան՝ դիմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլով աւագանւոյն մտանել յեկեղեցին. իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Չես արժանի, հիմ գաս. մի գար ի ներքս։ Վասն որոյ անդէն ի ներքս քարշէին զնա յեկեղեցւոյն. բրածեծ եղեալ ջախջախէր քահանայապետն Աստուծոյ սուրբ երանելի մանուկն Յուսիկ. կիսամահ կոչկոճեալ ընկեցեալ լինէր»։

Տիրանայ կուրանալուն պատմութիւնն ալ բոլորովին

տարբեր կերպով կ'աւանդէ։ Յայտնի է մեզի յայլոց պատմչաց թէ Տիրան՝ Ուրացող Յուլիանոս թագաւորին օգնականութեան ձեռք տուաւ Պարսից դէմ. ու երբ Պարսիկք յաղթող ելան՝ Շապուհ թագաւորը կուրցնել տուաւ զՏիրան։ Բիւզանդ այս պատժին տարբեր պատճառ մը մէջ կը բերէ. Տիրան թագաւորը, կ'ըսէ, ճարտուկ ճանճկէն երիվար մ'ունէր. Շապուհ ուզեց իրմէ այս ձին. իսկ Տիրան յանձն չառնելով իրմէ օտարացնել՝ բոլորովին անոր նման երիվար մը գտաւ ու ղրկեց Շապհոյ։ Իմացաւ Շապուհ խարդախութիւնը, ու ի պատիժ՝ հրամայեց զՏիրան կուրացնել։

Կը թողունք յիշատակել ուրիշ ասոնց նման զանազան դէպքերը, ինչպէս Գնելի և փառանձեմայ պատմութիւնները, Արշակայ և Պապայ, և այլոց վրայ աւանդածներն, որոնք բոլորովին կ'օտարանան յայլոց պատմչաց, և մանաւանդ ի Խորենացւոյն։ Բայց այս յիշուած մէկ քանի օրինակներն ալ բաւական են հաւատարմացնելու թէ ազգային պատմչի մը համար անկարելի է այդպիսի անգիտութիւն, ու ան ալ՝ իրեն այսպէս մերձաւոր ժամանակաւ մարդիկներու ու դէպքերու նկատմամբ։ Բայց ա՛լ աւելի իրեն ազգը քարոզողը՝ հինցած ատելութիւնն է, որով միշտ առիթ կը փնտռէ մեր ազգը վար զարնելու։

Ճշմարիտ և հայրենասէր Հայու մը համար՝ սրբոյն Գրիգորի և Տրդատայ պատմութենէն աւելի սրտաշարժ դէպք մը չկայ։ Բոլոր Հայաստանին մէկ ծայրէն միւսը աւետարանին քարոզութիւնը այնպէս մտադիւրութեամբ ընդունելը, մէկ օրուան մէջ հազարներով մարդիկներու մկրտուիլը, բոլոր աշխարհին մէկ սիրտ մէկ հոգի ըլլալը, կռոց տաճարները քանդելու և անոնց աւերակացը վրայ Աստուծոյ տուները բարձրացնելու, ասոնք այնպիսի դէպքեր են որ նոյն գործը կատարող ժողովրդեան վրայ թէ սէր և թէ զարմանք կը յաճախեն։ Իսկ Բիւզանդ այն երջանիկ ժամանակաց համար ալ այսպէս կը խօսի. «Զի ի վաղընջուց, կ'ըսէ, յորմէ հետէ առին նոքա զհաւատս քրիստոնէութեան, լոկ միայն իբրեւ զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ, ոչ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ, յուսով կամ հաւատով... խառնաղանջ բազմութիւն մարդկան ժողովրդոցն, նախարարացն և կամ շինականութեան »:

Ասոր նման ուրիշ շատ օրինակներ ալ կրնայինք մէջ բերել՝ թէ որ խօսքի երկարութենէն չխորշէինք:

Տարակոյս չկայ որ ուրիշ աստուածարեալ հարք ալ անաչառ և խիստ լեզու մը կը բանեցնեն ազգին պակասութեանցը դէմ, և երբեմն մինչեւ իրենց նուիրական շրթունքը յանէծս կը շարժեն, բայց նոյն խստութեան և նոյն իսկ անէծքին մէջ ուրիշ գորովալիր սիրտ և ուրիշ հայրենի խանդաղատանք մը կը նկատուի:

Բիւզանդայ օտարազգի ըլլալուն ուրիշ փաստ մ'ալ այն կրնանք համարել, որ ոչ երբեք իր Պատմութեանը գրքին մէջ աշխարհն Հայոց, թագաւորն մեր կը գրէ, այլ պարզաբար աշխարհս Հայոց, թագաւորն Հայոց, և այլն: Իսկ եթէ Յունաց վրայ ըլլայ խօսքը, այսպէս կը գրէ. « մեծ թագաւորն Յունաց, մեծ Արենացւոց քաղաք », և այլն:

⁂

Իսկ որոնք որ զՓաւստոս Բիւզանդ հայ կը համարեն, նոյն լեզուով պատմագրելէն զատ ուրիշ մէկ քանի փաստեր մէջ կը բերեն: Նախ Բիւզանդացի կոչուիլն հայրենեացը յայտարարութիւն չեն համարիր, այլ ուսմունքը հոն ըրած ըլլալուն համար այնպէս անուանուած, ինչպէս վերն ըսինք, և ապացոյց մէջ կը բերեն Թարգմանիչներէն ոմանց Աթենացի կոչուիլը, ինչպէս նոյն ինքն Ղազար փարպեցին ալ Սիմոն Ապարանեցիէն Աթենացի կոչուած է [1]. Եղիշէ այլ սրբոյն Եպիփանու Արարածոց գրոցը մեկնութեան թարգմանիչէն՝ Բիւզանդացի կը կոչուի: Բայց անոնց միտքը ոչ եթէ Եղիշէի կամ Ղազարայ հայրենիքը ցուցնել է, այլ անոնց յուսմունս գերազանցութիւնը. ընդհակառակն փարպեցւոյն միտքը Բիւզանդայ համար՝ բոլորովին տարբեր մտքով կը հասկցուի, ինչպէս վերը ցուցինք:

Ասկէ աւելի զօրաւոր ապացոյց մը կը համարուի անոնց առջեւ Բիւզանդայ Սահառունի կոչուիլը. որովհետեւ ինքը պատմիչը իւր գրոց երկրորդ Դպրութեան մէջ կ'աւանդէ « Եւ զմերոյ տոհմի ազգի իշխան Սահառունեաց, և զԱրա իշխան Գնունեաց »:

Բայց մենք կրնանք ենթադրել թէ կամ Սահառունեաց ցեղին հետ խնամեցած էր Բիւզանդայ տոհմը և կամ գրչի սխալ մը պիտի ըլլայ անշուշտ այս հատուածին մէջ: Վասն զի ինչպէս խիստ լաւ կ'առարկէ բանասէր մը, Բիւզանդ որ ուրիշ ամէն ցեղերուն նախարարաց անուանքը կը յիշատակէ այն գլխոյն մէջ, իրեն սեպհական ցեղին նախարարին անունը առանց յիշատակութեան կրնա՞ր թողուլ. ուստի և հաւանական կ'երեւնայ ըսելը թէ Մերոհդահզատ իշխանին անունը փոխուէր եղեր է « մերոյ տոհմի »: Որովհետեւ նոյն իսկ Սահառունեաց տոհմին ալ այնչափ բարեկամ չէ Բիւզանդ, որուն վկայ կրնայ ըլլալ Բատայ Սահառունւոյ պատմութիւնը՝ հինգերորդ Դպրութեանը մէջ:

Մէկ գլխաւոր պատճառ մը կրնայ առարկուիլ, վերը յիշուածներէն ամենէն աւելի զօրաւոր. և է Բիւզանդայ հայերէն լեզուով մատենագրելը: Թէպէտ և եղած են ոմանք որ կարծեցին թէ սկզբնագիրը յունարէն կամ ասորի լեզուով եղած ըլլայ, ու ետքը թարգմանուած ի Հայ, բայց հայկական լեզուին քաջ տեղեակ ոմանց բանասիրաց անհաճոյ կը թուի այդ կարծիքը։ Սակայն այս ալ բաւական պատճառ չէ մատենագրի մը ազգը յայտնելու․ ուր բազմալեզու մատենագիրք պակաս չեն թէ՛ հին և թէ նոր ազգաց մէջ, որ հաւասարապէս կրցեր են գրել թէ իրենց և թէ օտար լեզուներով։ Այսպէս՝ մեր մատենագրութեան մէջ Ագաթանգեղոս, ինչպէս ցուցինք, և լատին դպրութեանց պատմութեանը մէջ կարքեդոնացին Տերենտիոս, որ լատին բարբառը իբրեւ իրեն յատուկ լեզուն գործածեց, և ընտիր օրինագիր մը եղաւ։

---

[1] « Ի յունական երկիր գնացեալ
Եւ զարտաքնոյ հանճարս ուսեալ,
Աթենացի զինքն անձայնեալ
Քան ըզնոսա այլ հըմտացեալ ».

Այս կարծիքը ունեցողներուն մէջ առաջին ըլլալով մեր Ինճիճեան վարդապետը, իր պատճառներն ուզեցինք մէջ բերել, իւր ձեռագիր գրուածոց մէկուն մէջ գտնելով. « փաւստոսի անձին համար՝ որովհետեւ ինքզինքը յայտնապէս Սահառունի կը կոչէ, ուստի Հայոց ազգէն կը համարեմ զինքը, բայց սնած և սորված առ Յոյնս. և ինչպէս հաւանական կ'երեւի, ի Բիւզանդիա, ինչպէս ուրիշ շատերն ալ եղած են մեր ազգին մէջ. ետքը Հայաստան գալով՝ հոն յօրինած ըլլայ այս Պատմութիւնը. և որովհետեւ Բիւզանդիայէն եկած ըլլալովը յունական փաւստոս անունը ընդունած էր, կարծուեցաւ թէ ինքն ըլլայ այն հռչակաւոր փաւստոսը՝ որուն վրայ կը խօսի Ղազար։ Ինծի կ'երեւնայ թէ զայս կ'ակնարկէն երրորդ Դպրութեանը վերջը գրուած մթին խօսքերը. « փախստեայք Բիւզանդեայ ժամանակագիր, մեծի պատմագրի որ էր ժամանակագիր Յունաց »։ Զոր ես այս կերպով կը կարդամ. « փախստեայք Բիւզանդեան ժամանակագիրք, ըստ մեծի պատմագրին փաւստոսի Բիւզանդայ՝ որ էր ժամանակագիր Յունաց »։ Բայց թէ որ այս մեր փաւստոսին համար զուրցուած համարին այս խօսքը՝ Յունաց ժամանակագիր կոչուած, մենք չենք հակառակիր. վասն զի թէպէտ ինքը հայկազուն էր, բայց որովհետեւ Յունաց մէջ մեծցած էր, կրնար նաեւ Յունաց պատմական ժամանակագրութիւն մ'ալ գրած ըլլալ։

Իսկ իւր այս Հայկական պատմութեանը համար՝ ես կը կարծեմ թէ Բիւզանդ շատ բան Հայոց մատեաններէն ու դիւաններէն քաղած է՝ որ այն ատեն կը գտնուէին. վասն զի իւր գրոցը մէջ այնպիսի բազմազան պարագաներ կը նկատենք, որ կը յարմարին ու կը լուսաւորեն Խորենացւոյն պատմութիւնը. կը գտնենք նշանակուած գաւառաց ու գիւղօրէից

անուանքը՝ ուր որ այն գործերը կատարուեցան. նոյնպէս ալ շատ անձանց անուանք. որոնց համար ինքնահնար ըսելը անկարելի է։ Թէ որ Խորենացին ընդարձակ գրած ըլլար իւր պատմութիւնը, և իւր ի համառօտն փութալը շատ տեղ չյայտնած, այն ատեն կարելի էր տարակուսիլ և քննել թէ ի՛նչ պատճառաւ զանցառութիւն ըրած է այն դէպքերը յիշելու։ Անոր համար իմ դատմանս համեմատ՝ միշտ պէտք է այս երկուքը միաբանելու աշխատիլ. և զայն մերժել որ յայտնապէս կ'ընդդիմանայ Խորենացւոյն պատմութեանը։ Ահաւասիկ Բիւզանդայ աւանդած Դրաստամատ ներքինւոյն պատմութիւնը՝ Արշակ թագաւորին ինքնասպան ըլլալուն պատճառներն ընդարձակ կը մեկնէ, որուն վրայ Խորենացին բան մը չնշանակեր. նոյնպէս ալ Արշակաւանի շարեացը ստորագրութիւնը՝ Խորենացւոյն համառօտ խօսիցը բացատրութիւն է։ Ուստի այնպիսի և ուրիշ նման դիպուածները իմաստասիրելով, պէտք չէ, կ'ըսեմ, ի Բիւզանդայ պատմուած այն ամէն դէպքերը մերժել, որ չեն գտնուիր առ Խորենացւոյն. զոր օրինակ Մուշեղի ու Մանուէլի զօրավարութիւնքը և անոնց քաջագործութիւններն, որոնց վրայ Խորենացին բան մը չաւանդեր. վասն զի յայտնի է թէ այն ատեն Հայերը քաջագործութեամբ անուանի զօրավարներ ունէին, որոց և ոչ անուանը յիշատակութիւնը կայ առ Խորենացւոյն։ Անշուշտ մեր այս կարծիքը ունեցան նաեւ Մեսրոպ Երէց, Կիրակոս և Վարդան, որոնք այլ և այլ պատմութիւններ և դէպքեր քաղեցին Բիւզանդայ գրքէն՝ իրենց պատմական երկասիրութեանցը մէջ »։

⁂

Կը մնայ երկրորդ խնդիր մ'ալ թէ արդեօք Բիւզանդայ երկասիրութիւնը ամբողջ հասա՞ծ է մեր ձեռքը՝ թէ անկատար. որովհետեւ Բիւզանդարանը երրորդ դպրութենէ կը սկսի, և ուրիշ երկու նախընթաց դպրութիւնք ալ ենթադրել կու տայ։ Բայց որովհետեւ ինքը մատենագիրը իր յատուկ յառաջաբանին մէջ հետեւեալ խօսքերը մէջ կը բերէ. « Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս. ժամանակագիր կանոնք մատենից, և առ Նմին Դպրութիւնք երեք, այսինքն են դոքա չորս մատեանք. և չորեքին միոյ իրաց յիշատակարանք են »։ Այս խօսքերը յայտնապէս կը ցուցնեն թէ չորս գիրք կամ դպրութիւն շարագրած է Բիւզանդ. որով ինքնիրեն կը լուծուի այս երկրայութիւնը. և հաւանական կ'երեւնայ կարծելը թէ առաջին և երկրորդ դպրութիւնք կ'ենթադրէ հեղինակը իրմէ առաջ եղող ուրիշ երկու պատմագրաց գրուածներն, որոնք սրբոյն Թադէոսի և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին պատմութիւնքը կ'աւանդէին. գուցէ Ղերուբնայի ու Ագաթանգեղոսի կամ Զենոբայ գրուածներն ակնարկելով: Ուստի և գրչագիրք ալ ընթերցողաց մտքէն ամէն տարակոյս վերցնելու համար այս գրքին ամբողջութեանը նկատմամբ, սովոր են երրորդ դպրութեան վրայ Սկիզբն բառը դնել: Ասոնցմէ մին՝ մասնաւոր կերպով հարկ կը համարի ծանուցանել թէ « Երրորդ դպրութիւն սկիզբն է »:

⁂

Բիւզանդարանի նիւթն է 29 տարուան պատմութիւն. և իրեն գլխաւոր նպատակն է Տրդատայ որդւոյն Խոսրով երկրորդին իշխելէն, մինչեւ Արշակայ և Խոսրով երրորդի թագաւորելուն, և Ասպուրակէսի կաթողիկոսութեան պատմութիւնն ընել:

Համառօտ ոճով մը կը նշանակէ Թադէի առաքելութենէն մինչեւ Տրդատայ օրերուն անցքերը. վասն զի « այն ամենայն ի ձեռն այլոց գրեցան » կ'ըսէ, ակնարկելով անշուշտ Ղերուբնայի երկասիրութիւնքը և Ագաթանգեղոսի պատմութիւնը: Բայց հոնկէց՝ ուր անոնց պատմութիւնը կը դադրի, կը սկսի ինքն ճոխաբար աւանդել. և Լուսաւորչայ նուիրական ցեղին վրայ՝ ուր այլք ի պատմըչաց համառօտ և ոչ այնչափ գոհացուցիչ պատմութիւններ կ'աւանդեն, ինքը տեղնիտեղը և մանրապատում յիշատակութիւններ կ'ընէ: Այսպէս են սրբոյն Վրթանայ, անոր որդւոցը՝ Գրիգորիսի և Յուսկան, և այս վերջնոյս անարժան որդւոց՝ Պապայ և Աթանագինէի, և սրբոյն Դանիէլի ասորւոյ վարքերն. այնպէս յիշատակութիւններ՝ որ մեր եկեղեցական պատմութիւնքը փառաւորելով՝ քաղաքականին վրայ ալ մեծ լոյս մը կը ձգեն:

Ասոնց նուիրած կրնանք համարել Բիւզանդայ երրորդ Դպրութիւնը:

Բայց անոնց օրով՝ Հայաստանի մէջ անցած քաղաքական դէպքերն ալ անյիշատակ չթողուր Փաւստոս: Հոն կը կարդանք Մանաւազեան և Որդունի նախարարութեանց իրարու դէմ տուած հակառակամարտ կռիւներն, և իրենց սրով մէկզմէկ անզաւակելը: — Մասքթաց թագաւորին Հայաստանի վրայ վազելը, և ամօթապարտ յաղթուիլը, Բակուր բդեշխին ապստամբութիւնը, Բզնունեաց ազգահատութիւնը, Վաչէ մեծ զօրավարին առաջնորդութեամբը՝ Հայոց ու Պարսից իրարու դէմ տուած պատերազմները, ու իրեն և արքունեաց վրայ եկած հասած խեղճ դիպուածներն: Այսպէս տխուր դիպաց ու աղետից և շփոթութեանց մէջ կը դադրեցնէ Բիւզանդ իրեն երրորդ Դպրութիւնը:

Տիրանայ որդւոյն Արշակայ թագաւորութեամբը կը սկսի Բիւզանդ իր չորրորդ Դպրութիւնը. Հայաստանի նեղութեանց ու թշուառութեանցը մէջ՝ երկնաւոր աստուածախնամ տեսչութիւնը՝ Աթանագինէի անարժան՝ բայց երկնից արժանի ու Հայաստանի բազմավրդով տառապանացը սփոփանք Ներսէս մը կ'ընծայէին, այն Պարթեւ հայրապետը՝ որուն նման և ոչ մէկն ի մերոց թագաւորաց՝ այնչափ ազդեցութիւն ունեցած է Հայաստանի քաղաքական իշխանութեանը վրայ, և որուն հաւասար անձ մը կրնանք ըսել թէ հին և նոր պատմութեանց մէջ սակաւագիւտ է: Անոր պատմութիւնը Բիւզանդայ չորրորդ գրոց մեծ մասը գրաւած է. իր ծնունդը, Կեսարիա երթալը, Հայոց հայրապետական գահը նստիլը, Հայաստանի արքունական սասանեալ աթոռը փրկելու համար՝ մինչեւ առ Վաղէս ճանապարհորդելը, հոն իրմէ աքսորուիլը, կրկին կայսեր հետ տեսնուիլը, և ընդ Արշակայ թագաւորի զանիկայ հաշտեցնելը, ու ի հայրենիս վերադարձը:

Սակայն Ներսէսի սրտին, հոգւոյն ու հայրագութ թելադրութեանց անարժան անձ մ'էր Արշակ, որ այնպիսի բարերար հօր մը ձայնին մտիկ չընելով՝ անօրէն գործերով բոլոր Հայաստանին ատելի կ'ըլլար. իրեն կրիցը միայն լսելով իր եղբօրորդին՝ զԳնէլ՝ կը սպաննէր, ու անոր փառանձեմ կնիկը իրեն առնելով՝ Հայոց արքունի տանն ընտանի խաղաղութիւնը կը վրդովէր: Վերջապէս ինքն Արշակ թագաւորն ալ՝ Շապհոյ Պարսից արքային ձեռքն իյնալով, Անյուշ բերդին մէջ յուսահատ կեանքէ մը ետքը՝ աւելի յուսահատ մահուամբ կը մեռնէր: Ո՜րչափ սրտաշարժ ու ճարտասան լեզուով կ'աւանդէ Բիւզանդ այս դէպքերը: Արշակայ մահուամբը կը դադրի Փաւստոսի չորրորդ Դպրութիւնը, մէջ բերելով նոյն միջոցին Հայաստանի մէջ եղած այլ և այլ դէպքերու յիշատակութիւնը, և մանաւանդ Շապուհ Պարսից թագաւորին՝ Հայոց հետ ունեցած վերաբերութիւններն:

Արշակայ յաջորդը եղաւ Պապ, հօրը արժանի որդի մը, որուն պատմութիւնը կ'ընէ Բիւզանդ իւր հինգերորդ Դըպրութեան մէջ: Կը պատմէ անոր Մուշեղ զօրավարին Պարսից թագաւորին դէմ տուած պատերազմները. ժամանակին այլ և այլ նախարարական տանց մէջ անցած դէպքերը, Պապայ անօրէն ու անկարգ վարքը, և զսուրբն Ներսէս մահադեղով սպաննելը. Թագաւորին՝ իր խառնակ կենացը արժանի մահուամբ մը՝ Յունաց զօրագլխէն ըսպաննուիլը. Վարազդատայ՝ անոր տեղ թագաւորիլը, և անմիջապէս Հայոց Մուշեղ զօրավարը սպաննելն ու ետքը Մանուէլ զօրավարին Պարսից գերութենէն դառնալը, և Մուշեղայ մահուանը վրէժը խնդրելով, ու Վարազդատը Հայաստանէն և թագաւորական աթոռէն մերժելը: Դարձեալ նոյն Մանուէլ զօրավարին Պարսից հետ միաբանիլը ի խաղաղութիւն աշխարհին, ու ետքը Մերուժանայ Արծրունւոյ թելադրութեամբ՝ պատերազմաց յուզմունքը, մինչեւ որ այս վերջինս Պարսից զօրացը հետ միաբան Մանուէլի վրայ գալով, յաղթուեցաւ ու սպաննուեցաւ, և այն ատեն Մանուէլ թագաւորեցուց զԱրշակ, և ինքն ալ մեռաւ: Իր մահուամբը կը վերջացնէ Բիւզանդ հինգերորդ Դպրութիւնը:

Բուզանդարանի վեցերորդ գիրքը՝ ամենեւին անարժան կրնայ համարուիլ առաջին երեք Դպրութեանց. վասն զի ոչ առջիններուն մէջ երեւցած հետաքննական գիպուածոց շարունակութիւնք են, և ոչ ալ անոնց ոճովը գրուած. այլ ժամանակին Հայաստանի մէջ երեւցած քանի մը եպիսկոպոսաց վրայ կենսագրական տեղեկութիւններ, բաց ի առջի գլխէն՝ յորում Հայոց թագաւորութեան երկու բաժնուելուն պատմութիւնը կ'ընէ, այս ինքն՝ Յունաց թագաւորին հրամանաւ Արշակայ իշխելը, ու Պարսից կողմանէ ալ Խոսրովու թագաւորելը, և անով Հայաստանի թագաւորական իշխանութեան տկարանալը:

Զորս տպագրութիւնք եղած են Բիւզանդայ գրոցը. 1721ին (ի Կոստանդնուպոլիս). ի Վենետիկ 1831ին, ընտիր ընթերցուածով և հմուտ յառաջաբանութեամբ, տպագրութիւն ի Ս. Փեթրպուրկ (1883) ի ձեռն Քերովբէի Պատկանեան, և նորագոյն մ'ալ ի Վենետիկ 1914ին.

Եւրոպական լեզուով թարգմանութիւնք. Faustus de Byzance, Bibliothèque historique en quatre livres; traduite pour la première fois de l'arménien en français, par Jean-Baptiste Emine, directeur du gymnase impérial de Vladimir sur la Kliazma- (Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, par Victor Langlois). Paris, Librairie de Firmin-Didot frères, fils et C. 1867. Բազմահմուտ Թարգմանիչն ի յառաջաբանին՝ Բիւզանդայ անձին և գրոց վրայ յայտնած կարծեաց մէջ քանի մը տեղ մեղմէ կը տարբերի. Ակզբնագիրն յունարէն կը համարի, և յառաջին կէս հինգերորդ դարու թարգմանուած ի հայ.

Des Faustus von Byzanz Geschichte Armeniens. Aus dem Armenischen ubersetzt und mit einer Abhandlug über die geographie Armeniens eingelates von D.r M. Lauer. Köln, 1879.

⁂

Ինչպէս Խորենացւոյն, այսպէս ալ Բիւզանդայ պատմական երկասիրութիւնն, կարեւորութիւն ունի և առատ նիւթ կը մատակարարէ Հայաստանի քաղաքական ու եկեղեցական հին պատմութեանց հետամուտ եղողներուն: Հմուտն Սէն-Մարդէն շատ կը յարգէր այս գրուածքը, և յորմէ բազմապատիկ տեղեկութիւններ և դիպուածներ քաղելով՝ ճոխացուց Լըպոյի Արեւելեան կայսերաց պատմութեան Նոր տպագրութիւնը:

ՊՐՈՅԵՐԵՍԻՈՍ

Հայք յԱթէնս և ի Հռոմ: — Պարոյր և իր ուսումը: — Յառաջադիմութիւնն և պատիւ ի Հռոմ: — Իր անուանը և համբաւոյն կանգնուած արձանն: — Գրիգորի աստուածաբանի վերատառութիւնը:

Այս չորրորդ դարուս մէջ կը յիշուին ի Յունաց շատ բանասէր Հայկազունք, որ ուսմունք սորվելու համար կ'երթային Աթէնք ու Հռոմ և ուրիշ գլխաւոր քաղաքներ. որոց մէջ գլխաւորն է Պրոյերեսիոս կամ Պարոյր Հայկազն, որ այնչափ անուանի եղաւ ճարտարխօսութեան ուսման և հրահանգաց մէջ՝ որ մինչեւ Աթենքի և Հռոմայ մէջ արձաններ կանգնեցին իրեն ի պատիւ և թագաւոր ճարտարախօսաց կոչեցին:

Սակայն ցաւալին այն է որ այսպիսի հայկական դըպրութեանց պարծանք անուանի անձին վրայ՝ մեր Նախնիք տեղեկութիւն մը չեն տար, ու կը ստիպեն որ օտար աղբերաց դիմելով՝ ազգային ճոխութեան խելամուտ ըլլանք: Պարոյրի վարքը գրողաց մէջ գլխաւոր Եւնաբիոս յոյն՝ և իրեն ժամանակակից հեղինակ ըլլալով, հարկ է որ իրմէ քաղենք այս հարկաւոր ու հետաքրքրական տեղեկութիւնները մեր ամենէն մեծ ճարտասան անձին վրայ:

Պարոյր, կ'ըսէ պատմիչն, իրեն ծերութեան ատենն ալ այնպիսի դիմաց վայելչութիւն և գեղեցկութիւն ունէր, որով յայտնի կ'երեւնար երիտասարդութեան ժամանակ ունեցած կորովն ու համեմատ կազմուածքը: Հասակին բարձրութիւնն ալ խելքէ մտքէ ու սովորական կարգէ դուրս բան մը կրնար համարուիլ. վասն զի ութը ոտք բարձրութիւն ունէր, և իրեն ժամանակակից բարձրահասակ մարդիկներուն քովն ալ՝ մեծ հսկայ մը կ'երեւնար: Պատանեկութեան ատենը իրեն հայրենի Հայոց աշխարհէն ելլելով՝ Անտիոք գնաց, որովհետեւ առջի բերան Աթէնք երթալու յօժարութիւն մը չէր զգար. հոն յետին կարօտութեան մէջ ինկաւ, որովհետեւ դիմացը վայելչութեան հետ՝ աղքատութեան պարգեւն ալ երկնքէն ունեցեր էր: Ուստի Ուլպիանոսի դիմեց, որ այն ժամանակներն Անտիոքի մէջ ճարտարխօսութեան լսարան սահմանած էր. և անոր աշակերտացը մէջ քիչ ատենէն ամենէն աւելի յառաջադէմներէն մէկն եղաւ Պարոյր:

Շատ ժամանակ իր քովը կենալէն ետքը՝ Աթէնք երթալով՝ հոն ալ մեծ պատիւ և անուն ստացաւ: Աթէնքի մէջ Հեփեստիոն անունով ընկեր մ'ունեցաւ Պարոյր, և մէկմէկու հետ մտերիմ սիրով մը կապուեցան. և ինչպէս աղքատութեամբ՝ սանկ ալ ճարտարխօսական արուեստի մէջ մէկմէկու հետ մրցանքի ելածի պէս՝ մէկ զմէկ գերազանցել կը ջանային: Մէկ պատմուճանէ ու մէկ վերարկուէ զատ՝ բան մը չունէին. երեք կամ չորս ալ կապերտի կտորուանք, որոնք հնութենէ մաշեր ու գունաթափ եղեր էին: Զարմանալի միաբանութիւն մ'ունէին այս երկու անձինքն իրարու հետ. այնպէս որ կարծես թէ մէկ հոգի էր երկու մարմնոց մէջ. երբոր Պարոյր տնէն դուրս կ'ելլէր, Հեփեստիոն ներսը քաշուած կը մնար. ճարտարխօսութեան հրահանգն առաջ տանելու. նոյնպէս ալ Պարոյր՝ երբ Հեփեստիոն լսարանը կ'երթար. վասն զի այն ատենի յետին աղքատութեան մէջ ինկած էին խեղճերը, որ հազիւ մէկ դրսի զգեստ մը ճարած էին և փոփոխակի կը հագնէին։ Աթէնքի մէջ իրենց ճարտասանութեան վարպետը՝ Կապպադովկացին Յուլիանոս՝ մեծ համարում ունէր Պարոյրի սրամտութեան ու հմտութեան վրայ. և երբոր ինքն Աթէնքէն հեռացաւ, շատերն ետեւէ եղան իրեն ճարտարախօսութեան աթոռը ժառանգելու. բայց հմուտք՝ այն շատերուն մէջէն Պարոյրը, Հեփեստիոնը, Եպիփանն ու Դիոփանտէս առաջարկեցին. և որովհետեւ թիւը լրացած չէր, հարկ եղաւ որ Սոպոլիտէս ու Պառնասիոս անունով մարդիկն ալ առաջարկուին, թէպէտ և առջիններուն համբաւը չունէին։ Վասն զի Հռովմայեցիք Աթէնքի մէջ օրէնք մը հաստատեր էին՝ որ ինչպէս ունկնդիրք՝ սանկ ալ ճարտարախօսք բազմաթիւ ըլլան։

Երբոր ընտրուեցան՝ իրենց մէջէն նուաստագոյնքը՝ վարժապետի միայն անունն ունէին, և իրենց կարողութիւնը դպրոցին պատերուն և ատեանին մէջ էր միայն։ Իսկ աւելի համբաւ և իմաստութիւն ունեցողներուն համար՝ քաղաքը զանազան հերձուածի բաժնուեցաւ. և չէ թէ միայն քաղաքը՝ հապա նաեւ բոլոր Հռովմայեցւոց հպատակ ազգերը։ Արեւելքի մեծ մասը զԵպիփանիոս կ'ընտրէր. Արաբիա՝ զԴիոփանտէս, Հեփեստիոն՝ Պրոյերեսեայ համար Աթէնքէն ելաւ ու կեանքէն ալ. իսկ Պրոյերեսիոսի՝ բոլոր Պոնտացիք և մերձակայ գաւառներն աշակերտներ կը ղրկէին՝ իբրեւ ծանօթի և իրենց մէջ համբաւ ունեցող հռչակաւոր մարդու։ Անկէց զատ բոլոր Բիւթանիա և Հելլեսպոնտոս, և Ասիոյ այն մասը որ Կարիայէն մինչեւ Լիկիա և Պամփիւլիա և Տորոս լեռները կը տարածուի, և

Եգիպտոսէն ու Լիբիայէն՝ իրեն հանճարոյն վրայ զարմացող գունդագունդ կը վազէին. որով Պրոյերեսիոսի փառքը այնպիսի հայրենիք մը ունեցաւ՝ որուն սահմանները դեռ եւս անծանօթ երկիրներ են։

Բայց փառաց զուգորդ է նախանձ. Պրոյերեսեայ ընկերակից ճարտարխօսութեան վարպետները չկրցան դիմանալ և հնարք չմնաց որ չբանեցնեն. մինչեւ քաղքին իշխանն ալ կաշառելով իրենց կողմը ձգեցին, և զՊրոյերեսիոս Աթէնքէն աքսորել տուին։ Հայկազն ճարտարախօսին հեռանալովը՝ սկսան իրենք պատիւ ու մեծարանք գտնել. ա՛յն ատենին հասած էր առջինին փառքն ու համբաւը։

Խեղճ Պարոյրը աքսորանաց դառնութեան հետ՝ դառնագոյն ցաւ մ'ալ ունեցաւ աղքատութիւնը. բայց քիչ ատենէն նորէն Աթէնք դարձաւ։ Ուրիշները ոսկւոյ զօրութեամբը կրնային դառնալ, իրեն համար լոկ ճարտարխօսութիւնը բաւական եղաւ. ինչպէս Հոմերոսի հագներգութեանց մէջ ճարտարխօսութեան աստուածը Հերմէս՝ առանց թշնամեաց բազմութենէն վախնալու՝ Պրիամոսի հետ մինչեւ Աքիլլեայ վրանը կ'երթայ։ Պարոյր երբոր Աթէնք դարձաւ, բաղդը իրեն ձեռնտու գտաւ. որովհետեւ քաղաքին իշխանը փոխուեր էր, որուն արդէն մեծ վիշտ ալ էին այնպիսի ճարտարախօսի մը քաշած նեղութիւնները. և թէպէտ իրեն թշնամիքը դարձեալ ետեւէ եղան զինքը նորէն աքսորելու, բայց ճար չեղաւ. Պարոյր Աթէնք դառնալուն՝ ինչպէս նոր Ոդիսեւս մը իր ծանրատաղտուկ գերութենէն ետքը, բարեկամներէն ու ընկերակիցներէն քիչ հոգի գտաւ ողջ և առողջ. որոնց մէջ էր նաեւ Տուսկիանոս, զոր Սուիդաս ամենազօր ճարտարախօս կ'անուանէ, և որուն համար Պարոյրի վարքը մեզի աւանդողն Եւնաբիոս՝ կ'ըսէր, թէ ինքը միայն արժանաւոր է Պրոյերեսիոս ըլլալու՝ թէ որ ինքն Պրոյերեսիոս ողջ չըլլար։

Իշխանը երբոր Աթէնք դարձաւ, իմաստուններն խոր-

հըրդի կանչեց և զանազան առաջարկութիւններ դրաւ առջեւնին որ լուծեն։ Բայց որովհետեւ իրենց տուած պատասխաններովը չկրցան զիշխանը գոհ ընել, այն պատճառաւ Պարոյրի բարեկամներն ալ սրտաթափ եղան։ Բայց բդեշխը նորէն կանչեց զիրենք, ըսելով թէ առաջին երախտեաց մրցանակը պիտի ընդունին. ամէնքը վազող վազողի եղան։ Պարոյրն ալ առանց իրենց գիտնալուն կանչուած էր։

Բդեշխը դարձաւ՝ մէկ նոր առաջարկութիւն մ'ալ, ըսաւ, պիտի ընեմ ձեզի. դուք մէջերնէդ մէկն ընտրեցէք որ կարենայ լաւ ճառել. անկէ ետքն ալ Պրոյերեսիոս ճառէ։ Իմաստակքն զարհուրելով Պրոյերեսիոսի անունէն, մենք առանց պատրաստութեան բան չենք խօսիր, ըսին։ Այն ատեն բդեշխն ակնարկեց Պրոյերեսեայ, որ գովելով անոր առաջարկութիւնը, այսինքն յանպատրաստից բան խօսելը, ատենին մէջ կեցաւ. և անվախ գրգռեց իրեն թշնամեաց գլխաւորները՝ որ իրենք իրենց ուզած առակը իրեն առաջարկեն. անոնք ալ չարութեամբ այնպէս դժուար նիւթ մ'ընտրեցին՝ որ ոչ միայն անյարմար էր պերճախօսութեան, այլ գրեթէ անկարելի էր յանպատրաստից խօսելու։ Սակայն Պրոյերեսիոս չհրաժարեցաւ. մանաւանդ թէ խնդրեց որ նշանագիրք գրի առնուն իր խօսելիքը՝ որ յետոյ վէճ չըլլայ ըսածին չըսածին վրայ. դարձեալ խընդրեց որ բոլոր ատեանը լուռ կենայ և ծափահարութիւն չընէ՝ մինչեւ որ ինքն խօսքը չլմնցնէ։ Ատենախօսութիւնն այն աստիճան զարմանալի, պերճաբան և իմաստալից եղաւ, որ ունկնդիրք կը նեղուէին ծափահարութիւն չընելնուն և լռութեան համար, նշանագիրք ալ հազիւ կը հասնէին խօսքին ետեւէն. որ մինչդեռ լմնցած կարծուէր, Պրոյերեսիոս երկրորդ մաս մ'ալ սկսաւ ըսել՝ առաջինէն աւելի զօրաւոր և գեղեցիկ. և երբ լմնցուց, կարելի է ըսաւ, սխալ բան մը ըսած եմ կամ սխալ գրած ըլլան. նայեցէք թէ շիտա՞կ է. և նորէն սկսաւ բոլոր ճառը առաջի բառէն մինչեւ վերջինը անփոփոխ կարգաւ ըսել։ Այս բանս ալ այնքան զարմացուց լսողները, որ երբ լսեց՝ ամէնքը վազեցին իրեն խնդակցելու, ոչ ճարտասան մը՝ հապա նոր Հերմէս մը՝ աստուած մը անուանելով։ Բդեշխը զինուորական հանդիսիւ հանեց զՊրոյերեսիոս յատենէն և իր արժանաւոր աթոռը տուաւ։ Բայց իմաստակաց նախանձը դարձեալ հնարք գտաւ՝ զաշակերտները խաբելով անվայել հնարքներով՝ վարպետնին աթոռէն ձգել։ Պրոյերեսիոս անտրտունջ կը կենար յԱթէնս իբրեւ սովական մը, երբ Անատոլիոս Պերիթացի՝ որ իմաստութեամբ անուանի եղած եպարքոսութեան պատուոյ հասեր էր՝ եկաւ յԱթէնս և իր նախորդին նման իմաստակները կանչելով՝ իրենց ճառի նիւթեր տուաւ. բայց զամէնքն ալ արհամարհելով՝ աթոռէն ելաւ, միայն Պրոյերեսիոսը մեծարեց և իր սեղանը նստեցուց։

Այս միջոցներս, կամ քիչ մը առաջ, Կոստանդ կայսր ի Գաղղիա հրաւիրեց զՊրոյերեսիոս, որ գնաց և զարմացուց զԿոստանդ և բոլոր արքունիքը, ոչ միայն իր հանճարովն, այլ և իր վարքովն և կենաց տնտեսութեամբն՝ վասն զի հսկահասակ և գեղապատշաճ անձ մ'էր մեր հռետորն և ամէն կերպերովն սիրելի. ապրուստն ալ ամենապարզ և զարմանալի. մինչեւ Գաղղիոյ ցուրտ ձմեռներուն մէջ ալ՝ միայն մէկ պարեգօտ կը հագնէր, գրեթէ բոպիկ կը պըտտէր, ոչ միայն ջուրը պաղ կը խմէր, այլ տաք կերակուր ալ չէր ուտեր։ Կոստանդ շատ պատուով ղրկեց զինքն ի Հռոմ. հոն ալ քաղքին մեծերը պատուելով զնա խնդրեցին որ գովեստ մը խօսի իրենց չնաշխարհիկ քաղքին վրայ։ Պրոյերեսիոս հոս ալ այն աստիճան գերազանց ճարտարախօս երեւցաւ, որ թերեւս ինքնին Կիկերոն՝ եթէ ողջ ըլլար՝ ինքն իր վրայ միայն չպարծէր. Հռովմայեցիք արժանաւոր վարձք ընծայեցին իրենց գովասանին՝ պղնձէ ամբողջ անդրի մը կանգնելով Պրոյերեսեայ, և վրան գրելով, Թագուհին Հռոմ թագաւորի

Բանին[1]*։ Զգիտեմ թէ ուրիշի ալ տրուած է այսպիսի պատիւ։ Հռովմայեցիք խնդրեցին ի Պրոյերեսեայ որ գոնէ իրեն աշակերտներէն մէկը ղրկէ իրենց, ան ալ ղրկեց զԵւսեբիոս Աղեքսանդրացին։*

Պրոյերեսիոս դարձաւ նորէն յԱթէնք՝ Զինապետի պատուանուամբ՝ զոր իրեն տուեր էր Կոստանդ կայսր, և յորդորեր ալ որ ուրիշ բան մ'ալ խնդրէ իրմէ. իսկ նա իբրեւ փոխարէն երախտեաց և փառաց զոր իմաստութեան մայր համարուած Աթէնքի մէջ գտեր էր, խնդրեց որ քաղաքը մտած ցորենին մաքսը վերցուի. և այս բանս կատարել տուաւ վերոյիշեալ Անատոլիոսի ձեռօք. որուն հրաւիրանաւն ալ ներբող մը խօսեցաւ ի պատիւ Կոստանդ կայսեր՝ այս ցորենին ազատութեան ըրած շնորհաց համար։ Ասկէ ետեւ դարձեալ Աթէնքի ճարտասանութեան աթոռը նստաւ Պրոյերեսիոս, և հոն էր Յուլիանոսի ինքնակալ ընտրուելու ատենն ալ. այս իմաստակ կայսրը՝ որ թէ զէնքով և թէ գիտութեամբ ու հռետորութեամբ մէկէ մը վար մնալ չէր ուզեր, իրեն նուաստութիւն չհամարեց զՊրոյերեսիոս պատուելն. և առ նա գրած նամակի մը մէջ կ'անուանէ զնա «Յորդառատ և անարգել գետ պերճախօսութեան, և հզօր գրուցուածովք՝ ամենեւին Պերիկլեայ նման»[2]*։ Յուլիանոս մեծ ակնկալութիւն մ'ալ ունէր ի Պրոյերեսեայ, որուն իր բանած կարգէն դուրս շնորհք և բացառութիւն մ'ալ ըրաւ. կը փափագէր և կը յուսար որ Պրոյերեսիոս գրէ իր զինուորական գործոց պատմութիւնը, որոց նա ականատես ալ էր մասամբ՝ ի Գաղղիա, և այս բանս թերեւս իրեն յաւիտենական պարծանք պիտի համարէր, որուն չէր արժանի. վասն զի ինքն Քրիստոսի հաւատոյ յայտնի ուրացող և հալածող մ'էր, իսկ Պրոյերեսիոս պատուաւոր և պատուելի քրիստոնեայ մը. Յուլիանոս թշնամաբար բոլոր քրիստոնեայ վարժապետները հեռացուց իրենց աթոռներէն, միայն զՊրոյերեսիոս թողուց իր սուտ յուսովը, բայց այն մեծ անձն որ ինքն իրեն և ամէն ճանչցողաց պատիւ էր, կամաւ և ազատաբար հրաժարեցաւ իր աթոռէն, այն սիրելի ճարտասանութեան աթոռէն՝ որով այնչափ բարձրացեր էր, և զոր այնչափ բարձրացուցեր էր, բայց անոնցմէ գերագոյն դասեց ճշմարիտ հաւատոյ փառքը։*

Արդէն այս ատեն 90 *տարու մօտ ծերունի մ'էր Պրոյերեսիոս, և գեղեցիկ երկայն արծաթափայլ ալեօք զարդարեալ, բայց դեռ կայտառ երեսօք և երիտասարդական ուժով. այս ատենս էր որ Եւնապիոս՝ իր վարուց գրողը՝* 17 *տարուան պատանի մը, աշակերտեցաւ անոր տանը մէջ հինգ տարի քովը կենալով, և տեղեկանալով անոր դիպուածներուն՝ աւանդեց մեզի։ Իր բաժնուելէն քիչ վերջ մեռաւ Պրոյերեսիոս իբրեւ* 95*ամեայ, լի տարեօք և փառօք։ «Տեսի զնա, կ'ըսէ Եւնապի, ալեւոր սպիտակահեր արծաթափայլ, անցեալ զութսունեւեօթն ամօք, որպէս ինքն ասէր, բայց էր ժիր յոյժ՝ զորպիսի ալեւոր չէր իմ տեսեալ երբէք, և համարեցայ զնա անմահ ոք»։*

Վերոյիշեալ քանի մը ճառերէն զատ կը յիշուին թէ շատ ուրիշ հռետորական ճառեր ալ գրեր էր, աւելի իբրեւ դամբանական կամ ներբողեան. որոց և ոչ մէկն ալ մեզի հասած է, ժամանակին կամ նախանձու անգթութեամբ, թէպէտ և իր փառաց և արժէից համար բաւական համարուին իր վրայ պատմուածքն և ըսուածքն, և աշակերտքն, որոց մէջ գտուեցաւ և Կեսարիոյ աթոռոյն պարծանքը՝ մեծն Ս. Բարսեղ, և իր սիրելին ու համանման յունական մատենագրութեան և ընդհանուր եկեղեցւոյ պարծանք՝ սուրբն Գրիգոր աստուածաբան, որ իր խորունկ

---

[1] Regina rerum Roma, Regi Eloquentiæ. Ἡ βασίλισσα Ῥώμη, τοῦ βασιλέως Λόγων.

[2] Hominem ita in dicendo copiosum et abundantem, ut flumina cum in patente campo influunt; hominem æmulantem eloquentia Periclem.

ու զարմանալի իմաստութիւնը՝ կերպով մը Պրոյերեսեայ ջանիցն ու հանճարոյն պարտական կը ճանչնայ, ի մօտոյ զինքը ճանչցած ի մանկութեան, հասուն հասակին մէջ յետագայ տողերը իրեն կը նուիրէր․

«Մի՛ եւս յայսըմ հետէ բարձր ի գլուխ պարծի կեկրոպիս,
Ոչ է օրէն ՚նդ արեգական զաղօտալոյսըն կըշռել ջահ․
Ոչ մահացուի ՚նդ Պրոյերեսեայ գալ ի պայքար հռետորական․
Որ զհամօրէն նուաճեաց զերկիր ի ճարտասան բանիցն հանդէս։
Ի շանթեացն՝ յեղակարծուց սասանեցաւ Ատտիկաստան,
Եւ ընդհանուր կոկովարան իմաստակաց կոկող կաճառք՝
Տեղի ետուն Պրոյերեսեայ․ տալ ետ տեղի եւ ինքըն բաղդ․
Անշըքեցան փառքն Աթենայ պայծառք՝ ի դառն ի յօրհասէն․
Փախերուք այսուհետեւ ի Կեկրոպեայ մանկունք համբակք»։

Դիոփանտոս՝ ժամանակին ճարտարախօսաց մէջ հռչակաւոր, մասնաւոր ճառիւ գրուատեց զյիշատակ նորա յետ մահուանն․ և որոյ արձանականէն՝ հետեւեալ տողերը հասած են առ մեզ․ «Ո՜վ Մարաթոն, ո՜վ Սալամին․ լռութիւն ահա մածեալ ունի զմեծապայծառ անուանս ձեր․ կորուսէք զպայծառացուցիչ դրօշ յաղթանակաց ձերոց»։

Պրոյերեսեայ ժամանակակցաց մէջ և քիչ մը իրմէն վերջ ալ՝ դարուն ամենէն անուանի իմաստակ և հռետորն կը համարուի Լիբանիոս, որ հեթանոս էր և մնաց, անոր համար պատուեցաւ ի Յուլիանոսէ․ այս հռետորս ալ իր նամակաց մէջ մեծ գովութեամբ կը յիշէ զՊրոյերեսիոս, և կը վկայէ թէ նա պերճախօսութեամբ աշխարհքս գրաւեր է, համբաւով՝ արձաններու արժանի եղած էր, վարքովն ալ ազնիւ անձ։

Այս սքանչելի և անծանօթ անձին վարքը բովանդակելու համար՝ ըսենք որ կենդանի յիշատակներ ալ թողուց․ տարիքն առնելէն և անգամ մը Աթէնքէն հեռանալէն ետեւ՝ փոքր Ասիոյ Տրալլի քաղաքը գտնուած ատենը՝ Ամփիկլէա անուամբ կին մ՚առաւ և երկու դուստր ունեցաւ․ զորոնք ատենին հարսնացուց ալ, և բաժնուելուն վրայ շատ ցաւ քաշեր է կ՚ըսեն։ Հեթանոսութիւնն՝ իր անհաշտ ատելութեամբն զոր ունէր ընդդէմ քրիստոնէութեան, վայրկեան մը տեղի տուաւ մոլեռանդութեան և Մելեսիոս քերթող և քուրմ՝ ուզեց և ջանաց իր տողերով ու տաղիւք մխիթարել զինքն այն դառն կորստեան համար։

* * *

ԴԱՐ Ե

Մեր մատենագրութեան ոսկեդարը։ — Որուն կը վերաբերի այս արդիւնքը։ — Դարուս ազդեցութիւնը և ուսումնական արգասիք։

Հայկական գրութեան ամենէն աւելի նշանաւոր ժամանակն է Ե դարը։ Թագաւորական իշխանութիւնը և եկեղեցական նուիրապետութիւնը իրենց ամէն ազդեցութիւնն ու փոյթը կը բանեցնեն՝ ուսմանց և գիտութեանց մուտք, տեւողութիւն և պաշտպանութիւն տալու Հայաստանի մէջ։ Իրենց ջանիցն արժանաւոր պտուղները կը տեսնուին։

Ուրիշ ազգերու մտաւորական զարգացմանց պատմութեան մէջ՝ շատ անգամ զուսումն և զկրթութիւն՝ գաղթականութեանց արգասիք կը տեսնենք։ Այսպէս Եգիպտոս, Փիւնիկէ, Յունաստան, Հռոմ և Իտալիա՝ իրարու պարտական են. շահավաճառք, պատերազմունք և յաղթութիւնք՝ ուսմանց և գիտութեանց տեղափոխութեան պատճառ կ'ըլլան։ Հայաստան չունեցաւ այս բաղդը, անոր համար հարկ համարեց — ինչպէս առաջ ալ աւելի ունեցանք յիշատակել — իւր քաջուշիմ երիտասարդութիւնը հո՛ն ղրկել ուր դեռ եւս կը ծաղկէին դպրութիւնք. և անոնց ջանքովը նոր կերպարանափոխութիւն մը տալ իւր մտաւորական յառաջադիմութեան։

Ո՛րչափ զարմանալի է Թարգմանչաց ժամանակը, որ իրաւամբ մեր ուսումնականութեան ոսկեդարը կը համարուի։ Ազգաց պատմութեանը մէջ նման դէպք մը փնտռելու՝ ընդունայն պիտի աշխատինք. ինչպէս նաեւ անոնց ջանքովն եղած ուսումնական արդեանց հաւասարը նկատել, քիչ ժամանակուան մէջ՝ այնչափ ինքնագիր երկասիրութիւն և բազմապատիկ թարգմանութիւն, այնպիսի կիրթ ախորժակաւ և ընտիր լեզուով։

Իրենց ազդեցութիւնն ալ մեծ եղած է ժամանակակցաց վրայ։ Հայաստան գրեթէ ուսմանց անճաշակ, մէկէն կ'իմանար անոնց քաղցրութեան ճաշակը. դպրոցներ կը յաճախէին, աշակերտք կը բազմանային, գիտութիւնք կը ծաւալէին, և ինչպէս ժամանակակիցն Կորիւն կը վկայէ, « Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհն Հայոց անպայման սքանչելի լինէր ». և կամ ինչպէս ուրիշ պատմիչ մը կը գրուցէ, « Սկիզբն դպրութեանս Հայոց լինէր սկիզբն մեծի գիտութեան »։

Ափսոս որ սկզբանն արժանաւոր շարունակութիւնը պակսեցաւ. Հայաստանի թագաւորական ու հայրապետական աթոռներն իսկոյն ինկան կամ իրենց նախկին պայծառութիւնը կորսնցուցին. արտաքին պատերազմունք և ընտանի երկպառակութիւնք՝ կարկտախառն փոթորիկով մը Հայաստանի գեղեցիկ ու ծաղկազարդ գարունը կ'անապատացնէին։

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Սուրբն Սահակ Պարթեւ։ — Համառօտութիւն իւր սուրբ և բազմարդիւնեան վարուց։ — Ազդեցութիւնն ազգին քաղաքական պատմութեան և մտաւոր բարգաւաճմանց վրայ։ — Գրուածներն։

Մեծին Ներսիսի որդին էր սուրբն Սահակ Պարթեւ. իւր հօրը մահուանն ատեն՝ Կոստանդնուպոլսի մէջ ուսմանց կը պարապէր։ Հոն սրբասէր ու մաքուր հոգին՝ աշխարհի կեանք ընտրելը հարկ համարեց, որպէս զի Լուսաւորչայ նուիրական ցեղը Հայաստանէն չվերցուի։ Բայց Աստուած՝ որ իւր բարեացն ու շնորհաց չճանչցող Հայաստանը խրատելու աղէտք սահմանած էր, ուզեց որ նոյն ցեղին վերջին շառաւիղն ըլլայ սուրբն Սահակ. ուստի միայն դուստր մը պարգեւեց իրեն Սահականոյշ անունով։

Այս բանիս համար՝ կարգէ դուրս տխրութեան մը մէջ ինկած էր սուրբն Սահակ, և անոր դարմանը յԱստուծոյ կը խնդրէր, Վաղարշապատու եկեղեցւոյն մէջ իւր սրտին ցաւերն ու վիշտերը՝ մխիթարիչ Աստուծոյ մը առջեւը ձգելով արտասուօք, հոն տեսլեամբ մը յայտնեց Աստուած քիչ ատենէն Հայոց աշխարհին վրայ հասնելիք չարիքն, ու անոնց հետեւանք թագաւորական և հայրապետական իշխանութեանց միանգամայն դադրիլը։

Գերագոյն կամաց հպատակելով Սահակ, ինքզինքը բոլորովին Աստուծոյ և ազգին բարւոյն ընծայեց. մէկ կողմանէ աղօթից ու ճգնութեանց պարապելով, և միւս կողմանէ իրեն արժանի աշակերտներ բազմացնելով, և

անոնց թէ հոգեւոր և թէ մտաւոր յառաջադիմութեան համար ջանալով և յոգնելով։

Անով ազգին մէջ ընդհանուր և սիրելի համբաւ մը ըստանալով, Ասպուրակէս կաթուղիկոսին մահուընէն ետքը՝ բոլոր ժողովուրդն իր Խօսրով թագաւորին հետ միասին՝ անոր յանձնեց հայրապետական աթոռը։ Բայց որովհետեւ այս ընտրութեան մէջ՝ նախ Պարսից թագաւորին կամքը չէր հարցուած, ուստի Շապուհ՝ Խօսրով թագաւորին վրայ բարկանալով, թէ զինքը և թէ զսուրբն Սահակ զրկեց իրենց իշխանութենէն. Թէպէտ քիչ ժամանակէն նորէն հաստատեց զինքը իւր պատուոյն մէջ և Խօսրովու տեղն ալ թագաւորեցուց անոր Վռամշապուհ եղբայրը։

Այն միջոցին սուրբն Մեսրոպ եկաւ առ Սահակ, և այս երեք նշանաւոր անձանց ջանքովն ու աշխատութեամբ՝ հայերէն մատենագրութեան ոսկեդարին հիմունքը ձգուեցան։ Վասն զի անոնց փութովն եղաւ հայերէն գրոց գիւտը, անոնք բացին այլ և այլ վարժարաններ՝ Հայաստանի մանկութիւնն ու երիտասարդութիւնը կրթելու, և այս երկուքին ձեռքովն եղաւ աստուածաշունչ գրոց թարգմանութիւնը։

Երբոր իրենք այս գործերուն զբաղած էին, Վռամշապուհ թագաւորն մեռաւ. ուստի և նախարարք՝ զսուրբն Սահակ զրկեցին առ թագաւորն Պարսից Յազկերտ Ա, խնդրելով որ զԽօսրով Գ՝ զոր Շապուհ արքայն իշխանութենէն զրկելով՝ բանտի մը մէջ փակեր էր, նորէն թագաւորեցնէ Հայոց վրայ. Յազկերտ ալ սրբոյն խնդիրքը կատարեց։ Այսպէս քանի մը տարի վերջ ալ՝ երբոր նոյն Յազկերտ թագաւորը՝ Պարսկաստանի մէջ բնակող քրիստոնէից դէմ սաստիկ հալածանք մը հանեց, սուրբն Սահակ իւր իմաստուն խօսքերովն՝ անոր սիրտը քաղցրացուց քրիստոնէից վրայ։

Տարիէ մը ետքը երբոր Յազկերտ մեռաւ, և այն պատճառաւ այլ և այլ խռովութիւններ ելան Պարսից աշխար-

հին մէջ, Սահակ հետն առնելով իւր թոռները՝ Մեսրովպայ հետ միասին Հայաստանի այն մասը գնաց որ Յունաց իշխանութեան տակն էր․ բայց որովհետեւ այն գաւառները Կեսարիոյ եպիսկոպոսին վիճակն էին, ուստի տեղւոյն վերակացուք չընդունեցան զսուրբն Սահակ, որ այս բանին վրայ վշտանալով՝ զսուրբն Մեսրովպ իւր Վարդան թոռան հետ ղրկեց առ Թէոդոս փոքր, և խնդրեց իրմէ որ կարենայ իւր հայրապետական իշխանութիւնը բանեցնել Հայաստանի այն բաժնին վրայ ալ՝ որ Յունաց իշխանութեան տակն էր։ Կայսրը շնորհեց իրեն խնդիրքը, և զսուրբն Վարդան՝ ստրատելատութեան պատուով մեծարեց։

Բայց Նախարարք զինքը նորէն Պարսից բաժնին մէջ հրաւիրեցին, որպէս զի Վռամայ ձեռքովը Թագաւորեցնէ զԱրտաշիր՝ զորդին Վռամշապհոյ։ Սուրբն Սահակ յանձն առաւ իրենց առաջարկութիւնը, և սկսաւ աւելի փութով եռեւէ ըլլալ Հայաստանի բարեկարգութեան։ Սակայն երբ Արտաշիր իր անառակ վարքովը՝ Նախարարաց սիրտն իրմէն պաղեցուց, անոնք ուզեցին զինքը Վռամայ ձեռքով Հայոց Թագաւորութենէն զրկել, և խնդրել իրմէ որ անկէ ետքը պարսիկ մարզպան մը ղրկէ Հայաստանի վրայ․ և իրենց այս խորհրդեան կամակից կ'ուզէին ըզսուրբն Սահակ։ Աստուածարեալ հայրապետին ոչ արցունքէն կակղացան, և ոչ զօրաւոր խօսքերովը համոզուեցան այն վնասակար խորհուրդէն ետ կենալու․ մանաւանդ թէ տեսնելով որ կը հակառակի իրենց կամացը, Նախարարներ ղրկեցին առ Վռամ, և միանգամայն ամբաստանեցին թէ զԱրտաշիր և թէ զՍահակ։ Թագաւորը երկուքն ալ Դուռը կանչեց, և զրկեց՝ մէկը իւր արքունի և միւսը իւր հայրապետական իշխանութենէն։ Բայց երբ ետքը նորէն իւր հայրենիքը կը ղրկէր զՍահակ, և միայն ձեռնադրութեան իշխանութիւնը տալով կը յորդորէր զինքը որ միամտաբար Պարսից ծառայութեան մէջ մնայ, և Յունաց հաւատակցութեամբը չխաբուի, հրաշալի ատենախօսութիւն մ'ըրաւ սուրբն Սահակ․ ցուցնելով, կ'ըսէ Խորենացին, «զերախտիս ծառայութեան և զապերախտն ի նոցանէ լինել․ ընդ նմին և զկեղծաւոր քաղցրաբանութիւն նոցա յանդիմանելով և զդաւանութիւն խորհրդոց, և զգործս չարաչարս․ յարելով ի նոսին զընդդիմաբանել անմիտ հայհոյութեանց արտաճառելոց, զոր ասաց մոլար հաւատակցութիւն․ և զնոցայն խայտառակելով պաշտամունս, կատարեալ ի հրաշալի աստուածաբանութիւն, ըստ հանդուրժելոյ հեթանոսական լսելեաց»․ այնպէս որ մոգերուն բերանը խօսք չմնաց․ Թագաւորը բոլոր անձնագեղ Պարսից հրապարակին բազմութեամբ զարմանքով մտիկ ընելէն ետքը, հրաման տուաւ որ շատ ստակ տան իրեն՝ «իբրեւ քաջաբանի և ուժգնասրտի առն համարձակախօսողի առաջի այնքանոյ Թագաւորին»։ Բայց սուրբն Սահակ ոչ իրեն և ոչ իրեններուն զարմանքը բանի տեղ դրաւ, և ոչ ալ տուած ընծաներուն մօտեցաւ։

Ժամանակ անցնելէն ետքը՝ Նախարարք անոր աթոռը անարժանապէս գրաւողներուն ձեռքէն ձանձրանալով, խնդրեցին իրմէ որ նորէն նոյն Նուիրական գահուն վրայ նստի․ բայց սուրբն Սահակ յանձն չառաւ․ «Քահանայանալ ի վերայ տիրանենգ ժողովրդոց ոչ կարեմ» ըսաւ․ և Դուին քաղաքին քովերը քաշուեցաւ․ յետոյ Բագրեւանդայ մէջ կնքեց իւր բազմարդիւն կեանքը, գրեթէ իննսնամեայ հասակին մէջ։

Սահակայ վրայ թէ ժամանակակից և թէ յետագայ պատմիչք՝ ամենքը զարմանքով կը խօսին, հաւասար գովելով անոր սրբութիւնն ու իմաստութիւնը։ Մենք բազմապատիկ վկայութեանց մէջէն՝ միայն Խորենացւոյն խօսքերը մէջ բերենք․ «Մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող․ պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանն»։

⁂

Սահակայ գրաւոր երկասիրութեանցը մէջ նշանաւոր եղած են այլ և այլ թարգմանութիւններ, և մանաւորաբար Աստուածաշունչ գրոց թարգմանութիւնն, որուն վրայ զատ պիտի խօսինք։

Ինքնագիր գրուածոց մէջ ամենէն աւելի նշանաւոր կրնանք համարել, գէթ մինչեւ հիմա մեր ձեռքը հասածներուն մէջ, կանոնական թուղթ մը՝ վեց գլուխ բաժնուած, զոր ի Վաղարշապատ գումարած ժողովքէն վերջը ղրկեց, գեղեցիկ և ընտիր շարագրութեամբ։ Մեր եկեղեցական պատմութեան և մատենագրութեան արժանապէս պարծանք այս գրոց խորագիրքն են.

Ա· Յաղագս եպիսկոպոսաց թէ որպէս պարտ է ունել զընտանիս սուրբ եկեղեցւոյ։

Բ· Թէ որպէս պարտ է զկանոնական զկարգն հաստատուն պահել յեկեղեցիս Աստուծոյ։

Գ· Կարգ քահանայից առ ժողովրդեանս, և նոցին ժողովրդականաց հնազանդութիւն, և կարգ ուղղութեան առ քահանայս։

Դ· Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց։

Ե· Թէ որպէս պարտ է եպիսկոպոսին պահել զգանձս եկեղեցւոյ, կամ որոց որպէս մատակարարել։

Զ· Գիր աւանդութեան յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցւոյ և պտղոց ժողովրդականաց ընծայելոց ի տուն Աստուծոյ։

Զորրորդ գլխոյն վերջը՝ հետեւեալ յիշատակարանը գըրուած կը տեսնենք. « Այս սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ սրբոյն Սահակայ մեծ հայրապետին Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ նահատակէն ի

տեառնէն Գրիգորէ՝ թարգմանեցաւ միայն ի Յունէ ի Հայս »։ Խորենացի մէջ կը բերէ ի Սահակայ գրուած թղթեր առ կայսրն Թէոդոս, առ Ատտիկոս եպիսկոպոս, առ Անատոլիոս, և իրենցմէ ընդունած պատասխաններն։ Ասոնցմէ զատ հասած են առ մեզ երկու դաւանական թուղթեր առ Պրոկղ հայրապետ Կոստանդնուպոլսի, և առ Ակակ եպիսկոպոս Մելիտինոյ։

Փարպեցւոյն գրոց մէջ՝ Վաղարշապատու եկեղեցւոյն մէջ յայտնուած տեսլեան նկարագիրն ալ կայ՝ իրմէն պատմուած առ նախարարս. զոր յետին դարուց մատենագիրք ալ կը յիշատակեն, և մանաւորաբար Մագիստրոս. նոյնպէս կը յիշէ զայն Վասիլ կայսեր թոռն Կոստանդին Պորփիւրոժէն, և կը յարմարցնէ զայն Վասլի թագաւորութեանը։ Լամբրոնացին որովհետեւ նոյն տեսլեան վկայութիւնը չի գտներ Խորենացւոյն գրոց մէջ, ուստի և անոր հարազատութեան վրայ տարակուսիլ կը ցուցնէ. « Տեսիլն այն, կ'ըսէ, ոչ հաստատի առ մեզ գոլ սրբոյն Սահակայ, այլ ի կարծիս մնայ, վասն ոչ առնելոյ նմա ի գիրս իւր յիշատակ Մովսիսի Խորենացւոյ »։

Ազգային եկեղեցական գրոց կարգաւորութեան մէջ ալ շատ աշխատանք ունի սուրբն Սահակ. բայց օրհնութիւնքներ կոչուած ցուցակին մէջ՝ մանաւորաբար իրեն կ'ընծայուին հետեւեալներն. « Իսկ զՔահանայօրհնէան՝ սրբոյն Սահակայ գծեալ՝ յետ քսան և մի ամի արքեպիսկոպոսութեան իւրոյ՝ ի Նաւասարդ ամսոյ որ օր մի էր, և ի Քահանայաթաղն այլ՝ յաւել եօթն աւետարան. նոյնպէս և զԱշխարհաթաղն, ի Քաղաքուղաշտի ի վկայարանս սրբոց Հռիփսիմեանց. յետ հարիւր և քսան և մի ամին սրբոյն Գրիգորի, զի մինչեւ ցայն վայր հնոյն վարէին։ Արար սուրբն Սահակ և զչորս քարոզսն զգիշերոյ և զնոցին աղօթսն »։ Յովհան Իմաստասէրն ալ կը յիշէ թէ ինքը սուրբն Սահակ յօրինած ըլլայ գիշերային ժամակարգութեան չորս աղօթքները. բայց իւր մէջ բերած աղօթքները կը զանազանուին հիմնականներէն։ Յայսմաւուրաց մէջ ալ կը կարդանք. «Կարգեաց կանոնս համաշխարհականս՝ եպիսկոպոսաց և աշխարհի երիցանց և վանաց՝ զի մի ամբոխեսցին ընդ միմեանս, վասն մոլիցն որ ի ժողովրդենէն։ Նոյնպէս և վանաց որ առնթեր գիւղից և քաղաքաց էին, և անապատականաց. զի ամենայն ոք գիտասցէ զիւր մասն։ Արար և զչորս աղօթսն՝ որ ասի ի գիշերի, խւրեանց քարոզիւքն և հանգստիւքն»։

Աւագ շաբթուն մէջ երգուած շարականներն՝ Պարթեւ հայրապետիս կ'ընծայուին, որոնք իրենց պարզ ու մաքուր լեզուովը, բանաստեղծական հանճարով և ամփոփած գեղեցիկ իմաստներով՝ նոյն սքանչելի գրքին գերազանց կտորներն կրնան համարուիլ արժանապէս։

Ս. Սահակայ Կանոնական թղթին և գրած նամակներուն տպագրութիւնն եղած է ի Վենետիկ (Սոփերք հայկականք Հատ. Բ) ի 1852. առաջինն հրատարակուած է նաև յԱրարատ ամսագրի Էջմիածնի և առանձինն։

Ս. ՄԵՍՐՈՊ

Ս. Մեսրովպայ վարքը։ — Արքունեաց մէջ սպասաւորութիւնը։ — Առանձնութիւնն և հրաժեշտ յաշխարհէ։ — Աշակերտութիւնն ընդ սրբոյն Սահակայ։ — Հայկական գրոց գիւտը։ — Իր մեծ արդիւնքը եկեղեցական հայկական մատենագրութեան։ — Գրաւոր երկասիրութեանց յիշատակը։

Հայկական դպրութեանց ծաղկելուն նախկին առիթ ու բարգաւաճեցնող անձը՝ երանելին Մեսրոպ կամ Մաշտոց՝ Տարօն գաւառին Հացեկաց գիւղէն էր, Վարդան

անունով մէկու մը որդի։ Մանկութեան հասակէն հելլենական դպրութեան վարժած՝ Հայոց Արշակունի թագաւորաց Վաղարշապատ քաղաքը եկաւ, և արքունական դիւանին պաշտօնէից մէկն եղաւ։ Տեղեակ և հմուտ աշխարհական կարգերու, զինուորական արուեստին ալ իր ձեռքին տակն եղած զինուորներուն սիրելի անձ մ'էր։

Բայց քիչ ատենէն յաշխարհական մեծութեանց հրաժարելով՝ թողուց արքունիքը և լերանց և անապատներու միայնութեան մէջ Աստուծոյ հաճոյ ըլլալու կը ջանար։ Իր սրբակաց վարուցը հետեւողներ ալ ունեցաւ Մեսրոպ, և անոնց հետ միասին գնաց Գողթն գաւառը, տեսաւ այն երկրին բնակչաց վայրենութիւնը, և թափանցող մտքովը իմացաւ թէ աւերիչ տգիտութիւնը իւր երկաթի ու ծանր ձեռքը տարածելով բոլոր Հայաստանի վրայ՝ այն նախանձելի աշխարհը անմարդի վայրենեաց բնակարան մը պիտի դարձնէր։ Ասիկայ իր սրտին մեծ ցաւ եղաւ. և դարմանը գտնելու համար գնաց առ սուրբն Սահակ. և երկուքը միաբան առ Վռամշապուհ թագաւոր, և հայերէն գրոց գիւտին համար կ'աշխատէին. որուն համար եղած ջանքն և յաջողութիւնը արդէն գրոցս պատրաստութեան մէջ պատմած ենք։

Երբ իմացան թագաւորն և սուրբն Սահակ՝ Մեսրոպայ եղած աստուածային յայտնութիւնը, և անոր դառնալն ի Հայաստան և թագաւորական քաղաքին մօտենալը, բոլոր նախարարներն իրենց հետ առած՝ Ռահ գետին քովերը հանդիպեցան երանելւոյն, և կարգէ դուրս ուրախութիւն և աստուածային խնամոց շնորհակալութիւն մատուցին։

Այն ատեն թագաւորէն հրաման առաւ Մեսրոպ՝ Մարաց խուժադուժ կողմանքն ալ հրահանգելու. ու թէ անոնց և թէ բոլոր Հայաստանի օգտին համար ձեռք զարկաւ թարգմանելու Աստուածաշունչ գիրքը. և նախ քանի մը օգնական հետն առնելով, (որոց առաջնոյն անունը Տիրայր Խորձենացի, և երկրորդին Մուշէ Տարօնացի, և ուրիշներ) անոնցմով Գողթն գաւառն իջաւ, ու Շաբիթ անունով իշխանի մը ձեռնտուութեամբ սկսաւ քարոզել և ուսուցանել։

Անկէ՝ Գողթն գաւառին սահմանակից Սիւնեաց աշխարհը գնաց. և տեղւոյն Վաղինակ իշխանէն օգնութիւն գտնելով, դայեկաբար՝ կ'ըսէ պատմիչը, գազանամիտ, վայրենագոյն, և ճիւաղաբարոյ մարդիկը կը խրատէր. ու Անանիա անունով մէկը տեղւոյն եպիսկոպոս կարգելով, բոլոր աշխարհը վանականներով կը լեցնէր։

Քիչ ժամանակ անցնելէն ետքը՝ աստուածային տեսլեամբ նաև Վրաց աշխարհին նշանագիր ստեղծեց։ Ետքը իր ընտիր աշակերտներէն ոմանք իր հետ առնելով՝ ներկայացաւ Վրաց Բակուր թագաւորին և Մովսէս եպիսկոպոսին, թէ անոնց և թէ բոլոր աշխարհին գլխաւորներուն ընդունելի եղաւ։ Ջաղա անունով մէկը գտնելով՝ Վրաց լեզուին թարգման, գրագէտ և ճշմարտահաւատ անձ մը, թագաւորին հրամանով աշակերտաց բազմութիւն ժողովեց, և յանձնեց անոնց կրթութեան խնամքը։

Իրեն աշակերտաց գաւառացը կրկին այցելութիւն ընելէն ետքը՝ սուրբն Մեսրոպ սկսաւ մտածել Հայաստանի այն մասին վրայ՝ որ Յունաց թագաւորին իշխանութեան տակն էր. և շատ աշակերտներ հետն առած հոն անցաւ. և որովհետև արդէն իր բարի համբաւը տարածուած էր, ուստի և մեծ սիրով կ'ընդունէին զինքը աշխարհին եպիսկոպոսունքն և իշխաններն ու գաւառականները. և մանաւանդ Անատոլիոս սպարապետն՝ որ Յունաց երկիրը մտնելուն պէս սիրով ընդունեցաւ զՄեսրոպ և առ Թէոդոս կայսր մասնաւոր նամակ մը գրեց սրբոյն համար. որով և թագաւորն ալ հրամայեց որ Ակումիտ պատուանունը տան սրբոյն։

Մեսրոպ իւր աշակերտները Մելիտինէ քաղաքը տանելով՝ տեղւոյն Ակակիոս եպիսկոպոսին յանձնեց զանոնք. ետքը անոնցմէ գլխաւորներէն մէկը՝ զՂեւոնդ հոն թողլով, ինքն

առաւ հետն Գերջանայ եպիսկոպոսը՝ զԳինթ, և ուրիշ քանի մը հոգի և անոնցմով գնաց ի Բիւզանդիոն. ուր թէ կայսրէն և թէ Ատտիկոս հայրապետէն մեծարանք, պատիւ և ընդունելութիւն գտաւ։

Հոն քիչ մը ատեն կենալէն ետքը՝ իմացուց կայսեր իր իշխանութեան տակ եղող Հայերուն խեղճ ու ցաւալի վիճակը, և հրաման առաւ իրմէ՝ որ կարենայ դպրոցներ բանալ՝ ու պէտք եղած տեղերը նաև եկեղեցիներ հաստատել։ Մեծ պատուով և փառօք դարձաւ Մեսրոպ իրեններովն իր նպատակին տեղը, և հոն Հայոց սպարապետին հանդիպելով, կայսեր տուած հրամանագիրը ցուց. նա ալ՝ անմիջապէս մարդիկ ղրկեց, բոլոր այն գաւառները, շատ տղայոց բազմութիւն ժողվել տուաւ, և անոնց ռոճիկ սահմանեց. սուրբն Մեսրոպ ալ իրեններովը միասին զանոնք սորվեցնելու ետևէ կ'ըլլար։

Անկէ ետքը, կ'ըսէ պատմիչը, «երանելւոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ, սակեալ և վճարեալ, և բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ ստացեալ, ծովացուցանէր զվարդապետութեանն զխորութիւն, և լցեալ զեզոյր ամենայն բարութեամբ»։

Այն օրերը Բենիամին անունով Աղուան մը եկաւ առ սուրբն Մեսրոպ, ուսկից տեղեկանալով Աղուանից լեզուին հանգամանքը, անոնց ալ նշանագիր ստեղծեց և ղրկեց հոն իւր աշակերտներէն զԴանան և զԵնովք։ Իսկ ինքը շատ աշակերտներով նորէն Վաղարշապատ քաղաքը դարձաւ առ Ս. Սահակ և առ Թագաւորն, պատմելով անոնց աստուածային շնորհաց յաջողութիւններն։

Վերջը Աղուանից կողմերն անցաւ, և տեսաւ գաւառին եպիսկոպոսը զԵրեմիա, ու անոնց Արսվաղէն թագաւորը. և իմացնելով անոնց իւր գալստեան պատճառը, յորդորեց իրենց յանձն առած դպրութեանը խնամք տանիլ։ Անոնք ալ հրաման տուին բոլոր գաւառներէն և իրենց իշխանութեան տեղերէն դաս դաս տղայոց գումարել, և դարմանել արքունի ծախքով։

Երբ այս հրամանը թէ արդեամբք և թէ գործով կը կատարուէր, Երեմիա եպիսկոպոսն աստուածաշունչ գրոց թարգմանութեան եռեւէ կ'ըլլար. որով նոյն աշխարհին շատ մեծ օգուտ առաջ կու գար։ Հոն սուրբն Մեսրոպ իւր Յովնաթան աշակերտը ձգելով, Վրաց աշխարհն անցաւ և Տաշրաց Աշուշայ իշխանին ձեռնտուութեամբ թէ դըպրութիւնը և թէ հաւատոց ճշմարտութիւնը նորէն հաստատեց։

Անկէ Հայաստան դարձաւ Մեսրոպ, և Սահակայ հետ միասին սկսան թարգմանութեան եռեւէ ըլլալ. « Սկսեալ, կ'ըսէ Կորիւն, երանելւոյն Մաշթոցի (Մեսրոպայ) ճառս յաճախագոյնս գիրապատումս շնորհագիրս բազմադիմիս, ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան. յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորաց աստի, առաւելագոյն վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն՝ յերիւրեալ կազմեալ, զի հեշտընկալք և դիւրահասոյցք տխմարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին. առ ի սթափել և զարթուցանել, և հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել »։

Այսպիսի արդիւնաւոր կեանք մը կնքեց Մեսրոպ, սըրբոյն Սահակայ մահուընէն գրեթէ վեց ամիս ետքը. և Օշական գիւղին մէջ ամփոփուեցաւ. « Գերազանցեալ, կ'ըսէ Խորենացին, քան զամենայն որ զայնու ժամանակաւ էին առաքինիք։ Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր։ Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, միտք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդականութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ »։ Մեսրովպայ ուրիշ անանուն կենսագիր մ'ալ այսպէս կը գրուատէ զինքը. « Էր վարդապետն Մեսրովպ ամենեւին հեզ բարուք և երկայն խորհրդովք, տեսլեամբն հրեշտակակերպ և ծննդական միտք ի բանս. բանիւ պայծառ և խորհրդովն մաքուր. գործովն ժուժկալ և հաւատովն ուղղափառ. յուսով համբերող և սիրովն անկեղծ. ուսուցանող անձանձրոյթ, և ի պատասխանատրութիւնս ստուգաբան. որ և երկրորդ Լուսաւորիչ գտաւ Հայոց յետ սրբոյն Գրիգորի։ Եւ ի սուրբ հայրն մեր և վարդապետն Մեսրովպ, բնաւ ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն ոչ գտաւ երբեք »։

Մեսրոպայ մեծարեալ և նուիրական դամբանին վրայ՝ Վահան Ամատունի 441ին սուրբ եկեղեցի մը կառուցանել տուած էր ի յիշատակ և ի փառս մեծ և բարերար անուանը և արդեանց։ Փիլիպպոս կաթողիկոս 1635ին նորոգել տուաւ զայն։ Ժամանակին աւերիչ ձեռք և բռնութիւնք՝ այն սիրալիր սրբավայրին ալ չխնայելով՝ լքեալ և խոպան դիրքի մը մէջ գտաւ զայն կաթողիկոսն Գէորգ Ե. և Ռուսիոյ Հայոց յօժարափոյթ նուիրօք՝ հոյակապ եկեղեցի մը կառոյց ի 1879։ Իսկ ի 1882՝ Էջմիածնի միաբաններէն Անդրէաս եպիսկոպոս Կոստանդնուպոլսեցի՝ սուրբ գերեզմանին վրայ մասնաւոր տապանաքար մ'ալ դնել տուաւ հանդերձ արձանագրութեամբ։

⁂

Մեսրոպ իր այնչափ աշխատանացը մէջ՝ անդադար էր և ի թարգմանութիւնս. ինքը առաջին եղաւ՝ որ իւր աշակերտաց գլխաւորներուն հետ միասին՝ հայերէն գրոց գիւտը յԱստուծոյ ընդունածին պէս, սուրբ գրոց թարգմանութեան եռեւէ եղաւ. դարձեալ ինքն եղաւ ազգային եկեղեցական ծխարանը կարգի դնող, այլ և այլ աղօթքներու թարգմանութեամբ կամ ինքնագիր յօրինմամբ, որ և իւր մականուամբը Մաշտոց կոչուած է։ Գեղեցիկ և իւր տեսակին մէջ անհամեմատ երկասիրութիւն մը, որուն մէջ հաւասար կը փայլին յօրինողին աստուածապաշտ եռանդը, բնատուր հանճարը և մաքուր լեզուն։ Ասոնցմէ զատ՝ աւանդութիւնն իրեն կ'ընծայէ նաեւ մեծ պահոց շարականներն և քանի մը համառօտ աղօթքներ։ Այսպէս նաեւ ի վերջ սրբոյ Լուսաւորչին ընծայուած Պատարագամատուցի՝ ընտիր և ջերմեռանդն աղօթք մը յանուն «Մեսրոպայ վարդապետի»։ — Իւր աշակերտն և վարուց պատմիչ՝ Կորիւն կ'աւանդէ թէ բաց ի թարգմանութեանց, կենաց վերջի տարիներուն և աստուածանուէր առանձնութենէն «բազում թուղթս խրատագիրս և զգացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր»։

ԹԱՐԳՄԱՆԻՉՔ

Թարգմանիչք և իրենց դասակարգութիւնն։ — Ուսումնական ուղեւորութիւնն յԵդեսիա, ի Կեսարիա, յԱղեքսանդրիա, յԱթենս, ի Հռոմ և ի Բիւզանդիոն։ — Դարձն ի հայրենիս։ — Հայաստանի քաղաքական վիճակը։ — Գտած ընդունելութիւնն և յաջողութիւնք։ — Թարգմանչաց բիւրը։ — Առաջին թարգմանիչք։ — Երկրորդ կամ կրտսերագոյն թարգմանիչք։

Հայերէն դպրութեանց պատմութիւնը կ'աւանդէ, թէ սուրբն Սահակ և Մեսրոպ՝ մեր լեզուին գրոց գիւտը անմիջապէս կատարելէն ետքը՝ ետեւէ եղան աշկերտներ ժողվելու և զանոնք կրթելու. լեզուն սորվեցնելու, և ազգին պիտոյից յարմար ծառայութեան վիճակի մը մէջ դնելու։ Ասոնք են որ ընդհանուր անուամբ Թարգմանիչք կը կոչուին։

Այն քան տարուան միջոցին մէջ՝ որ ընդ գիւտ գրոյն և Արշակունեաց թագաւորութեան իյնալը և Հայաստանի Պարսից բռնութեանն ստնակոխ ըլլալը, անտարակոյս բազմաթիւ աշակերտներ հասուցած պիտի ըլլան՝ Հայաստանի ամէն կողմերն հաստատուած վարժարաններն։ Բայց անոնց շատին՝ և ոչ իսկ անունը հասած է մեզի, ինչպէս այն դարուն արդիւնք և մեր գրաւորական պատմութեանց պարծանք՝ բազմապատիկ երկասիրութեանց մնացածներուն ալ՝ որն որուն ըլլալը անծանօթ է։

Մենք այնչափ երկար միջոցի մէջ վարժած աշակերտաց թիւը՝ երկու դասակարգի կը բաժնենք, ոմանք առաջին թարգմանիչք կոչելով, և ոմանք ալ երկրորդ կամ կրտսեր թարգմանիչք։ Առաջին համարուած են անոնք որ սրբոյն Մեսրոպայ հայերէն գիրը հնարած կամ կատարելագործած ժամանակ՝ բաւական հասակ ունէին, և կրնային իրենց վարդապետաց օգնական և գործակից ըլլալ ի թարգմանութիւնս. իսկ կրտսերագոյն թարգմանիչք անոնք են՝ որոնց համար կ'աւանդուի թէ առաջին թարգմանչաց աշակերտներ էին, և անոնց քով իրենց ուսումը կատարելէն ետքը՝ ղրկուեցան իրենց վարդապետներէն այլ և այլ քաղաքներ, աւելի հմտանալու այն արուեստին։ Այս կարծեաց ստուգութեան երաշխաւորութիւն կրնանք համարել այլ և այլ ժամանակակից պատմագրաց խօսքերն։

Ասոնց վրայ՝ գրուածքիս տանելուն չափ՝ համառօտ տեղեկութիւն մը տանք.

⁂

Վռամշապուհ թագաւոր ըստ խնդրոյ Ս. Սահակայ և Մեսրոպայ մասնաւոր արքունական հրամանով մը պատուիրեց որ բոլոր Հայոց աշխարհին մէջ ուշիմ և իրենց ապագայ յառաջադիմութեան վրայ յոյս տուող մանկունք ընտրուին և ղրկուին առ թագաւորն։ Հրովարտակը՝ իւր ազդեցութիւնն ունեցաւ. ու Մեսրոպայ և Սահակայ պատրաստած վարժարանաց մէջ ցրուեցան մանկունքն՝ յունական, ասորի և պարսիկ լեզուաց գիտութեան զբաղելու, (որովհետեւ այն լեզուներն էին ժամանակին մեր մէջը գործածական բարբառները). և միեւնոյն ժամանակ իրենց վարդապետաց հետ աշխատիլ՝ հայերէն գրոց գիւտին համար։ Երբ Ս. Մեսրոպ իւր փափաքած խնդրոյն հասաւ, թագաւորը սուրբ հայրապետին հետ միասին հրաման տուաւ որ այն գրերուն աշակերտող քաջավարժ մանկունքն առաջ անցնին, և անոնցմէ ընտրուեցան վաթսուն հոգի, որոնց համար ժամանակին բոլոր պատմիչք՝ տրամախոհք, քաջուշեղք, փափկալանջք, երկարոգիք, կատարեալ և ամենայարմար անուններ կու տան։

Թագաւորը՝ իւր բոլոր արքունական գանձը, ոյժն ու ազդեցութիւնը՝ անոնց և աշխարհին յառաջադիմութեան կը գործածէր. անոնք ալ թագաւորին ջանիցն ու փութոյն արժանաւոր կ'երեւնային. Հայաստան հայրենեաց ուսումնական յառաջադիմութեան համար ամէն ջանք, ամէն աշխատութիւն դիւրին կ'երեւնար իրենց աչքին. «Գումարէին, հանդերձէին, յաղթանակէին, երկայնաձիգ ճանապարհ հորդէին, ի ծովս ընթանային, ի թեւս թեթեւս թռչէին, յերկիրս փայտակերտս ելանէին, ի սաստնուտ դաշտս անհաստատս յածէին, զմահ քան զկեանս միշտ ընտրէին, աներեւոյթ նպատակի ուշ ունէին»։ Այն ատեններն էր որ յԵդեսիա, ի Կեսարիա, Աղեքսանդրիա,

Աթէնք, Հռովմ, Բիւզանդիոն ճանապարհորդութիւններ կ'ընէին, ու ամէն տեղ արժանաւոր պատիւ և մեծարանք գտնելով, ժամանակին ուսումնականաց մէջ համբաւաւոր, և անոնցմէ շատերէն գերազանց երեւնալով՝ մինչեւ ոմանց նախանձու ալ առիթ տուած են։ Իրենց հոն ունեցած ուսումնական աշխատութիւններն՝ այսպէս կը համառօտէ գրեթէ ժամանակակից անձ մը. «Ծրանային, տքնէին, աշխատէին, ուսանելով, կրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստելով զանձինս յերկս օգտակարս և ի գործս շահաւէտս. ոմանք զտառից գծագրութիւնս շահաւորեալ, ոմանք զխմաստս հաւաքեալ՝ զուսումնականն, զբնաբանականն, զհամարողականն, զերաժշտականն, զաստեղաբաշխականն, զքերականն և զքերթողական, զգործնականն և զտեսական իմաստասիրութիւն։ Ոմանց հաւասարէին գիտութեամբք, քան զոմանս վեհագոյնք երեւէին, ոմանց զարմանալիք թուէին ... ընդ ոմանս դատէին քննութեամբ, զոմանս պատասխանւոյ արժանի ոչ համարէին, հարցաւէրք, բանաւէրք, ընթերցաւէրք»։

Ի Բիւզանդիոն՝ կայսրն Թէոդոս, և Ատտիկոս և Սիսիննիոս հայրապետք՝ իրենց արժանաւոր առատամտութեամբ մեծարեցին այն օտարական հանճարները, որոնք քիչ մ'ատեն Յունաստան կենալով, ոչ միայն յոյն եկեղեցւոյ բոլոր փառքն ի Հայս փոխադրելու աշխատութիւնը վրանին առած էին, այլ և յունական լեզուին կատարեալ գիտութեամբ՝ զամենքը կը զարմացնէին։ Անյաղթն Դաւիթ իւր յունական իմաստասիրութեամբը՝ յաղթութեան պարծանքը կը յափշտակէր. Խորով՝ յոյն եկեղեցեաց մէջ՝ սրբոյն Բարսղի օրհնութիւնները կը կարդար. Մամբրէ՝ Ոսկեբերանի ճառերը կ'արտասանէր. Ղազար և ուրիշներն ալ այնչափ խորամուխք էին յունականին գիտութեան մէջ՝ որ Աթենացի կոչուելու պարծանքը կը ստանային։

Այն երկար և դժուարին ճանապարհորդութիւնները լմնցնելու ատեննին՝ իրենց բարերար Վռամշապհոյ մահը *լսեցին· իմացան թէ իրենց թողած Հայաստանը չէր որ կը սպասէր իրենց, և որուն անձկանօքը կը մաշէին· պարսկական բռնութիւնը սկսած էր զօրանալ· հաւատք իրենց նախկին մաքրութիւնն ու սրբութիւնը՝ աշխարհային շահուց և փառաց զոհելու վտանգի մէջ էր· անոր համար կը փութային ժամ մ'առաջ դառնալ իրենց հայրենիքը· տեսնել հոգևոր ծնողքնին, և գէթ անոնց տեսութեամբ սրտերնուն ցաւը մեղմացնել· իրենց գիտութեամբն և յառաջադիմութեամբ՝ վրանին աշխատող արդիւնաւոր հանճարները մխիթարել:*

Սակայն բոլորովին տխուր տեսարան մը կը սպասէր իրենց Հայաստանի մէջ: Կը դառնային իրենց հայրենիքը· և ահաւասիկ տխուր մահն հողոյ աւանդած էր իրենց սիրելի վարդապետքը՝ զսուրբն Սահակ և զՄեսրովպ: Այն ցաւին վրայ՝ ուրիշ դժնդակ տագնապ մ'ալ կը հասնէր երանելի թարգմանչաց վրայ, ընտանի երկպառակութիւն մը Հայաստանի մէջ, և անոր հետևանք կրօնական պատերազմն ընդ Պարսս:

Այնպիսի սպառնացող ահաւոր չարեաց առջևն առնելու համար՝ Հայաստան աղետից և թշուառութեանց թատր կը դառնար· և մոգութիւնն այն ատեն միայն ամօթապարտ կ'ըլլար՝ երբ Հայաստանի որդիքը թէ՛ ի զինուորական և թէ՛ յեկեղեցական դասուէ՝ իրենց արեամբը փրկութեան զոհ կ'ըլլային հայրենեաց համար:

⁂

Այս քաղաքական մեծ յուզմանէն զատ, որով կործանման վերահաս վտանգի մէջ էին հայրենիք, ուրիշ դժբաղդութիւն մ'ալ կը սպասէր թարգմանչաց· — իրենց ազգակցաց տգիտութեան և նախանձու հետևանք կրելիք դառն հալածանք մը: Իրենցմէ շատերուն գրուածներէն, և մանաւանդ Փարպեցւոյն առ Մամիկոնէից իշխանն Վահան ուղղած նամակին խօսքերէն՝ այնպիսի բացայայտ ակնարկութեանց կը հանդիպինք ժամանակին աբեղայից վրայ, որ դժբաղդաբար շատ հեռի էին անոնց ուսումնասիրութեան և առաքինի քաղաքավարութեան վրայ լաւ տպաւորութիւն մը ազդելէն: Որչափ թարգմանչաց վրայ ամենընտիր սիրտ և եռանդուն գործունէութեան ջանք մը կը նկատենք ազգին մտաւոր և բարոյական զարգացմանն ու յառաջադիմութեան օժանդակելու՝ այնչափ ալ իրենց անուսան և համբաւոյն նախանձորդ ու մախացող թշնամեաց վրայ – զի հարկ է այս անունով կոչել զիրենք – հակառակամարտ ու յարատև փոյթ մը զիրենք և ուսումնին անպատիւ ընելու, այս վախճանին և նպատակին հասնելու համար նաև անարժան միջոցներու և զինուց կիրառութեամբ:

Սահակայ և Մեսրոպայ, իրենց խնամոտ և հայրագութ դաստիարակաց կենդանութեան ատեն՝ դժուարին էր որ հակառակորդք կարենային իրենց դիմաց հանել· այլ այն մեծ և հռչականուն վարդապետաց մահը՝ իրենց աշակերտաց երկարատև հալածանաց և նեղութեանց սկզբնաւորութիւն պիտի ըլլար· որով թէ՛ իրենք և թէ հայրենիք պիտի վնասուէին: Ուստի և իրաւամբ կը փնտռէր զանոնք Խորենացի՝ հառաչանաց արտասուօք Պատմութեան գրոցը վերջը արտասուչ խօսքեր նուիրելով անոնց անմոռանալի յիշատակին, և որ դարէ դար աւանդուելով՝ մինչև առ մեզ հասան. «Ողբա՛մ զքեզ, կ'ըսէր, Հայոց աշխարհ· ողբա՛մ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն· զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող· վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, զրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն: Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմբին, ի քաջէն զրկեալ հովուէ և հովուակցէ»: Եւ խօսքը առաջ տանելով· «Եւ մինչ նոքա զմերն յուսային դարձ, և պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիւս և կատարելագոյն յարմարութեամբս, համայն և մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել՝ անվեհեր երանութեամբ կրթեալք, և առագաստի սանել երգս· արդ փոխանակ խրախճանութեանն՝ ի վերայ գերեզմանի ողբս ասելով ողորմելի հառաչեմ· ուր և ոչ տեսութեանն ժամանեցի աչաց նոցա կափուցմանց, և լսել զվերջին բարբառն և զօրհնութիւն։ Այսպիսի անձկաւ հեղձամղձուկ եղեալ՝ վտանգիմ կարօտութեամբ մերոյ հօրն։ Ո՞ւր է քաղցր աչացն հանդարտութիւն... ո՞ւր զուարթ շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն· ո՞ւր խնդամիտ սիրտն ընդունող արբանեկաց· ո՞ւր երկայն ճանապարհաց յոյս հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցող։ Կորեաւ ժողովողն, թաքեաւ նաւահանգիստն, ելիք օգնականն, լռեաց ձայնն յորդորեցուցիչ։ Ո՞վ այսուհետեւ զմեր յարգեսցէ զուսումն· ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս, ո՞վ զ'այրականն բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդւոյս։ Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետութեանն հակառակ յարուցելոցն· որ ամենայն բանիւք քակտեալք և քայքայեալք... զծիծաղելն զմեւք և զարհամարհելն իբրու զանհաստատնովք, և որ ոչինչ պիտանացու ունիցի արուեստ։ Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով, և զմեզ սփոփեսցէ գովելով, և չափ դնէ բանի և լռութեան... Ոչ գիտեմ եթէ զիա՛րդ յարմարեցից զողբերգութիւնս, և կամ զո՞վ արտասուեցից... Զհա՞յրն իմ և զքահանայապետս... զծնո՞ղն իմ ազնիւ վարդապետութեան, զարդարութեանն առողջ և հեղեղաւ զամբարշտութիւնն սահմանելով· եթէ զիս երաշտացեալ և թարշամեալ պապքութեամբ արբուցման խրատու »։

Ուրիշ մ'ալ՝ ժամանակաւ ոչ այնչափ կրտսերագոյն, հետեւեալ խօսքերով կը նկարագրէ սրբոց Թարգմանչաց ողորմ վիճակը, յետ դարձի նոցա յուսումնական և ի բազմաշահ շրջագայութեանց· « Վաճառականք մեր հոգեւորք,

կ'ըսէ, յորժամ դարձան ի մեծայած ուղեւորութենէն, ոչ գտին զառաքիչսն իւրեանց· զի վախճանեալ էին սուրբքն, և բարձեալ թագաւորութիւնն· քայքայեալ վայելչութիւնն և սպառեալ ուսումնասիրութիւնն... Նսեմացեալ ճշմարտութիւն և զօրացեալ ստութիւն։ Վասն որոյ ողբս առեալ հառաչէին, հաշէին, արտասուս յաչաց կաթեցուցանէին, ձեռն ի ծնօտի հարեալ ողբային... ի զուր ժրացաք, ասէին, ունայն վաստակեցաք, յանպէտ ջանացաք, ընդ վայր իմաստնացաք, յանչահս դեգերեցաք։ Աւա՜ղ երկայնութեան ճանապարհին, մեծագոյն տքնութեանն, յոլով աշխատութեանն, ի ծովու ալէկոծութեանն, ի ցամաքի վաստակելոյն, մեծագին բեռանց կապելոյն։ Վաճառականքս պատրաստք, և վաճառականք չեն ի միջի· պսակքն մերձ, և պսակադիրքս յօժարք, և որք պսակինն չիք առաջի· բանքս ի բերան և ի բանաբերքս իմաստունք, և խնդրողք բանի ոչ երեւին։ Վարդապետք հուպ և ուսումն ազնիւ, և աշակերտեալք ոչ հանդիպին »։

Այս հակառակութիւնն այնչափ բանացաւ, որ Թարգմանիչք ա'լ չկրցան հանդուրժել· ուստի և անոնցմէ ոմանք լաւագոյն համարեցան թողուլ քաղաք, եկեղեցի, վանորայ, տեղիք բնակութեան և ուսմանց, և անապատներու լռութեան՝ անձաւաց միայնութեան մէջ ողբալ թէ իրենց և թէ հայրենեաց վիճակը։ Եղիշէ հետեւող կ'ըլլար անոնց՝ որոց երկնակրօն քաղաքավարութիւնը կը ստորագրէ ուկեղէն լեզուովը· « որ խոյս տան ի խորս և ի ստորոտս անապատ վայրաց, զի տեսանեն զաշխարհս լի ամենայն չարեօք »։ Այսպէս նաեւ ուրիշ շատերն։

Եղան և այլք՝ արիաբար նահատակողք, մինչեւ վերջին շունչերնին մաքառելով, թէպէտ վերջապէս բանադատուեցան տեղի տալ հալածչաց բազմութեան և ուժգին կրից՝ ասպարեզէն քաշուելով։ Փարպեցին առ Վահան գրած թղթին մէջ՝ համառօտ բայց ազդու խօսքերով և լեզուով քանի մը դէպք մէջ կը բերէ, ինքզինքն ալ կրողաց և *յանիրաւի հալածուողաց թուոյն մէջ խառնելով. «Երանելի փիլիսոփան Մովսէս, կ'ըսէ, որ արդարեւ մինչ դեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից, ո՞չ ապաքէն տեղւոջէ ի տեղի արեղեանդ հալածական արարին: Ո՞չ զլուսաւորիչն և զտգիտահալած զգրեանն նորա առ անգիտութեանն փարաղիկես կոչէին, և այլ բազում ինչ իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա յաղագս այլոց ամօթոյ զխարէական զեպիսկոպոսութիւնն նման դեղոց մահու արբուցեալ սրբոյն հեղձուցին... Զոսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի գետ արկանել»: – «Եւ զհրեշտականման այրն զՏէր՝ նոյն անհանգիստ հալածանօք վախճանեցուցանելով, որք և այժմ դեռ եւս անյագութեամբ քինով ընդ մեռելոյն կագին»: Նոյնպէս վարուեցան, կ'ըսէ, և «ընդ անարատ և ամենեցունց յարգելի յոյս Տէր Խոսրովիկ, զայս և ընդ Տէր Աբրահամ և ընդ այլս բազումս, որոց ոչ բացեալ ի բարերան զլեզուս իւրեանց... խառագոյն վշտիւ վախճանեցան»: Ուրիշ յիշատակագիր մ'ալ հետեւեալ խօսքերով՝ երանելի թարգմանչաց տխուր վիճակը կը նկարագրէ. «Յետ փոխման սրբոյն եկին աշակերտք նոցա յԱթենայ, ճոխացեալ և փարթամացեալ ուսմամբ. Մովսէս քերթողն, և Դաւիթ Անյաղթն, Մամբրէ Վերծանողն, և Եղիշէ Պատմագիր, Ղազար Փարպեցի և Եզնակ Կողբացի, Ստեփանոս Ասողնիկն և այլք ոմանք: Եւ ոչ ժամանեալ սուրբ հարցն ի կենցաղս, ողբս առեալ լացին ի վերայ գերեզմանացն, և նըստան լռութեամբ, անընդունակ լեալ ի խստապարանոց... ազգէս Հայոց»:*

* * *

Վահանայ մարզպանութեան ատեն պարսկական գըրգռութեանց հանդիսարան եղող Հայաստանը՝ քիչ մը ատենուան համար իր հանգստութիւնը գտնելու բաղդը կ'ունենար, որով և թարգմանչաց ալ ժամանակ և պատեհ կու տար իրենց ուսումնական զբաղմանց ետեւէ ըլլալու:

Թարգմանչաց գլխաւոր երկասիրութիւնները՝ թարգմանութիւնք ըլլալով, անոնց վրայ զատ պիտի խօսինք: Բայց որովհետեւ գտնուած են մէջերնին այնպիսիք ալ՝ որ ինքնագիր երկասիրութիւններ թողուցած են, կարգաւ մը անոնց վրայ խօսինք համառօտիւ, և նախ անոնց թուոյն վրայ:

Թարգմանչաց թուոյն վրայ՝ որոշ տեղեկութիւն չենք կրնար ունենալ. բայց որովհետեւ զանազան դպրոցներու մէջ և այլ և այլ ատեն կրթուեցան, մեզի կ'երեւնայ թէ սուրբն Մեսրոպ և Սահակ՝ բոլոր Հայաստանի մէջ եղող դպրոցներու մէջ իրենց արժանի բազմաթիւ աշակերտներ ունեցած պիտի ըլլան. որոնց շատին և ոչ անունը մինչեւ մեզի հասած է: Գրոց մէջ յիշատակուողներն ասոնք են:

Առաջին աշակերտք

ՅՈՎՍԷՓ *ի Վայոց Ձորոյ, որ կաթուղիկոսական աթոռոյ արժանի եղաւ, և Արտաշատու ժողովոյն մէջ նախագահ բազմեցաւ, ինչպէս իր ընկերակիցն Կորիւն վկայէ. «Գլխաւոր վերակացուս տեղապահս յայտ արարին, կ'ըսէ, հարցն կատարելոց: Որոց առաջին Յովսէփ՝ գլխաւոր ժողովոյն».*

Յովսեփայ հետ վերակացու և տեղապահ կարգեցաւ նաեւ.

ՅՈՎՀԱՆ, *որ սրբոց Ղեւոնդեանց մահուընէն ետքը՝ Տիզբոն քաղաքին մէջ Քրիստոսի յուսոյն համար այլ և այլ չարչարանք քաշելով՝ խոստովանող կոչուեցաւ: «Երկրորդն այլ աշակերտ, կ'ըսէ նոյն Կորիւն, Յովհան անուն, այր իսկ սուրբ վարդապետասէր և ճշմարտապա-*

տում. որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն՝ բազում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վըշտաց մենամարտիկ երկպատական բանութեանն ի Տիգրոն քաղաքի՝ վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց»:

ՂԵՒՈՆԴ *երէց ի Վանանդայ, որ իր երկնատուր ուժովը, աստուածասէր սրտով և հրեղէն լեզուով պարսկական մոգութիւնը Հայաստանէն վանեց, և աստուածազգեցիկ խօսքերովը Վարդանայ բանակը քաջալերեց, փառաւոր մահուամբ մը՝ թէ իրենց և թէ հայրենեաց անմահ փրկութիւնը ստանալու: Այս մեծ ու փրկարար ծառայութենէն առաջ, այլ և այլ ուսումնասիրական սպասաւորութիւն ալ մատուցած է ազգին: Ինքն էր գլխաւոր այն աշակերտաց՝ զորս Մեսրոպ մէկտեղ Մելիտինէ քաղաքը տարած էր, և Անատոլիս զօրավարին խնդրանօքը՝ քաղաքին Ակակ եպիսկոպոսին քով թողած էր: Մեսրոպ Շաղագոմք անապատին մէջ՝ առաջին դասու աշակերտաց ուսումը բովանդակել տալէն ետքը, նոյն տեղւոյն վերակացու կարգեց զՂեւոնդ. որ լսելով թէ իր ընկերներէն ոմանք ի Բիւզանդիոն գտնուելով՝ հոն թարգմանութեանց և հելլէն լեզուին ուսմանը կը պարապին և վախնալով որ չըլլայ թէ ինքն անոնցմէ վար մնայ, Կորեան հետ մէկտեղ՝ առանց իրենց վարդապետաց կամքը հարցնելու ի Բիւզանդիոն գնաց և ուրիշներուն պէս մեծ պատիւ գտաւ քաղաքին Մաքսիմինոս եպիսկոպոսէն: Անկէց Նիկիական և Եփեսոսի տիեզերական ժողովոց կանոններով և Աստուածաշունչ գրոց ընտիր օրինակներով՝ դարձաւ իւր վարդապետաց քով. «Յետ ժամանակի ի մէջ անցանելոյ, կ'ըսէ Կորիւն, դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս դիմել ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդին Կորիւնս, և մատուցեալ յարէին յԵզնիկն, իբր առ ընտանեգոյն սննդակից ի Կոստանդինական քաղաքին. և անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյից զխնդիրն վճարէին: Որոց յետ այնորիկ հասատուն օրինակօք աստուածատուր գրոց և բազում շնորհագիւտ հարց յետ այնր աւանդութեամբք, և նիկիական և եփեսոսական կանոնօք գային երեւելով յաշխարհին Հայոց. և առաջի դնէին հարցն՝ զբերեալ կտակարանս եկեղեցւոյ սրբոյ»:*

ԵԶՆԻԿ *որոնց վրայ մասնաւոր գլխով պիտի խօ-*
ԿՈՐԻՒՆ *սինք:*

ՄՈՒՇԷ Տարօնեցի *Երբոր Մեսրոպ ուղեց ան-*
ՏԻՐԱՅՐ Խորձենացի *ձամբ ի սփիւռս հեթանոսաց երթալով քարոզել ու սորվեցնել, հետն առաւ նաեւ այս երկու անձինքը, զՄուշէ Տարօնեցի և զՏիրայր կամ Տէր Խորձենացի, որոնց պատմիչը կը վկայէ թէ էին սուրբք և զուարթագոյնք. և թէ անոնց հետ կային նաեւ շատ աշակերտներ, «զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել»: Փարպեցին ալ կը գրուցէ թէ սուրբն Սահակ՝ Մեսրոպայ օգնական տուաւ «արս բանիբունս և մտացիս ի քահանայից Հայոց, որք էին և նոքա սակաւ մի մերձաւորեալք ի յունարէն հեգենայսն, ... որոց անուն էր Տէր ի Խորձենոյ և Մուշէ ի Տարօնոյ. որոց օգնելով՝ զօրէր երանելին Մաշթոց»: Նոյն պատմիչը առ Մամիկոնեան Վահան գրած թղթին մէջ կ'ըսէ. «Զհրեշտականման այրն զՏէր (Խորձենացի) նոյն անհանգիստ հալածանօք վախճանեցուցանելով»:*

Որիշ է ի սմանէ Տէր՝ զոր կը յիշէ նոյն Կորիւն. «Յետ այսորիկ, կ'ըսէ, առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի Տէր եպիսկոպոսն ի կայենականսն, և նա ի սփիւռս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն»:

ՅՈՎՍԷՓ Պաղնացի *Այս երկու անձինքը՝ թարգ-*
ՅՈՎՀԱՆ Եկեղեցացի *մանչաց մէջ գլխաւորներէն կը համարուին արժանապէս, և սրբոյն Մեսրոպայ հզօր աջակից եղած ի հրահանգել զաշակերտս, և ի թարգմանութիւնս գրոց սրբոց: Կորիւն, Խորենացի և Ղազար՝ միա-*

ձայն են այս վկայութիւնը տալու անոնց համար։ Կորիւն կ'աւանդէ թէ Մեսրոպ աստուածային օգնութեամբ հայերէն տառից պակասութիւնը գտնելէն ետքը, հոն մէկէն ի Սամոս, «ի թարգմանութիւնս դառնային հանդերձ արամբք երկու՝ աշակերտօք իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին յԵկեղեցեաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն ի Պաղանական տանէն, և եղեալ սկիզբն յառակացն Սողոմոնի»։ Նոյնը կը գրուցէ նաև Խորենացի. «Իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդարար սկսանելով յառակաց, բովանդակ գքսանեւերկու յայտնիսս, և զնոր կտակս յեղուլ ի հայ բան. նաև աշակերտք նորա՝ Յովհան Եկեղեցացին և Յովսէփ Պաղնացի»։

Վերջը երբ Մեսրոպ Գուգարաց աշխարհէն դարձաւ, Եզնիկ հետ միասին Միջագետաց Եդեսիա քաղաքը ղրկեց զՅովսէփ Պաղնացի, «զի որ միանգամ գտցի անդ գիրք ասացեալ հարցն առաջնոց, թարգմանեալ ի մեր լեզու՝ բերցեն փութով», որպէս զի ետքը նոյն վախճանաւ նաև ի Բիւզանդիոն ղրկէ զանոնք։ Որք Եդեսիա երթալնէն ետքը՝ քանի մը սուտագրոյցներէ լսելով թէ սուրբն Սահակ և Մեսրոպ կը պատրաստուին ուրիշները ղրկել ի Բիւզանդիոն, առանց հրամանի հոն գնացին. և «նախանձաւորս բարեաց եղեալ ուսմանց, և քաջ վարժեալ հելլէն դպրութեամբ՝ ձեռնարկեցին ի թարգմանել և ի գրել»։ Այն դէպքը՝ հետևեալ խօսքերով կ'աւանդէ Կորիւն. «Դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն յուղարկել ի կողմանս Ասորւոց, ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ՝ զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն յԱյրարատեան գաւառէ ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, հայերէն գրեալս դարձուսցեն։ Իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցանն, և կատարեալ զհրամանն, և առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնացին ի կողմանս Յունաց. ուր և ուսեալք և տեղեկացեալք՝ թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին»։

Անկէց Հայաստան դառնալնէն ետքը՝ Տարօնոյ Աշտիշատ քաղաքին մէջ գտան իրենց վարդապետներն, ու Եփեսոսի ժողովոյն թղթոցն ու կանոնաց հետ միասին աստուածաշունչ գրոց ստոյգ օրինակ մ'ալ մատուցին անոնց. «Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրովպայ, դարձեալ թարգմանեցին զմիանգամ թարգմանեալն, փութանակի հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ»։

ԵՆՈՎՔ
ԴԱՆԱՆ *Երբոր Մեսրոպ՝ Աղուանից լեզուին գրերը գտնելով՝ պիտի դառնար ի Հայաստան՝ հոն անոնց վրայ վերակացու թողուց իր աշակերտներէն երկու հոգի՝ զԵնովք և զԴանան, որոնց համար վկայէ Կորիւն. «արք կրօնաւորք և յառաջադէմք յաւետարանական սպասաւորութեան»։*

ԵՐԵՄԻԱ, *սրբոյն Սահակայ սարկաւագապետը զոր կ'անուանէ Կորիւն այր սուրբ և բարեպաշտօն, որ և թաղեց իր սուրբ հայրապետը ի Տարօն գաւառի։*

ԹԱԴԻԿ *կամ* **ԹՈԴԻԿ**, *սրբոյն Մեսրովպայ աշակերտը. որ երջանիկ մահը մօտեցած տեսնելով, իր աշակերտացը մէջէն գլխաւոր դաս մը կը կազմէր, և այն ժողոված աշակերտներուն մէջէն երիցագոյններէն մէկն էր Թադիկ «այր զգաստ՝ և զգուշագոյն հրամանաց վարդապետութեան». որ վարդապետին մահուընէն ետքն ալ՝ անոր տեղապահութեան պաշտօնն բրաւ։ Իրեն ընկերակիցք էին Յովսէփ՝ որ թերևս զատ չէ ի համանուն եպիսկոպոսէն զոր վերը յիշեցինք, և Յովհան, որոց համար կը վկայէ Կորիւն. «Վերակացուս ժողովրդեան ըստ յայտնութեան սուրբ հարցն՝ զՅովսէփ և զՅովհաննէս կացուցանէին արս ճշմարտասէրս և ողջախոհս. որոց դէպ լինէր յետ վախճանի սրբոցն ազգի ազգի փորձութեանց ի վերայ եկելոց ի բռնաւորաց, մենակեաց մենամարտիկ ի Պարսս ի Տիզբոն քաղաքի վասն Քրիստոսի. որոց և զխոստովանողական անուն ժառանգեալք, ի նոյն վերակացութիւնն վարդապետութեան դառնային յերկիրս Հայոց»։*

ԳՆԻԹ՝ Դերջանայ եպիսկոպոսը, որ ի Շաղագոմս իրենց ուսումը կատարող գլխաւոր աշակերտաց մէկն էր։

ԱՐՁԱՆ արծունի, որ ուրեք Արջեւան կամ Արդեւան ալ կոչուած է, ընկերակից Կորեան. և անշուշտ զատ է համանուն Արձան կամ Ազան արծրունիէն, զոր անանուն պատմիչ մը՝ կրտսերագոյն թարգմանչաց կարգէն կը համարէ։ Այս հասակաւ երիցագոյն և ուսմամբ հմտագոյն Արձանը՝ առաջին աշակերտաց մէկն է, որ Յովհաննու Եկեղեցացւոյն հետ թարգմանութեան պատճառաւ գնաց ի Կեսարիա, որոնց համար կ՚ըսէ Խորենացին. «Կանխագոյն առաքեալ էր (զնոսա) մեծին Սահակայ և Մեսրովպայ, որոց յուլաբար ուղեւորեալ և ծուլաբար գեղերեալք՝ պարապեցան ի Կեսարիա»։

ՍՏԵՓԱՆՈՍ Տարոնացի սրբոյն Մեսրովպայ աշակերտաց հետ յիշատակուած կը գտնենք հին յիշատակարանի մը մէջ. «Գտաք, կ՚ըսէ, այլ պատմութիւն մի հնագոյն և անվերծանելի, որ շարունակաբար անցուցեալ էր ի գիր զյաջորդութիւն սուրբ առաքելոյն Թադէոսի ի Կեսարիա Կապադովկացւոց վիճակին ի Թէոփիլոսէ աշակերտէ առաքելոյն, գրեալ հանդերձ ժամանակագրութեամբ. և անուն նորին Ստեփանոս Տարաւնացի, որ էր աշակերտ սրբոյն Մեսրովպայ»[1]։

Ասոնցմէ զատ առաջին աշակերտաց կարգէն կը համարուի Ղազարիկ կամ Ղազրիկ անունով մէկը, որ ա՛յլ է ի Փարպեցւոյն։

Երկրորդ աշակերտք

Երկրորդ կարգի աշակերտք, որոնց վրայ՝ մեր գրոց մէջ բաւական պատմական ծանօթութիւն և անուանի երկասիրութիւններ գտնելնուս համար՝ մասնաւոր պիտի խօսինք, ասոնք են.

Դաւիթ Անյաղթ.
Գիւտ կաթողիկոս.
Յովհան Մանդակունի.
Եղիշէ.
Մովսէս Խորենացի.
Մամբրէ Վերծանող.
Ղազար Փարպեցի.

Եզրաս Անգեղացի, զոր ոմանք ի պատմըչաց Խորենացւոյ աշակերտ կը համարին և որուն համար կ՚ըսեն թէ «բազմացոյց զդասս ճարտասանաց»,

Ասոնցմէ զատ կը յիշատակուին անորոշ ժամանակաւ, և առանց ո՛ր դասուն վերաբերելնուն.

Խոսրով, որուն համար կը յիշատակուի թէ գրած ըլլայ զպատմութիւն վարուց սրբոյն Սահակայ հայրապետի և ի Նոր Ջուղա պահուած ձեռագրաց թուոյն մէջ կը յիշուի գիրք մը հետեւեալ խորագրով. «Խոսրովայ թարգմանչի՝ պատմութիւն սրբոյն Սահակայ»։ Ձեռագրաց ցուցակի մը մէջ ալ կը հանդիպինք (Մատենադարան Էջմիածնի, թիւ 920). «Արտասանութիւն Խոսրովկայ թարգմանչի ի մեծամարտութիւն Դաւթի և Գողիաթու». և սկզբնաւորութիւնն է «Պատերազմական հանդիսիցն գումարք»։ Իրեն կ՚ընծայուի դարձեալ Ջրօրհնեաց կանոնին թարգմանութիւնն ի յունէ։ Պատառիկ մը կայ առ մեզ «վասն կարգի կաթողիկոսաց» խորագրով որ Խոսրովու կը կարծուի։

Յովհաննէս.

Աբրահամ կամ Աբէլ. Եղիշէ իր պատմութեան գրոց մէջ կը յիշէ զԱբրահամ խոստովանող՝ ընկեր Ղեւոնդեանց ի գերութեան։ Կը գտնենք տեղ մը հետեւեալ համառօտ տեղեկութիւնը. «Արեւելեան վկայից պատմութիւնք, որ

---

[1] Արարատ ամսագիր Էջմիածին, Ա. տարի, 103։

Թարգմանեցաւ յԱբրահամ խոստովանողէ, մինչ բանդարկեալ կայր ի Պարսիկս, ի պարսիկ լեզուէ»։ Մեր մատենագրութեան մէջ, ինչպէս ծանօթ է բանասէր հմտից, կայ համանուն երկասիրութիւն մը, արժանաւոր Գ. դարու ոսկեղէն լեզուին, և որ արդէն հրատարակեալ է տպագրութեամբ. և յետոյ գտնուած է նաև ամբողջն՝ ընտրելագոյն ընթերցուածովք[1]։ Արծրունին ալ կը յիշատակէ զԱբրահամ և իր պատմական երկասիրութիւնն. «Պատմի այս, կ'ըսէ, ի համառօտութեան Աբրահամու խոստովանողի». Թէպէտ և իրմէ մէջ բերուած հատուածը չվերաբերիր յառաջ յիշուած վկայաբանութեան, այլ մասն է Վարդանայ և իր առաջնորդութեամբ տրուած պատերազմին պատմութեան. «Պատահի յառաջ, կ'ըսէ, Շաւասպ Արծրունի. յորոյ վերայ կալեալ և կանչեալ քաջն Վարդան իբրև զառիւծ և զկորիւն առիւծու. և առ ուժոյ և երագութեան ձեռինն ի վերայ ձգեալ զմիողնին՝ յերկուս կտրէ զՇաւասպն» Ուրիշ տեղ մ'ալ նոյն պատերազմին առթիւ. «Ի վեր կառուցեալ զաչս սրբոյն Վարդանայ՝ տեսանէ զանօրէնն Վասակ Սիւնեաց տէր. և զհետ նորա աճապարեալ՝ արկանեն զնա ի յամբափակ զինեալ վաշտն ի մէջ փղացն. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ մեռանին»։ Էջմիածնի Մատենադարանին ցուցակաց մէջ ալ կը հանդիպինք (Թիւ գրչ. 920). «Երանելոյն Աբրահամու խոստովանողին ասացեալ ի վկայսն արևելից։ — Սկսայց այսուհետև պատմել գողալով զչարչարանս որ եկն ի վերայ ազգիս մերոյ»։

Անանիա.
Յովնաթան.
Խայլիկ կամ Խաչատուր.
Թաթուլ.

Անդրեաս. Անշուշտ զսա ակնարկէ գրչագիր մը հետևեալ խօսքերուն մէջ. «Իսկ Ափոց եպիսկոպոս զրանն արքունի. և Անդրէաս վանական որ զերիս որդիս և զմի դուստր բդեշխին կնքեալ էր և որդիացուցեալ, այր երկիւղած յԱստուծոյ, որ եկեալ էր զկնի տիկնոջն յաշխարհէն Մամիկոնեացն՝ վանական ի Ղազարու վանաց ի յերկրէն Տարաւնոյ՝ և ինքն խարազնագեստ և բոկագնաց եղեալ. մնեալ առ ոտս սրբոյն Սահակայ, և յաւերմանէն Հայոց անդ հասեալ խաղաղեալ կայր. քանզի բազում կործանումն էր հասեալ աշխարհիս Հայոց. յառ և աւար և ի սով և ի գերութիւն մատնեալ Պարսից. և նախարարք Հայոց սպանեալ էին. և Յոյնք ոչ փախստեան տեղի տային գերեացն Հայոց. և ամուրք ոչ պահէին զտագնապեալսն. զի աստուածասաստ էր բարկութիւնն»։

Եւ կ'աւանդէ թէ սոյն երանելի այրն Անդրէաս կը փափաքէր սրբոյն Նունէի հետը տարած սուրբ խաչին նշանը՝ այլազգեաց նախատինքէն ազատել։ Առ այն կը բանադատէր զինքն և Շուշանիկ տիկին, աղաչելով որ «փութանակի առցէ զսուրբ նշանն Նունէի և զայլ ևս բազում ոսկերս սրբոցն ի սրբոյն Գրիգորէ առ նա հասեալ նշխարքն և սպաս եկեղեցեաց և բազում խաչեր։ Զայն ամենայն առեալ և երթեալ բառնայր զխաչն Նունէի ի բլրէն. քանզի եկեալ մոգքն տագնապէին զտունն տուն կրակի կացուցանել։ Իսկ Ջոջիկ եղբայր բդեշխին օգնական լինէր տիկնոջն և Անդրէասու. և սպիտակափառ զարդուք զարդարէր զսուրբ նշանն. և բառնայր ի սպիտակ ջորիս և ի ձիս, և յղարկէր յարևմուտս կոյս, դադարէր ի յամուրս Խաղտեաց։ Իսկ սուրբն Անդրէաս ոչ հաւանեաց դադարել ի մէջ ամբոխին. առեալ զխաչն Նունէի և բնակեցաւ ի Սպեր գաւառի ի խորշ մի լերինն Պարխարու. և կացեալ անդ ամս ութն՝ մինչև լուաւ զվաղճանն սրբոյն Շուշանկան։ Ապա այնուհետև ի տարակոյս եղեալ տագնապէր, եթէ զինչ արասցէ զսուրբ նշանն Նունէի. և զայլ ոսկերս սրբոցն։ Յայնժամ յարուցեալ տեղեկանայր ի տունն Մամիկոնէից. եթէ ո՞ արդեաւք իցէ կենդանի. և ոչ զոք յընտանի նախարարացն գտանէր. ապա գտեալ զոմն մանուկ որդի Հմայեկի եղբաւր Վարդանայ, անուն Գրիգոր, որ բռնացեալ ունէր մանուկն զամուրս կապուտա լերին և զձորն Երասխայ. և զփոքր Բասեան՝ որ այժմ կոչի Վանանդ. և զփոքր ամրոցն կարնենեաց: Զայս իմացեալ Անդրիասու ցուցանէ նմա զամենայն: Իսկ երանելի մանուկն Գրիգոր ուրախացաւ յոյժ և համարեալ զզաւրս իւր առն և ձիոյ երեք հազարաց. ոչ զանգիտացեալ ի զաւրացն Յունաց որք կային ի Թէոդոսուպաւլիս, այլ առիւծաբար յարձակեալ ընդ մուտ ձորոցն Տայոց պատճառելով զիւր հաւրն Հմայեկի զնշխարսն գտանել. և անցեալ ի յամուրսն Պարխարու, հանդիպի իւրում տենչանացն: Եւ երանելի առն ծերոյն բացեալ զգանձս աստուածայինս, աւանդեաց Գրիգորոյ զամենայն. զի էր այրն մերձ ի վախճանել. և համբարձեալ զձեռս իւր՝ աւրհնեաց զնա և զնշխարս նորա: Եւ աղաչէր զԳրիգոր աստուածպաշտութեամբ և հայրենի ուղղութեամբ կալ. և ինքն փառս տուեալ Աստուծոյ աւանդեաց զհոգին. զի էր այր ծերացեալ և անցեալ ժամանակաւք. և բազում վիշտըս յաղագս կործանման աշխարհիս Հայոց կրեալ»:

---

[1] Ի շարս Հայկական Սոփերաց, հատ. Ի։

Վարոս. Յայսմաւուրաց մէջ կը կարդանք. «Սուրբն Վարոս՝ երէց եղբայրն Թաթլոյ՝ որ յետոյ Գիւտ կոչեցաւ, բնակեցաւ յանձաւս լերինն՝ որ կոչի Դիցմայրի. խստաբուտ եղեալ և վայրի մրգօք շատանայր ժամանակս բազումս. մինչեւ գտեալ զնա արք ոմանք ըստ խնամոցն Աստուծոյ, խնդութեամբ լցեալ անուանեցին զնա Գիւտ: Այլ զտեղի նորա շինեցին վանք, որ մինչեւ ցայսօր կոչի Գիւտի վանք»: Իսկ Թաթլոյ համար. «Էր փոխանորդ վարդապետութեամբ Թաթուլ սրբոյն Մեսրովբայ և Ղեւոնդի վարդապետացն Հայոց. որպէս ի կամսարականաց յիշի պատմութեան որ առաւել ասէ քան զՄեսրոպ և զԳառնիկ և զՂեւոնդ: Նաեւ երանելին Մովսէս քերթողահայրն, ի պատմութեան ուրեմն յիշէ և այսպէս ասէ. «Զայսու ժամանակաւ երանելին Թաթուլ՝ երկրորդ Անտոն. ընդ վիշապս և ընդ գազանս բնակեալ ընտանենայր. և իբրեւ զանմարմին՝ մարմնով հանդիսանայր». և այլ ոչ ինչ աւելի քան զայսորիկ գեղեցկագոյն հիւսէ պատմութիւնս:... Բարձրագոյն այրն Աստուծոյ քրիստոսազգեաց ճգնաւորն Թաթուլ էր ի ժամանակս Թէոդոսի փոքու ծիրանազգեստ քրիստոսապսակեալ թագաւորին Հոռոմոց և Յազկերտի Պարսից արքայի. որ հակառակ Հայոց շարժեցաւ յազդմանէ չարին, և ի սուր և ի գերութիւն մաշեաց զերկիրս Հայոց: Իսկ սուրբ Թաթուլ էր ծննդեամբ ի Բզբուջ գեղջէ. և անտի բնակեցաւ ի քաղաքագիւղն Տիկոր. որ մերձ է յարքայանիստն յԱնի. և պարապեալ ի վարժումն գրոց, սուրբ վարդապետութեամբ լուսաւորէ զբազումս. և շնորհք տուաւ նմա յԱստուծոյ՝ որպէս սրբոյն Մեսրոբայ. զոր բովանդակ որպիսութիւն գտանես ի պատմութեանն կամսարականաց: Արդ ի սաստկանալ բարկութեան Պարսից առեալ զկրտսերս եղբայրն իւր զՎարոս՝ որ այժմ կոչի Գտուկ, յանապատ փութայր որպէս ի նաւահանգիստ. և եկեալ ի տեղին որ կոչի Վիշապաձոր, բնակելով ի նմա խստաբուռ տքնութեամբ և մեկնութեամբ . . . և այսպէս կացեալ բազում ժամանակս. ապա առ սակաւ սակաւ խաղաղանայր բարկութիւնն Պարսից: Ընդ այն ժամանակս լինէր կատարումն սրբոց Ղեւոնդեանց ի Վարդէսն. և կարմիրն Վարդան յԱրտազական դաշտին պատերազմեալ կատարեցաւ ի Քրիստոս, որդւովն իւրով Զուրայիւ և այլ ազատովք: Եւ սուրբն Սահակ փոխի ի Քրիստոս ի Բագրեւանդ գաւառ: Արդ ի խաղաղանալ խռովութեանն Պարսից՝ յոյժ ուրախանային սուրբքն և առ ըստ աւրէ յաւելուին ի ճգնութիւնն:

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

Եզնիկ՝ սրբոյն Սահակայ և Մեսրոպայ առաջին աշակերտներէն, և իր ուսումը։ — Թարգմանութիւնք և Եղծ աղանդոց գիրքը։ — Իր իմաստասիրական հմտութիւնը այդ երկասիրութեան մէջ։ — Մատենագրական և հնախօսական գիտութիւնը։ — Մանր երկասիրութիւնք։ — Պատմական գրուածքի մը յիշատակութիւն և անոր քանի մը հատուածք։ — Արդիւնքը եւրոպական գիտութեան առջեւ և իր գրոց տպագրութիւնք և թարգմանութիւնք։

Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ երիցագոյն աշակերտներէն էր Եզնիկ Կողբացի, հմուտ՝ հայ, յոյն, պարսիկ և ասորի լեզուաց։ Անոր համար՝ ինչպէս նախընթաց գլխոյն մէջ տեսանք, հայկական գրոց գիւտէն ետքը՝ իր Յովսէփ աշակերտակցին հետ Ասորւոց Եդեսիա քաղաքը ղրկուեցաւ ի սրբոյն Սահակայ, որպէս զի ասորի լեզուով գտնուած գրքերը՝ հայերէն տառերով գրեն կամ փոխագրեն. անկէ ետքը զիրենք Բիւզանդիոն ղրկելու միտք ունէր նոյն վախճանաւ. իրենք իրենցմէ գնացին հոն և ըսկըսան թարգմանելու և գրելու ետեւէ ըլլալ. և իրենց ուրիշ աշակերտակիցներուն պէս մեծ պատիւ գտան Բիւզանդիոնի Մաքսիմինոս հայրապետէն։

Իւր ուսումնքը Բիւզանդիոնի մէջ գովութեամբ կատարելէն ետքը՝ Հայաստան դարձաւ Եզնիկ միւս ընկերակցաց հետ մէկտեղ, և Տարօնոյ Աշտիշատ քաղաքը գալով, հոն գտաւ իւր վարդապետներն, ու Եփեսոսի ժողովոյն

կանոններն ու աստուածաշունչ գրոց «ստոյգ և հաստատուն» օրինակներն անոնց յանձնեց. և սուրբն Սահակ՝ Եզնըկայ մասնաւոր գործակցութեամբ՝ միանգամ թարգմանուածը կրկին թարգմանեց ի յունէ։

Եպիսկոպոսական աստիճանի ալ բարձրացած է Եզնիկ, և Բագրեւանդայ վիճակին հովիւ կարգուած. ուստի և Յովսէփ կաթողիկոսին յԱշտիշատ գումարած ժողովքին մէջ ալ ներկայ գտնուեցաւ, ինչպէս կը վկայեն Եղիշէ և Փարպեցին։

⁂

Այլ և այլ թարգմանութիւններէն զատ՝ որ կամ պատմագրաց ստոյգ վկայութեամբը և կամ կարծեօք Եզնկայ կ'ընծայուին, ինքնագիր գեղեցիկ երկասիրութիւն մ'ալ թողուցած է, որ թէ հեղինակին և թէ իւր ժամանակին մեծ պատիւ կ'ընէ. և այս է Եղծ աղանդոց գիրքը։ Պարսկաստան սկսած էր այն ատենները իր վնասակար ազդեցութիւնը Հայաստանի վրայ տարածել. արքայից արքայք՝ իրենց կրօնական պարտք մը համարած էին՝ անթագաւոր և իրենց հպատակ եղող Հայոց ազգը՝ Պարսից կրօնից աշակերտել. Նախարարաց մէջն ալ կը գտնուէին ոմանք՝ որ երկրաւոր թագի մը ընծայած փառքը՝ աներեւոյթ յոյսէ մը վեր դնելու սկսած էին։ Միւս կողմանէ՝ յունական ուսումը սկսած էր մեր ազգին մէջ տարածուիլ. և այն պատճառաւ՝ ոչ միայն վարդապետական գրուածներ, այլ նաեւ հին դասական մատենագրութիւնք կը սկսէին ծանօթանալ Հայաստանի. և եպիսկոպոսաց և առաջնորդաց սիրտը իրաւացի վախ մը կը ձգէին՝ որ չըլլայ թէ ուսմանց հետ այնպէս կարծիքներ ալ սպրդին ի Հայաստան՝ որ կրօնից վնասակար ըլլան։ Ասոնցմէ զատ՝ նաեւ քրիստոսական կրօնից երեւցած Մարկիոն մ'ալ սկսեր էր իւր աղանդը տարածել. և այնպիսի համաճարակ կերպով, որ վախ կու տար Հայաստանի մէջ ալ մուտ գտնելու։

Այս ամէն վնասուց առջեւն առնելու համար՝ շարադրեց Եզնիկ իւր Եղծ աղանդոց գիրքը, չորս մասի բաժնուած․ և առանձին կերպով մը խօսելով հեթանոսաց, Պարսից, Յունաց իմաստնոցը՝ և Մարկիոնի աղանդոյն դէմ։ Հին իմաստնոց դէմ իմաստասէր լեզու, գրիչ և հանճար գործածելով․ և անոնցմէ ամենէն աւելի զօրաւոր զէնքով մը, հաւատոյ ճշմարտութեամբ՝ անոնց մոլորամիտ գրութիւններն եղծանելով։

⁂

Իր իմաստասիրական հմտութիւնը ցուցնելու համար՝ երեքի բաժնենք․ ի Բնականս, յԱստուածականս և ի բուն իմաստասիրականս։ Բնական մակացութեանց մէջ՝ թերեւս մեր նախնեաց մէջ մէկը չկայ որ Եզնկայ գիտութիւնն և հմտութիւնն ունենայ։ Մեր այս խօսքին վկայ կրնան ըլլալ իրեն ստոյգ վարդապետութիւնքը թէ տարերաց և թէ բնութեան երեւոյթից վրայ, և թէ տարբեր կերպով մտածողներուն կարծիքը հերքելուն մէջ։ Բաւական համարենք՝ շատերէն մէկ քանի բան մէջ բերել։ Թէ որ իրմէ ուզենք պատճառը հասկնալ թէ ինչո՞ւ արեւուն ծագելուն և մտնելուն ժամանակ կը կարմրանան երկինք, պատասխան կու տայ մեզի․ Վասն զի, կ'ըսէ, արեւուն ծագելուն ատեն՝ օդը ջրոց խոնաւութիւնն առնելով՝ արեւուն ճառագայթիցը վրան կը ձգէ․ և որովհետեւ դեռ օդը թանձրացած ու ամպացած չէ, քիչ մը արեւուն նշոյլքն արգիլելովը՝ արեւը կը կարմրցնէ ու չի մթագնեցիներ։ — Հարցընենք թէ առաւուան ցօղն ի՞նչ բանէ առաջ կու գայ․ կը պատասխանէ․ Վասն զի, կ'ըսէ, օդը որ մինչեւ առաւու կ'ուռի (կը ծանրանայ) ջրոյն խոնաւութենէն, արեւուն ճառագայթից ջերմութիւնը վրայ հասնելով՝ թացութիւնը կը շքթեցնէ․ ուստի չէ թէ միայն այն տեղը՝ հապա ամէն տեղ արեւուն ծագելուն ժամանակ ցօղ կ'իջնայ։ — Լուսնին չորս կողմը երեւցած բակին պատճառն ալ կու տայ․ լուսինը, կ'ըսէ, օդին խոնաւութենէն նեղուելով՝ կ'ուզէ խոնաւութիւնը իր վրայէն փարատել․ ուստի խոնաւութիւնը մօտենալով և իրեն չհասնելով՝ չորս կողմը կը կենայ․ որով յայտնի կ'ըլլայ անձրեւին նշանը։ Նոյնը կ'երեւնայ, կ'ըսէ, նաեւ ճրագին վրայ․ և այլն։

⁂

Եզնկայ Աստուածական հմտութեանցը վրայ չխօսած՝ պէտք է յիշեցնենք ընթերցողաց, թէ՝ որովհետեւ գիտութեանց յառաջադիմութիւնը դարուց հոլովման ու շրջանին արդիւնք է, կը հանդիպի երբեմն որ ուղիղ կարծուած դրութիւնք սխալի կերպարանք կ'առնուն, և երբեմն սխալ երեւցածներուն ուղղութիւնը կ'երեւնայ։ Ուստի հին մատենագրաց գիտութիւնը քննելու ատեն՝ մեր ժամանակաց գիտութիւնը պէտք չէ անոնց վրայ փնտռել, այլ մտքով ելլել անոնց դարը, ու այն ատենուան գիտութեանց չափովը գիրենք քննել։ Այս նկատմամբ այլ և այլ սխալ կարծիքներ ունի Եզնիկ, որ աւելի իր ժամանակին սխալները կրնան համարուիլ։ Օրինակ իմն, սաստիկ կերպով կը հերքէ այն կարծիքը՝ որ դարեր անցնելէն ետքը հաստատութիւն գտաւ, թէ երկիրս արեւուն վրայ իր ընթացքը կ'ընէ․ այլ նոյն շրջանը արեւուն կու տայ, և իր կարծեաց հաստատութեան մէջ կը բերէ սուրբ գրոց այլ և այլ խօսքերը և դէպքերը, ինչպէս Յեսուայ՝ արեւը իր շրջանէն կեցնելը, Եզեկիայի ժամանակ՝ Աքազու արեւադէտ ժամացուցին ստուերին ետ դառնալը, և այլն։ — Երկրիս դրից ու շարժմանը վրայ՝ Յունաց հին իմաստունք կատարեալ տեղեկութիւն ունէին․ անոնց կարծեաց հմուտ էր Եզնիկ, բայց ժամանակին նախապաշարմունքը անկարելի կ'ընէր թոյլ տալ իրեն՝ անոնց խօսից հաւանելու, նուիրական պարտք մը կը համարէր ամէն ջանքովը դէմ կենալ այն կարծեաց որ հեթանոսաց գիտութեանցն արգասիք կը համարուէին։

Աստեղագիտաց կամ հմայից վրայ խօսելու ատենը՝ մեծ ճարտարութեամբ և հանճարով կը հերքէ անոնց բաջաղանքը. ոչ միայն Պարսից օրինաց հետեւողքն ըմբերանելով, այլ նաեւ մինչեւ յետին դարուց ճակատագրականները։

Բնազանցականին մէջ ուրիշ ամէն մասերէն աւելի յայտնի և որոշ կ'երեւնայ Եզնկայ հմտութիւնը։ Կարդացողը կը տեսնէ թէ ինչ զօրաւոր ապացոյցներ ու հաւաստիք մէջ կը բերէ Աստուծոյ գոյութեանն և անոր ստորոգելեացը, ոչ թէ միայն աստուածաբանական ցուցակութեամբք հաւաստիացնելով իր խօսքերը, այլ նաեւ բնական և անհակառակելի փաստեր մէջ բերելով, և երբեմն ալ նոյն իսկ հեթանոսաց առասպելներով՝ անոնց կրօնքին ստութիւնը, և աստուածաւանդ հաւատոյ ճշմարտութիւնը հռչակելով։ Նոյնպէս երբոր Յունաց իմաստնոց և անոնց կարծեացը վրայ կը խօսի, կարգէ դուրս հմտութիւն մը կը ցուցնէ անոնց տեսակ տեսակ վարդապետութեանցը. համառօտ կերպով մը անոնց ուղիղ կամ թիւր տեսութիւնքը կը զանազանէ, և զօրաւոր լեզուով մը անոնց պատասխանը կու տայ[1]։

* * *

Մատենագրական հմտութեանց նկատմամբ՝ առաջինն է Եզնկայ լեզուին գեղեցկութիւնը։ Երեք ազգ գեղոյ կը նկատենք Եզնկայ գրոց մէջ. նախ բառից ճշգրիտ նշանակութեամբ. երկրորդ զուրցուածքի գեղեցիկ կերպովը, և երրորդ՝ ընտիր դասաւորութեամբ։

Հնախօս գիտութեանց մէջ՝ յազգային մատենագիրս նշանաւորներէն մէկն է Եզնիկ։ Հաւասար գիտութիւն կը ցուցնէ թէ հայրենի և թէ օտար հնութեանց։ Առջիններուն կարգէն կրնան համարուիլ՝ արուեստից սկզբանը, ցլու արեանը, Թիւրիակէին, մանրագորին, հազարին, և այլն, վրայ տուած տեղեկութիւնները։ Նոյնպէս Արալեզին, վիշապազանց, Արտաւազդայ, ծովային նհանգաց վրայ խօսելու, և մարմնոյ բնական ազդեցութեանց վրայ ազգային գուշակութիւնները մէջ բերելու ատեն։ Իսկ օտար ազգաց հնախօսութեանը մէջ ունեցած գիտութիւնը յայտնապէս կը ցուցնէ Եզնիկ՝ երբոր Պարսից առասպելաց, անոնց կրօնական արարողութեանց, զանգիկ և մոգութեան կրօնից, Նախնի Յունաց, Հերակլեան արձանաց և անոնց վրայ եղած գրուածոցը, Հոմերոսի, Հեսիոդեայ, և Պղատոնի վրայ կը խօսի։

* * *

Եզնկայ խրատք անուամբ ընտիր խրատներ կան, հեղինակին արժանի լեզուով ու սրտով գրուած. բայց որովհետեւ անոնք Նեղոսի սուրբ հօրն սկզբնագիր երկասիրութիւնք համարուած էին, ուստի հաւանականաբար թարգմանիչ է Եզնիկ այն խրատուց, և անոր մէկ մասն իրեն ընծայուած։

Եզնկայ Կողբացւոյն անուամբ ձեռագրաց մէջ երկու համառօտ երկասիրութիւնք ալ գտնուած են հետեւեալ խորագրովք. — Ա. «Հարցումն Արձանայ և պատասխանիք Եզնկայ Կողբացւոյ ուղղափառ վարդապետի»։ — Բ. «Հարցումն Աշոտոյ որդւոյ Միհրանայ և պատասխանի Եզնկայ Կողբացւոյ Հայոց վարդապետի»։ Հրատարակողք կը ծանուցանեն վասն առաջնոյն. (Մասեաց աղաւնի, Զ տարի 125, 166). «Ընտիրս այս նշխար երկասիրութեանց Արձանայ Արծրունւոյ մերոյն թարգմանչի և հօգելից վարդապետին Եզնկայ... հանեալ է ի գրչագիր մատենէ թուագրելոյ յամին ՉԽԱ։ — Մեզ ոչինչ բնաւ կասկածելի է հարազատութիւն հատուածոյդ, զի և բանիցն գեղեցկահիւս շարամանութիւն և բառիցն յստակութիւն զնոյն յայտ առնեն»։ Իսկ երկրորդին համար. «Թէպէտ և գրուածքին յստակ և գեղեցիկ ոճը յայտնապէս կը ցուցնէ որ հին և ընտիր մատենագրութեան կտոր է այս, բայց վերնագրին մէջ ժամանակի անյարմարութիւն մը կայ՝ որոյ պատճառը հասկնալ շատ դժուար է։ Վասն զի Աշոտ որդի Սմբատայ, որ է անշուշտ Բագրատունեաց ցեղէն մեր առաջին թագաւորը, որդին Սմբատայ Խոստովանողի, թագաւորեց 883էն մինչեւ 889 թուականը. իսկ Եզնիկ Կողբացի (ինչ մեզի ծանօթ սուրբ թարգմանիչն է) 430ի ատենները ծաղկած էր. ուստի և գրեթէ չորս հարիւր յիսուն տարի յառաջ է քան զԱշոտ թագաւոր։ Հարկ է ուրեմն ըսել թէ կամ այս վերնագրին անուանցը մէջ սխալ մը կայ, և կամ մեր Աշոտ առաջին թագաւորին ատենն ալ Եզնիկ Կողբացի անունով վարդապետ մը կայ եղեր՝ առաջնոյն անուանակից և հետեւող. բայց այս երկրորդ կարծիքը մեզի ալ հաւանական չ'երեւիր։ Թերեւս չեմք սխալիր ըսելով թէ հաւանական է որ այս հատուածը Համամ վարդապետի գրուածներէն է, որ Աշոտոյ ժամանակակից էր, և այն ատենի մատենագրաց մէջ իւր յստակ և համառօտախօս ոճովը անուանի»։

---

[1] Եպիփանու Հերձուածոց դէմ գրած մատենին մէջ՝ շատ տեղ Պարսից աղանդոյն և Մարկիոնի դէմ խօսած ատեն՝ համաձայն կը գտնենք զնա ընդ Եզնկայ.

Ասոնցմէ զատ կը գտնենք ի ձեռագիրս նաեւ հետեւեալ քանի մը հատուածներն. «Եզնկայ Կողբացւոյ Հայոց վարդապետի վասն պատրաստութեան հաղորդողաց։ — Եզնականն ասացեալ վասն արարչութեան։ — «Սահմանադրութիւն կարգաց[1] ընկալեալ ի նախատպէն տեառն Գրիգորի. թարգմանեցաւ ընդ ձեռն Եզնակայ՝ հրամանաւ Երանելոյն Սահակայ Եպիսկոպոսապետին Հայոց, և նորին Արտաւհցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշումն վանաց»։ — Ցաղագս որոշման զանազան հերձուածոց։

Ճառընտրաց մէջ կը գտնուին երկու հատուածք ճառից՝ խորագիր կրելով. «Եզնկայ առ սուրբն Մաշդոց»։ Նոյն գրոց մէջ քանի մը ուրիշ անհարազատ երկասիրութիւններ ալ կան Եզնկայ անուամբ, համառօտ և իրեն գիտութեան և հանճարոյն ոչ այնչափ արժանաւոր, որոնց համար պիտի ըլլայ անշուշտ յետին պատմագրաց մէկուն, Կիրակոսի, ըսելը Եզնկայ համար, թէ «խօսս յոլովս եթող յօգուտ լսողաց»։

⁂

Պատմական գրուածքի մը՝ և անկէ քանի մը կցկտուր հատուածոց յիշատակութիւնը կը գտնենք Եզնկայ անուամբ առ Ստեփանոսի Ռոշքեան Կամենիցացւոյ, իր հմուտ Բառագրոց կարգին մէջ։ Չենք կրնար որոշակի զրուցել թէ արդեօք Կողբացւո՞յն է թէ ուրիշ համանուն և ժամանակաւ կրտսերագոյն անձի մը։ Իբրեւ հետաքննութեան արժանաւոր նիւթ՝ այս հատուածները կ'ամփոփենք։

«Ետես խարտեաշ և զգխակաւոր մանուկ»։

«Կայր մանուկն ընդ ոտին անկեալ»

«Ասէ. Թախանձ մեր եղեր խնդրելոյ զայսքան խըրատս»։

«Որպէս քարինք առ ջուրս լռանան, նոյնպէս և որք ի մեղս են»։

«Հարին զուրբն խթանաւոր վարոցօք»

«Առաւել գտաւ քան զհամալսականն Պղատոն»։

«Պատուէն զնա հիւրընծայիւք»։

«Ասեն զշանգլուխ խոտն դեղ տապատի»։

«Հեծաւ յատնաւոր ձի, բայց ի թօթափելոյն խօթացաւ»։

«Մի ոք կեցցէ չարակամաբար ընդ ընկերին»։

«Խոկալ պիտոյ է պարատեսութեամբ զելս հանդերձելոցն».

«Յատեացս վաղահասաբար փոխի»։

---

[1] Արարատ ամսագիր Էջմիածնի, 1875. յէջ 446.

«Կոշտք տափանօք… և մարմինն ճգամբ»:

«Արծիւն յորժամ ձագք իւր փետրաւորին՝ յանդիման արեւու կացուցանէ»:

Ասոնք խրատական գրուածքի մը մասն կ'երեւնան: Իսկ յետագայք՝ պատմական կը թուին.

«Առ ժամ մի տեղի տալ ընդդիմաբանից»:

«Ի ձին խամթաւոր նստեալ վազէր»:

«Եբեր նմա կանխաւ գալար թուղս»:

«Խմբական զօրքն ի ճակատ դարձան»:

«Որպէս զփայտ հերձանելի՝ զքարինսն ճեղքէր»:

⁂

Արդի գաղղիացի հայագէտ մը՝ Մարթէն (P. P. Martin) *հետագայ խօսքերով և զարմացմամբ կը գրուատէ զԵզնիկ.*

Eznigh fut un des amis les plus dévoués de saint Sahag et de saint Mesrob, un de leurs plus zélés coopérateurs, celui de leur disciples qui eut le plus leur confiance. Il fut envoyé par eux, d'abord, à Édesse et ensuite à Constantinople, dans le but de préparer la traduction des Saintes-Écritures, et celle des Pères grecs et syriens.

Ce fut lui qui rapporta de Constantinople, les Actes du Concile d'Éphèse (431) et les Manuscrits grecs sur lesquels fut terminée, en 433, par saint Sahag et saint Mesrob, la version arménienne des Saintes-Ecritures. On voit, par ces détails, qu'Esnigh, loin d'être le premier venu, était au contraire un personnage fort distingué au point de vue intellectuelle et moral... Si nous ajoutons qu'Esnigh possédait, outre l'arménien, le grec, le persan et le syriaque, nous aurons fait connaître, dans ces grands lignes, le personnage. *Ու իրեն գոված ու վրան սքանչացած Աղանեանց*

գրքէն վկայութիւններ մէջ բերելէն ետքը, կը յաւելու: C'est là... un témoignage de première importance; le témoignage d'un grand écrivain,... d'un savant qui connaît les langues hébraïque, grecque, syriaque et persan, et les nations qui parlent ces langues: le témoignage d'un auteur qui n'est pas demeuré étranger à la rédaction de la traduction arménienne (de la Sainte Bible). Aucun d'autre témoignage ne pourrait passer avant celui-là, à moins qui s'émanent de saint Sahag et de saint Mesrob.

Եզնիկայ Եղծ աղանդոց գիրքը նախ տպագրեցաւ ի Զմիւռնիա յամին 1763. երկրորդ, երրորդ, չորրորդ, և հինգերորդ անգամ՝ ի Վենետիկ Մխիթարեանց (1827, 1863, 1714 և 1926) ընտիր մատենագրաց կարգին մէջ. Գաղղիերէն ալ թարգմանուած է այս գործը ի Լըւայեան Ֆլորիւալայ հայերէնի վարժապետէ, և տպագրած ի Բարիզ յամի 1833. Այս թարգմանութեան վրայ քննադատական հատուած մը հրատարակեց Արման Տըվէքերին գաղղիացի՝ Eznigh deGoghpe... et son traducteur français խորագրով ի Հանդէս Ասիական ամսագրի. (Հատ. Ե. 207-216). Մասնական թարգմանութիւն մ'ալ նոյն լեզուաւ ի Հանդէս Հին և Նոր Դպրութեանց Հայոց Լանկլուայի, այսխորագրով. Eznig de Goghp; Extrait du Chapitre II. Réfutation de la religion des Perses; traduction nouvelle, par un membre de l'Académie arménienne de Saint-Lazare de Venise. Մանեսի և Պարսից աղանդոյն վերաբերեալ տեղեկութիւնքը թարգմանեցին ի գերմաներէն Նայման (Zeitschrift für die historische Theologie) և Վինտիշման (Bayerische Annalen, 1834): Եզեան Կ. [illegible] [illegible] [illegible] [illegible] ռուսերէն գրուածքին մէջ այլ և այլ հատուածներ թարգմանած է յԵզնկայ, ինչպէս նաև [illegible] [illegible] Պարսից հատուածի մը հեղինակէն վերը յիշուած Հանդէս Ասիական ամսագրին մէջ. Ըստ մասին թարգմանեալ է և անգղիերէն և հրատարակեալ բանասիրական օրագրի մը մէջ. — [illegible] այլ տպագրուած են ի Վենետիկ.

ԿՈՐԻՒՆ

Կորիւն ի դասուն առաջին թարգմանչաց։ — Իւրն շարադրուած կենսագրական գրուած մը։ — Իր ոճը։ — Ագաթանգեղոսի և Բիւզանդայ գրոց հետ նմանութիւնք։ — Տպագրութիւնք և թարգմանութիւնք։

Առաջին թարգմանչաց դասէն էր նաև Կորիւն, որ Եզնըկայ ու Յովսեփայ Պաղնացւոյ Բիւզանդիոն եղած ատեն՝ Ղեւոնդեայ հետ հոն ղրկուեցաւ. թարգմանութեանց պարապելու, ու ետքը Ընձակայ հետ Երուսաղէմ գնաց, ուսկից սրբոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ աշխատասիրած Ապաշխարող արձակելու կարգը բերաւ։

Սրբոյն Մեսրոպայ ձեռքով Վրաց աշխարհը գրով, գիտութեամբ և հաւատքով լուսաւորուելէն ետքը, Սահակ Հայրապետ զԿորիւն Վրաց եպիսկոպոս ձեռնադրեց, և անշուշտ այն պաշտաման մէջ իւր կեանքը կնքեց. որովհետև աւելի տեղեկութիւն մը չեն ընծայեր մեզի ժամանակակիցք իւր վարուց և զբաղմանց վրայ։

Զանազան թարգմանութիւններէն զատ՝ իւր վարդապետին, սրբոյն Մեսրոպայ պատմութիւնը շարադրած է Կորիւն։ Այս աշխատասիրութեան՝ որ իւր ժամանակին գրաւորական պատմութեան վրայ մեծ լոյս կը ծաւալէ, զինքն յորդորած են սուրբն Յովսէփ կաթողիկոս և իւր ուրիշ աշակերտակիցներն. որոնք այլ և այլ աշխարհներ իրենց ուսումը կատարելէն ետքը դարձան ի Հայաստան ու տեսան որ արդէն վախճանած էին իրենց և ընդհանուր

հայրենեաց բարերար վարդապետները, ու զԿորիւն աղաչեցին՝ որ անշուշտ անոնց կենաց վերջի տարիներուն ի Հայաստան կը գտնուէր, սրբոյն Մեսրոպայ վարքը գրել։

Կորիւն ալ յանձն առաւ ու շարադրեց, «ոչ եթէ, ինչպէս կ'ըսէ, ի հին համբաւոց տեղեկացեալ, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն, և առընթերակաց հոգևոր գործոցն, և լսող շնորհապատում վարդապետութեանն, և նոցին արբանեակք ըստ աւետարանական հրամանացն»։

Սրբոյն Մեսրոպայ ամբողջ կենսագրութիւնը չի կրնար համարուիլ այս գրուածքը. վասն զի Մեսրոպ կրկին վիճակ կենաց ունեցած է. մէկը ի դրան արքունեացն Հայոց՝ պատուեալ իշխանական պաշտամամբ, մէյ մ'ալ առ Սահակայ Հայրապետի։ Կորիւն իւր վարդապետին կենաց առաջին մասին վրայ՝ ամենևին, կամ խիստ քիչ տեղեկութիւն կ'աւանդէ. և իւր այս զանցառութեան պատճառը՝ ինքը մէջ կը բերէ. «Ոչ սուտապատում, կ'ըսէ, ճարտարախօս եղեալ, առ ի մերոց բանից զհօրէն իմոյ կարգեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ, և ի նշանադիմակացն քաղելով զհամատուրսն կարգեցաք. որք ոչ միայն մեզ՝ այլ և որք զատեանսն ընթեռնուն՝ յայտնի է։ Քանզի չէաք իսկ հանդուրժողք զամենայն արարեալսն կտակաւ զիւրաքանչիւրսն, այլ ի դիւրագոյն և ի հեշտագոյնս՝ յառաքելական անդր զանձինս պատսպարեցաք, որոց անցեալ զբազմախուռն արգասեօք սրբոցն՝ առ ի մանրակրկիտ առնելոյ զկարևորագոյնս պատմելոյ զհանգամանս՝ առացաք»։ Հեղինակին այս մութ խօսքերը հետևեալ կերպով կրնանք պարզել, թէ միայն սրբոյն Մեսրոպայ հոգևորական աշխատանաց ու վարդապետութեան վրայ խօսեցանք. իսկ այն գործերուն վրայ՝ որ իւր աշխարհիկ կամ զինուորական կենացը կը վերաբերին, և որոնք շատ են, լռեցինք. որովհետև այն գործերը չէ թէ միայն մեզի, այլ նաև ատեանը կարդացողաց յայտնի են։

Իսկ սրբոյն կենացը երկրորդ մասին վրայ՝ բաւական ընդարձակ ու յագեցուցիչ կերպով կը խօսի Կորիւն, տեղն ի տեղ և իրեն յատուկ ոճով մը պատմելով այն մեծ մարդուն ձեռքովը Հայաստանի մէջ եղած մտաւոր լուսաւորութեան արդիւնքը։

⁂

Իրեն յատուկ ոճով մը ըսինք, որովհետև ընդհանրապէս ընտիր ու Հայկաբան լեզուի հետ՝ մութ ու խրթին դարձուածներ կը բանեցնէ, որոնցմով իր խօսքերը շատ տեղ անիմանալի կը մնան։ Այս թերութիւնը՝ թերևս գըրչագրաց ալ թերութիւն է, որոնք շատ տեղ, ինչպէս նաև ուրիշ զանազան գրուածներ, այսպէս ալ Կորեան այս երկասիրութիւնը՝ ուզածնուն պէս համառօտեր են, առանց գիտնալու կամ ուզելու մտադրութիւն ընել թէ պակսած կտորը՝ մնացածին հետ անմիջական վերաբերութիւն ունենալովը, այն պակասը մեծ վնաս կը բերէ գրուածին ամբողջութեան։

Այսպէս Մեսրոպայ ձեռքով եղած Վրաց գրութեան գիւտը պատմելէն ետքը կը յաւելու. «Եւ արդ զնոսա որ յայնչափ ի մանաւոր և ի բաժանեալ լեզուաց ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր. յորոց և իմ անարժանիս եղեալ ի կարգ՝ եպիսկոպոսութեան վիճակ»։ Հոս խօսքին կարգը զիրար չբռնելով՝ պակաս բան մը կ'ենթադրէ։ Այսպէս ուրիշ զանազան տեղեր ալ՝ զորս աւելորդ կը համարինք մի առ մի նշանակել։

Ագաթանգեղոսի և Բիւզանդայ գրոց հետ շատ նմանութիւն ունի Կորեան այս գիրքը, մանաւանդ առաջինին. ուսկից ամբողջ խօսքի հատուածներ մէջ կը բերէ։ Վասն որոյ ոմանք համարեցան թէ այն գրոց թարգմանիչն եղած ըլլայ Կորիւն, և այն է պատճառը այնչափ նմանութեան։ Բայց մենք որովհետև այն կարծիքն ունինք թէ Ագաթանգեղոս և Բիւզանդ սկզբնագիր երկասիրութիւնք են, ուստի անոնց շատ ընթերցման արդիւնք կը համարինք այն նմանութիւնները։

Այս հատուածներէն մէկ երկու գլխաւորն մէջ բերենք։

«Եւ զի ըստ օրինակի գրեցելոցս առ ի մէնջ հարքն ի կափարումս դարձան, ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեզ իսկ ականատես եղեալ կերպարանացն, և առնթերակաց հոգևոր գործոցն, և լսող շնորհապատում վարդապետութեանն», և այլն։

«Որոց անցեալ զբազմախուռն արգասեօք սրբոցն, առ ի մանրակրկիտ առնելոյ, զկարևորագոյնն և զօգտակարագոյնն պատմել։ Ուստի և մեր առեալ հանգոյն ասացաք, ոչ ի պատիւ ընտրելոց Քրիստոսի, որք ամենապարծ և կենդանատուր խաչին ծանուցեալք յարգեցան, այլ յօրինակ քաջալերիչ հոգևոր ծննդոց իւրեանց՝ նոքա պատմելոց իցեն յազգս ազգաց, ըստ բանի հոգևորական երգչին՝ որպէս ասէ. Զի զոր ինչ միանգամ պատուիրեաց հարցն՝ ցուցանել զայս որդւոցն, զի ծանիցէ ազգ այլ. որդիք որ ծնանիցին յարիցեն և պատմեսցեն որդւոց իւրեանց, զի դիցեն առ Աստուած զյոյս իւրեանց»։

Մեր տպագրին (1833) *յէջ* 1. *«Եկեալ հասանէր առ իս հրաման»..., հատուածը կը գտնուի առ Ագաթանգեղայ յէջ.* 20 (*տպ.* 1862)։

Յէջն 7. *«Ամենայն կրթութեան հոգևորացն զանձն տուեալ միաւորութեամբ, լեռնակեցութեան... առ Ագաթանգեղ։*

Ի նոյն էջ 7. *«Առեալ այնուհետև երանելոյն զհաւատացեալս իւր... առ Ագաթանգ.։*

Կորեան պատմութիւնը տպագրուած է ի Վենետիկ ի չորս գործոց նախնեաց (1833). *դարձեալ ուրիշ հին օրինակէ ի կարգի Սոփերաց*

(1854) *ընտրելագոյն ընթերցուածովք։ Գերմանական թարգմանութեամբ հրատարակեց հայագէտն Վէլդէ ի Թիւպինկէն* (1841) *ի քսանեւհինգամեակի թագաւորութեան Գուլիէլմոսի Ա. թագաւորին Վիւրթէմպէրկի* (Goriun's Leben sbeschreibung des hl· Mesrob): *Գաղղիական թարգմանութիւնն ալ ի Հաւաքածոյ հին ու նոր պատմագրաց Հայոց Լանկլուայի,* (*Հատ.* Բ.), Goriun: Biographie du bienheureux et saint docteur Mesrob, traduite pour la première fois en français par Jean-Raphael Emine.

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ

Դաւիթ Անյաղթ ի թուոյ կրտսերագոյն Թարգմանչաց։ — Իր ուսումն և հանճար առ Յոյնս։ — Գրաւոր երկասիրութիւնք։ — Ներբող ի սուրբ Խաչն։ — Սահմանաց գիրք։ — Թարգմանութիւնք։

Մովսէսի Խորենացւոյն քեռորդին էր Դաւիթ, Տարօնոյ մօտ Հարք գաւառին Հերեթ կամ Հերեան գիւղէն, և կամ ըստ այլոց՝ Ներգին աւանէն, ուստի է Ներգինացի կոչուած[1]*։*

Սահակայ ու Մեսրոպայ ձեռքով ընտրուած վաթսուն փափկաձայն, ուշեղ և երկարոգի աշակերտաց դասէն էր Դաւիթ, և կամ անոնց վերջիններէն մէկը․ բայց իր ուսմամբն անոնց հաւասարած, և մանաւանդ իմաստասիրութեամբը մէջերնէն ամենէն աւելի գերազանց երեւցած․

ուստի և իրեններէն, և անոնցմէ՝ ուր ուսմանց ընթացքըն կատարելագործեց գովութեամբ, մերթ Անյաղթ կոչուած, իբրեւ թէ անհաւասար, և ամենէն վեր իր գիտութեամբը, և մերթ Աստուածասէր իր բարեպաշտութեանը համար, և առհասարակ յամեննեցուն Իմաստասէր կամ փիլիսոփայ կոչուած, և երբեմն նաեւ Ամենագիտուն, Եռամեծ փիլիսոփայ․ և պատճառը կու տայ Շնորհալին հետեւեալ խօսքերով․ «Ունիմք սովորութիւն փիլիսոփայ ասել, որ յերաժշտական արուեստի կատարեալք են․ այսպէս և Դաւիթ՝ ոչ միայն փիլիսոփայ, այլ յաստուածեղէն և յարտաքին հրահանգս անթերի և լիապատար էր, նորին աղագաւ կոչի փիլիսոփայ, զպատիւն զեկուցանելով»։

⁂

Այնչափ մեծանուն հանդիսացաւ Դաւիթ իր իմաստասիրական ուսմամբք, որ մինչեւ Յոյնք՝ այնպիսի պարծանք մը չուզելով իրենցմէ օտարացնել, որովհետեւ Դաւիթ այլ և այլ երկասիրութիւններ ունի յոյն լեզուով շարադրած, ուստի իրենցմէ մէկը ուզեցին համարել զանիկայ։ Ազգային յիշատակարանք կ'աւանդեն (թէ և աւելի պարծենկոտութեամբ քան ստուգութեամբ) թէ Դաւիթ ի Կոստանդնուպոլիս գտնուած ժամանակը՝ այլ և այլ ընդդիմագրութիւն ունեցած է փիլիսոփայական, ոմանք կ'ըսեն նաեւ հաւատոյ խնդրոց վրայ, Մարկիանոս թագաւորին արքունեացն իմաստասիրաց հետ, որք իրենց գիտութեամբը նշանաւորք էին․ այսինքն Յորնաղայ, Մելիտոսի, Մամբրէի եպիսկոպոսի և անոնց նմանեացը հետ․ ու երբ իր քեռւոյն Մովսէս Խորենացւոյն հետ արքունական պալատը երեւցան, ամենքն իրենց աչքը անոնց վրայ դարձուցին․ «վասն զի, կ'ըսէ պատմիչը, էին ծերացեալ, կերպարանքն և խօսքն անթենացիք․ զի երեսուն տարի էին յԱթէնս»։ Ու երբ Յորնաղ անոնց իմաստութիւնը կ'արհամարհէր, Մովսէս իրա-

---

[1] *Գրչագրի մը մէջ կը գտնենք Անյաղթի համար՝ թէ «էր ի Հարթըն գաւառէ և ի Հերեթն գեղջէ»։*

ւացի պարծանքով մը զինքն յանդիմանելով կը գրուցէր. «Ո՞վ Յոբնաղ, ճանաչե՞ս զիս. Մովսէս եմ, և սա Դաւիթ. բազում դպրութեան ազգաց հմուտ և պարծանք Աթենացւոց, կենդանեաց և գերեզմանաց, եւս առաւել Հայոց աշխարհին»։

Մարկիանոս Թագաւորն հրամայեց որ իւր իմաստնոցը հետ խօսի Դաւիթ. «Եւ յարեաւ, կ՚ըսէ պատմիչն յաղթող և քաջ ախոյեանն Դաւիթ. եկաց յոտին առաջի բազմութեանն՝ որպէս զամուր լեառն երկաթի»։ Ու երբ այնպիսի պատրաստութեան արժանի հանճարով ու լեզուով խօսեցաւ իւր ընդդիմադրին հետ, կորնթացւոց Մամբրէ եպիսկոպոսը՝ իմաստասիրական ուսմամբքն ուզեց զինքը յաղթահարել. «Հպարտացեալ փիլիսոփայական արուեստիւ, յառաջ վազեաց և ի դիմի հարաւ քաջին Դաւթի և մեծ անյաղթն կոչեցեալ փիլիսոփայի, և ասէ. «Զի՞նչ անուն և զի՞նչ մակածութիւն»։ Եւ այն ընդդիմամարտութեան մէջ ալ իրեն արժանաւոր պատասխաններն ընդունելով՝ լռեցին իմաստակներն, աւելի մեծ համարում ստանալով անոր գիտութեանն վրայ[1]։

Հայաստան դառնալէն ետքը՝ տեսնելով Դաւիթ իւր հայրենեաց խեղճութիւնը, և գիտութեանց անպատիւ մնալը, քաշուեցաւ, աղօթքը՝ արտասուաց, հանճարը՝ գրոց հետ

---

[1] Երկոտասաներորդ դարու քերթող մատենագիր մը Վարդան Հայկազն, թուի ակնարկել զայս հետագայ տողերուն մէջ.

« Մովսէս ղխտէր Խորենացի
Քերդողահայրըն կենդանի.
Իմաստութեամբն անչափելի
Զերդ հոգեւոր տուն և տեղի՝
Կամ յընկերացն իւր նազելի
Բանիւք հզօրքն ի հանդիսի.
Յորոց անուանցն էին յահի
Յունաց ճարտարքն և յերկիւղի՝
Զէին կարող կալ ի դիմի
Կամ բան մի տալ պատասխանի...
Այլ նոքա չէին աստ ի միջի»։

խառնելու. և մեռնելով թաղուեցաւ Տարօնոյ մօտ Ղազարու վանքը, ուր մինչեւ հիմայ կը ցուցնեն իր գերեզմանը. և ուր դեռ եւս կը յաճախեն իմաստութեան և ճարտարախօսութեան ձիրքը խնդրելու և ընդունելու փափաքող յուսով։

Ուրիշ գրչագրի մը մէջ ալ կը կարդանք թէ Աստուածաշունչ գրոց թարգմանութեան համար ի Բիւզանդիոն ղրկուած երիցագոյն աշակերտներէն մէկը՝ սուրբն Սահակ և Մեսրոպ ուրիշ հինգ անձինք ալ յղեցին զԱնյաղթ, զԽորենացի, զՄամբրէ իմաստասէր և զԱբրահամ հռետոր. և զՊաւղոս՝ նմանակից սոցա. «Եւ կայսրն, կ՚ըսէ, զԴաւիթ և զՄովսէս դատաւոր կացոյց ի տան հայրապետանոցին, և ի թարգմանութենէ ոչ դադարէին։ Ապա կամեցեալ նոցա երթալ յԱթէնս, չեթող կայսրն. այլ կարգեաց զնոսա վերակացուս մէն մի ի վերայ շինուածոյ երկուց քաղաքացն՝ Կարնոյ և Ցամթայ՝ զոր էր շինեալ հայրն Արգարու զառաջինն։ Յետ շինութեան քաղաքացն երթան յԱթէնս հրամանաւ Թէոդոսի թագաւորի հնգեքին եւս. ուսեալ և աւարտեալ յամս եօթն զիմաստասիրական ուսմունս. ընդ փորձ քննութեան անցանեն ըստ սովորութեան Աթենացւոց, ընդ այլոց յիսուն և չորս աշակերտելոց. և կացուցանեն զամենեսին ի հանդիպոյ սեան միոյ՝ յորոյ վերայ գրեալ էին բանք եօթն թագաւորաց, և որ ոք լուծանէր զնոսա՝ հասանէր յաստիճան վարդապետութեան յայն եօթն ամին»։ Առաջ կ՚անցնի Դաւիթ այդ հանդիսին մէջ, իր ամէն ուսումնակիցներէն աւելի խրախուսուելով համարձակօրէն, ուր այլք պշուցեալ կը նայէին ի սիւնն, ու բան

Շնորհալւոյ տրուած հանելուկներուն մէջ, Դաւթի համար.

« Իմաստուն մի ի յԱթենայ.
Էր ի յազգին Հայոց մեծաց.
Խորովային ճառ մի ասաց,
Ու զոր ետուր վարդապետաց.

Վիպասանութեան մէջ կը վկայէ վասն թարգմանչաց

« Մինչ զի Յունաց գերազանցեալ »։

առ բան կը լուծանէ եօթն թագաւորաց խօսքերը։ Հանդիսականք կ'ապշին կը մնան Դաւթի իմաստութեան և հանճարոյն վրայ, կը փութան մարգրտայեռ և ակնակուռ ոսկեղէն սափար մը կը բերեն, և բարձրացնելով զԱնյաղթ այն փառաց ու հիացման սափարին վրայ, ուսումնակիցքն ուսերնուն ու գլխոց վրայ կ'առնուն ու ընդ բոլոր քաղաքն կը շրջեցուցանեն, մինչ ձայնք տաւղի և փողոց կը հռչակեն իր անյաղթելի իմաստութիւնն։

⁂

Այսչափ է Դաւթի իմաստասիրին վարուց վրայ ունեցած տեղեկութիւննիս։ Քանի մը խօսք ալ իւր գրաւոր երկասիրութեանց վրայ զրուցենք։ Ասոնք գլխաւորաբար երկու դասակարգի կրնան բաժնուիլ․ ինքնագիր, և թարգմանութիւնք։

Առջիններուն մէջ ամենէն աւելի նշանաւոր և մտադրութեան արժանին է․

Խաչին Ներբողը․ — Որուն մասնաւոր յառաջաբանութեան մէջ՝ աւանդուած է թէ ինչ պատճառաւ երկասիրած է Դաւիթ այս գրուածքը։ Հայոց Գիւտ կաթուղիկոսին իշխանութեան օրերը՝ Օշին գեղջէն Կոստանդին, Պետրոս և Թէոդորոս անունով երեք անձինք, եկան, որ ժողովուրդը խաբելու համար՝ ամէն արտաքին պատրուակ ունէին․ խարազն կը հագնէին, բոկագնացք, պահողք ու կեղծաւորք․ սուրբ Կուսին համար կը քարոզէին թէ աստուածածին չէ, և Աստուծոյ մարդացելոյ խաչն ալ՝ փրկութեան փայտ չէին համարեր, այլ գողոց պատժարան։

Գիւտ կաթուղիկոս երբոր լսեց թէ Դաւիթ և իր ընկերներն Աթենքէն և ուրիշ քաղաքներ ուսմանց համար ճանապարհորդելէն դարձեր են, նամակ մը գրեց առ նա, աղաչելով որ իւր իմաստուն գրիչը և զօրաւոր լեզուն սուրբ խաչին գովութեան ու պաշտպանութեան գործածէ․ որպէս

զի «բարձցի, կ'ըսէր, հերեսիովտաց հերձուածն, և խլեսցին յագարակաց փուշք, և որոմն սատանայական սերմանց, որ ի մարդ յուսան և ոչ յԱստուած»։

Դաւիթ պատասխան տուաւ կաթուղիկոսին, յօժարամիտ յանձն առնլով հրամանը, յորմէ թէպէտ իւր տկարութիւնը զինքը ետ կը նահանջէր, բայց միանգամայն հայրապետին աղօթքին վստահացած կը քաջալերուէր։ Դաւթի առ Գիւտ գրած թղթին վերջը՝ այսպիսի ծանօթութիւն մը կ'աւելցնեն գրչագիրք․ «Եղեւ այս ի ժամանակս մարզպանութեան և սպարապետութեան Վահանայ՝ որդւոյ Մագնոսի, որդւոյ Վարդանայ, կամ որպէս ասեն՝ եղբօր։ Փորձողք և գիտողք սուտ ասեն զայլ պատճառսն յԱթէնս կամ ի Բիւզանդիոն կամ յԵրուսաղէմ, կամ յորժամ ի Պարսից դարձաւ խաչն՝ և խօսեցաւ»։

Այս ծանօթութեան մեկնութիւնը կու տայ Շնորհալին՝ Անյաղթին այս ճառին վրայ գրած բացատրութեանը մէջ։ Կը պատմեն, կ'ըսէ, թէ սուրբ Սահակ և Մեսրովպ զոմանս իրենց աշակերտներէն՝ իմաստութիւն սորվելու համար, Յունաց աշխարհին կողմերն ու անոնց Աթէնք մայրաքաղաքը ղրկեցին, որոնք հելլենական լեզուին թարգմանիչ եղան․ որովհետեւ նախ հարկաւոր էր որ ամէն իմաստասիրականաց հմտանան, բառերու և ոլորակներու, և ետքը համարձակին ի թարգմանութիւն։ Եւ ըսին ոմանք թէ Աթենացւոց մէջ սովորութիւն կար եօթը տարի աշակերտութիւն ընել․ և այն եօթը տարուան լմննալէն ետքը՝ բարձր տեղւոյ մը վրայ կ'ելլէր աշակերտը, ու ժամանակին և լսողաց պիտոյից յարմար բան մը կը խօսէր։ Դաւիթ ալ՝ որ այն աշակերտաց մէկն էր, նոյն աստիճանին հասնելով, նշանին առջեւ եղող աշտարակին կամ սեան վրայ ելաւ, և հոն զրուցեց այս ճառը՝ յուրախութիւն լսողաց և ի պատիւ խաչին։ Ուրիշներն ալ կ'ըսեն թէ Աթենքէն Կոստանդնուպոլիս դարձած ատենը՝ իր ընկերները զինքը մեծարեցին, ու վերացման խաչին օրը այս ներբողը զուր-

ցընել տուին։ Ոմանք ալ թէ յԵրուսաղէմ սուրբ խաչին առջեւ, և այլք՝ թէ խաչը Պարսկաստանէն դառնալէ ետքը, և ոմանք ալ թէ անապատի առանձնութեան մէջ յօրինուած է այս ճառը։ Բայց թէ Շնորհալին, և իրմէն աւելի Գիւտ կաթուղիկոսին ու Դաւթայ վաւերական թըղթերը ամէն տարակոյս կը վերցնեն, յայտնապէս ցուցընելով թէ երբ և ինչ վախճանաւ յօրինուած է այս ճառը։

Սահմանաց գիրք կամ Սահմանք իմաստասիրութեան.— Հին Յունաստանի մէջ ծաղկող փիլիսոփաներէն մէկը, Պիհռոն, մասնաւոր և անօրինակ աղանդ մը հնարած էր, ամէն բանի վրայ տարակուսիլ, և այն տարակոյսը և դեգեւեալ վարանքը իրեն առջեւը իմաստութիւն համարուած էր. որով և բազմաթիւ աշակերտներ ստացած, որք ժամանակ անցնելով՝ իրենց վարդապետին կարծեացը վըրան ալ հաստատուն չկենալով, շատ աւելի անդին անցեր էին. և բոլոր մարդկութիւնն իրեն ամէն գիտութեամբ, ուսմամբք և կրօնիւք՝ անէակ կը կարծէին, և ինչուան կենաց և մահուան մէջ խտրութիւն չէին դնէր։ Այսպիսի սխալ և մոլորական դրութեան մը դէմ զինեցաւ Դաւիթ իւր այս գրուածքովը, զոր ինքը կամ գըրչագիրք կը կոչեն «ընդդէմ առարկութեանցն չորից Պիհռոնի իմաստակի, և սահմանք և տրամատութիւնք իմաստասիրութեան»։

Միւս այլ գրչագրի մը յիշատակարանին մէջ. «Այսպէս պարտ է իմանալ զպատճառն գրոցս։ Յորժամ գնայ մեծ փիլիսոփայն Դաւիթ ի մայրաքաղաքն իմաստութեան յԱթէնս, և վարժեալ եղեւ ամենայն կատարելութեամբ, մինչեւ ընդ առաջին իմաստասէրս համարել զնա. եղեւ ի ժամանակին յայնմիկ բազում հակառակութիւն ի մէջ իմաստասիրացն վասն իմաստասիրութեան. ոմանք անգոսնելով և այլք օրինակ ի մէջ բերելով, որպէս էքս ի հոռոման և ի ծորման են, և ոչ ունին դադարումն, սոյնպէս

և իմաստասիրութիւն գոյութիւն ունի, բայց ոչ դադարի. և ոչ միաբանէին ընդ միմեանս ասացեալքն։ Եւ այսպէս բազում վրդով էր ի մէջ նոցա, զոր մի ըստ միոջէ ցուցանէ մեծս Դաւիթ, յինքն առեալ զամենայն հոգս իրին, և եղծ զամենայն հակառակութիւն նոցա. և եցոյց զիմաստասիրութիւնն գոյութիւն ունել։ Եւ առեալ զբանս իմաստասիրացն, եցոյց միմեանց հակառակ գոլ։ Եւ ինքն նախ սկիզբն դնէ և լուծանէ զնոցայն իմաստութիւն. և ապա հաստատէ զիմաստասիրութիւնն... Եւ յոմանց ասի թէ ոչ յԱթէնս, այլ յորժամ եկն ի Հայք ի բնիկ գաւառն իւր ի Հարք, յայնժամ եհաս համբաւս այս ի լսելիս նորա գալով ոմանք յուսումնակցացն և պատմելով զանհաշտ խռովութիւն որ էր ի մէջ իմաստասիրացն։ Յայնժամ արարեալ զգիրս զայս առաքէ առ նոսա, զի բարձցի ի նոցանէ վրդովմն. և արարեալ օրինակ, զօրինակն թողու ի Հայք, որ է այս գիրս... բայց թէ ի վերագրութեանն զանունն ոչ դնէ. քանզի ոչ ընդունէին հպարտ ազգս Հայոց զիմաստս վարդապետաց իւրեանց, ոչ եդ՝ զի մի կորուսցեն և կամ զի մի գիտասցեն և պատուեսցեն զնա։ Իսկ ի Բարձրացուցէքն, զի ի սկիզբն գրեալ է անուն նորա, վասն զի յետոյ կարգեցին։ Եւ այս գիրս ոչ գտեալ եղեւ յայնմ ժամու, և յետոյ ոչ արարին փոյթ կարգել զանունն»։

Իմաստասիրական ուսմանց կարգէ դուրս փափաքով մը ետեւէ եղած էր Դաւիթ, և իրեն այնպէս կ'երեւնար թէ «որք միանգամ իմաստասիրութեան տենչան բանից, և առ ի նմանէ հեշտութեանց ծայրիւ մատին միայն հանդիպին ճաշակեալք, ամենայն կենցաղական հոգոց բարեաւ մնալ ասացեալք, ողջախոհ խմն մոլութեամբ առ այսոքիկ վարեալք բերին»։ Այս փափաքին արժանաւոր գիտութիւն և լեզու բանեցուցած է Դաւիթ՝ Սահմանաց գրքին մէջ։ Հին յունական իմաստասիրութեան կատարեալ և ամբողջ տեղեկութիւն մը կը տեսնուի, և իմաստասիրութիւնը՝ իմաստասիրութեամբ կ'ապացուցանէ, մէջ բերելով իմաստակաց ամէն առարկութիւններն, և անոնց ամենուն պատասխանը տալով։ Ուստի և իրաւամբ կը գրուցէ Ստեփաննոս Սիւնեցի. «Արդ թէ զինչ է բնութիւնս մեր, յառակապէս ուսաք ի Դաւթայ եռամեծէ. այն՝ որ ընդդէմ Ակադեմայցն և Պիւռհոնացեացն դիմակայէ քաջապէս, որք ջանային եղծանել զգոյութիւն իմաստութեան»[1]։

Հայերէն մատենագրութիւնը՝ ճիշդ իմաստասիրական ըսուելու գրուածք մը մինչեւ այն ժամանակ արտադրած չէր, ուստի և ինքն Դաւիթ եղաւ առաջին՝ բուն իմաստասիրութեան պարապող, և անոր յատուկ լեզուն գործածող։ Ուստի ինչպէս ուսման, այնպէս ալ լեզուին, պէտք էր որ ինքն ըլլար հեղինակ։ Այս պարծանքն աւելի

արժանապէս կրնայինք իրեն ընծայել՝ եթէ իմաստասիրական ուսմանը հաւասար՝ լեզուին կատարելութեանն ալ պարապելու ետեւէ եղած ըլլար, կամ թէ այնչափ յունականութեան ետեւէ չըլլար, ուսմանը պէս՝ լեզուն ալ անոնցմէ փոխ առնելով։

Դաւթի իմաստասիրական ոճոյն և հմտութեան չափը այսպէս կը գրուատէ գաղղիացի հայագէտն Վիլֆռուա. «Թերեւս թուիցի ումեք ասել թէ Դաւիթ ծառայաբար զհետ երթեալ իցէ Պղատոնի և կամ Արիստոտելի։ Ոչ այդպէս։ Զի գիտէ նա և ընտիր առնել ի մէջ միոյ կամ միւսոյն. գիտէ հերքել հաստատութեամբ զկարծիս՝ որք հետեւիցին նմա ճշմարիտ։ Եղանակ գրութեան նորա գերազանցեալ է յոյժ. ձեռնարկէ որոշ և հաստատուն, յառաջ խաղայ կարգաւոր և ընտիր ոճով. առաջի առնէ իմաստս մտաց իւրոց այնպիսի և այնչափ յստակութեամբ մինչեւ ի զարմանս և ի հիացումն կրթել զընթերցողն։ Ոճ նորա ինքնաբերական է յոյժ և համառօտ. և գրուածքն ոչ միայն չարտուցանեն զընթերցողն, վասն նիւթոյն ցամաքութեան որ ի նոսա, այլ և բռնադատեալ տանին զնա անդրագոյն, զոր ոչն գիտէր ի սկզբան»։

Դաւթի այս գրուածքին յունարէնն ալ կը գտնուի, (Τοῦ αὐτοῦ κατὰ Μανιχαίων λόγος, δώδεκα συλλογισμῶν, ὅτι τὸ κακὸν, φθαρτὸν καὶ γενητὸν καὶ ἀνίπαρκτον, καὶ ὁ τούτου δέ πατὴρ διάβολος οὐκ ἀγέννητος). ուստի և ոմանք կարծեցին թէ Անյաղթ՝ իւր մէկ քանի գրուածներն առաջ յունարէն լեզուով շարագրած է՝ Յունաստանի մէջ գտնուած ատեն, անոնց կիրառութեան կամ գիտութեան համար, ու ետքը դանոնք ի յունէ ի հայ թարգմաներ։ Ոմանք ալ համարեցան թէ Սահմանաց ամբողջ գիրքը՝ թարգմանութիւն ըլլայ և ոչ սկզբնագիր, որովհետեւ նոյն գրքին վերջին գլուխը՝ որ կը սկսի «Ամենայն չար տանջելի», Նիւսացւոյն Գրիգորի ընծայուած է՝ անոր անուամբը տպագրուած երկասիրութեանց հետ մէկտեղ։ (Προλεγόμενα τῶν πέντε φωνῶν τῆς φιλοσοφίας ἀπὸ των τοῦ θεοφιλεστάτου φιλοσόφου... Կարծիք ալ կայ թէ ուրիշ անձ մը թարգմաներ է Դաւթայ գործը ի հայերէն Զ դարուն մէջ: Դաւթի Անյաղթի անուամբ ուրիշ գրուածք մ'ալ կայ հետեւեալ խորագրով. «Դաւթի Անյաղթ վարդապետի հայկազնի՝ գովեստ ներբողական ի սուրբ Եկեղեցի–յԵրուսաղէմ»: Որչափ ալ ոճոյ նմանութիւն ենթադրենք գտնել այս ճառին և իր անունը կրող ուրիշ երկասիրութեանց մէջ, բայց հարազատութիւնը միշտ տարակուսական կը մնայ: Թարգմանութեանցը վրայ պիտի խօսինք գրուածքիս երկրորդ մասին մէջ:

---

[1] Առաքել Սիւնեցի, (ի Մեկն. Սահմանաց) կ՚ըսէ. «(Դաւիթ) գրեաց նախ զՍահմանքս, երկրորդ զԲարձրացուցէքն, երրորդ զՊէտքն, չորրորդ զՄեկնութիւն քերականին, հինգերորդ զՄեկնութիւն Պորփիւրի և զԱրիստոտելին». և կը յաւելու. «Իսկ թէ վասն է՞ր ոչ արդիւնացաւ բանք նորա ի Հայս, այնպիսոյ փառաւոր առն և առաքինոյ և իմաստասիրի. Եւ այս վասն հինգ պատճառի. նախ՝ զի յետ Վարդանանց պատերազմի դառնացեալ էին Հայք, և ամենայն բան աչաց ելած էր նոցա վասն աւերութեան աշխարհիս և կոտորման իշխանացն. երկրորդ՝ զի ոչ գոյր ուսումնական,... երրորդ՝ զի յանդիմանեալ ի նմանէ՝ անարգեցին զնա և զբանս նորա, և հարեալ վիրաւորեցին զնա. և նա գնացեալ ի Վիրս, անդ կացեալ վախճանեցաւ. չորրորդ՝ զի անիշխան էր ազգս և ոչ ոք էր որ յարգէր զնա». Ուրիշ գրչագիր մ'ալ կ'ակնարկէ թէ Սահմանաց գրոց յօրինման պատճառն հետեւեալն է «Մեծն Դաւիթ, կ'ըսէ, և Եզնակ Կողբացին գնացին յԱթէնս, և լուան և տեսին բիծս ի վարս վարդապետացն, և զայրացեալ մեղադրեցին. Եւ նոքա զչարեալ ասեն զՀայս կարճողիս և չարճճիս և հակառակողս և փորձողս. զոր յիշէ Աստուածաբան. և խորհել չթողուլ անդ զոք ի Հայոց ուսանել. և չգոյր պատճառ այլ, բայց աւելի իմանալն քան զայլս յազգաց. Եւ զի էր ի նոսա չար ինչ հակառակութիւն, Պիհռոնացիք և... որք Ակադեմիանք կոչին»։

Ուրիշ գրոց մէջ ալ կը գտնենք Անյաղթի համար. «Կարող էր և բազմաց աստուածատուր իմաստից, զի զբնականն և զշնորհականն քաջ ունէր զատ յուսմանէն. այլ վասն անիշխանութեան և ազգիս անընդելութեան խափան եղեւ»։

Դաւթայ անուամբ գրուած ամենայն գործքն տպագրուած են ի Վենետիկ յամի 1833.

ԳԻՒՏ

Գիւտայ վարքը: — Կաթուղիկոսութիւնն և յարքունիս Պարսից կոչուիլը: — Գրաւոր երկասիրութիւնքը:

Դաւթի Անյաղթի ժամանակակից էր Գիւտ, Տայոց գաւառին Արահեզայ գիւղէն, կրտսեր թարգմանչաց մէջ, ուսումի և յիշատակարանի մը մէջ աշակերտ կոչուած սրբոց քահանայից, այսինքն Ղեւոնդեանց, որոց ի Պարսկաստան նահատակուելէն տասը տարի ետքը՝ Հայոց կաթուղիկոսական աթոռը նստաւ: Փարպեցին այս համառօտ խօսքերով՝ թէ անոր վարուցը և թէ գիտութեան վկայութիւնը կու տայ. «Այր մի գիտութեամբ հայովս և առաւելեալ յունին, յորդառաց բանիւ և առատաբուղխ վարդապետութեամբ, զոր ոչ երբեք արգելոյր անգիտութեանն վարդապետութիւն. այլ զծածուկս առացեալ Հոգւոյն՝ նոյն սուրբ Հոգւոյն շնորհ յայտ արարեալ՝ նովաւ լուսաւորապէս ուսուցանէր բովանդակ ժողովրդոց. որոյ բանք իւր՝ նման յորդառատ անձրեւի՝ զամենայն լողի ծաղկեցուցեալ պտղաբերէր զոգիս»:

Սակայն Պարսիկք այն ատեններն իրենց բռնաւոր ազդեցութեամբն սկսեր էին մինչեւ նախարարաց սիրտը հեռացնել ի սուրբ Հաւատոց: Ուստի սկսան ոմանք կրակատուններ ալ բանալ իրենց իշխանութեան տակ եղած երկիրներուն մէջ. և անով քաղաքական պատիւներու մէջ մեծնալով, ձեռքերնուն տակ եղած հպատակաց մոլորելու և գայթակղելու պատճառ ըլլալ:

Այսպիսի ատենուան մը մէջ Գիւտ կաթուղիկոսը՝ ամէն ջանք կը բանեցնէր անարատ պահելու Հաւատոց գանձը՝ որուն աւանդապահն էր. ուր իրեն աշակերտակիցքն՝ Եղիշէ, Խորենացի և այլք, գրեթէ յուսահատեալ ազգին բարելաւութենէն՝ անապատները քաշուեր առանձնացեր էին:

⁂

Երբ տեսաւ Գիւտ թէ իւր ամէն ջանքովն ալ համաճարակ աղետից առջեւն առնելու բաւականութիւն չունի, սկսաւ խօսքովն ու գրով ուրացողներն յանդիմանել, և իրենց հաւատոց մէջ հաստատուն մնացողները քաջալերել ու պատուել: Այս արդարադատ խորութեան վրայ զչարեցաւ Գադիշոյ Խորխոռունի, որ ուրացելոց մէջ ամենէն աւելի չարաբէրն էր, և ամենէն աւելի իւր ջանքն ու ազդեցութիւնը բանեցնող՝ որ իրեն հետեւող ընէ զազգն: Եւ չկարենալով ուրիշ կերպով վրէժն առնուլ, Պարսկաստան գնաց, ու Պերոզ թագաւորին առջեւ ամբաստանեց զԳիւտ:

Պերոզ՝ արքունի դուռը կանչեց զկաթուղիկոսն, որպէս զի իրմէն լսէ վրան եղած ամբաստանութեանց ապարանութիւնը, բայց հոն՝ զինքն արհամարհող ու նախատող հեթանոսութիւնն անգամ իրմէ պատկառեցաւ, ինչպէս կը վկայէ Փարպեցին։

Թագաւորն իշխան մը ղրկեց առ Գիւտ, և ամբաստանութեանց ստուգութիւնն անոր յանձնեց։ Գեղեցիկ առնախօսութեամբ մը Գիւտ արդարացուց ինքզինքը, և թէ ինչպէս իրեն համար նուիրական պարտք մ'է սիրել ըզքրիստոնէութիւն։ Եւ որովհետև ուրիշ ամբաստանութիւն մ'ալ գրած էին վրան, Հոռոմոց հետ շատ վերաբերութիւն ունենալը, անոր պատասխան տուաւ համարձակ· «Իսկ որ ասէ թէ ունի երթևեկ ի Հոռոմս, ոչ ըստ ամբաստանողին կարծեաց են իրքդ, այլ վասն զի զդըպրութիւն և զգիտութիւն և զամենայն իմաստս բանաւոր ուսմանց յաշխարհէն Հոռոմոց ստացեալ եմք, և են իմ անդ ծանօթք և բարեկամք բազումք և ուսումնակիցք»։ Աներկիւղ համարձակութեամբ Գիւտ զարմացուց զիշխանն ալ, Թագաւորն ալ, որ չկարենալով իր չարութեան խորհուրդը անոր վրայ կատարել, զրկեց զինքն ի հայրապետական պատուոյ։

Այն վիճակին մէջ վրայ հասաւ Գիւտայ մահը։

⁂

Իբրև Թարգմանիչ՝ անշուշտ գլխաւոր մաս մ'ունեցած պիտի ըլլայ Գիւտ իր աշակերտակցաց մէջ· որովհետև մեծ է իր գիտութեան և իմաստութեան գովութիւնը։ Բայց իբրև ինքնագիր մատենագրութիւնք՝ քիչ բան հասած է մեր ձեռքը· յորս գլխաւոր կրնայ համարուիլ Թուղթ մը առ Դաւիթ Անյաղթ, խաչին ճառը իրմէ խնդրելով, որուն վրայ առաջ խօսեցանք։

Կաղանկատուացին կը յիշատակէ Գիւտայ անուամբ Թուղթ մը առ Վաչէ արքայ Աղուանից, որ իւր թագն ու մոգութեան կրօնքը, միանգամայն նուիրելով աւետարանին ճշմարտութեան, միանձնական կենօք փափաքած էր երկնաւոր թագաւորութիւն մը փնտռել· այսպիսի ընթացքի մը հարկաւոր և էական խրատները կը բովանդակէ Գիւտ Թղթին մէջ։

Կ'երևնայ թէ ժամագրոց և հասարակաց աղօթից կարգաւորութեան ալ ձեռնտու եղած է Գիւտ, որովհետև նոյն գրքին խորագրոց մէջ իւր անունն ալ կը յիշուի, թէպէտ և առանց մասնաւոր աղօթք մը իրեն յատկացընելու։

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Մանդակունի և Հայաստանի վիճակը։ — Վահանայ մարզպանութիւնը։ — Մանդակունւոյ ընծայուած ճառեր։ — Մանր գրուածք։

Արշարունեաց Տախնոտ[1] գիւղէն էր Յովհան Մանդակունի, որբոյն Սահակայ և Մեսրոպայ աշակերտաց կարգէն· ու եօթանասուն և հինգ տարուան հասակին՝ կաթուղիկոսական աթոռը նստաւ Վահան Մամիկոնեանին յորդորանօքը։

Դժուարին գրից մէջ էր իր ատենը Հայաստան։ Վահան Մամիկոնեան՝ իր կտրուկ ու յաղթող սրոյն՝ և Աստուծոյ անուան վրայ երդուընցեր էր՝ խաղաղութիւն պարգևել Հայաստանի։ Բայց իր այս ջանիցն ոխերիմ թշնամի էին Պարսիկք, և անոնց ընկեր եղած ի Հայոց

---

[1] Ձեռագրի մը մէջ կը կարդանք· «Յովհաննու Մանդակունւոյ ի գաւառէն Արշարունեաց՝ ի գեղջէն Տաղկեաց»։

ուրացելոց խումբ մը։ Միաբանելոց հաւատքն ու քաջութիւնը ամրացնող և խրախուսող էր Մանդակունի՝ իրեն հայրենասէր սրտովն, և հայրապետական բարձր աստիճանով։ Ինքը զանոնք՝ պատերազմի դաշտը չմտած, մահուան արհաւիրքը չտեսած, սուրբ եկեղեցի կը մտցնէր, կ՚օրհնէր անոնց զէնքերը, և հայրենեաց փրկութեան զօրաւոր ախոյեաններ՝ Վահանայ ձեռքը կը յանձնէր։ Պատերազմաց մէջ ալ անոնց յաջողութեամբը կ՚ուրախանար, զինուց ձախողելու ատեն՝ աղօթքովը այն քաջերուն օգնութիւն կը խնդրէր, որոնց յաղթանակը՝ հաւատոց յաղթանակ պիտի ըլլար։

Այս վախճանին հասնելու համար՝ ծերութիւնն իրեն փոքր արգելք մը կ՚երեւնար, մինչեւ պատերազմաց բանակներուն մէջ իր խրախուսիչ ձայնը բարձրացնելով, և մարտից խառնուրդին մէջ Պարսիկներէն մահառիթ վէրք մ՚ընդունելով, մեռելոց դիականց մէջ՝ իբրեւ մեռեալ կ՚իյնար, և Աստուծոյ մասնաւոր հրաշքովը՝ կրկին կենդանութեամբ հայրենեաց կը պարգեւէր։

Բայց վերջապէս իւր վախճանին հասաւ Մանդակունի։ Վահան որ իր սրոյն և քաջութեան վախովը զՊարսս սասանեցուցեր էր, անոնց սիրելի կ՚ըլլար՝ իւր «իմաստից յառաջատեսութեամբն, արդարախոհութեամբն, աշխարհագիտութեամբն ու քաջութեամբ», և ի Պարսկաստան կանչուելով՝ Հայոց աշխարհին մարզպանութեան իշխանութեամբը կը փառաւորուէր, և արքունական հրովարտակով՝ կրկին իր հայրենիքը կը դառնար։

Այս հրամանագիրն առնելով՝ անմիջապէս Դուին քաղաքը հասաւ Վահան, և սուրբ կաթողիկոսին դիմեց յեկեղեցին։ Ուրախալի լրոյն համբաւը բոլոր քաղաքին մէջ կը տարածուէր· Նախարարք և ազատանի, իշխանք և ռամիկք, արք և կանայք, ծերք և տղայք, ամէնքը հոն կը վազէին, այնպէս որ ընդարձակ սրբավայրը՝ այդ բազմութիւնը չէր կրնար տանիլ· և չորս կողմի փողոցներն ու

հրապարակներն՝ բազմութեամբ կը լեցուէին։ «Եղեւ օրն այն, կ՚ըսէ ականատես պատմիչը, անյագ խնդութիւն և անսպառ ուրախութիւն աստուածասէր բարեսիրացն, և ողջախորհուրդ մտաց լուսահայեցաց· և սուգ թախանձալից և տրտմութիւն անմխիթար՝ խօթամտացն»։

Այն սրտաշարժ տեսարանին՝ չէր կրնար Մանդակունին իր ուրախութեան արցունքը բռնել· կ՚ելլէր սուրբ բեմին վրայ, և խաղաղութեան ողջոյնն՝ իբրեւ առհաւատչեայ աստուածաշնորհ խաղաղութեան իւր ժողովրդեանը տալով, ու այն զարմանալի փոփոխութեան վրայ՝ չկարենալով իր հիացումը բռնել, «Ցեկեղեցիս, կ՚ըսէր, օրհնեցէք զԱստուած, և զտէր յաղբերացն Իսրայելի։ Ահա սիրեցէք զեկեղեցիս, և սիրեցայք յեկեղեցւոյ· զթագաւորս քաղցրացոյց եկեղեցի, զգազանս ընդելացոյց, զգայլս՝ գառինս արար, զձեզ պայծառացոյց, զթշնամիս ճշմարտութեան ամաչեցոյց»։ Եւ ետքը՝ հայրենեաց բարօրութեան համար հանապազատարած ձեռքերն երկինք վերցնելով, «Օրհնեալ տէր Աստուած Իսրայելի, կ՚ըսէր, որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյս՝ որ ինձ հաւատացաւ, պատուով՝ շքեղութեամբ պայծառացեալ ի Քրիստոսէ»։ Եւ օրուան գեղեցիկ հանդիսին և տեսարանին արժանի լեզուով մը, կորովով և իմաստիւք լի ճառ մը կը խօսէր· այնպէս որ իւր աստուածազգեցիկ սիրելի լեզուին լսելէն ու անոյշ ձայնին դադրելէն ետքն ալ, դեռ եւս եկեղեցւոյն մէջ լալու և արտասուաց ձայնը կը շարունակուէր· ոմանց առ խնդութեան, այլոց առ զղջման, և ամէնքը միաբան զՎահան ողջունելով և ի հայրապետէն օրհնուելով՝ Նոր ջանքով մը հայրենեաց երջանիկ օրեր պարգեւելու աշխատանքին երդմունք կ՚ընէին։

Վեց տարի հայրապետական գահը արժանապէս գրաւելէն ետքը վախճանեցաւ Յովհան, և Շիրակ գաւառին Բեռնոս ըսուած գիւղը թաղուեցաւ։

* * *

Այլ և այլ երկասիրութիւնք կ'ընծայեն Մանդակունւոյն մեր Ժ կամ ԺԱ դարուց պատմիչք։ Ասողնիկ կ'ըսէ. «Երանելին Յովհան Մանդակունի՝ զՀայոց բազում կարգս ուղղութեան կատարեաց. զքարոզս գիշերի և տուընջեան, զկարգս մկրտութեան և զսարկաւագի, զքահանայի և զեպիսկոպոսի, և զօրհնութիւնն եկեղեցւոյ, և զխոմիմբ զպատարագամատոյցն՝ զոր Աթանասի ասեն լինել»։ Յովհան կաթուղիկոս. «Մանդակունին ալցեալ ամենայն հոգեւոր շնորհօք, և կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթականսն, ժամակարգութիւնս եկեղեցւոյ սրբոյ. և յարդարէր ևս ճառս զգուշացուցիչս դիտաւորական կենցաղոյս, որ բերէ զոգւոցն փրկութիւն»։ Կիրակոս. «Մանդակունի ... բազում կարգաւորութիւնս եմոյծ յեկեղեցի, կարգեաց զքարոզս աղուհացիցն և զաղօթս նոցա. զերրորդ ժամին և զչորրորդին և զիններորդին, և զեկեղեցւոյն հիմնարկէքն և ժամահարի, սկիհ և զմաղզմային գիրք և բանք, խաչօրհնէք և պսակ»։ Վարդան պատմիչ. «Յաջորդէ զնա Մանդակունին, իմաստասէր և լի հոգւով Աստուծոյ, որ բարիոք յօրինեաց զկարգ ձեռնադրութեան և ճառս խրատուց։ Սա թարգմանեաց զերրորդ կորնթացի թուղթն, զՅովհաննու, և այլ բազում օգուտս գործեաց ի կեանս իւր»։

Ասոնք են ահաւասիկ յետին պատմչաց՝ Մանդակունւոյն ընծայած երկասիրութիւնները, և իրենց խօսքերը՝ որչափ ալ մթին և ըստ արժանւոյն գոհացուցիչ չհամարենք, յայսմ կը միաբանին՝ թէ այլ և այլ ճառեր շարագրած է Յովհան, և թէ Ե դարուն մէջ եղած եկեղեցական կարգաւորութեանց մեծապէս ձեռնտու եղած է, այլ և այլ աղօթից շարագրութեամբը և կամ թարգմանութեամբ։

Երուսաղեմի Մատենադարանին գրչագիր մը (թիւ 989) հետեւեալ ճառերը կ'ընծայէ Մանդակունւոյն, Ա. Վասն մկրտութեան։ — Բ. Վասն հաւատոյ։ — Գ. Վասն Քրիստոսի մարմնոյն՝ մահուն և խաչին։ — Դ. Վասն երկու բնութեան։ — Ե. Վասն ծննդեանն Քրիստոսի։ — Զ. Վասն որովայնամոլութեան։ — Է. Վասն շնութեան։ — Ը. Վասն զրկանաց։ — Թ. Վասն դաւանութեան։ — Ժ. Վասն գիշերային աղօթից։ — ԺԱ. Վասն յիշոցնատուաց։ — ԺԲ. Վասն շնութեան։ — ԺԳ. Վասն խոստովանութեան։ — ԺԴ. Վասն անասնագիտաց և արուագիտաց։ — ԺԵ. Վասն ահեղ հարուածոց։ — ԺԶ. Վասն փոխոց և վաշխից։ — ԺԷ. Վասն սիրոյ և մախանաց։ — ԺԸ. Վասն չրամբասելոյ զքահանայս։ — ԺԹ. Վասն երկիւղի և զգուշութեան։ — Ի. Վասն ոխապահաց և քինահանաց։ — ԻԱ. Վասն գողութեան։ — ԻԲ. Վասն ընդդիմամարտութեան դիւաց։ — ԻԳ. Վասն տասն պատգամաց։ — ԻԴ. Վասն հնոց և նորաց նշանաց համեմատութեան։

* * *

Գլխաւոր երկասիրութիւնք կը համարուին իւր ճառերը, և որոնք արդէն տպագրութեամբ ի լոյս ընծայուած են[1]. քսանեւութ խրատական կամ վարդապետական ճառեր, այլ և այլ բարոյական նիւթերու վրայ, ընտիր ոճով. և Դ դարուն՝ յունական եկեղեցւոյ մէջ պայծառացած վարդապետներու ոճոյն, սրտին և լեզուին հետեւողութեամբ։

Այս սքանչելի հետեւողութիւնը՝ տարակոյս ձգած է ոմանց մտքին մէջ ասոնց հարազատութեան վրայ. ոչ թէ երկբայելով՝ որ Մանդակունւոյն պէս հանճար մը չկարենայ նման բան մը արտադրել, այլ քանի մը ձեռագրաց մէջ՝ Ոսկեբերանի և Եփրեմի ընծայուելուն համար։

---

[1] Ի կարգի Մատենագրութեանց Նախնեաց, Վենետիկ, ի Ս. Ղազար, 1836, 1860.

Այս տարակոյսը՝ գրչագրաց և գաղափարողաց անհըմուտ անհոգութեան արգասիք կրնայ համարուիլ, վասն զի յիշեալ երկու վարդապետաց յունական և ասորի բնագրաց մէջ՝ այս ճառերուն և ոչ մէկը կը տեսնուի. և թէ որ կորսուած ալ համարինք անոնց սկզբնագիրը, ինչպէս նոյն սրբոց ուրիշ այլ և այլ ճառերը, բայց քաննեւութին ալ միանգամայն կորսուիլը՝ իրաւամբ տարակոյս կը ձգէ մեր մտքին մէջ՝ թէ անոնց պիտի չըլլայ այդ երկասիրութիւնը։

Բայց Թատերաց վրայ, կ՚ըսեն, կը խօսի Մանդակունին, և այնպէս ժամանակի մը մէջ՝ յորում Հայաստան ներքին և արտաքին խռովութեանց նշաւակ, աչքերը բանալու ատեն չունէր, թող թէ զբօսանաց ետեւէ ըլլալու. մանաւանդ որ այն ժամանակին չի յիշատակուիր ի Հայաստան Թատերաց գոյութիւնը։ Յօտար պատմչաց, ի Յունաց և ի Հռովմայեցւոց ունինք յիշատակ Թատերական տեսարանաց ի Հայաստան. և զԱրտաւազդ երկրորդ՝ որ ըստ Պլուտարքեայ՝ այնպիսի քերթուածոց գրութեամբ ալ և յօրինմամբ կը զբաղէր, և յորոց հատուածք հասած էին մինչև պատմչին ժամանակ։ Կը վկայէ նաև ազգային պատմութիւն՝ Թատերաց և գուսանաց գոյութեանն ի Հայաստան. Տիգրանայ երկրորդի ժամանակ։ Բայց թէ առաջինքն և թէ յետինք՝ յոյն լեզուով գրուած և նոյն ազգին գուսանաց կը վերաբերին, և Մանդակունւոյն խօսքերը՝ անշուշտ յունական ծաղկեալ և բարեկարգ Թատերք չեն ենթադրեր. և որոնք իրեն ժամանակ չկային և չէին ալ կրնար ըլլալ ի Հայաստան. բայց ամենեւին անպատեհ է կարծելը թէ զբօսանաց տեղեր չըլլային առ մերոն, և թէ հոն զբօսանաց պատշաճը չպահուելով, կը ստիպուէին սուրբ հայրապետքն և վարդապետք՝ եկեղեցւոյ բեմերուն վրայէն իրենց ձայնը բարձրացնել։ Թող որ մեր ուրիշ հեղինակաց մէջ ալ չի պակսիր Թատերաց յիշատակութիւն։ Այսպէս Խօսրով. «Ի խաղս և ի Թատերս և ի ժողովս այլանդակաց»։ Նարեկացին. «Առ Թատերս տեսարանաց»։ Ուրիշ անանուն վարդապետ մը. «Յորժամ Թատերախաղքն հարկանին՝ յայնժամ ողբայ եկեղեցի զկորուստ ժողովըրդեան»։ Սարկաւագ. «Ի տեսարանի աշխարհիս կարգեաց կացոյց տէր՝ իւր հանդիսականս անթուելիս»։

Այսոնցմէ զատ Մաշտոցին կարգաւորութեան մէջ՝ իրենն է մկրտութեան կանոնը, խաչ օրհնելու, պսակի, եկեղեցւոյ հիմնարկէից օրհնութիւնը, տաճարի սրբութիւնն, ժամահարի, սկւոյ, մաղզմայի, սպասու և աւազանի օրհնութիւնը։ Պատարագամատուցին մէջ այլ և այլ քարոզներ և աղօթքներ, և ի մասնաւորի՝ սրբոյն Աթանասի կոչուած պատարագամատոյցը։ Ժամագրոց մէջ ալ գիշերային ժամուն՝ Զարթուցեալքս և Զքեզ գոհանամք աղօթքները, և ճաշաժամուն երեք մեծ քարոզներն ու աղօթքները։ Խրատք վանականաց միաբանից գրուածքի մ՚ալ յիշատակութեան հանդիպեր ենք յանուն Մանդակունւոյ, որ մեզի անծանօթ երկասիրութիւն է։

Բաց ի ասոնցմէ Դունայ եկեղեցւոյն մէջ խօսած ճարտասան ու գեղեցիկ ատենաբանութիւնը, զոր վերը յիշեցինք, և զոր աւանդած է Փարպեցին իւր Պատմութեան գրոց մէջ։

Հին ճառընտրի մը մէջ (որ ի Ս. Սարգիս Բաղիշու) Մանդակունւոյ կ՚ընծայուի հետեւեալ խորագիրն ունեցող երկասիրութիւնն. «Պատմութիւն և գիւտ փոխման աստուածածնին և մաւր տեառն. թէ ո՛րպէս եղեւ փոխումն, և կամ ո՛րպէս շնորհեցաւ անարատ պատկերն ի փայտն, և տուաւ Հայոց»։

* * *

ԵՂԻՇԷ

Եղիշէի վարքը. — Յաղագս Վարդանայ և Հայոց պատերազմին գրուածքը։ — Յաղագս Միաբանից ճառը։ — Մեկնութիւն Յեսուայ և Դատաւորաց։ — Ճառերն։ — Արարածոց մեկնութիւն։ — Անհարազատ կամ երկբայական ճառեր։ — Պատմութեան գրքին և մատենագրութեանց զանազան տպագրութիւնք և թարգմանութիւնք։

Կրտսերագոյն թարգմանչաց՝ կամ երկրորդ աշակերտաց դասէն էր Եղիշէ, սրբոյն Վարդանայ ատենադպիրն՝ և ինչպէս հաւանական կ'երեւնայ, նաեւ անոր մերձաւորն ազգականութեամբ[1]։

Թէպէտ և ընդհանրապէս վարդապետ կը կոչուի Եղիշէ՝ թէ իւր գրոց խորագիրներուն մէջ, և թէ ուրիշ պատմիչներէն, բայց ոմանք կը կարծեն թէ եպիսկոպոսութեան աստիճանին ալ բարձրացած է, և թէ Արտաշատ գումարուած եպիսկոպոսաց ցուցակին մէջ նշանակուած համանուն Ամատունեաց եպիսկոպոսն՝ ինքն ըլլայ, ուրիշ միաբանակից պաշտօնակցաց հետ աւելցնելով նաեւ իր ստորագրութիւնը յաշխարհին Պարսից՝ ուր կը գտնուէր նոյն ատենը։

Հայաստանի թշուառ օրերուն ականատես, երբոր սըրբոյն Վարդանայ և իրեն քաջ ընկերաց իյնալը տեսաւ, և այն պատճառաւ՝ հայրենեաց դժնդակ աղէտից մէջ թաւալիլը՝ չկրցաւ դիմանալ, և այնպիսի կեանք մը՝ մահուանէ դառնագոյն համարելով, մենաւոր առանձնութեան մէջ ուզեց իր կենաց մնացորդն աւարտել։ Ինքզինքը ծածկելով ի՝ մարդկանէ, քաշուեցաւ Մոկաց լեռներուն մէջ, ու խոտերով կ'ապրէր։ Այն լերանց վրայ պտըտող հովիւները՝ գտան անոր առանձնութեան վայրը. տեսան խստակրօն վարքն ու ճգնութիւնը, և բոլոր մերձակայ գաւառներուն հռչակեցին։ Ստիպուեցաւ Եղիշէ Մոկաց լեռներէն հեռանալ, և Ռշտունեաց գաւառը քաշուելով, հոն Աստուծոյ հաճոյական վարքը կնքեց։

«Դեռ չմեռած Հայոց Ձորը, — կ'ըսէ ազգային և ազգասէր նոր ճանապարհորդ մը, — Ոստանայ ծառաստանեայց յաջ կողմն քիչ մը խոտոր, այս անշուք չէնքին, մինակ մենաստանին երթանք ուխտ։ Մի նայիր արտաքին խրթնութեան, գեղեցկակերտ է ներքին տաճարն... Իսկ այդ չիրիմն, պաշտելի նշխարք ազու Եղիշէին կը գանձէ. Վարդանայ դպրին, Հայոց վարդապետին, հրեշտակակենցաղ ճգնաւորին։

«Համբո՛յր իւր խոնաւ հողին։

«Հոս կը հանգչի անտապան, անարձան, անյիշատակագիր, նա՝ որ անմահ արձանացոյց Վարդանն և իր դարը... իսկ վանքը կը կոչուի Զաղար Սուրբ Նշան, որ ըստ աւանդութեանն, սրբոյն Եղիշէի սրբասնեալ լանջքէն կախուած Սուրբ Նշանն է. քանի՜ փափագելի։ Խաչ՝ որ Քրիստոսի աստուածային մարմինը իր վրայ կրելով, կրեցաւ մեր Սրբոյն՝ Քրիստոսի և Ազգին սիրով հրավառ սրբազան ծոցը և կուրծքին վրայ...

---

[1] «Եղիշէ էր զինուորեալ Վարդանայ զօրավարին, և էր դպրապետ, և տեսող լեալ ամենայն անցիցն որ անցին ընդ զօրսն Հայոց ի Յազկերտէ Պարսից արքայէ. և յետ նահատակութեան զօրացն Հայոց՝ թողեալ զզինուորութիւնն կրօնաւորեցաւ, և բնակէր ճգնութեամբ և խստակրօն վարուք յանապատի. պահօք և աղօթիւք պարապեալ, խոտաբուտ և գետնախշտի լեալ յաշխարհին Մոկաց և ի ծովեզերն։ Եւ անդ գրեաց զպատմութիւն սրբոց Վարդանանց և գիրս կանոնականս. և զմեկնութիւն խաչելութեանն Քրիստոսի և այլ գիրս օգտակարս»։ Այսպէս նշանակուած կը տեսնենք ի հին ճառընտիրս։ Այս կարծեաց հաւատարմութիւնը նոյն իսկ Եղիշէի գրոց մէջ կը կարծեն ոմանք տեսնել, երբ ի Հայաստան Արտաշատ քաղաքին մէջ ժողովք կը գումարուէր ի տալ զպատասխանի թղթոյն Միհրներսեհի, Եղիշէ Վարդանայ քով էր կ'ըսեն, և իրեն նախարարաց հետ ի դրան արքային Յազկերտի. «Եւ ինքնին, կ'ըսէ, անձամբ ի տեղւոջն պատահեցայ և տեսի. և լուայ զձայն բարբառոյ յանդըգնաբար խօսելոյ»։

«Մարդ քանի որ կենայ, քանի որ նայի, քանի որ խորհի, այնքան իր ուշքը կը բացուի, այնքանը կարօտը կը շատնայ, այնքան սխրալի զմայլմանց և խորին զգացմանց խորեր կը պարզուին իւր առջեւ։ Ինչե՞ր կը քարոզէ այս լուին գերեզմանը։ Ի՞նչ ձայներ կու գան այս տապանաքարի տակէն. անմռունչ աղաւնին կը մնջէ և կը մրմնջէ սրտաճմլիկ մրմունջներով։ Գերեզման, ուր իւր չքնաղ մատենին չափ վսեմ լեզուով կը խօսի աղուն Եղիշէ. ուր կը ննջէ անմահն Եղիշէ»[1]։

Այսչափ է Եղիշէի կենսագրութեանը վրայ ունեցած տեղեկութիւննիս, աւելի ծանօթ մնալով իւր անմահական երկասիրութեամբք, որոնց մէջ գլխաւոր կը համարուի իրաւամբք Պատմութեան գիրքը։

* * *

Աւելի վիպասանական քերթուածի քան թէ պարզ պատմագրութեան կը նմանի Եղիշէի այս սքանչելի երկասիրութիւնը։ Ընտիր նիւթ մը, ընտիր հանճարոյ և գրչի հանդիպած։

Եղիշէ համառօտ ընծայականէ կամ յառաջաբանէ մը ետքը՝ կը սկսի իւր պատմութիւնը։ Արշակունեաց թագաւորութեան վերցուելէն կը սկսի խօսիլ. այն դէպքէն՝ ուր Խորենացի լալով դադրեցուցեր է իր Պատմութիւնը, և որ Հայաստանի դժբաղդութեանցն սկիզբն է։ Մերձաւոր ուժով ազգ մը՝ Սասանեանք կամ Պարսիկք՝ այլ և այլ կերպերով Հայոց թագաւորութիւնը տկարացնելէն ետքը՝ կը մտածեն քրիստոսական կրօնքն ալ անհետացնել. որովհետեւ անիկայ միայն մեծ արգելք էր իրենց ոտքը հաստատուն կռուան մը գտնելու Հայաստանի մէջ։ Աստ կը սկսի Եղիշէի պատմութիւնը։ Անհնարին ոխութիւն մը կը նկատենք Պարսից Յազկերտ թագաւորին վրայ, մեծ ատելութիւն մ՚ընդդէմ քրիստոսական կրօնից. որ աւելի գրգռուած իր մոգերէն՝ թուղթ մը կը գրէ իր ձեռքին տակն եղած հպատակ ազգաց. կ'իմացնէ իրենց թէ միտքը դրած ըլլալով Քուշանաց վրայ պատերազմի երթալ, իրենց օգնութեան կը կարօտի. ուստի կը հրամայէ որ բոլոր ձիաւոր զօրքերնին հետերնին առած Ապար աշխարհը ժողվուին։

Հայաստան ալ կը հասնի այս հրամանը։ Ոմանք միամտութեամբ, այլք ի հարկէ կը ստիպուին հնազանդիլ այնպիսի հրամանի մը՝ որուն հետեւանաց գէշ ըլլալուն իրենց միտքն ալ կը վկայէր։ Գուշակութիւննին ալ սուտ չելաւ։ Թագաւորը հրաման տուաւ զիրենք չարչարել, մինչեւ որ հաւատքնին ուրանան. անտէր Հայաստանին ալ ուրիշ խեղճութիւն մը պատրաստեր էր։ Դենշապուհ անունով մէկը ղրկեց որ երթայ Հայոց աշխարհը նստի, և զիրենք խաբելու համար ամէն պատրողական հնարք ի գործ դնէ։ Բայց աստուածապաշտ Հայաստանը այն նենգաւորին խօսքերէն չխաբուեցաւ. և իրեն սուրբ հայրապետաց հետ միաբանած՝ քաջութեամբ ընդդէմ դարձաւ Դենշապհոյ, և Արտաշատ քաղաքին մէջ գումարուած եպիսկոպոսաց ձեռքով՝ Միհրներսեհի հրապուրողական և ամբարիշտ թղթոյն պատասխանը տուաւ։

Թագաւորն և իրեն համախոհ մոգպետը՝ երբոր այն քրիստոնէական ոգւոյն թելադրած անվեհեր թուղթը կարդացին, ա՛լ աւելի զայրացան. մանաւանդ մոգպետը, այն դառնացեալ ծերը, որ կարծես թէ կը փափաքէր իր աչքովը տեսնել Հայաստանի կործանումը, և իր ձեռքովը՝ սուրբ եկեղեցեաց աւերակներուն վրայ՝ ատրուշանաց հիմունքը ձգել․ խրատ տուաւ թագաւորին որ քաղցրութիւնը մէկդի դնէ, և այնպիսի ապստամբ ազգը բռնութեամբ ընկճէ։ Հաւանեցաւ թագաւորը, ու կծու թղթով մը հրաման ղրկեց որ Հայոց գլխաւորները արքունի դուռը գան։ Հնազանդեցան անոնք․ Յովսէփ կաթողիկոսին օրհնութիւնը և քաջալերութիւնն առնելնէն ետքը՝ հասան ի Պարսկաստան․ տեսան իրենց ընկերակցաց նեղութիւնը, արտասուեցին անոնց վշտաց վրայ․ բայց թագաւորին սիրտն աւելի չզայրացնելու համար՝ հանդարտութիւն կը կեղծէին։

---

[1] ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ (Գ. Վ.) Համով-Հոտով, 106։

Իսկ նա իր սրտին թոյնը դուրս թափելու չուշացաւ․ նոյն իսկ հասած օրերնին՝ մինչեւ այն ատեն սովորական եղած ընդունելութեան օրէնքները չկատարելէն զատ՝ այլեկոծ ծովու մը պէս, ինչպէս գեղեցիկ կը նկարագրէ պատմիչը, տակնուվրայ եղաւ, երդում ըրաւ արեւուն վրայ՝ որ ամէն նեղութիւն իրենց գլուխը հասցնէ, եթէ երկրորդ օրը անոր առջեւ ինկած երկրպագութիւն չմատուցանեն արեգական։ Ի՜նչ դժնդակ հրաման աստուածասէր նախարարաց համար․ այն օրը՝ յորում կ'ուզէր զՀայս արեւապաշտ ընել, զիրենք իր արեամբը փրկող ճշմարիտ Աստուծոյն հրաշափառ յարութեան օրն էր։ Այս բանիս յիշատակն ու մտածութիւնը միայն զիրենք կը սարսափեցընէր․ ուստի և քաջութեամբ դէմ կեցան թագաւորին, յիշեցուցին թէ ինչպէս իրենց կրօնից վրայ հաստատուն են, և թէ առ ճշմարիտ Աստուածն ունեցած սէրերնին ամենեւին արգելք չըլլար իրենց պարտքերնէն պակսելու զոր ունին առ երկրաւոր թագաւորս․ ինչպէս իրօք ալ զօրութեան արժանի համարուեր են հին արքայից ատեն, և այլ և այլ պիտանի ծառայութիւններ մատուցած։

Բայց Յազկերտի առջեւ այն ամէն արդիւնքն ընդունայն էին։ Ցաւիլ կը ցուցնէր իրենց տգիտութեան վրայ ու թէ ինչպէս արեգական ու կրակի երկրպագութիւն չընելով՝ վնասակար են աշխարհի։ Ալ չդիմացան նախարարք․ երբոր հաւատոց համար վկայելու տեղն եկաւ ամենքը ձայներնին բարձրացուցին․ խոստովանեցան թէ ինչպէս հաստատուն է իրենց հաւատքը, և անընկճելի սուրբ եկեղեցին։ Այսպիսի հաստատուն հիման մը վրայ կռթնած՝ չենք վախնար, ըսին, ոչ քու սպառնալիքներէդ և ոչ ալ տուած պատիժներէդ։

Պատմիչը հոս բառ չի կրնար գտնել թագաւորին սրտմըտութիւնը բացատրելու․ կը ստորագրէ այնպիսի գազան սրտի մը մաղձերուն դուրս թափուիլը․ և թէ ինչպէս անդարձ երդմամբք կը սպառնար՝ կտտամահ վերցընել այն պատուական անձինքը։ Սակայն սպառնալեացն ալ արդիւնքը չտեսաւ․ հրամայեց որ բանտի մէջ արգելուն զիրենք։

Հոս տխուր ու սրտաշարժ տեսարան մը կը բացուի առջեւնիս։ Ամէն նեղութեանց, ամէն վշտաց ու դառնութեան համբերող սրտեր՝ հայրենեաց սիրով կը լքանին․ այն սէրը կը յորդորէ զիրենք այնպիսի բանի մը ձեռք զարնելու՝ որ երբէք չէր կրնար արդարանալ, որուն եթէ նախ իրենց արցունքովն ու ետքը արեամբ քաւութիւնը չփնտռէին։ Կը ստիպուին գէթ առ երեսս, գէթ մէկ անգամուան համար արեւուն երկրպագութիւն ընել․ որպէս զի Քրիստոսի հաւատքը անվտանգ պահուի Հայաստանի մէջ։

Հարկ չէ ըսելը թէ որչափ մեծ կ'ըլլայ թագաւորին ուրախութիւնը․ մտացը մէջ ալ ամենեւին տարակոյս չի մնար Հայաստանի վրայ տիրապետելու․ ուրախութեամբ ամենայն պատիւ ու մեծարանք կը հրամայէ որ ըլլուին նախարարաց․ հետերնին մոգեր ու մոգպետներ դրած Հայաստան կը ղրկէ։

Նոյն միջոցին այսպիսի դժնդակ լուր մը՝ բերնէ բերան, գաւառէ գաւառ անցնելով, մինչեւ Հայոց մայրաքաղաքը՝ Վաղարշապատ, և սուրբ Յովսէփ կաթողիկոսին և իրեն համախոհից ականջը կը հասնի։ Ցաւ ու տագնապ կը պաշարէ զիրենք, ու միաբան ժողովք գումարելով՝ կը ստիպուին արտասուօք երդնուլ սուրբ աւետարանին վրայ, որ չէ թէ միայն իրենց արիւնովն սուրբ հաւատքը պաշտ-

պանեն, այլ չխնայեն նաեւ իրենց կարեւոր սիրելեացն ալ, եթէ անոնք ուզենան Հայաստանի մէջ արեւու պաշտօնը տարածել· «Հայրն իր որդւոյն չխնայէ, ըսին, որդին ալ այդպիսի առթի մէջ հօրմէն չպատկառի· կինը՝ իր էրկանը հետ կռուի, ծառան ալ տիրոջը դէմ ելլէ· աստուածային օրէնք թող թագաւորեն ամենուն վրայ· և այն օրինաց համեմատ՝ ամէն յանցաւորք իրենց պատիժը գտնեն»։ Ի՜նչ սրտաշարժ դէպքեր։ Հին Հռովմայ պատմութեանցը մէջ յիշատակուած Կարթագինէի պատերազմունքն որչափ իրենց ուժէն կը կորսնցնեն։

Մինչդեռ Հայաստանի մէջ այս գործողութիւնները կը կատարուէին, մէկալ կողմանէ ուրացեալ Հայոց բանակը մոգերով ու մոգպետներով Հայաստանի մօտեցեր ու բանակած նստեր էին· իրենք ալ կ՚իմանային թէ ինչ դժուարին արգելք մը կար առջեւնին՝ թագաւորին անօրէն կամքն առաջ տանելու համար։ Իրենց ժողովուրդը անտերունչ չթողլու պատճառաւ հաւատքնին ձգող նախարարները կը տեսնէին որ նոյն ժողովուրդը զիրենք կը մերժէ։ Քսանհինգ օր այնպէս անգործ առթի կը սպասէին, շատերն իրենց մտաց ուղղութիւնը կերպով մը անոնց իմացնելու համար, և սակաւք՝ թագաւորին սեւ խորհրդոց արբանեկելու։ Մինչեւ գլխաւոր մոգպետը սիրտ ըրաւ, հետը խումբ մը զօրաց առնելով՝ կիրակի օր մը եկեղեցւոյն վրայ վազեց, և դռները խորտակելով՝ կ՚ուզէր ներս մտնել։ Հոն էր երանելին Ղեւոնդ երէց իր քանի մը խորհրդակիցներով· աչքովը տեսաւ մոգպետին անօրէնութիւնը, չկրցաւ համբերել, և ոչ ալ սպասել եպիսկոպոսաց՝ որպէս զի անոնց խորհրդովը շարժի· հրաման տուաւ հաւատացելոց որ կռուին անոնց հետ։ Անզէն՝ բայց հաւատով զինուորեալ ժողովուրդը՝ քարերով վռնտեցին թէ մոգպետը և թէ անոր համախոհները· և ինքն եկեղեցի դառնալով՝ այն յաղթութիւնը պարգեւող Աստուծոյ շնորհակալութեան մաղթանքը շարունակեց։

Այն տագնապին ձայնը բոլոր Հայաստանի մէջ տարածուեցաւ· ամէն կողմանէ արք և կանայք նոյն տեղը կը դիմէին, ու եղածն լսելով՝ մէկ կողմանէ շնորհակալ կ՚ըլլային Աստուծոյ, միւս կողմանէ հաւատոց համար վերահաս վտանգ մը աչքերնուն առջեւ տեսնելով՝ արտասուաց գետեր աչքերնէն կը վազցնէին· կը փափաքէին, կ՚ըսէ պատմիչը, որ երկիրը պատառի և իրենց գերեզմանն ըլլայ, որպէս զի չտեսնեն այն դժնդակ հրամանաց կատարումը։

Զարմացաւ մնաց մոգպետը, և իր բոլոր համախոհք· «Այնպիսի մարդկանց դիմաց, կ՚ըսէր զարմանալով մը, որ զմահ նախամեծար կը համարին քան զկեանս՝ ո՞վ կրնայ դիմանալ»։ Ուստի որոշեց՝ Յազկերտ թագաւորին գրելով՝ ամէն բան տեղնիտեղն իմացնել անոր, և յորդորել որ այսպիսի խորհրդոյ մը գործադրութենէն ետ կենայ։

Սակայն Հայ նախարարաց մէջ այնպիսիներ ալ կային որ ի սրտէ ուրացեր էին Քրիստոսի հաւատքը· և ասոնց մէջ գլխաւոր էր Վասակ Սիւնի, որուն հոգւոյ աչքերը փառասիրութեամբ կուրցած՝ կ՚ուզէր քրիստոնական հաւատոց ջնջմամբ Հայոց թագաւորութիւնը ձեռք ձգել։ Տեսնելով Վասակ թէ մոգպետը յուսահատեցաւ թագաւորին կամքը առաջ տանելէն, քաջալերել սկսաւ զինքը· այն դժուարին գործոյն կատարման յանձնառութիւնը իր վրայ առնելով՝ խոստացաւ ջանալ որ եկեղեցւոյ ուխտին մէջ երկպառակութիւն ձգէ· և թէ որ այս բանս յաջողցնեմ՝ ա՛լ այն ատեն, կ՚ըսէր, ամենեւին չեմ տարակուսիր թէ թագաւորին կամքը պիտի կարենամ ի գլուխ հանել։ Սուրբ հաւատոց գնովը կ՚ուզէր ստանալ այն երկրին թագաւորութիւնը՝ որուն անարժան էր։

Ծածուկ հնարագիտութեամբ կը սկսի Վասակ միտքը դրած չարութեան խորհուրդը առաջ տանելու աշխատիլ։ Նախարարաց և ազնուականաց տները մոգեր ու մոգպետներ կը ցրուէ· և այն կերպով կը ջանայ զանոնք մոլոր-

ցնել։ Բայց սուրբ եպիսկոպոսունք ամենայն արթնութիւն կը բանեցնեն անոր հնարագիտութիւնները խափանելու։ Տեսնելով թէ սատանայական խորհուրդն առաջ կ'երթայ, սուրբ աւետարանը ձեռքերնին, Հայոց սպարապետին սըրբոյն Վարդանայ տունը կը վազեն իմանալու համար թէ արդեօք ի՞ր խորհրդովը այնպիսի անօրէնութիւնք կը կատարուին. «Թէ որ ատանկ է, կ'ըսէին, նախ մեր գլուխը կտրեցէք, ու ետքը եկեղեցեաց վրայ ձեռք զարկէք»։ Արդէն բոլորովին խռոված էր Վարդան իւր պատճառաւ Հայոց աշխարհքին վրայ հասած աղէտից համար, արդէն սրտովը լացեր էր ուրացութեան ակամայ յանցանքը, և առիթ կը փնտռէր թէ ինքն և թէ իրեն հետ եղող հաւատարիմ Նախարարք որ իրենք գիրենք յայտնեն։ Ա՛լ չկըրցաւ դիմանալ, անոնց ոտքն ինկաւ, իւր մտացն ուղղութիւնը լալով պատմեց անոնց, և թէ պատրաստ է նոյն սուրբ հաւատքին համար մինչեւ արիւնն ալ թափելու։ Անմիջապէս հրաման տուաւ որ համամիտները ժողովուին, և եղածը զարմանելու փութան։

Վասակ դարձեալ մէջ կը մտնէր՝ Հայոց միաբանութիւնն աւրելու։ Սրտովն ի հաւատացելոց ուծացեալ, բերնով անոնց հետ ինքզինքը մէկ կը ցուցնէր. կը խառնուէր մէջերնին, և այնպէս կը ջանար զանոնք իրարմէ երկպառակել։ Այնչափ և այնպիսի վստահութիւն կ'ազդէր իւր վրան, որ Պարսից դէմ պատերազմել ուզած ժամանակնին, անոր ձեռքը կը յանձնէին զօրաց մէկ գունդը։ Երբոր բաւական վստահութիւն գտաւ Վասակ, ա՛լ անկէ ետքը իր երկպառակութեան և անմիաբանութեան խորհուրդը սկսաւ յայտնել։ Ասով կը սկսի Եղիշէ իր չորրորդ գիրքը։

Միհրներսեհ Պարսից մեծ հազարապետը՝ տեսնելով թէ իրեն դժուարին պիտի ըլլայ Հայոց միաբանութեան դէմ դնել, ու միանգամայն գիտնալով Վասակայ ի սերտ սրտէ ուրացութիւնը, քովը կը կանչէ զինքը, և իմանալով իրմէ

թէ որչափ ջանացեր է Հայաստանի մէջէն վերցնել սուրբ կրօնքը, և անով Թագաւորին կամացը գործակատար ըլլալը, սիրտ առած, մեծամեծ պարգեւներ կը խոստանայ՝ միայն թէ կարենայ իր միտքը դրած խորհուրդներն առաջ տանիլ։ Անօրէն խոստումն ընդունեցաւ Վասակէն։ Մէկէն իրեն հետ միաբանեց Վասակ այլ և այլ ուխտադրուժ նախարարներն. և անոնցմով ու անոնց հպատակներով զօրաց բանակ մը պատրաստեց, ու սկսաւ իր հայրենեացն ու կրօնից դէմ պատերազմի պատրաստուիլ. «Մոռնալով, ինչպէս կ'ըսէ պատմիչը, որդւոյն Աստուծոյ գալուստը, ու սուրբ Աւետարանին քարոզութիւնը չյիշելով. իր սուրբ հաւատոց ոչ սպառնալիքներէն վախնալով, և ոչ աւետեօքը մխիթարուելով»։ Այսպէս Հայաստան երկու մասի բաժնուեցաւ, հաւատացեալ և ուրացող։

Եղիշէի հինգերորդ գիրքը կամ յեղանակը կը սկսի սքանչանալով աստուածային սիրոյ մեծութեան վրայ, որուն արդիւնքը յայտնապէս կ'երեւնար հաւատարիմ հպատակաց ու անոնց զօրաց վրայ. որոնք ամենքը ժողվուեցան իրենց սպարապետ Մեծին Վարդանայ քովը՝ վաթսունեւվեց հազար հոգի, և անոնց հետ Յովսէփ կաթողիկոս և Ղեւոնդ երէց և ուրիշ բազմութիւն քահանայից։ Ամբողջ բանակը քաջալերուեցաւ նախ սրբոյն Վարդանայ խրախուսական և պերճաբան խօսքերովը, ու ետքը Ղեւոնդեայ երկնային սրտաշարժ յորդորանքներով. և պատերազմին նախընթաց գիշերը՝ հաղորդեցան սուրբ խորհրդոյն, ու պատրաստուեցան ի մարտ, փափաքանօք սպասելով այն արշալուսոյն՝ որ իրենցմէ շատերուն համար արքայութեան դռները պիտի բանար, ու իրենց արեամբը՝ փրկութիւն պիտի պարգեւէր Հայաստանեայ։ Ասով կը լմնցնէ Եղիշէ իր հինգերորդ յեղանակը։

Կը սկսի վեցերորդը։ Փափաքելի առաւօտը կը հասնի. Պարսիկ ու Հայ սպարապետները փոփոխակի իրենց բանակը կը սկսին քաջալերել. միանգամայն զօրքերնին պատերազմի կը պատրաստեն․ ու Տղմուտ գետին քով՝ ահաւոր ճակատամարտ մը կը սկսի, և հոն Վարդան իր բազմաթիւ քաջերովը կ՚ինկնայ։

Մահուանէ ազատող Հայոց քաջերը բերդերու մէջ կ՚ամրանան․ ու փափաքելով մահակից ըլլալ իրենց նիզակակիցացը՝ ամենեւին չեն շարժիր՝ ոչ ի խոստմանց և ոչ ի սպառնալեաց։ Բայց երբ կ՚իմանան թէ Վասակ ամէն ջանք կ՚ընէ որ զիրենք ալ կորսնցնել տալով՝ բոլոր աշխարհին անկման պատճառ ըլլայ, կ՚իմացնեն Պարսից զօրապետին անոր ըրած ամէն չարութիւնները, ու թէ ինչպէս թէ Պարսից և թէ Հայոց աշխարհաց վնասակար է․ և անօրէնութեամբ ստացած պատիւներէն զինքը զրկել կուտան, որ իրենց հետ մէկտեղ բանտակից կ՚ըլլայ, առանց անոնց մխիթարութիւնն և սփոփանքն ունենալու։ Նախանձեցաւ ուրացողն անոնց երջանկութեան վրայ, որուն ինքը չկրցաւ նմանիլ, ու չարաչար կեանքով մը ապրելէն ետքը, դժնդակ ու դառն մահուամբ ալ մեռաւ։

Եղիշէ իր Յառաջաբանին մէջ խոստացած էր եօթն յեղանակօք կամ գրքով աւարտել իր Պատմութիւնը, բայց ետքը Արտաքոյ եւթն յեղանակին ութերորդ մ՚ալ կ՚աւելցնէ․ որուն մէջ տեղնիտեղը կը պատմէ թէ ինչ նեղութիւնք ու չարչարանք կրեցին այն սուրբ քահանայք՝ որ Վարդանանց պատերազմէն ետքը ախոյեան հանդիսացեր էին Հայաստանի մէջ հաստատուն պահելու սուրբ հաւատքն ու ազգութիւնը։ Նոյնը աւանդած է և Ղազար Փարպեցի․ բայց Եղիշէ աւելի մանրամասն կերպով և աւելի յատուկ և ընտիր ոճով։ Վերջն ալ մասնաւոր հատուած մը կ՚աւելցնէ այն սուրբ կանանց համար՝ որ իրենց արանցը արժանաւոր երեւցան սիրով ու սրտով, հաւասար քայլելով թէ առաքինութեամբ և թէ քաջութեամբ։

Եղիշէի այս պատմութեան գիրքը խարդախած կը համարի Թովմաս Արծրունի, ու այլ և այլ հատուածներ անոնց մէջէն պակսած։ Արծրունին՝ որ իւր ցեղին պարծանքն ու փառքը նորոգելու և անմահացնելու նպատակաւ՝ ձեռք զարկած է իր գրոցը, կրնան, կ՚ըսէ, զարմանալ ընթերցողք թէ ինչո՞ւ Եղիշէ իւր պատմութեան մէջ ամենեւին չի յիշատակեր Վահանայ Արծրունւոյ վկայական մահը․ և այս բանիս՝ հետեւեալ պատճառը մէջ կը բերէ։

Պարսից Պերոզ Թագաւորին ատենը՝ Բարծումա նեստորական աղանդաւորն՝ Մոկաց աշխարհը եկաւ իւր մոլորութիւնը սերմանելու․ և որովհետեւ այն միջոցին Մոկաց աշխարհին մէջ կը բնակէր Եղիշէ, Բարծումա իւր պատմութեան գիրքը խնդրեց իրմէ, ու խնդիրն ընդունեցաւ։ Բայց Արծրունեաց Մերշապուհ իշխանը՝ որ այն ատենները Տմորեաց բերդին մէջ ամրացած էր, լսելով Բարծումայի իւր սահմաններն մտնելը, ստիպաւ հրամայեց հեռանալ անկէ, ու սաստիկ պատիժներ և աքսոր սպառնացաւ թէ որ իւր հրամանաց մտիկ ընելու չըլլայ։ Ան ատեն Բարծումա՝ վրէժխնդիր հոգւով՝ Եղիշէի գրքին մէջ եղած Արծրունեաց տան բոլոր յիշատակութիւնները հանեց, ու անոնց, հետ նաեւ Վահանայ Արծրունւոյ մարտիրոսութեան պատմութիւնը։ Նոյն իսկ մեր ունեցած Եղիշէի օրինակներէն կրնանք գուշակել Բարծումայի խարդախութիւնը․ վասն զի Եղիշէ ինն նախարարաց հետ՝ երկու հարիւր եօթանասունեւութ հոգւոյ նահատակութիւնն յիշելէն ետքը կ՚ըսէ թէ ասոնցմէ զատ « են յարքունի տանէն և ի տանէն Արծրունեաց և յիւրաքանչիւր Նախարարաց տանէն, ... այլ եւս եօթնհարիւր քառասուն այր »․ որով յայտնի կ՚ըլլայ թէ Բարծումա չկարենալով բոլորովին Արծրունեաց յիշատակութիւնը վերցնել՝ Վահանայ անունը և իրեն հետ իր ցեղէն նահատակուողներուն թիւը վերուց, և մնացած Հայոց ցեղէն ինկածներուն հետ խառնեց անոնց թիւը գումարելով եօթնհարիւր քառասունը․ և անոր համար կը հարկադրի հոս յիշել զԱրծրունիս։ Եղիշէ՝ Ռշտունեաց գաւառին ծովեզերքն առանձնացած ըլլալով՝ ատեն չունեցաւ իւր գրուածքը միւսանգամ աչքէ անցընելու, որովհետեւ հօն եղաւ իր երջանիկ փոխումը։ Այն պատճառաւ ոմանք կարծեցին թէ այնպէս անկատար թողած է իր գործը սուրբ վարդապետս[1]։

⁂

Պատմութենէն զատ՝ որ Եղիշէի գլուխ գործոցը կը համարուի, ուրիշ գեղեցիկ երկասիրութիւններ ալ թողուցած է սուրբ վարդապետս, և որոնց մէջ գերազանց կը համարուի իրաւամբ Միանձանց ճառը։ Պատմութիւննիս կ'աւանդէ թէ Ե դարուն քաղաքական յեղափոխութեանց մէջ՝ երբ Թարգմանիչք դարձան իրենց հայրենի երկիրը, ու Վռամշապհոյ օրով ծաղկած Հայաստանը՝ ներքին երկպառակութեանց, արտաքին մարտից և պարսկական բռնութեան նշաւակ տեսան, երիտասարդութիւննին՝ իրենց սիրելի երկրին երջանկութեան նուիրող սրտերն՝ անոր ապագայ բարօրութենէն յուսահատածի պէս եղան, ու շատերն՝ այնպէս թշուառ կեանքէ մ'աւելի մահը նախամեծար համարելով, անապատներու լռութեան մէջ իրենց սրտին խաղաղութիւնը և հոգւոյն փրկութիւնը փնտռել փութացին։ Ասոնցմէ մէկն էր նաև Եղիշէ։ Այն առանձնութեան մէջ՝ խրատական ու գեղեցիկ ճառ մը գրեց առ միանձունս իւրոյ ժամանակին, հին անապատաւորաց օրինակաւը՝ անոնց կատարելութեանը փափաքողները քաջալերելու նպատակաւ։ Որչափ գեղեցիկ լեզու, քանի ընտիր խմաստներ, և ինչ վշտահար սիրտ մը կը ցուցնէ Եղիշէ՝ իւր այս գրուածքին մէջ. բայց ան էր այն ժամանակին Հայաստանին նկարագիրը՝ որ զինքը սիրող սրտերուն ըսել կու տար համարձակ, թէ «ամենայն չարիք եկին հասին ի վերայ մեր... կենդանեաւ մերով տեսաք զդիակունս անձանց մերոց»։

Այս գրուածքը շատ նմանութիւն ունի Փիլոնի Հեբրայեցւոյ «Յաղագս կենաց վարուց տեսականի» կոչուած ճառին հետ, որոյ թարգմանութիւնն ի յունէ՝ Ե ոսկեդարուն մէջ եղած կը համարուի։

⁂

Եղիշէի միւս այլ երկասիրութիւն է Մեկնութիւն Յեսուայ և Դատաւորաց։ Թէ այս, և թէ ասկէ ետքը յիշատակելիք քանի մը ճառերնիս՝ ժամանակաւ երիցագոյն կ'երեւնան քան զգրութիւն պատմութեան և ճառին Միանձանց։ Ոճոյ մեծ զանազանութիւն մը կը տեսնուի ասոնց մէջ, և հարկաւ կ'ենթադրէ ժամանակի երիցութիւն մը, յորում հեղինակը դեռ չէր ստացած ոչ այն հմտութիւնը և ոչ լեզուի մաքրութիւնը։ Ասանկ են Տէրունական աղօթից կամ Հայր մերի մեկնութիւնը, այլ և այլ ճառեր ու քանի մը աղօթքներ։ Անոր համար ուզած են ոմանք տարակուսիլ անոնց հարազատութեան վրայ. սակայն պատմիչք յայտնապէս անոր ուրիշ երկասիրութեանց մէջ կը յիշատակեն այս ճառերն, և ի մասնաւորի՝ Կիրակոս. «Եղիշէ (գրեաց) զպատմութիւն սրբոց Վարդանանց և զգիրս կանոնացն, և այլ մեկնութիւնս գրոց սրբոց և զչարչարանաց փրկչին»։

Արարածոց մեկնութիւն մ'ալ շարադրած էր Եղիշէ, որուն կորուստը՝ մեծ զրկում մ'է հայերէն դպրութեանց.

---

[1] Էջմիածնի Մատենադարանը՝ քառածալ երկաթագիր օրինակ մը ունի Եղիշէի այս սիրելի և ընտիր երկասիրութեան «գրեալ ի վանս Գոշայ Արագածոտան ի թուին Հայոց ՌԻԱ (թիւ գրչ. 1645)»։ Յիշուած ուրիշ երկու օրինակք (թիւ 1643 և 1644) նորագիր են։ Հին և ընտիր օրինակ է ըստ Ա-ՅԷ—ՈՅԷ—ՈՅՆ կոչուածը, որուն համեմատ եղած է Թէոդոսիոյ տպագիրը։ Հին երկաթագիր օրինակ մ'ալ կայ յանապատն Լիմ։ Մեր քով եղած օրինակները նշանակուած են արդէն ի յառաջաբանի տպագրին։ Արղնոյ Բարձրահայեաց Ս. Աստուածածնին Մատենադարանին մէջ պահուած գրչագիր մ'ալ (թիւ 212) հետեւեալ խորագիրն ունի. «Յիշատակարան և պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի»։

և այս կորստեան ցաւն աւելի զգալի կ'ընեն անոր հատուածները, զոր համանուն երկասիրութեան մը մէջ առաջ կը բերէ Վարդան յանուն Եղիշէի։ Ցայսմաւուրք ալ կ'աւանդեն վասն Եղիշէի. «Արար Մեկնութիւն գրոցն Արարածոց, և ճառս վասն Չարչարանացն Քրիստոսի, Թաղմանն և Յարութեանն. և գիրս կանոնականս համեղ և ախորժ բանիւք»։

Այլ և այլ անգամ տպագրուած է Եղիշէի Պատմութեան գիրքը։ Ասոնց մէջ առաջին կը համարուի 1764ին ի Կոստանդնուպոլիս հրատարակուածը, զոր Էջմիածնի միաբան Աբրահամ վարդապետը տպագրել տուաւ։ Որուն կրկին տպագրութիւնն է ի Փեթրպուրկ հրատարակուածը՝ ի ձեռն իշխանազն Յովսէփ Արղութեանց արքեպիսկոպոսի։ Վերջը քանի մը անգամ տպագրուած է ի Վենետիկ ամբողջ Մատենագրութեանց հետ մէկտեղ, և առանձին. 1828, 1838, 1842, 1852, 1859, 1864, 1893, և 1903։ Իսկ զանազան տեղեր տպուած է ի Կ. Պոլիս 1764, 1823, 1866, 1870, 1873. ի Ս. Պետրպուրկ՝ 1788, ի Թէոդոսիա՝ 1861, յԵրուսաղէմ՝ 1865, ի Տփղիս՝ 1879 տարւոյն։ Թէոդոսիայի տպ. ըստ [illegible] կոչուած, որ թէպէտ բառ ընթերցուածոյն մեծ տարբերութիւն մը չունի իրմէն առաջ հրատարակուածներէն, բայց իր հնութեամբ և յիշատակներով՝ պատուական։ Գրութեան թուական չունի, այլ մէջը գտնուած յիշատակարաններէն՝ իններորդ դարու գրուածք կրնայ համարուիլ. վասն զի անոնց մէկուն մէջ կը յիշատակուի «տէրն Անձեւացեաց Ատոմ», զոր հրատարակողը նոյն կը համարի ընդ Ատոմայ, որ կը յիշատակուի առ Յովհաննու կաթողիկոսի, և որ Գուրգենայ որդի կը կոչուի։

Եղիշէի պատմութեան գիրքը՝ այլ և այլ եւրոպական լեզուներով ալ թարգմանուած է։ Ասոնց մէջ առաջինն է անգղիականը, զոր ի 1830 տպագրեց ի Լոնտոն՝ Նայման գերմանացի արեւելագէտը, խորագիր դնելով։ The history of Wartan and of the battle of the Armenians, containing an account of religions wars bettowen the Persians and Armenians, by Elisaeus Bishop of the Amadunians. Translated from the armenian by C. J. Neumann. London, 1830. Անկէ ետքը ի 1840 իտալական թարգմանութիւն մը հրատարակուեցաւ ի Վենետիկ՝ Գաբբելլեթթի հայագէտ քահանային աշխատասիրութեամբ. Eliseo storico armeno del V secolo; versione del prete Giuseppe Cappelletti. Venezia, tipografia Alvisopoli, և ի 1844 ի Փարիզ գաղղիական լեզուով՝ Գապարաճեան Գրիգոր վարդապետի ձեռքով. Soulèvement national de l'Arménie chrétienne au V.me siècle contre la loi de Zoroastre, sous le commandement du prince Vartan-le-Mamigonien. Ouvrage écrit par Élisée Vartabed, contemporain, sur la demande de David-le-Mamigonien, son collègue; traduit en français par M. l'abbé Grégoire Kabaragy Garabed. Paris, 1844. Նոյն լեզուով նորագոյն թարգմանութիւն մ'ալ ի Հաւաքածոն Հին և Նոր Պատմագրաց Հայոց Լանկլուայի. Élisée Vartabed; Histoire de Vartan et de la guerre des Arméniens. Traduction nouvelle, accompagnée de notes historiques et critiques, par V. Langlois. Paris, 1869. Ռուսերէն թարգմանութիւն և տպագրութիւն մ'ալ եղած է ի Փեթրպուրկ։ — Կը թողունք յիշատակել զանազան տեղեր աշխարհիկ կամ գաւառական լեզուով եղած թարգմանութիւնները։

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Խորենացի և իր ուսումնական պատրաստութիւնն և ճանապարհորդութիւնք։ — Դարձն ի հայրենիս և կրած նեղութիւնները։ — Երկասիրութիւնները։ — Պատմութիւն Հայոց։ — Աղբերք։ — Արտաքին պատմիչք։ — Սուրբ գրոց հետեւողութիւն մանաւանդ ի ժամանակագրական մասին։ — Իր Պատմութեան գրոց նիւթը։ — Չորրորդ գիրք իր այս երկասիրութեան։ — Խորենացւոյն արժէքը իբրեւ պատմաբան և ժամանակագիր։ — Եւրոպական և ազգային բանասիրութեան կարծիք։ — Պատմութեան գրոց տպագրութիւնք և թարգմանութիւնք։ — Աշխարհագրութիւնն ու անոր հարազատութիւնը։ — Պիտոյից գիրք։ — Հռիփսիմեանց ճառ։ — Վարդավառի ճառ։ — Այլ և այլ մանր երկասիրութիւնք։ — Իրեն ընծայուած անհարազատ գրուածք։

Հայ պատմագրաց հայրը, ազգային ծանօթ բանասիրութեան մէջ ամենէն բարգաւաճ միտքը և եւրոպական գիտութեանց առջեւ ամենէն մեծ և ստոյգ պարծանք՝ կը համարուի արժանապէս Մովսէս Խորենացի։ Չորրորդ դարուն վերջերը[1] Տարօնոյ Խորնի կամ Խորոնք գիւղը ծնած է Մովսէս և այն պատճառաւ Խորենացի կոչուած։ Իր մանկութեան ատեն Վռամշապհոյ և սրբոյն Սահակայ և Մեսրովպայ ջանքով՝ Հայաստան Նոր կերպարանափոխութիւն մը կ'առնուր ուսումնական զարգացմանց մէջ. և Մեսրոպ՝ հայերէն գրոց գիւտը հնարելէն ետքը՝ ուրիշ փափկաձայն, ուշիմ և հանճարեղ մանկանց հետ՝ ասոր ալ, որ իւր քեռորդին էր, դաստիարակութեանը խնամք ունեցաւ ու իր աշխատանաց արդիւնքը յայտնապէս տեսաւ անոր զօրաւոր մտաց ու հանճարոյն վրայ։

Իր միւս աշակերտակցաց պէս՝ Մովսէս ալ իր անմիջական դաստիարակաց ձեռքին տակ մեծ յառաջադիմութիւն ցուցնելէն ետքը՝ անոնց հրամանաւը ճանապարհորդութիւններ ըրաւ ի Սիւնիս, յԵդեսիա, ի Բիւզանդիոն, յԱթէնս, ի Հռոմ, յԱնտիոք, ի Պաղեստին և յԱղեքսանդրիա, և իր գաղափարներուն աւելի ընդարձակութիւն տալու, և հայկական թարգմանութեանց արուեստին կատարեալ հմտութիւն ունենալու համար. քննեց մատենադարաններն ու գրքերը, և իր ժամանակին անուանի իմաստնոց աշակերտելով՝ եղաւ գերագոյն և ամենահմուտ բանագիտաց մէկը։ Թարգմանչաց ու Անյաղթին վրայ խօսելու ատեննիս՝ տեսանք թէ ինչ պատիւ ունեցաւ իր ընկերակցացը պէս նաեւ Մովսէս՝ ի Բիւզանդիոն, ուր Մարկիանոս կայսրն (ըստ աւանդութեան մը) զարմանալով անոր հմտութեանն և իմաստութեան վրայ, և ճարտասան լեզուին զօրաւոր ազդեցութենէն յաղթուելով, «Ո՛վ Մովսէս, կ'ըսէր, յաչս ամենեցուն ընտրեալ են բանք բերանոյ քոյ, որպէս զառաջինս ի հնեւորաց, և դու կարի քաջացար յոյժ»։

⁂

Սակայն միւս Թարգմանչաց պէս՝ Մովսէս ալ չկրցաւ ոչ իւր հոգեւոր ծնողաց կրկին տեսութեամբը մխիթարել և մխիթարուիլ, և ոչ ալ ուզածին պէս օգտակար ընել Հայաստանի՝ իւր այնչափ ջանքով և յարատեւութեամբ ժողոված հմտութեանց գանձը։ Դարձաւ ի Հայս յետ երկար ճանապարհորդութեանց, և իր սակաւամեայ պանդխտութեան միջոցին՝ վերիվայր եղած տեսաւ իր հայրենիքը։ Վասն զի, ինչպէս ուրիշ շատ անգամ յիշեցինք, կործաներ ինկեր էր Հայաստանի թագաւորութեան աթոռը, վախճաներ էին Սահակ ու Մեսրոպ, ու Հայաստանի վրայ սոսկալի ու գժնդակ աղետից նախագուշակութիւն մը ամէն կողմանէ յայտնի կը տեսնուէր։

---

[1] Նոր եղած քննադատութեանց մէջ լուրջ կամ համոզիչ բան չգտանք հեղինակիս նկատմամբ. որով մատենագրութեանս ոճն ու կարծիքը չենք խաթարեր։

Ծնթ. — Նոր տպ.

Այնպէս գժնդակ ատենի մը մէջ՝ ազգը ոչ միայն ժամանակ չունեցաւ, այլ նաեւ չուզեց ճանչնալ անոր արդիւնքը. ուստի հեռացաւ քաշուեցաւ Մովսէս ալ անծանօթ տեղեր, թէ իր վարդապետաց՝ և թէ աւելի հայրենիքն արտասուելու. երիտասարդութեան աշխոյժ տարիները՝ հայրենեացը մտաւոր սնունդ պատրաստելու համար յոգնողն՝ ծերութեան հասակին մէջ օրուան հացին կարօտ եղաւ, ինչպէս տխուր աւանդութիւն մը կը յիշատակէ, ու պարկը կռնակը զարկած՝ դռնէ դուռ կը քալէր, ու իրեն նախատիպ օրինակ Քրիստոսի պէս՝ գլուխ հանգչեցնելու տեղ մը չէր գտներ այն Հայաստանին մէջ՝ զոր պիտի անմահացնէր իւր երկասիրութեամբք։

Տասը տարի այսպիսի թշուառութեամբ անցուց իր կեանքը Մովսէս, մինչեւ Հայաստանի վիճակը սկսաւ քիչ մը կերպարանափոխ ըլլալ. պարսկական բռնութիւնը այնչափ անհամար անմեղ արիւններ թափելէն ետքը յոգնեցաւ, ու կաթուղիկոսական աթոռոյն վրայ նստելով Գիւտ՝ անակընկալ կերպով մը ճանչցաւ իր հին և սիրելի աշակերտակիցն՝ զՄովսէս, աղքատութեան տառապանացը և աղքատ գրգլեկին մէջ, մխիթարեց զինքը, և Հայաստանի՝ իրեն աննման բարերարը ճանչցնելով։ Եզնկայ Կողբացւոյն մահուընէն ետքը՝ Բագրեւանդայ և Արշարունեաց եպիսկոպոս դրաւ, ուր վարժարաններ բանալով՝ կրթեց իւր նոր աշակերտաց դասերը. այս ալ կէս մը ըստ աւանդութեան։

Որոշ չենք կրնար գրուցել թէ երբ եղած է Մովսեսի մահը, այլ ժամանակագրութիւն մը կը յերկարաձգէ անոր կեանքը մինչեւ Զենոնի կայսրութեան տարիները, կամ ի 487. և դար մը կամ աւելի ապրած կը համարի։

Տարօնոյ գաւառին մէջ հանդիպեցաւ անոր երջանիկ փոխումը, և մարմինն ալ նոյն գաւառին սուրբ Առաքելոց վանաց եկեղեցւոյն մէջ ամփոփեցաւ։

⁂

Խորենացւոյն երկասիրութիւնք. — Մովսեսի երկար կեանքը՝ աստուածպաշտութեան և ուսմանց նուիրական եղած է, և ոչ երբէք ուզեր է ձգել ձեռքէն գրիչը։ Բայց կ'երեւնայ թէ իւր գրուածոց և երկասիրութեանց գլխաւոր մասը՝ թարգմանութիւնք եղած ըլլան, ինչպէս ինքն ալ «այր ծեր և անպարապ ի թարգմանութեանց» կը կոչէ ինքզինքը. հին յիշատակագիր մ'ալ կը վկայէ թէ «Մովսէս թարգմանական աշխատանօք ծերացաւ»։ Որչափ ըստոյգ է թէ Ե դարուն մէջ եղած թարգմանութեանց մէջ մեծ մաս ունեցած պիտի ըլլայ Խորենացին՝ իր անխոնջ և բազմավաստակ գրչովը, այնչափ չենք կրնար որոշակի հաստատել թէ որո՛նք են իրեն հարազատ թարգմանութիւնք. միայն քանի մը գրոց վրայ եղած կարծիքները պիտի յիշատակենք՝ թարգմանութեանց վրայ խօսած ատեննիս։

Հիմայ իւր սկզբնագիր երկասիրութեանցը վրայ խօսինք։ Ասոնց մէջ ամենէն գերագոյն տեղը կը բռնէ իրաւամբք իւր **Պատմագրութիւնը**, որ այսօրուան օրս այլ և այլ լեզուներ թարգմանուած, և գրեթէ աշխարհածանօթ գիրք մը եղած է։

Հեղինակին բուն նպատակն եղած է այս գրքիս մէջ՝ Հայոց պատմութիւն մը շարագրել, այն ազգին ծագմանէն մինչեւ իւր օրերը։ Ասիկայ է նաեւ Սահակայ Բագրատունեաց իշխանին փափաքը, որ զԽորենացի աղաչեց այն երկասիրութեան ձեռք զարնելու։

Բայց Հայոց պէս հին ազգի մը պատմութիւնը այլ և այլ վերաբերութիւններ ունեցած էր ուրիշ թէ դրացի և թէ մերձաւոր ազգաց և աշխարհաց հետ. որով բնականաբար Հայոց պատմութեան հետ այն ազգաց պատմութիւնն ալ իր մասը կ'ունենար այս գրուածքիս մէջ. և այս նկատմամբ աւելի սիրելի և հետաքննութեան արժանաւոր համարուած է Եւրոպացւոց Խորենացւոյն գրուածքը։ Այս վախճանին հասնելու համար՝ հարկ էր որ Մովսէս ոչ թէ միայն ազգային՝ այլ նաև օտար աղբերաց դիմէ, և անոնց գրուածոց քննութեամբն աւելի հաւատարիմ և ախորժական ընէ իւր պատմութիւնը։ Ուստի և Մովսէս գլխաւորաբար հինգ գլխաւոր աղբերաց օժանդակութեան փոյթ ունեցեր է, և են Ա. Յոյն անգիր և գրաւոր մատենագիրք։ Բ. Ասորի և պարսիկ մատենագիրք։ Գ. Եդեսիոյ, Մծբնայ և Սինոպի դիւանագիրք, կամ մեհենական պատմիչք։ Դ. Քաղդէական հեթանոս մատենադարանք և մատեանք՝ ասորի կամ յոյն թարգմանութեամբ։ Ե. Հին Հայաստանի ժողովրդական և ազգային երգերն, զրոյցք և վէպք՝ որ մինչև Ե դար կենդանի և ի գործածութեան էին յազգին։

Բաց ի արտաքին պատմիչներէ, չէ ուզած ամենևին օտարանալ նաև ի սուրբ գրոց, ինչպէս իւր վիճակն, գիտութիւնը և սրբութիւնը կը պահանջէին, ուստի և ջանացած է սուրբ գրոց ծննդաբանութիւնքն համեմատել, և կարելի եղածին չափ յարմարցնել իւր ազգային աւանդութեանց. և ի հարկէ ունեցած է ասոր մէջ իւր դըժուարին աշխատանքը. և չկարենալով յամենայնի զուգընթանալ ոչ նուիրական և ոչ ալ ազգային, կամ արտաքին օտար աւանդութեանց և պատմութեանց հետ, հարկ եղեր է որ երբեմն այս վերջիններուն հակառակի, և անով ոմանց առջևը կասկածելի եղեր է իր հաւատարմութիւնը։ Այս դժուարութեանց մէջ աւելի խոհեմութիւն և պարտք համարեր է Մովսէս՝ սուրբ գրոց հետևիլ. և ամենէն աւելի իրեն գրուածքին նմանողութեան գաղափար առնել Եւսեբիոս. ինչպէս որ այլ և այլ տեղ, և ի մասնաւորի

առաջին գրոց երրորդ գլխոյն մէջ կը գրուցէ։ Եւ սակայն պատմութեանցը մէջ՝ հին ժամանակաց վրայ խօսելու ատեն՝ քրիստոնեայ հեղինակաց կարծիքները մէջ չի բերեր, այլ Բազմավէպ Աղեքսանդրի, Աբիւդենայ, Կեփաղիոնի և այլոց, որոնց գրուածներն առիթ տուած են իրեն քննելու և վիճելու՝ սուրբ գրոց և հին հեթանոսութեան պատմական աւանդից մէջ եղած, և իրարու հակառակամարտ կարծիքները։ Այս աշխատանաց մէջ ալ ընդհանրապէս հետևող եղած է Խորենացին Եւսեբիոսի. վասն զի այնպիսի արտաքին պատմիչներ կը յիշատակէ՝ որոնք իւր ժամանակը արդէն կորսուած էին, և որոնց միայն քանի մը հատուածք՝ իրմէ ժամանակաւ երիցագոյն՝ Կեսարիոյ եպիսկոպոսին (Եւսեբիոսի) ձեռքն անցած էին։

⁂

Տեսնենք հիմայ այն մատենագիրները՝ որոց գրուածոց օժանդակութեամբ և քննութեամբ շարադրեր է Մովսէս իր Պատմութիւնը։ Ասոնց մէջ թէ կարգաւ՝ թէ մատուցած կարևոր ծառայութեամբը առաջին է Մարիբաս, որուն վրայ արդէն խօսեցանք։ Իրմէ ետքը կու գայ Բերոսոս, կամ իւր շարադրողը՝ Աղեքսանդր Բազմավէպ, որ Քրիստոսէ 100 տարի առաջ է, և որուն բազմաթիւ հետաքրքրական գրուածոց մեծ մասը կորսուած են։ Հնոց մէջ յարգի էին Բազմավիպին գրուածները, և որուն երկասիրութեանց միջնորդութեամբը այլ և այլ պատմական ընտիր հատուածներ հասած են ձեռքերնիս, որոնք ընդհանրապէս իւր Քաղդէական կամ Ասորական գրքերէն առնուած են, և զՀրէից կոչուած գրուածէն։

Այլ և այլ տեղեր կը յիշատակէ Խորենացին զՅովսեպոս, և կ'երևնայ թէ հմուտ Հեբրայեցւոյն գրուածոցը կատարեալ տեղեկութիւն ունեցած ըլլայ։ Իրմէն առնելով կը յիշատակէ Սեթայ կանգնած երկու սիւները. Յուլիոս

Ափրիկանոսի ժամանակագրական պատմութեան հինգերորդ գրոց մէջ աւանդուածներն՝ անոր խօսքերով կը հաստատէ. և դարձեալ քանի մը խօսքով Հրեայ պատմչին մէկ հատուածը կը հաւաստարմացնէ՝ Միհրդատայ մահուան նկատմամբ, զոր Պոմպէոս Երիքովի քով լսեց։

Կը յիշատակէ դարձեալ Խորենացի և զԿեփաղիոն՝ առեալ յԵւսեբեայ, երբոր Շամիրամայ ի Հնդիկս ըրած արշաւանաց պատմութիւնը կ՚ընէ։ Եւ տարակուսելով անոնց հարազատութեան վրայ, ստուգագոյն կը համարէ ի Մարիբասայ պատմուածները։ Ծանօթ է իրեն նաեւ Պորփիւր բազմահմուտ անձն, և անուանի իմաստասէրը որուն հինք ընծայած են այլ և այլ գրուածք, և ի մէջի այլոց՝ պատմական երկասիրութիւն մը ի հինգ գիրս, յորմէ կը տեսնենք առ Եւսեբիոսի (ի ժամանակագրութեան) հատուած մը՝ բանաքաղ մատենագրաց։

Սիբիլլայից յիշատակութիւնն ալ կ՚ընէ Խորենացին։ Հինք Սիբիլլայից կամ մարգարէուհեաց գուշակութեան մեծապէս հաւատք կ՚ընծայէին, և բոլոր Յունաստանէն, Ասիայէն և Եգիպտոսէն կը հաւաքէին խնամով անոնց շատ աննշան և անհաւաստի պատգամները։ Վարրոն կ՚աւանդէ իրեն ժամանակին համար՝ թէ տասէն աւելի Սիբիլլայք կը համրուէին. և թէ անոնց պատգամները զգուշութեամբ պահուելով Հռովմայ մեհեաններուն մէջ՝ մինչեւ իր ատենը հասած էին։ Ասոնց մէջ նշանաւոր և աւելի համբաւեալ համարուած էր Պարսկային կամ Քաղդէական սիբիլլան։ Ասիկայ է նաեւ Խորենացւոյն յիշատակածը, զոր Բերոսեան կը կոչէ՝ անկէ յիշուած ըլլալուն համար։

Խորենացին՝ Արշակայ առաջնոյ թագաւորութեան վրայ խօսելու ատենը, այլ և այլ յոյն հեղինակաց հատուածները մէջ կը բերէ, որոց շատին՝ լոկ անունը, և այլոց ալ միայն գրուածոց քանի մը հատուածները հասած են ձեռքերնիս։

Ասոնց կարգէն է Հիպպողիտոս մատենագիր մը, որուն միայն անունը մեզի հասած է, կամ թէ ըսենք՝ նոյն իսկ անունն անծանօթ է շատ հմուտ բանասիրաց։ Վասն զի չենք կրնար կարծել թէ Խորենացին ուզենայ ակնարկել զՀիպպողիտոս եպիսկոպոս Բոստրացւոց, որուն բարոյական քանի մը ճառերուն հատուածները հասած են մինչեւ մեր ձեռքը հին թարգմանութեամբ։

Նեկտանեբոսի վրայ խօսելուն ժամանակ՝ կը յիշատակէ Մովսէս և զՄանեթոն. և զՆեկտանեբոս՝ հայր կը համարի Մեծին Աղեքսանդրի։ Բայց որովհետեւ աշխարհածանօթ է անուանի ինքնակալին հայրը՝ Փիլիպպոս Մակեդոնացի, հաւանականաբար Աղեքսանդրի վրայ եղած առասպելախառն պատմութիւններէն առած է Խորենացին։

Հինք՝ այլ և այլ երկպառակ կարծիքներ ունէին Կիւրոսի՝ Կրեսոսի դէմ տուած պատերազմին վրայ. և այս նկատմամբ ալ բազմաթիւ յոյն պատմագրաց հատուածները մէջ կը բերէ Խորենացին։ Իրեն քննած և ձեռքն ունեցած շատ պատմագրաց կարծեաց համեմատ, ոչ եթէ Կիւրոս՝ այլ Արտաշէս եղած է Լիւդացւոց թագաւորին հետ պատերազմողը, զինքը բռնողը և մահուան դատապարտողը։ Իւր այս կարծիքը հաւաստարմացնելու համար՝ Խորենացին մէջ կը բերէ Պողիկրատ, Եւագր, Կամադրոս և Փլեգոնիոս (Փլեգոն) պատմիչները։

Պողիկրատ այն մատենագիրներէն մէկն է՝ որոնց միայն անունը մեզի հասած է։ Աթենէոսի մէջ բերած մէկ հատուածէն՝ կրնայ ենթադրուիլ թէ այլ և այլ գրուածներ շարագրած ըլլայ այս մատենագիրը։ Աթենէոսի հատուածը՝ Լակոնական ըսուած գրքէն է, ուր Խորենացւոյն յիշատակածը տարբեր գրքէ մը կ՚երեւնայ, որ հաւանականաբար կ՚աւանդէր Ասիոյ մէջ հին ատենէն ի վեր կատարուած դէպքերը։

Եւագրոս՝ նոյն է անշուշտ ընդ Եւագորայ՝ որ եգիպտական պատմութիւն մը շարադրած է, զոր կը յիշատակէ Սուիդաս, և որուն գրուածքը ծանօթ էին Պլինիոսի։

Կամադրոս հեղինակ է պատմական գրքի մը՝ որ կորսուած է, և զոր միայն Խորենացին կը յիշէ։

Իսկ Փլեգոն՝ Տրալլացի պատմիչ մ՚է, որուն հատուածները կը յիշեն Սուիդաս, Ստեփանոս Բիւզանդացի, Յուլիոս Ափրիկանոս․ նաեւ կը յիշեն Եւսեբիոս, Փոտ, Որոգինէս, Սիւնկելլոս, Կոստանդին Պորփիւրոժէն, և այլք։

Յոյն պատմագիր մ՚է նաեւ Արիստոն Փելլացի, որուն գրուածքէն առած կ՚երեւնայ Խորենացին Հրէից ապըստամբութեան դէպքը Արտաշէս երկրորդի մահունէն ետքը։

Խորենացին երբ կը հասնի Պարթեւաց հարստութեան ժամանակը, և Սասանեանց՝ Պարսից աթոռոյն տիրապետելը, ուրիշ աղբերաց դիմելու հարկ կը տեսնէ։ Եւ թէպէտ ընդհանրապէս Խոռոհբուտի հետեւող կը ցուցնէ ինքզինքը այն ժամանակաց դէպքերուն գրութեանը մէջ, սակայն մեզի գրեթէ բոլորովին անծանօթ քանի մը յոյն պատմիչներ ալ մէջ կը բերէ։ Ասոնք են Պաղեփատ, Պորփիւր և Փիլեմոն։ Զպաղեփատ կը յիշատակեն Սուիդաս և Ստեփան Բիւզանդացի։ Սակայն կը կարծուի թէ այլ և այլ համանուն պատմիչներ եղած ըլլան․ յորոց մին Եգիպտացի կամ Աթենացի քերական մը կամ փիլիսոփայ, որուն կ՚ընծայուին զանազան պատմական շարագրածք, և ի մասնաւորի, զԱռասպելաց հնոց։ Կայ և համանուն Աբիդենացի յոյն պատմիչ մը՝ ժամանակակից Աղեքսանդրի, և գրած է, կ՚ըսեն, այլ և այլ մատեանս, որք և կը կոչուէին Կիպրիական, Դելփիական, Ատտիկեան, և այլն։ Պորփիւր Տիւրացի պատմիչ մ՚է, որուն գրուածոց այլ և այլ հատուածները հասած են մինչեւ առ մեզ։ Իսկ Փիլեմոն՝ բոլորովին անծանօթ անուն մ՚է․ և անտարակոյս զատ է այն համանուն մատենագրէն՝ զոր Պլինիոս կը յիշատակէ։

Կը թողունք յիշել զԵւսեբիոս, զՓիրմիլիանոս և զայլս։

Բայց ի յունական աղբերաց՝ ուրիշ պատմական հարուստ բովք մ՚ալ հետազօտեր է Խորենացին․ այսինքն

արամայական դպրութեան աղբերքը, որ ինչպէս ուրիշ տեղ ալ առիթ ունեցանք յիշատակելու, հեթանոս ժամանակաց մէջ՝ քաղդէական դպրութիւն կը կոչուէր, և քրիստոնէական դարուց մէջ ասորականի փոխուեցաւ։ Այս դպրութեանս կը վերաբերին Բերոսոս, Սանքոնիատոն, Աբիւդենոս, և վերջին ժամանակաց մէջ՝ Բարդածան, և այլք։

Բերոսոսի անունը՝ մեծապէս յարգի և ծանօթ էր հնոց, և մանաւանդ Յունաց մէջ, որոնք ընդհանրապէս իրեն կ՚ընծայէին այն ամէն քաղդէական դպրութեան վերաբերեալ գրուածները, որոնց տեղեկութիւնը մինչեւ իրենց հասած էր։ Խորենացին ալ՝ հաւանականաբար առանց տեսած ըլլալու անոր գրուածները, զինքն ի վկայութիւն կը կոչէ, յԵւսեբեայ առնելով, ինչպէս Եւսեբիոս ալ Բազմավէպ Աղեքսանդրէն։ Կ՚երեւնայ թէ ինքը Բերոսոս ժամանակաւ մերձաւոր էր Աղեքսանդրի, և ըստ յունական աւանդութեանց՝ ոչ միայն այլ և այլ պատմական գրուածներ շարագրած էր, հապա նաեւ աստեղաբաշխութեան և աստեղագիտութեան վրայ գրուածներ։

Ասոնցմէ զատ աչքին առջեւ ունեցած էր Խորենացին Ղերուբնա, Ուղիւպ, Բարդածան և Խոռոհբուտ պատմըչաց գրուածները, որոնց վրայ արդէն խօսած ենք համառօտիւ։ Դարձեալ ազգային դիւանական գրուածներ, որոնք բազմաթիւ էին իւր ժամանակները, այլ և այլ ազգային աւանդութիւններ և երգեր։

Ասոնք են Խորենացւոյն հետազօտած օտար, արտաքին և ազգային աղբերք։

⁂

Երեք գիրք բաժնուած է Խորենացւոյն Հայոց Պատմութիւնը։ Առաջինը՝ զոր ինքը Ծննդաբանութիւն Հայոց *մեծաց կը կոչէ, Հայկազանց թէ՛ նահապետական և թէ թագաւորական պատմութիւնը կը բովանդակէ. ու կը սկսի մասնաւոր թղթով մը կամ ընծայականաւ առ Սահակ ասպետ Բագրատունի՝ որ նոյն պատմութեան շարագրութիւնը խնդրած էր իրմէ։ Ետքը իր աշխատասիրած գրքին աղբերաց վրայ խօսելով, կը ցուցնէ թէ աւելի Յունաց հետեւող եղած է քան թէ Քաղդէացւոց և Ասորւոց, որոնք կերպով մ'աւելի մեր ազգային յատուկ յիշատակներն ամփոփելնուն համար՝ յարմարագոյն կրնային՝ կամ պէտք էին համարուիլ նմանողութեան. սակայն Խորենացին իր բռնած հակառակ ընթացքն արդարացնելու համար՝ Յունաց ազգին ուսումնական գերազանցութիւնը, պատմութեանց ճշդութիւնը, և հետազօտութեանց փոյթը մէջ կը բերէ, որով իրաւամբ «մայր և դայեակ ամենայն իմաստութեան» կոչուած են, և մեծարուած։*

Բայց որովհետեւ արտաքին աղբերք բաւական չէին ազգային պատմութիւն մը ամբողջ կազմելու համար, հարկ էր որ նոյն ազգին մէջ գտնուած պատմագրաց հետ ալ խորհրդակցի. և ահա հոս էր Խորենացւոյն համար ամենամեծ դժուարութիւնը. որովհետեւ ինքը պիտի ըլլար ամբողջ ազգային պատմութիւն մը առաջին շարագրողը, և այն պատմութեան յօրինման համար պէտք եղած նիւթերը մատակարարող ազգային պատմիչներ կը պակսէին։

Ինչէ՞ն առաջ կու գար այս պակասը։ — Խորենացին ազգին նախարարաց և թագաւորաց անիմաստասէր բարուց կու տայ. «Իրաւ, կ'ըսէ, պզտիկ, սակաւաթիւ, քիչ զօրութիւն ունեցող և շատ անգամ ուրիշ զօրաւոր ազգաց հպատակ ժողովուրդ մը եղած ենք, բայց մեր մէջն ալ քաջութեան անուանի գործեր շատ հանդիպած են, որոնք կրնային պատմչի մը արժանաւոր նիւթ պատրաստել, ինչպէս նման դէպքեր մատակարարած են քաղդէացի, ասորի, եգիպտացի և յոյն պատմչաց։ Սակայն մեր իշխանները չունէին, կ'ըսէ, այն իրաւացի փառասիրութիւնը, իրենց անուան և քաջութեանց և գործոց յիշատակն աւանդելու յետնոց». ուստի և իրաւամբ կը զարմանայ Բագրատունւոյ վրայ, զոր ազգին մէջ առաջին և միակ կը գտնէ այսպիսի բանի մը փափաքող. և այդ փափաքը արդիւնացնելու համար՝ ամէն դժուարութիւն յանձն կ'առնու պատմիչը։

Եւ որովհետեւ, ինչպէս առաջ ալ յիշատակեցինք, Մովսէս իրեն գլխաւոր աղբիւր հետեւողութեան ուզեր էր բռնել զսուրբ գիրս, և արտաքին պատմչաց խօսքերն և աւանդութիւններ կարելի եղածին չափ անոր հետ ընդելացնել, այս աշխատանքը Ադամէն և Նահապետներէն կը սկսի, որոց վրայ ուրիշ կերպով կը խօսին սուրբ գիրք. և բոլորովին տարբեր լեզու մը կը բանեցնեն Բերոսոս, Բազմավէպ Աղեքսանդր և Աբիւդենոս, թէ անոնց անուան նկատմամբ և թէ այն գործերուն զոր Աստուածաշունչը կու տայ անոնց. և կը ջանայ սուրբ գրոց ժամանակագրութիւնը՝ արտաքին պատմչաց հետ համաձայնեցնել։ Այս դժուարին՝ բայց հետաքննական աշխատանքին նուիրուած են Խորենացւոյն պատմութեան առաջին գրոց՝ մինչեւ ութերորդ գլուխները։

Այն գլխէն կը սկսի Մարիբասայ արդէն ծանօթ պատմութիւնն ըսել. Վաղարշակայ հրամանաւ մինչեւ ի Նինուէ երթալը, հոն արքունի մատենադարանին մէջ ընդհանուր ազգաց պատմութիւն մը գտնելը, և անկէց Հայոց աշխարհին և պատմութեան վերաբերեալ տեղեկութիւններն ի մի հաւաքելը, և անոր առաջնորդութեամբ ու շատ անգամ նաեւ խօսքերով մէջ կը բերէ Հայկայ, անոր որդւոցը՝ Արմենակայ, Հարմայի, Արամայ, Արայի, և այլն, պատմութիւնները։ Այս յետին Նահապետը՝ որովհետեւ պատերազմ ունեցաւ Նինուէի հռչակաւոր Շամիրամ թագուհւոյն հետ, և փառաւոր մահ մը, և այն մահուամբ Շամիրամ կրցաւ մինչեւ Հայաստան մտնել և հոն իրեն բնա-

կութեան քաղաք հաստատել, Խորենացին նոյն թագուհւոյն իւր որդիքը կոտորելը, Զրուան մոգէն ի Հայաստան փախուստը, և Նինուասայ իւր որդւոյն ձեռքով մեռնիլը՝ կը յիշատակէ Կեփաղիոնի հետեւողութեամբ. բայց աւելի հաւանականագոյն կը համարի Մարաբասայ պատմութիւնը՝ որ Շամիրամայ մինչեւ ի Հնդիկս ըրած արշաւանքը պատմելէն ետքը՝ անոր մահը կը դնէ ի Հայաստան, զոր և ազգին քանի մը հանճարեղ առակներովն ալ կը հաւատարմացնէ:

Շամիրամայ մահուընէն ետքը պատահած դէպքերը, և Հայոց վրայ իշխող Նահապետաց և թագաւորաց ժամանակագրութիւնը նորէն հարկ կը համարի Խորենացին միաբանել սուրբ գրոց և Քաղդէացւոց ժամանակագրութեան հետ, յԱրայէ մինչեւ ի Զարմայր, որոնց համառօտ պատմութիւնը կ'ընէ, յերկարելով իրեն ախորժական ու սիրելի Երուանդեան Տիգրանայ վրայ:

Վահէի՝ որ Աղեքսանդրի հետ պատերազմեցաւ, և կեանքն ու թագաւորութիւնը կորսնցուց, կը վերջացնէ Խորենացին իր Պատմութեան առաջին գիրքը, մասնաւոր յաւելուած մ'ընելով՝ այն գրոց մէջ շատ անգամ յիշատակուած Բիւրասպի Աժդահակայ վրայ, և այն անձին նկատմամբ պարսկական առասպելաց մէջ գտնուած դէպքերու:

⁂

Մովսէս իր երկրորդ գիրքը՝ Բան միջակ պատմութեան Հայոց կոչած է. և կը բովանդակէ միջոցը՝ որ ի մեծէն Աղեքսանդրէ մինչեւ ի Տրդատ, Հայոց պատմութեան ճոխագոյն և ընտիր մասը: Որովհետեւ Արշակունեաց թագաւորութեան ծագումը՝ Աղեքսանդրի մահուամբ և անոր ընդարձակ տէրութեան բաժանմամբ եղած է, հարկ կը համարի պատմիչն այն հռչականուն աշխարհակալին մահը, և թագաւորութեանը բաժանուելուն յիշատակութիւնն ընել. որուն մահուընէն ետքը Սելեւկիոս կը թագաւորէ ի Բաբելոն, կը նուաճէ զՊարթեւս, ու երեսուն և մէկ տարի թագաւորելէն ետքը իրեն յաջորդ կը ձգէ զԱնտիոքոս, որուն իշխանութեան մետասաներորդ տարին՝ Պարթեւք Մակեդոնացւոց լուծը կը թօթափեն, և որոց վրայ կը թագաւորէ Արշակ. որ բոլոր արեւելքն իր իշխանութեան տակ ձգելով՝ Մակեդոնացիները Բաբելոնէն կը մերժէ, Հռովմայեցւոց հետ ալ կը կռուի, և իր քաջութեան և համբաւոյն արհաւրօք բոլոր տիեզերքը կը լեցնէ: Իրեն կը յաջորդէ Արտաշէս, և Արտաշիսի՝ մեծն Արշակ, որ Դեմետրեայ և անոր որդւոյն Անտիգոնոսի հետ կը կռուի, որուն դէմ չի կրնար դնել Անտիգոնոս, և զէնքերն ակամայ ձգելով՝ շղթայիւք կը բերուի ի Պարթեւս: Այսպէս աշխարհի երրորդ մասին տիրեց, կ'ըսէ, Արշակ: Այն փառաց և յաջողութեան մէջ՝ իր Վաղարշակ եղբայրը Հայոց վրայ թագաւոր կը դնէ Արշակ. և աշխարհը անոր յանձնելով, սահմաններն ընդարձակելը իր զինուցը յաջողութեան և քաջութեան կը յանձնէ: Իրեն վստահութեան արժանի կ'երեւնայ Վաղարշակ. ոչ միայն աշխարհին ներքին բարեկարգութիւնը հոգալով, այլ նաեւ տարածելով իր իշխանութիւնը մինչեւ Պոնտոսի բնակչաց վրայ և մինչեւ ի Փռիւգաստան. զոր ոճով և մանրապատում կ'աւանդէ Խորենացին: Քսանեւերկու տարի կը թագաւորէ Վաղարշակ, և իրեն յաջորդ կը թողու զԱրշակ:

Անոր թագաւորութեան պատմութեամբը՝ Մարիբասայ երկասիրութիւնն ալ կը լմնար. ուստի և ուրիշ աղբիւրներէ հարկ էր հաւաքել հետեւեալ դէպքերը: Խորենացի Եդեսիոյ դիւանաց մէջ՝ Ափրիկանոսի պատմութեան գրոցը հանդիպած էր, որ մեր պատմութեանց վերաբերեալ ամէն դէպքերը՝ նոյն դիւաններէն համառօտեր էր: Իրմէ և ուրիշ պատմագիրներէ կը սկսի շարայարել Խորենացին իր երկասիրութիւնը, սկսելով յԱրտաշիսէ առաջնոյ որ ի Պարսից նախագահութեան իրաւունքը յափշտակեց, և անուանի եղաւ յաղթանակաց բազմութեամբ, և հռչակաւոր նաև յոյն պատմագրաց գրուածոց մէջ. որոց այլ և այլ վկայութիւններն ալ մէջ կը բերէ Խորենացին. ու Լիւդացւոց թագաւորութեան կործանումը, և Կրեսոսի մահը, զոր Հերոդոտ, Պլուտարքոս, Յուստինոս և Վաղերիոս Մաքսիմոս Կիւրոսի կ'ընծայեն, զայն այլ և այլ յոյն պատմիչաց յատուկ խօսքերով՝ Խորենացին Արտաշէսի կու տայ: Թէպէտ և նախ ինքն ալ կը տարակուսի. «Ընդ որ տարակուսեալ մեր՝ բազում խոյզ խնդրոյ արարաք, քանզի լուաք ի պատմութեանց ոմանց՝ Կիւրոսի սպանեալ զԿրիսոս». և այս է ստոյգն. իսկ այն Յոյն պատմչաց ըսածն Արտաշէսի վրայօք՝ դեռ մեզի ալ տարակուսելի և անլոյծ կը մնայ:

Անկէ առաջ կը տանի Մովսէս իւր պատմութիւնը, Տիգրանայ հետաքննական և մտադրութեան արժանի դիպուածոց վրայ, և վերջը յաջորդաբար մինչև Տրդատայ թագաւորելը և անոր մահը: Բայց այն դէպքերը՝ զոր արդէն այլք իրմէ առաջ աւանդած էին, ինչպէս Ղերուբնա, Ագաթանգեղոս, Գլակ և ուրիշները, ինքը համառօտ կերպով մը կը յիշատակէ:

⁂

Խորենացւոյն երրորդ գիրքը՝ Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց կը կոչուի, և որուն նպատակն է սրբոյն Տըրդատայ մինչև իւր օրերը հանդիպած դիպուածները յիշատակել. մինչև այն թշուառ ատենները յորս աչքովը տեսաւ Հայոց հայրապետական և արքունի աթոռոյն ինկնալը. և այնպիսի փառօք լեցուն պատմութիւն մը դառն և սրտաշարժ ողբերովը կը լմնցնէ: Ողբ մը՝ որ եթէ գրողին սրտին արժանի ընթերցողներ ունենար՝ անշուշտ ազգին ապագային վրայ մեծ տարբերութիւն պիտի տեսնուէր:

Խորենացիէն քիչ առաջ՝ նման դէպքի և զրկման մը մէջ

գտնուելով Գրիգոր Աստուածաբան, սրտաշարժ արձանական մը յօրիներ էր ի սուրբն Մելիտոս Անտիոքայ հայրապետ. այն ճառին ընթերցումը այնպիսի տպաւորութիւն մը ձգած էր Խորենացւոյն սրտին վրայ՝ որ գրեթէ շատ անգամ անոր իմաստները և խօսքերը կը գործածէ այս ողբին մէջ: Նման ցաւոց հանդիպած ու հանգունատիպ աղետից ականատես, զուգակից հանճարներ՝ նման լեզու ալ կը գործածէին: Վասն զի Աստուածաբանն՝ զՄելիտոս կ'ողբար, որ ամուր սպաւէնն էր Քրիստոսի հաւատոց, ուսկից կ'ակնածէր և ուրացողն Յուլիանոս. իսկ Մովսէս՝ զՍահակ և զՄեսրոպ՝ որ հաստատութիւն էին Հայաստանի հաւատոց և քաղաքականութեան, և որոնց մահը՝ բոլոր աշխարհին կործանումը կրնար ըլլալ: Անոր համար հառաչանօք կ'աղաղակէր Գրիգորիոս. «Ողորմիմ քեզ, ով եկեղեցիդ. առ քեզ է բանս Անտիոքու քաղաքդ. ողորմիմ քեզ յանկարծակի փոփոխմանդ այդմիկ»: Եւ Խորենացին. «Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց»: Աստուածաբանն. «Նահատակէր յաղագս ճշմարտութեանն քրտամբք. իսկ հարսն համբերէր՝ ողջախոհութեամբք զամուսնութիւնն պահելով. ժամանակ էր ի մէջ յոլով, և ոմն սեղեխաբար յանդգնէր յանարատ առագաստն, այլ հարսն ոչ աղտեղանայր»: Եւ Խորենացին. «Երանի առաջնոյ և երկրորդի փոփոխմանն. զի էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսային և փեսաւէրին, և հարսնդ համբերէր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով»: Կը թողունք յիշատակել ուրիշ քանի մը նմանութիւններն ալ:

⁂

Խորենացւոյն այս ընտիր և անզուգական երկասիրութիւնը՝ գտած է իւր արժանաւոր յարգն ալ ոչ միայն ազգայնոցն առջև, այլ նաև բուն գիտութիւնն և իմաստութիւնը յարգող Եւրոպայի դիմաց: Ազգին մէջ այնչափ մեծ էր իր համբաւը՝ որ ինչպէս Յունաց մէջ պատմագրաց հայր համարուած էր Հերոդոտ, և իւր հեղինակութեամբն ամենուն առջեւ պատկառելի, այսպէս ալ Խորենացին՝ իւր ազգային պատմութեան ունեցած հմտութեամբը, և հասուն անկողմնասէր քննադատութեամբ. անոր համար Ասողիկ՝ լոկ Պատմագիր ըսելով՝ զինքը կը հասկնայ. և ուրիշ տեղ մ'ալ իւր պատմութեան գրոցը մէջ կը կոչէ զնա «Մեծն Մովսէս Հանգոյն Եւսեբեայ, որ քերթողացն անուանի հայր»։ Աւելորդ կը համարինք յիշել ուրիշ վկայութիւնները՝ որոնցմով լեցուն են Խորենացիէն ետքը եկող պատմագրաց երկասիրութիւնները։ Բայց ամենէն աւելի իրենց առ Խորենացին ունեցած մեծարանքը անով կը յայտնուի՝ որ իրենք ալ իրենց կողմանէ ազգային պատմութիւն մը շարագրելու ձեռք զարկած ատեննին՝ կը ջանային յամենայնի իրեն հետեւող ըլլալ, ու երբեմն գրեթէ ընդօրինակող։ Այսպէս վարուած են Յովհաննէս կաթողիկոս, Ուխտանէս, և ինքն իսկ Ներսէս Շնորհալի իւր վիպասանականին մէջ։

Ազգային նոր բանասիրութիւնն ալ՝ մինչեւ դարուս ըսկիզբը՝ նոյն յարգանաց մեծարանօք վարուած է միշտ այս մեծանուն անձին և իր բազմահմուտ երկասիրութեան նկատմամբ։ Պատմական ուսմանց նորագոյն հետազօտութիւնք՝ որչափ ալ կասկածելի երեւցուցած են իրմէ պատմուած և իբրեւ ստոյգ յառաջ բերուած զանազան դէպքեր, սակայն երբէք չեն կրցած ժխտել անոր ծայրացեալ հմտութիւնն՝ և իբրեւ պատմաբան և իբրեւ մատենագիր ունեցած արժէքը։ Անոնց մէջ ամենէն աւելի Խորենացւոյն անձին և երկասիրութեան վրայ խիստ լեզուով և քննադատութեամբ վարուող մը՝ կը բռնադատուի հետեւեալ տողերով հռչակել և խոստովանիլ անոր արդիւնքը։

«Խորենացւոյն թէ իբրեւ մատենագիր և թէ իբրեւ պատմիչ՝ առաւելութիւնները չեն կրնար ուրացուիլ։ Ընդհանրապէս խօսելով, իբրեւ հայերէն մատենագրութիւն, Խորենացւոյն գիրքը մեր նախնի մատենագրութեան մնացորդաց մէջ երեւելիներէն մին է։ Ոչ բոլորովին յստակ, բայց ինքեան յատուկ ընտիր բառերով, հակիրճ՝ այլ պերճ և հարուստ, միանգամայն զուարթ ոճով, մանաւանդ նկարագիրներու մէջ, Խորենացին կը հաւասարի իւիք իրօք քան զնա առջիններուն. որպիսի են Ագաթանգեղոս, Բիւզանդ, Եզնիկ. իսկ քան զնա յետնոց՝ Եղիշէի, Փարպեցւոյն և այլոց մէջ խորենեան ոճոյ ստուերն անգամ չի տեսնուիր։ Հայկայ պատերազմին, ինչպէս նաեւ Զիրաւի ճակատուն, տեղագրութեանց մէջ՝ Արագածու դաշտին և Երուանդակերտի նկարագիրներն և ուրիշ ոչ սակաւ նկարագիրք, ոչ մերայոց միայն, Յոյն և Հռովմայեցի մատենագրաց մէջ անգամ հազիւ ունին զիւրեանց նմանն. գրեթէ չիք գլուխ ուր չիցէ տեսանելի մատենագրական հանճար հեղինակին. ամէն դէպք, ամէն պարագայ ընդ գրչաւ Խորենացւոյն առնու գեղեցկութիւն, վսեմութիւն, ոյժ և կենդանութիւն։ Պարբերութիւն չկայ, իմաստ չկայ որ բոլոր գրքին հիմը կազմող բարձրութենէն անկանի կամ նուաստանայ։ Միով բանիւ Խորենացւոյն պատմութիւնը բազմարուեստ ճարտարագործ պատկերներու թանգարան է որ կը հիացնէ և կը յագեցընէ տեսնողը մինչեւ ցզմայլումն։ Ստոյգ է թէ խորենեան ոճոյն մատենագրական գերազանցութիւնը բնագրին կից է, ինչպէս մարմնոյ մը յատկութիւնը մարմնոյն հետ. գէթ մինչեւ ցարդ թարգմանութիւն մը չկրցաւ կաղապարել այս բնագիրն ինչպէս որ է իւր բանասիրական գոյներով. այնպէս որ Խորենացին իբրեւ մատենագիր, պարտ է նոյն իսկ Խորենացւոյն մէջ տեսնել։ Մի միայն թերութիւն ոճոյ նորա են ստէպ զեղչմունք և զարտուղութիւնք, որովք կամի կարճառօտ և ազդու երեւել. բայց, հակառակ կանոնաց լեզուի, երբեմն այնպէս կը խրթնանայ մինչեւ յանել լաբիւրինդոս արկանել զընթերցողն։

«Ոչ ինչ ընդհատ երեւելի է Խորենացին նաեւ իբրեւ պատմագիր։ Դիպաց զանազանութիւն և հարստութիւն տեղ պատմական շեղումներով, որ կամ անձանց և տեղեաց նկարագիրներ են և կամ հանճարեղ գիտողութիւններ, միանգամայն ազգային երգերու և աւանդութեանց տեղ յիշատակութիւնք, ապացոյց են պատմական հմտութեան և ճաշակի նորա․ երկու գլխաւոր յատկութիւնք՝ որ մեր հին պատմիչներէն և ոչ միոյն, իսկ արտաքիններէն սակաւուց քով կը տեսնուին։ Այսպիսի և այսչափ եղական յատկութեանց հետ ցաւ է տեսնել մեր ծերունի պատմագիրը քննադատութեան կողմանէ թերի»[1]։

⁂

Արեւմտեայց մէջ ունեցած յարգն ու մեծարանքն ալ, իր Պատմութեան գրոցը բազմապատիկ թարգմանութիւններէն, ու գրեթէ եւրոպական գիրք մ'ըլլալէն կը յայտնուի։ Այս արժանաւոր յարգը և իրաւացի մեծարանքը համառօտ կը գտնեն ընթերցողք անոնցմէ միոյն, գիտութեամբն ու մատենագրական հմտութեամբ նշանաւոր, և արդէն մեզմէ յառաջագոյն յիշուած անձի մը, հետագայ դատաստանին մէջ մեր քերթողահօր այս երկասիրութեան վրայ։

«Ամէն գրուածներէն աւելի Խորենացւոյն հանճարոյն ու սրտին պատիւ ընողը՝ իր Հայրենեաց պատմութիւնն է։ Իշխանի մը խնդրանօք կը գրէ զայն․ բայց զինք կամ իր ցեղը շողոքորթելու համար՝ ճշմարտութիւնն անպատիւ չըներ կամ չի սքօղեր։ Կը սիրէ ու շատ կը սիրէ իր Հայաստանը, և սակայն յայտնապէս կը մերկանայ իր աղէտքը․ անցեալները խստիւ կը յանդիմանէ, ըլլալիքն ալ յառաջ կը ծանուցանէ։ Եւ որովհետեւ ազգք՝ շուտ կամ անագան, կը ճանչնան ճշմարիտ սիրոյ լեզուն, Հայաստան զինքը կը մեծարէ և կը սիրէ, և այդ քանի մը խօսքերը՝ նուիրական են իրեն համար։ Զի ծածկեր իշխողաց յանցանքը, բայց երբ ազգէն յատուկ թագաւորի մը ընտրութեան խօսք կ'ըլլայ, ինքն ալ՝ իր վարդապետին հետ կը խրատէ համբերել։ Կը սիրէ ուսուցիչքը, իբրեւ հոգւոյ ծնողս, գորովով լի խօսքեր կը գտնէ անոնց մահն արտասուելու։

«Ստուգախօս, ինչպէս արժան է ըլլալ պատմագրին, և որ այնչափ սակաւագիւտք են։ Ոչ է սիրող հրաշալւոյն, և կ'ըսէ զայն։ Հայկական այբուբենից գիւտին խօսքն ըրած ատեն, աստուածային ազդմամբ կը համարի զայն եղած, ոչ տեսլեամբ կամ զգալի երեւմամբ, այլ յայտնութեամբ Բանին ի միտս ջերմեռանդն հայցողին։ Առաւելագոյն մեծարանաց արժանաւոր է երբ այնպիսի դէպքեր մէջ կը բերէ՝ որուն ուրիշ պատմիչք չեն վկայեր կամ կը հակառակին, ինչպէս Քրիստոսի թղթեյն առ Աբգար, և հայ թագաւորին արշաւանքն ի Յունաստան՝ բոլորովին նման և ժամանակաւ յետոյ Քսերքսեայ բեկման։ Անստոյգ դէպքերն՝ իբրեւ անհաւատալի կ'աւանդէ․ առասպելեօք խառն եղածները՝ մեծ զգուշաւորութեամբ․ յորոց և զմանս իբրեւ յաւելուած մը կը կարգէ առաջին գրոցը։ Այսպիսի յիշատակութիւններ մէջ կը բերէ՝ չէ թէ իրեն հաճոյական համարուելնուն, այլ լոկ ցուցնելու համար առ Բագրատունին ունեցած մեծարանաց և սիրոյ չափը։ Տարբեր կամ հակառակ կարծիքներն ալ յիշելով, կարելի եղածին չափ ճշմարիտը կ'ընտրէ և կ'աւանդէ։

«Ամէն կարելի աղբերաց դիմեց․ պատմագիրք և ժամանակագիրք, դիւանական գրութիւնք՝ զորս Աղեքսանդր փոխադրել տուած էր ի յոյն լեզու, և յորոց թերեւս օգտուեցան Կեփաղիոն, Աբիւդենոս և այլ պատմիչք։ Այսպիսի հրաման մը մեծ պատիւ կը բերէ երիտասարդ աշխարհակալին հանճարոյն, և անգութ ամբարտաւանութեամբ իրմէ թափուած արեան մէկ մասը կը ջնջէ, և կը ցուցնէ թէ ինչպէս Նախախնամութեան ձեռքն է աւերման և կործանման գործիները՝ կենդանագործ քաղաքակրթութեան գործի ընել։

---

[1] ԳԱՐԱԳԱՇ (Ա. Մ.) Քննական պատմութիւն Հայոց, Մաս Ա. 91.

«Կը պակսէին Խորենացւոյն անընդհատ շարք ազգային վաւերական գրուածոց. սակայն քաղաքապետական դիւանաց մէջ կը պահուէին գաւառաց, գիւղից՝ ու մինչեւ նաեւ մասնաւոր ընտանեաց յիշատակարանք՝ պարսիկ և յոյն տառերով։ Իր քննած և խորհրդակցած մատենագրաց մէջ հնագոյնն է Մարիբաս... կը յիշէ նաեւ հին իմաստնոց խօսքերը, և Բերոսեան Սիբիլլայն. ազգային երգոց մէջ՝ կը տեսնէ անոնցմէ եղած պատմական ջերմ լոյսը. և յորում աւելի պատմաբան է և աւելի քերթող՝ քան զյոյնսն, զհռովմայեցիս և զմեր իտալացիս։... Նորագոյն պատմագրաց մէջ կը յիշէ զԱփրիկանոս, Որոգինեայ ժամանակակից, և յԵւսեբեայ յիշատակուած ... իր ատենի մատենագիրներէն շատէն վեր է հմտութեամբ և դատմամբ. իսկ ի հնախօսական գիտութեան՝ ստորեւ միայն քան զԱփրիկանոս և զԵւսեբիոս»։

«Փոքր ըսուած է իր երկասիրութեան ուրուագիծը, բայց բովանդակութիւնը մեծ։ Իբրեւ պատմիչ, ինքն է ստուգապէս Հայկազանց Մովսէսը։ Ի նմա՝ իբրեւ յաղբեր ամփոփեալ են՝ ցրուած ջուրք աւանդութեան, սըրբուած մաքրուած, հոսելով հանդարտ ներդաշնակութեամբ։ Անցեալն մթութեան մէջ՝ ինքը միակ առաջնորդ. մարդկային ազգը իրեն պարտական է ժողովրդեան մը յիշատակարանները՝ որ թէպէտ սակաւաւոր թուով, և պատերազմական անիրաւութեամբք ոչ այնչափ հռչակեալ, այլ արեւելից և արեւմտից մեծ ազգերուն հետ միացած՝ իբրեւ քոյր մը անոնց և ազգակից։ Ի Խորենացւոյ կ'իմանանք թէ ինչ վերաբերութիւններ ունեցաւ Հայաստան Ասորեստանեայց հետ Շամիրամայ ատեն. Եթովպացւոց և ասիակողման Յունաց Տրոյիոյ կոչուած պատերազմին ժամանակ,

և որ նշանակ մ'էր, ինչպէս Հերոդոտ ալ տեղ մը կ'ակնարկէ, արեւելից և արեւմտից մէջ տրուած արդիւնաբեր մրցման։ Չորրորդ Հայոց իր գաղթականութիւնները տարածելն մինչեւ ի Կապադովկիա, կը ցուցնէ զՀայս ասիական ուրիշ ազգերէն ալ մերձաւոր կերպով եղբայրացած եւրոպական արեան հետ...։ Բայց հայ ազգին պատմութիւնը թէ եւրոպականին մերձաւոր և թէ հեռի նկատել ալ ուզենանք, կրկին տեսակէտով ալ արժանաւոր է ծանօթանալու։ Խորենացի՝ թէ վաւերական գրութեանց նուազութեան համար, թէ աճապարանօք իր գրուածքը յօրինելուն, և թէ ընդհանրապէս ուրիշ ամէն պատմչաց ոճին հետեւելով՝ որոնք ազգի մը պատմութիւնն ըրած ատեննին՝ անոր սովորական և ներքին վիճակը նկարագրելէն աւելի, յաղթանակացը և պարտութեանց, նուաճելուն կամ նուաճուելուն դէպքերովը կը զբաղին, քիչ բան կ'ըսէ երկրին սահմանադրութեանց վրայ, բայց թերեւս աւելի քան զպատմիչս հռչակաւորագոյն ժողովրդոց։ Հետաքննական են իր պատմութեան մէջ ասդիս անդին նշանակուած յարաբերութիւնք նախարարաց ընդ արքայի, և թէ քանի խոհական խելամտութեամբ կ'ընծայէ այս տեղեկութիւններն. որովք պիտի տեսնուի թերեւս՝ թէ ինչպէս նախնական թագաւորութեանց մէջ, ազնուապետութիւնը կը բարեխառնէր բարւոյ ու չարի քմահաճութիւններն, և ժողովրդեան ու թագաւորին մէջ անոնց պարիսպ մ'էր...։

«Այսպիսի փութաջան ու խոհական անձի մը ու մասնաւոր ժամանակաց համար գրեթէ միակ մատենագրի տուած տեղեկութիւնք՝ պատուականք են։ Այլ և այլ դիպաց մէջ ընդ Փարպեցւոյն համաձայնութիւնը (ուր երկուքն իրարու գրութիւնը տեսած չեն), ինչպէս նաեւ ընդ պատմչաց Յունաց և Հռովմայեցւոց և յիշատակարանաց՝ կ'առաւելու իր հեղինակութիւնը. և զոր լռելի կերպով ունեցած է իր ազգակցաց քով...։ Պատմելու պարզ կերպովը՝ աւելի հաւատարմութիւնը կ'աւելցնէ. ծանրութեան հետ խառնուած պարզութիւն մը։ Խնամքով հեռի կը պահէ իր գրիչը ամէն աւելորդաբանութիւններէ. այն ամէն խօսելու կերպերէն՝ որ հռետոր պատմչաց և ոչ հռետորաց՝ փափաքելի զարդարանք համարուած են. ... բայց պէտք եղած ատեն գիտէ ճարտարախօսութիւն ալ գործածել, ինչպէս երկրորդ և երրորդ գրոց վերջը։ Արեւելեան շքեղութենէ կը զգուշանայ. միայն տեղ տեղ նշանակ մը, իբրու երիտասարդական տիոց թել մը որ լսելի կ'ընէ իր ձայնը ուսմամբ և առաքինութեամբ ծայրացեալ հասակին մէջ։ Քանի մը երկար նկարագրութիւններ, ինչպէս երբ քաղաք մը՝ մարդկային երեսաց կը նմանեցնէ, և ուսումը՝ երկնային լուսոյ ծագման, թերեւս տարօրինակ նմանութիւնք կարենան համարուիլ բայց ոչ սուտ։

« Ոճը ամփոփ՝ բայց ոչ ցամաք. տեղ տեղ անհաւասար. իմաստներն երբեմն մութ, և իրարու հետ խառնուած, մանաւանդ ուր պատմութենէն իմաստասիրելու կ'անցնի։ Լեզուն ընտիր է կ'ըսեն, բայց այլ և այլ հելլենաբանութեամբք խառն. որ չէ արուեստակութիւն, այլ արգասիք աղեքսանդրեան հրահանգաց, յունական լեզուի անընդհատ ուսման, Աստուածաշունչ գրոց ի յունէ թարգմանութեան, յորում հարկ էր ամէն բառ կշռել և վրան երկար խորհրդածել՝ ընիկ լեզուին մէջ անոր համաձայնը գտնելու համար։ Յայտնապէս կը վկայէ թէ բառից ընտրութեան ժամանակը կը պակսի. և որ ուրիշ ապացոյց մ'է թէ օտարամոլ փառասիրութեան փափաք մը չէ այն, այլ թէ շատ՝ անհոգութեան »[1]։

Խորենացւոյն առաջին թարգմանիչն եղած է Պրեննէր անունով շուէտացի մը, որ նշանաւոր անձ մ'է իր ազգային մատենագրութեանը մէջ, և քաղաքական պատճառաւ մը Ռուսաց Մոսկուա քաղաքին մէջ արգելուած էր ի բանտի։ Հոն իրեն քով բանտակից և կենակից ունեցաւ զՅովհաննէս Բարթողիմէոս Յակինթեան Դոմինիկեան կրօնաւորը, տեղեակ հայերէն լեզուի. ուր ձեռքերնին իյնալով Խորենացւոյն այս պատմական երկասիրութիւնը, հայագէտ կրօնաւորը քաղելով կամ համառօտելով կը թարգմանէր ի լատին, և Պրեննէր ծանօթութեամբ կը ճոխացնէր, և զոր ետքը տպագրեց Ստոքհոլմի մէջ յամի 1723։ Խորագիրն է. Epitome Commentariorum Moysis Armeni, de origine et regibus Armenorum et Parthorum, item series principum Iberiæ, et Georgiæ, a Brennero. Իսմէ ետքը երկու անգղիացի եղբարք, Գուլիէլմոս և Գէորգ Վիսթոն, թարգմանեցին ի լատին թէ Խորենացւոյն պատմութիւնը և թէ աշխարհագրութիւնը, 1726ին տպագրեցին ի Լոնտրա։ Moysis Chorenensis Historiæ Armeniacæ libri III. Accedit ejusdem Scriptoris Epitome Geographiæ, Præmittitur Præfatio, quæ de Litteratura ac Versione Sacra Armeniaca agit... Armeniace ediderunt, latine verterunt, notisque illustrarunt Gulielmus et Georgius Gul. Whisthoni filii; Aulæ Clarensis Cantabrigiensi aliquandiu Alumni. Ասոնց հայրը՝ Գուլիէլմոս Վիսթոն՝ Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ անգղիական լեզուի ուսուցիչ էր՝ Հայազգի Աղափիրեան Գրիգորի որդւոյը, ասոնցմէ սորվեցաւ Գուլիէլմոս հայերէն լեզուն, ու Լոնտրա դառնալով՝ սորվեցուց իր երկու որդւոցը։

Վիսթոնեանցմէ դար մը ետքը գաղղիական թարգմանութիւն մ'ըրաւ Լըվայեան, դասատու հայկական լեզուի յազգային Մատենադարանին Փարիզու. և երկու անգամ տպագրեց, նախ ի Փարիզ (1836) և ապա ի Վենետիկ (1841) բնագրին հետ և զոր ետքը ճոխացուց Խորենացւոյն գրոցը մէջ եղած այլ և այլ անուանց երկար և հետախոյզ ծանօթութեամբք, և նոր տպագրութիւն մ'ըրաւ ի Փարիզ ի 1855։ Histoire d'Arménie de Moïse Khorénatzi, auteur arménien classique du V.me siècle, traduite par P. E. Le Vaillant de Florival. Paris, 1836. — Moïse de Khorène, auteur du V.me siècle. Histoire d'Arménie, texte arménien et traduction française, avec appendice, contenant notice géographique, précis de toute l'histoire d'Arménie; tableau de la littérature arménienne par P. E. Le Vaillant de Florival, chevalier de la Légion-d'Honneur, professeur d'arménien à l'école royale et spéciale des langues orientales vivantes près la Bibliothèque du Roi à Paris; etc. Venise, typographie arménienne de Saint-Lazare, 1841.— Moïse de Khorène,... ouvrage dedié à S. M. Impériale Nicolas I^{er}, Empereur de toutes les Russies, par P. E. Le Vaillant de Florival... Paris, 1845։ Ուրիշ գաղղիական թարգմանութիւն մ'ալ ի Հատ. Բ. Հաւաքման հին և նոր պատմագրաց Հայաստանի Լանկլուայի. Moïse de Kho-

---

[1] ԴՈՄՄԱԶԷՕՅ, ի յառաջաբանի իտալական թարգմանութեան Պատմութեան Խորենացւոյն։

rène, Histoire d'Arménie en trois livres, traduction nouvelle accompagnée de notes historiques, critiques et philologiques, par Victor Langlois. Paris, 1870. Ընտիր իտալական թարգմանութիւն մ'ալ հրատարակուեցաւ ի Վենետիկ ի Ս. Ղազար, ու երկու անգամ տպագրեցաւ (1841, 1850) հմուտ ծանօթութեամբք· Storia di Mosè Corenese, versione italiana illustrata dai Monaci Armeni Mechitaristi, ritoccata quanto allo stile da N. Tommaseo. Venezia, Tipografia Armena di S. Lazzaro. 1841ին նոյն քաղքին մէջ հրատարակուեցաւ ուրիշ իտալական թարգմանութիւն մը Գաբբելլեդդի հայագէտ քահանային աշխատասիրութեամբ։ Mosè Corenese, storico armeno del V° secolo, versione di Giuseppe Cappelletti, Venezia. Կրկին ռուս թարգմանութիւնք ալ եղած են այս գրքիս, առաջինը Յովհաննիսեան սարկաւագին ձեռքով, որ տպագրուած է ի Փեթրպուրկ. իսկ երկրորդը Մ. Էմինեան հմուտ բանասիրին ջանիւքը, տպագրեալ ի Մոսկուա ի 1858։ Կայ նաեւ թարգմանութիւն մը ի լեզու գերմանական. Moses von Choren, Geschichte Gross-Armeniens, aus dem Armenischen übersetz, von Dr. M. Lauer, Regensbourg, 1869. — Այլ և այլ ժամանակ և տեղուանք եղած հայկական բնագրին և հեղինակին ուրիշ գրուածոց տպագրութեանց նկատմամբ տես ի ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ։

⁂

Այսպիսի երկար և մթին ժամանակաց և զանազան ազգաց ու դիպուածոց պատմիչը, եթէ հիմակուան բանադատութեան առջեւ տեղ տեղ սխալած ալ երեւնայ՝ զարմանք չէ. բայց յիրաւի զարմանալի է Խորենացւոյն քիչ սխալիլն և այնչափ աշխատանքն ու քննութիւնն ստուգութեանց համար, մանաւանդ ի ժամանակագրականս. որոց համար կ'երեւի թէ Յաւելուած կամ չորրորդ գիրք մ'ալ գրած էր։ Այս Չորրորդ գիրքը կը յիշէ Թովմա Արծրունի, և կ'իմացնէ որ անոր մէջ կ'աւանդուէին այն ամէն անցքերը՝ որ ի բարձմանէ թագաւորութեանն Արշակունեաց՝ մինչեւ Զենոն կայսեր ինքնակալութիւնը. «Սահակս այս, կ'ըսէ Արծրունին, այն Սահակ է՝ որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս, տիեզերահռչակեալ քերթողն, զգիրս պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսրն Զենոն։ Որոյ ժամանակ կենացն ձգեալ տեւեալ ամս հարիւր և քսան, լի և պարարտ ծերութեամբ. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսիսի Խորենացւոյ՝ վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հաստուածին»։ Բայց այս չորրորդ գիրքը ձեռքերնիս հասած չէ, դէթ ամբողջ[1]. ինչպէս նաեւ երրորդ գրոցը ցանկին վերջը յիշուածը «Տաղք չափաւ յինքն և ի Սահակ Բագրատունի»։

Խորենացւոյ Պատմութեան գրոց հին գրչագիրք ի վանս Էջմիածնի. 1. Մեծագիր բոլորագիր, գրեալ ի թղթի ի գիւղն Ալփուզար. ի թուին ՌՃԽԷ, յորում ամփոփին և Ստեփանոս Տարօնացի, Արիստակէս Լաստիվերտցի, Զենոբ Գլակ. Ագաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդ, Եղիշէ, Ստեփանոս Ուռպելեան, Վարդան պատմիչ, Կիրակոս Գանձակեցի, Եւսեբիոսի և Սոկրատայ եկեղեցական պատմութիւն, և այլն։ (Թիւ գրչ. 1619)։ — 2. Մեծագիր բոլորագիր գրեալ ի թղթի. յորում Եղիշէի պատմութիւն Վարդանանց, համառօտ պատմութիւն վասն ամբարշտութեանց Բարծումայ եղխեղոսի ասորւոյ ի Թովմաս վարդապետէ։ — 3. Յերկրին Մոկաց ի Սուրբ գեղջ ի թուին ՌՁԸ։ Ուրիշ այլ և այլ նորագիր օրինակք ՌՁ, ՌՃԻԵ, ՌՃԼԹ, ՌՃԽ թուականներով։ — Մեր Մատենադարանին գրչագիրք նշանակուած են ի Յառաջաբանի Մ—դէն—ֆէր—Բէ—նց Խորենացւոյն (ի 1843 և ի 1865)։

⁂

Խորենացւոյն անուամբ մեր ձեռքն հասած Աշխարհագրութիւն կոչուած գրուածքը՝ այլ և այլ քննադատութեանց ենթակայ եղաւ յեւրոպացի՝ նաեւ ի մերոց գիտնոց և բանասիրաց, և մինչեւ նաեւ անհարազատ դատուեցաւ։ Ասոնց պարագլուխ հայերենագէտ գաղղիացին Սէն-Մարթէն՝ բոլորովին մերժեց Աշխարհացոյց առոյ Մովսիսի Խորենացւոյ կոչելով զայն. իսկ այլք՝ ինչպէս նաեւ մերազգի հմուտ

---

[1] Տես Բազմավէպ, 1851, Մարտ։

բանասէրն Պատկանեան՝ առանց յանձն առնլոյ ընծայել զայն Խորենացւոյ, է դարու՝ և հաւանականաբար Անանիայի Շիրակունւոյ երկասիրութիւն համարեցան։ Այս կարծեաց առիթ և հաւանականութիւն տուած են՝ իրենց ծանօթ ձեռագրաց և անոնց վրայ եղած տպագրութեանց անընդունելի ընթերցուածք, յաւելուածք և համառօտութիւնք. զորս ուղղելով ըստ հնագոյն և աւելի հարազատ գրչագրաց, կը հաւանին հմուտք – առանց ժխտելու անոր կրած բազմապատիկ փոփոխութիւններն, – Խորենացւոյն ընծայել զայն։

Պտղոմէոսի համանուն երկասիրութեան համառօտութիւնն է այս գրուածքը. զոր մտադիր քննողը յայտնի կը տեսնէ ամէն աշխարհաց ստորագրութեան, տուած սահմաններուն, գաւառներու բաժանման և անուանց մէջ։ Հեղինակն հայկականին և շարադրող, որ մեր ոսկեղէն դարու նշանաւոր անձնաւորութիւն մ'է, խորունկ հմտութիւնը կը ցուցնէ նաեւ ի յունական լեզուի այնպիսի գրուածքի մը շարագրութեան մէջ որ դժուարին է ի համառօտել, և դժուարագոյն ի ճշդել զանուանս գաւառաց, աշխարհաց և քաղաքաց։ Թէպէտ և հետեւող Պտղոմեայ, այլ մերթ կ'ուղղէ անոր վրիպակներն՝ տեղ տեղ իրեն հետ համամիտ և համաձայն չըլլալն յայտնելով. սակայն և այնպէս նախամեծար համարելով զնա քան զայլս, որովհետեւ՝ ինչպէս հեղինակն ալ կը վկայէ, երկարժամանակեայ վաստակոց և ճանապարհորդութեանց արդիւնք էր իր գրուածքը։

Երկասիրութեանս մէջ յիշուած աշխարհագիրք բաց ի Պտղոմեայ, են Հիպպարքոս, Մարինոս Տիւրացի, Կոստանդին Անտիոքացի, Պապ յԱղեքսանդրիոյ, Դիոնեսիոս և Ապողոն։ Առաջին երկու անձինք յիշուած են նաեւ ի Պտղոմեայ, ուստի առեր է և Խորենացի, իրենց ընծայուած խօսքերով. «Իպառքոս, կ'ըսէ, զքաղաքս ծովական չափով աւանդեաց, և զլուսնի պակասութիւն յԱռբիլայ ութժամ աւանդեալ, ի Կարքեդոն երկոտասան արժանաւորեալ։

Բայց Մառին Տիւրենացի յերկրական բոլորակէն ուղղեալ՝ որչափ կարէ ցուցանել ժամագիտակն, առնէ զտեղերագրութիւն ըստ ճանապարհակցութեանն ընդ օդ անցանելով, ի ձեռն գործարանացն նկատելով զնշոյլս արեգական և լուսնի և աստեղաց, ըստ անձնիւր եօթն նահանգաց փոփոխման սահմանաց»։ Կոստանդին Անտիոքացի՝ մեզի անծանօթ անձ մ'է, եթէ անուան շփոթութիւն մը չկայ. որովհետեւ իրեն ընծայուած Տեղագրութիւն քրիստոնէական գրուածքին հեղինակ կը համարուի Կոզմաս անունով մէկը որ Կոստանդինե միայնակեաց ալ կոչուած է։ — Պապ կամ Պապպոս Աղեքսանդրացի ծանօթ էր հնոց. բայց աշխարհագրական գրուածք իր անուամբը առ մեզ հասած չէ։ Որոշ տեղեկութիւնք կը պակսին մեզ ի Խորենացւոյ յիշուած յետին երկու անձանց Դիոնեսիոսի և Ապողոնի վարուց և երկասիրութեանց։

Առաջին երկու գլուխներուն մէջ ընդհանրապէս աշխարհագրութեան վրայ խօսելէն ետքը, հայ հեղինակը կը խոստանայ իւրաքանչիւր աշխարհաց և քաղաքաց վրայ խօսիլ առանձինն, հետեւելով Պտղոմեայ գրութեան, թէպէտեւ Պապայ համառօտութիւնն ուզելով ընել, ինչպէս կ'ըսէ. ուր այս վերջինս ալ քաղեր էր ի Պտղոմեայ, ինչպէս հայ օրինակին՝ Պտղոմէոսի յունական սկզբնագրին բաղդատութենէն յայտնի կ'երեւնայ։

Գալով գրուածքին հարազատութեան, բաւական է բաղդատել զայն Խորենացւոյ պատմութեան գրոց հետ. որուն վրայ աւելցնելով նաեւ ոճոյ նմանութիւն մի և նոյն հեղինակի ընծայուած այս երկին երկասիրութեանց մէջ՝ կը հաւանին բանասէրք պնդել և հաստատել թէ որչափ ալ ժամանակաւ մեծամեծ այլայլութիւններ կրած է այս գրուածը, ուստի և իրաւամբ կասկածելի եղած արդի գիտութեան համար, բայց նախկին շարագրութիւնը Խորենացւոյն է։ Զայս ուզած է հաւաստարմացնել ընդդէմ Սէն-Մարթէն զաղղիացւոյն և համախոհից հայկական հնախօ-

սական և աշխարհագրական գիտութեամբ պատկառելի՝ Ինճիճեան վարդապետը[1], և Խորենացւոյ այս գրուածքին՝ յընտիր օրինակաց ի գաղղիական լեզու վերածող Նոր Թարգմանիչն՝ հմուտ տեսութեամբքն և բազմապատիկ ծանօթութութիւններով, և յունականին հետ բաղդատութեամբ[2]։

Աւելորդ չենք համարիր Պատկանեան Քերովբէ հմուտ և ամենայն մեծարանաց արժանի բանասիրին կարծիքը մէջ բերել այս գրուածքիս նկատմամբ. «Հինգերորդ դարու Հայոց պատմաբան Մովսէս Խորենացու աշխատութիւնը յայտնի եղաւ ուսումնական աշխարհին մանաւանդ այն օրից երբ անգլիացի Վիստոն եղբարք 1736 թուին Լոնտոնի մէջ լատիններէն լեզուով տպեցին։ Դեռ ևս այն ժամանակն դորան կից տպած էր և յիշեալ աշխարհագրութեան թարգմանութիւնը։ Երկրորդ թարգմանութիւնը այդ աշխատասիրութեան արաւ գաղղիացի հայագէտ Սէն-Մարտէնը. բայց սա այդ աշխատութիւնը մի խիստ քննութեան տակ ձգեց. և մօտ քանի չափ պատմական սխալներ գտնելով, իրաւունք համարեց կարծել, թէ դա 950 թուականի գրութիւն է։ Որպէս թէ ի պատասխան այդ քննութեան, Վենետկեցիք տպագրեցին յիշեալ աշխարհագրութիւնը նորից 1843 թուին. և որովհետև համեմատած էին դոքա մօտ տասուերկու ամենահին և ամենաընտիր գրչագիր օրինակներ, վասն որոյ այս նոր տպագրութեան մէջից վերացած է պատմական սխալներից մեծ մասը։ Այսու ամենայնիւ այս ուղղած և բուն բնագրին աւելի մօտ եղած տպագրութիւնն ևս տեղիք է տալիս կարծելու, որ դա հինգերորդ դարուց յետոյ է գրուած։ Ներկայ ժամանակներում բոլոր մասնագէտները, ի թիւս որոց Հ. Ղեւոնդ Ալիշանը և Կիպերտը, համաձայն են որ մեր ունեցած աշխարհագրութիւնը շինած է կամ եօթներորդ դարու սկիզբին, կամ արաբաց առաջին արշաւանքին ժամանակ ի Հայաստան, այսինքն նոյն եօթներորդ դարու կիսին։ Ուրեմն ինչպէս Սէն-Մարտէնը և իրաւացի կերպով կարծում է, այդ աշխարհագրութիւնը չի կարող Մովսէս Խորենացու աշխատութիւնը լինիլ»։ Պատկանեանի հետազօտութեանց նայելով, գործ հեղինակը Է դարու մէջ է ապրած, ժամանակակից է Մաւրիկիոս կայսեր և Խոսրով Պարթեւի, և կարծելու է որ Անանիա Շիրակացին լինի։

* * *

Պիտոյից գիրք. — Այս անունով գրուած մը կ՚ընծայուի Խորենացւոյն։ Հեղինակը Թէոդորոս անունով աշակերտ մը ունեցած է, որուն ճարտասանականին ուսումը աւանդելէն ետքը, նոյն ուսման հրահանգաց մէջ զինք վարժեցնելու համար, հարկ համարեր է վարդապետն ինքն իր կողմանէ օրինակներ ալ ընծայել, և անոնց նմանողութեանը փութաջան և յորդորամիտ ընել զինքը, և յունական ձայնով Պիտք կամ Պիտոյից (χρῆα) կոչեր էր այն գիրքը։

Տասն ճառ կամ Գիրք կը բովանդակէ այս երկասիրութիւնը, և որոնց վերնագիրքն են Պէտք, Խրատ, Եղծումն, Հասարակ տեղի, Ներբողեան, Պարսաւ, Բաղդատութիւն, Բարառնութիւն, Արտասանութիւն և Դրութիւն։ Ասոնք, ինչպէս ընթերցողը գիտէ, ճարտասանական ձեւեր են. և այն ձեւերուն վրայ վարժելու համար՝ այլ և այլ օրինակներ մէջ կը բերէ։ Բայց այն օրինակները ընդհանրապէս շատ հեռու կը մնան ճարտասանականին ուսումն աւանդող՝ կամ իրեն գրուածներովը անոր կանոնները սահմանող յոյն և լատին մատենագիրներէն. և աւելի մերձաւոր կրնան համարուիլ թէ ոճով և թէ գրուածքի կերպով այն ճարտասաններուն երկասիրութեանց՝ զորս Ելլադաւերիչ և խանգարիչ կը համարէր բուն և հարազատ ճարտասանութեան, և ընդհանրապէս սոփեստէս կամ իմաստակ անունը կու տար անոնց։ Այսոնց կարգէն կրնային համարուիլ Հերմոգենէս Տարսոնացի, Թէոնն, Ափթոնիոս գրամարտիկոս, Լիբանիոս՝ Բարսղի բարեկամը և Ոսկեբերանի վարժապետը, և այլք։

---

[1] Հնախօսութիւն Հայաստանեայց. Հատ. Գ. 313–14.

[2] Տպագրին խորագիրն է. «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց»։ Վենետիկ ի տպարանի Մխիթարեանց, 1881. Géographie de Moïse de Khorène, d'après Ptolémée. Texte arménien traduit en français par le P. Arsène Soukry, Mékhitariste.

Այս պատճառաւ ոմանք Խորենացւոյն այս երկասիրութիւնը անհարազատ կը համարին և կամ թարգմանութիւն։ Եւ իրենց տարակուսանաց գլխաւոր պատճառ կը համարին այն ոճոյ զանազանութիւնը՝ որ յայտնապէս կը տեսնուի Պիտոյից գրոց և Պատմագրութեան մէջ. մանաւանդ որ ոճն ու դասաւորութիւնը յար և նման կրնայ համարուիլ՝ դեռ քիչ մը յառաջ յիշատակուած Լիբանիոսի Նախակրթութեանց։

Փրանկիսկոս Սկոբարիոս յամի 1597 ի Գինեւա Զուիցերիոյ տպագրութեամբ հրատարակեց Αφθόνιου σοφίστου Προγυμνάσματα καὶ μῦθος, յորում հաւաքուած են չորեքտասան հրահանգք կամ ներվարժմունք որ ընծայուած են Ափթոնի, Թէոնեայ և Հերմոգենեայ։ Գլխակարգութիւնք հրահանգացն՝ հետեւեալքն են. Ο῾ μῦθος, Fabula. — Δίμνημα Narratio. — Χμεῖα Chria. — Γνώμη Sententia, — Ανασκουὴ Refutatio, — Κατασκίνη Confirmatio, — Κοινὸς τόπος Communis locus, — Εγκώμιον Laudatio, — Χόγος Vituperatio, — Σύγκρισις Բաղդատութիւն, — Η' θοποΐα։

Բայց ազգային ընդհանուր աւանդութիւն մը դէմ կ'ելլէ այս կարծեաց, որ «Պիտոյից» գիրքը Մովսէսի հարազատ կը համարի. և որուն կրնայ երաշխաւորել ժամանակաւ կըրտսեր պատմչի մը, Կիրակոս Գանձակեցւոյն վկայութիւնը, որ յայտնապէս կը գրուցէ. «Աքանչելին Մովսէս (շարագրեաց) զՀայոց պատմութիւնն ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ... և զՊէտքն ի խնդրոյ Թէոդորոսի ուսմեմն»։ Իրեն ձայնակից է Ասողիկ. «Ի ժամանակս (Գիւտայ կաթուղիկոսին) էր մեծ փիլիսոփան Հայոց Մովսէս, որ ըղճարտասանական արուեստ ի գործ առնու ի Հայս»։ Նոյնպէս ալ, թէպէտ աւելի անորոշ խօսքերով, Արծրունին, Գրիգոր Սարկաւագապետ և այլք, որ միաբան անուանի փիլիսոփոս և քաջ հռետոր կը կոչեն զինքը, և քերթող և քերթողահայր[1]։

Մեզի հաւանական կ'երեւնայ ազգային աւանդութեան և անոր պատմչաց ձայնակցիլը, անոր դէմ հակառակող քանի մը պատճառները ցրելու աշխատելով։ Այս պատճառներուն մէջ գլխաւոր կրնայ համարուիլ գրքին հելլենաբանութիւնը։ Այդ թերութիւնը, եթէ հաճոյ երեւնայ մէկուն այնպէս անուանել, Մովսէսի ուրիշ գրուածոցը, և նոյն իսկ Պատմութեանը մէջ ալ կը տեսնուի. և ասիկայ արդիւնք է այն լեզուին ուսմանցը մէջ անխոնջ պարապմանը, և քիչ մ'ալ հելլենասիրութեանը, որուն մէջ ընկած կրնան համարուիլ ոչ միայն Խորենացին, այլ իւր աշակերտակիցներէն ալ մէկ քանին, և այն պատճառաւ իբրեւ նորութեան մը հեղինակք՝ ազգին մէջ բաւական հակառակութիւն և ընդդիմութիւն կրեցին։

Երկրորդ պատճառ, ոճոյ և մտածմանց տարբերութիւն, որ մեծ խտիր մը կը դնէ Պատմութիւնը և այս երկասի-

---

[1] Միայն յետին դարուց հեղինակ մը, Առաքել վարդապետ, Անյաղթին կ'ընծայէ Պիտոյից գիրքը. և որուն վկայութիւնը մէջ բերինք առաջ՝ Դաւիթի վրայ խօսելու առեններս, Բայց ուրիշ անանուն մատենագիր մը՝ Պիտոյից տեղ Անյաղթին երրորդ երկասիրութիւնը կը համարի Է—խոյ գիրքը, նմա գրքի մը նկատմամբ՝ հետեւեալ յիշատակագրին հանդիպած ենք գրչագրի մը մէջ. «Գէորգ քարտուղարս Հայոց մեծաց և սուրբ թագաւորացն պաւստոյս (?) զարմանալի ի նախկի յիշատակի գրոցս այսմիկ, եթէ գրեցաւ գիրքս այս Է—ի հրամանաւ թարգմանեալ ի յունաց ի հայս տեառն հրամանաւ Մովսէսի Հայոց կաթողիկոսի Գարեգինացւոյ, ի քսան և հինգ թուականին Հայոց․ Վկայ է այսմիկ Սարգիս Արտաբացի եպիսկոպոս ճշմարիտ վկայութեամբ»։

րութիւնը արտադրող հանճարոյն մէջ։ Սակայն նոյն ոճը և գրիչը կրնանք նկատել յայտնապէս նաեւ այն ճառին մէջ՝ զոր Խորենացին յօրինած է ի գովեստ սրբուհւոյն Հռիփսիմեայ, և որուն վերջերը՝ զօրաւոր պատճառ մը ինքը կու տայ՝ արդարացնելու իր ոճը. այսինքն հասակին մանկութիւնը։ Նման պատճառ մը թերեւս առիթ եղած է Խորենացւոյն՝ Պիտոյից գրոցը մէջ այդպիսի ոճ մը բանեցնելու. իր ժամանակին ճարտասանական արուեստին տղայութիւնը, որ չէր ուզեր իրեն նմանողութեան գաղափար ընտրել նուիրական բեմերու վրայէն որոտացող սուրբ հայրապետաց աննման լեզուն, այլ լսարանաց մէջ գործածուած, ու փիլիսոփայութիւնը ճարտասանութեան հետ խառնել կարծող վարժապետաց լեզուն և ոճը։

Ուրիշ պատճառ մ'ալ՝ որով կը հաւանինք Պիտոյից գիրքը Խորենացւոյն ընծայել՝ այս կ'երեւնայ՝ որ ինչպէս ի Պատմութեան, այսպէս ալ ասոր մէջ շատ անգամ վկայութիւն կը բերէ Փիլոնի խօսքերէն, նման շարադրութեամբ։

Բայց եթէ յունական մատենագրաց աւելի հմտութիւն մը երեւնալով այն գրքին մէջ, այն պատճառաւ ուզենայ մէկը թարգմանութիւն համարել Պիտոյիցը, կրնանք ալ կարծել թէ թարգմանաբար յօրինած ըլլայ Խորենացին այս երկասիրութիւնը. թէպէտ և յունական մատենագրութեան հմտութիւնն ալ կրնանք ընծայել համարձակ՝ իր կենաց մեծ մասը անոնց գրուածոցը ու մատենադարանաց և ճեմարանաց մէջ անցնող անձի մը։

Միայն թէ կրնայ ալ ենթադրուիլ թէ գաղափարողք ոչ լոկ շարադրութեան և լեզուին մէջ մտահաճոյ յաւելուածներ ըրած ըլլան, այլ նաեւ նիւթոյն մէջ փոփոխութիւն մտցնելով ու ճառերէն մէկ քանին աւելցնելով։ Այսպէս կրնան համարուիլ Պիտոյից գրքին վերջը եղող երեք Բարանութեան օրինակներն, որ անհմուտ անձի և կամ թերեւս աշակերտի արտադրութիւնք են։ — Հին ձեռագրի մը մէջ ալ Դաւթի և Գողիադայ մենամարտութեան նկարագրութիւնը՝ կ'ընծայուի Խոսրովայ թարգմանչի, ինչպէս յառաջ ալ յիշատակեցինք։

Այսչափն ըսելնէս ետքն ալ, աւելի մանրախոյզ քննութիւնը՝ ժամանակին կը յանձնենք, յիշեցնելով Պաումկարտներ Հայագիտին երկասիրութիւնը այս նիւթիս վրայ։

Պիտոյից գիրքը առաջին անգամ տպագրուած է օրինակաց բաղդատութեամբ և հմուտ ծանօթութեամբք ի Ս. Ղազար (Հ. Յովհաննէս Վ. Զոհրապ.) ի 1796. որուն համեմատ եղած է նոր տպագրութիւնն ի 1843։

Խորենացւոյն մանր գրուածները։ — *Խորենացւոյն մանր գրուածոցը մէջ առաջինն է* **Պատմութիւն սրբուհւոյ Աստուածածնի և պատկերի նորա** *կոչուածը։ Ազգային եկեղեցական պատմութիւնը կ'աւանդէ՝ թէ Հոգւոց վանաց մէջ՝ յերկրին Անձեւացեաց, կիպարիս փայտէ յօրինուած սրբոյ Կուսին պատկեր մը կը մեծարուէր, Յովհաննու աւետարանչին ձեռագործ համարուելով։ Աստուածածնայ մահուան ժամանակ՝ երբ մանաւոր հրաշքով մը ամէն առաքեալք իրեն քով գտնուեցան, Բարթուղիմէոս՝ որ ի Հայս առաքելութեամբ սուրբ աւետարանը կը քարոզէր, չկրցաւ անոնց հետ միասին գտնուիլ, ու Սրբուհւոյն մեռնելէն ու մարմնոյն ի գերեզման ամփոփուելէն ետքը հասնելով, միւս առաքեալք անոր սրտին ցաւը մեղմացնելու համար՝ այն պատկերն իրեն պարգեւեցին։ Բարթուղիմէոս ալ դառնալով ի Հայս՝ եկեղեցւոյ մը մէջ դրաւ զայն ի յարգութիւն, քովն ալ վանք շինեց, որ կոչեցաւ* **Հոգեաց վանք**։ *Արծրունեաց իշխանը Սահակ՝ որ իւր համանուն Բագրատունւոյն խնդրանօքը՝ Խորենացւոյն յօրինած Պատմութեան գիրքը կարդացեր էր, աղաչանաց նամակ մը գրեց առ Մովսէս՝ խնդրելով իրմէ որ Հոգւոց վանքին մէջ եղած պատկերին վաւերական պատմութիւնն ընէ և իրեն ղրկէ։ Այն թղթին մէջ՝ « հրեշտակ և սպասաւոր մեծութեանցն Քրիս-*

տոսի, կը կոչէ զնա, և այր երկնակենցաղ և լուսաւորիչ խաւարելոց... երկրորդ Սահակ և Մեսրովպ՝ յետ գնալոյ նոցա առ Աստուած»: Խորենացին ալ կատարեց անոր փափաքը[1]:

Մետասաներորդ դարու գրչագիր մը հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնը կու տայ Խորենացւոյն այս երկասիրութեան վրայ. «Զայս ցանկալի պատմութիւնս՝ բազում ըղձիւ և ցանկալի յուզմամբ գտեալ մեծ հռետորն Մովսէս՝ որ կոչի Խորենացի գրեաց (գզ) ստուգիւ հաւատեաւ. և քանզի էր աղօտացեալ յաւագաց մերոց, և ուր ուրեք գտանէին. մինչեւ ի ձեռն կրօնաւորի միոջ գտեալ՝ որ էր յերկրէն Խոր Հայոց, ի գաւառէն որ կոչի Ձորոյ գետ, ի համբաւեալ ուխտէն Սանահին անուանեալ, պատահումն բարի իմն եղեւ. և հրամայեաց մեծն և բնաւն ի լաւս՝ Ատոմ, որդի Սենեքարիմայ, Հայոց նահանգի Վասպուրական կոչեցեալ. որոյ մասն փրկութեան հաստատեալ էր Ատոմայ՝ պատկեր մօր տեառն ի բաժին Անձաւացեաց. հրամայեաց գրել մեծաւ յուսով և խնդութեամբ բազմաւ. որոյ անուամբ պարգեւեալ եղիցի մեծաշուք իշխանութիւն նոցա, չորից հարազատ եղբարց՝ Դաւթի և Ատոմայ, Կոստանդնի և Համազասպայ, գեղեցիկ և շքեղազարդ Բագրատունեաց»[2]:

---

[1] Հնագիր ճառընտրի մը մէջ որ ի Ս. Սարգիս եկեղեցւոյ Բաղէշու՝ Յովհաննու Մանդակունւոյ կ'ընծայի հետեւեալ վերնագրով. «Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ պատմութիւն և գիւտ փոխման Աստուածածնին և մաւր տեառն. թէ ո՛րպէս եղեւ փոխումն, կամ ո՛րպէս շնորհեցաւ անարատ պատկերն ի փայտն, և տուաւ Հայոց»։

[2] Ըստ այլոց «ուրեք ուրեք գտանի յարկեղ դիւանի մերում, Վասն որոյ բազում փութով խնդրեալ Ատոմայ որդւոյ Սենեքերիմայ, գտանէ ի մեծ սուրբ ուխտն Սանահին կոչեցեալ, Եւ ի ձեռն մեծագոյն պարգեւացն և զրոց ձեռին՝ հայցէ ի նոցունց. և բերեալ զրով ստուգապէս հաւաստի պատմութիւնս, Եւ տայ դնել մերձ առ պատկեր սրբոյ Կուսին, բնաւորեալ սուրբ հոգւոյն, Վասն զի որք կամիցին գիտել զպատճառ տապաւորեալ սուրբ պատկերի Աստուածամօրն, ընթերցեալ գիտասցեն ի վերայ հասանիցեն ամենայնի հաւատի ի վերայ հասեալ ստոյգ գիտութեամբ, Որում անկեալ իմ առաջի սուրբ պատկերին մեծաւ երկիւղիւ և դողութեամբ և բազում արտասուաւք հայցել ի սուրբ Կուսէն զբժշկութիւն վիրաց հոգւոյն իմոյ, և զբարեխաւսութիւն առ որդին իւր և Աստուած մեր»...

Ներբող ի սուրբն Հռիփսիմէ. — Երախտագիտութեան առոյգ հասակին մէջ շարադրեց Խորենացին այս ներբողը, գրուատելով այն հրաշագեղ կոյսը և իր ընկերակիցքը, որոնք ի Հայաստան՝ իրենց արեամբը աստուածանգիտութեան խաւարը փարատելու նախկին առիթն եղան: Այնպիսի սրտաշարժ պատմութիւն մը, և այնպիսի արգասաւոր վկայութիւն, նոր եռանդ մը ազդած են ի Մովսէս, վառվռուն և աշխոյժ իմաստներով և բացատրութեամբք՝ իր սրտին զգացմունքը, և իրեն ոգւոյն առաջին քրտունքը նուիրելու անոր որ «զքեզ սիրէ՝ սիրեցեալդ յիսկապէս բարւոյն»: Ասկէ զատ է Հռիփսիմեանց ճանապարհորդութեան պատմութիւնը:

Ճառ Վարդավառի. — Զոր Խորենացւոյն ուրիշ գրուածոցը հետ կը յիշատակէ Կիրակոս. բայց իմաստներուն և ոճոյ անհամեմատ տարբերութիւնը կարծել կու տայ թէ ուրիշ համանուն Մովսէսի մը գրուածքն ըլլայ: Ըստ ձեռագրաց՝ խորագիրն է. «Երանելւոյն Մովսէսի Խորենացւոյ սուրբ և ընտրեալ վարդապետի արարեալ, որ ի Կարիմթարիմ, որ բերէ զատուն վարդավառի»: Իսկ ըստ այլոց. «Մովսէսի քերթողահաւրն՝ վասն վարդավառի տաւնին»:

Յ'Օրհնութիւնաց ցուցակի կը տեսնենք հետեւեալ յիշատակագիրը. «Երանելին Մովսէս թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ որդւոյ սրբոյն Ներսեսի. յօրմէ և առաքի յերկրորդ ամի գիւտի հայերէն գրոց ի Նազիանզ՝ յաթոռ Աստուածաբանի. և բերէ անտի զՍերմնօրհնեքն զկալի և զհնձանի՝ զշարադրեալսն յԱստուածաբանէն ի հինգերորդ ամի հայրապետութեան իւրոյ»: Դարձեալ նոյն

Մովսէս՝ յերեքտասաներորդ ամի թարգմանութեան սըրբոյն Սահակայ՝ կարգի դրաւ, կ'ըսէ ցուցակը, զկանոնս օրհնութեան այլ և այլ իրաց, զորս ի զանազան կողմանց բերեր էր։

Անհարազատ կամ երկբայական գրուածներ. — Մովսէս անուամբ այլ և այլ վարդապետներ երեւցած են մեր ազգային եկեղեցական նուիրապետութեան մէջ, յորոց և ոմանք քերթող ալ կոչուած, ինչպէս Սիւնեաց եպիսկոպոսը, զոր ետքը պիտի յիշատակենք. ասոնց գրուածքը, երբեմն իրարու ընծայուած են. ինչպէս երբեմն Խորենացւոյն երկասիրութիւնք՝ ասոնցմէ մէկուն, այսպէս ալ անոնց գրուածքը՝ Խորենացւոյն կարծուեր և այսպէս աւանդուեր են։ Այսպիսեաց կարգէն է նաեւ **Մեկնութիւն կարգաց եկեղեցւոյ**, որուն մէկ քանի հատուածը Խորովու համանուն երկասիրութեան մէջ կը տեսնուին այսպիսի մակագրով. «Մովսեսի քերթողի». և Արշարունւոյն Ընթերցուածոց մեկնութեան հնագիր օրինակին մէջ. «Մովսիսի քերթողահօր Հայոց վարդապետի և իմաստասիրի յաղագս կարգաց եկեղեցւոյ»։ Դարձեալ իր անունը կրող ճառական գրուած մը ի ձեռագիրս. «Երանելւոյն Մովսիսի Խորենացւոյ՝ սուրբ ընտրեալ վարդապետի, ասացեալ պատճառս վասն սուրբ մարգարէից»։ — Ուրիշ մ'ալ. «Յիշատակ սուրբ վկային Թէոդոսի որ յաղուհացքն տանի, ի Մովսիսի պատմութենէն. — Ի ժամանակի յորում Մակեդոնացին Աղեքսանդրոս Փիլիպպեան կոչեցեալ՝ բազում բիւրովք»։ Սրբոյն Սահակայ վարք մ'ալ կը գտնուի ի **Քերթողական** գրոց, զոր կ'ախորժինք Խորենացւոյ վերագրել։

Հայոց ՉԽԸ թուականին ի Համկլայ գրչագրեալ մատենի մը մէջ՝ երկար վարդապետական գրուածի մը կը հանդիպինք այս խորագրով. «Երանելւոյն մեծի քերթողահօրն Մովսեսի Խորենացի եպիսկոպոսի»։ Սկզբնաւորութիւնն է. «Յաղագս ի յոլովից կատարեալ կենդանի ընդէ՞ր մի բնութիւն. այլ միոյ կենդանւոյն՝ հարկ է և բնութեան մի լինել»։

Այս անհարազատ գրուածոց կարգէն կրնան համարուիլ նաեւ քերականական երկասիրութիւնք։ Որչափ ստոյգ է թէ մեծ հմտութիւն ունեցած էր Մովսէս յայսմ գիտութեան, և թէ այն պատճառաւ ալ եղած է իւր Քերթող կամ Քերթողահայր կոչուիլը, այնչափ ալ անստոյգ կամ անհարազատ՝ քերականական գրուածոց մէջ իրեն ընծայուած քանի մը հատուածները, թէպէտ և որոշ ու բացայայտ խորագրով։ Ասոնցմէ կրնան համարուիլ.

1. «Մովսիսի Խորենացւոյ բան իմաստութեան» կոչուածը. որ ընդհանրապէս քերականական արուեստին վրայ համառօտ տեղեկութիւն մ'է։

2. «Սուրբ երջանիկ հօրն Մովսիսի թարգմանչի և քերթողի՝ մեկնութիւն քերականի». որ Դիոնեսիոսի Թրակացւոյ յոյն լեզուի քերականութեան մեկնութիւնը կըրնայ համարուիլ. և որուն հետեւողութեամբ վարուած են իրենց համանուն երկասիրութեանց մէջ՝ Խորենացիէն ետքը եկող գրեթէ ուրիշ ամէն քերականները։

3. «Մովսիսի Քերթողի յաղագս քերականութեանց»։ Այս գրուածքը՝ քերականութենէ բարձր նպատակ մ'ունի, լեզուի ուսմանէն աւելի հաւատոց և աստուածաբանական ճշմարտութեանց տեղեկութիւնն աւանդելու։ Մասնաւոր անձի մը գրուածք չէ ասիկայ, այլ ի զանազան հեղինակաց հաւաքեալ. որոնց և անուանք նշանակուած են գրոց լուսանցից մէջ՝ և են բաց ի Մովսիսէ քերթողէ, Դաւիթ Անյաղթ, Ստեփաննոս Սիւնեցի, Մագիստրոս, Համամ, Արիստակէս, Գէորգ, և այլք։

Համառօտ մաղթանք մ'ալ կը գտնենք յԱղօթագիրս՝ Խորենացւոյն ընծայուած։

ՄԱՄԲՐԷ

Մամբրէ Վերծանող՝ եղբայր Խորենացւոյն։ — Իր անունը կրող գրուածք։ — Ճառ ի Յարութիւն Ղազարու և անոր հարազատութիւնը։ — Ճառ ի Գալուստ Տեառն յԵրուսաղէմ։ — Պատմական գրուածք մը։

Խորենացւոյն կրտսեր եղբայրն էր Մամբրէ, և Սահակայ ու Մեսրոպայ աշակերտներէն մէկը, Վերծանող կոչուած. որուն վրայ մեծ յարգութեամբ կը խօսին թէ ժամանակակից և թէ յետագայ ազգային մատենագիրք, փիլիսոփայից մէջ երրորդ կամ երկրորդ դասելով, անշուշտ Խորենացիէն ու Դաւիթ Անյաղթէն ետքը։ Իր ուրիշ աշակերտակցաց պէս ճանապարհորդեց Մամբրէ յԱղեքսանդրիա, յԱթէնս և ի Բիւզանդիոն, ու ամէն տեղ իր հանճարոյն մեծ պատիւ գտաւ։

⁂

Կ'երեւնայ թէ այլ և այլ երկասիրութիւններ ալ թողուցած ըլլայ, բայց մեր ձեռքը հասածներն են երկու ճառ, մէկը Ղազարու յարութեան վրայ, և միւսը Քրիստոսի Երուսաղէմ մտնելուն։

Եկեղեցւոյ հին վարդապետներէն շատին անունով Ղազարու յարութեան վրայ բազմաթիւ ընտիր ճառեր կը գտնուին. որոնցմէ մէկ քանին թարգմանութեամբ աւանդած է մեզի հայկական դպրութիւնը։ Այս պատճառաւ՝ անհմուտ գրչագիրք մէկուն գրուածքը միւսին կ'ընծայեն։

Նոյնը հանդիպած է նաեւ Մամբրէի այս երկասիրութեան. վասն զի գրչագիրներէն ոմանք Մամբրէ Վերծանողի կ'ընծայեն զայն, «Յովհաննու աւետարանին մեկնութենէն ասացեալ» կոչելով. որով կամ կարծել կու տան թէ Մամբրէ Յովհաննու աւետարանին մեկնութիւն մը շարագրած ըլլայ, որ դեռ ձեռքերնիս հասած չէ, և կամ նոյն դիպուածը Յովհաննու աւետարանին մէջ պատմուած ըլլալը կը նշանակեն։ Ոմանք ալ Ոսկեբերանի կ'ընծայեն զայն, որուն պերճախօս գրչին արժանաւոր երկասիրութիւն է. բայց անոր գրուածոցը մէջ չի գտնուելով, հաւանական կը կարծուի թէ սխալմամբ իրեն կ'ընծայուի այս ճառը, այլ իրեն հանճարոյն նախանձորդ և հետեւող Մամբրէի գրչին և սրտին արդիւնք է։ Եղիշէի անուամբ ալ գրուած կայ այս ճառս։

Ոչ նոյն գեղեցկութիւնը և ոչ լեզուի ընտրութիւնն ունի Մամբրէի միւս ճառը ի Գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ. անոր համար ոմանք ուզած են երկբայութեան տակ ձգել անոր հարազատութիւնը։ Բայց Կիրակոս յայտնապէս իրեն կ'ընծայէ. «Մամբրէ Վերծանող, կ'ըսէ, ասաց ներբողեան ի յօրն արմաւենեաց՝ ի գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ յաւանակաւ»։

Արծրունին՝ պատմական գրուածք մ'ալ կ'ընծայէ Մամբրէի որ մեր ձեռքը հասած չէ. իւր Արծրունեաց ցեղին սկզբնաւորութեան վրայ խօսելով կ'աւանդէ. «Իսկ առ մեզ հասին գրոյցքս այս ըստ Յաջորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէի Վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ... որ հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ խուզել, քննել, կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց, ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս»։

Հետեւեալ քանի մը հատուածներ Մամբրէի անուամբ պատմական երկասիրութենէ մը քաղուած են ի Հայ-լատին Բառարանի Ստեփանոսի Ռոշքեան Կամենիցացւոյ։

Առանց ուզելու երաշխաւորել թէ Թարգմանչիս և իր կորսուած գրուածին վերաբերին, իբրու բանասիրաց հետաքննելի՝ աւելորդ չենք համարիր մէջ բերել զանոնք·

> «Ըղձիցն իւրեանց փափաքանաց հասին սուրբքն»։ —
> «Ընդ այնքան ժամանակ ոչ փտացան մարմինք սրբոցն»։ —
> «Նախնիք մեր հակամիտաբար հետևէին սուրբ հարցն»։ —
> «Աշխարհ օրինադրութեամբ թագաւորաց յարդարի»։

Մեկնողական երկասիրութենէ մ'ալ այլեւայլ վկայութեանց կը հանդիպինք նոյն Բառագրոց կարգին մէջ, որք թերեւս իր անուամբ յիշուած Յովհաննու կամ աւելի հաւանականաբար մովսիսական գրոց մեկնութեան վերաբերին։ Հին քերականաց մէջ քանի մը հատուածներ կան Մամբրէի անուամբ։ Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց ցուցակին մէջ ալ (Թիւ 1756) Մամբրէի կ'ընծայուի ճառ մը «Ի ծնունդ փրկչին»։

Մամբրէի ճառերը հրատարակուած են ի Վենետիկ 1833ին և 1890ին, Նախնեաց մատենագրութեան շարքին մէջ։

* * *

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Փարպեցւոյն ծնունդը։ — Իր տոհմն ու Վահան Մամիկոնեան իշխանին հետ մտերմութիւնը։ — Հրաժեշտն յաշխարհական փառաց։ — Էջմիածնի կաթողիկէին վերակացու դրուիլը։ — Այն պատճառաւ կրած հակառակութիւններն ու բնաւորութիւնը։ — Ինքզինքը ջատագովելու համար առ Վահան մարզպան գրած թուղթը։ — Պատմութեան գրոց նիւթը։ — Աղբերք այդ երկասիրութեան։ — Տպագրութիւնք և թարգմանութիւնք։

Հինգերորդ դարուն վերջերն ու վեցերորդին սկիզբները ծաղկեցաւ Ղազար։ Թշուառ ատեն մը, յորում Արշակունեաց թագաւորութիւնը վերցուած, մարզպանաց ձեռքն էր Հայաստանի քաղաքական իշխանութիւնը· Նախարարաց մէջ անմիաբանութիւնն սկսած էր իր աւերիչ գլուխը վերցնել և աշխարհը կործանման վտանգի մէջ ձգել· «Եւ էր տեսանել յաշխարհին Հայոց, կ'ըսէ ինքն հեղինակն, զլաւութիւն հեռացեալ, զիմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն հեռացեալ և մեռեալ, զքրիստոնէութիւն թաքուցեալ»։

Դեռ եւս պատանեակ՝ աշխարհի փառքն ու մեծութիւնն արհամարհելով Ղազար, իշխանական պատմուճանին տեղ՝ խոնարհ ու անպաճոյճ մենակեցութեան սքեմն ընտրեց, ու վանական առանձնութիւնը՝ երկնահրաշ ասպարէզ հոգեկեցոյց յառաջադիմութեան։ Ոչ նոր և անսովոր էր իր այս մտածութիւնն նաեւ յայնմ ժամանակի։

Արդէն հետեւողութեան նախանձելի օրինակն ունէր՝ իր իմաստուն և սրբակրօն դաստիարակին՝ Աղանայ արծրունւոյ վրայ. ու երկոցունց իրաւամբք սիրելի ու սիրալի մեծին Մեսրոպայ, որ «ընկեցեալ յետս զմարմնական պատիւն... խնդրէր զանապատ» Իր այսպիսի որոշման ոչ լոկ օրինակ և խրախուսիչ՝ այլ և գործադիր եղաւ նոյն ինքն Աղան. «Զատոյց զիս, կ'ըսէ Ղազար, պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհի. և ազատութեան եղեւ մեզ առիթ»:

Ծննդեան թուականին որոշ տեղեկութիւնը կը պակսի. բայց կարելի է դարմանել զայն իւր իսկ խօսքերով: Ինքզինքը Վահանայ Մամիկոնենոյ խաղակից և սննդակից կը կոչէ, յաւելլով միանգամայն թէ ըստ տիոց աւագագոյն քան զնա եմ. որով հասակի քիչ տարբերութիւն պէտք է ենթադրել երկուքին մէջ[1]:

⁂

Ղազար կ'երեւնայ թէ ընտիր և ազնուական ցեղէ էր. վասն զի առ Վահան Մամիկոնեան գրած թղթին մէջ՝ պարծանքով մը կը զրուցէ թէ «Դու յայց ելեալ խնդրել զիս, և գտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն, ոչ իբրեւ զաղքատ զոք ի կազմածէն և ի մանկտոյն, և ոչ իբրեւ օտար զոք ի քէն, և կամ ծառայ ուրուք»: Տղայութեան հասակին՝ իր նախնական կրթութիւնն առաւ Ղազար Վրաց Աշուշայ բդեշխին տանը մէջ, որ Վահանայ Մամիկոնենոյ Անոյշ-վռամ հօրաքրոջը հետ ամուսնացած էր: Ղազար Վահանայ սիրելին և մտերիմ, երկուքին իսկ մանկութեան գրօսանաց ժամանակ՝ ինքն կը կրէր անոր արկանելիքը:

Իր թղթին մէջ առ նոյն մարզպան՝ կը յիշէ և կը յիշեցնէ թէ ինչպէս «ի Դրան Աշուշայի սնուցանէր մայրն ձեր օրհնեալ և Անոյշ-վռամ՝ ըստ իւրեանց հոգեսիրութեան՝ և զմեզ ընդ ձեզ և որպէս զձեզ»: Այս խօսքերով կրնայ հաւանական ենթադրուիլ որ Մամիկոնեանց ազնիւ նախարարական տոհմին հետ մերձաւոր ազգականութիւն ունեցած ըլլայ Ղազար: Փարպեցի կոչուելուն ալ պատճառը՝ որով թէ ինքն և թէ այլք սովոր են որոշել զնա ուրիշ համանուն անձերէ՝ Փարպի գիւղը ծննդավայր ունենալուն համար է. թէպէտեւ արդի բանասիրաց ոմանք ուրիշ պատճառներ ալ ուզած են տալ այդպիսի անուանակոչութեան:

Նոյն ժամանակները՝ ինչպէս հիմա ալ յիշեցինք, Հայաստանի մէջ հռչակաւոր էր Վասակայ Արծրունւոյ որդին Աղան: Վասակ՝ Մեհրուժանայ՝ հայրենեաց կրօնքին և անկախութեանը թշնամի նենգաւորին հետ՝ սէր և բարեկամութիւն կը ցուցնէր. անով ոմանց կասկածելի, ու շատերուն խիթալի կ'ըլլար: Աղան՝ իր հօրը այս բռնած կերպին վրայ իրաւամբ տժգոհ, գնաց առ սուրբն Սահակ հայրապետ, և իր զինուորութեան զգեստը թողլով, սուրբ կաթուղիկոսէն կրօնաւորութեան սքեմը խնդրեց, ու Գողթն գաւառն առանձնանալով՝ եղաւ՝ ինչպէս կ'ըսէ Թովմա Արծրունի, «երանելի մարդկան, ահարկու դիւաց»:

Աղանայ քով աշակերտեցաւ Ղազար, և երկար ատեն ուսմանց պարապելէն ետքը, իր վարդապետաց՝ Սահակայ և Մեսրոպայ հրամանաւը՝ Յունաստան գնաց, ու հոն հելլենական ուսմանց և իմաստութեան հետեւելով, ամէն բանէ աւելի հռետորական արուեստի տուաւ ինքզինքը, և անշուշտ այն պատճառաւ ճարտասան կոչուած է: Անկէց իր հայրենիքը դառնալով՝ Մամիկոնեանց ազգական Կամսարականաց տիրոջ քով կեցաւ:

---

[1] Ազգային հմուտ բանասէրն Գր. Խալաթեան իր երկասիրութեանը մէջ՝ Ղազար Փարպեցի և գործը նորէն, պատմական այլ և այլ հաւաստիք մէջ բերելով՝ զՎահան 445–449 թուականին ծնած կը համարի, և զՂազար 440–443. այս երկու թուականներուն մէջ՝ և ոչ յառաջ կամ յետոյ դնելով անոր ծննդեան տարին.

⁂

Դառն և տխուր էր ժամանակն։ Աչքովը տեսնելով Հայաստանի վրայ եկած հասած տեսակ տեսակ թշուառութիւններն, ու չկարենալով հանդուրժել, ելաւ Սիւնեաց աշխարհը գնաց, ու երկու տարի հոն կեցաւ, «անցուցանելով, ինչպէս ինքը կ'ըսէ, զձմեռն ի քարայրի առ առն միում հռչակելոյ ի բնակչաց գաւառին՝ յամենայն կրօնաւորութիւնս, որում անուն էր Մովսէս, և տեղին անձուկ. և զամառն՝ յաղագս տօթոյ տեղւոյն՝ քահանայապետ աշխարհին տէր Մուշէ՝ տանէր զնա առ ինքն, ուր և լինէր ի հովու»։

Երբոր Վահան՝ Պարսից Վաղարշ թագաւորէն Հայաստանի մարզպանութիւնն առաւ, ու անով Հայաստան քիչ մը ժամանակ ի շփոթմանց և ի պատերազմաց հանդարտեցաւ, Նոր մարզպանն՝ իր հայրենիքը բարեկարգելու ետեւէ եղաւ. ու զանազան վկայարաններ, եկեղեցիներ ու վանքեր շինելէն կամ նորոգելէն ետքը, շատ ծախքով՝ Էջմիածնայ կաթուղիկէն զարդարեց։ Անկէ ետք իր հին բարեկամը՝ զՂազար, փնտռելու ետեւէ եղաւ, որ մեկէն ձգեց Սիւնեաց աշխարհը, ու եկաւ գտաւ զՎահան. հոն տեսաւ Փարպեցին նաեւ Վահանայ Վարդ եղբայրը և ուրիշները, և Գիւտ կաթուղիկոսին եղբօրորդին՝ Յովհան Մանդակունին, որ այն ատեններն Հայոց կաթուղիկոսական աթոռը կը նստէր։ Հոն խօսք բացուելով նորաշէն կաթուղիկէին համար՝ կը մտածէին որուն յանձնել անոր կառավարութիւնը։ Յովհան կաթուղիկոս, — ասանկ կ'աւանդէ Ղազար, — ուրիշ քանի մը անձինք առաջարկեց այն պաշտօնին, բայց Վահան՝ Ղազարու յանձնել տուաւ սուրբ կաթուղիկէին հոգաբարձութիւնը. մանաւանդ երբ տեսաւ որ ուրիշ թիկնածուք անարժան միջոցներու ալ կը դիմէին՝ կաշառօք և ընծայից մատուցմամբք կարծելով բանադատել իր ընտրութիւնը։

Անզգոյշ և տկարամիտ գտնուեցայ, — կ'ըսէ Փարպեցին առ Վահան գրած թղթին մէջ, — ընդունելով այդ առաջարկութիւնը։ «Ոչ զգուշացի ժամոյն դաւոյն. այլ պարտ էր փութով և երագ երագ անկանիլ յոտս արտասուօք և աղաչելով ի բաց փախչիլ ի հոգաբարձութենէ տեղւոյդ։ Եւ ահա լինէի պրծեալ ի չարաթոյն ժանեաց գազանացն. որք յայնմհետէ զարանամտեալք ի ծածուկ և ըստ անհամար մեծութեանց իւրեանց սաստիկ կարասեաւ գնեալ բազում յեսան՝ սրեցին որպէս սուսեր զլեզուս իւրեանց, և թոյնք իժից էին ի ներքոյ շրթանց... որոց հետամտեալ այնուհետեւ խափանեցին զգնացս իմ և հասեալ խոցոտեցին զիս ի մահ»։

Մարզպանին վստահութեան արժանաւոր երեւցաւ Փարպեցին. քիչ ատենի մէջ՝ մեծ բարեկարգութեան ու պայծառութեան հասուց այն վանքը։ Հայաստանի ամէն կողմերէն հոն կը վազէին՝ ուսանելու, կամ արդէն սովորածնին գլխաւորելու համար. և ժամանակին ուսումնասէր ու բարեպաշտ իշխաններէն ալ՝ Վահանայ եղբայրքն, Ներսեհ և Հրահատ Կամսարականները, Համազասպ Մամիկոնեան, Վահանայ եղբօրորդիքը, և Արեղենից իշխանը Գագրիկ՝ պէտք եղած օգնութիւնն ընելէն ետ չէին կենար։

Վանքին բարեկարգութիւնը, արդէն Ղազարայ դէմ եղող աբեղաներու նախանձն ալ աւելի շարժեց. զինքը վար զարնելու և իր համբաւն աղօտացնելու համար՝ ամէն ջանքերնին բանեցուցին. անոր ուսմանցն ու գիտութեանը հետ՝ հաւատոց վարդապետութիւնն ալ կը պախարակէին։ Իրենց ամբաստանութիւնքն՝ մինչեւ Վահանայ ականջն ալ հասուցին. և այնչափ պղտորեցին մարզպանին միտքը՝ որ երդմամբ սպառնացաւ ոչ միայն զՂազար՝ այլ և ոչ իրեններէն մէկը թողուլ այն վանքին մէջ։

Խռովեցաւ Փարպեցին, ու չէր գիտեր ինչ կերպով իրեն դէմ բացուած անգութ բերանները լռեցնել. իր հակառակորդաց հետ խօսիլ ու զանոնք համոզելն՝ իրեն հա-

մար ընդունայն աշխատանք մը կ'երեւնար․ այնչափ ատելութեամբ իրեն դէմ զինուած էին, որ Փարպեցին իր ամէն գիտութեամբ ու սրբութեամբն ալ՝ պիտի չկարենար իր անմեղութիւնը ցուցնել։

Ուստի հարկ համարեց դիմել առ քահանայապետն Յովհան Մանդակունի, և իրմէ խնդրել իր նեղութեան մէջ այն օգնութիւնը՝ որուն կարօտ էր։ Ընտիր տոհմէ սեպուհ մը ղրկեց առ քահանայապետն, ու ցաւօք և տագնապով կ'իմացնէր իր ինչ վիճակի մէջ ըլլալը․ «Փութա, կ'ըսէր, հաս յօգնել․ խոցոտեցայ թշնամիէն՝ անթիւ նետերով․ կարեվէր եմ ու մահուան մօտեցած․ ասկէ ետքը քեզի հարկ է դեղը տալ ու բժշկել։ Իսկ թէ որ մեռնելու ըլլամ՝ գերեզման տանիլ ու թաղել»։ Երբոր պատգամաւորին բերնով իր ուզած պատասխանը չառաւ Ղազար, հարկ համարեց անձամբ երթալ առ Մանդակունին։ Քահանայապետն անհաւատալի տկարութեամբ մը, զոր պատմութիւնը ուրիշ առիթներու մէջ չի տար իրեն, չուզեց և ոչ իսկ տեսնել զինքը, թող թէ լսել և իրաւացի դատաստանը կտրել․ «Ես և ի տեսանել իսկ, – կը գրէր անա, – չիշխեմ զքեզ առ երկիւղի․ դու ասես, եթէ գամ բժշկեմ և կամ թաղեա․ մի գուցէ զգացեալ ուրուք և զիս ընդ քեզ թաղիցէ»[1]։

---

[1] Բանասէրն Գր. Խալաթեան, վերը յիշուած երկասիրութեան մէջ կը ջանայ ցուցնել թէ Մանդակունին չըլլայ ի Ղազարայ յիշուած իր սրբազան աստիճանին և կոչման անարժան հայրապետը, որ թղթոյն գրութեան ժամանակ արդէն վախճանած էր և որուն վրայ այնչափ գովութեամբ կը խօսի՝ ժամանակաւ և գրութեամբ կրտսերագոյն Պատմութեան գրոց մէջ։ Ո՞վ էր արդեօք այդ հայրապետը. — Մանդակունւոյն յաջորդքը Բաբգէն 487–491) թէ Սամուէլ (490–502) թէ Մուշէ (502–510), և հաւանականագոյն կը համարի այս վերջինը։

⁂

Ղազարու թշնամիքը երբոր տեսան թէ ամենէն երեսի վրայ ձգուած է, ալ չվախցան․ անգթութեամբ զինքը վանքէն վռնտեցին, ունեցածը չունեցածը յափշտակեցին, և մինչեւ իր քովն եղած յոյն լեզուով գրքերն ալ չտուին․ «որ կան այդր, կ'ըսէ գանգատելով, ընկեցեալ ի կերակուր ցեցոյ․ բայց արդեօք կարդացեալ լուսաւորիցին ի դոցանէ բնակեալքդ ի տեղւոջդ, և կամ զայլս լուսաւորեսցեն»։

Սիրտը կոտրած և յուսահատած՝ ելաւ վանքէն ու Ամիթ քաղաքը գնաց․ հոնկէց ինքզինքը Վահան Մամիկոնեանին առջեւ արդարացնելու համար թուղթ մը գրեց, ու Համազասպ Մամիկոնեան նախարարին ձեռքովը ղրկեց անոր․ յորում իրեն վրայ եղած բոլոր ամբաստանութիւնները նշանակելով՝ անոնց ամենուն պատասխանը կու տայ ճարտարութեամբ․ և անմեղութեան յաղթանակը կանգնելէն ետքը՝ զինքը բամբասողաց անկարգ վարքը և ագիտութիւնը կը յանդիմանէ։

Կ'երեւնայ թէ այս թուղթը՝ պէտք եղած ազդեցութիւնն ըրած է Վահանայ վրայ, որ մէկէն կանչեց զինքն իր քովը․ և հաւանական կ'երեւնայ թէ անկէց ետքը առաջարկած է որ Պատմութեան գիրքը շարագրէ։ Եւ ահա թղթէն զատ իր երկասիրութիւններէն մեր ձեռքը հասածն է այս պատմութիւնը։

⁂

Փարպեցւոյն Պատմութեան Աղբիւրը։ — *Գրոց սկիզբը կը յիշէ Փարպեցին իրմէ առաջ եղող պատմագիրքն, ու անոնց իրաւացի արժէքը կը ճանչնէ։ Ասոնք են Ագաթանգեղոս ու Փաւստոս Բիւզանդ, որոնց շարայարութիւն կը համարի իր գրուածքը, առ որ զինքը յորդորեր էին իշ-*

խանաց հրամաններն ու սրբոց վարդապետաց խօսքերը· «Տուաք, կ'ըսէ, զանձինս, յայսպիսի գործ կարեւոր, չիշխեցաք ընդդիմանալ, կարգել մի ըստ միոջէ զիրս և ըզգործս, զբազմայեղանակ դիպուածս Հայաստան աշխարհիս բաժանմանց յերկուս թագաւորութիւնս, և ի վիճակէ բաժնոյ օրինացն՝ արանց քաջաց ի տոհմէ նախարարաց Հայոց՝ տալ զանձինս անհամարս ի նահատակութիւնս, ի վերայ ուխտին սուրբ եկեղեցւոյ, և կիսոցն համբերել կապանաց և բանտից... Հեղուլ քահանայից ընտրելոց Աստուծոյ և ճշմարիտ հովուաց՝ զարիւն ի պարանոցաց իւրեանց ի վերայ ընտրեալ բանաւոր հօտին Քրիստոսի. և ոմանց յընկերակցաց նախարարացս և յայլ ազատ մարդկանէ՝ զանուլ յետս յուխտէ սրբութեանն, և անշէջ յաւիտենից հրոյն լինել լուցկիք, պատրաստելոյն սատանայի և նորին արբանեկացն։ Եւ գրել զայս ամենայն մինչեւ ցօր սկզբան մարզպանութեան Հայոց Վահանայ Մամիկոնէից տեառն և մեծի զօրավարին Հայոց և մարզպանի. և դադարեալ հանգուցից յայնմ տեղւոջ զբան վաստակոց պատմութեանցս այսոցիկ»։

Ասիկայ է Ղազարայ փարպեցւոյն պատմութեան նիւթն ու նպատակը։ Յորում կ'աւանդէ թէ ինչպէս Հայոց աշխարհին առ Աստուած դառնալէն ետքը՝ այն զարմանալի դէպքին, և անոր գործադրին սրբոյն Գրիգորի պատմութեան արժանի գրիչ երեւցաւ Ագաթանգեղոս։ Բայց իրմէ ետքը, կ'ըսէ, երբոր քաղաքական փոփոխութիւններ Հայաստանի մէջ տեսակ տեսակ շփոթութիւն յաճախեցին, ագէտ և յանդուգն մարդիկ՝ իրենք իրենցմէ ընդունայն ու անպիտան գրուածներ շարադրեցին, ու գիտուն և իմաստուն անձանց երկասիրութեանց հետ՝ իրենց գրուածները խառնեցին։ Այն անտեղութենէն զգուշանալու համար Վահան Մամիկոնէից իշխանը կը ստիպէ զփարպեցին՝ որ իրեն ժամանակաց դէպքերը գրի վրայ առնու։ Վերը յիշուած գըժբաղդութեան հանդիպած կը համարի նաեւ Բիւզանդայ գիրքը, ինչպէս ուրիշ տեղ ալ խօսեցանք։

Կը սկսի Ղազար իր պատմագրութիւնը Արշակունեաց թագաւորութեան երկուքի բաժնուելէն. երբոր քաղաքական կերպարանափոխութեանց համար՝ Հայաստանի արեւմտեան մասը Յունաց կայսեր իշխանութեան տակն ինկաւ, ու արեւելեան մասն ալ Պարսից թագաւորին։ Այն ատեններն՝ Պարսից վիճակին մէջ եղող Հայոց նախարարներն՝ թագաւորին երթալով խնդրեցին իրմէ՝ որ իրենց բնիկ Արշակունեաց ցեղէն թագաւոր մը դնէ վրանին։ Շապուհ թագաւորը կատարեց անոնց խնդրուածքը, ու Արշակունեաց ցեղէն Խոսրովը դրաւ. որովհետեւ անկէց առաջ Արշակ թագաւորը տեսնելով Հայոց ազգին մէջ տիրած անմիաբանութիւնը, և ճանչնալով որ այն երկպառակութեանց վախճանը՝ բոլոր աշխարհին աւերումը պիտի ըլլայ, թողուց Այրարատ գաւառը Պարսից ձեռքը, որ կարենայ խաղաղութիւն գտնել թէ իր անձին և թէ աշխարհին, ու գնաց Յունաց աշխարհին ժառանգութեան մէջ նստաւ։ Հոս արտուղութիւն մը կ'ընէ փարպեցին, Այրարատ գաւառին գովեստ ընելով, որ իր պատմագրութեան ընտրելագոյն մասերէն մէկը կրնայ համարուիլ։

Ժամանակ անցնելէն ետքը՝ Հայոց նախարարք թշնամացան իրենց թագաւորին հետ, ու Պարսից թագաւորին առջեւ ամբաստանեցին զինքը, որպէս զի չխաբուի Խոսրովու արտաքին բարեկամութենէն զոր կը ցուցնէր իրեն, և թէ անոր միտքը ուրիշ բան չէ բայց եթէ Յունաց հետ միաբանիլ։ Շապուհ սիրով մտիկ ըրաւ անոնց ամբաստանութեանց. իրեն կանչեց զԽոսրով ու պատժեց զինքը. և Հայոց նախարարաց մատնութիւնն ալ վարձատրելու համար՝ անոնց խօսքին գէթ մէկ անգամ մտիկ ըրաւ, ու զՎռամշապուհ վրանին թագաւորեցուց։

Մեր գրականութեան պատմութեան մէջ՝ մատենագրական զարագլուխ մը կրնայ համարուիլ Վռամշապհոյ թագաւորութիւնն. ուստի և Ղազար ճոխաբար կ'աւանդէ ինչ որ իրեն ժամանակ բարիք եղան ազգերնուս՝ Սահակայ *հայրապետի ու Մեսրոպայ վարդապետի ձեռնտուութեամբ։ Կը պատմէ նաեւ Վռամշապհոյ մեռնելէն ետքը խոսրովու կրկին անգամ թագաւորելը Վռամայ ձեռքով։ Բայց Վռամայ մահուընէն վերջը՝ երբ անոր եղբայրը Յազկերտ թագաւորեց Պարսից վրայ, չուզեց որ Արշակունեաց ցեղէն թագաւոր նստի ի Հայաստան․ ուստի իր Շապուհ որդին ղրկեց հոն իշխան։ Իսկ երբ Հայերը գոհ չեղան անոր իշխանութենէն, Յազկերտի որդւոյն Վռամայ թագաւորութեան ժամանակ՝ խնդրեցին իրմէ ու Խոսրովու որդին Արտաշէսը թագաւորեցուցին։*

Արտաշէս անարժան վարքովն ատելի եղաւ ամենուն, և նախարարք մտածեցին ձգել զինք իշխանական պատուէն անոր ձեռքովը՝ որով զինքը այն մեծութեան հասուցեր էին։ Ջանացին որ իրենց կամակից առնուն նաեւ զսուրբն Սահակ։ Աստուածարեալ անձը որչափ իրաւացի կը գտնէր անոնց բողոքը թագաւորին անարժան վարուցը համար, յանձն չէր առնուր որ խորհրդոյն ալ կամակից երեւնայ։ Այս առթիւ գեղեցիկ խօսակցութիւն մ'ալ ըրաւ անոնց, զոր մէջ կը բերէ պատմիչը․ բայց նախարարք մոլիկ հըրին, ու չէ թէ միայն իրեն ձեռքով թագաւորը մատնելով՝ իշխանութիւննին վերուցին, այլ նաեւ իրենց խորհրդոյ դէմ կեցող սուրբ հայրապետն ալ՝ Պարսից դուռը բանտարկել տուին։

Այս դէպքով Հայաստանի թշուառութիւնը սկսաւ։ Ու երբ նախարարք իրենց անմիտ գործոյն վրայ զղջալով՝ փութացան առ սուրբն Սահակ՝ որ իր աստուածատուր իմաստութեամբը դարման մ'ընէ այն աղետից, ու կ'ուզէին միանգամ հայրապետական աթոռը նստեցնել զինքը, յանձն չառաւ Սահակ․ և արտասուալից աչքով մը՝ Վաղարշապատու եկեղեցւոյն մէջ եղած տեսիլքը պատմեց անոնց ու մեկնութիւնը տուաւ․ իմացնելով թէ ինչպէս իրենք իրենց ձեռքովը, բայց միշտ աստուածային թոյլտուութեամբ, կորսընցուցին իրենց իշխանութիւնը և կործանումը փութացուցին։ Անկէ քիչ ետքը հանդիպեցաւ Սահակայ ու Մեսրոպայ մահը, որով աւելի կերպով մը համարձակութիւն առին անմիաբանութիւնք և թուլահաւատութիւն․ նախարարք իրարու հետ սկսան իյնալ, ու մէկմէկու ձեռքէն իշխանութիւնը յափշտակելու համար զիրար Պարսից դուռն ամբաստանել։ Ասոնց մէջ գլխաւոր եղաւ Վարազվաղան, որ իր փեսային՝ Վասակայ՝ մեծնալն և իշխանութեան հասնիլը տեսնելով՝ գնաց ուրացաւ հաւատքը, և սկսաւ իր փեսային վրայ ամբաստանութիւններ ընել․ կը ջանար անոր տեղն անցնիլ, խոստանալով որ եթէ այս մեծութիւնն իրեն տրուի, ինքն ալ երախտապարտ ըլլայ Պարսից, ու բոլոր Հայաստանը անոնց կրօնից աշակերտէ։

Այս խոստումը՝ մեծ ուրախութիւն ազդեց Միհրներսեհի, որ Յազկերտի առաջին հրամանատարն էր․ սկսաւ յորդորել թագաւորը որ փոխանակ զէնքերով իրեն իշխանութեան սահմանն ընդարձակելու, կրօնից ասպարէզը լայնցնէ․ Թագաւորին կողմանէ և անոր հրամանաւ թուղթ մը գրեց Հայոց՝ որ ետ կենան իրենց կրօնքէն, և ընդունին այն հաւատքը զոր Պարսից թագաւորը կը դաւանի։ Երբոր Հայք յանձն չառին, և անոր թղթոյն անհանճար խօսքերը՝ իմաստութեամբ ըմբերանեցին, իրեն քով կանչեց թագաւորը անոնց գլխաւոր նախարարներն ու բանտերու մթութեան դատապարտեց, որպէս զի ստիպուին մոլիկ ընելու իր հրամանին։ Երբ անոնցմէ ոմանք առ երեսս, և այլք սրտի մտօք ընդունեցան Պարսից կրօնքը, մեծապատիւ փառօք ղրկեց զանոնք ի Հայաստան։

Հոս կ'աւանդէ Ղազար Վարդանանց հրաշալի պատմութիւնն ու յաղթանակը․ անոնց միաբան նահատակութիւնն ու մահը՝ զոր արդէն իրմէ առաջ նկարագրած էր Եղիշէ։ Անկէց Ղեւոնդեանց պատմութեան կ'անցնի, դրեթէ Եղիշէի պէս, բայց աւելի համառօտ ոճով։ Եղիշէ իր պատմութիւնը մինչեւ Յազկերտի մահն ու նախարարաց դարձը կը հասցնէ․ իսկ Ղազար անկէ ալ անդին կ'անցնի, սկսելով Գիւտ կաթողիկոսին օրերէն։ Կը պատմէ թէ ինչպէս անոր թշնամիք Պարսից դուռն ամբաստանեցին զինքը, և ինքն ալ հոն երթալով՝ արդարացաւ. բայց թագաւորը չուզեց միւսանգամ հայրապետական աթոռոյ վրայ նստեցընել զինքը, այլ ամենայն պատիւ տալով՝ սահմանեց որ ուզած տեղը նստի։ Գիւտ ալ՝ երկար ատեն Պարսից դուռը կենալէն վերջ՝ ետ դարձաւ։

Նոյն ժամանակները Մամիկոնեանն Վահան կը պայծառանար։ Գադիշոյ Մալխազը և իրեն հետ քանի մը ուրացող նախարարք նախանձեցան վրան, և ուզելով զինքն իշխանութենէ ձգել, ամբաստանեցին թէ ապստամբ է, և թէ անոր ձեռաց տակ ամենեւին ապահով չի կրնար ըլլալ Պարսկաստան՝ իր Հայաստան աշխարհին աւարին վրայ։

Ինքզինքն արդարացնելու համար ելաւ Պարսկաստան գնաց Վահան, ու տեսնելով թէ անոնց նախանձը ամենեւին պիտի չլռէ, և իրեն ալ անկարելի պիտի ըլլայ խաղաղութիւն գտնել, հաւատքին մէջ տկարացաւ։ Այսպէս մեծապատիւ դարձաւ ի Հայաստան. հոն իւր ուրացութեան վրայ զղջալով, հետը միաբանեց հաւատացեալ նախարարները, ու Պարսից դէմ պատերազմի սկսաւ. զանազան անգամ անոնց զէնքերը փշրելէն և ոյժը խորտակելէն ետքը՝ հետերնին հաշտութեան դաշինք դրաւ։ Հայաստան ազատեց, անոր կրօնքն ու ինչքը ապահովցուց, և ինքը մեծ փառքով պատուուեցաւ. ուստի և իրաւամբք Մամիկոնէից տէր և Հայոց սպարապետ ու մարզպան ընտրուեցաւ։

Այս հրաշալի և անակնկալ փոփոխութեան վրայ զարմացան Հայք, և իրենց արժանաւոր հայրապետն Յովհան Մանդակունի՝ ատեանը ելլելով ու խաղաղութեան ողջոյնը տալով՝ աւետեց իր հաւատացելոց այս զարմանալի ազատութիւնը, ու յորդորեց զիրենք որ փառք տան Աստուծոյ։

Այն գեղեցիկ ու պերճախօս ատենաբանութեամբ կը կնքէ Փարպեցին իր պատմութեան գիրքը։

⁂

Փարպեցւոյն պատմութեան գրոց աղբերք. — Փարպեցին իրմէ առաջ միայն երկու ազգային պատմիչ կը յիշատակէ, զԱգաթանգեղոս և զԲիւզանդ. տեղ տեղ ալ Կորեան անունը. և երրորդ ինքզինքը և իր գիրքը կը կոչէ. որով բանասէրք և քննադատք ենթադրեցին և գրեցին թէ իր ժամանակին երկու գլխաւոր անձնաւորութեանց, Եղիշէի և Խորենացւոյ գրքերը անծանօթ եղած ըլլան իրեն, կամ ո՛ և իցէ պատճառաւ՝ Ղազարայ ձեռքն անցած չեն իրենց երկասիրութիւնք։ Նոր հետազօտութիւնք և բանասիրաց բաղդատական քննադատութիւնք (և առանձինն Գր. Խալաթեան), այս կարծեաց չեն համաձայնիր. մանաւանդ թէ հակառակ կարծեաց պաշտպանք, օրինակներով ալ կը ցուցընեն թէ Փարպեցւոյն ոչ լոկ Ագաթանգեղոս, Բիւզանդ և Կորիւն ծանօթ էին, այլ նաեւ Խորենացի և Եղիշէ. և թէ ինչպէս առաջնոց՝ բայց մանաւանդ վերջնոցս պատմական դրուածներէն մեծապէս օգտուած է իր պատմական շարագրութեան մէջ։ Ուստի և երկուքի կը բաժնեն իրեն աղբերքն. նախ յանուանէ յիշատակեալքն ի նմանէ, և երկրորդ՝ կարեւորագոյնքն քան զնոսա, և մեզի անծանօթ պատճառաւ մը յանուանէ իրմէ չյիշատակուածները։

Ագաթանգեղոսէն առած է՝ Լուսաւորչի տեսլեան պատմութեան պարագաները, որոնք կը նոյնանան իմաստիւք և բառիւք ընդ տեսլեան սրբոյն Սահակայ, զոր կը պատմէ Փարպեցի։ Իրմէն առնուած է դարձեալ երկար հատուած մը բանի՝ ի տեսլենէ Լուսաւորչին, զոր Փարպեցի կը յատկացնէ Վարդանայ պատերազմին՝ ուխտապահ և ուխտազանց նախարարքն իրարու հետ բաղդատելով։ Ի Բիւզանդայ եկամուտ է իր գրոց մէջ սրբոյն Ներսեսի անէծքն առ Արշակ թագաւոր, և գուշակօրէն տեսութիւնը Հայոց արքայական իշխանութեան բարձման ի ցեղէ Արշակունեաց։ Իսկ ի կենսագրական աշխատութենէ կորեան քաղուած կ'երեւնան Մեսրովպայ վարուց, նշանագրաց գիւտին և սրբոյն Սահակայ մահուան վրայ գրածները, եթէ՝ ինչպէս մեզի հաւանական կ'երեւնայ, ի դիւանական գրութեանց առնուած չեն։

Բայց ասոնցմէ աւելի կարեւորագոյն աղբերք եղած են, – ըստ իրեն նոր քննադատից, – Խորենացի և Եղիշէ։ Ի գրոց առաջնոյն քաղած է Բիւզանդայ պատմութեան դադրելէն մինչեւ ցվախճանել Սահակայ և Մեսրովպայ՝ վաթսունուերկու տարիներու անցից և դիպուածոց պատմութիւնը։ Իսկ Եղիշէ միակ աղբիւր է Փարպեցւոյն՝ Վարդանայ պատերազմին պատմութեան համար։ Մերթ, – նաեւ գլխաւոր պարագայից մէջ, – կը տարբերի իրմէ, թերեւս ոչ առանց մասնաւոր դիտման. բայց Եղիշէ՝ մերձաւորագոյն ժամանակաւ, ականատես և կենակից՝ իրմէ պատմուած անցից և անձանց, միշտ մեծագոյն հաւատարմութեան արժանի կը համարուի իրաւամբ։ Այս նմանութեանց գլխաւորները կ'ամփոփենք ի ծանօթութեան[1]։

Գալով Փարպեցւոյն մատենագրական արժէքին՝ ի հնոց իրեն ընծայուած ճարտասան մակդրին ոչ անարժան կը տեսնենք զնա՝ թէ ի պատմութեան, և թէ մանաւանդ առ Մամիկոնեանն Վահան ուղղած թղթոյն մէջ. կորովի ոճ մը, ուժով բացատրութիւնք, գեղեցիկ նկարագրութիւններ, սուր տեսութիւնք, և մանաւանդ գրիչ զոր կը գործածէ յանիրաւի զինքն և իր վարքն ու գործերը բամբասողաց և անգոսնողաց դէմ։ Իսկ հայ լեզուն՝ գեղեցիկ վայելչութեամբքն՝ Թարգմանչաց դարուն և դպրոցին արժանաւոր, ունի նաեւ թերութիւններ՝ կրելով ժամանակին աշխարհիկ խօսից կերպարանքը. թէպէտ և այն իսկ յետագայից համար մեծապէս օգտակար, իր հետաքննական պատմութեան հետ աւանդելով մասամբ նաեւ այն դարուց մէջ խօսուած լեզուին հանգամանքը։

Փարպեցւոյն պատմութեան գրոց հետաքննական մասն մ'ալ՝ սրբոյն Սահակայ տեսիլքը, և անոր մեկնութիւնն է։ Ղազար իբրեւ հաւատարիմ դէպք մը կ'աւանդէ զայն. սակայն նոյն իսկ հինք՝ չժխտելով տեսլեան ստուգութիւնը՝ անոր մանրապատում նկարագիրն ու մեկնութիւնը վաւերական չեն համարիր[1], ուրիշ ժամանակակից պատմչաց մէկուն քով չտեսնելով անոր յիշատակը. որով կը կարծուի թէ Փարպեցւոյն գրոց մէջ յետոյ աւելցուցած են այլք։ Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց մէջ (Թիւ 920) այս տեսլեան խորագիրը նշանակելով՝ բանասիրաց քննութեանը կը յանձնենք. «Յառաջաբան տեսլեան սրբոյն Սահակայ Պարթեւի, զոր եցոյց նմա Բարձրեալն անբաւ մարդասիրութեամբ իւրով». և սկզբնաւորութիւնն է. «Եւ յետ մահուան Յազկերտի որդւոյ Շապհոյ Թագաւորին Պարսից՝ Թագաւորեաց Վռամ որդի նորա ի վերայ աշխարհին Արեաց»։ — «Ի յիշատակի սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի ի քերթողական գրոց, յաղագս վարուց և կենաց նորա. և վասն տեսլեան զոր ակամայ պատմեաց նախարարաց Հայոց»։ — «Յայնժամ ժողովեալ ի միասին ամենայն նախարարացն Հայոց՝ չոգան առ մեծն Սահակ»։ — «Տեսիլ մարգարէութեան սրբոյն Սահակայ Պարթեւի հայրապետի Հայոց, զոր ետես յԱյրարատ գաւառի ի Վաղարշապատ քաղաքի, յորժամ նստէր նա ի ժամ պաշտաման ի կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ՝ ի վերայ բեմին, մերձ առ սեղանն Աստուծոյ: — Մեկնութիւն սրբոյն Սահակայ տեսլեան»:

---

[1] Ի Խորենացւոյ առնուած են հետեւեալ հատուածք. (էջքն նշանակուած են ըստ Վենետկեան տպ. 1873), Խոր. Գ. 55. — Փարպ. էջ 51, — Խոր. Գ. 63, — Փարպ. 52–60, — Խոր. անդ, Փարպ. 61, — Խոր. Գ. 63, — Փարպ. 62, Նմանութիւնք ընդ Եղիշէի. (ըստ տպ. Վենետկ. 1849). Եղիշէ, էջ 9, — Փարպ. 121, — Եղիշէ 22, — Փարպ. 124, — Եղիշէ 32, Փարպ. 134, — Եղիշէ 39, — Փարպ. 154, — Եղիշէ 49, — Փարպ. 176, — Եղիշէ 57, — Փարպ. 183, — Եղիշէ 58, — Փարպ. 183, — Եղիշէ 59, — Փարպ. 192, — Եղիշէ 61, — Փարպ. 193, Ասոնցմէ աւելի զգալի ընդօրինակութիւններ. Եղիշէ 26, — Փարպ. 291, — Եղիշէ 139, — Փարպ. 305, — Եղիշէ 140, — Փարպ. 407, — Եղիշէ 141, — Փարպ. 313,

[1] Հմմ. բազմվէպ. 1905, էջ՝ 28 և 134, Անդ՝ 1931, Դեկտ. ևն,

Յովհան. «Քրիստոսասիրի Վարազդայ Գաբեղենից տեառն, աղաչեալ զՅովհան ճշմարտախօսն և երկիւղած ի տեառնէ, զստուգել զպատմութիւն երանելեացն Թաթլոյ և Գիւտի և Թովմասու և վարուց ճգնաւորաց Քրիստոսի»: Սկզբնաւորութիւնն է. «Ընդալս զՔրիստոս (?) հարկեցուցանող խնդիրդ մասնաւորաբար խնդութեամբ ի Քրիստոս և երկիւղիւ». (Մատենադարան Երուսաղէմի, թիւ 278):

Փարպեցւոյն Պ—տմ—թե—ն գրոց բնագրին առաջին տպագրութիւնն եղած է ի Ս. Ղազար Վենետիկոյ յամին 1793. երկրորդ և նորագոյն հրատարակութիւն մ'ալ դարձեալ նոյն տպարանէն հանդերձ Թղթ—ն առ Վահան Մամիկոնեան ի 1873, Գ. տպ. 1891: Թղթոյն առաջին տպագրութիւնն եղած է ի Մոսկուա ի 1853, ի ձեռն Լազարեան արեւելեան լեզուաց ճեմարանի Տեսչին, Մկրտչի Էմին. աշխարհիկ լեզուով թարգմանութիւն մը և բացատրութիւնք ի Մ. Նալբանդեանց, և հրատարակուած ի Փեթրպուրկ (1868): Քննադատական տպ. մը եղած է ի Տփղիս 1904: Պատմութեան ի գաղղիական լեզու թարգմանութիւն մը ի Հ—ւ—ք—ծ—ն Լանկլուայի. Lazare de Pharbe; Histoire de l'Arménie, traduite pour la première fois en français et accompagnée des notes historiques et critiques, par le P. Samuël D.r Ghésarian (Cantar), membre de l'Académie nationale arménienne de St. Lazare de Venise. Մատնական թարգմանութիւն մ'ալ. Abrégé de la vie politique et guerrière du prince Vahan-le-Mamigonien, par Lazare de Pharbe. Traduit par le P. Garabed Kabaragy. Paris, 1843:

ԴԱՐ Զ

Դպրութեանց անկումը վեցերորդ դարուն մէջ: — Քաղաքական յուզմունք և կրօնական խնդիրք և խռովութիւնք՝ պատճառ անկման:

Հայկական դպրութիւնք իսկոյն մեծ ու զարմանալի յեղափոխութիւն մը կը կրեն Զ դարուն մէջ. և զարմանք չէ. որովհետև աշխարհին քաղաքական դիրքն ալ բոլորովին փոխուած էր: Վարդանանց և Վահանեանց ջանքը՝ ուրիշ արդիւնք մը չէր ունեցած՝ բայց եթէ արգիլուլ զՍասանեանս որ չկարենան իրենց մտքի դրած կերպով տիրել Հայոց վրայ:

Նոյն ժամանակները պատահած կրօնական դէպք մ'ալ՝ թէ ժամանակին և թէ անոնցմէ ետքը եղող մեր մատենագրաց սրտին ու մտքին վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ. Քաղկեդոնի ժողովը: Ազգային եկեղեցական պատմութեան թողլով այս նկատմամբ ազգին մէջ պատահած դէպքերը, միայն յիշեցնենք թէ այն ժողովքին պատճառաւ՝ արտաքին պատերազմներէ զատ ներքին գժտութիւնք և հակառակութիւնք ալ սկսան մտնել մեր ազգին մէջ: Անով թշնամական ատելութիւն մը մտաւ Հայոց մէջ Յունաց ազգին հանդէպ, և անոնց կրօնքէն խորշելնուն պատճառաւ, երբեմն և մտերմական յարաբերութիւնք պակսեցան, որով սկսան դպրութիւնքն ու գրքերն արհամարհուիլ։ Ալ խափանուեցաւ յունական լեզուին ուսումը, և անոնց օգտակար կամ դասական գրոց թարգմանութիւնք։ Քանի մը սկզբնագիր գրիչք ալ՝ որ Զ դարուս մէջ երեւցան, աննշան երկասիրութիւններ թողուցին. սակ հայ մատենագրութեան ամփոփ հորիզոնին մէջ մնած ու մեծցած հանճարներն, ասոնցմէ աւելի նշանակութեան արժանի արտադրութիւններ դժուարաւ կրնային թողուլ։

ԱԲՐԱՀԱՄ ԵՊ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս։ — Խրատական գըրուածք իր անուամբ։ — Պատմութիւն ժողովոյն Եփեսոսի։ — Փիլաքսիանոս Նարովկայ եպիսկոպոս։

Հինգերորդ դարուն վերջերը և վեցերորդին սկիզբները կ'իյնայ Մամիկոնէից եպիսկոպոսն Աբրահամ, որ Աղուանից Վաչագան թագաւորին խնդրանօք՝ քանի մը խրատական գրուածներ յօրինեց. մասնաւորաբար՝ սրբոց նշխարքը պատուելու և ննջեցելոց հոգւոց համար աղօթք ընելու վրայ։ Այնչափ համառօտ գրուած մ'է ասիկայ՝ որ մասնաւոր քննութիւն չ'արժեր։

Աբրահամու անուամբ ուրիշ երկասիրութիւն մ'ալ կայ. Քրիստոսի 431 թուականին յԵփեսոս գումարուած տիեզերական սուրբ ժողովքին պատմութիւնն ընտիր ոճով և կարգաբանութեամբ գրուած. և որովհետեւ ձեռագրաց մէջ գտնուած օրինակներու վրայ Վաչագանայ անունը կը յիշուէր, ուստի կը կարծուէր հաւանականաբար թէ այս գրուածքն ալ նոյն թագաւորին ընծայած ըլլայ. բայց ետքի տարիներս ուրիշ գրչագիր մ'ալ երեւնալով՝ իմացուեցաւ թէ նոյն պատմութեան հեղինակն է Փիլաքսիանոս անունով մէկը՝ որ Նարովկ քաղաքին եպիսկոպոսն էր, և Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսին խնդրանօք շարագրեց այս գրուածքը, ինչպէս յայտնի կ'երեւնայ այն ընդարձակ յառաջաբանէն՝ որ Աբրահամու անուամբ յիշուած ձեռագրաց մէջ կը պակսի։ Հաւանաբար Աբրահամ եպիսկոպոս մը եղած է նոյն պատմութեան թարգմանիչ։

ՊԵՏՐՈՍ ԵՊ. ՍԻՒՆԵԱՑ

Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց և իր ժամանակը։ — Ճառեր՝ որ իր անուամբ հասած են առ մեզ։ Պատմական գըրուածք մը։ — Քանի մը հատուածք այդ երկասիրութեանց առ Ստ. Օրպելեան։ — Համարումը և պատմչաց կողմանէ գովութիւնք իրեն և գրուածոցը։

Նշանաւոր անուն մը, մեր պատմագրաց շատերէն յիշուած և Սիւնեաց անուանի վարդապետանոցին մէջ կրթուած անձինքներուն գլխաւորներէն մէկ։ Որչափ ալ քիչ ըլլան իր համբաւոյն արժանաւոր երկասիրութիւնք, այս պակասը՝ անշուշտ աւելի ժամանակին տալու է, որ ուրիշ այնչափ հռչակաւոր իմաստնոց երկասիրութիւնք մեզմէ ծածկած է. ապա թէ ոչ, անտարակոյս առանց պատճառի չէր այն համարումը, և ոչ թէ միայն մեր ձեռքը հասած գրուածքներուն համար։

Մեր պատմիչներէն ոմանք, ինչպէս Ասողիկ և Ստեփանոս Օրբելեան՝ սրբոյն Մովսէսի Խորենացւոյ աշակերտ կը համարին զՊետրոս. բայց այս ենթադրութեանս մէջ՝ ժամանակագրական սխալ կայ, և հաւանական կ'երեւնայ ըսելը թէ Խորենացւոյ աշակերտի մը աշակերտ եղած ըլլայ Պետրոս։

Պետրոսի անուամբ մեզի հասած երկասիրութիւններն են։

Սուրբ Աստուածածնի վրայ գովեստից ներբողեան մը, «Բազմաշխարհիկ քրիստոսասէր ժողովրդոց», որ թէպէտ համառօտ գրուած մ'է, բայց նոյն իսկ համառօտութեան մէջ հոգեւէր եռանդ մը և վարժ գրիչ կ'երեւցնէ[1]։

Քրիստոսի ծննդեան վրայ ճառ մը, որուն միայն մէկ հատուածը ձեռքերնիս հասած է. «Ծնեալն Էմմանուէլ՝ Աստուած մարդացեալ»։

Վաչագան արքային խնդրանօքը՝ անոր այլ և այլ հարցմանց պատասխանիք, այսպիսի մակագրութեամբ. «Պատասխանիք առ հարցմունս Վաչագանայ իշխանի». ընդհանրապէս Մարդեղութեան սուրբ խորհրդոյն վրայ։ Բայց ինչպէս ասոր նման ուրիշ երկասիրութեանց, ասանկ ալ ասոր մէջ, — եթէ յիրաւի Պետրոսի երկասիրութիւնը համարինք, — օտար ձեռք խառնուած կ'երեւնայ, որոնք իրեն լուսաւորեալ մտաց հարազատ պտուղը չեն կրնար ըլլալ, որ թէ գրութեան կերպէն և թէ ոճէն կը յայտնուի։

---

[1] «Երանելւոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի ասացեալ գովեստ յամենասուրբ Աստուածածին կոյսն Մարիամ և է [illegible]»։ (Մատենադարան Էջմիածնի, թիւ գրչագրաց 915)։ Նոյն Մատենադարանին ուրիշ գրչագրի մը մէջ (թիւ 917) վերջի տողին տակ. «ըստ յօրինման նորին և ի սուրբ գրոց լուծմունք նորին հոգեւոր իմաստիւք»։ Դարձեալ նոյնաթիւ գրչագրին մէջ նշանակուած կը գտնենք՝ Պետրոսի Սիւնեաց ընծայեալ ճառ մը [illegible]։

Օրբելեանը՝ Պետրոսի Սիւնեցւոյն պատմական գրուածքէն՝ հետեւեալ ամբողջ հատուածները կը գաղափարէ։

⁂

Այս գրուածներէն զատ կը յիշատակուի նախնեաց մէջ իր անուամբը՝ պատմական գրուածք մ'ալ. վասն զի Օրբելեան՝ սրբոյն Մեսրովպայ Աղուանից գրերը հնարելը, և Անանիա Սիւնեաց եպիսկոպոսէն պատուիլը նշանակելէն ետքը՝ կը յաւելու. «Ահա ցուցանէ մեզ զայս սուղ ինչ՝ Մովսէս քերթողահայրն. և զրովանդակն ճշգրիտ՝ աշակերտ նորա Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց»։ Օրբելեանին խօսքին հաւատարմութեան նշան կրնայ համարուիլ՝ Մովսէսի Կաղանկատուացւոյն գրոց մէջ գտնուած Բաբկայ Սիւնւոյն՝ Հոնանգուր Հոնին դէմ տուած մենամարտութեան պատմութիւնը, որ թէպէտ համառօտ գրուածք մ'է, բայց ընտիր գրչի մը ամէն կատարելութիւնք կը տեսնուին վրան։

Նոյն Օրբելեան պատմիչը կը յիշատակէ թէ մասնաւոր գովեստ ալ շարագրած ըլլայ Պետրոս՝ սոյն Բաբկայ, որ Վասակայ ուրացողին հայրն էր. «Ցերանելւոյն, կ'ըսէ, Պետրոսէ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ ի ներբողմանէն առաք, զոր արար ի վեհն Բաբիկ, զոր և Պարսիկք՝ յիւրեանց լեզուն լաւ կոչէին»։ Մեր վերը յիշատակած հատուածը՝ արդեօք այս ներբողեանէն առնուած է, թէ իր անուամբը յիշատակուած պատմութեան մասն համարուած որոշ չենք կրնար ըսել։

ԳԼ. Թ. Վասն Անդոկայ Սիւնեաց իշխանի թէ զինչ գործ գործեաց. և թէ որպէս անցք անցին ընդ աշխարհն Սիսական՝ ի Շապհոյ Պարսից արքայէ, և երթն նորա առ կայսրն Յունաց առ մեծն Թէոդոս և անդ վախճանիլն. յասացուածոց սրբոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի։

Ժ. Վասն գալոյ Բաբկայ ի Հոռոմոց առ Շապուհ, և քաջութեանն զոր եցոյց. և վերստին տիրելոյն սեպհական հայրենեաց իւրոց աշխարհիս Սիւնեաց և շինութեան նորա, և նախադաս պատուելոյն ընդ Բագրատունիս. ի նոյն ճառիցն տեառն Պետրոսի։

ԺԱ. Յայտնութիւն եկեղեցւոյն Շաղատայ. և գիւտ այնչափ սրբոցն որ ի նմա։

ԺԲ. Դարձեալ ի նոյն ճառից տեառն Պետրոսի. յետ բազում ժամանակաց գրոյցք վասն գիւտի նշխարաց սրբոց որ ի Շաղատայ եկեղեցին. և որ յաւուրս Յովակիմայ եպիսկոպոսի վիճմունք, և սակս նախագահութեան տանուտերաց և գիւղից Սիւնեաց. և թէ ո՛ ոք նախապատիւ և գահագլուխ սահմանեցաւ։

Ուռպելեանին գովեստից խօսքերն իրաւամբ մեծ ցաւ զգալ կու տան այսպիսի անձի մը գրաւոր երկասիրութեանց կորսուելուն։ Մենք՝ հաւատարմութեան երաշխաւորութիւնը բոլորովին իր գովաբանին վրայ ձգելով, միայն անոր վրայ զրուցած խօսքերը մէջ բերենք. «Նա ապա եղեւ, կ՚ըսէ, (Սիւնեաց իններորդ եպիսկոպոս), բազմերջանիկն և անհամեմատն ի մարդկանէ Պետրոս՝ աշակերտ Մովսիսի քերթողահօրն, քաջ հռետորն և անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ և կատարեալ առաքինութեամբ. Նախաթոռ վարդապետաց Հայոց, քերթող և թարգմանիչ, որ արար բազում թարգմանութիւնս, և արար ճառս իմաստալիցս ի ծնունդն Քրիստոսի, և այլ յոլովս, և մեկնեաց զխրթին և զդժուարիմաց բանս հին և նոր կտակարանաց։ Սա գնաց ընդ այլոց վարդապետաց Հայոց՝ Մամբրէի, Եղնըկայ, Կորեան, Դաւթի՝ ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս... և կեցեալ յաթոռն ամս տասն՝ մեռանի»։ Եղնկայ և Կորեան ընկերակից ըլլալ՝ անկարելի է այս Պետրոսի։

Պետրոս քերթողին ուրիշ մէկ գլխաւոր արդիւնքն ալ՝ Հայոց տումարը նորոգելն է. վասն զի երբոր Մովսէս կաթուղիկոս Եղիվարդեցի՝ Հայոց տումարը նորոգելու համար՝ ազգին ամէն գլխաւոր քաղաքաց իմաստունները հաւաքեց ի Դուին՝ ժողով ընելու համար, նոյն ժողովքին գլխաւորներէն մէկն էր, ինչպէս Վարդան կը յիշատակէ, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսը, Ներշապուհ Տարոնացին և Արդիշոյ Սասնեցի։ Բայց Ասողիկ նոյն պատմութիւնն ուրիշ կերպով աւանդելով՝ կը գրուցէ թէ Ներսէս Աշտարակեցի կաթուղիկոսին օրովը գումարած ժողովոյն մէջ՝ Հայոց տումարին վրայ խօսք ըլլալով, Հայոց թուականը հաստատեցին Պետրոս քերթողը և Ներշապուհ Տարոնացին։ Այսպէս կ՚աւանդեն յերուսաղեմեան մատենադարանի պահուած գրչագրի մը (թիւ 1422) պատմական կամ ժամանակագրական յիշատակարանի մը հետեւեալ խօսքերը. «Մովսէս կաթողիկոս ի դիրն թուականի, իսկ այլք ասեն Ներսէս և Պետրոս եպիսկոպոս քերթող ի Սիւնեաց և Ներշապուհ ի Տարօնոյ. սոքա էին ի ժողովն որ զթուականն եդին»։ Քիչ մ՚ալ յետոյ ի ՃԻ թուին Անաստաս կաթողիկոս... խորհեալ Հայաստանեացս կարգել տումար անշարժ ըստ այլոց ազգաց, և հրամայէ Անանիայ Շիրակացւոյ կարգել զքննիկոնն հրաշաղան. յորում զտումարս մեր կարգեաց անշարժ. և Անաստաս խորհեալ ժողովօք և եպիսկոպոսօք հաստատել զքննիկոնն, և վախճանի, կացեալ յաթոռն ամս վեց»։ Սակայն ընդհանրապէս մեր ամէն պատմիչք այս նորոգութեան պարծանքը Մովսէս կաթողիկոսին կու տան։

* * *

ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ

Մովսէս Եղիվարդեցի: — Հայոց մէջ գործածուած հին թուականներ: — Եղիվարդեցւոյն ձեռքով ու ջանիւք եղած նորոգութիւնը: — Հայոց թուական և անոր սկզբնաւորութիւնը:

Մովսէս՝ Արագածոտն գաւառին Եղիվարդ գիւղէն էր, և կաթողիկոսութեան աթոռը նստաւ Քրիստոսի 551 թուականին, և իրեն գլխաւոր գործը կը համարուի Հայոց տումարին նորոգութիւն կամ հաստատութիւնը: Հաւանական կ'երեւնայ թէ Հայք ի սկզբանէ իրենց տումարն ունեցած ըլլան· կամ իրենց գործածած գլխաւոր տումարը՝ Նաբոնասարայ թուականը եղած ըլլայ· վասն զի այն ատեն հաստատուեցաւ այս թուականը՝ երբ Վարբակէս Մար և Բելեսիս–Նաբոնասար՝ Պարոյրի հետ միաբանելով Ասորեստանեայց թագաւորութիւնը վերուցին, և իրենք թագաւորութեան պսակ ընդունելով՝ սահմանեցին անկէ ետքը նոյն թուականը գործածել· (Քրիստոսէ 743 տարի առաջ):

Արեգակնային էր այն ժամանակը Հայոց տարին, իրենց մերձաւոր ազգաց՝ Բաբելացւոց, Պարսից, Մարաց և Եգիպտացւոց նմանութեամբ: Բայց որովհետեւ Յուլեան տոմարին ճշդութիւնը չունէր, հարկ կ'ըլլար որ ամէն անգամ տարւոյն օրերը փոփոխութիւն կրեն: Տասներկու ամիս բաժնուած էր տարին, ամէն մէկ ամիս երեսուն օրով· և հինգ օր ալ Աւելեաց, որ է ըսել 365 օր, և հասարակ տարի: Սակայն Յունաց և Հռովմայեցւոց տարիները

չորս տարին անգամ մը նահանջ ունենալով՝ համեմատութեամբ չորս տարին մէյմը Հայոց տարւոյն մէկ օր կը պակսէր, և ուրիշ ազգաց տոմարէն առաջ երթալով՝ հարկաւ շփոթութիւն կը ծագէր:

Այս թուականէն զատ՝ մեր ազգին մէջ գործածական էր նաեւ Հայոց լուսաւորչեան թուականը, որ երբեմն գըրչագրաց մէջ ալ կը գործածուի նոյն անուամբ: — Սուրբ Լուսաւորչէն քիչ ետքը՝ սկսեր էին Հայք գործածել նաեւ Անդրէաս Բիւզանդացւոյն հինգհարիւրեկի շրջանը, որ 532 տարուան մէջ կը լրանար: Այս շրջանին լմննալէն ետքը՝ որովհետեւ շփոթութիւն ծագեցաւ, մանաւանդ Զատկի տօնը կատարելու համար, այն ատեն Մովսէս կաթողիկոս՝ ազգին մէջ իմաստութեամբ և տումարական հմտութեամբ նշանաւոր եղած անձինքը քովը ժողվեց, և անոնց խորհըրդով և առաջնորդելով՝ Հայոց թուականը հաստատեց, որ մինչեւ հիմայ կը գործածուի:

Ոմանք կարծած են՝ թէ Մովսէս կաթողիկոս ուզելով իր ազգը Յունաց հաղորդակցութենէն բոլորովին զատել, կրօնական խտրութեանց պատճառաւ հաստատած ըլլայ այս թուականը· բայց ասիկայ ձրի ենթադրութիւն է, և մեր ազգային պատմչաց շատին խօսքերուն հակառակ կ'ելլայ, որոնք կաթողիկոսին ձեռքով եղած այս նորոգութեան մէջ ուրիշ բան չեն նկատեր՝ բայց միայն ուսումնական հետազօտութեան պտուղ մը և արգասիք:

Մասնաւոր գրաւորական երկասիրութեանց յիշատակութիւն չկայ Մովսիսի վրայ: Միայն իրեն յաջորդը Աբրահամ կաթողիկոս՝ առ Կիւրիոն Վրաց հայրապետ գրած թղթերուն մէջ կը յիշատակէ թէ մասնաւոր թուղթ մը գրած ըլլայ առ նոյն ինքն Կիւրիոն, զգուշացնելով զինքը որ չըլլայ թէ նեստորականաց հետ հաղորդակցութիւն ընէ: «Յառաջագոյն, կ'ըսէ, երանելի հայրապետն մեր Մովսէս՝ գրեաց առ ձեզ մեղադրութիւն, յաղագս հաղորդելոյն ձեր ընդ այնոսիկ՝ ընդ որս չէր պարտ»: Նոյնը կը հաւաստարմացնէ նաեւ Վրթանէս քերթող՝ առ նոյն Կիւրիոն գրած թղթին մէջ. «Յառաջագոյն առ պատուականութիւն ձեր գրեաց երանելի հայրապետն մեր Մովսէս՝ յաղագս խուժիկ չեպիսկոպոսին խաբէութեանց»[1]:

---

[1] 1. Մովսէսի Եղիվարդեցւոյ տրուած է ի նախնեաց այս գիւտ և փոփոխութիւն. Անոնց հետեւեր են Չամչեան, Ինճիճեան և Ալիշան Վարդապետներ իրենց երկասիրութեանց մէջ. Բայց վերջինս հաւանականագոյն կը համարի և նոր քննութեանցն արդիւնք զՆերսէս Գ կաթուղիկոս Աշտարակեցի, Տես ի Շէր–ն, յէջ 37, ի ծան. 3.

ԿԻՒՐԻՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵՒ

ԱԲՐԱՀԱՄ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Քաղկեդոնի ժողով և այն պատճառաւ յուզմունք յեկեղեցւոջ: — Աբրահամ կաթուղիկոս: — Կիւրիոն Վրաց կաթուղիկոս: — Թղթակցութիւնք ընդ հայրապետին Հայոց: — Առաքեաց թուղթ առ Ներսէս կաթուղիկոս, և վերջնոյս պատասխանը: — Հայոց իշխանաց կողմանէ գրուած նամակ մը:

Հինգերորդ դարուն մէջ պատահած կրօնական դէպքը՝ առիթ տուաւ այս դարուս վերջերը այլ և այլ խօսակցութեանց և թղթակցութեանց և գումարման ժողովոց: Քրիստոսի 451 թուականին՝ Քաղկեդոնի մէջ ընդհանուր ժողով մը գումարուեցաւ Եւտիքէսի մոլորութեան դէմ: Գումարուած առաջին երեք ժողովոց մէջ՝ Հայերն ալ իրենց կողմանէ պատգամաւորներ ունեցած էին, և անոր

համեմատ՝ առոյգ տեղեկութիւն առած նոյն ժողովոց սահմանադրութեանց վրայ. բայց այս չորրորդ ժողովոյն ժամանակ՝ որովհետեւ Հայաստան պատերազմաց պատճառաւ ոտնակոխ եղած և նեղութեան մէջ էր, չկրցաւ իրեն կողմանէ մարդ ղրկել, և եղածին վրայ ճիշդ տեղեկութիւն մ'ունենալ. այն պատճառաւ նոյն ժողովոյն թշնամիքն առիթ և համարձակութիւն ունեցան՝ իրենց հարց հաւատոց վրայ հաստատուն կեցող Հայաստանի բնակիչները ջանալ օտարացնել նոյն ժողովքէն՝ մոլար վարդապետութեանց սահմանադիր քարոզելով: Բայց որովհետեւ անոր ջատագովքն ալ պակաս չէին, Հայաստանն ալ ստիպուեցաւ՝ այս պատճառաւ գումարած ժողովքներուն մէջ՝ երբեմն ընդունել զայն իբրեւ ուղղափառ, և երբեմն ալ մերժել իբրեւ մոլորամիտ:

⁂

Այս ժամանակներս՝ Վրաստանի կաթուղիկոսական աթոռը կը նստէր Կիւրիոն արքեպիսկոպոս, որ Մովսէսի Եղիվարդեցւոյն աշակերտն էր, յոյն, հայ, պարսիկ և վրացի լեզուաց հմուտ: Ճանչցաւ Կիւրիոն նոյն ժողովքին ուղղափառ սահմանադրութիւնները, և ընդունեցաւ. փափաքելով որ ուրիշներն ալ իրեն հետեւող երեւնան, Կոստանդնուպոլսէն բերել տուաւ նոյն ժողովքին վաւերական պատմութիւնը, ու Ս. Լեւոնի Հռովմայ հայրապետին տումարը. անոնց ընթերցմամբ ճանչցաւ բոլոր վրացի ազգը նոյն ժողովքին ուղղութիւնը և ընդունեցաւ:

Իր այս գործոյն հակառակող երեւցաւ Ցուրտաւ քաղաքին Մովսէս եպիսկոպոսը. ու այլ և այլ ամբաստանութիւններ ըրաւ վրան առ զանազանս, և մանաւորաբար առ Աբրահամ կաթուղիկոս Հայոց: Կաթուղիկոսն ալ մեղադրանաց թղթեր գրեց առ Կիւրիոն:

Ինքզինքը և իր գործը ջատագովելու համար նամակ-

ներ գրեց Կիւրիոն, կաթուղիկոսէն և ի զանազանից անոնց պատասխաններն ընդունեցաւ։ Այս բոլոր թղթերը որ երեսնի չափ են՝ հաւաքած և պատմութեամբ աւանդած է Ուխտանէս պատմիչ տասներորդ դարու մէջ, որ վերջի տարիներս տպագրութեամբ հրատարակուեցաւ Էջմիածնի տպարանէն։

Երեքտասաներորդ դարու գրչագրի մը մէջ թուղթ կամ նամակ մ՚ալ կայ զոր Ներսեսի Բ կաթուղիկոսի Հայոց ուղղեր են Ասորիք՝ նոյն ժամանակներն յուզուած կրօնական խնդրոց վրայ։ Այս նամակը կը գրեն «Սամուէլ քորեպիսկոպոս և Դանիէլ վանից երէց, և Սիւնական Սարեբայի, Գաբրիէլ վանից երէց Ովփեսի, և Եղիա Սիւնական և վանից երէց Սուսինայի, և Շապուհ վանից երէց Գնիթայի, և Յազդէն վանից երէց Գումայի, և Դանիէլ վանից երէց Բրդնայի և Բդեշխ վանից երէց Սաղիմայի, և Մեղիր վանից երէց Յովտամիայ և Դաւիթ վանից երէց Սոքփոնէի, և այլ երիցունք և սարկաւագունք գաւառիս եկեղեցեաց և վանից սպասաւորք, և ամենայն ժողովրդականք ուղղահաւատք ի Քրիստոս». և զոր կ՚ուղղեն այս մեծարանաց խօսքերով. «Լուսոյ, ճշմարտից և աստուածասիրաց հովուաց արդարոց և հարանց հոգեւորաց, որ էք լոյս աշխարհի և սիւնք հաւատոյ, քարոզիչք արդարութեան և աշակերտք առաքելոց, ընկերք սրբոց և բարեկամք արդարոց, սիրելիք Քրիստոսի և պահապանք խաչին նորա. Տէր Ներսէս կաթուղիկոս Հայոց մեծաց, և Մերշապուհ եպիսկոպոս Տարաւնոյ և Մամիկոնենից, և այլ աթոռակցաց և իշխանաց աշխարհիդ»։

Հաւատոյ խնդրոց համար իրենց ի հակառակորդաց կրած նեղութիւնները բացատրելէն՝ և իրենց ճանչցած և ընդունած ճշմարտութեան վրայ անշարժ մնալու հաստատուն կամքը յայտնելէն ետքը, կը յաւելուն. «Վասն այսորիկ ի ձեզ ապաւինեցաք յետ Աստուծոյ, և ընտրեցաք արս ի մէնջ և առաքեցաք ձեզ և թուղթս աղաչանաց որ ծանուցանեն զսիրտս մեր և զխորհուրդս. և արս զորս առաքեցաք առ ձեզ, անուանք են այսոքիկ. Աճարոն վանից երէց Մարհալայ, Դաւիթ վանաց երէց Խուփայի... Զայդ եղբարս և միապաշտօնս որ տան ձեզ զթուղթս աղաչանաց և մատուցանեն առաջի ձեր կամօք մեր և կամօք սրբոյ Հոգւոյն, զհեզ այրդ Աբդիսոյ երէց ի վանաց Սարեբայի, մեք խնդրեմք ի ձեզնէ (?) ողորմութեամբն Աստուծոյ՝ զի իշխանութիւն զոր ընկալայք ի Քրիստոսէ տացէք ձեռնադրութիւն զմա որ ընդրեցաւ. և առաքեցէք զդա մեզ զարդարեալ լուսով Աստուծոյ՝ ի ձեռն ճշմարտութեան ձերոյ, և դարձցի առ մեզ վառեալ ի ձեռն գրոյ ձերոյ և պինդ հրամանաւ»։

Հայոց կաթուղիկոսն այս նամակը և թղթաբերքն ընդունելով՝ կու տայ պատասխանին, քաջալերելով զնոսա ի հաստատութիւն. և կատարելով յայտնած փափաքնին՝ իրենց կողմանէ ղրկուած անձին եպիսկոպոսական ձեռնադրութիւն տալով։ «Պատասխանի թղթոյն Ասորեաց ի Ներսիսէ Հայոց կաթուղիկոսէ և ի Մերշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսէ»։ Նամակին սկզբնաւորութիւնն է. «Ի բազում ժամանակաց լուեալ զեղբայրութեանդ ձերոյ ուղղափառութիւն համբաւով, իսկ այժմ ընկալաք գրով առ ի ձէնջ աներկբանալի սրբոյ հաւատոյ հաստատութիւն»։

Նոյն ինքն Ներսէս ուրիշ թուղթ մ՚ալ գրած է առ եպիսկոպոսունս ոմանս հայկական գաւառաց, որոնց վրայ անշուշտ ի նեստորականաց զդոյշ մնալու և զգուշացնելու հարկաւոր արթնութիւնը չէր տեսած։ Այս նամակին խորագիրն է «Տեառն Ներսեսի Հայոց կաթուղիկոսի թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունս». և ուղղած է «Սրբասիրաց և քրիստոսասիրաց աթոռակցաց մերոց Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի, Սահակայ Ռշտունեաց եպիսկոպոսի, Սողոմոնի Մոկաց եպիսկոպոսի, Ստեփանոսի Անձեւացեաց եպիսկոպոսի, Միքայէլի Զարեհաւանից եպիսկոպոսի, Աստուածատրոյ Բզնունեաց եպիսկոպոսի, Թադէոսի

Մեհնունեաց եպիսկոպոսի. — Ի Ներսիսէ Հայոց կաթողիկոսէ, ի Մերշապհոյ Տարաւնոյ և Մամիկոնեաց եպիսկոպոսէ, ի Գրիգորէ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Պարգևայ Հարքայ եպիսկոպոսէ, ի Տիրկանէ Բագրեւանդայ եպիսկոպոսէ, ի Գրիգորոյ Բասենոյ եպիսկոպոսէ, ի Պետրոսէ Սիւնեաց եպիսկոպոսէ, ի Մաշտոցէ Խորխոռունեաց եպիսկոպոսէ, հոգևոր սիրով ողջոյն»: Կը յիշեցնէ թէ ինչպէս Նեստորականք վաճառաշահութեան պատրուակաւ մուտ գտնելով ի Հայաստան, իրենց մոլորական վարդապետութիւնը սկսան սերմանել ու ծաւալել, և ազգին կողմանէ թուլութիւն կամ անտարբերութիւն գտնելով, համարձակեցան «խուժանց պղծութեան հաւատոյ առաջնորդ չեպիսկոպոս ածել և մեզ լուսաւոր և ուղղափառ հաստատուն հաւատոյս խոչ ընդ ակն կացուցանել»: Եւ կը յաւելու. «Յառաջագոյն վասն նորին իրաց մեք և աշխարհիս մերոյ տանուտեարք և ազատք միաբանութեամբ ի ձեռն գրոյ հրաման արարաք վասն ձեր, փութապէս ի Դուին ի սուրբ եկեղեցիս ժողովելոյ և աստ միաբանութեամբ ըստ հաճոյից Աստուծոյ առնել խորհուրդ և հնար լինել բառնալ զայսպիսի աղէտս և զհանապազորդ հեծութիւն յոգւոց մերոց. և ձեր ոչ ունելով զնախանձ վասն Աստուծոյ հեղգացեալք սպուժեցէք... Արդ վասն նորին զայս գիր միաբանութեամբ առ ձեզ հրամայեցաք առնել». և կը յորդորէ որ ամենքը գումարին գան ի ժողով, սպառնալով եպիսկոպոսական պատուէն զրկել զորս հեղգութեամբ կամ պատճառանօք այս հայրապետական կոչոյն անհնազանդ երեւնան:

Այս ստիպողական նամակէն զատ՝ Ներսիսի անուամբ ուրիշ կարևոր գրուած մ'ալ կայ հետևեալ խորագրով. «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս ի ձեռն Ներսէսի Հայոց կաթողիկոսի, և Մերշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, և Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի, և այլոց աթոռակցաց, և տանուտերանց և ազատաց և համօրէն ժողովրդականաց»: Նամակին նիւթն է՝ հակառակիլ Նեստորական անձանց վարդապետութեան և անոնց յառաջադիմութեան, մերժելով զիրենք և իրենց կարծիքը, քանդելով իրենց ժողովոյ տեղերն ու եկեղեցիք, միաձայն հաւանութեամբ խոտան և արհամարհ հռչակելով անոնց ձեռքով և եկեղեցեաց մէջ մատակարարուած խորհուրդները: Այս թղթին ձեռնագիր կը դնեն՝ Ներսէս Հայոց կաթողիկոս, Մերշապուհ Տարաւնոյ և Մամիկոնէից եպիսկոպոս, Գրիգոր Սեպհական գնդին եպիսկոպոս, Պարգեւ Հարքայ եպիսկոպոս, Տիրուկ Բագրեւանդայ եպիսկոպոս, Գրիգոր Բասենոյ եպիսկոպոս, Ներսէս Մարդաղաղոյ եպիսկոպոս, Վաղոտ Արշամունեաց եպիսկոպոս, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոս, Մարկոս Բագրեւանդայ եպիսկոպոս, Մաշտոց Խորխոռունեաց եպիսկոպոս, Յոհան Ապահունեաց եպիսկոպոս, Աբդիսոյ Ասորոց ուղղափառաց եպիսկոպոս, Յովհան Վանանդայ եպիսկոպոս, Հաւուկ Արշարունեաց եպիսկոպոս, Քրիստափոր Պալունեաց եպիսկոպոս, Յոյս Գողթան եպիսկոպոս, Թադէոս Մեհենունեաց եպիսկոպոս, և ամենայն եպիսկոպոսունք Հայոց աշխարհին, և իշխանք:

Վասն զի այս նամակին տակ՝ բաց յեկեղեցական աւագաց, իշխանական դասէն ալ այլևայլ անձանց ստորագրութիւնը կայ, և են Համազասպ ի Գուգ Վառամեան ի տանէ Մամիկոնէից, Գարջոյր Հայոց Մաղխազ, Սամեղ յԱրտաւազդան սպարապետ, Գրիգոր ի Հմայական, Սահակ ի Վանդանեան, Աստուածատուր Վանանդայ տէր, Դատոյ ի Գարջուղեան, Գրիգոր և Վարդան ի Վասակայ, Ջօրակ ի Գղաւոնեան, Վարազ-Յոհան ի Յոհանեան, Վարդան ի Մուշեղեան, Համազասպ, Սահակ ի Հմայակեան, Գնեալ Գնունի, Վարազ Գաբեղեան, Գրիգոր Աբեղեան, Մերշապուհ ի Շինական, Համազասպ Ջինականեան, Աստուածատուր Հաւենունի, Արշոտ ի Վարազտիրոցեան, Մուշեղ ի Հմայեկեան, Վրիւ յԱրտաշրան, Աստուածատուր Արշաւրեան, *Սամուէլ ի Մամական, Վարդ ի Հմայական, Ներսէս ի Սամոնեան, Վարդան Վահեւունի, Հմայեակ Վարաժնունի, Մանուէլ Սպանդունի, Վարդ և Արտաւազդ ի Մամական, Համազասպ ի Սահական, Սահակ ի Մանուեղեան, Վարդան Մուշեղեան։*

Այս միաձայն հերքման որոշումը Նեստորականաց և իրենց վարդապետութեան, Ներսէս կաթողիկոս, Մերշապուհ Տարօնոյ և Մամիկոնէից, և Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսունք պաշտօնական գրով մը կը հաղորդեն՝ Գրիգորի Մարդպետական և Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսաց «ուղղափառաց և ճշմարիտ հաւատացելոց աթոռակցաց»։ Այս գիրը, որ մեր ձեռքն հասած է, խորագիր կը կրէ· «Որոշումն Նեստորականաց ի սրբոյ Եկեղեցւոյ»։

* * *

ԴԱՐ Է

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ո՞վ էր Կոմիտաս։ — Ի պատիւ Հռիփսիմեանց երգած Անձինք շարականը։ — Անոր վայելուչ ու քերթողական ոճը։ — Կոմիտասայ անուամբ յիշատակուած հարազատ և անհարազատ երկասիրութիւնք։

Աբրահամ կաթողիկոսին յաջորդն էր Կոմիտաս՝ Տարօնոյ եպիսկոպոսը և Գլակայ վանից առաջնորդը։ Իր հայրապետութեան ժամանակ՝ սրբոց Հռիփսիմեանց վկայարանները նորոգել ուզեց· և անոնց սուրբ մարմնոյն տապանները՝ հողէն դուրս հանելուն ժամանակ՝ տեսնելով որ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և Սահակայ Պարթեւ հայրապետին կնիքներովը վաւերացած են, չուզեց դպչիլ· այլ իր կնիքն ալ զարնելով՝ արժանաւոր պատուով ամփոփել հրամայեց անոնց սուրբ մարմինները։

Այս առթով սրբոց կուսանաց վրայ շարադրեց շարական մը այբուբենի կարգաւ, որ իր անուամբը մեզի հասած գլխաւոր երկասիրութիւնն է, և կ՚ըսուի,

Հռիփսիմեանց անձինք· — Գեղեցիկ քնարերգական բանաստեղծութիւն մ՚է այն սուրբ կուսանաց յիշատակին և փառացը նուիրուած, որոնց արեանը պարտական է Հայաստան իր լուսաւորութեան գլխաւոր մաս մը։ Հռիփսիմեանց սրտաշարժ պատմութիւնն՝ ազդած է քերթողին այս աննման և սիրելի երգը վրանին յօրինելու։ Որչափ կորուկ և բանաստեղծական՝ միանգամայն պարզ լեզուով նկարագրուած են իրենց պատմութեան գլխաւոր մասերը, մանաւանդ սրբուհւոյն Հռիփսիմէի, այն հրաշագեղ կուսին՝ որուն գեղեցկութիւնը՝ կը յիմարեցնէ թագաւորը. հեթանոսք կը սքանչանան իրենց անմիտ իմաստութեան մէջ՝ այնպիսի տեսքի մը արհամարհուելուն համար, և հրեշտակք՝ ուրախութեամբ կը տօնեն՝ փափուկ կուսի մը մահը և զաշխարհս արհամարհելը։ Իրար կ՚անցնին բոլոր աշխարհները. պատուական մարգարտի մը (Հռիփսիմէի) վրայ խնդութեամբ կը վազեն ամենայն հեթանոսք. արեւմուտք և արեւելք, Դիոկղետիանոս և Տրդատ, իրարու կ՚իմացընեն այն հրաշալի գեղեցկութիւնը. և մինչդեռ խօսքով իրարու կը խոստանան, ծածուկ հնարքներով կը ջանան յափշտակել իրարմէ։ Աշխարհիս ամէն զօրաւոր համարուած մարդոց զէնքերը կը թուլնան. ուր ընդհակառակն տըկար կարծուած կանայք աստուածազդեցիկ զօրութեամբ քաջալերուած՝ զօրութեամբ և փառքով պերճացեալ թագաւորը՝ կուսական ձեռօք կը յաղթահարեն։ Որչափ գեղեցիկ, պարզ և բանաստեղծական են այն նմանութիւնները, մերթ առ Աստուած, մերթ առ կուսանս և մերթ առ տօնողս դառնալները. որով իրաւամբ ազգային բանաստեղծութեան գլխաւոր յիշատակարաններէն մէկը կը համարուի[1]։

---

[1] Մեր դարուն հռչականուն իտալացի քերթող մը, Լուիճի Գարրէր, գեղեցիկ ոտանաւոր թարգմանութիւն մ՚ըրած է այս երգին, և որ հրատարակուած է ի Ս. Ղազար Վենետիկոյ յամի 1843.

⁂

Կոմիտասայ անուամբ յիշատակուած ուրիշ երկասիրութիւնք. — Ուռպելեան և Կաղանկատուացին ուրիշ այլ և այլ ճառեր և գրուածներ կ՚ընծայեն Կոմիտասայ։ Ասոնց մէջ գլխաւոր կրնան համարուիլ առ պատրիարքն Կոստանդնուպոլսոյ գրուած քանի մը թղթերը՝ հաւատոյ դաւանութեան և այլ և այլ ազգային ծիսից վրայ։ Այս թղթերէն մէկ քանին Կաղանկատուացւոյն գրոց մէջ կը տեսնուին, ու արժանաւոր են Կոմիտասայ հանճարոյն, սրտին ու գիտութեանը։ Իրեն կ՚ընծայուին ուրիշ քանի մը քննաբանական կամ աստուածաբանական համառօտ գրուածներ, որ իրենց իմաստներովն ու լեզուով շատ կը հեռանան Կոմիտասայ գիտութենէն և ընտիր ու կիրթ ճաշակէն. ուստի և հաւանաբար ուրիշ հակառակասէր ու տգէտ անձանց գրուածներ են՝ իր անուամբ հրատարակուած։ Ասոնց կարգէն են անշուշտ իր անունը կրող Հարցմունք որ ձեռագրաց մէջ կ՚երեւնան, և «Հարցումն Պիւռոսի Կոստանդնուպոլսի հայրապետի և Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի», և Թուղթ վասն հաւատոյ։

ՔԱՆԻ ՄԸ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

Եզնիկ Երէց։ — Եզր կաթողիկոս։ — Մաթուսաղա։ — Ուռպելեանի գովութեանց խօսքերը։ — Իր համբաւը։ — Գրիգորատուր վարդապետ։ — Յովհան Մայրագոմեցի։

ԵԶՆԻԿ ԵՐԷՑ

Այս տեղերս կը յիշատակուի Եզնիկ երէց կամ վարդապետ մը, որ Կոմիտաս կաթողիկոսին ժամանակ և անոր ձեռքով եղած սրբոց Հռիփսիմեանց մարմնոյն փոխադրութեան ականատես, և այն դէպքին պատմութիւնն ըրած է, քանի մը խօսքով յիշատակելով սուրբ թարգմանիչները, և անոնց ձեռքովն եղած ազգային բարիքը։ Ձեռագրաց ցուցակին մէջ հանդիպած ենք նաեւ հետեւեալ երկասիրութեան. «Եզնիկ վարդապետի վասն արարչութեան աւուրց», և որ ցարդ խորագրովս միայն մեզի ծանօթ է։

ԵԶՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կոմիտաս և Քրիստափոր կաթողիկոսաց յաջորդն էր Եզր, Նիգ գաւառին Փառաժնակերտ գիւղէն, որ մեր եկեղեցական պատմութեան մէջ Կարնոյ նշանաւոր ժողովը գումարեց, Յունաց Հերակլ կայսեր յորդորելովը և ստիպմամբ։ Եկեղեցական ուրիշ այլ և այլ բարեկարգութիւններ ալ ըրած է. մանաւանդ ժամակարգութեան և հասարակաց աղօթից մէջ։ Այս խօսքիս ստուգութեան երաշխաւորութիւն կու տայ Յովհան Իմաստասէր, որ Արեւագալի կարգն իրեն կ'ընծայէ։

Եզրի ժամանակակից ուրիշ քանի մը անուանի վարդապետներ ալ կային, թէ՛ բարեպաշտութեամբ և թէ գիտութեամբ նշանաւոր անձինք։ Ասոնց մէջ անուանիներէն կը համարուէր։

ՄԱԹՈՒՍԱՂԱ

Ասոր գովեստը կ'ընէ Ուռպելեան, Սիւնեաց փառաց և պատմութեան հանդիսացնողը։ Կ'աւանդէ թէ Դաւիթ Սիւնեաց արքեպիսկոպոսին վախճանելէն ետքը՝ միաբան հաւանութեամբ տեղապահ ընտրուեցաւ Մաթուսաղա, զոր «մեծ քերթող և անյաղթ փիլիսոփայ կ'անուանէ. զարդարեալ ամենայն առաքինութեամբ, ուսեալ զքերթողութիւն և վարժեալ ճարտասանականաւն. հմտացեալ փիլիսոփայական արուեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ։ Եւ զի էր մեծարոյ և նախաթոռ ի հայրապետսն Սիւնեաց, զի էր ի վաղնջուց հետէ հրամայեալ զթարգմանութիւնն և զմեկնողութիւնն նոցա ունել ի սրբոցն Սահակայ և Մեսրոպայ, և գլուխ կալ և հրամանատար ամենայն վարդապետաց Հայոց։ Վասն որոյ տեսեալ յայնմ ժամանակի պայծառացեալ իմաստայեղց ճառագայթիւք զերանելին Մաթուսաղայ, վարժեալ ի նոյն տան՝ կացուցանեն յաստիճան վարդապետութեան եկեղեցւոյ. և նստուցանեն գլուխ ամենայն վարդապետացն ի վերայ բարձըր և աճարկու ամբիոնի բարունարանին, յորմէ բղխէր գետօրէն աստուածային իմաստութիւնն և փարթամացուցանէր զամենայն աշակերտեալսն»։

Մաթուսաղայի այս համբաւը լսեց Կոմիտաս կաթողիկոս. և թէպէտ ուրիշ այլ և այլ վարդապետք կային, Արշարունեաց գաւառին մէջ ալ հռչականուն վարդապետարան մը յԵրասխաձոր, Վարդէկ Հայր կոչուած, ուր գիտութեանց ետեւէ եղող և ուսումնասէր մանկունք կը կրթէին «ճարտարք և գիտունք Հայոց», սակայն իր Թէոդորոս եղբօրորդւոյն դաստիարակութեան խնամքը Մաթուսաղայի յանձնեց։ Կաթողիկոսին վստահութեան և համարման արժանաւոր *երեւցաւ Մաթուսաղա, կ՚ըսէ պատմիչը. վասն զի «մեծաւ զգուշութեամբ ուսոյց և հասոյց ի գլուխ կատարման»:*

⁂

Կոմիտաս և Քրիստափորի մահուանէն ետքը՝ Եզրի հայրապետութեան ժամանակ՝ Յունաց Հերակլ կայսրը հրաման հանեց որ թէ Հայք և թէ Ասորիք ժողովին ի քաղաքն Կարնոյ՝ հաւատոյ խնդրոց քննութեամբ զբաղելու, և նոյն ժամանակաց մէջ յուզուած հերձուածը խափանելու համար: Այս վախճանիս դիւրաւ հասնելու նպատակաւ՝ կայսրը հետը բերած էր Յունաց իմաստուններ: Այս հրամանն առնելուն պէս՝ Թէոդորոս Ռշտունի և ուրիշ նախարարք ժողով գումարեցին Եզրի քով, և իրենք չուտով դէպ ի Կարին ճամբայ ելլելով, պատուիրեցին Հայոց կաթուղիկոսին որ ինքն ալ իր ազգին իմաստուններն ու եպիսկոպոսներն առնու, և երթայ ժողովքի. բայց աղաչեցին որ չըլլայ թէ առանց Մաթուսաղայի երեւնայ ժողովքին մէջ: Այնչափ մեծ էր ժամանակակցաց համարումը իր գիտութեան և իմաստութեան վրայ:

Եզր մարդիկ ղրկեց առ Մաթուսաղա, թէ իր և թէ ուրիշ եպիսկոպոսաց և նախարարաց կամքն ու բաղձանքն անոր յայտնելու: Բայց Մաթուսաղա որովհետեւ իր ամէն փոյթն ու խնամքը վարժարանին բարեկարգութեան վրայ դարձուցեր՝ և անոր յառաջադիմութեան համար գիշեր ցորեկ կ՚աշխատէր, յանձն չառաւ անոնց խնդրանքին զիջանիլ: Կաթուղիկոսը երբոր կրկին անգամ մարդիկ ղրկեց, Մաթուսաղա առաջին պատճառներուն վրայ տկարութիւնն ալ աւելցնելով, տեղը ղրկեց Կոմիտաս կաթուղիկոսին եղբօրորդին և իր աշակերտը՝ զԹէոդորոս, և անոր ձեռքը տուաւ հաւատոյ դաւանութեան թուղթ մը, պատուիրելով որ նոյն թուղթը կարդան ժողովքին մէջ: Ժողովէն ետքը՝ Մաթուսաղա եկաւ առ Եզր, և մեծ պատիւ գտնելով իրմէ, Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, ու նորէն իր վիճակը դառնալով, իր նախկին ջանքն ու փոյթը շարունակեց:

Օրբելեանը իր Պատմութեան մէջ Հաւատոյ դաւանութեան ամբողջ գիրը կը դնէ զոր Մաթուսաղա տուաւ առ Հերակլ՝ յանուն Եզրի:

Մաթուսաղա տասնեւութ տարի Սիւնեաց մետրապոլտութիւն ընելէն ետքը վախճանեցաւ:

Նոյն ժամանակները ծաղկեցան նաեւ Գրիգորատուր և Յովհան Մայրագոմեցի վարդապետք:

ԳՐԻԳՈՐԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ *Արծախից ձոր կոչուած գաւառէն. որուն համար կ՚աւանդէ Շապուհ Բագրատունի՝ թէ Մայրագոմեցւոյն և անոր մոլորամիտ վարդապետութեանց դէմ կռուած ըլլայ երկար ժամանակ: Բայց իր գրուածներէն բան մը ձեռքերնիս հասած չէ: Բագրատունւոյն գրուածոց մասն կը համարուի (անշուշտ ի ճառէն պահոց) հետեւեալ հատուածը՝ որոյ կը հանդիպինք ի գրչագիրս (Մատ. Երուս. 999). «Այր ոմն, անուն Գրիգորատուր, ի գաւառէ Արծախից ձորոց, այր ուղղափառ հաւատովք և զօրութեամբ արուեստիւք. յաւուրս նորա Հոռոմք սիրէին զմեզ[1]... զՅովհաննու Մայրագոմեցւոյ զաղանդն խափանեաց»:*

ՅՈՎՀԱՆ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻ՝ *սրբոյն Գրիգորի եկեղեցւոյն փակակալն էր, և նոյն առեններն ազգին մէջ յուզուած կրօնական խնդրոց մէջ՝ Յունաց և անոնց ընդունած վարդապետութեանց դէմ կը հակառակէր: Այս վախճանաւ երեք գրուածք ալ շարադրեց, կ՚ըսեն Ասողիկ և Վարդան պատմիչները. բայց որովհետեւ զանազան մոլորական[2] վար-*

---

[1] Ի Մատ. Էջմիածնի ձեռքին մեզ.

[2] Յովհ. Զ. կԹղ. իր Պատմ. գլ. ժը, Մայրագոմեցւոյն չի վերագրեր Հերձուածը, այլ աւելի իր Սարգիս աշակերտին. Հմմ. էջ 102՝ տպ. 1867.

դատեւութիւններ կը բովանդակէին այն գրքերը, չհամարձակեցաւ Յովհան իր անուամբ հրատարակել, այլ անծանօթ անուններ դրաւ վրանին, այսինքն Խրատ վարուց կամ Խրատավարք, Հաւատարմատ և Նոյեմակ[1]։ Բայց ազգը չընդունեցաւ այս գրուածները, և անհետ ըրաւ. Եզր կաթուղիկոսն ալ զրկելով զինքն ամէն իշխանութենէ, մասնաւոր տեղ մը վռնտեց։

Ուռպելեանը կ'աւանդէ, թէ Թէոդորոս Ռշտունեաց տէրն և իրեն հետ եղող նախարարք ստիպած ըլլան զԵզր՝ որ Մաթուսաղայի հետ Կարնոյ ժողովքը տանի նաեւ զՄայրագոմեցին, և անոնց աստուածաբանական տեղեկութեամբք Յունաց դէմ դնէ. և թէ Եզր արհամարհելով զՄայրագոմեցի՝ անոր խօսքը մտիկ ըրած չըլլայ, և թէ անով իր և Ռշտունեաց իշխանին մէջ գժտութիւն ինկած է։

Բայց այս դէպքն անհաւատարիմ կ'երեւնայ, նախ որ ինչպէս տեսանք, զարմանալի համարման արժանաւոր անձ մը համարուած չէր Յովհան, և երկրորդ որ՝ Փոտ Կոստանդնուպոլսի հայրապետն առ Զաքարիա կաթուղիկոս գրած թղթին մէջ բոլորովին հակառակ վկայութիւն մը կու տայ, թէ Թէոդորոս Ռշտունի բռնած ըլլայ զՅովհան, և աղուխադրոշմ խարան մը դնելով անոր ճակտին վրայ, մինչեւ ի Կովկաս աքսորած ըլլայ։

---

[1] Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց ցուցակին մէջ (թիւ 1500) կը նշանակուի. «Յովհաննու Մայրավանեցւոյ գիրք Արմատ հաւատոյ», որ անշուշտ յետին դարուց գրուած է, և հաւանականաբար համանուն Որոտնեցւոյն։

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Յովհան Մամիկոնեան պատմիչ։ — Իր երկասիրութեան նիւթը։ — Մատենագրական ոճը։ — Տպագրութիւնք, և թարգմանութիւն իր գրուածքին։

Ներսէս Շինող կաթուղիկոսին օրօք էր Յովհան Մամիկոնէից եպիսկոպոսը, և նոյն հայրապետին հրամանաւ պատմական գրուածք մը շարագրեց, որ կերպով մը Զենոբայ ասորւոյն պատմութեան շարայարութիւնն ըլլալով, նոյն անուամբ Տարօնոյ պատմութիւն կը կոչուի։

Պատմութեան Յիշատակարանին մէջ կը պատմէ թէ Զենոբայ ժամանակէն ի վեր հաճոյական բան մը համարուած էր Տարօնոյ մէջ, որ իւրաքանչիւր առաջնորդ՝ իր ժամանակին իշխող գլխաւորին քաջութիւնները և պատերազմունքն ու բարեկարգութիւնները գրէ, և Գլակայ վանաց և եկեղեցւոյն յիշատակ թողու։ Այսպէս օր օրուան վրայ պատմութիւնը կը շատնար, և կը կոչուէր Ասորւոց պատմութիւն. որովհետեւ մինչեւ Թոդիկ վանահօր ժամանակ՝ վանքին առաջնորդքն ասորի էին ազգաւ, և ինքն եղաւ որ թէ զիրենք և թէ իրենց կարգերն և լեզուն հալածական ըրաւ։ Բայց ես, կը յաւելու Մամիկոնեան, տեսայ որ Խոսրովու ժամանակէն ի վեր մինչեւ Տրդատայ թագաւորութեան առենը Մամիկոնէից տան մէջ հանդիպածները՝ գրի առնուած չէին. ետքէն տեղեկացայ թէ Ուռհայի կողմերը Մարմառա կոչուած կրօնաւոր մը կայ՝ որ այդպիսի գիրք մ'ունի քովը, գնացի քննելու, և տեսայ որ նոյն Իննակնեան վանքին մէջ գրուած էր, և հաւանականաբար Թշնամեաց յարձակման կամ աւարառութեան պատճառաւ անոր ձեռքն ինկած։ Եւ որովհետեւ քովս արդէն տասը գլուխ բան կար գրուած, քսանեւութ գլուխ ալ անկէ թարգմանեցի, և բոլորը մէկէն երեսուն գլուխ՝ մէկ գրքի մէջ հաւաքելով, ինծմէ ետքը եկողներուն յիշատակ ձգեցի։

Բայց մատենագրին յիշատակած երեսուննեւութ պատճէններէն միայն ութը ձեռքերնիս հասած են. և ասոնցմէ հինգը Զենոբայ անուամբն են, միւս երեքն ալ Յովհաննու Մամիկոնենի։

⁂

Մամիկոնեանի պատմութեան նիւթը. — Գլակայ վանից առաջնորդներուն շարակարգութեամբ կը սկսի Մամիկոնեանն իր պատմագրութեան գիրքը, Զենոբ ասորւոյն օրուընէն ինչուան Թոդիկ վանահայր, որուն ժամանակ Գլակայ վանքը թէ շէնքերով և թէ բարեկարգութեամբ պայծառացաւ։

Անկէ ետքը կը պատմէ թէ ինչպէս Փոկաս զՄօրիկ հայկազն կայսրը սպանեց, և անոր անպարտ մահուան վրէժխնդիր եղաւ Խոսրով Պարսից թագաւորը. և ուզելով որ Տարօնոյ Մուշեղ իշխանն ալ հետը միաբանի՝ մարդ ղրկեց իրեն այս փափաքն իմացնելու. ապա թէ ոչ՝ կը սպառնար որ Յունաց երկրէն դառնալու ժամանակ՝ Հայաստանէն և Տարօնոյ երկրէն անցնի աւերելով և քանդելով։ Մուշեղ և ոչ պատասխան տուաւ. ու մէկալ կողմանէ սկսաւ երկիրն ամրացնել։

Խոսրով շատ զօրքով Յունաց երկիրն արշաւելէն ետքը իր Միհրան քեռորդւոյն ձեռքը երեսուն հազար զօրք տալով՝ ի Տարօն ղրկեց, որոնք մէկէն Մեղտի և Աստեղունք կոչուած բերդերը սփռեցան. ոմանք ալ Արձան ըսուած տեղւոյն վրայ դիմեցին։ Հոն բնակող Եօթն Խոստաճարակ ճգնաւորները՝ մէկէն Տարօնոյ սուրբ Կարապետ վանքը վազեցին, և տեղւոյն միաբանից իմացնելով, ստիպեցին զիրենք որ փախչին երթան, և իրենք մնացին նոյն տեղը. վրայ հասան Պարսիկք և սպաննեցին սուրբ ճգնաւորները։ Ասոնց արեանը՝ և Թշնամեաց ձեռքով Տարօնոյ երկրին մէջ եղած արիւնհեղութեանց վրէժն առնելու համար՝ Մուշեղ իր Վահան որդին կանչեց, և յիշեցնելով իրեն թէ ինչպէս շատ տարիներէ ի վեր պատերազմի մէջ մնած և միշտ յաղթական եղած, հիմայ ծերութեան հասակին պատճառաւ ալ չի կրնար զէնք բռնել, իրեն յանձնեց որ Պարսիկներէն վրէժն առնու։

Մամիկոնեան կը սկսի անկէ ետքը Գայլ Վահանայ հնարագիտութիւնք և յաղթութիւնները պատմել, աշխոյժ և զուարճարան ոճով մը. բայց շատ անգամ այնպիսի պարագաներով՝ որ կարծես թէ ստուգութենէ հեռանալով առասպելաց կերպարանք կ'առնուն։ Վասն զի երբեմն՝ հարիւր տարուան մէջ հանդիպած դէպքերը՝ իբրեւ մէկ կամ երկու տարուան դիպուած կը յիշատակէ. երբեմն ալ անոր հակառակ՝ քանի մը տարուան դիպուածոց՝ երկայն ժամանակ կու տայ։ Անձինքը շատ անգամ իրարու հետ կը շփոթէ. անոր համար մէկուն ձեռքով եղած գործ մը՝ իբրեւ ուրիշի ձեռքով եղած կ'աւանդէ։ Ասոնց յերկուանալու՝ առասպելախառն դէպքեր՝ իբրեւ ճշմարիտ պատմութիւն կը զրուցէ. և ընդհակառակն առասպելաց կերպարանք կու տայ այնպիսի դէպքերու՝ որոնց ճշմարտութիւնն ուրիշ պատմագրաց գրուածներէն յայտնի է։ Երբեմն ալ իր գրոցը մէջ այնպիսի դիպուածոց յիշատակութիւնք կը գտնուին՝ որ իր մահուընէն ետքը պատահած են։

Գլխաւոր մէկ պակասութիւնն ալ՝ շատ տեղերու և քաղաքաց ստուգաբանութիւններ են, որոնք ընդհանրապէս իմաստակական են, և ինքն իբրեւ իրական կ'աւանդէ։ Օրինակ իմն, երբոր Վահան քսանեւութ հազար հոգւով Ոհհանայ դէմ պատերազմի կ'երթար, Հաշտենից իշխանը կաշառուելով՝ Ռեհանայ գլխոյն տեղ երեսուն հազար դահեկան թշնամիներէն առած՝ ետ կը դառնար, Վահան աստուածային նախախնամով վառուած՝ թշնամեաց վրայ վազեց, անոնք ալ Վահանայ դառնալով՝ ըսին· «Առ ի՞նչ դարձայք, ով աւելախօսք»· և անոր համար, կ'ըսէ, տեղւոյն անունը Առինչք կոչուեցաւ։ Նմանապէս երբոր Վարազայ և անոր համախոհ Պարսից դէմ գնաց պատերազմու, թշնամիքն աճապարելով սկսան գոչել թէ կորսուեցանք՝ «կորեաք»· և թէ այն պատճառաւ տեղւոյն անունը մնացած ըլլայ «կորի»։

Այսպիսի անտեղութեանց պատճառ կրնայ համարուիլ նաև օտար անձանց ձեռք խառնելը Մամիկոնենի պատմութեան մէջ· մանաւանդ որ ինքը Յիշատակարանին մէջ ազատութիւն տուած, կամ աւելի լաւ ըսենք՝ ստիպած է՝ որ իրենց ժամանակին դէպքերն աւելցնեն, և զարմանք չէ որ երբեմն տգէտ և անգրագէտ անձինք ալ գեղծած ըլլան իր այս թոյլտուութեամբ։ Խօսքերնուս ստուգութեան գլխաւոր ապացոյց են ձեռագրաց մէջ եղած զանազան տարբերութիւնները։

Պարզ ու գրեթէ ռամկական ոճ մ'ունի Մամիկոնեանը· և իր գիրքը աւելի յարգի կրնայ նկատուիլ իբրև պատմութիւն՝ քան թէ իբրև մատենագրութիւն։

Յովհաննու Մամիկոնենի պատմութեան գիրքը տպագրուած է նախ ի Կոստանդնուպոլիս 1719ին, ու ետքը ձեռագրաց բաղդատութեամբ ի Վենետիկ 1832ին և 1889, Զենոբայ ասորւոյն Տարօնոյ պատմութեան հետ։ Գաղղիական թարգմանութիւն մ'ալ ի Հաւաքածոյն Լանկլուայի ի 1869։ Jean Mamigonien, continuation de l'histoire de Daron, traduite pour la prèmiere fois de l'arménien par Jean-Raphaël Emine·

ՍԵԲԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց։ — Իր անձին վրայ տեղեկութիւն։ — Պատմութեան նիւթը։ — Այդ երկասիրութեան շարադրութեան մէջ իր ունեցած մասը։ — Սեբիոսի ոճը։ — Պատմական արժէքը։ — Իր գրուածքին տպագրութիւնք և թարգմանութիւնք և մատենագիտական քննադատութիւնք։

Մեր պատմչաց կարգին մէջ յետ ոսկեղէն դարու մատենագրաց՝ յետագայ պատմիչք կը դասեն զՍեբիոս եպիսկոպոս, յիշելով իր Պատմութիւն ի Հերակլ, կամ Պատմութիւն Հերակլի կայսեր պատերազմաց ընդ Պարսից· որ և շատոնց անծանօթ մնացած՝ հազիւ աւելի յիսուն տարի մ'առաջ յերեւան ելաւ և հրատարակուեցաւ։ Իր անձին և ուրիշ գործոց վրայ տեղեկութիւն չունինք, բայց միայն որ Բագրատունեաց ցեղի եպիսկոպոս էր, ինչպէս որ ստորագրած է անունն ի գործս ժողովոյն Դունայ՝ Գ. Ներսէս կաթուղիկոսին ատեն, ի կէս Է դարու։

⁂

Սեբիոսի Պատմութեան նիւթը. — Յետ յաւերժայիշատակ դիպուածոց Վարդանայ և Վահանայ, զոր անմահացուցին ճարտար գրիչք Եղիշէի և Ղազարու, գրեթէ ամբողջ դար ու կէս՝ ոչ ոք ոճով Հայոց պատմութիւն մը գրած էր, և թէ գրած ալ էր՝ ոչ միայն մեզի հասած չէ, այլ և ոչ Սեբիոսի, որ Է դարուն սկիզբներն ծնած ըլլալու է· ինչպէս կը *վկայէ և ինքն. թերեւս Հայոց անիշխան ըլլալուն և թշուառութենէ զատ նշանաւոր գործ մը, մանաւանդ ազգային քաջագործութիւն մը չըլլալուն համար՝ յօգուտ հայրենի աշխարհին, բայց Զ դարուն վերջերը և Էին կիսուն՝ ոչ միայն Պարսից և Յունաց մէջ նշանաւոր գործեր եղան՝ դաշանց և պատերազմաց, այլ և Հայք անոնցմէ նեղեալք կամ ձանձրացեալք կամ անհամբերք՝ թէ ապստամբութեան և թէ քաջութեան գործեր ըրին, որ եկու ինքնակալ պետութեանց մէջ ալ հռչակուեցան և անոնց մտադրութիւնն արթնցուցին։ Սեբէոս ետքի և գլխաւոր գործերուն ականատես՝ ուզեց զանոնք գրով աւանդել, մանաւանդ ամենէն հռչակաւոր դիպուածն, որ էր Հերակլ կայսեր արշաւանքն ի վերայ Պարսից, անցնելով կրկին անգամ ընդ Հայաստան։ Ասոր պատերազմներն ընդ Պարսից, և այս ետքիններուս տէրութեան չփոթութիւնն Ապրուէզ Խոսրով թագաւորին ատեն, և քիչ մ'առաջ ու ետեւ, ու անոնց տէրութեան նախ տկարանալն հարուածովք Հերակլի, ու յետոյ վերջնալն ի ձեռն նորահաստատ տէրութեան Մահմետի, գլխաւոր նպատակն են մեր պատմչին. անոր համար ալ իր գրուածքը կ'անուանի յոմանց Հերակլ՝ ի Սեբէոսէ եպիսկոպոսէ ասացեալ։*

⁂

Իրմէ առաջ երկայն ատեն ազգային պատմիչ չըլլալը՝ բնական պատճառ մը պիտի համարուէր Սեբէոսի՝ համառօտաբար յիշելու այն միջոցին կամ առաջին դիպուածները. և յիրաւի իր նպատակած պատմութենէն առաջ՝ Վահանայ մեծին գործերը համառօտ կը յիշուին, և իրմէ վերջ եղածները. բայց անկէ առաջ ալ Հայոց Արշակունի թագաւորաց և իրենց ատենի Պարթեւաց և Յունաց կայսերաց՝ համառօտ ժամանակագրական ցանկ մը կայ, ի Մովսիսէ Խորենացւոյ և ի Ստեփաննոսէ Տարօնացւոյ առնուած,

ըստ խորագրին, ինչպէս որ գրուած է տպագրելոյն մէջ ալ[1]*. և ա՛լ աւելի առաջ՝ Հայոց ազգին ի Հայկայ սկզբնաւորութեան, և անոր պատերազմին և իր պայազատաց յիշատակութիւնք կ'ըլլան, հին ու վսեմ ոճով. որ ոչ միայն Սեբէոսի գրածը չէ, այլ թերեւս և ոչ իրեն գրածն ի սկիզբն պատմութեան իւրոյ. այլ այն հին և պատուական հատուածքն՝ Ագաթանգեղոսի և Ղազարայ Փարպեցւոյ ծանօթ պատմական գրքերէն դուրս գրուած գործերէն են. Նոյնպէս ժամանակագրականքն ալ՝ անյարմար թուականներով՝ յետին և ոչ շատ հմտի գործ են։ Երկուքն ալ անհարազատ համարելով Սեբէոսի՝ աւելորդ կը կարծենք հոս քննել զանոնք։ Իր հարազատ գործը կը սկսի տպագրին Գ. դպրութիւն ըսած տեղէն, որոյ երկու առաջին գլուխք համառօտ յիշատակ են իրաց՝ և Հայոց իշխանաց կամ մարզպանաց, ի մեծէն Վահանայ մինչեւ ց'Բ Խոսրով թագաւորն Պարսից. և այս միջոցիս գլխաւոր դիպուածն է Վարդան Մամիկոնին (որ կարծի թոռն եղբօր Վահանայ) Պարսիկ Սուրէն մարզպանը սպաննելն, և փախչիլն ի կողմն Յունաց, որոց օգնութեամբ դէմ կեցաւ և յաղթեց Ա. Խոսրովու Անուշռուանայ։ Այս թագաւորիս համար կ'ըսէ պատմիչն՝ նման քանի մը ուրիշներու՝ թէ մահուան ատեն հաւատաց ի Քրիստոս ու մկրտեցաւ։*

⁂

Ասկէ ետեւ ոճով կը պատմէ Սեբէոս անոր որդւոյն Որմզդի անխոհեմ նախանձն ի վերայ քաջ զօրավարին Վահրամայ՝ որ յաղթեր էր Մազքթաց. և ասոր ապստամբելն, և առ Հայոց Մուշեղ Մամիկոնեան սպարապետն ալ գրել ու յորդորելն որ իր հետ միանայ. բայց Հայք, Յոյնք և Պարսիկք միաբանին ընդ Խոսրովայ Ապրուէզի՝ որ կը թագաւորէ փոխանակ հօրը՝ Որմզդի սպանելոյ. և միաբանութեամբ կը յաղթեն ապստամբին Վահրամայ։ Խոսրով շնորհակալութեամբ ինքզինքը որդեգիր կը համարէ կայսեր Յունաց (Մօրկայ). բայց կասկածանօք պատիւ չի տար Մուշեղի, որուն երախտապարտ էր՝ իր թշնամւոյն հետ չմիաբանելու համար. Մուշեղ ալ գժարած՝ կ'իմանայ Խոսրովայ թեթեւամտութիւնը և կը գուշակէ որ ժամանակաւ Յունաց ալ ապերախտ ու վնասակար պիտի ըլլայ. և խորհուրդ կու տայ որ վերցնեն զայն ալ՝ բայց Յոյնք չեն հաւանիր ու զգուշութեան համար Մուշեղ կը կանչուի կայսեր քով։ Յունաց և Պարսից մէջ խաղաղութիւն կ'ըլլայ. զոր և անխռով պահելու համար՝ Հայոց կտրիճ իշխանաց միջէն կասկածաւորները և երբեմն անկասկածելիներն ալ կը ջանան տեղերնէն հեռացնել։ Յոյնք կը ղրկեն զանոնք ընդդէմ Բուլղարաց ի պատերազմ։ Սմբատ Բագրատունի Բազմայաղթն՝ Հայոց դիւցազանց և հսկայից մէկն, այս վտանգին մէջ չիյնկնալ ուզելով՝ աւելի մեծ վտանգներու կ'իյնկնայ Յունաց ձեռքը. և երկրորդ անգամ մ'ալ բաղդով ազատելով կ'ապաւինի առ Խոսրով, և մեծամեծ քաջութիւններով անուանի եղած՝ Վրկան աշխարհին մարզպան կ'ըլլայ, Հայոց շինութեան և խաղաղութեան պատճառ, և Պարսից մէջ թագաւորէն վերջ երկրորդ մեծ իշխան, և լի փառօք կը մեռնի հոն։ Փառաց արժանի կը համարուի իր Վարազտիրոց որդին, որ յետոյ կ'անցնի ի Յունաց կողմն, և ուրիշ Հայ նախարարաց հետ կասկածելի կ'ըլլայ, որոց ոմանք անխոհեմութեամբ ալ գործելով՝ յերաւի կը պատժուին։

---

[1] *«Արդ թէ պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ և Ստեփաննոսի Տարօնացւոյ հաւատի և ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաչել»։* (Ի տպագրին Բ. տպագրութեան)։

Խոսրով լսելով Մօրկայ սպանութիւնը ի Փոկասայ, իր հայրագրին վրէժն առնուլ կ'ուզէ. պատերազմ կը բանայ ընդդէմ Յունաց, ի ձեռն քաջ զօրավարին Ռազման Խոռեմայ, որ երկար ատեն կը տագնապեցնէ զՅոյնս, շատ երկիրներու տիրելով մինչեւ զԵրուսաղէմ ալ առնելով, ու Քրիստոսի սուրբ Խաչը գերելով և տանելով ի Պարսկաստան։ Այս սրբազան գերութիւնը դարձնելու և Յունաց կորանքը կանգնելու համար՝ Հերակլ սպանելով զՓոկաս և յաջորդելով, Պարսից դէմ կ'ելլայ և մինչեւ իրենց մայրաքաղաքը կը հասնի։ Խոսրով կը սպանուի ի Պարսից, տեղը կը դրուի Կաւատ և յետոյ այլք. որոց հետ հաշտութիւն կ'ընեն Յոյնք։ Հերակլ ետ կը դառնայ, սուրբ Խաչն ալ կը դարձնէ իր տեղը։

Այս գլխաւոր գործէն զատ Սեբէոս կը պատմէ Պարսից վերջին տկար ժամանակն ու Սասանեանց 400 տարուան ահարկու տէրութեան վերջանալն՝ աւելի զօրաւոր տէրութեան ձեռքով, որ է Մահմէտի հաստատածը. կը պատմէ ասոր ծագումն և առաջին զօրավարաց ու յաջորդաց պատերազմներ և աշխարհակալութիւնքն ի Յոյնս, ի Պարսս և ի Հայս. մինչեւ ցամ Տեառն 660. յիշելով այն ատեններուն Հայ իշխանաց գործերն ալ, որոց գլխաւորքն են նախայիշեալ Վարազտիրոցն, իւր որդին Սմբատ, և Թէոդորոս Ռշտունի։

Քաղաքական դէպքերէ զատ կը պատմէ Սեբէոս եկեղեցական խնդիրն ալ՝ Հայոց և Յունաց հետ միաբանութեան համար, ստիպմամբ Կոստանդ կայսեր, Հայոց ժողովն ի Դուին և առ կայսրն պատասխանն։ Իսկ Եզրի ատեն հանդիպածը հազիւ կը յիշէ։ Երուսաղեմի առումէն վերջն ալ հոն պատրիարքի տեղ դրուած Մոդեստոսի թուղթ մը մէջ կը բերէ առ Կոմիտաս կաթուղիկոս մեր և ասոր պատասխանը[1]. թէ ասոր և թէ ուրիշ կաթուղիկոսաց գործերն ալ համառօտիւ կը յիշէ պատմիչս։

[1] Այս թուղթն ալ աւելցնելու է Կոմիտասայ կաթուղիկոսի ուրիշ հարազատ գրուածոց հետ՝ զոր յիշեցինք գրուածքիս մէջ յէջ 425։

⁂

Սեբէոսի ոճն և պատմական արժէքը. — Սեբէոսի լեզուն մերձաւոր է մեր մատենագրութեան ոսկի դարուն հեղինակաց. դեռ կը պահէ այն նուիրական հնութեան ոճն ու պարզութիւնը, որ յաջորդ դարուն մէջ կը խառնուի արաբական բազմաբանութեան: Պատմելու եղանակին մէջ ալ ընդհանրապէս համառօտ և ուժով երագութիւն մ'ունի, որ կարծես թէ իր դիւցազին՝ Հերակլ կայսեր՝ արագարագ արշաւանաց կ'ուզէ նմանցնել: Առանց երկար խորհրդածելու՝ իրաց և անձանց որոշ և ճշգրիտ կերպարանքը կը յայտնէ, անկողմնասէր կամ անաչառ տեսութեամբ, որ ինչպէս ամէն պատմչի կը վայլէ՝ մեր հին պատմչաց այլ ձիրքն է, բայց դժբաղդաբար ոչ յետնոց ալ: Ի ժամանակագրութեան թէ և տեղ տեղ կը յիշէ Յունաց կամ Պարսից թագաւորին թագաւորութեան տարին, բայց ոչ ամէն տեղ, և ոչ ալ Հայոց թուականը կը բանեցնէ. որով ամէն պատմածին տարին որոշ չի գուշակուիր, և մութ կը մնայ մանաւանդ երբ այն դիպուածներն ուրիշ պատմիչներէ յիշուած չըլլան: Կան ալ այնպիսի դիպուածներ. և ասոնք են ըստ պատմականին աւելի արժէք տուողն Սեբէոսի պատմութեան, ուսկից առած են շատ բան Ժ դարու պատմիչքն, Յովհաննէս կաթուղիկոս, Թովմա Արծրունի և այլք. և կան քանի մը կարեւոր ազգային դիպուածք՝ որ ուրիշներէ յիշուած չեն, և ոչ ալ դեռ մեր ընդհանուր պատմութեան մէջ անցած: Հերակլ կայսեր արշաւանաց մէջ ալ՝ թէ և շատ բան յիշուած է ի Բիւզանդացւոց, բայց կան նոր և կարեւոր գիտելիք տեղեաց և գործոց, որ արեւելեան կայսրութեան և արեւելից պատմութեան այն ժամանակին պիտանի լոյս կ'ընծայեն, և պէտք է որ պատմասէրք յարգեն զանոնք:

Սեբէոսի պատմութիւնը տպագրած է ի Կոստանդնուպոլիս յամին 1851 բանասէրն Թադէոս Միհրդատ Միհրդատեանց, բաղդատութեամբ երկուց օրինակաց, մէկն գրուած յամի 1568, միւսն 1572. Ռուսերէն ալ թարգմանած և տպագրած է ծանօթութեամբք ի Փեթրպուրկ, յամի 1862, աշխատասիրութեամբ գիտնական ազգայնոյ Ք. Պատկանեան, որ ի 1879 հայ բնագրին երկրորդ տպագրութիւն մ'ալ հրատարակեց նոյն քաղաքին մէջ. Այս երկրորդ տպագրին մէջ՝ որ ըստ ընթերցուածոյն էական տարբերութիւն մը չունի յառաջնոյն, նշանակուած են այն ամէն հատուածներն՝ որ ի Սեբէոսէ ետք եկող պատմագրաց փոխ առնուած են ի գրոց նորա, առ Թովմայի Արծրունւոյ, Յովհաննու կաթուղիկոսի, Ստեփաննոսի Տարօնեցւոյ և Վարդանայ.

Պատկանեանի ռուսերէն թարգմանութենէն զատ, Հիւպշման գերմանացի հայագէտը մասնական թարգմանութիւն և տեսութիւն մը հրատարակած է. Zur Geschichte Armeniens und der ersten Kreige der Araber. Aus dem Armenischen der Sebeos, von D.r H. Hübschmann. Տիւլորիէ զաղղիացին այլ և այլ թարգմանութիւններ ըրած է Սեբէոսի գրքէն իր Recherches sur la Chrononologie arménienne գրոց մէջ.

* * *

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ

Կաղանկատուացի և իր ժամանակը։ — Պատմութեան նիւթը։ — Աղուանք և իրենց ծագումը և յառաջադիմութիւնը։ — Իրենց նոր հարստութիւնը։ — Կաղանկատուացւոյն պատմական արժէքն և ոճը։ — Մատենագրական լեզուն։ — Շարունակութիւն պատմութեանն Աղուանից։ — Կաղանկատուացւոյն գրոց տպագրութիւնք ի հայ և յօտար լեզուս, և քննադատական տեսութիւնք։

Դարուս մատենագրաց նշանաւորներէն մէկը և պատմըչաց ամենէն նշանաւորն է Մովսէս Կաղանկատուացի, որ Սեբէոսի նման՝ մինչև՝ անկէ քառասուն կամ յիսուն տարի առաջ՝ շատոնց անծանօթ մնացած և կորսուած կը համարուէր. և միայն ի նախնեաց կը յիշուէր ի շարս պատմչաց, թէպէտ և անոնց իսկ շատերուն ալ շատ ծանօթ եղած պիտի չըլլայ, որովհետև անկէ ոչ վկայութիւն մը կը բերեն, և ոչ ալ ստոյգ ժամանակը գիտեն. այլ ոմանք ճշմարտապէս այս Է դարուս կը ցուցնեն, և ոմանք տասներորդ դարուն. քանի որ իր անուամբ ընծայուած գրոց պատմութիւնն՝ մինչև Ժ դարուն վերջերը կը հասնի. յորմէ նաև հիմակուան բանասիրաց ոմանք ալ Ժ դարու հեղինակ կը համարեն զսա, մանաւորապէս Մխիթարայ Այրիվանեցւոյ ժամանակագրութեան խօսքին նայելով, որ ՆԼ և ՆԾ (980–1000) թուականաց մէջ կը դնէ, ըսելով. «Աստ Աղուանից պատմագիր Մովսէս Կաղանկատուացի, և Գրիգոր Նարեկացի», և այլն։ Թէ և նոյն ինքն Մխիթար ուրիշ տեղ՝ ի շարս պատմագրաց Հայոց, աւելի վեր կը դնէ զսա, յառաջ քան զՂևոնդ՝ և զՅովհաննէս կաթողիկոս։ Արդ մենք աներկբայ ենք որ բուն Աղուանից պատմիչն Մովսէս էր ի Կաղանկատուք գեղէ ընիկ Ուտի գաւառին, և Պարտաւ մայրաքաղաքի ու Տրտու գետոյն մօտ (որ հիմայ Թարթառ կ'ըսուի), իսկ գիւղն ալ ըստ ծանօթից այն կողմերուն՝ հիմայ Պարունկաթաղ կամ Վարունկաթաղ կ'ըսուի եղեր. և եօթներորդ դարու մէջ մեռած է, հաւանօրէն և ծնած։ Աղուանից Վիրոյ կաթողիկոսին քով՝ փոքրաւորի պէս կ'երևի՝ անոր հետ Խազրաց բանակը գացած ատեն յամի 629. վասն զի իբրև ականատես կը նկարգրէ և կ'ըսէ. «Անդ տեսաք զբազմոցս նոցա», և այլն։ Իսկ իր պատմութիւնը դադրեցուցած է 683–5 թուականին միջոց. ինչպէս յայտնի է պատմածէն և ոճէն և գրոց բաժանմունքէն, որ երեք գիրք են. երկուքը մեծաւ մասամբ իրենն է հարազատ. երրորդը որ ետեւի երկու կամ երեք հարիւր տարուան դէպքեր կը պատմէ կամ կը յիշէ համառօտաբար, ուրիշի գրած է, որ և իրեն համանուն ըլլալով՝ նոյն մէկ անձն կարծուած է։

⁂

Կաղանկատուացւոյն Պատմութեան նիւթը. — Հին ատեն արևելեան իշխանութիւնքն ալ իրենց ցեղին և իշխանութեան գործոց առանձին յիշատակագիր և պատմիչ ունէին. մեր ազգին մէջ ալ ոչ միայն թագաւորն՝ այլ և գլխաւոր նախարարք իրենց ազգաբանութիւնը և ժամանակագրութիւնը խնամով գրել կու տային. և այսպէս ընդհանուր ազգային պատմութենէ զատ՝ կային այլ և այլ մեծամեծ ցեղերու մասնաւոր պատմութիւնք ալ, ինչպէս Սիւնեաց, Արծրունեաց, Մամիկոնէից, Բագրատունեաց, և այլն. յորոց ոմանք մինչև մեզի հասած են. ասոնց մէջ ամենէն հինն է (բաց յանկատար պատմութենէն Մամիկոնէից կամ մանաւանդ Տարօնոյ) մեր հեղինակին Պատմութիւնն Աղուանից։ Այս ազգս որ հին կովկասեան ազգաց մէջ զօրաւորագոյնն էր, մինչեւ մեծին Պոմպէոսի զէնքերն իր վրայ դարձնել տալու, և ծանօթ Յունաց և Հռոմայեցւոց, կ՚արժէր իր առանձին պատմիչն ունենալ. բայց թէ մինչեւ մեր հեղինակին ժամանակ ունեցե՞ր էր ոճով ժամանակագիր մը, շատ հաւանական չէ. վասն զի կէս լեռնցի և բարբարոս խառնալեզու ազգ մ՚էր. ծագումն ալ ոչ շատ ծանօթ. սակայն մերձաւորութեամբ մեր ազգին և ազգախառնութեամբ՝ ընտելացած քաղաքական օրինաց, եւս առաւել քրիստոնէական կրօնից ընդունելութեամբ. զոր թէպէտ և անմիջապէս առաքելոց աշակերտաց քարոզութեամբ ընդունած էր, ըստ աւանդութեան Պատմչիս և այլոց, այլ շուտով խափանուած էր սուրբ կրօնքն, մինչեւ մեր Լուսաւորիչն Գրիգորիոս անոնց ալ կրկին լուսատու եղաւ, և իր համանուն թոռը անոնց առաջին կաթողիկոս դրաւ. յետոյ մեր ուսմանց լուսատու կամ դպրութեանց հայր Ս. Մեսրոպ՝ նոյնպէս եղաւ անոնց ալ, գրեր ստեղծելով, թարգմանութիւն ընելով Ս. Գրոց, և ալխազուր լեզունին կանոնաւորելով ըստ կարելւոյն։ Այն ատենները մեր ազգային տէրութիւնը տկարացած և վերջին շունչն հասած էր. իսկ Աղուանք՝ իրենցմէ աւելի հիւսիսային և հեթանոս կովկասաբնակներէն նեղուած՝ իրենց լեռներէն իջնելով անցեր էին Կուր գետը, և Հայոց Ուտի, Փայտակարան և Արցախ նահանգաց՝ քիչ շատ տիրած, որոնց վրայ իշխեցին նաեւ յետագայ դարուց մէջ՝ իրենց այլ և այլ իշխանական հարստութեամբք, մինչեւ գրեթէ յ՚ԺԲ և ԺԳ դար. և բոլոր այս իշխանութեան այն հին հայկական նահանգներն՝ կոչուեցան Աղուանք կամ Աշխարհ Աղուանից, փոխանակ լեռնային և կովկասեան աշխարհին, ուր Քրիստոսի գալստենէն դարերով առաջ ալ հին Աղուանք թագաւորութիւն ունէին. Ե, Զ, Է դարերն են նոր Աղուանից ծաղկած և վայելուչ ժամանակն, որոց

վերջերը մեր հեղինակն՝ ականատես մեծամեծ քաղաքական դիպուածոց և իր դիւցազնացուցեալ Ջուանշէր իշխանապետին, շարժեցաւ գրելու իր ազգին պատմութիւնը. թէ և ճիշդ ըսելով՝ այն ատեն Աղուանք կոչեցելոց մեծ մասն Հայք էին, և հայերէն կատարուէին կրօնական և քաղաքական մեծ պաշտամունք. իսկ Աղուան լեզուն երթալով կը նուազէր, թէ և մինչեւ հիմայ կը լսուի քանի մը տեղ՝ Կուր գետոյն երկու կողմն ալ, և Ուտիք կամ Ուտէացւոց լեզու կ՚ըսուի։ Ս. Մեսրոպայ քարոզութիւնը յիշող հեղինակաց անուանեալ Գարգարացւոց, Գարգմանաց, Ուտէացւոց և Աղուանից լեզուքն՝ ամենն ալ նոյն կը համարուին, և հիմկու մնացորդէն անտարակոյս կ՚ըլլայ՝ որ անոնց վկայածին համեմատ՝ խեցբեկ, կոկորդախօս, ալխազուր լեզու մ՚էր, և անարժան կիրթ մտաց գործածութեան։ Այս պատճառներով գրեթէ հարկ էր որ Կաղանկատուացին ալ իր պատմութիւնը հայերէն գրէր. ինքն իսկ ազգաւ Հայ էր՝ Ուտէացի ըլլալովն. իսկ Ուտիք և մերձակայ գաւառաց բնակիչք՝ ըստ մեր պատմչաց աւանդութեան, և նոյն իսկ հեղինակիս, սերեալ են յԱռանայ, զոր Վաղարշակ առաջին թագաւոր մեր՝ կարգեց վերակացու կամ իշխանապետ Աղուանից. և անկէ կը սկսի մեր հեղինակն ալ իր աշխարհին իշխանաց կամ թագաւորաց ազգաբանութիւնը կամ շարակարգութիւնը. վկայելով ընդ Խորենացւոյն՝ որ յիշեալ Առանն այր էր ի ցեղէ Սիսակայ Հայկազնոյ՝ յորմէ և Սիւնիք. իսկ անկէ (Առանէն) առաջ Աղուանից պատմութեան համար, կը խոստովանի որ «չունիմ ինչ ասել զատոյգն ի պէտս լսողաց, մինչեւ ցՎաղարշակ արքայն Հայոց»։

Թէպէտ անկեղծ և խոհեմական խոստովանութիւն, այլ և ցուցնէ թէ որչափ նուազ էր Աղուանից Մովսէս պատմչին հմտութիւնն քան զՀայոց պատմչին Մովսիսի Խորենացւոյ, որ Վաղարշակէ առաջ ալ իր ազգին պատմութիւնը գտեր էր մինչեւ ի նահապետաց դարն և ի ջրհեղեղն հանելով, և Հայկազանց ատենն ալ կը յիշէ զԱղուանս։ Կաղանկատուացին յուսահատելով այս հին ժամանակներէն լոյս հանել՝ իր Պատմութեան (որ երկու գիրք բաժնած է) սկիզբը՝ երեք գլուխ համառօտիւ կը կարգէ նահապետաց անուանքն և թուականը, սկսեալ յԱդամայ. յետոյ Նոյի երից որդւոց ցեղերը, և թէ ո՛ր ազգեր գիր ու դպրութիւն ունին. այս կարճ և անկատար յիշատակներն ալ առած է իրմէ առաջ թարգմանուածներէ, և Յունաց զատկական ըսուած ժամանակագրութենէն։ Չորրորդ գլխոյն մէջ կ'իմացնէ վերն ըսածնիս վասն Առանայ, և թէ ի Սիսակայ էր, և սա ալ ի Յաբեթայ։ Հինգերորդ՝ քանի մը տող կարճ գլխով՝ կ'իմացնէ Աղուանից աշխարհին բնական դիրքը և բերքը. զոր արժան էր երկարօրէն նկարագրել, և դժուար ալ չէր իրեն։ Յաջորդ գլխով կը խոստովանի դարձեալ թէ նաև յԱռանայ մինչև ի Վաչագան թագաւոր՝ «պատմութիւն ճշմարիտ... այլ ինչ ոչ գտաք». և չգտնելուն պատճառն ալ կու տայ (ետեւի գլխուն մէջ), թէպէտ «յոյժ ցանկալի էր ըստ կարգաց գիտել զպատմածս որ ինչ յԱռանայ նախադասութենէն ցայսօր գործք. բայց արեւելեայցս բազմազգութիւն ամբոխեալ ցուցանէ զորպէսն, և կտակարանացն հրկիզութիւնք։ Սակայն յայսմ վայրի նպաստաւորէ մեզ քերթողահայրն Մովսէս՝ զպատերազմելն Արտաւազդայ (Ա) ընդ Հռովմայեցիսն», և այլն։ Եւ կարճ խօսքով կը յիշէ որ Աղուանք ալ օգնական էին Հայոց այն պատերազմին մէջ։ Յետոյ ջանալով կը գտնէ ուրիշ պատմական մանաւանդ կրօնական դիպուածներ ալ, Քրիստոսի առաջին հինգ դարուց մէջ, և նախ քան զՎաչագան եղած, և կարգաւ կամ ետեւ առաջ կը յիշէ զանոնք. շատ տեղ իրմէ առաջ գտած յիշատակագրութիւնքն օրինակելով։ Այսպէս են Թադէոս առաքելոյ աշակերտ Եղիշէի գալն և զԱղուանս լուսաւորելն քրիստոնէութեամբ, իր նահատակիլն, և յետ ժամանակաց նշխարացը յայտնուիլն. Ուռնայր թագաւորի հաւատալն ի Քրիստոս, և մկրտիլն ի Ս. Լուսաւորչէն մերմէ. Տրդատայ և իր յաջորդաց գործերն յԱղուանս. Գրիգորիսի հայրապետ կարգիլն Աղուանից, և նահատակիլն ի Մազքթաց. և իր և իրեն բերած սրբոց նշխարաց ծածկուիլն ու Վաչագանայ ատեն յայտնուիլն. ասոր հօր Վաչէ թագաւորին տկարանալն ի հաւատս և դարձեալ զօրանալն, և Գիւտ կաթուղիկոսին առ նա գրած թուղթն, որոյ համար պարտական եմք հեղինակիս։ Որ և հոս հանելով՝ նորէն (գլ. ԺԵ.) Յաբեթէն սկսեալ Հայոց նահապետներ և Հայկազուն թագաւորները կ'անուանէ. կը յիշէ զԱռան ի նոյն Հայկազանց. և ապա Արշակունեաց ցեղէն թագաւոր մը Աղուանից՝ Վաչագան քաջ, որ իբրև Գ. դարուն կիսուն թագաւորած կ'երեւի, և անոր պայազատները կը համրէ՝ մինչև յ'Գ. և մեծն Վաչագան, որ կ'ըլլայ տասներորդ ի թագաւորս, և Ե դարուն վերջերն իշխանութեան հասած։ Ասոր գործերը մանրամասն կը պատմէ (ԺԶ–ԻԶ գլխոց մէջ), թէ քաղաքաշինութեան, թէ ուսմանց զարգացման և թէ մանաւանդ կրօնական բարեկարգութեանց, հեթանոսութեան հետքը ջնջելով, եկեղեցիներ շինելով, ժողովք մ'ընելով ի Պարտաւ, Գրիգորիսի և ուրիշ սրբոց անյայտ եղած նշխարքները փնտռել տալով։ Շատ հետաքննական է Աղուանից քրմաց մասնաւորութեան հեթանոսական և անգութ սովորութիւնը՝ զոր ջնջեց Վաչագան։ Այս թագաւորիս գործերը յիշելէն վերջ՝ կ'անցնի պատմիչն Ս. Մեսրովպայ քարոզութեան յԱղուանս, և անոր աշակերտաց բնակութեանն ի Ջղախ (Խաչենու կողմերը), և նահատակուիլն ի Հոնաց՝ որ հոն արշաւեր էին, զորս և Եզեկիէլ մարգարէին տուած անուամբ Ռոսմոսոքեան և Թոբելական զօրք կ'անուանէ, ասոնց զօրավարին հաւատալն ի Քրիստոս և նահատակիլն։ Հոս կը լմննայ Ա. գիրք պատմութեանն. թէպէտ և Երկրորդին առաջին գլխոց մէջ ալ դարձեալ Մեսրովպայ յիշատակ կ'ըլլայ և անկէ առաջ Վարդանանց, զորս հարկ էր յիշել նախ քան զգործս Վաչագանայ. յայտնապէս շփոթութիւն կայ գլխակարգու-

թեանց մէջ, նաեւ պակասութիւն գրոցն. վասն զի ոչ Վաչագանայ մահն և ոչ յաջորդքն կը յիշուին, այլ պատմութիւնն կ'անցնի ի կէս Զ դարու, ի սկիզբն Հայոց թուականին, երբոր Աբաս կաթուղիկոս նստաւ Աղուանից և աթոռն ի Չոլայ՝ փոխեց ի Պարտաւ, ուր և ժողովով մերժեց աղանդաւորները, որոց համար գրեր էր առ նա կաթուղիկոսն Հայոց: Անկից ալ դարձեալ 75 տարուան միջոց մ'անցնելով՝ կու գայ իր ժամանակ՝ զինքն ափշեցնող դիպուածները պատմելու, ինչպէս ինքնին կը վկայէ (գլ. Թ.) խոստովանելով թէ «Մոռացայ զկարգ բանին». և կը սկսի Քրիստոսի 625 թուականէն պատմել Պարսից Բ Խոսրովու և Հերակլ կայսեր պատերազմները, Յունաց տկարանալը և օգնութիւն խնդրելը ի Խազրաց, որք կ'արշաւեն ի Վիրս և յԱղուանս. երկու կողմէն նեղեալ Խոսրով՝ իր բնիկ ազգէն, ընտանիքէն և յորդւոցն ալ կը մերժուի ու կը սպանուի. այս ողբերգական դէպքը ճարտար կերպով կը պատմէ հեղինակս (գլ. ԺԳ.): Խոսրովայ սպանութեամբ իր բռնութենէն գերեալ և կապեալքն կ'արձակին. ասոնցմէ է Աղուանից կաթուղիկոսն ալ Վիրոյ, որ երկար տարիներու տառապանքէ ետքը՝ կը դառնայ իր եկեղեցին բարեկարգելու. բայց Խազիրք իր հայրենիքը պաշարած են, կը ստիպուի իբրեւ գերի երթալու անոնց ահաւոր խաքանին որդւոյն բանակը, և պատիւ գտնելով կը դառնայ տեղը: Այս ուղեգնացութեան ընկեր էր մեր պատմիչն ալ, որ շատ հետաքննական և պիտանի տեղեկութիւններ կու տայ այն ատենուան ամենէն զօրաւոր ազգին՝ Խազրաց վրայօք:

*
* *

Ասոնք յիշելէն ետեւ կը սկսի Աղուանից Նոր հարըստութեան պատմութիւնը, որ նոյն վերյիշեալ Խոսրովու Միհրան անուն ազգականաց մէկէն առաջ եկած է, անոր համար Միհրական ցեղ կ'ըսուի. որ և նախ փախչելով ի Խոսրովայ, վերջը անոր հաւանութեամբ կը բնակի մեր Գարդման գաւառը՝ 30000 տուն հետը բերած, որովք կը զօրանայ. մինչեւ իր թոռնորդին Վարդան՝ խարդախութեամբ կը ջնջէ Աղուանից թագաւորաց ցեղը՝ որ Առանշահիկ կ'ըսուէր, և ինքը կը տիրանայ. ասոր թոռը Վարազ՝ կ'ընդունի գերիշխանութիւն մկրտուելով ի Վիրոյէ, և կը կոչուի Վարազ-Գրիգոր. ասոր որդին է Ջուանշէր քաջն և մեր պատմչին դիւցազնը, որոյ գործերը երկար կը պատմէ: Արժանի իսկ մտադրութեան. դժուար դրից և ժամանակի մէջ ըլլալով՝ յորում չորս մեծամեծ տէրութեանց հետ վարուելու էր, որ են Պարսիկք, Յոյնք, Խազիրք և նոր տիրապետող Արաբացիք. ամենուն հետ ալ ճարտարութեամբ կը յարմարի Ջուանշէր, ամենուն իշխողաց քով ալ կ'երթայ զանազան անգամ, ամենուն սիրտը կը շահի, ամենէն ալ մեծ պատիւ և ընծաներ առնելով ուրախ կը դառնայ իր աշխարհը շինելու շէնցնելու. եկեղեցեաց շինութեան և բարեկարգութեան ալ պարապելով՝ օգնական կ'ունենայ պաշտօնասէր եպիսկոպոսներ և քահանաներ, որոց աղօթիւք և ջանիւք կը յայտնուին Ս. Մեսրովպայ աշակերտաց ծածկած նշխարները և խաչը. որոց համար եկեղեցիք կը շինուին: Բայց յամենայնի բարեբաղդն Ջուանշէր՝ դժբաղդ վախճան մը կ'ունենայ՝ դաւաճանութեամբ սպանուելով. զոր ոչ միայն կենդանի կերպով կը նկարագրէ պատմիչը, այլ և մէջ կը բերէ քերթողական ողբ մը՝ զոր երգեց «ճարտասան ոմն ի մէջ անցեալ՝ որ տեղեակ էր արհեստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ, հնարագիւտական վարժիւք յաջողակ, և վերծանական քերթութեամբ յառաջադէմ.... սկսաւ նա երգել ըստ այփափետաց գլխակարգութեանց զողբս զայս», և այլն. զոր յետոյ առանձինն կը յիշենք: Ջուանշէրի կը յաջորդէ եղբօրորդին՝ Վարազ-Տրդատ, զոր կը նեղեն հոնք արշաւանօք, իբր թէ ի վրէժ մահուան հօրեղբօրը. իսկ նա խորհրդակցութեամբ իշխանաց և կաթուղիկոսին՝ պատգամաւոր կը ղրկէ մինչեւ ի Վառաչան մայրաքաղաք Հոնաց (Թարքուի մօտ) Մեծկուենաց գաւառին եպիսկոպոսը՝ Իսրայէլ, որ սրբութեամբ վարուց և ճգնութեամբ անուանի եղած էր շատոնց. Իսրայէլ ոչ միայն հաշտութեան դաշինք հաստատել կու տայ, այլ և զբազումս ի Հոնաց կը դարձնէ ի քրիստոնէութիւն իրենց ծառապաշտութենէն և Թանգրի-Խան հսկայ չաստուածի պաշտամանէն. մինչև թագաւորն Հոնաց ինքնին եկեղեցիներ կանգնել կու տայ, և կը խնդրէ յԱղուանից և ի Հայոց կաթուղիկոսէն՝ որ զԻսրայէլ իրենց հովիւ տան: Աղուանք շատ դժուարութեամբ և վախով կը հաւանին, բայց խնդրելով որ երբեմն երբեմն իրենց ալ այցելութիւն ընէ սիրելի եպիսկոպոսն:

Հոս (Գլ. ԽԵ.) կը լմննայ ըստ մեզ Կաղանկատուացւոյն պատմութիւնն. իսկ Բ գրոց ետքի գլուխները (ԽԶ-Ծ.) որ կրօնական խնդրոց վրայ գրուածներ են, կամ կարգէ դուրս գրուած են, և կամ աւելի հաւանորէն՝ ուրիշէ աւելցուցած են. մանաւանդ որ մէկուն մէջ (ԽԸ.) մինչև Ը դարու վերջերուն յիշատակ կայ: Վերջին երկու գլուխներն (ԾԱ, ԾԲ.) Երուսաղէմի եկեղեցեաց և Աղուանից անուամբ հոն եղած վանաց յիշատակն են, որք անդէպ չեն մեր պատմչէն կարգած ըլլալ ի լրումն պատմութեան Աղուանից:

⁂

Կաղանկատուացւոյն պատմական արժէքը, և. ռձը. — Նախագրեալ համառօտութենէս կ'իմացուի որ պատմիչս մասնաւոր ազգի կամ ցեղի մը դիպուածներ պատմելով, և անոր հետ հիւսիսային Կովկասեան ազգաց և մանաւանդ Հոնաց վրայ տեղեկութիւններ տալով, աներկբայապէս շատ հետաքննելի և պիտանի գրուած մը թողած է. և հարկ է ընդհանուր պատմչի մը՝ առ նա դիմել այս տեղեաց և ժամանակաց վրայ գրելու համար. զոր և ոչ ուրիշ

մէկն գրած է, կամ մեզի հասուցած: Այս ծանօթութիւններս ալ աւելի յարգ մ'առին հիմայ Ռուսաց տիրելովն Աղուանից և Հոնաց աշխարհաց վրայ, և Փեթրպուրկի ճեմարանին քննասէր ուսումնականք շատ լոյս պիտի առնուն ի Կաղանկատուացւոյն, շնորհապարտ ըլլալով թէ հեղինակին և թէ անոր ռուսերէն թարգմանչին, մերազգի բանասիրի Ք. Պատկանեան: Սեբէոսի պէս ժամանակակից ըլլալով Է դարուն կիսուն հանդիպած մեծ յեղափոխութեան, Սասանեանց տէրութեան կործանելուն և Արաբացւոց կանգնելուն, կարեւոր են Մովսէսի պատմածներն ալ գոնէ իբրև վստահելի հաստատութիւն մը ուրիշներուն պատմածին: Մեր ազգային պատմութեան գալով, աւելի եկեղեցական դիպուածոց տեղեկութիւն կ'առնումք հեղինակէս քան քաղաքական. և թերևս երկուքէն աւելի՝ մատենագրական. վասն զի ոչ միայն Ս. Մեսրովպայ և աշակերտացը վրայ նոր ծանօթութիւններ կու տայ, այլ և ոչ սակաւ Ե, Զ, Է դարուց Հայոց հեղինակաց թղթեր և գրուածներ կ'աւանդէ մեզի, զոր ուրիշ տեղէ չունէինք. այսպիսիք են Թուղթքն Գիւտայ, Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի, Մաթէի երիցու առ Վաչագան, Յովհաննու կաթուղիկոսի Հայոց առ Աբաս կաթուղիկոս Աղուանից, Աբրահամու կաթուղիկոսի թուղթն, Յոհ. Մայրագոմեցւոյ գրուածն վասն Պատկերաց պաշտաման, և այլն: Ասոնց կարգը, և թերևս աւելի վեր դնելու է վասն նորութեանն և աշխուժին՝ վերոյիշեալ Դաւթակայ ողբն ի Ջուանշէր, այբուբենից գլխակարգութեամբ տնատեալ, ըստ ոճոյ Կոմիտաս կաթուղիկոսին երգած Հռիփսիմեանց Անձինք չարականին. քան զոր աւելի ազատ և արձակ կ'երևի Դաւթակայ ողբերգս, բայց ոչ ինչ ընդհատ ներդաշնակ և արուեստաւոր: Արժան է յիշել՝ որ ձեռագրաց ոմանց մէջ մինչև ի Ճ տառն կը հասնի ողբս, իսկ ոմանց մէջ մինչև ի Ք հասուցած է. սակայն այս երկրորդ մասն առաջինին չի նմանիր, և յայտնապէս օտար և նոր գրչի հիւսուած է: Հեղինակին հմտութեան գալով՝ շատ ընդարձակ ասպարիզի տէր չէ, և ոչ յունական լեզուի և դպրութեանց հետամուտ. սխալ կարծեացը մէջ նշանակելի է Ալանաց և Աղուանից շփոթութիւն (Ա. գիրք, Ը գլ.), մեր Բ Արտաշիսի պատերազմը և Սաթինկան խնամութիւնը պատմելու ատեն: Ուրիշ կողմանէ՝ բաւական անաչառ և ուղղական ոգի և լեզու կը բանեցնէ, առանց երկար և բարակ խելամտութեանց:

⁂

Ըստ ոճոյ մատենագրութեան՝ Կաղանկատուացւոյն լեզուն յստակ և հարուստ է, և դեռ առաջին ընտիր դարուց հայկաբանութիւնը կը փայլէ ի նմա, բայց ոչ բոլորովին. վասն զի տեղ տեղ, թէ և քիչ, մթաբանութիւն ունի, և աւելի շատ տեղ ճոխաբանութիւն մը, որ թէպէտ իրմէ վերջիններուն պէս չափազանց չէ, բայց և ոչ առաջնոց չափ ճշդած և սքանչելի պարզութեամբ: Ի վերայ այսր ամենայնի՝ կենդանի և վառվռուն զրուցուածք մ'ունի, և աշխոյժ ու գրեթէ բանաստեղծական նկարագրութիւններ՝ ուր որ նորանշան բան մը տեսնէ կամ երեւակայութիւնն գրգռի. ինչպէս Պարսից յետին և Հագարացւոց առաջին դիպուածները պատմել սկսելու ատեն (Բ. Թ.) կամ Ջուանշէրի՝ Խալիֆայէն առած ու բերած ընծաները տեսնելով, որ են պապկայն (թութակ,) փիղն ու տաճիկ երիվարներ, զորս զմայլմամբ և ճշգրիտ երեւոյթներով կը նկարագրէ: Խոսրովու և Ջուանշէրի սպանութիւններն ալ աղէկ և սրտառուչ պատմուած են, բայց ետքինին մէջ մթաբանութիւններ կան. Հոնաց և Խազրաց սովորութիւններն ալ թէ ըստ նորութեանն և թէ ըստ գրութեանն հաճոյ են կարդալու:

⁂

Շարունակութիւն պատմութեանն Աղուանից. — Ինչպէս ի սկզբան ըսինք՝ Կաղանկատուացւոյն պատմութեան ետեւը Գ. գիրք մ'ալ աւելցուցած է 23 գլխով. որ համառօտ և աւելի ստորին ոճով՝ Աղուանից յետագայ դիպուածները կը պատմեն, մինչեւ ի կէս Ժ. դարու կամ աւելի անդին: Բայց սկզբի գլխոց մէջ հեղինակն Մահմէտի ծագման և անոր յաջորդաց պատմութիւնը կ'ընէ. յետոյ կրօնական դէպքերու կ'անցնի որ ի սկիզբն Ը դարու հանդիպեցան, պատճառաւ Աղուանից կաթուղիկոսին ընդունելուն զժողովն Քաղկեդոնի և Հայոց Եղիա կաթուղիկոսին գալուն յԱղուանս և ուրիշ կաթուղիկոս դնելը, և ասոնց ըրած ժողովները: Յետոյ կը պատմէ (ուսկից որ Կաղանկատուացին լռեր էր) Վարազ-Տրդատ իշխանապետին երթալն և արգելուիլն ի Կոստանդնուպոլիս ու դառնալը հնարագիտութեամբ. նոյնպէս իրեն որդւոց դիպուածն ալ. ապա կը յիշէ Արաբացւոց արշաւանքն ի Հայս և յԱղուանս Է և Ը դարս. և դարձեալ 751 թուականէն մինչեւ Ժ դարուն սկիզբները հանդիպածներն յԱղուանս: Վերջընթեր գլխով մը կը համառօտէ Միհրական Աղուան ցեղին յաջորդութիւնն և անոր խնամենալն ընդ Սիւնեաց, և առ սոսա անցնիլն Աղուանից իշխանութեան, որ և ի թագաւորութիւն փոխեցաւ յիշխանութեան Յովհաննու Սենեքերիմայ, յետ կիսոյ Ժ. դարու: Վերջին գլուխն է Աղուանից կաթուղիկոսաց կարգը, որ և կը հասնի մինչեւ ի վերջ Ժ դարու, յորում դեռ կը թագաւորէր Յովհ. Սենեքերիմ: Արդ թէ ասկից ալ, թէ Մխ. Այրիվանեցւոյն ըսածէն յայտնի է՝ որ այս ժամանակս, այսինքն ի վերջ Ժ. դարուն, գրած է զասոնք՝ Աղուանից պատմութեան շարունակողն, որ է անշուշտ **Մովսէս Դասխուրանցի**, յիշեալ յ'ԺԲ դարու հեղինակէ մը:

Աղուանից Պատմութիւնն այլ և այլ օրինակաց բաղդատութեամբ, ծանօթութեամբք և երկար յառաջաբանիւ, Աղուանից վրայ, հրատարակեց տպագրութեամբ ի Փարիզ՝ յամին 1860, Շահնազարեան Կարապետ վարդապետն, որ և իր գրչագրաց հետեւելով Կ—ղ—ն—կ—յ—տ—ւ—ացի կ՚անուանէ։ Նոյն տարին հայկական բնագրին ուրիշ տպագրութիւն մ՚ալ ըրաւ՝ հմուտ բանասէրն Մ. Էմին ի Մոսկուա։ Ռուսերէն թարգմանութիւնն յիշեցինք, տպագրեալ ի Փեթրպուրկ։ Գաղղիական թարգմանութեամբ համառօտութիւն մ՚ալ ի Փարիզ՝ Kalankatouatzi Moïse; Histoire des Aghovans, extrait et traduction du manuscrit arménien, par E. Boré, avec des annotations par M. Vivien de St.-Martin. — Extraits de l'Histoire des Aghovans en arménien; par Mosé Kalankatouatzi; par M. Brosset. St.-Pétersbourg, 1851.

ԴԱՒԻԹ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ

Դաւիթ Բագրեւանդացի։ — Իր անունով գտնուած ճառ մը։ — Իրեն ընծայուած երկասիրութիւն մը։ — Ս. Բարսղի ճառից թարգմանութիւն։

Ներսիսի Շինող հայրապետին կաթողիկոսութեան օրով ծաղկած է նաեւ Դաւիթ անունով մէկը՝ Բագրեւանդ գաւառին Բագաւան գեղջէն, զոր մեծապէս կը գովատէ Ասողիկ՝ իմաստասէր և մեծ փիլիսոփայ կոչելով։ Ասիկայ 648ին ժամանակները՝ Կոստանդ կայսեր հրամանաւ դեսպանութեամբ գնաց ի Հայս, և անոր կողմանէ բերաւ հրովարտակ մը առ Ներսէս կաթողիկոս, և առ եպիսկոպոսունս և առ կիւրապաղատն Սմբատ Վարազտիրոցեան, և ուրիշ իշխաններուն։ Անոնցմէ մէկն՝ Աշոտ պատրիկ, յորդորեց զԴաւիթ՝ որ իւր գիտութեան արժանաւոր գրուածով մը ցուցնէ թէ ինչ կերպով կամ իմաստով ուղղափառապէս կրնայ գրուցուիլ երկու բնութիւն ի Քրիստոս. Բագրեւանդացին ալ ճառ մը շարադրեց, որ մեր ձեռքը ալ հասած է։

Գրչագրաց մէջ ուրիշ գրուած մ՚ալ կայ, Քրիստոսի ներգործութեանց վրայ, այսպիսի խորագրով. «Հարցումն Դաւթի իմաստասիրի», որ թերեւս այս Դաւթի երկասիրութիւնն է և ոչ Անյաղթին. որուն թէ համբաւոյն և թէ գիտութեան արժանաւոր գրուած մը չի կրնար համարուիլ։

Սրբոյն Բարսղի ճառերուն թարգմանութեանց երկաթագիր օրինակի մը մէջ, Քրիստոսի ծննդեան վրայ գրուած ճառին թարգմանութենէն ետքը՝ հետեւեալ ծանօթութիւնը գրուած է. «Դաւիթ թարգման Տարօնացի՝ զճառս զայս յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ, ի Դամասկացւոց քաղաքին, հրամանաւ Համազասպայ կուրապաղատի Մամիկոնէից տեառն»։ Ըստ ոմանց այս Դաւիթս ալ Բագրեւանդացին է։ Իսկ Համազասպ կիւրապաղատին համար մեր ազգային պատմիչք կ՚աւանդեն թէ ընթերցասէր և հմուտ անձ մը եղած ըլլայ։

Ոմանք կը համարին թէ սրբոյն Բարսղի ուրիշ ճառերուն թարգմանութիւնքն ալ՝ սոյն Բագրեւանդացւոյս ձեռքով եղած ըլլան, և ոչ առաջին թարգմանչաց երկասիրութիւն։ Բայց վերը յիշուած յիշատակարանին խօսքը՝ «յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ», ըսել կ՚ուզէ թէ մէկալները կամ շատերն առաջուց թարգմանուած էին։

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

* * *

Անանիա Շիրակացի։ — Իր վարքը։ — Անանիայի գրուածքները։ — Աստեղաբաշխութիւն։ — Շիրակունւոյն աստեղաբաշխական կարծիք և գրութիւն։ — Իր գրուածոց՝ ազգին մէջ ունեցած յարգը։ — Քանանակացութիւն։ — Յաղագս կշռոց և չափուց։ — Անհարազատ և անծանօթ գրուածք Անանիայի անուամբ։ — Ազգային պատմչաց բուռոյն մէջ յիշուիլը։ — Իր ոճը։

Ազգային հին մատենագրութեան պատմութեան մէջ՝ համարողական և թուաբանական գիտութեանց ետեւէ եղող գլխաւոր՝ և թերևս իրեն նման չունեցող անձը՝ Անանիա Շիրակացի կամ Անեցի՝ այս եօթներորդ դարուս մէջ ծաղկեցաւ։ Տղայութեան հասակէն ուսմանց և գիտութեանց չափէ դուրս սէր և եռանդ ունենալով՝ քիչ ատենուան մէջ զարմանալի երևցաւ բարոյական և աստուածաշունչ գրոց գիտութեամբ։ «Բայց ետքը, կ'ըսէ ինքն Շիրակացին՝ իր վարուց պատմութեան մէջ, հասկնալով թէ թուաբանական գիտութիւնքն են մայր ամենայն իմաստից» անոնց ետեւէն սկսաւ ըլլալ[1]։ Տեսնելով որ Հայաստանի մէջ ոչ վարդապետ և ոչ գրուածք կայ այս ուսման՝ ելաւ

Յունաստան երթալու. նախ Թէոդոսուպոլիս կամ Կարին քաղաքը գնաց. հոն Եղիազարոս անունով իմաստուն մարդ մը պատմեց իրեն, թէ Չորրորդ Հայոց մէջ Քրիստոսատուր անունով գիտնական մը կայ. մեկէն քովը երթալով՝ վեց ամիս աշակերտեցաւ անոր. և հասկնալով թէ համբաւոյն համեմատ չէր անոր գիտութիւնը, այլ ասդիէն անդիէն կցկտուր բան մը, ելաւ անկէ Կոստանդնուպոլիս գնաց։ Ուր իրեն ծանօթ մարդիկ խրատեցին զինքը թէ «Որովհետեւ այդչափ դժուարութիւն և ճամբորդութիւններ յանձն առեր ես, գնա Տրապիզոն քաղաքը. հոն Տիւքիկոս անունով մէկը կայ, որուն հզօր գիտութեան համբաւը մինչև թագաւորաց քով հասած է. և աչքովնիս ալ տեսանք որ Կոստանդնուպոլսոյ հայրապետին Փիլագրոս սարկաւագը՝ բազմաթիւ տղաք կը տանէր առ նա յաշակերտութիւն»։ Աս որ լսեց Անանիա, մեծ ուրախութեամբ ելաւ անոր քովը գնաց։ Սիրով և ուրախութեամբ ընդունեցաւ զինքը Տիւքիկոս, և ունեցած ուրիշ ամէն աշակերտներէն աւելի ուրախ եղաւ Շիրակացւոյն վրայ. վասն զի կ'ըսէր թէ «Ատենօք ես ալ շատ կեցեր եմ Հայոց մէջ, և աղէկ գիտեմ թէ որչափ մեծ կարօտութիւն ունին այսպիսի գիտութեան մը»։

Անանիա՝ իր վարդապետին սիրոյն և համարմանն արժանաւոր երևցաւ, կարգէ դուրս յառաջադիմութեամբը. այնպէս որ աշակերտակիցքն սկսան նախանձիլ վրան։ Ութ տարի կեցաւ ի Տրապիզոն, և Տիւքիկոսի քով գտնուած ամէն տեսակ գրքերը, որոնց թարգմանութիւնը չկար մեր ազգին մէջ, կարդաց և հմտացաւ անոնց։

Մեծապէս կը գովէ Անանիա զՏիւքիկոս իր վարպետը. ոչ միայն համարողականին մէջ ունեցած հմտութեանը նկատմամբ, այլ նաև հայկականին. անանկ որ, կ'ըսէ, ո՛ր և իցէ օտար լեզուով գրուած գիրք ձեռքը առնուր՝ իբրև թէ հայերէն լեզուով գրուած ըլլար՝ այնպէս կը կարդար։

Իրմէ համարողական ուսմանց ամէն մասունքը սորվեցաւ Շիրակացին, առանց ուրիշի մը ձեռնտուութեան, այլ միայն իր անխոնջ ջանքովը և անդադար յարատեւութեամբ։ Ետքը նոյն ուսումը բերաւ ի Հայաստան. «Թէպէտ և ոչ ոք եղեւ շնորհակալ իմոյ աշխատութեանս, կ'ըսէ. զի ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտութիւն, այլ ծոյլք են և ձանձրացողք»։ Վասն զի շատերն եկան իր քովը սորվելու համար. և հազիւ թէ քիչ մը բան վերիվերանց սովրելով, բաւական համարեցին այնչափ գիտութիւնը, և սկսան մէկուն մէկալին վարդապետել. և որ դժնդակն էր վար զարնելով թէ զԱնանիա և թէ իր գիտութիւնը։ Այս բանիս վրայ դառնապէս կը գանգատի Շիրակացին։ Սակայն ունեցաւ քանի մը աշակերտք ալ՝ որ մեծապէս օգտուեցան իր գիտութեամբը. և ասոնց մէջ յանուանէ նշանաւոր եղած են Հերմոն, Տրդատ, Աղարիա, Եզեկիէլ և Կիրակոս։

---

[1] Շիրակացւոյն այս հետաքննական երկասիրութեան խորագիրն է ըստ ձեռագրաց. «Անանիայի Շիրակվանցւոյ երիցս երանեալ վարդապետին վասն որպիսութեան կենացն»,

⁂

Անանիայի գրուածները. — Շիրակացւոյն երկասիրութեանց մէջ նշանաւորներն են։

Աստեղաբաշխութիւն կամ *Աստեղագիտութիւն*, որ մեծ պատիւ կ'ընէ հեղինակին։ Գրչագիրք ընդհանրապէս պարզ *Յաղագս երկնի* կը կոչեն այս գիրքը, ոչ միայն անոր համար որ աստեղաբաշխական ուսմանց գլխաւոր ասպարէզն երկինքն է, այլ նաեւ անով որ հեղինակը գրքին սկիզբը կը սկսի երկնքի վրայ խօսիլ, և թէ ինչ այլ և այլ կարծիք ունեցեր են հին իմաստասէրք՝ երկնից և անոր ձեւակերպելուն վրայ։ Անկէ ետքը երկրիս վրայ կը խօսի, և ապա կարգաւ՝ ծովու, երկնային զարդուց, երկնի և երկրի մէջ եղած շարժմանց, ծիր կաթին, լուսնի, արեգական, կենդանակերպներու, աստեղաբաշխութեան, կենդանատեսակ բոլորատեսութեան կամ կենդանակերպից, և խառնարան աստեղաց վրայ։ Բայց մեր ձեռքը հասած գըրչագրաց մէջ՝ պակասաւոր կը մնայ այս ընտիր և օգտակար երկասիրութեան շարայարութիւնը[1]։

⁂

Շիրակունւոյն աստեղաբաշխական կարծիքը. — Անանիա եօթը պարունակ կը բաժնէ զերկինս, և *սառնեղեալ գօտիք* կը կոչէ այն պարունակները։ Այս եօթն գօտիները կամ պարունակքն են *այրեցանող գօտի* կամ *շարաճիւռակ*, *մեծամիր գօտի*, *խառնարան գօտի* կամ *երեր*, յորում կը գնէ զարեգակն, *գեղեցկական գօտի*, յորում *առհայոցն* մոլորակաց, և *խոնարհ գօտի*՝ որ միւս գօտւոյն մօտ է, ուր եթերն է, և անկէց կ'ըլլան հրացանութիւնք և փայլատակմունք, ամպոց խլրտմունք, անձրեւք և բուսոց սնունդը։ Այս եօթն գօտիները իրարու հակառակ կը համարի Շիրակացին։ Երկնից ու երկրի վրայ ընդհանրապէս ուղիղ և ուսումնական կարծիքներ ունի. թէպէտ և երբեմն հին յոյն իմաստասիրաց գրութիւնները պախարակելով, կը ստիպուի դէմ խօսիլ այն կարծիքներուն՝ որ ըստ ինքեան ուղիղ են, և սուրբ գրոց՝ միայն առ արտաքս դէմ երեւնալնուն պատճառաւ՝ հին Հարց առջեւ արհամարհելի համարուած են։ Բայց ինքը Շիրակացին ընդհանրապէս սրբոյն Բարսղի հետեւող է, որ ինչպէս յայտնի է իր գրուածներէն՝ սուրբ Հարց մէջ ամենէն աւելի ուսումնական հանճարն է։

---

[1] Նոյն օրինակն է տպագրութեամբ հրատարակեալն ի Փեթրպուրկ Ռուսաց ի Ք. Պատկանեան բազմահմուտ բանասիրէ։ Էջմիածնի Մատենադարանին մէջ եղած օրինակը (թիւ գրչ. 2152) ամբողջ կ'երեւնայ. «Աստղաբաշխութիւն Անանիայի Շիրակացւոյ. — Նորին՝ Մեկնութիւն տոմարի և յաղագս կշռոյ և կշռորդացն և համարողականն»։ Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանաց Մատենադարանին գրչագիրն ալ (թիւ 229 կը յիշատակէ իր անունովը «Անանիայի Շիրակունւոյ համարողի թիւք կշիռք»։

Ծովու վրայ խօսելով՝ վար կը զարնէ Անանիա հին իմաստասիրաց այն կարծիքը որ կ'ըսէին թէ երկրիս չորս կողմը պատած է ծովը, և ծովուն մէջ՝ իբրև կղզի մըն է երկիրս. անանկ որ չորս կողմերնիս՝ մթնոլորտէն դուրս բոլոր ջուր է, և այն ջրոց անհուն և անսահման ընդարձակութեան մէջ՝ հաստատուած է երկիրս. «Իսկ ես, կ'ըսէ, բարի և ուղղախոհ իմաստասիրաց կարծեաց հետեւող եմ որ կ'ըսէին թէ երկրէս դուրս ծով չկայ, այլ երկրիս մէջ եղած ծովերն են միայն, և իրարու հետ վերաբերութիւն կամ կցորդութիւն ունին, և այլ և այլ տեղեաց ու գրից նկատմամբ՝ զանազան անուանք ունին»: Կը զանազանէ ծովակը ծովէն, և առջիններուն կարգը կը համարէ Հրէաստանի մօտ եղող Ասփալդէս ծովակը (Մեռեալ ծով), ըզՍերբինիդիս՝ որ Եգիպտոսի և Պաղեստինի մէջ է, Բզնունեաց ծովակը՝ որ Հայաստանի մէջ է:

Խնդիր կը հանէ թէ ինչպէս կ'ըլլայ որ ծովը միակերպ միակշիռ կը մնայ, որովհետեւ ամենայն գետք և ուղխք ի ծով կը թափուին և չի լեցուիր: Եւ կը պատասխանէ՝ թէ ասոր պատճառ՝ արեգական ջերմութիւնը համարուեցաւ յիմաստասիրաց, որ իր գոլորշեօք կը ծծէ անոյշ, նուրբ և թեթեւ նիւթերը ու վեր կը հանէ զանոնք. իսկ թանձր և ծանր նիւթերը մէջը կը մնան, և անոր համար է որ ծովը միշտ դառն է: Համոզիչ և դիւրըմբռնելի օրինակ մը մէջ կը բերէ՝ կրակի վրայ դրուած ջրով լեցուն կաթսայն, և թէ ինչպէս ջուրը կը պակսի՝ գոլորշւոյն վեր ելլելովը. անանկ որ եթէ երկար ատեն կրակի վրայ թողուս, և մէջը նորէն ջուր չդնես, բոլորովին կը սպառի և կը լմննայ: Ծովու վրայ ճամբորդութիւն ընողները կ'ըսէ՝ երբոր ջրի նեղութիւն քաշեն, աղի և դառն ջուրը կ'առնուն, և կաթսայի մէջ դնելով՝ կրակի վրայ կը դնեն. կաթսաներուն վրայ ալ խուփի տեղ՝ սպունգներ կը դնեն. երբոր սպունգները՝ ջրոյն գոլորշեաւը ծանրանան, կը քամեն և անոյշ ջրի տեղ կը խմեն:

Ծիր կաթին վրայ խօսելու ատեն՝ կը մերժէ հին իմաստասիրաց այլ և այլ առասպելախառն կարծիքները, թէ ինչպէս ոմանք Պերսեփոնէի առագաստ կոչեցին, ոմանք հին արեգական ճամբուն հետքը համարեցան, ոմանք ալ ըսին թէ Հերակլէս նոյն ճամբէն փախնաց զԱնտէոգերիոն[1]*: Կ'աւանդէ նաև հին Հայոց դիցաբանութեան ժամանակի առասպելը ծիր կաթին համար, թէ խիստ ձմրան ժամանակ՝ Վահագն՝ Բարշամայ Ասորւոց նախնոյն յարդը գողցաւ, և ճամբան տանելու ատեն՝ գետին թափթփած յարդերէն ձեւացաւ այն լուսեղէն ճանապարհը. և թէ այս պատճառաւ Յարդգողի հետք կոչուեցաւ Հայոց մէջ այս ճամբան: Շիրակացին իր կողմանէ հիմակուան աստեղաբաշխից ուղիղ կարծիքը մէջ բերելէն ետքը՝ թէ յարդգողը բազմութիւն է աստեղաց, որոնք մեզմէ հեռու ըլլալնուն համար՝ իբրև մէկ լոյս մը կ'երեւնան մեզի, մենք, կ'ըսէ, Եկեղեցւոյ վարդապետաց կը հետեւինք՝ որ կ'ըսեն թէ ամենայն «զգայութիւնքս վերինք և ներքինք՝ ունին խառնուած միաբանութեան առ իրեարս, և է դա անգայտութիւն զօտեացն վերնոց, զթագկեալ հնոյն նշոյլս հեղլով ի վայր, երեւումն գործէ տեսողացն»: Այլ և այլ տեղեկութիւններ կու տայ նաև լուսնի, արեգական և կենդանատեսակաց վրայ խօսելուն ատեն, որոնց մէջ թէպէտ և վրիպական կարծիքներ ալ ունի, բայց կան նաև ուղիղ և ուսումնական տեսութիւնք*[2]*:*

---

[1] Ի տպ. Փեթրպուրկի [illegible] [illegible]. Բարշամայ անուան տեղ ալ՝ ինչպէս կը գտնեն մեր Մատենադարանին ընտրելագոյն գրչագիրք, տպագիրն կ'ըսէ (յէջ 48). «Ոմանք յառաջնոցն Հայոց ասացին՝ թէ խիստ ձմերանի Վահագն նախնին Հայոց՝ գողացաւ զյարդն Բարշամայ Ասորւոց նախնւոյն, զոր և մեք սովորեցաք բնախօսութեամբ Յարդգողի հետ անուանել»․

[2] Այս երկասիրութեան Թ· կամ վերջին գլուխը, զոր Շիրակացին կը կոչէ Պաւղոսի Աղեքսանդրացւոյ [illegible] [illegible] յոյն, թարգմանութիւն է ի յունէ. և որուն բնագիրն լատին թարգմանութեամբ հրատարակեալ է ի 1586 ի Վիթթէմպէրկ. լատինականին խորագիրն է; Paulus Alexandrinus: Introductio ad Astrologiam.

⁂

Շիրակացւոյն Աստեղագիտութիւնը մեծ յարգ ունէր մեր նախնեաց առջեւ՝ թէ իրեն պարզ և դիւրըմբռնելի ոճովը՝ և թէ մեր մէջ ուրիշ նմանօրինակ երկասիրութիւն չգտնուելուն համար։ Մագիստրոս՝ առ Պետրոս Գետադարձ կաթուղիկոս գրած թղթին մէջ՝ այնպիսի թախանձանօք կը խնդրէ այս գիրքը՝ որ յայտնի նշանակ է ունեցած մեծարանքին առաւելութեանը. «Համարձակիմք, կ'ըսէ, միշտ սովորեալ յառատաձիր պարգեւս՝ զկարեւորսն և զպիտանացուս յարատեւական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք դանդաղիս, հայցել ի քէն զգիրս Անանիայի Շիրակացւոյ, որ բազում աշխատութեամբ և յածաչու խնճմամբ հաւաքեալ ի բազմազան և յօքնարեղուն մատենից... յորում և ենթայակայացեալ են ոչ միայն քառիցն արուեստք, այլ բոլոր էակացն խոկմունս... կայացեալ ամենայն արուեստք մակացութեան։ Եւ նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեան, որք են ի տարորոշ քանակէ տարակացեալք. նաեւ երկրաչափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի պարունակ քանակէ։ Եւ զկնի այսորիկ յարամնեալք արուեստք և մակացութիւնք և մատենագրութիւնք. և գրեթէ ամենայն բոլոր վարժումն հեռաբական... Եւ արդ քանզի սակս մատենին Անանիայի եղեւ յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բեր՝ ոչ ինչ խրթին և անյայտաբար կամիմք զհարցուած մեր ծանուցանել մերոյ լուսաւորչիդ. ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառնութիւնք և հանդէսք. որ ոչ երբեք ի սատակին վարժելոց գրամարտկոսաց և քերթողաց հնացեալ՝ ի մոռացումն այսպիսւոյ մատենի եղեւ անկանել»։

⁂

Ժամանակագրութիւն. — Ոչ այնչափ ստուգութեամբ՝ որչափ կարծեօք կրնանք ընծայել Անանիայի՝ ժամանակագրական երկասիրութիւն մը Խորենացւոյն և Անդրէասայ խօսքերով և չարայարութեամբ՝ մինչեւ ի ժամանակս Շիրակացւոյն։ Ընտիր և օգտակար երկասիրութիւն մ'է սակայ, և մեր մէջ գտնուած համանուն երկասիրութեանց մէջ գլխաւոր, կամ գլխաւորներէն մէկը, թէ կարգաբանութեամբ, թէ ոճով և թէ հմտութեամբ։ Անանիայի ընծայելնուս գլխաւոր պատճառն ալ մէկմը այն է՝ որ մինչեւ իր ժամանակը կը հասնի (ի ՃԼԴ թուականն Հայոց) և հոն կը դադրի, մէյ մ'ալ որ գրչագիրք անմիջապէս Անանիայի ուրիշ երկասիրութեանց ետեւէն սակայ ալ կը շարայարեն՝ առանց անուան մատենագրի։

⁂

Յաղագս կշռոց և չափուց. — Այս անուամբ համառօտ երկասիրութիւն մըն ալ հասած է մեր ձեռքը Անանիայի Շիրակունւոյ անուամբ. և որուն գլխաւոր նիւթն է՝ սուրբ գրոց մէջ յիշատակուած և գործածուած չափուց և կշռոց համառօտ մեկնաբանութիւն, ընդհանրապէս սըրբոյն Եպիփանու Կիպրացւոյն հետեւողութեամբ։ Որչափ ալ իմաստուն երկասիրութիւն մը համարենք այս գրուածքը, և հեղինակին քննութեանց և տեսութեանց արժանաւոր, աւելորդ կ'երեւնայ մեզի խօսքերնիս երկնցնել այնպիսի գրուածոց վրայ՝ որ ընդհանրապէս մատենագրութեան չեն վերաբերիր։ Յիշեցնենք միայն թէ Եպիփանու և Շիրակացւոյն այս գրուածները՝ հանդերձ կարեւոր տեղեկութեամբք և դիտողութեամբք՝ տպագրուած են ի Վենետիկ՝ ի 1821, աշխատասիրութեամբ Հ. Յարութիւն Վ. Աւգերեան։

Վեցհազարեակ կամ Եօթնագրեանք. — Գրուածք մը՝ որուն յօրինողը ուզեր է Շիրակացւոյն անունով իր երկասիրութեան յարգ մը տալ. գիտնալով ազգին մէջ անոր վայելած համարումն և մեծարանքը։ Բայց այս գիրքը այնչափ հեռու է Շիրակացւոյն ընծայուելու հաւանականութենէն, որչափ որ լուսաւորեալ էր անոր միտքը, և անկարելի որ այսպիսի անոճ երկասիրութիւն արտադրէր։

Անծանօթ գրուածներ. — Անանիայի անուամբ ուրիշ քանի մը գրուածք կամ ճառեր ալ գտնուած են, որոնցմէ ոմանք իրենց ոճովը և ոմանք ալ իրենց հոգւով՝ Շիրակունւոյն հոգիէն և ոճէն կը հեռանան, և անշուշտ ուրիշ համանուն վարդապետաց երկասիրութիւնք են։ Ասոնց կարգէն են Յաղագս զղջման և արտասուաց ճառ մը՝ ի խնդրոյ Գրիգորի միայնակեցի. ուրիշ ճառ մըն ալ Յաղագս խոնարհութեան։ Քրիստոսի ծննդեան և Զատկի տօնին վրայ հակաճառական գրուածներ՝ Յունաց և անոնց հաւատոյ և վարդապետութեանց դէմ։ Այս ճառից խորագիրքն են. «Անանիայի Շիրակայնւոյ Համարողի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն և փրկչին մերոյ։ — Անանիայի Շիրակայնւոյ Համարողի ասացեալ ի Զատիկն Տեառն»։

Գրչագրաց ցուցակաց մէջ ուրիշ երկասիրութիւն մ'ալ կը տեսնենք՝ Անանիայի անուամբ. «Անանիայի գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծեաց ի վերայ նորա, և բացայայտութիւն Թուոց»։ Այս վերջին խօսքը՝ հաւանական կ'երեւցնէ մեզ Շիրակունւոյն ընծայել զայն, և ոչ ուրիշ նոյն անունը կրող վարդապետի մը։

Յովհան կաթողիկոս կ'աւանդէ թէ Անաստաս հայրապետն ուզելով որ Հայոց ազգին տումարն ալ՝ ուրիշ ազգաց տումարին պէս անշարժ ըլլայ, գլխաւորաբար սրբոց տօներուն դիւրութեան համար, իրեն կանչեց զԱնանիա, և յորդորեց որ այս բանիս մէկ ճարը տեսնէ։ Ետքը երբ եպիսկոպոսաց մասնաւոր ժողովք ալ գումարելով՝ կը փափաքէր այս բանս յառաջ տանիլ, մահը վրայ հասաւ. ու թէ բաղձանքը և թէ անոր գործադրութիւնն անկատար մնաց։

Իմաստասիրական և ուսումնական գրութեանց յատուկ ոճ մը կը բանեցնէ Շիրակացին. և ինչպէս ուսման՝ ասանկ ալ լեզուին գլխաւոր հեղինակը համարուած է արժանապէս։ Փափաքելի էր տեսնել ի նմա՝ աւելի ճշդութիւն ի կարծիս և պարզութիւն ի բացատրութեան, որով յաճախ մութ և անիմանալի կը մնան յետագայից։

Ազգային պատմչաց թուոյն մէջ տեղ մը յիշատակուած կը գտնենք նաեւ զՇիրակացին, հետեւեալ խօսքերով նշանակելով նաեւ գրուածքին նիւթը. «Սկիզբն արարեալ յԱդամայ համառօտ գաւազանաւ՝ իջանէ մինչեւ ի ժամանակս Անաստասայ կաթուղիկոսի»։ Թերեւս կամ վերը յիշուած ժամանակագրական երկասիրութիւնը, և կամ Կայսերաց պատմութիւն կոչուած ընտիր գրուածք մը ուզենան ակնարկել, որուն հատուածք հասած են մեզի՝ հետագայ խորագրով։ Կայսերք Հռոմոց թէ որչափ ամք կալան ժամանակս, և զինչ գործ գործեցին, զոր ոմանք Շիրակացւոյ կ'ընծայեն և այլք Ուխտանիսի։

ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԹՈՂ

Վրթանէս Քերթող։ — Ընդդէմ Պատկերամարտից ճառ։ — Զանազան նամակներ Վրթանայ անուամբ։ — Գրիգոր Քերթող։

Վեցերորդ դարուն վերջերը կամ ի սկիզբն եօթներորդին կը յիշատակուի Վրթանէս Քերթող, որուն անուամբ հասած է առ մեզ համառօտ՝ բայց ոճովն ընտիր և նիւթուղթ հետաքննական գրուած մը Յաղագս Պատկերամարտաց կոչուած։ Այս աղանդոյն հետեւողք՝ ի Բիւզանդիոնէ՝ մինչեւ ի Հայաստան մուտ և ընդունելութիւն գտնելով, իրենց դէմ ունեցին Քռթենաւորն Թէոդորի, և իր հռչակաւոր աշակերտին իմաստասիրին լեզուն ու գրիչը «որք չարեաց ի չարիս վերացեալ եղին, կ'ըսէ Օձնեցին, ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի քրիստոսատեցութիւն». և Վրթանէս Քերթող ալ այս գրուածքին մէջ կը վկայէ թէ «մատուրական ուսմանց խոհալք, որք շրջին յաղջամուղջ խաւար ընդվայրայածք շաղեալք՝ ուսանին զանհեթեթս. պատրեն զսիրտս անմեղաց, և մուծանեն հերձուածս յեկեղեցի». ու հին և նոր կտակարանաց խօսքերով ու պատմական վկայութեամբ անոնց մոլորութիւններն ըմբերանելէն ետքը, յոյն եկեղեցւոյ վարդապետութիւնն ալ մէջ կը բերէ յՈսկեբերանէ, ի Սեւերիանոսէ, յեկեղեցական պատմութենէ Եւսեբեայ, ապա նաեւ Գրիգորի Լուսաւորչի խօսքերը և Հայոց եկեղեցւոյն սովորութիւնն՝ անդստին յընդունելութենէ հաւատոյ սրբութեան, թէ ինչպէս «յեկեղեցիս քրիստոնէից և յարկս վկայից Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբ Գրիգոր, և աստուածահաճոյ չարչարանք իւր և սուրբ առաքինութիւնք, և զՍտեփաննոս նախավկայ ի մէջ քարկոծչացն, զերանելի և զփառաւոր կոյսն սուրբ զԳայիանէ և զՀռիփսիմէ հանդերձ ամենայն ընկերօքն և յաղթող նահատակօք»։ Եւ որովհետեւ հակառակորդք կ'ըսէին թէ չկար առ հինսն մեր այդ սովորութիւն, և թէ Պապ թագաւոր ի Յունաց աշխարհէ եմոյծ զայն ի Հայաստան, կը պատասխանէ. «Այդ ամենեցուն յայտնի է թէ սուտ խօսիք։ Քանզի ի Հայք պատկեր ոք չգիտէր առնել մինչեւ ցայժմ, բայց ի Հոռոմոց բերէին. և մեր ուսմունքն անտի էին, և եթէ նոքա չէին կրուսեալ, և քան զՊապ յառաջ այլ թագաւորք էին, և պատկերս և նկարս առնէին յեկեղեցիս յանուն Քրիստոսի. և դարձեալ զկնի Պապայ և այլ թագաւորք եղեն ի Հայս,

և հայրապետք՝ որպէս երանելի սուրբն Սահակ և Մեսրոպ և Եզնիկ և Արձան և Կորիւն և ընկերք նոցա. որ և ի ձեռն իսկ նոցա Հայոց դպրութիւն շնորհեցաւ ի տեառնէ Աստուծոյ. և ոչ ոք ի նոցանէ վասն պատկերաց և նկարուց եկեղեցւոյ բանս ինչ ոք արար. բայց միայն պիղծն մոլին Թադէոս և Եսայի և ընկերք նոցուն»։

⁂

Վրթանայ Քերթողի անուամբ, որ սրբոյն Գրիգորի տեղապահ ալ կոչուած է, այլ և այլ նամակներ կան թէ առ Ուխտանէս պատմչի, և թէ թղթոց հաւաքմանց մէջ՝ առ զանազանս, հաւատոյ վերաբերեալ նիւթերու վրայ. և մանաւանդ իր դարուն երեւցած խակական կամ ենթադրեալ հերձուածոց կամ մոլորութեանց դէմ։ Ասոնց մէջ է Շրջագայական կոչուած թուղթ մը ուղղեալ «Սրբասիրաց ուղղափառաց և ճշմարտից և վանաց երիցանց և գեղջ քահանայից, ազատաց և շինականաց, ծերոց և տղայոց համօրէն ամենայն ժողովրդականաց հայալեզու աշխարհացդ որ էք ընդ իշխանութեամբ եկեղեցւոյն Յուրտաւայ, ի Վրթանիսայ և յայլ պաշտօնէից սրբոյ եկեղեցւոյս»։ Այս թղթին պատասխանը կ'ընդունի Վրթանէս, յորում գոհութեամբ կը վկայեն թէ «Տեսաք զթուղթ ուղղափառ հաւատոյ ձերոյ և լուաք զողջոյն ձեր... և որպէս երկիր ծարաւի ի բաղում երաշտութենէ պապակեալ, ընդունելով անձրեւ շաչեկան... յիշեցուցանելով սուրբ և զուգիղ հաւատն զոր մեծին սրբոյն Գրիգորի սերմանեալ էր յայս ի կուսակայն կողմանս»։ Յուրտաւայ եպիսկոպոսն Մովսէս կը գրէ թուղթ մը առ Վրթանէս, և կ'ընդունի իրմէն պատասխան. «Զգիր ողջունի սրբութեան քո ընկալեալ, կ'ըսէ, զԱստուծոյ գոհացաք. և ուրախ եղեաք որ տէրդ պահպանութեամբ ամենասուրբ Երրորդութեանն ողջ է»։

Թուղթ մ'ալ կը գրէ առ Պետրոս եպիսկոպոս, զոր ի ակիզբն նամակին կը կոչէ «փառաւորելոյ տեառն Գեորգի, աստուածաշնորհ պարգեւօք պայծառացելոյ, ի Վրթանիսայ և ի միաբանական սրբոյ եկեղեցւոյ պաշտօնէից՝ տերամբ ողջոյն»։ Նամակ մ'ալ առ Կիւրիոն Վրաց կաթողիկոս, միւս մ'ալ ի պատասխանի երրորդ թղթոյն զոր ուղղեր էր առ Մովսէս եպիսկոպոս։ Այսչափ փոփոխակի գրուած և ընդունուած գրութեանց և Մովսէս կաթողիկոսի մահուան առթիւ գումարի ժողովն Դւնայ, ուր հաւատոյ ուղղութեան համար կանոններ կ'առաջարկուին և կը սահմանուին, և զորս իրենց ձեռնագրով կը վաւերացնեն Թէոդորոս Մարգպետական, Յովհաննէս Արծրունեաց, Քրիստափոր Սիւնեաց, Մանասէ Բասենոյ, Աբրահամ Ռշտունեաց, Յովհաննէս Ամատունեաց, Գրիգոր Անձեւացեաց, Սիոն Գողթան, Ահարոն Մեհնունեաց, Ներսէս Բամունեաց, Յոհանիկ, Թադէոս եպիսկոպոսունք. «եպիսկոպոսք յիսուն, ինչպէս կ'ըսէ, հարք և քահանայք երեքհարիւր և վեց, կամօք և այլոց. հաստատել սահմանս կանոնականս»։

Վրթանայ քերթողի անունը կրող թուղթ մ'ալ կայ ի գրչագիրս առ Աղուանս, իրենցմէ առ Հայս գրեալ նամակին պատասխան, ի դիմաց Աբրահամու կաթողիկոսի, և եպիսկոպոսացն Թէոդորոսի Մարգպետական, Դաւթի Սիւնեաց, Ստեփաննոսի Բագրեւանդայ, Մովսիսի Խորխոռունեաց, Քրիստափորի Ապահունեաց, Մատթէոսի Ամատունեաց և «այլ եպիսկոպոսաց և յուխտէ սրբոյ եկեղեցւոյ, և յազատ մարդկանէ և ի ժողովրդականաց»։

⁂

Այս առեններս կը յիշատակուի նաեւ Գրիգոր Քերթող, որուն մէկ նամակը հասած է առ մեզ ուղղեալ առ Աբրահամ կաթողիկոս՝ և նոյն նպատակ ունենալով՝ հաւատոյ համար յուզուած խնդիրներ։ Այն վախճանաւ գրուած են նաեւ այլ և այլ նամակներ «ի Սմբատայ Գուրկան

(կամ Վրկան) մարզպանէ և տերանց զինուորէ, և ի Գիգայ Գաշտկարանէ, և ի Վարդապետէ Հայոց Շաղապարէ և յայլ ազատորերոյ» առ Կիւրիոն Վրաց կաթողիկոս և Ատրներսեհ իշխան և առ Մովսէս եպիսկոպոս, և անոնց պատասխանները։ Նշած խնդրոց, վիճմանց և հակառակութեանց լուծումը տալու համար՝ Աբրահամ կաթողիկոս գրած է Շրջագայական թուղթ մը, և որ նախընթացից հետ հասած է մեզ։

ԹԷՈԴՈՐՈՍ ՔՈԹԵՆԱՒՈՐ

Քոթենաւորի վարքը։ — Ճառ ընդդէմ Մայրագոմեցւոյն։ — Ուրիշ ճառեր։ — Գրութեան ոճը։

Իսրայէլ կաթողիկոսին ժամանակ ծաղկիլ սկսաւ Թէոդորոս անուամբ խարազնազգեաց և սրբակրօն ճգնաւոր մը՝ Քոթենաւոր կոչուած, թէ՛ հայկական և հելլենական գիտութեամբք և թէ՛ աստուածային ուսմամբ նշանաւոր, իմաստութեամբն և առաքինութեամբ անուանի։

Արագած լերան ստորոտը կառուցուած Սուրբ Աստուածածին վանքին վանահայր եղաւ, և հոն շատեր աշակերտեցան իրեն. որոնք ետքը թէ՛ իրենց վարդապետին և թէ՛ ազգային գրականութեան պարծանք եղան։

Իր աշակերտաց մէջ յանուանէ նշանաւոր եղան՝ Սահակ և Յովհաննէս Իմաստասէր՝ որ յետոյ կաթողիկոս եղան. այս ետքինս մեծապէս կը դրուատէ իւր վարդապետը, և իբրեւ յԱստուծոյ իրեն եղած մասնաւոր շնորհք կը համարի՝ այնպիսի մարդու մը աշակերտիլը։ Ոմանք կ'աւանդեն թէ այս Թէոդորոսն ըլլայ՝ Կոմիտաս կաթողիկո-

սին եղբօրորդին և Եզրի քեռորդին, որ Սիւնեաց հռչակաւոր վարդապետանոցը գնաց սորվելու, և Մաթուսաղայի աշակերտեցաւ՝ ինչպէս վերը յիշեցինք։

⁂

Թէոդորոսի ժամանակներն սկսան զօրանալ Մայրագոմեցւոյն աշակերտեալք, և իրենց մոլորական ու վնասակար վարդապետութիւնները սերմանել. և ստիպեցին զՔռթենաւոր՝ որ իր հանճարովն և աստուածապաշտ եռանդով անոնց դէմ դնէ։ Այս վախճանաւ յօրինած է ընդդէմ Մայրագոմեցւոյն ճառը, որով անոր հետեւողացը՝ սուրբ հաւատոց որչափ վնասակար ըլլալնին կը ցուցնէ, և թէ վարքերնին՝ իրենց արտաքին խոշոր ձեւոյն և ճգնութեան դէմ է բոլորովին։ Հակառակորդաց այլ և այլ առարկութիւնները մէջ բերելով՝ կը հերքէ զանոնք, և Բանին Աստուծոյ մարդեղութեան հրաշալի խորհուրդը զօրաւոր փաստերով կ'ապացուցանէ. և զնոյն կը հաստատէ նաև Յունաց բազմաթիւ աստուածաբան հայրապետաց վկայութեամբ, ինչպէս Բարսղի, Գրիգորի աստուածաբանի, Ոսկեբերանի, Եպիփանու Կիպրացւոյ, և այլն։ Վերջը առ մոլորեալսն կը դարձնէ խօսքը, յորդորելով զիրենք որ դառնան ի ճանապարհ ուղղութեան։

Այս ճառով՝ Քռթենաւորը հանճարի տէր, և ճարտարխօսութեան ձիրքն ունեցող կ'երեւնայ. հմուտ սուրբ գրոց և հարց, և արտաքին իմաստասիրութեանց ալ լիուլի տեղեակ. հայկական լեզուի հմտութեամբն ալ ոչ աննշան, իրեն յատուկ ոճովը և բացատրութեամբ, մանաւանդ եթէ յունաբանութիւնք յաճախ չըլլային, և իմաստից և բառից խրթնութիւնք և բարդութիւնք, որոնցմով ոճոյ պարզութիւն և գրուցուածքի յստակութիւն փնտռողաց համար կը պակսեցնէ իր գրուածոց յարգը։ Այս թերութիւնքն առաւելապէս կ'երեւնան հետագայ երկասիրութեանց մէջ։

⁂

Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ. — Ընտիր և գեղեցիկ իմաստներով, և հետեւողութեամբ Դաւիթ Անյաղթի համանուն գրուածքին։

Գովեստ ի սուրբ Աստուածածինն և ի կոյսն Մարիամ. — Խաչի ճառին զուրցուածքէն շատ աւելի խրթին լեզու մը կը բանեցնէ Թէոդորոս այս գովասանութեան մէջ. անոր համար բանասէրներէն ոմանք կը տարակուսին հարազատութեան վրայ, այլ կամ նոյն անունն ունեցող ուրիշ վարդապետի մը կու տան, և կամ Թադէոս անունով մէկու մը, որուն ուրիշ քանի մը ներբողական գրուածները մեր ձեռքը հասած են, նոյն դժուարիմանալի լեզուով և խրթին կամ աւելորդ բառերով։

Հարկ է կրկին յիշեցնել թէ Քռթենաւոր՝ որչափ ալ պարծանք համարուի մեր հայկական դպրութեանց իբրև սկզբնագիր հեղինակ մը, հետեւողութիւնը զգուշալի է համբակաց, որովհետեւ այսպիսի երկասիրութիւնք կրնան ախորժակը կրթելու տեղ՝ վնասակար ըլլալ, և միանգամայն մեր լեզուին վայելչութիւնը խանգարել, որուն գեղեցկութիւնը և հոգին՝ իր պարզութեան մէջ է։

Քռթենաւորի ճառերը տպագրուած են ի Վենետիկ 1833ին, Նախնեաց մատենագրութեան Շարքին մէջ.

ՄՈՎՍԷՍ ՍԻՒՆԵՑԻ

Մովսէս քերթող։ — Իր անձին և գրուածոց վրայ կարծիք։ — Քերականական երկասիրութիւնք։

Այս դարուս մէջ ծաղկեցաւ Սիւնեաց եպիսկոպոս մը՝ Մովսէս անունով, որ յունական դպրութեանց, և մանաւանդ հայկական հռետորութեան տեղեակ ըլլալուն համար՝ քերթող և քերթողահայր կոչուեցաւ։ Ձեռագրաց մէջ շատ քերականական և ճարտասանական գրուածներ կան՝ որ անոր կ'ընծայուին։ Ոմանք Խորենացւոյն անուամբը ծանօթ՝ Պիտոյից գիրքը՝ անոր ուզեցին ընծայել. բայց այս կարծիքս ընդհանրապէս անհաւանական կ'երեւնայ. մանաւանդ թէ այլք՝ մինչեւ Քերականի մեկնութեանց մէջ գտնուած երկասիրութիւնները Խորենացւոյն կ'ուզեն ընծայել. որովհետեւ ազգերնուս մէջ տիրապէս Մովսէս Քերթող միայն Խորենացին կոչուած է. անշուշտ այս պատճառաւ է որ Կիրակոս՝ Խորենացւոյն կ'ընծայէ զանոնք։ Ուրպելեան՝ որ Սիւնեաց ամբողջ փառքին հանդիսացնող է և պատեհ չի փախցներ զանոնք գովելու, այս Մովսէսը՝ որ Սիւնեաց իննեւտասներորդ եպիսկոպոսն է և Ստեփանոսի Սիւնեցւոյն ուսուցիչ՝ Քերթող անուամբ յիշած չէ։

Այս խնդրոյս վրայ՝ պէտք եղածը զրուցեր ենք Խորենացւոյն վրայ խօսած ատեննիս։

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Գրիգոր Արշարունի։ — Ընթերցուածոց մեկնութիւն։ — Որուն խնդրանօք այս երկասիրութեան ձեռք զարնելը։ — Հայերէն լեզուն և ոճը։

Վահան կամսարականին ժամանակ անուանի եղաւ Գրիգոր կամ Գրիգորիս անունով մէկը, որ 684ին Սահակ կաթողիկոսէն Արշարունեաց եպիսկոպոս ձեռնադրուեցաւ։ Ինքը նոյն Վահանայ կամսարականի խնդրանօք Ընթերցուածոց գեղեցիկ մեկնութիւն մը շարադրեց, երեսունեւչորս կամ երեսունեւհինգ գլխոց մէջ ամփոփած, ընտիր լեզուով և իմաստներով։ Հմտաբար և վայելուչ ծանրութեամբ կը խօսի թէ ազգային և թէ Յունաց տօներուն վրայ, և հարկ համարելով ազգայիններն արդարացնել այնպիսի փոփոխութեանց համար՝ որ չեն մասն հաւատոյ, կը պաշտպանէ իրենները, առանց վար զարնելու կամ նախատելու զուրիշները։

Շարադրութիւնը հայկաբան և ընտիր, և հետեւողութեան յարմար, մանաւանդ վարդապետական ոճոյ մէջ. յորում մերթ Մամբրէի և Եղիշէի կերպը փոխ կ'առնու, և մերթ Շնորհալւոյն համրոյր և քաղցր լեզուին նախագաղափարը կու տայ։ Սամուէլ Կամրջաձորեցի կ'աւանդէ թէ Յովհան իմաստասիրին խնդրանօք շարադրած ըլլայ այս գիրքը. Ասողիկ ալ՝ Ներսեհ կամսարականին հրամանաւը։ Յառաջաբանին մէջ որ գեղեցիկ օրինակ է ընծայականի՝ մեծապէս կը գրուատէ Արշարունին զՎահան պատրիկ կամսարական, թէ հասակաւ և թէ իմաստութեամբ ծերունի կոչելով զինքը, և իբրեւ Թագաւոր մը՝ պարգեւեալ յԱստուծոյ ազգերնուս. անոր համար չկրցայ, կ'ըսէ, քու հրամանիդ դէմ կենալ. և որչափ որ մտացս աղքատութիւնը ներեց՝ քու փութով յինէն պահանջած խնդիրքդ՝ յամր քեզի ընծայեցի։

Ասողիկ՝ Ներսէհ Կամսարականին վրայ խօսած ատեն, «ի սորա աւուրս, կ'ըսէ, պայծառանայր Գրիգորիս Արշարունեաց քորեպիսկոպոս՝ փիլիսոփայական արուեստիւ», և կ'աւանդէ թէ Յովհաննու Օձնեցւոյն ի Մանազկերտ գումարած ժողովքին վարդապետաց մէջ գտնուեցաւ նաեւ «Գրիգորիս փիլիսոփայ՝ քորեպիսկոպոս Արշարունեաց»։

ՓԻԼՈՆ ՏԻՐԱԿԱՑԻ

Տիրակացւոյն ժամանակը։ — Յօրինած Եկեղեցական պատմութիւնը։ — Սոկրատ Սկոլաստիկոս։ – Փիլոնի գրուածքին ոճը և իր պատմութեան շարունակութիւնը։

Անաստաս կաթողիկոսին ժամանակ ծաղկեցաւ Փիլոն Տիրակացի կամ Շիրակացի[1], որ Ներսէհ Կամսարականին խնդրանօք՝ Սոկրատ Սկոլաստիկոս նոյն եկեղեցական պատմարանին գրուածքը թարգմանեց ի հայ։ Եօթն գիրք բաժնուած է այս երկասիրութիւնը. և Եւսեբիոսի համանուն գրոց շարայարութիւնը կրնայ համարուիլ. Կոստանդիանոսի մահուընէն մինչեւ փոքուն Թէոդոսի կայսերութիւնը հասցնելով, որուն ժամանակակից էր Սոկրատ։

Փիլոն այս աշխատասիրութեան մէջ որչափ ալ ջանացած է ընտիր լեզու և մատենագրական ոճ գործածել, հաւատարմութեան կողմանէ չէ կրցած անպարսաւ մնալ, այլ հեղինակէն դուրս, և իրեն բերնովը՝ այլ և այլ պատմութիւններ մէջ բերած է թէ ի հայ գրոց, և թէ մանաւանդ յասորի պատմութեանց. Փլաբիանոսի, Եւտիքէսի ու Եփեսոսի երկրորդ ժողովոյն վրայ խօսք ընելով՝ յորում ժամանակի արդէն մեռած էր Սոկրատ։ Կրնայ ըլլալ որ այս բանս գրչագրաց աղաւաղութենէն ալ առաջ եկած ըլլայ, և այն ատեն թարգմանիչը կ'արդարանայ։ – Իբրեւ ինքնագիր երկասիրութիւն, և ոչ ի կարգս թարգմանութեանց համարելնուս, և յիշատակն ընելնուս պատճառն այս է։

---

[1] Յոմանց նաեւ Թրակացի կոչուած,

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ձորափորեցի Սահակ կաթողիկոս։ — Առ Մոհմէտ Հագարացի իշխան գրած թուղթը։ — Իրեն ընծայուած երկասիրութիւնք։

Քաթենաւորին աշակերտ էր Սահակ Ձորափորեցի, որ 677ին կաթողիկոսական աթոռը բարձրացաւ, և իր խոհականութեամբն և իմաստութեամբ ամենուն յարգի և պատկառելի եղաւ։

Յովհան կաթողիկոս կ'աւանդէ թէ երբ ի Դամասկոս գերի էր այս սուրբ հայրապետը, Սմբատ իշխանը մասնաւոր աղաչանաց թուղթ գրեց անոր, խնդրելով որ երթայ Հագարացւոց Մոհմէտ ոստիկանին սիրտն իջեցնէ, որ բազմաթիւ զօրքով Հայոց վրայ պատերազմի կ'երթար։ Յանձն առաւ Սահակ. բայց երբոր Խառան հասաւ, հիւանգանալով՝ իմացաւ թէ ալ իրեն համար բժշկութեան յոյս չկայ, և Արաբացւոց լեզուով աղաչանաց գիր մը գրեց առ նոյն ինքն Մոհմատ, և իրեն մարդկանցն ալ պատուիրեց՝ որ երբ մեռնի՝ նոյն թուղթը իր ձեռքին մէջ դնեն, և երբոր ոստիկանը գայ՝ տան որ կարդայ: Յոյս ունէր թէ մեռելի մը ձեռքէն աղաչանաց գիր ընդունելովը՝ սիրտը շարժի, ու միտքը դրածէն ետ կենայ: Մոհմատ երբոր լսեց թէ կաթողիկոսն իրեն գալու ատենը մեռեր է, արգիլեց որ չթաղեն. և ինքն ի խորան երթալով՝ երբ մտաւ այն սենեակը՝ յորում երանելւոյն մարմինը դրուած էր, իբրև կենդանւոյ ողջոյն տուաւ իրեն. անիկայ ալ՝ ինչպէս կ'աւանդեն պատմիչք, բարևն ընդունելով՝ ձեռքը երկնցուց որ թուղթը մատուցանէ: Զարմացաւ ոստիկանը, ու կարդալով անոր աղաչանքը, կատարեց խնդիրքը: Այս թղթին հարազատ թարգմանութիւնը պահած է Ղևոնդ երէց՝ իր Պատմութեան գրոց մէջ:

Շարականաց հին գրչագիրք՝ ընդհանրապէս իրեն կ'ընծայեն Նաւակատեաց և սուրբ խաչի շարականները, որոնք գերազանց բանաստեղծութիւններ են: Նոյնպէս իրեն կ'ընծայուի Արմաւենեաց կամ Ողոգոմեան (Ծաղկազարդի) տօնախմբութեան վրայ ճառ մը, ընտիր ոճով և շարադրութեամբ, տպագրած ի Վենետիկ 1834ին[1]:

---

1. Գրչագրաց մէջ՝ մերթ պարզապէս կը յիշատակուի. «Ասացուած խօսակայ յաւուր արմաւենեաց, որ է ողոգոմեան»:

ԴԱՐ Ը

ՅՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ

Իմաստասիրին մանկութիւնը: – Քռթենաւորի աշակերտիլը: – Կաթողիկոսական աթոռը բարձրանալը: — Ատենաբանութիւն: — Ճառ ընդդէմ Երևութականաց: — Ընդդէմ Պաւղիկեանց ճառը: — Գործածած լեզուի յատկութիւնը և ոճ: — Ուրիշ երկասիրութիւնները: – Եկեղեցական կանոնագրութիւնը: — Երկրպագական գրուածներ: — Իր ճառից բնագրին տպագրութիւնը և թարգմանութիւնը:

Տաշրաց գաւառին Օձին կամ Օձուն գեղջէն էր Յովհան, և մանկութեան հասակէն աշակերտած Թէոդորոսի Քռթենաւորի, որ անոր մատաղ և թարմ մտացը վրայ՝ ապագայ հանճարոյն կնիքը և մեծութեան նշանակը դրոշմուած տեսնելով, ամէն ջանք ըրաւ որ ընտիր դաստիարակութեամբ արգասաւոր ընէ այն միտքը՝ որ տարիքն առնելէն ետքը կրցաւ իբրև զնոր ոմն Սողոմոն պարծենալով գրուցել. «Մանուկ էի մտավարժ՝ և ոգւոյ բարւոյ վիճեցայ»[1]: Այնչափ մեծ էր Քռթենաւորին խնամքը

---

1. «Սուրբ հայրապետն Յովհաննէս էր ի գաւառէն Տաշրայ՝ որ արդ կոչի Լօռի, ի գիւղաքաղաքէն Օձնոյ, յազգէ տանէ. քաջաբոյս, վայելչագեղ, և գեղեցկատես. ուշիմ և հանճարեղ ի վարս ճգնողական և իմաստ կրթութեան, հռետորական ուսման և փիլիսոփայական արուեստից: Զտիս տղայական մանկութեանն առ հանճարեղս անցուցանէր. Վասն

իր աշակերտին վրայ, որ ինքն իմաստասէրն կը գրուցէ. «Ոչ զառ յինքենէն եւեթ բաւականանայր չտեմարանել յիմում ոգւոյ գրարին, այլ և ի յոլովից զպայծառագոյնսն ծաղկաքաղ առնելով զշնորհաց, լիացուցանել զագահութեանն իւրոյ ինեւ ջանայր զուսումնասիրութիւն»։ Ժամանակը՝ Յովհաննու մտաց վրայ իր զօրաւոր ազդեցութիւնն ընելով, անոր հանճարոյն և իմաստութեան վրայ սքանչացող ազգայինքն՝ սրբոյն Գրիգորի աթոռոյն ժառանգ ըրին զինքը, կաթուղիկոսական պատուով մեծարելով։

Մեր նախնեաց մէջ՝ իր վրայ զարմացողաց մէկը, այսպէս կը դրուատէ զինքն..., «Մեզ բաւական համարելի է զակաւսն ի բազմաց, զոր ունին գիրք յիշատակարանաց, և զլուրն դիպողական յաւանդութեանց, և անտի կազմեցաք բարեբաղդ առագաստի մեծին Յովհաննու հիւսակապակի. որպէս ասէ քաջն Պինդարոս իբրեւ զփունջ մի վարդի ընկենլով զայն ի գոգս կաթողիկէ եկեղեցւոյ. ի փառս անմահ փեսային Աստուծոյ մերոյ Յիսուսի։ Արդ հայրն մեր աստուածապարգեւ և հայրապետն փառազգեաց Յովհաննէս էր, որպէս գիրք պատմագրաց ցուցանեն, աշխարհաւ երկոտասաներորդ ի Գուգարաց, գաւառաւ չորրորդ ի Տաշրոյ, բնակութեամբ ի նշանաւոր գիւղաքաղաքէն Ուձնայ ի յարենէ ծննդեան յազատ տանէ։ Քաջարոյս գոլով մանուկ և ուշիմ ի վարժս կրթութեան, հռետորական ուսման և փիլիսոփայական արհեստից պարապեալ. զտիս տղայութեան անցուցանէր առ հանճարեղս, քանզի գոյր յայնժամ այսպիսի ուսման դպրոցք յաշխարհիս Հայոց և Յունաց և Ասորոց ճարտարաց. յաղագս որոյ առեալ և զիմաստասիրական անունն կոչմամբ և արդեամբ զարդարեալ

որոյ առեալ զիմաստասիրականն անուն... Երթայր այնուհետեւ եռանդնաշարժ սիրով, ազդմամբ Հոգւոյն սրբոյ առ մեծ ճգնաւորն և անուանի վարդապետն Թէոդորոս՝ Քռթենաւոր կոչեցեալ, և յանձն առնոյր զխոշոր և զնուրբ վարս նորա յաւելուածովք. որով և զխորգն գարկճաձեւ զգենոյր ծածկաբար մինչեւ ցկատարումն կենաց իւրոց»։ Ի Յայսմաւուրս։

ամենայն առաքինութեամբ։ Երթայր այնուհետեւ եռանդնոտ բնութեամբն... առ մեծ ճգնաւորն և անուանի վարդապետն Թէոդորոս՝ Քռթենաւորն կոչեցեալ... զորոյ սիրեցեալ զվարս սուրբս, խոշորս և պարկեշտս, յանձն առնոյր յաւելուածով... ուսանէր ի նմանէ ըստ հաճոյ կարգին զամենայն գիրս աստուածաշունչս հին և նոր մատենից որովք ընդարձակեալ սրտիւ աճէր խստամբեր վարուք և հանճարով գրոց, փառաւորեալ յԱստուծոյ և ի մարդկանէ։... Զոր տեսեալ հայրն նորա ըստ հոգւոյ՝ տայր նմա կոչել զնա յաստիճան շնորհաբաշխութեան. ի կատարման մարմնաւորական և հոգեւորական հասակին և մօրուաց՝ ի կարգ սարկաւագութեան և ի պատիւ քահանայութեան, որովք և աղբիւրանայր յորդառատ իմաստութեամբ, և թարգմանութեամբ և մեկնութեամբ գրոց զարդարէր զեկեղեցի, և ժիր և մաքուր քահանայագործութեամբ հաշտեցուցանէր զԱստուած ընդ կենդանիս և ընդ մեռեալս։ Քանզի թէպէտ և թագաւոր ոչ գոյր աշխարհիս Հայոց յայնմ ժամանակի, այլ ընդ ծառայութեամբ Տաճկաց էին որ կոչին Ամիր Մումինք[1], սակայն ի գթութիւնս եդ Տէրն զազգս առաջի նոցա աղօթիւք սրբասիրին Յովհաննու, և որք ընդ նմա զկամս Աստուծոյ կատարէին ուղղափառ հաւատով և խաչչարչար ճգնութեամբ առ լերամբն որ Սոթից կոչի, Գէորգ վարդապետն սքանչելագործ, և Մաթէոս խոստաճարակն, և իւր իսկ վարդապետն և այլ բազում խստակրօնք և երկնաթուիչք»։

⁂

Կաթուղիկոսական պաշտօնն ի գործ դնել սկսաւ Յովհաննէս՝ ժողովրդեան մէջ մտած անկարգութեանց դարմանը մատուցանելով։ Այս վախճանաւ ժողով մը գումա-

---

[1] Իմա՝ «Մումինին»։

րեց ի Պոլին, իր հայրապետութեան երկրորդ տարին. ու ժողովոյն առաջին գումարումը՝ սուրբ հայրապետաց գովելի սովորութեան համեմատ՝ ատենախօսութեամբ մը սկսաւ, իմացնելով թէ ինչո՞ւ գումարեց զիրենք ի ժողով, և թէ անհրաժեշտ էր այն գումարումը։

Գեղեցիկ և ընտիր ոճոյ ամէն յատկութիւններն ունի այս Ատենախօսութիւնը. խօսքի վսեմ ծանրութիւն մը, իմաստից առատութիւն և ընտրութիւն, աստուածաշունչ գրոց, սրբոց հարց և հին առասպելաց հմտութիւն, և ամէն բանէ աւելի բարւոյ նախանձ մը։ Կը յիշեցնէ հին եկեղեցւոյ բարեզարդութիւնք, և թէ ինչպէս ժամանակը՝ իր ապականիչ և խանգարող ձեռքը՝ նաև այն սրբազան և աստուածային շէնքին վրայ ձգած է՝ ապականել զայն մերթ հերձուածոց երեւմամբ, մերթ տգիտութեամբ, մերթ անհոգութեամբ։ Մարդկային հասակին կը նմանցնէ՝ եկեղեցւոյ վիճակը. թէ ինչպէս անմեղ է մանկութիւնը, անգէտ չարի, անհմուտ մեղաց. և թէ ատեն անցնելով՝ նոյն անմեղութիւնը չարութեան կերպարանք կ'առնու։ Իր անձին օրինակովը՝ այս բանս հաւատարմացնել կ'ուզէ Օձնեցին. առանց պարծենալ ուզելու՝ կը յիշեցնէ իր այն մատաղ հասակին մէջ տուած յոյսերը՝ թէ զինքը տեսնողաց և թէ իր վարդապետին Թէոդորի. խորունկ սրտէ առաջ եկած հառաչանքով մը՝ Յոբայ խօսքերը կը կրկնէ. «Ո՞վ տանէր զիս ըստ աւուրցն առաջնոց»։ Ասկէց առիթ կ'առնու հայաստանեայց եկեղեցւոյն մէջ սպրդած անկարգութիւններն յիշեցնել, և թէ ինչ կերպով և կանոններով դէմ դնելու է անոնց. որպէս զի չըլլայ թէ հաւատացեալ ժողովրդոց մէջ ճարակելով՝ թէ հաւատոց, և թէ նոյն հաւատքը դաւանողաց բարօրութեանը վնասակար ըլլայ։

Ոճոյ կողմանէ ընտիր հայկաբանութիւն՝ միանգամայն և քիչ մը հելլենաբանութիւն կ'երեւնայ այս ճառին մէջ։ Անանկ լեզու մը գործածել ուզած է Իմաստասէր՝ որ նիւթոյն ծանրութեան և մեծվայելչութեան արժանաւոր ըլլայ։

⁂

Ճառ ընդդէմ Երևութականաց. — Հեղինակին գլխաւոր դիտումն եղած է այս ճառովս ցուցնել՝ Քրիստոսի երկու բնութեանց վարդապետութիւնը, Եւտիքական աղանդաւորաց դէմ, թէ ինչպէս ի մի անձն Քրիստոսի անշփոթ միացեալ են մարդկային և աստուածային բնութիւնք, և թէ սխալ է զրուցելը մի բնութիւն ի Քրիստոս՝ շփոթելով զերկուս բնութիւնս ի մի անձն նորա։ Այս աստուածաբանական խորունկ և դժուարին խնդիրը՝ իր մտքին և հանճարոյն արժանաւոր պարզութեամբ կ'ապացուցանէ երանելի վարդապետս, հին յոյն հարց լեզու և հմտութիւն գործածելով[1]։

---

1. Որովհետեւ մեր հին պատմագիրներէն ոմանք կը շփոթեն իրարու հետ զՅովհան Մանազկերտցի և զՅովհան Օձնեցի կամ զԻմաստասէր, առջինին մոլորութիւնք երկրորդին ընծայելով, և երկրորդին հմտութիւնն ու գրուածները առջինին համարելով, Չամչեան Հ. Միքայէլ վարդապետը՝ Հայոց պատմութեան մէջ երկար և անժխտելի փաստերով ցոյց տուած էր թէ ո՞րչափ կը սխալին թէ՛ պատմութեան թէ ժամանակագրութեան և թէ ոճոյ և գրութեան նկատմամբ անոնք՝ որ իրարու հետ այս երկու անձինքը կը շփոթեն, գուշակօրէն զրուցեց որ եթէ Յովհան Իմաստասիրին Երեւութականաց դէմ ճառը գտնուի, ուղղափառական և ողջամիտ պիտի ըլլայ այն երկասիրութիւնը. իր խօսքին հաւատարիմ ապացոյց առնելով՝ Գրիգորի Վկայասիրի, Ներսեսի Կլայեցւոյն, Գրիգորի Տղայոյ և Ներսեսի Լամբրոնացւոյ գովութեան խօսքերը, որոնք անկարելի էր որ այսպիսի հայրապետ մը՝ անանկ լեզուով մը գովէին, եթէ անոր կրօնական համոզումը՝ իրենց համոզմանէն տարբեր ըլլար՝ հաւատոյ այսպիսի նիւթի մը մէջ։

Այս ճառը փարիզու գրատան մէջ գտնուելուն պէս՝ Աւգերեան Հ. Մկրտիչ վարդապետը ծանօթութեամբք հրատարակեց (1807) բնագիրն ու լատինական թարգմանութիւնը, թէ՛ հեղինակին և թէ անոր պաշտպանին ողջմտութիւնը և արդիւնքը հանդիսացնելով. զոր և լատին աստուածաբանք՝ թէ՛ իրենց գիտութեամբ և թէ հին Հարց գործածած լեզուին հմտութեամբը նշանաւորք, լիուլի վկայութեամբ հաստատեցին։

Երեւութական կ'ըսուէին անոնք՝ որ Քրիստոսի տնօրէնութիւնը ոչ իրական այլ առ աչօք կը համարէին. ասոնց վարդապետութիւնը Հայաստան ալ տարածուեցաւ Յովհաննու Մայրագոմեցւոյն և իր աշակերտաց ձեռքով: Երբ Մայրագոմեցւոյն աշակերտը Սարգիս, զոր Իմաստասէրն խանգարիչ տանն Հայոց կը կոչէ, սկսաւ նորէն կենդանութիւն տալ այն մահառիթ վարդապետութեանց, այն ատեն երեւցաւ Յովհաննէս յասպարիզի. «Վասն նորա (Քրիստոսի) — կ'ըսէ, — գիր հանեմք, և յանուն նորա խրախոյս բառնամք. յաղագս նորին աշխատիմք և ատեամք զատելիս նորա. զկատարելագոյնն զնոսին ատեցուք զատելութիւն»:

Այսպիսի իրաւացի ատելութեան մը՝ ամէն էական յատկութիւններն ունի Իմաստասիրին այս ճառը: Նուրբ և խորունկ գիտութիւն աստուածաբանական ճշմարտութեանց, զօրաւոր և աննկուն ճարտարխօսութիւն՝ հակառակողաց բերանը սանձելու, և ընտիր լեզու մը՝ որուն նման մեր մէջ քիչ կը գտնենք, և որ ազգակից է յոյն եկեղեցական մատենագրաց գործածած լեզուին. հայախօս Աստուածաբան մը, Բարսեղ կամ Կիւրեղ: Ուստի և իրաւամբք զմայլած էին այս գրուածքիս վրայ մեր հին հայրապետքն. և Գրիգորիս Վկայասէր՝ իրեն համար մասնաւոր օրինակ մը գաղափարել տալով, ճառին վերջը իր ձեռքով ասանկ գրած էր. «Այս է գիրք կտակի ուղղափառութեան հօր մերոյ սրբոյն Յովհաննու կաթողիկոսի Հայոց և իմաստասիրի Օձնեցւոյ: Եւ ես Գրիգորիս Նուաստս՝ նորին հաւատոյ որդի և աշակերտ՝ ձայնակից եմ այսմ խոստովանութեան և աւանդման. և որք այլապէս դաւանեն քան զայսոսիկ և նորաձեւս ասեն՝ (նզովեալ լիցին)»:

Գրիգոր Տղայ կաթողիկոսն ալ կը գրուցէ. «Խնդրելի է՝ թէ յետ այսորիկ ո՞վ ոք ի հարցն սրբոց յայսոսիկ գըրգռեցաւ. եթէ զՅովհաննէս ասեմք զԻմաստասէրն՝ որ և աթոռակալ սրբոյ աթոռոյս, և նա այսոցիկ հետեւեցաւ

շաւղաց ուղղափառութեան. և մերն այլ սուրբ նախնիք զնորայն ընկալան խոստովանութիւն, և ձեռնագրեցին անխախտելի մնալ գիրս, Գրիգոր Վկայասէր և Բարսեղ հետեւող նորին, և միւս Գրիգորիս և Ներսէս՝ մերս հարք. և է յարկեղս գրոց մերոց՝ ընկալեալ ի նոցանէ»: Ուրիշ տեղ ալ «Երջանիկ և սուրբ հայրապետ» կը կոչէ զինքը, և անոր խօսքերը՝ «հոգեշունչ բանք»:

Շնորհալի ալ Թէորիանէ յոյն աստուածաբանին հետ խօսած ատենը՝ այսպէս կը գրուատէ զԻմաստասէրն. Հայոց կաթողիկոս մը կար, կ'ըսէ, Յովհաննէս անունով, որ իր վարքովը և խօսքով սուրբ հարց զուգահաւասար էր. և արտաքին գիտութեանց և փիլիսոփայութեան ալ ոչ անտեղեակ. իսկ աստուածային վարքովը՝ թէ ոչ քան զամենեսին, այլ քան զբազումս գերազանց»: Կը միաբանի և Յովհաննէս կաթողիկոս. «Հմուտ և տեղեակ գոլով նա, կ'ըսէ, բոլոր քերթողական շարագծաց՝ մասանց բանի և մասնականաց, այլ և վարժից սեռից՝ և որք ընդ գոյացութեամբ են սեռական տեսակարարութիւնք՝ մինչ ցանհատ վայր. և տարբերութեանցն եւս հանգամանաց, և պատահմանց անջատից և անանջատից՝ ոչ անտեղեակ: Դարձեալ և կրթական վարժից թէոնականաց՝ որ զարուեստին ծառոյ պտուղ՝ առաջնապէս ներադրէ յարուեստասէրն... Սա ամենայն առաքինի քաջողջութեամբ զինքն տուեալ՝ աշխատասիրաբար կրթական ջանիւ զինքն զինէր յերգս հոգեւորս, պահօք և աղօթիւք և ամենագիշեր տքնութեամբ»: Գրիգոր Մագիստրոս առ կաթողիկոսն Ասորւոց գրած թըղթին մէջ Թոնդրակեցի աղանդաւորաց վրայ խօսելու ատեն կը յաւելու, — անշուշտ զՕձնեցի ակնարկելով, — «Երանելի քահանայապետն մեր սուրբն Յովհաննէս, և վարդապետն Անանիա գրեալ զչարափառութեան նոցա զարտափելի հերձուածս»:

⁂

Ճառ ընդդէմ Պաւղիկեանց. — Առաջին երկու ճառերուն արժանի երկասիրութիւն մըն է նաեւ ասիկայ։ Պաւղիկեանք՝ հերետիկոսներ էին, հետեւողք Պօղոսի Սամոստացւոյ, և որոց արբանեակ երեւեցաւ Մայրագոմեցւոյն վերոյիշեալ Սարգիս աշակերտը, ու Յուլիանիտաց, Ապողինարեանց, Մարկիոնեանց և Սաբելեանց աղանդները մէկի վերածելով՝ սկսաւ իր մոլորամիտ վարդապետութեանց զՀայաստան աշակերտելու ետեւէ ըլլալ։ Ասոնց խարէութեանց դէմ սրեց իւր գրիչը իմաստասէր Հայրապետն Յովհան։ Կարծես թէ մեզի մերձաւոր ժամանակաւ՝ Նորաղանդ հերձելոց մոլորութիւնքն գուշակօրէն նկատեր էր, որոնք եկեղեցի բարեկարգելու պատրուակաւ՝ իրենց անձերուն ու կրից համարձակութիւն և ազատութիւն փնտռեցին։

«Ահա գտաւ, — կ'ըսէ Յովհան, — որոգայթ իբրեւ զվարմ հաւորսաց ձգեալ ի մէջ ժողովրդեան ազգի իւրոյ, ըմբռնել զախմարս և զպարզամիտս ի մարդկանէ, որք չարեաց ի չարիս ելին. ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի քրիստոսատեցութիւն. և անտուստ յանաստուածութիւն և ի դիւապաշտութիւն»։ Ամբարշտութեան այս ծայրը հասած՝ սկսան արհամարհել և անգոսնել Քրիստոսի Եկեղեցւոյն հաւատքը, և իրենց թիւր վարդապետութիւնը՝ սուրբ գրոց նուիրական խօսքերովը կ'ուզէին ապացուցանել։ Խաչին ընծայուած պաշտօնը կռապաշտութիւն կը համարէին, պատկերաց յարգանքը՝ աւելորդապաշտութիւն, և այլն։ Ասոնց դէմ կը խօսի Իմաստասէրը, և սուրբ գրոց խօսքերով զանոնք կ'ըմբերանէ. կը ցուցնէ՝ սքանչելի գիտութեամբ նաեւ հին կրօնական պատմութեանց, թէ որչափ կը զանազանին ի միմեանց՝ կռապաշտութիւնն՝ զոր կը մերժեն քրիստոնեայք, և անոնց ընդունած խաչի և պատկերաց պաշտօնը։

⁂

Յաղագս կարգաց Եկեղեցւոյ. — Երկու մասի կը բաժնուի այս ճառը. առջինին մէջ համառօտ մեկնաբանութիւն մը կ'ընէ ժամակարգութեան, գիշերային պաշտօնէն մինչեւ ի ճաշու ժամն. իսկ երկրորդին մէջ կը բացատրէ՝ ճաշամէն մինչեւ ցիններորդ ժամ, կամ ցերեկոյեան ժամակարգութիւն։ Համառօտութեանը մէջ՝ գեղեցիկ, յստակ և կատարեալ երկասիրութիւն մըն է։ Անշուշտ այս ճառերուն համար կ'ըսէ Յովհաննէս կաթողիկոս. «Յաւէտ իմն հմտագոյնս գրով գրոշմեալ տայ եկեղեցւոյ Քրիստոսի զրովանդակ կարգաւորութիւնս պաշտաման ժամուց, գեղեցիկ իմն յօրինուածով ճոխացուցեալ, և բացայայտեալ եւս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս, ի մխիթարութիւն գղերց եկեղեցւոյ։ Այլ և ճառս եւս ինքնախօս՝ բանաստեղծս յարդարեալ զզջացուցիչս չար գործոց, և յորդորականս ի պէտս ապաշխարութեան սակի»։ Սամուէլ ալ կը գրուցէ, «Սուրբ իմաստասէրն Յովհան կանոնական կարգօք պայծառացոյց զեկեղեցիս»։ Ասոնց կարգէն և ասոնց նման գրուածներ են Յաղագս մեծի աւուր միաշաբաթու ճառը, և Հատուածք բանից։

⁂

Շարականք. — Շարականները յօրինողաց ցուցակին մէջ կը տեսնենք որ իմաստասէր Հայրապետիս կ'ընծայուին Աւագ տօնից շարականները. այսինքն Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն, Ստեփաննոսի Նախավկային, գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և Որդւոց Որոտման շարականները։ Ետքի երեքն ալ՝ եթէ հաւանինք իմաստասիրին ընծայել, իրեն թէ ոճոյն, թէ հմտութեան և թէ բանաստեղծութեան անպատիւ բան մը ըրած չենք համա-

րուխր․ բայց Դաւթի մարգարէին եւ Յակովբայ առաքելոյն վրայ երգուածը՝ այն աստիճանի օտար է․ որ իրաւամբ զրուցած է հմուտ բանասիրին մէկը՝ թէ եւ ոչ Իմաստասիրին աշակերտի մը կրնայ ընծայուիլ այնպիսի խակ եւ անոճ շարագրութիւն։ Այս սխալման գլխաւոր պատճառ՝ Կիրակոս պատմչին մէկ խօսքը եղած կ'երեւնայ որ կ'ըսէ, «Երգեաց շարական եւ գհարց՝ Մեղաք յամենայնի, որ մինչեւ ցայսօր պաշտի յեկեղեցին Հայոց»։ Մտադրութեան արժանի է որ պատմիչն երգեաց կ'ըսէ եւ ոչ թէ յօրինեաց․ որով անշուշտ կ'ուզէ հասկցնել թէ խափանուած էր այն շարականին երգեցումը, եւ թէ Իմաստասէրը սահմանեց որ նորէն երգեցուի։ Նոյնը կը հաստատեն նաեւ Յայսմաւուրաց խօսքերը։ — Հռիփսիմեանց տօնին օրը երգուած Անսկիզբն Աստուած համբարձի շարականին յօրինումն ալ՝ ոմանք ուզած են Իմաստասիրին ընծայել․ բայց այլք աւելի հաւանականաբար այն երգին հեղինակ կը համարին զՄանդակունի։

⁂

Իմաստասիրին նշանաւոր աշխատանք մ'ալ եղած է՝ հին Հարց եւ ժողովոց սահմանած կանոնները կարգի դնել եւ իր հայրապետական իշխանութեամբ՝ անոնց կարեւոր հաստատութիւնը տալ․ որպէս զի իւրաքանչիւր ոք ըստ հաճոյս կանոններ չաւելցնէ, կամ արդէն սահմանուածները չվերցնէ։ Այս վախճանաւ՝ նոյն հաւաքմանէն ետքը մասնաւոր Յիշատակարան մ'ալ աւելցուց, իմացնելով թէ ինչ վախճանաւ եւ դիտմամբ եղած է այս աշխատութիւնս։ Բայց Իմաստասէր հայրապետը իր դիտման չհասաւ․ ժամանակ անցնելէն ետքը՝ ագէտ եւ ձեռներէց ընդօրինակողք՝ եկամուտ եւ անհարազատ կանոններ մուծին սուրբ առաքելոց եւ հայրապետաց անուամբ աւանդուած սահմանադրութեանց մէջ, եւ Օձնեցւոյ այս Յիշատակարանն ալ իրենց օրինակաց մէջէն վերուցին։

Իմաստասիրին բուն խօսքերն են․ «Կամեցայ զբովանդակ զսա ի նոցանէն կանոնական սահմանեալ բան՝ ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արձանացուցանել․ ուրանօր եւ գիս աստուածային Հոգին վերակարգեաց յաթոռ սրբոյն Գրիգորի, ի կաթուղիկոսութիւն աշխարհիս Հայոց․ Յովհաննէս՝ նուաստագոյն յիմաստասիրականաց խմբից, եւ ի բոլորից մեկին մնացեալ ըստ մարմնոյ յազգականաց։ Եւ ընկալեալ զայս ջան՝ նախկին, վասն կանոնականաց իմոց զարմին, զի ըստ հրամայողական անուանն առընթեր կայցեն եւ հրամանացն զուգաւորութիւնք․ եւ թէ պարտ է սպասաւորաց բանին՝ աստուածախօսունակ հարցն բանիւք կնքել բանիս։ Երկրորդ, զի զուսումնասիրաց անձանց՝ իմով աշխատութեամբ սիրով կամեցայ հանգուցանել զբազմախոյզ խնդիրս։ Քանզի գրեցաք ի սմա ոչ միայն զկանոնական սահմանեալն նոցա շարակարգութիւնս, այլ եւ զժամանակն եւ զպատճառն ի սոյն յայս ի ներքս ածեալ յաւելաք, ընդ նմին եւ զգլուխս անցնիւրոց համառօտեալ բանիւք ի սկզբան անդ նախակարգեցաք․ զի անաշխատաբար անդուստ զբանն յիւրում տեղւոջն գտցէ խնդրողն»։

⁂

Ուրիշ այլ եւ այլ երկասիրութիւնք ալ կը յիշատակուին Իմաստասիրիս անուամբ, յորոց ոմանք կորսուած են, եւ այլք երկբայականք։ Առջիններուն կարգէն կը համարուին՝ Ապաշխարութեան եւ վարուց զգաստութեան վրայ ընտիր ճառեր, զորս Յովհան կաթուղիկոս կ'աւանդէ թէ շարագրած ըլլայ, եւ մեր ձեռքը հասած չեն։

Երկբայականաց կարգէն են՝ Եկեղեցւոյ Հիմնարկէից վրայ երկու ճառ, Հիմնարկէք Եկեղեցւոյ կոչուածները։ Այս ճառերէն առջինին մէջ կը խօսի հեղինակը՝ տաճարաց հիմնարկութեան վրայ․ երկրորդին ալ՝ թէ նորաշէն եկեղե-

ցեաց մէջ ինչպէս տաճար կանգնելու է. և վայելուչ ոճով մը կը խօսի այն արարողութիւնը կազմող խորհրդաւոր աղօթից և սաղմոսաց վրայ։ Երկրայականներէն կը կարծուի նաև սուրբ Եկեղեցւոյ վրայ ընդարձակ ճառ մը, յորում հին և նոր, ստորին և վերին եկեղեցեաց բաղդատութիւնը կ'ընէ։

Կամ Օձնեցւոյս և կամ Մանդակունւոյ, և կամ ուրիշ համանուն հայրապետի մ'է ԶխԸ Թուին ի Համկլա գրուած մատենի մը մէջ աստուածաբանական տեսութիւն մը՝ այս խորագրով. «Երանելւոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի ապացոյց յերկուց բնութեանց սակս զփրկիչն, կամ մի բնութիւն»։ Սկզբնաւորութիւնն է. «Եւ քանզի առաքելականն և մարգարէիցն կտակքն ոչ ուրեք յիշատակեն զերկուց բնութեանց այլութիւն, ապա պարտ է անդրդուելի խոստովանութեամբ զաւանել ի սուրբ Երրորդութեանն զԲանն Աստուած մարմնացեալ»։

Այս բոլոր ճառերը՝ բաց ի վերջնոյս՝ իմաստասիրին հարազատ երկասիրութեանց հետ տպագրեցան ի Վենետիկ, 1833. ու լատինական թարգմանութեամբ ալ ծանօթացան արևմտեայց։

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

Սիւնեցւոյն վարքը և ուսումը։ — Ճանապարհորդութիւնները ի Բիւզանդիոն և ի Հռոմ։ — Երկասիրութիւնները։ — Իրեն ընծայուած չարափառ և անոնց հարազատութիւնը։ — Ուրիշ գրուածքը։ — Թարգմանութիւնը։

Դուին քաղքին աւագերիցուն որդին էր Ստեփանոս Սիւնեցի, որ Հայոց կաթուղիկոսարանին մէջ՝ ինչպէս կ'աւանդէ Ուռպելեան, իր նախնական ուսումը ընելէն ետքը, երբ հասակը քիչ մ'առաւ՝ Մաքենեաց կոչուած հռչակաւոր կրօնաստանը գնաց, նոյն վանքին առաջնորդ՝ ու գիտութեամբն և աստուածպաշտութեամբ նշանաւոր Սողոմոն վարդապետին քով։ Հոն երկար ժամանակ կրթուելէն ետքը՝ Սիւնեաց վարդապետարանը գնաց, առ Մովսէս եպիսկոպոս Սիւնեաց. որուն ջանքովը նոյն վարդապետարանը շատ ծաղկած էր գիտութեամբ[1]։ Այնպիսի հմուտ անձի մը առաջնորդութեամբ՝ քիչ ատենուան մէջ կատարեալ տեղեկութիւն ստանալով աստուածային գիտութեանց, եպիսկոպոսին հրամանաւ րաբունական ամպիոնը նստաւ, և սուրբ գիրքը կը մեկնէր նոյն վարժարանին աշակերտացը։

---

[1] *«Փութայ ճեպի, կ'ըսէ Ուռպելեան, յաղբիւրն իմաստից ի վարդապետարանն Սիւնեաց, որ էր գլուխ ամենայն գիտնոց Հայոց, և պայծառացեալ դպրոցքն որ ի նմա. քանզի որպէս Աթենացիքն ի մէջ Հոռոմոց և Յունաց ճոխացեալ էին և մայր իմաստից կոչեցեալ... լատին և հելլեն դպրութեամբ, այսպէս և սոքա ի տանս Թորգոմայ յաշխարհիս Հայոց»։*

Երբոր Մոլոխի մեռնելու օրերը մօտեցան, նոյն աթոռոյն հօգաբարձութիւնը իրեն յանձնեց։ Ստեփանոս ալ Անանիա անունով մէկը՝ որ թէ վարքովը և թէ գիտութեամբ մատաղրութեան արժանաւոր անձ մըն էր՝ հետը առնելով, Դուին գնաց առ կաթուղիկոսն, և Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրել տուաւ ու ղրկեց։ Իսկ ինքն չուզեց հոն դառնալ, հապա հոն կաթուղիկոսարանին մէջ նստած՝ հին և նոր կտակարանաց մեկնութիւնը կ'ընէր։

⁂

Նոյն ատենները՝ Սմբատ Բագրատունի անունով իշխան մը՝ հաւատոյ խնդրոց վրայ հակառակելով Սիւնեցւոյն հետ, չհաւանեցաւ անոր խօսքին. բայց միանգամայն չկարենալով դէմ դնել՝ անարգեց զՍտեփանոս, ու ետեւէ եղաւ զինքը հալածելու. Ստեփանոս ալ Դուին քաղաքէն ելլելով՝ փախստական գնաց ի Կոստանդնուպոլիս, ուր միայնակեցի մը քով բնակեցաւ, որ արտաքին հմտութեանց ալ տեղեակ անձ մ'էր. և հոն յոյն և լատին լեզուները սորվեցաւ, և գիշեր ցորեկ գիտութեանց հմտանալու կը ջանար։ Ետքէն Կոստանդնուպոլիս դառնալով, կ'երթար ի սուրբն Սոփի, և հոն եկեղեցւոյն մատենադարանին մէջ գտնուած գրքերը կը կարդար։ Լսեց զայս Սմբատ՝ և Լեւոն կայսեր իմացուց թէ թագաւորութեանդ անարգիչ և սուրբ հաւատոցդ հայհոյիչ մը՝ մեզմէ հալածուած՝ միայնաւորի սուտ անուամբ ու ձեւով, ձեր քովը եկած է։ Լեւոն բարկութեամբ հրամայեց փնտռել զինքն, և ածել ի դուռն արքունի։ Սիւնեցւոյն ընկեր միայնակեացը՝ խրատ տուաւ իրեն՝ անազգի և օտարական անձ մը ձեւացնել ինքզինքը, և թէ մուրալու պատճառաւ եկած էր ի թագաւորեալ քաղաքն։ Երբ լսեց Լեւոն՝ բարկութենէն իջնելով, թողուց։ Ստեփանոս յետոյ Աթէնք ալ գնաց, և հոն ըրաւ իրեն թարգմանութիւններն, որոնց վրայ ետքը պիտի խօսինք։

Երբոր Սիւնեցւոյն իմաստութեան համբաւը կայսեր ականջը հասաւ, կանչեց զինքը, և հաւատոյ խնդրոց համար կը հարցնէր։ Պատասխան տուաւ Ստեփանոս. Հրաման տուր որ կայսերական մատենադարանները բացուին իմ առջեւս, և ես խօսք կու տամ այնպիսի գրքեր գտնել անոնց մէջ՝ յորս ուղղափառական դաւանութեանց էութիւնը ամփոփուած ըլլայ»։ Երբ թագաւորը հրաման տուաւ, ոսկի տուփի մը մէջ պահուած գիրք մը գտաւ Սիւնեցին, ուղղափառ հաւատոյ վրայ գրուած, ու թագաւորին առջեւը բերաւ։ Կայսրը ուրախանալով, «Դուք Հայք ալ, ըսաւ, այս հաւատքը կը դաւանի՞ք»։ Եւ երբ Սիւնեցին հաստատուն վկայութեամբք հաւատարմացուց թէ նոյն հաւատքն ունին Հայք, կայսրը պատուիրեց իրեն որ Հռոմ երթայ, և մեծ եկեղեցւոյն մատենադարանին մէջ ալ եթէ երեք գիրք գտնելու ըլլայ նոյն ճշմարիտ հաւատոց ուղղութեանը վրայ ճառող, խոստացաւ բոլոր աշխարհքը՝ նոյն կրօնից աշակերտել տալ։ Սիւնեցին Հռոմ գնաց, ու առաջ գտածին միաբան և համախորհուրդ ուրիշ երեք գիրք ալ գտաւ. այսինքն՝ սրբոյն Կիւրղի Պարապմանց և Գանձուց գիրքը, Աթանասի աղեքսանդրացւոյ և Եպիփանու Կիպրացւոյ երկասիրութիւնքը։ Այն գրքերը հետն առնելով կասկածեցաւ որ եթէ դառնայ ի Կոստանդնուպոլիս՝ կայսրը իրեն տուած խոստումը պիտի չպահէ, ուստի Հռոմէն անցաւ ի Հայաստան, և իր հայրենիքը աւերեալ գտաւ յԱրաբացւոց։ Կաթուղիկոսն ալ վախճանած ըլլալով, անոր յաջորդն եղեր էր Դաւիթ, որ հայրապետական աթոռը փոխադրեր էր յԱրամոնս։ Սիւնեցին՝ թէ սրբոյն Գերմանոսի թուղթը՝ որուն հայ թարգմանութիւնն ըրեր էր, և թէ մէկալ գրքերը կաթուղիկոսին ընծայեց. ան ալ մեծապէս ուրախանալով՝ հրամայեց որ բերած թղթոյն պատասխանը ինքը տայ. Ստեփանոս ալ յանձն առաւ, ու բան առ բան բոլոր խնդիրները լուծեց։

Նոյն միջոցին Սիւնեաց աշխարհին կը տիրապետէր

Բարկեն, որ Դաւիթ կաթողիկոսին մարդիկ ղրկեց, որպէս զի հայրապետը՝ եպիսկոպոսական աթոռը և Սիւնեաց մետրապոլտութիւնը յանձնէ Ստեփանոսի. Դաւիթ ուրախութեամբ յանձն առաւ այն առաջարկութիւնը, ու մէկէն Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրելով զինքը՝ միանգամայն անոր յանձնեց եպիսկոպոսաց գլուխ կամ գահերէց կոչուելու պատիւը: Այն պաշտամամբ իր վիճակը դարձաւ Ստեփանոս, ու մէկ տարի միայն, կամ ըստ ոմանց՝ ութ տարի նոյն իշխանութիւնը վարելով՝ անգութ մահուամբ մեռաւ. վասն զի անզգամ կին մը՝ անկարգ վարուցը համար յանդիմանուելով սուրբ հայրապետէն՝ անոր առանձնութեանը և քնոյ մէջ սրով սպաննեց զինքը: Թանահատի կոչուած միաբանակեցաց վանքին մէջ թաղուեցաւ Սիւնեցին:

⁂

Սիւնեցւոյն երկասիրութիւնք. *— Այլ և այլ գրուածներ կը յիշատակուին Սիւնեցւոյն անուամբ, որոնց մեծ մասը թարգմանութիւնք են: Ասոնց մէջ գլխաւոր կրնանք համարել՝ մեր արդէն յիշատակած Ս. Գերմանոսի Կոստանդնուպոլսոյ հայրապետին թուղթը, որուն պատճառն այս է: Ստեփանոս ատեն մը Յունաց եկեղեցին երթալէն կը խորշէր. Ս. Գերմանոս հայրապետը կանչեց զինքը և պատճառը հարցուց. ու կասկածելով որ չըլլայ թէ այն խտրութիւնը մոլորութենէ առաջ եկած ըլլայ, հաւատոյ դաւանութիւն մը ուզեց իրմէ: Յանձն առաւ Ստեփանոս, և գրով ուզեց տալ նոյն դաւանութիւնը. յորում կը խոստովանէր իւր ուղիղ հաւատքը ըստ երից ժողովոցն՝ Նիկիոյ, Եփեսոսի և Կոստանդնուպոլսի. բայց Քաղկեդոնի ժողովոյն և անոր դաւանութեան խօսքը չէր ըներ: Ան ատեն Գերմանոս ուզեց համոզել զինքը՝ այն ժողովքին ողջմտութեան վրայ. և թէպէտ հաւանեցաւ Սիւնեցին, բայց յանձն չէր առնուր Յունաց հետ հաղորդիլ, պատճառ բերելով թէ քանի որ ազգը նոյն ուղղութեան խելամուտ եղած չէ, իրեն հալածանք և այլոց գայթակղութիւն կ'ըլլայ: Այն ատեն Գերմանոս գրեց թուղթ մը առ Հայս՝ որուն սկզբնաւորութիւնն է. «Քրիստոս է խաղաղութիւն մեր». և յորում իմաստալից ու յայտնի խօսքերով կը ցուցնէ Քաղկեդոնի ժողովոյն ուղղափառութիւնը. և թէ Յոյնք՝ երկու բնութիւն ի Քրիստոս ըսելով ուրիշ բան չեն հասկնար, բայց եթէ զմի անձն Քրիստոսի՝ որ ունի զճշմարիտ աստուածութիւն և զճշմարիտ մարդկութիւն, և թէ Քրիստոսի աստուածութիւնը և մարդկութիւնը ի միաւորման իւրեանց, իրարու հետ չշփոթեցան. այլ երկու բնութիւնքն ալ կատարեալ մնացին ի մի անձն Քրիստոսի. որով մի և նոյն Քրիստոս՝ կ'ըլլայ և է ճշմարիտ Աստուած ըստ աստուածութեան, և ճշմարիտ մարդ՝ ըստ մարդկութեան: Նոյն թուղթը թարգմանեց ի հայ Սիւնեցին, և բերաւ առ կաթողիկոսն. և իրեն հրամանաւ գրեց նոյն թղթին պատասխանը, ինչպէս վերն ալ յիշեցինք: Այս թղթին հայերէն օրինակը՝ ժամանակ անցնելէն ետքը՝ հակառակասէր անձանց ձեռքն իյնալով խանգարեցաւ, և անոր համար իրաւամբ կ'արհամարհէ զայն Լամբրոնացի: Բայց նոյն իսկ Լամբրոնացւոյն օրերը խնդիր ելաւ ազգին մէջ՝ թէ արդեօք Սիւնեցւոյն պէս իմաստուն և կիրթ միտք մը՝ կրնա՞ր այնպիսի գրութիւն հրատարակել ընդդէմ Գերմանոսի և եկեղեցւոյն Յունաց, որոց թէ բարեկամութիւնը և թէ ձեռնտուութիւնը վայելեր էր. ու գրչագրաց մէջ փնտռելով՝ այն թղթին վաւերական օրինակը գտան, որ բոլորովին կը տարբերէր ազգին մէջ գտնուածէն. ինչպէս կը վկայէ Վանական վարդապետն ալ, թէ «Ի գալ Ստեփանոսի Սիւնեցւոյ՝ ետուն թուղթ յաղգս Հայոց. այլ ոչ ոք պատասխանւոյ փոյթ չարար. ինքն գրեաց, բայց մինչեւ յայն տեղին թէ «Սերմանողք այսոցիկ ի հանդերձեալն ունին զպտուղն»: Իսկ զայն որ նախատինք է՝ այլք են գրեալ»:*

Մօտերս ուրիշ երկու թուղթեր ալ գտնուեցան յանուն Սիւնեցւոյն. մէկը գրուած առ պատրիարքն Անտիոքայ, և մէկալը առ վարդապետս Աղուանից, որ համառօտ գրուած մըն է. իսկ առաջինն ընդարձակ, յորում Հայոց եկեղեցւոյն դաւանութեան խօսք ընելէն ետքը, պաշտպան կ'ըլլէ նաև անոր ծիսական աւանդութեանց և սովորութեանց, ընդդէմ Յունաց. և ի հաւատարմութիւն իւր բանից այլ և այլ պատմութիւն մէջ կը բերէ, որոնք առաւել առասպելաց կերպարանք ունին քան թէ ճշմարտութեան[1]։ Նման ոճով ուրիշ երկու ճառեր ալ գտնուեցան, որոնց ամենուն հաւատարմութիւնը կրնանք տարակուսի տակ ձգել իրաւամբք։

⁂

Շարականք. — Ոմանք մեր ազգային մատենագրութեան մէջ երկու Ստեփաննոս Սիւնեցի դնելով, առաջնոյն ընծայած են Աւագ օրհնութիւնքը՝ բաց ի վառ ձայնէն, որ Շնորհալւոյն երգածն է, և երկրորդին կու տան Խաչի շարականաց կարգին մէջ գտնուած Սրբուհին սրբոց վսեմ և իմաստալից երգը։ Բայց որովհետև ըստ պատմութեանց մի է Ստեփաննոս Սիւնեցին՝ քերթող և թարգմանիչ և գրական կոչեցեալ, բնականաբար այս շարականներն ալ՝ մեր Սիւնեցւոյն քերթողական հանճարոյն արգասիքն են։ Խօսքերնուս ստուգութիւնը կը հաւատարմացնէ Օրբէլեան.

«Բաժանեաց, կ'ըսէ, և զութ ձայնսն. և կարգեաց շարեաց շարականս՝ զյարութեան օրհնութիւնսն. երգեաց և կցուրդս քաղցրահամս. յարմարեաց և զստուգոգին յինանցն, եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր»։ Կը միաբանի և Կիրակոս. «Արար և երգս հոգեւորս քաղցր եղանակաւ, շարականս, կցուրդս և երգս»։

Ազգային պատմագիրք ուրիշ այլ և այլ երկասիրութիւնք ալ կ'ընծայեն Սիւնեցւոյն, որոնք մեր ձեռքը հասած չեն. ինչպէս Արարածոց, Յոբայ, Դանիէլի և Եզեկիէլի մարգարէութեանց մեկնութիւնները։ Միայն այս վերջինիս հատուածներէն քանի մը կտոր բան մնացած է։ Դանիէլի մեկնութեան հատուած մ'ալ ընտիր ոճով, որ թերեւս Սիւնեցւոյն ըլլայ[1]։

Խօսրով Անձեւացեաց եպիսկոպոսն ալ կ'աւանդէ թէ եկեղեցական կարգաւորութեանց մեկնութիւն մ'ալ շարադրած ըլլայ, և անշուշտ անոր հատուածն է՝ որ ճառընտրի մը մէջ կ'երեւնայ այսպիսի խորագրով. «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի ասացեալ, վասն Նախերգանի աղօթից որ ի մէջ գիշերի կատարի»։ Կիրակոս ալ կը գրուցէ թէ սուրբ աւետարանաց մեկնութիւն մը յօրինած ըլլայ, որ դարձեալ՝ մեզի անծանօթ երկասիրութիւն է։ Միայն զանազան քերականական գրութիւնք հասած են մեր ձեռք Սիւնեցւոյն անուամբ, և անոնց համար է Քերթող կոչուիլը։ Հետեւեալ մակագրով գրուածքի մ'ալ կը հանդիպինք գրչագրաց մէջ և զոր ենթադրութեամբ կրնանք ընծայել Սիւնեցւոյս՝ եթէ ուրիշ համանուն անձի մը երկասիրութիւն չէ. «Վասն անապականութեան մարմնոյն որք ասեն թէ որ աճէ՝ և նուազէ. Ստեփաննոսի իմաստասիրի ասացեալ»։ Ուրիշ գրչագրի մը մէջ ալ յիշուած կը գտնենք

---

[1] Խորագիրն է. «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի մեծի իմաստասէրի պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի զոր վասն հաւատոյ գրեալ էր», իսկ միւս ճառից խորագիրք. «Յաղագս եկեղեցաւորնեաց կարգաց թէ զինչ է խորհուրդն, — Վէմն անսասան և անկասկած եդեալ ի հիմունս», — «Խորհուրդ և կարգաւորութիւն եկեղեցւոյ. — Որպէս լեր եկեղեցի սուրբ, իմանալի դրախտ աստուածագործ», — «Նորին և այլոց վարդապետաց, ի նոյն խորհուրդ եկեղեցւոյ. — Նաւ է եկեղեցի. նաւապետ հայր, նաւավար որդի, նաւահանգիստ սուրբ հոգին»։

[1] «Մեկնեաց, կ'ըսէ Օրբէլեան, և գրեանս բազումս, զԱրարածսն, զՅոբն, զԵզեկիէլ և այլ բազումս. որոյ բանքն նշանաւոր ի մէջ այլոց մեկնչաց՝ փայլեն որպէս ջահ պայծառ։ Արար և ճառս բազումս»։

նոյնպէս մեզի անծանօթ երկասիրութիւն մը որ Ստեփանոսի իմաստասիրի անունը կը կրէ. «Աշխարհացոյց Ստեփանոսի Հայոց իմաստասիրի ի գրոց մեկնութենէ»։

Բանք ընդդիմութեան ի նիւթս հաւատոյ քանեւերկու գլուխք ի Ստեփանոսէ Սիւնեաց։ Կը գտնուի ի Մատենադարանին Էջմիածնի։ Արղընոյ Բարձրահայեաց Ս. Աստուածածին վանաց Մատենադարանին մէջ գրչագիր մ՚ալ, որ նոյն է անշուշտ այս գրութեան հետ. «Ստեփաննոսի Սիւնեաց տեառն պատասխանիք ընդդէմ ազգին Ֆռանգաց»։

Ստեփանոսի թարգմանած գրոց մէջ մեզի ծանօթք և հնացեալքն են Ս. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ գրուածքն, Ս. Կիւրղի Պարապմանց գիրքն, Գր. Նիւսացւոյ Յաղագս Բնութեան մարդոյ գիրքն, Ղեւտական գրոց մեկնութիւն մը, որ ամենն ալ թարգմաներ է ի Կոստանդնուպոլիս՝ Դաւիթ Հիւպատ անուամբ ազգակցի մը օգնութեամբ։

* * *

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ

Ղեւոնդ Երէց և իր պատմական գրուածքը։ — Անոր նիւթը։ — Ոճը։ — Պատմական արժէք իր գրուածին։ — Բնագրին տպագրութիւնն ու թարգմանութիւնը։ — Մէկ գաղղիացի արեւելագիտին կարծիքը։

Թէպէտ Ղեւոնդի ծննդեան և մահուան տարին որոշ չեն նշանակեր ժամանակագիրք, բայց յայտնի կ՚երեւնայ թէ մինչեւ Ը դարուն վերջերը ապրած ըլլայ, հետեւաբար՝ ականատես վկայ պատմած վերջին դէպքերուն։

Ղեւոնդեայ գրոց ձեռագիրներուն խորագիրն է. «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց որ յաղագս երեւելոյն Մահմէտի. և զկնի նորին թէ որպէս, և կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ Հայոց ազգիս»։ Բայց գրոց մէջ Մահմէտի ծննդեան և ոչ խօսք կ՚ըլլայ. և առաջին բանը որ աչքիդ կը հանդիպի՝ անոր մահն է. որով Ղեւոնդեայ պատմութիւնը Մահմէտի մահուընէն ետքը կը սկսի[1], և որքաղան կոչուած պատերազմէն՝ զոր Ապուպէքիր, Ոմար և Օսման խալիֆաները հրատարակեցին՝ իրենց դէնին չհետեւողաց դէմ։

---

[1] *Ոմանք արդի բանասէրներէն համարեցան զՂեւոնդ միակ աղբիւր որմէ յառաջացած ըլլայ Մովսէս Խորենացւոյն Պատմութիւնը (տ. Հանդէս Ամսօրեայ,* 1929 *և* 1930 *տարիները)։ Բոլորովին անտեղի է այդ կարծիքը՝ և քննադատական ո՛և է հիմունքէ զուրկ։ Ծիծաղելի պիտի ըլլար, հարկաւ, ճարտարապետութիւնը կամ բժշկութիւնը, կօշկակարութենէ բեռնակրութենէ և կամ խոհակերութենէ յառաջ եկած ենթադրելը. ճիշդ նոյն համեմատութիւնն է Խորենացւոյն և Ղեւոնդ պատմչի միջեւ։ Ո՛չ նիւթը, ոչ ոճը, ոչ լեզուն, ոչ պարագաները, ոչ հոգեբանութիւնը, և ամենեւին ո՛չ մի նմանութիւն ունին իրարու հետ, ինչպէս ընթերցողը դիւրաւ*

Բաց աստի, Ղեւոնդ համառօտ յիշատակութեամբ մը կ'անցնի՝ Մահմէտի անմիջական յաջորդ երեք խալիֆայից ժամանակ Հայաստանի մէջ պատահած դէպքերուն վրայ։ Իր բուն պատմութիւնը կը սկսի Քրիստոսի 661 թուականէն, Ումմիատեանց առաջին խալիֆային՝ Մուավիէի իշխանութեան առնէն, որ իր թագաւորութեան աթոռը՝ Արաբիայէն յԱսորիս փոխադրեց, և իր ժամանակը Հայք բոլորովին Արաբացւոց լուծին տակ ընկան, և երդումն հպատակութեան տուին. և 662ին Գրիգոր Մամիկոնեանը առաջին իշխան եղաւ Հայոց, զոր Արաբացւոց խալիֆայն անուանեց։ Ղեւոնդ մինչեւ Քրիստոսի 788 թուականը կը հասցնէ իր պատմութիւնը, յորում Ստեփաննոս Հայաստանի կաթուղիկոս ընտրուեցաւ. որով 156 (կամ 128) տարուան պատմութիւն կ'աւանդուի իր գրոց մէջ։ Հոն կը լմնցնէ Ղեւոնդ իր Պատմութիւնը, և գրչագիրք կը յաւելուն. «Կատարեցաւ վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունւոյ»։

Ոճոյն նկատմամբ՝ շատ պարզ և հետեւակ է, և գրեթէ համարակաց խօսից ոճէն չի տարբերիր։ Տարակոյս չկայ թէ հինգերորդ դարուն պատմչաց ոճը՝ Ղեւոնդ երէցի գրքին մէջ չի տեսնուիր. բայց եթէ ուզենանք նկատել զինքն իբրեւ ութերորդ դարու մատենագիր մը, մեզի համար թէ ոճովը և թէ պատմագրելով՝ մտադրութեան արժանի անձ մը կը ներկայանայ Ղեւոնդ. իր ժամանակին աղիտից մէջ կրթուած հանճար և սիրտ մը կը ցուցնէ։ Պատմութիւնը ճիշտ, ժամանակագրութիւնն ուղիղ, կարելի եղածին չափ՝ համառօտախօս և սուղաբան։

Եւրոպական գիտութեանց օգտակար ծառայութիւն մ'ընելու դիտմամբ՝ Էջմիածնի միաբան Շահնազարեան Կարապետ վարդապետը գաղղիական թարգմանութեամբ հրատարակեց Ղեւոնդեայ պատմագրութիւնն ի Փարիզ։ Այս հրատարակութիւնը Ասիական ընկերութեան կաճառոյն հաղորդելուն առթիւ՝ անուանի արեւելագէտն Մոհլ՝ հետեւեալ քննադատութիւնը կ'ընէ հեղինակին անձին և ոճոյն վրայ. «Ղեւոնդ, կ'ըսէ, իւր գրքի վերջի մասին անցքերուն ժամանակակից և ականատես եղած է. ասով մեծ յարգ ունի. բայց ուրիշ կողմանէ մեծ իմաստուն և հանճարեղ մարդ մը չէ. երկրին վիճակը խեղճ կերպով կը բացատրէ, լաւ ալ չի հասկցուիր թէ ինչ էին այն քաղաքական երկպառակութեանց պատճառները որ առիթ կու տային Արաբացւոց ի Հայաստան արշաւելու. և գրքին երրորդ մասը բռնած է Լեւոն Իսաւրացւոյն առ Ոմար Բ գրած աստուածաբանական մէկ նամակը, որ թերեւս վաւերական չէ. վաւերական ալ համարուի, Հայաստանի պատմութեան հետ ամենեւին վերաբերութիւն չունի։ Այսու ամենայնիւ, Ղեւոնդ պատմիչը այնպիսի մատենագիր մըն է, որ իւր յայտնի ճշմարտախօսութեան համար շատ յարգի է, և իւր սաստիկ հայրենասիրութիւնը իրեն բաւական պերճախօսութիւն մը կու տայ հայրենեաց թշուառութիւնը գրելու առեն՝ որոնց ականատես եղած է»։ — Նոյն Շահնազարեան վարդապետ Ղեւոնդեայ պատմութեան բնագրին տպագրութիւնն ալ հրատարակած է ի Փարիզ ի 1859։ Պատկանեան ալ ռուս թարգմանութիւն մը ի Փեթերպուրկ յամի 1862։

* * *

կրնայ համեմատուիլ։ Մինչ Մ. Խոր. վեհ լեզուով ու շքեղ ոճով հայ փառաց տակաւ նուաղմանն ու մայրամուտքի սկիզբները կը պատմէ, Ղեւոնդ՝ բոլորովին ուժասպառ ու պարտասուն գրչով՝ միայն Արաբներով կը զբաղի. իրեն քով հայ նախարարք և իշխանազունք այնքան վատթարեալ, այնքան խեղճ են և չիջելափառ, որ հարկահան ոստիկաններու խիստ լուծին ներքեւ կը հեծեն ու կը հառաչեն (տ. Ղեւոնդ՝ էջ 158–9 և 168–9)։ Խորենացւոյն պատմութիւնն ուրեմն, եթէ կ'ուզենք ողջմտութեամբ դատել, Ղեւոնդի հետ ո՛ր և իցէ կապ չունի։ Տեղւոյս համար առ այժմ այսչափ բաւական ըլլայ։ — Ծնթ. Գ. տպ։

ԴԱՐ Թ

ԶԱՔԱՐԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Զաքարիա կաթողիկոս և Փոտ պատրիարք Կոստանդնուպոլսի: — Շիրակաւանի ժողովը: — Թղթակցութիւնք ընդ Փոտ պատրիարքի: — Զաքարիայի անուամբ գտնուած ճառերը:

Քրիստոսի 854 թուականին երբ Յովհաննէս կաթողիկոս վախճանեցաւ, Սմբատ իշխանաց իշխանն հրամայեց որ Շիրակայ Երազգաւորս աւանաքաղաքը եպիսկոպոսաց ժողովք մը գումարուի՝ նոր հայրապետի ընտրութեան համար. և վիճակը ելաւ Զաքարիա անունով ասկական անձի մը, զոր՝ մի և նոյն օրուան մէջ՝ սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս և կաթողիկոս ձեռնադրեցին:

Այն ատենները Կոստանդնուպոլսոյ պատրիարքական աթոռը կը նստէր Փոտ. և սկսեր էր Յունաց իշխանութեան մէջ բնակող Հայերը հալածել, և նախատանօք վարուիլ անոնց հետ, Քաղկեդոնի ժողովքը մերժելնուն համար: Զաքարիա կաթողիկոս որ չէր գիտեր թէ ինչ հնարագիտութեամբք այն մեծ իշխանութեան հասեր է Փոտ, սիրոյ թուղթ գրեց առ նա, միանգամայն իմացուց թէ Հայք ինչ պատճառաւ կը խորշին ի ժողովոյն Քաղկեդոնի, և աղաչեց որ ճշմարտութիւնը ծանուցանէ իրենց: Տեղնիտեղը պատասխանեց իրեն Փոտ, թէ ինչպէս սուտ համբաւներ հասեր են Հայոց ականջը. և որովհետև Զաքարիա կաթողիկոս գրած էր թէ Հայք հերձուածապետաց հետևողք չեն ամենևին, այլ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, Փոտ՝ անկէց առիթ առնելով՝ կը ցուցնէ իր ու բոլոր եկեղեցւոյն Յունաց նոյն սուրբ հօր վրայ ունեցած մեծարանքը, և միանգամայն խրատելով կ'ըսէ. «Եւ վասն զի այդպիսի հռչակաւոր վարդապետի աշակերտք էք, ոչ է պարտ հետևող լինել մտաց ձերոց, այլ սուրբ և աստուածապաշտ գրոց հետևել»:

Զաքարիա կաթողիկոս երբոր Փոտայ թուղթը կարդաց, հետն առնելով Նանա ասորի և Յովհան կամ Վահան եպիսկոպոսը՝ Երազգաւորս աւանը գնաց առ Աշոտ իշխան, և Փոտայ թուղթը տուաւ անոր:

⁂

Այն ատեն Աշոտոյ հաճութեամբ և կաթողիկոսին հրամանատրութեամբ Շիրակաւանի ժողովքը գումարեցաւ. յորում Վահան երկար և լուսաւոր վարդապետութեամբ ճառ մը խօսեցաւ՝ սուրբ Երրորդութեան և Մարդեղութեան խորհրդոց վրայ: Ետքը երբոր նոյն ժողովոյն մէջ հնգետասան գլուխք բանից կամ վարդապետութիւնք սահմանեցան, Վահան եպիսկոպոս միւսանգամ սկսաւ խօսիլ ժողովոյն կողմանէ, ցուցնելով երկուց բնութեանց անճառ և անշփոթ միութիւնն ի մի անձն Քրիստոսի:

Շիրակաւանի ժողովքէն քիչ ետքը՝ Սահակ Մռուտ կամ Ապիկուրէշ վարդապետը, զոր Վարդան Տայոց Աշունք տեղւոյն եպիսկոպոս կ'աւանդէ, Զաքարիա կաթողիկոսին քով գալով, և իմանալով իրմէ թէ Յունաց և Հայոց մէջ միաբանութիւն եղեր է, շատ վշտացաւ. ու յանդիմանութեան թուղթ մը գրեց առ Փոտ, Յունաց եկեղեցին մոլորեալ ցուցընելով: Բայց այն թուղթը Կոստանդնուպոլիս չհասաւ: Այս դէպքը՝ բոլորովին հակառակ կերպով կ'աւանդէ Կիրակոս, և որ աւելի համաձայն է ի հնոց առ մեզ հասած յիշա-

տակարանաց: Փոտ մասնաւոր թուղթ մը գրեց, կ'ըսէ, առ Աշոտ իշխան, ու թղթոյն հետ Քրիստոսի տնօրինական խաչէն մաս մը ղրկեց անոր. Աշոտ իշխանին հրամանաւ Սահակ վարդապետ այն թղթին պատասխանը տուաւ, գեղեցիկ և իմաստասիրական: Ասողիկ ալ կը վկայէ թէ «գրեաց պատասխանի թղթոյն Փոտայ Յունաց պատրիարքի, լի իմաստութեամբ և գիտութեամբ»: Այս երկու թղթոց օրինակներն ալ հասած են առ մեզ: Փոտայ առ Աշոտ գրածին խորագիրն է. «Պատճէն թղթոյն հայրապետին Կոստանդինուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխան: Քաջայայտ բարեպաշտութեամբ, հզաւրագոյնդ ճոխութեամբ, բարձրագոյնդ ի համաստեառ՝ Աշոտդ իշխանդ Հայոց. Փոտ՝ շնորհիւն Աստուծոյ գլուխ եպիսկոպոսաց Նոր Հռովմայ, և պատրիարք հանուրց»: Աշոտոյ կամ իր կողմանէ գրուածին ալ. «Պատասխանի թղթոյն Փոտայ գրեալ Սահակայ Հայոց վարդապետի՝ հրամանաւ Աշոտեայ Հայոց իշխանաց իշխանի: Քահանայապետ գգուանացեալ պարկեշտ և առաքինասէր որ ի Քրիստոս վարիւք Փոտ, վերադիտող թագաւորական մեծ քաղաքիդ Նոր Հռոմայ պատրիարք, Աշոտ իշխանաց իշխան Հայոց մեծաց: Զգիր հանճարեղ խոհականութեան ձերոյ, ով աստուածարեալդ, ընթերցայ, և յոյժ բարեբանեցի ուրախութեամբ զերկնաւորն զՔրիստոս զՓրկիչ մեր»:

Վերը յիշուած թղթէն զատ՝ այլ և այլ ճառեր (մեզի ծանօթք՝ հնգետասան թուով) շարագրած է Զաքարիա կաթուղիկոս Քրիստոսի տնօրինականաց վրայ, ընդհանրապէս վայելուչ ոճով և շարագրութեամբ, և յոյն եկեղեցւոյ վարդապետաց քիչ շատ հետեւողութեամբ: Ասանկ են իր ճառերը Քրիստոսի Ծննդեան, Մկրտութեան, Գալստեան յԵրուսաղէմ, մեծի Երկուշաբաթին, մեծի Երեքշաբաթին, մեծի Չորեքշաբաթին, վասն Կատարածի աշխարհիս, վասն Մատնութեանն Յիսուսի, ի խորհուրդ մեծի Հինգշաբաթուն, Տէրունական ընթրեաց, ի Չարչարանս տեառն յոր

մեծի Ուրբաթուն, Թաղման, ի Ճրագալուցի Զատկին, ի Յարութիւնն, ի Համբարձումն տեառն, ի սուրբ խաչն աստուածընկալ, ի տօնի սուրբ Նշանին, ի սուրբ Եկեղեցին և ի Ննջումն ամենասուրբ կուս Աստուածածնին:

Զաքարիայի կ'ենթադրուին Տօնապատճառի մը մէջ (Մատենադարան Երուսաղէմի, թիւ 413) գտնուած հետեւեալ ճառերը. Յաղագս տապանակին խորհրդոյ. — Յաղագս Այլակերպութեան տեառն մերոյ, և Աստուծոյ. — Ի նոյն խորհուրդ վարդավառի տօնին յառակացն Սողոմոնի. — Յաղագս Շողակաթին: — Զաքարիայի կաթողիկոսի և Մովսէսի քերթողի ի փոխումն Աստուածամօրն և պատկերի նորին:

ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Շապհոյ պատմական երկասիրութիւնը: — Իր անուանն և երկասիրութեանց յիշատակութիւնն առ նախնիս: — Գրութեան ոճը: — Իրեն ընծայուած անհարազատ գրութիւն մը:

Շապուհ Բագրատունի՝ Աշոտոյ անթիպատրկի որդին էր: Հայոց, կամ աւելի ճիշդ խօսելով, իր ժամանակին պատմութիւնը շարագրեց Շապուհ, ինչպէս որ կը վկայէ Յովհան կաթողիկոս, բայց իր պատմութեան գիրքը՝ մինչեւ մեր օրերը դեռ տեսնուած չէ[1]: Յովհաննու կաթուղիկոսի խօսքերէն կ՚երեւնայ՝ թէ աւելի Բագրատունեաց և անոնց ծաղկելուն պատմութիւնն է գրած, վասնզի հին ժամանակաց անցքերը աւանդելէն ետքը՝ համառօտ կերպով մը պիտի անցնիմ, կ՚ըսէ, այն դէպքերուն նկատմամբ՝ զորս Շապուհ Բագրատունին աւանդեր է, տեղնիտեղը պատմելով Սմբատայ սպարապետին որդւոյն՝ Աշոտայ՝ պայազատելը, և թագաւորական հանգամանաց կարգը, Բուղա ոստիկանին գերի տարածներուն դարձը, և իւրաքանչիւր նախարարաց իրենց սեպհական իշխանութեան մէջ հաստատուիլը, և անոնց՝ թշնամեաց դէմ ըրած զանազան յաղթութիւնք։ Քիչ մը ետքը՝ Գրիգոր Արծրունեաց իշխանին սպանումը պատմելէն վերջ՝ կը յաւելու Յովհան կաթողիկոս. «Բայց զմնացորդս բանիցս այսոցիկ՝ զօրութեանց և քաջութեանց և մրցարանաց և պատերազմաց և բազում բարի օճանից, ահաւասիկ գրեալ է ի գիրս պատմութեանց Շապհոյ Բագրատունւոյ, բաւական քեզ կացուցանել տեղեկագոյն առնն բարեբաստութեան». այսինքն է Աշոտ Արծրունեաց իշխանին վարուցը, որ մօր կողմանէ Աշոտայ Բագրատունեաց առաջին թագաւորին թոռն էր։ Յովհաննու կաթողիկոսին խօսքերէն յայտնի է որ Շապուհ երիցագոյն ըլլալով ժամանակաւ քան զինքն և ժամանակակից պատմած դէպքերուն՝ արժանահաւատ անձ մըն է[1]։ Գէորգ Ա.

---

[1] Էջմիածին, 1921ին ձեռագիր մը ի լոյս ընծայեց զոր հրատարակիչք ընդարձակ ու հմտալից յառաջաբանով կ'ուզեն ցուցնել թէ նոյն ինքն Շապուհ Բագրատունւոյն պատմութիւնն ըլլայ. ժամանակակից մատենագրաց

տուած նկարագրին՝ բաւական կը համաձայնի, Հայ իշխանաց ներքին հակառակութիւններն ու կռիւներն են որ ընտանեկան ու տաքուկ կերպով մը կը պատմուին հոն, շատ գեղջուկ և անոճ գրչով և անմշակ լեզուով՝ ինչպէս Յովհ. Զ կթղ. (տպ. Երուսղ 1867, էջ 166-7) կ՚ըսէ Շապհոյ գրածին նկատմամբ։ Սակայն, գրքին սկիզբն ու վերջ թերի է, հեղինակին անունը պակաս, քանի մը թերթերու անկումը և ինչ ինչ կէտերու մէջ՝ պատմչաց տուած նկարագրին չի համապատասխաներ. աս պատճառաւ՝ հարազատութիւնն առ այժմ տարակուսական կը մնայ, մինչեւ նոր ձեռագրի մը գիւտը գայ աւելի լոյս սփռել բանասիրաց։ Հրատարակուածն ամբողջ՝ 85 էջ միայն է։ Ծնթ. Գ. տպ.

[1] Յետին դարուց նորագոյն յիշատակագիր մը պատմչաց դասակարգութեան մէջ կը թուէ նաեւ «Շապուհ պատմութիւն. որ է գիրք որբոյն

կաթողիկոսի օրով՝ «առ նուազութեան մեծամեծաց ի մերում աշխարհի, պակասեաց, կ՚ըսէ, ի պատմութենէ» մեր իշխանաց վրայ գրոյցք. և վրայ կը բերէ. «Բայց եթէ գուցէ գտցի ինչ՝ բաւական քեզ բերցի նախ քան զմեզ պատմեալն ի Շապհոյ պատմագրէ»։ Ուրիշ տեղ մ՚ալ. «Ի մանկութենէ մինչեւ ցերեւոյթս երիտասարդութեան զԱշոտոյ որդւոյ Սմբատայ սպարապետի զզօրութիւնս և զքաջութիւնս և զպատերազմունս և զհրոսմունս ի յայլս, և զայլոց եւս ի նա, բաւական բերցի քեզ առ ի Շապհոյ պատմեալքն»։ Այսղիկ ալ կը գրէ. (կոստանդիանոս մեծն) «խընդրեաց և առ զնախկի թագն Դաւթի մարգարէին ի Շապհոյ Պարսից արքայէ, զոր բարձեալ էր ի գլխոյն Յեքոնիայ որդւոյ Յովսիայ, Նաբուգոդոնոսոր արքայ։ Որպէս ուսուցանէ քեզ պատմութիւնն Շապհոյ Բագրատունւոյ»։ Կիրակոս ի չորս ուրիշ ազգային պատմչաց կը յիշատակէ և զնա. «Եւ Շապուհ Բագրատունի»։ Նոյնպէս ալ Սամուէլ երէց։

Ոճոյն նկատմամբ կ՚երեւնայ թէ այնչափ ընտիր եղած պիտի չըլլայ. գէթ ըստ Յովհաննու կաթողիկոսի, որ թէպէտ պատմութեան ստուգութիւնը անհակառակելի կը համարի, բայց «զբոլորովին բաժանումն ապացուցից՝ ոչ կարացեալ ըստ քերթողական հրահանգացն համառօտաբար ընձեռել, սակայն ըստ իւրումն ժամանակի ընտանի գոլով նորա գրուցացն ամենայնի, գեղջուկ ձանիւ բաւական քեզ տայ պատճառս տեղեկութեան»։

Յանուն Շապհոյ Բագրատունւոյ՝ պահոց վրայ գրուած ճառ մը կայ, որ թերեւս ուրիշ համանուն անձի մը երկասիրութիւն է։ Աւելցնենք միայն որ յԵրուսաղեմեան Մատենադարանի պահուած գրչագրի մը մէջ (թիւ 999) Նշա-

---

Սմբատայ սպարապետին և այլ սուրբ նահատակացն. թուին Հայոց ՅԲ»։ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանաց ձեռագրաց ցուցակի մը մէջ ալ կը գտնենք ի թիւս այլոց. «Շապուհ պատմագիր, որ է պատմութիւն Որմըզդաքբաղայ և այլոց սրբոց նահատակաց որ ի թուին ԳՃԲ»։

նակուած կը գտնենք այսպէս. «Ի Շապհոյ պատմութենէն. Այլ քանզի ստուգանեաց նախահայրն՝ յերկիր դարձաւ ուստի առաւ»: Այս համառօտ խօսքէն ետքը, որ մասն է Պաչոյ ճառին, աւելցուած է և հետագայ տեղեկութիւնը Շապհոյ պատմչի անձին վրայ. «Այս ի պատմութենէ Շապհոյ Բագրատունւոյ է որդի Աշոտի ապուհի պատրկի, յանուն Գուրթի Բագրատունւոյ որդւոյ Աշոտի իշխանաց իշխան. զոր ձեռնառեալ և ընկալեալ յօժարութեամբ հօր Գուրթի առաջնորդի վանաց սրբոյն Ստեփաննոսի ի Բագրեւանդ գաւառի և յոյժ բերկրեալ յաղագս հեռի լինելոյ ի ստութենէ, և զի ճշմարտութեամբ յաւել յինքենէ զճառս բանից աստուածայնոց»:

ՄԱՇՏՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մաշտոց և իր վարքը ըստ ժամանակակից յիշատակագրաց: — Աբաս թագաւոր: — Դուինայ շարժը: — Մաշտոցի գրած թուղթը: — Իրեն ընծայուած ուրիշ երկասիրութիւնք:

Աշոտ և Սմբատ թագաւորաց օրերը ծաղկեցաւ Մաշտոց վարդապետն, որ կոտէից կամ Արագածոտն գաւառին Եղիվարդ գեղէն էր, քահանայի որդի «ի ժառանգաց մենաստանաց, — ինչպէս իրեն ժամանակակից յիշատակագիր մը կ'աւանդէ, — որ անուամբն սրբոյն Թէոդորոսի էր»: Երբ այլազգիք զօրացան բռնութեամբ այն գաւառին վրայ, հայրը՝ մանկութեան հասակին բռնադատեցաւ երթալ պանդխտութեամբ ի Սոթից գաւառ. ուր մնելով ի

կարգ աշխարհի, ծնաւ Մաշտոց: Հօրը դաստիարակութեան տակ՝ ուսմանց, մանաւանդ աստուածայնոց պարապեցաւ. անոր մահուանէն ետքն ալ աշակերտեցաւ Գեղարքունեաց գաւառին Մաքենոց կրօնաստանին մէջ գտնուող Թէոդորոս անունով միանձի մը, կամ նոյն վանաց առաջնորդ Ստեփանոս վարդապետին, ինչպէս կ'աւանդէ Օրբելեանն:

Քահանայութեան աստիճանն ընդունելով՝ իր բարեկրօն, ճգնաւոր և աստուածահաճոյ վարուք ամենուն սիրելի եղաւ: Բայց առաւելագոյն կատարելութեան փափաքանօք, «Եկն, — կ'ըսէ իր վարուց պատմագիրն, — բնակեցաւ ի կղզւոջ (Սեւան) ամլին վարուք. և թողլով զաս ի բնակութենէ մարդկան, սիրօղն ի պատուի և յանարգանս՝ բազմաց նշողացուցանէր զինքեան և զանասակ առաքինութեան, զոր թէ ունիցին հասել՝ վարատան հողմով ի ձորս և ի փապարս կորստեան: Այլ սա ոչ այսպէս. այլ գնացեալ բնակեցաւ յապալերին, յայս կղզւոջ. ուստի հարկաւորեալ բազում թախանձանօք՝ իմաստուն և հանճարեղն և լաւութեան սիրօղն, ի Մարիամայ Սիւնեաց տիկնոջէ կանգնեալ զաս ուխտ: Եւ ժողովեալ եղբարս միանձնականաց զաս՝ վասն հոգեաց տեառն իւրոյ, յարեւապէս վախճանելոյ Վասակայ Սիւնեաց իշխանին. յորում ունկնդիր եղեալ՝ յետոյ հաւատացաւ ասէ՝ Եթէ յԱստուծոյ է հրամանս, ես ոչ ընդդիմացայց. և շինեաց վանս, և ժողովեալ եղբարս՝ կալով կրօնաւորական կարգաւ: Եւ զարդարեալ բազմախուռն պատուիրանօք վայելչական սպասուք. և անձին իւրում յաւելոյր օր ըստ օրէ զգործ մշակութեան առաքինութեան շնորհօքն Քրիստոսի: Եւ այնչափ առաւելեալ ի մարմնի իւրոյ տանջանս, մինչ զի մեկնէր եւս ի մրգոյ և ի ջրոյ անգամ: Եւ զարմանալի այս էր թէ զիարդ ոչ ինչ ուրուք իրաց նուազ գտանէր. քանզի զաղօթսն հանապազորդ կարգաւ՝ անխափան ունէր զցայգ և զցերեկ. և զընթերցասիրութիւն գրոց սրբոց ոչ կասեցուցանէր. այլ և առնէր խոկ, և խրատէր զամենեսեան ի նոյն կարգ...

«Եւ եկեալ ընդ աւուրն ընդ այնմիկ իշխանն Հայոց Աշոտ ի կողմանս Վրաց վասն ապստամբելոց ոմանց յեղուզակաց... առ յեզերբ գետոյն հզաւրի որ կոչի Կուր. դարձեալ ընդ խաղաղութեամբ ճանապարհորդէր առ եզերբ ծովակին: Եկեալ գումարեցաւ ի տեղւոջ միոջ, հանդէպ կղզւոյն որ կոչի Բանակեաղ. հայցէր տեսանել զերանելին Մաշթոց, որ իբրեւ տեսին զիրեարս, բազում ուրախութիւն եղեւ երկոցունցն. ապա յոյժ սիրեալ և մեծապէս ընկալեալ զնա բարեպաշտ իշխանն Աշոտ. որ և թագաւոր իսկ եղեւ յետոյ: Ապա շնորհէր երանելի հօրն Մաշթոցի զլոյսն մշտնջենաւոր. զոր արձակեալ էր նմա արքային Յունաց Վասիլ: Յոտն կացեալ և արտասուօք համբերձ առեալ յինքն զսուրբ խաչն, զոր պնդեալ էր ոսկւով և զարդարեալ գեղեցկազան գործով, ընդելուզեալ մարգարտով. և առեալ եդ ի վերայ աչաց իւրոց և համբուրեաց զնա: Եւ երկիր պագեալ իշխանն՝ զաջ նորա համբուրէր... ապա հրաժարեցին ի միմեանց. իշխանն գնաց զճանապարհս իւր, և նա դարձաւ ի մենաստան իւր... Յայսմ ամի յորում կարգեցի զսակաւաւոր զրուցս՝ էր ամք կենաց նորա սակաւ ինչ քան զվաթսուն ամ. իսկ որ մեկնեալ էր ի կերակրոց և ի բոլոր իսկ հեշտութեանց մարմնոյ՝ երեսուն և երեք ամք. և ի շինութեան տեղւոջս քսան և երկու ամք»...

Աբաս սպարապետն տեսնելով որ իր եղբօրորդին Սմբատ՝ Բագրատունեաց վրայ թագաւորեց, Գէորգ կաթողիկոսէն օծուելով, ասկէ վրէժն առնելու համար՝ ուզեց զԳէորգ ձգել յիշխանութենէ, և անոր տեղ նստեցնել ըզՄաշտոց. ուստի և մասնաւոր թուղթ գրեց առ նա: Մաշտոց՝ այնպիսի առաջարկութիւն մը թէ իր սրտին և թէ մտածմանցը հակառակ տեսնելով, բացէ ի բաց հրաժարեցաւ. ու չէ թէ միայն չուզեց համախոհ ըլլալ Աբասայ հետ, այլ նաեւ մասնաւոր խրատական թուղթ մը գրեց առ Աբաս, յորդորելով որ այնպիսի վնասակար խորհուրդներէ ետ կենայ. կը ջատագովէր Գէորգ կաթողիկոսը, իրեն դէմ եղած ամբաստանութեանց ստութիւնը և անիրաւութիւնը ցուցընելով: Երբ այն թուղթն առաւ Աբաս, սաստիկ ամօթէն և ոչ իր մտերիմ համախոհից ցցուց. և երբ իր կուսակիցներէն շատն աստուածառաք պատիժներով պատուհասեցան, Աբաս անձամբ գնաց թողութիւն խնդրեց Գէորգ կաթողիկոսէն, ու եաքը իր եղբօրորդւոյն՝ Սմբատ թագաւորին հետ ալ հաշտուեցաւ: Մաշտոցի՝ առ Աբաս գրած թղթին ամբողջ օրինակը մէջ կը բերէ Յովհան կաթողիկոս իր Պատմութեան մէջ: Հոն կը կարդանք նաեւ առ Դունեցիս ուղղած թուղթ մը, զոր հետեւեալ պատճառաւ շարագրած է Մաշտոց:

Քրիստոսի 894 թուականին՝ հոկտեմբեր ամսոյն 13ին գիշերը՝ յանկարծական սասանութեամբ մը Դուին քաղաքին մեծ մասը կործանեցաւ, և բնակչաց շատը մեռան: Այն խեղճ գոյժը՝ մեծ տպաւորութիւն ըրաւ ուրիշ քաղաքաց մէջ բնակող Հայոց վրայ. և Մաշտոց վարդապետն ալ՝ որ նոյն ժամանակները Սեւան կղզւոյն մէջ կը բնակէր, արտաշարժ ու գեղեցիկ ոճով մխիթարութեան թուղթ մը գրեց այն սաստիկ հարուածէն ազատող խեղճերուն:

Յետ վախճանի Գէորգ կաթողիկոսի՝ ամենուն հաւանութեամբ անոր յաջորդ ընտրուեցաւ Մաշտոց, որ միայն եօթն ամիս կրցաւ հայրապետական աթոռը նստիլ:

⁂

Ուռպելեանը կ'աւանդէ թէ նոյն միջոցները այլ և այլ երկպառակութիւնք կային Հայոց, Վրաց, Աղուանից և Յունաց մէջ, հաւատոյ խնդրոց և եկեղեցւոյ ինն դասակարգութեանց վրայ. որոնց ամենուն լուծումը տուաւ, կ'ըսէ՝ Մաշտոց վարդապետ, այն թղթովը՝ զոր ի հրամանէ և ի խնդրոյ Գէորգեայ կաթողիկոսի գրեց. բայց այս թուղթը մեր ձեռքը հասած չէ, ինչպէս նաեւ ոչ այն նամակը զոր

Յովհ. կաթողիկոս կ'աւանդէ թէ գրած ըլլայ՝ երբ դեռ Սեւան կղզւոյն մէջ էր, Աշոտոյ առաջնոյն թագաւորութեան ժամանակ, անոնց դէմ՝ որ ի Քաղկեդոն և ի Շիրակաւան գումարուած ժողովոց հակառակ կը խօսէին։ Օրբէլեանը պատմագրական երկասիրութիւն մըն ալ կ'աւանդէ Մաշտոցի անուամբ. վասն զի Թանահատի կոչուած վանքին մէջ գտնուող միանձանց ճգնութիւնները նկարագրելէն ետքը կը յաւելու, թէ «Զայս ծանոյց մեզ պատմութիւն երանելւոյն Մաշտոցի որ ի Սեւան»։ Ուրիշ տեղ մ'ալ. «Թէ գլխովն և զերկայնն կամիս լսել՝ ընթերցիր զՈւխտանէսն և զԱղվանից պատմութիւնն և ի Գիր Թղթոցն տեղեկացիր. նաեւ զՏեառն Մաշտոցին որ ի խնդրոյ Գէորգեայ Հայոց կաթողիկոսի գրեալ է»։ Այս պատուական ու փափաքելի երկասիրութիւնն ալ դեռ մեզի անծանօթ է։

Արծրունին՝ Մաշտոցի ճգնողական վարքին հետ մեծապէս կը գրուատէ զինքը նաեւ յուսումնասիրութեան. վասն զի կ'ըսէ. «Այլ և ուսումնական բանգիտութեամբն յոյժ հմտագոյն»։ Սամուէլ ալ իր ժամանակագրութեանց մէջ. «Մաշտոց ճգնաւորական հանդիսիւ և իմաստասիրական արհեստիւ պայծառանայր»։

Ոմանք ուզեցին կարծել թէ այն Մաշտոց հայրապետին երկասիրութիւնն ըլլայ՝ նաեւ ազգային եկեղեցական արարողութեանց հաւաքման գիրքը կամ ծիսարանը, որ սովորական անուամբ Մաշտոց կը կոչուի։ Այս յայտնի սխալման գլխաւոր պատճառ եղած է նախ անուան նմանութիւնը. որովհետեւ այն ծիսարանին հեղինակ՝ սրբոյն Մեսրոպայ անունն ալ շատ անգամ Մաշտոց կը կոչուի. և երկրորդ՝ Յայսմաւուրաց և Կիրակոս պատմչին խօսքերը, որոնք թերեւս փոխանակ ըսելու թէ ծիսարանին մէջ քանի մը բան կարգաւորեց, կամ քանի մը սաղմոս և աղօթք աւելցուց, որ հաւանական կրնայ համարուիլ, կ'աւանդեն թէ ինքը եղած ըլլայ այն աղօթքները ժողվող և կարգի դնող։ Ահաւասիկ Կիրակոսի խօսքերը. «Սա կարգեաց ըզգիրս՝ որ ըստ անուան իւր Մաշտոց կոչի. ժողովեալ զամենայն կարգեալ աղօթս և ընթերցուածս ի միասին յարմարել յաւելուածով յիւրմէ. որ ունի յինքեան զամենայն կարգս քրիստոնէութեան»։ Բայց իր խօսքին դէմ կ'ելլէ ընդհանուր ազգին աւանդութիւնը, և սուրբ Ներսէս Շնորհալի, որ առ Միջագետացիս գրած թղթոյն մէջ յայտնապէս կը գրուցէ, թէ որչափ անտեղի է այս կարծիքը։

ՅՈՎՀԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Յովհան կաթողիկոս յաշակերտաց Մաշտոցի։ — Հայրապետական աթոռ բարձրանալը։ — Պատմութիւնը և անոր նիւթը։ Այս երկասիրութեան արժէքը։ — Գրական ոճը։ — Բնագրին հրատարակութիւն և թարգմանութիւնը։

Այս անուամբ՝ Հայաստանի հայրապետական աթոռը նստողաց վեցերորդն է Յովհաննէս, և ընդհանրապէս կը կոչուի՝ Յովհան կաթողիկոս կամ Պատմաբան։ Դրասխանակերտ աւանին մէջ ծնած էր Յովհան, Դուինի քաղաքին մօտերը. բայց ո՛չ ծնողքն և ոչ ալ ծննդեանը ճիշդ տարին յայտնի է։ Ի խորին ծերութեան վախճանեցաւ Քրիստոսի 925 թուականին։ Իր ուսմունքը՝ Մաշտոց վարդապետին ձեռքին տակ ըրաւ, որոյ և ազգական էր, ետքը մասնաւոր բարեկամութեամբ մտերմացաւ Գէորգ կաթողիկոսին ալ, և անկէ և Մաշտոցէ ետեւ նստաւ ի հայրապետական աթոռն, Ա. Սմբատայ թագաւորութեան ժամանակ։

Իր Պատմագրութեան երեսներորդ երկրորդ գլխոյն մէջ՝

այն պատուոյն հասնելուն պատմութիւնը կ'ընէ՝ կարգէ դուրս խոնարհութեամբ մը[1]. մեծարանօք և գովութեամբ կը խօսի իրեն նախորդ Մաշտոց հայրապետին վրայ, ողբալով անոր վաղահաս մահը, զոր թէ՛ Հայոց աշխարհին և թէ իր անձին համար աղիտալի դէպք մը կը համարի. որովհետեւ կ'ըսէ թէ ի մանկութենէ անոր հայրական խնամոց յանձնուած և աշակերտած էր։

Չի գիտցուիր թէ երբ կամ ո՛ր իշխանին խնդրով և առաջարկութեամբ ձեռք զարկաւ իր Պատմագրութիւնը շարագրելու։ Ոմանք կարծած են թէ տասներորդ դարուն սկիզբները սկսած ըլլայ յօրինել իր երկասիրութիւնը, հայրապետական աթոռը նստելէն ետքը. բայց աւելի հաւանական կ'երեւնայ այլոց գրուցածը որ կը համարին թէ մի և նոյն միջոցի երկասիրութիւն չէ ասիկայ. այլ մէկ մասը՝ 897 թուականէն առաջ շարադրուած է, մնացածները անկէ ետքը։ Այս կարծեաց ստուգութեան գլխաւոր պատճառն այն կը համարեն, որ Քաղկեդոնի ժողովոյն վրայ խօսելու ատեն՝ գրքին առաջին մասին մէջ, խիստ և ուժով լեզու մը կը բանեցնէ նոյն ժողովոյն դէմ, բայց անկէ ետքը լեզուն կը փոխէ. և թէ կրօնական համոզմամբ՝ թէ քաղաքական պատճառաւ, գիտնալով որ մինչեւ յունական կայսրութիւնը վրանին ձեռք չդնէ՝ անկարելի է որ Հայաստանի խեղճութեանց դարման մ'ըլլայ, կը սկսի չափաւորել խօսքը, թէ նոյն ժողովոյն, և թէ անոր սահմանադրութեանց հպատակող Յունաց նկատմամբ։ Ինչ աստիճանի ստուգութիւն ալ ուզենանք տալ այս ենթադրութեան, այս յայտնի որ Յովհան կաթողիկոս գրեթէ մինչեւ մահը աշխատեցաւ իր Պատմագրութեան վրայ. որովհետեւ Քրիստոսի 925 թուականին մեռաւ, և իր պատմած դէպքերն ալ մինչեւ 923 կամ 924 կը հասնին։

⁂

Պատմութիւնն և անոր նիւթը. — *Հարիւր ութսուն և եօթը գլուխ կը բաժնուի Յովհաննու պատմութիւնը։ Առաջին երկուքին մէջ հեղինակը իր երկասիրութեան յատակագիծը կը դնէ, ու միանգամայն կ'իմացնէ թէ իր փափաքն է աւելի համառօտութիւն մը՝ քան թէ բուն ընդարձակ պատմագրութիւն մը շարադրել։ Իր այս խոստմունքը կը պահէ՝ մինչեւ այն ժամանակաց պատմութեան որոնց ականատես վկայ է։ Ժամանակին ու ազգային պատմչաց սովորութեան համեմատ՝ ջրհեղեղէն կը սկսի իր Պատմութիւնը, և կ'իմացնէ թէ պատմածներուն գլխաւոր աղբերք երկու են. աշխարհածնութեան համար՝ սուրբ գիրք, և պատմութեանց համար օտար և ազգային պատմիչք։ Բայց ընդհանրապէս ազգային պատմչաց կը հետեւի, և գլխաւորաբար՝ Մովսէսի Խորենացւոյ, իրեն ժամանակաւ մերձաւոր դէպքերուն նկատմամբ՝ Շապհոյ Բագրատունւոյ և ուրիշ ազգային պատմչաց։ Բայց որովհետեւ միտքը դրած է այսպիսի վայելուչ ոճ և լեզու մը գործածել ի պատմագրութեան՝ զոր Խորենացիէն ետքը ուրիշները գործածած չեն, իր այս ջանքը չափազանցութեան մէջ կը ձգէ զինքը. վասն զի ուզելով զարդարուն ոճ մը գործածել, վայելչականէն անդին կ'անցնի, այնպիսի լեզու մը բանեցնելով որ ըստ ինքեան այնչափ գովելի և հետեւելի չէ, ոչ ըստ ոճոյն և ոչ ըստ լեզուին։ Բայց ասիկայ արեւելեան՝ և մանաւանդ Յովհաննու ժամանակաց ընդհանուր թերութիւնն էր։ Մեր ազգին սովորական գրչաց՝ մէկ չափաւորելի սովորութեանն ալ հետեւած է Յովհան, սուրբ գրոց խօսքերը յաճախ իր պատմութեան գրոցը մէջ բերելով, յարմար կամ անյարմար վկայութիւնները շատցնել։*

---

[1] *«Զկնի այսր՝ հեզս ես և թշուառականս և պաքեալս ըստ հոգեւոր արբուցմանս խրատուն Յովհաննէս, որ զայն զայս գրեցի զիրքս, ոչ ըստ արժանեաց ածայ յաթոռ սրբութեանն... զի թէպէտ և յաշակերտութենէ առն սրբոյն Մաշտոցի, և ի մանկութենէ իմմէ, այլ և ազգակից հարազատութեան նորա ըստ մարմնոյ»։*

Պատմութեան Գ–Ի գլուխներուն մէջ՝ Յովհան կաթուղիկոս Հայոց ազգին սկզբնաւորելուն վրայ կը խօսի. Մարիբաս Կատինայի ու Խորենացւոյն հետեւելով՝ Հայոց ազգը Յաբեթի ցեղէն առաջ եկած կը համարէ։ Ութերորդ գլխոյն մէջ կը սկսի Հայկայ պատմութիւնն ընել, և անոր օրինաւոր յաջորդացը, մինչեւ ի մեծն Աղեքսանդր, որ՝ ինչպէս պատմութիւնը կ'աւանդէ, եկաւ Հայաստանի ալ տիրեց։ Անկէ ետքը Արշակունեաց պատմութիւնը կը սկսի համառօտագոյն ոճով, և անոնց ինկնալը և մարզպանաց յաջորդելը, և անոնցմէ ետքը Հայաստանի վրայ իշխելը մերթ կիւրապաղատից և ոստիկանաց, զորս երբեմն Յունաց կայսերք կը ղրկէին, և երբեմն Դամասկոսի և Պաղտատի խալիֆաները։ Այս առիթով կը ցուցնէ Բագրատունեաց ցեղին իշխաններէ ոմանց զօրանալը, մինչեւ այն ժամանակ՝ յորում Աշոտ Ա. կամ Մեծն՝ անկախ իշխան և Հայոց թագաւոր ճանչցուեցաւ խալիֆայէն։

Գրքին ԺԸ-ԽԸ գլուխներուն մէջ կ'աւանդէ Աշոտայ առաջնոյ թագաւորութեան, անոր որդւոյն Սմբատայ, և այլն, պատմութիւնը։ Յովհաննու կաթուղիկոսին երկասիրութեան այս մասը՝ աւելի մանրամասն և հետաքննական տեղեկութիւն կը պարունակէ Բագրատունեաց և Արծրունեաց թագաւորաց վրայ։ – ԽԹ գլխոյն մէջ կը սկսի խօսիլ՝ Սմբատայ և Յուսուփայ մէջ ծագած գժտութիւններուն և տարաձայնութեանց վրայ, որոնք այնչափ արիւնհեղութեանց պատճառ եղան։ Արտաքին թշնամութիւնք կը լռեն, և աշխարհագոյն աղէտք և պատերազմունք Հայաստանի մէջ կը սկսին երեւնալ՝ ներքին անմիաբանութեանց պատճառաւ. իշխան իշխանի դէմ, նախարար նախարարի դէմ կ'ելլեն. ժողովուրդք ալ մերթ մէկին մերթ մէկալին կողմը բռնելով՝ իբրեւ ընդ թշնամեաց կը պատերազմին։ Առիթ կ'առնու Յուսուֆ Հագարացի ոստիկանը՝ Հայոց ներքին անմիաբանութիւնը, ու Նսր անունով մէկը Ատրպատականի վրայ կը ղրկէ շատ զօրքով. ան ալ կու գայ ու Շահնշահ Աշոտին հետ երկար

ու խիստ կերպով կը պատերազմի, զինքը ստիպելու համար որ խալիֆային հնազանդութեան տակ մտնէ. Աշոտ Սեւան կղզին կը քաշուի, Գեղայ կոչուած բերդին մէջ. մինչեւ որ Աշոտայ կուսակիցներէն մէկը Գորգ՝ կը պատերազմի անոր դէմ, Նսրայ՝ Դուին քաղքին մէջ դրած (Պէշիր) ոստիկանը կը սպաննէ, և Արաբացւոց թշնամի գունդերը կը ցրուէ։ Այն ժամանակն է՝ յորում Յովհան կաթուղիկոս Աշոտ Շահնշահին քով կ'երթայ, երկար ատեն նոյն իշխանին արքունեաց մէջ կը բնակի, և սիրոյ ու մեծարանաց նշաններ կ'ընդունի իրմէ։ Անկէց Գագիկ թագաւորին արքունիքը կ'անցնի, ու թէ իրմէն, թէ անոր եղբօրմէն մեծ սիրով կ'ընդունուի։ Նոյն ժամանակները՝ այս երեք իշխանաց վրայ ալ սպառնալիք կը հասնին, և Գեղայի մէջ եղած զօրքերը՝ թշնամեաց ուժէն վախնալով անձնատուր կ'ըլլան։ Արաբացւոց սպարապետը կը տիրէ բերդին, և այնպէս իր իշխանութեան տակը կ'իյնան մերձակայ քաղաքներն, աւաններն ու երկիրներ։

⁂

Հոս կը դադրեցնէ իր պատմութիւնը Յովհաննէս կաթուղիկոս։ Արդէն հասակն առած՝ ու իր մահը մերձակայ տեսնելով, Խորենացւոյն պէս իր գրքին վերջարան գլուխ մը կը դնէ, ողբալով այն աղէտքը որ Հայաստանի վրայ ծանրացեր էին. բայց միանգամայն կը քաջալերէ՝ գուշակօրէն զրուցելով, թէ ատեն պիտի գայ՝ յորում մեր հայրենեաց աղետից վախճանը պիտի հասնի, քրիստոսական կրօնք յաղթանակեն, և հաւատացեալք իրենց թշնամեաց վրայ զօրանան։ Անկէ խօսքն առ թագաւորս, իշխանս, պետս և հրամանատարս Հայաստանեայց կը դարձնէ, իմացնելով իրենց թէ ինչ պատճառաւ և ինչ նպատակաւ այս Պատմագրութիւնը գրելու ձեռք զարկաւ. կը ցաւի այն ուրացութեանց վրայ՝ որոց ականատես կամ պատմիչ եղաւ, և Հայաստանի իշխանաց՝ և անոնց հպատակաց՝ իմաստուն խորհուրդներ և խրատներ կու տայ։ Այս սրտաշարժ և ազդու վերջաբանով կ'աւարտէ իր Պատմութեան գիրքը։

Կենացը վերջին տարիները Ձորոյ վանքը քաշուեցաւ Յովհան, և հոն մեռաւ, 925 թուականին, քսանեւութ տարի Հայոց կաթողիկոսական աթոռը նստելէն ետքը։ Իր յաջորդն եղաւ Ստեփանոս Բ, որ Հայրապետական աթոռը Աղթամարայ կղզին փոխադրեց։ — Ձենք գիտեր թէ արդեօք ուրիշ գրուածք ալ շարադրա՞ծ է Յովհան. ազգային հեղինակք՝ իր Պատմագրութենէն զատ ուրիշ երկասիրութիւն չեն յիշատակեր իր անուամբ։

⁂

Մեծ յարգանօք կը խօսին նոյն ազգային պատմիչք Յովհաննու կաթողիկոսի թէ կենաց և ուսմանց, և թէ այս Պատմագրութեան վրայ. Թովմա Արծրունի՝ «Սնեալ և ուսեալ էր, կ'ըսէ, առ ոտս սրբոյն Մաշտոցի, նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեան վարժիւք առոգացեալ. այր քաղցրաբարոյ և հեզահայեաց»։ Եւ Յուսուփ ոստիկանին զօրաց ձեռքով՝ Հայաստանի մէջ եղած անթիւ արիւնհեղութեանց վրայ խօսելով, կը յաւելու. «Զոր այլ զօրաւոր և մտահարուստ ոմն հռետոր մեծ՝ նախ քան զմեզ վերագրեաց և աւանդեաց ի գանձս արքունի»։ Սամուէլ՝ գեղեցկաբան շարագրութիւն կը կոչէ անոր պատմութիւնը. Ասողիկ՝ ճարտասան և պաճուճագիր կ'անուանէ զինքը. Կիրակոս՝ գեղեցկայարմար պատմութիւն կը կոչէ։ Տարակոյս չկայ որ ճարտասան պատմիչ մ'է Յովհան, և աւանդած դէպքերուն շատին ալ ականատես ըլլալով՝ այն աղէտք տպաւորագոյն ազդեցութիւն ըրած են սրտին վրայ, և արժանի լեզու մը բանեցնելով՝ ի գութ կը շարժէ լսողներն և ընթերցողներ։ Բայց ճարտասանական արուեստը Յովհաննու գրչին տակ՝ երբեմն սովորական սահմանէն դուրս

ելած է. լեզուն ալ, ինչպէս քիչ յառաջ յիշատակեցինք, արուեստակութեան կերպարանք առած. անով է որ՝ որչափ ալ գեղեցիկ երեւնայ ոմանց իր կերպն ու շարադրութեան ոճը, հետեւողութիւնն զգուշալի է։

Իբրեւ պատմիչ՝ ընտիր բարեմասնութիւն մ'ալ ունի Յովհաննէս, որ մեր՝ մանաւանդ յետին պատմչաց մէջ՝ սակաւագիւտ յատկութիւն է, հաւատարմութիւնը. անով է որ ամէն լսած դէպքերը չի պատմեր. և եթէ պատմելու ալ ստիպուի՝ երաշխաւորութիւնը վրան չ'առնուր։ Օրինակ իմն՝ երբոր Սմբատայ առաջնոյն մարմնոյն վրայ լոյս իջնելուն պատմութիւնը կ'ընէ, և թէ ինչպէս թէ հաւատացեալք և թէ անհաւատք տեսած ըլլան այն ճառագայթաւէտ պայծառութիւնը, կը յաւելու. «Եւ որք ասէինն զայս՝ ստուգութեամբ իմն հաւաստի զբանն առնէին. բայց մեք զայսոսիկ ի տեսողս անդր թողացուցեալ, և զորս աչօք իսկ տեսեալ է մեր, ոչ դանդաղեցուք պատմել»։ «Ետես աչօք,— կ'ըսէ Վարդան պատմիչ — զխաւարաբեր ժամանակն, և գրեաց ի յիշատակ ապագայիցն»։

Յովհաննու կաթողիկոսի պատմութիւնը՝ տպագրեցաւ յԵրուսաղէմ (1843)։ Այդ թուականէն երկու տարի յառաջ Գաղղիոյ Հասարակաց կրթութեան Պաշտօնէին հաճութեամբ հրատարակուեցաւ անոր գաղղիական թարգմանութիւնն ի Փարիզ, զոր անուանի արեւելագէտն Սէն-Մարդէն երկասիրեր էր, և իր մահէն շատ տարի ետքը Ֆելիքս Լաժառ տպագրեց։ — Խորագիրն է. Histoire d'Arménie, par le Patriarche Jean VI, dit Jean Catholicos, traduite de l'arménien en français par M. Saint-Martin. Ouvrage posthume, publié sous les auspices du ministère de l'Instruction publique, par Félix Lajard, 1841. Մատենախօսական հատուած մ'ալ հրատարակած է Նէւ հայագէտ պելճիացին. Examen de l'histoire Jean VI le Patriarche, traduite de l'arménien par Saint-Martin, par Félix Nève; Louvaine, 1843: Հայկական բնագիրն երկրորդ տպագրութիւն մ'ալ ունեցած է և ի Մոսկուա (1853), ջանիւք Մկրտչի Էմին. Տեսչի Ճեմարանի Արեւելեան լեզուաց։

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

Թովմայի Արծրունւոյ ժամանակը։ — Գագկայ իշխանի յանձնարարութեամբ Արծրունեաց պատմութիւն գրեց։ — Այդ երկասիրութեան աղբերքը։ — Արծրունւոյն պատմութեան նիւթը։ — Գրութեան ոճը։ — Բանասիրական արժէք։ — Բնագրին տպագրութիւնն ու թարգմանութիւնը։

Յովհաննու կաթուղիկոսի գրեթէ ժամանակակից՝ կամ անկէ քիչ կրտսերագոյն է Թովմա Արծրունի։ Ժամանակաւ որչափ ալ մերձաւոր՝ բայց ի հմտութեան մեծ տարբերութիւն կը տեսնուի այս երկու անձանց մէջ. որով և արժանապէս առաջին կարգի պատմագիր կրնանք համարել զԱրծրունին, թէ որ քանի մը թերութիւններէն զգուշանար, մանաւանդ լեզուի խրթնութենէն։ Եղիշէ վարդապետին աշակերտ կը համարուէր Արծրունին. որովհետև իր պատմութեան խորագրոյ մէջ՝ նոյն վարդապետին աշակերտ կ'անուանի[1]. անոր համար քանի որ իր պատմութեան գիրքը գտնուած չէր, Զ. դարու պատմիչ կը կարծուէր Թովմաս. բայց ետքը երկասիրութիւնն երևան ելնելով՝ յայտնապէս տեսնուեցաւ այն ենթադրութեան սխալ ըլլալը, թէ որ ուրիշ համանուն վարդապետի մը աշակերտ չուզենք համարել զինքը։

Ժ դարուն սկիզբը Գագիկ Արծրունեաց տէր և Վասպուրականի իշխանը՝ իւր հայրենասէր քաջագործութեամբքն ամենուն աչքն իւր վրայ դարձուցեր էր, անոր յաղթական զինուց վրայ՝ ի թշնամեաց հարստահարեալ ազգին վերանորոգութիւնը կը փափաքէին տեսնել. այն յոյսն և ակնկալութիւնը արդիւնաւորելու գեղեցիկ պարծանքն՝ իրեն վրայ առած էր Գագիկ։ Եւ որովհետև իր զէնքերուն փառքը մինչև հեռաւոր ժամանակաց վրայ կ'ուզէր տարածել, և պատմութեանց մէջ՝ իրեն փառաց արձագանգը թողուլ Բագրատունեաց Սահակ իշխանին պէս՝ ուզեց որ իրեն ու իր փառաւոր Արծրունեաց ցեղին պատմութիւնը թողու ազգին. և իր այս կամքի և փափաքին գործադրութիւնը յանձնեց Թովմայի. որուն արդէն հայրն ալ նոյնը յանձնած կ'երևի. վասն զի Թովմա իր յառաջաբանին ետքը կ'ըսէ առ Գրիգոր Արծրունեաց Տէր և Վասպուրական իշխան, որ անշուշտ Դերենիկն է. «Ընկալեալ զհրաման պատուիրանի քո... ձեռն ի գործ արկի» և այլն։ Իսկ Ա. դպրութեան վերջը՝ խօսքն առ Գագիկ կ'ուղղէ։

Չսխալեցաւ Գագիկ իւր ընտրութեանը մէջ. վասն զի Թովմաս ոչ միայն ժամանակին հմտագոյն հանճարներէն մէկը կրնար համարուիլ, այլ ինքն իսկ Արծրունեաց ազգէն ըլլալով, հին ու անցած փառքերը՝ հնութեան աւանդից և գրքերուն մէջ փնտռելու յարմարութիւն և անխոնջ յարատևութիւն ունէր. և ամէն բանէ աւելի հայրենասէր, կամ լաւ ևս ըսելով, ցեղասէր ոգի մը։

Բայց այն առաջարկութեան գործադրութեան ամէն դժուարութիւնները իւր աչքին առջևն էին։ Հայոց պատմութիւններ, զանազան անձանց և այլ և այլ ժամանակաց երկասիրութիւնք հասեր էին իր ձեռքը. բայց Արծրունեաց ցեղին վրայ լիակատար ու յագեցուցիչ գրուածք մը պակաս էր. իր հնութեամբը պատկառելի ցեղ մը՝ սակա՛յն այն հնութիւնն ընդարձակ ասպարէզ մը պիտի բանար իւր առջևը հետազօտութեանց, և հարկ էր պատմութեան մոռացութիւնը դարմանել, փառաց պարծանքը նորոգել, կամ ուրիշներէն յափշտակել։

---

[1] «Պատմագիր վասն Արծրունեաց ազգին, զոր արարեալ է Թովմա վարդապետի՝ աշակերտի Եղիշէյի»։

⁂

Արծրունին առաջնորդ առած է իրեն այս երկասիրութեան մէջ բաց յաստուածային գրոց, մարդկութեան նախնական ստեղծմանը և ընդ ամենայն աշխարհ ցրուելուն՝ նաև արտաքին պատմիչներ. և մանաւորապէս մէջ կը բերէ Եւսեբիոսի, Ափրիկանոսի, Բերոսոսի, Մանեթոնի, Արիստոնի Կեսարացւոյ, Յուլիանոսի Աղիկառնացւոյ, Փիլոնի Աղեքսանդրացւոյ, և այլոց կարծիքները[1]: Ծանօթ կը ցուցնէ ինքզինքը նաև Հերոդոտեայ պատմութեան, և անոր հետևողութեամբ կ'աւանդէ Պարսից պատմութեան այն մասը՝ որ Հայոց ազգին պատմութեան հետ վերաբերութիւն ունի: Ազգային պատմչաց հետ ալ կը խորհրդակցի Արծրունին, և գլխաւորապէս Մովսէսի Խորենացւոյ. և Արծրունեաց ցեղին պատմութիւնն ընելու ժամանակ կ'աւանդէ, թէ նոյն ցեղին սկզբնաւորութեան վրայ խօսած ըլլան Մամբրէ Վերծանող և անոր եղբայրը Մովսէս և Թէոդորոս Քերթող: Այս երկու պատմիչները միայն անուամբ ծանօթ են մեզի, և իրենց երկասիրութիւնները կորսուած:

Սակայն անոնց գրուածոց մէջ եղած տեղեկութիւնները անբաւական կը համարէ իր առաջադրութեան. ուստի «փոքր ինչ և գուղնաքեայ, կը կոչէ, զմնացորդս յիշատակարանացն ի յառաջագոյն և հին պատմագրացն, զմեր ընիկ տերանց տոհմին Արծրունեաց»: Այն պատճառաւ հարկ համարած է՝ ուրիշ քննութեանց տալ ինքզինքը, և մանաւանդ ճարտար և ստուգախօս պատմարանից համեմատ՝ այն դիպուածոց և քաջութեանց հանդիսարան գաւառներն ու քաղաքները քալել անձամբ. ու պատմութեանց մէջ մոռցուած անցքերը՝ հոն անոնց հնաւանդ յիշատակարանաց մէջ փընտըռել: Ինքն Արծրունին ալ կը վկայէ. «Որ ինչ ի սկզբանց անտի շինութեանց աշխարհիս Հայոց, ի Հայկայ աղեղնաւորէ և ի նորուն զարմից, և ցկաթոտ և վաւաշոտ Շամիրամն տիկին Ասորեստանեայց, և ի նմանէ յայլս. և յայլոց եւս յաւէտ ձեռակերտք և շինուածք յիւրաքանչիւրոցն յերկրիս մերում եղեն, մեր առ ամենայն անձամբ հասեալ և աչօք տեսեալ: Զկտեալ և ի հեռաւոր աշխարհս, մինչև ցԿղարջս և Շաւշեթացիս, և առ լերամբն Կաւկասայ, և յԱհիզ, մինչև ի մուտն ի Գազա, և ընդ Տայաստան, և ընդ ամենայն հիւսիսականս և ընդ արևելս. ի հետիոտս գնալով տեսաք զգործ քաջաց և նախնեաց»: Ուրիշ տեղ մ'ալ. «Իսկ Գուրգէն (Արծրունի) որ ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս. զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն, և զոր առաւել ամենայն ուրեք, որպէս ցուցանեն յիշատակարանքն՝ որք յառաջ քան զմեզ հոգացան»:

Այսպէս կը վարուի ժամանակաւ իրմէ հեռու եղած դէպքերու նկատմամբ: Իսկ ուր հարկ էր որ մերձաւոր պատմութեանց յիշատակութիւնն ընէ, հոն բաւական չի համարիր վեր ի վերոյ քննութիւն մը, այլ անձամբ քննած է անոնց ստուգութիւնը և այնպէս աւանդած: Իր պատմութեան շատ դէպքերը կը հաւատարմացնեն այն խօսքը զոր կ'ըսէ իր անձին համար. «Ոչ երբեք յայլոց համբաւուց տեղեկացեալ՝ ընծայեալ արձանագրուցանեմ քեզ ստայօդ բանից պաճուճեալ առասպելս, այլ ականատես և ականջալուր և իմով իսկ ձեռօք շօշափեալ, պատմեմ քեզ հաւաստապէս զեղելոցն զարմանս»: Այս խօսքիս ստուգութիւնը յայտնի կը ցուցնէ, երբոր Խութայ լեռնականներէն Յուսփայ Հագարացւոյն մահը պատմելէն ետքը, «Ես ինքնին, կ'ըսէ, աչօք իմովք տեսի զայրն զայն՝ որ հարեալն

---

[1] «Օժանդակել ի գրոց հնագէտ պատմութեանց մարգարէականաց, և նորոց վարդապետաց եկեղեցւոյ Քրիստոսի, և արտաքին փիլիսոփայից՝ աշխատասէր և մտաճարտար արանց. որք դայեկաբար յանձնեցին մեզ յետոյ եկելոցս՝ զառողջ և զառանց խարդախութեան ճաշակս համեղագոյն և կարևորագոյն կերակրոց, յորբունս կատարեալ գիտութեանն տանել հասուցանել զուսումնասէրն»։

էր գնա, (գՅովսէփ Հագարացի), և ի նմանէ ստուգեցի վասն նորա »։ Այսանկ՝ Ռշտունեաց աշխարհին մէջ բազմաթիւ անձինք դեռ կենդանի են, կ'ըսէ, տեսողք վկայական մահուան Ապուսահակ երանելւոյն, յորոց լսեր էր պատմիչը մանրամասն հանգամանքը և իր պատմութեան գրքոյն աւանդեր յետնոց։

⁂

Արծրունեաց Պատմութեան նիւթը. — Բիւզանդայ նման չորս դպրութեան բաժնած է Թովմաս իրեն այս պատմական գրուածը՝ և գլխաւոր գիտմունքն եղած է, ինչպէս ըսինք, Արծրունեաց պատմութիւնը շարադրել. սակայն էր նաև Գագկայ Վասպուրականի իշխանին խնդիրքը։ Բայց Արծրունին՝ մեր ազգին շատ պատմագրաց սովորութեան համեմատ՝ իւր պատմութիւնը կը սկսի Ադամէն և Նոյէն, ու մարդկութեան բաժանմանէն. և որովհետև Հայկայ քաջութիւնները, և անոր Բելայ վրայ ըրած յաղթութիւնն ալ կը պատմէ, այն առթիւ նաև Բաբելացւոց և անոնց առասպելաց վրայ կը սկսի խօսիլ, հմտաբար քննելով և աւանդելով քաղդէական զրոյցքը, և թէ ինչէ՞ն կամ ե՞րբ սկսան անոնց պաշտամունքը։ Անկէց Ասորեստանի թագաւորութեան վրայ խօսելու կ'անցնի, ու Զրադաշտի և Մանիթոսայ կամ Մանեթոլայ ուսմանց վրայ, և Զրադաշտէն՝ Զրուանայ որդւոցը՝ Որմզդի և Արհմենի թագաւորելուն, համեմատ այն առասպելաց զորս Եզնիկ և Եղիշէ կ'աւանդեն։ Պարսից կրօնից վրայ խօսելու ատեն՝ այն առասպելն ալ կը յիշատակէ՝ զոր աւանդութեամբ կը պատմէին Շախրիք կոչուած գիւղականքն, որոնք Ապլաստան աշխարհը կը բնակին, կ'ըսէ, և յորոց լսած է պատմութեան մէջ յիշատակուած դէպքերը։ Այն աւանդութեանց յիշատակութենէն ետքը՝ Կիւրոսի պատմութեան կ'անցնի. և Ասորեստանեայց ու Մարաց թագաւորութեան բարձումը պատմելով, այն պատճառաւ Հայոց իշխանութեան մեծնալուն և ընդարձակուելով փառաւորուելուն խօսք կ'ընէ։ Յետոյ Պարսից տկարանալը և Աղեքսանդրի Մակեդոնացւոյ աշխարհակալութիւնը պատմած ատեն, կը յիշէ Արծրունեաց ցեղին Աստւղ նահապետը՝ Դարեհի նիզակակից, որ գերի բռնուած ի Յունաց՝ քաջութեան համար Աղեքսանդրէն տրուեցաւ Պտղոմէոս. որ և տարաւ զնա յԵգիպտոս և իրեն զօրավար ըրաւ։ Աղեքսանդրէն վերջ Արշակունեաց թագաւորութեան կանգնիլը կը պատմէ, Հայոց ալ նոր թագաւորութեան, զոր մինչև վերջանալը ի Ե դարու՝ կը յիշէ. և իւրաքանչիւր թագաւորաց ատեն Արծրունեաց իշխանաց կամ անոնց երկրին մէջ հանդիպածները՝ որչափ որ գտած է՝ կը յիշէ. բաւական ու նոր տեղեկութիւններ տալով Արշամայ, Երուանդայ՝ Արտաշիսի՝ թագաւորաց ատենին. նոյնպէս ալ Տրդատէն ետքը հանդիպած բաներուն, անաչառապէս յիշելով և դատելով Մեհրուժանայ և Շաւասպայ պէս ուրացող Արծրունեաց ըրածները։ Արշակունեաց թագաւորութեան հետ կ'աւարտէ Թովմաս իր Ա դպրութիւնը։

Բ դպրութիւնը չորս հարիւր տարուան դիպուածոց պատմութիւն է, Վարդանանց պատերազմէն մինչև ի գալ Բուղայի՝ Հայոց նախարարները ջնջելու կամ գերի տանելու։ Նախ կ'իմացնէ թէ Վարդանայ նիզակակից Արծրունեաց Վահան նահապետին պատմութիւնը՝ Եղիշէի գրոց մէջ չգտնուելուն պատճառն է՝ Բարսումա Ասորւոյն չարութիւնը, որ այն պատմութեան բնագիրը ձեռք բերելով՝ մէջէն հաներ ջնջեր էր իշխանին յիշատակը, որովհետև անոր յաջորդն Մերշապուհ իշխան՝ վանտեր էր զաղանդաւոր ասորին իր երկրէն։ Յետոյ կարգաւ կը յիշէ Վահանայ Մամիկոնենոյ քաջագործութիւնքն ընդդէմ Պարսից, ասոնց պատերազմները Զ և Է դարուց մէջ ընդ կայսերաց Յունաց, Հերակլ կայսեր քաջութիւնները, Պարսից տկարանալը և յետոյ նուաճուիլն յԱրաբացւոց, ասոնց զօրանալն, Մահմէտի նոր օրինադրութիւնը, և իր յաջորդաց աշխարհակալութիւնը. զորս համառօտիւ կը յիշէ, մինչև Ջաֆր (Ճեաֆար) ամիրապետին տէրութիւնը, որ խիստ ոստիկաններ ղրկեց ի Հայս. ասոնք ալ չդիմանալով՝ դէմ կեցան. և յետոյ Սասնեցիք սպանեցին Եուսուֆ ոստիկանը: Այս գործոց մէջ Արծրունիք ալ մասնակից էին: Հոս կ'աւարտէ Թովմաս Բ դպրութիւնը, հետաքրքրական տեղեկութեամբ մը Սասնոյ լեռնցոց վրայօք: Գիտելու արժանի է որ այս 400 տարուան կարեւոր միջոցիս գրեթէ բնաւ չեն յիշուիր Արծրունեաց նահապետքն, և ոչ Ս. Սահակայ և Համազասպայ Արծրունի իշխանաց նահատակութիւնն, զոր կը վայելէր ոճով պատմել. Թերեւս գրած ալ է Թովմաս և հիմայ գրքէն պակսած ըլլայ, ինչպէս որ պատմութեան սկիզբն և ուրիշ տեղ տեղ ալ Ա. դպրութեան մէջ յայտնապէս պակաս և կիսատ մնացած է, մինչև հիմայ մեր ձեռքը հասած օրինակաց մէջ:

Գ. դպրութիւնը՝ գրեթէ 30 տարուան պատմութիւն է, սկսեալ ի կիսոյ Թ դարու, որ և պատմչին տղայութեան ատենը կ'ըլլայ. գլխաւոր և երկարագոյն մասն պատմածին առաջին չորս հինգ տարուան դիպուածքն են. և են Բուղայի պատերազմներն և կերպ կերպ հնարքներով Հայոց իշխանները բռնել և ի Բաբելոն ղրկելն: Այս բաներս պատմած պիտի ըլլայ Բագրատունեաց պատմիչն Շապուհ ալ, բայց անոր գրոց կորուստն[1] աւելի ցանկալի կ'ընէ Արծրունւոյն այս պատմածը որ կրնայ իր լաւագոյն և կենդանագոյն ոճով մասը համարուիլ. յորում կը սկսի ստորագրել ամիրապետին բարկութիւնը՝ ի լսելն Սասնեցւոց և Վասպուրականի Աշոտ իշխանին ըրածը, զորք ժողվելն և յանձնելն Բուղայի. որ կու գայ նախ ի Խլաթ քաղաք, հոն Սմբատ Մոկաց իշխանն իրեն անձնատուր կ'ըլլայ. բայց ուրիշներ քաջութեամբ դէմ կը կենան իր զօրաց. ոմանք ալ բռնուելով կը նահատակուին, և նախ Ապուսահակ՝ Նախջաւանայ եպիսկոպոսին եղբայրն: Աշոտ Վասպուրականի իշխանն սկիզբը դէմ կը կենայ Բուղայի, յետոյ անոր խոստման վստահացեալ՝ անձնատուր կ'ըլլայ իր Գրիգոր որդւովը: Նոյնպէս անձնատուր կ'ըլլայ Գուրգէն իշխանն ալ, բայց յետ կտրիճ դիմակալութեան Կորճայից լերանց մէջ Ջապ գետոյն եզերքը. շատ բնական և վառվռուն նկարագրած է այս դիպուածը. նոյնպէս ալ Աղուանից կամ Արցախոյ իշխանին՝ Ապումուսէի երկար պատերազմները և դիմակալութիւնը. որուն դէմ Բուղայի ճարն հատնելով գրեց ամիրապետին և հրաման առաւ՝ որ բռնութիւն չընէ. այլ պատուով հրաւիրէ զքաջն երթալու առ ամիրապետն, ինչպէս որ ըրաւ Ապումուսէ: Ուրիշ պատերազմներէ և շատ մը վկաներ ալ նահատակելէն ետք, Բուղա երեք տարուան մէջ բռնած իշխանները կը տանի առ ամիրապետն, իր տեղ կուսակալներ թողլով. որոց դէմ կը կենայ ուրիշ Գուրգէն (որդի Ապուպէլճի) Արծրունի իշխան մը. մինչև որ յետ վեց եօթ տարուան գերութեան իշխանաց Հայոց՝ ամիրապետն անոնցմէ տկարները հաւատքէ կը հանէ և կը դարձնէ իրենց երկիրը. հաստատ կեցողներէն ոմանք կը նահատակէ, զոմանս ալ կը թողու բանտի մէջ մեռնելու. ասոնցմէ եղաւ Սմբատ Բագրատունի Հայոց իշխանապետն, որ Խոստովանող կը կոչուի. որուն տեղ Բուղա Հայոց գլխաւոր թողեր էր անոր որդին Աշոտը, այն որ յետոյ ամիրապետին հաւանութեամբ Հայոց իշխանապետ և թագաւոր եղաւ:

Գերութենէն դարձող իշխանաց մէջ առջիններէն եղաւ Գրիգոր Դերենիկ որդի Աշոտոյ, և յետոյ հայրն ալ. աս երկուքն ալ հակառակելով կը կռուին Գուրգէնի հետ նախիշխանութեան վրայ, մինչև որ Գուրգէն Անձևացեաց երկիրն առնլով՝ մէկալ կողմերը կը թողու անոնց: Աշոտ՝ ուրիշ տեղեր ալ այլազգեաց ձեռքէն ազատեց, և իր սկսմայ ուրացութիւնը ապաշխարելով՝ կը մեռնի տարիքը չառած: Հոս կ'աւարտի Գ. դպրութիւնն ալ:

---

[1] Այս մասին տ. նախորդ գլուխին ծանօթութիւն, Ծն.Թ. Գ. ՏԳ.

Գին մէջ կը պատմէ Թովմաս իր ժամանակին ականատես պատմութիւնը, որոյ գլխաւորն է՝ յետ Գրիգորի Դերենկան և անոր անդրանկին Աշոտոյ գործոց, ապա միջին եղբօր՝ Գագկայ՝ գործերը: Գագիկ որ և Խաչիկ՝ ծնած էր յամին 879, և քան զԱշոտ ու իրենց կրսեր եղբայր Գուրգէնը՝ ամենայն բարեմասնութեամբ առաւելեալ էր, թէ մարմնաւոր ձիրք և քաջութեամբ, թէ իմաստութեամբ և հնարագիտութեամբ և թէ քաղաքական կարգաւորութեամբք և շինութեամբք. և ըստ նկարագրի պատմչին՝ միանգամայն դիւցազն է և աշխարհաշէն իշխան. և այսպիսի բարեմասնութեանց արժանաւոր վարձք կը համարէ Արծրունեաց թագաւոր և թագաւորութեան հեղինակ ըլլալը. որ ուրիշ աչքով նայելով՝ փառասիրութեան և ապերախտութեան արգասիք կը համարուի: Վասն զի Գագիկ երկար ատեն անգութ և չարահնար Յուսուփ ոստիկանին վարպետութեամբ հակառակելէն ետեւ, անոր աչքը մտաւ, և իր Արծրունեաց երկրին վրայ թագաւոր եղաւ, որով զատեց այն երկիրը Հայոց թագաւորութենէն, զոր իմաստութեամբ և քաջութեամբ կը կառավարէր իր քեռին Սմբատ Բագրատունի, որդի Ա. Աշոտոյ. աս երկուքն ալ շատ բարիք ըրած էին Գագկայ հօրը և իրեն ու եղբարցը՝ հօրերնուն մեռնելէն ետեւ: Այսով Սմբատ իր մեծ օգնականը և յոյսը կորսնցուց, և յետոյ ստիպուեցաւ անգութ ոստիկանին ձեռքն ինկնալ և նահատակուիլ: Այս խորհրդածութիւնները չի կրնար ընել մեր պատմիչն և ոչ մեղադրել իր դիւցազնը. թէպէտ և չի զլանար զՍմբատ ալ մեծապէս գովել և անման մարդ անուանել: Երկիրը խաղաղելէն ետեւ Գագկայ շինութիւնները կը ստորագրէ պատմիչն՝ տեղ տեղ բանաստեղծական աշխուժիւ. Աղթամար կղզւոյ մէջ Ս. Խաչ եկեղեցին, որ մինչեւ հիմայ ալ կանգուն է՝ թէ և քանդակներն և նկարք մաշած և թափած, և նոյն կղզւոյն և Ոստանայ մէջ արքունի ապարանից շէնքերն, որ հիմայ բոլորովին անհետ եղած են Վանայ ծովուն մէջ, ուր և ամբարտակ մը շիներ էր մեծամեծ քարերով: Պատմելով Գագկայ վերջին քաջագործութիւնները որ ի Դուին՝ օգնական երթալով Աբասայ թագաւորի՝ որդւոյ Սմբատայ, և որ ընդդէմ Գեղմկաց, մեր հեղինակը կ'ուզէ պատմութիւնը վերջացնել Գագկայ վրայ գովեստով մը, սկսելով իր արտաքին կերպարանքը նկարագրել, և անցնելով իր բարուց, քաջութեան և իմաստութեան վրայ: Անշուշտ ընծայականով մը, կամ խօսքն առ Գագիկ դարձնելով՝ աւարտած էր Թովմաս իր երկասիրութիւնը, ուրախութեամբ և փառօք կնքելով խօսքերը. սակայն այս վերջաբանը մեզի հասած չէ. հոս կիսատ կը մնայ գիրքը. և թէպէտ դեռ ուրիշ բաներ կը կարդանք Արծրունւոյն անուամբ հրատարակեալ գրոց մէջ, և Ն դպրութիւն մ'ալ, բայց իրմէ ետքի գրողի և շարունակողի գործ է այն. մասամբ կրկնութիւն ըլլալով Գագկայ և իր եղբօր Աշոտոյ պատմութեանն, մասամբ Գագկայ ցեղին վերջին պայազատին՝ Սենեքերիմայ Արծրունեաց յետին թագաւորին յիշատակն, և անոր ցեղէն իջած Աբլմսեհ իշխանի և ասոր որդւոց, որոնց դարձեալ ուրիշ յիշատակներ ալ՝ պակասաւոր շարունակութեամբ՝ մինչեւ ի ԺԴ· դար կը հասցնեն Արծրունեաց յիշատակները:

⁂

Արծրունւոյն ոճը. — Ըստ լեզուի մաքրութեան տարակոյս չկայ որ Թովմաս պատմիչ ալ լաւ հայկաբան է. բայց տեղ տեղ՝ ինչպէս ի սկզբան ալ ըսինք՝ խրթնաբանութեամբն կամ պակաս ընտրութեամբ բառից՝ կը հեռանայ ի յստակութենէ. և ընդհանրապէս խիստ քան փափուկ կրնայ ըսուիլ. գլխաւոր պակասութիւնն ալ յայսմ մասին է իր դարուն քաղաքական ազդեցութեամբ առած եկամուտ ոճը, այսինքն արաբական պերճաբանութիւն մը կամ բռնութիւն բառից, որ թէ և շատ տեղ սաստկութիւն կուտան բացատրութեան՝ այլ նախնեաց ընտիր պարզութեան շնորհքը չունին։ Ի վերայ այսր ամենայնի գիտելով պատմութեան կարգաւորութիւնը, միակերպ պահած ոճը, վառվառուն և երբեմն բանաստեղծական նկարագրութիւնները, դիմացնիս դրած միտք գրաւող տեսարանները, կորիճ ոգի մը՝ որ բոլոր պատմածին և գրուածին վրայ կը փայլի իբրև անդրադարձութիւն մը հոգւոյ հեղինակին, բաւական անաչառ դատաստանները, և յաջողութիւնը կերպ կերպ իմաստներ և կրքեր կենդանագոյն ներկայացնելու. ասոնք զԹովմաս առաջին կ'ընծայեն մեզի յետ պատմչաց Ե դարուն և Աղուանից պատմչին, իսկ վերջ եկողներէն ալ գերազանց, յիշեալ ամենայն բարեմասնութիւնքը մէկտեղ առնլով։

Գիտնական և պատմական արժէից դառնալով, բաց ի պէսպէս յիշեալ գիտուածներէն երախտապարտ ենք իրեն մեր հին և կորուսեալ քանի մը հեղինակաց գործերէն յիշածներուն, և քանի մ'ալ գործոց յիշատակութեան համար. ինչպէս են Մովս. Խորենացւոյ պատմութեան Դ գիրքը, անոր եղբօր Մամբրէի և Թէոդորոսի գրած Հայոց Մնացորդ պատմութիւնները, Աբրահամ Խոստովանողին Վարդանանց համառօտ պատմութիւնը, և այլն։ Ասոնցմէ ալ հին՝ Հայոց կամ գէթ Արծրունեաց պատմութիւն մը, թերևս Աղեքսանդրի Մակեդոնացւոյ ատեն կամ քիչ վերջ գրուած, որոյ օրինակը կը գտնուէր ի հռչակաւոր գրատան Աղեքսանդրիոյ Եգիպտոսի, ուսկից բերել տուաւ Ա. Տիգրան Արշակունի, խնդրելով ի Կղէոպատրայ թագուհւոյ։ Թովմա երկու տեղ կը յիշէ հին պատմագիր մ'ալ և հատուածներ կը բերէ, որք մարգարէական ոճով կէս ողբական և սպառնական խօսքեր են Պարսից կամ Եղիմացւոց վրայ. և բանասիրաց հետաքննութեան արժանի գլուխ մ'է այս[1]։

---

[1] «Այս փոքր ինչ և գաղտնաքեալ զՄնացորդս յիշատակարանացն ի յառաջագոյն և հին պատմագրացն՝ զմեր ընիկ տերանց տոհմին Արծրունեաց զիրն և զանեղին բացայայտեսցուք ի պատմութեան աստ, զի յայտ յանդիման երևեսցին արիութիւնք առաքինութեանց, ըստ անուանց և տեղեաց և ժամանակաց». (Ա. Դպր.—Բէ—Ն).

Յարգի են մեզի նաև Թովմայի յիշած քանի մը պատերազմական և քաղաքական օրինաց սովորութիւններ, զորս ուրիշ տեղէ չենք գիտեր։

Աստուածաբանական խնդրոց մէջ ալ կ'երևի որ Թովմաս ոչ միայն բաւական հմտութիւն ունէր, այլ և դատող և ոչ ծառայական միտք. և երբ պատմութեան կարևոր դիպուածը կը պահանջէ՝ կ'իջնէ քննութեան և ընտրութեան. խստիւ կը յանդիմանէ զԲագարատ իշխան Տարօնոյ և Հայոց իշխանապետ, որ ուրացութեան վրայ պատրուակ աւելցնելով ըսեր էր, թէ ակամայ ուրացութիւնը մեղք չէ։ Անսովոր և համարձակ կարծիօք մ'ալ կը հաւանի՝ թէ ջրհեղեղի ատեն Նոյի տապանին մէջ՝ Ս. Գրոց յիշած ութ անձանցմէ զատ ուրիշ անձինք ալ եղած ըլլան, ինչպէս տապանը շինողներէն ոմանք, և ճարտարապետն ու Նոյի մէկ դուստրն, ըստ ոմանց աւանդութեան. և այս բանս կ'արդարացնէ Պետրոս առաքելոյն վկայութեամբ վասն ապրելոյն ի ջրհեղեղէն «ոգիք իբրև ութ»։ Ընթերցողք ի հարկէ կը խորհրդածեն, թէ ինչ պէտք էր Թովմայի՝ Արծրունեաց պատմութեան ատեն՝ այսպիսի խնդրոց մէջ մտնել. — իրաւացի է. Թովմաս ի սկզբան պատմութեանն ալ այսպիսի աւելորդաբանութիւն կ'ընէ նաև նախաջրհեղեղեան նահապետաց վրայ, մանաւանդ Կայենի վրայ իմաստասիրելով։

Թովմա Արծրունի իր պատմութեան պատրաստութիւնը սկսելէն մինչև գլխաւորելը՝ իբրև 40 տարի անցուցեր է. որովհետև Գրիգոր Դերենիկ՝ որոյ առաջարկութեամբ ձեռք զարկաւ պատմագրութեան, մեռած է յամին 886, իսկ ինքն գրեթէ մինչև 930ի հանդիպած բաները կը պատմէ։

Թովմայի Արծրունւոյ Պատմութիւնն առաջին անգամ տպագրեցաւ ի Միջագիւղ Պոլսոյ յամին 1852, Աղթամարայ մէջ գրուած օրինակէ մը, որ հիմայ ի Կ. Պոլիս է, և ուսկից զաղափարած կ'երևան ուրիշ տեղ մեզի ծանօթ օրինակք ալ։ Ասկէ զատ բնագրին տպագրութիւն մը եղած *է ի Պատկանեան Քերովբէ ուսումնականէ ի Փեթերպուրկ. Նոյն մայրաքաղաքին մէջ նաեւ գաղղիական թարգմանութիւն մը Պրոսէի ձեռքով, և հրատարակեալ յերկհատոր [illegible] Հայ [illegible], կրելով խորագիր* Histoire des Ardzrouni, par le Vartabed Thoma Ardzrouni; traduite par M. Brosset. Saint-Pétersbourg, imprimerie de l'Académie Impériale des Sciences, 1874. *Մատենախօսական հատուած մ'ալ հրատարակած է դարձեալ նոյն հայագէտ բանասէրը Արծրունւոյն պատմական երկասիրութեան վրայ.* Notice sur l'histoire arménienne de Thoma Ardzrouni, Xe siècle. Tirée des Mélanges Asiat. IV, 686-763. — *Ուրիշ հատուած մ'ալ իր թարգմանութեան վրայ.* Sur l'histoire composée en arménien par Thoma Ardzrouni en français par M. Brosset. Mélanges Asiat., VI, 226-232.

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ

1. **ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԺԻՇԿ.** — *Իններորդ դարուս մէջ կը յիշատակուի Յովհաննէս անունով բժիշկ մը, որ սրբոյն Դիոնեսիոսի պատմութիւնը գտնելով՝ ի յունականէն փոխադրեալ ի Վ.խիականն* (?) *հայերէն թարգմանեց մեր* ՅԻԹ (*Քրիստոսի* 880) *թուականին։*

2. **ԱՀԱՐՈՆ ՎԱՆԱՆԴԱՑԻ** *զոր գրչագիրք Թոռն կը կոչեն Ղեւոնդեայ երիցու յիջաւանից գեղջէ։*

3. *Նոյնպէս Բագրեւանդ գաւառին Ս. Ստեփանոսի վանուց* ԴԱՒԻԹ *վանահայրն, որուն համար այսպէս կը գրուցէ յիշատակարան մը. «Այս ի պատմութենէ Շապհոյ Բագրատունւոյ է, որդւոյ Աշոտոյ Ապուհիւպատ պատրկի, յանուն Դաւթի Բագրատունւոյ՝ որդւոյ Աշոտոյ իշխանաց իշխանի. զոր ի ձեռն առեալ և ընկալեալ յօժարութեամբ հօր Դաւթի՝ առաջնորդի վանաց սրբոյն Ստեփանոսի ի Բագրեւանդ գաւառի, և յոյժ բերկրեալ՝ յաղագս հեռի գոլոյ ի տութենէ*

և լի ճշմարտութեամբ, յաւել յինքենէ զճառս բանից աստուածայնոց»։

4. **ՍՏԵՓԱՆՈՍ** *աշակերտ Մաշտոց կաթողիկոսի, որ Մաշտոց գիրք մը օրինակած է յամին* 893, *և վերջը իր վարդապետին՝ Մաշտոցի վարքը գրած. թերեւս աս ալ պատճառ եղած է այս Մաշտոց վարդապետը կարծելու հեղինակ նոյն գրոց, որ կ'ընծայուի Ս. Մեսրովպայ — Մաշտոցի։*

5. **ԳՈՒՐԳԷՆ** *Արծրունի Անձեւացեաց տէրն, իններորդ դարուս մէջ Աբդլմսեհի վկայաբանութիւնը թարգմանել տուաւ ի հայ. «Թարգմանեցաւ վկայաբանութիւն ծառայիս Աստուծոյ յասորի գրոց ի հայ, հրամանաւ աստուածապաշտ տեառն Գուրգենայ Արծրունւոյ Անձեւացեաց տեառն,* ՅԻԲ (873) *թուականութեանս Հայոց. յօգնականութիւն անձին իւրոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի աստուածասիրի, և որդւոց իւրոց Տաճատայ և Ատոմայ»։*

6. **ԳԷՈՐԳ Բ** *կաթողիկոս Գառնեցի, որ հաւատոյ խնդրոց վերաբերեալ թուղթ մը գրած է առ Յովհաննէս պատրիարք Ասորւոց։*

ԴԱՐ Ժ

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

Անանիա Նարեկացի, և իր յիշատակութիւնը առ նախնիս։ — Ճառ ընդդէմ Թոնդրակեցւոց։ — Ուրիշ հարազատ կամ կեղակարծ գրութիւնք իր անուամբ։

Տասներորդ դարուն սկիզբները ծաղկեցաւ Անանիա, որ Նարեկայ վանքին առաջնորդն ըլլալուն համար՝ անոր անուամբ կոչուեցաւ։ Թէպէտ և իր գրուածներէն քիչ բան մեր ձեռքը հասած է, բայց ազգային պատմիչք մեծապէս կը գովեն թէ երկասիրութիւնքը և թէ զանոնք երկասիրող անձը. մերթ՝ մեծ փիլիսոփայ կոչելով զինքը, մերթ՝ երեւելի վարդապետ. իսկ Կիրակոս՝ այր անուանի և գիտնական, լուսաւորիչ եկեղեցւոյ, մեծաւոր և հանճարեղ և աստուածային գրոց մեկնող կ'անուանէ։ Նոյն պատմիչը՝ նաեւ տոմարական արհեստից գիտակ կը համարի զԱնանիա, թերեւս շփոթելով համանուն Շիրակացւոյն հետ։ Ուխտանէս պատմիչին վրայ խօսելու ատենին ալ՝ պիտի լսենք իր գովասանաց խօսքերն առ Անանիա՝ յընծայական երկասիրութեանն։

Անանիայի Նարեկացւոյ գլխաւոր երկասիրութիւնն եղած է՝ Թոնդրակեցւոց մոլորութեան դէմ գրուածք մը, Անանիա կաթողիկոսին հրամանաւ շարադրած, որ գովութեամբ կը յիշատակուի թէ՛ ի Մագիստրոսէ և թէ ի Շնորհալւոյն։ Այս գրուածքն է անշուշտ որ յամի 1892 հրատարակուեցաւ առաջին անգամ ի Վաղարշապատ՝ հանեալ ի մատենադարանաց Մայր Աթոռոյ Էջմիածնի։ Խորագիրն է «Երանելւոյ հաւր Անանիայի գիր խոստովանութեան որ յաղագս սուտ կարծեացն որ ի վերայ նորա»։ Մեզի արդէն ծանօթ էր այդ մակագրութիւնը, բայց ոչ գրուածքն, և վրիպակաւ ենթադրեր էինք թէ համանուն Շիրակունւոյն ըլլայ, ուր եթէ պարունակութեանը տեղեակ ըլլայինք, ժամանակագրական այդ սխալման մէջ չէինք իյնար։

Գրուածքէն յայտնի կ'երեւնայ թէ վրան ամբաստանութիւն կամ կարծիք եղած ըլլայ համամտութեան ընդ աղանդաւորս, ուստի և ի հոգեւորական իշխանութենէ բռնադատուած յարդարացուցման կամ ի հերքման։ Հրատարակողին հետ (Միաբան) կը համաձայնինք ըսել թէ ինչ որ կրնայինք յուսալ տեղեկութիւն աղանդին վերաբերմամբ, Անանիայի նորագիւտ երկասիրութիւնը կերպով մը յուսախար կը ձգէ զմեզ, չգտնելով ի նմա՝ ինչ որ փափաքելի կրնար համարուիլ։ Աւելի անձին պաշտպանութիւն մ'է, և ոչ այլ ինչ. կ'անիծէ և լիուլի բերնով և ոճով հարկ կը համարի նզովել զԹոնդրակեցիս որպէս զի անոնց համամտութեան արատը սրբէ վրայէն և արդարանայ. «Տարօրինակ և արտաշարժ տեսարան, կը յաւելու հրատարակողն. — Հայոց ամենամեծ վարդապետներէն մէկը, Նարեկեան դըպրոցի հիմնադիրը, յօր ծերութեան, հիւանդութեան անկողնում մեղադրւում է աղանդաւորութեան մէջ նոյն իսկ իւր ընկերակից կրօնաւորից, որոյ կեղտ անունը ջնջուել է պատմութեան էջերից և մեզ չէ հասել... Դառն և արդարացի ցասմամբ լի խօսքերով է դառնում Անանիա Նարեկացին իւր անուանակից, հայրենակից Անանիա կաթողիկոսին, որ իրմէ ուղղափառ խոստովանութեան գիր էր պահանջում և անէծք Թոնդրակեցիներին։ Եւ իսկապէս այս առաջին անգամ լոյս տեսնող թղթի ամենէն շահաւոր մասը այդ արտաշարժ, զգացուած յառաջաբանն է և մա-

սամբ ալ նոյն ոգւով գրուած վերջաբանը։ Այդ մի քանի տողերը՝ ամբողջ դարի պատկերն բաց են անում մեր առաջ[1]»։ Կիրակոս կ'աւանդէ թէ առաքելական թղթոց մեկնութիւն մ'ալ շարադրած է Անանիա դիւրիմաց բանիւք և հետեւողութեամբ Եփրեմի, Ոսկեբերանի և Կիւրղի և ուրիշ վարդապետաց։ Կ'ըսէ դարձեալ նոյն պատմիչը, թէ աւետարանաց համեմատութիւն և խորհրդական և մասնաւոր տեսութիւնք շարադրած ըլլայ. և ճառ մը՝ ցուցնելու համար թէ ինչպէս ուղղափառ մտքով կ'երգեցուի սուրբ Աստուած մաղթանքը խաչեցարիւ։ Շողակաթի վրայ ճառ մը շարադրած է, կ'ըսէ, որ անշուշտ եկեղեցւոյ վրայ խօսած ճառն է՝ մեր ձեռքը հասած, իմաստալից գրուածք մը, բայց անսովոր բառերով և ոճերով։

Ճառընտրաց մէջ կը հանդիպինք հետեւեալ խորագրով յիշատակուած երկասիրութեանց. «Շնորհալից վարդապետին Անանիայի Նարեկացւոյ ասացեալ վասն աղօթից, պահոց և արտասուաց»։ Ասկէ զատ ուրիշ ճառի մը՝ խորագրին առաջնոյն նման՝ բայց իմաստիւք տարբեր. «Անանիայի հոգելից վարդապետի և Նարեկայ վանից առաջնորդի ասացեալ վասն զղջման և արտասուաց և աղօթից»։

Դարձեալ. «Անանիայի հոգենորոգ վարդապետի խրատ հոգեւոր՝ ցուցեալ թէ որպէս կարասցէ մարդ որոշել ըզմիտս յերկրաւորացն և զայս կեանս արհամարհել, և Աստուծոյ միայն ցանկալ և արքայութեան նորա։ — Արդ եթէ կամիս որ յաղթես աշխարհիս, և ոչ ըմբռնիս ի կենցաղոյս պատրանս»։

---

[1] Տես Բազմավէպ 1893, *շատ տեղեկութիւններով նիւթիս վրայ.*

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ

Խոսրով Անձեւացի՝ հայր Նարեկացւոյն։ — Ժամագրոց մեկնութիւն։ — Մեկնութիւն խորհրդոյ սրբոյ Պատարագին։ — Իր անուամբ յիշատակուած ուրիշ գրութիւն մը։ — Տպագրութիւնք իր երկասիրութեանց։

Տասներորդ դարուն մատենագրական պատմութեան պարծանք է իր հանճարովն և իմաստութեամբ՝ մեծն Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսը։ Սա, տղայ հասակէն ուսմանց և գիտութեանց տուեալ եղաւ, և վերը յիշուած Անանիա Նարեկացւոյն եղբօրը դստեր հետ ամուսնանալով՝ երեք որդի ունեցաւ՝ Յովհաննէս, Սահակ և Գրիգոր, որոնց վրայ ետքը պիտի խօսինք։ Ժամանակ անցնելէն վերջը հրաժարեցաւ յաշխարհէ, ու վանք մը քաշուեցաւ. և քանի մը տարիէն Անձեւացեաց գաւառին եպիսկոպոս ընտրուեցաւ։ Իր եպիսկոպոսութեան ժամանակ շարադրեց հետագայ գրուածները.

Ժամագրոց մեկնութիւն. — Հայաստանեայց եկեղեցւոյ հասարակաց աղօթից ընտիր և սրտեռանդն մեկնութիւն մըն է, որուն յառաջաբանին մէջ այս պատճառը կու տայ. «Թէ որ իշխանաց և թագաւորաց առջեւ խօսելու ատեննիս ամենայն զգուշութիւն, մտադրութիւն և արթնութիւն կ'ընենք, որպէս զի չըլլայ թէ անվայել կերպ կամ խօսք մը տեսնուի վրանիս և մեր բերնին մէջ, ևս առաւել նոյն զգուշութիւնը պիտի բանեցնենք թագաւորին թագաւորաց՝ Աստուծոյ հետ խօսակցելու ժամանակնիս. և այս վախճանաւ յօրինեցի նոյն սուրբ աղօթից մեկնութիւնը»։ Աւելի ագի-

տաց համար շարագրեցի, կ՚ըսէ, այս երկասիրութիւնը․ ուստի և կ՚աղաչէ որ չըլլայ թէ գիտունք արհամարհեն այն գրուածը՝ որ իրենց օգտակար ըլլալու գիտմամբ գրուած չէ․ այլ պարզապէս անոնց համար, որ կ՚աղօթեն առանց նոյն աղօթից ոյժը և խօսքերուն զօրութիւնը հասկնալու։

Որչափ պարզ՝ այնչափ ալ ընտիր է այս մեկնութիւնը․ համառօտ՝ բայց առանց կարեւորը դուրս թողլու։ Աստուածաւէր հոգի և կիրթ միտք մը կը ցուցնէ Խոսրով այս երկասիրութեան մէջ․ եկեղեցական գրոց և իմաստից ալ ընդարձակ հմտութիւն․ անոր համար շատ անգամ յոյն եկեղեցւոյ վարդապետաց խօսքերն ալ մէջ կը բերէ։

⁂

Նոյն ոճով ու սրտով գրուած է, և Մեկնութիւն խորհրդոյ սրբոյ Պատարագին, թէպէտ և առանց ունենալու այն հմտութիւնն ու լեզուն՝ զոր Լամբրոնացին բանեցուցած է համանուն երկասիրութեան մէջ։ Ինչպէս առաջին գրուածքի, առանկ ալ ասոր շարագրութեան մէջ ուրիշ վախճան ունեցած չէ բայց միայն իր պաշտաման պարտքն անթերի կատարել․ «Ոչ եթէ անձինս փառք առնալու համար էր, կ՚ըսէ, որ այս գրուածքի ձեռք զարկի, այլ որովհետեւ եպիսկոպոսութեան աստիճան ունիմ, և շատերուն քով ամենամեծ տգիտութիւն տեսայ, անոր համար հարկ համարեցի այս գրուածքս յօրինել, իմանալով թէ անկարելի էր միայն խօսքով անոր կարեւոր դարմանը մատուցանել»։

Մեր քովը գտնուած գրչագրաց մէջ յիշատակարան մը կայ՝ Խոսրովու որդւոյն՝ Սահակայ ձեռքովը գրուած, որ իր հօրը երկասիրած Պատարագի մեկնութիւնը գաղափարելով կ՚աւանդէ այսպէս․

«Շնորհիւն Աստուծոյ եղեւ մեկնութիւն այսմ գրոց ի ձեռն Խոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի, յոյժ հետեւողի

պատուիրանացն Աստուծոյ, զոր մեզ և գովել անճահ է, զի մի գայթակղեսջիք ի նոյն, վասն գոլոյ նորին հայր իմ ըստ մարմնոյ․ որոյ չեմ արժանի կոչել որդի և ոչ վարձկան, ըստ գրեցելումն․ այլ ի գրելոցդ՝ լիցին հասու խնդրողքդ վասն նորա, որք սրտի մտօք ունկն դնիցեն․ որք և աղօթիւք փոխադարձել պարտին ընդ տուեցելոյս․ և հասարակաց տուողն Աստուած՝ և ձեզ հայցողացդ ձիրեսցէ զիւրականն պարգեւ։ Այլ յոյժ ամաչեցեալ և տարակայ գտանիմ, ես Գրիգոր պարտաւոր պատուիրանաց սուրբ գրոցս։ Արդ այսորիկ գծագրութիւն եղեւ ձեռամբ Սահակայ՝ որդւոյ տեառն Խոսրովու, այս սուրբ գրոցս մեկնողի ՅՂԹ «950 Թուականութեանս Հայոց»։ Այս խօսքերէն կ՚երեւնայ թէ Խոսրովու թելադրութեամբ՝ որդին գրի վրայ կ՚առնուր։ Զայս կ՚ակնարկէ անշուշտ Այրիվանեցին․ «Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոս արար զմեկնութիւն Աղօթամատոյցին՝ զոր գրէր Սահակ որդի իւր»։

Բանք երանելւոյն Խոսրովայ խորագրով երկասիրութեան մը յիշատակութեան հանդիպեր ենք (Մատենադարան Բարձրահայեաց Ս. Աստուածածին վանաց, թիւ 229), որ հաւանականաբար Անձեւացւոյն է։

Խոսրովու Ժամագրոց մեկնութեան տպագրութիւնն եղած է ի Կ. Պոլիս յամի 1730–36․ իսկ Պատարագի Խորհրդոյն ի Ս. Ղազար ի 1869․

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Նարեկացի և իր սրբակրօն վարքը: – Երկասիրութիւնները: – Ապարանից խաչին պատմութիւնը: – Ներբող ի սուրբ Աստուածածինն: – Ճառ ի գովեստ Առաքելոց: – Գովեստ ի սուրբն Յակոբ Մծբնայ: – Երգերգոցի մեկնութիւն: – Ողբերգութիւն, կամ Նարեկ աղօթից: — Նարեկացւոյն մանր երկասիրութիւնք: — Անհարազատ գրուածներ:

Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսին որդին էր սուրբն Գրիգոր, որ 951 թուականին ծնաւ, ու մանկութեան հասակէն Ռշտունեաց գաւառին մէջ եղած Նարեկայ վանքին առաջնորդ՝ Անանիա վարդապետին իմաստուն խնամոց յանձնուեցաւ: Հոն իր վարուց սրբութեամբն ու անարատ քաղաքավարութեամբ՝ մարմնաւոր հրեշտակ մը երեւցաւ. իսկ գիտութեամբն և իմաստութեամբ՝ ժամանակին ամենէն անուանի հանճարներէն մէկը: Այնպէս որ քսանեւվեց տարուան առոյգ հասակին՝ թագաւորներ իրենց տարակուսանաց լուծումը կը խնդրէին իրմէ: Բայց հանճարն ու սրբութիւնը իրեն դէմ յարոյց ժամանակին ագէտ և ինքնահաւան գլուխները, որոնք մինչեւ Անի քաղաքը գնացին՝ կաթողիկոսին առջեւը զինքն ամբաստանելու, իր միաբանասէր եռանդը՝ յանցանք համարելով: Կ'աւանդեն թէ կաթողիկոսն ալ քանի մը վարդապետաց հետ խորհուրդ ընելով, նուիրակներ ղրկեց անոր, ու զինքը դատաստանի կանչեց: Իմացաւ Գրիգոր անոնց գալստեան դիտումը, ու սիրով ընդունելութիւն ընելով՝ ուրբաթ օր մը զանոնք կերակուրի

հրամցուց, և խորոված աղաւնի դրաւ առջեւնին: Երբ անոնք մէկ կողմանէ իրենց ծուռ կարծեաց վրայ հաստատուելով՝ միւս կողմանէ կը գայթակղէին վրան, և օրուան պահք ըլլալը կ'իմացնէին, Նարեկացին ներումն խնդրեց անոնցմէ՝ գործած վրիպակին համար, ու խորոված աղաւնիներուն դառնալով՝ հրամայեց որ ելլեն երթան. որոնք իսկոյն թռան գացին: Այսով չարախօսաց բերանը կարկեցաւ, ու սրբոյն արժանաւոր համբաւը՝ ալ աւելի շատցաւ:

Անկէ ետքը ինքզինքը բոլորովին ներանձնական կենաց ու գրական զբաղմանց տուաւ Գրիգոր. և իր մեծ և անզուգական հանճարը երկնից ու երկնքի արժանաւոր նիւթերու նուիրելով՝ իբր 60 տարուան փոխեցաւ առ Աստուած, ու Նարեկայ վանքին մէջ թաղուեցաւ, ուր մինչեւ հիմա աւանդութեամբ կը ցուցնեն իր սուրբ և նուիրական շիրիմը:

⁂

Նարեկացւոյն երկասիրութիւնները. — Նարեկացւոյն բազմապատիկ երկասիրութեանց մէջ նշանաւորներէն կրնան համարուիլ իր ճառերը. որոնց մէջ առաջին է

Ապարանից խաչին պատմութիւնը. — Վասիլ ու Կոստանդ հարազատ եղբարց կայսերաց ժամանակ՝ Մոկաց աշխարհէն ազնուական անձ մը՝ գնաց նոյն ինքնակալաց դուռը զինուորելու. այս մարդը եղբօրորդի ըլլալով Դաւթի՝ Մոկաց հռչակաւոր և սքանչելագործ եպիսկոպոսին, անոր տապանին հողէն կտոր մը քովը պահած էր իբրեւ ի մխիթարութիւն, և անկէց այլ և այլ հրաշքներ կ'ըլլային: Բարեպաշտ ինքնակալքն այս բանս իմանալով, ալ աւելի պատուեցին զինքը. ու ետքէն իմանալով թէ անոր Ստեփանոս քեռորդին՝ նոյն սքանչելագործ Դաւթին աթոռոյն վրայ նստած է, ուզեցին անոր գերեզմանին ընծաներ ղրկել: Բայց Մոկացի ազնուականը հրաման ուզեց ինքնակալներէն, որ զրկէ իմանայ թէ իր ազգայնոց՝ աւելի որ ընծայն հաճոյական կ'անցնի. և յետ թէ շատ փափաքելի է անոնց՝ կենաց փայտին մէկ երեւելի մասն ունենալը: Թագաւորք սքանչացան անոր բարեպաշտութեան վրայ. ու կենաց փայտին վրայ աւելցուցին՝ Քրիստոսի տեառն մերոյ ոտնլուայի ժամանակ սփածած զենջակէն մաս մը, նոյնպէս ի փշեղէն պսակէն, ի սպնգէն, բեւեռներէն և ի խանձարրոցն: Այս ամէն պարգեւները՝ նոյն ազնուականն անձամբ Մոկաց գաւառը տանելով՝ յանձնեց իւր Ստեփաննոս քեռորդւոյն. ու մեծահանդէս փառօք՝ նախ Գաւթի հանգստարանին քով ամփոփելով, յետոյ սրբոյն Յովհաննու կաթողիկէ տաճարին մէջ դրին, ու վերջէն ալ՝ աւագ ուրբաթի օր մը՝ սուրբ Աստուածամօր եկեղեցին փոխադրեցին: Այն վերջին ու հանդիսական փոխադրութեան ներկայ գտնուեցան՝ երեք թագաւորք Արծրունի հարազատք՝ Սենեքերիմ, Գուրգէն և Աշոտ:

Նոյն հանդիսին նկարագրութիւնն ըրաւ Նարեկացի այն գրուածքին մէջ՝ որ սովորաբար Ապարանից խաչին պատմութիւն կը կոչուի, և ըստ ձեռագրաց «Յիշատակագրութիւն պատմաբանութեան ամենազօր նշանի աստուածեան խաչին որ... ի սորին կողմանց կայից աշխարհի ազգացն Յունաց՝ բերեալ հանգուցաւ ի սահմանս վայրից գաւառին Մոկաց, ի շինուած բնակութեան ուխտին սրբութեան՝ որ կոչի Ապարանք»: Այս պատմութեան շարայարութիւն յօրինած է նաեւ սուրբ Խաչին վրայ Ներբող մը, որ լի է ընտիր իմաստիւք և գեղեցիկ խօսքերով, ու Նարեկեան հանճարոյ յատուկ և անհաւասարելի արժանաւոր գեղեցկութեամբ մը:

⁂

Խաչին գովեստին կամ ներբողին հետ շարագրած է նաեւ սուրբ Աստուածածնի հռչակաւոր ներբողը՝ որ սովորաբար ճառին սկզբնաւորութեամբը Գովմարք խմբից կը կոչուի: Ինչպէս առաջին երկու ճառերը, այս երրորդս ալ նոյն Ստեփաննոս եպիսկոպոսին խնդրանօք յօրինեցաւ: Եւ ասոնց ամենուն գրութեան ժամանակը՝ յառաջ է քան ըզգրութիւն Աղօթամատոյց գրքին, այսինքն ՆԺԲ (963) և ՆԾԱ (1002) թուականութեանց միջոց:

Այս ճառերուն գրութենէն ետքը՝ ընծայական մ'ալ շարագրած է Նարեկացին՝ առ խնդրող բանիցն Ստեփաննոս եպիսկոպոս, յորում հետեւեալ խօսքերը կը կարդանք. «Արձանացուցի սմին անջինջ յիշատակ՝ զանուն տենչալի ձերումդ կոչման, տէր Ստեփաննոս, լերինդ Մոկաց հզօր դիտապետ. որպէս զի մնասցեն յարակայ ի սոյն համառօտագիծ մատենի՝ յաւուրս անթիւս և յամս հազարաւորս իմով տկարամատնեայ իմաստիւ: Ես Գրիգոր՝ յետին վարժապետաց և կրտսեր բանասիրաց, որդի գտաեր եղբօր՝ հօր Անանիայի հոգեզարդ և մտավարժ փիլիսոփայի, և ըստ վարուց մաքրութեան կրօնից գովելոյ և հռչակելոյ. և ընծայեցի քումդ եկեղեցեաց՝ զայս նուէր բարեաց բանից ցանկալեաց:... Յիշատակեսցես... զիս և զեղբայրն իմ զանդրանիկ զՅովհաննէս ցանկալի անուն ի միում կարգի, որ գիտականն է և հանճարեղ իմաստասէր քան զիս առաւել ի յամենայնի»:

Այս յիշատակարանին մէջ՝ Նարեկացին կերպով մը ազատութիւն կու տայ իւրաքանչիւր վանականաց՝ որ իր պատմութեան և ճառերուն մէջ՝ պակաս երեւցած մասերն ու խօսքերը լրացնեն. և այդ՝ համարձակութիւն տուած է քանի մը ձեռներէց կամ անզգոյշ գաղափարողաց՝ այնպիսի բաներ ալ մէջը խառնել՝ որ կրնան անհաւատարմութեան կասկած տալ, այնպիսի դէպքեր ու խօսք յիշատակելով զորս Գրիգոր չէր կրնար գրել, իր ժամանակէն ետքը հանդիպած ըլլալնուն համար:

⁂

Ճառ ի գովեստ Առաքելոց. — Թէ առաքելոց և թէ եօթանասնաներկու աշակերտաց վրայ յօրինած ներբողական ճառը՝ Աղօթամատոյց գրքին շարագրութենէն առաջ յօրինած է Նարեկացին։ Այս կարծեաց ստուգութիւնը յայտնապէս կ'երեւնայ նոյն աղօթից գրոց այս խօսքէն. «Զորոց զգովեստն արժանաւորութեան՝ ըստ իմում կարի յայլում բանի պաշտեցի» (ՁԲ. 2)։

Գովեստ ի սուրբն Յակոբ Մծբնայ հայրապետ. — Այս ճառին իմաստներն ու զուրցուածքի կերպը կը հաւատարմացնեն թէ Նարեկացւոյն երկասիրութիւնն ըլլայ. բայց թէ ինչ պատճառաւ շարագրած է այս ճառը, ոչ ինքը և ոչ ուրիշներն յայտնի բան մը աւանդած են։ Ոմանք կը համարին թէ սուրբն Գրիգոր Առաքելոց վրայ գովեստ մը յօրինելէն ետքը՝ ուզած ըլլայ նաեւ հայրապետաց վրայ ներբող մը շարագրել, անոնց խմբէն նիւթ առնելով զսուրբ հայրապետն Մծբնայ։ Ոմանք ալ կ'ըսեն թէ որովհետեւ Ռշտունեաց գաւառին մէջ կը բնակէր Նարեկացին, ուստի և ուզած է գրուատել այն մեծ հայրապետը՝ որ նախ անիծեց այն երկիրներն ու ետքը օրհնեց։

Բայց այս ճառին գրութեան բուն գլխաւոր պատճառը՝ սրբոյն Յակոբայ պատմութեան մէջ փնտռելու է։ Որովհետեւ Մարուգէ ճգնաւորին աշակերտներէն մէկը՝ Մաղաքիա՝ կ'աւանդէ, թէ ի Հայոց ոմանք սրբոյն Յակովբայ նշխարաց մէկ մասը խնդրելով՝ առին Աղձնեաց գաւառին մօտ տեղ մը դրին։ Ուրիշ հին պատմագիր մ'ալ կ'ըսէ, թէ Հայերը՝ Մծբնացւոյն մասին կոճն առնելով՝ Աղձնեաց գաւառը հասան, Երկաթահանք կոչուած բլուրը. և երբ անկէց լեռնէն վար դէպ ի Ռշտունեաց երկիրը կ'իջնէին՝ այն պատուական նշխարքն անշարժ մնացին. և տեսիլքով հրաման ընդունեցան որ հոն հանգուցանեն. ուր փառաւոր եկեղեցի շինեցին՝ և տեղը յետոյ Մոգս ըսուեցաւ։ Ժամանակ անցնելէն ետքը՝ այն տեղը գնեց Արծրունեաց ցեղէն Հայոց թագաւոր մը, և հոն փառաւոր եկեղեցի՝ և քահանայից և կրօնաւորաց բնակութեան տեղ և վանք շինեց։ Վարդան պատմիչն ալ կ'ըսէ թէ Նարեկայ վանքին մէջ կը պահուէր սրբոյն Յակոբայ ճկոյթ մատը, և ընծաքիսարայ վրայ վանք մը կար նոյն սրբոյն անուամբ։

Այս պատմութիւններէն կրնանք գուշակել ճառիս գրութեան պատճառը, և թէ Նարեկացին ուզած ըլլայ պատուել անոր սրբազան յիշատակը այն տեղւոյն վրայ՝ ուր միշտ կենդանի էր սրբոյն անունը և մեծարելի։ Հաւանական կ'երեւնայ կարծելը թէ Նարեկացւոյն ժամանակ եղած ըլլայ այն Արծրունի թագաւորը՝ որ յիշատակուած լեռը գնեց, և փառաւոր եկեղեցի և վանք շինեց. և անոր նաւակատեաց առթիւը՝ խօսեր է սուրբն Գրիգոր այս ճառս։ Թերեւս այս կարծեաց ստուգութիւնը կ'ակնարկեն նոյն ճառին հետեւեալ խօսքերը. «Հիմնեցուցես զայս քար գովեստի ի շինուած յարկի քումդ հանգստի՝ գաւանարանի այս բարի հովուի»։

⁂

Երգերգոցի մեկնութիւն. — Նարեկացւոյն երկասիրութեանց մէջ ժամանակաւ առաջին կը համարուի այս մեկնութեան գիրքը՝ ըստ հաւանագոյն կարծեաց։ Վասն զի քսանեւմեկ տարուան հասակին՝ երբ նոր ընդունած էր քահանայական աստիճանը Գուրգէն Արծրունի՝ Անձեւացեաց թագաւորին խնդրանօքը շարագրած է՝ յետ շատ հրաժարելու. վասն զի, կ'ըսէր, մեծն Գրիգոր Նիւսացին իսկ չէր համարձակեր այսպիսի խորիմաստ գրոց մեկնութեան ձեռք զարնել, որչափ աւելի ես՝ որ ոչ անոր գիտութիւնն ունիմ և ոչ ալ աստուածազգեցիկ միտքը։ Բայց ետքը նոյն սրբոյն Գրիգորի մեկնութեան շաւղաց հետեւելով՝ շարագրեց պարզ, համառօտ և ընտիր մեկնաբանութիւն մը, ինչպէս որ առաջարկողն ուզեր էր։ Սակայն իր համառօտախօսութեան մէջ ալ անանկ ընտիր ոճ մ'ունի՝ որ նոյն իսկ եւրոպացի բանասէրք՝ որոնք կամ ազգային բնիկ լեզուով և կամ թարգմանութիւնը կարդացած են, սքանչացեր են վրան. և գաղղիացի աստուածաբան մը՝ Գուլիէլմոս Վիլֆուա կ'ըսէ թէ Երգերգոց գրոց այսպիսի ընտիր մեկնութիւն մը ուրիշ ազգի մը մէջ տեսնուած չէ։ Ոճոյն պարզութեան գլխաւոր պատճառն այն եղած է՝ որ Նարեկացին ուզած է դիւրիմաց ընել նոյն սուրբ գրքին իմաստները կարդացող հասարակ անձանց և կանանց անգամ, որոնք եկեղեցեաց մէջ այս գիրքը լսելով ուրիշ մտքեր և իմաստներ կու տային Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբ ներշնչուած ու հոգեւորական նիւթ ու նպատակ ունեցող այն խօսքերուն։

⁂

Աղօթք կամ Նարեկ. — Հռչակաւոր ու մեր ազգին մէջ սիրելի ու փափաքելի ու գրեթէ ամենուն ծանօթ է Նարեկացւոյն սրտին և գրչին արժանաւոր երկասիրութիւն մը։ Ողբերգութիւնք ալ կը կոչուի այս հոգւոյ ու մտաց հետ խօսող գերազանց երկասիրութիւնը. և իրեն խրթին մթութեամբն հանդերձ՝ անանկ զարմանալի գեղեցկութիւն և ոճոյ քաղցրութիւն ունի՝ որ ոչ միայն ազգային, այլ նաև շատ օտար բանասէրք միաձայն վկայած են թէ այսպիսի գրուած մը ուրիշ ազգաց մէջ դեռ երեւցած չէ. այնչափ գեղեցիկ ու զմայլեցուցիչ է բանաստեղծական հիւսուածին ոճը, իմաստները այնչափ վսեմ և անակնկալ, ու պերճախօսութիւնը առատ։

Իննսունեւհինգ գլուխ բաժնուած են այս աղօթքները, զորս ինքն ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ՝ կը կոչէ. անոնցմէ դուրս է այն յիշատակարանը՝ որ գրքին վերջը գրուած է, և յորում իր ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ հարազատ եղբայրը զՅովհաննէս՝ մէջ կը բերէ իբրեւ գործակից ի յօրինուած աղօթագրոցս։ Բայց որովհետեւ թէ ընդհանուր ազգին աւանդութիւնը և թէ նոյն իսկ սրբոյն խօսքերը՝ յայտնապէս կը ցուցնեն զինքը միայն հեղինակ, անոր համար հաւանական կ'երեւնայ կարծելը թէ այս օգնականութիւնը՝ պարզ խորհրդակցութեան՝ կամ սուրբ գրոց քանի մը տեղը քննելուն համար ըսուած ըլլայ։ «Այս պզտիկ մատենին մէջ, կ'ըսէ նոր բանասէրներէն մէկը, բանական արուեստն ընդ աստուածայնոյն կը միաւորէ սուրբ Նարեկացին. տեսական աստուածաբանութիւնն խորհրդականին հետ, սուրբ գրոց պատմողական առածը՝ մեկնողականին հետ, աղօթից հոգին՝ բանաստեղծականին հետ. սիրոյ հետ վախը, զղջման հետ յոյսը, Աստուծոյ բարութիւնը՝ մարդկան չարութեան հետ. համառօտ ըսենք՝ զԱստուած ընդ մարդոյ»։ Գրուածքիս ընտիր, ճարտարարուեստ՝ անթուական բոլորգիր գրչագրի մը մէջ հետեւեալ յիշատակարանը կը գտնենք. «Շնորհիւ քո բարերար փրկիչ աշխարհի, Քրիստոս օրհնեալդ յաւիտեանս, որ յանգ հանեալ կատարեցի զխոստովանականս մատեան ողբոց աղաղակի, որ է կշտամբող և կափիչ անձինս մեղապարտի, և յալագին պաղատանաւք որդւոյ անառակի. զի սովաւ զղջացեալ դարձայց ամաչեցեալս ի գութս հայրենի առաջի Հաւր քո գթածի և մարդասիրի, և Հոգւոյդ նորոգչի և կենսաբաշխի. քեւ և բանիւ քո՝ ի յոյս քո համարձակեալ յեցեալ և հաստատեալ. խրախուսեալ ի հրաման խնդրելի բանիդ տերունի. որ զփրկաւէտ քո աստուածային եկաւորութիւն ասացեր լինել, ոչ ի սակս արդարոց, այլ փրկչական քո պաշտելի ձայնիւ կոչել զմեղաւորս յապաշխարութիւն... Վասն որոյ ոչ վտարիմ բազմախալս յանցաւորս խոցեալս յոգի վիրաւոր, ոչխարս քո բանաւոր՝ մոլորականս և յոգնախտաորս։ Դարձեալ կարօտիմ ի ձայն քո հովիւ բարի երկնաւոր, թէ կոչեսցես վերստին և մուծցես ի փարախ հօտի քո երանաւոր. և ինձ սպեղանեաց քաղցրութեան դեղոյ քոյ աղերսաւոր, թէ պատեսցես զվէրս իմ բժիշկդ հնարաւոր, և արկցես ի նոյն ձէթ և գինի խորհրդաւոր։ Այլ և յայժմ մատենէ շնորհեսցես ինձ զզջումն դարձի ապաշխարութեան. բարեխօսութեամբ բարերգակ ողբացողին Գրիգորի մեծի հաւատորին, աղօթանուէր վարդապետին, այժմ մատենի մատենագրին»։...

Այսպիսի ընտիր երկասիրութիւն մը՝ զարմանք չէ որ իր արժանաւոր յարգն ալ գտած ըլլայ մեր ազգէն, գրեթէ ամենայն հոգեսիրաց ձեռք ընտիր աղօթից գիրք մը ըլլալով, անոր համար ալ շատ անգամ տպագրուած է այլ և այլ տեղեր, և որոնց մէջ նախընծայ է ի Մարսիլիա տպագրուածը ի 1673. իսկ ի Կոստանդնուպոլիս տպագրուածներուն մէջ ընտրելագոյն կրնայ համարուիլ 1790ին եղածը, զոր Մուրատեան Գասպար ամիրայն՝ Հայաստանի վանքերէն ընտիր գրչագիրներ ժողվելով՝ անոնց համեմատութեամբ տպագրել տուած է։

Նարեկացւոյն խրթին ոճը և մթին զուրցուածքի կերպը՝ յորդորեց զՅակոբ Նալեան պատրիարք անոր լուծումը և մեկնութիւնը շարագրել։ Իր այս աշխատասիրութեան մէջ գաղափար ունեցաւ՝ հին ատենները շարագրուած լուծմանց գիրք մը, վրիպակաւ Սարգսի Շնորհալւոյ կամ Լամբրոնացւոյն ընծայուած. որ ընդհակառակն ԺԳ. դարու մէջ երևցած աննշան մարդու մը երկասիրութիւն էր։ Լամբրոնացին՝ որովհետև սուրբ պատարագի խորհրդոյն մէջ գործածուած երկու Նարեկեան աղօթից մեկնութիւնն ըրած էր, կարծուեցաւ թէ բոլոր Նարեկ գրոց մեկնութիւնն ալ շարադրած ըլլայ։

Անկէց զատ կայ ուրիշ լուծմանց գիրք մ'ալ՝ աւելի համառօտ ոճով, և վերոյիշեալ ընդարձակէն քաղուած. յարգն ալ՝ անոր ունեցածին նման։

Այս լուծմանց անբաւականութիւնը տեսնելով Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան, ընդարձակ մեկնութիւն մը շարագրեց թէ աղօթամատոյց գրոց և թէ ճառերուն, ընտիր տեսութիւններով և հմուտ աստուածաբանութեամբ, որ ազգին մէջ իր արժանաւոր ընդունելութիւնը գտաւ։

⁂

Նարեկացւոյն մանր երկասիրութիւնները. — Բաց ի վերոյիշեալ գրքերէն՝ այլ և այլ մանր երկասիրութիւններ ալ ունի Նարեկացին, գանձեր, մեղեդիք և տաղեր. որոնց մէջ յայտնի կ'երևնայ իր բանաստեղծական հոգին, հանճարն ու աշխոյժը։ Գանձերը երեք են թուով, այսինքն ի Գալուստ Հոգւոյն սրբոյ, ի սուրբ Խաչն և յեկեղեցի։ Իսկ տաղերն ու մեղեդիքը՝ քանիէն աւելի մեր ձեռքը հասած և տպագրուածքն իր Մատենագրութեանցը մէջ, որոց վրայ աւելցած են յետոյ և այլք։ — Թուղթ մը կ'մնայ վանից առաջնորդին, զգուշացնելով յաղանդոյն Թոնդրակեցւոց։

Նարեկացւոյն անհարազատ գրուածները. — Այս գրուածներէս զատ կը յիշուի յանուն Նարեկացւոյն՝ Յոբայ գրոց մէջ եղած Ո՞վ է դա ընթերցուածին մեկնութիւնը։ Ասոր հարազատութիւնը իրաւամբ տարակուսական է, ոչ միայն բոլորովին ոճոյ տարբերութեանը համար, այլ նաև անով որ պատմչաց մէջ մէկը չկայ որ այս բանը յիշատակէ. ուստի և հաւանական կ'երևնայ կարծելը թէ իրմէ ետքի դարերուն մէջ երևցած Գրիգոր անունով մէկու մը գործ ըլլայ[1]։ Անկէ զատ՝ գտնուեցաւ նաև ուրիշ գրուած մը այսպիսի մակագրութեամբ. «Հօրն և երջանիկ

---

[1] ՉԽԸ (1299) գրչագրաց օրինակի մը յիշատակարանին մէջ կը կարդանք. «Յամի ևթնհարիւրերորդի քառասներորդի ութերորդի թուաբերութեանս Հայոց աւարտեցաւ մեկնութիւնս երջանիկ նահատակին Յովբայ յայլ և այլ ժամանակ և տեղի զանազան գրչաւք, ի գաւառս Կիլիկեցւոց՝ հուպ յանառիկ դղեակս Բարձր կոչեցեալ՝ ի դառնագոյն ժամանակի յորում յոյժ զզուեցաք յանաւրինաց... Այդ՝ զՆարեկացւոյն Գրիգորի բանն որ յ'Ով է դայն է խաւսեալ, և սուղ ինչ Յեսեքոսի բանիցս՝ գրեալ յայլոյ ումեքէ մատոյց մեզ ի ձիր շնորհի քահանայ ոմն Կարապետ անուն. և մեր զթերին լցեալ՝ ընծայեցաք զկնի եկելոցդ»։

քահանայապետին Գրիգորի Նարեկացւոյ խրատք վասն աղօթից և վասն արտասուաց, յուսոյ և սիրոյ»: Ասիկա թէպէտ և բոլորովին աննշան երկասիրութիւն մը չէ, բայց այլք աւելի հմտութեամբ Եփրեմի կ՚ընծայեն. և այս անուամբ տպագրուած է նոյն ճառը ի Կոստանդնուպոլիս[1]:

Նոյեան պատրիարքին տպագրութեան մէջ կայ նաև հոգևոր խրատ մը որ Հրահանգ հաւատոյ կը կոչուի. և ուսկից Շրամէր գերմանացին վկայութիւն կը բերէ իր Արամեան գանձարանին մէջ, և Նարեկացւոյ երկասիրութիւն կը համարի: Մեր տեսած գրչագրաց մէջ այս հրահանգին վերնագիրն է. «Սրբոյ վարդապետի յոքներանեան մենաւորի Գրիգորի՝ համառօտիւք բանք խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ Նորին հարազատի Վարդանայ գիտնազարդի»: Այս վերնագրին մէջ որովհետև Նարեկացւոյն անունը չի գտնուիր, հաւանական կ՚երևնայ թէ ուրիշ համանուն Գրիգորի մը երկասիրութիւն ըլլայ, որ հայերէն լեզուի կարգաւորեալ հմտութիւն, և աստուածաբանական իմաստից ալ ներհուն և քաջավարժ տեղեկութիւն ունեցեր է: Ոմանք ալ կարծեցին թէ Գրիգորի Սկեւռացւոյ կամ Լամբրոնացւոյ աշխատասիրածն ըլլայ: Նարեկացւոյն չըլլալուն գլխաւոր ապացոյցն ալ այն կ՚երևնայ որ Վարդան անուամբ եղբայր չունէր Նարեկացին, այլ ըստ աւանդելոյ պատմութեան՝ երեք եղբարք էին ասոնք, Սահակ, Յովհաննէս և Գրիգոր:

Նարեկացւոյ այլևայլ երկասիրութեանց բնագրին բազմաթիւ և բազմատեսակ տպագրութեանց վրայ՝ տես ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ:

---

[1] *Էջմիածնի Մատենադարանին ցուցակը՝ Անանիայի Նարեկացւոյ կ՚ընծայէ զայս ճառ: Մեր քով ալ գտնուած Եւագրի վարուց պատմութեան գրչագիր մը՝ նոյնպէս Անանիա անունով վարդապետի մը՝ առանց որոշելու թէ որո՛ն ի համանուանց, յառաջաբանական յաւելուածով մը:*

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ

Այս դարուս մէջ Հայոց հայրապետական աթոռը բարձրացաւ ԽԱՉԻԿ *կաթուղիկոս, որ առաջ եպիսկոպոս էր Արշարունեաց, և Շիրակ գաւառին մէջ բազմաթիւ հոյակապ և գեղեցկակերտ տաճարներ շինելէն ետքը՝ փառաւոր գրատուն մ՚ալ կանգնեց, ու հոն հաւաքեց այլ և այլ արտաքին և վարդապետական գրքերու բազմութիւն մը: Ձեռագրաց մէջ կը կարդանք թուղթ մը. «Տեառն Խաչկայ Հայոց կաթուղիկոսի բան խոստովանութեան, պատասխանի Յունաց գրոյն զոր արձակեալ էր սա առ մետրապոլիտն Մելիտինոյ»: Եւ ի լուսանցսն. «Թուղթ Սամուէլի Կամրջաձորեցւոյ Հայոց փիլիսոփայի, պատասխանի թղթոյն Թէոդորոսի մետրապաւլտի Մելիտենւոյ՝ գրեալ հրամանաւ Խաչկայ Հայոց կաթողիկոսի»:*

Ասկէ զատ նաև կոնդակ մը՝ հետեւեալ առթով գրուած և տրուած: Բարգէն՝ զոր Խաչիկ կաթուղիկոս եպիսկոպոս ձեռնադրած էր Նախավկայի բեմին վրայ, զՎահան ի կաթուղիկոսութենէ ձգելու ժամանակ կուսակից էր Խաչկայ. ուստի երբ 971 *թուին Ստեփանոս կաթուղիկոս գնաց ի Վասպուրական՝ ուր փախստեայ ապաւինած էր Վահան, Ստեփանոսի հետ էր նաև Բարգէն վանական՝ կոչեցեալն Սիւնեցի: Վասպուրական նահանգին այն մասն ալ՝ ուր է Նախավկայի վանքը, Սիւնեաց նահանգին սահմանակից լինելով, յիշեալ մասին վրայ կաթուղիկոսը եպիսկոպոս կը ձեռնադրէ զԲարգէն, և Աշոտ թագաւորի հրամանաւ նորա վիճակ և թեմ կը հաստատէ Նախիջեւանայ գաւառը, մասնաւոր կոնդակաւ մը՝ որոյ սկզբնաւորութիւնն է. «Անուամբ անեղին Աստուծոյ հաւր, և ի փառս ծնեցելոյն ի նմանէ...*

Այս մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է և աւրհնութիւն, և ի հոգեւոր հովուութեան տեառն Խաչկայ Հայոց կաթուղիկոսի, և ըստ մեծի մերոյ տէրութեան արեւելից հարաւոյ Հայոց թագաւոր Աշոտ յորջորջեալ անուամբ բարեպաշտ և մեծ Շահանշահի. ես Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց, եկեալ ի սուրբ ուխտս աստուածաբնակ Նախավկային հանդերձ զաւրաւքս, թագաւորաւք և իշխանաւք»...

Կը յիշատակուի դարձեալ այս դարուս մէջ ԴԱՒԻԹ անուամբ վանահայր մը, որուն երկասիրութիւն կը համարուի Պահոց վրայ գրուած մը այս վերնագրով. «Հարցմունք երկուց փիլիսոփայից ընդ միմեանս»:

Այս ատեններս կը յիշատակուին քանի մը վարդապետք, ինչպէս Պետրոս՝ մեկնիչ գրոց կոչուած. Մովսէս Տարոնացի, Սարգիս, Ստեփանոս, որ թերեւս Մոկաց եպիսկոպոսն է, և որուն կ՚ընծայուի Սրբութիւն սրբոց շարականը. Դաւիթ Մաշկոտն, Դաւիթ եպիսկոպոս Մոկաց, և այլն: Բայց ասոնց ամենուն ալ մատենագրական երկասիրութեանց վրայ մասնաւոր յիշատակութիւն չկայ:

Տասներորդ դարուս մէջ է նաեւ՝ Տիմոթէոս անունով վարդապետ մի՝ որուն կ՚ընծայուի Արարածոց մեկնութիւն մը:

* * *

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿ

Ասողիկ և իր վրայ կենսագրական տեղեկութիւնք: - Պատմութեան գիրքը և բովանդակութիւնը: — Մեկնութիւն Երեմիայ մարգարէութեան: — Տպագրութիւնք բնագրին և թարգմանութիւնք:

Տասներորդ դարուս ազգային պատմագրաց նշանաւորներէն համարուած է ընդհանրապէս Ստեփանոս, որ ի Տարոն ծնած ըլլալուն՝ Տարոնեցի ալ կը կոչուի, և յոմանց ալ Ասողիկ կամ Ասողնիկ, թերեւս երաժշտական արուեստի և երգոց ունեցած հմտութեան պատճառաւ, ինչպէս կարծեցին ոմանք ի բանասիրաց: Ոչ ծննդեան և ոչ մահուան ճիշդ թուականը յայտնի է: Բայց հաւանական կ՚երեւնայ թէ Ժ դարուն վերջերը և ԺԱի առաջին կիսուն ապրած ըլլայ Ասողիկ. որովհետեւ իր պատմութիւնը՝ զոր շարագրած է Սարգիս կաթուղիկոսին հրամանաւ, կը հասցնէ մինչեւ ի 1004 թուականն Քրիստոսի՝ Գագկայ առաջնոյ թագաւորութեան հնգետասաներորդ տարին: Մագիստրոսի առ Գէորգ վարդապետ գրած թղթին մէկ խօսքէն, զոր յետոյ պիտի յիշատակենք, կը գուշակուի թէ մինչեւ ի խորին ծերութիւն հասած ըլլայ. ուստի և ոմանք 117-122 տարուան կեանք տուած են իրեն, որ անհաւանական կ՚երեւնայ: Կենաց հանգամանքն ալ անծանօթ են մեզ. հոգեւորական կոչման նուիրուած և սուրբ գրոց գիտութեան հետամուտ և բաւական տեղեակ անձ մը կը թուի: Կը յիշէ մանկական հասակի մէջ ծանօթութիւնն և տեսութիւն ընդ այլեւայլ ծերունի վարդապետս ժամանակին. ինչպէս Կամրջաձորոյ առաջնորդ Պողիկարպոսի, Ստեփանոս՝ մա-

կանոն հոգևոր, և Մովսէս վարդապետաց, որք միաբանեցան յԱնի ի քննել և ի դատել զՎահան կաթողիկոս, և իրեն պաշտպանն ի կրօնական համամիտ զԱպուսահլ՝ թագաւոր Վասպուրականի։ Այս դիպաց յիշատակութենէն կրնայ ենթադրուիլ թէ Ասողիկ՝ մանուկ հասակէն իր ուսումն ըրած էր յԱնի, ուր զարգանալով ուսմամբ և գիտութեամբ, և բարձրանալով ի պաշտօն սրբութեան սեղանոյն, աջակից և օգնական եղած ըլլայ Սարգսի կաթուղիկոսի։

⁂

Պատմութիւնը. — Մեր ուրիշ շատ պատմչաց պէս՝ բայց անոնցմէ շատէն պակաս կարգաբանութեամբ և հմտութեամբ՝ յարարչագործութենէ կը սկսի իւր պատմութիւնը Ասողիկ, հետևելով մանաւանդ Եւսեբիոսի՝ հին աւանդները մէջ բերելուն ժամանակ, և Մովսիսի Խորենացւոյ՝ ազգային պատմութեանց մէջ, զոր և շատ տեղ գրեթէ գաղափարելով կ՚երկրորդէ։ Երեք գիրք՝ կամ ինչպէս ձեռագրաց խորագիրք կ՚ըսեն՝ հատուածի բաժնուած է իր այս գործը. և երրորդ մասը միայն կրնայ համարուիլ բուն Ստեփանոսի երկասիրութիւն. որովհետև ընդհանրապէս իւր ժամանակին անցքերը կ՚աւանդէ, զորս չէր կրնար ուրիշ պատմիչներէ քաղել. և այս պատճառաւ երրորդ գրոց խորագիրն է Ստեփաննոսի Տարօնեցւոյ պատմութիւն ժամանակաց, յերնախօսութիւն. առաջին երկու գրքերը Պատմութիւն բանից պատմագրական տառից կը մակագրին։ Արարչագործութենէն կը սկսի իր պատմութիւնը Ասողիկ, և առաջին գլխոյն մէջ Իսրայելացւոց ծագման, անոնց ցեղերէն ելած թագաւորութեանց և յաջորդութեան և ժամանակագրութեան վրայ կը խօսի։ Անկէ ետքը Եգիպտոսի մէջ Պտղոմեանց ցեղէն նստող թագաւորաց վրայ, ու վերջէն նորէն Հրէից դառնալով, կրկին հին ժամանակաց վրայ կը սկսի խօսիլ, Ասորւոց՝ Մարաց ու Պարսից թագաւորութեանց. ետքէն Պարթևաց

ծագման վրայ ճառելով, կը հասցնէ խօսքը մեր Արշակունի թագաւորաց ժամանակ։ Այս մասին մէջ՝ ինչպէս ըսինք, գլխաւորաբար առաջնորդ բռնած է իրեն զՄովսէս Խորենացի, թէպէտ ինքն ի պատմագրելն ինքզինքը հետևող կը ցուցնէ Ագաթանգեղոսի, Բիւզանդայ, Խորենացւոյ, Եղիշէի, Փարպեցւոյն, Սեբէոսի, Ղևոնդեայ երիցու, Շապհոյ Բագրատունւոյ և Յովհաննու Հայոց կաթուղիկոսի։ Վաղարշակայ թագաւորութեան օրերէն մինչև Տրդատայ մանկութիւնը հասցնելով պատմութիւնը, առաջին գիրքը կը լմնցնէ. իսկ երկրորդ գիրքը Տրդատէն կը սկսի, և կը հասցնէ մինչև ի Յովհան Իմաստասէր, և անկէց ալ մինչև ի թագաւորութիւն Աշոտոյ Բագրատունւոյ։ Մասնաւոր գլուխով մը կը խօսի նաև Սասանեան Պարսից թագաւորաց վրայ, անոնց Արտաշիր թագաւորէն սկսելով, ու կը հասցընէ մինչև ի Յազկերտ որդի Կաւատայ, թոռն Խոսրովու։ Եւ որովհետև Խոսրովու մահուընէն քիչ առաջ՝ երևցեր էր Մահմէտ, և իրմով Հագարացւոց իշխանութիւնն ու ցեղապետութիւնը, ուստի այս երկրորդ գրոց չորրորդ գլուխը անոնց վրայ կը ճառէ, մասնաւոր խորագրով. Ամիր-ալ-մումնինք Տաճկաց, և որ ինչ յաւուրս նոցա գործեցան, և Մահմետէն սկսելով՝ կը հասցնէ մինչև ի Մրուան և յԱբդլլա, և անով կը լմնցնէ երկրորդ գիրքը։

⁂

Աշոտոյ թագաւորութեամբ կը սկսի Ասողիկ Գ. գիրքը, որ ինչպէս առաջ ալ ըսինք, իւր պատմութեան գլխաւոր և էական մասն է. վասն զի ընդհանրապէս իր ժամանակին և կամ իրեն մերձաւոր դէպքերու վրայ կը խօսի՝ բաւական հմտութեամբ և ոճով. որով ազգային պատմութեան վրայ՝ բաւական գոհացուցիչ լոյս մը կը ծագէ, նորանոր դէպքեր աւանդելով, և կամ այլոց պատմածը աւելի լուսաւորելով։ Այս պատճառաւ պիտի ըլլայ անշուշտ՝ որ իրմէ ետքը եկող պատմչաց գովեստին արժանի եղած է. որոնց մէջ Լաստիվերտցին՝ յիշելով Գագիկ Ա. Շահնշահի ատեն ծաղկած վարդապետները, գլխաւոր կը համարի անոնց մէջ այս «Ստեփաննոս Տարօնացին՝ որ զաշխարհապատում գիրսն շարագրեաց, սքանչելի յօրինուածովք սկսեալ ի մարդն առաջին. և գայ բովանդակէ զպատմութիւն իւր ի վախճան Գագկայ՝ վասն որոյ պատմութիւնս է»։

Ոմանք կ'աւանդեն թէ Ասողիկ՝ Երեմիա մարգարէին գրոցը մեկնութիւն մ'ալ շարադրած ըլլայ. և իրենց կարծեաց երաշխաւորութիւն կը համարին Մագիստրոսի հետեւեալ խօսքերը, զոր իր Թղթերէն մէկուն մէջ գրած է առ Գէորգ վարդապետ. «Վասն որոյ բանս հայցէ ի քէն զմեկնութիւն Երեմիայի մարգարէի, զոր գրեալ է Ասողնըկայ՝ երջանիկ ծայրագոյն ծերոյ՝ շնորհել մեզ»։ Այս երկասիրութիւնը մինչեւ հիմայ երեւցած չէ. և ուրիշ համանուն մեկնութիւն մը կայ՝ զոր գրչագիրք Մխիթարայ Գետկացւոյ կամ Գոշի կ'ընծայեն, և որ ստուգիւ հեղինակ է Երեմիայ մարգարէին մեկնութեան։

Ասողկայ Պատմութեան առաջին տպագրութիւնն եղած է ի Փարիզ յամի 1859 այս խորագրով «Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցւոյ ի լոյս ընծայեալ հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց՝ միաբան սրբոյ Էջմիածնի»։ Երկրորդ տպագրութիւն մ'ալ ի 1885 ի Փեթրպուրկ. «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն Տիեզերական» հմտական յառաջաբանով և բաղդատական ծանօթութեամբք Ստեփաննոսի Մալխասեանց, և նուիրեալ «ի յաւերժական յիշատակ ազգասիրի տանն Յովսեփայ Իզմիրեանց Ղզլարեցւոյ»։ Գաղղիական թարգմանութիւնն ըրաւ հանրածանօթ հայագէտն Էդ. Տիւլորիէ, և իր մահուանէն եաքը առաջին հատորն հրատարակուեցաւ, խոստմամբ մերձաւոր տպագրութեան երկրորդին, ի Գարրիէր հայագիտէ գաղղիացւոյ։ Խորագիրն է, Histoire Universelle, par Étienne Açogh'igh de Daron; traduite de l'arménien et annotée par Ed. Dulaurier, Membre du l'Institut, Professeur à l'École des langues orientales vivantes. Première partie, Paris; Ernest Leroux, éditeur, 1883. Ռուս թարգմանութիւն մ'ալ ըրած է բազմահմուտն Մ. Էմին, և տպագրեալ ի Մոսկուա ի 1864։

ՈՒԽՏԱՆԷՍ

Ուխտանէս պատմիչ։ — Պատմութեան նիւթը։ — Պատմական և բանասիրական արժէք իր երկասիրութեան։ — Բնագրին տպագրութիւնն և թարգմանութիւնք։ —

Տասներորդ դարուս մէջ ապրած է նաեւ Ուխտանէս պատմիչ, որուն պատմական երկասիրութիւն մը թէպէտեւ քիչ ատենէն ի վեր գտնուած և հրատարակուած է, բայց իր անուան և գրուածոց նիւթին յիշատակութեանը կը հանդիպինք առ Կիրակոս պատմչի և Ստեփաննոսի Ուռպելեան։ Առաջինը՝ ուրիշ ազգային պատմչաց թուոյն մէջ կը յիշատակէ և զնա. «Ուխտանէս եպիսկոպոս Ուռհայի, կ'ըսէ, որ գրեաց զբաժանումն Վրաց ի Հայոց՝ ի ձեռն Կիւրիոնի»։ Ուրիշ տեղ մ'ալ։ «Յայնմ հետէ բարձաւ ձեռնադրութիւն Վրաց որ ի Հայոց. զի սկսան զյունօք թեւակոխել. ամենայն ստուգութեամբ ուսուցանէ քեզ Ուխտանէս եպիսկոպոսն. զի նա զամենայն լիով գրեաց, զթուղթն և զպատասխանին և զքաջութիւն Պետրոսի եպիսկոպոսի, որ պատգամաւոր էր տեառն Աբրահամու առ Կիւրիոն, զոր Վիրք վասն համարձակութեան նորա Գայլ կոչեցին զնա»։ Դարձեալ. «Եւ զպատճառս բանիցն՝ որպէս վերագոյնս խօսեցաք, բացայայտեցից սակաւուք, որպէս հաւաստի ուսաք ի սրբոյն Ուխտանիսէ Սեբաստացւոյ եպիսկոպոսէ»։ Կը յիշատակուի նաեւ առ Այրիվանեցւոյն։

Պատմութեանը խորագիրն է (ըստ միակ ծանօթ օրինակին որ պահի ի Մատենադարանին Էջմիածնի), «Զպատմութիւնս յերիս հատուածս, զոր ասացեալ է սրբոյն Ուխտանէսի Սե(բաստացւոց) եպիսկոպոսի, ի խնդրոյ Հաւրն Անանիայի Նարեկավանից առաջնորդի և Նախաշար վարդապետի. Հատուածն առաջին՝ յաղագս Թագաւորաց և Հայրապետաց մերոց. և երկրորդն՝ վասն բաժանման Վրաց. և երրորդն յաղագս մկրտութեան ազգին այնմիկ Ծադն կոչեցեալ»։ Այս երեքմասնեայ գրութենէն, — ինչպէս կը ծանուցանեն հրատարակողք ի յառաջաբանին, միայն առաջինն ամբողջ հասած է առ մեզ. երկրորդն՝ թերի, իսկ երրորդը բոլորովին անհետ եղած։ Բայց թէ հեղինակին յօրինուածն ամբողջ էր, կը վկայէ և ինքն Ուխտանէս յընծայականին առ խնդրող պատմութեանս. «Կարգել մի ըստ միոջէ ըստ իւրաքանչիւր խորհրդոյ. նախ զթիւ Թագաւորացն և Հայրապետացն մերոց. և զբաժանումն Վրաց ի Հայոց միաբանութենէ. և յետ այնորիկ զմկրտութիւն ազգին որ Ծադն կոչի. նաեւ զգաւառս և զգեղս գիւղօրս, և զքաղաքս և զբերդս իւրաքանչիւր գաւառօք՝ որ են յաշխարհին յայնմիկ, որպէս և կամք քո հրամայեցին, և զվանորայս հանդերձ վանականօք՝ անուամբ իւրաքանչիւրոց»։ Գրուածքիս այս հետաքննական մասն կորսուած է։

* * *

Պատմութեան նիւթը. — Հաւատարիմ իր խոստման՝ հեղինակը գրուածքին առաջին մասն կամ հատուածը կը նուիրէ Հայոց Թագաւորաց և Հայրապետաց պատմութեան, ի գլուխ գրոցն կարգելով ընծայական մը առ խնդրողն, զոր «աստուածազարդ և վսեմական տէր, կը կոչէ, տիեզերական վարդապետ, իբրեւ ծառ իմն բազմապտուղ և բարձր ի մէջ վայելուչ և աստուածատունկ դրախտիդ Նարեկայ կոչեցեալ ուխտի, սաղարթ առեալ և վարսաւորեալ վարուք առաքինութեան»։ Կ'անուանէ զնա և *բանիբուն պոէտիկոս* և *հռչակաւոր հռետոր*, գրուատելով նաեւ անոր ուսումնական եռանդն ու փոյթը։ Յետոյ կը սկսի իր պատմական երկասիրութիւնը՝ յԱդամայ և յորդւոց նորա. Նոյի ու սերնդոցը վրայ խօսելու առեն կը յիշատակէ և զՀայկ ի ցեղէ Յաբեթի. «Ի սոցանէ, կ'ըսէ, եղեւ սկիզբն թագաւորութեան ի Հայք, ի գալն Հայկայ և յանուանել զիւր անուն. և յայնմ հետէ տիրել ի նմանէ և անդր ամենայն աշխարհի, արեւմտից և հիւսիսի»։ Այսպէս կը շարունակէ Ուխտանէս աստուածաշունչ գրոց ծննդաբանութեամբք և համառօտ տեղեկութեամբ կամ յիշատակութեամբ անուանց լերանց, ծովուց, գետոց և բաժանման աշխարհաց մինչեւ ի գլուխն ԺԵ. որ նուիրուած է Հայկայ և իր պատերազմին ընդդէմ Բելայ Խորենացւոյն խօսքերովը, և նոյն ոճով և հետեւողութեամբ կը շարունակէ՝ համառօտելով զպատմութիւն նորա՝ և յարգական մեծարանօք խօսելով հեղինակին վրայ, զոր մերթ անուանովը կը կոչէ, և մերթ լոկ պատմագիր ըսելով գոհ կ'ըլլայ։ Փոփոխակի համառօտելով զպատմութիւն Հրէից, Հայոց, Պարսից և Յունաց, ի գլուխն ԻԵ Տիգրանայ առաջնոյ վրայ խօսած առեն՝ կը տարբերի քիչ մը ի Խորենացւոյն՝ իրեն որդի ու յաջորդը Բապալիան կոչելով, «զորոյ քաջութեան գովութիւն, կ'ըսէ, երգիչք երգէին ի պարս խաղուց, զոր և աստուածացուցեալ զնա ասեն Վրաց աշխարհին. և զչափ հասակի նորա անդրի կանգնեալ՝ պատուէին զոհիւք, ասէ մեզ ստուգիւ պատմագիրն։ Եւ Տիգրան, ասէ, ընդվզեալ մեռանի յԱղեքսանդրացւոց Մակեդոնացւոց»։

Ի գլուխն ԻԶ կը խօսի յաղագս Թագաւորելոյն Արշակունեաց ի վերայ Պարսից և Հայոց, ու կը շարայարէ (ԻԷ) ի վերայ Թագաւորաց Հայոց որ ի Պարթեւաց, Արտաշեսի, Արտաւազդայ ու Արգարու և իրենց յաջորդաց, նշանակելով համառօտիւ նաեւ Հռովմայեցւոց կայսրերը՝ և իրենց ժամանակաց դէպքերն, եկեղեցւոյ վրայ յարուցած հալածանք և արկածք ի ներքին անմիաբանութեանց և ի հերձուածոց՝ բաւական ստուգապատում և հետաքննական ոճով։ Այս կերպով յառաջ կը վարէ գրուածքն մինչեւ ի գլուխն ՀԶ որ վերջին է առաջին հատուածին կամ գրքին։ Միայն վերջընթեր գլխոյն մէջ Շապհոյ Բագրատունւոյ պատմական գրուածքէն հատուած մը մէջ կը բերէ Ուխտանէս, այս խորագրով. «Յաղագս Թագին երանելոյն Կոստանդիանոսի՝ թէ ուստի՞ կամ որպէս յաջողեալ եղեւ նմա ի Տեառնէ՝ Շափոյ որիոյ (Շապհոյ՝ որդւոյ) Աշոտոյ ասպահի պատրակի առացեալ ի Պատմութեան իւրոյ»։ Այս հատուածը կը յիշատակէ եւ Ասողիկ՝ Բագրատունւոյն անուամբ։ Վարդան պատմիչն ալ. «Յետ այսորիկ խաղաղութիւն խնդրեաց Շապուհ Պարսից արքայ ի Կոստանդեայ, նեղեալ ի Տրդատայ արքայէ. եւ նորա հաւանեալ խնդրեաց ի նմանէ զթագն Դաւթի մարգարէի. զոր առ Յովաբ յորդւոցն Ամնայ՝ ի տանէ Մեղքոմայ. եւ եդ ի գլուխն թագաւորին Դաւթի, եւ անկաւ ի Քաղդէացիսն, եւ ապա ի Կիւրոս, եւ ի Դարեհէ յԱղեքսանդր, որով պսակեցան Մակեդոնացիքն մինչեւ ցԱնտիոքոս, զոր սպան Պարթեւն Արշակ եւ առ ի նմանէ, եւ եկն մինչեւ ցՇապուհ, յորմէ խնդրեաց կայսրն՝ զի օրինակաւն արասցէ իւր թագ, եւ զայն առ նա դարձուսցէ. եւ յորժամ ետ կազմել՝ եդ զերկուսին ի վերայ սեղանոյ, առաջ ծառայիցն Շապհոյ առնուլ զիւրեանցն. եւ նոցա աչք կալեալ աւին զնորն եւ գնացին. քանզի խնդրեաց յԱստուծոյ Կոստանդիանոս զի առ ինքն մնասցէ Դաւթի մարգարէի յիշատակն»։

* * *

Ուխտանէսի գրոց երկրորդ մասն կամ հատուածը կը կոչուի՝ ինչպէս ըսինք, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց։ Չենք կրնար ըմբռնել թէ ինչ վերաբերութիւն ունի այս մասը առջինին հետ, ինչպէս նաեւ կորսուած երրորդը՝ երկու նախընթացներուն հետ. եթէ չուզենանք ենթադրել որ միեւնոյն հեղինակի այլեւայլ նպատակ ունեցող շարադրութիւնք ըլլան՝ ըստ հայցման եւ առաջարկութեան խնդրողին, եւ ապա իրարու հետ միացած ի գաղափարողաց եւ այնպէս առ մեզ հասած։ Ընդհանրապէս ժամանակին եկեղեցական պատմութեան կարեւոր եւ հետաքննական յիշատակարանք են՝ հաւաքեալք յՈւխտանիսէ յայլեւայլ դիւանաց եւ ի գրոց. եւ զորս մարթ է ամբողջացնել ի թղթոց կոչուած մասենից, յորս հաւաքուած են այսպիսի թղթակցութիւններ։ Ինչպէս խորագիրն ալ կ'ակնարկէ, Քաղկեդոնի ժողովոյն պատճառաւ Հայոց ի Վրաց բաժանման պատմութիւնն է. եւ մինչ հայրապետք Հայոց եւ ժողովք կը զգուշացնեն զՎիրս յընդունելոյ զժողովն, կամ արդէն տրուած համաձայնութենէն ետ կենալու, Վիրք ալ իրենց գործը եւ համոզումը կ'արդարացնեն. եւ այս փախճանաւ եղած են փոխադարձ թղթակցութիւնք Մովսիսի Հայոց կաթուղիկոսի առ Կիւրիոն Վրաց հայրապետին առ Մովսէս, Մովսիսի եպիսկոպոսի Ցուրտաւայ թուղթք առ Վրթանէս Քերթող, եւ սորա պատասխաններն, եւ այլն, եւ այս թղթակցութեանց պատճառաւ այլ եւ այլ դիպուածք, ժողովք եւ բանակցութիւնք։ Գրեթէ բովանդակ այս նիւթերով կը զբաղի Ուխտանէս իր գրոց երկրորդ մասին եօթանասուն գլուխներով. յորոց վերջինը՝ Աբրահամ Հայոց կաթուղիկոսին շրջաբերականը թերի կը մնայ ի գրչագրին՝ որով նաեւ ի տպագրին էջմիածնի։

Երրորդ հատուածը, հետաքննականն անշուշտ քան զառաջինն, Ծադ ազգին մկրտութեան վրայ, բոլորովին կորսուած է ըսինք:

Ուխտանեսի լեզուն, պատմական արժէք, գրութեան ոճ՝ ունին իրենց յարգը, ուստի և իրաւամբ հաճոյ բանասիրաց: Այլեւայլ աղաւաղութիւնք գրչագրին կ'երեւնան, քիչ մ'ալ տպագրողաց. որով շատ տեղ ընթերցուածոց հաւատարմութիւնք կասկածելի կը մնան, ու փափաքելի կ'ընեն նոր և ընտրելագոյն գաղափարաց գիւտը և հրատարակութիւն:

Հայկական բնագիրն հրատարակուեցաւ յէջմիածին, յամի 1871. Գաղղիարէն թարգմանութիւնն Պրոսէի ջանքով. Histoire en trois parties, composée par l'évêque Ter-Oukthanès, à la prière d'Anania, supérieur du Couvent de Narek, et Vartabéd de premier rang, par M. Brosset; Saint-Pétersbourg, 1870. Մատենախօսական կրկին հատուածք ալ նոյն հայագէտին. Études sur l'historien arménien Oukthanès, xe siècle, par M. Brosset; Mélanges Asiatiques, VIe. — Histoire de la scission religieuse entre les Georgiens et les Arméniens, depuis la fin de Ve siècle; Saint-Pétersbourg, 1851.

* * *

ՄԵՍՐՈՎՊ ԵՐԷՑ

Մեսրովպ Երէց: — Իր անուամբ գտնուած պատմական երկասիրութիւն մը: — Ի հնոց գրուած Մեծին Ներսեսի հայրապետի վարք: — Ծաղկաքաղ այդ գրուածին ի Մեսրովպայ: — Նիւթը և արժէք: — Տպագրութիւնք և թարգմանութիւն:

Այս դարուս մէջ ապրած և մատենագրած է Մեսրովպ ոմն երէց, վայելչահիւս գրիչ վարուց և կենաց սրբոյն մեծին Ներսէսի Պարթեւի: Ի վերջ այս երկասիրութեան դըրուած յիշատակարանին խօսքերն են՝ զոր մէջ կը բերենք. «Ի ՆԾԶ թուականիս Հայոց և ի վերադիտողութեանն Տեառն Վահանայ Հայոց կաթողիկոսի, և յամս Աշոտոյ Բագրատունւոյ Հայոց թագաւորի ի տանէն Շիրակայ, ես Մեսրովպ նուաստ քահանայ ի Վայոց ձորոյ ի գեղջէ Հողոցմանց, ուստի Յովսէփ էր երանելի նահատակն յաւուրս սրբոյն Վարդանայ... մեծ ցանկութեամբ ծաղկաքաղ արարի զգիրքս զայս ի Հայոց մնացորդաց յԱրեւելից գրոց. զյաղթութիւն և զվաստակութիւն թագաւորացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զսքանչելիս հայրապետաց տոհմից սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և զտեսիլ և զկտակ սրբոյն Ներսէսի. և զքաջութիւն և զյաղթութիւն արիական ազգին Մամիկոնէից... Ես Մեսրոպ ազգակից սրբոյն Յովսեփայ երիցու, իմացուցանեմ վասն նորա, զորս ոմանք ասեն եթէ եպիսկոպոս գոլով նորա, չէ ճշմարիտ. վասն զի Ղեւոնդ երէց Վանանդացի, որ է նահատակակից սրբոյն Յովսեփայ, յաւուրս սրբոյն Վարդանայ, ի ժամ մարտիրասութեանն ասէր ցՅովսէփ, յառաջ մատիր զի դու աստիճանաւ ի վեր ես. աստիճան ասաց և ոչ աթոռ. զի երիցու կարգ և սարկաւագի և դպրի՝ աստիճան է և ոչ աթոռ։ Յորժամ ձեռնադրի եպիսկոպոս կամ կաթողիկոս, յայնժամ լինի աթոռոյն տուն օրհնութեան։ Եւ արդ յառաջ քան զվախճանելն Սահակայ կաթողիկոսի, տայր զտեղապահութիւն աթոռոյն սրբոյն Գրիգորի՝ Մեսրոպայ վարդապետին. և Մեսրոպ տայր Յովսէփ երիցու։ Եւ ի չփոթմանէ ժամանակին ոչ ժամանեաց Յովսէփ ձեռնադրել եպիսկոպոս կամ կաթուղիկոս, այլ միայն երէց և ի նմին վախճանեալ։ Եւ արդ զայս հանեալ յԱրեւելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց. և ետու որդիացելոյն իմոյ սուրբ աւազանին ծննդեամբն՝ Վահանայ Մամիկոնենոյ, ի գեւղն որ կոչի Վարժի»։

Աւելորդ է անդրադարձնել թէ նոյն իսկ երկասիրողին վկայութեամբ՝ լոկ ծաղկաքաղ մ՚է արդէն ազգին մէջ իր ատեն գտնուած և ծանօթ ընդարձակագոյն երկասիրութեան մը՝ ի Հայոց մնացորդաց յԱրեւելից գրոց։ Թէ ինչ կը նշանակէ այս խորագիրը՝ չենք կրնար ստուգութեամբ զրուցել. բայց այդ անունը կրող գրուածքին գոյութիւնը մեր դպրութեան մէջ արդէն յիշատակեցինք, նախնեաց իսկ վկայութեամբ ընծայելով զայն Աբրահամու Խոստովանողի, միոյ ի կրտսերագոյն Թարգմանչաց։ Բայց որովհետեւ մեր ձեռքն հասածը Մեսրովպայ երիցու աշխատասիրածն է՝ և ոչ իրմէ յիշուած նախնական երկասիրութիւնն՝ որ կորսուած կ՚երեւի, ուստի և իր անուան և ժամանակին տակ ուզեցինք զետեղել։

⁂

Հնութեան ոչ լոկ հետք՝ այլ նաեւ յարգը կը կրէ իր վրայ այս համառօտ բայց ընտիր գրուածը. «Խուն առ մեծութեամբ Ներսիսի, — ինչպէս կ՚ազդեն հրատարակողք, —

զի զինչ իսկ այնպիսում գեր եղելոյ ի մարդիկ գուցէ հնար պատշաճեցուցանել. այլ առ մեզ մի ճանաչի ի գեղեցիկ չափով և համով սոփերաց դպրութեան հայ լեզուի մանաւանդ ըստ վիպասանութեան առանձին կենցաղականաց»։ Բիւզանդ՝ արդէն իր առատաբան և պաճուճեալ լեզուով և ոճով հռչակած էր զսուրբ հայրապետն Ներսէս. բայց թերեւս սրբագրի մը ոչ այնչափ պատկանաւոր կերպով ու բացատրութեամբ՝ որ իսկապէս արժանի ըլլայ այն անզուգական անձին՝ որ սրբակենցաղ քաղաքավարելովն՝ յերկրի երկնաքաղաքացի, ու երկրաւոր հայրենեաց ճշմարիտ բարւոյն համար տոչորող սրտիւը՝ իրաւամբ հայր հայրենեաց կոչուած է։ Բիւզանդայ քով թերի համարուած մասը՝ երկրորդիս մէջ լրացած կը գտնենք։

Ո՞վ եղած է սկզբնագիր հեղինակ այս վարուց սրբոյն Ներսիսի։ — Բանասիրութիւնը՝ դէթ մինչեւ հիմայ չունի որոշ պատասխան մը այս հարցման։ Երկու տեղ ի պատմութեանն կը յիշուի Մեսրովպայ — Մաշթոցի անունը, նախ, իբրու ընկերակից սուրբ հայրապետին առաքելական վաստակոց, և երկրորդ անգամ մ՚ալ՝ յերկրէ յերկինս մահաքերան՝ բայց յաղթական ու քրիստոսանուէր անցից ժամանակ երբ «քիրտն, — ինչպէս կ՚ըսէ պատմիչը, — ոռոգանէր զանձամբն, և ցաւն ստիպէր զնա ուժգին. և նա ձեպէր ի հանգիստն։ Եւ յարուցեալ յաթոռոյն եկ ի զաւիթս եկեղեցւոյն, և տարածեալ զձեռս իւր, հայեցաւ յերկինս զուարթ սրտիւ. և յիշէր յաղօթս իւր զամենայն աշխարհ, զհեռաւորս և զմերձաւորս։ Եւ ունկն դնէր նմա Մեսրովբ աշակերտն իւր, որ անուանեցաւն Մաշդոց»։ Այսպիսի հրաշալի նուիրման և մահուան մը տեսարանին ներկայ՝ ու հոգեհրատ խօսքերուն ականջալուր վարդապետասէր աշակերտը՝ ոմանք հաւանականաբար նաեւ գրիչ ուզեցին համարել առաքինակրօն վարուցը։ Այլք՝ Խորենացւոյն ընծայեցին, որովհետեւ ի ցուցակս Մատենադարանին որ ի Ս. Յակոբ Երուսաղեմի կը յիշատակուի, կ՚ըսեն, այսպիսի գրու-

թիւն մը յանուն Մովսիսի. ոմանք ալ Աբրահամու Խոստովանողի:

Գրուածքին խորագիրն է. «Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի»: Կը սկսի սրբոյն Գրիգորի մահուանէն, տալով նաև իր որդւոց վրայ համառօտ և արդէն ծանօթ տեղեկութիւններ: Անոնցմէ բնականաբար կ'անցնի ի սուրբն Ներսէս. իր ուսումն ի Կեսարիա, անդ ի կարգ աշխարհի մնալով՝ Մամիկոնեան ցեղէն ընդ Սանդուխտ օրիորդի ամուսնութիւնն ու զաւակ մը ունենալը զսուրբն Սահակ, յետ երից ամաց կնոջը մահը, ու Ներսէսի յարքունական սպաս Արշակայ թագաւորի մտնելը իբրու սենեկապետ: Տխուր գոյներով, — ինչպէս էր իրաւամբ, — կը ստորագրէ նոյն ժամանակի Հայաստան աշխարհին բարոյական վիճակը. և թէ ինչպէս անոր դարմանը գտնելու համար՝ միաբանակեցք սրբակրօնք ի ժողով գումարէին, և հոգեկան ազդեցութեամբ կը գուշակէին թէ այն փափաքելի բարեկարգութեան հասնելու միակ միջոցն էր՝ Լուսաւորչի ցեղէն մէկը բազմեցնել յաթոռ նորա հայրապետական. որոց համախոհ և ձայնակից՝ Շիրակայ գաւառէն մեծ նախարար մը, Պարթեւ անուն, ուրախարար աւետիսը կու տար գումարելոցն թէ «Ես տեսի ի տան թագաւորին յազգէ սրբոյն Գրիգորի մանուկ մի, որում կոչի անուն Ներսէս, կատարեալ հասակաւ և լի իմաստութեամբ և շնորհօք Աստուծոյ»: Արշակ թագաւորն ալ որ յայտնապէս կը տեսնէր հայրենեաց անկումը, պատճառը ուրիշ բան չէր գտներ, կ'ըսէ պատմիչը, բայց «զի պակասէր քահանայապետ ի ցեղէ սրբոյն Գրիգորի, և զօրավար՝ ի քաջ և ի տիրասէր ազգէն Մամիկոնէից». և իբրև իշխան և պետ՝ ի կորուստ դիմող ազգին այս կարեւոր պակասը լեցնելու փափաքանօք, զչորս հարազատս, զՎարդան, զՎասակ, զՎահան և զՎրուժ՝ զորդիս Արտաւազդայ Մամիկոնենոյ կարգէր ի զօրավարութիւն Հայոց, զորս կը դրուատէ պատմիչը, «աներկիւղք ի պատերազմունս, աջողակք ի մարտս պատերազմաց, բարեհամբաւք, բարենշանք, աղեղնադրօշք, ի մարտս պատերազմաց իբրև հուր ընդ եղէգն ընթանային»: Այս մեծ կարգաւորութենէն ետքը՝ կը հրամայէ թագաւորն աշխարհաժողով բազմութեամբ և հաւանութեամբ փութալ յընտրութիւն Ներսիսի. և արքունական փառօք և ճոխութեամբ կը ղրկէ զնա ի Կեսարիա՝ եպիսկոպոսական օծութիւն ընդունելու:

Հայրապետական շքով և իշխանութեամբ ի հայրենիս դառնալով, ոչ եւս յերկրէ, այլ Աստուծոյ և հայրենեաց բոլորանուէր հոգի, անձն և սիրտ, իրեն վաստակոց և հայրագութ խնամոց լայն և ընդարձակ ասպարէզ մը կը բացուի. և նախ՝ անշուշտ թագաւորական բարեհաճութեամբ և առաջարկութեամբ, ի Խոսրովայ և յայլ թագաւորաց սահմանուած ու գրուած Հայոց իշխանաց գահը կը նորոգէր. «Զնոյնն և նա, կ'ըսէ պատմիչը, կարգէր ի ժամ ճաշոյն ի սեղան արքային Արշակայ՝ բարձս չորեքարիւր». յորոց հարիւր և վաթսուն և աւելի հետաքննական ցուցակաւ յանուանէ կը յիշատակէ, և որ մեծ յարգ և նշանակ մ'է երկասիրողին հմտութեանն և հնութեան, և կը յաւելու. «Այս են գահոյք և այլ եւս յոլով, զոր ծանր համարեցայ արկանել ընդ գրով. զոր նորոգեաց Արշակ թագաւորն և կարգեաց ի ժամ ճաշոյն իւրոյ ի սեղան իւր. բարձս չորեքարիւր՝ հրամանաւ մեծին Ներսիսի»: Իշխանական դասու և տոհմի բարեկարգութենէն՝ կ'անցնի հայրապետը նաև եկեղեցական նուիրապետութեան մէջ սպրդած անպատշաճութիւններն և անվայելուչ զեղծումները բառնալ. զորս մի ըստ միոջէ կը յիշատակէ պատմիչս, աւանդելով նաև իր ձեռքով և հրամանաւ կատարուած բազմաթիւ շինութիւնք ի պատսպարան և ի սփոփումն աղքատաց, հիւանդաց և ուրկաց, յորոց բազումք անխնամ և անայցելու և հալածեալք յանբնակ տեղիս՝ «գազանակուրք, գետավէժք, ձիւնախեղդք և անգիւտ կորնչէին»:

⁂

Այսպիսի փրկարար և բարեգործ արդիւնք ճաշակելէն ետքը, պատմիչը նոր և հրաշափայլ անձնաւորութիւն մը կ'երեւցնէ մեզ զՆերսէս, նկարագրելով իր գրաւած մեծ և կարեւորագոյն դերը ազգային պատմութեան մէջ. և ուր աւելի է նենգագործ չարութիւն՝ հոն աւելի կը փայլեցնէ անոր բարութիւնը. ուր յաղթողի մը խրոխտանօք կ'երեւնայ անիրաւութիւն, զՆերսէս աներկիւղ ի խորտակել և ի փշրել անոր զէնքերը. ուր անխուսափելի են վտանգք՝ ինքն է առաջին յանձնանուիրութեան ի փրկել զհայրենիս. ուր արտասուք՝ հոն կը հասնի ի մխիթարել և ի սփոփել: Այսպէս՝ երկասիրութեան առաջին երեսներուն մէջ՝ երբ անմեղին Գնելայ անպարտ ու դաւաճան մահուան նկարագրութիւնը կ'ընէ. երբ կը ցուցնէ զՓառանձեմ՝ որ կը տեսնէ թագաւորին ղրկած սուսերաւոր և վահանակիր հետեւակաց գունդը, որք փայլական պէս վրայ կը հասնին, կը ձգեն զպատանեակն Գնէլ յերիվարէն, կը կապեն կը կապկպեն անոր ձեռքերը, ու կը տանին ի տեղի սպանման: Այն անգութ և անողորմ տեսարանին ականատես անզէնն Փառանձեմ՝ ճիչ վերցնելով կը դիմէ առ սուրբն Ներսէս, կը գտնէ զնա դեռ եւս ի պաշտաման առաւօտու աղօթից. կը փարի անոր ոտից, կը թանայ ջերմիկ և յորդառատ արտասուօք. «Զպատանեակն Գնէլ՝ զոր դուն սիրէիր, կ'ըսէ, զամուսին իմ, առանց իրիք յանցանաց կորուսանել կամին: Կենդանի է Տէր, ոչ թողից զգարշապարս քո, մինչեւ ցուցցես խաւարեալ աչաց իմոց զսրբութեամբ ամուսինն իմ զպատանեակն Գնէլ: Վա՜ղ հասիր սուրբ հայրապետ, վա՜ղ հասիր, զի զմատաղիկ ուռն հատանեն ի յորթոյ. վա՜ղ հասիր սուրբ հայրապետ անօգնականին Գնելոյ, ոչ գոյ զի օգնեսցէ պատանեկին. և գազանքն ոչ ողորմին նմա»: Սուրբ հայրապետն այս գուժին՝ իսկոյն կը խափանէ առաւօտեան մաղթանքն. կը փութայ ի խորանն արքունի: Կ'իմանայ Արշակ այդ անակնկալ գալստեան պատճառը. արքունական քօղով գլուխը կը ծածկէ, կեղծելով զքուն: Ներսէս կը բանէ անոր ձեռքէն՝ ի գահոյից վեր վերցնելու, մինչ Արշակ կը շարունակէ իր կեղծիքը, սպասելով որ իրմէ տրուած անօրէն հրամանը ելնէ ի գլուխ: Այն ատեն Ներսէս կը հրամայէ երիվար մը պատրաստել. ու սուրհանդակի մը պէս կը վազէր, կ'ըսէ պատմիչը, որպէս զի ատենին հասնի անմեղին Գնելոյ մահը խափանելու: Հազիւ բանակէն դուրս ելած է, և ահա կը հասնին բանբերք՝ աւետելու արքային որ հրամանը կատարուեցաւ: Չի թողուր Ներսէս որ վայրկեան մ'ալ ուրախ ըլլայ թագաւորն իր խորհրդոյն յաջողութեան համար. այլ անոր պարտաւոր գլխոյն վրայ՝ երկնազդեցիկ արիութեամբ կը տեղայ կը թօթափէ կայծականց ու անիծից շանթեր. ու չխաբուելով անոր սուտ արտասունքէն՝ կը քաշուի իր վրանը ողբալ զթագաւորն և զհայրենիս:

Դիտմամբ յերկարեցինք խօսքերնիս այս գեղեցիկ դըրուագին վրայ, և որուն ոչ անարժան է Մեսրովպայ ոճը բովանդակ երկասիրութեան մէջ: Վասն զի համանման և ընտիր դրուագք են՝ Արշակայ խոնարհիլն իյնալը յոտս Ներսիսի՝ իր անձին ու հայրենեաց փրկութիւնը խնդրելով յարդարադատ ցասմանէ Վաղեսի. սուրբ հայրապետին փութալն ի Կ. Պոլիս առ կայսրն, առաքելանման համարձակախօսութիւնն ընդ նմա, կամակար աքսորանքն, Վաղեսի երկնաւոր պատուհասն, սրբոյ Պարթեւին դարձն ի հայրենիս, Արշակայ գերութիւնն յԱնյուշ բերդի, Պապայ բազմարկածեան թագաւորութիւնը, Ներսիսի աղօթիւք ի Նպատական լերին Հայոց բանակին յաղթութիւնը, Մուշեղ և իր արութիւնները, և վերջապէս սուրբ հայրապետին մահը, և այլն. ասոնք ամէնքը սրտաշարժ ոճով ու լեզուով պատմուած են ի Մեսրովպայ:

Մեսրովպայ Երիցու այս գրուածքը առաջին անգամ տպագրուած է ի Մադրաս Հնդկաց ի Յակոբայ Շամիրեան ի 1775, Նորագոյն և ընտիր տպագրութիւն մ'ալ գիտական Յառաջաբանով և 160 հմտալից ծանօթութեամբք ի 1853 ի Ս. Ղազար Վենետկոյ ի չորս Հայկական Սոփերաց հատ. Զ, Գաղղիական թարգմանութիւնն ալ ի Հաւաքման պատմչաց Հայոց Լանկլուայի (Հատ. Բ.). Généalogie de la famille de Saint-Grégoire Illuminateur de l'Arménie, et Vie de Saint-Nérsès, patriarche des Arméniens, par un auteur anonyme du Ve siècle. Ouvrage traduit pour la première fois en français, par Jean-Raphaël Emine, Paris, 1869.

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ

Այս դարուս մէջ կը յիշուին, ՄՈՒՇԵՂ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, *որ* Կարուց *թագաւոր կ'երեւնայ, և* Աշոտոյ Երկաթի *եղբայրը, որով տասներորդ դարուն առաջին կիսուն մէջ կ'իյնայ: Անանուն վարդապետ մը՝ իր խնդիրքովը Արիանոսաց, Եւտիքեանց, Նեստորականաց ու Քաղկեդոնականաց դէմ գրուած մը շարադրած է, այսպիսի սկզբնաւորութեամբ. «Ո՛վ քաջդ բանաւորաց, տէր իմ Մուշեղ Բագրատունի, պերճաբանդ և հանճարեղ գունակցելոյդ առ ծայրագոյն խորոց խոհեմագոյն, ըստ գործնականին և տեսականին գրոց ստորոգութեանց»:*

ՆԼ թուականին գրուած մատենի մը մէջ ալ կը յիշատակուի ԱՏՈՄ ԱՆՁԵՒԱՑԻ, *տասներորդ դարուն առաջին քառորդին մէջ ապրած, որուն հրամանաւն՝ Արտաւազդ Մաղազունեաց տէրն «բացայայտեաց զսուրբ պատուիրանս»: Ներբողեան մ'ալ կայ ի գրչագիրս ի սուրբ Կարապետն Յովհաննէս «երանելւոյն տեառն Ատոմայ Անձեւացեաց եպիսկոպոսի ասացեալ. Զկարապետին մեծ ի գլխատակս տօնելով, զկուսութեանն հանդէս գովեսցուք»: (Մատենադարան Էջմիածնի, թիւ գրչագրաց* 920):

Հաւաքում մ'ալ յօրինեց սրբոց վարուց և դասաւորեց համեմատական ամսոց օրերով. այս պատճառաւ յոմանց Ատոմագիր ըսուեցաւ իր անունով և յոմանց Հռոմագիր. ոմանք ալ Տօնացոյց կամ Տօնացուցակ կ'անուանեն զայն: Ասողիկ՝ Ատոմայ սուրբ ուխտին առաջնորդ Գագկայ կ'ընծայէ այս կարգաւորութիւնը: Յիշատակագիր մը Վարագացի կը կոչէ զնա, և կը յաւելու թէ ի թուին ՆՃ «զՀռոմագիրն կարգաւորէր»:

Կը յիշատակուի նաև Արամ ոմն, որ ունի թուղթ առ Ատոմ Անձեւացեաց իշխան՝ վասն պէսպէս հարցմանց, և սկզբնաւորութիւնն է. «Աստուածապաշտ և աստուածասէր իշխանիդ իմոյ մեծազահի. — Աստուածատունկ մատանցդ գիր և հրաման եհաս առ իս»:

Իրեն ժամանակակից ՍԱՄՈՒԷԼ ԿԱՄՐՋԱՁՈՐԵՑԻ *յօրինեց զՏօնապատճառ գիրս:*

Դարձեալ ՏԱՃԱՏ *անունով կրօնաւոր վարդապետ մը, որ իրեն աստիճանակից Թովմայի մը հարցմանց պատասխան կու տայ: Այս հարցմանց վերջը՝ հետեւեալ խօսքերը կը կարդանք. «Կիւրեղ Երուսաղեմի վկայէ և Յովհան Բիւզանդացի և Եղիշա Կողբացի, որով և զանգիտ ոչ բացայայտեցաք». Թերեւս զԵզնիկ և զԵղիշէ շփոթելով:*

Ճառընտրաց մէջ կը յիշուի սրբոց Ատոմանց վկայաբանութիւնը՝ «զոր արարեալ է Տաճատ հայրն Վարագայ»: — Կայ թուղթ մ'ալ յանուն Թովմայի առ Ատոմ իշխան:

ԴԱՐ ԺԱ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈԶԵՌՆ

Յովհաննէս Կոզեռն: — Իր վարքը: — Երկասիրութիւնք: — Պատմական գրուածքի մը յիշատակութիւն:

Մետասաներորդ դարուն սկիզբները, Խաչիկ Բ կաթողիկոսին օրերը ծաղկեցաւ Յովհաննէս վարդապետ Կոզեռն Տարոնացի, զոր գովութեամբ կը յիշատակէ Մ. Ուռհայեցին, և կ'ըսէ. «տկար բանիւ և մեծ գիտութեամբ բացայայտէր զգիտութիւն գրոց սրբոց». ուրիշ տեղ մ'ալ «այր ճգնազգեաց և բանիբուն հռետոր» կոչուած կը գտնենք զինքը: Կը պատմեն Լաստիվերտցի և Ուռհայեցի թէ Հայոց ՆՁԵ թուականին՝ արեգական մեծ և սաստիկ խաւարում մը պատահեցաւ. Պետրոս կաթողիկոս և Յովհաննէս թագաւոր՝ զԳրիգոր Մագիստրոս և ուրիշ ազնուական և գիտուն անձինք և քահանաներ ղրկեցին առ Կոզեռն վարդապետ, որպէս զի այս նշանին մեկնութիւնը տայ, և իրենց վարանեալ միտքը հանդարտեցնէ: Երբ զանոնք տեսաւ Յովհաննէս վարդապետ, հառաչեց ու սկսաւ բարձրաձայն լալ. պատգամաւորք ալ աւելի շփոթեցան. և այն ատեն մեկնեց թէ ինչպէս Քրիստոսի խաչելութեան հազարերորդ թուականը լրանալով՝ սատանան պիտի արձակուի և բոլոր աշխարհս տակնուվրայ պիտի ընէ. Թագաւորք՝ թագաւորաց, և ազգք ազգաց վրայ պիտի ելլեն, բազմապատիկ թշուառութիւնք պիտի հասնին Հայաստանի վրայ: Ուռհայեցի պատմագիրը, որ այս դէպքը կ'աւանդէ, Հայաստանի վրայ հասած այլ և այլ աղէտքն աչքով տեսնելէն և զանոնք ողբալէն ետքը, կը յաւելու. «Զոր խօսեցաւ ի մերում ժամանակիս սուրբ վարդապետն Հայոց Յովհաննէս՝ որ ասի Կոզեռն. սա խօսեցաւ բազում բանք, որպէս զմարգարէութիւն ի վերայ այսմ ժամանակիս, և խափանելոյ աստուածպաշտութեան յամենայն մտաց, և թուլանալոյ հաւատոյ. և զայս ասաց ի նոյն գիրս յառաջ ժամանակաց»:

Լաստիվերտցին հեղինակիս համար կ'ըսէ, թէ «զՀաւատոյ գիրս գրեաց». բայց այսպիսի գրուած մը դեռ մեր ձեռքը հասած չէ: Ուրիշ գրքի մ'ալ, այսինքն տումարական արուեստի և թուականաց և շրջանաց վրայ գրածէն՝ ի խնդրոյ Անանիայ եպիսկոպոսի Վաղարշակերտցւոյ, միայն հատուած մը հասած է մեզի: Հաւանականաբար այս գրուածն է որ կը նշանակուի յէջմիածնի Մատենադարանին (թիւ 1975) այսպիսի խորագրով. «Մեկնութիւն տումարի ի Յովհաննէս Կոզեռն վարդապետէ»:

Պատմական գրուած մ'ալ կը յիշատակուի իր անուամբ՝ որ մեզ անծանօթ է. «Յովհաննէս Կոզեռն, կ'ըսեն յիշատակագիրք, որ արար զոր ինչ եղեւն ի ժամանակս իւր»:

Ուրիշ գրուածք մ'ալ ունի հետեւեալ խորագրով. «Յովհաննիսի Հայոց վարդապետի, որ և մականուն Կոզեռն, ասացեալ վասն Վարդավառի տօնին. եթէ վասն էր յընթերցուածն ոչ շարադրեցաւ, ոչ ի Յակոբայ մեծէ, որ է եղբայր տեառն, և ոչ ի Կիւրղէ, և ոչ զկնի նոցա յայլոց վարդապետաց և յառաջնորդաց եկեղեցւոյ»:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Մագիստրոսի տոհմը։ — Քաղաքական դիրքը. — Կոստանդնուպոլիս երթալը և հոն ի Բիւզանդական արքունեաց մեծարուիլը։ — Մատենագրական կեանքը։ — Այս նկատմամբ իրեն արուած գովութիւնք։ — Թղթերը։ — Վարդապետականք։ — Իմաստասիրականք։ — Ընտանեկանք։ – Քերթուածք։ – Հազարտողեանն առ Մանուչէ արաբացի։ — Քերականականք։

Պահլաւունեաց տոհմէն Վասակ Նահապետին որդին էր Գրիգոր Մագիստրոս, որ իր հօրը մահուընէն ետք ուրիշ նախարարաց հետ միաբանեցաւ, ու Գագիկ Երկրորդ Բագրատունին թագաւորեցուց Հայոց վրայ։ Բայց երբ Վեստ Սարգսի քսութեամբ Գրիգորի հետ թշնամացաւ թագաւորը. որովհետեւ Անւոյ կողմերը Հայոց ի Յունաց կրած վնասուց պատճառ և թելադիր կը համարէր զնա. որով ստիպուեցաւ Մագիստրոս Արարատեան աշխարհը թողլով՝ Տարօնոյ գաւառն առանձնանալ. և հոն սկսաւ վանքեր շինել, և սրբոյ Կարապետին ժամատունը։ Բայց Նորէն հալածուելով ի Գագկայ, այն շինութիւններն իր Հրահատ գործակալին յանձնեց, և ինքը գնաց ի Բիւզանդիոն։ Կայսերական քաղաքին մէջ իր արժանաւոր պատիւն ու մեծարանքը գտաւ. ու բաց ի Յունաց գլխաւոր պաշտօնակալներէն՝ ծանօթացաւ նաեւ այլազգի Մանուչէ և Աբրեհիմ իշխանաւորաց հետ։

Կոստանդին և Մոնոմախոս կայսերաց առջեւն ալ իր

հաւատարմութեամբ նշանաւոր երեւնալով, և անոնց սահմաններուն մէջ քաջութիւններ գործելով՝ Մագիստրոս և Դուքս կոչուեցաւ։ Այս պատիւներն ու ընդունելութիւնները՝ ալ աւելի հաստատեցին Գագիկ թագաւորը իր կարծեաց մէջ, և սկսաւ զայն իբրեւ մատնիչ նկատել մինչեւ յանդիմանութեան թուղթ մ'ալ գրեց առ Գրիգոր։ Բայց Մագիստրոս իր ճարտար և իմաստուն գրիչը շարժեց ինքզինքը պաշտպանելու համար. որով թագաւորը առանց բոլորովին իր կարծիքը փոխելու՝ առաջին ատելութենէն իջաւ։

Երբոր Յոյնք մատնութեամբ Անի քաղաքը յափշտակեցին, Մագիստրոս Կոստանդնուպոլիս գնաց, ուր էր այն ատենը Գագիկ թագաւորը, որպէս զի իրեն օգնական ըլլայ՝ կործանման վերահաս վտանգի մէջ եղող Հայոց աշխարհին թագաւորութիւնը կանգնելու։ Բայց տեսնելով թէ իր փափաքանաց և ջանքին գործադրութիւնը անկարելի է, ինքն ալ Յունաց ձեռքն յանձնեց իր հայրենի ամրոցները՝ Բջնի, Կայեան և Կայծոն, ու փոխարէն՝ Միջագետաց աշխարհին մէջ քաղաքներ ու գիւղեր առնելով՝ հոն քաշուեցաւ. և Թոռնիկ Մամիկոնեանին յանձնեց Տարօնոյ մէջ ունեցած իշխանութիւնը։

Անկէ ետքը իր կեանքը բոլորովին բարեպաշտական ու մատենագրական պարապմանց տալով, իր արդիւնաւոր օրերը կնքեց յամի 1058։

⁂

Այսչափ ընդհանուր և համառօտ կերպով մը՝ Մագիստրոսի քաղաքական կենաց ընթացքը յիշատակելէն ետքը, անցնինք նկատել զինքը իբրեւ մատենագիր։

Այս մասին՝ նոյն իսկ իրեն քաղաքական ընթացքը վար զարնող մատենագիրք՝ մեծ գովութեամբ կը խօսին իր վրայ։ Շնորհալին՝ որ թէ ժամանակաւ և թէ ազգակցութեամբ մերձաւոր էր Գրիգորին այսպէս կը գրէ իր վիպասանութեան մէջ.

« Յորմէ Գրիգոր որդի ծընեալ
(Որ) Մագիստրոս վերապատուեալ,
Աստուածային շընորհօք լցեալ
Իմաստութեամբ պայծառացեալ...
Ի յարքայէն Յունաց պատուեալ
Եւ նահանգաց յոգունց տիրեալ.
Տեսականաւըն ճոխացեալ,
Եւ երկիւղիւըն զարդարեալ.
Ըստ Հոմերի տաղաչափեալ՝
Ըստ Պղատոնի պերճաբանեալ.
Յունականին ներհուն եղեալ,
Յոքնիմաստիցըն մակացեալ.
Զաստուածաշունչ սա վերծանեալ,
Որ ըստ օրէ ի նոյն կըրթեալ »:

Լաստիվերտցին ալ կը վկայէ թէ «Այր իմաստուն էր և խելամուտ յոյժ աստուածային գրոց՝ որպէս թէ ոչ այլ ոք»: Ինքն իսկ Մագիստրոս իր թղթոց մէջ երբոր հարկ կ'ըլլայ իր անձին վրայ խօսիլ, կը յիշատակէ իր ուսումնասիրութիւնը և անպարապութիւնը յունական վաստակոց: «Եւ զի բազում աշխատութեամբ խոնջեալ և տագնապեալ, մինչ տակաւին յիմումն անտախական եւոլ տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էակացն հասեալ, ըստ որում են յԱրաբացւոց և Քաղդէացւոց և Յունաց, ոչ գանգաղեցայց քննութեամբ զփորձ առնուլ»: Ուրիշ անգամ մըն ալ՝ Հագարացւոց Աբրեհիմ ամիրային գրելով, կը զրուցէ պանծանօք. «Մեք զամենայն մատեանս որ միանգամ յաշխարհի՝ ընթերցեալ, ոչ անտեղեակ եմք եթէ Քաղդէացւոցն անվաւերական պատմութեանն, և եթէ Հելլենացւոցն, եթէ Կապադովկացւոցն, եթէ Եթովպացւոց, թէ Պարսից և այլոց բազմաց, զորս ոչ եմք բաւական զբոլորն յայտնի կացուցանել»: Առ աշակերտսն իր Բարսեղ և Եղիշէ կը գրէ խրթնաբանելով. «Քանզի տրամագրութիւնս այս վաղ ուրեմն պատահեաց մեզ, մինչ տակաւին պատանեակ եղելոյ (այսինքն՝ պարապել յունումն ստորոգութեանց

Արիստոտելի): Իսկ թէ որչափ ջան եղեալ ոչ խոնջանս վարկանել վասն տափելոյն, յաւէտ այսպիսի ժողովմանց որոց տեղեակ էք դուք, ի պարսկականէ անտի և յիսմայելացւոցն, և այժմ Յունաց, անդանդաղ քառիցն արհեստից հետեւաբար մասին ինչ տեղեակ լինել. քանզի յայսոսիկ կրթեալ զմեզ վեհագոյն վարկանէի, անկողոպտելի և անծանրագոյն ստանձնել քան զամենայն ինչ որ ի կենցաղումս ազնուագոյն»: Ուրիշ տեղ մ'ալ իրաւացի պարծանօք կը վկայէ վասն անձին. «Եթէ ձկնորսացն եմ աշակերտ, կ'ըսէ, սակայն ոչ եմ անտեղեակ Աթենացւոցն ստորոգութեանց և հելլենական հանճարոյ. սակայն հաւատք մեր ծածկեցին զիմաստութիւն»:

Ներսիսի Շնորհալւոյն վարուց կենսագիր մը, որ ժամանակաւ ալ մերձաւոր էր Մագիստրոսի, այսպէս կը խօսի իրեն վրայ. «Յոյժ իմաստուն և հանճարեղ, և ներքին և արտաքին ուսմամբ ներակրթեալ վարժմամբ ի մանկական տիոց՝ հայկական և յունական դպրութեամբ, մինչև հասեալ ի հռետորական աստիճան փիլիսոփայութեան, որ և ուղեւորեալ ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս յանդիման լինէր թագաւորին, և պատուեալ յինքնակալէն և ի մեծամեծաց պալատանն՝ ըստ արժանեաց քաջատոհմութեանն և ըստ մեծիմաստ գիտութեանն և հանճարոյն. քանզի ընդ իմաստունսն Յունաց աւուրս բազումս ի հարց և ի փորձ դժուարալոյծ բանից մաքառեալ ըստ փիլիսոփայական սարասի, և ըստ եկեղեցական օրինաց և կարգի յաղթէր բնաւիցն. տկարագոյն զամենեսեան երեւեցուցանէր անճշմարիտ գիտութիւնն. Հզօր գոլով նորա ի պատասխանիս, և հանճարեղ և խոհական ի դարձուածս բանից»: Ուրիշ յիշատակագիր մ'ալ կ'ըսէ. «Մագիստրոս հմտագին քերթող էր»: Նոյնն դարձեալ. «Գրիգոր Եվիկտոնացին(?) վասն յաճախ իմաստասիրութեան իւրոյ Մագիստրոս անուանեցաւ»:

Այլ և այլ աշակերտներ ունեցաւ Մագիստրոս, որոնց *մէջ անուամբ մեզի ծանօթ եղողներն են Բարսեղ և Եղիսէ, որ ժամանակ անցնելէն ետքը եպիսկոպոսութեան աստիճանի ալ հասան, ինչպէս նաև իւր որդին Գրիգոր Պահլաւունի կամ Վկայասէր, իր հօրը անմիջական խնամոց տակ թէ բարեպաշտութեան և թէ ուսումնական հրահանգաց մէջ կրթուելով՝ կաթողիկոսական աթոռը նստաւ։*

Մագիստրոսի համար այսպիսի յիշատակութիւն մը կը գտնենք ի գրչագիրս. «Մոնոմախն որ կալաւ զԳագիկ թագաւորն ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորի Մագիստրոսի, որ շինեաց զեկեղեցին Կեչառուաց։ Սա է որդին Հոլում Վասակայ Շինողին Բջնոյ և Կայենոյ և Կարծոնայ, զոր յանդէտս սպանին ի Սերկեւլէ»։

⁂

Մագիստրոսի թէ՛ արձակ և թէ ոտանաւոր գրուածոց մէջ իրաւամբ գլխաւոր տեղ մը կը գրաւեն։

Թուղթերը, որոնք թուով 87–88ի չափ են, և որոնց մէջ երեւցած իմաստից գեղեցկութիւններն և գիտարանական գիտութիւնը՝ յայտնի կը ցուցնեն մատենագրին հանճարն ու հմտութիւնը. – Հայ միտք մը՝ ելլադական գիտութեամբ սնած և մեծցած։ Բայց որովհետև Բիւզանդիոն՝ ուր երկար ատեն կեցաւ Մագիստրոս՝ հին Աթէնքը չէր, անոր համար ալ իր գրուածոց մէջ յայտնապէս կը տեսնուի՝ դպրութեանց կողմանէ ալ ապականեալ աշխարհի մը գաղափար։ Ասկից է իր թղթերուն մէջ երեւցած թէ իմաստից և թէ շարագրութեան խրթնութիւնը, կիրթ ախորժակաց կանոններուն հակառակ. որով զանազան անգամ ու մտադրութեամբ զանոնք կարդալնէն ետքը՝ դեռ մութ աշխարհքի մը մէջ կը գտնենք ինքզինքնիս. և Մագիստրոսի հանճարը գոված ժամանակնիս ոճոյ պակաս մը կը տեսնենք վրան, և սրտերնիս առաջ չ'երթար գրուատել։ Այս խրթնութեան մէկ պատճառն ալ՝ իր գրոց լաւ և ընտիր օրինակներ չունենալնէս է, երկրորդ և գլխաւոր պատճառ մ'ալ՝ այլ և այլ նիւթոց վրայ գրած ըլլալն։ – Ուստի Մագիստրոսի թղթոց վրայ չխօսած՝ կրնանք զանազան դասակարգութեան բաժնել զանոնք. այսինքն վարդապետական, իմաստասիրական և բնաստեղծական թղթեր։ Ասոնց մէջ ամենէն աւելի դիւրիմաց են վարդապետականները, որոնց մէջ ժամանակաւ երիցագոյն կը համարուի այն թուղթը՝ զոր գրած է առ կաթողիկոսն Ասորւոց։ Երբոր ինքն Միջագետաց կողմերը դքսութեան իշխանութիւն կը վարէր, հոն համարձակութիւն առնող Թոնդրակեցի և Մանիքեցի աղանդաւորները իր տէրութենէն հալածեր էր. անոնք ալ Ամիթ կամ Տիգրանակերտ քաղաքը գնացին, ու անդուստ Ասորւոց կաթողիկոսին ապաւինելով՝ գանգատ ըրին իրեն այն կարծեցեալ բռնաւորական կերպերուն վրայ՝ զոր իրենց դէմ բանեցուցեր էր Մագիստրոս։ Կաթողիկոսն ալ չկարենալով որոշել թէ յորում էր անոնց վարդապետութեան ծանօթութիւնը, և իրենց խօսքերէն զիրենք անմեղ ենթադրելով՝ մեղադրանաց և գանգատի թուղթ մը գրեց առ Մագիստրոս։ Այս թղթիս պատասխանն է Մագիստրոսի շարագրածը, յորում մի առ մի պատասխան տալով անոր մեղադրանաց, կը ծանուցանէ թէ ինչ իրաւացի պատճառներ ունէր զանոնք հալածելու, և կը ցուցնէ թէ ինչ բանի մէջ օտարածայն են յուղիղ վարդապետութենէ եկեղեցւոյ, և թէ այն պատճառաւ հարկ ու պարտք է որ ինքն ալ ետեւէ ըլլայ զանոնք մերժելու, և անոնց խարէական խօսքերուն հրապուրանաց մէջ չիյնալու։

Այս թղթոյն խորագիրն է. «Պատասխանի թղթոյն կաթողիկոսին Ասորւոց, ի ժամանակին յորժամ էր դուքս ի Վասպուրական և ի Տարօն, զկնի բառնալոյն զՄանիքեցին յաշխարհէն Յունաց. և ի Թոնդրկաց մնացեալսն նոցա կործանեալ ազգն, չոգան առ կաթողիկոսն Ասորոց ի քաղաքն Ամիթ, զի թերեւս խարէութեամբ հաւանեցու-

ցեն զնա։ Զոր նորա գրեալ թուղթ ի Գրիգոր Մագիստրոսն յԱրշակունին։ Եւ այս է պատասխանին»։

Հատուած մը միայն այս նամակէն, զոր մէջ կը բերենք, բաւական է ի ցուցանել Մագիստրոսի ճարտարախօս լեզուն, սուր և կտրուկ ոճը. «Զինչ երկարագոյն քեզ ատացից կամ գրեցից քրիստոսասէր անձինդ. այլ ասխաւուք հատանել յօժարանամ. զի բոլոր աղէտ տարակուսանաց նոցա անբարի բարեձեւութեանն, և խորամանկ խաբէութեանն, և տղայաբար անուսումնութեանն, և անաստուած վարդապետութեանն, և անճառ ճառմարանութեանն, և անտեղի հաւանութեանն,.. անքահանայապետ քահանայագործութեանն, և խաւարչրալին ձեռնադրութեանն, և անշընորհ մկրտութեանն, և անդամպարափայլ նաւմութեանն, և անյոյս դաւանութեան և աներկիւղ երկիւղածութեանն, և խաւարասէր լուսաւորութեանն, հրեշտակակերպ դիւագգեցութեանն, ... աշակերտելոցդ սատանուէրն Սմբատայ՝ սասանողին հիման առաքելոց և մարգարէից»։ Երկար ու հետաքննական թուղթ մ'է. ու Թոնդրակեցւոց աղանդին և իրենց ծիսից, արարողութեանց, հաւատալեաց և ծաւալման վրայ կարեւոր տեղեկութիւններ կը բովանդակէ։

Ասոնց հետեւողք էին և Թուլայլեցիք կոչուածներն, որոնց դէմ իր բոլոր իշխանական ոյժն ու խստութիւնը գործածեց Մագիստրոս, աղանդն անհետ ընելու և զիրենք շահելու դիտմամբ. ու երբ անոնք ալ դիմեցին առ կաթուղիկոսն Ասորւոց, և կ'ուզէին խաբել զնա, Մագիստրոս երկրորդ թուղթ մ'ալ գրեց. «Պատասխանի թղթոյն Թուլայլեցւոցն մնացելոցն ի նորոց Մանիքեցւոց Թոնդրակեցեացն, որք եկեալ էին առ կաթուղիկոսն Ասորոց և կամէին խաբել զնա»։ Կը յիշեցնէ իրենց թէ «Փրկիչն հրամայէ երկիցս և երիցս բողոքել եղբօրն. ապա եթէ ոչ լուիցէ՝ եղիցի իբրեւ զայլազգի և զհեթանոս. և փոխանակ երկուց և երից բողոքելոյ՝ զհարիւր և զեւթանասուն ամ երեքատասան քահանայապետք Հայոց մեծաց, նոյնչափ Աղուանիցն, և

բիւր եպիսկոպոսունք և անթիւ քահանայք և սարկաւագունք բողոքեցին ձեզ և ոչ լուայք. խօսեցան և յանդիմանեցին, և ոչ պատկառեցէք. անիծեցին և արտաքսեցին, և ոչ զղջացայք. մինչեւ Հոգին սուրբ առաջնորդեաց ինձ. և աղօթք նախահօրն և հաւուն իմոյ սրբոյն Գրիգորի. և եկեալ ի Միջագետս՝ հանդիպեցայ մահաբեր և մրրկեալ պղտորեալ վտակաց՝ որ հոսէր մահացու արտաթորեալ՝ յանիծելոյն Սմբատայ, որ ի Թոնդրակաց. և մաքրեալ զայնոսիկ՝ խաղացի չու արարեալ մինչեւ յակն յորում բունեալ էր իժն և քարբն և վիշապն չարութեան. և խլեալ զնոսա տապալեցի, զոր օրինակ հաւն իմ զԱշտիշատն... և յուսամ ի տէր Աստուած՝ այն որ նստին ի քրովբէական յաթոռ՝ զի ի ձեռն իմ ծագեսցէ առ ձեզ զողորմութիւն մարդասիրութեան իւրոյ»։

Համառօտ՝ բայց ընտիր նամակ մ'ալ է զոր կ'ուղղէ «Առ հոգեւոր տէրն Պետրոս կաթուղիկոս, ի ժամանակին յորում ի կապանաց իւրոց վերստին յաջորդեաց յաթոռ իւր, խնդրեալ ի Գրիգորէ զգիր սրբոյն Եփրեմի Հաւատոցն՝ զոր ընթեռնոյր մինչ ի բանտին էր»։ Ուրիշ հմտական և գեղեցիկ նամակներ ալ ունի ուղղած առ նոյն հոգեւոր տէրն «Ի ժամանակի խուժան յառնելոյն ի քաղաքին ի վերայ նորա, բան մխիթարական. և հայցումն Անանիայի գրոց Շիրակայնւոյն, զոր մեծ Քննիկոնն անուանեն»։ — «Պատասխանի տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի, ի ժամանակի քանզի խնդրեաց յաշակերտաց իւրոց զոմանս՝ զԲասիլ և զՆղիխէ»։ — «Պատասխանի տեառն Պետրոսի կաթողիկոսին Հայոց մխիթարական թղթին» և այլն։

Վարդապետական թղթոց մէջ գերազանցներէն կրնանք համարել այն թուղթը զոր գրած է առ Պետրոս կաթուղիկոս Գետադարձ, որ իմացուցած էր իրեն թէ Գագիկ ետեւէ է որ զքեզ ձեռք ձգէ և սպանել տայ։ Կաթուղիկոսին այս թղթին՝ ընդարձակ պատասխան մը կու տայ Մագիստրոս, և յորում նոր Գաւիթ մը կը նկատենք զինքը ի վիշտս, հեզութեամբ, անոխակալութեամբ և աստուածպաշտութեամբ սքանչելի, Աստուծոյ կամացը նուիրուելով։ Ասոր նման է նաև այն թուղթը՝ զոր գրած է առ առաջնորդն Սեւանայ Սարգիս, մինչդեռ Գագիկ թագաւոր կը հալածէր զինքը· առ նոյն Սարգիս՝ ի պատասխանի իրեն թղթոյն, և յորում ողբ ի վերայ Արամեան նահանգի· դարձեալ՝ առ Յովհաննէս Սիւնեաց արքեպիսկոպոս, ի պատասխանի անոր մէկ մխիթարական թղթին զոր գրած էր իր հօրեղբօրը՝ Վահրամայ՝ մարտիրոսական վկայութեամբ նահատակուելուն պատճառաւ։

Մտադրութեան արժանի են դարձեալ և այն երկու թուղթերը զորս ուղղած է առ Աբրեհիմ ամիրայ հագարացի, որուն մայրը հայկազն էր՝ սիսակեան ցեղէն· և այն պատճառաւ ընտանի ըլլալով իրեն քրիստոնէութեան օրէնքը, աւելի կերպով մը կը փափաքէր տեղեկութիւն առնուլ։ Ուստի քրիստոնէական կրօնից վրայ ունեցած գլխաւոր տարակոյսները տասնուերկու գլուխ բաժնելով՝ թուղթ մը գրեց առ Մագիստրոս, անոնց լուծումը իրմէ խնդրելով։ Մագիստրոս ալ սքանչելի վարդապետութեամբ անոր ամէն տարակոյսներուն մեկնութիւնը տալով՝ այնպէս անգիմադրելի ցցուց քարոզութեան ստուգութիւնը, որ Հագարացին զարմանալով՝ մասնաւոր թղթով մը խնդրեց իրմէ՝ որ դարձեալ գրէ նոյն նիւթոց վրայ, և քանի մը խօսք ալ իմաստութեան վրայ աւելցնէ· զոր և մտադիւրութեամբ կատարեց իշխանը։ Այս երկու թղթոց մէջ, ինչպէս նաև յառաջագոյն յիշուածներուն, խորունկ փիլիսոփայութիւն, իմաստուն աստուածաբանութիւն և կենդանի հաւատք կ'երեւնայ, որոնք մեծ պարծանք են այնպիսի քաղաքական զբաղմանց մէջ իր կեանքը և սիրտը մաշեցնող իշխանի մը, ինչպէս էր Մագիստրոս։ Շարադրութեան կողմանէ ալ՝ ասոնց մէջ ընդհանրապէս իրեն յատուկ և հաճոյական ոճոյ մթին խրթնութիւնը չի գործածեր։ Այս երկու թղթերը խորագիր կը կրեն, առաջինն՝ «Առ Աբրեհիմ ամիրայն վասն

հաւատոց, Գրիգորի որդւոյ Վասակայ տացեալ»։ Իսկ երկրորդը· «Պատասխանի թղթոյն Աբրեհիմի ամիրայի, զոր խնդրեաց· մի՛ վասն իմաստասիրութեան, և մի՛ վասն հաւատոց»։

Իմաստասիրական թղթոց մէջ գլխաւորներէն են, այն թուղթը՝ զոր գրած է առ Եփրեմ Բջնոյ եպիսկոպոս, իրեն ընծայ ղրկած նուանցը համար, և առ Մամիկոնեանն՝ կարմրախայտ ձկանց ընծայիցն առթիւ· որոնց մէջ բառերու խրթնութիւնն և խաղերը՝ մինչև իմաստակութեան կը տանին հեղինակը։ Քանի մը թղթեր ալ ունի՝ այնպէս խառն և խրթին բառերով և իմաստիւք լցուած, որոնց մեկնութիւնը թերեւս ոչ ոք պիտի կարենայ գտնել։ Այսպէս են այն թղթերը՝ զորս գրած է առ Վահրամ Վեստ որդին իւր· և միւսը՝ զոր իր աշակերտաց մէջ ծուլացունից ուղղած է, և զոր հանճարեղք անգամ և հմտագոյնք չէին կրնար ըստ արժանւոյն հասկնալ։ Անշուշտ կամաւ այնպիսի խրթին ոճ մը բանեցուցեր է, որպէս զի ծոյլերը մէկդի ձգեն իրենց թուլութիւնը, և ջանան հասկնալ իրենց ուղղուած թուղթը, յորում իրենց վարդապետին հանճարը կը փայլէր։ Ասոնց կարգէն կրնայ համարուիլ նաև այն թուղթը որուն սկզբնաւորութիւնն է· «Համադատական գեղանամ», և որոյ սկզբնատառքն իր անունը կը կապեն։

Ընտանեկան թղթոց մէջ յիշատակենք առ Մամիկոնեան գրած քանի մը նամակներ· «Սակս ծառոյն զոր խնդրէր ի պէտս սեղանոյ»։ — Առ նոյն «Խոստացար երբեմն մեզ նպաստ առաքել լուղակս, և այն յատուկ»։ — «Առ նոյն Մամիկոնեան՝ զոր կոչեալ ի տօնի նաւակատեաց եկեղեցւոյն»։ Առ վարդապետն Անանիա այլ և այլ նամակներ· առ Դանիէլ՝ յաղագս քնոյ· առ իշխան ոմն՝ «որ խոստացեալ էր կաթայ, և հեզգայր առաքել»։ — «Առ կարծեցեալ ոմն գիտնական, զոր և յոյժ տգէտ գտեալ· և զգիրս արտաքին և զաստուածաշունչ արտաքի մեկնէր»։ — «Առ ոմն իմաստակէր՝ ոչ ուղղապէս» և այլն։

⁂

Մագիստրոսի քերականական գրուածոց մէջ՝ գլխաւոր և միակ երկասիրութիւն կրնանք համարիլ Հին քերականին մեկնութիւնը, զոր համանուն գրուածքին մէջ շատ անգամ կը յիշատակէ Երզնկացին, և նախադրութեան մէջ այսպէս կ'ըսէ. «Բայց ցուցից քեզ և զայս. զի մի յաւելորդս և յանպէտս թուիցի աշխատութիւնս մեր: Վասն զի մեծապատիւ իշխանն Մագիստրոս՝ որդի Վասակայ մարտիրոսի, և հայր կաթուղիկոսին տեառն Գրիգորիսի՝ տէր Վահրամ կոչեցելոյ, աշխատեալ էր ի հաւաքումն մեկնութեան սորա, և մինչ առ մերս ժամանակ այնու վարժէին վարդապետք մեր զաշակերտեալսն»: Յետոյ անոր պակասութիւնը, և թէ ինչ պատճառաւ այս գործը շարագրելուն ձեռք զարկաւ՝ կը յիշատակէ. զոր իր վրայ խօսելու առեննիս պիտի նշանակենք:

Մագիստրոսի այս երկասիրութեան խորագիրն է ըստ ձեռագրաց որ առ մեզ. «Գրիգորի Մագիստրոսի և Կինտոնի (?) որդւոյ Վասակայ մարտիրոսի, մեկնութիւն քերականի՝ զոր եղեալ է զայլոցն, և այլ ևս յաւելեալ յիւրոց իմաստիցն»: Յարում նախ քերականութեան արուեստին կամ ուսման վրայ խօսելով, մասնաւոր գլխով մը կը ճառէ վասն գրագիտի, և կ'ըսէ. «Գտեալ զգիր նախ՝ փիւնիկեցիք. երկրորդ՝ Եգիպտացիք. երրորդ՝ Եբրայեցիք. չորրորդ՝ Արքիացիք. հինգերորդ՝ Քաղդէացիք. վեցերորդ՝ Հելլենացիք. եօթներորդ՝ Հայք, և ապա այլք»: Կ'աւանդէ թէ ով եղաւ առ հինսն գտիչ արուեստիս, և կը համարի նաև ըստ հնոց՝ զՀոմերոս, զոր որդի կոչէ Մելապոդոսի՝ այսինքն Սեաւ ոտան, և մօր Եւմիտիդեայ՝ յազգէ Կոմնենեայ, և կատարելագործող արուեստին գծանօթն Դիոնեսիոս Թրակացի: Գրագիտութեան այլևայլ բաժանմանց վրայ ճառելէն ետքը՝ առանձին գլուխ մը կը կարգէ Յաղագս Վերծանութեան. յետոյ կարգաւ Յաղագս, Ոլորակի, Յաղագս Կէտի, Վասն Հագներգութեան, Յաղագս Տառի, Վասն Վանգի, Յաղագս երկար Վանգի, Յաղագս սուղ Վանգի, Յաղագս հասարակ Շաղաշարաց, Յաղագս Բառի, Յաղագս Բանի, Յաղագս Անուան, Յաղագս Բայի, Յաղագս Ընդունելութեան, Յաղագս Ընդունելութեան, Յաղագս Յօդի, Յաղագս Դերանունութեան, Յաղագս Նախադրութեան, Յաղագս Մակբայի, Յաղագս Շաղկապի, Յաղագս Առոգանութեան, Յաղագս Ոտից, որ վերջին գլուխ է Մագիստրոսի այս գրուածքին, ուր շատ հմտութիւն և տեղեկութիւնք ամփոփուած են, բայց նաև շատ այլայլութիւնք ի գաղափարողաց:

⁂

Քերթողական գրուածներ. — Զանազան նիւթոց վրայ այլ և այլ բանաստեղծական գրուածներ շարագրած է Մագիստրոս. և անոնց մէջ գլխաւոր կը համարուին.

Թուղթերը,[1] բաց անոնցմէ՝ զոր վերը յիշատակեցինք, և որոնց մէջ առաջին կը համարուի առ անանուն ոմն գըրածը՝ որուն սկզբնաւորութիւնն է.

> «Լուաք թէ եկըն պաղըն Պաղակ
> Վարդանասարըն պխակ»,

անոր ինչ արուեստով յօրինուած ըլլալուն վրայ այսպիսի բացատրութիւն մը կ'աւելցնէ հեղինակը. «Աղէ ձև ընթերցիր զարհեստ ոտանաւորացդ. գիւցազնական է տաղդ, քաջոլորեալ և տաղ պսպղուն, օղուն և գեղուն, եռակի վանկօք շարակայեալ, լի, հոյծ, կատարուն, չարժուն. ոչ վիժեալ գծի, ոչ նուազեալ յօդի, ոչ փոփոխեալ տառիւ. կարեկցաբար առ իս ձգելով զձայնակիցն ստուգաբանութեամբ. և շարակայացուցեալ չորթելով կամ ճողոպրելով»։ Բացատրութիւն մը՝ որ նիւթէն աւելի դժուարին է յիմացումն։

---

[1] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, 1910ին յԱղեքսանդրապոլ, հինգ ձեռագրաց բաղդատութեամբ՝ հրատարակած է Կ. Կոստանեանց: Նախ ունի 48 էջնոց (Ա–ԽԸ) հմտալից Յառաջաբան մը. յետոյ՝ ուղղագրեալ՝ արձակ և ոտանաւոր Թղթերը (էջ 1–244), և հուսկ՝ քննադատական աշխատութեան մը պահանջմանց համեմատ՝ (էջ 246–320 գիտական Ծանօթութիւններ: Ծնթ. Դ. տպ.

Երկրորդ ոտանաւոր գրուածն է Ներբող ի սուրբ խաչն աստուածընկալ, որ կը սկսի. «Օրհնեալ ես փայտ կենաց, բարեբանեալ, երկրպագեալ» որուն մէջ բանաստեղծական հանճար, ու այլ և այլ ընտիր բացատրութիւններ կան։

Երրորդը, Պետրոս Գետադարձ հայրապետին՝ խաչանշան գաւազանի մը հետ ընծայած ոտանաւոր մը, այս սկըզբնաւորութեամբ։

«Ընծայեմ քեզ տարեկան
Նորոյ հասեալ ձեզ բարութեան»։

Այս քերթուածէն ետքը՝ արձակ շարագրութեամբ տեղեկութիւն մը կը յաւելու վիպասանական քերթութեան կամ հագներգութեան վրայ։

Ասոնցմէ շատ աւելի ընդարձակ ու մտադրութեան արժանի գրուած մըն է՝ հազարտողեան ոտանաւորը, աստուածաշունչ հին և Նոր գրոց պատմութիւնը բանաստեղծական չափով, զոր շարագրած է ըստ խնդրոյ Մանուչէի հագարացւոյ. որուն հետ ծանօթացեր էր ի Բիւզանդիոն, որ և հռետորական արուեստի հմուտ անձ մ'էր ու շատ մը լեզուաց՝ ինչպէս նաև հայկականին ալ տեղեակ. և իրեն քաջարուեստ տաղաչափութեան համար՝ մեծ պատիւ գտած թէ Եգիպտոսի ամիրայէն, թէ Պաղտատու ամիրապետէն և թէ Յունաց կայսրէն։ Քրիստոնէական կրօնից ալ տեղեակ, և անոր վարդապետութեան վրայ սքանչացած էր. միայն արհամարհելի կ'երեւնար իրեն թէ Հին և թէ Նոր կտակարանին պարզ և անզարդ ոճը, և կը գովէր իրենց Ղուրանին կամ օրինաց գրքին ընտիր լեզուն և գեղեցիկ տաղաչափութիւնը։ Մագիստրոս ուզելով հասկցնել անոր թէ տաղաչափութիւնը մարդկային գիւտ է, աստուածային ըսքանչելիքն անոր կարօտ չէ, խոստացաւ որ Հին և Նոր կտակարանը երեք օրուան մէջ ոտանաւորի վրայ առնու, միայն թէ Հագարացին ալ խոստանայ որ եթէ յաջողի իր այս գործառնութեան մէջ, թողու իր հաւատքը և քրիստոնէական կրօնից աշակերտի։ Խօսք առաւ իրմէ, և աստուածային շնորհաց վրայ վստահացած՝ երեք օրուան մէջ հազար տուն ոտանաւորի մէջ բովանդակեց Հին և Նոր կտակարանի պատմութիւնը և ընծայեց Մանուչէի։ Ան ալ զարմացաւ Մագիստրոսի հանճարոյն վրայ, և տուած խօսքին վրայ կենալով՝ քրիստոնէութիւնն ընդունեցաւ։ Ասիկայ է այն քերթութիւնը՝ որուն սկզբնաւորութիւնն է, «Մեծ են գործք Աստուծոյ»։

⁂

Այս ինքնագիր երկասիրութիւններէն զատ՝ շատ թարգմանութիւններ ալ ըրած է Մագիստրոս, և որոնք իրեն գլխաւոր պարապմունքն եղած են. թէպէտ այս աշխատասիրութեանց մեծ մասը կորսուած են. ինքը կը վկայէ թէ «Ոչ եմք դադարեալ ի թարգմանութենէ, և զբազում մատեանս՝ զորս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս, զերկուս մատեանսն Պղատոնի՝ զՏիմէոսի Տրամաբանութիւնն և զՓեդոնի, յորս բոլոր մասն նախագիտականին այն պարփակեալ կայ, և զայլս բազումս յիմաստասիրացն։ Իւրաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է քան զտարեւոր տօնականս...։ Բայց և զերկրաչափականն զԵւկլիդեսին սկսայ թարգմանել։ Եւ եթէ տակաւին կամեսցի Տէր յերկարանալ մեզ ի կենցաղումս, բազում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր Յունաց և յԱսորւոց՝ թարգմանել ոչ դանդաղեցայց։ Եւ կարօտիմք քեզ մերձ ելոյ մեզ օգնականութեան այսպխում իրողութեանց. ապա թէ ոչ՝ աղօթիւք օգնեցես մեզ... Բայց և գտեալ մեր իսկ է ի հայ լեզու գրեալ թարգմանչացն զգիր Ոլոմպիոդորոսի՝ զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ զքանչելի և հրաշալի բանաստեղծութիւն, մակաւասար բոլոր իմաստասիրական բանից. գտեալ եմ և զԿալիմաքոսի և զԱնդրոնիկեայն ի հայ լեզու»։

Այս յիշատակուած գրքերէն՝ միայն Պղատոնի գիրքը՝ զոր Մագիստրոս Տիմէի և Փեդոնի տրամախօսութիւն կը կոչէ, հասած է մեր ձեռքը. յորում նախ բնութեան և բնական իրաց վրայ կը խօսի, հին հեթանոս իմաստասիրաց կարծիքները մէջ բերելով. երկրորդ՝ օրինաց վրայ ընդհանրապէս, և երրորդ՝ յաղագս օրէնսդրութեանց. տասուերկու գիրք, այլ և այլ անձանց մէջ տրամախօսութեան ձեւով։

Ոմանք կարծեցին թէ այս գրքին թարգմանութեան ժամանակը՝ երիցագոյն է քան զՄագիստրոս, և թերեւս մինչեւ Ե դարու երկասիրութիւն, կրտսեր՝ կամ երկրորդ թարգմանչաց ձեռքովը եղած. և թէ հաւանականաբար մի և նոյն անձն է անշուշտ՝ որ Փիլոնի և Պղատոնի իմաստասիրական գրքերը թարգմանած ըլլայ։ Եւկլիդեսի երկրաչափութենէն քիչ բան մեր ձեռքը հասած է. իսկ մէկալ գրքերէն՝ զորս կը յիշատակէ Մագիստրոս, այսինքն Ոլոմպիոդորոս, Կալլիմաքոս և Անդրոնիկոս իմաստասիրաց գրքերը՝ կորսուած, կամ դեռ մեր ձեռքը հասած չեն։

Մագիստրոսի գրուածքներէն քանի մը թղթեր և ոտանաւորներ հրատարակուած են ծաղկաքաղ գրոց կամ օրագրաց մէջ։ Հազարտողեան քերթուածն առ Մանուչէ՝ տպագրուած է ի Վենետիկ, ի 1868։ Եւկլիդեսի հատուածն ի Բազմավէպ Հանդիսարանի (1884, յէջ 30)։ Լանկլուա գաղղիացին ալ մատենախօսական յօդուած մ'ունի Մագիստրոսի և իր երկասիրութեանց վրայ։

Մագիստրոսի ժամանակակից գրագէտ անձանց մէջ գըլխաւորներէն են,

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ կաթողիկոս, որ ստէպ կը թղթակցէր Մագիստրոսի հետ, և մեծ մասն ունեցաւ անոր քաղաքական կենաց ընթացքին մէջ. շատ ալ հռչակաւոր եղաւ թէ ազգին թէ օտարաց։ Իր նախնական ուսմանց հրահանգը Տրապիզոնի վանքին մէջ առաւ Պետրոս. մատենագիրք և աւանդութիւնք կը հաւատարմացնեն թէ ոչ միայն սրբազան գիտութեանց, այլ նաեւ արտաքին իմաստասիրութեանց և չափաբերականին մէջ անուանի եղած ըլլայ։ Բայց մեր ձեռքը հասած երկասիրութիւնք թէպէտ և ընտիր՝ սակայն չեն կրնար առիթ ըլլալ այն փառաւոր գովեստներուն՝ որոնց արժանի եղած է։ Այս գրուածներս են ութ ձայնի վրայ առած մարտիրոսաց և հանգստեան շարականները, և ուրիշ քանի մը շարականներ՝ որ ընդհանուր անուամբ Մանկունք կը կոչուին, և որոնց մէջ վայելուչ շարագրութեան և ոճոյ հետ հաւասար կը փայլին բանաստեղծական հանճար և աշխոյժ[1]. Կ'աւանդուի դարձեալ թէ այլ և այլ գեղեցիկ ճառեր ալ շարագրած ըլլայ Գետադարձ, որոնք մեր ձեռքը հասած չեն։

Հետաքննական է Մոնոմախոս կայսեր իրեն ըրած փառաւոր ընդունելութիւնն ի Բիւզանդիոն, զոր քաղելով ի պատմագրաց կը դնենք. «Ընդ այն ժամանակս (ի ՂԲ թուի) լուեալ Մոնոմախ թագաւորն Յունաց զբարի համբաւս անուան տէր Պետրոսի, և յղեալ սիրով կոչէ զնա գալ առ ինքն։ Եւ սուրբ հայրապետն պատրաստեցաւ ի գնալ. և օրհնեաց ի տեղի իւր կաթուղիկոս Հայոց զամենագովն Խաչիկ զքուերորդին իւր. և ինքն ել և գնաց ի կոչն կայսեր երեք հարիւր ձիաւորօք և հարիւր քսան կարգաւորօք. որք էին եպիսկոպոսք, վարդապետք և անուանի փիլիսոփայք և երկու հարիւր հետեւակ սպասաւորօք։ Եւ ի մտանելն ի կոստանդնուպոլիս շքեղ և զարմանալի փառօք, և քաղաքն ամենայն ելին ընդ առաջ, և տարեալ զայն օր իջուցին ի սուրբն Սոփի։ Եւ ապա ի վաղիւն գնացին ի պաղատն արքունի։ Որոց ընդ առաջ եկեալ թագաւորն երկիր եպագ հայրապետին ի վերայ երեսաց երկրի, և ապա ետուն միմեանց զհամբոյր ողջունին և նստան։ Եւ իբրև ելին խրախութեանցն, տէր Եղիսէ զուկի սելին յորոյ վերայ նստեալ էր կաթողիկոսն ի վեր եկալ և յինքն էառ։ Եւ հարցեալ թագաւորն զպատճառսն, և ասէ տէր Եղիսէ, թէ հայրապետական աթոռ է, և չէ պարտ այլ ումեք նստել։ Ասէ թագաւորն. Իրաւ հրամայես, քան հազար դահեկանի է. պահեա զայդ տեառն քո»։

---

[1] «Նա ասաց զերկու կարգս շարականաց Մարտիրոսացն և զՀանգստեան»- (Յայսմ)։

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ. — Մագիստրոսի ժամանակակից էր սա և Սանահնի վանաց միաբան. Գէտադարձ հայրապետին խնդիրքովը՝ Պօղոս առաքելոյն չորեքտասան թղթոց մեկնութիւնը շարագրեց, հաւաքելով ի բանից Ոսկեբերանի, Եփրեմի և Կիւրղի։ Այս բանս իրենց պատմութեան գրոց մէջ կ'աւանդեն Կիրակոս և Վարդան. Կիրակոս կ'ըսէ թէ «Անանիա վարդապետ, սորա աւեն ի մի հաւաքեալ ի մեկնութիւն գրանսն Եփրեմի, և Յովհաննու Ոսկեբերանի և Կիւրղի և այլոցն, արարեալ համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց։ Արար և խորհրդական և մտաւոր տեսութիւն և համեմատութիւն աւետարանացն օրինակս։ Գրեաց և լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանն՝ որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասի, և զներբողեան շողակաթին»։ Իսկ Վարդան. «Եւ նախ քան զսոսա Անանիա՝ որ զԱռաքելոյն համառօտեաց հրամանաւ կաթուղիկոսին Պետրոսի, Սանահնեցին»։ Բայց որովհետև այս գրուածքին գրչագրաց մէջ՝ որ մեր ձեռքը հասած են, Անանիայի անունը չի յիշատակուիր, ոմանք անոր երկասիրութիւնն ըլլալուն վրայ կը տարակուսին։

Երկրորդ գիրքը՝ զոր ի խնդրոյ Գէտադարձ հայրապետին շարադրեց Սանահնեցին, ու անոր յաջորդ Խաչիկ կաթուղիկոսին նուիրեց, ընդդիմադրութեան գիրք մըն է՝ ընդդէմ Յունաց, այսպիսի մակագրով, «Անանիայի վարդապետի Հայոց՝ բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց. զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի Հայոց վերադիտողի»։ Եւ կը խօսի այն զանազան խնդրոց վրայ՝ որոնք Յունաց և Հայոց մէջ հակաճառութեան նիւթ եղած են. այսինքն անխմիր ընդ միմեանս հաղորդուելուն վրայ, մեծի հինգշաբաթու վրայ, անոնց դէմ՝ որ ապականացու կը համարին զմարմին Քրիստոսի. Ներքինացեալներու դէմ, պատկերաց պաշտաման, Քաղկեդոնի ժողովոյն, Վրաց բաժանման վրայ, չորս աթոռներուն, մեռոնին, բաղարջին, Քրիստոսի ծննդեան տօնին, և երից սրբասացութեանց համար՝ զոր Հայոց եկեղեցին կ'երգէ ի դէմս Որդւոյ։ Կիրակոս պատմիչ միայն այս վերջին նիւթը կը յիշատակէ՝ երբոր կը գրուցէ, թէ՝ «Գրեաց և լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանն՝ որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասի»։ Շարագրութեան ոճը գեղեցիկ է և զարդարուն, և ճարտասանական ազուոր զարդուածները յաճախ. ափսոս որ հակառակութեան նիւթ եղող, և արդէն ազգին մէջ այլ և այլ տարաձայնութեանց և երկպառակութեանց առիթ խնդրոց վրայ խօսելու ատեն՝ պէտք եղած զգուշութիւնը և անկողմնակալութիւնը չի ցուցներ։

Կիրակոս՝ երրորդ երկասիրութիւն մըն ալ կ'ընծայէ Սանահնեցւոյն, խորհրդական և մտաւոր տեսութիւն մը և համեմատութիւն աւետարանչաց՝ որուն գրչագիրը դեռ մեր ձեռքը հասած չէ։ Նոյնպէս ալ Շողակաթի ներբողեան մը, որ թերևս մեր քովը գտնուածն է, և որուն վերնագիրն է. «Երանելւոյ-հօր Անանիայի հոգեվարժ փիլիսոփայի՝ ներբողեան, ասացեալ ի սուրբ կաթուղիկէն՝ որ է ի Նոր քաղաք՝ որ այժմ կոչի Վաղարշապատ»։ Թէպէտ *և այս գրուածքը՝ ուրիշ համանուն վարդապետի մը կ'ընծայուի յոմանց, ինչպէս նաև ուրիշ քանի մը գրուածներ, որոնց միայն խորագիրները կը գտնենք հոս.*

Ա. Անանիայի վարդապետի խրատ հոգեշահ, թէ որպէս կարասցէ զմիտս որոշել յերկրաւորացս:

Բ. Խրատք քահանայից:

Գ. Ի խորհուրդ Յովնանու Մարգարէի:

Դ. Ի խորհուրդ կատարման սուրբ առաքելոյն Պետրոսի:

Ե. Անանիայի Հայոց վարդապետի գրուած ի սուրբ Մկրտիչն Յովհաննէս. «Ի ձեռն առնել զիմաստ հոգւոյն ձեռնտուութեամբ շնորհաց իմաստութեան ըստ չափոյ տկարութեանս իմոյ»:

Իրեն կամ համանուն վարդապետի ուրիշ գրուած մ'ալ կը տեսնենք հետևեալ խորագրով. «Երանելւոյն Անանիայի խօսք և խրատք աւետարանական, որ առնի զմեզ ի կեանս յաւիտենական, և ոչ տայ խոտորել յաջ կամ յահեակ». և սկզբնաւորութիւնն. «Քանզի գրեալ և պատուիրեալ է մի խոտորել»:

ՍԱՐԳԻՍ ՍԵՒԱՆԵՑԻ. — *Մագիստրոսի գլխաւոր թղթակիցներէն ու մտերիմներէն մէկն էր նաև Սարգիս վարդապետ՝ Սևան կղզւոյն առաջնորդը, գիտնական ու եղուագէտ անձ մը, որուն իմաստութեան ու գիտութեան վկայութիւնը կու տայ Մագիստրոս հետևեալ խօսքերով. «Զի՞նչ արդեօք հզօրդ հռետոր և աստուածային տեղեկիս. մի և ատեցեա՞լ ի գիր ի մէնջ կամ թէ արհամարհեալ. զի միանգամ և երկիցս ոչ տաս պատասխանի, որ միշտ կարօտեալ եմ բանի քում և գրի: Քանզի հզօր ես ի պուետիկոսական մատենագրութեան. և սիրելի ինձ՝ եթէ ոչ այնպիսի ինչ լսել կամ առնել»: Ուրիշ թղթի մը*

մէջ ալ իր թարգմանութեանց և գրաւորական վաստակոց վրայ խօսելու առեն կ'ըսէ. «Կարօտիմք քեզ՝ մերձ ելոյ մեզ օգնականութեան այսպիսում իրողութեանց»:

Սեւանեցւոյս համար կ'աւանդուի թէ այլ և այլ ճառեր և թարգմանութիւն և մեկնութիւններ երկասիրած ըլլայ. սակայն անոնցմէ բան մը մեզի հասած չէ. միայն Սարգիս վարդապետի մակագրութեամբ ճառ մը կայ Նինջեցելոց վրայ՝ ի յունականէն թարգմանուած ի հայ՝ հանդերձ մասնաւոր քիչատակարանով մը, զոր ոմանք Սեւանեցւոյս կ'ընծայեն:

Ասոնց նման անուանի եղած են նաև ուրիշ քանի մը վարդապետներ, ինչպէս Խնասի վանաց առաջնորդ Ս—մ—էլ Հ—րդ—ղէ—, Գէ—րգ անունով վարդապետ մը, Տէր—Ն Պ—հլ———նէ պատմիչ. որոց գրաւոր երկասիրութիւնք մեր ձեռքն անցած չէ։

* * *

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ

Լաստիվերտցի և իր վարքը: — Պատմական երկասիրութիւնը: — Նիւթն ու բովանդակութիւնը: — Բանասիրական և մատենագրական արժէք: — Իրեն ընծայուած Ընթերցուածոց մեկնութիւն մը: — Պատմութեանը բնագրին տպագրութիւն և գաղղիական թարգմանութիւն:

Այս դարուս մատենագրաց մէջ նշանաւոր կրնայ համարուիլ Արիստակէս Լաստիվերտցի՝ իւր պատմական երկասիրութեամբը: Իր վրայ կենսագրական տեղեկութիւն մը չունինք ամենևին. միայն գրուածքէն և պատմագրելու ոճէն կ'երևնայ թէ եկեղեցական էր, և թէ բաւական ընդարձակ հմտութիւն ունէր աստուածաշունչ գրոց: Այս գիտութիւնը ուզած է ցուցնել նաև պատմագրութեան մէջ, և անով գրուածոց յարգը մասամբ կորսնցուցած. վասն զի թէպէտ յաշխարհի ամենայն ինչ յԱստուծոյ կը սահմանուի, բայց զայդ իսկ ի պատմութեան յայտնապէս ցուցնելու համար՝ մասնաւոր իմաստասիրական տեսութիւններ պէտք են, ու մտածութեանց ընդարձակութիւն և խորութիւն, և բաւական չէ յաճախ մարգարէից խօսքերը կրկնել:

* * *

Լաստիվերտցւոյն պատմութեան նիւթը. — Հայաստանի թշուառ ժամանակաց ականատես, ականջալուր և ըստ

ստուգապատում վիպագիր մ'է Արիստակէս: Անգութ և անողորմ թշնամիք՝ մեր աշխարհին նիւթական և բարոյական խեղճութիւնը իրենց նպաստաւոր գտնելով, զանիկայ յափշտակելու և կամ աւերմամբ ոտնակոխ ընելու համար՝ ամէն չարութեան ձեռք զարնելու պատրաստուեր էին: Ուստի իրաւամբ Լաստիվերտցին իւր պատմութեան նախերգանաց մէջէն կը սկսի ողբալ ազգը, և անոր գլխուն գալիք ապագայ թշուառութեանց աղէտքը կը նկատէ. «փառք մեր, կ'ըսէ, դարձան յապականութիւն. շունչ ի մեզ ոչ մնաց, զօրացաւ մահ և եկուլ. ամենեցուն յարձակեցան ի մեզ ձեռք. ի սիրելեաց քահանայք՝ զորս ոչ սուր սատակեաց, ցրուեցաք զօրէն աստեղաց մոլորական կոչեցելոց»:

Այս տխուր նախերգանքէն ետքը կը սկսի Լաստիվերտցին իւր Պատմութիւնը: Կը յիշատակէ Դաւթի Կիւրապաղատին թագաւորութիւնը, այն աշխարհաշէն, մեծապարգև և աղքատասէր իշխանին, որուն ատենը հանգստութիւն և խաղաղութիւն կը գտնէր Հայոց աշխարհքը: Կը յիշատակէ դարձեալ Սմբատայ ու Գուրգենայ եղբօր՝ Աշոտայ Բագրատունւոյ՝ թագաւորութեան ժամանակը, որ ի պատերազմունս հզօր և յաղթող ըլլալով ի խաղաղութեան պահեց Հայոց աշխարհքը: Բայց մահուընէն ետքը անոր որդիքը Սմբատ Յովհաննէս և Աշոտ հակառակելով իրարու սահմանաց և իշխանութեան վրայ, Աբխազաց Գորգի թագաւորին դիմեցին. Գորգի անոնց մէջ ուզելով խաղաղութիւն ընել՝ ձեռքն ու զէնքը երկնցուց Հայաստանի վրայ. Յունաց կայսրն ալ իրեն դէմ ելաւ, և այն պատճառաւ իրարու հետ պատերազմներ ունեցան, որոնց վնասն ու աւերմունքը Հայաստան կրեց:

Անկէ ետքը Արիստակէս՝ Բիւզանդիոնի այլ և այլ թագաւորաց յաջորդութեան շարքը կը դնէ իւր պատմութեան մէջ, և այն վերաբերութիւնները՝ զորս անոնց հետ ունեցաւ Հայաստան: Այն ատենուան ազգային պատմութեան անցից մէջ նշանաւոր է Անի քաղաքին վաճառումն առ Յոյն, որով

Գագիկ Բ թագաւորը զրկուեցաւ արքունական գահէն, և արտասուելով ազգին աղէտից վրայ՝ թէ կեանքը և թէ բովանդակ թագաւորութիւնը կորսնցուց։ Այս վաճառման գլխաւոր պատճառը՝ մեր քանի մը իշխանաց անմիաբանութիւնն էր, ու երիցու մը արծաթասէր շահախնդրութիւնը։ Այն ցաւալի դէպքը սրտաշարժ գրչով մը և հայրենասէր արցունքով կ'աւանդէ Լաստիվերտցին. կը յիշատակէ Անի թագաւորանիստ քաղաքը իր ամէն շինուածոցն ու կազմութեանց վայելչութեամբ. իսկ երբ «թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրև գերի կալանաւոր նստի ի հեռաւոր տեղիս... հայրապետական աթոռն ամայացեալ՝ ցուցանի տխուր դիմօք, իբրև զկին նորահարսն մնացեալ յայրութեան... յոլով փոխեցաւ մեզ ամենայն»։

Այսպէս Հայաստան անտերունչ վիճակի մը մէջ համարձակութիւն կու տար իր չորս կողմը բնակող և իրեն կորստեան սպասող թշնամիներուն։ Անոնց ձեռքովը Բասենոյ գաւառին ու Սմբատայ լերան ու Արծնի մէջ սոսկալի ու դժնդակ կոտորածներ կ'ըլլան, կը գերուի Կարս քաղաքը. վրայ կը հասնի Ալփասլան՝ արիւնարբու և մահաշունչ սուլթանը, կը խորտակէ՝ կը տապալէ Մանազկերտ քաղաքը. և անլուր կոտորածք և աւարառութիւնք կ'ըլլան Խարձեանի ու Հանձէթի, Դերջանայ ու Եկեղեաց մէջ, որոնց տխուր պատմութիւնները՝ մատենագրին սիրտը առաջ չ'երթար նշանակելու. վասն զի, կ'ըսէ, «հատկիմ արտասուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք և զգօղանի հարկանին ձեռքս»։

Սակայն և այնպէս հայրենեացը խեղճութեան ուրիշ ցաւալի դէպքերն ալ յիշատակելու չի դանդաղիր։ Անի քաղաքը՝ որ նոյն ժամանակաց գլխաւոր շահաստանն էր, իր փառքովն ու մեծութեամբքը՝ յաղթողաց ձեռք անգթութեան և չարութեան խաղալիկ մը կ'ըլլայ. և անոր գլուխը եղած ցաւալի դէպքերը կ'աւանդէ Լաստիվերտցին։ Ասիկայ է իր պատմագրութեան գլխաւոր մասը, զոր գեղեցիկ և

սրտաշարժ ոճով և բանաստեղծական հանճարով կը ստորագրէ. և անով կը լմցնէ իր երկասիրութիւնը։

Ոմանք Լաստիվերտցւոյն գրուածքը՝ խիստ ռամկական ոճով շարագրուած կը գտնեն։ Տարակոյս չկայ որ այս մասին մէջ չափաւորութիւն պահած չէ հեղինակը. որով թերևս ընթերցողաց սիրտը շարժելու տեղ՝ մերթ տաղտկութեան պատճառ ըլլայ։ Կ'երեւնայ թէ մատենագիրը այն հանճարներէն է՝ որոնք տխրութեան հակամէտ բնաւորութիւն կ'ունենան. բայց և այլոց վրայ ոչ նուազ ազդեցութիւն պիտի ընէին անշուշտ իր ժամանակաց տխուր և եղերական դէպքերը։

Արիստակէս վարդապետի անուամբ, որ մեր հեղինակը կը կարծուի, կան Ընթերցուածոց մեկնութեան ճառք կամ հատուածք բանից, վայելուչ շարադրութեամբ։

Լաստիվերտցւոյն Պատմութիւնը տպագրուած է ի Ս. Ղազար Վենետիկոյ, յամին 1844, Գաղղիարէն թարգմանութիւն մ'ալ ի Բարիզ 1864, Բրիւտոմ հայագիտին ձեռամբ, այսպիսի խորագրով. Histoire d'Arménie, comprenant la fin du royaume d'Ani, et le commencement des invasions des Seldjoukides, par Arisdaguès de Lasdiverd; traduite pour la première fois de l'arménien et accompagnée de notes par M. Ev. Prud'homme. Paris, 1864.

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ

Վկայասէր և իր վարուց համառօտութիւնը։ — Ըրած բարեկարգութիւնը։ – Ճանապարհորդութիւններն յԵրուսաղէմ և յԵգիպտոս։ — Երկասիրութիւնը։ — Մեկնութիւն Գործոց։ — Գէորգ Լամբրոնեցւոյն ընծայուած համանուն գրուած մը։ — Գրիգորի թարգմանութիւնը։ — Կիրակոս աշակերտ և վաստակակից Վկայասէրին։ — Մատթէոս։ — Գէորգ Մեղրիկ։ — Թէոդորոս Ալախոսիկ։ — Սիսիանոս Սեբաստացի։ — Պօղոս Տարօնեցի։

Մետասաներորդ դարուն մատենագրաց մէջ թէ բարեպաշտութեամբ և թէ ուսումնասիրութեամբ անուանի հանդիսացաւ Մագիստրոսի որդին Գրիգոր Վկայասէր, որուն առաջին անունը Վահրամ էր։ Հօրը աչքին և խնամոց տակ կրթուելով՝ թէ իրեն և թէ հայրենեաց և եկեղեցւոյ արժանաւոր եղեւ։ Ուսմանց հրահանգը կատարելէն ետքը՝ աշխարհք մտաւ, և ըստ աշխարհի ազնուութեամբ ալ մեծ համբաւ ստանալով, Բիւզանդիոնի կայսրէն զանազան պատիւներ առաւ, ու դուքս պատուանունով՝ իր հօրը իշխանական աթոռը նստաւ։ Բայց քանի մը տարի անցնելէն ետքը՝ ամէն երկրաւոր մեծութիւններէ հրաժարելով, ինքզինքը միայնակեցական կենաց առանձնութեան տուաւ, մտքին ու հոգւոյն խաղաղութիւնը փնտռելով։ Սակայն իր ամէն ջանքովն ալ ինքզինքը չկրցաւ ծածկել անոնցմէ՝ որոնց արդէն հասեր էր իր ազնուութեան և սրբակրօն վարուց համբաւը. ուստի Խաչիկ կաթողիկոսին

մահուընէն ետքը՝ անոր արժանաւոր յաջորդ մը փնտռելու ատեն՝ ամենուն աչքը ասոր վրայ դարձաւ, ու մեծ աղաչանքով նստուցին զինքը հայրապետական աթոռը, ու Գրիգոր երկրորդ կոչեցին։

Այլ և այլ եկեղեցական բարեկարգութիւններ ընելէն ետքը՝ ինքզինքը գրաւոր զբաղմանց տուաւ Գրիգոր, թէ անձամբ և թէ այլոց ձեռքով թարգմանութիւններ ընելով, և կամ սկզբնագիր երկասիրութիւնք շնորհելով ազգին։ Անոր համար է որ Շնորհալին՝ անոր հոգեւոր և եկեղեցական արդիւնքը նշանակելէն ետքը՝ կը գրուցէ,

> « Երկրորդ Մեսրովպ մեզ երեւեալ
> Զգիրըս բազումըս թարգմանեալ.
> Որ ի Յունաց և յԱսորւոց
> Ճառըս սրբոց վերաբերեալ »,

Իր գրաւոր երկասիրութեանց մէջ գլխաւոր եղան սրբոց վկայաբանութիւնները, զորս թարգմանեց և կարգի դրաւ, և անոնց շատերուն տօները հաստատեց, և այն պատճառաւ Վկայասէր կոչուեցաւ։

Վարդան պատմիչ կ'աւանդէ թէ Վկայասէր հայրապետը գրեթէ տարի մը կաթողիկոսական աթոռը նստելէն ետքը ի Ծամնդաւ, նոյն աթոռոյն տեսչութեան հոգը թողուց Լոռեցի Գէորգ վարդապետին, և ինքը թարգմանութեանց համար անցաւ ի Կոստանդնուպոլիս։ «Գայր հասանէր, — կ'ըսէ ժամանակաւ իրեն մերձաւոր պատմիչ մը, — ի թագաւորեալ քաղաքն Կոստանդինուպոլիս և յանդիման լինէր թագաւորին և պատրիարգին. որոց տեսեալ զայնպիսի աստուածազգեաց հայրապետ... մեծաւ պատուով ընկալան զնա... քանզի քաջ տեղեակ էր յունական լեզուին և դպրութեանն, և յիրս և ի բանս ըստ ամենայնի վարժ և կիրթ, ի հարցուածսն խոհեմ, և ի պատասխանին զգօն և հանդարտ. գեղ երեսացն բարետեսիլ և հեզահայեաց, և բանք աստուածաներկ լեզուին համեստ և քաղցրագոյն. յորս կապեցան սիրով թագաւորն և բովանդակ իմաստնոցն ժողով»: Անկէց այլ և այլ գրքեր հետն առնելով՝ երբոր կ'ուզէր Երուսաղէմ երթալ, հովը հակառակ ըլլալով՝ ստիպուեցաւ ելլել Եգիպտոս. և հին անապատաւորաց բնակութեան տեղերը պտըտելով, իր սրտին փափաքը և ուխտը կատարեց: Այդ հոգևոր այցելութիւնն այնչափ մեծ ազդեցութիւն ըրաւ իր եռանդուն և աստուածասէր սրտին վրայ, որ փափաքելով նորոգել զվանական և զմիանձնական կեանս ի Հայաստան՝ ետևէ եղաւ հոն տեսած կրօնաւորական կարգերն ու լսած ու գտած վարքերը գրել, թարգմանել և ընտանեցնել իր հայրենակցաց. և այս վախճանաւ կաթուղիկոսական պաշտամանէն ետքն ալ գնաց նաև ի Պաղեստին. տեսաւ հին ճգնաւորաց մենութեան տեղերը. հաւաքեց անոնց վարքը, որ թէ և իրմէ առաջ մասամբ ծանօթ էին Հայոց հին նախնեաց թարգմանութեամբ, այլ ինքն եղած է երկրորդ հաւաքող և թարգմանիչ, օժանդակ և ձեռնտու ունենալով զԳրիգոր քեռորդի իւր: Զայս կ'ակնարկէն անշուշտ Ուռհայեցւոյն ըսելը վասն Վկայասէրին թէ «Պայծառացոյց զկարգս կրօնաւորութեան».

Մեծ պատիւ գտաւ Եգիպտոսի սուլթանէն. և հոն բնակող Հայերը՝ երեսուն հազար հոգիէն աւելի՝ իր քովը ժողվեցան. և ինքն Գրիգոր անոնց համար վանք շինեց, և վրանին գլխաւոր իր մերձաւոր ազգականը՝ զԳրիգորիս, զոր Վարդան՝ Վկայասէրին եղբօրորդին կը կոչէ, և Ուռհայեցին՝ քեռորդի: Կիրակոս կ'աւանդէ թէ Եգիպտոսի մէջ վախճանած ըլլայ Վկայասէր. իսկ ուրիշ պատմիչք կը զրուցեն թէ դարձաւ ի Հայաստան, և Տորոս լերան սահմանները կամ Եփրատ գետին քով եղած Կարմիր վանքը բնակելով՝ հոն կնքեց իր բազմարդիւն կեանքը:

⁂

Վկայասէրին երկասիրութիւնները. — Վկայասէրին երկասիրութեանց՝ կամ իր ջանիւք և հրամանաւ եղած գրաւոր արդեանց մէջ գլխաւոր կը համարուի Գործոց Առաքելոց մեկնութիւն մը, որուն ինքնագիր յիշատակարանին մէջ այսպէս կը պատմէ Գրիգոր. «Տուկիծ կայսեր որդւոյն Միքայելի թագաւորութեան ու Կոզմայի պատրիարքութեան ժամանակ՝ Կոստանդնուպոլիս քաղաքը գնացի. և հոն շատ ետևէ իյնալով Յովհաննու Ոսկեբերան հայրապետին շարադրած Գործոց Առաքելոց գերահրաշ մեկնութիւնը ձեռք անցուց: Հոն Կիրակոս անուամբ հմուտ հռետորի մը հանդիպելով, որ թէ հայկական և թէ յունական ուսմամբ անուանի էր, և առատ վարձք տալով իրեն՝ այս ցանկալի գիրքը թարգմանել տուի: Եւ ինչպէս նախամարգարէն Մովսէս օրինաց տախտակները՝ նոյնպէս ուրախութեամբ այս նուիրական գիրքը հետս առած՝ շատ աշխատութեամբ Սիրիոյ և ասիական ծովուն համատարածը անցայ, և Հոգւոյն սրբոյ խնամքովը՝ Սևմայ բաժնին մէջ Տորոսի ստորոտը եղող սրբոց հրեշտակաբնակ կայարանը հասայ, և գտայ հոն՝ Կիրակոս հոգեշնորհ գիտնականը՝ որ իմ ըստ հոգւոյ որդիս է, և մեր փոխանորդին Գէորգեայ աշակերտը: Անիկայ իրեն հմտութեամբը՝ առաջին թարգմանչին ունեցած անհարազատ ոճերն ու խրթութիւնները՝ մեր ազգին դիւրալուր և յարմարական ոճի մը վերածեց շատ աշխատութեամբ»:

Այս յիշատակարանը կը գտնուի այն Գործոց մեկնութեան մէջ՝ որ ընդհանուր անուամբ Խմբագիր կը կոչուի, յՈսկեբերանէ և յԵփրեմէ քաղուած ըլլալուն համար. և այս անուամբ ալ տպագրուած է ի Վենետիկ յամի 1839:

⁂

Սակայն ոմանք կը կարծեն թէ այս խմբագիր մեկնութիւնը կրտսեր է ժամանակաւ քան զՎկայասէրն, որովհետեւ Շնորհալւոյն ու Լամբրոնացւոյն խօսքերէն ալ զանազան հատուածներ մէջ բերուած կը տեսնուին, և յընծայականին կը յիշատակուի Տէր Յովհաննէս արքայեղբայրն՝ Հեթմոյ Ա., և թէ անոր հրամանաւը ձեռք զարնուած ըլլայ այս երկասիրութեան։ Ուստի հաւանական կ'երեւնայ թէ ասոր ընդարձակ մեկնութիւնն էր զոր թարգմանել տուաւ Վկայասէր, և վրան ժամանակ անցնելէն ետքը՝ ուրիշ մը նոյնը համառօտեց՝ սրբոյն Եփրեմի և ուրիշ վարդապետաց խօսքերէն ալ այլ և այլ հատուածներ աւելցնելով։

Այս կարծիքը կ'արդարացնեն նորագիւտ յիշատակարանի մը խօսքերը՝ որ մեր յիշած երկասիրութիւնը Գէորգայ Լամբրունեցւոյ կու տայ, որուն վրայ ետքն ալ առիթ պիտի ունենանք խօսելու. «Արդ ի թուականին արեթական տումարին՝ կ'ըսէ, յեւթն հարիւր և ի յիսունն՝ եղեւ վախճան երջանիկ և հռչակաւոր մեծ րաբունապետին և հռետոր գիտնականին Գէորգայ Լամբրունեցւոյ, յունվարի ԺԱ. յաւուր չորեքշաբաթի...

» Եւ արդ սա ծնեալ ի նահանգին Կիլիկեցւոց, ի գաւառի մայրաքաղաքին Տարսոնի, յանառիկ զղեկին Լամբրուն կոչեցելոյ, որ ի յունական բարբառոյն ի հայ լեզու՝ կրակարան հրոյ. և այս յաւէտ յիրաւի, քանզի զհուր աստուածային սիրոյն յինքեան ջերմապէս բորբոքեալ. որով և սնեալ և վարժեալ ի հռչակաւոր սուրբ ուխտն Սկեւռայ կոչեցեալ, առ քեռոյն իւրում տեառն Գրիգորի գիտապետի նմին ուխտի. որոյ և վարժապետ կարգեալ զի կրթեսցէ զնա գրովք սրբովք ի մանկական հասակին. յորում և քան զյոգունս առաւելեալ գտանէր. և յարբուն հասանէր հասակի, ընթանայր նա և յելս արեւու. որ և դարձեալ լինէր անուի բազում բարգաւաճեալ փառօք. և եկեալ դադարէր ի տեղի իւր. և ընաւ ոչ այլ ինչ փափաքէր բայց վերծանութեան աստուածային տառից...

» Անէր և զանձս յոլովս տօնից տէրունականաց և սրբոց Աստուծոյ. գրէր և կանոնս կարգաւորս և բանս խրատականս վասն խոստովանութեան առ ի յօգուտ տգիտաց քահանայից։ Անէր համարս գլխոց և ցանկս, և նախադրութիւնս աստուածաշնչից տառից։ Գրէր և ճառս ներբողականս ի պատիւ սրբոց։ Անէր և համառօտ մեկնութիւն Գործոց առաքելոցն ի խնդրոյ արքայեղբօրն տեառն Յովհաննու։ Գրէր և մարգարէին Եսայեայ լայն և ընդարձակ մեկնութիւն հրամանաւ արքային Հայոց Հեթմոյ. բազում բանս պիտանիս հաւաքէր ի գանձուց աստուածայնոց առ ի վարժումն մանկանց նորագունից»։

⁂

Վկայասիրին կ'ընծայուին յիշատակարանաց առոյգ վկայութեամբ՝ Պրոկղի՝ սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին վրայ շարագրած ներբողին թարգմանութիւնը, Ոտնլուայի կարգը, սրբոյն Եփրեմի՝ Յովհաննու Մկրտչին վկայութեան և Հերովդիադայ կաքաւմանը վրայ գրած ճառը, ինչպէս իրենց խորագիրներէն և յիշատակարաններէն կը հասկցուի։ Իրեն աշխատասիրութեամբ եղած են դարձեալ սրբոց այլ և այլ վկայաբանութիւններ, շատը թարգմանութեամբ ի յունէ և կամ յասորւոյն. մեր ձեռքն հասած կամ մեզի ծանօթ վկայաբանութեանց մէջ կը գտնենք 15 կամ անկէ աւելի յիշատակարանք Գրիգորի Վկայասիրի, և կ'իմանանք անոնցմէ թէ զանազան վանքերու և քաղաքաց մէջ երկասիրուած են ի նմանէ։ Բայց իր աշակերտ և աշխատակիցին Կիրակոսի վկայութեամբ շատ աւելի եղած պիտի ըլլայ անոնց թիւը, և որ ցարդ մեզի անծանօթ մնացած են։ Այս վկայաբանութիւններէն զատ թարգմաներ և հա-

ւաքեր է Վկայասէր նաեւ տերունական կամ սրբոց տօնից պատշաճ ներբողներ ու ճառեր. թէպէտ և ոմանք այս վերջինները փոքր Վկայասիրին կ'ընծայեն:

Վկայասիրին երկասիրութիւնն է նաեւ սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի վարուց պատմութիւնը, ինչպէս յիշատակարանին մէջ կը պատմէ ինքը Վկայասէր թէ Քրիստոսի 1104 թուականին (ՇԾԱ) Ալեքս Կոմնենոս կայսեր իշխանութեան ժամանակ՝ այլ և այլ հալածանքներէ շատ նեղուելով՝ Սեաւ լեռը քաշուեր է, և հոն սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի վարքը թարգմաներ. «ի ձեռն առն մի՝ որում անուն էր Թէոփիստէ՝ ազգաւ յոյն. և սա ետու վերստին արծարծել զսա ի տարարան և ի յօտարաձայն բայից և բառից առաջին թարգմանութեանն՝ ըստ քերթողական իմաստից, միաշար տողելով ի ձեռն Մատթէոսի քահանայի, որ սնեալ և վարժեալ էր ընդ մերով ձեռամբ»:

⁂

Վկայասիրին վրայ խօսելու ատեննիս՝ տեսանք թէ ի թարգմանութեան և թէ ի գիր մեծապէս ձեռնտու եղած է իրեն ԿԻՐԱԿՈՍ անունով վարդապետ մը, որ՝ ինչպէս վերը յիշատակեցինք, Վկայասիրին փոխանորդ Գէորգ վարդապետին աշակերտն էր, և հայերէն լեզուի հմուտ ու տեղեակ. անոր համար Վկայասէրն ալ ուրիշներուն թարգմանած երկասիրութիւնքը՝ ասոր դարձեալ աչքէ անցնել կու տար: Նոյն աշխատասիրութիւնն ըրաւ Կիրակոս նաեւ Ոսկեբերանի՝ Յովհաննու աւետարանչին մեկնութեան վրայ: Վասն զի սա ինքն Կիրակոս վարդապետ՝ Ոսկեբերան հայրապետին այս սքանչելի գրուածը տեսնելով՝ Վկայասիրէն խնդրեց որ թարգմանել տայ ի հայ: Վկայասէրն ալ հարազատ յունական սկզբնագիրը քովը չունենալով՝ ասորի լեզուով եղած թարգմանութիւնը գտաւ, և նոյն լեզուին տեղեակ Անդրէաս անունով քահանայի մը որ հայկական լեզուի ալ բաւական հմտութիւն ունէր՝ յանձնեց որ նոյն գիրքը թարգմանէ: Բայց Կիրակոս տեսնելով թէ յասորի բարբառոյ մեր լեզուին դարձնելը դժուարին, ու «շաղփաղփ և այլատարազ» կ'ըլլայ, ինչպէս ինքը կ'ըսէ յառաջաբանին մէջ, Վկայասիրին աղաչեց որ նորէն թարգմանել տայ զայն ի յունէ: Անիկայ ալ Կիրակոսի թախանձանաց իրաւացի ըլլալը տեսնելով՝ ընդհատել տուաւ Անդրէի ձեռքով սկսուած թարգմանութիւնը և նոյն Կիրակոսը ղրկեց ի Միջագետս Թէոփիստէ յոյն հռետորին, որ նոյնպէս տեղեակ էր հայ լեզուի, և առատ վարձք շնորհելով իրեն՝ թարգմանել կու տար նոյն գիրքը: Բայց որովհետեւ նոյն միջոցներուն պատահեցաւ Վկայասիրին երջանիկ փոխումը, Կիրակոս այս օգտակար աշխատասիրութիւնը խափանել չտուաւ. այլ նոյնպէս շատ ծախքով շարունակել տուաւ և աւարտել նոյն ճառերը, որոնց ամբողջ թիւը յիսուն և հինգ է. որովհետեւ անոնց մէջ երեսուն և երեք ճառը շատ աշխատութեամբ գտած էր՝ թարգմանեալ ի նախնեաց, ուստի մնացածները նորէն թարգմանել տուաւ, և անոնց մէջ առաջին տասներեք ճառերը թարգմանուած են յասորի լեզուէ, իսկ մնացած քանը՝ ի յունէ: Յիշատակարանին մէջ կը գրուցէ Կիրակոս թէ «բովանդակ գիրքն էր լեալ թարգմանած ի հայս. և ի ծուլութենէ և յանփոյթ առնելոյ այլքն կորուսեալ եղծեալ էին յօրինակս հինս ուր և կայր. և այս զոր գտաք՝ յախմար և ի տգէտ խուարած գրագրերոյ այլայլած և թիւրած էր բանքն և տառքն, և աւելի և պակաս՝ անօգուտ ի կարդալոյ և յիմանալոյ»:

Կիրակոսի նման վաստակակից և օգնական եղաւ Վըկայասիրին նաեւ ՄԱՏԹԷՈՍ, որուն գլխաւոր երկասիրութիւնը եղաւ Յովհաննու Ոսկեբերանին վարուց թարգմանութիւնը, ինչպէս յիշեցինք:

Նոյն ժամանակները ծաղկած է նաեւ ԳԷՈՐԳ վարդապետ, որ քաղցրաւոյց վարդապետութիւն ունենալուն համար, ինչպէս կ'ըսէ Վարդան, Մեղրիկ կոչուեցաւ[1]: Վասպուրական գաւառին Անալիւր կոչուած գիւղը ծնած էր Գէորգ, և երբ կրօնաւորելով՝ Դրազարկի ուխտը նորոգեց: Յիսուն տարի կրօնաւորական կեանք վարելէն ետքը՝ եօթանասնամեայ վախճանեցաւ բարի համբաւով և սրբութեամբ, «և թաղեցաւ ի գաւառն Անաւարզոյ, ի մեծ յանապատն որ Դրազարկ կոչի», կ'ըսէ Մ. Ուռհայեցի: Ուրիշ մ'ալ կ'աւանդէ թէ ոչ միայն ի Դրազարկ, այլ և «ի խորին անապատն որ յաշխարհին Կիլիկեցւոց ի Սիս զոր նորոգեաց Թորոս իշխանն որդին Կոստանդեայ», եկեղեցական բարեկարգութիւնք և նորոգութիւններ մուծած ըլլայ: Մեծ կարեւոր գործ մ'ալ ճաշոց գրոց կարգաւորութիւնն է, Վկայասիրին հաճութեամբ և հրամանաւ:

Անուանի եղաւ դարձեալ և ԹԷՈԴՈՐՈՍ վարդապետ՝ Ջահան գաւառին Հոնի քաղաքին եկեղեցւոյն փակակալը, որ ալէլուքը՝ քաղցրաձայն եղանակաւ նուագելուն համար Ալախօսիկ կոչուեցաւ. և երբ մինչեւ կաթողիկոսութեան աթոռն ալ գրուեց: Վասն զի անշուշտ իրեն կը վերաբերին Ուռհայեցւոյն այս խօսքերը. «Նստուցանեն յաթոռ կաթողիկոսութեան Հայոց զտէր Թէոդորոս, զդրան եպիսկոպոսն տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի՝ զմեծ երաժիշտն ձայնաւորաց՝ որ մականուն ասի Ալախօսիկ»: Դարձեալ. «Յայսմ ամի (ՇԽԴ) մեռաւ մեծ երաժիշտն և սիւնն սրբոյ եկեղեցւոյ տէր Թորոս կաթողիկոսն Հայոց, և թաղեցաւ ի Հոնին՝ մօտ ի տէր Սարգիս»: Կ'աւանդեն ոմանք թէ չորս աւետարանչաց մեկնութիւն մը շարագրած ըլլայ Ալախօսիկ:

Ժամանակակից է ասոնց նաեւ՝ ՍԻՍԻԱՆՈՍ կամ ՍԻՍԻՆՈՍ վարդապետ Սեբաստացի (ի գրչագիրս ուրեք Ստեփանոս կոչուած), որ իր հայրենեացը՝ իրենց վկայական մահուամբը և սքանչելեօք պարծանք եղող Քառասուն մանկանց վրայ ընտիր և գեղեցիկ ներբողեան մը շարագրած է: Յոմանց ՍԻՍԻՈՍ կոչուած է և ազգաւը «Ասորւոց վարդապետ և կրօնաւոր»: Ձեռագրաց խորագիրն է. «Երանելւոյն Սիսիանոսի վարդապետի խօսք ասացեալ յամենաժողով տօնի սրբոց Քառասնիցն և ի խորհուրդ սրբոց քառասնորդացն աղուհացից»:

Աւելորդ չենք համարիր յիշել նաեւ զՊՕՂՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ, որ Տարօնոյ Ղազարու վանքը կը նստէր, և վերը յիշատակուած Թէոփիստէ յոյն կրօնաւորին դէմ գրուածք մը հրատարակեց լի հոգւով հակառակութեան: Եւ այն հագին իրեն պարծանք համարելով, Հոգւոյն սրբոյ տուրք կը կարծէր ըսելով համարձակութեամբ, թէ «Որպէս տուեալ է ի Հոգւոյն ումեմն այնպիսի շնորհք, և ինձ տուեալ է այսպիսի բանակռուութիւն»: Եւ թէպէտ Մխիթար կաթողիկոսի ատեն գումարուած ժողովքի մը մէջ ազգը միաբանութեամբ մերժեց Տարօնեցւոյն այս գրուածքը, բայց շատ ժամանակ ետքն ալ իրեն համախոհ տպագրիչ մը գտաւ ի Կոստանդնուպոլիս յամի 1752: Անկէ զատ և լաւագոյն գործ մ'ալ ունի Պօղոս, Վերլուծութիւն կարգաց եկեղեցւոյ, այսինքն պատճառք Տօնից, ժամակարգութեանց, ընթերցուածոց, Ծիսից, և այլն. ուսկից կ'առնուն նոյն նիւթոց վրայ գրող յետագայ մեկնիչք: Իրեն են նաեւ հետեւեալ խորագրով ճառերը. «Յաղագս քառասնորդաց պահոց, Պաւղոսի վարդապետի Ղազարու վանից վանականի բացայայտեալ: — «Նորին Պաւղոսի յաղագս Առաջաւորաց պահոց»:

---

[1] «Մեղրիկն ասացեալ էր՝ քաղցրախօս և ճարտարաբան» կ'աւանդէ յիշատակագիր մը:

ԴԱՐ ԺԲ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

Սարկաւագայ տոհմն ու դաստիարակութիւնը։ — Ուսումն ի Սանահին և ի Հաղբատ։ — Տոմարի նորոգութիւնը կամ Սարկաւագադիր շրջանն։ — Գրաւոր երկասիրութիւնները։ — Պատմութիւնը։ — Բանի մը հատուածք որ մեր ձեռքը հասած են։ — Յաղագս Բանականութեան ճառ։ — Ներբողեան։ — Աղօթագիրք։ — Ի Սարեակն։ — Սուրբ գրոց վրայ աշխատութիւնը։ — Ճառեր։ — Մանր գրուածներ։ — Իր աշակերտները։ — Երեմիա Անձրեւիկ։ — Կունդ Սարգիս, և այլք։

Երկոտասաներորդ դարը՝ որ մեր հայկական դպրութեանց համար իրաւամբք գեղեցիկ Արծաթի դար կոչուած է, կ'ընծայէ մեզի նախ զՅովհաննէս Սարկաւագ վարդապետ, հայրենեօք Արցախու փառաւոր գաւառէն, իր ուսմնական և բարոյական կրթութեանը խնամատար ծնողաց զաւակ, ծնած իբրեւ ի կէս ԺԱ. դարու և վախճանած յամի 1129։

Սարկաւագայ հայրը՝ որ քահանայական դասուն կը վերաբերէր, և որդւոյն ապագայ յառաջադիմութեան վրայ մեծ փոյթ և յոյս ունէր, իրենց գիտութեամբ և սրբասէր կարգերով համբաւուած Սանահնի և Հաղբատայ վանքերէն

մէջ աշակերտութեան կը դնէր. հոն կ'անցնէր Սարկաւագ իր մանկութեան առաջին տարիները. ու կը տքնէր՝ ինչպէս ինքն ալ կը վկայէ, «զօր ամենայն և զգիշերն բովանդակ՝ առ իմաստս ցանկութեամբ, նաեւ սիրովն որ առ հանճար»։ Ուրիշ տեղ մ'ալ. «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց՝ առնել քան ըստ բնութեան տածիւք խնամս յառ մանկունս. որովք յառաջնումն հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի քաջութեան»։

Այդ փափաքին արժանաւոր հանճար ալ ունենալով, իր ժամանակին ու հայերէն դպրութեանց գլխաւոր պարծանքներէն մէկն եղաւ Սարկաւագ. որով իրաւամբք իր վրայ սքանչացողներէն մէկը կը կոչէ զինքը «Մեծիմաստ գիտութեամբ քան զյոլովս և հանճարեղ յամենայնի և մտահարուստ... յոյժ իմաստուն և աստուածային շնորհօք զարդարեալ»։

Իր գլխաւոր արդիւնքներէն մէկն եղաւ՝ հայկական տոմարը նորոգելու համար ունեցած աշխատանքը. իրմէ առաջ Մովսէս Եղիվարդեցի և ուրիշներ ջանացեր էին այս բանին. բայց իրենց ջանքն անկատար կամ անգործ մնացած էր։ Սարկաւագ կրկին աշխատեցաւ. որովհետեւ ուրիշներուն շտկած տոմարը շարժական ըլլալով՝ այլ և այլ շփոթութեանց պատճառ կ'ըլլար. և ուզեց հաստատուն տոմարի մը կարգաւորութիւն ընել, և այս է Սարկաւագադիր կոչուածը, որ չկրցաւ ազգին մէջ հաստատութիւն գտնել։

Գրչագրի մը մէջ հանդիպած ենք. «ՇԼԴ. Սկիզբն Նոր Թուականին որ կարգեցաւ ի Յովհաննէս վարդապետէ Հաղբատեցւոյ որ Սարկաւագ կոչեցաւ։ Սա արար անշարժ տումար ընդ այլոց ազգաց։ Հանապազ ի Քաղոց ԽԹ. Յայտնութիւն է. Մեհեկի Ը Տեառնընդառաջ է. Արեգի ԺԲ գարուն. Լ Աւետեաց. Ահեկի Է Անկատեղ. Մարերի ԺԷ Ելատեղ. Մարգաց ԺԳ Ամառն. Նաւասարդի Ե Աստուածածնին. Հօռի Ե սուրբ խաչին. Ի Աշունն. Տրէ Թ. Յխնակաց բարեկենդան. Ժ. Պահքն. Քաղոց Ժ. Ձմեռն. ԽԱ. Յայտնութեան բարեկենդան»:

Ուսմանց սիրով վառուած՝ ուզեց իւր օրինակաւն ու ջանքով կիրթ ախորժակ, ուղիղ և ճշմարիտ գիտութիւն սփռել Հայաստանի մէջ. և այս բանին համար մասնաւոր խնամք ունէր մանկանց դաստիարակութեան վրայ, խրատներով անոնց եռանդը վառելով, և իր զօրաւոր խօսքերով հասկցնելով թէ իմաստութեան գանձուն հաւասար բան չկայ:

Հաղբատայ առաջնորդ ալ եղաւ Սարկաւագ, և այն մեծ վանքին ուսմանց յառաջադիմութեան գլխաւոր արդիւնքն իրեն կրնայ համարուիլ: Ներքին բարեկարգութեան համար ալ շատ աշխատեցաւ անոյշ սրտովն ու լեզուովը և հայրագութ խանդաղատանօքը:

Իւր այս բարեմանութեանց համար՝ պատուական էր ամենուն առջեւը. մինչեւ իշխանք և թագաւորք մեծարեցին անոր հանճարը, և սքանչացան սրբութեանը վրայ. և Դաւիթ Վրաց թագաւորին համար կ'աւանդեն թէ ամէն անգամ որ կը տեսնէր զՍարկաւագ՝ նախատինք չէր համարեր արքունի թագով զարդարուած գլուխը խոնարհեցնել անոր առջեւ և օրհնութիւնը խնդրել: «Ի ՇՀԸ թուին, — կ'ըսէ Սամուէլ ժամանակագիր, — փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ սուրբ վարդապետն Սարկաւագ ի Հաղբատ»: Նոյն վանքին Ս. Աստուածածին եկեղեցւոյ զանգակատան տակ թաղուած է Սարկաւագ, և մարմինը ամփոփող քարին վրայ գրուած հետեւեալ արձանագիրը. Արձանն այս նմանակն է Սոփեստոսի Սարկաւագին:

⁂

Սարկաւագայ երկասիրութիւնք. — Սարկաւագ վարդապետին անունը կրող երկասիրութիւնք որչափ ալ ըստ ինքեան գեղեցիկ են, բայց իր իմաստութեան և անխոնջ փութոյն քանի մը երախայրիք պիտի ըլլան անշուշտ, վասն զի հաւանական կ'երեւնայ թէ իւր գրուածներէն շատը կորսուած են, և որոնց մէջ գլխաւոր է

Պատմութիւնը՝ զոր կը յիշատակեն Կիրակոս, Վարդան, Մխիթար Այրիվանեցի, և քանի մ'ընտիր հատուածներն իւր ժամանակագրութեան մէջ կը բերէ Սամուէլ Անեցի իր աշակերտը: Կ'երեւնայ թէ այս պատմութեան գիրքը երկու մասի բաժնուած էր. Առաջինը՝ ընդհանուր Սկիւթական ազգաց ծագման և արշաւանաց վրայ, որ ԺԱ. դարէն սկսան գալ ի Հայաստան. Սելճուգեանց ու Տուղրիլեանց, և Ալփասլանայ և իր նախորդաց վրայ. Երկրորդը՝ Ալփասլանայ որդւոյն Մելիքշահի գործերը, որուն մահուամբ դադրեցուցած կ'երեւնայ Սարկաւագ իւր պատմութիւնը:

Այս կարծեաց ստուգութեան կ'երաշխաւորեն՝ իրմէ ժամանակաւ քիչ կրտսեր՝ ու իրեն պատմութեան գիրքը կարդացող հետեւեալ պատմագիրները: Կիրակոս կ'ըսէ. «Մինչեւ ցՄելիք շահ սուլթանն՝ գրեալ էր զպատճառ տիրելոյ նոցա մեծ իմաստ վարդապետն որ Սարկաւագ կոչիւր»: Սամուէլ. «Իսկ յետ նոցա (Ամիրմումնեացն) Սկիւթացւոցն առնուլ զբռնակալութիւնն, այսպիսի պատճառաւ ընթերցաք, գրեալ վարդապետին մեծի՝ որ Սարկաւագ վերակոչի անուանեալ. զի ասէ թէ Պարսից և Մարաց զմիմեամբք եկանելով՝ տարեւորիկ փոփոխութեամբ մինչեւ ցաւուրս մեր: Զայսոսիկ նշանակաւ գրոյ եցոյց մեզ իմաստասէրն մինչեւ ցՄելիք շահն, զոր յիւրում տեղւոջն գրեցից սորին ձեռնտուութեամբ: Իսկ զհօրն նորա ժամանակ՝ զարիւնախանձին Ալփասլանայ, և զնորին հօրն և զհաւուց, զոր

Տուղլու (Տուղրիլ) Բէկ և Մահմուտ, և Սարչուկ (Սէլճուգ) անուանք են նոցա։ Տեսաք երբեմն գրեալ սորին ձեռօք սոյգ գտակս. եթէ հանդիպիմք մատենին՝ և մեք չարագրեսցուք, և թէ ոչ՝ լքցուք» և այլն։ Սամուէլ՝ Մէլիք շահի թագաւորութեան վրայ խօսելու ժամանակ՝ ասկէ վկայութիւն կը բերէ՝ ըսելով. «Զի ասէ իմաստասէր աստուածային, թէ իբրև անոյր զփառս իշխանութեանն», և այլն։ Դարձեալ յիշատակելով խաչակիր արևմտեայց գալուստը, և Ալեքս կայսեր անոնց ըրած նենգութիւնը, կ'ըսէ. «Եւ այս բանք գրեալ էր վարդապետին Սարկաւագի»։

Այս ընտիր ու փափաքելի երկասիրութենէն մինչեւ առ մեզ հասած երկու հատուած մէջ բերենք, պահեալ առ Անեցւոյն. որով ինչպէս իրաւամբ կ'անդրադարձնէ զանոնք առաջին անգամ հրատարակող բանասէրն, ամբողջ գրքին վսեմութիւնն ու ազնուութիւնը կրնանք ճանչնալ. և թէ ինչպէս այն պատմութիւնը մեր գրականութեան ընտիր գրուածքներէն մին էր, և իրեն ցեղին մէջ թերևս ամենէն ընտիրը.

«Իբրև անոյր զփառս իշխանութեանն՝ բարերարդն Մէլէք շահ, զկնի հօրն մահուանն՝ Ալփասլանն կոչեցելոյն, մեծապէս կարգօք յօրինէր զթագաւորութիւնն. ըստ անուանն եղեալ արդարև արքայ արքայից։ Ոչ հետեւեալ հօրն բարուց և կամաց, այլ և յաւէտ մանաւանդ զընդդէմն ախորժեալ, մինչ զի և մտահան եղեալ՝ զնորայն բարէր զիմացմունս, իբրև եղեալ հակառակ խաղաղութեան և կենաց մարդկան, արեամբ և զրկմամբ խանդացեալ։ Իսկ ինքն իմաստաբար քաղաքավարութեան կարգօք պատրաստէր զամենայն։ Արդ խոհեմն այն և արի քան զյոլովս ի թագաւորաց և քան զամենեսեան որ առ մեօք, ոչ այնքան տանէր հոգ՝ որքան արդարութեամբ առ ամենեսին վարել. զի մի ոք լիցի արտում ի զրկելոց, և հպարտ ի գոռոզաց։ Էր և պատարարոյ և մեծախորհուրդ. այլ և տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեանն. ընդ որում հեզութիւն

ի քաղցրութիւն բարուցն լծակցեալ՝ առնէր սիրելի ամենեցուն. զոր միայն կոչեցից թագաւոր և փարթամ։ Սա ի դոյզն ժամանակի փոքր ինչ նուազ զբոլորս հնազանդէր տիեզերս, զոր այլք ի թագաւորաց ի բազում ժամանակս և կամ ոչ բնաւ. բայց ոչ այնքան պատերազմաւ և բռնութեամբ՝ որքան սիրով և քաղցրութեամբ։ Զի եթէ սակաւ ինչ ժամանակաւ այնքան զօրեաց՝ կարծեմ թէ և ոչ Եւրոպէ կարէր ոչ տալ մուտս արքայութեան նորա, եթէ յոլովեալ էին՝ կենաց նորա ժամանակք։...

«Ի ՇԽԱ թուականին սպանաւ մեծ հազարապետն արքային Պարսից Մէլիք շահին, որում անուն էր Հասան. իսկ ըստ պատուոյ աստիճանին՝ Վզրուկ խոճայ։ Եւ զկնի աւուրց քանեւութից մեռանի և ինքն Մէլիք շահն. զորմէ համբաւէր յամանց դեղակուր ի կնոջէն լեալ. որ էր հեզ առ ամենեսեան և քաղցր բարուք յաւէտ առ ազգս քրիստոնէից։ Եւ յետ մահուան նորա անպատմելի եղեւ խռովութիւն ամենայն ազգաց զամս չորս. զի եղբայր նորա Դդուշն և որդի նորա Բէքիարուխն՝ զայսոսիկ զամս մարտիւ պատերազմաց զբարեյարմարութիւն զամենայն ի բաց կորեցին, վասն ոչ ընդ փոյթ միոյ ի նոցանէ տիրելոյ. համանց արեանց իբրև զուղխից լինէր, ոչ միայն զինակիր նահատակացն՝ այլ և առհասարակ ազանց և գաւառաց. և նեղութիւնք վշտաց սովու և գերութեան։ Եւ այսպէս բարիքն ի բաց վճարեցան ընդ խզման կենաց թագաւորին. որոյ երկք և աշխատութիւնք թագաւորականք՝ ուրոյն, և շահն և օգուտն՝ հասարակաց ամենեցուն, մեծամեծք և ընտրելիքն. մանաւանդ զխաղաղականն ասեմ զկեանս և զանհակառական. զի սիրէր զազգս մեր այնքան՝ զի աղօթս հայցէր և օրհնութիւնս. յորմէ և անդ երբեմն հոգաւ հայրապետն։ Ո՜հ, թէ միայն էր աշակերտեալ քրիստոնեական կրօնից և կարգաց»։

⁂

Յաղագս Քահանայութեան ճառ. — Ինքզինքնին Աստուծոյ սեղանոյն նուիրող քահանայից համար զգուշութեան և խրատական ճառ մը։ Աստուածամերձ և ահաւոր սրբավայրին արժանաւոր և նիւթոյն վսեմութեան պատկանաւոր լեզու մը կը բանեցնէ Սարկաւագ այս ճառին մէջ. կը նկատէ զքահանայն իբրեւ պաշտօնեայ Աստուծոյ և մարդկան, ու կը յիշեցնէ անոր այլ և այլ պարտքերը։

Ներբողեան. — Կիրակոս՝ Սարկաւագայ վրայ խօսելով կ'աւանդէ թէ «գրեաց ճառս ներբողականս ի մեծազօր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս և ի սքանչելին Սահակ և Մեսրովպ»։ Այս ճառերը մեր ձեռքը հասած չեն։ Միայն ի պատիւ սրբոյ Լուսաւորչին ընտիր ներբողեան մ'ունինք իր անունով, զոր թերեւս ուզած ըլլայ ակնարկել Կիրակոս։ Մեր մատենագրութեան մէջ քիչ հանդիպած ենք այսպիսի հաճոյական ոճով ու կիրթ հանճարով յօրինուած ներբողենի մը։ Ոմանք սրբոց Թարգմանչաց վրայ ընդհանրապէս գրուած ներբողական ճառի մը հեղինակ ուզած են համարել զՍարկաւագ, և որ ձեռագրաց մէջ սովորաբար կը կրէ «Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրովբայ վարդապետին» խորագիրը։ Բայց այդ ճառը իր հմուտ և ընտիր ոճովն ալ՝ Սարկաւագայ հարազատ երկն ըլլալուն իրաւցի տարակոյս կը վերցնէ առ բանասէրս։

Աղօթամատոյց. — Առ Աստուած դիմելու անձկանօք վառուած, և աշխարհի ու մարմնոյ բազմադիմի յուզմանց, վարանմանց, լքման, վտանգաց, տագնապալի վայրկեաններուն երկնաւոր սփոփանաց և քաջալերութեան փափաքող մտքեր՝ ասկէ աւելի սրտաշարժ աղօթից գիրք մը դժուարաւ կրնան գտնել։ Սարկաւագ որ Հաղբատայ մենաւոր առանձնութեան մէջ աշխարհքէս հեռացած, և արդէն առ

սեամս երկնից կը դեգերէր հոգւովն ու անձկանօք, այնպիսի փափաքելի մերձաւորութեան զմայլման թելադրութեամբ գրած է այս աղօթքները։ Ամէն հասակի, վիճակի և կենաց դիրքի մէջ գտնուողք՝ իրենց սրտին, վիճակին և զգացմանց համեմատ աղօթքներ կը գտնեն այս սքանչելի մատենկան մէջ[1]։

Ասոնցմէ զատ ուրիշ քանի մը ընտիր համառօտ գրուածներ ալ ունի Սարկաւագ, որոց ամբողջը մեր ձեռքը հասած չէ. և են **Վասն Մասանց պատուոյ և պատկերաց ընդունելութեան.** — **Վասն շարժման երկրի.** — **Մեկնութիւն տումարի և յաղագս անկիւնաւոր թուոյ.** — **Յաղագս ամսոց Հայոց և տօնից, և չորեքտասաներորդ լուսնոյ զատկաց.** — **Յոհաննու իմաստասիրի որ մականուանի Սարկաւագ, ասացեալ յառաջ քան զգրութիւն իւրոյ տումարին.** — **Բան խրատու առ ուսումնասէրս.** — **Տումար ժամանակաց և թուականաց.** — **Բան վասն հինգ հարիւրից.** — Ի պատիւ սրբոց Ղեւոնդեանց երգուած Պայծառացիր գեղեցիկ և ընտիր շարականը։ Դարձեալ՝ Սարեակ թռչնոյն վրայ բանաստեղծական, ընտիր և գեղեցիկ քերթութիւն մը[2]։ Մեր ազգային դպրութեան մէջ՝ այս իր տեսակին անհամեմատ աշխոյժ, եռանդուն և սիրելի արտադրութիւնը՝ այս խորագիրը կը կրէ. **Յովհաննու Սարկաւագի իմաստասիրի և վարդապետի ասացեալ բան իմաստութեան առ ձագն՝ որ զաղօթանոցաւ նորա ճռուողէր քաղցրաձայն՝ որ կոչի Սարիկ**»։ Ասոնցմէ զատ կը յիշուին Սարկաւագայ անուամբ Հոգւոյն սրբոյ վրայ գրուած ճառ մը. — Ղուկասու Աւետարանին մեկնութիւն՝ զոր կը յիշէ իր աշակերտն Կունդ Սարգիս, և Տաղ մը ի Յարութիւն Քրիստոսի։

Կիրակոս՝ Սարկաւագայ համար կ'աւանդէ թէ «գրեաց և օրինակս ստոյգ գրոց». և կ'ուզէ անշուշտ ակնարկել նոյն վարդապետին Հաղբատայ վանուց մէջ գտած հին սաղմոսագրոց օրինակ մը՝ Թարգմանչաց ժամանակ և անոնց մէկուն ձեռքովը գրուած: Որովհետև առեն անցնելէն ետքը՝ անոնց Թարգմանածէն զատ ուրիշ նոր կամ աւելի հնագոյն քան զընկալեալն յազգին՝ Թարգմանութիւն մ'ալ երևցեր էր ազգին մէջ, անկատար և աղաւաղ, որով շփոթութիւն կար, և բուն ստոյգ և հարազատ օրինակը գըտնելու համար նեղութիւն կը կրէին: Սարկաւագ գտաւ բուն և իսկական Թարգմանութիւնը և ազգին մէջ հրատարակեց[1]:

---

[1] Քահանայութեան ճառը, ինչպէս նաև ներբողական գովեստք ի Ս. Լուսաւորիչն և ի Թարգմանիչս, և Աղօթամատոյցն հրատարակեալ են ի Վենետիկ, ի շարս Հայկական Սոփերաց ի 1853։

[2] Հրատարակուած ի Բազմավէպ, Հատ. Ե. 221։

Աստուածաբանական գրուածներ ալ ունի Սարկաւագ, մանաւանդ այն խնդրոց վրայ որ Յունաց և Հայոց մէջ վիճելի նիւթ էին, իր կորուն և զօրաւոր ոճովը, բայց կ'երևայ թէ անոնց մէջ օտար ձեռք մտած է:

Էջմիածնի Մատենադարանին ձեռագրաց տպագիր ցուցակին մէջ նշանակուած կը տեսնենք Սարկաւագայ անուամբ հետևեալ մեզի դեռ անծանօթ երկասիրութիւնք. Ա. «Հարցումն վարդապետաց առ Սարկաւագ». Բ. «Յաղագս չորից առաքինութեանց ի Սարկաւագ վարդապետէ»: Նոյն գըրչագրին մէջ կ'երևնայ նաև ընդդէմ երկաբնակաց մակագրով գրուածք մը Սարկաւագայ ընծայուած: Քառածալ երկաթագիր գրչագիր մ'է, կ'ըսէ հրատարակողն, և թերի ի վերջէ: Նոյն ցուցակին մէջ (թիւ 519) «Սարկաւագ վարդապետի բանք ընդդէմ այնոցիկ, որք վասն բաժակին մոլին»[1]:

Սարկաւագայ աշակերտաց մէջ կը յիշատակուին ԵՐԵՄԻԱ՝ որ Անձրևիկ ալ կը կոչուէր, ՍԱՄՈՒԷԼ Երէց և ԱՆԱՆԻԱ, ԽԱՉԱՏՈՒՐ, ԳՐԻԳՈՐ և ՅՈՎՀԱՆՆԷՍ Անեցիք:

Ասոնցմէ զատ նաև ՍԱՐԳԻՍ վարդապետ ԿՈՒՆԴ կոչուած, Արարատեան գաւառէն, զոր ժամանակակիցք «աշխատասէր և արի մշակ տեառն կը կոչեն. հմուտ և հանճարեղ իմաստիւք հոգւոյն»: Ղուկաս և Յովհաննէս աւետարանագրաց մեկնութիւնը շարագրած է Սարգիս՝ իր ծերութեան հասակին, կամ Սարկաւագայ Թուականին 63 տարւոյն մէջ։ Ինքն հեղինակը մասնաւոր յիշատակարանով մը կ'աւանդէ թէ Եփրեմի, Կիւրղի Աղեքսանդրացւոյ, Ստեփանոսի Սիւնեցւոյ և Իգնատիոսի և Յովհաննու Ոսկեբերանի և Գրիգորի Աստուածաբանի և Եպիփանու և Նարեկացւոյն և Սարկաւագայ և Անանիայի և Նանայի համանուն երկասիրութեանց հետեւողութեամբ շարագրած է այս գիրքը, ընդհանրապէս ընտիր ոճով և լեզուով։

---

[1] «Այս ճանապարհ արարեալ (Յովհաննէս Գառնեցին է որ կը պատմէ), գնացի ի մայրաքաղաք մենաստանն ի Հաղբատ և գտի Թարգմանչացն գրած սաղմոս. զոր առեալ սուրբ վարդապետին՝ Սարկաւագ կոչեցեալ, այն որ զտոմարն երևեցոյց զհին Հայկին, և նա սերմանեաց զայս ուղիղ և զուգորդ սաղմոս, որ ոմանց այլ և այլ երևէր ի սա»:

Սաղմոս գրոց յիշատակարանի մը մէջ ալ կը կարդանք. «... Սա է գաղափարն գերունակ սուրբ վարդապետին և մեծ սոփեստոսին սուրբ ուխտին Հաղբատայ՝ Սարկաւագին... Եւ սա վշտացեալ էր ի բազում ժամանակս վասն այլայլման Սաղմոսիս. և ոչ գիտէր զելս իրացն թէ ո՛ւստ ուստեք ճշգրտեսցէ. և ապա մտեալ ի յարկեղս գրեանցն որ ի Հաղբատ՝ զամենայն որոնեաց. և ապա հուսկ քան զամենայն գրեանս ի ներքոյ՝ եգիտ Թարգմանչացն Սաղմոսարան ջինջ և նուագ գրով, և առեալ զայն խնդութեամբ՝ համբուրեալ և եդ ի վերայ աչաց իւրոց. և ապա արկեալ ձեռն ի գործ՝ բացայայտեաց անտի զծածկեալ գանձն և զխցեալ աղբիւրն. և ցրուեաց ընդ ամենայն սահմանս Հայաստանեայց զայս օրինակ: Եւ այդ նշմար սևակի որ ծրի յառաջիկայդ, յայնմ օրինակէ է»: Ուրիշ յիշատակագիր մ'ալ կը մաղթէ. «Իմաստութիւն Հօր Յիսուս և բան սիրողին իմաստութեան վարդապետին Սարկաւագ կոչեցեալ՝ աշխատանաց յողդութիւն տացես, զարժանն հատո յանյաշաղ ծրիցդ»:

[1] Երուսաղէմի Մատենադարանին ցուցակը այս վերջին գրուածքը կ'ընծայէ Եսայեայ Նչեցւոյ, Սարկաւագայ տալով ուրիշ համառօտ (միայն մէկ տողի մէջ ամփոփուած) գրութիւն մը այսպիսի սկզբնաւորութեամբ. «Զլինելն որդի մարդոյ և մտանել ընդ օրինօք»...: Նոյն ցուցակը (թիւ 384) հետևեալ խորագրով գրուած մ'ալ կու տայ Սարկաւագ վարդապետի. «Յեկեղեցական պատմութենէ զոր երկրորդեալ է Սարկաւագ վարդապետի»:

Նոյն Մատենադարանին մէջ կը յիշուի նաև ուրիշ ճառի մը գոյութիւն՝ Սարկաւագայ անունով. «Հարցմունք Վրաց եպիսկոպոսէ ի Հայոց վարդապետէ Սարկաւագէն, գեր գոլով յազգս ամենայն. թէ զինչ ունի երգք սաղմոսին ասացեալ. Դու խորտակեցեր զգլուխս վիշապաց ի վերայ ջուրց. դու փշրեցեր զգլուխս» և այլն: Ցանկողը կը յաւելու. «Այս ճառ առ Մխիթարեանս մակագրի Վ—ն շ—րժմ—ն և [illegible] եթէ չիցէ այս ուրիշ, զորմէ խօսի հեղինակս ի վերջաբանին իւրում, այսպէս. Եւ եթէ ընդէ՞ր բարիք ընդ չարս մեռանին և անմեղք ընդ մեղաւորս, ի բանէ անտի ուսցիս զոր արարեալ է մեր ըստ կարողութեան յաղագս մեծի և սաստկական արևմտեայ շարժմանն. և զայդ բաւական համարեալ՝ թողցուք զերկայնմտութիւն բնախօսութեանն»:

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՆՈՒԿ

Ստեփանոսի գիտութիւնն և համբաւ։ — Արժանապէս կը մեծարուի ի Բարսեղ կաթողիկոսէ։ — Իրեն ընծայուած գրուածները։ — Աշակերտքը։

Ստեփանոս Մանուկ, որ տղայութեան հասակէն իմաստութեամբն և սրբութեամբ համբաւաւոր, աշխարհէ հրաժարելով, Շուղր անապատին Կարմիր վանքն առանձնացեր էր, իր գիտութեամբն ալ աւելի մեծանուն հանդիսանալով, տեղւոյն ծերունի վարդապետաց հրամանաւ՝ բեմ կ'ելլէր ու սուրբ հաւատոց ճշմարտութիւնը սքանչելի վարդապետութեամբ կը քարոզէր ամենուն։ Նոյն առենի վարդապետներէն ոմանք լսելով թէ Ստեփանոս անանկ տարաժամ հասակի մը մէջ քարոզութեան սկսեր է, դժկամակեցան որ ութեւտասնամեայ պատանի մը այնպիսի մեծ պաշտաման ձեռք զարկեր է, թէպէտ և յաջող հանճարով և գիտութեամբ։ Իրաւացի համարեց անոնց գանգատը Բարսեղ կաթողիկոս, և ուզեց անձամբ լսել անոր քարոզութիւնը,

որուն վրայ այնչափ հասակաւոր հանճարներ զարմանալէն չէին դադրեր. և երբ լսեց՝ ոչ միայն իրաւունք տուաւ այլոց խօսքերուն, այլ անձամբ հանեց իր մատանին ու ձեռքի գաւազանը անոր տալով հրամայեց որ շարունակէ այն պաշտօնը՝ զոր յօգուտ փրկութեան հոգւոց այնչափ յաջողութեամբ սկսեր էր։ Երկրորդ օրն ալ կիրակի հանդիպելով՝ Գող Վասլին իշխանութեան և հրամանաց տակ եղող գաւառներուն եպիսկոպոս ձեռնադրեց զինքը, ու Կարմիր վանքին առաջնորդութիւնը անոր յանձնեց։

Երբոր Գրիգոր Վկայասէր մեռաւ, սա ինքն Ստեփանոս Մանուկ անոր արձանականը շարագրեց. և անոր սքանչելի սրբութեանը և անարատ վարուց արժանաւոր գովարան երեւցաւ։ Ափսո՜ս որ ոչ այս և ոչ իր ուրիշ երկասիրութեանց մէկը մեր ձեռքը հասած է. միայն պատմութիւնն և իր աշակերտներն իր վրայի համբաւը կ'արդարացնեն։

Այս աշակերտաց մէջ գլխաւոր են Գրիգոր Պահլաւունի և իր հարազատը Ներսէս Շնորհալի, և Սարգիս և Իգնատիոս վարդապետք։

* * *

ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

Գրիգոր Պահլաւ՝ եղբայր Շնորհալւոյն։ — Կաթողիկոսական աթոռը նստիլը։ — Իր համբաւը և իր ժամանակակիցաց ընծայուած մեծարանք։ — Հայկական գրականութեան ծաղկելուն համար ունեցած ջանքը։ — Երկասիրութիւնք։

Բարսեղ կաթուղիկոսին մահուընէն ետքը՝ իրեն մասնաւոր հրամանաւ և կարգադրութեամբ՝ նոյն հայրապետական աթոռոյն ընտրեցին զԳրիգոր կամ զԳրիգորիս Պահլաւունի՝ որ Վկայասէրին քեռորդի Ապիրատ իշխանին որդին էր, և Ներսէսի Շնորհալւոյ երէց եղբայրը։ Սակայ իր տղայութեան հասակէն նախ Վկայասէրին ու ետքը Ստեփանոսի աշակերտելով, թէ առաքինութեամբ և թէ իմաստութեամբ մեծ համբաւ ունեցաւ, և քսանամեայ հասակին հայրապետական աթոռը նստելու արժանի երեւցաւ. և ինչպէս կը վկայէ Շնորհալին «Յոյժ հրաշափառագոյն բանիւ և գործով քան զբազումս յաթոռակալացն զատունախնեաց, ի մաքրութիւն հոգւոյ ըստ հրոյ գոլով զուգամանութեան, յիմաստս բանի և ի շարագրութիւնս գրոց ծայրագոյնս, և ի խորհուրդ հանճարոյ՝ ըստ տերունեան խրատու բարիոք խորագիտութեամբ»։ Սամուէլ ժամանակագիրն ալ կը յաւելու. «Յաղագս աստուածային շնորհի ընկալելոյ, և արքական և մաքուր վարուցն պատուեալ փառաւորութեամբ ոչ միայն ի մերոյ ազգէս, այլ և յօտարասեր թագաւորաց և իշխանաց և պատրիարգացն։ Սա չոգաւ ի քաղաքն սուրբ յԵրուսաղէմ... և անդ ծանուցեալ և իմացեալ զառատահոս ծաւալումն աստուածային շնորհին ի վերայ հայրապետին ազգին Հոռոմայեցւոց, իշխողք աշխարհացն որ Փռանգք կոչին, և ընդ վայելչագեղեաց և պատշաճագեղ տեսիլ մարմնոյն՝ ծանեան և զհոգւոյն գեղեցկութիւն, և ի բանս հաւատոյ զճշմարտութիւն ամենեւիմբ, զոր պայծառ և կանոնական կարգաւ և քանոնով վարդապետական ճոխութեամբ բարբառէր. ուրախացան հաճելութեամբ, և առաւել սէր հաստատեցին ընդ հայրապետին և ընդ ազգս մեր»։

⁂

Մեծ ջանքով ետեւէ եղաւ Գրիգոր հայկական գրականութեան ծաղկելուն, և Վկայասէրին օրինակին հետեւելով իր ժամանակին անուանի վարդապետաց այլ և այլ երկասիրութիւն յանձնեց։ Սամուէլ Երէց՝ իր հրամանաւ Գրոնիկոնը կամ ժամանակագրութիւնը շարագրեց. Իգնատիոս վարդապետ՝ Ղուկասու աւետարանին մեկնութիւնը, Շնորհալին՝ իր այլ և այլ գրուածները, և հաւանական կարծեօք նաեւ Սարգիս վարդապետ՝ կաթուղիկեայց թղթերուն մեկնութիւնը ։

Ինքը Գրիգորիս, հայրապետական զբաղմունքներէ զատ գրական երկասիրութեանց ալ պարապելու ատեն կը գտնէր։ Իրենն է Աւետեաց շարականը Խորհուրդն անճառ. և Ծաղկազարդի երկրորդման օրը երգուածը Մեծահրաշ այս խորհուրդ. Ջրօրհնեաց գեղեցիկ տաղն Ո՛վ զարմանալի խորհուրդս. ի պատիւ Լուսաւորչի ալ ընտիր մեղեդի մը Ի յելս արեւու արեւ։ Վկայասէրին պէս՝ սրբոց վկայաբանութիւններն ալ կարգի դնելու աշխատեցաւ. և սահմանեց որ ամէն մէկուն տօնին նախընթաց օրը՝ անոնց վարքը կարդացուի. անոր համար ոմանք զինքը փոքր Վկայասէր կոչեցին. ոմանք ալ այս երկուքին գրուածները իրարու հետ շփոթելով՝ մէկուն երկասիրածը միւսին ընծայեցին։ Կիրակոս ասոր համար կ'աւանդէ՝ ինչ որ այլք Վկայասիրին համար զրուցած են. «Սկսաւ թարգմանութիւն առնել աստուածային գրոց. և բազում գիրս ետ թարգմանել ի հայ լեզու՝ զորս ինքեամբ և զորս այլոց ձեռամբ»։

Իրենն է նաև բանաստեղծական բաւական ընտիր գրութիւն մը Վասն Երուսաղեմի և հարուածոց քրիստոնէից կոչուած[1]։

* * *

---

[1] Տիւլորիէ հրատարակեց այս քերթուածը ի Recueil des Historiens des Croisades, (Documents Arméniens), բնագիրն ու գաղղիական թարգմանութիւնը։

Ս· ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Շնորհալի և իր նախնական դաստիարակութիւնը։ — Քահանայանալը։ — Ուսումն և կրթութիւնը։ — Եպիսկոպոսական աստիճանի կը բարձրանայ։ — Իր եղբօրը կը յաջորդէ յաթոռ հայրապետութեան Հայոց։ — Ընդհանրական առ ամենայն հայասեր ազգին։ — Խնդիր միութեան ընդ եկեղեցւոյն Յունաց. և այս առթիւ գրուած թուղթք։ — Շնորհալւոյն երկասիրութիւնը։ — Թուղթք առ զանազանս։ — Հրեշտակաց ներբող։ — Բարձրացուցէքի մեկնութիւն։ — Մեկնութիւն Մատթէի։ — Մեկնութիւն կաթուղիկեայց։ — Մանր երկասիրութիւնները։ — Խրատ ժամերգութեան։ — Շնորհալի քերթող։ — Եդեսիոյ ողբ։ — Յիսուս որդի։ — Բան հաւատոյ։ — Յաղագս երկնից և զարդուց նոցա։ — Մանր քերթուածք։ — Մատենագիտական տեղեկութիւն իր գրուածոց։

Այն ընտիր և սիրելի տոհմին՝ որ արդէն ընծայած էր Հայաստանեայց եկեղեցւոյ և դպրութեանց զՄագիստրոս և զՎկայասէր և զԳրիգորիս, սերունդ էր սուրբն Ներսէս Կլայեցի, իրաւամբ Շնորհալի կոչուած իւր վարքով, խօսքով և գրչով։ Մագիստրոսի դստեր Ապիրատ որդւոյն զաւակ էր Ներսէս, և կրտսեր եղբայր Գրիգորիս Պահլաւունի կաթուղիկոսի. բայց թէ իր հարազատաց և թէ իր տոհմին մէջ անզուգական անձ մը կրնայ համարուիլ Շնորհալին։

Երկոտասաներորդ դարուն սկիզբը ծնաւ Ներսէս (1102), և տղայութեան հասակէն Գրիգորի Վկայասէրի արթուն *և բարեպաշտ խնամոց տակ մեծցած՝ ետքն ալ Սեւ լերան վրայ եղած Կարմիր վանից առաջնորդ՝ Ստեփանոս Գիտնականին աշակերտեցաւ, իրեն ուսումնակից ունենալով իր երէց եղբայր և զԻգնատիոս և զՍարգիս։*

Սրբութեամբն և իմաստութեամբ՝ իրեն հանճարոյն և կոչման արժանաւոր յառաջադիմութիւն ցուցնելով, իւր երէց եղբայրը Գրիգորիս երբ 22–23 տարուան՝ կաթողիկոսական աթոռը բարձրացաւ, քահանայ ձեռնադրեց զՆերսէս, ութեւտասանամեայ պատանեակ՝ բայց հոգւովն ու սրտին արդէն հասունցած և արժանաւոր այն գերագոյն և սուրբ պաշտաման՝ յոր ի հոգւոյն Աստուծոյ առաջնորդեալ՝ կը հրաւիրէր զինք Գրիգորիս։ «Անմարմնաբար և աստուածայնապէս սպասաւորեալ մեղաքաւիչ և կենարար սուրբ խորհրդոյն, օրինակ բարեաց տալ զանձն բազմաց, և նախանձելի լինէր ողջախոհ մոլորացն ի բարիս» հիանալով կը վկայէ իրեն վարուց գրիչ մը և ժամանակաւ մերձաւոր։ Լամբրոնացին ալ կ՚ըսէ. «Զանձն ի փրկչին խաչ հեղուէ»։

Ուսմանց և կրթութեան տեղեր սակաւաթիւ էին այն ատեն ի Հայաստան, որոց կարօտը և պէտքը զգացած է նաև Շնորհալի՝ որ ետքն ալ հառաչանօք կը գրէր առ կայսրն Մանուէլ. «Ո՞ւր մեր վարժարանք՝ ի թագաւորական պատրաստեալ հրամանացն. և կամ յոյս փառաց և պարգեւաց՝ յառաջացելոցն յիմաստս, որ մանուանդ մանկաբարոյից՝ են առաւելագունի պատճառ փութոյ կրթութեան»։ Վիպասանականին մէջ ալ կը խոստովանի թէ

« Զի հրահանգից վարժարանի
Չեմ տեղեակն ներկուռ բանի ». —
« Յաթենականըն քաղաքի
Զանձն իմաստից ոչ կըրթեցի.
Ոչ լսարանըն Պղատոնի
Եւ չափ տողից Հոմերոնի...
Ոչ հոյլք ամէն հռետորի,
Ժողովարան ճարտասանի
Ներհմտութիւն քերականի» ։

Որչափ ալ արտաքին յարաբերութիւնք սկսած էին յաճախել իրմէ առաջ և իր ատենը, բիւզանդական արքունեաց հետ, և թերևս աւելի սերտիւ քան Ե դարուն մէջ, սակայն ոչ նոյնպէս և յունական դպրութիւնն և ուսումն. և երբ պէտք կ՚ըլլար յունարէնէ գիրք մը թարգմանել, հայագէտ յոյնի մը կը դիմէին, ան ալ մեծ ծախքով, և անոնց անարուեստ թարգմանութիւնը կը ջանային յղկել. որով հայ լեզուն գիրք մ՚ալ աւելի կ՚ունենար, բայց մատենագրական իսկական ճոխութենէ զուրկ մնալով։

Ազգին այսպիսի բանասիրական գիրքին մէջ՝ Շնորհալւոյն ուսումն և գիտութիւնք՝ իր փափաքանաց համեմատ չբարձրացան. կամ աւելի ճիշդն ըսելով՝ անհաւասարելի բարձրութիւն մը ունեցան հոգեխառն գիտութեանց մէջ քան արտաքնոյն, եկեղեցական քան քաղաքական. աստուածաշունչ գրոց և սուրբ Հարց վարդապետութիւն և մեկնութիւն. եկեղեցւոյ և սրբոց պատմութիւնք, երաժշտութիւն եկեղեցական, և վայելուչ շարագրութիւն արձակ կամ ոտանաւոր բանից։ «Գրէր և շարժագրութիւն գրոյ» — կը վկայէ իր կենսագիրը, — հրաշատեսակ և վայելուչ ի զանազան կերպս, որպէս աստուածային մատամբք շարժահիւսեալ. և գիծք շնորհակիր և աստուածանկարք մատանցն, և բանք հոգեշարժք լեզուին՝ արտաբերեալք ի յոգնահանճար մտացն, օտար և գեր ի վերոյ երևելին մարմնականաց գիտութեանց և իրաց։ Քանզի ոչ ունէր ի մարդկանէ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որոյ մաքրեալ և յարդարեալ էր զհոգի և զմարմին և զմիտս»։

⁂

Այսպիսի վարք, եռանդ և գիտութիւն փութացուցին զԳրիգորիս, և հայրապետական աթոռը Հռոմկլայ փոխադրելէն ետքը՝ եպիսկոպոս օծեց զՆերսէս:

Չսխալեցաւ Գրիգորիս իր ընտրութեան մէջ. Ներսէս իր վիճակին բարձրութեան համեմատ՝ ամէն առաքինութիւն և կարեւոր բարեմասնութիւն ցցուց իր վրայ. և ոչ միայն իր համազգեաց, այլ նաեւ Յունաց և Հռովմայեցւոց, և մինչեւ այլազգեաց առջեւ ակնածելի և համբաւաւոր եղաւ: Ուստի երբ Գրիգորիս տարիքն առնելով՝ հայրապետական հոգոց ծանրութենէն ուզեց հրաժարիլ, արժանաւոր յաջորդ ճանչցաւ և ներկայացուց զՇնորհալի: Ընդունայն տեղ ջանաց սա հրաժարիլ և թաքստեամբ փախչիլ այն պատուէն՝ առ որ կը կոչէին զինքը իր սրբութիւնը և ժողովրդեան միաբան ձայնակցութիւնը: Հարկ եղաւ որ հնազանդի անոնց, և երկնքէն եղած անձայն հրամանի մը: Այն ատեն Գրիգորիս հայրապետական զգեստներն անոր հագցնելով, կաթողիկոսական կրկին քօղը գլուխը դրաւ. ու գաւազանն ալ ձեռքը տալով՝ նստոյց այն աթոռին վրայ, ուսկից ինքը կ'իջնէր, և ամենէն առաջ ինքը ողջունեց եղբայրը՝ կաթողիկոս ամենայն Հայոց երկրպագութեամբ: Իրեն հետեւեցան հոն գտնուող բազմաթիւ եպիսկոպոսունք, վանահարք, երիցունք և ժողովուրդք: Այն բազմութեան առջեւ՝ առաջին անգամ իբրեւ հայրապետ՝ բացաւ իր աստուածուսոյց բերանը սուրբն Ներսէս, ու գեղեցիկ ատենախօսութեամբ ցցուց հովուական պաշտաման ծանրութիւնը, ուսկից ինքն իրաւամբ կը հրաժարէր, այնչափ հեռու տեսնելով ինքզինքը այն սրբութենէն որ իրմէ կը պահանջուէր: Այս դէպքը 1165ի հանդիպեցաւ ու երեք ամիս ետքը վախճանեցաւ Գրիգորիս:

Եղբօրը մահուան գոյժը հրատարակեց Ներսէս ամենայն Հայկազանց՝ Ընդհանրական թղթով մը[1], յիշատակելով երջանիկ փոխումն առ Աստուած, և անոր աթոռը և իշխանութիւնը ժառանգելը. «Ինքն նաւու հաւատով, կ'ըսէ, ընդ ծով աշխարհիս՝ հողմով հոգւոյն ուղղակի նաւապետեալ ճշմարտութեամբ և առաքինութեամբ՝ եհաս անվթար յանքոյթ և առանց ալեաց նաւահանգիստն». և որովհետեւ, կ'ըսէ, գտնուած գիրքիս մէջ հարկ է՝ սակայն անկարելի, որ ըստ փափաքանացս ամէն մէկերնուդ հետ խօսիմ, և իմացնեմ իմ բաղձանքս՝ ինչպէս որ կ'ախորժիմ տեսնել զձեզ անխոտոր աստուածային ճանապարհաց ուղղութեան մէջ, ուստի եպիսկոպոսաց գովելի սովորութեան համեմատ՝ ուզեցի խրատել զամենքը: Այսպիսի աստուածահաճոյ և օգտակար ձեռնարկի մը մէջ՝ գեղեցիկ օրինակ մ'ունէր Շնորհալի՝ զսուրբն Սահակ Պարթեւ, զիմաստասէր հայրապետն Յովհան և զայլս որք իրմէ առաջ պայծառացուցած էին իրենց սրբութեամբն և իմաստութեամբ զհայրապետական աթոռն Հայաստանի: Մանաւանդ զի, — կ'ըսէ ցաւելով հայրենեաց գտնուած վիճակին վրայ, — քաղաք թագաւորական և բազմամբոխ ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յաթոռ հայրապետութեան և

---

[1] Այս ընտիր երկասիրութեան յիշելով հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ գաղղիացի բանասէրն և հայագէտ Վ. Ֆլորիվա մեզմէ դար մը և աւելի յառաջ. «Cette lettre est pleine d'une piété solide, et l'on y découvre partout les sentiments de respect, dont Nérsès était pénétré pour la religion, l'église et la discipline ecclésiastique. Ce grand patriarche est un des plus éloquents pères de l'église d'Arménie. Il était la plume de Grégoire III, son prédécesseur. Très propre pour le gouvernement, il monte sur le trône patriarcal avec un applaudissement général. Son pontificat fut employé à chercher des voies de conciliation entre l'église Grecque et celle d'Arménie. Il y aurait sans doute réussi, car il avait gagné les cœurs des Grecs, qui étaient pleins de vénération pour lui; mais il ne fut que sept ans sur le siège patriarcal...

վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերոյ զաստուածային պատուիրանս, ըստ առաջին հայրապետացն. այլ եմք իբր զայծեամն յորսորդաց և ի չանց փախուցեալք՝ քարանձաւս յայս բնակելով»։ Առաջ հաւատոյ դաւանութիւն մը կը դնէ, ու ետքը այլ և այլ վիճակներու պատշաճական՝ սքանչելի և հայրագութ խրատներ։ Նախ խօսքը կրօնաւորաց կ'ուղղէ, զանոնք երկնից աստեղաց նմանցնելով. ետքը վանաց առաջնորդներու՝ աչք կոչելով իրենց խնամոցը յանձնուած միաբան եղբայրութեանց մարմնոյն. ապա առ եպիսկոպոսունս, զորս մերթ գլուխ, մերթ տէր և տնտես կոչելով՝ կը յորդորէ յանպակաս կատարումն իրենց պարտուց. ետքը առ քահանայս, զորս Քրիստոսի ժողովրդեան ծնողք կը համարի։ Ապա կարգաւ զգուշութեան գեղեցիկ խրատներ ու պատուէրներ կ'աւանդէ առ իշխանս, առ զինուորս, առ ժողովրդականս, և յետոյ առ կանայս։ Վայելուչ և ընտիր հայկաբան լեզու մը գործածած է Շնորհալին այս գրուածքին մէջ, և կարելի եղածին չափ պարզ ու դիւրիմանալի։

⁂

Այն ժամանակները կարևոր խնդիր մը կը յուզուէր Բիւզանդիոնի արքունեաց և Հայոց միջեւ, կրօնական միութիւն մը հաստատելու համար իրարմէ հեռացած և օտարացած Հայ և Յոյն երկու եկեղեցեաց հետ։ Այս խնդրոյն մէջ մտած է նաեւ Շնորհալի, ու բարենպատակ վախճանին հասնելու համար այլ և այլ թղթեր ալ գրած, որոնք ամէնքը Պատճառ խնդրոյ միաբանութեան կը կոչուին։ Յունաց Ալեքս իշխանը՝ որ Կիր Մանուէլ կայսեր փեսայն էր, Շնորհալւոյն հետ տեսութիւն մ'ընելով ի Կլիկիա, երկար խօսակցութիւն եղաւ մէջերնին այս կարևոր խնդրոյն վրայ. ու ետքը իշխանն աղաչեց որ բերնով խօսածները ի գիր անցնէ, և այսպէս սկսան թղթակցութիւնք։ Ի Շնորհալւոյն գրուած թղթերը՝ թէ ի դիմաց եղբօրը և թէ իր կողմէն ասոնք են.

1. Թուղթ առ իշխանն Ալեքս՝ փեսայ կայսեր, Հայոց ՈԺԴ (1165) թուականին գրուած, այսպիսի սկզբնաւորութեամբ. «Բանիւք դուզնաքեայ իմն խօսելով»։ յորում նախ համառօտիւ Հայաստանեայց եկեղեցւոյ հաւատոյ դաւանութիւնը կ'ընէ, ու ետքը Յունաց կողմանէ առարկուած այլ և այլ տարակոյսներուն պատասխանը կու տայ յաղագս կարգաց եկեղեցւոյ և տօնից։ Այս թուղթն ընդունելով Ալեքս, երբ իրեն իշխանութեան համար սահմանուած տեղը լմնցաւ՝ ի Կոստանդնուպոլիս դառնալով՝ Մանուէլ կայսեր ներկայացոյց այն թուղթը. որ զարմացաւ, կ'ըսէ պատմիչը, տեսնելով այն խօսքերուն մէջ պարունակուած իմաստից զօրութիւնը. անոր համար փութաց ղրկել պալատին ներքինեաց մէկը, և թուղթ մը տուաւ անոր, ուղղեալ առ Գրիգորիս կաթուղիկոս, որպէս զի հրաման և հաւանութիւն տայ իւր եղբօրը՝ երթալու ի Բիւզանդիոն առ ինքնակալն։

2. Թուղթ առ կայսրն Մանուէլ, պատասխանն առ Գրիգորիս կաթուղիկոս գրուած թղթին, որ այն ատեն վախճանած էր։ Շնորհալին ծանուցանելով իւր եղբօր մահը, կ'իմացնէ թէ հայրապետական զբաղմանց յաճախութիւնք չեն ներեր իրեն թագաւորին փափաքը կատարել։ Բայց կ'իմացնէ իւր կատարեալ հաճութիւնը առաջարկուած միաբանութեան համար, ու այս թղթին մէջ ալ Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեանց և աւանդութեանց վրայ խօսելով՝ կը լմնցնէ գիրը, յիշեցնելով թէ ինչպէս ջանացողաց հարիւրապատիկ կը պտղաբերեն աւետարանական սերմանց արդասիք՝ սէրն ու խաղաղութիւնը։ Կայսրն ընդունելով այս թուղթը, և միշտ զարմանալով նամակագրին իմաստուն խօսքերուն վրայ, ինքն ալ ուրիշ գիր մը գրեց, ու Թէորիանէ ճարտար իմաստասիրին ձեռքը տուաւ, որ անձամբ երթայ առ Հայրապետն և թուղթին պատասխանը բերնով լրացնէ։

3. Այնուհետեւ Շնորհալին ուրիշ երկրորդ թուղթ մը գրեց առ Մանուէլ կայսր. և որովհետեւ Յոյնք թէ կայսեր թըղթովը և թէ Թէորիանեայ բերնով այլ և այլ տարակոյսներ հաներ էին Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան ու կարգաց դէմ, հարկ կ'ըլլար Շնորհալւոյն այս նիւթերուն վրայ դարձեալ գրել, ի խնդրոյ նոյն Թէորիանեայ:

4. Դարձեալ առ կայսրն երրորդ համառօտ նամակ մը, յորում կը ցուցնէ Շնորհալին թէ Հայերը ինչ մտքով *մի բնութիւն* կը դաւանին ի Քրիստոս, ըստ վարդապետութեան սրբոյն Կիւրղի:

5. Նոյն խնդրոյն վրայ դարձեալ թուղթ մը առ Միքայէլ պատրիարքն Յունաց, ընտիր ու գեղեցիկ շարագրութեամբ:

6. Եւ որովհետեւ այս միութեան խնդիրն ըստ արժանւոյն ի գործ դնելու համար՝ հարկ էր նաեւ ընդհանուր Հայաստանեայց հաճութիւնն ընդունիլ, այս պատճառաւ Շնորհալին թուղթ մը գրեց առ եպիսկոպոսունս և վարդապետս Հայոց, Աղուանից աշխարհէն մինչեւ ի Կեսարիա և յարեւմտեան կողմանս, որպէս զի եպիսկոպոսունք և վարդապետք և վանահարք միաբանելով՝ քննեն ի Յունաց առաջարկուած միութեան խնդիրը, և ըստ այնմ պատասխանեն: Բայց երանելին այն թղթոյն պատասխանը չընդունած, նոյն տարին փոխեցաւ առ Քրիստոս (1172) յամսեանն օգոստոսի: Զոր լսելով կայսրն՝ հառաչեց ու ըսաւ. «Մեծ ու արթուն զգայարան մը վերցուեցաւ այսօր Աստուծոյ եկեղեցիէն. Հայաստանեայք զրկուեցան իրենց կրկին Լուսաւորչէն»[1]:

---

[1] Թէ՛ Ընդհանրականն և թէ՛ Միաբանութեան թղթերն շատ անգամ տպագրուած են. առաջինը՝ նաեւ թարգմանեալ ի լատին լեզու և տպագրեալ ի Վենետիկ ի Ս. Ղազար յամին 1829, ուրիշ երկերուն հետ միասին 1833.

⁂

Շնորհալւոյն երկասիրութիւնք. — Ոչ միայն իբրեւ Հայրապետ եկեղեցւոյ՝ մեծարգոյ և սիրելի է Շնորհալւոյն անունը, այլ իբրեւ ընտիր մատենագիր մ'ալ՝ դպրութեանց պատմութեան մէջ նշանաւոր տեղ գրաւած է: Իրեն աթոռոյն և նախնեաց արժանաւոր է՝ երբոր պաշտամանը և հոգւոց փրկութեան նախանձով վառուած՝ թուղթեր կը շարադրէ, և իւր վիճակին ամէն կողմերը կը տարածէ փըրկարար վարդապետութիւնը քաղցր և հաճոյական լեզուով. երբոր եկեղեցւոյ բեմերուն վրայէն սուրբ աւետարանաց մեկնութիւնը կ'ընէ. և երբ Հայրապետական հոգերէն ծանրացեալ մտքին ախորժական պարապմունք մը հնարելու համար՝ հոգեւոր երգեր, քերթուածներ և մինչեւ իսկ հանելուկներ կը շարադրէ:

Այս երկասիրութեանց վրայ խօսելու համար՝ երկու դաս բաժնենք զանոնք. ոմանք *Արձակ*, և ոմանք ալ *Ոտանաւոր*:

Արձակ գրուածոց մէջ գլխաւորներէն կրնան համարուիլ իւր զանազան թուղթերը. և որոնց մէջ *առ ընդհանուր հայասեր ազգին* և առ Յոյնս գրուածին վրայ խօսեցանք: Հիմայ *մնացածներն* համառօտիւ յիշատակենք:

Գիր շրջաբերական ի կողմանս արեւելից ի Կարս. — Շնորհալւոյն հայրապետութեան ժամանակ՝ Կարս քաղաքին Աբրահամ եպիսկոպոսը վախճանելով, քաղաքացւոց առաջարկութեամբ և բարի վկայութեամբ անոր յաջորդ խնդրուեցաւ Խաչատուր անունով քահանայ մը: Շնորհալին քննելով անոր վարքը, և իմանալով արժանաւորութիւնը, եպիսկոպոս ձեռնադրեց զինքը: Իր վիճակը ղրկելու ատեն՝ մասնաւոր շրջաբերական գիր մը տուաւ ձեռքը, օրհնութեան նամակ մը որուն մէջ կ'իմացնէ նորընտիր այցելուին գալուստը, և իր հայրագութ սրտին և խոհական իմաստութեան արժանաւոր խրատներ կու տայ քաղաքացւոց, թէ անոր և թէ իրարու հետ վարուելու համար։

Բան մխիթարութեան առ վտանգեալսն մարմնով. — Շնորհալւոյն հայրապետութեան օրերուն՝ գժնդակ ուրկութեան ախտ մը երեւցաւ բոլոր Եդեսիա քաղաքին մէջ. ու բնակչաց մէջ ճարակելով՝ առողջ մնացողները չէ թէ միայն լոկ նախապահեստ զգուշութեան համար սկսան հեռու կենալ անոնցմէ, հապա նաեւ այն հիւանդութիւնը աստուածային պատուհաս մը համարելով՝ սկսան նախատել և արհամարհել բռնուածները։ Անոնք ալ ցաւագին ու վշտահար սրտով գանգատի նամակ մը գրեցին առ Ներսէս, իմացնելով իրենց խեղճ վիճակը։ Ընդունեցաւ Շնորհալին անոնց թուղթը, և իր որդեգորով սրտին բնական սիրով ու գթով՝ այն խեղճութեան և թշուառութեան վրայ մինչեւ յարտասուս խանդաղատելով, սրտաշարժ գրչով ու լեզուով մխիթարութեան նամակ մը գրեց անոնց։

Յաղագս Արեւորդեացն դարձի. — Սամոսատա քաղաքին Թորոս քորեպիսկոպոսը՝ իր քահանայակից և իշխանաց համախոհութեամբ թուղթ մը գրեց առ Ներսէս, ծանուցանելով թէ ինչպէս իրենց քաղաքին մէջ բնակող Արեւորդիք՝ հեթանոսական կրօնքէն հրաժարելով, կը փափաքին քրիստոնէական ճշմարտութեան հետեւիլ. Ներսէս պատասխանը գրեց, իմացնելով թէ այդ Արեւորդիք եկան մինչեւ առ ինքն ալ, և նոյն խնդիրքն ըրին։ Այս առաջարկութեան վրայ՝ մեծ ուրախութիւն ունեցաւ Ներսէս. որովհետեւ Արեւորդիք՝ ազգաւ հայ էին, և իրենց մէջ սովորութիւն եղած էր իբրեւ Աստուծոյ պաշտօն մատուցանել արեւու և բարտի ծառոյ. և թէպէտ սուրբ Լուսաւորիչ իւր քարոզութեան ատեն շատ աշխատեցաւ զանոնք հաւատքի բերել, բայց վախճանին չկրցաւ հասնիլ. որովհետեւ անոնք հաստատուն մնացին իրենց մոլորութեան մէջ։ Բայց կ'երեւնայ թէ ատեն անցնելէն ետքը՝ մերձակայ քրիստոնեայ ժողովուրդներէն այլ և այլ աւանդութիւններ

առնելով, կռապաշտ թիւրութեանց հետ՝ քանի մը քրիստոնէական պաշտամունք ալ խառն կը յարգէին։ Շնորհալին այս թղթին մէջ ուրախութիւնը և սրտին գոհութիւնը յայտնելէն ետքը, զանոնք աշակերտելու և ընդունելու կերպը կը սորվեցնէ։

Առ Պօղոս քահանայ հայկազն. — Պօղոս անունով հայկազն քահանայ մը որ ի Կոստանդնուպոլիս կը բնակէր, և ազգութիւնը ուրանալով՝ հոռոմցած էր, կը բամբասէր մեր ազգը, և ձեռքէն եկած ամէն հնարք կը բանեցնէր միաբանութեան խորհուրդը խափանելու համար. իր ջանից արդիւնքը կ'իմացնէր ի Հայաստան եղող իւր մէկ համախոհ գործակցին՝ որ Սամուէլ կը կոչուէր։ Իմացաւ Ներսէս անոր այս ընթացքը, և յանդիմանողական գրով մը ուզեց զինքն ուղղութեան բերել։

Առ ժպիրհ ոմն. — Այս վերնագրով երեք թուղթ ունի Շնորհալին առ ոմն ժպիրհ և յանդուգն, որ ինչպէս կ'երեւնայ, սրբոյն միաբանասէր և աստուածահաճոյ ջանից հակառակելով, բաւական չէր համարեր անոր դէմ ի ծածուկ մենքենայել, այլ իւր մտածմունքն և թշնամանքը կը համարձակէր մինչեւ առ սուրբն հասցնել՝ յանդիմանողական և նախատալից գրերով։ Հեզութեամբ՝ բայց այսպիսի լրբութիւն մը ջախջախելու ուժով և զօրութեամբ գրուած են Ներսէսի այդ թուղթերը։

Առ Ստեփանոս ոմն. — Ստեփանոս անունով մէկը խնդրած էր ի Շնորհալւոյն որ Դաւիթ Անյաղթի Սահմանաց Գրքին վերջին գլխոյն մեկնութիւնը իրեն շնորհէ. Ներսէս կատարեց անոր խնդիրքը, և համառօտ նամակաւ ձեռքը հասուց։

Առ երջանիկ վարդապետն Գէորգ, երեք համառօտ թուղթեր։

Հրեշտակաց ներբող. — Եկեղեցւոյ գլխաւոր վարդապետ մը, Դիոնեսիոս Արիսպագացին հրեշտակաց վրայ գովեստ մը գրած է։ Նոյն նիւթին վրայ գրեց նաեւ

Շնորհալին գեղեցիկ ներբողեան մը, Արեոպագացւոյն հետեւելով, և շատ անգամ անոր իմաստները մէջ բերելով։ Ասկէց է՝ Շնորհալւոյն միայն աս գրուածին մէջ երեւցած յունաբանութիւնը և խրթնութիւնը։ Ներբողէն զատ՝ ստանաւոր գովեստ մըն ալ շարագրած է Շնորհալին, ու երկուքն ալ ի Հռոմկլայ երկասիրած, Հայոց ՈԺԱ թուականին, իր եղբօրը, Գրիգորիս կաթողիկոսին խնդրանօք։

Մեկնութիւն «Բարձրացուցէք»ի. — Դաւիթ Անյաղթ սուրբ խաչին վրայ ներբող մը շարագրած է, «Բարձրացուցէք զտէր Աստուած մեր» սկզբնաւորութեամբ։ Բայց որովհետեւ ոճը իր խրթնութեամբ շատերուն անիմանալի եղած էր, ուստի Հաղբատայ վանից առաջնորդ Վարդան վարդապետ խնդրեց ի Շնորհալւոյն որ այն ճառին մեկնութիւնն ընէ. և թէ ինչ առթով եղած է անոր գրութիւնը։ Շնորհալին ալ կատարեց խնդիրը։

Մեկնութիւն Մատթէի. — Մատթէոս աւետարանագրին մեկնութեան ալ ձեռք զարկած էր Շնորհալին՝ իր կենաց վերջին տարիները, և չկրցաւ լմնցնել, կէս մը օրհասը վրան հասնելով, կէս մըն ալ իր հայրապետական հոգոց պատճառաւ։ Ընդհանրապէս Ոսկեբերանի հետեւող եղած է իր այս աշխատասիրութեան մէջ. այն ոսկի բերանին բըղխածն՝ իր արծաթափայլ բանիւ և գրչով յերիւրած յարմարած է հասարակաց մտաց դիւրահաս, և միջակ չափով. իբրեւ անարուեստ արուեստով մը, որ սքանչելի պարզութեան հետ՝ մտաց յագուրդ կու տայ և սրտի հանգիստ։ Այս Շնորհալւոյն գլխաւոր գործերէն մէկն է, և ալ աւելի պիտի ըլլար, եթէ նոյն ոճով շարունակուած մինչեւ ի վերջ աւետարանին՝ մեզի հասած ըլլար. սակայն իր գրածն ու մեկնածը մինչեւ 17 համար է գլխոյն Մատթէոսի հասած և հոն դադրած է. և այսպէս գտաւ զայն հարիւր տարի վերջը՝ Կիրակոս պատմիչ, որ «ոչ գիտեմ, կ՚ըսէ, թէ վասն ինչ պատճառի խափան եղեւ», շարունակութիւն մեկնութեանն. յիսուն տարի ետքն ալ (յամին

1316) մեծ բանասէրն Յովհաննէս Երզնկայեցի շատ քննեց՝ բայց չկրցաւ ստուգել թէ ինչո՞ւ անկատար մնացեր էր Շնորհալւոյն երկասիրութիւնը. և թէպէտ «ոմանք զմահն ասացին խափանումն, և այլք զհոգ հայրապետական աթոռոյն, և կէսք՝ թէ գրեաց և չէ ի միջի, բայց սոքա ինձ ոչ եղեն հաւանելի» կ՚ըսէ. և իր առանձին կարծիքը չի յայտներ. բայց միայն կ՚իմացնէ որ իրմէ առաջ ոմանք ձեռք զարկեր էին շարունակելու Շնորհալւոյ սկսածը. «սակայն ոչ էր կարգաւոր որպէս սորայն»[1]։ Յիշատակարանի մը մէջ ալ կը կարդանք. «... Արդ թէպէտ ամենայն մեկնիչքն հարքն սուրբ և երանելիք, որպէս Ոսկիբերանն և Եփրեմ, և այլք բազումք եղեն մեկնիչք սորայ աւետարանիս, ոմն յերկար և ոմն կարճ. բայց ոչ լինէր պիտանի յաղագս ձանձրութեան ընթերցողաց։ Զայս տեսեալ երանեալ հեզահոգի պատրիարգն Հայոց տէր Ներսէս Կլայեցին, հարկեալ ի սրբոց վարդապետաց՝ սկիզբն արար հաւաքումն մեկնութեանն սորա, և ոչ կարաց աւարտել. վասն զի հանդիստադիրն կոչեաց զնա ի հանգիստն անվախճան... և էր այս մեծ աղէտ տարակուսանաց բանասիրաց անձանց»։

Մեկնութիւն Կաթուղիկեայց. — Նոյնպիսի ոճով և լեզուով, բայց աւելի համառօտութեամբ մեկնած է Շնորհալին նաեւ եօթն կաթուղիկեայ թղթերը, հետեւելով Ոսկեբերանի, Կիւրղի, Բարսղի, Գրիգորեանց և այլոց վարդապետաց։ Գաղափարողաց մէկը այսպէս կը գրուատէ Շնորհալւոյն այս գրուածքը. «Ոմն ի սրբազանից առաջնորդաց՝ հայրապետական արժանացեալ շնորհի, և վարդապետական վիճակեալ աստիճանի՝ տէր Ներսէս, մականուամբ Կլայեցի, հմտասիրացն հետեւելով պարուց, երկասիրաբար ընթերցմամբ աշխատեալ ի մատեան հոգեկիր արանցն, աստուածազան գլխաւորաց առաքելոցն դասուց, մանրամասն խուզմամբ եղեալ առընթեր զլուծումն տեսութեան առաքելոցն, գեղեցկանկար բառիւք, համառօտ յարմարութեամբ, ըստ կարգի երջանկացն դասուց պուետիկոսաց սըրբոց, ի հրահանգ կրթութեան եկեղեցւոյ պաշտաման»[1]։

---

[1] Շնորհալի և Պարագայ իւր, 118.

Գրչագիր մը հետեւեալ խորագիրը կը դնէ այս գըրուածքին. «Տեառն Ներսեսի Հայոց կաթուղիկոսի արարեալ Մեկնութիւն առաքելական բանիցն». և ի վերջ գրոցն կը յաւելու. «Առաջին գլուխ ընդդէմ նոցա՝ որք ասեն ոչ գոլ Աստուած։ Երկրորդ ճառ՝ թէ մի է Աստուած. (Երրորդը չկայ)։ Չորրորդ գլուխ ընդդէմ կռապաշտիցն։ Գլուխ հինգերորդ ընդդէմ Մանեայ»։

* * *

Շնորհալւոյն մանր երկասիրութիւնները. — Ասոնց մէջ առաջին կրնայ համարուիլ «Հաւատով խոստովանիմ» հանրածանօթ գերազանց աղօթքը. քսանեւչորս տուն՝ օրուան նոյնչափ ժամուց համար՝ ամէն հասակի ու պիտոյից յարմար աղօթք մը, որ շատ անգամ հրատարակուած է ոչ միայն հայերէն՝ այլ նաեւ 36 լեզուով տպուած է Վենետիկ Ս. Ղազարու վանքին մէջ։

Շնորհալւոյն երկասիրածն է նաեւ սրբոյն Սարգսի վըկայաբանութիւնը։ Հաղբատայ ուխտին առաջնորդ Գէորգ վարդապետը թուղթ մը գրեց առ Ներսէս, փափաքելով սրբոյն Սարգսի հարազատ վկայաբանութիւնն ունենալ, ան ալ Միխայէլ անունով ասորի քահանայի մը յանձնեց, որպէս զի ասորական բնագրէն թարգմանէ ի հայ. բայց որովհետեւ թարգմանիչը՝ հայկական լեզուի հարկաւոր հմտութիւնը չունէր, անոր համար Շնորհալին՝ անոր անհարթ ոճը մաքուր և ընտիր հայերէնի վերածեց, իր եպիսկոպոսութեան ժամանակ։ Կը վկայէ և յիշատակարանն. «Թարգմանեցաւ ճառս յասորւոցն ի մերս ի ձեռն Միխայէլի ուրումն կրօնաւորի քահանայի ասորւոյ, և յարմարեցաւ ըստ կարի մերում լեզուի չարագրութեամբ ի Ներսիսէ եպիսկոպոսէ յեղբօրէ կաթուղիկոսի Հայոց Գրիգորիսի, ի թուաբերութեանս Հայոց ՈԷ»։

Նոյն աշխատանքն ունեցաւ նաեւ Ոսկեբերանի Ներբողին վրայ, զոր խօսած էր ի պատիւ սրբոյ Լուսաւորչին. և զոր կ՚ակնարկեն՝ Շնորհալւոյն ինքնագիր յիշատակարանին հետեւեալ խօսքերը. «Ի թուականիս ՇԳ, թարգմանեցաւ ճառս ի յունականէն ի մերս. ի ձեռն Աբրահամու գրամատիկոսի, ի հին և յեղծ օրինակաց. իսկ յարմարեցաւ ըստ բանից դպրութեան և բառից՝ յիմոյ նուաստութեան Ներսիսի, հրամանաւ տեառն իմոյ և հարազատի՝ Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի»։

Խրատ ժամերգութեան. — Շնորհալւոյն ժամանակ եկեղեցական արարողութեանց մէջ այլ և այլ նորաձեւութիւններ ու թերութիւնք մտած էին, զորս հարկ էր ուղղել։ Եւ որովհետեւ Մաքենոցաց ու Թեղենեաց վանքերուն մէջ աւելի հաւատարմութեամբ կը պահուէին այն արարողութիւնք, Շնորհալին հմտացաւ անոնց, և ըստ այնմ իրենց առաջին ձեւին վերածելով՝ մանաւոր խրատ մ՚ալ աւանդեց անոնց զգուշաւոր պահպանութեան համար։ Գրուածքին խորագիրն է. «Կարգաւորութիւնք եկեղեցւոյ և արարողութիւնք ժամատեղեաց, մինչեւ ցիններորդ ժամն, տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսի, որ ետ բերել ի մեծ ուխտէն Մաքենեաց, և զպակասն ելից և զսխալն ուղղեաց»։

---

[1] Ուրիշ յիշատակագիր մ՚ալ կ՚աւանդէ թէ Գրիգորիս կաթուղիկոս, զոր «մեծ գիտնական և վսեմափայլ առաջնորդ» կը կոչէ, մանաւոր նամակով ու թախանձանօք հրաւիրեց ի Հռոմկլայ՝ Տիրացու Ստեփանոս անունով ծերունի քահանայ մը, որուն իմաստութեան և փութոյն վրայ մեծ համբաւ կը ցուցնէր կաթուղիկոսը. Ծերունին իր հոգեւոր տիրոջ հրամանին չկարենալով դէմ կենալ, յանձն առաւ այն ճանապարհորդութիւնը, հետը առնելով նաև Յակոբ անունով ճարտար ընդօրինակողը. հոն տեսնելով Շնորհալւոյն աշխատասիրութեամբ մեկնուած կաթուղիկեայ թղթերը, հրամայեց Յակովբայ որ անոնց զաղափարը առնէ։ Եւ այդ օրինակը կը գտնուի Մխիթարեանց մատենադարանն ի Վենետիկ.

Հետևեալ քանի մը տողքն յայտարարք են իր ամբիծ և եռանդուն սրտին և երկիւղած բարեպաշտութեան.

« Նորոգելոյս ի քէն, Յիսուս,
Եւ ի մեղաց խաւարելոյս
Երբեմըն քեզ հարսնացելոյս
Եւ այժմ ի քէն այրիցելոյս.
Բարունաքար ծաղկեա յիս լոյս
Եւ աճեցո զբարեացըն բոյս,
Սիրել զփեսայդ իմոյ հոգւոյս
Ըստ պարագրեալ տասին երգոյս,
Երանուհւոյ հարսին լուսոյ
Լինել նըման սուրբ աղաւնոյս
Արբիլ մաքուր ըստ նըմանոյս,
Ի կրից մեղաց ախտացելոյս։
Ի քեզ հըպիլ ինձ մեռելոյս
Եւ կեանս առնուլ տարագրելոյս
Երեւելի յայս կենցաղոյս
Յիմանալիդ ծագիլ ի լոյս »։

⁂

Շնորհալի քերթող. – Զանազան քերթողական երկասիրութիւններ թողած է մեզի Շնորհալին։ Բանաստեղծութիւնը որ քիչ յարգ ու յաջողութիւն գտած է մեր հին գրութեանց պատմութեան մէջ, Ներսէսի գրչովը աւելի ծանօթացած և հաստատուն կանոնի մը մէջ մտնելու բաղդն ունեցեր է. և թէպէտ աշխոյժն ու խանդը, որոնցմով քերթողական լեզուն սրտաշարժ ու ազդու կ'ըլլայ, նուազ է ի Շնորհալին քան թէ ի Նարեկացին և ի Մագիստրոս, բայց լեզուի գեղեցկութիւնը, իմաստից փափկութիւնն և հաստատուն կանոն մը՝ աւելի կը տեսնուի իր գրուածոց մէջ։ Մեծ ու գլխաւոր թերութիւն մը՝ յանգի միակերպութիւնն է, զոր յԱրաբացւոց սորվելով՝ սկսած էր գործածել նաև Մագիստրոս. բայց աւելի նմանաձայնութիւն և միակերպութիւն մը տուաւ անոր Շնորհալին, և անով թերևս քիչ մը տաղտկալի ըրաւ իւր ոճը։ Սակայն և այնպէս յարգի են Ներսէսի այս գրուածները. վասն զի իրեն ժամանակը՝ բանաստեղծութեան դար չէր. ու երբ բոլոր աշխարհք զինուց և աշխարհակալութեանց զբաղած՝ արհամարհոտ մոռացութեան մը դատապարտած էր զքնար, անոր ձայնը նուաղ՝ բայց ախորժական եղանակով Հայաստանի մէջ կը հնչեցնէր Շնորհալին. ու կը լսեցնէր աստուածային պաշտամանց մէջ՝ իրեն սիրելի շարականներովը, և ժողովրդեան համար շարագրած ընտիր վիպասանութիւններովը, տաղերովը և սրտի ու մտքի հետ խօսող՝ զանազան երգերով և տաղաչափութեամբք. մինչև Հռոմկլայի բերդին պահպանութիւնն ընող զինուորք, պատերազմի փողոց ահաւոր ձայներէն լսելով, ու հայրենեաց ապահովութեան համար հսկելու սահմանուած գիշերային ժամերը՝ անոր շարագրած աստուածազգեցիկ երգերովը կ'անցնէին[1]։

Յետին դարուց ազգային քերթող մը, ի վերջ իր հանելուկներուն, ակնարկելով զՇնորհալի՝ կ'ըսէ.

« Իշխան մի կայր յիկեղեցի,
Ի ի ծայրագոյն աստիճանի.
Քան զոր չեղեւ ոք աւելի
Երգիչ տաղի և շարականի »։

Այս քերթողական երկասիրութեանց մէջ ամենէն նըշանաւորն է

Եղեսիոյ ողբը. — Եդեսիա՝ Միջագետաց շահաստան քաղաքը, Աբգարու թագաւորութեան աթոռը, և Քրիստոսի անձեռագործ դաստառակին պատճառաւ Նուիրական սրբավայրը, 1144 թուականին՝ Հագարացւոց Զանգի ամիրային զինուց չկարենալով դիմանալ, ստիպուեր էր իր անկախութեանն ու հաւատոց թշնամին՝ իր պարսպաց մէջ ընդունիլ։ Ահաւոր և դժնդակ կոտորած և աւերմունք մը՝ կարապետ ու հետեւանք եղան այս յաղթութեան. բնակչաց շատը՝ անգութ և անյագ սուսերաց մատնուեցան, եկեղեցիք կործանեցան, ու քաղաքը աւարեցաւ, և արհաւրօք և արեամբ ծածկուեցաւ, այն՝ որ քերթողին գեղեցիկ ստորագրութեամբ ու բարառնութեամբ՝

---

[1] « Արար նա երգս և ուսոյց խաղ այնոցիկ որք պահէին զբերդն (Հռոմկլայու), զի փոխանակ վայրապար ձայնից զայն ասասցեն, որոյ սկիզբն է ի սաղմոսէն Դաւթի. Յիշեցի ի գիշերի զանուն քոյ տէր, և այսպէս խորհրդաբար ըստ կարգի, Զարթիք փառք իմ, որ այժմ ասի յեկեղեցի՝ ի ժամ գիշերային պաշտաման ». Կիրակոս Գանձակեցի։

«Գետոց նման վտակ հոսէր,
Ըզբուրաստանս ոռոգանէր.
Ծովն ի մէջի իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովն ծիծաղէր...
Սաղարթաբեր ծառովք ծաղկէր
Առատագոյն պտղաւէտէր.
Տերեւախիտ հեզիկ շարժէր,
Հոտ անմահից յիւրմէ բուրէր
Նարդոս քրքում ինձ ընծիւղէր,
Վարդ մանիշակ վերաբերէր,
Առաւօտուն ցօղն իջանէր,
Ոսկէնըման ճաճանչ փայլէր»։

Այս սրտաճմլիկ լուրը հասաւ ի Հայաստան, և անոնց թշուառութեան աղէտք՝ ի գութ և ի կարեկցութիւն շարժեցին զամենքը. յորոց Ապիրատ իշխանն՝ Շնորհալւոյ եղբօրորդին՝ փափաքելով այն ցաւալից կործանման ու թշնամեաց անգթութեան տխուր յիշատակը կենդանի պահել ապագայից մտքին ու սրտին մէջ, խնդրեց ի Ներսէսէ որ իրեն բանաստեղծական աշխոյժը բանեցնէ այս նիւթին վրայ։ Անոր խնդրանացն արգասիք է Եդեսիոյ ողբը, 1053 տուն քերթուած։

Չորս տպագրութիւն ունեցած է այս քերթուածը. մէկն ի Մատրաս (1810). ի Փարիզ հանդերձ ծանօթութեամբք ի Սէն-Մարթենէ ի 1828. հետեւեալ տարին ալ ի Թիֆլիզ. ի Կալկաթա (1832)։ Առաջին կէսն 1358 տող՝ Տիւլօրիէ ընծայեց գաղղիական թարգմանութեամբ իր Recueil des Croisades երկասիրութեան մէջ։

⁂

Յիսուս որդի. — Հին և Նոր կտակարանի համառօտ պատմութիւնն է այս ընտիր և սրտաշարժ ոտանաւոր քերթողական երկասիրութիւնը։ Երեք մասն բաժնուած է, և ընդհանրապէս զղջական աղօթքի և մաղթանաց ձեւով և լեզուով շարադրուած։ Կամաւ քերթողաբար գրած է այս երկասիրութիւնը Շնորհալին, որպէս զի ընթերցողաց ձանձրութեան առիթ չտայ. այլ մանաւանդ զուարճութեամբ կարդալու, և այն՝ իրենց հոգեւոր շահուն համար։ Հայոց Ո (1151) թուականին շարադրուած է այս գիրքը, և յիշատակարանին մէջ կը դնէ հեղինակը իւր ծնողքը և Վասիլ եղբայրը, և զքոյրն իւր Մարիամ ու անոր Վահրամ որդին։ Եւրոպացի հայագիտաց մէկը, Յակոբ Վիլլոտ, մատեան արդարեւ աստուածային կը կոչէ այդ գիրքը։

Նման երկասիրութիւն մըն է նաեւ Բան հաւատոյ կոչուածը։ Հայոց վեցհարիւր թուականին՝ երբ Յունաց իշխանութիւնը կը տկարանար, և անոր հակառակամարտ Հագարացւոց զօրութիւն մը բոլոր աշխարհին կը տիրապետէր, այն նեղութեան ժամանակ Գրիգորիս կաթուղիկոս՝ Ծովք գիւղէն ելլելով՝ Հռոմկլայի ամրոցը կ'ապաւինէր, իրեն ընկերակից ունենալով եղբայրը՝ Շնորհալին։ Այն առանձնութեան մէջ շարագրեր է Ներսէս այս խրատական ու ջերմեռանդ գրուածը, նուիրելով դարձեալ իւր եղբարցը և ծնողաց և համատոհմից յիշատակին։

Յաղագս երկնից և զարդուց նոցա. Մխիթար բժշկապետ և աստեղագէտ՝ Հերացին, խնդրեց ի Ներսէսէ որ երկնաւոր զարդուց վրայ ոտանաւոր քերթութիւն մը յօրինէ։ Այս վախճանաւ գրուած են երկու չափաբերական գրուածները, յորոց երկրորդին տանց սկզբնագիրքն կը յօդեն, «Մխիթար բժիշկ, ընկալ ի Ներսիսէ զայս բան»։

Վիպասանութիւն. — Հայոց համառօտ պատմութիւնը, ութոտնեան ոտանաւորի վրայ տանուած, հեղինակին պատանեկութեան գրուածքն է. անոր համար ոչ ուրիշ քերթողական երկասիրութեանց աշխոյժը և ոչ ալ արուեստը կ'երեւայ անոր մէջ. Թէպէտ և իբրեւ պատմութիւն՝ ունի իրեն մասնաւոր արժէքն ու պատուականութիւնը։

Շնորհալին ունի նաեւ ուրիշ այլ և այլ մանր ոտանաւոր գրուածներ, որոնց միայն անուանց յիշատակութեամբը գոհ կ'ըլլանք. և են «Իմ եղական» և «Միշտ էիր», զորս դարձեալ ի խնդրոյ Հերայեւոյն երգած է. «Ներբող սրբոյ խաչին», որ Անյաղթին՝ նոյն նիւթին վրայ գրած ճառին ոտանաւոր յարմարութիւն է. «Մաղթանք առ սուրբ հրեշտակս», ի խնդրոյ Գրիգորիսի կաթուղիկոսի. «Ի Սաղմոսն, Յիշատակարան գրոցն Սաղմոսի», այլ և այլ տաղեր, թուղթեր, խրատներ ու հանելուկներ։ Ասոնցմէ զատ են չարականները։

Այս սուրբ և սիրելի հայրապետին բաւական ընդարձակ կենսագրութիւն մ'ալ հասած է մինչեւ առ մեզ՝ իր անմահախառն մահուանէն քիչ ետքը գրուած, հետեւեալ խորագրով. «Պատմութիւն վարուց սրբոյն Ներսեսի կաթուղիկոսի Հայոց և տիեզերալոյս իմաստասիրի՝ սկսեալ ի նախնեաց անտի նորին»։ Մեզի անուամբն անծանօթ հեղինակը գրած է այս ընտիր երկասիրութիւնը «ի հրամանէ և ի յորդորմանէ սուրբ վարդապետին Յովհաննու... ի ժամանակս քրիստոսապսակեալ բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթումոյ յաշխարհիս Կիւլիկեցւոց, որ երրորդ է ի Լեւոնէ բարեպաշտէ առաջնոյ արքայէ այսմ նահանգի»։ Հրատարակուած է ի Վենետիկ (1854) ի շարս Հայկական Սոփերաց (Հատոր ԺԴ)։

Ուրիշ յիշատակարան մը՝ գրչագրողի վարուց սրբոյս «Գրեալ ի թուականութեանս Հայոց ՉԻԲ. զկնի հարիւր և մի ամի վերափոխման սրբոյն Ներսիսի ի հրամանէ հօր Ստեփաննոսի աստուածազարդ ծերոյ և սպասաւորի սուրբ ուխտիս Ակնոց անապատիս չարագրեցաւ պատմութիւն սուրբ հայրապետին Ներսիսի և իւրոց նախնեացն՝ ճշմարտաճառ և անսուտ պատմութեամբ, ի ժամանակս Քրիստոսապսակեալ բարեպաշտ թագաւորին Հայոց Լեւոնի որդւոյ թագաւորին Հեթմոյ, յաշխարհիս կիլիկեցւոց»։

Շնորհալի հայրապետին գրուածոց բազմաթիւ տպագրութեանց և թարգմանութեանց վրայ տես ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ յէջ 342-344. 456-462, 518-528. Իրեն եկեղեցական և մատենագրական վարուց և գործունեայ վաստակոց վրայ լիուլի ու հետաքննական տեղեկութիւն առնել փափաքողք՝ կը գտնեն զայն մեծ հմտութեամբ ամփոփուած Շնորհալի և Պարագայ իւր կոչուած Ալիշան Հ. Ղեւոնդ վարդապետի երկասիրութեան մէջ՝ հրատարակեալ ի Ս. Ղազար Վենետկոյ (1873).

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Իգնատիոս և իր աշակերտակիցք։ — Պահլաւունի կաթողիկոսին առաջարկութիւնը։ — Ղուկաս աւետարանագրի մեկնութիւն։ — Իգնատիոսի ոճը, լեզուն և հմտութիւնն այս երկասիրութեան մէջ։ — Բնագրին տպագրութիւնը։

Գրիգորի կաթուղիկոսի Պահլաւունւոյ և Ներսիսի Շնորհալւոյ և Սարգիս վարդապետին աշակերտակիցն էր Իգնատիոս. որ փառօք իւր ուսումնական ընթացքը կատարելով Կարմիր վանքին մէջ, Սեաւ լերան Շափիրին անապատը *կամ վանքն առանձնացաւ։ Ու երբ խոնարհութեամբ կը ջանար ինքզինքը այն լռութեան մէջ ծածկել, Պահլաւունի կաթուղիկոսին հետազօտ աչքերը գտան զինքը, և անոր հմուտ, վարժ և աստուածաբան գրչին յանձնեց Ղուկասու աւետարանչին մեկնութիւն մը շարագրել։ Իսկ մտաց չափաւորութիւնը և խօսքին անբաւականութիւնը մէջ բերելով՝ հրաժարեցաւ Իգնատիոս. և երբ հայրապետը իր ամէն ջանքովը և յորդորանքներովը չկրցաւ զինքը համոզել, օր մը տեսլեան մէջ տեսաւ Իգնատիոս լուսաւոր և գեղեցիկ տուն մը՝ յորում ժողվուած էին ամենայն վարդապետք, և ուզեց որ ինքն ալ մտնէ մէջերնին. բայց անոնք կ'արգելուին ու չէին թողուր, որովհետեւ չուզեցիր, կ'ըսէին, աւետարանի մեկնութեան թարգմանութիւնը յանձն առնուլ, հօս մեզի հետ մասն և բաժին չունիս։ Այս տեսիլքէն ինքնիրեն եկաւ Իգնատիոս, և իր տկարութիւնը Աստուծոյ առջեւը դնելով՝ իրմէ զօրութիւն խնդրեց, և սկսաւ այս գրուածքս շարագրել։ Հաւանական կ'երեւնայ թէ 1146ին արդէն աւարտած ըլլայ այս երկասիրութիւնը, վասն զի Կունդ Սարգիս որ նոյն թուականին շարագրած է համանուն համառօտ երկասիրութիւնը՝ բաց յայլոց կը յիշէ նաեւ զԻգնատիոս։*

Վարպետ գրուածքի մը ամէն կարեւոր հանգամանքը պահած է Իգնատիոս իր երկասիրութեան մէջ. ընտիր ոճ, գեղեցիկ լեզու և մեծ հմտութիւն սրբազան գրոց։ Այս վերջինիս նկատմամբ՝ որ աստուածաբանական և մեկնողական գրքի մը համար ամենահարկաւոր է, ջանացած է Իգնատիոս յոյն եկեղեցւոյ հարց գրուածոց կատարեալ հմտութեամբ ձեռք զարնել այս գրուածքին, մանաւանդ Ոսկեբերանի։ Միջին ոճ մը բռնած է հեղինակս. ոչ խիստ երկայն՝ որ բառից շատութեան մէջ իմաստները կորսուին, և ոչ այնչափ համառօտ՝ որ սուրբ գրոց մեկնութեան հարկաւոր տեղիքն անբացատրելի մնան։ Ասիկայ է իրեն յատուկ ճարտարութիւնը. որով շատ անգամ այլոց երկայն բարակ բացատրածները՝ ինքը համառօտիւ քիչ խօսքի մէջ ամփոփելով կը գրուցէ. և երբեմն ալ այնպիսի վայելուչ կերպով կ'ընդլայնէ խօսքը՝ որ ամենեւին տաղտկութիւն չի բերեր ընթերցողին։ Լեզուի նկատմամբ ալ՝ ընտիր և գեղեցիկ շարագրութիւն մ'ունի, պարզ և հաճոյական։

Ընտիր գրչագիր մը երկասիրութեանս կը գտնուի յԵրուսաղէմ գրեալ ի ՊԼ (= 1383) «ի մայրաքաղաքիս ընդ ափն Նաւագնաց ծովիս լատին ազգաց իշխանութեան, ընդ հովանեաւ առ ոտս Սուրբ Յակոբայ ի յանտիպեկլի տեղն»։

Այս գրուածքս կրկին անգամ տպագրուած է ի Կոստանդնուպօլիս ի 1735 և ի 1824.

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Սարգիս Շնորհալի։ – Մեկնութիւն կաթողիկեայ թղթոց։ – Անոր համառօտութիւնը։ — Ոճը և լեզուն։ — Կարապետ վարդապետ։ – Սարգսի անծանօթ երկասիրութիւնը։

Իգնատիոսի և անոր ընկերաց աշակերտակից էր Սարգիս, անոնց հետ մէկտեղ կրթուած Ստեփանոսի խնամքին տակ ի Կարմիր վանս։ Հասակն առնելէն ետքը՝ առանձնութեան սիրով՝ Սեաւ լերանց վրայ եղող Քարաշիթու վանքը քաշուեցաւ։ Հոն բոլորովին հոգեւոր և ուսումնական կենաց նուիրուելով, սուրբ հարց գրոց ընթերցման պարապեցաւ, և մանաւանդ Ոսկեբերանի հրաշալի ճառերուն։ Այն ընթերցումը՝ փափաք մը վառեց իր սրտին մէջ՝ նոյնպիսի ոճով ու սրտով՝ Կաթուղիկեայց կոչուած եօթն առաքելական թղթոց մեկնութիւնն ընելու. և իր այս յօժարութեան գըլ-

խաւոր պատճառն այն եղաւ որ նման երկասիրութիւն մը չէր գտած ազգային մատենագրութեան մէջ։

Գրութեան թուականն 1156ին կ'երեւնայ, ինչպէս ինքն ալ կ'ակնարկէ. իսկ համառօտութիւնը, զոր պիտի յիշենք, տաս տարի աւելի կրտսերագոյն է ժամանակաւ. «Հայ թուականն, կ'ըսէ, յայնմ ամի յորժամ կատարեցի զհամառօտս. յիշատակ ինձ եւ իմոյն, եւ ի վարժումն մանկանց նորոյ առագաստի մօրս մերոյ վերինն Երուսաղեմի, հնգետասան էր ընդ վեց հարիւրի»։ Տեղ մ'ալ կը յիշեցնէ թէ ծերութեան ատենը յօրինած է. «Աղաչելով, կ'ըսէ, վասն իմ ծերոյս Սարգսի զՏէր»։

Ինքնագիր յիշատակարանք Սարգսի յիւրագիր համառօտ մեկնութեան. (1166) «Յիշատակ անարժան գրչիս Սարգսի, արտագրութիւն ճառիցս այսոցիկ»։

«... Նական զկրկին աշխատող գրոցս ի յերկս բանք մեկնութեան Նախագունիցն, եւ ապա ի համառօտել ըգպիտանացուն ընթերցաւղ լուսամիտ համբակացդ, ուսումնասիրացն քրիստոսասիրաց. զորս աղաչեմ սիրով հոգւոյն եւ մաղթեմ նախանձելով, մի անտես առնել զերկայն ժամանակաց աշխատութիւնս իմ. այլ սրբամատոյց աղաւթիւք յիշել միշտ առաջի յուսոյն մերոյ Քրիստոսի...»։

«Ով ընթերցասէր մանկունք եկեղեցւոյ, ցանկացողք վարդապետական իմաստից, որք հանդիպիք այսմ մատենի աստուածային գանձուս, եւ ընթեռնոյք եւ զուգուտն ձեր գտանէք ի նմա եւ կամ գաղափար առեալ գրէք, զանձն իմ եղկելի զՍարգսի կրտսերոյ եւ մեղապարտի, որ կրկին աշխատեցայ ի սմա վասն շահի ձեր. յիշեցէք առաջի Քրիստոսի աղաչեմ»...

«Եթէ արժանի համարիք զաշխատութիւնս իմ յիշատակի որ ընթեռնոյքդ, ահա կարաւտ եմ յոյժ եւ արտասուաւք աղաչեմ եւ հեծեծանաւք մաղթեմ, եւ հոգւովս խնդրեմ եւ սրտիւ հայցեմ եւ բաղձանաւք ի ձեզ նայիմ. եւ որք յիշէքդ՝ աղաչելով վասն իմ ծերոյս Սարգսի զՏէր»...։

«ԶՍարգիս մեղապարտ ծառայ Աստուծոյ եւ զանպէտ կրաւնաւոր յիշեցէք ի Քրիստոս աղաչեմ»...

«Յիսուս Քրիստոս, լոյս ճշմարիտ, սուրբ Հաւր Որդի. անոխակալութեամբ քո եւ մարդասիրութեամբ ողորմեա մեղապարտ ծառայի քոյ Սարգսի կրսերոյ եւ ողորմելւոյ. եւ որք ընթեռնոյքդ՝ եւ լուսաւորիք մտաւք, եւ որ լսէքդ եւ մխիթարիք սրտիւ՝ աղաչելով ասացէք, այո՛, ամէն եղիցի, եղիցի»։

«Վասն որոյ եւ իմ աղաչանք են առ ձեզ եղբարք, սիրելիք Աստուծոյ, եւ սիրեցեալք ի Քրիստոսէ, եւ արտասուաւք պաղատանք. չառնել անտես զերկայն ժամանակաց աշխատութիւնս իմ յերկս վաստակոյ բանիս. այլ՝ ընկալարուք ձեզ՝ ի փչոց վարդ եւ ի տատասկէ թուզ, եւ ի մորենոյ խաղող, եւ ի խորաձորոյն՝ զակնս պատուական, եւ ի զաղտակրայէ՝ զմարգարիտս գեղեցիկս։ Եւ ինձ հիքոյս՝ տուք վարձս բարեաց, զարտասուս եւ զողբս հառաչանաց, զաղաւթս պաղատանաց, զթողութիւն մեղաց հայցելով ինձ եղկելւոյս Սարգսի յապէնիաց Տեառնէն եւ յամենեցունց արարչէն... Հայ թուականն յայնմ ամի յորժամ կատարեցի զհամառաւտս յիշատակ ինձ եւ իմոցն, եւ ի վարժումն մանկանց նորոյ առագաստի մաւրս մերոյ վերին Երուսաղեմի, ԺԵ էր ընդ վեցհարիւրի»։

⁂

Մեկնողական գրքի մը ամէն կարեւոր յատկութիւններն ունի Սարգսի այս գրուածքը. ողջամիտ վարդապետութիւն, եռանդուն լեզու եւ բաւական սուր քննադատութիւն մը. որոնցմով արժանապէս յարգ գտած է։ Ընդհանրապէս հետեւող է Գրիգորի աստուածաբանի, Կիւրղի, Բարսղի եւ Եփրեմի, եւ ասոնցմէ ամենէն աւելի սրբոյն Ոսկեբերանի։ Այս նմանողութիւնը՝ որ ըստ ինքեան գովելի է, եթէ չափուն մէջ չմնայ՝ կրնայ ունենալ իրեն թերութիւնները։

Բայց Սարգիս այսպիսի հետեւակ գրչաց կարգէն չէ։ Անշուշտ մեծապէս սքանչանալով Ոսկեբերանի աննման հանճարոյն և սքանչելի գրչին վրայ և չկարենալով անոր հաւասար լեզու մը գործածել, շատ տեղ իրեն գուրգուածքներն, ճարտասանական ձեւերն և աշխոյժը, երբեմն նաեւ շարագրութեանն ալ եղանակը գործածեր է։ Ասկէց է այն նմանութիւնը որ այս երկու գրքերուն մէջ կը տեսնուի, մանաւանդ յորդորակաց մէջ։

Ուստի իբրեւ մատենագիր՝ ընդհանրապէս այն գեղեցիկ յատկութիւններն ունի, թէպէտ և ոչ հաւասար աստիճանաւ, որ բոլոր աշխարհի սիրելի և զարմանալի ըրած են Ոսկեբերան հայրապետին երկասիրութիւնները։ Պերճախօս լեզու մը կը բանեցնէ, ու իր օրինակագրին պէս՝ ամէն հնարք և ջանք կը գործածէ՝ մարդկային սրտից մէջ արմատացած կրքերն անհետ ընելու. անոր հակառակ՝ անոյշ ու փափուկ լեզու մը կը բանեցնէ առաքինութիւնը գրուատելու և սիրելի ընելու համար։ Իր գլխաւոր թերութիւնը թերեւս քիչ մը երկարաբան ըլլալն է. և անտարակոյս շատ աւելի մեծ պատիւ ըրած կ'ըլլար թէ իրեն և թէ հայկական մատենագրութեան, թէ որ ասոր մէջ ալ ուզենար՝ կամ կարենար Ոսկեբերանի հետեւիլ։ Անշուշտ այս պակասութիւնս ինքն ալ իմանալով՝ ծերութեան ատենը, յամին 1166, համառօտութիւն մ'ալ գրեց նոյն մեկնութեան գրոց։

Ասկէ զատ է ուրիշ նման երկասիրութիւն մ'ալ՝ Կարապետ անունով վարդապետի մը ձեռքով եղած, ամենահամառօտ ոճով. որուն սկզբնատառքը իւր անունը կը յօդեն, և որ տպագրած է ի Կոստանդնուպոլիս (1744) բուն Սարգսի ընդարձակ երկասիրութեան հետ մէկտեղ։

⁂

Սարգսի կ'ընծայուի և Եսայեայ մարգարէութեան մեկնութիւն մը՝ որ մեզի անծանօթ է։ Դարձեալ գրուածք մը կայ Առաջաւորաց պահոց վրայ՝ ի խնդրոյ Գրիգորի Պահլաւունւոյ գրուած ի Սարգսէ։

Լեզուն՝ դասական համարուելու արժանացած է ի հըմտից, և իր դարուն ամէն որոշիչ և ընտիր յատկութիւններն ունի։ Ոչ Ե դարու ոսկեղէն լեզուն, և ոչ ալ անկման դարուց ոճոյն հետքը կամ նշմարանքը կ'երեւնայ այս մատենագրութեան մէջ. մանաւանդ թէ ինչպէս ԺԲ դարուս ուրիշ մատենագրաց շատը՝ աւելի առջինին մօտ է իր ոճովը, քան թէ երկրորդին։ Բայց որովհետեւ մի և նոյն ժամանակը՝ այլ և այլ տարբեր ազդեցութիւն կ'ընէ զանազան հանճարներու վրայ, ուստի և զարմանք չէ որ այս նկատմամբ աւելի ստորին մատենագիր կրնայ համարուիլ Սարգիս՝ քան զԻգնատիոս և քան ուրիշ իր աշակերտակիցները։

Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ներսէս Լամբրոնացի։ — Իր տոհմն ու ազնուականութիւնը։ — Վարուց համառօտութիւնը։ — Եպիսկոպոսութեան աստիճանի բարձրանալը։ — Երկասիրութիւնները։ — Ատենաբանութիւն։ — Մեկնութիւն սրբոց Պատարագի։ Մեկնողական ուրիշ գրուածները։ — Ճառք։ — Թուղթերը։ — Քերթուածք։ — Թարգմանութիւնք։ — Տպագրութիւնք իր գրուածոց։ — Ժամանակակից անձինք։ — Գրիգոր Գանձակեցի։ — Դաւիթ Ալաւկայ։ — Գրիգոր Ցեառուանց։ — Խաչատուր աշակերտ Լամբրոնացւոյ։ — Դաւիթ Քահանայ։

Ընտիր ու սիրելի անուն և հանճար մը, որուն լեզուով ու գրչով անհամեմատ՝ ու մեր դպրութեանց պատմութեան մէջ գրեթէ իրեն նմանը չունեցող անուանի անձ մը. թէպէտ և իւր այնքան բարեմասնութեամբք ալ՝ մանաւանդ թէ աւելի այն ձրիցն համար, աւելի վշտաց և նեղութեանց հանդիպած է՝ քան մխիթարութեան։

Ներսէս Լամբրոնացին, 1154ին ծնած է, բարեպաշտ և ազնուական տոհմէ. հայրը Օշին Լամբրոնի իշխանն էր որ դեռ զՆերսէս չստացած՝ իւր բարեպաշտ ամուսնոյն Շահանդխտոյ հետ, որ էր եղբօրդուստր Ն. Շնորհալւոյ, Աստուծոյ ուխտ ըրած էր՝ անոր սեղանոյն նուիրել իւր որդին։ Բայց զաւակն ունենալէն ետքը՝ անոր գեղեցիկ և վայելուչ կերպարանքը տեսնելով, կը զղջային ծնողքը իրենց ուխտին վրայ, ու այնպիսի կայտառ ու զուարթ մանկութեան մը տուած յոյսերէն չէին ուզեր զրկել զաշխարհ։

Սակայն տղուն մահառիթ հիւանդութեամբ մը զգաստացած՝ դարձեալ Աստուծոյ նուիրեցին, և մնացին հաւատարիմ իրենց խոստման։

Մանուկ հասակէն Սմբատ, — ասիկայ էր Լամբրոնացւոյն մկրտութեան անունը, — իւր ապագայ սրբութեան և գիտութեան հաւաստի ապացոյցները կու տար։ «Սխրալի ամենեցուն, — կ՚ըսէ իր գովաբանն Սկեւռացի, — մանկական տիոցն երեւէր յառաջադիմութիւն. մինչ զի ի մօտ եղեալ բազմաց, Զի՞նչ կամի լինել մանուկս՝ ասէին, զի ոչ զբօսմամբ ընդ հասակակիցսն, այլ ընդ կատարելոյն խրատու փարէր... ընդ աստուածայինս խօսելով օրէնս՝ զընդունայնաբանութիւնս ի բաց վարէր. խոկալով միշտ ի վերինս՝ զանց ստորնայնովքս առնէր. և ի խուն ժամանակի՝ ի յոլով աստուածային վարժիցն ի չափ հասանէր»։ Բիւզանդիոնի կայսրն, Անտիոքայ իշխողն՝ և այլք, իրենց ամէն հրապուրանքներովը և երկրաւոր փառաց և հաճոյից խոստմամբք չէին կրնար Աստուծոյ ճամբէն զինքը դարձնել. այլ իւր ծնողաց մեծութիւնն ու իշխանութիւնն արհամարհելով՝ Սկեւռայ վանքը կը քաշուէր, ու հոն առաքինութեամբը՝ հոգին, միտքն ալ ուսմամբ կը զարդարէր. ու քիչ ատենի մէջ զարմանալի յաջողմամբ՝ յոյն, լատին, եբրայական, և ուրիշ լեզուներ կը սորվէր։

Իւր հօրը Օշնի՝ մեռնելէն ետքը՝ անոր մասնաւոր կըտակաւն ու առանձին կամքով Ներսէս Սկեւռայ վանքին առաջնորդ պիտի ըլլար. բայց անիկայ հրաժարեցաւ այն պատուէն ու նոյն իսկ քահանայական աստիճանը գրեթէ բռնի իրեն ընդունել տուաւ Շնորհալին, որ աստուածաշնորհ ոգւով նկատելով անոր Աստուծոյ սեղանոյն սպասաւորութեամբ ազգին ընելիք բարիքը, բռնադատեց զինքն առ այն, առանց մտիկ ընելու անոր ընդդիմադարձութեանց, ու փախստեան և առանձնութեան տեղերէն զինքը գտնելով, ութեւտասնամեայ հասակին Աստուծոյ ընտիր պաշտօնեայ մը և ազգին մխիթարութեան առիթ մ՚ընծայեց։ Իր անունն ալ օծութեան հետ տուաւ անոր։

Տեսնենք զԼամբրոնացի ի կայսերական արքունիս Բիւզանդիոնի՝ երբ դեսպանութեամբ ի Թագաւորէն Հայոց Լեւոնէ գնաց ի քաղաքն՝ վասն կրօնական խնդրոց և վիճից: «Իբրև յառաջեաց սուրբն Ներսէս, – կ՚ըսէ պատմիչը, – առաջի Թագաւորին Յունաց և ետ ողջոյն, մատուցին զպատուէրս և զհրամանս և զԹուղթս տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսին և զԹագաւորին Հայոց Լեւոնի. և նա մեծաւ ուրախութեամբ և պատուով ընկալաւ զսուրբն Ներսէս և մեծարեաց մեծաւ պատուով: Իբրև յառաջեցին ի սուրբ եկեղեցին և արարին ատեան՝ Թագաւորն և պատրիարքն և այլ ամենայն գլխաւորք Յունաց ազգին, և ասէ Թագաւորն ցսուրբն Ներսէս, եթէ մարդս յերկուց է՝ ի հոգի և ի մարմին. և նախամեծար՝ հոգին է քան զմարմին. արդ վասն քոյ գրեալ է կաթողիկոսն և Թագաւորն թէ իմաստութեամբ կատարեալ ես. և զոր ինչ ի մեր մէջն թերութիւն կայ՝ դու լնուս: Եւ յետ պատարագին հանգուցեալ Թագաւորն և պատրիարքն: Խօսեցաւ Թագաւորն ընդ սուրբ Ներսէս և ասէ, թէ վկայեալ է կաթողիկոսն որ սուրբ և ճշմարիտ մարդ ես: Ետ պատասխանի և ասէ. Ճշմարտութիւնդ տուեալ տէրն իմ՝ որպէս զԱստուծոյ սուրբ և ընտրեալ հայրապետ. իսկ ես նուաստ եմ յամենայն ի Հայոց, և կամ առաջի ձեր. և զոր ինչ հարցանէք տամ պատասխանի. և թէ ի մէնջ թերութիւն կայ՝ մեր սուրբ եկեղեցին կատարեալ է ի փառս Աստուծոյ, ի հաւատս և ի գործս... Եւ էանց ի վերայ այսոցիկ աւուրք ինչ մինչև ի Հոգւոյն գալուստն. գնաց և պատրիարքն և Թագաւորն բազմախուռն ժողովով և եպիսկոպոսօք հանդերձ. կոչեցին և զսուրբն Ներսէս... և զօրացաւ սուրբն ի պատասխանիսն և հաճութեամբ ընկալաւ ամենայն ժողովն... Եւ յորժամ ել պատրիարքն, եկն ոմն իմաստասէր կրօնաւոր առ սուրբն Ներսէս. և ասէ թէ Առանձինն առեր գովութիւն ի մետրապոլտացն և ի կղերիկոսացն և յիշխանաց և առ հասարակ յամենայն ժողովրդոցն. զի որ ի մարտ ելանէ և ինքն գիտէ զիւր ռմբին թափ տալն, բայց հայեցողքն առաւել եւս տեսանեն, այսպէս և մեք զքո յաղթութիւնդ հակառակամարտին: Նոյնպէս և իշխանքն գային և ասէին զարմացմամբ թէ մին մարդ՝ զայսքան մեծ ժողովս յատին կացոյց. և ի հարցանելն և ի պատասխանելն սրբոյն Ներսիսի ափիբերան եղեն»:

⁂

Քսաներեք տարուան հասակին Տարսոն քաղաքին եպիսկոպոսութեան աստիճանն ալ ընդունեցաւ Ներսէս, և Սկեւռայ վանից առաջնորդութիւնը. և անով արդէն ստացած համբաւն՝ ալ աւելի մեծցաւ: Ինքն իսկ Լամբրոնացի կը բռնադատուի հակառակորդաց բերանը կարկելու համար՝ իրեն յատկանիշ ու սիրելի խոնարհութիւնը առ վայր մի մոռնալով, առաքելաբար պարծիլ: «Բարեհռչակիմ, կ՚ըսէ, ի Լատինացւոց եկեղեցիսն և ի Հելլենացւոց և Ասորւոց, և կամ ի Հայաստանս»:

Վասն զի իր գիտութիւնն ու սրբութիւնը, և մանաւանդ միաբանասէր հոգին, իրեն դէմ հանեց ժամանակին տգէտ և ինքնահաւան մարդկան դաս մը, որ սրբոյն նախանձուն ու եռանդեան մէջ ազգային եկեղեցւոյն անկումը կամ իրաւանց բռնաբարութիւն կը կարծէին. և ժողովրդեան առջև զինքն ամբաստանելէն ալ գոհ չըլլալով՝ մինչև Թագաւորական արքունիքն իրենց ձայնը հասուցին, և կ՚ուզէին զՆերսէս թէ իր պաշտամանէն զրկել և թէ անոր աստուածային օծութեամբ լեցուած լեզուն լռեցնել: Չխռովեցաւ Ներսէս. իր խղճին մէջ անմեղը՝ հակառակորդաց նախանձուն և ատելութեան հարուածներէն չվախցաւ: Լսեց իրեն դէմ եղած ամբաստանութիւններ, և արդարակշիռ պատասխանները տուաւ առ իշխողն Լեւոն, Թուղթ մը՝ յորում սրբոյն աստուածային նախանձը, անմեղութիւնն ու հանճարը միանգամայն կը տեսնուի. գրուած մը՝ յորում ամբաստանեալը կը սիրուի, և իրեն հակառակորդաց չարութիւնն աւելի ատելի կ'ըլլայ։

Այդ աստուածազգեցիկ նախանձը՝ միւս կողմանէ արգելք չէր ըլլար իրեն՝ ազգային իրաւանց անսասան պահպանութեան խնամատար ըլլալու. և այդ պատճառաւ մինչև յԱնտիոք և ի Բիւզանդիոն ճանապարհորդութիւններ ըրած է, և այլ և այլ օգտակար ծառայութիւններ մատուցած ազգային եկեղեցւոյ ու հայրենեաց, զորս հրապարակել գովութեամբ՝ եկեղեցւոյ պատմութեան կը վերաբերի։

Քառասունեւվեց տարուան հասակին հանգիսեցաւ Լամբրոնացւոյ երջանիկ փոխումը։

Լամբրոնացւոյն երկասիրութիւնները. — Վեշտասանամեայ՝ երբ այլոց դեռ սորվելու և հմտանալու տարիքին սկզբնաւորութիւնն է, տիրաբար վարդապետական գրիչը ձեռք առաւ Լամբրոնացի, և մինչև ի մահ չթողուց զայն. և այնպիսի արժանաւոր հռչակաւ և գովութեամբ, որ դեռ քսանեւերեքամենի, 1175 թուականը կրող յիշատակարանի մը մէջ Տիեզերական վարդապետ կոչուած է ի գրչէն. ուրիշ մ'ալ Անյաղթ վարդապետ և Թարգմանիչ կը կոչէ զնա։ Լամբրոնացւոյն գրաւոր երկասիրութեանց մէջ նշանաւորներէն մէկն է Ատենաբանութիւնը։ Շնորհալւոյ և Գրիգորի Տղայոյ վարուց մէջ կը տեսնենք որ այն ատեններէն մեծ խնդիր մը սկսեր էր յուզուիլ Հայաստանի մէջ. մէկ կողմանէ յունական եկեղեցին կը ջանար կրօնական միութիւն մը հաստատել՝ արդէն իրեն հին դարերէ ի վեր ծանօթ և այլ և այլ ընտանի յարաբերութիւններ ունեցող Հայաստանեայց եկեղեցւոյն հետ. միւս կողմանէ խաչակիրք իրենց արևելքի մէջ ըրած արշաւանքներով սկսեր էին Հայաստանի ծանօթանալ։ Այս ծանօթութիւններն ու վերաբերութիւնքն ունէին իրենց հակառակորդները, որոնք, ինչպէս ըսինք, կը վախնային որ չըլլայ թէ ազգային հաւատքը՝ զոր միայն ուղիղ կը կարծէին, ուրիշ կարծեցեալ մոլորական վարդապետութեանց զոհ ըլլայ։ Այս խնդրոյս լուծումն՝ և ակամայ կամ կամաւ տգիտացելոց միտքը լուսաւորելու համար՝ սահմանուեցաւ Տարսոնի ժողովը գումարել։

Հայաստանեայց եկեղեցւոյն առաջին փառքը յիշելէն ետքը, իր օրերուն վիճակը արտասուաց ու ցաւոց արժանի կը գտնէ Լամբրոնացին։ Աստուծոյ տունը՝ սուրբ եկեղեցին՝ սողոմոնեան տաճարին կը նմանցնէ, որուն պայծառութիւնը, մեծութիւնն ու գեղեցկութիւնը՝ բանսարկուն՝ Նաբուգոդոնոսորի ու Քաղդէացւոց պէս, վեր ի վայր ընելու կ'աշխատի. և որչափ ալ աստուածաշինն չէնքը չի կրնար կործանել, սակայն սրով և հրով կ'աւերէ։ Այս աւերման ու խանգարման պատճառ՝ սիրոյ պակասը կը գտնէ Լամբրոնացին. ազգին՝ յայլոց քրիստոնէից խորշելով և անոնցմէ ուծանալով՝ Աստուծմէ հեռանալը կը ցուցնէ և ասոր դարմանը՝ դարձեալ սիրոյ ու միաբանութեան մէջ կը գտնէ։ Որչափ զարմանալի է Լամբրոնացին իր այս խօսակցութեան մէջ. Աստուծոյ և ազգին սէրը՝ հաւասար իր սիրտը կը տոչորեն. Աստուծոյ փառաց աւելութեամբը՝ իր ազգին բարոյական ապագայն հաստատուն գործել կը ջանայ։ Այս փափաքն առաջ տանելու համար՝ մինչև իր ազգէն նզովիլն ալ աչք կ'առնէ։ Մեր ամբողջ հայերէն մատենագրութեան մէջ՝ այս ճառին նման սրտով, ուժով և գիտութեամբ գրուածք մը քիչ կը գտնուի. անոր համար Եւրոպայի իմաստուններէն մէկը «Թէ որ Դեմոսթենէս, կ'ըսէ, նոյն առիթներուն մէջ գտնուած ըլլար, ինչպէս այս սուրբը, և անոր հաւատոց ճշմարտութիւնը ճանչցած ըլլար, իրմէ տարբեր լեզու պիտի չգործածէր»։ Ուրիշ մըն ալ Կիկերոնի կը նմանցնէ զինքը, ոչ զՀռովմ՝ ալ զեկեղեցի Աստուծոյ իր թշնամեաց ձեռքէն թափելու համար։

⁂

Մեկնութիւն պատարագի. — Քսանեւչորս տարուան հասակին՝ այս ընտիր, իմաստուն և բազմահմուտ մատեանը երկասիրեց Լամբրոնացին, երբոր Տաւրոս լերանց առանձնութեան մէջ՝ աշխարհքի զբաղմունքներէն ու փառքէն հրաժարած հոգւոյ անդորրութեամբը կը զմայլէր։ Հայաստան՝ որ քաղաքական ոյժն ու զօրութիւնը կորսնցնելով, օրէ օր կը վատթարանար, կարգէ դուրս զեղծումներ մտուցած էր մինչեւ սուրբ սեղանոյն նուիրական պաշտամանց և պատարագին խորհրդոց և զոհին մէջ։ Հարկ էր այս զեղծմունքը վերցնել. բայց արդէն արմատացած և հիննալու սկսած սովորութեանց հետ կռուելու համար՝ Լամբրոնացւոյն պէս կորիճ ախոյեանի մը կարօտ էր ազգը։ Այդ ընտիր ախոյեանը, որ միայն Աստուծոյ փառքն ու երկիւղը իրեն շարժառիթ և նպատակ ունէր, այս գրուածքով երիտասարդ հասակին մէջ դատաւոր կը նստի ծերոց, և իր վրայ կ'առնէ անոնց նախապաշարմանց հետ կռուիլ, մտաց խաւարը լուսաւորել, և աստուածային ուղիղ ճամբուն մէջ առաջնորդել։

Սակայն այս աստուածահաճոյ ջանքին ալ՝ յայտնի կը տեսնէր իրեն դէմ ելլելիք հակառակութիւնները։ Այնպիսի ատենի մը հանդիպած էր յորում ոչ միայն ազգին բարւոյն վրայ մտածելը՝ այլ նաեւ անոր վրայ արցունք թափելն ալ կ'արգելուէին։ « Եւ ոչ ողբալոյ տան թոյլ, կ'ըսէր հառաչելով՝ զափս ի բերան եդեալ խփեն զջատագովաց ճշմարտութեան զլեզուս, կամ այպանելով երգիծանեն, կամ սաստիւ կոփահարեն, միայն զի մի ի ստութեան սուտք երեւեսցին »։ Բայց Աստուծոյ քաջահաւատ պաշտօնեայն արհամարհեց այդ ամէն բանութիւնները. և ընտրելի համարեց այն երանութիւնը՝ զոր տէրն « հատոյց փոխարէն նախատանացն. և ախորժելի վասն նորին՝ մարդկան չարախօսութիւնն »։ Եւ այս վախճանու շարադրեց Պատարագի մեկնութեան գիրքը. յորում հզօր հանճարով, զօրաւոր լեզուով, աննախանձ սրտով և ծայրայիր հմտութեամբ կռուեցաւ ամէն նախապաշարմանց դէմ, ցցուց զեղծմանց ապօրինի ըլլալը, և ճշմարտին Աստուծոյ սեղանոյն

վրայ յաղթանակել տուաւ ճշմարտութեան։ Եւ այն գրքին՝ և անոր մէջ ամփոփուած իմաստից կարօտ ազգին՝ նուիրեց իր աշխատութիւնը. ու մէկ երկու անգամ մինչեւ եպիսկոպոսաց ատեանը հանեց որ կարդան, քննեն, ու իրենց սիրտը մրկող կրակովը՝ գէթ իրենք ալ ջերմանան. սակայն և ոչ ընթերցման կամ ունկնդրութեան արժանի եղաւ, ինչպէս գանգատելով կ'ըսէ վերջաբանին մէջ։

Իր մէկ երկասիրութիւնը՝ սիրելի քրոջը ընծայած է՝ հետագայ սրտազդեցիկ խօսքերով. « Աստուածային իղձս փափագանաց պատուականագունիդ ինձ գիտելով միշտ ի տէրունականան, վասն որոյ ուրախացուցիչ առիթ մատուցանեմ քեզ նուէր, սիրելի հարազատ Մարիամ, զոր առ մեզ անցուցեալ աստուածային ոգւոյն փչմանէ միշտ ընդ տուողին բարգաւաճելոյ առնն, ի ստիպմանէ խնդրոյ յորմէ որ վերագոյնդ յայտնէ բան, համանմանոյն երգ, զոր երկօք աշխատութեան արձանագրեալ քոյոյս Ներսէսի՝ ըստ այնմ յաղագս որոյ բանս է, քեզ ի սփոփանս ընձեռեցի. գիտելով պատուականագոյն քեզ քան զորովք քամահեցեր, զոսկի և զականս պատուականս և զօրս նոյնպիսի։ Նաեւ յաղագս և յայս եւս զքեզ յորդորելոյ, զի որպէս ի սկզբանց անտի նկման քո ի կոչումն որ եսդ, և զանձուկ ընթացից ուղւոյն բուռն հարկանելով բարեբանելոյդ էր նախանձարկութեամբ. նոյնպէս և յայսմ օրէ հետէ փութալ ի քեզ եղիցի ընդ սկզբանն, և կատարածին փոյթ ըստ հանդիպել. թէպէտ և բնութիւն եմք օտար. զի մի յանձինս մեր աւարտիցի բանն ասացեալ ի տեառնէ. Այս այր սկսաւ շինել՝ և ոչ կարաց կատարել։ Այլ եղիցի արժանի լինել հաստատել զանձինս՝ որպէս զսա ի վերայ ամրագոյն վիմի անվրդով յամենայն յարուցմանց »։

Այն ժամանակները, 1187ին, այլազգիք Երուսաղեմի տիրեցին, և տնօրինական տեղեաց սպասաւորք, եկեղեցականք և իշխանք գերեցան։ Այս համբաւը մինչեւ արեւմուտք հանելով, ամենայն ազգք թագաւորներով և իշխաններով, Հռովմայ Հայրապետին հրամանաւ խաչակրութեան մը յորդորուեցան, և անթիւ բազմութիւն՝ նաւերով հասան ելան ի Պտղոմայիս։ Այն միջոցին Լեւոն Ռուբինեանց պայազատը ղրկեց զԼամբրոնացին ի Հռոմկլայ առ Գրիգոր կաթուղիկոս. ճամբուն վրայ՝ Մարաշ քաղաքէն անդին՝ վրանին վազեցին Թիւրքմէնք, և Ներսեսի ուղեկից կրօնաւորներէն ու աշխարհականներէն գրեթէ քսան հոգի սպաննեցին, և իրենց առյուածոց հետ յափշտակեցին նաև Պատարագի մեկնութեան գիրքը, որուն վրայ անչափ տրտմութիւն ունեցաւ հեղինակը, որովհետեւ հաւասարը չունէր։ Բայց քանի մը տարի ետքը Ջահան գաւառին մէջ գտնուեցաւ, և գնոց առնուելով՝ նորէն Լամբրոնացւոյն ձեռքն անցաւ։ Զայս ինքը Ներսէս կ՚աւանդէ իւր յիշատակարանին մէջ։

⁂

Մեկնողականք. — Լամբրոնացւոյ կենսագիր մը կ՚ըսէ, «Յամենայն երեկայի՝ մինչեւ այրէին մոմեղէնք՝ գրէր. և ապա անդէն յաթոռն իւր նստեալ՝ սակաւ մի ննջէր, և իսկոյն յարուցեալ երթայր յեկեղեցին». իր նոր ու արժանաւոր դրուատիչ մ՚ալ կը յաւելու. «Այսպիսի բանաւոր հնարիւք խարեաց զմահ. և գէթ տասն ամ գողացեալ ի տուերագիր մահուանէ՝ ի թմբրութենէ քնոյ աւէմ, ծախեաց զնոյն ի խոկմունս և ի լուծմունս աստուածաշնչոց տառից, որոց իբր երկոտասանիցն ծանօթ են մեզ նորայն Մեկնութիւնք». և են Արարածոց գրքին, Սողոմոնի գրոց՝ այս ինքն Առակաց, Ժողովողի, Իմաստութեան և Երգոց երգոյն, երկոտասան փոքր մարգարէից[1], Դանիէլի և Սաղմոսաց. նոր կտակարանէն ալ՝ Մատթէի մեկնութիւն, կաթուղիկեայ թղթոց, Տէրունական Առակաց, Ննջման Յովհաննու՝ կամ Լր ընդ եղբարսն ընթերցուածոյն որ ի վերջ աստուածաշունչ գրոց։ Ասոնց ամենուն մէջ ալ որ ընդհանրապէս հեղինակին երիտասարդական հասակին արդիւնքն են, յայտնապէս կ՚երեւնայ իր հմտութիւնն և հանճարը։ Բայց որովհետեւ ընդհանուր հաւատացելոց համար յօրինուած չեն այս մեկնութիւններն, այլ մասնաւոր կերպով մը ներանձնական կենաց փափաքող միանձանց հոգեւոր օգուտը դիտելով, որոնց խնդրանօքն ալ շարագրուած են, ուստի աւելի խորհրդական քան թէ նկարագրական իմաստներով մեկնաբանուած են։ Յայսմաւուրք կ՚աւանդեն թէ «Մեկնեաց և զքարոզս եկեղեցւոյ և զաղօթնին». որով հաւանական կ՚երեւնայ թէ կ՚ուզեն ակնարկել Ժամագրոց մեկնութիւնը, և ուրիշ եկեղեցական աղօթից, սրբոց հարց դժուարիմաց խօսքերուն Լուծմունքը, ինչպէս Դիոնեսիոսի Արիսպագացւոյն, Նարեկացւոյն, և այլոց։

Վերջին գրուածին խորագիրն է. «Տեսութիւն քննութեան աղօթից աւետարանչին Յովհաննու՝ ի խնդրոյ Ստեփաննոսի վարդապետի Յակոբացւոյ, ի Ներսեսէ աշակերտէ իւր և հոգեւոր որդեկէ։ — Գիր քո պատուականութեանդ միանգամ և երկիցս, հայր սուրբ, եհաս առ իս՝ փութացուցանել առ ի խնդիր քննութեան աստուածաբան առաքելոյն Յովհաննու ազօթիցն»...: Եւ ի վերջն, «... Որ ամենայնիւ ես ճշմարտասէր և իմաստասէր, մինչ զի ոչ քոյո՛վդ բաւականացեալ այլ և զմեզ ձգեցեր հաւանութեամբս ի յանդգնութիւն, ո՛ հայր պատուական Ստեփաննոս. զորոյ ի գլուխ ած չնորհն Աստուծոյ զխնդրելիս ի ձեռն տառապեալս գործարանի ի փառս իւր և ի վայելս քումդ հաւատոց՝ և ճշմարիտ որ առ աստուածաբանս սիրոյ. ոչ թէ ըստ որում պարտ էր կամ զբովանդակն ածել ի լոյս զսորա զօրութիւնն որ անհասն էր յինէն. այլ փութացեալ միայն որդիական հնազանդութեամբ հպատակութեամբ պատճառնիւթել իմաստնոյդ»...:

---

[1] Գրչագիր մը այսպիսի խորագրով կը նշանակէ Լամբրոնացւոյն այս երկասիրութիւնը. «Արքայ հօրն մերոյ Տեառն Ներսէսի արքեպիսկոպոսի Տարսոնի մեկնութիւն երկոտասան մարգարէից՝ որ ի թելադրութենէ արքայ Լեւոնի և Կիւրղի և յիւրոց յաւելուածոց մասաց գեղեցկայարմար յեռեալ իբր ոսկի ընդ սարդիոն»։

Առակաց գրքին ինքնագիր յիշատակարանը. «Սկսեալ ի քննութիւն աստուածախօս իմաստից՝ երեք ամօք յառաջ քան զայս՝ որ է ՈԽԳ (=1194) թուականին, ի հիւանդոտ մարմնոյ, ի ծանրութենէ հոգւոյ գանդաղէր միտք նուաստութեան քննել, և ձեռն՝ ի գրել։ Յայս ամ գնացեալ իմ ի Կոստանդնուպոլիս, և խնդրեալ ի նորին պատրիարգէն՝ զոր առ նոսին տեսութեան Առակացս և Յոբայ, և ընթերցեալ, և տեղեկացայ՝ զի զոր առ ի մէնջ պատարերէ շնորհք սուրբ Հոգւոյն՝ ոչ ինչ նուազ էր յայնմանէ, և նախ քննեալն համաձայն էր և ոչ օտարանայր. եկեալ ի յարկս իմ՝ երկրպագութեամբ գոհացայ զԱստուծոյ և քաջալերեցայ ի քննութեանս, հոգս Ներսէս՝ որ ի Տարսոն անուամբ այցելու և ի Սկեւռայն օթեւանս բնակեալ ի հանգիստ»։

Հետագայ տողերուն մէջ՝ որ իր աշակերտին սրտի ձայնն ու հառաչանք են, ամփոփուած կը գտնենք Լամբրոնացւոյ մեկնողական գլխաւոր երկասիրութիւններն:

« Առ ձեզ խօսիմ, հին կտակարանք,
Եկէք որ լանք, զի անպիտանացայ,
Ե՛կ Սողոմոն, զի անպիտանացար.
Ե՛կ Դանիէլ, որ խօսանեցար.
Ե՛կ Արարածք, լա՛ց, որ փակեցար.
Ար'եկ Դաւիթ, որ անպարտեցար.
Առնում լալով վայիս ձայնակից.
Ընդ Յովհաննէս Որդին Որոտման.
Եկ ժողովէ զՏեսիլն ու պահէ,
Զի այլ չըկայ տէրն որ մեկնէ...
Լացող Թըղթոց կաթողիկէից,
Եկէք ու լէք վայիս ձայնակից...
Ե՛կ Առաքեալըդ Տարօնեցի
Ու ա՛ռ ամփոփէ զբանքս որ լսեցի,
Ե՛կ Աթանաս, լալոյս ձայնակից,
Բանքըս քո են ի Պատարագի.
Բայց իմ հըսկող տէրն չերեւի,
Ոչ մեկնըլի ու ոչ բացայայտի.
Ոչ այլ պայծառ Քարոզն ասուի,
Ոչ այլ նըման քեզ տէր գըտանի»:

Ճառք. — Հինգ այլ և այլ ճառեր կ'ընծայուին Լամբրոնացւոյն. ի Համբարձումն Քրիստոսի, ի Գալուստ Հոգւոյն սրբոյ, ի փոխումն Կուսին, յԱնառակ որդին, և ի Տնտեսն: Ասոնց մէջ առաջին երկուքն ընտրելագոյն կը համարուին իրաւամբ թէ՛ լեզուի գեղեցկութեամբ և թէ ճարտասանական ոճով:

Թղթերուն մէջ ալ անուանի է առ Լեւոն իշխանն գըրածը, զոր առաջ յիշատակեցինք: Թուղթ մ'ալ առ Ոսկան ճգնաւոր, և առ Յակոբ ոմն Ասորի:

Բազմաթիւ և հետաքննականք են Լամբրոնացւոյ երկասիրութեամբ եղած թարգմանութիւնք ի յունէ, յասորւոյ, ի լատին և ի փռանկ լեզուաց, որոց վրայ խօսիլը գրուածքիս երկրորդ մասին կը պատկանի: Ոչ սակաւ են իրեն համբուրելի ձեռօք գրուած և մինչեւ առ մեզ հասած գրչագիրք:

Ունի Լամբրոնացին քանի մը կտոր մանր քերթողական գրուածներ ալ. բայց անոնց ոճը այնչափ հեռու է իր արձակ գրուածոց ոճէն, որ յայտնապէս կը տեսնուի թէ հռոմայեցի ճարտասանին պէս միայն խօսելու ուժով և գեղեցիկ ու համոզիչ լեզուով ծնած էր Լամբրոնացին, քան թէ քերթողարանելու: Այս գրուածքն են՝ քանի մը շարականներ, ու Ներսէսի Շնորհալւոյ վրայ գրուած վիպասանութիւն մը, և ուրիշ մանր քերդուածներ, ինչպէս ի Ս. Յովհաննէս աւետարանիչ, ի Հրեշտակապետս, ի Ս. Գէորգ, ի Թաղումն Տեառն, մեղեդի մը ի Ս. Կոյսն, որոնց ամենուն մէջ կը փայլի իր հոգեսիրութեան եռանդը:

Ժամանակաւ կրտսերագոյնք կ'ընծայեն իրեն նաեւ ուրիշ քանի մը երկասիրութիւնք՝ որ հիմա կորսուած կամ դեռ յայտնուած չեն. ինչպէս Վարք Գրիգորի Նարեկացւոյ, Մեկնութիւնք ութ խորհրդոց ի խնդրոյ Ատոմայ ճգնաւորի, Անուանք Բաղարջաց չխմորաց ի խնդրոյ Սրբուսայիս բժշկի: Լամբրոնացւոյն տրուած կը գտնենք նաեւ Տօնացոյց գրոց վերջին կարգաւորութիւնը, և զկանոն Կաթողիկոսօրհնէից և Եպիսկոպոսօրհնէից, և քերթուած մ'ալ ի Սուրբ Խաչն:

Յիշատակագիր մը հետեւեալ հետաքննական տեղեկութիւնները կու տայ Լամբրոնացւոյն մէկ քանի երկոց յօրինման ժամանակին վրայ. «Ներսէս Լամբրոնացի արար զԹարգմանութիւն տեսլեան Յովհաննու և զՄեկնութիւն նորին, և զՊարապմանց՝ գրեաց յայլեւայլ ժամանակի. զՊարապմանցն ՈԽԴ թուականին, և զՅովհաննու տեսիլն ՈԽԷ. յորում ամի վերապատուեցաւ Ռուբէն Թագաւոր Հայոց՝ յերկուց Թագաւորաց, Հռոմայ և Յունաց. ՈԼԶ ամի անկաւ Երուսաղէմ ի ձեռս Իսմայէլացւոց, և բազում արեան հեղմունք եղեալ ի Լատինացւոց, մինչ ի Թագաւորելն Ռուբինայ. յորում ամի Թարգմանեաց զՏեսիլն. և զԽորհրդի և զԱղօթից մեկնիչն. և էր ընդ եղբարս՝ ի մեկնութիւնն և զՆարեկացւոյ լուծմունքն»:

Յիշեալ ամենայն ծանօթ գրուածքն զանազան անգամ և տեղեր տըպուած են. որոց վրայ տես ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ, յէջ 60, 249։ Լամբրոնացւոյն հոգեւոր և աստուածաբան կենաց արժանաւոր գրուած ու գրուագ մ'ալ ի ՍԻՍՈՒԱՆ, յէջ 86–95։ Համմտ. նաեւ Հայկ. Նոր Մատենագիտութիւն Հ. Ա. Վ. Պազիկեան, Ներսէս Լամբր. անուան տակ։

Այս հռչականուն մատենագրաց հետ՝ երկրորդաբար կը յիշուին դարուս մէջ,

ԳՐԻԳՈՐ ԳԱՆՁԱԿԵՑԻ կամ Թուքակերի որդի, որուն կարգէ դուրս աստուածասիրութեան վրայ հետեւեալ դէպքը կը պատմէ Կիրակոս: Օր մը, կ'ըսէ, այրի մը մէջ առանձնացաւ, ուր բազմութիւնք գրոց կային, և հետն ալ ուրիշ շատ ընկերակիցներ ունէր: Անոնք քարայրէն դուրս ելան ու մոռացմամբ զինքը հոն ձգեցին, կարծելով թէ անիկայ իրենցմէ առաջ ելած ըլլայ. ու դուռը փակելով՝ գնացին: Գրիգոր՝ առանց ամենեւին իմանալու՝ շարունակեց հոն գրոց ընթերցման պարապելու: Վրան օրեր անցնելէն ետքը՝ հարկաւոր բանի մը համար նորէն ելան այրը գնացին, ու

զինքը հոն տեսնելով սքանչացան, կը հարցնէին թէ ինչպէս առանց ուտելու խմելու կրցաւ ապրիլ այնչափ օր. անիկայ գրքերը ցուցնելով կ'ըսէր. «Ասոնք եղան իմ կերակուրս և ըմպելիս»: Կ'աւանդեն թէ Ընթերցուածոց մեկնութիւն մը շարագրած ըլլայ:

Վարդան պատմիչ կը գրուցէ թէ Սարկաւագ վարդապետին մահուընէն տարի մը ետքը հանդիպեցաւ թէ Գրիգորի և թէ իրեն ընկեր ճգնաւոր Սարգիս վարդապետի մահը՝ Գանձակայ երկրաշարժին փլատակաց տակ:

ԴԱՒԻԹ ԳԱՆՁԱԿԵՑԻ վարդապետ՝ Ալաւկայ որդի: Սա Արքայութիւն կոչուած նորընծայ քահանայի մը խընդրանօք՝ կանոնական սահմանադրութիւններ գրեց, որոնց համար Կիրակոս կ'ըսէ թէ գեղեցկայարմար ու պիտանացու երկասիրութիւնք ըլլան, ու Վարդան, թէ դիւրահաս կանոններ էին: Մեր ձեռքն հասած 97 կամ 98 կանոններն՝ ասոնց դատաստանը չեն արդարացներ:

ԳՐԻԳՈՐ ԻՄԱՍՏԱՍԷՐ, որ Մարաշու Յեսուանց անապատին միաբաններէն էր, և իր ընկերակիցներէն այս պատուոյ անուամբ մեծարուած: Իր անունով մեր ձեռքը գիրք մը հասած է՝ զոր հեղինակը Գիրք վայից և մեղայից կը կոչէ, պարզ և միջակ ոճով մը, ՇՂԸ (1149) թուականին յօրինուած:

Կը յիշատակուի Լամբրոնացւոյ ժամանակակից և աշակերտ՝ ԽԱՉԱՏՈՒՐ անունով մէկը. որ իր աստուածաշնորհ վարդապետին վրայ գեղեցիկ ու քերթողական ողբ մը շարագրած է ոտանաւոր: Խորագիրն է. «Ողբք ի տէր Ներսէս արհին Տարսոնի, ասացեալ Խաչատուր պաշտօնէի նորուն աշակերտի»:

Ուրիշ ԴԱՒԻԹ քահանայ մ'ալ կը յիշատակուի ԺԲ դարուս մէջ, և իր անունով գրուած մը. «Ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ պատանի, որ յԱյրարատոյ նահանգէն, ներբողական գովեստի բան»:

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ

Ուռհայեցւոյն ժամանակը: — Իր պատմական երկասիրութիւնը: — Բանասիրական արժէք: — Ոճ և լեզու: — Գրիգոր Երէց՝ շարայարող իր պատմութեան: — Բնագրին տպագրութիւնն և թարգմանութիւնք:

Մատթէոսի Ուռհայեցւոյն վրայ գիտցածնիս՝ իւր երկասիրութեանը երկրորդ և երրորդ մասերուն յառաջաբաններուն մէջ տուած տեղեկութիւններն են: Ինքզինքը Ուռհայեցի կը կոչէ, նոյն քաղաքին մէջ ծնած ըլլալուն համար՝ զոր յայտնապէս կ'աւանդէ: Ուրիշ տեղ ալ ինքզինքը Վաներէց կը կոչէ: Ծննդեանն ու մահուան տարին անստոյգ է. այս միայն յայտնի է որ իւր կեանքը 1136էն աւելի անդին անցած է. որովհետև այն թուականին կը լմնցնէ իւր գիրքը: Հ. Մ. Չամչեան իւր Հայոց պատմութեան մէջ կը համարի թէ 1144ին, Ասորւոց աթաբէկներուն իշխան հռչակաւոր Նուրէտտինի հօրը Զանգիին ձեռքով եղած Եդեսիոյ կոտորածին մէջ՝ մեռած ըլլայ նաև Մատթէոս ի խորին ծերութեան: Բայց այս կարծեաց ստուգութեան երաշխաւորութիւնը կը պակսի: Կ'երևնայ թէ կենաց մեծ մասը անցուցած ըլլայ յԵդեսիա, որովհետև հոն հաւաքեց և կարգի դրաւ իր ժամանակագրութեան նիւթը, որուն միայն երկու առաջին մասանց վրայ տասնհինգ տարի աշխատեցաւ: Իւր մէկ խօսքէն կ'երևնայ թէ կենաց վերջին տարիները Կոմագենի հիւսիսակողման Քեսուն քաղաքը քաշուած ըլլայ, որ Մարաշու պէս՝ Պօտուէն (Բալդուինոս անունով լատին իշխանի մը ձեռաց տակ էր): Որովհետև կ'աւանդէ թէ երբ Ամր-Գազի եկաւ պաշարեց զՔեսուն, 1133ին, հոն էր և ինքն Ուռհայեցին. և զՊօտուէն՝ կոմս մեր կը կոչէ, անշուշտ անոր իշխանութեան հպատակ ըլլալն ուզելով հասկցնել:

⁂

Իւր հայրենի քաղաքը՝ յորում էր այն վանքը որուն առաջնորդութեան պաշտօնը կը վարէր պատմական հետազօտութեանց համար ընդարձակ դաշտ մը կրնար համարուիլ: Եդեսիա՝ Միջագետաց հին և հռչակաւոր քաղաքը՝ արևմտեան Ասիոյ ծաղկած մեծամեծ տէրութեանց մէջ, և յունական ու արևելեան աշխարհաց սահմանները կ'իյնար. արևելքէն սահմանակից ունէր Պարսից աշխարհքը, հիւսիսէն զՀայաստան, հարաւէն խալիֆայից իշխանութիւնը, արևմուտքէն զԱսորիս, զՊաղեստին, Բիւզանդիոյ կայսերաց ընդարձակ երկիրներն: Իւր չորս կողմը կատարուեցան այն մեծ յեղափոխութիւնները՝ որոց արևելից այս մասը վկայ եղաւ: Հին ատեններէն վառարան մը համարուած է այն քաղաքը ասորի, յոյն և հայ դպրութեանց: Հաւանական կ'երևնայ թէ ԺԲ դարուն սկիզբները՝ յորում Մատթէոս գրեց, դեռ բոլորովին անհետացած չէր այն նախկին ուսումնական ախորժակը:

Շատ անգամ կը յիշատակէ Մատթէոս թէ իւր պատմութիւնը գրելու համար՝ ականջալուր աւանդութեանց և իրմէ առաջ եղող պատմագրաց դիմած ըլլայ: Բայց թէ ով են այս պատմագիրները, ամենևին չ'ըսեր մեզի. ոչ անուն մը կը յիշէ, և ոչ գրուած մը յանուանէ մէջ կը բերէ: Ժամանակակից հայ մատենագրաց մէջ ալ չկայ մէկը որ նոյն դիպուածոց վրայ գրած ըլլալով՝ կարենանք իրենց գրուածքը Մատթէոսի երկասիրութեան հետ համեմատել: Նոյն իսկ հետագայ պատմիչք՝ կարծես թէ մեծ կարևորութիւն մը չեն ուզեր տալ իր գրուածքին՝ բաց *ի Սմբատ Գունդստաբլէն, որ ԺԳ դարուն պատմիչ է, և ժամանակագրութեան առաջին մասին մէջ զՄատթէոս կը համառօտէ, առանց ամենևին իր առաջնորդին անունը տալու։*

Այս լռութեան հաւանական պատճառը այն կ'երևի որ Մատթէոս գլխաւորաբար արևմտեան Հայոց ու սահմանակից օտար գաւառաց պատմութիւնը գրեց. իսկ իրմէ ետքը երևցող պատմիչք՝ ինչպէս Կիրակոս և Վարդան, Սանահնի՝ Հաղբատայ և Գետկայ, արևելեան Հայոց հռչակաւոր դպրոցներու աշակերտք, գլխաւորապէս մեծ Հայոց վրայ կը գրեն՝ որով և Մատթէոսի հետ նոյն տեղւոյն վրայ չէին կրնար հանդիպիլ։ Մատթէոս՝ պարզ ժամանակագիր, բաւական կը համարի ամ ըստ ամէ արձանագրել այն անցքերը՝ զորս կամ ծերունեաց խօսքերէն և աւանդական հմտութենէն, և կամ իր ձեռքն եղած գրքերուն մէջէն ժողվեց։ Իւր հմտութիւնը, ինչպէս ինքն ալ անկեղծաբար կը խոստովանի, չափաւոր է. ոչ իւր ազգին հնախօսութիւնը կը ճանչնայ, և ոչ անոնց վրայ գրող ազգային հեղինակները։ Երբ իւր գրոց առաջին գլխոյն մէջ Եդեսիոյ հիմնարկութեան վրայ կը խօսի, չեմ գիտեր որ աւանդութենէ առած՝ Տիգրանայ կ'ընծայէ զայն, առանց ըսելու թէ Հայոց վրայ իշխող երեք Տիգրաններէն քանիերորդն է անիկայ։ Հետագայ գլխոց մէջ՝ մինչև երկրորդ մասը, բոլորովին կը չփոթէ Բագրատունեաց ժամանակագրութիւնը, թէ և ժամանակաւ անոնց շատ մօտ է։ Որով յայտնի կ'երևնայ թէ և ոչ Շապհոյ Բագրատունւոյ, Յովհաննու կաթողիկոսի և Ստեփանոսի Ասողկան գրուածները ծանօթ են իրեն։ Կրօնական գիտութիւնն ալ սուրբ գրոց բառական հասկացողութենէն անդին չ'անցնիր, ուսկից առէպ վկայութիւններ մէջ կը բերէ։ Անծանօթ են իրեն Յունաց եկեղեցւոյն սուրբ հարք՝ որ իր հայրենակից հին վարդապետացն այնչափ ընտանի էին։

⁂

Իր կեանքն այն տեղերը անցուցած ըլլալով՝ ուր ասորի դպրութիւնք երբեմն ծաղկած էին, կրնար կարծուիլ թէ բաւական օգտուած ըլլայ այն լեզուին յիշատակարաններէն։ Սակայն Մատթէոսէն ետքը եկող երկու ասորի, Միքայէլ ու Գրիգոր Աբուլֆարաճ պատմիչներէն դատելով՝ կը տեսնուի, թէ ասորական դպրոցը որչափ կը տարբերէր հայկականէն, թէ կրօնական գաղափարներով, թէ ազգային նախապաշարմամբք և թէ պատմական դէպքերը կշռադատելու կողմանէ։ Մատթէոս և Աբուլֆարաճ՝ բոլորովին իրարու հակառակ հոգւով լցուած են, առիթ չի պակսիր որ առաջինը՝ Ասորւոց ծանր նախատինքներ չտայ. երկրորդն ալ՝ կը ջանայ միշտ Հայերը բամբասել ու չարախօսել։ Այս ներհակութենէն կրնամք հետևցնել թէ իրարու հետ հաղորդակցութիւն չունէին։

Նոյնը կրնանք ըսել եթէ Բիւզանդացի տարեգրաց հետ բաղդատենք զՄատթէոս։ Իւր տուած տեղեկութիւնները՝ մեզի հասած տարեգիրներէն այնչափ կը տարբերին՝ որ կարծես թէ ուրիշ աղբիւրներէ քաղած ըլլայ։ Օրինակի համար, եթէ Նիկեփորայ, Փոկասու և Զմշկիկի թագաւորութեան վրայ՝ Լևոն սարկաւագին պատմութեան հետ զՄատթէոս բաղդատենք, թէպէտ և հիմնական գիպուածոց մէջ յոյն պատմչին հետ զուգընթաց է, բայց տարբեր յիշատակարաններու վրայ աշխատած կ'երևնայ։ Այդ բաղդատութիւնը Կեդրենոսի, Զոնարասայ, Աննա Կոմնենի հետ ընելով, նոյն աննմանութիւնները կը գտնենք, որ ոչ միայն այս ժամանակագրաց ու Մատթէոսի հետ ունեցած ծանօթութեանց տարբերութենէ առաջ կու գան, հապա նաև իրենց տեսութեան տարբեր կիտէն։ Թէ որ անոնք Կոստանդնուպոլսոյ արքունեաց ու կայսրութեան արևմտեան գաւառներն յուզող խռովութեանց վրայ աւելի լաւ տեղե-

կութեամբ կը գրեն, չկայ մէջերնին մէկը որ ասիական գաւառաց վերաբերեալ բաները՝ Մատթէոսէն լաւ գիտնայ· ինքը կրնայ զանոնք սրբագրել և լրացնելու օգնել։

Այսպէս ահա հոգ տանելով աւանդել մեզի Զմշկիկի առ Աշոտ գրած թուղթը որ բիւզանդական պատմութեան ամենէն աւելի ազնիւ յիշատակարաններէն մէկն է, այսօրուան օրս այն կայսեր Ասորւոց մէջ բանած ընթացքը կը հասկնանք այն մանր տեղեկութիւններով՝ զորս ի զուր պիտի փնտռէինք Լեւոն սարկաւագին պատմութեան մէջ։ Այս թղթիս՝ որ Բագրատունեաց դիւանէն հանած կ'երեւնայ, վաւերականութեանը վրայ տարակոյս չկայ։ Վասնզի նոյն իսկ մէջը գտնուած սխալները կը ցուցնեն թէ յոյն բնագրի մը վրայէ թարգմանուած է ի հայ։ Մատթէոս՝ ուրիշ պատուական բան մըն ալ պահած է. և այս է Գագիկ Բ թագաւորին Կոստանդնուպոլսոյ Սուրբ Սոփիայ մեծ եկեղեցւոյն մէջ խօսած ճառը, Կոստանդին Դուկաս կայսեր և Յունաց կղերին առջեւ, հայ և բիւզանդական եկեղեցւոյ մէջ եղած հաւատոյ վէճերուն վրայ։ Անտարակոյս այս ճառը նախ հայերէն գրուած է, բայց յունարէն թարգմանուած ու խօսուած, որով սկզբնագիրը կ'ըլլայ զոր Մատթէոս մեզի կը հասցնէ։ — Այսպէս չկարենալով ստուգել Մատթէոսի աղբիւրները, եթէ կարծիք մը հարկ ըլլար կազմել, պէտք էր ըսել թէ ինքը ոչ ասորի և ոչ բիւզանդացի պատմիչներ նայած ըլլալով, հարկաւ ուրեմն իրեն ժամանակակից հայկական յիշատակարաններ ու գրքեր պէտք է որ գործածած ըլլայ, որ այս օր կորսուած են կամ մեր ձեռքը հասած չեն։

Ժամանակագրութեան ոճն այլ յայտնի կը ցուցնէ թէ հեղինակն իւր ազգային դպրութեան անհմուտ է. ոչ միայն անոր ոսկի դարուն օրինակագրաց անծանօթ, հապա նոյն իսկ Ը, Թ և Ժ դարուն մատենագիրներէն ալ անբաւ հեռաւորութիւն ունի։ Ոչ Արծրունեաց պատմիչ Թովմա Արծրունւոյն ճոխաբան պաճուճեալ ու մթախօս կերպն ունի,

ոչ Յովհաննու կաթուղիկոսի արուեստակեալ ու բառազարդ վայելչաբանութիւնը և հռետորական ձեւերը, և ոչ Ասողկան հանճարեղ չափաւորութիւնը։ Առանց ամենեւին արուեստի՝ իր ժամանակին գրեթէ խօսուած լեզուովը կը գրէ։ Հայոց մատենագրութեան ու ազգութեան վատթարանալուն ատենը գրուած ըլլալով՝ իր ժամանակակցաց գաղափարներն ու նախապաշարմունքներն ունի։ Միամիտ է ու դիւրահաւան, իր տեսութեանց մէջ անհաղորդական ու սահմանաւոր, թէպէտ և կեանքը այնպիսի միջավայրի մը մէջ անցուցած է որ ամէն քաղաքական ու մատենագրական ազդեցութեանց բաց էր։

⁂

Իր ժամանակակցաց պէս ոսոխ Քաղկեդոնի ժողովոյն, թէ և անոր հետ երկու բնութիւն կը դաւանի ի Քրիստոս. Յունաց դէմ ունեցած կրօնական հակակրութիւնը՝ ցասմամբ վրանին կը թափէ։ Ոչ ինչ պակաս բուռն է նաեւ այլազգեաց ատելութիւնը։ Չի խնայեր նաեւ փռանկաց, որ Հայաստանի գաւառաց մէկ մասին կ'իշխէին։ Թէ որ այս կիրքը բան մը կրնայ արդարացնել՝ միայն հայրենասիրութիւնն է որով վառուած է այն զգացմունքը՝ որուն չափազանցութիւնը չնչող պատճառին վեհանձնութենէն ու անշահասիրութենէն ներումն կը գտնէ։ Բայց այս պակասութիւնները կերպով մը իրենց փոխարինութիւնն ունին։ Իր պատմագրութիւնը որ վարժ արուեստի մը փափկութիւն չ'ընդունիր, յղկած ոճէ մը աւելի ճշմարիտ և ազդու գործելով իւր ազգին մտաւոր և բարոյական վիճակը մեզի կը ներկայացնէ։ Պատմագրելու այս անհարթ կերպին մէջ, և այն բարբարոս և աղմկայոյզ ժամանակին՝ ուր որ այս կերպը կը գործածուէր, ներդաշնակութիւն մը կայ. կարծես թէ անհմուտ ձեռքէ եղած պատմութիւնները՝ բուն իսկ նիւթին գեղեցկութիւնն աւելի դուրս կը ցատկեցնեն։ Ի՞նչ ցաւալի տեսարան՝ անմեղ ժողովուրդ մը տեսնել՝ որ քրիստոնէական համակամութեամբ այլազգեաց անողորմ սրոյն տակ կ'իյնայ կը մեռնի հազարաւորը մէկտեղ։ Ի՜նչ յօժարակամ անձնանուիրութիւն է՝ զոր Տարօնի Հայոց վրայ կը տեսնենք, որ Խաչակրաց համնելու առենը՝ խոնարհեալ խաչին վրէժը խնդրողներուն գալուստը կ'ողջունեն, կ'երթան անոնց օգնելու սովուն խստութեան մէջ և անոնց հետ պատերազմին ամէն վտանգներուն մասնակից կ'ըլլան։ Ի՜նչպէս մեծ է Մատթէոս իւր հայրենասիրութեան մէջ, երբ իր բնական զգացմունքն՝ ատելութեան ու կրից ամբոխմամբը չի նուաստացներ։ Ո՜րչափ կը սիրէ իր հայրենիքը, և կը փառաւորէ Հայոց քաջութիւնը՝ որ իրենց աշխարհքը պաշտպանեցին։ Ի՜նչ ճարտասան պարզութեամբ կը պատմէ այն հնգետասանամեայ դիւցազին մահը, որ հայրենի տունը կը թողու, կը վազէ սուրը ձեռքը այլազգեաց անհամար խումբերուն մէջ կ'իյնայ՝ հալածելու. անդին այս ցաւալի տեսարանիս վրայ՝ պատանւոյն ծերունի պապուն բազուկները կը ջլատին, և սուրը գետին կ'իյնայ։ Վսեմ է նաեւ գեղի խոնարհ հովուի մը՝ տէր Քրիստափոր երիցուն մահը, որ պաշարեալ յանկարծ յայլազգեաց՝ կ'աճապարէ իւր հօտը եկեղեցւոյն մէջ կը ժողվէ. որուն թէպէտ չորս կողմը առեր են թշնամիք, սուրբ խորհուրդը կը կատարէ, Ս. Հաղորդութիւնը կը բաշխէ հաւատացելոց, որոնք մէկիկ մէկիկ բարբարոսաց սրոյն սպանդ կ'երթան. մինչեւ որ տէր Քրիստափոր և իր երկու որդիքը Թորոս ու Ստեփան՝ մինակ մնացած՝ իրարու վերջին համբոյրը կու տան, և այն վսեմ ու հանդիսաւոր գրկախառնութենէն ետքը՝ երեքն ալ մէկտեղ կը վազեն տաճարին սեմոց վրայ, մարտիրոսական պսակն ընդունելու։ Ի՜նչպէս սիրտ շարժող ոճով մը կը խօսի՝ Բագրատունեաց ազնուական ու մեծ ցեղին վերջին Գագիկ Բ թագաւորին վրայ. այն հոյակապ թագաւորին՝ որ իր գիտութեամբն ու քաջարտութեամբ անուանի, իրեններէն կը մատնուի, իր հարց ժառանգութենէն կը զրկուի, ու աքսորանաց և թշուառութեան մէջ կեանքը կ'անցնէ, և արտասուելի դաւաճանութեամբ մը կը լմնցնէ։

Վերը յիշուած մատենագրական կրթութեան պէտք է ընծայել հեղինակին միւս թերութիւնները, յորոց մասաւոր մշակութեամբ մը կրնար զգուշանալ. ինչպէս չափազանցութեան սէրը, բացագանչութեան հակամիտութիւնը, նոյն դարձուածոց յոգնեցուցիչ կրկնութիւնը, կարեւոր պարագայից մէջ ցուցած ծայր աստիճան խօսքի ագահութիւնը, և անդին նուազ հարկաւորաց վրայ ճոխանալը։

⁂

Ժամանակագրութեան շարայարողը ԳՐԻԳՈՐ իւր աշակերտը եղած պիտի ըլլայ, թէ որ Յունաց դէմ ցուցած ատելութեան նայինք, զոր ի Մատթէոսէ ժառանգած կ'երեւի։ Ինքզինքը Երէց կը կոչէ, բայց կ'երեւնայ թէ իւր հայրենակցաց մէջ երեւելի աստիճան մ'ունէր. վասն զի կը տեսնեմք զինքը՝ որ Քեսնոյ մեծամեծացն ու կառավարչին կը դիմէ, երբ 1137ին քաղաքացիք այլազգիներէն պաշարուելով՝ թողուցին զՔեսուն. Գրիգոր կը յորդորէ որ իրենց պարիսպները պաշտպանեն, և անոնց հետ հոն կը փոխուի։ Յունաց Կոմնենոս կայսեր կրկին ասպատակութիւնքն յԱնարզա և ի Կիլիկիա, Զանգիին Փռանկաց ձեռքէն Եդեսիան առնուլը, Իկոնիոյ սուլթաններուն՝ Ռուբինեանց հետ մերթ թշնամութեան և մերթ բարեկամական վերաբերութիւնքն, Կապադովկիոյ էմիրներուն և Տանիշմէնտի տանը հետ եղած պատերազմները, Փուրզընէ՝ գաղղիացի իշխանական ցեղին մարիլը, Խաչակրաց Նուրէտտինի դէմ ձեռնարկութիւնքն, Վրաց թագաւորաց Հայաստանի մէջ Անի և Դուին քաղաքաց դէմ ըրածները, Գրիգորի ժամանակագրութեան գլխաւոր նիւթերն են։ Գրութեան ոճն ալ Մատթէոսինէն ոչ ինչ ընդհատ ստորին է և ռամկական։

Մատթէի Ուռհայեցւոյն Պատմութեան բնագիրը հրատարակուած է յԵրուսաղէմ (1869) *շատ ծանօթութեամբք։ Անկէ տասնմէկ տարի յառաջ արդէն Տիւլորիէ գաղղիական թարգմանութեամբ ծանօթացուցեր էր արեւմտեայց՝ միջին դարուց պատմութեան համար հետաքննական այս գրուածն հետեւեալ խորագրով.* Chronique de Mathieu d'Édesse (952–1136) avec la continuation de Grégoire-le-Prêtre jusqu'en 1162; par Dulaurier. *Մատենախօսական այլեւայլ գրուածք ալ հրատարակած են թէ Տիւլորիէ թէ ուրիշ հայագէտք, և են.* 1° Notice de deux manuscrits arméniens contenants l'histoire de Mathieu Yérèts et Extrait de cette histoire, relatif à la première Croisade, en arménien et en français, par M. Chaban de Cirbied. Paris, 1812. — 2°. L'Histoire des Croisades, d'après les Chroniques arméniennes, par Ed. Dulaurier. Paris, 1848. - 3° Les Chefs Belges de la première Croisade, d'après les historiens arméniens, par Félix Nève, — 4° Beitrage zu der Geschichte der Kreüzzüge aus armenischen Quellen, von H. Petermann. — 5° *Այլ և այլ հատուածք բնագրան և գաղղիարէն թարգմանութեամբ ի* Recueil des Historiens des Croisades, (Documents Arméniens.). *Հատոր Ա.*

* * *

ՍԱՄՈՒԷԼ ԵՐԷՑ

Սամուէլ Երէց։ — Ժամանակագրութիւնը կամ Դաւազանը։ — Այս երկասիրութեան աղբերք։ — Ոճը։ — Եւրոպական լեզուով թարգմանութիւնը։ — Բնագրին տպագրութիւնը։

Ուռհայեցւոյն ժամանակակից կ'երեւնայ նաեւ Սամուէլ, որ Անւոյ կաթուղիկէին աշխարհիկ երիցանց դասակարգէն ըլլալով Երէց և մերթ ալ Անեցի կը կոչուի։ Ինքզինքը աշակերտած կ'աւանդէ Գէորգ անունով վարդապետի մը, որ հաւանականաբար Մեղրիկն է. ուրիշներն ալ՝ և մասնաւորապէս Վարդան պատմիչ, Յովհաննու Սարկաւագայ աշակերտ կը համարին զինքը։

Սամուէլի գլխաւոր՝ և մեր ձեռքը հասած երկասիրութիւնն է Ժամանակագրութիւնը կամ Դաւազանը, զոր Պահլաւունի Գրիգոր կաթուղիկոսին խնդրանօք յօրինած է և իրեն ընծայած[1]*։ Այսպիսի մեծ և կարեւոր երկասիրութեան մը համար՝ իմաստութեամբ իրեն օգնական և ձեռնտու առած է Սամուէլ՝ ուրիշ ազգաց մէջ արդէն գտնուած և մեծարգոյ համարուած երկասիրութիւնները, և մասնաւորաբար Եւսեբիոսի և Խորենացւոյն աշխատասիրածները։ Ինքը հեղինակն ալ այս բանս կը խոստովանի յընծայական նամակին առ կաթուղիկոսն. «Ջանացի, կ'ըսէ, զա-*

---

[1] *Ժամանակագրութեան գրոց խորագիրն է. «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ»։*

մենագեղեցիկ զատուածարեալ զպատմութիւնս Եւսեբեայ կրկին գրելով, որպէս զցայտումն արեւու՝ որ ի մթին տեղիս ծագէ և լուսաւորէ »[1]: Ուրիշ տեղ մ'ալ. « Մոռացեալ զտգիտութիւն և զանուսումնութիւն իմ, ի թախանձելոյ քոյ, սրբազնեացդ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց առ ի գրել զոր կամեցար. և այժմ օժանդակեալ ի Հոգւոյն սրբոյ՝ ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր՝ զբանից հանդէս, միայն զճշմարտութեանն գնալով զհետ. և ի յոլովիցն՝ առաւել զերկոքումբք թեւակոխեսցուք, ձեռնտու ունելով զնոսա, զԵւսեբի ասեմ, և զՄովսէս Խորենացի »:

Իսկ երբ հին օրինակագրաց գրուածները կը սպառին, և հարկ կ'ըլլայ որ Անեցին ինքնիրմէ սկսի շարունակել, այն ատեն տարակոյսը զինքը կը պատէ. « Մինչև ցայսօրիկ ժամանեալ վայր՝ անկասկած հետեւմամբ, առաջնորդ ունելով զհաւաստապատում գիրս զյառաջասացեալ վարդապետացն. իսկ յայսմ հետէ ի տեղւոջ՝ ուր պիտոյացաւ այլ ինչ յաւելուլ ի շարագրութիւնս մեր, աշխատութիւն և տարակուսանք անկաւ յաղագս անմիաբան գրելոյ պատմագրացն. ոմն առաւել և ոմն նուազ շարագրելով, և կամ թէ ոչ ընաւ: Սակայն մեք զբնախօսիցն զոճ պահելով, սկզբունք ըստ կարի զհետ ճշգրտութեան հետեւելով, և զառաջին ամն Տրդատայ զուգել երրորդ ամին Դիոկղետիանոսի՝ ըստ Մովսիսի Հայոց պատմագրի »:

Սամուէլի ժամանակագրութիւնը կը սկսի յԱդամայ, ու կը հասնի մինչեւ իր օրերը, կամ Քրիստոսի 1179 թուականը: Սակայն իրմէ ետքը ոմանք շարայարած են իր երկասիրութիւնը, նոյն ոճն ու համառօտութիւնը պահելով: Զոր կը վկայէ գաղափարողաց մէկը հետեւեալ խօսքերով.

« Աստանօր զանգի առեալ կացին շարագրութիւնք գեղեցկաբանին Սամուէլի. զոր բազում երկասիրութեամբ հոգ տարեալ ստուգագրութեան, և ճշգրտիւ հասուցեալ մինչեւ յիւրն ժամանակ: Եւ վասն զի պատմագրութեանց սահման է՝ զանցեալսն և զներկայսն ճառել, իսկ յառաջիկայն ոչ գոյ հնար անցանել. այլ թէպէտ յայսմ հետէ մտանէ կանոն իշխանութեան Հայոց ի շարագրութիւնս աղիւսակիս, սակայն սխալ յոլով տեսանի կանոնացս. վասն զի յայսմ հետէ այլոյ ուրուք է շարագրութիւնս, և գրեթէ Քրիստոսի ծննդեան ամք և թուականն Հայոց միայն գոյ անսխալ »: Այս խօսքերէն ետքը՝ Հայոց ՇԻԷ թուականէն սկսելով՝ կը շարունակէ ժամանակագրական աղիւսակը մինչեւ ՉԺԱ թուական: Ուրիշ յետին ընդօրինակողք ալ զանազան յաւելուածներ ընելով անոր ժամանակագրական աղիւսակաց՝ մինչեւ ՌՃԼԱ և ՌՃԽԵ թուականներն հասուցած են: Ասիկայ յիշուելու ատենը ընդարձակող Սամուէլի կը կոչուի գրոց մէջ. և տուած տեղեկութիւններն ընդհանրապէս կարեւոր են, մանաւանդ Կիլիկեցի թագաւորաց ատեն պատահած անցքերուն:

Ասկէ գրեթէ հօթանասուն տարի առաջ՝ անուանի ծիրանաւորն Մայի՝ (Mai) որ այն ատեն Միլանոյ մատենադարանին տեսուչն էր, Եւսեբեայ Քրոնիկոնն հրատարակելու ատեն՝ լատիներէն թարգմանեց նաև Սամուէլի Երիցու ժամանակագրութիւնը, և տպագրեց կրկին, նախ ի Միլան (1818, երկրորդ անգամ ի Հռոմ (1839). Samuelis presbyteris Aniensis, Temporum usque ad suam ætatem ratio libris historicorum summatim collecta. Opus ex Haicanis quinque codicibus ab Joh. Zohrabo diligenter excerptum atque emendatum. Zohrabus et Ang. Majus nunc primum conjunctis curis latinitate donatum notisque illustratum ediderunt. – Գաղղիական թարգմանութիւն մ'ալ ի Հաւաքածոյն Հայ պատմագրաց Պրոսէի. Samuel d'Ani, Tables Chroniques, traduit par M. Brosset. Մատենախօսական և քաղուած. Samuel d'Ani, Revue générale de sa Chronologie, par M. Brosset, (Mélanges Asiatiques). — Extrait de la Chronique de Samuel d'Ani, Recueil des Historiens des Croisades. (Documents Arménins), Հատ. Ա. 447-468. յորում նաեւ Սամուէլի շարունակողին հայ բնագիրն զուգլխարէն թարգմանութեամբ ի 1178 թուականէն Քրիստոսի ց1340. Հայ բնագիրն տպուեցաւ անցեալ տարի (1896) յԷջմիածին.

---

[1] Ի վերջ ընծայականին՝ յայլմէ գրչէ յաւելեալ. « Սամուէլ քահանայ Անեցի ժողովող գրոյս, յամի մարդեղութեան փրկչին ՌՃԾԱ, և մերոյս թիւ Ո, ի քառասներորդ ամի կաթողիկոսութեան Գրիգորի Գ Պահլաւունւոյ, և ի թագաւորութեան Հայոց Թորոսի Բ »,

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ

Ո՞վ էր Մխիթար Հերացի։ — Բժշկական գիտութիւն և արուեստ ի Հայաստան։ — Ջերմանց մխիթարութիւն։ — Նիւթը։ — Աղբերք Հերացւոյն։ — Իր գրոց տպագրութիւն։

Երկոտասաներորդ դարուն մէջ կը ծաղկէր ի Հայս Մխիթար անուամբ հռչակաւոր բժշկապետ մը, որ Հեր քաղաքը ծնած ըլլալուն համար՝ Հերացի կը կոչուի։ Տղայութենէն Արաբացւոց, Պարսից, և Հելլենացւոց իմաստութեամբ վարժած, բաւական հմտութիւն ունէր նաև փիլիսոփայական և աստղաբաշխական գիտութեանց։ Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյն մտերիմն էր, որ և Յաղագս երկնից և զարդուց նորա կոչուած ընտիր քերթուածը՝ իրեն ընծայած է, ինչպէս նաև Յաղագս Աստուծոյ և արարածոց քերթութիւնը, որուն սկզբնատառք կը յօդեն, «Մխիթար բժիշկ, ընկալ ի Ներսիսէ գոյս բան»։

Բժշկական արուեստն ու գիտութիւն՝ որ այնչափ սերտ կցորդութիւն և կարեւորութիւն ունի մարդկային կենաց վրայ, անկարելի է բոլորովին անծանօթ ենթադրել առ հինս մեր. բայց հաւանականաբար ոչ այնչափ ծաղկեալ և բարգաւաճ վիճակի մը մէջ, որպէս առ Յոյնս և միջին կոչուած դարուց մէջ առ Արաբացիս. որով և աղօտ, և ոչ միշտ զերծ ի նախապաշարմանց իրենց գաղափարն նոյն արուեստին և գիտութեան նկատմամբ։ Երկար դարեր գոհ

եղած կ՚երեւնայ հայկական դպրութիւնն այդ հարեւանցի տեղեկութեամբք. մինչեւ Ռուբինեանց հարստութեան ժամանակ՝ յորում Հայք աւելի ծանօթութիւն ունեցան իրենց մերձաւոր ազգաց և անոնց գիտնոց հետ։ Յառաջ քան զՀերացի՝ ու ԺԳ. դարու վերջերը գաղափարուած ու բաւական հնութիւն ունեցող բժշկարան մը հասած է մեր ձեռքը, որ մակագիր կը կրէ. Բժշկարան զոր փոխած է ի տաճիկ լեզուէ ի հայս՝ ի ժամանակս յաղթող թագաւորին Հայոց Գագկայ, որ քաղուածոյ և թարգմանաբար երկասիրութիւն մը կը թուի, ինչպէս կը կարծենք որ ըլլայ նաև Հերացւոյն գրուածը, և իրմէ ետքը յօրինուած ուրիշ բժշկարաններ, որոց հեղինակք կը ճանչցուին Ամիրտովլաթ, Ասար և Բունեաթ Սեբաստացիք և այլք. որոց ամենուն գրուածոց աղբերքն արաբական կ՚երեւնան, ինչպէս կը վկայեն բժշկաց անուանքն և դեղոց և անոնց զուգութեան և բժշկական բառերուն անունները։ Վասն զի նոյն իսկ յոյն բժշկաց՝ արաբական թարգմանութենէ առնլով՝ արաբացի հնչումն առած են մերքն. ինչպէս Իպպոկրատ հռչականուն բժիշկը՝ փոխուած է մեր բժշկարանաց մէջ ի Պուգրատ, Բուկրատ, Բագրատ. — Գաղենոս՝ Գելինոս, Ճալինոս. — Ռուփոս՝ Ըռուպուս, Ըռուպոս, Ըռոֆուս. — Որիբազ՝ Ռուբաս, Արգիասուս. — Ասկղեպիոս՝ Ակլիղեպէս. — Պաւղոս Եգինացի՝ Փօլօս, Ֆլօս, Ֆուլուս, Ֆօլօս. — Դիոգենէս՝ Դեւճանիս, և այլն։

Հերացւոյն ալ գիտութիւնն, ուսումը և գործածած բժշկական լեզուն առանցմէ տարբեր չէր կրնար ըլլալ, ինչպէս նաև հետեւողութեան աղբիւրներն, ինչպէս քիչ մը ետքը պիտի տեսնենք։

⁂

Գրիգոր Տղայ կաթողիկոսին, որուն մեծ մտերիմն էր Մխիթար, և անոր յորդորելովն ու խնդիրքովը՝ համառօտ բժշկական գիրք մը շարադրեց, թարգմանաբար հաւաքուած յոյն, պարսիկ և արաբացի բժշկաց գրուածներէն։ Գրքին անունը Ջերմանց մխիթարութիւն դրած է հեղինակը, և այնպիսի անուանակոչութեան պատճառն ալ ինքը կու տայ. «Զի սա, կ'ըսէ, մխիթարէ զբժիշկն՝ ուսմամբ, իսկ զհիւանդն՝ առողջութեամբ»։ Երկայն ու արուեստին գիտութեան արժանի ոճով մը կը խօսի երեք ազգ ջերմանց վրայ, զորս այսպէս իրարմէ կը զանազանէ. Բորբոքային և անբորբոք, Սուր և երկարօրեայ, Նոպայով և աննոպայ։ Երբ այս հիւանդութեանց նկատմամբ այլ և այլ բժշկաց կարծիքները մէջ կը բերէ, անոնց անունները ալ շատ անգամ կը յիշատակէ. որոնց մէջ գլխաւորներն են Գաղենոս, Իպոկրատ՝ զոր ինքն ալ Բուգարատ կը կոչէ, Սահակ՝ հայկազն բժիշկ, Փոլոս, Մատայի, Մասր ճուէն, Մահամմատ Զաքարիա, Որիբազ, Գեւճանիս, Սաբիթ-կուրան, և այլն։

Գրոցը սկզբնաւորութեան յառաջաբանին մէջ կը պատմէ նոյն երկասիրութիւնը շարագրելուն պատճառը. կ'աւանդէ թէ ինչպէս ի մանկութենէ իմաստութեան և բժշկական արուեստից սիրող եղած ըլլայ, ու Պարսից, Յունաց և Արաբացւոց դպրութեամբ վարժած։ «Թէ հիմնովին սորված էր բժշկականութիւն և արդեամբ իսկ ի գործ կը դնէր, զայդ կը ցուցնեն բաց յիւր այս հմտալից գրութենէն՝ իմաստուն բժիշկ, իմաստուն և ճարտար բժիշկ, իմաստուն բժշկապետ և այլ այնպիսի տիտղոսք՝ զոր կու տան իրեն ժամանակակիցք և յաջորդք։ Եւ ոչ այսչափ միայն, այլ տեղեակ էր նաեւ աստեղագիտութեան, որովհետեւ զինքը իւր բարեկամութեամբ պատուող Շնորհալի՝ Բժշկապետ և աստեղագէտ տիտղոսն իրեն կու տայ»[1]։ Անոնց բժշկական գրքերը կարդալով «տեսի, կ'ըսէ, զի ունէին զարուեստ բժշկութեան լի և կատարեալ ըստ առաջին իմաստնոցն. այլ ինքն զնախագիտութիւն՝ որ է իմաստ և վարդապետութիւն բժշկական արուեստից. և ի Հայք բնաւ ոչ գտի զվարդապետութիւն և զիմաստ նախագիտութեանն, այլ զստածումն միայն, և այս ոչ ըստ կարգի և լի, այլ համառօտ և ծաղկաքաղ աստի և անտի հաւաքեալ, յայլ և այլ գրչաց և մտաց այլայլած»։

«Կամեցայ ըստ իմոյ կարողութեան առնել զգիրքս զայս՝ միայն վասն երեք ազգ ջերմանցն համառօտ՝ նախագիտութեամբն և ստածմամբն։ Զբովանդակն որ վասն արուեստի բժշկութեանս թողի, և զերեք ազգ ջերմանցս միայն հաւաքեցի, և թարգմանեցի ի հայ բառ։ Պատճառ ունելով այսմ աշխատութեան և զսէր զյօժարութիւն սրբոյ և աստուածապատիւ կաթուղիկոսին Հայոց տեառն Գրիգորի որ մականուանի Տղայ, սմա որ էր առաջնորդ յաթոռ սրբոյն Գրիգորի լուսաւորչին Հայոց, զոր տեսի ամենայնիւ սիրող իմաստութեան և հմուտ։ Եւ յաղագս այսորիկ յօժարեցի ի պէտս և ի յօգուտ սորա առնել զգիրքս զայս ի հոռոմ և ի յարաբիկ և ի պարսիկ գրենաց, ըստ իմոյ կարողութեանս և շնորհի զոր ետ ինձ Տէր գիտութիւն լեզուաց և գրոց նոցա»։ Ռամկօրէն՝ կամ ժամանակին սովորական լեզուով գրելուն ալ պատճառ կու տայ. «Զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց»։ Եւ կը յաւելու յայտնելով զորոշ թուական շարագրութեան. «Թարգմանեցաւ և գրեցաւ գիրքս այս յամի 1184 Տեառն մերոյ Քրիստոսի գալստեանըն, յորում էր և թուականս Հայոց ՈԼԳ, ի հայրապետութեան սրբազան կաթուղիկոսին Հայոց տեառն Գրիգորի՝ որդւոյ Վասլի բարեպաշտ իշխանի Պահլաւունւոյ, որ և պատճառն է գրոցս»։

Վերջին պարբերութեան մէջ, ինչպէս նաեւ ուրիշ տեղ մը, հեղինակին գործածած թարգմանել բառը իրաւացի խնդիր կը վերցնէ թէ արդեօք ինքնագիր թէ յայլ լեզուաց ի մեզ փոխագրուած է Մխիթարայ այս երկասիրութիւնը։

---

[1] Հանդէս ամսօրեայ, Բ տարի (1888) նոյեմբեր.

Պատասխանը կու տանք հմուտ ազգային բանասիրի մը խօսքերով, զորս յօժարամիտ մեզի կ'իւրացնենք. «Եթէ թարգմանել բացատրութիւնն ամենայն ճշգութեամբ առնունք, ի հարկէ կարծելու ենք թէ թարգմանութիւն է։ Բայց արդեօք պէ՞տք է այսպէս ճշգիւ և անձուկ մտօք առնուլ նոյն բացատրութիւնն. միթէ կարելի մանաւանդ թէ պատշաճ չէ՞ աւելի ընդարձակ միտք տալ ի կիր արկած բառին։ Գիտէ ամենայն ոք որ թարգմանել բառն՝ այժմ յարդի լեզուիս միակ նշանակութեամբ կը գործածուի, իբր՝ միով լեզուաւ ըսուածն կամ գրուածն յայլ լեզու փոխել, յորում ինքնին կ'իմացուի՝ սկզբնագրին բովանդակութիւնն առաջի ընթերցողաց դնել ճշգութեամբ, ամբողջապէս, առանց փոփոխութեան և յաւելուածոյ։ Իսկ եթէ թարգմանիչ մը պատշաճ համարի ի տեղիս տեղիս իւր սկզբնագրէն շեղիլ, համառօտել կամ ընդարձակել, յաւելուլ կամ յապաւել, հաւատարմութիւնը կը պահանջէ որ յայտնապէս ծանուցանէ։ Սակայն այսպէս չէր առ Նախնեօք։ Իրենք թարգմանել բառն ոչ միայն մեր այժմու գործածութեան համեմատ կը վարէին, այլ նաեւ ի գործ կ'ածէին՝ յայտնել, մեկնել, ընդարձակագոյնս բացատրել... նշանակութեամբ. ինչպէս ցայսօր արեւելեան հին ազգաց մէջ ալ նոյն իմաստներն ունի այդ բառը։... Կը համարինք թէ Հերացի բժշկապետին ի կիր արկած թարգմանել բառն հարկ չէ ոչ այնչափ անձուկ մտօք առնուլ... Մեզի այնպէս կ'երեւնայ որ Մխիթար «կամեցայ... առնել զգիրքս... հաւաքեցի և թարգմանեցի» ըսելով կը յայտնէ թէ ի ձեռին ունենալով այլ և այլ օտար լեզուաւ գրքեր, անոնցմէ քաղած, կարգի դրած, իւր անձնական գիտողութիւնքն ու փորձառութիւնքն յաւելցուցած... նոր գիրք մը յօրինած է հայերէն լեզուաւ։ Իսկ որովհետեւ ի ձեռին ունեցած գրքերն օտար լեզուաւ էին, անոնցմէ քաղած կամ հաւաքած մասունքն ի հարկէ թարգմանելու էր...

«Լեզուի նկատմամբ ալ Մխիթար, տարբեր ընթացք կը

բռնէ այլ ռամկախօս մատենագիրներէն։ — Ոչ միայն հնագոյն ռամկագիրք, այլ նաեւ ոչ սակաւք ի յաջորդաց, և ոմանք ի յետնագունաց իսկ, սովորաբար իրենց գրութիւնն գրաբար կը սկսին, և ոմն աւելի՝ ոմն պակաս, բաւական տեղ նոյնպէս յառաջ կը վարեն՝ մէջ ընդ մէջ ռամկօրէն ընդելուզելով. և իրենց բնական լեզուին դառնալէն ետեւ ալ՝ երբեմն երբեմն երկայն կամ կարճ գրաբար հատածներ կը մուծանեն. այնպէս զի բովանդակ գրութիւնն կ'ըլլայ ռամկախառն գրաբարի և գրաբարախառն ռամկօրէնի հիւսուած։ Ասոր հակառակ՝ Մխիթար իւր Յառաջաբանէն ի զատ չունի ամենեւին գրաբարով խառն հատուածներ, և ոչ իսկ այնպիսի գրաբարախառն կտորներ՝ ինչպիսի էին ի վեր անդր գրուածներն։ Գրեթէ բոլոր գիրքն մի և նոյն ռամկօրէն լեզուաւ կը գրէ. ուստի և հազիւ աստ անդ կը գտնենք՝ գրաբարի յատուկ ձեւերէ և կազմակերպութիւններէ և ասացուածներէ զատ՝ միակ և առ առաւելն երկու տող միահետ բուն գրաբար նախադասութիւններ։

«Թէ (Մխիթարայ) առաջիկայ գրուածոյս և թէ այլ եւս ռամկօրէն գրուածոց յատկութեանց մին եւս այն է՝ որ հասարակօրէն լեզուն հետ զհետէ և աստիճանաբար կը ռամկանայ, մինչեւ ի վերջ կոյս զուտ ռամկօրէնի կերպարանք կ'առնու։ Յայտնի է որ ինչպէս յամենայնի՝ նոյնպէս նաեւ յայսմ բացառութիւնք կը հանդիպին»[1]։

Այսպիսի ողջպահիկ գիտութեան մը պակասութիւնը դարմանելու համար՝ ուզեց Մխիթար այս գիրքս շարադրել. և իրեն կարողութենէն վեր համարելով բովանդակ բժշկութեան արուեստին վրայ գրելը, միայն երեք ազգ ջերմանց վրայ ուզեց համառօտիւ՝ նախագիտութեան և ստածման կամ դարմանելու եղանակին վրայ՝ պէտք եղած տեղեկութիւնները տալ. «զոր շարեցաք և հաստատեցաք, կ'ըսէ, ըստ կարգի հին և նոր վարդապետացն»։ Բայց մեր բժըշկարանաց մէջ ուրիշ հիւանդութեանց վրայ ալ կարճ գըրուածներ կամ հատուածներ կան Մխիթարայ անուամբ, ինչպէս նաեւ գրուած մը Վասն քարանց և յատկութեանց նոցա և բժշկութեան նոցա։

---

[1] Հանդէս ամսօրեայ. վերը յիշուած թերթին մէջ.

Հերացւոյն երկասիրութիւնը հրատարակուած է ի Վենետիկ Ս. Ղազար, յամին 1832.

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ

Գրիգոր Տղայ։ — Հայրապետական աթոռ բարձրանալը։ — Բանակցութիւնք ընդ կայսեր Բիւզանդիոյ։ — Տարսոնի ժողովը։ — Թուղթք։ — Առ Կիռ Մանուէլ։ — Առ Միքայէլ պատրիարք Հոռոմոց։ — Առ վարդապետս Ճիւնիսոյ։ — Առ Հաղբատացիս։ — Ողբք Երուսաղեմի։

Ներսիսի Շնորհալւոյն Վասիլ եղբօրը որդին էր Գրիգոր Տղայ, որ մանկութեան հասակէն իր հօրեղբօրը խնամոտ առաջնորդութեամբ՝ հմտացաւ աստուածային և արտաքին գիտութեանց, ու կաթողիկոսարանին մէջ եղող Կոստանդին յոյն քահանայէ մ'ալ տեղեկացաւ հելլենական դպրութեանց. կ'երեւնայ թէ հմուտ էր նաեւ եբրայական լեզուի, եթէ առ Տուտէորդին գրած Թուղթերուն խօսքերը իրեն վրայ ուզենանք հասկնալ։

Շնորհալւոյն յուղարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուելու համար՝ Հռոմկլայ եկած ըլլալով, հոն գումարուած բոլոր եպիսկոպոսաց ընդհանուր հաւանութեամբ անոր յաջորդ ընտրեցաւ. վասն զի անոր ըստ մարմնոյ մերձաւորը՝ ժառանգ և հետեւող տեսան նաեւ սորոյն լուսափայլ առաքինութեանց. և իր ընտրութեամբը՝ ազգին այսպիսի հօտասէր հայրապետէ մը զրկման ցաւը մեղմել ուզեցին։

Այն արժանաւոր ընտրութիւնը՝ ուրախացուց նաեւ ըզկայսրն Բիւզանդիոյ Կիռ Մանուէլ, որ մասնաւոր մխիթարութեան Թուղթ մը գրելով առ կաթողիկոսն, կը յորդորէր զինքը որ հօրեղբօրը ջանիւքն սկսած յոյն և հայ ազգաց եկեղեցական միաբանութեան խորհուրդն առաջ տանի։ Անիկայ էր նաեւ Գրիգորի բաղձանքը. բայց կը վարանէր թէ ինչպէս պիտի կարենայ ամբողջ ազգի մը հաւանութիւնն առնուլ այնպիսի օգտակար խորհրդոյ մը գործադրութեան։ Այս վախճանաւ Շնորհալին՝ Ստեփաննոս անունով վարդապետ մը արեւելք ղրկած էր միութեան հակառակող եպիսկոպոսաց հետ խօսելու, և անոր մեծ օգտակարութիւնը հասկցնելով՝ հաւանութիւննին առնելու։ Ստեփաննոս՝ Կլայեցւոյն մահունէն ետքը՝ առաջնորդաց հաւանութեան գիրը բերաւ և անոր յաջորդին յանձնեց. որով սիրտ առաւ հայրապետը, ու սկսաւ կայսեր ու Յունաց Միքայէլ հայրապետին հետ թղթակցիլ. և երկու ազգաց հաւատոյ մասանցը մէջ ունեցած զանազանութեանց մեկնութիւն տալով կամ ուղղելով, կաթողիկոսը Հռոմկլայ ժողովեց՝ Հայոց, Աղուանից ու Վրաց եպիսկոպոսունքն ու առաջնորդները և վանահարք։ Այն գումարման մէջ Ներսէս Լամբրոնացին իր ազդու և գեղեցիկ ատենախօսութիւնն ըրաւ, որով շատերուն տարակոյսը լուծեց, զայն իրենց ուղղութեան մէջ հաստատելով։ Ժողովոյն լմննալէն ետքը՝ բոլոր գումարեալ եպիսկոպոսունք իրենց հաւատոյ խոստովանութիւնը գրեցին, և իրենց ստորագրութիւնը դրին և ղրկեցին առ կայսրն։ Բայց նոյն միջոցին Միքայէլ կայսեր մահը և ուրիշ քաղաքական յեղափոխութիւնք վրայ հասնելով միաբանութեան խորհրդոյն գործադրութեան արգելք եղան։

Լատինացւոց հետ ալ սիրով և ընտանութեամբ էր Գրիգոր, և այն պատճառաւ Լուկիոս Գ Հռովմայ քահանայապետին ալ թուղթ գրեց, անոնց եկեղեցական պաշտամանց կարգաւորութեան գիրքը խնդրելով։ Լուկիոս կատարեց անոր խնդիրքը, և ի պատիւ՝ հայրապետական խոյր, եմիփորոն և պալիում ղրկեց՝ կոնդակաւ մը, զոր Լամբրոնացին թարգմանեց։

Այն տարիները Հագարացիք նորէն Երուսաղեմի տիրեցին. գերմանիոյ կայսրը Փրեդերիկոս Ա՝ խաչակրաց խմբով մը արեւելք անցաւ, սուրբ քաղաքը նորէն քրիստոնէից դարձնելու։ Ռուբինեանց պայազատն Լեւոն Բ երբ լսեց անոր գալուստը, կաթողիկոսին հետ մէկտեղ կայսրը դիմաւորելու փութաց. և թէպէտ մեռած գտան զինքը, բայց իրեն իշխաններէն մեծարուելով՝ դարձան իրենց աթոռը ի Հռոմկլայ. և հոն հանդիպեցաւ կաթողիկոսին մահը՝ իւր վաթսուն տարուան հասակին (1193)։

⁂

Գրիգորի Տղայոյ երկասիրութիւններէն՝ հազիւ մէկ քանի թուղթերը մեր ձեռքը հասած են։ Անոնց մէջ գլխաւորներն են

Առ Կիւռ Մանուէլ կայսր ի Կոստանդնուպոլիս, Յունաց եկեղեցւոյն Հայոց հետ ընելիք միաբանութեան խնդրոյն համար, որուն սկզբնաւորութիւնը Շնորհալւոյն առենէն եղած էր։ Շնորհակալ կ'ըլլայ կայսեր այն մխիթարական թղթոյն համար՝ զոր սրբոյն Ներսէսի մահուան առթիւ գրած էր իրեն. կը խոստանայ առաջ տանիլ միաբանութեան խնդրոյն նկատմամբ եղած ձեռնարկութիւնը, թէպէտ և ի նմին ժամանակի առջեւը կը դնէ նաեւ մեծամեծ դժուարութիւններն, և թէ անկարելի է որ Հայք ծխականաց մէջ փոփոխութիւն ընդունին, ինչպէս կը պահանջէին Յոյնք։

Առ նոյն ինքն Կիւռ Մանուէլ, յորում կը յայտնէ կայսեր թէ կը փափաքին Հայք որ ի գործ դրուի միաբանութիւնը՝ և թէ սիրով յանձն կ'առնու զայն նաեւ ազգային ընդհանուր եկեղեցական ժողովը՝ որուն բերնէն հաւատոյ խոստովանութեան ընդարձակ թուղթ մը կը հրատարակէ։

Առ Միքայէլ պատրիարք Հոռոմոց ի Կոստանդնուպոլիս. դարձեալ նոյն խնդրոյն վրայ, և Հայոց ազգային ընդհանուր ժողովոյն հաւանութեամբ։ Այս թղթին վերջերը խօսք կ'ըլլայ հաւատոյ դաւանութեան վրայ՝ զոր առած տուած էին առ կայսրն և կը բովանդակէ համառօտ քաղուած մը նոյն յայտարարութեան։

Առ Հաղբատացիս, և առանձին առ Գրիգոր Տուտէորդի, որ իր տեսութեամբն ու գաղափարներով, դէմ ելած էր կաթողիկոսին և Յունաց, ու անոնց հաւատոցը դաւանութեան վրայ այլ և այլ տգիտական ամբաստանութիւններ ըրած, և անարգական խօսքերով նախատած Հռոմկլայի ժողովքը։ Սպառնալիք ալ ըրած էր կաթողիկոսը իւր իշխանութենէն ձգելու։ Հանդարտ ոգւով՝ բայց լի քրիստոսահրաման սիրով և աստուածաբանական հմտութեամբ պատասխան տուած է իրեն Գրիգոր Տղայ, յորդորելով զինքն ի զգաստութիւն։ Ոչ լոկ իրեն պաշտամանը և եկեղեցական աստիճանին արժանաւոր օծութեան, այլ նաեւ մատենագրական ոճոյ և պերճախօսութեան ընտիր օրինակ մը կրնայ ըլլալ այս թուղթը։

Առ վարդապետս Հիւսիսոյ, որոնք կամ տգիտութեամբ և կամ նախապաշարմամբ դէմ կը կենային միաբանութեան, ու նոյն ձեռնարկին պատճառ և համամիտ եղող կաթողիկոսը՝ իրաւունք և պարտք կը համարէին թշնամանել։ Անոնց ուղղուած է Գրիգորի Տղայոյ այս թուղթը, որ ժամանակաւ երիցագոյն է քան զգրութիւն թղթոյն առ Տուտէորդին։ Ընդարձակ և աստուածային ոգւով վառուած կը խօսի այս թղթին մէջ սուրբ հայրապետը, յորդորելով զվարդապետս՝ որ ամէն բանէ աւելի նախամեծար համարին զսէր և զմիաբանութիւն։

Այս թղթերուն մէջ ընտիր, հարթ և ընդհանրապէս հայկաբան ոճ մը կը բանեցնէ Տղայն, և կը ջանայ Շնորհալւոյն հետեւող երեւնալ թէ գրչովը և թէ սրտով. միայն թէ Շնորհալւոյն վսեմութիւնը և քերթողաբան ոճը կը պակսի ասոր քով։ Տղայոյն թղթոց մէջ ընտրելագոյն է առ Հաղբատացիս գրածը։

Գրիգորի կաթուղիկոսի կ՚ընծայուին ուրիշ երկու թըղթեր ալ. մէկը առ Լուսիոս հայրապետ Հռովմայ, զոր կը յիշատակէ Լամբրոնացին. իսկ զմիւսը կը յիշէ նոյն ինքն կաթուղիկոսն՝ կայսեր գրած թղթոյն մէջ, որ առ նա ուղղած էր անմիջապէս Շնորհալւոյն մահուընէն ետքը։ Այս երկու թուղթերն ալ դեռ մեր ձեռքը հասած չեն, բաց ի Լուսիոս քահանայապետին առ կաթողիկոսն Հայոց գրածէն՝ զոր ի լատինէ թարգմանեց ի հայ Լամբրոնացին։

Ողբք Երուսաղեմի. — Գրիգոր Տղայ իր օրերը հանդիպած Երուսաղեմի առումը յայլազգեաց՝ ողբերգական քերթուածով մը աւանդեց, հետեւելով և յայսմ իր հօրեղբօր Շնորհալւոյ ողբոցն՝ յառումն Եդեսիոյ. Նոյն չափով ոտանաւոր ալ գրած է։ Բայց ինչպէս յարձակ գրութեանն՝ ասոր մէջ ալ ստորեւ կը մնայ քան զՇնորհալին, թէ և հիներէն ոմանք աւելի բանաստեղծ համարեր են զսա, գուցէ ուրիշ գրուածոց համար՝ որ մեզի ծանօթ չեն։

Գրիգորի Տղայոյ Թուղթերը հրատարակուած են ի Ս. Ղազար (1838). Իսկ Երուսաղեմի ողբը զոր սխալմամբ այս գրքին 620 էջով փոքր վկայաբերին ընծայած էինք, բնագրաւ և գաղղիական թարգմանութեամբ հրատարակեց Տիւլորիէ «Recueil des historiens des Croisades» (Documents Arméniens) շարքով ի Փարիզ։

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

Մխիթար Գոշ։ — Իր ուսումն։ — Համբաւը։ — Շինած վանքերը։ — Զաքարէ Սպասալար։ — Այսր հրամանաւ գումարուած ժողովը յԱնի։ — Գոշի երկասիրութիւնք։ — Դատաստանագիրք։ — Աղբիւրք և ոճ։ — Հմտութիւն։ — Պատմական գրուած մը Մխիթարայ անուամբ։ — Առակք։ – Մեկնութիւն Երեմիայ։ – Աղօթագիրք։ – Մանր երկասիրութիւնք։ – Տպագրութիւնք իր գրուածոց։

Լամբրոնացւոյն օրերը կը ծաղկէր Մեծ՝ Հայաստանի մէջ Մխիթար անունով վարդապետ մը, որ Գոշ կոչուեցաւ՝ մօրուքին ուշ աճելուն պատճառաւ[1]։ Գանձակ քաղաքէն էր. ընտիր ու բարեպաշտ ծնողաց զաւակ, որոնք սրբազան ուսմանց նուիրեցին զինքը. և երբոր տարիքն առաւ՝ կուսակրօն քահանայ ձեռնադրել տուին։ Շատ տարի քահանայական պաշտամունքը կատարելէն վերջը՝ փափաքելով կատարեալ հմտութեան սուրբ գրոց, և անոնց մէջ իրեն թաքուն մնացած ճշմարտութեանց, հանդիպեցաւ Տաւուշեցի Յովհան վարդապետին՝ որ նոյն ժամանակին մէջ գիտութեամբք համբաւաւոր անձ մը համարուած էր. յառաջագոյն աշխարհիկ, և ամուսնոյն մահուընէն ետքը կրօնաւորելով՝ քահանայական օծութեան և վարդապետական աստիճանի բարձրացած։ Մխիթար աշակերտեցաւ յետոյ ուրիշ հոգեւորականաց ալ, և վարդապետական անուն և պատիւ ստացաւ անոնց քով։ Բայց ինքը անով գոհ չըլլալով, դէպ ի արեւմուտք գնաց, Սեաւ լերան վրայ բնակող վարդապետներուն քով. և անոնց իմացնելու թէ ինքն ալ վարդապետական իշխանութիւն ունի, շատ օգուտ քաղեց անոնցմէ. ու դարձաւ ի Կարին, ուր ծանօթացաւ Քուրդ անուն բարեպաշտ իշխանին, որ Վրաց թագաւորէն սարտուցեալ եկեր էր հոն. և Մխիթար հետը մտերմանալով՝ սիրելի եղաւ իշխանին։ Անկէ վերադարձաւ իր հայրենիքը. ուր իմաստութեամբը մեծ համբաւ ստանալով, շատերը կու գային իրեն աշակերտելու. և ինչպէս Կիրակոս պատմիչը կը վկայէ, ամենայն ոք կը փափաքէր տեսնել զինքը, և իր խօսքը մտիկ ընել։ Այնչափ մեծ էր անունը՝ որ ոչ միայն ուսմանց փափաքով վառուած երիտասարդութիւնը, այլ նաեւ շատ վարդապետներ իրենց մեծութեան սահմանը ծածկելով, աշակերտի պէս կու գային անոր քովը որ մտիկ ընեն. ետքը իրմէ հրաման առնելով՝ նորէն վարդապետութեան սահմանը կ'ընդունէին։ Եւ թէպէտ բազմաթիւ էին իր անուանի աշակերտները, բայց անոնց մէջ ամենէն աւելի նշանաւորներն էին Թորոս անունով մէկը, որուն հայրը հայկազն էր և մայրը ասորի, որ առաքինի և ուսումնական կեանք մ'անցնելով, խոր ծերութեամբ վախճանեցաւ և ի Հաղբատ թաղուեցաւ. և Վանական Յովհաննէս վարդապետ՝ որուն վրայ առանձին պիտի խօսինք։ Բայց Մխիթար իր հայրենի քաղաքին մէջ նեղուելով ի Տաճկաց՝ յորդորանօք Ստեփանոսի Աղուանից կաթուղիկոսի գնաց ի Խաչէն՝ Հաթերքոյ Վախթանկ իշխանին և անոր եղբարց քով, ուր մեծապէս պատիւ գտաւ։ Հոն քանի մը տարի կենալէն ետքը՝ Քուրդ իշխանը եկաւ յիւր հայրենիքն յաշխարհն Կայենոյ և ի բերդն Մահկանոյ. և Վրաց Թամար թագուհին ոչ միայն սիրով և պատուով ընդունեցաւ զնա՝ դարձնելով հայրենական ստացուածոց ժառանգութիւնն, այլ նաեւ ուրիշ տեղեր ալ տուաւ իրեն։ Գոշ՝ յիշելով անոր բարեկամութիւնն ու սէրը՝ փութաց առ նա։

---

[1] «Այսպէս կոչեցին զնա՝ զի հեղգագոյն ելին ալիք նորա». Կիրակոս։

Գոշի վարդապետը՝ երբ լսեց իր համբաւը և թէ նա իր հայրենիքը դարձեր է, եկաւ անոր քով, ու իրենց հին սիրովը միաբանելով, կեցան Գետիկ վանքին մէջ, զոր նոյն ինքն Գոշ մեծածախ և փառաւոր շինել տուեր էր Հաղբատայ մօտ, Կայենական գաւառին մէջ։ Վանքին առաջնորդը որ Սարկաւագ վարդապետ կը կոչուէր, և յառաջագոյն աշակերտած էր Մխիթարայ, ուրախութեամբ ընդունեցաւ զինքը, և կը սպասաւորէր յօժարութեամբ այդպիսի հռչականուն անձի մը։ Երբոր նոյն վանքը կործանեցաւ սաստիկ երկրաշարժով մը, և նորոգութիւնն անհնարին կ'երեւնար, բնակիչքն ուզեցին հեռանալ այն տեղէն և ցրուիլ. մանաւանդ որ կը նեղուէին ալ ի մերձակայից. որովհետեւ Սարգիս անունով իշխան մը՝ իր գեղէն հոն փոխադրուելով, վանք մ'ալ ինքը շիներ էր, և երկու ուխտերու մէջ անհամաձայնութեանց և գժտութեանց առիթք չէին պակսեր։ Գոշ յորդորեց զիրենք չցրուիլ, և ինքն անոնց բնակութեան համար ուրիշ վանք մը շինեց նոյն Գետիկ անուամբ՝ Տանձուտայ ձոր ըսուած տեղը, Իւանէ մեծ իշխանին հրամանաւն ու օգնութեամբ։ Ուրիշ շատերն ալ օգնական եղան իրեն, և մասնաւորապէս Խաչենոյ իշխանը Վախթանգ և անոր կինը Արզուխաթուն, և Զաքարէ Սպասալարը՝ և եղբայրն Իւանէ։

⁂

Զաքարէ Սպասալար՝ մասնաւոր սէր և մեծարանք կը ցուցնէր Գոշ վարդապետին, և իրեն խոստովանութեան հայր ընտրած էր զինքը։ Այն օրերը Հայաստանի արեւելեան կողմի վանքերուն մէջ շատ շփոթութիւններ ծագած էին, եպիսկոպոսական ու կաթուղիկոսական աթոռոց օրինաւոր յաջորդութեան նկատմամբ։ Այս պատճառաւ Զաքարէ իշխանը հրամայեց որ ժողով մը գումարուի յԱնի Շիրակայ, ու հոն ժողովեցան նոյն վարդապետներն ու եպիսկոպոսունք՝ որ առաջ գումարուած էին ի Լօռի։ Բայց

Մխիթար վարդապետը իւր ծերութիւնն ու հիւանդութիւնը պատճառելով՝ հրաժարեցաւ ժողովոյն ներկայ գտնուելէն. թուղթ մը գրեց առ Զաքարէ, թէ ինչ որ վարդապետք վճռեն, ես ալ կ'ընդունիմ ու կը հաւանիմ անոնց սահմանածին: Երբոր ժողովը գումարեցաւ, Զաքարէ ստիպեց զվարդապետս որ իր խնդրուածոց հաւանին, և Սսոյ ժողովոյն մէջ սահմանուածներուն ընդունելի ըլլալը՝ թղթով ալ իրեն ձեռքը յանձնեն: Երբ անոնք նեղը մտան, ամենքը մէկ բերան գրուցեցին. «Այդ բանն անկարելի է առանց մեծ վարդապետին Մխիթարայ»: Այն ատեն Զաքարէ հանեց այն թուղթը զոր ընդունած էր ի Գոշէ. եպիսկոպոսներէն ոմանք հաւանեցան. ուրիշներն ալ չհամոզուելով՝ Սպասալարէն ժամանակ ուզեցին որ իրենք ալ կարենան գրել առ Մխիթար, և խնդրել որ անձամբ յանձն առնու ներկայ գտնուիլ այն գումարման: Այս թղթին մէջ կ'ազդէին որ ամենայն նեղութիւն և դժուարութիւն յանձն առնելով՝ գայ ի ժողովն. ու եթէ, կ'ըսէին, ճամբու մէջ մահ հանդիպի քեզի՝ անունդ հին սուրբ հայրապետաց կարգը կը դնենք. միայն թէ դու յանձն առնուս գալ առ մեզ:

Մխիթար վարդապետ անոնց թուղթը կարդալով՝ իմացաւ յայտնապէս թէ առանց իրեն անկարելի պիտի ըլլայ անոնց համոզումը. ուստի Գետկայ վանքէն Անի եկաւ: Բայց քաղքին դռնէն ներս չմտած՝ Զաքարէ մարդիկ ղրկեց որպէս զի ժողովքի չգացած՝ իրեն երթայ. և թէպէտ Մխիթար չուզեց մտիկ ընել, բայց իշխանը բռնութեամբ ձիուն երասանակէն բռնելով՝ Զաքարէի տարաւ զինքը: Գումարուած վարդապետները երբ այս բանս լսեցին, շատ խռովեցան. և մէկէն Ներսէս անունով վարդապետ մը ղրկեցին առ Մխիթար, որպէս զի Զաքարէի տունը չմտած՝ իրենց գայ: Հասաւ Ներսէս, ու տեսաւ որ անիկայ Սպասալարին դռնէն ներս մտնելու վրայ էր. ու չկարենալով ինքն ալ մտնել, անոր ետեւէն ձայնեց, ու ժողովոյն աղաչանքը ծանոյց անոր: Բայց երբ չկրցաւ զինքը ետ դարձնել, անոր

ու Զաքարէի վրայ շատ բան խօսեցաւ, ու մեծ շփոթութիւն ձգեց ժողովքին մէջ: Իսկ Զաքարէ հարցուց Մխիթարայ կարծիքը, և տեսաւ թէ անիկա դէմ չկեցաւ, այլ չուզեց ժողովոյն հաւանութեան սպասել. «Որովհետեւ եկիր դու, ըսաւ, – ինչպէս կ'աւանդէ Կիրակոս, – ինձ ոչինչ փոյթ է զնոցանէ». ու հրաման ղրկեց ժողովքը գումարողներուն որ ամենքն իրենց տեղը դառնան. Մխիթար ալ ծանուցոր թղթով յորդորեց զիրենք որ Սպասալարին խօսքը մտիկ ընեն, և իւրաքանչիւր ոք իւր վանքը դառնայ:

Այս երկայն դէպքը պատմեցինք, ցուցնելու համար թէ որչափ մեծ էր և պատկառելի Մխիթարայ անունը թէ եկեղեցականաց և թէ աշխարհական իշխանաց առջեւ: Ժամանակակից պատմիչք շատ կը գովեն զինքը. և Կիրակոս՝ հռչակաւոր և մեծիմաստ գիտութեամբ կը կոչէ. ուրիշ տեղ մըն ալ՝ այր իմաստուն վարդապետական ուսմամբ հռչակեալ: Վարդան պատմիչն ալ՝ սքանչելի գիտութեամբ կը կոչէ զՄխիթար:

Ի Գետիկ կամ ի Հաղբատ հանդիպեցաւ Մխիթարայ Գոշի մահը, Հայոց ՈԿԲ (1213) թուականին «ալեւորեալ և լի աւուրբք… ի խորին ծերութեան»:

⁂

Գոշի երկասիրութեանց մէջ նշանաւոր է

Դատաստանագիրքը, զոր Խաչենոյ Վաղթանկ իշխանին և Աղուանից Ստեփանոս եպիսկոպոսին խնդրանօք յօրինեց Հայոց ՈԼԳ (1184) թուականին: Այս գործոյն շարագրութեան պատմութիւնը ինքը Մխիթար կ'ընէ համառօտ յիշատակարանին մէջ, հետեւեալ խօսքերով. «Ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան եղեւ ի թուականութեանս Հայոց ՈԼԳ, և շրջանին երթալոյ ի բաց ՃԱ, որ կոչի փոքր. իսկ հռոմին ՆԵ. յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ. ի վաղնջուց ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանացս ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ որդւոյ Վախտանգայ կրօնաւորեցելոյ, և որդւոյ նորա Վախտանկայ, ի գղեկին որ կոչի Հաթերք, գլխաւորի այլոց իշխանաց։ Եւ կողմանցս Կիլիկիայ՝ մեծի իշխանին Ռուբենի, յամի յորում մեռաւ յաղթող թագաւորն Վրաց Գէորգէ․ ի հայրապետութեան տեառն Գրիգորի Հայոց մեծաց, և գիտապետութեան տեառն Ստեփանոսի տանն Աղուանից յաշխարհիս Առանայ, ի նահանգիս որ կոչի մայրաքաղաքին Գանձակայ, յանապատ և յեղբայրանոցս անուանեալ Դաանոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց, ձեռնատուութեամբ հօր Յովսեփայ և եղբօր Պաւղոսի յորդորմամբ յառաջարկութիւնս։ Բայց գծագրութիւն յիշատակիս ի նախագրութիւն գրոցս դատաստանի եղեւ, զի կատարած սորա ի ձեռն մեր միանգամ ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն։ Եւ արդ որքան է կար, անկանիմք հիւսել զկնի զիրս դատաստանի․ ընդ որս և զայս եւս մաղթեմք,… եթէ հաճոյ ոմանց թուի յօրինակէ աստի փոխել զիրս դատաստանի», և այլն։

Այս երկասիրութեան մէջ Մխիթարայ աղբիւրներն եղած են Բնական օրէնք, Քրիստոնեայ ազգաց իրաւաբանական աւանդութիւնք, (մերթ նաեւ Մահմետական օրէնք,) Հին և Նոր կտակարանք, և մանաւանդ մովսեսեան հնգամատեանը, Տիեզերական ժողովոց կանոնք, և Հայկական կամ ազգային ժողովոցը։ Երեք գլխաւոր մասերու բաժնուած է Դատաստանաց գիրքը․ և ընդարձակ Նախադրութիւն մը․ — Եկեղեցական կանոններ, և — Աշխարհական օրէնք։ Նիւթոյն արժանի հմտութիւն կը գործածէ Գոշ, և փութաջան հետազօտութիւն։ Նախ իբրեւ յառաջաբանական տեղեկութիւնք՝ տասնումէկ գլուխք բանի կան, որոնց մէջ տեղնիտեղը կը բացատրէ գրուածքին վախճանը, և իրեն ինչ ոճ բռնելը նոյն աշխատասիրութեան մէջ, նաեւ դէմն

եղած դժուարութիւններն՝ ազգին համար այսպիսի նոր երկասիրութեան մը մէջ, զոր և կը յիշեցնէ զայդ իրեն յանձնող Ստեփանոս կաթողիկոսի Աղուանից․ «Աղաչեմ զքեզ, կ'ըսէ, պատուական գլուխդ եկեղեցեաց տանս Աղուանից, մի վայրապար և թեթեւ գործ համարիր զհոգեւոր հարկ զոր եդիր ի վերայ իմ»։

Այս տասնմէկ գլուխէն զատ՝ երկու հարիւր յիսունըմէկ գլուխք կը կազմեն Դատաստանաց գիրքը․ մասնաւոր ցանկով մը՝ որ նոյնպէս Գոշի աշխատասիրութիւնն է։ Իր օրէնքները սահմանելու համար՝ ջանացած է Մխիթար՝ աստուածային ու քաղաքական օրէնքներն իրարու հետ միաբանել, այն վախճանաւ քաղուած մը կը համարուի այս գիրքը սուրբ գրոց, առաքելական կանոնաց և ժողովոց սահմանադրութեանց, և այլ և այլ ազգաց կանոններուն, համառօտ ու վայելուչ ոճով։

Աղուանից Ստեփանոս կաթողիկոսին հրամանաւ շարադրուած է, ըսինք, այս գիրքը, բայց ոչ յիշատակ և ոչ ալ պատմական երաշխաւորութիւն մը կայ՝ թէ Մխիթարայ երկասիրութիւնը պարտաւորիչ օրէնք կամ սահմանադրութիւն մը համարուած ըլլայ երբէք յազգին՝ յատուկ ինքնօրինութիւն ունեցած ատենին ալ։ Առ այդ կը պահանջուէր քաղաքական ու եկեղեցական բարձրագոյն իշխանութեանց հաւանութեան կնիքը՝ որ կը պակսի․ ուստի, ինչպէս հեղինակին ժամանակ, նոյնպէս ալ իրմէ ետքը՝ պարզապէս գիտական հետազօտութիւն և արտադրութիւն մը համարուած է։

⁂

Ձեռագրաց մէջ երբեմն համառօտած ալ կը գտնենք այս գիրքը, ըստ պիտոյից տեղւոյն։ Այսպիսի աշխատասիրութիւն մը ըրած է նաեւ Սմբատ Գունդըստապլ, ինչպէս ետքը պիտի տեսնենք։ Անւոյ գաղթականքն ալ ի

Լեհս՝ թարգմաներ են Թաթարերէն և Լատիներէն. ետքինս տպագրեցաւ ի Վիեննա այսպիսի խորագրով. Das alte Recht der Armenier in Lemberg, von Dr. Ferdinand Bischoff. Wien, 1862. *Թարգմանիչը յառաջաբան տեղեկութեանց մէջ կը ծանուցանէ թէ ի Լեհաստան գաղթող և տեղական իշխանութիւններէ զանազան ազատութեանց շնորհք վայելող Հայք՝ իրենց զարգացման ընթացքին շատ անգամ կը բանադատուէին հակառակիլ գերմանական քաղաքային հասարակութեան հետ, մանաւանդ դատաստանական իրաւասութեանց մէջ. որովհետև Հայք իրենց հին աւանդութեանց վրայ հիմնուելով չէին ուզեր ճանչնալ ուրիշ դատաստանական իրաւասութիւն՝ բաց ի իրենց ազգային դատաւորաց և իշխանաց յատուկ և ընդունուած օրէնքէն:* 1518 *Թուականին Սիգիսմունդ Ա. Թագաւորն հրամայեց Հայոց որ թարգմանեն իրենց օրէնքն ի հայէ ի ռութէն և կամ ի լատին լեզու, և ներկայացնեն իրեն* 1519*ին գումարուելի պետական ժողովոյն մէջ. զոր ըրին Հայք՝ լատինական թարգմանութեամբ ի Գրաքաւ քաղաքի ընծայելով Թագաւորին: Սիգիսմունդ քննել տուաւ զանոնք, ու իր աւագանւոյն հետ խորհրդակցելով՝ քանի մը կարևոր համարուած փոփոխութիւններ ընելէն ետքը, հաճեցաւ տալ իր հաւանութիւնն ու հաստատութիւնը Հայոց օրինագրքին:*

«Տարակոյս չկայ, կ'ըսէ Պիշոֆ, որ այս օրէնսգիրքը ոչ միայն Լեմպերկի՝ այլ Լեհաստանի ուրիշ քաղաքաց մէջ բնակող Հայք ալ ընդունած էին. և ասոր յայտնի նշանը՝ ձեռագիր օրինակաց զանազան տեղեր գտնուիլն՚ է: Շքեղ կերպով զարդարուած և Սիգիսմունդ Թագաւորին համար պատրաստուած բնագիրը հայերէն և լատին լեզուով՝ կը գտնուի, կ'ըսէ, Զխալինսկի կոմսին քով: Լատին թարգմանութեան ալ երկու ձեռագիր օրինակք կան ի Լեմպերկ, յորոց մին կայսերական համալսարանի մատենադարանին մէջ հետևեալ խորագրով. Statuta juris Armenici per Sigismundum primum Regem Poloniæ potentissimum approbata et confirmata, jussuque ac mandato ejusdem Regiæ Majestatis ex lingua illorum nativa in latinum sermonem translata et hic fideliter ex exemplari descripta».

Գաղթական հայ աւագանւոյն ձեռքով թարգմանուեցաւ այս օրինաց գիրքը նաև ի լեհ բարբառ յամի 1601[1]*: Պիշոֆի երկասիրութիւնն ալ Մխիթարեանք Վիեննայի հրատարակեցին աշխարհաբառ, ի Վիեննա ի* 1890*:*

⁂

Իրաւամբ Մխիթարայ ընծայուած է Դատաստանագրոց ամենահին և իրեն ժամանակակից գրչագրի մը մէջ, – հաւանականաբար հեղինակին ձեռաց գիրը համարուած —, նաև պատմական հետաքննին գրուած մը՝ այս մակագրով. «Շարք հայրապետացն Աղուանից և որ ինչ առ նոքօք դէպք»: Յօրինակին իննեւտասն էջերու մէջ կ'ամփոփուի այս գրուածքը. բայց յետին 1–2 *թուղթ առ հնութեան եղծեալ և շատ տեղ անընթեռնլի կը մնայ. այսպէս նաև ուրիշ այլ և այլ տեղեր՝ փափաքելի կ'ընեն աւելի անաղարտ պահուած օրինակի մը գիւտը: Կ'երեւնայ թէ իրմէ առաջ պատահած անցից վրայ համառօտագրելով, երկար գրած է Մխիթար իր ժամանակին մէջ հանդիպած անցուդարձները յորում անշուշտ նաև իր կրած հալածանաց վրայ, որ հոս հարեւանցի կերպով մը յիշատակուած են: Ջալալեան Սարգիս արքեպիսկոպոս՝ Ուղեւորութեան գրոցը մէջ խա-*

---

1. *Մխիթարայ Դատաստանագրոց բնագրին առաջին և միակ տպագրութիւնն ըրաւ Բաստամեանց Վահան վարդապետ, և տպագրեց Էջմիածին ի* 1880, *ընդարձակ և հմուտ յառաջաբանով, բազմաթիւ ծանօթութիւններով և ընթերցուածոց բաղդատութեամբ և համեմատութեամբ: Աշխատասիրողին իրաւաբանական գիտութեան և յարատեւ ուսմանց արժանաւոր պտուղ ըլլող երկասիրութիւն մը, յորմէ և մենք օգտուեցանք համառօտ տեսութեանս մէջ:*

չապատ ձորոյ մենաստանին վրայ խօսելու ատեն որ յաշխարհին Աղուանից, կ'ըսէ. «Գտաւ սոա և պատմութիւն անցից Գոշ Մխիթարայ»: Այրիվանեցին ալ ազգային ուրիշ պատմագրաց հետ կը յիշատակէ նաեւ Գոշին անունը:

Այս եկեղեցական – պատմական գրուածքին սկզբնաւորութիւնն է, «փառք փրկչին մերոյ Յիսուսի, ընդ նմին Հօր և Հոգւոյն, որ ետ զգադարումն աստանօր տալ գրոցս Դատաստանի. զի թէ և յառաջագոյն ասացաք գրելով զակաւ յիշատակարանն եթէ աւարտումն սորա ոչ է. սակայն մեք այժմ հանգուցանել կամեցաք գրելով ըստ կարի, ոչ խափանել զայլոց որք կամին գրել և յաւելուլ: Եւ թէպէտ յամի յորում սկսաք՝ գրեցաք զեդեալ չափս զատաստանի, սակայն յաղագս հալածանաց որ եհաս մեզ ընտանի և ոչ օտար, յապաղեաց գրել զյիշատակս զայսոսիկ:

«Բայց համարեցաք և զայս եւս հարկաւոր լինել, զի զշար կարգի հայրապետացն գիցուք զԱղուանից. զի և յայնոսիկ յամենեսեանն զոսա որ այժմ յարմարեցուք. մի՝ ըստ այդմ գրեսցուք պատճառի. երկրորդ՝ զի թէ ոք յօժարեսցի գրել պատմութիւն զկնի գրեցելոյն պատմութեանն Մովսեսի Դասխուրանեցւոյն, որ զրօվանդակ պատմէ զտանս Աղուանից, դիւրին լիցի յայսմանէ զշար հայրապետացն առնուլ. զի ոչ զամենեցուն անուն՝ ի նորայն գտցէ պատմութեան, բայց զայնոցիկ զորոց գրեաց: Ձի յայնմ ժամանակէ մինչեւ ցայժմ՝ ոչ ոք գրեաց. և եթէ պատահի ոք՝ յոյժ հարկաւոր է: Եւ արդ գիցուք զկարգն»:

Եւ կը յարէ անմիջապէս. «Շարք հայրապետացն Աղուանից, որք կացին զկնի տեառն Եղիշայի որ եկն յԵրուսաղեմէ»:

* * *

Առակք. — Հարիւր իննսունի չափ առակներ ալ շարագրած է Մխիթար, և իրաւամբ այս դժուարին արուեստին մէջ անուն առած ու Հայոց Եզովբոսը կոչուած: Իրաւ է որ իւր առակաց մէջ՝ ոչ յոյն քերթողին հանճարն ու փիլիսոփայութիւնը կայ, և ոչ ալ փեդրոս՝ լատին առակախօսին վայելուչ զուրցուածքը. բայց այսու հանդերձ ալ աննշան երկասիրութիւն մը չէ, մանաւանդ լեզուին նկատմամբ: Գիւտերն ալ շատ անգամ հասարակ են և առանց նորութիւն մը ունենալու, որոնցմով անհամեմատ առաւելութեամբ հաճոյ կրնային ըլլալ իւր առակները: — Թէպէտ և Կիրակոս՝ Մխիթարայ գրուածոց խօսքն ըրած ատեն՝ Առակացս յիշատակութիւնը չ'ըներ, բայց ձեռագիրք ընդհանրապէս իր անուամբը կը յիշատակեն:

Մեկնութիւն Երեմիայ. — Կիրակոս պատմիչը Մխիթարայ աշխատասիրութեանց վրայ խօսելով, կ'ըսէ. «Եթող նա յարձան և յիշատակ գերեզմանի՝ գիրս իմաստախօհս յօգուտ իմաստասիրաց, համառօտ մարգարէութեան Երեմիայի գեղեցկագիր կարգօք»: Այս մեկնութիւնը ոմանք ուզեցին Աստղկայ ընծայել, ինչպէս առաջ յիշատակեցինք, բայց գրուածքին ոճն ու լեզուն աւելի կը հաւատարմացնեն անոնց կարծիքը որոնք Մխիթարայ կ'ընծայեն[1]: Համառօտ՝ բայց ընդհանրապէս ընտիր երկասիրութիւն մըն է. և ինքը գրիչը կը վկայէ՝ թէ այլ և այլ պատճառներու համար ստիպուած ըլլայ՝ ամփոփաբան ոճ մը գործածել:

Աղօթք. — Մխիթարայ անուամբ այլ և այլ ընտիր ու ջերմեռանդն աղօթքներ կան, պատարագի մատուցման համար: Դարձեալ խրատական գրուածք մը նոյն սուրբ խորհրդոյն սպասաւորելու համար, զոր կը յիշէ և Կիրակոս. «(գրեաց) սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն, թէ որչափ պատշաճ իցէ կամ որպիսի կարգօք»: Ձեռագիրք կը խորագրեն. «Եռամեծի և քաջ

Առակաց կրկին տպագրութիւն եղած է ի Վենետիկ. նախ 1790ին, և ապա ի 1842, որ թէ տպագրութեամբն և թէ ընթերցուածոց ուղղութեամբն ընտրելագոյն է քան զառաջինն.

վարդապետի Մխիթարայ Գոշի ասացեալ զաղօթս ի ժամ սուրբ պատարագին»։

Կ՚աւանդէ դարձեալ Կիրակոս թէ Մխիթար շարագրած ըլլայ նաեւ զանազան խրատական թուղթեր, և գիրք մը Յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ կոչուած, ի խնդրոյ Զաքարէ մեծ զօրավարին և անոր Իւանէ եղբօրը։ Ուրիշ գիրք մ՚ալ որուն մակագիրն էր. «Ողբ ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս իւր, և ի դիմաց Եւայի առ դստերս իւր»։ Ղազարու յարութեան վրայ ալ ճառ մը կը յիշուի Մխիթարայ Գոշի անուամբ Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց ցուցակին մէջ (թիւ 1227)։

---

1. *Իր անունը կը կրէ նաեւ ի Մատենադարանին Էջմիածնի գտնուած օրինակը (թիւ 1228)։ Արղնոյ Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանաց Մատենադարանին գրչագիրն ալ (թիւ 224) Գոշի անունով կը յիշատակէ. «Արարեալ կրկին աշխատութեամբ Գոշ վարդապետին Մխիթարայ. և զթերի և զանյայտ բանս ի գիտ և ի յայտ ածեալ սուղ և սատար մեկնութեամբ առ ի պէտս ուսումնասիրաց»։*

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԱՑԻ

Խաչատուր Տարօնացի։ — Ազգային երաժշտական արուեստին մէջ ունեցած արդիւնքը։ — Խորհուրդ խորին երգը։ — Տաղեր։ — Վարդան Հայկազն։ — Դաւիթ Քոբայրեցի։ — Սամուէլ Սկեւռացի։ — Դաւիթ վարդապետ։ — Արիստակէս Վարդապետ և իր աշակերտն Եփրեմ։ — Ստեփաննոս Տիրացու վարդապետ։ — Յովհաննէս Կրօնաւոր։

Մխիթար Գոշի ժամանակակից էր նաեւ Տարօնացի Խաչատուր վարդապետը, որ Գուգարաց գաւառին մէջ՝ Հաղարծնի վանքին առաջնորդն էր. «Այր սուրբ և առաքինի, կ՚ըսէ Կիրակոս, և գիտութեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստի»։ Հաղարծնի վանաց ուխտը՝ որ իրմէ առաջ շատ խանգարած ու աւրուած էր, թէ շինութեամբք և թէ բարեկարգութեամբ պայծառացուց։ Մեծ պատիւ գտաւ Վրաց Գորգի թագաւորէն։ Պատմիչը կ՚աւանդէ թէ ինքը բերած ըլլայ խազը (nota) *արեւելքի կողմերը, այսինքն վերին կամ մեծ Հայաստանի մէջ. և իրմէ առաջ եղող երաժշտաց երգերը՝ որ մոռցուեր կամ բոլորովին այլակերպուած էին, գրեց ու շատերուն սորվեցուց։ Հաղարծնի վանքին մէջ մեռնելով, եկեղեցւոյն արեւմտեան կողմը թաղուեցաւ։*

Գանձարանաց ու տաղարաններու մէջ բազմաթիւ երգեր ու գանձեր կը գտնուին Խաչատրոյ անուամբ, և որոց շատին սկզբնատառք իւր անունը կը յօդեն։ Բայց ասոնց մէջ ամենէն աւելի գեղեցիկն ու մտադրութեան արժանա-

տորը՝ Խորհուրդ խորին երգն է, որ կ'երգուի քահանային զգեստաւորուելուն ժամանակ՝ սուրբ պատարագը մատուցանելու համար։ Այս երգին յօրինման պատճառը հետեւեալ դէպքը եղած է. Զաքարէ սպասալար իշխանը տեսնելով որ պատարագի մատուցման արարողութեանց մէջ շատ քմահաճոյ նորութիւններ մտած են, մասնաւոր ժողովքով մը ուզեց այն անկարգութիւնները վերցնել։ Երբ իւր վախճանին հասաւ, հրամայեց որ դուրսը բացօթեայ տեղ մը՝ սուրբ խորհրդոյն պաշտաման վայելուչ խորան մը կանգնելով, հանդիսաւոր պատարագ մատուցուի՝ եկեղեցւոյ հին և հարազատ արարողութեամբք։ Այս առիթով շարադրեց Խաչատուր վերը յիշուած ծանօթ երգը։

Տաղարանաց մէջ յիշատակուած երգերը հետեւեալներն են, յորոց ոմանք Խաչատրոյ կեչառեցւոյն են անշուշտ. բայց զանազանելը դժուարին ըլլալով՝ ամենը մէկէն հարկ համարեցինք նշանակել։

Խայտացելոյն յորովայնէ. — Յովհաննու կարապետին.
Խանդաղալից սրտիւ. — Քառասուն մանկանց.
Խանդաղակաթ սրտիւ. — Բեթղեհեմի մանկանց.
Խաչ կենաց նշան յաղթութեան. — Վարագայ խաչի.
Խաչաբարձ արհի պանծալի. — Բարսղի.
Խաչաքարոզ խաչելոյն. — Ոսկեբերանի.
Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք. — Գիւտ խաչի.
Խնամք խորհրդոյն, գութ արարչական. — Յարութեան.
Խնամք սիրոյ խնդիր փրկութեան. — Ծննդեան.
Խնդա խորան Աստուծոյ բանին. — Ծննդեան.
Խնդա Սիոն խորան խորհրդոյ. — Ծաղկազարդի.
Խնդա տաճար մայր տեառն Յիսուսի. — Ծննդեան.
Խնդահրաւէր դասք. — Ծննդեան.
Խնդահրաւէր մանկունք Սիոնի. — Թէոդորոսի և Գէորգեայ.
Խնդութեան ձայն, բարբառ աւետեաց. — Աւետեաց.
Խնդութեան ձայն բերկրական. — Տեառնընդառաջին.
Խնդութեան տօն այսօր կատարեմք. Կիրակամտի.
Խնդութեան քարոզ՝ բարբառ կենդանի. — Ստեփանոսի.

Խնկաբեր ծառ, ծաղիկ անթառամ. — Ծննդեան.
Խոնարհեալ բանին Աստուծոյ. — Մարտիրոսաց.
Խոնարհիմք հոգւոյն հեզութեամբ. — Լուսաւորչի.
Խոստովանիմք զքեզ միածին. — Ոսկեանց.
Խորան փառացն Աստուծոյ. — Ծննդեան.
Խորան քեզ ողբայ. — Վահանայ Գողթնացւոյ.
Խորհուրդ անշարժ հայրաշարժ. — Թադէի և Բարդուղիմէոսի.
Խորհուրդ անքնին անճառ. — Դաւթի և Յակոբայ.
Խորհուրդ ընտրեալ յառաջ գուշակեալ. — Խաչի.
Խորհուրդ հրաւիրմամբ քոյոյ. — Յովհաննու Երուսաղեմացւոյ.
Խորհուրդ հանգստեան. — Թաղման.
Խորհուրդ յառաջ քան զխկզբանէ. — Ղազարու.
Խորհուրդ հրաւիրեալ կամաց. — Յարութեան.
Խորհուրդ սոսկալի անիմանալի. — Աւագ ուրբաթու.
Խորհուրդ որ ծածկեալ էր. — Աւագ ուրբաթու.
Խորհրդաբար պատուեալ պատկերին. — Սարգսի.
Խորհրդազգած քոյ մարդեղութեանդ. — Առաքելոց.
Խորք անքնին, անճառ անհասին. — Յովհ. և Յակոբայ.
Խրամատեալ կանոն օրինի. — Ղեւոնդեանց.
Խրատ մարգարէին. — Անտոնի.

⁂

ՎԱՐԴԱՆ ՀԱՅԿԱԶՆ *վերջի տարիներուս գտնուած քերթողական քանի մը էջ երկասիրութեան հեղինակ՝ հետեւեալ խորագրով. Տաղ գերեզմանականն վասն փոխմանն երանեալ և սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասէրի։ Առաջին անգամ զայն հրատարակողք՝ հետեւեալ տեղեկութիւնը կու տան իր վրայ։*

«Հեղինակն՝ որպէս և իւր գրուածն «Տաղ գերեզմանական» նորոգ յայտնուած, տակաւին անծանօթ կը մնայ իր վարքովն, կարգաւ կամ աստիճանաւ. և զարմանալի իսկ Հայկազն կոչմամբը յերկոտասաներորդ դարու յորում գրեց, և ինչպէս խօսքերէն կրնայ ենթադրուիլ՝ ի սկզբան դարուն, ժամանակակից ըլլալով իրմէ ողբացուած Վկայասէրին։ Փափաքելի էր լսել իրմէ աւելի երկարապատում և հաւաստի տեղեկութիւններ անոր կենացն և գործոց վրայ,

քան ողբական տողերուն կրկնութիւնը. Թէպէտեւ կը գտնուին անոնց մէջ ալ՝ այլ և այլ նոր և վայելուչ բառեր և ասացուածք ռամկական ոճոյ կամ բարբառոյ՝ կամ իր ժամանակին աշխարհիկ լեզուին՝ զոր ընտրեր է, յորում երիցագոյն ընծայուած քան զՆերսէս Շնորհալի ի Հանելուկն, և զԼամբրոնացի ի Թուղթն և քան զՄխիթար Հերացի ի Բժշկարանին: Ուրիշ կարեւոր և մեր գրութեանց համար հետաքննական տեղեկութիւն մ'ալ կ'ամփոփէ այս քերթուածը, իրեն մերձաժամանակ ու մեզի անծանօթ երկու ազգային քերթողք յիշատակելով զԳագիկ և զԱտրներսեհ, որոց վրայ աւելի յագեցուցիչ տեղեկութիւնք փափաքելի են: Նորագիւտ քերթուածիս օրինակը գրչագրուած է ի **ՉԾԵ** (1306) *թուականի»*[1]:

Դնենք այս տողերն՝ յորս երկու քերթողաց յիշատակութիւնը կ'ընէ.

« Այլ նոքա չեն աստ ի միջի
Այլ յանմարմնոցն դասն ի պարի.
Յաջորդ չըկայ և չերեւի
Ոչ ժառանգորդ մեծն արուեստի,
Որանքն աւեր ճեմարանի,
Ճեմողքն անհետ չեն ի միջի.
Հիմքն խըլած վարժանոցի
Աթոռ չըկայ վարդապետի.
Վարժեալքն եղեն այգն ու գերի
Դատարկացած յամենայնի,
Բայց Էր չյիշեմ զոր ի մտի
Դեռ յերեկեան ժամանակի.
Գագիկ պիտէր Բագրատունի
Ու Ատրներսեհ Բագրեւանդի
Իւր պերճ բանիւքն էր պանծալի
Զափովք տաղի Հոմերոսի.
Դրուատ երգել բան տերունի
Աշխարհականս որդւոյն չիրմի

---

1. Բազմավէպ, (1873), 264.

ԴԱՒԻԹ ՔՈԲԱՅՐԵՑԻ. *Երկոտասաներորդ դարուն մէջ ծաղկեցաւ ի Հայաստան Դաւիթ Քոբայրեցի կամ Քոբարեցի, Հաղբատայ վանքին միաբաններէն, որ Ջաքարէ սպասալարին գումարած ժողովականաց մէկն էր, և կ'երեւնայ թէ անոր բարի դիտմանցն ու ջանից հակառակողներէն: Անշուշտ զայս կ'ուզէ ակնարկել Լամբրոնացին հետեւեալ խօսքերով՝ զոր գրած է առ Լեւոն թագաւոր. «ԶԱնեցւոյն պտուղն դուք էք լսել, և զՁորոյ գետոյն, և անդ Տուտէորդին և Քոբայրեցին, և այլք իւրեանց տեսողքն և կենակիցք»:*

Քոբայրեցւոյն անուամբ կը գտնուին Գրիգորի աստուածաբանին ճառից լուծմունք, և համառօտ երկասիրութիւն մը այս վերնագրով. «Թելադրութիւն յաւետարանն Մատթէի՝ ի պէտս աշակերտութեան Դաւթի վարդապետի»: Յովբայ մեկնութիւն մըն ալ կը յիշատակուի իր անուամբ, ուսկից վկայութեան խօսքեր մէջ կը բերէ Վանական վարդապետ. բայց իր ամբողջ գրուածը մեր ձեռքը հասած չէ:

Այս դարուս վերջերը երեւցած է նաեւ **ՍԱՄՈՒԷԼ** *անուանով ծերունի մը, Սկեւռայ վանքին միաբաններէն, և այն պատճառաւ Սկեւռացի կոչուած: Ասոր միակ երկասիրութիւնը՝ Լամբրոնացւոյն վարուց համառօտ պատմութիւնն է, զոր անոր շարագրած Սաղմոսի մեկնութեան ետեւ աւելցուց: Ընտանի և մտերիմ էր սրբոյն, ինչպէս նաեւ իւր երկու վանակիցքն Գրիգոր և Ներսէս:*

ԴԱՒԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ, *հեղինակ Մեկնութեան Եսայեայ մարգարէի, որ թերեւս ըլլայ առանց անուան յիշատակեալն ի Գէորգայ Սկեւռացւոյ՝ իւր Եսայեայ մեկնութեան մէջ:*

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ *և իւր աշակերտն* **ԵՓՐԵՄ**, *որ «աշխատեալ ժողովեաց զբանս մեկնչացն ի մի, յետ սրբոյն Ներսեսի» Շնորհալւոյ, և շարունակեալ յԵփ-*

րեմէ և յՈսկեբերանէ՝ Մատթէի աւետարանին մեկնութիւն մը գրեց։

Համանուն Արիստակէս վարդապետի մը ընծայուած կը գտնենք Նաւակատեաց ճառ մը հետեւեալ խորագրով. «Արիստակիսի Հայոց վարդապետի վասն ութօրեայ Նաւակատեաց, որ զկնի աստուածայայտնութեանն կատարի»։

Դարձեալ նոյն անուամբ ճառ մ'ալ, բաւական հնութիւն ունեցող Տօնապատճառի մը մէջ յԵրուսաղէմ, (թիւ 414) ի խորհուրդ Ոտնլուային՝ այս սկզբնաւորութեամբ. «Աստուածապարտ շնորհիւ լցեալ որդիք հաւատոյ»։

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԻՐԱՑՈՒ վարդապետ, Վարագայ կամ անոր մօտ Խաչի վանաց առաջնորդն, և յետոյ նաեւ արքեպիսկոպոս Վանտոսպայ, մեծահամբաւ սրբութեամբ և իմաստութեամբ, զոր՝ թէպէտ և շատ ծեր էր՝ թախանձանօք հրաւիրեց և ի Հռոմկլայ բերել տուաւ Գրիգոր Ապիրատ կաթողիկոսն, Լեւոնի մեծին արքայական օծման ուրիշ բազմաթիւ հրաւիրելոց հետ ներկայ գտնուելու. զովութեամբ կը յիշէ զաս նաեւ Ս. Ներսէս Լամբրոնացին, բայց յանուանէ գրաւոր գործ մը չի յիշուիր Ստեփանոսի։

Երկոտասաներորդ դարուս մէջ կը յիշատակուի նաեւ Յովհաննէս կրօնաւոր մը որդի Մուղի?, որուն երկասիրած Եսայեայ մեկնութեան սկզբնագիրն կը պահուի ի Մատենադարանին Էջմիածնի (թիւ գրչ. 1209) և կը վկայէ ցանկողն. «երկաթագիր գրեալ ի թուղթ բամբակեայ, ի Տոսպ գաւառի ի գիւղն Մարմէտ՝ ի հեղինակէն, ի թուին Հայոց ՇԿԵ»։

ՎԱՆՈՐԱՅՔ Ի ԿԻԼԻԿԻԱ

Կիլիկիոյ վանորայք ԺԲ դարուն։ — Դրազարկի վանք։ — Սկեւռայ վանք։ — Կաստաղոնի Բ կաթողիկոս։ — Գէորգ վարդապետ հաւաքող Հարանց վարուց։ — Ստեփանոս Սկեւռացի։ — Քռնեկոյ ուխտ։ — Յովհաննէս արքայեղբայր։ — Իր երկք և գրական արդիւնք։ — Անդրիասանց ուխտ։ — Խորին անապատ։ — Ակներոյ վանք և այլն։

Երկոտասաներորդ դարուս վանական–ուսումնական նշանաւոր հաստատութեանց մէկն է Դրազարկու կամ Թրազարկի վանքը, հեռի ի Սիս մայրաքաղաքէ Ռուբինեան հարստութեան միօրեայ ճանապարհաւ, և յԱնաւարզայ երկու օր հեռու. և այս վերջնոյս գաւառին մէջ կը դնէ Մատթէոս Ուռհայեցի, որ առաջին է ի պատմիչս մեր այդ տեղւոյն և հոն գումարուող վանականաց միաբանութեան յիշատակութիւնն ընդայց մէջ։ Վանքին հիմնարկութեան ժամանակն անծանօթ է. բայց թուի յառաջ քան զգալուստ և զհաստատութիւն Ռուբինեան իշխանաց. իսկ ԺԲ դարուս մէջ՝ նորոգեց զայն Թորոս Ա, երկու հռչականուն վարդապետաց ձեռքով, – զորս արդէն յիշատակեցինք, Գրիգորի Վկայասիրի ընտրելագոյն և համավատակ աշակերտաց. – և էին Գէորգ Մեղրիկ և Կիրակոս վարդապետք։ Մեղրիկ՝ յիսուն տարի ճգնեցաւ այն նուիրական սրբավայրին առանձնութեան մէջ, անքուն և չորաճաշակ, և «օրինակ բազմաց եղեալ և հայր խոստովանութեան լինէր ամենայն Հայաստանեայցս, – ըստ Ուռհայեցւոյն – և ժողովեաց զամենայն զասս ճգնաւորացն Քրիստոսի. և հաստատեաց անդ կարգ և կրօնք՝ զառաջին սուրբ հարցն». զոր և «հաստատեաց գրաւորական աւանդութեամբ, որ կայ մինչև ցայսօր», կ'աւանդէ ուրիշ պատմիչ մը: Հոն թաղուեցաւ ինքն Մեղրիկ վարդապետ[1], ու տասներեք տարի ետքն ալ՝ իր գործակիցն և ճգնակից Կիրակոս «կանոնագիրն Դրազարկու, – ինչպէս կը կոչէ զինքն Սամուէլ Անեցի, – նմանեալ առաջին սրբոցն, ունեալ զամենայն կտակագիրս Աստուծոյ, և ամենայն խորին քննութեամբ հասու եղեալ, լիապէս հասեալ ի վերայ հին և նոր կտակարանաց Աստուծոյ. և կոչեցաւ վանքն այն Գերեզմանատուն սուրբ վարդապետացն»:

Այն աստուածահրաւէր կոչման յուսով սպասող հանգստարանին մահաքուն լռութեան մէջ ամփոփուեցաւ յամի 1162 նաև «ամենագովելին Բարսեղ վարդապետ՝ աստուածաշնորհ», Մարաշոյ և Քեսնոյ Բալդովինոս (Պօղոսէն) կոմսին հայր խոստովանութեան. երբ աւելի սրտին քաջութեան՝ քան Բարսղի հայրագութ խրատուց անսալով, պատերազմի խռան մէջ գտաւ արիական բայց ողբալի մահը, իր սրտին ու հոգւոյն սիրելւոյն վրայ արտասուեց Բարսեղ՝ ողբերգական սրտաշարժ ճառով մը, ըսելով «զանգիւտ կորուստն», վասն զի չգտնուեցաւ անոր դիակն ալ. «Զտանին զնա, կ'ըսէ, տիեզերք ամենայն. զի ծով աղաղակէ թէ ոչ աստ. և երկիր գոչէ, թէ ոչ ծածկեցաւ ընդ հողով ի ծոց իմ. և օդ և ջուր՝ հրային մասամբն, եթէ ոչ մեք համարձակեցաք բանալ յայտնել ումեք... Մահ և գերեզման բողոքեն, թէ մեք ոչ ըմբռնեցաք և ոչ տեսաք իջեալ ի կարգս մեռելոց, և ի մէջ կենդանեաց ոչ ուրեք երևի... Ո՞ր ձեռք ամփոփեցին զհաստայեղց պնդութիւն կարծրացելոց ձեռաց հզօրին. կամ ո՞ր բազուկ տկար խոնարհեցոյց զանվանելի բացուկս անուանի քաջին... ո՞ր կատաղեցելոյ գազանի սիրտ ոչ խանդաղատեցաւ ի գեղեցկութենէ նորա, և ոչ ամաչեաց պատկառելով ի դիմաց նորա. ոչ գթացաւ ի գեղեցկութիւն նորա, և ոչ ողորմեցաւ մանկական տիոց վայելչութեան նորա, խնայելով ի հասակ տղայութեան... տեղի ոչ ուրեք երևեցաւ, կ'ըսէ, գերեզմանի նորա. այնքան զօրաց տէր և երևելի իշխան,... և այժմ ի մեռեալս ոչ յիշատակի... ի կենդանութեան իւրում ոչ հանգեաւ, և այժմ ի կատարածի կենաց իւրոց կորեաւ անյիշատակ»:

Այսոնցմէ զատ ուրիշ շատ մեծանուն և փառաշուք թագաւորաց, իշխանաց, հայրապետաց և վարդապետաց հանգստարան եղած է Դրազարկ: Յանուանէ կը յիշատակուին երեք Թորոսեանք՝ առաջինն, երկրորդ և երրորդ. Ռուբէն Բ մեծին Լևոնի եղբայրը, և Հեթում Ա որ քառասուն և հինգ տարի լի փառօք և յաղթական թագաւորութենէ մը ետքը «ի ժամ վախճանին բարիոք խոստովանութեամբ կրօնաւորեցաւ և անուանեցաւ Մակար». ուր արդէն իննեւտասն տարի յառաջագոյն արդարոց խաղաղ քունը կը ննջէր Զապէլ Ա իր լծակիցն և սիրելին, «զարդարեալ ամենայն առաքինութեամբք և բարեգործութեամբք»: Հոն թաղուեցան նաև Լևոն Բ թագաւորին երեք որդիքը, մանկիկն Ստեփանէ, Ալինախ և Օշին: Իսկ յեկեղեցական դասուէ և յաւագութեանց՝ Գրիգոր կաթողիկոս Տղայ, Գրիգոր Քարավէժ, Յովհաննէս Մեծաբարոյ, Կոստանդին Ա Բարձրբերդցի և Կոստանդին Գ Լամբրունացի.

Դրազարկի վանաց մէջ և ի միաբանիցն գրուած կամ գաղափարուած բազմաթիւ գրչագիրք՝ կը ցուցնեն, թէ ներանձնական կենաց սիրայիր ու քաղցր պարապմանց հետ՝ սիրելի էր իրենց նաև ուսումը, մանաւանդ սուրբ գրոց և հարց գիտութիւնը որոց յառաջադիմութեան մեծապէս նպաստած են առաջնորդք տեղւոյն, որք հետզհետէ յաջորդած են երկու առաջին հիմնադրաց՝ Գէորգ և Կիրակոս վարդապետաց. և են ժամանակագրական կարգաւ Սամուէլ

---

[1] Ձեռագրաց մէջ հետևեալ երկասիրութիւնը կը գտնեմք իր անուամբ. «Երգք օրհնութեանց ոգւոց արթնոց և մաղթանք մաքուր մտաց առ Աստուած, ասացեալ սուրբ վարդապետին Գէորգայ Մեղր կոչեցելոյ»:

(1173–1182), Յովհաննէս Մեծաբարոյ (1198), որ յետոյ բարձրացաւ յաթոռ հայրապետութեան Հայոց. Հեղի–Հեթում՝ եղբայր Լամբրոնացւոյն (1200), Յովհաննէս Մեծաբարոյ՝ կրկին, զոր մերժեց Լեւոն ի հայրապետական աթոռոյ, և միանգամ հետը հաշտուելով Դրազարկի առաջնորդութիւնն իրեն յանձնեց (1218). Բարսեղ (1220), Բարսեղ արքայեղբայր (1241–1275) և այլք: Ուսումնական բարգաւաճանք և վաստակք՝ ԺԲ դարէ մինչեւ ցկէս չորեքտասներորդին տեւողութիւն ունեցած են. ազգային իշխանական ինքնօրինութեան անկմամբ, և անոր հետեւանք աղետալի անցից տխուր և սրտաճմլիկ յիշատակաց մէջ կ'անհետանայ նաեւ վանքին անունը: – Դրազարկի եպիսկոպոսաց մէջ կը յիշուի և Ներսէս ոմն, որուն օրով առաջնորդն Բարսեղ ի Պոլսոյ կաթուղիկեայց մեկնութեան գիրք մը բերել տալով ի յոյն լեզու, Գրիգոր դպրին (թերեւս Սկեւռացին) յանձնեց՝ որ հայերէնի թարգմանէր. որովհետեւ նա՝ թէպէտ և տեղեակ էր յոյն և ազգային լեզուի, բայց թարգմանութիւնը պակասաւոր գտնելով ի տեղեկագունից յիշեալ Ներսէս եպիսկոպոսը՝ «յարմարեաց յետ մահուան տէր Բարսեղի՝ ըստ քերթողական արհեստի»: Այս գրուածքը մեր ձեռքը հասած չէ:

⁂

Հռչակաւոր եղաւ յայսմ դարու և Սկեւռայ վանքը Լամբրոնի. որուն հիմնադիրն և սկզբնաւորութիւնը անծանօթ, բայց ժամանակակից կ'երեւնայ բերդին շինութեան և պայծառանալուն՝ երբ Օշին առաջին հաստատեց հոն իր բնակութիւնը. թերեւս և հնագոյն իսկ, և ի Յունաց կառուցուած. որովհետեւ անունն ալ աւելի յունական կը թուի քան հայկական: Երկու մասն բաժնուած էր. մին՝ բուն վանքը, իսկ միւսն Անապատ կոչուած. ինչպէս էին ընդհանրապէս ի Հայաստան ուրիշ շատ վանքեր, խստակրօնք մին առաւել քան զմիւսն: Վանքին մէջ էր Սուրբ Աստուածամօր նուիրուած եկեղեցի մը, որուն շինութիւնը Օշնի երկրորդի Լամբրոնացւոյն հօր կ'ընծայեն՝ ուր և առաջնորդ դրաւ զորդին. բայց կ'երեւնայ թէ արքունական իշխանութեան բարձրանալէն յառաջ շինել տուած ըլլայ, և կամ ի հօրէն և ի հաւոյն արդէն կառուցուածը՝ աւելի ընդարձակած և փառաւորած. որովհետեւ հոն ստնդիայ մանուկ բերուեցաւ Լամբրոնացին՝ երբ «պատահեաց ախտ ցաւոց և ընծայեցաւ ամենօրհնեալ և միշտ փառաւորեալ Աստուածամօր, ի տաճար անուան իւրոյ որ ի վանքն Սկեւռայ... սկսեալ ի դեռաբոյս հասակէն՝ վարժեցաւ յուսումն դպրութեան ծնողացն, ընդ այլ եղբարսն»: Հոն էր սուրբը քանամենի պատանեակ, երբ ի Հռոմկլայէ Գրիգոր անունով մէկը գալով՝ վանքին մէջ պահուած աւետարանի մը ընդօրինակութեան համար, ի յանձնարարութենէ կոստանդնի ուրումն սպասաւորի Շնորհալւոյն, յիշատակարանին մէջ կ'աւանդէ թէ զայն «շնորհեաց մեզ սուրբ և ընտրեալ քահանայն, որդի մեծազօր Սեւաստոսի Պատրոն Աւշնի, որ ամենեւին հանգիստ եղեւ գրչիս տկարութեան՝ յիւր սեպհական անապատն Սկեւռայ անուն կոչեցեալ, որ էր մերձ յանառ դղեակն Լամբրուն»: Յետ Օշնի՝ Լամբրոնացւոյն անդրանիկ եղբայրն Հեթում Սեբաստոս, անոր եպիսկոպոսական ձեռնադրութեան առթիւ «ամենապատիւ վայելչութեամբ շինեալ էր տաճար աղօթից ի սուրբ ուխտս (Սկեւռայ), և նկարագրութեամբ պատկերաց զարդարեալ. ընկալեալ՝ զելեալ յանապատէն զփեսայս (զՆերսէս), գեղեցկացեալ աստուածային հանճարովն՝ որպէս լուսին, և պայծառացեալ գիտութեամբ իբրու զարեգակն»:

Սկեւռայ վանաց մէջ սրբակրօն բնակութեամբ և մատենագրական վաստակօք փայլեցան՝ Խաչատուր Լամբրոնացւոյն աշակերտն, սիրողն և ողբացող. զոր արդէն յիշատակած եմք: — Գէորգ ոմն վարդապետ. նոյն սրբոյն վերակացութեամբ և առաջնորդութեամբ Հարանց վարք կոչուած գիրքը հաւաքող և կարգի դնող. «Շնորհիւն Աստուծոյ կատարեցի, — կ'ըսէ ի յիշատակարանին — ընդ ձեռամբ հոգևոր վերակացութեան տեառն իմոյ Ներսեսի արքեպիսկոպոսի սրբոյ. որ այժմ կայ ի գլուխ սուրբ և հռչակաւոր այս ուխտի միաբանութեան ժողովոյ, և հովուէ զմայրաքաղաքն Տարսոն հանդերձ գաւառօք Կիլիկիոյ»: Այդ միաբանակցաց մէջ նշանաւոր կը համարուի Գէորգ, ոչ միայն մասնաւոր վարժապետ կոչմամբ ի Սամուէլէ՝ յընդօրինակողէ Սաղմոսամեկնչի Լամբրոնացւոյն, այլ նաև անով որ սրբոյն ընկեր և ուղեկից դրաւ զինքը Լևոն երբ Ալամանց կայսեր ընդ առաջ կը դրկէր պատուիրակութեամբ իր կողմանէ յողջոյն: Ներսեսի քեռորդւոյն և համանուան ի պատիւ սրբոյն յօրինած երկասիրութեան մը մէջ գովութեամբ կը յիշուին ի միաբանս Սկեւռայ՝ Գրիգոր և Բասիլ «բարեկամք նորա և երջանիկ վարդապետքս մեր, առ որովք այժմ դեգերիմք ի վարժս. որով լցեալ առ մեզ լինին թերութիւնք սրբոյն յորմէ զրկեցաք, որք յաղօտ և ի նսեմացեալ ժամանակի մեր՝ որպէս զաստեղս լուսապայծառս փայլեն ի մէջ գիշերի»: Առնցմէ զատ կը յիշատակէ զԲասիլ քահանայ, զՅովհաննէս և զԲարդողիմէոս զուսումնակիցս իւր, զԳէորգ, զՄխիթար և զմիւս այլ Գէորգ Սկեւռացի վարդապետս. որոց վրայ առանձին պիտի խօսինք հետևեալ ԺԳ դարու մատենագրաց կարգին մէջ:

Սկեւռայ վանից առաջնորդաց մէջ կը յիշուի և Կոստանդին Բ կաթողիկոս Հռոմկլայեցի, որ հայրապետական աթոռէն հրաժարած կամ բռնադատուած ի հրաժարել, — որովհետև ոմանք ի պատմչաց՝ կապանօք արգելեալ կը վկայեն ի Լամբրոն բերդի ի թագաւորէն Հեթմոյ, — վանական առանձնութեան մէջ ապրեցաւ քանի մը տարի, մինչև կրկին կոչեցաւ բազմիլ յաթոռն յորմէ մերժուած էր: Հոն եղած ատեն՝ շինել տուած է Կոստանդին ճարտարագործ և բազմագրուագ Սրբարան կամ Պահարան մը

նշխարաց սրբոց, որ և ձեռքէ ձեռք՝ ի հինից և յասպատակաց զերծանելով՝ հասած է մինչև առ մեզ, գեղեցիկ և նախանձելի յիշատակ մեր նախնեաց բարեպաշտութեան: Սրբարանին երկու դռնակաց վրայ հարիւր չորս ոտանաւոր տողերու մէջ ամփոփուած յիշատակարան մը կայ՝ երկասիրութեամբ Կոստանդին կաթողիկոսի յորում կ'աւանդուի իր հայրապետութիւնը և առաջնորդութիւն ի վանս Սկեւռայ.

« Հաւատացաւ ինձ աստիճան,
Նըստիլ յաթոռ այցելութեան՝
Գաւազանաւըս հովուական.
Արդ ըստ աստուածեան յաջողման,
Ի դէպ ժամու և պատահման.
Բարոյն Հեթմոյ արքայութեան,
Որ զինական էր սրբազան.
Եղէ յաթոռ վանական
Սկեւռա վանացս ի հովութեանն,
Եդայ տեսուչ այն մեծի տան,
Եւ վիճակին իւր սեպհական»:

Կոստանդնի ժամանակ անուանի եղան ի Սկեւռա Ստեփանոս Սկեւռացի՝ որ ըստ Ուռպելեանի իր նախկին ուսումն և յառաջադիմութիւնն ըրած էր յաշխարհին Սիւնեաց. Մարկոս վարդապետ և Ստեփանոս դպիր, և այլք ԺԳ դարու առաջին քառորդին. որով կ'ենթադրուի թէ մինչև այն ատեն շէն էր վանքն և ուխտը. Թէպէտև Անեցւոյն ժամանակագրութեան շարունակողը կ'աւանդէ թէ յամի 1279–80ին հրոյ ճարակ եղած ըլլայ ի Թուրքաց:

⁂

Անուանի էր և Գռներ կամ Գռներոյ վանքն, «հռչակելի սուրբ ուխտ» կոչեցեալ ի նախնեաց, և «մերձ յաստուածապահ դղեակն Բարձր Բերդ կոչեցեալ»: Միակ յիշատակ այս վանքին և փառք՝ Յովհաննէս Արքայեղբայրն և իր անունը հասած է առ մեզ, հաշակեալ իր տաղմին ազնուափայլ շքովը և մատենագրական սիրովը ու ջանիւք։ Վասն զի էր, ինչպէս ինքն ալ և այլք զնմանէ կ'աւանդեն, «որդի քրիստոսասէր և բարեպաշտ իշխանաց իշխանին կոստանդեայ Թագաւորահօր և արքայահօր Հայոց, և եղբայր քրիստոսապսակ քաջ արքային Հայոց Հեթմոյ», յառաջագոյն Պաղտին կոչուած, ու եպիսկոպոսական ձեռնադրութեան ժամանակ փոխելով զանունն ի Յովհաննէս։ Մանկութեան հասակէն խնամով ու փութով և արքայական տաղմին արժանաւոր դաստիարակութիւն մ'ընդունելով յեղբարցն, և մանաւանդ յարքեպիսկոպոսէն Բարսղէ, զոր «տէր ոգւոյ իւրոյ – կը կոչէ – և երախտաւոր մարմնոյ» և կը յաւելու թէ «որոյ երախտիք գերազանց է քան զբանս և զմիտս՝ ի կրսերս իւր». որուն խնամոցը և ձեռքին տակ կ'երեւնայ թէ շարունակած է իր կրթութիւնն ի վանս Դրազարկի։

Յովհաննու Արքայեղբօր առաջին երկասիրութիւնն է, արդասիք երիտասարդական մտաց և հասակին, քերթուած մը «Յարքայն Հեթում մինչ ի Տարսոն էր, որոյ նախագիծ տանցն ըստ անուանցն է ողեալ». վասն զի տանցլուխ տառքն հետեւեալը կը կազմեն. «Երգս Հեթմոյ է արքային Հայոց. ա (ի) Յոհաննիսէ կրսերէ իւր»։ Այս բաւական ընտիր ոճով և ընտրելագոյն սրտով ու հոգւով շարադրածէն զատ Արքայեղբօր անուամբն մասնաւոր երկասիրութիւն մը մեր ձեռքը հասած չէ, բաց ի քանի մի տաղից. մին ի սոցա Աստուածածինն «որոյ Նախագիծ տանցն ըստ անուանն է ոգոլին. մեծին Յովհաննիսի վարդապետի ասացեալ, եղբօր Թագաւորին Հայոց», ինչպէս կը վկայէ հին և ընտիր տաղարանի մը մակագրութիւնը. և միւսն՝ ապաշխարութեան մեղեդի մը՝ որոյ սկզբնատառք կը յօդեն. Յոհաննէս վայ քեզ։ Բազմաթիւ են իր խմբագիր կամ իւր յանձնարարութեամբ ընդօրինակուած գրչագիրք՝ մանաւանդ սուրբ աւետարանաց. որոց ընթերցուածոց ընտրութեան համար շատ աշխատած է, ու տարբերութիւնները կը դնէ ի լուսանցս, և մերթ ալ կ'ազդէ թէ «յոյժ տագնապիմ յուղղոյն գիւտ», կամ «յոյժ տաժանեցայ յուղղոյն գիւտ», որ այն ալ մեծ արդիւնք մ'է իրեն և յետագայից երախտապարտ մեծարանաց արժանի։ Վայելուչ և ընտիր են ինքնագիր այլեւայլ յիշատակարանները՝ ցրուած իրմէ կամ իրեն համար ընդօրինակուած գրոց մէջ։ Այս «սուրբ և ընտրեալ աստուածահաճոյ արքեպիսկոպոսն» – ինչպէս կը կոչեն զինքը ժամանակակից գրչագրաց յիշատակարանք – մեռաւ ի ՉԼԸ թուականին Հայոց։ Իրեն յաջորդքն յաթոռ առաջնորդութեան Փռներոյ վանից եղան Ներսէս (1316) և Մխիթար (1341), որ Յակոբ կաթուղիկոսէն ետքը բարձրացաւ ի գահ հայրապետութեան Հայոց, և կրօնական խնդրովք և հակառակութեամբք յուզուած ազգը խաղաղելու համար ժողով մը գումարեց ի Սիս նաեւ ի յորդորելով քահանայապետին Հռովմայ, և ժողովականաց հաճութեամբ և հաւանութեամբ խոհական մտօք ու սրտով երկար նամակ մը գրեց առ նա՝ յանդիմանելով ու սուտ հանելով հակառակողաց ոմանց յազգայնոց ընդդէմ Հայաստանեայց եկեղեցւոյ ըրած ամբաստանութիւնները։

Յիշենք մերձ ի Սկեւռա զանապատն Ս. Աստուածածին Մաղրուէի, ամայացեալ ի մէջ լերանց, ուր աննմանն Լամբրոնացի «ի գիշերի և ի տուընջեան անհանգիստ էր յընթերցումն. և միայն կատարէր զգործ սրբոյ պատարագին պաշտաման... ընդ հոգեւոր դաստիարակին իւրում Յովհաննու՝ ելեալ մնայր ի միայնութիւն, և քաղցր էր նմա այն քան զամենայն հեշտութիւն»։ – Ս. Գէորգ, ուր շարադրեց իր հրաշալի երկասիրութիւնը Մեկնութեան սրբոյ պատարագին։

⁂

Պատմական և մատենագրական դիպօք և արդեամբք ոչ նուազ փայլ ստացած են Անդրիասանց կոչեցեալ ուխ-

տըն՝ մերձ ի Բարձրբերդ, անապատն խորին՝ զոր արդէն յիշեցինք, Փերձեր կամ Պերձեր վանք, այլ ասոնցմէ շատ աւելի հռչակաւոր Ականց կամ Ակներոյ վանքը, առ ստորոտով Բարձրբերդոյ, մեծին Լեւոնի համակրութեան ու սիրոյն արժանաւոր սրբավայր. ու թէպէտ առատամիտ սրտիւ ու հոգւով և քաղաքագէտ մտօք՝ իր խնամքը շատ վանորէից վրայ տարածեց որ ի Թագաւորական սահմանի իշխանութեանն, ու չխնայեց ի ծախս անոնց շինութեան ու բարեզարդութեան համար, բայց անոնցմէ ամենէն աւելի սէր ու սիրտ կապեց ասոր վրայ. «Զի յոյժ սիրէր նա զայն վանս, — կը վկայէ Կիրակոս, — վասն բարիոք կարգաւորութեան նոցա և հաճոյական աղօթից». ու փափաքեցաւ մահուանէն ետքն ալ հոն հանգչիլ, թէպէտեւ իր այս կամքը մասամբ եւեթ կատարուեցաւ, զսիրտն և զփորոտին միայն փոխադրելով յԱկներ և զմարմինն ի Սիս։ Հոն մշտահար ու անմխիթար սրտին սփոփանք և գիւր խնդրեց նաեւ Հեթում Ա., երբ թշնամւոյն առջեւ տկարանալով, տեսաւ իր որդւոց մէկուն մահը, ու միւսին գերուիլն. ու իրաւամբ «բեկաւ սիրտն ի կարի և յանհնարին տրտմութենէ, — կը վկայէ ուրիշ պատմիչ մը, — ոչ կարէր կանգնել զսիրտ իւր, մինչեւ եկն ի սուրբ և ի գերահռչակ ուխտն միանձանց, ի յԱկանց անապատն, և առ մխիթարել սակաւ մի ի միեղէն եղբարց սուրբ ուխտիս»։ Հոն կնքեց նաեւ իր կեանքը, հրաժարելով յարքունական ծիրանեաց, ու անշուք կրօնաւորական սքեմաւն ու Մակար անուան տակ ծածկելով աշխարհական փառօք անցեալ մը, անմահական ու անանց երանութիւն մը փափաքանօք փնտռելով։

Ականց վանաց առաջնորդաց ու միաբաններու մէջ կը յիշուին Թորոս և Ստեփաննոս վարդապետք, Ճլուզ կոչուած Յովհաննէս վարդապետ մը, որուն տաղարանք՝ ընտիր երգ մը կ'ընծայեն ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ։ Իբրեւ գիտնական ու ազգին մեծարանաց արժանի հաստատութիւն մը ծաղկած կ'երեւի Լեւոն Բ Թագաւորի ժամանակ և իրմէ ետքը, ինչպէս գուշակել կու տան Գրիգորի Անաւարզեցւոյ խօսքերն ի Թղթին առ Հեթում Բ Թագաւոր։ Սսոյ ու Մխիթար կաթողիկոսի գումարած ժողովոց մէջ ալ իրենց արժանաւոր ներկայացուցիչք ունեցան։

ՅԱկներոյ վանաց ոչ յոյժ հեռի՝ Ջորոյն սուրբ Թորոս վանք, որոյ առաջնորդաց մէջ կը յիշատակուի Թորոս փիլիսոփայ կամ Երաժիշտ կոչուած, մի ի հարց ժողովոյն Սսոյ։ Մօտ է և Թիւրքքի վանք զոր ՉՁԳ թուականին գրուած ձեռագրի մը յիշատակարան՝ մեծ և հռչակաւոր անապատ կը կոչէ, և կը յաւելու մաղթել. «երգ օրհնութեան և ձայն սաղմոսաց և լուցումն լապտերաց և բուրումն անուշահոտ խնկոց մի պակասեսցի ի սմանէ մինչեւ ի կատարած աշխարհի»։ Վանահայրն Գրիգոր մի էր ի ժողովականաց Սսոյ։ Ասոնց մօտ էին Ս. Յակոբ վանք, — Գայլու վանք՝ ի գետահովիտս Ջահանայ, Ս. Թոմանոս անապատ, և այլն։

ԴԱՐ ԺԴ

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ

Գրիգոր Սկեւռացի, մտերիմ Լամբրոնացւոյն։ — Երբ եղա առ կայսրն Փրեդերիկ։ — Երկասիրութիւնք։ — Ներբողեան ի Ս. Ներսէս Լամբրոնացի։ — Ճառք։ — Շարական ի Ս. Յովհաննէս Մկրտիչ։ — Աղօթք։

Հայ մատենագրութեան անկման այս դարուն մէջ ժամանակաւ երիցագոյն կը համարուի Գրիգոր Լամբրոնացի, Սկեւռայ միաբաններէն։ Ներսիսի Լամբրոնացւոյ մտերիմ ու սիրելին եղած է Գրիգոր, և անոր հետեւող ի սրբութեան վարուց և ի մատենագրութեան։ Իրեն յանձնած էր Սաղմոսի մեկնութեան իսկական բնագրէն գաղափարելու հոգն ու խնամքը․ զոր սիրով յանձն առաւ Գրիգոր, ու բաւական ալ յառաջ տարաւ․ բայց ապա կարեւորագոյն գործով մը զբաղած, ընկերելու Լամբրոնացւոյն ի նուիրակութեան առ Փրեդերիկ կայսրն Ալամանաց, բռնադատեցաւ յանձնել զայն ծերունւոյն Սամուէլի։ Լեւոն մեծն ալ՝ որ զինքն իրեն հայր խոստովանութեան ընտրած էր, ի յունականէ ի հայ թարգմանել տուաւ Նիկիոյ արքեպիսկոպոս Վահանայ կամ Յովհաննու թուղթը՝ զոր գրեր էր առ Զաքարիա կաթողիկոս Հայոց․ ինչպէս կ'աւանդէ Անաւարզեցի «սուրբ և մեծ վարդապետ Հայոց» զնա կոչելով։

Այլ և այլ երկասիրութիւններ շարագրած է, յորոց ոմանք իւր իսկ անուամբ կը յիշատակուին, և այլք անծանօթ մնացած, նոյն անուամբ ուրիշ հեղինակներ ալ ըլլալուն համար։ Կան նաեւ այնպիսի երկասիրութիւններ՝ որոց յիշատակը կ'աւանդուի գրոց մէջ, և կամ միայն քանի մը հատուածներ հասած են մեր ձեռքը։

⁂

Յայտնի երկասիրութեանց կարգէն են

Ներբողեան մը ի սուրբ Կոյսն, այս խորագրով․ «Բան գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան, սննդեան և քաղաքավարութեան և վերափոխման ամենասուրբ կուսին, ասացեալ ի Գրիգորէ մենաւորէ»․ (Մատենադ․ Երուսաղեմի․ թիւ 41) ի ճառընտրի գրելոյ ի ՈՀ թուին Հայոց, առ կենդանութեամբ հեղինակին, ի Վահանայ գրչէ։

Միւս այլ Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի, զոր անոր Ներսէս քեռորդւոյն խնդրանօք շարագրած է, ողբալով այնպիսի անդարձման կորուստ մը, և անմահացընելով այն մեծ ու նշանաւոր անձին վարքը, առաքինութիւններն և իմաստութիւնը։ Իբրեւ հռետորական գրուած մը՝ իւր ժամանակին համար բաւական նշանաւոր երկասիրութիւն կրնայ համարուիլ, բայց առանց նախագիծ գաղափար համարուելու պատիւն ունենալու։ Անշուշտ ոչ անծանօթ էր Գրիգորի գովելւոյն մեծութեան հետ նաեւ իր մտաց չափաւորութիւնը․ ուստի ի սկզբան չուզեց յանձն առնուլ իրեն եղած առաջարկութիւնը «սակաւ ինչ գովելի հակառակութեամբ բերեալ, – կ'աւանդէ Ներսէս՝ խնդրող բանին, – ըստ սրբոցն օրինի, գերապանցութիւն քան զչափ զօրութեանն զայս վարկանելով»։ Այլ իր համարումը այնչափ մեծ էր Սկեւռացւոյն վրայ՝ որ ոչ միայն յետ մահուանն Յովհաննու՝ հայրապետական աթոռը բարձրանալու արժանաւոր կը համարէր զնա և հետամուտ կ'ըլլար, այլ գրկուելով ի քեռւոյն կը փութար աշակերտիլ իրեն «որպէս կրկին ժառանգել զոր կորուսին»։ Սիրտն ու ճարտասանական հոգւոյն յատկութիւններն յայտնի կ'երեւնան, բայց ճարտասանին խօսքերուն ոյժը կրկին աւելցնող կտրուկ լեզու կը պակսի, որով այնչափ փայլեր էր Լամբրոնացի. թէպէտ ջանացած է իրեն նմանող երեւնալ, ուզելով իր ոճովն ու լեզուով զինք գրուատել[1]։

Ճառք. — Յիշատակուած ներբողէն զատ՝ քանի մը ուրիշ ճառեր ալ կը գտնուին Սկեւռացւոյն անուամբ. այսինքն Քրիստոսի յարութեան վրայ ճառ մը, և ուրիշ մըն ալ Եսայի մարգարէին «Տէր ո՞ հաւատաց» խօսքին վրայ։ Իրեն կ'ընծայեն ոմանք կարծեօք Եւագրի Լուսաւոր պատերազմ կոչուած գրոց մեկնութիւնը, որուն միայն քանի մը պատառիկ հասած է մեր ձեռքը։ Տարբեր է այս գըրուածքը Եւագրի գրոց համառօտ լուծմանէն, որ անանուն երկասիրութիւն մըն է և վերջին դարուց արժանի։

Շարականաց ցուցակներուն մէջ Սկեւռացւոյն կ'ընծայուի Յովհաննու Կարապետին վրայ երգուածը, այբուբենից կարգով, և որուն սկզբնաւորութիւնն է «Արեգական արդարութեան»։ Հեղինակին պատիւ ընելու բաւականութիւն ունեցող երգ մըն է անիկայ, թէպէտ չերեւնայ մէջը այն բանաստեղծական ոգին՝ զոր Կոմիտաս ցուցած է Հռիփսիմեանց շարականին մէջ, և ոչ այն ընտիր լեզուն՝ որ ընդհանրապէս յատուկ է շատ շարականներու։

Ոմանք Սկեւռացւոյն կ'ընծայեն այն Հաւատոյ հրահանգը, զոր այլք ուզած են Նարեկացւոյն համարել, և որուն վրքը շարագրեց Սկեւռացի։

Ծանօթ են իր անուամբ քանի մը ջերմեռանդական ա-

---

[1] Հրատարակեալ ի Ս. Ղազար ի կարգի Հայկական Սոփերաց ի 1854 (Հատ. ԺԵ)։ Բնագրին խորագիրն է. «Ներբողեան ասացեալ ի վարս մեծի քահանայապետին սրբոյն Ներսեսի արհիեպիսկոպոսին Տարսոնի կիլիկեցւոց ի խնդրոյ նորին համանուն և համազգւոյ Ներսեսի քահանայի»։

ղօթք, և մանաւանդ առ սուրբ Կոյսն յօրինածը ի խնդրոյ Պետրոս անուն քահանայի մը։ Ասոնցմէ են աղօթք մը ի սուրբ Երրորդութիւնն, միւս այլ ի վերայ ութ խորհրդոց, և «աղօթք որ ի խորհրդական ժամու սրբոյ և մեղաքաւիչ խորհրդոյն մատուցանի»։

ԳԷՈՐԳ ՍԿԵՒՌԱՑԻ

Գէորգ Սկեւռացի։ — Իր ուսումն և դաստիարակութիւնը։ — Երկասիրութիւնք։ — Արուեստ գրչութեան։ — Մեկնութիւն Եսայեայ։ — Խմբագիր մեկնութեան Գործոց։ — Գէորգեայ աշակերտն Մովսէս։

Երեքտասաներորդ դարու մէջ հռչակեցաւ ի վանս Սկեւռայ Գէորգ վարդապետ, վերը յիշատակուած Գրիգորի Սկեւռացւոյ քեռորդի, որ Լամբրոն գիւղին մէջ ծնած ըլլալուն՝ Լամբրոնացի ալ կոչուած է։ Մանկութեան հասակէն սիրող և հետամուտ ուսմանց՝ Բջնոյ Գրիգոր արքեպիսկոպոսի և իր հոգեւոր որդւոցը Վարդան և Գրիգոր քահանայից խնամքովը դաստիարակուած, շրջեցաւ վասն ուսման յայլեւայլ վանորայս. նախ յուխտն Վիրապին «սակս կըրթութեան ի մեծ վարդապետէն և յաստուածազգեաց առնէն Վարդանայ», որ էր մեծահռչակն Արեւելցի՝ պատմիչ և մեկնիչ, յետոյ ի Սաղմոսավանք և ի Թեղենիս, յորս իր մէկ պարապմունքն էր ընդօրինակութիւն գրչագրաց, յորոց Տօնապատճառ գիրք մ'ալ հասած է առ մեզ «ի ձեռն տարաշխարհիկ պատանւոյ ուրեմն, — ինչպէս կը կարդանք յինքնագիր յիշատակարանին, — Թարմատար գրչի Գէորգեայ, ի Կիլիկեան յանմատչելի ամրոցէն Ղամբրուն կոչեցելոյ, որ է ի ստորոտ մեծի լերինն Տաւրոսի»։ Այն հասակին կը զբաղէր նաեւ չափական քերթուածոց յօրինմամբ, յորոց միայն՝ որ հասեալ է առ մեզ, սկզբնատառքն յօդեն Գէորգ պատանին ե գրեաց. և վերջնատառք՝ Գրիգորի վարդապետին։

Սկեւռայ դառնալէն ետքը Կոստանդին անունով մէկու մը, և յետոյ Ստեփանոսի Գոյներ Երիցանց առաջարկութեամբն և խնդրանօք Գրչութեան արուեստին վրայ գրելու ձեռք զարկաւ, ընդարձակելով Արիստակեայ վարդապետի համանուն գրուածքը. «Ծաղկաքաղ արարեալ, — ինչպէս կ'ըսէ ինքն աշխատասիրողն, — զմասն ինչ գրելոյն յԱրիստակիսէ հնաւոր գրչէ՝ եղի աստ. է ինչ զոր լուծեալ ի նմանէ, և է յեղելոցս աստ տակաւին տարակուսիւ փակեալ. իսկ ի ծանօթ և յերկարեալ նորայն բանից՝ էր ինչ յորոց երկայնութենէն զանց արարի, և էր զոր վասն հաւաստի գոլոյն՝ թողի»։ Ստեփանոս Գոյներ Երիցանց ալ կը վկայէ թէ «Արարեալ էր զսա յառաջագոյն Գէորգեայ վարդապետին ի խնդրոյ ուրումն, զորոյ զպակասն ի նմանէ՝ յետոյ իմ ի վարդապետէն խնդրեալ, և նա կատարեաց զխնդրուածս իմ, եդեալ յառաջ զԱրիստակիսի արարեալն, և զթերին ի նմանէ՝ կատարեաց ինքն, ինձ նուաստիս՝ Ստեփանոսի Գոյներ Երիցանց»։

⁂

Գէորգայ Սկեւռացւոյ երկասիրութեանց մէջ ընտրելագոյն է Եսայեայ մարգարէութեան մեկնութիւն մը, զոր Հայոց Հեթում թագաւորին առաջարկութեամբն ու խընդրանօք յօրինեց. առաջնորդ ունենալով՝ մանաւանդ առաջին գլխոց մեկնութեան մէջ զԵփրեմ Խուրի ասորի, զՈսկեբերան և զԿիւրեղ Աղեքսանդրացի, և զՍարգիս ամն վարդապետ՝ որուն համար կը վկայէ թէ իրմէ յառաջ ձեռք զարկած էր այդպիսի աշխատասիրութեան, և որ մեզի հա-

մար ցարդ անծանօթ է անուամբն և գրքով։ Հետեւող է և նմանող Գրիգորի Սկեւռացւոյ ու երբեմն նաեւ Աստուածաբանին և Բարսղի և Աթանասի։

Մէջ բերենք իրեն ժամանակակցի և աշակերտին յիշատակարանին խօսքերը, յորմէ կ'իմանանք նաեւ այս գըրուածքին պատճառ եղողին իմաստասէր փոյթը և ժամանակը։

«Ի թուականութեան Հայկազեան տումարիս ՉԽԴ, ի հայրապետութեան տեառն Գրիգորի և ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ բարեպաշտի, որ ճշմարտիւ թագաւորեաց ի վերայ մարմանջեցուցանող և գունակ գունակ հեշտակարծ ախտից առաթուր կոխելով. և գրեթէ զամենայն աշխարհական փառսն ունայն և նանիր վարկանելով, որպէս և է։ Նաեւ զանուն թագաւորութեան ծանր գրէր. և նուիրէր զանձն Աստուծոյ. և յոլով անգամ հրաժարէր ի հայրենական աթոռոյն՝ և գնայր աղքատանալ. զոր հազիւ հազ մեծաջան տենչիւ ոչ կարէին յեղաշրջել զկամս նորա. և զայս դիպուածս Աստուծոյ ի յանձն առնէմք։ Իսկ մինչ յայս էր՝ սիրէր զՔրիստոս և զեկեղեցի նորա, և զընթերցումն սուրբ գրոց։ Սա տեսեալ զմեկնութիւն համարձակախաւս աստուածատես մարգարէին Եսայեայ, և զի մեծն Եփրեմ կարճ և համառօտ քաջոլորակի բանիւք էր անցեալ ընդ նա։ Իսկ աստուածաշնորհն Յոհան Ոսկեբերան յորջորջեալ վասն հոգեշահ վարդապետութեան և առատահոս իմաստից, որ ի բերանոյ նորա բղխեալ արբուցանէր զականջս եկեղեցւոյ, և սա ճոխաբար խաւսեցեալ։ Եւ քաջ ախոյեանն ուղղափառ հաւատոյս սքանչելին Կիւրեղ, ի սակաւն և նա խաւսեցեալ։

«Արդ բարգաւաճս այս վսեմս Հեթում ի մտի եդեալ զսոսա ի մի ժողովեալ զաւակ ի Սիոն զսա իւր և բարի նախնեաց զանձել տուն՝ խնդրեաց զայս առնել հարկեցուցիչ հրամանաւ ի յերր երջանիկ և ի լուսաբան րաբունապետէս Գէորգեայ, որ ընդ այսու ժամանակ առաքինութեամբ՝ յանձին ներգործութեամբ բնաւին փարթամացեալ, որ այժմս քրտնաջան երկամբք հրահանգէ զհամբակս, որ բանի են հետեւեալ զյոլովս:

«Իսկ սա որպէս քարոզ ճշմարիտ հնազանդեալ հարկեցուցանող հրամանին. և զի էր Սարգսի վարդապետի հոգացեալ, առեալ և զայն, և զայլ բան սրբոց մեկնչացն՝ համառօտ զուգեաց առ իրեարս կարճաբանութեամբ եդեալ՝ զմտացն ամբողջ ունելով զզաւրութիւն և գրեալ ձեռամբ իւրով ետ նմա ի վայելումն վսեմ անձին և ի աւգուտ ամենայն վարդապետաց եկեղեցւոյ:

«Արդ ես զայս տեսեալ վերջինս ի բնաւիցս փցնամիտ աշակերտս սորին Գէորգեայ... պիտակագործ անուանեալ Երեմիայ յորջորջեալ, յետին աշխատեալ, երկու անգամ առ Թագաւորն իմ երթեալ, խնդրեցի զարարեալ աւրինակն. և վասն սիրոյ նորին ետու գրել զսա Լեւոնի դպրի, լաւ արհեստի գրչի ի յիշատակ բարի»,... և այլն:

Ուրիշ գրչագրող մ՚ալ կը ծանուցանէ որ թէպէտ արդէն կային յազգին Եփրեմի, Կիւրղի և Ոսկեբերանի համանուն երկասիրութիւնք, և «իւրաքանչիւր ասացուածովքն կատարեալք էին յիւրաքանչիւր գիրս, և օգտակարք, բայց գրչաց մեծագունի կարօտէին և լայն մեծատար մտաց. յաղագս որոյ օգտէին, այլ ոչ գրեթէ ամենեքին: Զայսոսիկ տեսեալ մեծիմաստ արքայն Հայոց Հեթում՝ Միակեցն կոչեցեալ, և խնդրեալ ի հռետոր վարդապետէն Սկեւռացւոյ Գէորգ կոչեցելոյ, որպէս զի ըստ յօժարութեանն իւրում աշխատեսցի ի սմա, և ըստ իմաստութեանն համառօտեսցէ և ի մի վայր հաւաքեսցէ, որպէս զի հանդիպեալքն ամէն՝ առանց աշխատանաց և ամենեքեան վայելեսցեն ի սոցանէ: Իսկ նորա ի յանձն առեալ և կատարեալ զխնդիրս նոցա գեղեցիկ յօրինուածով»:

Կը վկայէ նաեւ Եփրեմ կաթուղիկոս ի պատմութեան կաթողիկոսացն Սսոյ թէ «Ըստ խնդրոյ արքային Հայոց Հեթմոյ արար զմեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ՝ սուրբ վարդապետս այս Սկեւռացի»: Ուրիշ երկասիրութիւն մ՚ալ կու տայ իրեն Եփրեմ. «Առ սովաւ (Յովհաննու եպիսկոպոսի Արքայեղբօր), էր մեծիմաստ վարդապետն Գէորգ Սկեւռացի, որ ըստ խնդրոյ սորա արար գրուատ ներբողական առ սուրբ աւետարանիչն Յովհաննէս, որոյ և մակագիրն է այսպէս. — Գրուատ ներբողական բանի յաստուածաբան աւետարանիչն Յովհաննէս. ի պատկառեցուցիչ խնդրոյ Յովհաննու եպիսկոպոսի՝ եղբօր բարեպաշտ արքային Հեթմոյ ի թուականիս ՉԼԲ. Գէորգայ վարդապետի երջանկի Սկեւռացւոյ ասացեալ»:

Նոյն Արքայեղբօր առաջարկութեամբն յօրինած է Սկեւռացի և խմբագիր մեկնութիւն մը Գործոց առաքելոց. և որուն վրայ արդէն խօսած ենք (տ. էջ 599):

Գէորգայ մահը հանդիպեցաւ ի ՉԾ թուին: Իր աշակերտն Մովսէս գրեց «Գրուատ բանի սուղ ինչ պատմագրաբար յերջանիկ րաբունապետն և ի քաղցրաբարբառ վարդապետն Գէորգ Լամբրունեցի», յորում ողբալով իր մահը՝ հետեւեալ սրտառուչ տողերով կը պատուէ անոր յիշատակը. «Աւա՜ղ ինձ յետնելոյս, թէ որպիսի հայր կորուսի. զորպիսի դաստիարակ, զորպիսի յորդորիչ և մխիթարիչ... Ո՜ հայր պատուական, այլ ո՞չ գրես առ իս զբան և զգիր քո պատուական. այլ ո՞չ լսեմ զբերկրական լուր քո ի հեռաստանէ»: Նոյն վարդապետասէր և երախտապարտ աշակերտը կը վկայէ թէ «Գծէր և կանոնս կարգաւորս, և բանս խրատականս վասն խոստովանութեան առ ի յօգուտ տգիտաց քահանայից, առնէր Համարս գլխոց և Ցանկս և Նախադրութիւնս Աստուածաշնչից տառից. գրէր և ճառս ներբողականս ի պատիւ սրբոց... բազում բանս պիտանիս հաւաքէր ի գանձուց աստուածայնոց, առ ի վարժումն մանկանց նորագունից»: Ուրիշ մ՚ալ կը վկայէ թէ այլեւայլ Գանձք ալ յօրինած ըլլայ, և որ հաւանականաբար կը խառնուին կամ կը շփոթին ուրիշ համանուն անձանց յօրինածներուն հետ:

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ

Մխիթար Անեցի կամ Երէց։ — Ժամանակակցաց իրեն ընծայած գրուածքը։ — Պատմական երկասիրութիւն մը։ — Անոր մէկ մասին գիւտն ու հրատարակութիւնը։ — Անեցւոյն պատմութեան նիւթը և աղբերքը։ — Արժէքն և մատենագրական ոճ։

Երկոտասաներորդ դարուն վերջերը և ի սկիզբն երեքտասաներորդին ծաղկեցաւ ի Հայաստան Մխիթար անուն քահանայ մը՝ որ Անւոյ կաթուղիկէին երիցանց դասակարգէն ըլլալուն՝ ընդհանրապէս Անեցի կոչուած է։ Իր անուամբ քանի մը պատմական երկասիրութիւններ կը յիշատակուին մեր պատմչաց քով, յորոց գլխաւոր կրնայ համարուիլ հնախօսական Պատմութիւն մը Հայոց, Պարսից, Վրաց և Արաբացւոց։ Վարդան պատմիչ՝ Վրաց սկզբնաւորութեան վրայ խօսելով՝ Թորգոմէն մինչև Արամ՝ որ Ափխազաց վրայ թագաւորեց, կը յաւելու. «Այս ըստ Մխիթարայ երիցուն ասիցն»։ Ուրիշ տեղ ալ Թուրքաց ծագման վրայ խօսելով. «Այս ըստ Վահրամայ որդւոյ Տիգրանայ վիպագրի։ Իսկ պատուական երէցն Մխիթար Անեցի այսպէս ասէ. Յոլով աշխատ եղէ գտանել զորպէսն սուլտանացն որ ի Թուրքաց. և գտի այսպէս». ու կը շարունակէ անոր երկասիրութենէն հատուած մը մէջ բերելով։ Ուռպելեանն ալ կը յիշէ Անեցւոյն երկասիրութիւնը ու գեղեցիկ պատմութիւն կը կոչէ զայն. «Այլ զի ժտեալ էր, կ'ըսէ, յիշատակ նախնական զրուցատրութեանց նոցա, նաև ամենայն արութիւնք և գործք երևելիք ի տանն Վրաց ազգին

Օրբելեանց ի նոցին ժամանակագրոցն, զոր Քարթլիս Ցխովրեբայ կոչեն, վասն այն մեք ոչ գիտացաք զորպէսն և զկարգ բանիցն. զի և ըստ կարգի շարայարեալ էաք ի մատենիս։ Բայց զոր ինչ գտաք ի հայալեզու գիրս սակաւ ինչ յիշատակ գիցուք. եւս և զվախճան կատարածի նոցա, զոր հաւաստեաւ ծանոյց մեզ գեղեցիկ պատմութիւն Մխիթարայ Անեցւոյ»։

Այս պատմական կարևոր գրուածը մինչև հիմա յայտնուած չէ։ Միայն քանի մը տարի յառաջ՝ հանրածանօթ ազգային բանասէրն Ք. Պատկանեան Հասան Ջալալեանց Սարգիս արքեպիսկոպոսին գրչագրաց ընտիր հաւաքման մը մէջ, — որ հիմա փոխադրուած է Էջմիածին, — Անեցւոյն անուամբ մինչև հիմա անծանօթ մնացած երկասիրութեան մը մէկ մասին հանդիպելով՝ հրատարակեց ի Փեթրպուրկ (1879), և որուն խորագիրն է՝ ըստ ձեռագրին «Հանդէպ բանից աշխարհագումար գրուցաց տիեզերապատում անցից, վիպասանեալ ի քաջ գիտնականէն Մխիթարայ, աւագերիցու մեծ կաթուղիկէին Անւոյ հոյակապ քաղաքի. ի խնդրոյ հօր Հաւիճայի Գրիգորոյ վարդապետի»։

Հաւանական կ'երևնայ թէ Վարդանայ և Ուռպելեան Ստեփաննոսի ակնարկած երկասիրութիւնն ըլլայ Անեցւոյն այս նորագիւտ գրուածը, որ ինչպէս ըսինք՝ դեռ մասամբ միայն յայտնուած է. վասն զի հեղինակն ալ կ'ըսէ ի յառաջաբանին, թէ երեք մաս կամ պրակ բաժնած էր իր այս գրուածը. «Առաջին պրակն սկսանի ի Պարոյրայ հայկազնոյ, առաջին թագաւորէ Հայոց, մինչև ցՅովհաննէս վերջին։ Իսկ երկրորդն ի Յովհաննէ մինչև ի քահանայանալն տեառն Բարսղի։ Եւ երրորդն մինչև ի գերելն զԵրուսաղէմ և յելս ազգաց Ֆռանգաց։ Յայս երիս հատուածս բազմատարազ ճառիւք ոչ գանգաղեցից գրել, քաղելով ի սրբոց և ի պիտանեաց պատմութեանց»։ Պատկանեանի հրատարակածը՝ միայն առաջին գրոց մէկ մասը կ'ենթադրուի. ուստի և ի տպագրին իրաւամբ կը խորագրէ. «Սկիզբն Նորագիւտ պատմութեան Մխիթարայ Անեցւոյ» քսանեւօթն գլուխք բանից։

⁂

Անեցւոյն պատմութեան նիւթը. — Գրուածքին սկիզբը գրուած՝ ընդարձակ, — ըսենք նաեւ, — նիւթոյն ոչ այնչափ պատկանաւոր յառաջաբանէն կ'իմացուի թէ Հառիճոյ վանահայրը Գրիգոր, խնդրող բանին, հարիւր քառասուն տարուան պատմութեան գրութիւնը յանձներ է Մխիթարայ, Յովհաննու Բագրատունեաց վերջին թագաւորէն մինչեւ իրենց ատենը. բայց Անեցին՝ անշուշտ ի պատիւ Բագրատունեաց տոհմին, ինչպէս տեղ մ'ալ կը թուի ակնարկել ի յառաջաբանին, իրենց հրէական ծագմանէն եւ անկէց ալ ի վեր ելնելով, համառօտ ոճով կը սկսի Ադամէն. «սղամանակ տեղեկութեամբ, կ'ըսէ, թուացեալ յԱդամայ հետէ, մինչ ի բնաւին վերջին ամանակս. յաւուրս Յովհաննու թագաւորի, եւ անտի լայն եւ տարած բանիւք յընդարձակեալ մինչեւ ի ՈԽԲ թուականս»։ Կը խօսի յերկար, բայց միշտ օժանդակեալ յաստուածաշունչ գրոց եւ ի վկայութեանց, պատմութեան օգտից վրայ յուսումն եւ ի խրատ ապագայ սերնդոց, եւ այն բաւական ոճով եւ հմտութեամբ։ Երկրորդ գլուխը համառօտ եւ գրեթէ պարզ անուանական ցեղակարգութիւն մըն է սուրբ գրոց տոհմաբանութեան համեմատ, բաժանեալ յերկոտասան չարս, հետեւողութեամբ Եւսեբեայ եւ Սամուէլի Անեցւոյ ժամանակագրաց։ Գլուխն երրորդ խորագիր ունի. «Դասակարգութիւն Յաբեթի նախնոյն եւ արմատոյն Հայոց» հասցնելով մեր ազգին սկզբնաւորութիւնը մինչեւ ի Հայկ եւ ի Պարոյր, և մինչեւ ցՎահէ վերջին թագաւոր Հայկազանց. եւ կը յաւելու. «Զսա սպանեալ Աղեքսանդր Մակեդոնացի»։

Հայկազանց հարստութեան անկմանէն ետքը՝ նուաճեալ երկրին վրայ ի Պարթեւաց իշխողներէն կը յիշատակէ

զՍելեւկիոս, զԱնտիոքոս, զհամանունն Թէոս, որուն ատեն Պարթեւք ապստամբեցան ի Մակեդոնացւոց, եւ թագաւորեցուցին զքաջն Արշակ, որուն յաջորդեց Արտաշէս, յետոյ Արշակ «որ զեղբայր իւր զՎաղարշակ առաքէ ի Հայս, առաջին թագաւոր պարթեւ զկնի սպառելոյ Հայկազանցն ի ՃԿԵ ողոմպիատին»։ Արշակունեաց ցեղէն թագաւորաց անուանքն յիշատակելէն ետքը՝ կ'անցնի Անեցին ի մարզպանս, եւ ապա առ Բագրատունիս, մինչեւ ի Յովհաննէս որդի Գագկայ։ «Սա, կ'ըսէ, վերջին թագաւոր ի Բագրատունեաց։ Աստանօր սպառեցան թագաւորք ի տանէն Բագրատունեաց»։ Մխիթարայ երկասիրութեան չորրորդ գլուխը նուիրուած է կաթուղիկոսաց յաջորդութեան ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մինչեւ յեօթանասներորդ երկրորդ յաջորդ նորա՝ և պատմչին ժամանակակից «Այժմ է տէր Գրիգոր Անավարզայ եպիսկոպոսն»։ Անկէ կէս իմաստասիրական եւ կէս աստուածաբանական ոճով ու լեզուով հինգերորդ գլխոյն մէջ կը դառնայ խօսիլ «թէ զինչ է պատմութիւն, եւ կամ քանիք են որ յայտնի են առ մեզ». ուր բաց յայլոց՝ ի սրբազան եւ յեկեղեցական պատմչաց, կը յիշէ նաեւ զմերսն. «նախ եւ առաջին պատմող Ղերուբնա, որդի Ափշադարայ դպրի, գրէ զգործս Աբգարու եւ Սանատրկոյ. եւ հզօրն բանիւ Ագաթանգեղոս, եւ Բիւզանդացին Փաւստոս։ Եւ զկնի նոցա պատմութիւն Ներսեսի՝ զոր Ղազարիկ Հայոց անուանէ. Կորեան պատմութիւն, եւ պատմութիւն Հայոց ի Մովսիսէ շարագրեալ. եւ Ղազարիկ Փարպեցի. եւ Եղիշէ, Շապուհ, եւ Սեբէոս որ Հերակլին է. եւ պատմութիւն Աղուանից, եւ Ղեւոնդ երիցոյն, տէր Յովհաննէս եւ Ասողնիկ. եւ Լաստիվերտցին եւ Կոզեռնն, եւ Սամուէլ երիցու։ Հուսկ ամենայնի վերջինն՝ այս որ ի մէնջս գրեալ. բայց բանիւք կարեւորօք եւ զարմանազան իրօք. հարուստ եւ ընտանեգոյն, նոր եւ ծանօթ զրուցօք»։ Ասոնց, բայց մանաւանդ Խորենացւոյ հետեւողութեամբ են՝ Անեցւոյն թերի առ մեզ հասած պատմական երկասիրութեան գլուխներն (Զ–ԽԴ) քաղելով Բագրատունեաց ցեղին պատկանող դէպքերն․ անոնց գերութիւնն ի Հրէից, և ի խնդրոյ Պարոյրի մեր առաջին թագաւորի որդւոյն Հրաչէի՝ հաստատուիլն ու պատուիլ յերկրին Հայոց․ Բագարատայ թոռան՝ թագադիր և ասպետ անուանիլն ի Վաղարշակայ, Ենանոսի Բագրատունւոյ վրայ, որ յաւուրս Աբգարու․ յորմէ առիթ կ'առնու պատմիչն խօսիլ այս նախահաւատ թագաւորին ծանօթ պատմութիւնը մէջ բերել․ և անոր ազգակցութիւնը յիշեցնելով ընդ Տրդատայ, և սխրացած այս երկու թագաւորաց ժամանակ ի Հայաստան կատարուած աստուածահրաշ անցից վրայ, «Սոսկալի և նորալուր սխրոյ զեղմունք կ'ըսէ, ևս առաւել քան զամենայն ազգաց ի մեզ ի մեծասեան ժամեայ գործօնեայս աստուածակերտ այգւոյն»։ Կը պատմէ զերթ Աբգարու յարևելս՝ Արշաւրի որդւոց մէջ խաղաղութիւն հաստատելու․ թղթակցութիւնն ընդ Քրիստոսի․ Թադէի քարոզութիւնն յԵդեսիա և մկրտելն զԱբգար, ու այս վերջնոյս կրկին անգամ գրելն առ Տիբեր կայսրն և իրմէ ընդունած պատասխանը։ Կ'աւանդէ Սանատրկոյ թագաւորելն, անոր որդւոց կոտորուիլն յԵրուանդայ, և բռնաբար թագաւորելն ի վերայ Հայոց․ Բագրատունեաց և Արշակունեաց իրարու հետ խնամութեամբ խառնուիլը, Սմբատայ քաջութիւններն, և որ «բազում և անհնարին մարտս յարդարէր ընդդէմ թշնամեաց Խոսրովու Պարսից թագաւորի, ընդ որ յաւէտ խնի հաճոյանայր արքայ (Մաւրիկ)․ և ընդ այլ բազում ընծայից՝ և զմարզպանութիւն Վրկանայ տայ նմա։ Որոյ երթեալ անդ՝ գտանէ ազգ մի գերեալ ի Հայոց և բնակեցուցեալ ի Թուրքաստան կողմանէ, որ Սագաստանն անուանի․ մոռացեալ զլեզու և զգիր հայերէն։ Որոց տեսեալ զՍմբատ ուրախ լինէին։ Եւ նա նորոգէ դարձեալ զլեզու և զգիր հայերէն ի ձեռն հարելի երիցոյ և տայ գնոյն առաջնորդ նոցա»։ – Անեցւոյն վերջին երեք գլուխներն՝ Հագարացւոց աղանդապետին պատմութեան ու գործոց կը վերաբերին։

Իբրև պատմական երկասիրութիւն մը՝ չենք կրնար ըսել թէ բոլորովին զերծ ըլլայ ի կարևորութենէ, թէպէտ և ըստ մեծի մասին քաղուածոյ արդէն մեզի ծանօթ պատմագրաց գրուածներէն։ Դիպուածոց իրարու հետ ունեցած կապը՝ յաճախ կը պակսի, ու նիւթէ նիւթ անցնիլներն՝ ընդոստ և անոճ․ հմտութիւնն ալ խիստ չափաւոր կ'երևնայ․ դիպուածք և անձինք իրարու հետ կը շփոթէ, մէկուն վերաբերածը միւսին ընծայելով, և այլն։ Սակայն այս թերութեամբք հանդերձ՝ փափաքելի է երկասիրութեան ամբողջական գիւտը, մանաւանդ իրեն մերձաւոր դէպուածոց և անցից տեղեկութեան համար։

Վարդան պատմիչ կ'աւանդէ թէ արևու և լուսնի խաւարման վրայ գիրք մը շարագրած ըլլայ Անեցին՝ Ոճիէ անունով պարսկի մը գրքէն, որ կ'ըսէր թէ յունարէնէն թարգմանուած է ի պարսիկ, և թէ Յոյնք Ենովքայ մարգարէութենէն ունէին․ յորում կ'աւանդուէր թէ արեգակը բնութեամբ չի խաւարիր, այլ անոր խաւարման պատճառը լուսինն է։ Բոլորածիր աղիւսակներ ալ ծրագրեց, աստեղաբաշխութեան այս երևոյթը ուսումնական լեզուով մեկնելու համար։ Այս գրուածքս ալ կորսուած է հիմայ։

* * *

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կոստանդին Ա. կաթողիկոս։ — Իր թուղթերն առ քահանայապետս Հռոմայ և առ այլս։

Այս ատեններս Հայաստանի կաթողիկոսական աթոռը նստաւ Կոստանդին Ա. կաթողիկոս Բարձրբերդցի, որուն համար կ'աւանդեն ազգային պատմագիրք թէ եօթն այլ և այլ թղթեր գրած ըլլայ առ զանազանս։

Ա. Առ քահանայապետն Հռոմայ Գրիգոր Թ։

Բ. Առ Ինոկենտիոս Դ, շնորհակալ ըլլալով քահանայապետին ղրկած ընծայից համար։

Գ. Հայաստանի բոլոր առաջնորդաց, իշխաններուն և ժողովրդոց ուղղած մխիթարական և քաջալերիչ գիր մը, զոր ղրկեց Վարդան վարդապետին ձեռքով։

Դ. Դարձեալ ուրիշ թուղթ մը անոնց, պաշտօնական կերպով ծանուցանելով ամենուն թէ երեք տարի յառաջ մեծ ժողով մը գումարուեցաւ ի Սիս, և հոն՝ սրբոց հարց աւանդութեանց համեմատ՝ քսանևեօթն գլուխք կանոնաց սահմանուեցան։

Ե. Դարձեալ օրհնութեան գիր մը անոնց՝ որ իբրև կանոնական ընդունած էին իր առաջին թուղթը։

Զ. Մեծ կամ վերին Հայոց բնակիչներուն, Հոգւոյն սրբոյ բղխման խնդրոյն վրայ։

Է. Առ քահանայապետն Հռոմայ, ծանուցանելով թէ ինչպէս ընդունելի է Հայաստանի մէջ նոյն խնդիրը։

Ի Հռովմ ղրկած թղթերուն՝ լատին թարգմանութիւնք մինչև մեր օրերը պահուած են քահանայապետական կոնդակագրաց մէջ. դաւանութեան թղթոյ մը հայերէն բնագիրն ալ կը պահուի ի Վատիկան, գրեալ առ Ինոկենտիոս Դ, ի պատասխանի թղթոյն զոր բերեր էր Պապին նուիրակն Տիմանչ՝ առ Հեթում թագաւոր և առ կաթողիկոսն։

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Վանական վարդապետ։ — Մ. Գոշի աշակերտիլը։ — Խորանաշատ վանքին շինուիլը և հոն աշակերտներ սորվեցնելը։ — Երթն առ խանն թաթարաց։ — Մահը։ — Երկասիրութիւնք։ — Յովբայ մեկնութիւն։ — Վարդապետական գրուածներ։ — Պատմութիւնը։

Կոստանդին կաթողիկոսին օրերը ծաղկեցաւ Յովհաննէս Վանական Տաւուշեցի վարդապետը, որ ինչպէս առաջ ալ յիշատակեցինք, Մխիթարայ Գոշի գլխաւոր աշակերտներէն մէկն էր. և կը վկայէ Կիրակոս՝ թէ իր ժամանակին ամենէն անուանի վարդապետն ըլլալով, շատերն ուսման պատճառաւ իրմէ չէին հեռանար. և ոչ միայն վարքովն, այլ նաև խօսքովը կ'օգտուէին. անոր կեանքը՝ տեսողաց համար անգիր օրէնք էր։ Եւ զայս ոչ միայն իբրև ականջալուր կը զրուցէ Կիրակոս, այլ նաև ականատես. որովհետև երկար ժամանակ աշակերտեցաւ իրեն, Տաւուշ բերդին սահմաններն եղող անապատին մէջ։ «Համբաւ իմաստութեան սորա, – կ'ըսեն յիշատակագիրք, – տարածեցաւ ընդ աշխարհս, և գային առ նա յամենայն կողմանց, և ուսանէին ի նմանէ զվարս պարկեշտութեան և սրբութեան, և զգիտութիւն աստուածեղէն գրոց. և լուսաւորեալք գնային յիւրաքանչիւր տեղիս՝ լոյս լինել աշխարհաց»։

Ժամանակ անցնելէն ետքը իւր հայրենիքը դարձաւ

Վանական. ու մեծաշէն փառաւոր վանք մը շինեց և բազմախորան հոյակապ եկեղեցի մը՝ որ Խորանաշատ անուանեցաւ։ Վերջը իւր աշակերտները հետն առնելով, որոնց մէջ էր նաեւ Կիրակոս Գանձակեցի, Վահրամայ երկրին սահմանները գնաց, ու կը բնակէր մեծ այրի մը մէջ՝ որ իր ամրութեամբը դղեկի մը կը նմանէր։ Հոն եկեղեցի մը շինած էր Վանական ու միանձանց բնակարան։ Երբոր Թաթարաց իշխանը զարկաւ այն կողմերը, մօտ գեղերուն և աւաններուն բնակիչք հոն ժողվուեցան իրենց կանամբք և որդւովք։ Թաթարք եկան այրին չորս կողմն առին, ու ներս ամրացողները կը ստիպէին որ դուրս ելլեն։ Երբ տագնապն ու վախը մէկ կողմանէ, և սովոյն սաստկութիւնը մէկալ կողմանէ սկսան զիրենք չարչարել, Վանական վարդապետ հետն առաւ Մարկոս ու Սոսթենէս[1] աշակերտները, ու Թաթարաց գլխաւորին գնաց։ Մեծ սիրով ընդունեցաւ զինքն իշխանը. հարցուց և իմացաւ իրմէ Վահրամ իշխանին ուր գտնուիլը, և հրամայեց Վանականին որ յորդորէ այրին մէջ եղողներն՝ անվախ դուրս ելլեն։ Երբ անոնք վարդապետին խօսքերէն համոզուելով, այրէն ելան, թշնամիք անոնց ամէն ստացուածքը յափշտակեցին, ու զիրենք ալ հեռու տեղ մը ղրկեցին զոր գերեաց համար սահմաներ էին, շատերն ալ փախան։ Ասոնցմէ էր և Վանական, զոր յետոյ դահեկանով գնեցին քրիստոնեայք։ Աշակերտացը հետ մէկտեղ, Խորանաշատի վանքը գնաց ուր ազգին և հայրենեաց վրայ եկած աղէտքն ու թշուառութիւնները գրի կ'առնուր։

---

[1] Թերեւս զսա ակնարկեն ՉԻԹ (1279) թուականին գրչագրեալ աւետարանի մը յիշատակարանին խօսքերը. «... Հրամանաւ Սոսթենէս բաբունւոյ, որ էր վարժ և կիրթ յամենայն գիրս աստուածային՝ հնոցն և նորոցս և արտաքին փիլիսոփայից գեր ի վերոյ. որ և ի ժամանակիս մեր և ի թագ. Լեւոնի և ի հայրապետութեան Յակոբայ ոչ ոք է կատարեալ իբրեւ զսա յամենայն իմաստս. բայց ի մեծ բաբունեաց բաբունւոյն որոյ անուն ցաւղ է քաղցր, որ և Վահրամ կոչի»։

Կոստանդին կաթուղիկոս Սսոյ մէջ գումարած ժողովքէն ետքը, նոյն ժողովոյն սահմանադրութիւններն ու կանոններն մասնաւոր թղթով ծանոյց բոլոր գլխաւոր եպիսկոպոսաց և վարդապետաց, որ իրենց զբաղմանց կամ հեռաւորութեան պատճառաւ չէին կրցած նոյն ժողովոյն ներկայ գտնուիլ։ Ասոնցմէ ոմանք չուզեցին հաւանիլ այդ կանոնաց, ուրիշներն ալ համոզուելով յանձն առին. ասոնց մէջ էր նաեւ Վանական վարդապետ։

⁂

Այն օրերը ուրիշ եկեղեցական խնդիր մըն ալ ծագեցաւ. արդէն շատ անգամ յուզուած՝ և առանց կարեւոր քննութեան մերժուած խնդիրը՝ Վանական իրեն իմաստութեամբն և ազգին մէջ ստացած արժանաւոր համարմամբը լմնցուց։ Աս մտադրութեան արժանի դէպքը՝ այսպէս կը նշանակէ Վարդան. «Ի Չ թուին շարժեցաւ խնդիր ի մեծ պալատն Հռոմայ. և գրեաց յազգս ամենայն քրիստոնէից, եթէ պարտ է զամենասուրբ Հոգին Աստուած խոստովանիլ՝ ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ։ Եւ չեղեւ հաճոյ Ասորւոց և Յունաց և Վրաց, բայց ի Հայոց, որք քննեցին զդաւանութիւն առաջնոց սրբոցն՝ ի ձեռն աստուածամերձ վարդապետին Վանականին, և գտին համախոհ երեւելի արանց փառաւորաց, Աթանասի, Գրիգորի Աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյ, Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց»։ Եւ որովհետեւ գիտէր Վանական թէ ազգին մէջ կրնային դեռ եւս գտնուիլ այնպիսի անձինք, որ նորաձայն երեւցած վարդապետութենէ մը խորշին, երկայն ճառ մը գրեց, յայտնելով թէ ինչո՞ւ համար պէտք է զՍուրբ Հոգին խոստովանիլ և դաւանիլ բղխեալ ի Հօրէ և յՈրդւոյ։ Այս գրած ճառը կը կարդանք Կիրակոսի պատմագրութեան մէջ հետեւեալ խորագրով. «Խրատ դաւանութեան Վանական վարդապետին»։

Խորանաշատի մէջ հանդիպեցաւ Վանականի մահը նոյն Չ թուականին, ուր քովը կանչելով իր բոլոր աշակերտները՝ յորդորեց զիրենք հաւատոց գանձը անարատ պահել, ու վախճանեցաւ, մեծ սուգ պատճառելով իր աշակերտաց. «Զհարիւրապատիկն աստէն թողեալ, կ'ըսէ Վարդան, զանուն քաջութեան յաշակերտս իւր, և ի գիրս գանձուց եկեղեցւոյ, զոր ամբարեաց ի շնորհացն Աստուծոյ և ի յստակ մտաց ծննդականաց»:

Յայսմաւուրք ալ կը յաւելուն. «Հանգեաւ ի վանքն որ կոչի Խորանաշատ, զոր իւր իսկ շինեալ էր, և կայ հանդէպ Երգեւանից բերդին, ի թիկանց Գարտմանոյ, և թաղեցաւ ի գլուխ վանացն. և կատարի յիշատակ նորա ընդ յիշատակին Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին, և երեքհարիւր ութուտասն հայրապետացն որ ի Նիկիայ, և Որենգի և վեց եղբարց իւրոց, ի տասն Արեգի, և ութուտասն մարտի»:

Յիշատակագիր մը կ'աւանդէ. «Ժողովողն մեկնութեանս է Վանական վարդապետն. աշակերտ Մխիթարայ վարդապետի որ Գոշ անուանի: Եւ է նա վարդապետ Վարդանայ, և Վարդան Ներսիսի, և Ներսէս՝ Նայեայ վարդապետի ննջեցւոյ...

Իրմէ ետքը վանքին առաջնորդութեան պաշտօնը յանձնուեցաւ անոր եղբօրորդւոյն Պօղոս անունով քահանայի մը. իսկ վարդապետական ուսումը՝ Գրիգորիս վարդապետին որ Վանականին աշակերտն ու ազգականն էր:

* * *

Վանականի գրուածները. — Վանականի գրուածոց մէջ կը յիշատակուի

Յովբայ մեկնութիւն մը, որ ծաղկաքաղ հաւաքմունք մըն է Իսիւքիոսի և Դաւթի Քոբայրեցւոյն համանուն երկասիրութիւններէն: Լուսանցքի մէջ կը յիշատակուին Ստեփանոսի, Եփրեմի, Եւսեբի և այլոց ոմանց հեղինակաց անուանք, որոց գրութիւններէն մեծապէս օգտուած կ'երեւնայ Վանական:

Այնչափ զանազան ոճ ու գրուածքի կերպ ունեցող մատենագրաց սատարութեամբ ալ ամփոփ, հմուտ և իր համառօտաբանութեամբ՝ բաւականապէս սրտի ու մտաց պարարիչ երկասիրութիւն մ'է, ակաւարան՝ բայց ընտիր յորդորականներով: Ստեփանոսի (որ անշուշտ Սիւնեցին է) վկայութեամբ կ'ուզէ հաստատել թէ Սողոմոնի է Յովբայ գրոց շարագրութիւնը. «Ոմանք Մովսէսի ասեն գրեալ, և ոմանք Սողոմոնի և այլք Եզրի, և կէսք Երեմիայի: Բայց աւելի կարծիս գոյ Սողոմոնի. զի նկարագիրդ առակական է, որպէս ամենայն շարագիրք Սողոմոնի. զի Մովսէս և Եզրաս ոչ գտանեմք այսու շարագրաւ շարագրեալ: Մովսէս գրեաց որպէս պատմութիւն, և Սողոմոն ստիքսեաց որպէս խրատականն[1]»:

Ասոր նման գրուածք մ'է նաեւ Ուրախացիր պսակ կուսից ըսուած շարականին տեսութիւնը, զոր Պետրոս անունով մէկու մը խնդրանօք շարագրեց:

Վարդապետական գրուածոց մէջ նշանաւոր է այն ճառը՝ զոր Սուրբ Հոգւոյն բղխման վրայ շարագրեց, ինչպէս վերը յիշատակեցինք: **Տօնապատճառ** կոչուած գրոց մէջ ալ քանի մը մանր երկասիրութիւնք կ'ընծայուին Վանականի, որոնց հարազատութիւնը կրնայ տարակոյս վերցնել: Ասոնց կարգէն են, ճառ մը հետեւեալ բնաբանով, «Հայեաց ի քեզ, զուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քում»: — Խորհրդաւոր **Համեմատութիւն** մը Հին և Նոր կտակարանաց. — զանազան նիւթերու վրայ այլ և այլ **Հարցմունք** ու **պատասխանիք**: — Տարեգլխի վրայ տումարական գրուած մը՝ յորում Հայոց և ուրիշ ազգաց ամիսներուն խօսք կ'ըլլայ: — **Պատճառք**

---

[1] Կը յիշատակուին իր անուամբ մեկնութիւնք մարգարէութեանց Զաքարիայ և Եզեկիէլի, և որոց օրինակ մը պահուած է ի Մատենադարանին Էջմիածնի (Թիւ 1227).

վասն առաջաւորաց պահոց՝ արարեալ Վանական վարդապետի վասն հակառակացն և այպանողաց զսուրբ պահս։ — Ճառ մը «Յաղագս անքուն որդանցն»։ — Հանդիպեր ենք նաև գրութեան խորագրի մը Վանականի անուամբ «Գովեստ զՀայոց» կոչուած։

Պատմութիւն. — Վանականի երկասիրութեանց մէջ գլխաւոր, և յետագայից հետաքննութեան արժանաւոր նիւթ և ճարակ պիտի ըլլար Պատմութիւնը, որ դժբաղդաբար մեր ձեռքը հասած չէ, որուն կորուստը՝ մեծ պէտք է նկատուի թէ ազգային մատենագրութեան և թէ պատմութեան։ Վարդան և Կիրակոս կ՚աւանդեն թէ Վանական՝ երբ Թաթարներուն ձեռքէն ազատեցաւ՝ իւր Խորանաշատ վանքը քաշուեցաւ, իր և ազգին գլխէն անցած աղէտալի դէպքերը գրի առաւ։ «Հայոց ՈՁԵ թուականէն (1236), կ՚ըսէ Վարդան, մինչև ի ՉԺԴ (1265) յորում այժմ կը գտնուինք. ինչ որ ըրին Նետողաց ազգը՝ այն բոլոր իշխաններուն և իշխանութեանց վրայ, որ մեծ ծովուն ասդի կողմը կ՚իյնան, Պարսից, Աղուանից, Հայոց, Վրաց և Հոռոմոց աշխարհին վրայ, ուր կը բնակին Հայք, Ասորիք, Յոյնք, Տաճիկք և Թուրքմանք, տեղնիտեղը պատմած է մեր փառաւորեալ հայրը Վանական վարդապետ»։ Կիրակոսի խօսքերէն հաւանական կ՚երեւնայ թէ այս գրքին մէջ Սսոյ ժողովոյն պատմութիւնն ալ ըրած է։

Նոյն պատմիչները մեծապէս կը գովեն նաև Վանականի գրասէր ուսումնասիրութիւնը, և թէ ամէն ջանք կ՚ընէր որ նախնեաց երկասիրութիւններէն բան մը չկորսուի. ու յանուանէ կը յիշատակեն Երգեվանից մէջ ժողոված գրոց բազմութիւնը. տեղ մըն ալ չափազանցութեամբ խօսելով՝ Եղբայրասէր Պտղոմեայ կը նմանցնեն զինքը, «բազում գրեանս հաւաքեալ յազգաց և ի լեզուաց»։

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Վարդան վարդապետ։ — Երթն ի Կիլիկիա։ — Կոստանդին կաթողիկոսին կողմանէ նուիրակութիւնը։ — Թարգմանութիւն գրոցն Միխայէլի Ասորւոյ։ — Հուլաղու խանին հետ տեսութիւն։ — Պատմութեան գիրքը։ — Մեկնողական գրուածքները։ — Հնգամատենին, Սաղմոսի, Երգոց Երգոյն, Դանիէլի մեկնութիւնը։ — Ներբող ի սուրբ Լուսաւորիչն։ — Մանր կամ անհարազատ գրուածներ։ — Առակք։ — Վարդանայ երկասիրութեանց բնագրին տպագրութիւնը և թարգմանութիւնը։

Արեւելեան Հայոց և Աղուանից աշխարհին սահմանակից քաղաքներէն մէկուն մէջ ծնած է Վարդան, մանկութեան հասակէն Վանական վարդապետին աշակերտած, և անոր ուրիշ աշակերտաց մէջ հռչակաւոր և սիրելի իւր վարդապետին։ Ուխտի համար Երուսաղէմ ըրած ճանապարհորդութեան ժամանակ Կիլիկիա հանդիպեցաւ և իրեն հանճարոյն և զգօնութեան արժանաւոր պատիւ գտաւ թէ Հեթում թագաւորէն և թէ Կոստանդին կաթողիկոսէն. ու Հայրապետին սիրալիր թախանձանօք հինգ տարի կեցաւ անոր քով, կաթողիկոսարանին կարեւոր գործառնութեանց օժանդակելու համար. և երբ Կոստանդին նոյն Վարդանայ ձեռքով իւր մէկ շրջաբերական թուղթը ղրկեց առ արեւելեայս, մասնաւոր գովեստներով կը գրուատէր զվարդապետն այն թուղթին մէջ, «արդիւնական վարդապետ, անուանելով զնա, և նախախնամութեան մասնաւոր պարգեւ մը», զոր և իւր սիրտն ու խօսքը կ՚անուանէ յամենայնի։ Թղթոյն հետ մէկտեղ արեւելք տարաւ Վար-

գան նաև Սսոյ ժողովոյն կանոնները, որուն ինքն ալ ներկայ գտնուած էր Կիլիկիոյ եպիսկոպոսաց և վանահարց հետ։

Կաթուղիկոսին գլխաւոր փափաքն էր Սսոյ ժողովոյն սահմանադրութեանցն ու կամաց հակառակողները համոզել, և անոնցմէ հաւանութեան գիր կամ խօսք առնուլ։ Զոր կատարեց Վարդան՝ կաթուղիկոսին կամացն ու բաղձանաց համեմատ. և հոն ժամանակ մը կենալով Հայրապետին քով՝ թարգմանեց Միխայէլ Ասորւոց պատրիարքին ընդհանուր պատմութիւնը, իրեն օգնական ունենալով Իշոխ անունով ասորի քահանայ մը։ Ոմանք ի գրչագրաց Դաւիթ անունով վարդապետի մը կ՚ընծայեն Միխայէլ պատրիարքի ժամանակագրականաց թարգմանութիւնը. «Զբարեացապարտն ամենայն և զթարգմանիչն հին և նոր պատմութեան գրոց՝ մանաւանդ այսմ լուսազարդ գրոց. զմեծապատիւ րաբունին և զքարոզն տիեզերահռչակ և զամենագով սուրբ վարդապետն զԴթ (զԴաւիթ) յիշեցէք ի Քրիստոս»։ Իսկ այլք ընդհանրապէս կը խորագրեն. «Պատմութիւն արարեալ պատրիարքին Ասորւոց Միխայելի, զոր Վարդան վարդապետ Արեւելցին փոխեալ էր յասորի գրոց»։ Ոմանք կը նշանակեն նաև թարգմանութեան ժամանակը. «Յամի անժամանակին Աստուծոյ ընդ ժամանակաւ լինելոյն ՌՄԽԸ թուահամարութեան և ի ՈՂԵ թուաբերութեան Հայոց փոխեցաւ գիրքս այս (Միխայելի) Ասորւոց ի հայս՝ հրամանաւ տեառն Կոստանդեայ ի ԽԵ ամի հայրապետութեան, ի ԽԵ ամի թագաւորութեան Հայոց Հեթմոյ»։

⁂

Կիլիկիայէն դառնալէն ետքը՝ Կայենոյ ձորոյն մէջ եղած Անդրէի վանքն առանձնացաւ, և հոն շարադրեց իւր գլխաւոր երկասիրութիւնքը, որոնց վրայ ետքը պիտի խօսինք։ Յետոյ Վիրապի կոչուած վանքը նստած է, և աշակերտներ սովրեցուցած. նոյն պաշտօնը կատարած նաև Սաղմոսավանից ու Թեղենեաց վանքին մէջ։

Վարդանայ կենաց գլխաւոր պարագաներէն մէկն է Հուլաղու խանին հետ ըրած տեսութիւնը, որուն մանրամասն նկարագրութիւնը կ՚ընէ իւր պատմութեան գրոց մէջ։ Ինքը խանը, չի գիտցուիր ինչ պատճառաւ, իւր քովը կանչեց զՎարդան, Շնորհաւոր, կամ ըստ այլոց Սարվանի որդի Շահպատի ձեռքով, ու հետը Սարգիս ու Գրիգոր անունով վարդապետները և Տփխեաց աւագ քահանայն։ Հոն իրենցմէ առաջ հասած էր նաև Հայոց Հեթում թագաւորը ու Վրաց Դաւիթ արքայն, և Անտիոքայ լատին իշխանը, և Պարսից շատ ազատազգի մարդիկ։ Հուլաղու մեծ սիրով և մարդասիրութեամբ պատուեց զՎարդան. և անոր գինի օրհնել տուաւ, ու ձեռքէն առաւ խմեց ու իր աղօթքը խնդրեց։ Այլ և այլ հետաքրքրական հարցմունքներ ըրաւ, ու պատասխաններն ընդունեցաւ, զոր կը յիշատակէ պատմագիրը իւր գրուածքին մէջ։

Խանէն ետ դառնալու ժամանակ՝ աւազակաց հանդիպեցաւ, և իւր գիրքը ինկաւ անոնց ձեռքը, զոր ետքը նորէն առացաւ[1]։ Կենաց վերջին տարիները Հաղբատայ վանքին մէջ անցուց, ուր շարադրեց Երգոց երգոյն մեկնութիւնը, և հոն մեռնելով թաղուեցաւ յամի 1271։

Պատմութեան գիրքը. — Վարդանայ գրուածոց մէջ ամենէն աւելի նշանաւորն ու մտադրութեան արժանի՝ Պատմութեան գիրքն է։ Հետաքննին գրուած մը, մանաւանդ իւր ժամանակաց դէպքերուն համար, և իւր ատեննուան գիտութեան վիճակէն բարձր երկասիրութիւն մը։

Հեղինակին գլխաւոր նպատակն եղած է այս գրուածքին մէջ՝ ազգային ժամանակակից պատմութիւն մը շա-

---

[1] «Յաւուրս յայս՝ ի մեղաց իմոց անկաւ գրքոյկս այս ի ձեռս հարամեաց, տղայօք մեր. և յողորմութենէն Յիսուսի ապրեցան տղայքն առ ժամն. և յետ ամի և կիսոյ գիրքս ի Տփխիս ի վաճառ բերեալ և գնեալ ի տանէ եղբօր մերոյ՝ միոյ Մելեր կոչեցելոյ»։

րագրել համառօտ ոճով. բայց ուզեր է ազգին սկիզբէն սկսիլ, և անով ալ գոհ չեղած՝ ուրիշ զանազան ազգաց պատմութիւններն ալ մերինին հետ խառներ ու աւանդեր է։

Անոր համար արարչագործութենէ կը սկսի իւր գըրուածքը, և կը հասնի մինչև Սենաարայ աշտարակաշինութիւնը, անկէց ի Նեբրովթ և ի բաժանումն ազգաց։ Յաբեթայ վրայ խօսելուն ատեն, Հայկայ և Հայկազանց իշխանութեան վրայ ալ կը խօսի, մինչև ի Վահէ, համառօտ ոճով։ Ետքը նորէն աստուածաշունչ պատմութեան կը դառնայ, համեմատութեամբ և ընդարձակ ոճով աւանդելով Աբրահամու կոչմանէն մինչև ի Քրիստոս այլ և այլ ժամանակակից պատմութեանց համառօտ յիշատակութեամբք։

Կ'անցնի ապա Արշակունեաց պատմութեան, բաւական հմտութեամբ և նոր պարագաներով աւանդել այն դէպքերը, զորս յայլոց պատմչաց գիտեմք, և կը հասնի մինչև իւր ժամանակը։

Վեց հազար տարուան պատմութիւն է, զոր կ'աւանդէ Վարդան։ Այնչափ ընդարձակ ժամանակի պատմութիւն՝ այնպիսի համառօտ գրուածի մը մէջ՝ կամ խիստ ճարտարութիւն և կամ հմտութեան պակաս կ'ենթադրէ. և հարկ է ըսել Վարդանայ համար թէ այս երկրորդ թերութեան մէջ ինկած է։ Անոր համար է որ շատ անգամ պարզապէս անուանց ցուցակ մ'է իւր գիրքը, և ոչ յագեցուցիչ պատմութիւն։ Ժամանակագիտութեան մէջ ալ ունեցած տեղեկութիւնը, որ պատմութեան կարևոր աչքն է, խիստ սահմանաւոր է. անոր համար թագաւորաց և իշխանութեանց ժամանակներն իրարու հետ կը խառնէ, կամ անխտիր կ'աւանդէ, մինչդեռ երկայն դարերու տարբերութիւն կայ մէջերնին։ Իւր համառօտախօսութեան դէմ ալ՝ երբեմն երկայնաբանութեան մէջ կ'իյնայ, և այնպիսի դէպքեր և աւանդութիւններ մէջ կը բերէ, որոնց հաւատք ընծայելը՝ իւր իմաստութեան և համբաւոյն կրնան վնասակար ըլլալ, դիւրահաւանութեան ու պարզմտութեան արատ մը դնելով վրան։

Սակայն այս թերութեամբքն ալ՝ թէ ազգային պատմութեան և թէ եւրոպական գիտութեանց համար՝ ունի իւր արժէքը Վարդան, մանաւանդ իր ժամանակին հետաքննական դիպուածոց համար, զորս ի լրոյ կամ ի տեսոյ աւանդած է։

Թէպէտև յայտնի չէ թէ երբ սկսած է հաւաքել իւր այս համառօտութիւնը, բայց 1265ին լմնցուցած է, Հուլաղու խանին երթալէն ետքը։ Իսկ անկէ առաջ եղած երեսուն տարիներուն պատմութիւնը համառօտիւ նշանակած է. որովհետև արդէն Վանական և Կիրակոս մասնաւոր գրքով աւանդած էին այն ժամանակաց դէպքերը[1]։ Անկէ ետքը կը յիշատակէ խանին մահը, ու Եգիպտացւոց Կիլիկիա զարնելը, և Կոստանդին կաթուղիկոսին մահը ողբալով՝ կը լմնցնէ իւր գիրքը։

---

[1] Ինքը Վարդան համառօտ ոճ մ'ընտրելագոյն համարելուն այս պատճառը կու տայ. «Զոր մեք ոչ համարձակեցաք, կ'ըսէ, երկբնել կամ բազմաբանել. այլ համառօտ բերել միայն զթիւ ժամանակին, և նշանաւոր իրաց և գործոց յիշատակօք ի լրումն մերոյ գործառնութեանս, յոլով ժամանակօք սկսեալ և թերի թողեալ՝ պատկառելով ի գրողացն պատուոյ»։ Ուրիշ պատճառ մ'ալ կը բերէ, իր ատեն հանդիպած անցից և դիպուածոց չարութիւնը, զոր «չկարէ բան և նիւթ պեղել և ի յիշումն ածել»։ Հոս վերջաբան խօսքով մը կարծես թէ կ'աւարտէ պատմութիւնը. ուր և կը դադրի նաև հնագոյն օրինակն որ ի մերում Մատենադարանի։ Իսկ միւս օրինակն՝ գրչագրեալ ի ՉՁ թուականի ի խնդրոյ արքեպիսկոպոսին Ստեփաննոսի Ուռպելեան՝ որդւոյ Տարսայիճ իշխանի, կ'աւելցնէ Թաթարաց պատմութիւնը, որուն կը հետևին միւս նորագոյն օրինակք ընդհանրապէս։ Բայց որովհետև այս յաւելուածին մէջ գրութեան ոճը և լեզուն կը փոխուի, աշխարհիկ բառք կը յաճախեն, տարօրինակ և ի տգիտաց հրաշալի համարուած դէպք, թուականաց անդադար կրկնութիւնք, և այլն, յոմանց անհարազատ կարծուած է Վարդանայ պատմութեան այս մասը, և յաւելուած յայլոց։

⁂

Մեկնողական գրուածներ. — Իր հմտութեանն արժանաւոր այլ և այլ մեկնաբանական գրուածներ ալ թողած է Վարդան, որոց մէջ ժամանակաւ երիցագոյն կը համարուի

Դանիէլի մեկնութիւնը. — Ի խնդրոյ եղբարց, յորում հետեւած է, ըստ իրեն վկայութեան՝ Եփրեմի, Հիպպողիտեայ և Ստեփաննոսի Սիւնեցւոյ, համառօտ և ամփոփ ոճով։

Սաղմոսի մեկնութիւն. — Հաղբատու Յովհաննէս եպիսկոպոսին խնդրանօք՝ սաղմոսը մեկնաբանելու ձեռք զարկաւ Վարդան, Լամբրոնացիէն աւելի համառօտ ոճ մը բռնելով, և ընդհանրապէս հետեւելով թէ իրեն և թէ ուրիշ հին մեկնչաց, այս ինքն Աթանասի, Բարսղի, Եպիփանու, Եփրեմի, և այլոց։ Լեզուն գրեթէ ռամկական է[1]։

Մեկնութիւն Հնգամատենին. — Հաղբատայ Համազասպ եպիսկոպոսին ու Սանահնի վանից Գրիգոր փակակալին խնդրանօք շարագրեց Վարդան այս գրուածքը Հայոց ՉԺ (1261) թուականին։ Իրմէ առաջ եղող վարդապետաց՝ որ նոյն նիւթին վրայ խօսեցան, գրուածոց բովանդակութիւն կամ քաղուած կրնայ համարուիլ այս երկասիրութիւնը։ Յունական հարց դասակարգութեան հետ կը յիշատակուի նաեւ մերն Եղիշէ, և անոր Արարածոց մեկնութենէն քանի մը հատուած ալ մէջ կը բերէ, և ասոնք միայն մեր ձեռքը հասած են այն ընտիր և գեղեցիկ գրուածքէն։ Այլ և այլ քաղուածներ ալ կ'ընէ հեղինակը Բարսղի, Եփրեմի, Գրիգորի Աստուածաբանի, Պիսիդեայ, Նիւսացւոյն մարդակազմութեան գրքէն, Ոսկեբերանի գրուածներէն. տեղ տեղ ալ ի Լուսաւորչէ, Դաւիթ փիլիսոփայէն, Փիլոնի գրուածներէն, Թովմայի Արծրունւոյ գրքէն, և այլն։

Մեկնութիւն Երգոց երգոյն. — Իրեն աշակերտակից Կիրակոս վարդապետին խնդրանօք յօրինած է այս գիրքը Վարդան 1265 թուականին, Կոստանդին կաթողիկոսին ու Հեթմոյ թագաւորութեան և Յովհաննու արքեպիսկոպոսութեան ատենը, Հաղբատայ վանքին մէջ։

Առ Կիրակոս ուղղեալ ընծայականին մէջ, որուն առաջնորդութեամբ և ինչ կերպով այս գրուածքին ձեռք զարնելը կ'աւանդէ Վարդան. «Յորոց և դու ճանաչիս՝ տէրունական իր և անուն, հարազատ եղբայր մեր Կիրակոս, բարունեաց պետ և քաղցուայնի կիրք մեր, և մեծ մասն յուսոյն ի սուրբ եկեղեցի. որ և քում ըղձիցն կցորդել հրամայեցեր ի բան և ի գիր, զհաւատն Տեառն տալով, շնորհօք նորա կարել մեզ զմնացեալն յերգոց երգոյն ի Գրիգորէ Նիւսացւոյ. որ մեծն է և աղբիւր եկեղեցւոյ՝ լնուլ, առաջնորդութեամբ Որոգինեայ, համառօտել և զԳրիգորին ի սկզբանէ, որ ի վեր գտանի քան զկարն մեր յոյժ»։

Ներբող ի սուրբ Լուսաւորիչն. — Ի խնդրոյ Համազասպայ՝ որ Հաղբատայ առաջնորդ եղաւ յետ Յովհաննու եպիսկոպոսին[1]։ Ճառ մ'ալ ի սուրբ խաչն, որոյ սկզբնաւորութիւնն, «Ի գերազանց լուսոյն պայծառացան անստուեր միջօրէին»: Իրենը կ'ենթադրուի ուրիշ ճառ մ'ալ նոյն նիւթին վրայ. «Բազում ամբաստանութիւն աւետարանիչս բանայ»:

---

[1] Խորագիրն ըստ ձեռագրաց. «Աշխարհալոյս և տիեզերալոյս վարդապետին Վարդանայ պարզ և լուսաւոր խորին խորհրդով դժուարագիտութեամբ և բանիւ մեկնութիւն արարեալ Սաղմոսին, շարժեալ ի Հոգւոյն սրբոյ և յարհիականէն Հաղբատայ և աշակերտաց իւրոց, յոյժ աշխատեալ մտաւոր բանիւք զոր ցուցանէ առաջիկայ ամբարեալս... նաեւ զսրբոցն ի մի հաւաքեալ ձեռնհաս սիրողացն»։

[1] Հրատարակեալ ի կարգի Հայկական Սոփերաց (Հատ. Ե.) ի 1854. ի Ս. Ղազար։

Էջմիածնի Մատենադարանին ձեռագրաց ցուցակին մէջ (թիւ 920) հետեւեալ խորագրով երկասիրութիւն մ'ալ կ'ընծայուի Վարդանայ. «Յերիցս երանեալ հայրն մեր և ի սուրբ հայրապետն Յովհան Աւձնեցի, յայտարարութիւն բանից ի Նուաստէ Վարդանայ ի խնդրոյ տեառն Համազասպայ արքեպիսկոպոսի մեծի աթոռոյն Հաղբատայ. առ որ սկիզբն նախադրութեան ճառիս պատասխանի է»։ Սկզբնաւորութիւնն է. «Պայծառ ջահն արեւելից եկեղեցեաց այրն քրիստոսազգեաց Գրիգորիոս»։

* * *

Մանր կամ անհարազատ գրուածներ. — Այլ և այլ մանր և անհարազատ գրուածներ ալ կ'երեւնան Վարդանայ անուամբ, որոնք քիչ կամ բոլորովին անարժանք են մտադրութեան և մասնաւոր քննութեան: Ասոնց կարգէն է

Դաւանութիւն հաւատոյ երկու տեսակ, մէկն ընդարձակ՝ իսկ միւսն համառօտ:

Համառօտ գրուած մը այսպիսի խորագրով. Բանք յաղագս երկոտասան ախտից, նմանութեամբ երկոտասան առաքելոց: Եպիփանու Կիպրացւոյ ընծայուած է յարեւմտեայց, իր անունով գտնուելով նաեւ յունական սկզբնագիրը:

Քերականի մեկնութիւն. — Աննշան գրուածք մը, իբրեւ ի խնդրոյ Հեթմոյ թագաւորի:

Մանր գրուածոց կարգը կրնան համարուիլ քանի մը շարականներ ալ որ Վարդանայ կ'ընծայուին. ինչպէս ի պատիւ Յովակիմայ և Աննայի երգուած «Որ Նախիմաց» շարականը, զոր ի Հռոմկլայ՝ Հեթում թագաւորին և Կոստանդին կաթողիկոսին քով եղած ատենը երգած կ'երեւնայ. որովհետեւ մէջը մասնաւոր մաղթանք կան Հայոց թագաւորին և հայրապետին կենդանութեանը համար: «Ի յանսահման ծոցէն» ի պատիւ Երկոտասան առաքելոց, և «Որք զարդարեցին» Թարգմանչաց վրայ, և «Ամենասուրբ Երրորդութեան» ի յիշատակի սրբոյն Սարգսի զօրավարի: Սարգիս անունով մէկու մը խնդրանօքն ալ Անթառամ ծաղիկ շարականին մեկնութիւնը շարագրած է վայելուչ ոճով:

Առակք. — Վարդանայ անուամբ Առակաց գիրք մըն ալ կը գտնուի, որոց թիւը Աղուեսագրոց մէջ ինչուան հարիւր քառասունի կը հասնի: Հաւանական կ'երեւնայ թէ Մխիթարայ Գօշի և այլոց առակներէն հաւաքուած երկասիրութիւն մըն է ասիկայ, որուն վրայ իր քովէն ալ քանի մը առակներ յաւելցնելով հեղինակը՝ ամբողջ գիրք մը ձեւացուցած է: Բաւական հանճարեղ գիւտեր և զուրցուածքի կերպեր կը բովանդակեն այս առակները: Երկու անգամ տպագրուած են այլ և այլ տեղեր, և երրորդ մասնական տպագրութիւնն ալ եղած է ի Փարիզ, հանդերձ գաղղիական թարգմանութեամբ (1825):

Աշխարհագրութիւն. — Սոյն անուամբ երկասիրութիւն մըն ալ կը գտնուի Վարդանայ ընծայուած, որուն վրայ այսպիսի խորագիր մը կը դնեն գրչագիրք. «Աշխարհագրութիւն Նորոգ թարգմանչին և երկրորդ լուսաւորչին, Վարդանայ վարդապետի»: Աւելի Հայաստանի աշխարհագրութիւն՝ կամ քաղաքաց անուանակոչութիւն կրնայ համարուիլ այս գրուածքը, զոր գաղղիական թարգմանութեամբ ծանօթացոյց արեւմտեայց՝ Սէն-Մարդէն: Անկէ զատ ուրիշ տպագրութիւն մըն ալ եղած է ի Կ. Պոլիս 1728ին:

Վարդանայ ընծայուած երկասիրութիւն մ'ալ կայ Յեբուսաղէմ, (Թիւ 936) յօրինեալ ի խնդրոյ Պաղտին իշխանի Հայոց: Հետաքննական է գրողին յիշատակարանն. «Ես ողորմելիս Վարդան, ազէտս ի գիտնականաց և աննմանս ի կարգաւորս, գրեցի զայս աստուածարնակ տառս, ի խընդրոյ աստուածասէր իշխանին՝ պարոն Պաղտինին, որ է ազն թագաւորին, և աղաչեմ անմեղադիր լինել... զի այս էր կարն մեր և որչափ հասու եղեւ միտք մեր, ողորմութեամբն Աստուծոյ ժողովեցաք յօրինացն Աստուծոյ, և եդաք ի սմա: Եւ այս յոյժ ծանր եղեւ մեզ, զի երկու ամ է որ ի զբաղումն աշխարհի էաք, և ոչ յընթերցումն գրոց. քանզի բուռն է կարիք մարմնոյ յորժամ պակասէ, զի հալածական եղաք ի բնիկ ժառանգութենէ մերմէ, յերկրէն Կիւրիկոյ և ի գաւառէն Տքլոյ. և եկաք յԱյգեկս, և Աստուած ի բարի յաջողեաց զամենայն գործս մեր և զպէտս մարմնոյ:

Իսկ ի հին ուսմանէ յիշեալ հաւաքեցի զսա։ Եւ յորժամ հաւաքեցի ի սա, և կատարեցի զսա յաստուածարնակ ցանկալի անապատս յԱյգեկս, ընդ հովանեաւ աստուածընկալ և հրաշագան սրբոցս՝ Աստուածածնի և սուրբ Կարապետի. և յառաջնորդութեան սուրբ ուխտիս տեառն Կոստանդեայ սրբասնեալ եպիսկոպոսի, մատաղ հասակաւ Նորընծայ գոլով յատիճան ժամանեալ յառաքելական։ Էր թուականն Հայոց ՈՀԱ, և էր Թագաւոր Հայոց Լեւոն Ռուբինեաց ի Կիլիկիայ քրիստոսապսակ և ահարկու ի վերայ անաւրինաց։ Եւ էր ի վերին Հայք անուանի և զաւրավար հալածիչ անաւրինաց. և է քսան և չորս ամ որ գերեալ է յանաւրինաց Երուսաղէմ։ Եւ բարձաւ թագաւորութիւն Յունաց, և ազգն արիական առին զԿոստանդնուպոլիս։ Եւ յայսմ ամի փոխեցաւ տէր Դաւիթ, որ կալաւ զկաթողիկոսութիւն սակաւ ամաւք յԱրքայկաղնին։ Եւ արդ աղաչեմ զամենեսեան որ ընթեռնույք զսա, աղօթս արարէք աստուածասէր իշխանին պարոն Պաղտինին, որպէս զի Աստուած ի խաղաղութեան պահեսցէ զնա հարազատ եղբարրքն»...

Վարդանայ Պատմութեան գրոց երկու տպագրութիւն եղած է. մին ի Մոսկուա (1861), երկրորդն ի Վենետիկ (1862) հմուտ և ընտիր ծանօթութեամբք. Վերջին տպագրութեանս յառաջաբանին հեղինակը՝ բաց ի Վարդանայ պատմագրողէ, ուրիշ մէկ կամ երկու համանուն վարդապետներ ալ կը յիշատակէ, և թէ այս երեքին գրուածները վրիպակաւ իրարու ընծայուած են. Այս երկուքն են՝ Վարդան Բարձրբերդցի, որ մերինէն տասնվեց տարի կրտսեր է ժամանակաւ, և որ Երէցուց Վարդան կը կոչուի ի Ղազարայ Ջահկեցւոյ և որուն կ'ընծայէ Զորէջ Աւետարանաց համառօտ մեկնութիւն մը, Առակները, Աշխարհագրութիւնը և Քերականի մեկնութիւնը. և թէ այս վերջիններս՝ երրորդին աշխատասիրութիւններն են. — Վարդանայ Պատմութիւնը ռուսերէն ալ թարգմանելով՝ ծանօթութեամբք հրատարակեց ի Մոսկուա՝ գիտնական բանասէրն Մկրտիչ Էմինեան, յամի 1861. Մատենախօսական երկասիրութիւնք. Les Mongols, d'après les historiens arméniens. Fragments traduits sur les textes originaux. Extrait de Vartan, par Ed. Dulaurier. Paris, 1860. — Extrait de l'Histoire universelle de Vartan-le-Grand. Dans le

Recueil des Croisades. – Dulaurier, Documents arméniens. Paris.– Analyse critique de l'Histoire universelle de Vartan; édition princeps du texte arménien et traduction russe par M. Emine. par M. Brosset. Saint-Pétersbourg, 1862. Քննադատութիւն մ'ալ ի ռուս, ի ձեռն հմուտ ուսուցչի Ք. Պատկանեան։ — Vardan (Vardapet). Extrait du livre intitulé: Solutions des passages de l'Ecriture-Sainte, écrites à la demande de Héthum Ier, roi d'Arménie; trad. de l'arménien vulgaire sur le texte original, par E. Prud'homme. Paris, 1865. Տես նաև ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ և Հայկ. Նոր Մատենագիտութիւն Հ. Ա. Ղ.։

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

Կիրակոս Գանձակեցի աշակերտակից Վարդանայ։ — Պատմական երկասիրութիւնը։ — Անոր նիւթը։ — Մատենագրական ոճ և ճշտութիւն։ — Բնագրին տպագրութիւնք և թարգմանութիւնք։ — Ժամանակակից փոքր մատենագիրք։ — Մխիթար Անեցի։ — Վարդան կամ Վարխամ. — Կիրակոս Արեւելցի։

Վանական վարդապետին աշակերտ ու Վարդանայ ուսումնակից էր Կիրակոս Գանձակեցի։ Գետկայ վանքին մէջ ըրած էր իւր ուսումը, որչափ որ կը ներէր խռովեալ ժամանակը՝ յորում ապրեցաւ, և վարդապետաց ուսման և գիտութեան չափը։ Այս կարծիքը կը հաւատարմացնէ իրեն Պատմութեան գիրքը, որ Կիրակոսի միակ երկասիրութիւնն է՝ մեր ձեռքը հասած։ Իբրեւ մատենագիր՝ չունի այն կարգարան ոճը՝ զոր իւր վարդապետն և ուսումնակից գործածած են իրենց գրուածոց մէջ. ոչ ալ այն հմտութիւնը՝ զոր կը ցուցնէ Վարդան իւր տիեզերական պատմութեան մէջ. դարձեալ և ոչ քննադատութիւնը՝ որ անհրաժեշտ է՝ անցեալ և ժամանակակից դիպուածներն ապագային աւանդելու աշխատութիւնը վրան առնող մատենագրի մը համար։

Կիրակոսի ատեն՝ հայերէն դպրութիւնք ազգային քաղաքականութեան հետ իրենց ճգնաժամին հասած էին. կործանման մօտ եղող և չորս կողմանէ ի թշնամեաց հարըստահարեալ իշխանութիւն մը՝ չէր կրնար ոչ բարեկարգ վարժարաններ և ոչ ալ ուսուցիչներ երեւցնել. և անոնց պակասը հարկ էր որ զգալի ըլլար ժամանակին բանասիրաց մտքին, դպրութեան, հմտութեան և գրչին վրայ։

Ամբողջ քննադատութիւն մը կը պակսի Կիրակոսի պատմութեան մէջ, երբոր այնպիսի դէպքեր կ'աւանդէ ու հաւատարմացնել կը ջանայ, որոնց ստուգութեանց գոյութիւնը դժուարին, ու երբեմն նոյն իսկ անկարելի է. երբոր իրմէ առաջ եղող պատմչաց հետեւելու տեղ՝ շատ անգամ անոնց գրուածոց անտեղեակ՝ տարբեր պարագաներ և յիշատակներ կ'աւանդէ։ Լեզուն ալ՝ իւր ժամանակին, ըսենք նաեւ, թէ պատմած խեղճ դիպուածոց՝ արժանաւոր է։

Պատմութեան նիւթը[1]. — Այնպիսի թշուառ ատենի մը մէջ, կը գրէ՝ յորում «սէր ցամաքեալ, անգթութիւն տիրեալ, աստուածպաշտութիւն նուազեալ և անհաւատութիւն բարձրացեալ. սեղանք և պատարագք լռեալ, և քահանայք անողորմ ի սուր արկեալք. կանայք և մանկունք գերեալք, և արք դառնամահ լեալ»։ Յառաջաբանէ մը ետքը, կը սկսի իւր Պատմագրութիւնը. «Համառօտ պատմութիւն և ցոյցք անուանց սրբոյն Գրիգորի, և որք յետ նորա յաջորդեցին յաթոռն»։ Եւ այս վերնագիրը կը հաւատարմացնէ իրեն գրուածքին առաջին մասը. վասն զի սրբոյն Գրիգորի,

---

[1] Վերնագիրը այսպէս կը նշանակուի գրչագրաց մէջ. «Համառօտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ՝ մինչեւ ի յետին աւուրս թուացեալ։ Արարեալ Կիւրակոսի՝ մեծ և ընտրեալ վարդապետի ի մեծահռչակ սուրբ ուխտն Գետկայ»։

անոր որդւոց և թոռանց պատմութիւնը կ'ընէ համառօտ ոճով, քաղելով իրմէ առաջ եղող պատմագրաց գրուածքը, և մանաւանդ Բիւզանդայ, և այլոց։ Եւ թէպէտ քաղաքական այլ և այլ անցքեր ալ կը յիշատակէ, և ոչ միայն ազգային՝ այլ նաեւ Բիւզանդացի կայսերաց, Պարսից, Արաբացւոց և Մահմետի և իրեն կրօնից և աշխարհակալութեանց դէպքերը, սակայն գրեթէ միշտ երկրորդաբար, աւելի ուզելով ճանչցնել և մեծարել տալ Հայաստան եկեղեցւոյ իրեն փառաւոր պարծանքը։ Վասն զի ուր համառօտիւ և վեր ի վերոյ յիշատակութեամբ գոհ կ'ըլլայ քաղաքական նշանաւոր անցից, աւելի մանրամասն՝ գրոց տանելուն չափ՝ կը խօսի եկեղեցական դիպուածոց, անձանց և գրաւոր երկասիրութեանց վրայ։ Այսպէս Շնորհալւոյն առ Յոյնս գրած հաւատոյ երկար դաւանութիւնը՝ ամբողջ կ'ընդօրինակէ։

Այսպէս են ընդհանրապէս Կիրակոսի պատմութեանց առաջին տասը գլուխները։ Բայց երբոր իրեն մերձաւոր ու ժամանակակից դէպքերու վրայ կը սկսի խօսիլ, առաջին համառօտախօսութիւնը կը թողու, և ոճով կ'աւանդէ այն դիպուածները՝ որոնք Հայաստանի պատմութեան մէջ տըխուր տեղ մը գրաւած են. վասն զի հայրենեաց կործանման մանրամասն պարագաներն են։ Սակայն առաջ Աղուանից ազգին վրայ համառօտ տեղեկութիւն մը կը դնէ[1], և պատճառն ալ ինքը մէջ կը բերէ. վասն զի զանոնք «ազգային և հաւատակից Հայոց» կը կոչէ. «մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք, հայերէնախօսք յոլովք էին. թագաւորքն՝ հնազանդք թագաւորին Հայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք. և եպիսկոպոսքն՝ ձեռնադրեալք ի սըրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա»։ Եւ անոնց եկեղեցական և ազգային համառօտ պատմութիւնը՝ կը հասցնէ մինչեւ իւր օրերը։

---

[1] «Համառօտ հիւսուած պատմութեան կողմանցն Աղուանից, ընդներգոյս զրուցատրաբար»։

Անկէց Թաթարաց ազգին վրայ կը սկսի խօսիլ, անոնց ըրած պատերազմները, յաղթութիւնք, Հայոց և Հայաստանի հետ ունեցած յարաբերութիւններն, Գանձակ, Շամքոր, Լօռի քաղաքաց աւերումը, Անւոյ, Կարսայ հիմնայատակ քանդիլը, Թաթարաց Հայաստանի մէջ բռնանալը, ծանր հարկահանութեամբ բոլորովին աղքատութեան և խեղճութեան մէջ ձգելները, և այլն։ Ասոնք են Գանձակեցւոյն Պատմութեան գլխաւոր նիւթերը։

Այս նկատմամբ հետաքրքրական է իրեն երկասիրութիւնը։ Թաթարաց վրայ՝ նոյն իսկ Եւրոպացի ազգաց մէջ գտնուած տեղեկութիւններն այնչափ ցրիւ և առասպելախառն են, որ այսպիսի ժամանագրի մը գրուածքը իրաւամբք իրեն արժանաւոր յարգը կը գտնէ անոնց առջեւ։

Թէպէտ շատ տեղ կարգէ դուրս դիւրահաւան պարզմտութիւն մը կ'երեւցնէ Կիրակոս, բայց ընդհանրապէս իւր ստուգախօսութիւնն ալ չենք կրնար մերժել. մանաւանդ իրեն ժամանակակից դիպուածոց նկատմամբ, զորս չէ դանդաղած մանր քննել։ Ինքն ալ կը վկայէ իւր անձին համար, երբոր Լեւոնի թագաւորութեան վրայ խօսելու տեղը կը գրուցէ. «Մինչեւ ցայս վայր էր պատմութիւնս երկօք աշխատութեան հաւաքեալ ի նախագրելոց. իսկ որ առաջի կայս մեզ ասպարէզ պատմութեանս, է որ ականջալուր, և է որ ականատես»։ Դարձեալ Հեթում առաջնոյն ճանապարհորդութեան դարձը նշանակելով, կ'ըսէ. «Բազում և այլ ինչ պատմէր Թագաւորն իմաստասէր՝ զխժական ազգացն, զոր թողաք մեք. զի մի՛ աւելորդ համարեսցի»։ Ուրիշ տեղ մըն ալ Հուլաւու Թաթար զանին Պաղտատ քաղաքն առնելը յիշատակելով, կ'ըսէ. «Զայս ամենայն պատմեաց մեզ իշխանն Հասան, զոր Պռօշ անուանէին, որդին Վասակայ բարեպաշտի, ... որ ականատես և ականջալուր էր իրացս»։

⁂

Երեքտասաներորդ դարուս մէջ գիտութեամբն և խոհական զգօնութեամբ համբաւեալ էր յազգին ՄԽԻԹԱՐ ոմն վարդապետ Սկեւռացի, զոր Կոստանդին կաթուղիկոս և Հեթում, յարգելով անոր հանճարը, նուիրակ ղրկեցին առ պատգամաւորն Ուրբանոս Դ. քահանայապետի, առ արքեպիսկոպոսն Տիրոսի Գուլիէլմոս. որ Աքքեա գալով՝ կրօնական խնդրոց համար խօսելու և վիճելու նպատակաւ, դժկամակութիւն կը ցուցնէր ոչ Հայոց կաթուղիկոսին և ոչ անոր նուիրակին երեւնալուն վրայ։ Երբ հասաւ Մխիթար, ի սկզբան՝ ոչ այնչափ սիրալիր ընդունելութիւն ըրաւ անոր Գուլիէլմոս. բայց ետքը կաթուղիկոսին կողմանէ ղրկուած ընծաներն ընդունելով, յարգեց ու մեծարեց նաեւ անոր նուիրակը, տեսնելով անոր հմտութիւնը և տուած իմաստուն պատասխանները։ Օր մը կոչեց զնա ի ժողով. հոն ներկայ էին Աքքեայի քաղաքապետն Ճօֆրէ (Ջուփրի) տաճարական ասպետաց կարգապետը, Հիւանդանոցին վերատեսուչը, և շատք յիշխանաց, – բայց ի գլխաւորէ նոցա – և փաստաբանք. և սկսան վիճել սրբոյն Պետրոսի առաքելոյն գլխաւորութեան վրայ։ Եւ թէպէտ Մխիթար բաւական հմտութեամբ կու տար պատասխանները, բայց մերթ նաեւ կանխակալ կարծեօք և հոգւով, չափազանց յարմամբ ագ-

---

Բնագրին երկու տպագրութիւնք եղած են. առաջինն ի Մոսկուա. «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, ի լոյս ընծայեաց Ոսկան Տէր Գէորգեան Յովհաննիսեանց Երեւանեցի. ի Մոսկուա, ի տպարանի արեւելեան լեզուաց Ճեմարանի Տեարց Լազարեանց, 1858», իսկ երկրորդն ի Վենետիկ, «Կիրակոս վարդապետի Գանձակեցւոյ, Համառօտ Պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր, լուսաբանեալ», 1865. Թարգմանութիւնք ի լեզու գաղղիական. Histoire d'Arménie, par le vartabéd Kiracos de Gantzac, traduite par M. Brosset, Saint-Pétersbourg, 1871. – Les Mongols, d'après les historiens arméniens. Extraits de Guiragos, par M. Ed. Dulaurier. Paris, 1858. — Traduction latine de quelques passages de Kiracos, par M. Petermann, de l'Académie de Berlin.

գային եկեղեցական գլխոյն իշխանութեան և իրաւասութեան, և մեծ համարելով զնա քան զայլ ամենայն պատրիարքունս: Այս միաբանութեան պատմութիւնն ու խօսքերը գրի առաւ Սկեւռային, և ի դարձին ընծայեց զայն Հեթում թագաւորի՝ քառատող ոտանաւորով: — Իրեն երկասիրութիւնն է նաեւ Յունաց պատրիարքական աթոռոց, և մանաւանդ Կոստանդնուպոլսի աթոռոյն վրայ միաբանական գրուած մը, զոր յօրինեց ի խնդրոյ Յակոբայ արքեպիսկոպոսի Կաստաղօնի: Գրիչք կը չփոթեն զինքը երբեմն ընդ Վարդանայ, զոր պիտի յիշենք, որ հոգւովն ու գրչով իրմէ շատ հեռի կը մնայ:

Հաւանականաբար իրենն է աստուածաբանական գրուածք մը՝ խորագրով. « Մխիթարայ վարդապետի թէ զի՞նչ է պատճառ մարդեղութեան բանին Աստուծոյ », որոյ յիշատակարանն է. « Առաջին այս գրեցաւ սովփեր հոգեւորական տառից իմով ձեռամբ Մխիթ. պիտականուն վարդապետի, որ հաւաքեցի զսա յաստուածաշունչ մատենից... Ի Թուի ՉՀ երրորդի հայկազեանս տոհմի տումարի՝ ես անպիտանս... Մխիթար անուն, կրտսեր վարժապետաց և յետին բանահիւսաց կարգեցի... գործակցութեամբ ընտրեալ և սրբազան րաբունւոյ, և մերում հարազատ եղբօր. այլ և օգնականութեամբ աղօթից Բարսեղ աբեղայի »:

ՊԱՂՏԻՆ իշխան, որոյ կայ թուղթ առ Վարդան վարդապետ (?) այսպիսի սկզբնաւորութեամբ. Զքրիստոսակիր անձին, զսուրբ և զարգիւնական վարդապետ Վարդանայ, և յետ Քրիստոսի յուսոյդ մերոյ: Զպատուական և զողջունաբեր նամակս ընթերցայ եղբայրս Պաղտինս. և յոյժ ուրախացաք ընդ ձեր բարի և ոգեշահ խրատս, զոր գրեալ էր առ մեզ վասն գործոց բարեաց: Եւ յօժարութեամբ ընկալաք իբրեւ զհրամանս Աստուծոյ, և այնպէս ուրախացաք, որպէս թէ զննջեցեալսն մեր տեսաք կենդանի հարազատսն մեր զսուրբ քահանայն Բարսեղ և զմեծ իշխանն Սմբատ, և զպանծալի նախնին մեր՝ զաստուածահաճոյ եպիսկոպոսն Բարսեղ »:...

Այն ժամանակներն Հռովմայ քահանայապետին ու Կոստանդին կաթուղիկոսին մէջ թղթակցութիւններ կ'ըլլային. և թէպէտ ազգին մէջ շատերը կը գտնուէին որ կաթուղիկոսին առ արեւմտեայս ցուցած մտերմութեան վրայ գոհ էին, բայց գտնուեցան ոմանք ալ որ այլ և այլ պատճառներով դէմ կը կենային, ու չէին ուզեր որ գործադրուի այն միաբանութեան խորհուրդը, ուսկից թէ եկեղեցւոյ և թէ ազգին մեծամեծ բարիքներու յոյս ունէր Կոստանդին: Ասոնցմէ էր է ՎԱՐԴԱՆ կամ Վարխամ, որ տեսնելով Հռովմայ հայրապետին նուիրակին թղթերը առ Կոստանդին կաթուղիկոս, ինքնիրմէ՝ իբրեւ ի դիմաց կաթուղիկոսին թուղթ մը գրեց առ Հեթում թագաւոր, արեւմտեան եկեղեցւոյն վրայ 15 մոլորութիւններ բարդելով անզգոյշ բացատրութեամբք: Որով ազգին մէջ հետեւող չունեցաւ, մանաւանդ թէ կուսակից և համամիտ կարծուածներն ալ հեռացան իրմէ:

Կ'աւանդեն թէ ժամանակ անցնելէն ետքը նոյնպիսի ոճով գրուածք մ'ալ հրատարակած է Վարխամ, զոր Մխիթար կաթուղիկոսն ալ կը յիշէ առ Իննովկենտիոս Հռովմայ հայրապետ գրած թղթին մէջ, ու կը մերժէ թէ հեղինակը և թէ անոր գրուածը. « Այն ատեններն, կ'ըսէ, Սեաւ լերան վրայ բնակէր Վարխամ անունով հակառակասէր ու անծանօթ մարդ մը, որ նուիրակին դէմ անկարգ, մոլորամիտ ու տխմար գրութիւններ հրատարակեց: Բայց այն խօսքերը հաճոյ չեղան ոչ թագաւորին և ոչ կաթուղիկոսին, և մեծապէս արհամարհուած են մեր քովը. և ուր որ գտնուէին՝ կրակի կու տանք »:

Կիրակոս պատմչին ժամանակակից և գրեթէ հայրենակից ալ է ԿԻՐԱԿՈՍ ԱՐԵՒԵԼՑԻ վարդապետն, հեղինակ կամ հաւաքող Յայսմաւուրք գրոց, որոյ համար կ'ըսէ ինքն.

«Ի միասին հաւաքեցի զտօն սրբոցն Աստուծոյ ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց. գրեցի և պատմութիւնս նոցա, որոց ոչ էր եղեալ ի գիրս Յայսմաւուրացն, և խառնեցի ընդ նախակարգսն… Եւ եղեւ իրակութիւնս այս ի թուիս ՉԺԸ, յաշխարհիս Կիլիկեցւոց, ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ, և յառաջին ամի իշխանութեան որդւոյ նորին Լեւոնի, ի վաթսուն և վեց ամի կենաց պանդխտութեան մերոյ: Եւ ճառքն որ յաւելաք մեր ընդ հինն խառնեալ՝ հարիւր եօթանասուն»:

ՅՈՎՀԱՆ ԵՐԶՆԿԱՑԻ

Երզնկացւոյն ուսումն ու դաստիարակութիւնը: — Գիւտ նշխարաց մեծին Ներսէսի հայրապետի: — Այն առթիւ երգուած շարականք յԵրզնկացւոյն: — Երթն ի Կիլիկիա և յարքունիս Լեւոնի: — Ժողովք ի Սիս և յԱդանա: — Միաբանողաց սկզբնաւորութիւնն: — Երզնկացւոյն երկասիրութիւնք: — Քերականի մեկնութիւն: — Ներբող ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ: — Մեկնութիւն Մատթէի: — Խրատական երկասիրութիւնք: — Քնարերգականք:

Յովհաննու Երզնկացւոյն ծնած տարին, ինչպէս մահուան թուականը՝ յայտնի չէ. միայն հաւանական կ'երեւնայ թէ ծնած ըլլայ 1250 թուականին, և մեռած ի 1326: Այլ և այլ անուամբք կոչուած է ի գիրս այս վարդապետը. մերթ Երզնկացի կամ Երզնկայեցի, այն քաղաքը ծնած ըլլալուն համար. մերթ Պլուզ՝ որ կապոյտ աչուի ըսել է. երբեմն Ծործորեցի, որովհետեւ երկայն ատեն բնակեցաւ

Ծործորու կոչուած սուրբ Աստուածածնի վանքին մէջ, որ Արտազ գաւառին մէջ կ'իյնայ. տեղ մըն ալ՝ Յովհաննէս Երզնկացի՝ «մականուն Մաշածին» կոչուած, անգիտելի պատճառաւ: Ի խորագիրս իրմէ յօրինուած շարականաց կը կարդանք. «որ մականուն Քաղցրիկ կոչի»:

Նոյն ատենները Երզնկայի քաղաքական իշխանութիւնը՝ Յովհաննէս պարոնին ձեռքն էր, իսկ հոգեւորականը՝ իր հօրը Սարգիս արքեպիսկոպոսին, երկուքն ալ աշխարհաշէն և ուսումնասէր անձանց ձեռնտուութիւն ընող անձինք: Երզնկացին իր ուսմանց առաջին ընթացքը՝ Սեպուհ լերան քով սրբոյն Մինասայ կոչուած անապատին մէջ ըրաւ. ետքը շրջակայքն եղող վանքերուն մէջ իր փնտռած ուսմունքն և գիտութիւնը խնդրելով ու վախճանին չհասնելով, ստիպուեցաւ հեռաւոր տեղեր երթալ:

Այն ժամանակները Հայաստանի մէջ մեծ անուն հանած էր իւր իմաստութեամբն և գիտութեամբը Վարդան վարդապետն, որ իւր օգտակար կենաց վերջին տարիները առանձնացեր էր Հայոց ու Վրաց սահմաններուն մօտ Հաղբատ ու Սանահին վանաց մէջտեղ՝ Կայենոյ ձոր ըսուած տեղը. և հոն եղող պզտիկ վանքին մէջ քաշուած՝ քովը յաճախող աշակերտաց դաս կու տար: Յովհաննէս ալ հոն գնաց, ու հաւանական կը կարծուի թէ մինչեւ Վարդան վարդապետին մահը հոն մնաց:

⁂

Յովհաննու Երզնկայ դառնալէն տարի մը ետքը՝ նշանաւոր դիպուած մը հանդիպեցաւ. գրեթէ 700 տարի առաջ փլած Թիլն աւանին մէջ գտնուեցաւ Ս. Մեծին Ներսէսի մարմինը, ու Սարգիս արքեպիսկոպոսին ձեռքով փոխադրեցաւ մաս մը Երզնկայ, մաս մ'ալ Տիրաշէն ըսուած վանքը, Գայլ գետին երկու ափունքը: Այս գիւտիս և փոխադրութեան ոչ միայն ականատես կը կարծուի Երզնկացին, այլ կ'երեւնայ թէ ինքը շարագրած է նոյն հրաշալի դէպքին պատմութիւնը։ Որովհետեւ կ'աւանդուի թէ այն փոխադրութեան ժամանակ՝ Սարգիս եպիսկոպոս ականատես ու իրենց իմաստութեամբը նշանաւոր եղող անձինքներէն մէկուն հրամայեց որ ոչ միայն պատմութիւնն ընեն, այլ նաեւ ճառ մը գրուի. եւ կը կարծուի թէ այս պարտքը կատարողն Երզնկացին եղած ըլլայ։ Անկէ զատ գեղեցիկ շարական մըն ալ երգեց ի պատիւ սրբոյն Ներսիսի, յորում կը յիշատակուի նաեւ անոր մարմնոյն փոխադրութիւնը։ Լեւոն Գ. Հայոց թագաւորը լսելով սրբոյն Ներսիսի նշխարաց գիւտը, հրամայեր էր եկեղեցի մը շինել անոր ի պատիւ որուն նաւակատեաց եւ օծման հանդիսին առթիւ շարագրեց այս շարականը։

Կ'երեւնայ թէ այն դէպքէն քանի մը տարի ետքը Երզնկացի իր հայրենի քաղաքէն հեռացած չէ, մինչեւ Սարգիս արքեպիսկոպոսին եւ անոր որդւոյն անպարտ մահը, որ 1276 թուականին հանդիպեցաւ։ Անկէ չորս տարի ետքը՝ սրբոյն Գրիգորի վանքին միաբանները՝ իրենց միաբանութեան նոր կարգ մը տալու համար խնդրեցին ի Յովհաննէ որ կանոններ գրէ. ինքն ալ կատարեց անոնց խնդիրքը, եւ գրեց «Կանոնք եւ սահմանք միաբանութեան եղբարց, որ աստուածային սիրով միաբանեցան յեղբայրութիւն միմեանց յեզնկա»։

Յաջորդ տարին Երզնկացին ուզեց ճանապարհորդութիւն մ'ընել յԵրուսաղէմ, թէպէտ եւ յայտնի չէ իր այս փափաքը կատարած ըլլալը։ Ասիկայ միայն գիտենք որ Կիլիկիայէն անցաւ, որպէս զի հոնտեղ թագաւորին ու Հայրապետին ջանքով պայծառացած գիտութեանց ճաշակն առնու։ Յակոբ կաթուղիկոս սիրով ընդունեցաւ զինքը, եւ իր ուսումնարանին վերակացու կարգեց։

⁂

Երզնկացւոյն համբաւը լսուեցաւ նաեւ արքունեաց մէջ, եւ Լեւոն թագաւորէն այլ եւ այլ մեծարանաց ու սիրոյ նշաններ տեսաւ։ Ռուբինեան թագաւորք՝ եւրոպական ազգաց հետեւողութեամբը՝ սրբոյն Վլասայ անուամբ ասպետական կարգ մը հաստատեր էին. Երզնկացւոյն Կիլիկիա գտնուած ժամանակը՝ Լեւոն թագաւորին երկու որդիքն՝ Հեթում ու Թորոս պատանեկութեան ու կորճութեան հասակը հասնելով՝ Ձիաւոր ընտրուեցան, ուրիշ քանի մը իշխանազանց եւ արքունի պաշտօնէից որդւոց հետ մէկտեղ։ Այս հանդիսին մէջ հրաւիրուեցաւ Երզնկացին՝ ատենական ճառ մը խօսելու, որ մեր ձեռքն ալ հասած է։ Լեւոնի անդրանիկ որդին ու թագաւորութեան ժառանգը՝ Հեթում՝ սէր կապեց վրան. իշխաններն ու եպիսկոպոսունք ճանչցան ու յարգեցին անոր հանճարը, եւ անոնց յորդորելովը ու խնդրանօք բազմաթիւ երկասիրութիւններ շարագրած է, ինչպէս ետքը պիտի տեսնենք։

Երզնկացին իր ծերութեան տարիները՝ Հայաստանի Արտազ գաւառին սուրբ Աստուածածնի կամ Թադէի վանքը քաշուեցաւ, որուն համար աւանդութիւնը կ'ըսէ՝ թէ սուրբն Թադէոս առաքեալ շինած ըլլայ։ Վանահայրը Զաքարիա եպիսկոպոս՝ մեծ սիրով ընդունեցաւ զինքը, եւ երկուքը միաբան ազգային յառաջադիմութեան համար կ'աշխատէին։

⁂

Այն ժամանակներն երկու նշանաւոր դիպուածներ հանդիպեցան մեր ազգին մէջ։ Պատմութենէ գիտենք թէ Կիլիկիոյ Հայոց թագաւորներն ուզեցին միաբանութիւն ընել լատին եկեղեցւոյ հետ. եւ այս վախճանաւ Գրիգոր Անաւարզեցի ժողովք մը գումարեց ի Սիս, և հոն հրաւիրեց ուրիշ զանազան վարդապետաց հետ նաև զԶաքարիա և զԵրզնկացին. բայց երբոր ժողովքը չգումարուած՝ կաթողիկոսին վախճանը հասաւ, ասոնք ժողովքի չգնացին։ Անաւարզեցւոյն յաջորդեց Կոստանդին, և իր նախորդին հրաւէրքը կրկնեց. բայց Երզնկացին չուզեց տեղէն շարժիլ. վասն զի տեսաւ որ Ստեփանոս Ուռպելեան կը հակառակէր այն խնդրոց՝ որոնց համար պիտի ըլլար ժողովոյն գումարումը. ու թէ կաթողիկոսին և թէ Զաքարիայի իմացուցած էր իւր միտքը։ Զաքարիա շատ ջանաց զինքը համոզել. բայց երբոր անկարելի եղաւ, լաւ համարեցան որ հեռուանց թղթով յայտնեն իրենց կաթողիկոսին հետ համաձայնութիւնը, և աւելորդ տեղ ազգային երկպառակութեանց յաճախելու պատճառ չըլլան։

Տաս տարի անցնելէն ետքը՝ երբոր Օշին թագաւորին հրամանաւ Ատանայի ժողովքը գումարուեցաւ, Երզնկացին առանց իր ծերութեան նայելու՝ յանձն առաւ վերջին անգամ մ'ալ Կիլիկիա երթալու, և հոն սահմանուած կանոններուն հաւանելով՝ որոնցմով Սսայ ժողովքը կը հաստատուէր, դարձաւ յԱրտազ։

Ուրիշ կրօնական նշանաւոր դիպուած մըն ալ եղաւ՝ լատին քարոզչաց առաջին անգամ Հայաստան գալը, որպէս զի Հայոց՝ իրենց լեզուն ընտանի ընեն, ու իրենք ալ հայերէնը սորվին. և այն յարաբերութեամբք՝ կրօնական միութեան և համաձայնութեան աշխատին։ Այն ժամանակը եղաւ Ունիթորաց (Միաբանողաց) կամ Հայ-լատիններուն երեւնալը։ Երզնկացին և Զաքարիա սիրալիր ընդունելութիւն ըրին անոնց, և Յովհաննէս՝ թէպէտ արդէն տարիքն առած ու մօրուքն յոգնած, ետեւէ եղաւ լատինական լեզուն սորվելու, և թարգմանեց Թովմայի Ագուինացւոյն Աստուածաբանութեան մէկ մասը։

Երզնկացւոյն կենաց վերջին տարիները մեծ երկրաշարժ մը եղաւ Արտազ գաւառին մէջ ու Թադէի վանքը կործանեցաւ. Զաքարիա նորէն շինեց այն վանքը, ու չթողուց որ Երզնկացին հեռանայ իր քովէն. որ և հաւանական կ'երեւնայ թէ հոն կնքած ըլլայ իւր բազմարդիւն կեանքը[1]։

Երզնկացւոյն երկասիրութիւնք. — Գլխաւորը՝ և ամենէն աւելի մտադրութեան արժանի կը համարուի

Մեկնութիւն Քերականի, զոր շարագրեց ի խնդրոյ Յակոբայ կաթողիկոսի։ Այս գրուածքին յօրինման պատմութիւնը՝ իւր ինքնագիր յիշատակարանէն քաղենք. «Երբոր, կ'ըսէ, Հայոց ՉԼԸ (1289) թուականին ուզեցինք Երուսաղէմ երթալ՝ Քրիստոսի տեառն փրկագործ տնօրինական տեղերը տեսնելու, Հայոց Կիլիկիա երկիրը գնացինք ... և ժամանակ մը կեցանք Յակոբ կաթողիկոսին քով, որ կը պատուէր զուսումնասէրս. և հրամայեց որ իւր աշակերտաց քերականութեան դաս տանք. և մեզի ախորժելի և հաճոյ երեւցաւ այս խնդիրը։ Ետքը խնդրեց մեզմէ անոր մեկնութեան պարզութիւն գրել, և լեցնել այն պակասը՝ զոր մեկնողներուն վերլուծական խօսքերը թողուցեր էին։ Ժամանակ մը անկատար մնաց այս գործը, մեր անպարապ ըլլալուն պատճառաւ, և տեղւոյ հանգստութիւն չունենալնուս։ Յետոյ եկեղեցւոյ վարդապետներէն հեզահոգի և առաքինասէր անձ մը՝ Յովհաննէս անունով, որ Տարօնոյ սուրբ Կարապետ եկեղեցւոյն մէջ երկար ժամանակ սպասաւորած էր, ու ժառանգաւորաց՝ աստուածաշունչ գրոց վրայէն դասախօսութիւն կ'ընէր ու մեկնութիւն կու տար, նոյն բանը խնդրեց մեզմէ աղաչանքով ու թախանձանաց թղթով։ Մեր քովը եղող ուսումնասէրքն ալ փափաքելով այս բանիս, կը փութացուցանէին զմեզ։ Եւ մենք թէպէտ իրաւացի պատճառ ունէինք առջեւնին դնելու մեր անձին տկարութիւնն ու խօսքի անրաւականութիւնը, դժուարին կեանքն ու մեր վրայ հասած նեղութիւնները, որով խնդրողաց յօժարութիւնը անգործ կը մնար, սակայն Աստուծոյ ողորմութեան շնորհքը գթալով մեր վրայ, հասուց զմեզ մեր սուրբ Լուսաւորչին հանգստեան լեռը։... Բայց զայս ալ յաւելումք ըսել ձեզի, որպէս զի աւելորդ և անպէտ չերեւնայ մեր աշխատութիւնը, վասն զի Մագիստրոս մեծապատիւ իշխանը՝ աշխատած էր այս գրքին մեկնութիւն մը շարադրելու. և մինչեւ մեր ժամանակը՝ անոր վրայ կը սորվեցնէին վարդապետքն իրենց աշակերտաց։ Ուրեմն ի՞նչ հարկ կար որ ուրիշները մեզմէ այս բանս խնդրեն, և մենք ալ յօժարամիտ ձեռք զարնենք այս գործիս։ Ուստի հարկ է որ նախ առաջիններուն թերին ըսեմ։ Վասն զի հմուտն Մագիստրոս երեք մեկնիչներու խօսքը իրարու քով դրած էր. Դաւիթ փիլիսոփային, Մովսէս քերթողին, և ուրիշ իմաստնոյ մը՝ որուն անունը գրուած չէր. և ինքն ալ իր կողմանէ այլ և այլ յաւելուածներ ըրած էր... բայց մեկնիչներու խօսք իրարու հետ չէր խառնած, և ոչ ալ ամէն մէկուն մեկնութիւնը դիմացը և ուղիղ նշանակած։ Կային ուրիշ մեկնիչներ ալ՝ որոնք Մագիստրոսի ձեռքը հասած չէին, և շատ տեղ առանց մեկնութեան թողուած. երբեմն ալ երկու երեք անգամ գրուած՝ երեք մեկնիչներուն ալ, և շարագրութեան կարգին մէջ յայտնի չէր թէ ո՛րը առաջնոյն էր, ո՛րը երկրորդին. որով շատ տեղ լուծմունքը պակաս ըլլալով՝ տարակոյս կը վերցնէր։ Անոր համար մենք ըստ ժամանակին հոգ ունենալով՝ քերականին մեկնութիւնները ժողվելու, գտանք ամէն մէկունը առանձին յօրինուած և մէկ գիրք ձեւացած... յորում կար Դաւթի փիլիսոփային և Մովսիսի քերթողին և ուրիշ երեք մեկնիչներու գրուածը, որոնք անուն չունէին. անոր մէջ նաեւ Բարսղի մեկնութիւնը. Դերջանայ անապատին մէջ ալ Համամ վարդապետին մեկնութիւնը գտայ. և օգնականութիւն առի Արիստակէսի բառգրքէն։ Ասոնց ամենուն, և ուրիշ իմաստուններուն խօսքը մէջ բերելով, այս մեկնութիւնը շարագրեցի»։

---

[1] «Քաղաքին (Երզնկայ) Ս. Նշան եկեղեցին, առաջնորդական աթոռոյն տակ յեցեալ ի սիւն, գտայ իւր ժամանակին, և Հայոց եկեղեցւոյն նշանաւոր Սոփեստոս, աստուածախօսն և երգախօսն Յովհան Պլուզ վարդապետ Ծործորեցին. Աւա՜ղ, որ զՍեպուհն գերազանց նուագեր էր, և Հայաստանեայց եկեղեցին քան զարեւն ի վեր բարձրացուցեր և փայլեցուցեր է, ինքն ինկեր էր այն աթոռոյն ոտից տակ նսեմ, անտես և անյիշելի». (Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Թորոս Աղբար. Բ. 50).

Երզնկացւոյն այս խօսքերէն յայտնի կ'երեւնայ, որ երկու տեսակ քերականի մեկնութիւն յօրինած է. մէկը՝ լոկ պարզաբանութիւն է Դիոնեսիոսի Թրակացւոյն քերականութեան, Մագիստրոսի ու Եսայի վարդապետին մեկնութեանց համաձայն, իսկ երկրորդը աւելի ընդարձակ՝ ըստ խնդրոյ Յակոբայ կաթուղիկոսի։

⁂

Բանք յաղագս երկնային շարժմանց. — Երզնկացին ի դարձին ի Կիւլիկիոյ գնաց ի Տփխիս, Վրաց մայրաքաղաքը, ուր բաց ի տեղացի իշխաններէն՝ կը գտնուէին այն ժամանակը նաեւ Հայոց հին իշխանազանց մնացորդք. օր մը Քարիմատենց Ումեկ իշխանին շինած եկեղեցւոյն մէջ ներբող մը խօսեցաւ Յովհաննէս, յորում երկնային զարդուց գեղեցիկ նկարագրութիւնն ըրաւ։ Ումեկայ որդին Վախտանգ՝ շատ զարմանալով այն սքանչելի զրուցուածքին վրայ, Երզնկացւոյն աղաչեց որ առանձին գրուած մը շարագրէ երկնից վրայ. Տփխեաց Յովհաննէս եպիսկոպոսն ալ իր կողմանէ շատ խնդրեց. որով շարագրեց Երզնկացին «Յաղագս երկանային շարժմանց» գրուածքը, ժամանակին աստեղաբաշխական գիտութեան յարմար։ Ապլոց անունով իշխան մը նոյն գրուածքը կարդալով, աղաչեց որ նոյն գեղեցիկ նիւթոյն վրայ կրկին գրէ Երզնկացին՝ քերթողական լեզուաւ. Յովհաննէս՝ հազար տող ոտանաւորով երկնից նկարագիրն ըրաւ և ընծայեց իշխանին։

Իրեն ընծայուած կը գտնենք նաեւ հետեւեալ խորագրով և ընտիր շարագրութեամբ երկասիրութիւն մը. «Երանաշնորհ և բազմիմաստ րաբունապետի Յովհաննու Ծործորեցւոյ կորովարիր մտացն տեսութիւն»։ և են քսան թուով ճառք կամ քարոզք·

Ա· Բանն որ առ Յովբ· «Զինչ երկիր իցէ յորում լոյսն ագանիցի· — Եթէ ոք իմաստուն խորհրդով ներակրթել գինք կամիցի, և ուղղակի տեսութեամբ յառեալ հայիցի ընդ պարս առաջին սրբոցն»։

Բ· «Մի երկնչիր հօտ փոքրիկ· — Թէպէտեւ ըմբռն ուրեմն էր մեզ»·

Գ· «Կապեսցէ զորթոյ գյաւանակ իւր· — Յաղագս խորհրդոյ լուսափայլ տօնիս»։

Դ· «Տէր զլուր քո լուայ· — Զոր օրինակ մշակ ոք հմուտ»։

Ե· «Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի· — Աստուածն Բան հրամայէ ուրեք յիւրում վարդապետութեան»։

Զ· «Այլ մեզէն եղեալ ականատես նորա մեծութեան· – Թէպէտեւ հրաման ի տեառնէ ընկալաք ոչ հոգալ յորժամ յատեան կոչիցիմք»։

Է· «Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ· — Յիրաւի ի սկիզբն նախագրութեան բանիս եպերեցայց ի գերահրաշ և ի հոգիահրաւէր ժողովոյդ»։

Ը· «Լուր Իսրայէլ, տէր Աստուած մեր տէր մի է· — Վստահացեալ յուսոյ քաջութեամբ»։

Թ. «Որպէս ջուր ցուրտ՝ ծարաւելոյ անձին ախորժելի է։ Ի Հոգին սուրբ։ — Բնադատիմ ահա և յոյժ վարանիմ յերկաքանչիւր կողմանց»։

Ժ· «Ժամանակ ծնանելոյ և ժամանակ մեռանելոյ· — Բանական բնութիւնք արարածոց յերկուս մասունս բաժանեալ են»։

ԺԱ· «Առ քեզ, տէր, համբարձի զաչս իմ· — Եւ ո՞րպէս համբառնայ անձն առ Աստուած յորժամ մտաւորական հոգին»։

ԺԲ· «Ահաւանիկ ես առաքեմ զհրեշտակ իմ· — Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք, յաստուածայինն, ի հրեշտակային և ի մարդկային»։

ԺԳ· «Ես իմաստութիւն բնակեցայ ի խորագիտութեան· — Յարարչական բանէ աննղական լուսոյն հաստատեալ գոյացան»։

ԺԴ· «Զի՞ բարի կամ զինչ վայելուչ զի բնակեն· — Հրամայէ տէր ի սրբում աւետարանին, թէ որ խնդրէ ի քէն տուր»

ԺԵ· «Ահաւասիկ ես ածից զծառայ իմ զծագումն· — Յերեւելեաց աստի ոչինչ ըղձալի գոլ քան զսիրելեացն կատարել բաղձանս»։

ԺԶ· «Փոքր էի ես յեղբարս իմ· — Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք»· սկզբնաւորութիւնը նոյն ընդ երկոտասաներորդ ճառին։

ԺԷ· «Զխորհուրդ արքայի ծածկել բարւոք է· — Եթէ ոք ի մարդկային բնութենէ մաքրեցաւ»։ Յոմանց ի գըրչագրաց՝ Տիրատուր վարդապետի կը տրուի այս ճառը։

ԺԸ· «Եւ ահա չորս կառք ելանէին· — Բազում ինչ առնեմք զոր ոչ կարեմք»։

ԺԹ· «Երգուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ· — Որպէս յաստեղս արեգակն և ի կենդանիս դիմակն և միւս միակն զառաջնաւորութիւն և զսկզբնաւորութիւն ունի»։

Ի· «Ի քէն է, տէր, աղբիւր կենաց· — Ի կարգ բանիս հայելով՝ երիս խորհուրդս ծանուցանի մեզ»։

Ներբող ի սուրբ Լուսաւորիչն· — Վրաց աշխարհէն նորէն հայրենիքը դարձաւ Երզնկացին, և իր ծննդեան քաղքին 1287ին կրած կործանման ժամանակ կ'երեւնայ թէ անկէ շատ հեռու չէր· այլ մօտակայ վանքերուն մէկուն մէջ առանձնացած։ Անկէ տարի մը ետքը՝ Սեպհոյ լերան վրայ եղող սրբոյն Գրիգորի վանքին մէջ իր պերճախօս լեզուն հանդիսացաւ։ Վասն զի գովելի սովորութիւն մ'ունէին վանքին միաբանք՝ որ տարուէ տարի այդ սրբավայրը յաճախող ուխտաւորաց և անթիւ բազմութեան առջեւ՝ մասնաւոր ներբողիւ մը կը պատուէին զսուրբ Լուսաւորիչն։ Նոյն տարին ներբողելոյն աւելի պատիւ մը ընելու համար՝ զԵրզնկացին աղաչեցին որ իր ճարտասան և սրտաշարժ լեզուն բանեցնէ՝ սրբոյն Գրիգորի անմահական յիշատակին աւելի մեծարանք մ'ընծայելու։ Յանձն առաւ Յովհաննէս, և շարագրեց այն ընտիր և սքանչելի ներբողը որ կը սկսի, «Յարազուարճ խնդութեամբ բերկրեալ». ուր Լուսաւորչայ հետ իւր հայրենի գեղեցիկ գաւառին սիրոյն ալ վառուած, և բնութեան աղուոր տեսարաններով միտքն ըզմայլած, բանաստեղծութեան և ճարտասանութեան շնորհքով զանոնք կը նկարագրէ, մանաւանդ Սեպուհ լեռն և Մանեայ այրքն և բոլոր Դարանաղեաց լեռները։ Ի ճառընտիրս ինչ իրեն ընծայուած է նաեւ ի պատիւ որդւոց և թոռանց Լուսաւորչի ներբողեան մը, որ հրատարակուած ալ է ի Կ. Պոլիս իր անուամբ, թէպէտ որոշ հաւաստիք մը չկայ այս ենթադրութեան։ Խորագիրն է. «Դրուատ գովեստից պատմագրաբար ի սուրբն Արիստակէս, ի Վըրթանէս, ի Յուսիկ, ի Գրիգորիս և ի Դանիէլ. Յովհաննու Երզնկացւոյ։ — Բաղձանք սրտի իմոյ բորբոքի»։

Երզնկացւոյ անուամբ կը յիշատակուի ի ձեռագիրս համառօտ պատմութիւն մը վարուց սրբոյն Գրիգորի[1]։

Դանիէլի մարգարէութեան մեկնութիւն մը կ'ընծայուի Երզնկացւոյն, հետեւողութեամբ Եփրեմի, Հիպպողիտայ և Վարդանայ, յօրինեալ ի ՉԿԵ (=1316) թուին Հայոց յԱրտազ գաւառի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի Ծործորու կոչեցեալ. ի խնդրոյ ուրումն Վարդան վարդապետի»։ (Մատենադարան Երուսաղեմի, թիւ 207)։

---

[1] Ներբողին յետին և ընտրելագոյն տպագրութիւն ի Ս. Ղազար, ի շարս Հայկական Սոփերաց, (Հատ. Ե.). «Յովհաննու Երզնկացւոյ ասացուած ներբողական գովեստ ի սուրբ Լուսաւորիչն Հայոց Գրիգորիոս. ասացեալ յօր յիշատակի նորա զոր տօնեն մեծաժողով հանդիսիւ ի լեառն Սեպուհ, որ է տեղի ճգնութեան նորին և հանգստարանի յոքնահաւաք հանդէս քահանայական դասուց և վարդապետաց ոմանց և ժողովք հաւատացելոց բազմաց անդր գումարելոց»։

Մեկնութիւն Մատթէի. — Կիլիկիա եղած ատեն զտաւ սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ սկսած Մատթէի աւետարանին մեկնութիւնը, որ մինչեւ եօթներորդ գլուխը մեկներ ու անկատար թողեր էր։ Իրմէ գրեթէ 150 տարի ետքը Երզնկացին յորդորեցաւ շարունակել զայն, ինչպէս ինքն իսկ կը պատմէ յիշատակարանին մէջ։ «Եւ ասոր գրութիւնն եղաւ, կ'ըսէ, Քրիստոսի 1316 թուականին»։ Շնորհալւոյն նման ոճ մը բռնել ջանացած է Երզնկացին թէ ըստ աստուածաբանութեան և թէ ըստ քերականութեան, սակայն այնչափ ջանքովն ալ և նմանողութեան փափաքով՝ յայտնապէս կը տեսնուի թէ որչափ կը զանազանին ի միմեանց այս երկու հանճարները[1]։

Խրատական երկասիրութիւնք. — Ամբողջ խրատական գիրք մը շարագրած է Երզնկացին, յորում սրբոց առաքելոց և հայրապետաց ու վարդապետաց խօսքերով զգուշացուցիչ խրատներ կու տայ պարզ ու դիւրիմաց ոճով՝ բոլոր հաւատացելոց հասկցողութեան յարմար։ Աղօթք մ'ալ կայ իւր անունով, և համառօտ խօսքեր ժամանակագրութեան վրայ[2]։

Քանի մը բանաստեղծական գրուածք ալ ունի Երզընկացին, որոց մէջ գլխաւոր է վերը յիշուած հազարտողեան քերթուածը երկնային զարդուց վրայ։ Ուրիշ քերթուած մըն ալ՝ որոյ սկզբնատառքն այս խօսքերը կը յօդեն. «Յովհաննէս վարդապետի Ծործորեցւոյ եդեալ ի չափ մերոյին տաղից՝ ոտանաւոր»։

Երկրորդն է խրատական և մաղթողական գրուած մը՝ զոր ի խնդրոյ Յակոբայ Մանկտաւագի Երզնկացւոյ յօրիներ է։

Երրորդն է այբուբենի վրայ չորս զանազան տեսակ

---

[1] Տես յէջ 632։

[2] Յովհաննու Պլուզ վարդապետի ընծայուած Պատարագի մեկնութեան մ'ալ կը հանդիպինք Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց մէջ (թիւ 1424)։

գրուածներ, խրատական ոճով և այնպիսի լեզուով մը որ աշխարհաբարի խօսից կը մօտենայ[1]։

Երզնկացւոյն են նաև հետեւեալ չորս Նախերգանք ճառից. և որոց սկզբնաւորութիւնքն են

Ա. «Անմիջոց բարեկամն Աստուծոյ, և անհաս խորհրդոց հազարապետ աստուածայինն Մովսէս, ասէ ուրեմն ի բանս իւր»։

Բ. «Տուրք բարի պարգեւաց և ձիր իմն անճառելի շնորհաց, անդուստ ի սկզբան ստեղծմանն ընկալաւ յարարչէն մարդկային բնութեանս սեռ»։

Գ. «Զոր ինչ ախտանան առ բազմածաղիկս բուրաստանացն՝ որք այնոցիկ են ցանկացողք բնութեան»։

Դ. «Ի խաղաղութեան եկաք ժամանակի, վասն որոյ և զնոյն բարիս բաժանեմք ձեզ»։

⁂

Քնարերգականք. — Երզնկացւոյն քնարերգական քերթուածները երկու կարգի կրնանք բաժնել. Տաղք և Շարականք։ Ասոնց մէջ աւելի կերպով մը կը փայլի Երզնկացւոյն բանաստեղծական հանճարն ու եռանդը, մանաւանդ Ջրօրհնեաց հանդիսին համար շինած տաղերուն մէջ, որ են «Յամենայն ժամ օրհնեմք», և «Այսօր ձայնն հայրական»։ Հաւանականաբար իրենն է նաև Ով զարմանալի գեղեցիկ տաղը ի նոյն խորհուրդ։ Դարձեալ սրբոյ Կուսին փոխման վրայ տաղ մը՝ որոյ սկզբնաւորութիւնն է «Առաջնաճաշակ պտղոյն»։

Շարականաց մէջ իր անուամբ կը յիշատակուին ի պատիւ Լուսաւորչին երգուածը, «Լերինք ամենայն», բանաստեղծական հանճարով և ընտիր լեզուով յօրինուած, զոր ոմանք Խորենացւոյն կ'ընծայեն։ Նոյն սրբոյն վրայ այբուբենական շարական մը, «Այսօր զուարճացեալ»։ Դարձեալ սրբոյն Ներսիսի Հայրապետին նշխարաց յայտնութեան վրայ, «Որ զլոյսն անճառ» սկզբնաւորութեամբ, որոյ վրան արդէն խօսեցանք. և ի պատիւ Խոտաճարակաց երգուածը «Յաւուրս վերջին ժամանակի». որուն սկզբնատառքը կը յօդեն՝ «Յովհաննիսի է երգս»։

Թարգմանութեանց վրայ առանձին խօսելու առիթ պիտի ունենանք։

Երզնկացւոյն գրուածոց տպագրութիւնքն տես ի ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ.

⁂

Երզնկացւոյն աշակերտակից էր նաև ՆԵՐՍԷՍ ՏԱՐՕՆԵՑԻ *անունով վարդապետ մը, որ նոյն գաւառին մէջ եղող Ղազարու վանքը կրօնաւորած էր։ Ասիկայ թէպէտ և յունական դպրութեանց և աստուածային գրոց տեղեկութեամբ վարժ էր, բայց լսելով մեծին Վարդանայ իմաստութիւնը, գնաց անոր քով, և սորվեցաւ իրմէ. գրաւոր երկասիրութիւն մը թողած չէ։*

Երեք գլխաւոր աշակերտ ունեցաւ Ներսէս, որ էին ՅՈՎՀԱՆ ԱՐՃԻՇԵՑԻ, ԵՍԱՅԻ ՆՉԵՑԻ *և* ՄԽԻԹԱՐ ՍԱՍՈՒՆՑԻ։ *Արճիշեցին անուանի եղաւ իր գիտութեանց սիրովը և սրբութեան համբաւով. գրոց մէջ երբեմն Ոսպնակեր ալ կոչուած է, որովհետեւ կ'աւանդի թէ տասնհինգ տարի ուրիշ բան կերած չըլլայ՝ բայց միայն թրջած ոսպ։ Իրեն աշխատասիրածն է Պատարագի մեկնութիւն մը, զոր քաղելով համառօտած է Խոսրովու Անձեւացւոյն և Լամբրոնաց-*

---

[1] *Ասոնց մէկուն սկզբնաւորութիւնը՝ իբրու ճաշակ մը գործածած լեզուին.*

«Ադամայ որդիքդ ամենու ծնունդ ի հողէն,
Կամք տամ ձեզ խրատ յԱստուծոյ բանէն.
Գիտեմ ամէն մարդ չկարենայ ուսնիլ ի գրէն.
Վասն այնոր զայս գրեցի որ լսէք յինէն»։

ւոյն խօսքերէն։ Այս գրուածքին վրայ՝ ընդհանուր տեղեկութիւն մը տուած ենք՝ Խօսրովու վրայ խօսած ատեննիս։ Երկու անգամ տպագրուած է այս գիրքը ի Կ. Պոլիս 1717 և 1799ին. 1810ին ալ երրորդ տպագրութիւն մը եղած է ի Մատրաս։

Ճառընտրի մը մէջ հանդիպած ենք նաեւ հետագայ խորագրով երկասիրութեան մը իր անուամբ. «Յովհաննէս վարդապետի Արճիշեցւոյ Ոսպնակերի ատացեալ բան՝ վասն երից կարգացն փրկելոց ապրելոց. և երից հակառակաց նոցին և դիմակաց»։

ՍՄԲԱՏ ՊԱՏՄԻՉ

Սմբատ Սպարապետ։ — Քաղաքական դերը և արդիւնքը։ — Տուած պատերազմները և արշաւանքները։ — Տարեգիրք։ — Թուղթը։ — Օրինագիրք։ — Լեզուն և գրութեան ոճը։ — Տարեգրոց հայ բնագրին տպագրութիւնը և թարգմանութիւնը։

Սմբատ Գունդստապլ՝ այսինքն Սպարապետ պատմչի անունը և արիական գործերը թէպէտ և ծանօթք էին բանասիրաց, բայց ոչ նոյնպէս իւր երկասիրութիւնները. միայն երեսուն կամ աւելի տարիներէ առաջ սկսաւ իր պատմական գրուածքին գրչագիր մէկ օրինակը երեւնալ ու ձեռքէ ձեռք անցնիլ, որուն վրայ կրկին տպագրութիւնք եղան գրեթէ մի և նոյն միջոցին. մէկն ի Մոսկուա և միւսն ի Փարիզ։ Քանի մը տարի յառաջ ալ իր ուրիշ երկք յայտնուեցան և հրատարակուեցան։

Սմբատ որդի էր Կոստանդնի արքայահօր։ Թէպէտ և

դեռ չորեքտասանամեայ պատանեակ ի մահուն Լեւոնի առաջնոյ թագաւորի Ռուբինեանց, բայց արդէն իր արիական սրտովն յինքն ձգեր էր իմաստուն իշխանին աչքը, որ ըստ վկայութեան նորուն իսկ Սմբատայ «Ուր իմանայր թէ գոյ այր իմաստուն և գիտուն, և աջող ի գործ կամ ի զինուորութիւն, կամ ի խօսս և պատասխանիս, առաքէր և կոչէր խոստմամբ, և բերեալ հանգուցանէր առատաձեռն պարգեւօք». և պարծանօք վրայ կը բերէ. «Յորոց մի ես եմ Սմբատ Սպարապետ»։ — Լեւոնի մահուընէն ետքը՝ երբ թագաւորահայրն Կոստանդին յաջողեցաւ արքունական աթոռը բարձրացնել զորդի իւր Հեթում, սպարապետութեան գործը Սմբատայ յանձնեց. զոր երկար տարիներ ի գլուխ տարաւ՝ ոչ միայն եղբօրը Հեթմոյ թագաւորութեան երկար տարիներն (1226–1270), այլ նաեւ անոր որդւոյն Լեւոնի Գ. առաջին տարիները. շատ անգամ արիւնառուշտ պատերազմաց ասպարիզի մէջ մտնելով և բազմաթիւ ու նշանաւոր յաղթանակներով Եգիպտոսի և Իկոնիոնի սուլտանաց զօրաց վրայ, ու բազդին ու զինուց ձախողելու ատենն ալ՝ միշտ աներկիւղ և հնարիմաց ի դարմանն։

⁂

Քսան տարի պատերազմաց դաշտերուն մէջ կռուելով ու յաղթելով իր թագաւոր եղբօրը հետ կամ անոր կողմանէ, զօրացան ապա յարեւելս Թաթարք, և իրենց արշաւանքներովն և անոնց մէջ ունեցած գրեթէ յարատեւ յաջողութեամբ՝ վախի մէջ ձգեցին շրջակայ ազգերն ու անոնց իշխողներն. որք անվստահ՝ ալ շատ անգամ անզօր ի խափանել անոնց յառաջխաղացումը, կ'ուզէին դաշնակցութեամբ ապահովել իրենց երկրին վիճակը և իշխանութիւնը։ Նոյն խորհուրդն ունեցան նաեւ Հեթում թագաւոր և Կոստանդին արքայահայր, և դեսպանութեամբ յղեցին իրենց որդին և եղբայրն զՍմբատ Գունդստապլ յամի 1248 առ Գիւգ խան Թաթարաց։ Հեթում պատմիչը մանրամասն կ'աւանդէ այս դեսպանութեան պատճառը. 1253 թուականին, կ'ըսէ, Հայոց Հեթում թագաւորը անձամբ ուզեց երթալ առ ինքնակալն Թաթարաց, որպէս զի անոր շնորհքն ու սէրը յաջողութեամբ կարենայ ձեռք ձգել, ու խաղաղութեան պայմաններ դնէ անոր հետ։ Բայց առաջ ղրկեց Հայոց թագաւորութեան Գունդստապլը, զՍինիբաղտ[1], որպէս զի հրաման առնլով՝ կարենայ ապահով կերպով երթալ, անոր համար՝ սա գնաց առ ինքնակալն Թաթարաց, ու երեք չորս տարի ետքը դարձաւ ի Հայաստան, պատմելու ինչ որ տեսաւ ու լսեց։ Այս հրեշտակութեան դէպքը Սմբատ ալ կ'աւանդէ իւր Պատմութեան մէջ հետեւեալ խօսքերով. «Ի թուին ՈՂԵ գնացի ես Սմբատ Գունդստապլս ի Թաթարն, և ի թուին ՈՂԹ դարձայ առ իմ եղբայրն Հեթում թագաւորն»։

Իւր պաշտաման և սրտին արժանաւոր այլ և այլ քաջագործութիւններուն յիշատակութիւնը կ'ընէ Սմբատ, իրեն համառօտ պատմագրութեան մէջ։ Երբ Քէյ Խօսրով սուլտանն բազմաթիւ հեծելազօրք ժողովելով՝ Լամբրոնի տիրոջը Կոստանդնի առաջնորդութեամբ մտաւ ի Կիլիկիա, Կոստանդին թագաւորահայրն ու Սմբատ մտան ի Տարսոն, զոր սուլտանն պաշարած էր, Սմբատ իրեններովը պատերազմեցաւ անոր հետ, ու երկարատեւ կռիւներով, ու եւրոպական ճարտար զինուց օժանդակութեամբ՝ յաղթեց անոր[2]։

Այսպիսի քաջութեամբ ու պատերազմաց վտանգներու մէջ կնքեց Սմբատ իւր կեանքը փառօք, որուն հանգամանքը լիուլի կ'աւանդէ ժամանակակից վարդապետ մը։ 1275 թուին դուժկանք հասան առ Լեւոն Գ, թէ Եգիպտացւոց ամիրայն անթիւ զօրքով Նորէն Կիլիկիոյ վրայ կ'արշաւէ. Լեւոն ժողվեց մէկէն իւր զօրքերը, ու վեց գունդի բաժնելով, մէկը ինքն առաւ, ու երկրորդը՝ իր ծերունի հօրեղբօրը՝ Սմբատայ սպարապետի ձեռքը տուաւ, ու պատուիրեց որ քիչ զօրքով Եգիպտացւոց դէմ ելլէ. մինչդեռ ինքը զօրաց բազմութիւնը դարանի մէջ դրած էր, ու անծանօթ ճանապարհաւ Եգիպտացւոց զօրքին ետեւէն անցաւ ի ծածուկ։ Երբոր սկսան Եգիպտացիք Կիլիկիոյ սահմաններուն վրայ վազել, անոնց դէմ ելաւ Սմբատ իւր գնդովը։ Եգիպտացիք՝ կարծեցին թէ միայն այնչափ է Լեւոնի զօրքը, ու սիրտ առած՝ յարձակումն սկսան. բայց իսկոյն դարանամուտք անոնց չորս կողմը պաշարեցին. Լեւոնն ալ հասաւ ետեւէն, ու Եգիպտացիները մէջերնին առնելով շատերը ջարդեցին, այնչափ՝ որ դիականց կոյտը արգելք կ'ըլլար ապրելոց փախստին։ Իսկ երբ ամիրայն հնարք գտնելով՝ սակաւաթիւ զօրքով իր կեանքն ապրեցնել կը մտածէր, ետեւէն պնդեցաւ Սմբատ. բայց ձիուն սաստիկ արշաւանացն առեն՝ ոտքը ծառի մը զարնուեցաւ ու վտանգեցաւ. այն վէրքի սաստկութենէն ու հասակին ծանրութենէն՝ ալ չկրցաւ շարունակել ընթացքը. բանակը դառնալով քանի մը օրէն մեռաւ (1276)։

Իւր կենաց 68 կամ 69 տարուան հասակին հանդիպեցաւ Սմբատայ մահը. որովհետեւ 1208 թուականին կը նշանակէ իրեն ծննդեան տարին։

⁂

Սմբատայ Տարեգրութիւնը. — Աւելի՝ համառօտ ժամանակագրութիւն մը կրնանք համարել Սմբատայ այս երկասիրութիւնը քան թէ բուն պատմութիւն։ Կ'երեւնայ թէ հեղինակին դիտաւորութիւնն ալ այս եղած է, որովհետեւ խորագրին մէջ յայտնապէս կը նշանակուի. «Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մեծաց, ըստ կարգի ժամանակաց»։ Կը սկսի Հայոց Ն (Քրիստոսի 951) թուականէն, Գագկայ Բագրատունւոյ իշխանութեան ժամանակէն, և կը հասնէ մինչև ի ՉՁ (1331). գրեթէ չորս հարիւր տարուան միջոցի մէջ ի Հայաստան և ի Բիւզանդիոն հանդիպած դէպքերու համառօտ յիշատակութեամբ: Բայց որովհետև իւր մահը 1276ին եղաւ, յայտնի է որ վերջին վաթսուն տարուան պատմութեանց համառօտութիւնը ուրիշներու ձեռքով եղած է. յորոց մի էր Մարաջախտ Պաղտին, տէրն Նղրի, խնամացեալն Սմբատայ տոհմին:

---

[1] Ասանկ կը կոչուի Հեթում պատմչի գաղղիական ու լատին թարգմանութեան մէջ Սմբատայ անունը,

[2] «Շատ մեռան յերկուց կողմանց, կ'ըսէ Սմբատ, բայց ի դրացէ հարիւրապատիկք. զի ունէաք ընդ ներքս աղէկ Ֆռանկի չարխուրքս»,

Աւելորդ է ըսել թէ այսպիսի երկասիրութեան մէջ ի զուր է փնտռել կարգաւոր լեզու և ոճ. ասիկայ հեղինակին նպատակէն ու դիտաւորութենէն դուրս ձեռնարկութիւն մըն էր. մանաւանդ թէ կամաւ ընտրած է իր ժամանակին աշխարհիկ լեզուն և ոճը՝ ընթերցողաց դիւրահասկանալի ըլլալու համար. որչափ ալ պարզ և ռամկական է՝ նոյնքան ախորժալուր և ազգայնութեան հետքը վրան կը կրէ: Համառօտ գրուածք մ'է, և կ'երեւնայ թարգմանաբար յարմարցուած գրոց լեզուով յօրինուած ուրիշ նման երկասիրութենէ մը. որովհետև գրուածքին սկիզբը ինքզինքը թարգմանող պատմութեանն կը կոչէ: Այնչափ աւելի հաւանական կ'ըլլայ այս ենթադրութիւնը՝ որ մեր ձեռքը հասած է բաց ի Մատթէի Ուռհայեցւոյն գրուածքէն՝ ուրիշ ժամանակագրական և գրաբար լեզուով Ռուբինեանց ժամանակագրութիւն մը, ընդարձակագոյն քան զՍմբատայն, յորմէ շատ տեղ փոխ առած կ'երեւի վերջինս, համառօտելով և իր ոճին վերածելով: Բայց իբրև ժամանակագիր՝ ունի իրեն յատկութիւններն ու յարգը, որոնցմով թէ ազգային և թէ օտար բանասիրութեան առջև կը գնահատուի: Ռուբինեանց իշխանութեան վրայ խօսող՝ քիչ մատենագիր ունինք. և աւելի քիչ՝ որ Սմբատայ պէս ժամանակագրութիւնը պատմութեան հետ խառնեն. և աս է իրեն մեծ և գլխաւոր արդիւնքը, որով արդի եւրոպական ստուգասէր գիտութեան համար՝ աւելի

պատուական կը համարուի իր երկասիրութիւնը, քան ուրիշ շատ պատմագրաց գրուածները, որոնք իրենց ժամանակագրութեան տեղ՝ ընդհանուր պատմութեան լաբիրինդոսներու մէջ կը մոլորին ու կը մոլորցնեն:

Բաց ի Տարեգրոց և առ քոյրն և քեռայրն գրած թղթերէն, Սմբատ ուրիշ երկու կարեւոր և հետաքննական երկասիրութիւն ալ թողած է. առոնցմէ մէկն է թարգմանութիւն Անսիզացն Անտիոքայ, և միւսն համառօտութիւն մը օրինաց և կարգաց՝ ծաղկաքաղ ի Դատաստանագրոցն Մխիթարայ Գօշի և բիւզանդական օրինագրոց որ արդէն ծանօթ էին յազգին թարգմանութեամբ Լամբրոնացւոյն: Սմբատայ այս երկասիրութեան նպատակն էր քաղաքական ու եկեղեցական հաստատուն օրէնքով օժտել իր ազգը, և դէմ առնուլ այն անտեղութեանց որ անոնց հրատարակման պակասէն առաջ կու գային, մանաւանդ յետ ծանօթութեան և վերաբերութեանց մերոցն ընդ օտարաց. «Գրեցի զսա, կ'ըսէ, վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և վասն աշխարհի դատաւորաց և թագաւորաց. և զսիրտ բանիցն առեալ եդի համառօտաբար... և պարտ և արժան համարեցայ վասն թագաւորացն գրել իրաւունս, զի նոքա յԱստուծոյ են կարգած և յԱստուծոյ տեղն ի յերկրի են»: 1265ին յօրինած է Գունդստապլ այս օրինագիրքը[1]:

---

[1] Սմբատայ այդ օրինագիրքը 1905ին, մատենադարանիս ընտիր ձեռագրաց վրայէն, բնագրին հետ միասին՝ գերմաներէն թարգմանութեամբ ի լոյս ընծայեց հայագէտ գերման բանասէրը՝ Joseph Karst. Երկու մեծադիր հատորներու մէջ ամփոփած է ամբողջ աշխատութիւնը. Ա. հատորը՝ Armenisches Rechtbuch, I. Band, Sempadscher Kodex, (Strassburg) ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ 1905 էջ ԼԲ + 224. երկսիւն է և կը բովանդակէ գիտական յառաջաբանէ մը վերջ՝ օրինագիրքը երկու լեզուով. իւրաքանչիւր էջի ստորև՝ կը գտնէ ընթերցողը Մխ. Գօշի համեմատական կանոններն իրենց գլխահամարներով, ինչպէս նաև ձեռագրական բաղդատութեանց տարբերակները. Միւս հատորը երկսիւն չէ, այլ 424 ընդարձակ էջերով, գիտուն բանասիրին հմտալից ուսումնասիրութիւնը՝ գերմաներէն. Ծնթ. Գ. տպ.:

Ինչպէս ի Տարեգիրս՝ նոյնպէս երկրորդ գրուածքիս մէջ ալ՝ Սմբատայ լեզուն՝ ԺԳ. դարու աշխարհիկ բարբառն է։ Թարգմանչաց վայելուչ և հայկաբան ոճը՝ դարէ դար իր գեղեցկութիւնը կորսնցնելով, հոս գրեթէ չիջելափառ կը նուաղի։ Քաղաքական վիճակին պէս գրական լեզուն ալ բոլորովին կերպարանափոխ եղած՝ ուրիշ դար մը կը կազմէ, որ ազգային գերութեան շղթայից տխուր արձագանգը կը լսեցնէ, և աւելի նոր մատենագրութեան կը վերաբերի, ուր պիտի տեսնենք զայն, հոս կնքելով մեր խօսքը հայկական հին դպրութեանց վրայ։

Սմբատայ Տարեգրքոյ տպագրութիւնք ի հայ. Ա. տպ. «Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց մեծաց՝ ըստ կարգի ժամանակաց»... յՈսկանայ Գէորգեան Յովհաննիսեանց Երեւանեցւոյ. Մոսկուա, 1856. Բ. տպ. «Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ. ի լոյս ընծայեաց Կ. Վ. Շահնազարեանց». Փարիզ 1859. Գաղղիական թարգմանութիւնք. Extrait de la Chronique de Sempad, Seigneur de Babaron, connétable d'Arménie, suivie de celle de son continuateur...; traduite pour la première fois de l'arménien par V. Langlois. Saint-Pétersbourg, 1862. — Observations sur une traduction d'un Extraitde la Chronique du connétable Sempad, par Ed. Dulaurier, (Paris), Revue de l'Orient, 1867, 1868. — Chronique du Royaume de la Petite-Arménie, par le connétable Sempad; Dulaurier, Recueil des historiens des Croisades; Documents arméniens, 610-680.

* * *

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄԱՆՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ԱԲՐԱՀԱՄ վարդապետ, որուն կ'ընծայուի ի ցուցակի Մատենադարանաց Էջմիածնի (թիւ գրչ. 712) տէրունական աղօթից կամ Հայր մերի մեկնութիւն մը։

ԳԱԳԻԿ Բ թագաւոր. Աշոտոյ որդին, ու Բագրատունեաց վերջին տարաբաղդ թագաւորը. ԺԱ. դարուն կէսերը՝ երբ Կոստանդին Տուկիծ կայսրը Սենեքերիմ Վասպուրականի թագաւորին որդիքը՝ զԱտոմ և զԱբուսահլ իր քովը կանչեց, զանոնք Յունաց դաւանութեան դարձնելու համար, իշխանքն կայսեր պատասխան տուին, կ'ըսէ Ուռհայեցին. «Մենք առանց Գագկայ՝ Աշոտոյ որդւոյն՝ չենք կրնար բան մ'ընել. վասն զի անիկայ քաջ մարդ մըն է, ու թագաւոր, և մեր փեսայն. ղրկէ ու զանիկայ հոս կանչէ»։ Կայսրը չուզեց կանչել. վասն զի «այր հզօր էր, կ'ըսէ պատմիչը, յիմաստասիրական ջոկն, և անյաղթ ի պատերազմի. զի սա ի սուրբն Սոփի ի յամբիոնն նստէր ընդ ամենայն վարդապետսն հռոմոց»։ Բայց երբ ստիպուած՝ կանչեց զինքը, ու կայսեր առջեւ երեւցաւ Գագիկ, իրեն իմաստութեան և գիտութեան վրայ վստահ՝ խօսեցաւ անոր հետ ու կ'ըսէր. «Ես այր թագաւոր եմ և որդի թագաւորաց Հայոց, և ամենայն Հայք հնազանդին հրամանաց իմոց, և ամենայն կտակարանացն Աստուծոյ՝ հնոյն և նորոյն հմուտ եմ. և ամենայն Հայք վկայեն բանից իմոց, զի հաւասար վարդապետացն ընդունին զիս. և ահա ես խօսեցայ այսօր ընդ Հոռոմոց վասն հաւատոյ ազգին Հայոց»։ Ու գրեց դաւանութեան գիր մը, զոր տուաւ Թագաւորին ու պատրիարքին։ Կը վկայէ պատմիչը թէ «Խօսեցաւ յանդիման... Տուկծին և ի մէջ ամենայն հռետոր վարդապետաց տանն Յունաց ի քաղաքին Կոստանդնուպոլիս. և յոյժ հաճեալ Թագաւորն Տուկիծ և ամենայն իմաստասէրքն որ նստէին ի ճեմարանին, և հիանային ընդ կորովութիւն բանիցն և ընդ հաստատութիւն շնորհացն... վասն զի ամենայն դասք վարդապետացն Հոռոմոց ոչ կարացին արատ և կամ բիծ երկբայութեան գտանել հերձուածոյ ի հաւատոյ խոստովանութիւնս՝ զորս գրով Հոռոմոց խօսեցաւ Գագիկ արքայ Հայոց»։

Հասած է առ մեզ Թուղթ մը «Գագկայ Վասպուրականի Հայոց Թագաւորի առ կայսր Յունաց Ռոմանոս վասն հաւատոյ»։

ԳՐԻԳՈՐ Անաւարզեցի կաթուղիկոս, որ Մեծքարեցի ալ կոչուած է՝ յառաջագոյն նոյն անուամբ կոչուած և հռչակուած Թեմին և ուխտին առաջնորդ ըլլալով։ Օշին տէրն Կանչոյ չափաբերական Թուղթ մը ուղղած է առ սա հանգերձ մատանեաց ընծայիւ։ Անաւարզեցւոյս ընծայուած կարեւոր և նշանաւոր երկասիրութիւնն է Յայսմաւուրք գրոց նոր կարգադրութիւնն և յօրինումն՝ Հայոց, Յունաց ու Լատինացւոց սրբոց համախմբութեամբ. հաւանականաբար յառաջ քան զկաթողիկոսութիւնն, երբ իրեն առաջարկութեամբն և խնդրով՝ Յովհան Երզնկացի Անաւարզայ եկեղեցւոյն մէջ քարոզ մը խօսելով՝ գրուատեց և զնա, սքանչանալով՝ ինչպէս կ՚ըսէ, «Ի զուարթ և ի հրեշտակատիպ դիմացդ տեսութենէ, ի քաղցր և ախորժական բանիցդ արդիւնականէ, յամենալի և ի յոգնափայլ ծաղկանցդ առա-

քննութեանն՝ որ ի հոգւոյդ քո բուրաստանէ. յիմաստախոհ յարակցաց եղբարց և որդւոց հոգեւորաց, ի քոյդ զմայլելոց վարժական հանճարասիրութենէ»։ Էջմիածնի Մատենադարանին մէջ կայ 1608 Թիւ գրչագրին մէջ. «Պատճառ լայն և Նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց, և ի մի հաւաքեալ և հոգացեալ մեծ րաբունապետին Գրիգորի որդւոյ Աբասայ։ Քրիստոս Աստուած Մեսիա և Մանուէլն շնորհաւոր արասցէ զայս վարդապետի խաչատրոյ»։ Բաց յայլոց Ներբողինից զորս շարագրեց Գրիգոր և անցոյց ի կարգս Յայսմաւուրաց, յօրինած է գըրուատ մը ի խնդրոյ Հեթում Բ Թագաւորի՝ այս խորագրով. «Տօն է ամենասուրբ Աստուածածնին և ամենայն Սրբոց. յայտնեացն և անյայտից, ի սկզբանէ և այսր ընտրելոցն Աստուծոյ ի մարդկանէ, ի Գրիգորէ կաթողիկոսէ ասացեալ Գրուատս»։ Եկեղեցական խնդրոց և միաբանութեան համար ալ շատ աշխատած է Անաւարզեցի, և այս վախճանաւ Թուղթ մ՚ալ գրած աշխարհիկ ոճով առ նոյն Հեթում Թագաւոր, իբրեւ հոգեւոր կտակ մը. զոր սիրով և մեծաբանօք ընդունեցան հարք ժողովոյն Սսոյ (1307)։ Իրենն են՝ երեսունէն աւելի կանոնք Շարակնաց, որոց շատերուն գլխատառք իր անունը կը յօդեն, կամ անոնց շարագրութիւնը իրմէ խնդրողաց. ինչպէս Կոստանդին Թագաւորի, Հեթմոյ՝ մերթ նաեւ անոր կրօնաւորական Յովհաննէս անուամբը, և այլն։ Քրիստոսի Ծննդեանն և Յայտնութեան տօնից համար՝ երեք առանձին շարական յօրինած է, ըստ սովորութեան յոյն և լատին եկեղեցեաց այդ երկու տօնախմբութիւնը բաժնելով յիրերաց։

ԳՐԻԳՈՐ Արծրունեաց եպիսկոպոս՝ որուն անուամբը կը գտնենք. «Տեառն Գրիգորիսի Արծրունեաց եպիսկոպոսի յերուսաղեմէ ի Հայս վասն Տեառնընդառաջին ըզգուշութիւն»։ Անվաւեր համարուած գրութիւն մը, յորում կը պատմուի թէ կայսրն Յուստինիանոս իր Թագաւորու-

թեան երեններորդ երրորդ տարւոյն բանագատած ըլլայ զԵրուսաղեմացիս որ Տեառնընդառաջին տօնը՝ ի դեկտեմբերի քսանըհինգ կատարեն ընդ տօնի ծննդեան նոյն սուրբ քաղաքին Յուստոս և Մակարիոս հայրապետաց ժամանակ. բայց ժողովրդեան ընդդիմադարձութեամբ և իրենց ի նըպաստ կատարուած այլեւայլ երկնաւոր հրաշից պատճառաւ՝ կայսրը ստիպուած ըլլայ ետ կենալ իր մտածութենէն և կամքը առաջ տանելէն: «Զայս վասն զգուշութեան գրեցի, կ'ըսէ, ի Հայս, որ անդէն իսկ ականատես եղաք մեծամեծ սքանչելեաց որք անդ գործեցան... և զի մանաւանդ զգուշանայցէք ի չար խորհրդոց»:... Անստոյգ է ըսինք գրուածքին նիւթը. նախ զի Յուստոս անուամբ Հայրապետի յիշատակութիւն չկայ յԵրուսաղէմ առ Յուստինիանոսիւ, և երկրորդ որ պատմութիւնն յօդեալ կ'երեւի պարզապէս անվաւեր ցուցնելու նպատակաւ զսովորութիւնս յոյն եկեղեցւոյ, մանաւանդ զի շատ յառաջ Երուսաղեմացիք կատարէին զտօն Ծննդեան ի քսանեւհինգ դեկտեմբերի:

ԳՐԻԳՈՐ *որդի Արսայ, հեղինակ «Հաւաքումն պատճառաց սուրբ գրոց ի մեծամեծ հարց» կոչուած գրուածքի մը:*

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԿԱՒԱԳԱՊԵՏ, *ժամանակն յորում ապրած է՝ անծանօթ*[1]*: Մեր ձեռքն հասած միակ գուածքն՝ ընտիր ներբողեան մը ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ՝ այս խորագրով. «Գրիգորի Սարկաւագապետի և ճգնաւորի խօսք ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ՝ ասացեալ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ»: Ի մեր Մատենադարանի՝ գրչագիր մը միայն ունիմք այս ճառին ՈԿԴ հայ թուականաւ*[2]*:*

---

[1] *Հեղինակիս նկատմամբ հմմտ. «Տեսիլ Ս. Սահակայ Պարթեւի», տպ.* 1932, *էջ* 8. - *Ծնթ. Գ տպ.*:

[2] *Հրատարակեալ ի Ս. Ղազար ի շարս Հայկական Սոփերաց (Հատ. Գ).* 1853.

ԳՐԻԳՈՐ *վարդապետ, որուն ընծայուած կը գտնենք հետեւեալ երկասիրութիւնը. «Մեկնութիւն Եսայեայ ի խորհուրդ մեծի ուրբաթին կամաւոր և փրկագործ չարչարանաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր արարեալ է սրբոյ և գերահրաշ վարդապետին Գրիգորի՝ ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտ իշխանին Կոստանդեայ տեառն Լամբրոնի»: — Դարձեալ. «Նորին սրբոյ վարդապետին ի սուրբ զատիկն և ի կենսաբեր յարութիւնն տեառն միաբանութեամբ աւետարանչացն բանից և ի բացայայտումն կանանցն իւղաբերից»:*

ԴԱՆԻԷԼ *վարդապետ՝ Մեկնիչ սաղմոսաց Դաւթի կոչուած ի գրչագիրս. համառօտ հատուած մը միայն իր գրուածոց հասած է առ մեզ, գուցէ հատուած մ'է թարգմանութեան համանուն գրոց Դանիելի ասորի քահանայի, զոր վերջերս ստացանք:*

ԴԱՒԻԹ *վարդապետ. «Պատճառք աւագ բարեկենդանին, ի Դաւթայ վարդապետէ ի խնդրոյ աշակերտաց իւրոց. — Յաւուրս նշանաւորի փող հարկանել օրինադրէ». — վեց ճառք աղուհացից վեց շաբաթուց կիւրակէից համար, ամփոփեալ ի* 62 *էջս. — «Պատճառ նաւակատեաց եկեղեցւոյ որ զկնի Պենտեկոստէին, ի քսանն տրեայ ամսոյ զոր Հայաստանեայցս տաւնեն եկեղեցիք ի Դաւթայ շարագրեալ զաւանդս իմաստնոց». և սկզբնաւորութիւնն է. «Ի բազմաց զանազանից և զանխուլ մնացելոց իրաց խընդրոց»:*

ԴԱՒԻԹ *փիլիսոփայ. «Պատմութիւն Լակոնացւոց՝ արարեալ ի Դաւիթ փիլիսոփայէ»: (Մատենադ. Էջմիածնի, թիւ* 1765*): Իրենն են. «Էակաց գիրք, բովանդակն և բուռն»: — «Յաղագս Սաղմոսաց Դաւթի»: — Ճառք ի վարդավառն և ի սուրբն Ստեփանոս:*

ԴԱՒԻԹ քահանայ. հեղինակ Եսայեայ մեկնութեան, և ներբողի մը ի Յովսէփ պատանի:

ԵԶՆԱԿ կաթուղիկոս (?) որոյ անուամբ թուղթ մը կը յիշուի առ Մաշտոց. (Մատենադարան Երուսաղէմի, թիւ 533):

ԵՂԻՇԷ վարդապետ կամ կաթուղիկոս կոչուած, որուն ընծայեն գրչագիրք ճառ մը «Ի բանն Եսայեայ մարգարէի որ ասէ. Երանի տեղւոյն ուր եգն և էջ կոխեցին»:

ԵՂԻՇԷ քահանայ, որուն անուամբ կայ ընտիր ճառ մը յԱյլակերպութիւն տեառն. «Սրբասիրի տեառն Եղիշէի քահանայի և ճգնաւոր կրօնաւորի և միայնակեցի՝ ի Թաբոր լերին յայտնութիւն տեառն առ Պետրոսեանց և ի մեծ աւուր վարդավառին»: Ճառին վերջն ալ. «Եւ ես տառապեալս քան զամենայն մարդ, որ հետևեցայ հետիոտս ընդ տերունեան շաւիղն ի լեառն անդ, և տեսի աչօք ըղձողով սքանչելի եղբարց» որոց ճգնութեանն նկարագիրն ու գովութիւնը կ'ընէ[1]: — Իրեն կ'ընծայուի գրուած մ'ալ ի ճառընտիրս Բան շահաւէտ և օգտակար հոգւոց համայնից խորագրով. «Ով հաւատացեալ հարք իմ»:

ԵՍԱՅԻ վարդապետ Հայկազուն յիշատակուած ի Կարենեան ցուցակի Էջմիածնի, և որուն կը տրուի Եզեկիելի մարգարէութեան մեկնութիւն մը: Վեց գրչագիրք կ'ակնարկուին, հնագոյնն ի ՉՀԱ (= 1322) թուականին:

ԹԷՈԴՈՐՈՍ կրտսերագոյն Թարգմանչաց թուոյն մէջ կը յիշատակուի յԱրծրունւոյն. «Իսկ առ մեզ հասին գրոյցքս այս, կ'ըսէ, ըստ Թագորդաց պատմագրաց առաջնոց ի Մամբրէէ վերծանողէ և ի Նորուն եղբօրէ Մովսէսէ կոչեցելոյ. և միւսումն Թէոդորոս քերթող, որք լեալ էին յաշակերտութենէ Ղեւոնդ քահանայի, որ ի Պարսս մարտիրոսացաւ ընդ այլ սուրբ եպիսկոպոսն և քահանայս»:

ԹՈՐՈՍ պարոն Կիլիկիոյ. Ռուբինեանց Լեւոն մեծ պարոնին որդին էր Թորոս, ու հօրը գերեկից ի Կ. Պոլիս. ուսկից ազատելով, տիրապետեց քաջութեամբ Կիլիկիոյ, Իսաւրիոյ և Ասորւոց մէկ մասին: Ժամանակակից պատմիչները շատ կը գովեն անոր քաջութիւնն և հնարագէտ կենցաղավարութիւնը. իսկ Վահրամ անոր գրական արդիւնքն ալ կը գրուատէ՝ հետևեալ խօսքերով.

« Աստուածային գըրով վարժեալ
Եւ յիմաստից արուեստ մըտեալ.
Աւեն հոգի սա ընկալեալ,
Մարգարէի հաւասարեալ.
Որոյ գըժուար բանըս լուծեալ
Որ գըտանի այժըմ գըրեալ »:

Ի ԽԱԶՆ ՍՈՒՐԲ ներբող մը առանց անուան հեղինակի, ընտիր իմաստիւք, հմուտ գրչով և լեզուով.

« Ի յապացոյցն որ էր միայն ըստուգութեան,
Երկրպագել տեառն Աստուծոյ տալով հրաման.
Եւ որ յայտնի եղէ տեսաւղ աստուածութեան,
Պարտիմ առնել զայս հրատարակ որոց աստ կան:
Զի զոր տանէք դուք ժողովուրդ հանդիսական,
Ոչ յարացոյց՝ որպէս Սիոն տեղ գիտութեան.
Այլ այն նշանըս քառաձեւ տէրունական,
Տաճար սեղան է և աթոռ աստուածական.
Նաև լեառն իմանալի անհասական,
Ուր յորդորեմք երկրպագել ձեզ միաբան.
Դուք որդիք նոր Սիոնի ծնընդեան,
Աւրհնութեամբ պատուել ըզսա էք պարտական:
Նաւափառք քրիստոսազարդ է այդ նըշան,
Աստուածասէրք յիշկիր մածիմք իւր յանդիման:
Զի սա ի կեանս է փոխադրաւղ որդւոց մարդկան,

---

[1] Հրատարակեալ ի շարս Հայկական Սոփերաց (Հատ. ԺԲ). 1854.

Որ հրեշտակաց և երկնայնոց է սեփական.
Ի հեշտութեան գոլով սոյն զէն արիութեան,
Եւ յաշխարհիս ըղձից հոգոց վերածական.
Արդ այսքանեաց մեծաց բարեաց եղեալ պաշտպան,
Իւր գոհութիւն մատուցանել է մեզ արժան.
Եւ զովասան երգոյս եղեալ կցորդական,
Միշտ ի խոնարհ երկիր պագէք ամենքեան.
Այլ և զծանր և ըզնըսեմ կերպս մարդկան,
Եդեալ ի բաց թուխցուք այսօր յերկնից կայեան.
Քանզի ոչ նայիմք ի սուտ փայտ եղանական,
Այլ ի սա է Բանըն անեղ մեզ յանդիման »։

ԽՈՍՐՈՎ *հռետոր, որոյ Թղթոց հատուածք կը յիշատակուին ի գրչագիրս Մատենադարանին Երուսաղեմի (Թիւ* 533)։

ԿԱՊՈՒՏԻԿ *վարդապետ. գրչագիրք իր անունով կը խորագրեն համառօտ գրուածք մը «Դրուատումն իմաստութեան» կոչուած։*

ԿԱՐԱՊԵՏ *Սասունցի եպիսկոպոս։ Մետասաներորդ դարու գրչագրի մը մէջ* (ՇԻԵ) *այս անձին անունն ու հետաքննական երկասիրութեան մը յիշատակութիւնը կը գտնենք. «Ներբողեան պատմագրաբար ասացեալ տէր Կարապետ եպիսկոպոսի Սասնացւոյ՝ ի խնդրոյ հոմազնեայ եղբօրն ճգնաւորի, յաղագս վարուց և մահուան սրբոյ վարդապետին Մեսրովբայ՝ Թարգմանչի և լուսաւորչի»։ (Մատենադ. Էջմիածնի, Թիւ* 1330)։

ՀԱՄԱՄ *վարդապետ, Արեւելցի կոչուած՝ յիններորդ դարու։ Ունի մեկնութիւն մը Յոբայ գրոց Ո՞վ է դա խօսքին. Նոյնպէս Սողոմոնի Առակաց և Քերականական գըրուածք մը։ Ի հնոց ոմանք կ'ընծայեն իրեն նաեւ պատմական երկասիրութիւն մը. որ հիմա կորսուած կը համարուի։*

ՄԻՍԱՅԷԼ *եպիսկոպոս Աղուանից՝ իմաստասէր կոչուած, որոյ անուամբ հասած է առ մեզ ներբողական ճառ մը ի սուրբ խաչն՝ այսպիսի խորագրով. «Միսայէլի Հայոց եպիսկոպոսի մեծի կողմանցն և Փոստիփառնեայ նահանգի ի սուրբ խաչն Քրիստոսի»։*

ՄՈՎՍԷՍ *վարդապետ, որ սուրբ պատարագի գրոց մեկնութիւն մը շարագրած է, համառօտելով ի համանուն երկասիրութեանց Խոսրովու Անձեւացեաց և Լամբրոնացւոյն, ինչպէս կ'ակնարկէ յինքնագիր յիշատակարանին. «...ԶԽԲ թուի հայկականս տումարի, ի ղեկավարութեան տեառն Ստեփաննոսի գերելոյն յեգիպտացւոց, և ի թագաւորութեանն Հեթմոյ որդւոյ Լեւոնի առն բարեպաշտի և աստուածասիրի, Մովսէս մեղաւք մեռեալ ոգի կամեցայ հաւաքումն առնել համառաւտաբար մեկնութեանց սրբոյ պատարագիս, զոր սուրբ հարքն Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոս և Ներսէս Տարսոնի յառաջագոյն ընդ երկար քննեալ էին. Նա և զոր յայլոց սրբոց հարց եւս կարացաք բանագտակ լինել՝ յանցնիւր տեղւոջ եդաք առ ի գրաւսանս մանկանց Սիովնի։ Եւ զայս ոչ եթէ միայն յանձնէ կամ սիրով խիզախեցաք, այլ յորդորեալ առաւել յիմաստուն րաբունապետէն Յովհաննու, որ և ի սոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս»...։*

ՅԱԿՈԲ *գիտնական. Սամուէլի ընդարձակողը ասոր համար կ'աւանդէ։ «Այր սուրբ և առաքինի և յոյժ գիտնական, որ արար զլուծմունս նուրբ գրեանցն դժուարալոյծ բանիցն»։*

ՅԱԿՈԲ *Քարափնեցի կամ Սանահնեցի. ԺԱ դարուն մէջ, Կոստանդին Տուկիծ կայսեր ժամանակակից, Վասպուրականի Սենեքերիմ թագաւորին որդւոց հետ գնաց ի Կ. Պոլիս՝ հաւատոյ խնդիրներու համար. և աւելի Յունաց համախոհ երեւնալուն պատճառաւ՝ անհաճոյ եղաւ* *ազգին, ու անոր իրաւանց պաշտպան Գագիկ թագաւորին։ Ուռհայեցին հետեւեալ խօսքերով զինքը կը գրուատէ. «Յամի ՇԼԴ մեռաւ վարդապետն Հայոց Յակոբ Քարափնեցի, որ յորջորջեալ կոչէր Սանահնէից, այր հզօր, կորովի։ Սորա հասեալ ի վերայ հին և Նոր կտակարանացն Աստուծոյ, ուսեալ և հասեալ սորա ի վերայ հռետորական իմաստութեանցն, և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանց. սա էր յաշակերտաց մեծին Դէոսկորոսի հօրն Սանահնի։ Եւ այս Յակոբոս էր որ խօսեցաւ ի Կոստանդնուպոլիս...։ Եւ յայսմ ժամանակիս էր ի քաղաքն Ուռհայ, և ծերութեամբ քաղաքավարեալ զկեանս իւր. և դաւով նենգութեամբ լուծեալ եղեւ ի կենաց. վասն զի գտանէին զնա մեռեալ ի մահիճս իւր, առանց հեծութեան և ցաւոց... և մեծաւ հանդիսիւ թաղեցին զնա ի դուռն սուրբ եկեղեցւոյ իւրոյ»։*

ՅԱԿՈԲԻԿ *Շնորհալից մականուանեալ. ճառընտրաց մէջ իրեն կը տրուի բաւական ընդարձակ գրուածք մը, վիճաբանութիւն ընդ ամիրապետին և ընդ հրէին։ Կրնայ ստորին կամ յետին դարուց երկասիրութիւն մ'ըլլալ։*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՅՐԱՎԱՆԵՑԻ *որուն անուամբ կը գտնուին հետեւեալ ճառք յէջմիածին Յաղագս Պաւնց «Պարկեշտութիւն առաքինութեան պարաւանդեալ դադարեցուցէ»։ Յաղագս ընդունելի և անընդունելի աղօթից. «Ամփոփեալ զմիտս մեր իմասցուք զճառս բանին»։ Յաղագս ողորմածաց տնանկաց. Մի ոք ագայաբար բարուք և անընտրողական ինչ մտօք»։ – «Ոչ ինչ է պիտոյ որ յաղագս սիրոյ Նորագոյնս ինչ խնդիրք»։ — «Հայեաց դու ի յոյսն վերին, որ իջանես ի խորս խաւարին սգոյ»։ — «Բազում կերպարանք են պատուհասից և սպառնալեաց Աստուծոյ»։ – «Ո՞ւր երթեալ դադարեցից և լացից զահեղ անօրէնութիւնս»։ — «Ողբալով յիս հոգիս հիացեալ զարմանայ»։ — «Բեր այսուհետեւ մանաւանդ քան յառաջագունիցն»։*

Ողբ ի վերայ անապաշխար մեղաւորաց. «Խոստովանողք, փութացարուք ջանալ ապաշխարել յաւուրս մեր»։ Աղօթք. «Որ անեղդ ես և անստեղծ, և արարիչ»։ — «Յառաջ քան զամենայն առաքինութիւնն է խոնարհութիւն»։ Յաղագս հմայից. «Առնոյր առնէր ոք զգլուխ իմ շտեմարանս ջուրց բազմաց»։ Վասն կնարողաց. «Տէր մեր Յիսուս Քրիստոս վասն փրկական բանիցն յանդիմանութեան»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ *վարդապետ՝ որ թռչնոց վրայ ընտիր ու քերթողական գրուածք մը թողած է։ Նորագիւտ հրատարակութիւն ի Մասիս լրագրի Կ. Պոլսոյ, 1879։ Սկըզբնաւորութիւնն է.*

« Ես Յովհաննէս հոգւով տըկար
Եւ վարդապետ յերկիր աւտար.
Կամիմ գովել հաւքերն հաւսար
Ուրախութեան մարդկան համար.
Արտուտիկըն ճըռնչայր,
Առաւօտուն երբ լուսանայր
Անդադար փառաբանէր
Զաստուածութիւնն յերկինս որ կայր.
Բըլբուլն զամէն գարուն կու գայր,
Ի մէջ վարդի և թըփի կենայր,
Անդադար փառաբանէր
Ընդ հրեշտակացըն հաւասար.
Ծիծեռնիկըն գայր շինէր
Զիւր հայրենի տուն և տաճար,
Եւ ի վերայ այն տաճարին
Սաղմոս ասէր զօրն անդադար.
Լըծէ լըծէնըն շուրջ կու գայր,
Շինականներուն խրատ կու տայր
Լըծէ լըծէ, կ'ասէր, ճարտար
Զինչ զհոտաղ կամ զհոտէվար.
Սարերիկըն սարսափէր
Զինչ զջերմուտ և զդիւահար.
Որպէս զօսան չալփարաղան,
Ինքըն զարկէր ինքըն խաղայր

Հօլօլ զամէն զարուն կու գայր,
Ի իւր գըլուխն փետուր մի կայր,
Ձինչ զՀերովդէս կամ զՊիղատոս,
Քան հաւալոն հաւասար.
Անծեղիկն ի վեր վազեաց,
Մտօքն ի վայր հպարտացաւ.
Թէ իմ փետուրս սեաւ ու սպիտակ
Հաքի քան զայլ հաւուց երկայն.
Եզնարօտիկն հանէր տուար,
Հետ արօտին երթայր ու գայր.
Ամէն ճիճու ինքըն քաղէր
Մէկ չտանէր ձագուց համար.
Բուէր բըւիկն ծըտուտայր
Ամէն ձորում իւր ձայնըն գայր.
Ինքն ալրի տարին հազար,
Աւա՜ղ, ընդ օտարան խիստ չընայր»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ վարդապետ Տարօնացի, որուն անուամբ կը նշանակուի Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց ցուցակին մէջ (թիւ 1675) Բագրատունեաց արքունի տոհմին պատմութեան գիրք մը։ Ազգային տարեգրոց մէջ ալ կը յիշուի ի Շ (500) թուականի. «Յովհաննէս վարդապետ Տարօնացի, արար պատմութիւն Բագրատունեաց հրամանաւ տեառն Պետրոսի»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ քորեպիսկոպոս։ Գրչագրաց մէջ Վարագայ սուրբ խաչին պատմութիւն մը կը գտնենք՝ ընտիր ոճով և հայկաբանութեամբ, իրեն ընծայուած։

ՊԱՂՏԻՆ ԻՇԽԱՆ որ ունի թուղթ առ Վարդան վարդապետ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ազգին Մամիկոնէից ցուրբն Վարդան։ Կը գտնուի ի Մատենադարանի Բարձրահայեաց Սուրբ Աստուածածնի վանաց յԱրդն (թիւ գրչ. 112)։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ արշաւանաց Հագարացւոց և Թաթարաց և Ռուբինեանց։ Նոյն վանաց Մատենադարանին և նոյն գրչագրին մէջ։

ՍԱՀԱԿԱԴՈՒԽՏ քոյր Ստեփաննոսի Սիւնեցւոյ որուն համար կը գրուցէ Ուռպելեան. «Էր սորա քոյր մի, ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան, և առանձնացեալ ի ձորակին Գառնոյ, յայրի միոջ, և անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին. որոյ անուն Սահակադուխտ։ Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին. որ և ի ներքոյ վարագուրի նստեալ ուսուցանէր գրագունս. և արար կցորդս և մեղեդիս քաղցր եղանակաւ. յորոց մի Սրբուհի Մարիամ, որ իւրով անուամբն է յօրինեալ»։

ՍԱՄՈՒԷԼ Կամրջաձորեցի, զոր յիշեցինք յէջ 569։ Տասներորդ դարուն վերջերը, Սարգիս կաթուղիկոսին ու Բագրատունեաց Գագիկ Ա. Շահնշահի ժամանակ ծաղկեցաւ Սամուէլ, ինչպէս կ'աւանդէ Լաստիվերտցի. «Էին յայնմ ժամանակի վարդապետք Սարգիս և Տիրան անուն և Յենովք, որ կաթուղիկոսարանին էին վարդապետք, և Սամուէլ՝ որ Կամրջայն Ձորոյ վանաց առաջնորդութեամբ հովուէր»։ Ասողիկ ալ կը գրէ. «Զկնի նորա (Պօղիկարպոսի) իմաստակն Սամուէլ, բազմաշնորհ ի գիտութիւնս գրոց սրբոց և յերգս երաժշտութեանց»։ Սամուէլի կ'ընծայուի Տօնապատճառ կոչուած գիրքը. զոր շարագրած է ի խընդրոյ Անանիայի Արշարունեաց եպիսկոպոսի։

ՍԻՄԷՈՆ՝ որուն համար կ'աւանդի ի գիրս յիշատակաց ի թուին ՆԾ. (450). «Հայր Սիմէոն արար զԱգամգիրքն, Հարիւր յիսուն և մի ճառ. ի խնդրոյ Սենեքարիմայ Թագաւորին Վասպուրականի»։

ՍԻՄԷՈՆ (վարդապետ) որոյ անուամբն է հետեւեալ երկասիրութիւնն. «Երանելւոյն Սիմէօնի սուրբ և ընտրեալ վարդապետի ասացեալ պատճառս Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի։ Եւ թէ որպէս կարգեաց գլխատակ սուրբ Մկրտչին և Կարապետին Յովհաննու ընդ Նմին և զԱթանագինէ»։

ՍՏԵՓԱՆՈՍ Երէց. որոյ անուամբ կայ տումարական գրութիւն մը. «Ստեփանոս երիցոյ տումարագիտի որդւոյ Յոհաննիսի քահանայի ասացեալ յաղագս ընթացութեան արեգական քսան և ութ ամաց, և շրջագայութեան լուսնին իննեւտասներեակ ամաց, որ լինի միահամուռ ընդ ամենայնն՝ ամք ՇԼԲ»։

ՎԱՀԱՆ Մամիկոնեան, որոյ անուամբ կը գտնուին երկու ճառք. Ա. ի սուրբ յարմաւենիսն և ի գալուստն տեառն։ Բ. ի մեծի աւուր չորեքշաբաթին։

ՎԱՀՐԱՄ այս անուամբ պատմագիր մը կը յիշատակէ Վարդան, և կը կոչէ զնա որդի Տիգրանայ. իսկ ուրիշ մ'ալ Տիգրանակերտցի կը կոչէ։

ՎԱՀՐԱՄ վարդապետ. Շնորհալւոյ վիպասանականին շարայարութիւն ընելու դիտմամբ յօրինած է 770 տող ոտանաւոր քերթուած մը սկսելով ի Ռուբենէ կը հասնէ մինչեւ ի Լեւոն որդի Ա. Հեթմոյ, որուն խնդրանօք ձեռք զարկաւ այս գրուածքին, և որ դեռ եւս կենդանի էր գրուածքին շարագրութեան աւարտելուն ժամանակ։ Հեղինակին հետեւեալ յառաջաբանական խօսքերը բաւականէն աւելի կը յայտնեն իւր դիտումը և ձեռնարկութեան պատճառը.

«Տէր Ներսէսի լուսազարդեալ
Հայրապետին զայս բան գրեալ,
Ըզպատմութիւնս Հայոց առեալ
Ոտանաւոր տաղիւ չափեալ...

Զոր ընթերցեալ եւ ծանուցեալ
Լեւոն արքայն Հայոց օծեալ,
Նուաստութեանս իմ հրամայեալ
Ի սուրբ հօրէն առնուլ դարձեալ.
Որ մինչ ի մեզ եղեւ հասեալ.
Նահապետաց մերոց կացեալ՝
Գործք և կամ բանք վիպասանեալ,
Ի ստուգագոյն արանց պատմեալ.
Եւ զոր աչօք մերովք տեսեալ
Եւ ականջօք յայլոց լուեալ,
Զայն ինձ գրել բանիւ չափեալ,
Առ ի լինել դիւրաւ յայտնեալ.
Արդ ես Վահրամ բարուն ձայնեալ,
Եւ իմաստիւք ունայնացեալ,
Աստուածային բանիւք վարժեալ
Եւ ի յարդիւնս ոչ ժամանեալ.
Ի յարքայէ յայս հարկեցեալ,
Եղէ մըտօք տարաբերեալ...
Փոքր ինչ յառաջ անդր ընթացեալ,
Ի նախնական գրուցաց առեալ,
Համառօտիւք ըզնոյն գրեալ
Մինչեւ ի մերըս ժամանեալ»։

•

Այս պատմական քերթուածէն զատ՝ ունի Վահրամ քանի մը ընտիր ճառեր. ինչպէս ի Ծաղկազարդն և ի Համբարձումն հետեւեալ խորագրով. «Վահրամ վարդապետի յարմարած ի Ծաղկազարդն և ի Համբարձումն տեառն։ Անսահմանելի բնութեամբ բարին Աստուած»։ Դարձեալ ի խորհուրդ գալստեան տեառն յերուսաղէմ յաւանակաւ, ի բանն. Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի»։ Վերծանութիւն բանին Եսայեայ, թէ Բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ. և այլ հաւաքմունք յաստուածաշունչ գրոց ի Վահրամ վարդապետէ. շարագրեալ յաւուր օծման թագաւորին Հայոց, կամ ըստ այլ խորագրի՝ «Ի մեծի աւուր Յայտնութեան Քրիստոսի՝ վերլուծութիւն բանին Եսայեայ և հաւաքմունք աստուածաշունչ բանից թարգման՝ յօրինեալ ի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ և խմաստասիրական սահմանաւ շարագրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր օծեալ ձեռնադրեցաւ Թագաւոր Հայոց մեծն Լեւոն»։ — Դաւանութիւն Վահրամ վարդապետի կոչուած գրուածքի մ՚ալ հանդիպեր ենք[1], և ունի խորագիր. «Խոստովանութիւն հաւատոյ արարեալ Վահրամայ վարդապետի Հայոց՝ ըստ խնդրոյ Լեւոնի Հայոց Թագաւորի յաշխարհին Կիլիկիոյ, յաղագս սրբոյ Երրորդութեանն և մի աստուածութեանն և փրկական տնօրէնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»։ Ուրիշ գրուածք մ՚ալ «Վահրամայ վարդապետի յաղագս մարդեղութեանն Քրիստոսի»։ Այս ճառին յիշատակարանն «Այսօրիկ է աստուածաբանական բանք շարագրեալ ի մերս նուաստութենէ Վահրամայ վարդապետի, ի հրամանէ Թագաւորի մեծին Լեւոնի։ Վասն որոյ եթէ ինչ արժանաւոր յասացեալս գտցի, Աստուծոյ շնորհ որ զկամել ետ մեզ և զառնելն. իսկ եթէ նուաստագոյն և դուզնաքեայ ի շահս օգտութեան, քանզի սխալագոյն և թիւր ինչ ոչ ունիմ ասել ի գրեցեալքս՝ քան զանձն իմ, և զայլս հաւանեցուցանեմ աստուածային գրոց վկայութեամբ, որ են ի սոյն շարագրութիւն աւադրեալ։ Սակս որոյ զայնքան թիւրութիւն իմոյ տկարութեանս վարկանիջիք վասն երկրաքարշ և մեղսասէր գոլոյ ըստ հոգւոյն և ըստ մարմնոյ, ոչ կարացի ի բարձրագոյնսն և յաստուածային խորս մտանել, և յայնմանէ փարթամութիւն բարձրագունից մտաց ընծայել, վասն որոյ բարեսէր կամօք չափաւոր այս աշխատութեան թողութիւն անչափից մեղաց իմոց հայցեսջիք յանբաւարաշխ բարեացն Աստուծոյ»։

ՎԱՐԴ ՊԱՏՐԻԿ (*ի դարանս մատենից Էջմիածնի, թիւ գրչ.* 888). «Պատմութիւն գալստեան Մահմետի ի Հայս, և գնալ ընդդէմ նորա Սահակ սուրբ եպիսկոպոսն։ Վարդ Պատրիկին ասացեալ։ — Իշխանն Արծրունեաց Թէոդորոս Ռշտունի»։

---

[1] Վահրամայ գրուածոց բնագրին և թարգմանութեանց վրայ տես ի Հայկական Մատենագիտութեան,

ՏԻՄՈԹԷՈՍ վարդապետ, յառաջ քան զմեծն Վարդան Բարձրբերդցի. որ կ՚ակնարկէ իր Հնգամատենին մեկնութեան յիշատակարանին մէջ՝ թէ նոյնպէս երկասիրութիւն մը շարագրած ըլլայ և Տիմոթէոս այս վարդապետ. «Սկսաք, կ՚ըսէ, առաջնորդ ունելով զամոլն հաւատոյ՝ զԵղիշէ և զԵփրեմ և զմեծն Ոսկիբերան, և զայլն որք վաստակէին ի գիրքս յայս ի տեղիս տեղիս, և յորոց հաւաքեալ էր լուսաւոր վարդապետն Տիմոթէոս»։ Ազգային յիշատակագիր մ՚ալ կ՚ըսէ ի ՆԾ (450) թուականի, «Տիմոթ վարդապետ արար զմեկնութիւն Արարածոցն»։ «Քննութիւն հաւատոյ Ահարոն Թագաւորի և Տիմոթէոս հայրապետի» խորագիրը կրող գրուած մ՚ալ կը գտնուի ի գրչագիրս։

ՏԻՐԱՆ. — Այս մեզի միայն անուամբ ծանօթ վարդապետին՝ գրչագրաց ցուցակի մը մէջ երկասիրութեանը կը հանդիպինք հետեւեալ խորագրով. «Տիրանայ վարդապետի Հայոց՝ պատասխանի հարցմանց Թագաւորացն Աղուանից՝ Ատրներսեհի և Փիլիպէի»։ Հատուածք կը գտնուին ի Ստեփանեան Բառարանի. իսկ ամբողջ երկասիրութիւնն յիսունեմէկ միջակագիր էջ, ի Մատենադարանին Էջմիածնի, այսպիսի սկզբնաւորութեամբ, «Ընկալեալ զհրամանս և զխնդիր Տէր (ձեր?) յոյժ փութով և յաւէտ ըղձալի փափաքանօք, ուրախ եղաք ի սմա»։ Ուրիշ Թուղթ մ՚ալ իր անունով ի Մատենադարանին Երուսաղեմի (թիւ 533) գրեալ առ Սենեքերիմ Թագաւոր վասն հաւատոյ։

ՏԻՐԱՏՈՒՐ վարդապետ. — Այս քարոզներն են ի Ծնունդ Քրիստոսի. «Բայց աստանօր պարտ վարկանիմ սակաւ ինչ»։

Ի բանն, ի սկզբանէ էր բանն. «Արդ ասասցուք թէ զինչ է սկիզբն»։

Վասն մահու, ի բանն Յոբայ որ ասէ. Մահ մարդոյ հանգիստ է. «Արդ կամիմ այժմ՝ որպէս և է իսկ կարողութիւն»։

Ի բանն. Մահ մեղաւորի չար է. «Արդ ի բանէս յայսմանէ»:

ՏԻՐԱՏՈՒՐ *վարդապետ. որուն կ'ընծայուին քանի մը ճառեր՝ բաւական ընտիր ոճով և շարագրութեամբ, և մեծ հռետոր կը կոչուի ի գրչագիրս. տեղ մ'ալ ինքն իրեն համար կը վկայէ «զինուորեալ կայսեր». անշուշտ յառաջ քան զընդունել զքահանայական օծումն:*

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ՈՐՈՑ ԳՐՈՒԱԾՔ ՉԵՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԻՐ

ԱԹԱՆԱՍ. — *«Հայրապետն Հայոց ժողովեաց զիմաստունս որ էին ի ժամանակին. յորս էր և Աթանաս ի վանուց սուրբ Կարապետին. և կարգեցին Թուական Հայոց, յորոց ուղղեցին զզատիկն Հայոց»:* ԿԻՐԱԿՈՍ:

ԱՆԱՍՏԱՍ. *տես Եփրեմ:*

ԳԱԳԻԿ, *Թագաւոր Կարուց. — «Էր յայսմ աւուրքս (Կոստանդին Տուկիծ կայսեր), Գագիկ արքայ որդի Աբասայ կարսեցւոյ, այր իմաստասէր և լցեալ ամենայն շնորհօք ի փիլիսոփայականացն և ի հռետորականաց արուեստիցն, որ և ընդ վարդապետս Հոռոմոց ճեմէր. և յորժամ մտանէր ի Կոստանդնուպոլիս՝ ի յամբիոնն նստէր ի մէջ սրբոյն Սոփի. և բովանդակ գիտէր զհին և զնոր կտակարանսն Աստուծոյ. և էր յոյժ ճարտարաբան»:* ՈՒՌՀԱՅԵՑԻ:

ԳԷՈՐԳ *վարդապետ. — «Մեռաւ Պօղոս կաթուղիկոսն (ՇԽ) որ ի Մարաշ, զոր եդեալ էր Փիլարտոսն. և սուրբ և մեծ գիտնական Հայոց Գէորգ վարդապետն, և թաղեցաւ ի Կամրջաձորն առ Սամուէլ վարդապետի», կ'ըսէ Վարդան: Իսկ Ուռհայեցին Ուռճեցի կը կոչէ զԳէորգ, և հետեւեալ խօսքերով զինքը կը դրուատէ. «Յայսմ ամի (ՇԽԲ) մեռանէր վարդապետն Հայոց Գէորգ, որ կոչեցաւ Ուռճե-*

ցի, որ էր լուսաւորիչ տանս Հայոց, և աղբիւր մշտնջենաւորուխ վտակաց, և լեզու հրեղէն հրովն ներկեալ: Սա ուսմամբ աստուածային վարդապետութեամբն զարդարեաց զարեւելից աշխարհն, զի լցեալ էր աստուածային շնորհօք. և էր հաւասարեալ գիտութեամբն իւրով առաջին աստուածախօս սուրբ հայրապետացն. ասեմ Գրիգորի աստուածաբանի և Յովհան Ոսկեբերանի, Բարսղի և այլ նմանեաց սոցա: Սա սքանչելի վարուք կատարեաց զընթացս իւր, և էր ամաց հարիւրից. և թաղեցաւ ի մեծ անապատն ի Կարմնջաձոր, մօտ ի գերեզման Սամուէլի վարդապետի և Խաչկալ, որ էր երաժիշտ ի վերայ ձայնաւոր եղանակաց. և եղեւ սուգ... զի զրկեալ եղեն յայնպիսի լուսաւոր վարդապետէ»:

ԳՐԻԳՈՐ ՄՈՆՈՆԻԿ. — «Էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երեւելիք. Մխիթար՝ որ Գոշն կոչիւր... Գրիգոր՝ զոր Մոնոնիկ կոչէին՝ ի Կեչառուաց»: ԿԻՐԱԿՈՍ:

Զաքարէ Սպասալարին գումարած ժողովականաց մէկն էր Մոնոնիկ:

ԳՐԻԳՈՐ ՇԻՐԱԿԱՑԻ «հմուտ օրինաց» ըստ աւանդելոյ յիշատակագրաց:

ԳՐԻԳՈՐ որդի Վասակայ. — Գէորգ կաթուղիկոսին օրերը երբ Հայոց նախարարք Բուղայի գերութենէն դարձան, անոնց մէջ կը յիշատակէ Արծրունին նաեւ զԳրիգոր որդի Վասակայ. «Յելանել, կ՚ըսէ, նախարարաց Հայոց յերեսաց ամիրային (Ահմատայ որդւոյ Հայթայ), մնայ առ նմա միայն Մուշեղ Մոկաց իշխեցողն, այր քաջայայտ և բարձրագահ. և ընդ նմա Գրիգոր՝ որդի Վասակայ, (իշխան Վասպուրականի). և սա նմանապէս իմաստութեամբ առլցեալ, հոյակապ և անուանի ի մէջ հայկականացս, և ցանկալի լողացս և ուրախարար տեսողաց: Սա առաւելեալ յամենայն հոգածութիւնս, ի գիտս իմաստութեան, ուսումնասիրութեան, և յայլն ամենայնի քան զհարս և զհաւս իւր»:

ԳՐԻԳՈՐ ՏՈՒՏԷՈՐԴԻ. — «Յաւուրս իշխանութեան Զաքարիայ և յառաջնորդութեան Սանահնին Գրիգոր վարդապետին՝ որդւոյն Տուտայ, որ էր այր երեւելի»: ԿԻՐԱԿՈՍ:

ԴԱՒԻԹ. տես Եփրեմ:

ԵՂԻԱ. — «Էին ի ժամանակին յայնմիկ (ԺԲ դար) վարդապետք երեւելիք... Եղիա, ի Հաւուց թառէ, որ գեղեցիկ կարգաւորեաց զկարգ վանաց իւրոց»: ԿԻՐԱԿՈՍ:

ԵՓՐԵՄ. — «Յայսմ ժամանակիս (Ը դար) էին վարդապետք աշխարհիս Հայոց ընտրեալք Եփրեմ, Անաստաս, Խաչիկ և Դաւիթ Համայեցին»: ԿԻՐԱԿՈՍ:

ԹԷՈԴՈՐՈՍ. — Ուսպելեան կը գրէ Կոմիտաս կաթուղիկոսին համար՝ թէ Սիւնեաց քերթողին Մաթուսաղայի համբաւոյն վրայ զարմացած «Յղէ... գիր ձեռասուն համբակն, զոր մեծափափաք սիրով սնուցանէր սրբութեամբ զԹէոդորոս եղբօրորդի իւր. զոր առեալ նորա մեծաւ ըզգուշութեամբ ուսոյց և հասոյց ի գլուխ կատարման գիտութեան, զարդարեալ տեսականաւն և գործնականաւն»: Ու երբ իշխաններն ու Եզր կաթուղիկոս կը ստիպէին զՄաթուսաղա՝ որ Հերակլ կայսեր գումարած Կարնոյ ժողովոյն ներկայ գտնուի, Մաթուսաղա չուզեց երթալ, և իր տեղը ղրկեց զԹէոդորոս, վստահանալով իւր աշակերտին գիտութեան և իմաստութեան վրայ, և այսպէս գրեց. «Յուղարկեցաւ մեր աշակերտդ Թէոդորոս. այդ բաւականասցի»: Երբոր Ուշտունեաց իշխանը Թէոդորոս՝ մեղադրելով յանդիմանեց զԵզր կաթուղիկոս, զՄաթուսաղա և զՅովհան

Մայրագոմեցի հետը չբերելուն համար, Եզր պատասխանեց. «Ամենեքին ասացին թէ մինչ Մաթուսաղայի աշակերտս Թէոդորոս ի հետ է, ոչ է կարիս մեզ այլ ոք. դա բաւական է»: Եւ յիրաւի, Թէոդորոս իրեն համբաւոյն և գիտութեան արժանաւոր լեզուով մը՝ ջանաց համոզել և անոնց երկիւղը փարատել, որ կը կասկածէին հաւատոց ճշմարտութեան մէջ մոլորիլ՝ Յունաց հետեւելնուն համար:

ԹՈՐՈՍ. — «Երկուք ոմանք յաշակերտաց (Մխիթարայ Գոշի) որք իմաստնագոյնք էին քան զայլս, որք կարող էին և զայլս օգտեցուցանել. առաջնոյն Թորոս անուն, ի սահմանացն Մելտինոյ Հայոց. հայր նորա հայկական և մայրն ասորի. այր հեզ և խոնարհ... որ կայ թաղեալ ի հռչականուն վանքն ի Հաղբատ, ի գլուխ վանացն, ի գերեզմանս եպիսկոպոսաց և վարդապետաց»: ԿԻՐԱԿՈՍ:

ԹՈՐՈՍ վարդապետ. — Կիրակոս՝ Հեթում առաջին թագաւորին առ Մանգու խան Թաթարաց ճանապարհորդութիւնը աւանդելու ատեն՝ կը յիշատակէ. «Ընդ նմա իսկ եկեալ էր և Թորոս քահանայ կուսակրօն, և Կարապետ որ զրան երէց էր արքային, հեզ բարուք և գիտնական»:

ԽԱՉԻԿ. տես Եփրեմ:

ՀՄԱՅԵԿԻ (սրբոյ) վկայաբանութիւն. «Գտի և զսըրբոյն Հմայեկի զվկայաբանութիւն քառասուն արամբք ի տանն Տայոց որ այժմ Քառանի վանք կոչի: Գտի և այլ բազում յիշատակ սրբոց, որոց մոռացմունք եղեալ՝ ի տագնապ լինելոյ աշխարհիս»:

ՄԱՐՏԻՐՈՍ. — «Կոչեաց (Մխիթար Գոշ) զընակիչս ուխտի վանաց Նոր Գետկայ, որք ընդ նմա ժուժկալեալ էին յամենայն աշխատութիւնս վանից և եկեղեցւոյ. օրհնեաց զնոսա և զաշակերտս իւրեանց յանուն տեառն, և զմի ոմն ի նոցանէ ընտրեալ՝ Մարտիրոս անուն, որ աշակերտեալ էր նմա և ընտանի էր, կացոյց զնա առաջնորդ նոցա, մանուկ տիօք, բայց կատարեալ իմաստութեամբ. այր քաղցրաձայն յերգս պաշտաման, և առատամիտ ընթերցման, և արագ ի գրչութիւն: Նմա հրամայեաց իշխել նոցա. և գրեաց կտակս առ մեծ հազարապետն իւանէ... և յանձնեաց ի նա զվանս և զառաջնորդն»: ԿԻՐԱԿՈՍ:

ՅԱԿՈԲ վարդապետ. զոր Կոստանդին կաթուղիկոս ղըրկեց առ Հեթում թագաւոր, որ գնացեր էր ի մեծ Հայս. «Առաքեաց զմեծ վարդապետն Յակոբ, զայր բանաւոր և իմաստուն, զոր առաքեալ էին յառաջագոյն վասն սիրոյ և միաբանութեան առ թագաւորն Յունաց Յովհաննէս... իմաստախոհ բանիւք աստուածային գրոց ընդդիմացան հարցաքննութեան ժողովոյն Յունաց... խոհեմ բանիւք եցոյց գրովք յերկուց միացեալ զՔրիստոս, աստուած և մարդ կատարեալ երկոքումբք... զամենայն աստուածիմաստ բանիւք և գրոց վկայութեամբ հաստատեալ՝ շինեաց զմիտս նոցա ի սէր և ի միաբանութիւն ընդ ազգս մեր, և դարձաւ ի նոցանէ պատուով»: ԿԻՐԱԿՈՍ:

ՅԵՍՈՒ՝ Խորխոռունեաց եպիսկոպոս, որմէ գրուած նամակի մը հատուածոյ հանդիպեր ենք ի ցուցակս ձեռագրաց Երուսաղեմի (Թիւ 533).

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գառնեցի. — «Այր ոմն առաքինի և զարմանալի վարուք, գործող պատուիրանաց Աստուծոյ և լծաբարձ ի մանկութենէ, արժանացեալ քահանայական պատուոյ. կուսակրօն, Յովհաննէս անուն ի գիւղաքաղաքէն Գառնոյ, ուր զարմանալի սարաւոյթն է Տրդատայ, ի սուրբ ուխտէն Այրիվանից: Սա ի մանկագոյն տիոց արհամարհեաց զամենայն ինչ զկենցաղոյս, լքեալ զազգս և զտուն, յանապատ տեղիս բնակէր. սիրէր առանձին լինել և անզբաղապէս խօսել ընդ Աստուծոյ. տուեալ զինքն ազգի ազգի ճգնութեան պահոց և աղօթից»։ Ասոնք են Կիրակոսի խօսքերը, որ նոյն վարդապետին աստուածահաճոյ քաղաքավարութեան նկարագիրն ընելէն ետքը՝ կը յաւելու. ժողովրդեան ձեռքը կու տար, կ'ըսէ, «զխորհրդական բանս աղօթից», որոնցմով անշուշտ իր անուամբ յիշատակուած այլ և այլ ընտիր և սիրատարփ աղօթքները կ'ուզէ ակնարկել։ — Գանձեցին երախտաւոր է նաև Սաղմոսաց ընտիր օրինակ մը հրատարակելուն համար։ Իրենն է նաև հետևեալ խորագիրը կրող երկասիրութիւնը. «Յովհաննու Գանձեցւոյ խրատ ոգեշահ ամենայն մարդոյ, մանաւանդ ժամարարի, ի խնդրոյ Սարգիս քահանայի»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Տաւուշեցի. — «Եւ հանդիպեցաւ (Մխիթար Գոշ) Յովհաննիսի վարդապետի Տաւուշեցի անուանեալ, որ ի ժամանակին յայնմիկ երևելի էր գիտութեամբ. զառաջինն յաշխարհականաց կեանս կացեալ սակաւ ինչ, և մեռեալ ամուսնոյն, կրօնաւորութեան հետևեալ, և հասու եղեալ՝ աստուածայնոց գրոց պարապեալ... Սա բազում իրս կարգաւորեաց կարգաց և կրօնից քրիստոնէից»։ ԿԻՐԱԿՈՍ։

ՅՈՎՍԷՓ. — Կիրակոս՝ Բարսղի Հայրապետին յաջորդ Գրիգորիս կաթուղիկոսին օրով ծաղկած վարդապետաց մէջ կը յիշատակէ նաև Յովսէփ անունով եպիսկոպոս մը, զոր կը կոչէ «այր երևելի ի կողմն Անտիոքու», ուր բազմաթիւ ազգայինք ցրուած էին այն ժամանակները։

ՆԵՐՍԷՍ ԻՇԽԱՆ. — Մետասաներորդ դարու կիսուն ծաղկած էր «Տէր Ներսէս՝ ի Բագրեւանդ գաւառէ, իշխան Հայոց, և սա էր այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն իմաստասէր, ուսեալ ի մեծն Արգինա. հասեալ

ամենայն շնորհաց աստուածեղէն կտակարանացն, և կարող էր կալ ի գլուխ ամենայն իմաստնոցն Յունաց, հզօր գիտութեամբ և զարմանալի ատենախօսութեամբ, նմանեալ Գագկայ և այլոց իմաստասիրաց Հայոց»։ ՈՒՌՀԱՅԵՑԻ։

ՍԱՄՈՒԷԼ. — «Յայնժամ գրեաց (Վասիլ կայսր) առ Յովհաննէս արքայն Հայոց, զի առաքեսցէ զնոսա (զվարդապետս Հայոց) առ ինքն ի Կոստանդնուպօլիս, զի ի նոցանէ գիտասցէ զճշմարիտ պատճառն և զուղղորդ զատիկն. իսկ նոքա ոչ առին յանձն գնալ, թղթովք գեղեցկաշար բանիւք հասկացուցին զթագաւորն ամենայն խորին քննութեամբ... մեծաւ խնդրուածովք ետ բերել (կայսրն Վասիլ) առ ինքն զՀայոց վարդապետն զՍամուէլ, զայր կորովի և յաղթող, և կացուցանէր զնա յատենի խօսել ընդ վարդապետացն Յունաց... և հաճոյ լինէր թագաւորին ամենայն բանքն նորա... և ածէր զՄուսի զվարդապետ Եբրայեցւոց... այր ճարտարաբան և հզօր, և սկսանէր խօսել զարուեստ տոմարին... և գովէր զբանքն Սամուէլի Հայոց վարդապետի. իսկ թագաւորն... զվարդապետն Հայոց յուղարկեալ մեծաւ պարգևօք յաշխարհն Հայոց»։ ՈՒՌՀԱՅԵՑԻ։

ՍՈՂՈՄՈՆ. — «Յետ վախճանելոյն Յովաբայ հայրապետին, զՍողոմոն ածեալ կացուցանեն յաթոռ սրբութեանն. սա... բազում առաքինաջան երկոց զանձն տուեալ ի մեծ ուխտին Մաքենոցաց, այլ և վարժեալ եւս էր ի փիլիսոփայական արուեստս, և առաւել եւս հմուտ լեալ փալստութեան կրթանաց»։ ՅՈՎՀԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ։

ՍՈՍԹԵՆԷՍ. Ի յիշատակարանի մագաղաթեայ աւետարանի գրելոյ ի ՉԻԹ=1279 «Գրեցաւ ի թու՛. Հայոց ՉԻԹ. Եւթն հարիւր և քսան ինն. ի մայրաքաղաքն Սիս, ընդ հովանեաւ սուրբ Հոգւոյն. որ յայսմ ամի վերստին նորոգեցաւ պատուական քարամբք քերեալ ի ճարտարաց։

Ձեռամբ Ստեփաննոսի Վահկայեցւոյ և ծախիւք և հրամանաւ Սոսթենէս բարունւոյ, որ էր վարժ և կիրթ յամենայն գիրս աստուածային հնոցն և նորոց և արտաքին փիլիսոփայիցն գեր ի վերոյ. որ և ի ժամանակիս մեր և Թագ՛. Լեւոնի և ի հայրապետ″ Յակոբայ ոչ ոք է կատարեալ իբրեւ զսա յամենայն իմաստս, բայց ի մեծ բարունեաց բաբունւոյն. որոյ անուն ցաւղ է քաղցր, որ և Վահրամ կոչի»։

ՍՏԵՓԱՆՈՍ. — «Յայսմ ժամանակի (Թուին ՄԻԲ) էր Ստեփանոս գրան երէց, որ բանիբուն ճանաչիւր. հաս ամենայն իմաստասիրական և գրամարտիկոս արուեստից՝ հանդերձ հոգեւորական առաքինութեամբ»։ ԿԻՐԱԿՈՍ։

Նոյն խօսքերով կը գրուատէ զնա և Սամուէլ, որոշելով ի համանուն Սիւնեաց եպիսկոպոսէն։

ՏՈՒՐՔԻԿ. — «Էին ի ժամանակին յայնմիկ (ԺԲ դար) վարդապետքն երեւելիք... Տուրքիկ ի Թեղենեաց, որ բարիոք կարգաւորեաց զվանքն՝ զամենայն ինչ հասարակաց լինել և առանձինն ոչինչ ստանալ»։ ԿԻՐԱԿՈՍ։

* * *

ՅԱՆԿ

ԷՋ
ՔՆՆԱԴԱՏԻՆ՝ Դ. ՏՊ. ԱՌԹԻՒ . . . . Ե
ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . ԺԳ

ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ.

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ. — Հայկական Դպրութիւնն համեմատուած ուրիշ հին ազգաց գրականութեան հետ. – Անոր ազգասիրութեան պատճառները. — Մեր մատենագրութեան բաժանումը ըստ դարուց. 1
ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳԻՐՔ. — Նշանագիրք ընդհանրապէս և անոնց կարեւորութիւնը. – Հայ ազգին նախնական տառերը. – Բեւեռաքանդակ արձանագրութիւնք. – Ասոնց գոյութիւն ի Հայաստան և հաւանական հետեւանք. – Շամիրամ և իր արձանագրութիւնք ի մերում աշխարհի և այլուր. – Զենդ, ասորի և յոյն տառք, և անոնց գործածութիւն առ մերսն. – Համառօտագիր նշանակք. – Յատուկ ազգային տառից զգալի պէտք. – Վռամշապուհ, Սահակ և Մեսրովպ. – Մեսրովպայ ջանք ի գիւտ հայկական տառից. – Կորիւն, Խորենացի և Փարպեցի և անոնց խօսքերը. – Պատմութիւն գիւտի տառից. – Այլեւայլ խնդիրք, կարծիք և դրութիւնք ասոր նկատմամբ. – Դանիէլ ասորի և իր տառերը. . . 10
ՀԱՅ ԳՐՉԱԳԻՐՔ. — Հայկական գրչագրաց վրայ ընդհանրապէս. – Ծանօթ հնագոյն գրչագիրք. – Գրչութիւն և գրիչք առ Կիլիկեցիս. – Մագաղաթ, թուղթ և անոնց կիրառութիւն. – Գրութեան պատկանեալ ուրիշ գործիներ. – Թանաք. – Նկարք, պատկերք և անոնց արուեստը 69
ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ. — Հայերէն լեզու. – Իր ծագումն և սկզբնաւորութիւն ըստ ազգային պատմութեան. – Արդի բանասիրութեան կարծիք նոյն խնդրոյն վրայ. – Հայկական լեզու յառաջ քան զհինգերորդ դար. – Թարգմանչաց դարը. – Այլ և այլ կերպարանափոխութիւնք լեզուին. – Հելլենաբանութիւն. – Հայ լեզուն մինչ ի սկիզբն երեքտասաներորդ դարու . . . 94
ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ. — Բանաստեղծութիւն՝ առաջին լեզու մարդկային ազգի. – Անոր հետքն ի հին Հայաստան. – Գողթան երգիչք. – Վէպք, վիպասանութիւն. – Թուելեաց երգք. – Մինչեւ առ մեզ հասած Գողթան երգոց հատուածք. – Անոնց արուեստը . . 135

ԳՐԱՒՈՐ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Էջ

ՄԱՐԻԲԱՍ ԿԱՏԻՆԱ. — Քաղդէացիք. — Նաբատեան մատենագրութիւն. — Վաղարշակ ի Հայաստան. — Մարիբաս Կատինա. — Արքունի հրամանաւ և յանձնարարութեամբ երթն ի Նինուէ. — Նինուէի մատենադարանաց մէջ ըրած գիւտը. — Իր պատմական գրուածքը՝ ըստ Խորենացւոյն. — Անոր սկզբնաւորութիւնն և քանի մը հատուածք. — Բանասիրաց հակառակամարտ կարծիք նկատմամբ մարիբասեան գրոց և իր անձին. — Գաղղիական թարգմանութիւն իր գրոց 157

ՄԱՐԻԲԱՍԷՆ ՄԻՆՉԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ. — Արտաւազդ Ա. — Աբգար. — Եդեսիոյ դիւան. — Արտաշէս Բ. 171

ՔԱՆԻ ՄԸ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ. — Ողիւպ. — Բարդածան. — Խոռոհբուտ. — Արտիթէս. 175

ՂԵՐՈՒԲՆԱ. — Իրեն ընծայուած գրքի մը գիւտը. — Ասորի բնագիրը. — Գրուածքին նիւթը. — Հարազատութիւնը. — Այլ և այլ տպագրութիւնք և թարգմանութիւնք 182

ԴԱՐ Դ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԻՑ կրկին հաստատութիւնն ի Հայաստան. — Անոր ազդեցութիւնն և արդիւնք մեր մատենագրութեան վրայ. 192

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ. — Իր ջանք և արդիւնք նաև ուսմանց յառաջադիմութեան համար. — Հաստատած դպրոցները. — Յաճախապատում գիրքը. — Անոր նիւթն ու բովանդակութիւնը. — Ո՛ր լեզուով գրուած ըլլալը. — Լուսաւորչի անուամբ ուրիշ երկասիրութիւնք 195

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ. — Ո՞վ էր Ագաթանգեղոս. — Հնոց կարծիքը իր վրայ. — Յառաջաբանն ըստ յունական օրինակին. — Ագաթանգեղեայ պատմութեան նիւթը. — Իր գրոց հարազատութեան վրայ տարակոյսներ. — Ո՞ր լեզուով գրուած ըլլալուն խնդիրը. — Հայկական և յունական օրինակք. — Առ Սեբէոսի հատուած մը իր անունով. — Դաշանց թուղթ ու անոր հարազատութեան վրայ կարծիք և գրութիւնք. — Իր անունով յիշուած մանր երկասիրութիւն մը. — Ագաթանգեղեայ գրոց տպագրութիւնք և թարգմանութիւնք 202

Էջ

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ. — Ո՞վ էր Զենոբ. — Զենոբայ պատմական երկասիրութիւնը և նիւթը. — Իր գրուածքին գլխաւոր աղբերք. — Ի՛նչ լեզուով գրելը. — Տպագրութիւնք բնագրին և թարգմանութիւնք. 234

ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ. — Սրբոյն Ներսեսի վարուց համառօտութիւնը. — Իր արդիւնքը նկատմամբ մեր քաղաքական պատմութեան. — Բանասիրականին վրայ ունեցած ազդեցութիւնը — Իրեն ընծայուած երկասիրութիւնք 238

ԲԻՒԶԱՆԴ. — Բիւզանդ և իր անձին և ազգին վրայ եղած այլ և այլ ենթադրութիւնք. — Փարպեցի և իր խօսքերը. — Բիւզանդայ պատմական գիրքը՝ համեմատուած ուրիշ ազգային պատմչաց հետ. — Անոնցմէ օտարանալը շատ գիտուածոց յիշատակութեան մէջ՝ օտարութիւն կ'ենթադրէ նաև ազգաւ. — Սահառունի կոչուիլը, և այդպիսի անուանակոչութեան հաւանական համարուած պատճառ մը. — Ո՞ր լեզուով գրուած է իր երկասիրութիւնը. — Արդեօք ամբողջ հասա՞ծ է մեր ձեռքը Բիւզանդայ յօրինած պատմութիւնը. — Բիւզանդարանի նիւթը. — Տպագրութիւնք և թարգմանութիւնք 242

ՊՐՈՑԷՐԵՍԻՈՍ. — Հայք յԱթէնս և ի Հռովմ. — Պարոյր և իր ուսումը. — Յառաջադիմութիւնն և պատիւ ի Հռովմ. — Իր անուանը և համբաւոյն կանգնուած արձան. — Գրիգորի Աստուածաբանին վերտառութիւնը 256

ԴԱՐ Ե

Մեր մատենագրութեան ոսկեդարը. — Որո՛ւն կը վերաբերի այս արդիւնքը. — Պարսուս ազդեցութիւնը և ուսումնական արգասիք. 266

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ. — Սուրբն Սահակ Պարթեւ. — Համառօտութիւն իւր սուրբ և բազմարկածեան վարուց. — Ազդեցութիւնն ազգիս քաղաքական և պատմութեան և մտաւոր բարգաւաճանաց վրայ. — Գրուածներն 268

Ս. ՄԵՍՐՈՎՊ. — Ս. Մեսրովպայ վարքը. — Արքունեաց մէջ սպասաւորութիւնը. — Առանձնութիւնն և հրաժեշտ յաշխարհէ. — Աջակցութիւնն ընդ սրբոյն Սահակայ. — Հայկական գրոց գիւտը. — Իր մեծ արդիւնքը նկատմամբ հայկական մատենագրութեան. — Գրաւոր երկասիրութեանց յիշատակք 274

ԹԱՐԳՄԱՆԻՉՔ. — Թարգմանիչք և իրենց դասակարգութիւնն. — Ուսումնական ուղեւորութիւնն յԵդեսիա, ի Կեսարիա, յԱ-

ԷՋ

գերանդրիա, յԱթէնս, ի Հռոմ և ի Բիւզանդիոն․ – Դարձն ի հայրենիս․ – Հայաստանի քաղաքական վիճակն․ – Գտած ընդունելութիւնն և չարակրութիւնք․ — Թարգմանչաց թիւը․ — Առաջին Թարգմանիչք․ — Երկրորդ կամ կրտսերագոյն Թարգմանիչք 280

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ․ — Եզնիկ՝ սրբոյն Սահակայ և Մեսրովպայ առաջին աշակերտներէն, և իր ուսումը․ – Թարգմանութիւնք և Եղծ աղանդոց գիրքը․ – Իր իմաստասիրական հմտութիւնը այդ երկասիրութեան մէջ․ – Մատենագրական ու հնախօսական գիտութիւնը․ – Մանր երկասիրութիւնք․ – Պատմական գրուածքի մը յիշատակութիւն և անոր քանի մը հատուածք․ – Արդիւնքը եւրոպական գիտութեան առջև և իր գրոց տպագրութիւնք և թարգմանութիւնք 300

ԿՈՐԻՒՆ․ — Կորիւն ի դասուէ առաջին Թարգմանչաց․ – Իրմէ շարագրուած կենսագրական գրուած մը․ – Իր ոճը․ – Ագաթանգեղոսի և Բիւզանդայ գրոց հետ նմանութիւնք․ – Տպագրութիւնք և թարգմանութիւնք 310

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ․ — Դաւիթ Անյաղթ ի թուոյ կրտսերագոյն Թարգմանչաց․ – Իր ուսումն և համբաւ առ Յոյնս․ – Գրաւոր երկասիրութիւնք․ – Ներբող ի սուրբ Խաչն․ – Սահմանաց գիրք․ – Թարգմանութիւնք 314

ԳԻՒՏ․ — Գիւտայ վարքը․ – Կաթողիկոսութիւնն և յարքունիս Պարսից կոչուիլը․ – Գրաւոր երկասիրութիւնքը . . . 324

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ․․ — Մանդակունի և Հայաստանի վիճակը․ – Վահանայ մարզպանութիւնը․ – Մանդակունւոյ ընծայուած ճառեր․ – Մանր գրուածք 327

ԵՂԻՇԷ․ — Եղիշէի վարքը․ – Յաղագս Վարդանայ և Հայոց պատերազմին գրուածքը․ – Անոր համառօտ բովանդակութիւնը․ – Յաղագս Միաբանից ճառը, – Մեկնութիւն Յեսուայ և Դատաւորաց․ – Ճառերն․ – Արարածոց մեկնութիւն․ – Անհարազատ կամ երկբայական ճառեր․ – Պատմութեան գրքին և մատենագրութեանց զանազան տպագրութիւնք և թարգմանութիւնք . . 334

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ․ — Խորենացի և իր ուսումնական դաստիարակութիւնն և ճանապարհորդութիւնք․ – Դարձն ի հայրենիս և կրած նեղութիւնները․ – Երկասիրութիւնները․ – Պատմութիւն Հայոց․ – Աղբերք․ – Արտաքին պատմիչք․ – Սուրբ գրոց հետեւողութիւն մանաւանդ ի ժամանակագրական մասին․ – Իր Պատմութեան գրոց նիւթը․ – Չորրորդ գիրք իր այս երկասիրութեան․ – Խորենացւոյն արժէքը իբրու պատմաբան և ժամանակագիր․ – Եւրոպական և ազգային բանասիրութեան կարծիք․ – Պատմութեան գրոց տպագրութիւնք և թարգմանութիւնք․ – Աշխարհագրութիւնն ու անոր հարազատութիւնը․ – Պիտոյից գիրք․ – Հռիփսիմեանց ճառ․ – Վարդավառի ճառ․ – Այլ և այլ մանր երկասիրութիւնք։ – Իրեն ընծայուած անհարազատ գրուածք․ 350

ՄԱՄԲՐԷ․ — Մամբրէ Վերծանող՝ եղբայր Խորենացւոյն․ – Իր անունը կրող գրուածք․ – Ճառ ի Յարութիւն Ղազարու և անոր հարազատութիւնը․ – Ճառ ի Գալուստ Տեառն յԵրուսաղէմ․ – Պատմական գրուածք մը 388

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ․ — Փարպեցւոյն ծնունդն․ – Իր տոհմն ու Վահան Մամիկոնեան իշխանին հետ մտերմութիւնը․ – Հրաժեշտն յաշխարհական փառաց․ – Էջմիածնի կաթողիկէին վերակացու դրուիլը․ – Այն պատճառաւ կրած հակառակութիւններն ու թշնամութիւնք․ – Ինքզինքը ջատագովելու համար առ Վահան մարզպան գրած թուղթը․ – Պատմութեան գրոց նիւթը․ – Աղբերք այդ երկասիրութեան․ – Տպագրութիւնք և թարգմանութիւնք . 391

ԴԱՐ Զ

Դպրութեանց անկումն վեցերորդ դարուս մէջ․ – Քաղաքական յուզմունք և կրօնական խնդիրք և խռովութիւնք պատճառ այս անկման 407

ԱԲՐԱՀԱՄ ԵՊ․ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ․ — Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս․ – Խրատական գրուածք իր անուամբը․ – Պատմութիւն ժողովոյն Եփեսոսի․ – Փիլաքսիանոս Նարովկայ եպիսկոպոս . 408

ՊԵՏՐՈՍ ԵՊ․ ՍԻՒՆԵԱՑ․ — Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց և իր ժամանակը․ – Ճառեր՝ որ իր անուամբ հասած են առ մեզ․ – Պատմական գրուածք մը․ – Քանի մը հատուածք այդ երկասիրութենէն առ Ստ․ Օրբելեան․ – Համբաւն ու ի պատմչաց գովութիւնք իրեն և գրուածոցը 409

ՄՈՎՍԷՍ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ․ — Մովսէս Եղիվարդեցի․ – Հայոց մէջ գործածուած հին թուականներ․ – Եղիվարդեցւոյն ձեռքով ու ջանիւք եղած նորոգութիւն․ – Հայոց թուական և անոր սկզբնաւորութիւնը 414

ԿԻՒՐԻՈՆ ԵՒ ԱԲՐԱՀԱՄ ԿԱԹՈՂ․ — Քաղկեդոնի ժողով ու այն պատճառաւ յուզմունք յԵկեղեցւոջ․ – Աբրահամ կաթողիկոս․ –

ԷՋ

Կիւրիոն Վրաց կաթողիկոս։ — Թղթակցութիւնք ընդ հայրապետին Հայոց։ — Աբրահամ թուղթ առ Կիւրիոն կաթողիկոս, և վերջնոյս պատասխանը։ — Հայոց իշխանաց կողմանէ գրուած նամակ մը 416

ԴԱՐ Է

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂ. — Ո՞վ էր Կոմիտաս։ — Ի պատիւ Հռիփսիմեանց երգած Անձինք շարականը։ — Անոր վայելուչ ու քերթողական ոճը։ — Կոմիտասայ անուամբ յիշատակուած հարազատ կամ ոչ հարազատ երկասիրութիւնք 423

ՔԱՆԻ ՄԸ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ. — Եզնիկ Երէց։ — Եզր կաթողիկոս։ — Մաթուսաղա։ — Ուռպելեանի գոմութեանց խօսքերը։ — Իր համբաւը։ — Գրիգորատուր վարդապետ։ — Յոհան Մայրագոմեցի 426

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ. — Յոհան Մամիկոնեան պատմիչ։ — Իր երկասիրութեան նիւթը։ — Մատենագրական ոճը։ — Տպագրութիւնք և թարգմանութիւն իր գրուածքին 431

ՍԵԲԻՈՍ ԵՊԻՍԿ. — Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց։ — Իր անձին վրայ տեղեկութիւն։ — Պատմութեան նիւթը։ — Այդ երկասիրութեան շարագրութեան մէջ իր ունեցած մասը։ — Սեբիոսի ոճն, — Պատմական արժէքը։ — Իր գրուածքին տպագրութիւնք և թարգմանութիւնք և մատենագիտական քննադատութիւնք 435

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ. — Կաղանկատուացի և իր ժամանակը։ — Պատմութեան նիւթը։ — Աղուանք և իրենց ծագումը և յառաջադիմութիւնը։ — Իրենց նոր հաւատութիւնը։ — Կաղանկատուացւոյն պատմական արժէքն և ոճը։ — Մատենագրական լեզուն։ — Շարունակութիւն պատմութեանն Աղուանից։ — Կաղանկատուացւոյն գրոցը տպագրութիւնք ի հայ և յօտար լեզուս, և քննադատական տեսութիւնք 442

ԴԱՒԻԹ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ. — Դաւիթ Բագրեւանդացի։ — Իր անունով գտնուած ճառ մը։ — Իրեն ընծայուած երկասիրութիւն մը։ — Ս. Բարսղի ճառից թարգմանութիւն 454

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ. — Անանիա Շիրակացի։ — Իր վարքը։ — Անանիայի գրուածները։ — Աստեղաբաշխութիւն։ — Շիրակունւոյն աստեղաբաշխական կարծիք և գրութիւնը։ — Ազգին մէջ ունեցած յարգը իր գրուածոց։ — Յաղագս կշռոց և չափուց։ — Անհարազատ և անծանօթ գրուածք Անանիայի անուամբ։ — Ազգային պատմչաց թուոյն մէջ յիշուիլը։ — Իր ոճը 456

ԷՋ

ՎՐԹԱՆԷՍ ՔԵՐԹՈՂ. — Վրթանէս Քերթող։ — Ընդդէմ Պատկերամարտից ճառ։ — Զանազան նամակներ Վրթանայ անուամբ։ — Գրիգոր Քերթող 465

ԹԷՈԴՈՐՈՍ ՔՌԹԵՆԱՒՈՐ. — Քռթենաւորի վարքը։ — Ճառ ընդդէմ Մայրագոմեցւոյն։ — Ուրիշ ճառեր։ — Գրութեան ոճը . . 469

ՄՈՎՍԷՍ ՍԻՒՆԵՑԻ. — Մովսէս Քերթող։ — Իր անձին և գրուածոց վրայ կարծիք։ — Քերականական երկասիրութիւնք . . 472

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ. — Գրիգոր Արշարունի։ — Ընթերցուածոց մեկնութիւն, — Որո՞ն խնդրանօք այս երկասիրութեան ձեռք զարնելը։ — Հայերէն լեզուն և ոճը 473

ՓԻԼՈՆ ՏԻՐԱԿԱՑԻ. — Տիրակացւոյն ժամանակը։ — Յօրինած Եկեղեցական պատմութիւնը։ — Սոկրատ Սկոլաստիկոս։ — Փիլոնի գրութեան ոճը և իր պատմութեան շարունակութիւն . . 474

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — Ձորափորեցի Սահակ կաթողիկոս։ — Առ Մոհմատ Հագարացի իշխան գրած թուղթը։ — Իրեն ընծայուած երկասիրութիւնք 475

ԴԱՐ Ը

ՅՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ. — Իմաստասիրին մանկութիւնը։ — Քռթենաւորի աշակերտիլը։ — Կաթողիկոսական աթոռը բարձրանալը։ — Ատենաբանութիւն։ — Ճառ ընդդէմ Երեւութականաց։ — Ընդդէմ Պաւղիկեանց ճառը։ — Գործածած լեզուի բնորութիւնը և ոճ։ — Ուրիշ երկասիրութիւնք։ — Եկեղեցական կանոնագրութիւնք։ — Երկբայական գրուածներ։ — Իր ճառից բնագրին տպագրութիւնք և թարգմանութիւնք 477

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ. — Սիւնեցւոյն վարքը և ուսումը։ — Ճանապարհորդութիւններն ի Բիւզանդիոն և ի Հռոմ։ — Երկասիրութիւններն։ — Իրեն ընծայուած շարականք և անոնց հարազատութիւնը։ — Ուրիշ գրուածք։ — Թարգմանութիւնք . . . 489

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ. — Ղեւոնդ Երէց և իր պատմական գրուածքը։ — Անոր նիւթը։ — Ոճը։ — Պատմական արժէք իր գրուածքին։ — Բնագրին տպագրութիւնն և թարգմանութիւնք։ — Մոհլ գաղղիացի արեւելագիտին կարծիք 497

ԴԱՐ Թ

ԷՋ

ԶԱՔԱՐԻԱ ԿԱԹՈՂ. — Զաքարիա կաթողիկոս և Փոտ պատրիարք Կոստանդնուպոլսի։ — Շիրակաւանի ժողովը։ — Թղթակցութիւնք ընդ Փոտ պատրիարքի։ — Զաքարիայ անուամբ գտնուած ճառերը. 500
ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. — Շապհոյ պատմական երկասիրութիւնը։ — Իր անուանն և երկասիրութեանց յիշատակութիւնը առ նախնիս։ — Գրութեան ոճը։ — Իրեն ընծայուած անհարազատ գրութիւն մը. 503
ՄԱՇՏՈՑ ԿԱԹՈՂ. — Մաշտոց և իր վարքը ըստ ժամանակակից յիշատակագրաց։ — Աբաս թագաւոր։ — Դըւնայ շարժը։ — Մաշտոցի գրած թուղթը։ — Իրեն ընծայուած ուրիշ երկասիրութիւնք. 506
ՅՈՎՀԱՆ ԿԱԹՈՂ. — Յովհան կաթողիկոս յաջակերտաց Մաշտոցի։ — Հայրապետական աթոռը եկեղը։ — Պատմութիւնն և անոր նիւթը։ — Իր այս երկասիրութեան արժէքը։ — Գրաւորական ոճը։ — Բնագրին հրատարակութիւն և թարգմանութիւն . 511
ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ. — Թովմայի Արծրունւոյ ժամանակը։ — Գագկայ իշխանի յանձնարարութեամբ Արծրունեաց պատմութիւն գրելը։ — Այդ երկասիրութեան աղբիւրք։ — Արծրունւոյն պատմութեան նիւթը։ — Գրութեան ոճը։ — Բանասիրական արժէք։ — Բնագրին տպագրութիւնն ու թարգմանութիւնք . . . 518
ՑԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ 530

ԴԱՐ Ժ

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ. — Անանիա Նարեկացի, և իր յիշատակութիւնն առ նախնիս։ — Ճառ ընդդէմ Թոնդրակեցւոց՝ — Ուրիշ հարազատ կամ կեղակարծ գրութիւնք իր անուամբ . . 532
ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ. — Խոսրով Անձեւացի՝ հայր Նարեկացւոյն։ — Ժամագրոց մեկնութիւն։ — Մեկնութիւն խորհրդոյ սրբոյ Պատարագին։ — Իր անուամբ յիշատակուած ուրիշ գրութիւն մը։ — Տպագրութիւնք իր երկասիրութեան 535
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ. — Նարեկացի և իր սրբակրօն վարքը։ — Երկասիրութիւնները։ — Ապարանից խաչին պատմութիւնը։ — Ներբող ի սուրբ Աստուածածինն։ — Ճառ ի գովեստ Առաքելոց։ — Գովեստ ի սուրբն Յակոբ Մծբնայ։ — Երգերգոցի մեկնութիւն։ — Աղօթք կամ Նարեկ։ — Նարեկացւոյն մանր երկասիրութիւններն։ — Անհարազատ գրուածներ 538
ՑԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ 549
ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿ. — Ասողիկ և իր վրայ կենսագրական տեղեկութիւնք։ — Պատմութեան գիրքը և բովանդակութիւնը։ — Մեկնութիւն Երեմիայ մարգարէութեան։ — Տպագրութիւնք բնագրին և թարգմանութիւնք 551
ՈՒԽՏԱՆԷՍ. — Ուխտանէս պատմիչ։ — Պատմութեան նիւթը։ — Պատմական և բանասիրական արժէք իր երկասիրութեան։ — Բնագրին տպագրութիւն և թարգմանութիւնք . . . 555
ՄԵՍՐՈՎՊ ԵՐԷՑ. — Մեսրովպ Երէց։ — Իր անուամբ գտնուած պատմական երկասիրութիւն մը։ — Ի հնոց գրուած Մեծին Ներսեսի հայրապետի վարք։ — Ծաղկաքաղ այդ գրուածին ի Մեսրովպայ։ — Նիւթը և արժէք։ — Տպագրութիւնք և թարգմանութիւն. 561
ՑԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ 568

ԴԱՐ ԺԱ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈԶԵՌՆ. — Յովհաննէս Կոզեռն։ — Իր վարքը։ — Երկասիրութիւնք։ — Պատմական գրուածքի մը յիշատակութիւն. 570
ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ. — Մագիստրոսի տոհմը։ — Քաղաքական դերը։ — Կոստանդնուպոլիս երթալը և հոն ի Բիւզանդական արքունեաց մեծարուիլը։ — Մատենագրական կեանքը։ — Այս նկատմամբ իրեն տրուած գովութիւնք։ — Թղթերը։ — Վարդապետականք։ — Իմաստասիրականք։ — Ընտանեկանք։ — Քերթուածք։ — Հազարտողեանն առ Մանուչէ արաբացի։ — Քերականականք 572
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ. — Լաստիվերտցի և իր վարքը։ — Պատմական երկասիրութիւնը։ — Նիւթն ու բովանդակութիւնը։ — Բանասիրական և մատենագրական արժէք. — Իրեն ընծայուած Ընթերցուածոց մեկնութիւն մը։ — Պատմութեանը բնագրին տպագրութիւն և գաղղիական թարգմանութիւն 592
ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ. — Վկայասէր և իր վարուց համառօտութիւն։ — Ըրած բարեկարգութիւնք։ — Ճանապարհորդութիւններն յԵրուսաղէմ և յԵգիպտոս։ — Երկասիրութիւնք։ — Մեկնութիւն Գործոց։ — Գէորգ Լամբրոնեցւոյն ընծայուած համանուն գրուած մը։ — Գրիգորի թարգմանութիւնք։ — Կերակոս աշակերտ և վա-

ԷՋ

նակակից Վկայասէրին։ — Մատթէոս։ — Գէորգ Մեղրիկ։ — Թէոդորոս Ալախոսիկ։ — Սիսիանոս Սեբաստացի։ — Պօղոս Տարօնեցի 596

ԴԱՐ ԺԲ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ. — Սարկաւագայ տոհմն և դաստիարակութիւնը։ — Ուսումն ի Սանահին և ի Հաղբատ։ — Տոմարի նորոգութիւնը կամ Սարկաւագադիր շրջան։ — Գրաւոր երկասիրութիւնները։ — Պատմութիւնն։ — Քանի մը հատուածք մինչեւ առ մեզ հասած։ — Յաղագս Քահանայութեան ճառ։ — Ներբողեան։ — Աղօթագիրք։ — Ի Սարեակն։ — Սուրբ գրոց վրայ աշխատութիւնք։ — Ճառեր։ — Մանր գրուածներ։ — Իր աշակերտներն։ — Երեմիա Անձրեւիկ։ — Կունդ Սարգիս, և այլք . . . 606

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱՆՈՒԿ. — Ստեփաննոսի գիտութիւնն ու համբաւ։ — Արժանապէս կը մեծարուի ի Բարսղէ կաթուղիկոսէ։ — Իրեն ընծայուած գրուածներն։ — Աշակերտք 616

ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ. — Պահլաւ. Գրիգոր՝ եղբայր Շնորհալւոյն։ — Կաթուղիկոսական աթոռը նստիլը։ — Իր համբաւն և ի ժամանակակցաց ընծայուած մեծարանք։ — Հայկական գրականութեան ծաղկելուն համար ունեցած ջանք։ — Երկասիրութիւնքն . 618

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. — Շնորհալի և իր նախնական դաստիարակութիւնը։ — Քահանայանալը։ — Ուսումն և կրթութիւնը։ — Եպիսկոպոսական աստիճանի կը բարձրանայ։ — Իր եղբօրը կը յաջորդէ յաթոռ հայրապետութեան Հայոց։ — Ընդհանրականն առ ամենայն հայասեռ ազինս։ — Խնդիր միութեան ընդ եկեղեցւոյն Յունաց և այս առթիւ գրուած թուղթք։ — Շնորհալւոյն երկասիրութիւնք։ — Թուղթք առ զանազանս։ — Հրեշտակաց ներբող։ — Բարձրացուցեալ մեկնութիւն։ — Մեկնութիւն Մատթէի։ — Մեկնութիւն կաթուղիկեայց։ — Մանր երկասիրութիւնները։ — Խրատ ժամերգութեան։ — Շնորհալի քերթող։ — Եդեսիոյ ողբ։ — Յիսուս որդի։ — Բան հաւատոյ։ — Յաղագս երկնից և զարդուց նոցա։ — Մանր քերթուածք։ — Մատենագիտական տեղեկութիւնք իր գրուածոց. 621

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ. — Իգնատիոս և իր աշակերտակիցք։ — Պահլաւունի կաթուղիկոսին առաջարկութիւնը։ — Ղուկաս աւետարանագրի մեկնութիւն։ — Իգնատիոսի ոճը, լեզուն և հմտութիւն այս երկասիրութեան մէջ։ — Բնագրին տպագրութիւնք . 641

ԷՋ

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ. — Սարգիս Շնորհալի։ — Մեկնութիւն կաթուղիկեայ թղթոց։ — Անոր համառօտութիւնը։ — Ոճը և լեզուն։ — Կարապետ վարդապետ։ — Սարգսի անծանօթ երկասիրութիւնք 643

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ. — Ներսէս Լամբրոնացի։ — Իր տոհմն ու ազնուականութիւնը։ — Վարուց համառօտութիւնը։ — Եպիսկոպոսութեան աստիճանի բարձրանալը։ — Երկասիրութիւններն։ — Ատենաբանութիւն։ — Մեկնութիւն սրբոյ Պատարագի։ — Մեկնողական ուրիշ գրուածները։ — Ճառք։ — Թուղթք։ — Քերթուածք։ — Թարգմանութիւնք։ — Տպագրութիւնք իր գրուածոց։ — Ժամանակակից անձինք։ — Գրիգոր Գանձակեցի։ — Դաւիթ Ալաւկայ։ — Գրիգոր Ցեռուանց։ — Խաչատուր աշակերտ Լամբրոնացւոյ։ — Դաւիթ Քահանայ 648

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ. — Ուռհայեցւոյն ժամանակը։ — Իր պատմական երկասիրութիւնը։ — Բանասիրական արժէք։ — Ոճ և լեզու։ — Գրիգոր Երէց՝ շարայարող իր պատմութեան։ — Բնագրին տպագրութիւն և թարգմանութիւնք 662

ՍԱՄՈՒԷԼ ԵՐԷՑ. — Սամուէլ Երէց, ժամանակագրութիւնը կամ Գաւազանք։ — Այս երկասիրութեան աղբերք։ — Ոճը։ — Եւրոպական լեզուով թարգմանութիւնք 671

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ. — Ո՞վ էր Մխիթար Հերացի։ — Բժշկական գիտութիւն և արուեստ ի Հայաստան։ — Ջերմանց մխիթարութիւն։ — Նիւթը։ — Աղբերք Հերացւոյն։ — Իր գրոց տպագրութիւն 674

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ. — Գրիգոր Տղայ։ — Հայրապետական աթոռը գրաւելը։ — Բանակցութիւնք ընդ կայսեր Բիւզանդիոյ։ — Տարոնի ժողովը։ — Թուղթք։ — Առ Կիռ Մանուէլ։ — Առ Միքայէլ պատրիարք Հոռոմոց։ — Առ Վարդապետս հիւսիսոյ։ — Առ Հաղբատացիս։ — Ողբ Երուսաղեմի 680

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ. — Մխիթար Գոշ։ — Իր ուսումն։ — Համբաւը։ — Շինած վանքերը։ — Զաքարէ Սպասալար։ — Իր հրամանաւ գումարուած ժողովն յԱնի։ — Գոշի երկասիրութիւնք։ — Դատաստանագիրք։ — Աղբերք և ոճ։ — Հմտութիւն։ — Պատմական գրուած մը Մխիթարայ անուամբ։ — Առակք։ — Մեկնութիւն Երեմիայ։ — Աղօթագիրք։ — Մանր երկասիրութիւնք։ — Տպագրութիւնք իր գրուածոց 685

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԱՑԻ. — Խաչատուր Տարօնացի։ — Ազգային երաժշտական արուեստին մէջ ունեցած արդիւնք։ — Խորհուրդ խորին երգը։ — Տաղեր։ — Վարդան Հայկազն։ — Դաւիթ Քոբայրեցի։ — Սամուէլ Սկեւռացի։ — Դաւիթ վարդապետ։ — Ա-

Եջ

րիստակէս վարդապետ և իր աշակերտ Եփրեմ, – Ստեփաննոս Տիրացու վարդապետ, – Յովհաննէս կրօնաւոր . . . 697

ՎԱՆՈՐԱՅՔ Ի ԿԻԼԻԿԻԱ․ — Կիլիկիոյ վանորայք յերկոտասաներորդ դարու, – Դրազարկի վանք։ – Սկեւռայ վանք։ – Կոստանդին Ա. կաթողիկոս։ – Գէորգ վարդապետ հաւաքող Հարանց վարուց։ – Ստեփաննոս Սկեւռացի – Գռներոյ ուխտ, – Յովհաննէս արքայեղբայր, – Իր երկերն և գրական արդիւնք, – Անդրեասանց ուխտ, – Խորին անապատ, – Ականերոյ վանք, և այլն, 703

ԴԱՐ ԺԳ

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ․ Գրիգոր Սկեւռացի, մտերիմ Լամբրոնացւոյն, – Երթ նոցա առ կայսրն Փրեդերիկ, – Երկասիրութիւնք, – Ներբողեան ի Ս. Ներսէս Լամբրոնացի, – Ճառք, – Շարական ի Ս. Յովհաննէս Մկրտիչ, – Աղօթք 714

ԳԷՈՐԳ ՍԿԵՒՌԱՑԻ․ — Սկեւռացի Գէորգ, – Իր ուսումն և դաստիարակութիւն, – Երկասիրութիւնք, – Արուեստ գրչութեան, – Մեկնութիւն Եսայեայ, – Խմբագիր մեկնութիւն Գործոց, – Գէորգեայ աշակերտ Մովսէս 717

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ․ — Մխիթար Անեցի կամ Երէց, – Ժամանակակցաց իւրն ընծայած գրուածք, – Պատմական երկասիրութիւն մը, – Անոր մէկ մասին գիւտն և հրատարակութիւն, – Անեցւոյն պատմութեան նիւթը և աղբիւրք, – Արժէքն և մատենագրական ոճ. 722

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա․ ԿԱԹՈՂ․ — Կոստանդին Ա. կաթողիկոս, – Իր գրած այլ և այլ թղթերն առ Քահանայապետս Հռովմայ և առ այլս 728

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ․ — Վանական վարդապետ, – Մ. Գօշի աշակերտիլը, – Խորանաշատ վանքին շինութիւնը և հոն աշակերտներ սորվեցնելը, – Երթն առ խանն Թաթարաց, – Մահը, – Երկասիրութիւնք, – Յոբայ մեկնութիւն, – Վարդապետական գրուածներ, – Պատմութիւնը 729

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ․ — Վարդան վարդապետ, – Երթն ի Կիլիկիա, – Կոստանդին կաթողիկոսին կողմանէ նուիրակութիւնն, – Թարգմանութիւն գրոցն Միխայէլի Ասորւոյ, – Հուլաղու խանին հետ տեսութիւն, — Պատմութեան գիրքը, — Մեկնողական գրուածքներ, – Հնգամատենին, Սաղմոսի, Երգոց Երգոյն, Դանիէլի մեկնութիւնք, – Ներբող ի սուրբ Լուսաւորիչն, – Մանր կամ անհարազատ գրուածներ, – Առակք, – Վարդանայ երկասիրութեանց բնագրին տպագրութիւնք և թարգմանութիւնք . 735

Եջ

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ․ — Կիրակոս Գանձակեցի աշակերտակից Վարդանայ, – Պատմական երկասիրութիւնը, – Անոր նիւթը, – Մատենագրական ոճ և հմտութիւն, – Բնագրին տպագրութիւնք և թարգմանութիւնք, – Ժամանակակից փոքր մատենագիրք, – Մխիթար Սկեւռացի, – Վարդան կամ Վախամ, – Կիրակոս Արեւելցի 745

ՅՈՎՀԱՆ ԵՐԶՆԿԱՑԻ․ — Երզնկացւոյն ուսումն ու դաստիարակութիւն, – Գիւտ նշխարաց մեծին Ներսիսի հայրապետի, – Այն առթով երգուած շարականք յԵրզնկացւոյն, – Երթն ի Կիլիկիա և յարքունիս Լեւոնի, – Ժողովք ի Սիս և յԱտանա, – Միաբանողաց սկզբնաւորութիւնն, – Երզնկացւոյն երկասիրութիւնք, – Քերականի մեկնութիւն, – Ներբող ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ, – Մեկնութիւն Մատթէի, – Խրատական երկասիրութիւն, – Քնարերգականք 752

ՍՄԲԱՏ ՊԱՏՄԻՉ․ Սմբատ Սպարապետ, – Քաղաքական դիրքը և արդիւնք, – Տուած պատերազմունք և արիութիւնք, – Տարեգիրք, – Թուղթք, – Օրինագիրք, – Լեզուն և գրութեան ոճը, – Տարեգրոց հայ բնագրին տպագրութիւնք և թարգմանութիւնք. . 766

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄԱՆՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ 773
ՄԱՏԵՆԱԳԻՐՔ որոց գրուածք չեն յիշատակուիր 791

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

Աբգար թագաւոր. 171
Աբրահամ կամ Աբէլ թարգմանիչ. դար Ե 295
Աբրահամ կաթուղիկոս Ա. Աղբաթանեցի. դար Զ 416
Աբրահամ Մամիկոնէից եպ. դար Դ 408
Ագաթանգեղոս. դար Դ 202
Աթանաս. 791
Աղան Արծրունի. դար Ե 294, 393
Անանիա թարգմանիչ. դար Ե 296
Անանիա Նարեկացի. դար Ժ 532
Անանիա Շիրակացի. դար Է 456
Անանիա Սանահնեցի. դար ԺԱ 588
Անաստաս. 791
Անդրէաս թարգմանիչ. դար Ե. 297
Ասողնիկ Ստեփանոս Տարօնացի. դար Ժ և ԺԱ 551
Ատոմ Անձեւացի. դար Ժ 568
Արիստակէս Գրիչ. դար ԺԴ 718
Արիստակէս Լաստիվերտցի. դար ԺԱ 592
Արիստակէս վարդապետ. դար ԺԲ 701
Արձան Արծրունի թարգմանիչ. դար Ե 294
Արտաշէս Բ. 171
Արտաւազդ Ա. 171
Արտաւազդ Մաղազունեաց տէր. դար Ժ 568
Արտիթէոս. դար Դ 181

Բարդածան Եդեսացի. 176
Բարսեղ վարդապետ. դար ԺԲ 706
Բիւզանդ Փաւստոս. դար Դ 242

Գագիկ Բ թագաւոր. 773
Գագիկ, թագաւոր Կարուց. 795
Գէորգ կաթուղիկոս Գառնեցի. դար Թ 531

Գէորգ Սկեւռացի. դար ԺԲ 708
Գէորգ Սկեւռացի (այլ). դար ԺԳ 717
Գէորգ վարդապետ. դար ԺԱ 591
Գէորգ վարդապետ Մեղրիկ. դար ԺԱ 604
Գէորգ վարդապետ Ուռհեցի. 791
Գիւտ կաթողիկոս. դար Ե 324, 295
Գնիթ եպ. Գերջանայ. դար Ե 294
Գուրգէն Արծրունի. դար Թ 518
Գրիգոր Անաւարզեցի. դար ԺԳ 774
Գրիգոր Արծրունի. 780
Գրիգոր որդի Աբասայ. 776
Գրիգոր Շիրակացի. 792
Գրիգոր Արշարունի. դար Է 473
Գրիգոր Երէց՝ չարայարող պատմութեան Ուռհայեցւոյն. դար ԺԲ 669
Գրիգոր Գանձակեցի կամ Թոքակերի որդի. դար ԺԲ 660
Գրիգոր իմաստասէր Ցեսուանց. 661
Գրիգոր Լուսաւորիչ. դար Դ 195
Գրիգոր Մագիստրոս. դար ԺԱ 572
Գրիգոր Մոնոնիկ. 792
Գրիգոր Նարեկացի. դար Ժ 538
Գրիգոր որդի Վասակայ. 792
Գրիգոր Սարկաւագապետ. 776
Գրիգոր վարդապետ. 777
Գրիգոր Սկեւռացի. դար ԺԳ 714
Գրիգոր-Վահրամ Վկայասէր. դար ԺԱ 596
Գրիգոր Տղայ. դար ԺԲ 680
Գրիգոր Տուտէորդի. դար ԺԲ 793
Գրիգորատուր վարդապետ. դար Է 429
Գրիգորիս կաթողիկոս Պահլաւունի. դար ԺԲ 618
Գրիգոր քերթող. դար Է 465

Դանան թարգմանիչ. դար Ե 293
Դանիէլ վարդապետ. 777
Դաւթակ քերթող. 449
Դաւիթ, Ալաւկայ որդի կամ Գանձակեցի. դար ԺԲ 662
Դաւիթ Անյաղթ. դար Ե 295, 314
Դաւիթ Բագրեւանդացի. դար Է 454
Դաւիթ Մաշկոտն. դար Ժ 550
Դաւիթ Մոկաց եպիսկոպոս. դար Ժ 550

Դաւիթ վանահայր. դար Ժ 550
Դաւիթ վանահայր յիշատակագիր· դար Թ 530
Դաւիթ վարդապետ մեկնիչ Եսայեայ. դար ԺԲ 701
Դաւիթ փիլիսոփայ. 777
Դաւիթ քահանայ. 778
Դաւիթ Քոբայրեցի. դար ԺԲ 701
Դաւիթ. 793

Եզնակ կաթողիկոս. 778
Եզնիկ Երէց. դար Է 426
Եզնիկ Կողբացի. դար Ե 291, 300
Եզր կաթողիկոս. դար Է 426
Եզրաս Անգեղացի թարգմանիչ. դար Ե 295
Եղիա վարդապետ Հաւուցթառեցի. 793
Եղիշէ վարդապետ. դար Ե 295, 334
Եղիշէ վարդապետ (այլ). 778
Եղիշէ քահանայ. 778
Ենովք թարգմանիչ. դար Ե 293
Եսայի Նչեցի. ԺԳ 765
Երեմիա Անձրեւիկ. դար ԺԲ 615
Երեմիա թարգմանիչ. դար Ե 293
Եփրեմ վարդապետ. դար ԺԲ 697
Եփրեմ. 793

Զաքարիա կաթողիկոս. դար Ժ 500
Զենոբ Գլակ. դար Դ 234

Թադիկ թարգմանիչ. դար Ե 293
Թաթուլ թարգմանիչ. դար Ե 296, 298
Թէոդորոս աշակերտ Մաթուսաղայի. դար Է 793
Թէոդորոս վարդապետ Ալախոսիկ. դար ԺԱ 604
Թէոդորոս քերթող՝ պատմիչ Արծրունեաց. դար Ե 778
Թէոդորոս Քռթենաւոր. դար Է 469
Թովմա Արծրունի. դար Թ 518
Թորոս աշակերտ Մխ. Գոշի. 794
Թորոս, պարոն Կիլիկիոյ. 779
Թորոս վարդապետ. 794
Թորոս փիլիսոփայ կամ երաժիշտ. 713

Իգնատիոս մեկնիչ. դար ԺԲ 641

Խաչատուր աշակերտ Լամբր. դար ԺԲ 661
Խաչատուր Տարօնացի. դար ԺԲ 697
Խաչիկ. 794
Խաչիկ կամ Խաչատուր թարգմանիչ. դար Ե 296
Խաչիկ կաթուղիկոս. դար Ժ 549
Խոռոհբուտ. 178
Խոսրով Անձեւացի. դար Ժ 535
Խոսրով թարգմանիչ. դար Ե 295

Կապուտիկ վարդապետ 784
Կարապետ Սասունցի. 780
Կիրակոս Արեւելցի. դար ԺԳ 751
Կիրակոս պատմիչ Գանձակեցի. դար ԺԳ 745
Կիրակոս վարդապետ. դար ԺԱ 602
Կիւրիոն կաթուղիկոս Վրաց. դար Զ 416
Կոմիտաս կաթուղիկոս. դար Է 423
Կոստանդին Ա. կաթուղիկոս. դար ԺԳ 729
Կորիւն. դար Ե 291, 310

Համամ վարդապետ Արեւելցի 780
Հմայեակ. 794

Ղազար Փարպեցի. դար Ե 295, 391
Ղազարիկ կամ Ղազրիկ թարգմանիչ. դար Ե 294
Ղերուբնա. 182
Ղեւոնդ Երէց պատմիչ. դար Ը 497
Ղեւոնդ Վանանդեցի՝ թարգմանիչ. դար Ե 290

Մաթուսաղա եպիսկոպոս Սիւնեաց. դար Է 427
Մաժան. 174
Մամբրէ Վերծանող. դար Ե 295, 389
Մաշտոց կաթուղիկոս. դար Թ 506
Մատթէոս թարգմանիչ վարուց Յովհ. Ոսկեբ. դար ԺԱ 603
Մատթէոս Ուռհայեցի. դար ԺԲ 662
Մարիբաս Կատինա. 157
Մարտիրոս առաջնորդ Գետկայ. 794
Մեսրովպ Երէց. դար Ժ 561

Մեսրովպ վարդապետ՝ մեծն. դար Ե 274
Միխայէլ եպիսկոպոս. 781
Մխիթար Անեցի. դար ԺԳ 722
Մխիթար Գոշ. դար ԺԲ 685
Մխիթար Հերացի. դար ԺԲ 675
Մխիթար Սասունցի. 765
Մխիթար Սկեւռացի. դար ԺԳ 749
Մովսէս աշակերտ Գ. Սկեւռ. դար ԺԳ 721
Մովսէս Խորենացի. դար Ե 295, 350
Մովսէս կթ. Եղիվարդեցի. դար Զ 414
Մովսէս Կաղանկատուացի. դար Է 442
Մովսէս Սիւնեցի. դար Է 472
Մովսէս վարդապետ. 781
Մովսէս Տարօնացի. դար Ժ 550
Մուշեղ Բագրատունի. դար Ժ 568
Մուշէ Տարօնացի. դար Ե 291

Յակոբ 795
Յակոբ Գինանական. 781
Յակոբիկ Շնորհալից 782
Յակոբ Քարափնեցի կամ Սանահնեցի. դար ԺԱ 782
Յեսու, եպիսկոպոս Խորխոռունեաց. 795
Յովհաննէս Արճիշեցի կամ Ոսկնակեր. դար ԺԳ 765
Յովհան Երզնկացի. դար ԺԳ 752
Յովհաննէս Արքայեղբայր. դար ԺԲ-ԺԳ 709
Յովհաննէս Բժիշկ. դար Թ 530
Յովհաննէս Գառնեցի. դար ԺԳ 795
Յովհաննէս Եկեղեցացի՝ թարգմանիչ. դար Ե 291
Յովհաննէս թարգմանիչ. դար Ե 295
Յովհաննէս իմաստասէր Օձնեցի. դար Ը 477
Յովհաննէս Խոստովանող՝ թարգմանիչ. դար Ե 289
Յովհաննէս կաթուղիկոս պատմիչ. դար Թ 511
Յովհաննէս Կոզեռն վարդապետ. դար. ԺԱ 570
Յովհաննէս կրօնաւոր մեկնիչ. դար ԺԲ 702
Յովհաննէս Ծլուզ վարդապետ. 712
Յովհաննէս Մամիկոնեան. դար Է 431
Յովհաննէս Մայրագոմեցի. դար Է 429
Յովհաննէս Մայրավանեցի. 782
Յովհաննէս Մանդակունի. դար Ե 295, 327

Յովհաննէս Սարկաւագ վարդապետ. դար ԺԲ 606
Յովհաննէս վարդապետ. 783
Յովհաննէս վարդապետ Տարօնացի. 784
Յովհաննէս վարդապետ Տաւուշեցի. դար ԺԲ 784
Յովհաննէս քորեպիսկոպոս. 784
Յովհաննէս անեցի. դար ԺԲ 615
Յովնաթան թարգմանիչ. դար Ե 296
Յովսէփ եպիսկոպոս. 796
Յովսէփ թարգմանիչ ի Վայոց Ձորոյ. դար Ե 289
Յովսէփ Պաղնացի թարգմանիչ. դար Ե 291

Ներսէս Լամբրոնացի. ԺԲ 648
Ներսէս Շնորհալի. դար ԺԲ 621
Ներսէս Պարթեւ. դար Դ 538
Ներսէս Տարօնացի. դար ԺԳ 765

Շապուհ Բագրատունի. դար Թ 503

Ուխտանէս. դար Ժ 555
Ուղիւպ կամ Ողիմպիոս քուրմ. 175

Պաղտին իշխան դար. ԺԳ 750, 789
Պետրոս Գետադարձ. դար ԺԱ 587
Պետրոս վարդապետ մեկնիչ գրոց. դար Ժ 550
Պետրոս Քերթող եպիսկոպոս Սիւնեաց. դար Զ 409
Պրոյերեսիոս կամ Պարոյր. դար Դ 256
Պօղոս Տարօնացի. դար ԺԱ 605

Սահակ Գ կաթողիկոս. դար Է 475
Սահակ Պարթեւ. դար Ե 268
Սահակադուխտ. դար Է 785
Սամուէլ Երէց. դար ԺԲ 615, 672
Սամուէլ Կամրջաձորեցի. դար Ժ 569, 789
Սամուէլ վանահայր Խնատի. դար ԺԱ 591
Սամուէլ վարդապետ. 797
Սարգիս Կունդ վարդապետ. դար ԺԲ 615
Սարգիս Շնորհալի. դար ԺԲ 643
Սարգիս Սեւանեցի. դար ԺԱ 590
Սարգիս վարդապետ. դար Ժ 550

Սերիոս եպիսկոպոս. դար Է 435
Սիմէոն. 785
Սիմէոն վարդապետ. 785
Սիսիանոս վարդապետ. ԺԱ 604
Սմբատ Պատմիչ. դար ԺԳ 766
Սողոմոն կաթողիկոս. դար Ը 797
Սոսթենէս. 797
Ստեփանոս դրան երէց. դար Ը 798
Ստեփանոս Ասողիկ. դար Ժ 551
Ստեփանոս Երէց. 786
Ստեփանոս Մանուկ. դար ԺԲ 616
Ստեփանոս յիշատակագիր. դար Թ 531
Ստեփանոս Սիւնեցի. դար Ը 489
Ստեփանոս վարդապետ. դար Ժ 550
Ստեփանոս Տարօնացի թարգմանիչ. դար Ե 294
Ստեփանոս Տիրացու. դար ԺԲ 712

Վահան Մամիկոնեան. 786
Վահրամ պատմագիր. 786
Վահրամ վարդապետ. դար ԺԳ 786
Վաղարշակ. 162
Վանական վարդապետ. դար ԺԳ 729
Վարդ Պատրիկ. 788
Վարդան Հայկազն. դար ԺԲ 699
Վարդան վարդապետ մեծն. դար ԺԳ 735
Վարխամ կամ Վարդապետ. դար ԺԳ 751
Վարոս թարգմանիչ. դար Ե 298
Վրթանէս Քերթող. դար Է 465
Վրոյր. 174

Տաճատ վարդապետ. դար Ժ 569
Տիգրան Պահլաւունի. դար ԺԱ 591
Տիմոթէոս վարդապետն մեկնիչ. դար Ժ 550, 793
Տիրայր Խորձենացի՝ թարգմանիչ, դար Ե 291
Տիրան վարդապետ. 789
Տիրատուր վարդապետ. 789
Տիրատուր վարդապետ (ա՛յլ). 790
Տուրքիկ Վարդապետ. դար ԺԲ 798

Փիլոն Տիրակացի. դար Է 474

[illegible] [illegible] [illegible] [illegible]
Մադրաս 1775
[illegible] [illegible] [illegible] Մադրաս 1810

ՀՀ Ազգային գրադարան
NL0686860